ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ԳԻՏԱԿԱՆ ԸՆԹԵՐՑՈՒՄՆԵՐ
(հոդվածների ժողովածու)

SCIENTIFIC READINGS
(*collection of articles*)

НАУЧНЫЕ ЧТЕНИЯ
(*сборник статей*)

Ստեփանակերտ 2021

ՀՏԴ 001
ԳՄԴ 72
Գ 602

Արցախի պետական համալսարանի
50-ամյակին նվիրված ուսանողական գիտաժողովի նյութեր

Տպագրվում է Արցախի պետական համալսարանի գիտական խորհրդի որոշմամբ

Գիտաժողովի խորհուրդ
Նախագահ ՝ *Մարգսյան Արմեն – ԱրՊՀ ռեկտոր*
Փոխնախագահ ՝ *Ավանեսյան Վալերի- գիտական և միջազգային համագործակցության գծով պրոռեկտոր*
Փոխնախագահ ՝ *Յարամիշյան Վիտյա- Ուսանողների, շրջանավարտների և հասարակայնության հետ տարվող աշխատանքների գծով պրոռեկտոր*
Պատասխանատու քարտուղար ՝
Գասպարյան Աննա – Ուսանողական գիտական ընկերության նախագահ
Անդամներ ՝ *Սահակյան Գեորգի – ուսումնական աշխատանքների գծով պրոռեկտոր*
Այդինյան Շահեն – Մանկավարժության և սպորտ ֆակուլտետի դեկան
Մանգասարյան Ռուզաննա – Տնտեսագիտության ֆակուլտետի դեկան
Մարգարյան Լիլիթ-Ուսանողական խորհրդի նախագահ
Մարգարյան Լուսինե – Բանասիրական ֆակուլտետի դեկան
Մեժլումյան Կարեն- Ուսանողների հետ տարվող աշխատանքների և կարիերայի բաժնի պետ
Միրզոյան Վոլոդյա – Բնագիտական ֆակուլտետի դեկան
Ներսեսյան Լուիզա – Մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի

Գիտական ընթերցումներ: Հոդվածների ժողովածու.-
Գ 602 Ստեփանակերտ: ԱրՊՀ հրատ., 2021.- 700 էջ:

Գիտաժողովի նյութերի սույն ժողովածուն ընդգրկում է բանասիրության, բնագիտության, իրավագիտության, մանկավարժության, հոգեբանության, պատմության, քաղաքագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության արդիական հետազոտումներ: Ուսումնասիրությունների սահմանները լայն են և օգտակար են բնագավառի տեսական կամ գործնական հարցերով զբաղվողների համար:

ՀՏԴ 001
ԳՄԴ 72

ISBN 978-9939-1-1252-7
© ԱրՊՀ հրատ., 2021

ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

Արցախը համահայկական և միջազգային գոյաձևում ներկայանում է որպես պատմաքաղաքական ուրույն սուբյեկտ՝ համապատասխան բաղադրիչներով: Երկրի գիտակրթական և մշակութային ներկայանալիությունը, պայմանավորված մասամբ արցախցու ներփակ կացութաձևով, մասամբ՝ քաղաքական անբարենպաստ պայմաններով, նույնկերպ համարձակ չէ, բայց և հավաստված է ու ճանաչելի:

Այս առումով բացառիկ դեր է վերապահված Արցախի պետական համալսարանին, որ երկրամասի ուսումնական հաստատությունների շարքում շարունակում է մնալ որպես արցախցու ինքնահաստատման կայացած արգասիքներից մեկը:

1969թ. Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզի կենտրոն Ստեփանակերտում հիմնադրվեց Բաքվի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղը, որը 1974թ. վերանվանվեց Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի: 1988թ. ինստիտուտը դարձավ Վանաձորի մանկավարժական ինստիտուտի Ստեփանակերտի մասնաճյուղ: Գործառույթային շրջադարձ կատարվեց 1992թ., երբ որպես Լեռնային Ղարաբաղի պետական համալսարան՝ բուհը ստանձնեց ինքնորոշման իրավունքն իրեն վերապահած ժողովրդի գիտակրթական օջախը դառնալու առաքելությունը: 1996 թվականից առ այսօր բուհը գործում է որպես Արցախի պետական համալսարան:

«Մայր բուհ» պատվանունը ԱրՊՀ-ն ստանձնել է դժվարին կենսապայքարում: Գործունեության 50 տարիների ընթացքում կրթօջախը տվել է շուրջ 23.000 շրջանավարտ: Մոր առաքելությամբ նրան է վերապահվել սերունդների կրթության անընդհատականության ապահովումը:

Խորն է զավակների ձեռքբերումների տված հրճվանքը, անհուն է շիրմացած հայացքների թողած ցավը:

2019թ. նոյեմբերի 3-5-ին ԱրՊՀ-ում կայացած ուսանողական միջազգային գիտաժողովը՝ նվիրված բուհի հիմնադրման 50-ամյակին, հաստատում է բուհի միտումը՝ գիտության ասպարեզում արցախցի երիտասարդների համար դառնալ մտքերի թրծման հնոց, ինքնադրսևորման հարթակ, արտաքին աշխարհին կապող կամուրջ:

Զեկուցումների լայն շրջանակը՝ բանասիրության, բնագիտության, իրավագիտության, մանկավարժության և հոգեբանության, պատմության և քաղաքագիտության, տեղեկատվական տեխնոլոգիաների, տնտեսագիտության բնագավառներից, հավաստում է տարբեր մասնագիտությունների ուսանողների համար ստեղծված հավասար հնարավորությունը. գերակա է միայն մեկ ուղղություն՝ երիտասարդ ներուժի գիտական կայացմանը նպաստելը: Բազմաբովանդակ նյութերը վավերացրել են գիտաժողովի սահմանները՝ համաշխարհայինից մինչև հայկական, պատմականությունից մինչև արդիականություն: Արցախի թեմատիկան շոշափել բանասիրության, իրավագիտության, տնտեսագիտության, քաղաքագիտության ոլորտներում, նշանակում է ուրվագծել *Արցախ* հասկացության բազմադրվածքայնությունը:

Ոչ միայն Հայաստանի Հանրապետության, այլև արտերկրի ուսանողների հետ կապերն օժանդակում են արցախցի ուսանողներին՝ ինտեգրվելու արտաքին հետազոտություններին, ունենալու տարեկիցների գիտելիքների ու կարողությունների չափելի պատկեր:

Վերլուծականության ամրակայում, հետազոտությունների խիզախում. սա է երիտասարդներին տրվող պատգամը:

Սիրելի՛ ուսանողներ, ԱրՊՀ-ն 50-ամյա բարձունքից ողջունում է ձեզ՝ առաջարկելով համագործակցության լայն հնարավորություններ:

ՀՏԴ 808.1 Բանասիրություն

Բրագինա Նելլի
ԳՊՀ, Բանասիրական ֆակուլտետ,մագիստրանտ
Գիտական ղեկավար՝ բ.գ.դ., պրոֆ. Վ. Գրիգորյան
Էլ. փոստ՝nelli.bragina@list.ru, 055567027

ՀՈՂԻ ԴՈՂԻ ՏԵՐԸ

Բանալի բառեր. *Խեչոյան,ազգային ճակատագիր, գեղարվեստական մեկնություն, հոգեվիճակ, վերագնահատում, հայրենիք, հերոս-զինվոր, սերունդ, պատերազմ:*

Հոդվածն անդրադառնում է Լևոն Խեչոյանի ստեղծագործական առանձնահատկություններին: Գրողն իր գեղարվեստական մեկնության շնորհիվ նորովի է վերագնահատում ու վերաարժևորում համամարդկային հասկացությունները, հոգեբանափիլիսոփայական հայեցակետից է դիտարկում պատերազմական իրականությունը:

Խեչոյանի պատմվածքները պատերազմի էության բացահայտման բացառիկ փորձեր են: Ըստ նրա՝ մարդկային գիտակցության, ներաշխարհի վերափոխումը կատարվում է պատերազմի ազդեցությամբ:

Գրողի ազնիվ արվեստը նոր է թե՛ որպես գրականության տեսակ, թե՛ որպես պատմական ճշմարտության և ազգային ինքնության բացահայտում:

Нелли Брагина

ВЛАДЫКА ТРЕПЕТА ЗЕМЛИ

Ключевые слова: *Хечоян, судьба нации, художественная трактовка, душевное состояние, переоценка, родина, герой-солдат, поколение, война.*

В статье рассмотрены особенности произведений Левона Хечояна. Писатель через призму своего ходожественного трактования по новому переоценивает и переосмысливает общечеловеческие понятия, рассматривает реалии войны с психо-филосовской точки зрения.

В статье рассматриваются представления Хечояна о смерти, смысле бытия, патриотизме, человечности и человеке.

Правдивое исскуство Хечояна - это новый вид литературы, историческая правда и раскрытие национальной сущности.

20-րդ դարավերջին հայ ժողովրդին պարտադրված պատերազմը համառորեն անցյալ չի դառնում: Խեչոյանի տանջալից վերապրումների ու հիշողությունների առատ հորձանքը մեր առջև բացահայտում է ազգային ճակատագրի գեղարվեստական և պատմական մեկնության վավերագրման խնդիրները, պատերազմ-չարիքի իրական էությունը: <<Հողագնդի հոգեվարքը կառչում էր կարմիր եղեգնիկի փողից…>>[1]: Դա կենդանի, շնչող պատկերների գոյություն է, որին խորթ են գրականագիտության համահարթող ու կաշկանդող ձևապաշտական սխեմաները: Դա ժամանակից ու ճշմարտությունից անդին թափանցող արվեստ է: Խոստովանանքի անկեղծություն, սրտից մղվող արյան ջերմություն ու ազնվականություն ունեցող արվեստ: Փոքր Մհերի խռովքը հոգում՝ Դանթեի դժոխային պարունակներով ընթացող մարդու դրամա: Ոտքերի տակ երկրագնդի պատռվելն զգացող Խեչոյանն էլ թերևս ուզենար պահվել Ագռավաքարում՝ աներեր, անեղծ պահպանելու <<ծագման սկզբնաղբյուր սպիտակ լույսը>>[1], բայց նա Տերն էր՝ հարազատ հողի դողի ու պատմության Տերը: <<Արտաքին աշխարհում հոսող գոյության>>[1] վկան ու

պատգամագիրը: Իր հարցազրույցներից մեկում նա խոսում է կիսված երկրագնդի մասին, որի ճաքը՝ որտեղ էլ այն լինի, անցնում է գրողի սրտով: Որքան անվրեպ է սա բնորոշում Խեչոյան մարդուն ու արվեստագետին, ում հավատամքը ճիշտն ու ճշմարիտն էր: Վավերագրողի սթափությամբ է նկարագրում պատերազմ-չարիքը: Կորուստները՝ որպես բազմաստվեր քառս իրենց մեջ են ներառում նողջերի հոգիները… Բավիղի զարմանալի ձայների ու հնչյունների մեջ հստակ տարբերակվում է գրողի ձայնը, որը բացարձակ՝ մինչ վերջին նյարդաթելը հասնող անկեղծությամբ պատմում է համամարդկային արժեքների և դրանց սպառնացող կործանման մասին:

<<Խեչոյանի պարագայում ևս ուժեղության հետ անհնար է անցնել մեղքերի միջով և անմեղ մնալ, անհնար է հասնել երազանքների հովիտը և հոգու մինչև խորքն զգալ հաղթության բերկրանքը: Կյանքի կործանումն արժեզրկում է կռվի իմաստը>>[2] :

Խեչոյան գրողի անունը դարձել է հայ ժամանակակից գրականության համանիշ: Այն հոգևոր տիրույթում մի նոր իրականություն է ստեղծում՝ զուգահեռ աշխարհ, որտեղ ինքնին բացահայտվում են ենթագիտակցականի ու գերբնականի հիերոգլիֆները: <<Սա կարելի է ասել աշխարհի անտեսանելի երեսն է, դա տևական էներգիա է, ուժ, որը դառնում է արարչագործության հիմնական ազդակը>>[2]: Գրողն անվարան մեզ ուղղորդում է այն աշխարհը, որի գոյությունը մենք զգում էինք…

Սկսենք իր իսկ խոսքերով. << …Ստեղծագործության մեջ կյանքը դրսևորվում է ենթագիտակցականի ըմբռնման ճանապարհով: Հոգեվիճակի հոսք է՝ առանց գաղափարախոսության, առանց նախօրոք ծրագրված գործողությունների: Այն մի փակ, որևէ տեղից օգնություն չստացող մարդու՝ թվացյալ ամբողջական ժամանակի մասին է…>>[1]

Նրան վիճակվեց ապրել հայ ազգի համար այնքան դժվար օրերին, երբ գարունն իսկ բուրում էր վառոդով, ու ծիծառի ստվերն անգամ սահում էր չարագույժ: Խեչոյանն իր պատմվածքներից մեկում անձրևի կտկտոցը նմանեցնում է Մորզեի այբուբենին: Երբ կարդում ես գրողի պատմվածքները, այնպիսի տպավորություն է, թե նրան հաջողվել է ընկալել, զգալ, թարգմանել մեզ համար և՛ անձրևի կտկտոցը, և՛ երակներում արյան ալ գնդիկների բարբառող խշշոցը, և՛ կիսալուսնի զննող պաղությունը, և՛ նախնիների՝ զարկերակում գվվացող խուլ, ազդեցիկ ձայնը:

Նրա պատմվածքները հոգու տաք պատառիկներ են, որոնց խորքերում հանդարտ, ապահով շարունակվում են մարդկայնությունն ու սերը: << Ինձ ծանոթ է հոգու խուճապի վայրկյանը, ծանոթ է ակնթարթի բերած հայտնությունը, լսելի է փակից դուրս հնչող ձայնը… Ես պարտավոր եմ այս ամենի մասին խոսել քեզ հետ…>>[1]: Թվում է՝ լսում ես նրա խռպոտ, ցավասուն ձայնը, որը հոսում է ժպտալու անկարող ճաքճքած շուրթերի միջով, զգում ես նրա քննող, տագնապած հայացքը…

Ըստ իս, սա այն դեպքն է, երբ գրականագիտական բանաձևերն ու ձևաչափերը կիրառելի չեն. սա ա՛յն գրականությունն է, որը տեղավորել որևէ շրջանակում, քառակուսի լինելության մեջ , դիտարկել արդեն հայտնի մոդելներով անհնար է: Սա <<սրտի մեջ թպրտացող տաք պատկերների>>[1] գոյություն է, վայրի գեղեցկության հոսք՝ գիտակցականի ու անգիտակցականի մեջ, տիեզերականի անդրադարձն ու դրոշմն է ընթերցողի հոգում: Մաքրամաքուր, իր կուրծքը քերող քարերի չորչրուկ կողերը հարթող, ալիների լեզվով ճշմարտություն բարբառող մի գետ՝ մոգական ռեալիզմ, որն իր մեջ է ընդունում սնուցող վտակներ՝ սիմվոլիզմի խորհրդավորությունը, էքզիստենցիալիզմի խորունկ խոհը, սյուրռեալիզմի կախարդիչ աբսուրդը, նատուրալիզմի անսքող

մերկությունը: Եվ էլի բազում ու բազում իզմեր, որոնց կիզակետում մարդն է:

Սերգեյ Զալագինը գրել է. <<…Առաջ մենք որոշում էինք երկու հավասարում՝ի՞նչն է լավ և ի՞նչն է վատ: Եվ մենք ամբողջ ժամանակ, ամբողջ համաշխարհային գրականությունը և գեղագիտությունը զբաղված էր այդ հարցով: Բայց հիմա ի հայտ է եկել երրորդ հավասարումը՝ ի՞նչ է ոչինչը: Ահա թե մենք ինչ իրականության առջև կանգ առանք>>[3]:

Հենց այս տրամաբանությունն է առկա Խեչոյանի՝ պատերազմի մասին երկերում: Նա գրում է ոչ թե կոնկրե՛տ պատերազմի, այլ պատերազմի՛ մասին առհասարակ: Նա անհանգստացած է մարդկության ճակատագրով, քանզի <<խոսքը հաղթանակի մասին չէ, այլ մարդու պարտության: Ուրիշի հաշվին ոչ ոք չի կարող փրկվել>>[2]:

Խեչոյանական արվեստի բազմաշերտ օրինակ է <<Հողի դողը>> հրաշալի պատմվածքը: Գրողն այս պատմվածքի մասին ասում է. <<Գրված է այնպես, որ բոլորը վախենան, և այլևս պատերազմ չլինի>>[4]: Ասես հրաշքով՝ այդ դողը տողերի միջով, հերոսի ոտքերի տակից գալիս լցվում է ընթերցողի էության մեջ, ողերի մեջ… և սկսում ապրել ու ապրեցնել: Ապրեցնել անգամ անընդհատ լսելով << թիկունքից եկող ձայնը>>[1], որից թաքնվել է պետք ստվերի մեջ: Իսկ պատերազմի անստվեր իրականության մեջ միակ ստվերները զոհված զինակիցների հոգիներն են, որոնք մերթընդմերթ սահում են ողջերի միջով: Պատմվածքի ողջ ընթացքում ինչ-որ մեկն անընդհատ որոնում է Սերոբին: <<Մենք ուզում էինք, որ նա գնա, թողնի ու գնա>>[1]: Մարդկային գիտակցությունը միշտ ծառս է լինում վերահաս մահվան գաղափարի դեմ: Մարդը ոչ մի կերպ չի ուզում գիտակցել, որ մահը թիկունքից լսվող ձայնի պես մոտ է իրեն: Մահվան հոգեբանական ժխտումն օգնում է ապրել, ափ ելնել: Իսկ դա այնքան կարևոր էր այն օրերին: Հետո գրողն ուշագրավ անցում է կատարում՝ Սերոբի փոխարեն գրելով Սերովբե… դա էր զինվորի ճակատագիրը: Լացելու ու ծիծաղելու անկարող, ճաքճքած շուրթերով Զինվորի: Ակամա հիշում ես Սահյանի տողը՝ << Հայաստան ասելիս շրթունքս ճաքում է…>>:

Խեչոյանը դիպուկ է նկարագրում մարդու դեգերումը ենթագիտակցականի ու գիտակցականի սահմանին. <<Ձայնը կրկնակի էր դառնում, որովհետև մի անգամ էլ մեր ներսում էր պայթում, ու գիշերը, փշրված ապակու նման, թափվում էր մեր ոտքերի տակ, նռան ծառն էլ էր մեզ նյարդայնացնում, գիշերվա լռության մեջ հանկարծ պայթում էր նուռը ու ճայթոցով ճղում թանձր, հարահոս մութը>>[1]: Խեչոյանի գրվածքներում առկա է գույների սիմվոլիկան: <<Կարմիրն արյան գույնն է: Այն իր մեջ տարրալուծում, ոչնչացնում է մնացյալ գույների կիսատոները՝ դա կարող է լինել ինչպես դրական, այնպես էլ բացասական բնույթի: Այն կապվում է ուժեղ զգացողության և կտրուկ գործողությունների հետ: Կարմիրը պահանջում է ամեն ինչ ու միանգամից…. Սպիտակը համաձայնության սահման է ու սկիզբ, դրանով այն որոշակիորեն հակվում է հավասարակշռություն-խաղաղությանը: Սևը բացառում է ամեն ինչ ու դառնում սահման, որով ավարտվում են կյանքի մնացած երանգները>>[2]: Հակադրվում են արյան կարմիրն ու սևը՝ մահը, ողբերգականը… Նուռն ասես սրտի խորհրդանիշն է՝ պայթող, մութը ցրող, սիրող սրտի: Հոգեկան սահմանային իրավիճակում մարդը միշտ էլ տենդագին կերպով Սերովբեին է որոնում: Տան կղմինդրե տանիքում ապրող աղավնին մարդ արարածի հոգում ապրող սպիտակն է. երազանքը, գեղեցիկը: Բայց այլընտրանք չկա: Զինվորները պետք է այրեն տունը, որպեսզի փրկվեն: Մարդն այդպե՞ս չի վարվում իր էության լավագույն մասի հետ, երբ պետք է փրկել <<ամբողջը>>: Եվ հատկապես այդ պահերին, երբ <<ոռնում է օդը>>, ինչ նվիրական մարմաջով է հերոսը տրվում ցնորքին: <<Ներսումս մեկը կա, ես նրան չեմ տեսել, բայց նրա հետ մի օր կգնամ կիսավեր տաճարի արյան ավազանի մոտ>>[1]: Կյանքի

ամենածանր պահերին ինչպես ենք կառչում տեսիլքին՝ սնապաշտի պես… Կիսավեր տաճար, արյուն… Ցավն ու պատերազմն ավերում են ոչ միայն նյութեղեն տաճարներ: Իսկ արյունը ջերմության, կյանքի խորհուրդն ունի, մահվան ժխտման ու գոյիմաստի վերահաստատման ուժը:<<Թուլություն է, երակները լցնելու…>>[1] հակադարձում է զրուցակիցը, բայց հերոսը գիտի, որ տեսիլը, ոգին է հույսի՝ ուրեմն և ուժի ակունքը, և այդ զգացողությունը փոխանցվում է ընթերցողին: Շարունակվում են ձայներ լսվել. ձայն թիկունքից, ձայն-հրաման՝ գերեզմանոցը չպղծել, ու դարձյալ Սերովբեի որոնումներ… <<Նա դառնում է զինվորի արթուն խիղճը, ամեն անգամ ինչ-որ մեկի ձայնը /մենք ենթադրում ենք՝ Սերովբեի/ նրան սթափության կոչ է անում: Նա փորձում է համընդհանուր ոգևորության, ամեն ինչ մոռացած զինվորի էության մեջ արթնացնել մարդուն, որ վերջինս ու մնացածները հասկանան, թե կյանքն ավելին է, քան որևէ այլ արժեք, քան պատերազմն իր բերած բարիքներով՝ խնձորով, նռով, խաղողով և մնացած բաներով>>[2]:

Հոգևոր ու աշխարհիկ քառսում կորսվում են ճիշտն ու ճշմարիտը: Ֆրանսուհի լրագրողի տեսքը սթափեցնում է, կանոնավորում քառսը, և ծիծաղի ալիքը մի պահ հորձանք է տալիս: Բայց դարձյալ ստվերը… մեռած Անդրեի ստվերը << եկավ, տվեց ու մեր միջով անցավ>>[1]: Գրողը գրում է կանաչ՝ իրենց հոգու հետ չհամադրվող դռների մասին, որոնցից ներս մութ է: Կանաչը ենթագիտակցության մեջ միշտ կապակցվել է կյանքի, ելքի հետ: Էլ ի՛նչ տուն, էլ ի՛նչ դուռ, եթե անդին մութ է: Փակուղու, բավիղի զգացողությունը փռվում է սարդոստայնի պես: <<Գիշերը ջրհորի նման մութ էր ու խորը, հրամանատարն ասաց. << Մենք հասանք երազների հովիտ, դու ի՞նչ ես կարծում, արդեն հասե՞լ ենք>>>>[1]: Եվ հարցը խճճվում է մթի սարդոստայնում, թպրտում օդում ու… լռում: Լռությունը երբեմն ավելի շատ ձայներ ու պատասխաններ է պարունակում…

Պատերազմն ինքնին ներդաշնակության խաթարում է, և մարդը հուսահատ փորձեր է անում՝ կարգավորելու իր ներքնաշխարհը…

Պատմվածքի վերջում պատկերանում են <<երկնքից կախված, առանց վայրէջքի պտտվող աղավնիները>>[1], որոնք համառորեն չէին հեռանում չորս օր առաջ հրկիզված տնից: Այո՛, թեկուզ մոխրացած, սևին տվող մրուր ու մուր հոգում կարող են տեղ գտնել լույս-աղավնիները: Նրանք միշտ մոտ են, մոտ… <<…Տեսանելի երևույթների խորքում է թաքնված կյանքը, նրա հզոր էներգիան, այն հառնելու է, երբ ինքնադրսևորվելու առաջին իսկ պատեհ առիթը կներկայանա: Այդ ներթաքուն բնազդների, կյանքի կենսական ուժի մեջ է պահված առաջ տանող անկասելի ուժը>>[2]:

Խեչոյանը հայրենասերի կերպարը կերտելիս անկեղծ է, քննախույզ, ցույց է տալիս մարդ-արարածի հակասականությունը, փիլիսոփայական ու հոգեբանական հենքով հարստացնում կերպարի ամբողջականությունը: Իրավ է, միայն ազգային արվեստը կարող է լինել համամարդկային: Հատկանշական են թշնամու կերպարները. զերծ է մնում մոլի ու անվերապահ ատելությունից: Գերի աղջկա օրագրում խփված տանկերի քանակի հետ մեկտեղ արևի մասին տողեր կային… Ակնհայտ է հակադրությունների նույնությունը…

Տեսարանի հոգեբանական զուգահեռը կարոտի մշուշականչով կապվում է Քոչարի Առաքելի և Գալշոյանի Օհանի հետ: Նրանք էլ հուսաբեկ թռչունների նման հար թևին էին տալիս, տապ ու տագնապով թպրտում կորուսյալ հայրենիքի հարազատ երկնքում՝ անկարող թե՛ գնալու, թե՛ մնալու: Զորեղ մի ձգողականություն պահում էր նրանց հուշի տիրական ոլորտում՝ կորսված օջախի անձկալի կանչին ականջալուր:

Պատերազմի թեման տանջող մղձավանձի պես ձգվում, մութ երանգով է երիզում Խեչոյանի տողերը: Տանջալից հիշողությունների և վերապրումների խոլ հորձանքը

ծավալվում է աննահանջ… Այդ օրերի մասին որքան չասված խոսքեր կան դեռ… Խեչոյանը խիզախորեն ի դերև է հանում պատերազմի դեմքը: Այն ահազդու դեմքը, որին երկար, երկա՛ր օրեր անսասան, աներկբա նայել էր ինքը: Պատերազմը ներկայանում է որպես հավերժական կործանիչ էություն՝ իր տվայտանքներով, մաքառումներով, դառնություններով, նաև մարդու ու մարդկայինի համար մղվող անդուլ պայքարով, համամարդկային հոգեբանական հատկանիշների ցամաքող, պարպվող ակունքի տեսիլքով… Հայրենասիրությունը հզոր ու տիրական մի հուն է, որը կոչված էր բացահայտելու ազգի կեցության հիմքերը, հայերի լինելության խորհուրդը նաև մեր օրերի համար:

<<Իսկական գրողը միշտ միայնակ է լինում հոգու խուճապի պահին, ակնթարթի բերած հայտնության ժամանակ և հեռավոր ափերի չընկալվող ձայները լսելիս>>[1]: Բայց այդ տիեզերական մենության մեջ գրողի հոգին ձգտում է հասու լինել, գտնել հավատի թեկուզ տկար, հազիվ նշմարելի շող, որը կտաներ Անդին… Այդ զգացողության վկայությունն է <<Քո նմանով ու պատկերով ստեղծվածները>> պատմվածքը: Այն տիեզերքի մի անկյունում մենակ մնացած մարդու մասին է: Հոգում պատեպատ է զարնվում անգտնելին գտնելու հույսը. <<Հրամանատարի ձայնը թախծոտ էր ու միայնակ, մենք ճանաչում էինք այդ ելևէջը, ինչպես մեր ներսի ձայնը>>[1]: Պատերազմը ողբերգականության այն սառքն է, որից ճաքճքում է մարդու՝ ի բնե ողորկ հոգի-հայելին: Եվ այդ խշրտված, ծուռ ապակիների աշխարհում այլ կերպ են ցոլանում իրողությունները: Ավաղ, պատերազմն աղավաղում, աղարտում, կործանում է ոչ միայն մարմինն ու մարմնականը: Խեչոյանը մեզ առաջնորդում է հենց այդպիսի մի աշխարհ, ուր ակնբախ են դառնում ճշմարտություններ: Այնպիսիք, որոնք ինքդ քեզ էլ ոչ միշտ կարող ես խոստովանել: Խեչոյանը մեզ աննկատ ուղեկցում, ուղղորդում է դեպի ենթագիտակցության թովող, խոր, խորհրդավոր ու վտանգավոր ոլորտ: Դառնությունը տարրալուծված է գրողի հոգում, ինչպես աղը օվկիանում: Այն ամենուր է: Պատերազմը նիրհից հանում է մարդու գազանային սկիզբը, բայց գրողը ժխտում է այդ <<սկիզբը>>, ուրեմն՝ ժխտում է և՛ պատերազմը: Մարդը՝ Աստծո պատկերով և նմանությամբ ստեղծված էակն ընդվզում է. << <<Ես այլևս չեմ կարող>> լացելով աղաղակեց Մակին: Ապտակեց ձեռքերը կապած, իր կողքին ծնկաչոք, սագի նման բարակ, երկար վզով մահմեդականին, ասաց. << Ես այլևս չեմ կարող, մի նրա խալը տեսեք, նա հորս շատ է նման>>[1]:<<Նրանք գրեթե նույն ճակատագրի կրողներն են և մասնակիցն են կործանումների մեծ խաղին>>[2]:

Խեչոյանի պատմվածքներն ապրում են հայավարի, շնչում են հայավարի… Հայի հինավուրց հիշողություն–արյունն է կյանք տալիս ստեղծագործության անոթային համակարգին: Մերթընդմերթ փայլատակում է մահիկը՝ կիսալուսինը. << Ինչ-որ կապ էր զգացվում դեսուդեն ընկած դիակների, մերկ մարմինների, հողագնդի ու լուսնի միջև>>[1]: Դարեր ի վեր հայի մտապատկերում մահ է սփռում լուսնի սուրսայր մահիկը՝ կանխորոշելով դատապարտվածություն… <<Սա ևս մտնում է կյանքի անտեսանելի ուժի՝ ներքին հոսք-էներգիայի մեջ: Բայց, քանի որ Խեչոյանը Մաթևոսյանի հետևողականությամբ չի ստեղծում միաբևեռ կառույց, ուստի այս ներքին զգացողությունը նա վերագրում է և հակառակորդ զինվորին>>[2]: Երբ համոզում են շրջափակման մեջ ընկած զինվորին չքաշել նռնակի օղակը՝ ասում է <<Չէ, ես տեսա ստվերը, ձեր զոհված տղաներից մեկի ստվերն էր… Եկավ, տվեց ու անցավ ձեր միջով, թե չէ լուսինը ինչ կապ ունի, օրը ցերեկով ինչի՞ է լուսինը երկնքի կենտրոնում>>[1]: Այդ պաղ լուսինը հայ ժողովրդի գլխին վտանգով է շափաղ-շափաղ եղել դարեր՝ աննինջ… Զոհված տղաների ստվերների այնքան ծանր

զգացողությունը նաև մե՛զ հետ է…

Երբ << ստարշինայի>> բերած ձյունը հողոտ է լինում, ու նա առաջարկում է գնալ, էլի բերել, պատմվածքի հերոսը պատասխանում է. <<Չէ, ինձ համար կանխորոշված է, ինձ հասանելիքն է սա>>[1]: Պատերազմը մի ամբողջ սերնդի <<հասանելիքը>> եղավ: Սերնդի, որին չէր կարելի <<սրտի մեջ թպրտացող տաք պատկերներ >> ունենալ , որի համար ձյունը հոնի ծաղիկների և կնոջ մաշկի բույրն ուներ:

Խեչոյանը պատմում է հայ ժողովրդի չհնացող ցավի մասին՝ ճակատագիրը վերածելով կեցության: Գրողը ձգտում է հոգեբանափիլիսոփայական հայեցողության խորացման, վերագնահատում ու վերաարժևորում է համամարդկային հասկացությունները: Խեչոյանի ստեղծագործության ակունքը ազգային ինքնագիտակցությունն է:

<<Նամսով հայ իսկի չծիծղա: …Ջարդոց յետ հայ մարդ իրավունք չունի ծիծղալ…>> ասում է գրող Ս. Սիմոնյանի հերոսը: Ուշագրավ է, որ Խեչոյանի՝ ճաքճքած շուրթերով զինվորները ևս չէին կարողանում ծիծաղել ու լալ:

Հատկանշական է Խեչոյանի <<հերոս-զինվոր>> հասկացությունների՝ միասնության ու տարբերության մեկնաբանությունը: Լուսանկարներում գրողի հայացքն ասես ուղղված է դեպի ներս՝ խորք… Եվ այդ <<խորքում>> կան նախաստեղծ օրվա նման մերկ ու հակասական թվացող ճշմարտություններ: Զինվորը և հայրենիքը գրողի համար հակադրություններ են՝ մեկը մյուսին ապրեցնող, իրարով ստեղծված, իրար չհանդուրժող… Եվ այդ հակադրությունների խաչմերուկում մարդն է՝ միայնակ, ամենակուլ պատերազմի արհավիրքին ենթակա զինվորը, ով զրկվում է համամարդկային նրբազգացություններից ու դաժանանում: Պատերազմն իր սև պտույտներն է գործում որպես ամենակուլ նեռ ձագար, և խորքում անհետանում են մարդկության՝ սերնդեսերունդ հաստատված արժեքները, քաղաքակրթությունը: Պատերազմն ավերում է հոգիներ: Այս մասին է պատմում Խեչոյան-զինվորը: Գրողը ոչ միայն թշնամու դեմ կռվողն էր, այլև հանուն մարդկայինի, ներքին վեհության, ամենայն լավի պայքարողը: Հերոսը զինվորի էությունը չէ, բայց նա հավատարիմ է հողին: Հայրենիքը Աստված է, պատերազմը՝ հավերժական կրոն, զինվորը՝ հավատավոր, ինքնակամ ուխտյալ: Գրողին հաջողվում է և՛ վերաարժևորել հայրենիքի գաղափարը, և՛ վարպետորեն զգալի դարձնել պատերազմ-արհավիրքի ողբերգականությունը:

Պատերազմը մասնատում է ոգու ամբողջականությունը, իսկ հերոսությունը ոգու <<ձուլածո>> ամբողջականություն է պահանջում. <<Մարտի դաշտում, ներսում կրել տաք պատկեր կամ շուրջը տեսնել գունավոր առարկան և նրանցով հուսադրվել՝ օտար է այդպիսի հավատը նրան, որովհետև ինքը ևս նյութական աշխարհում է, այնտեղից տեսնում է, թե ինչպես պատերազմի անսովոր առեղծվածի մեջ իր կողքից անհետանում են դարերի աշխատանքով ստեղծված արժեքները, որոնց քիչ առաջ ինքը հավատում էր>>[1]: <<Դրանից հետո, եթե անգամ հաղթած բանակի զինվոր ես, ապա միևնույն է՝ դու չես հասել քո հոգու խաղաղությանը կամ ներդաշնակությանը>>[2]: Եվ այնուամենայնիվ, այդ դատապարտված ու լլկված, քառատված հոգով զինվորն է Տեր լինում սրտի չափ փոքր ու նվիրական իր հայրենիքին: Նրա՛ թափած արյունն է հագեցնում ծվատվող հողի պապակը, նրա՛ աչքերի մեջ պաղած զարմանքն է հանդարտություն տալիս վառոդից շիկացած հայրենյաց երկնքին: Հողը չի հանդուրժում կրծքին ծնկահետքեր, և Խեչոյանի հերոսները վերահաստատում են սա:

<<Բուն>> պատմվածքի մեջ գործողությունն ընթանում է երկու գծերի զուգահեռությամբ. մեկը անդամալույծ զինվորի կնոջ հետ փախած բժշկի պատմությունն է, մյուսը՝ բվին

սպանել փորձող Բենոյի ոդիսականը: <<Անտանելի է, երբ թախիծ էլ չկա, բայց գիշերները բուն վայում է…>>[1]: Աշխարհը ներկայանում է որպես մութի ու լույսի, բարու ու չարի հավերժական միասնություն ու հակադրություն: Գուժկան բուն չարի, մահվան, կործանումների խորհրդանիշն է՝ աներևույթ թռչունի ստվերը, որի թևաբախությունից թափվող պաղ մի բան կա՝ մարմինը լցվող երկաթե շոշափող ցուրտ… Նույնիսկ Բենոյի պես փորձառու, դիպուկ հետախույզը չի կարողանում սպանել բու-չարիքը, քանզի այն միշտ <<տեղը փոխում է>>: Միակ փրկությունը լույսն է, որը պիտի <<կտրի բվի աչքերը, ու ականջով ծորացող շոգը այրի ուղեղը, և նրան ներսից խփի տենդն ու դողէրոցքը>>[1]: Մինչդեռ բվի սահող ստվերը հանգրվանել է գիշերվա տեսիլներում: Եվ մարդը ճգնում է կորզել նրա մագիլները ծառ կոչվող կյանքից՝ ազատելով կյանքը… Բայց ճարպիկ ստվերն անընդհատ խույս է տալիս: Երբեմն չարը աստղերի խաբուսիկ պատրանք է նվիրում մարդուն, միայն հետո, ուշ ես սթափվում և լսում բվի թևաբախումը: << Սա ուրիշ էր, կտուրին թևաբախությունից թափվող պաղ մի բան կար: Դուրս եկա, տեսնեմ երկնքից կորագիծ, երեք աստղեր են իջնում: Հիմա ներսս հո մի ուրախություն չի բռնել, սիրտս պատռվում էր, խնդությունը միջիցս դուրս էր թափվում: Իջա տեսնեմ՝ կրակի վրա դրված, երեխու կաթը վառվել էր>>[1]: Պատմվածքը տառապանքների ու պարտության մասին է: Պատերազմ հաղթահարած ու իսկական ընկերներ դարձած մարդիկ պարտվում են անբարո միջավայրին, բու-մահը շարունակում է սավառնել…

<<Խեչոյան գրողի գրելակերպին բնորոշ որակներից մեկն այն է, որ բառերով ասվածը այն չէ, ինչ ցանկանում է ասել գրողը: Կարևորը գրողի համար պատումի՝ կենդանի մարմնի ամբողջականությունն է, որի հաղթահարումն է բացահայտում գլխավորը, դրա մասին բառերով պարզապես չի ասվում>>[2]:

Խեչոյանը տենդագին, երբեմն հուսահատ համառությամբ փնտրում է իսկական, կեծ, կենդանի աստղերը, որոնք միայն մարդկային հոգում՝ լավագույն երազանքներից ու հույզերից են ծնվում: Խեչոյանի մտքերը, պատկերները հիշեցնում են կղզյակներ, որոնք միանում են հոգու կապույտով: Կարծես առաջին պլանում չէ բժշկի ու Ալիսի պատմությունը, բայց իրականության հոլովույթում ավելի ու ավելի որոշակի է ուրվագծվում այն: Հասարակության անտարբեր աչքի առջև է չարը գործում իր նախճիրը: Ամբոխին բնորոշ է հանդիսատեսի դերը: Նրան հարմար է այդպես: Կարելի է բվի ձայնը լսել ու չլսել, ստվերը տեսնել ու չտեսնել: Հոգ չէ , որ <<երկնքի սևը ճերմակով կտրող ասուպն էլ շեղակի անցավ>>: Հասարակության հաշվենկատ, մորթապաշտ, հեղգ վերաբերմունքն է իրադարձությունների գորշ ֆոնը. <<Լուս ու մութ էր, հասարակական բաղնիքի ետևի լճակում գորտերը կռկռացին>>…

Խեչոյան գրողը խիզախորեն մարտահրավեր է նետում աշխարհակործան չարիքի դեմքին. լինի այդ չարիքի անունը՝ պատերազմ, թե անտարբերություն, թե ներքին վեհության կորուստ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Խեչոյան Լ., Ձայներ և տեսիլքներ, Երևան, 2006,էջ 40,150,176,186,191-199,207-209 :
2. Գրիգորյան Վ., Լևոն Խեչոյանի ստեղծագործությունը, Երևան, 2019, էջ 214, 240-248, 255:
3. Вопросы филисофии, №. 4, Москва, 1986, стр. 155.
4. Արտ. գրակ., հ. 1-ին, Երևան,2018, էջ 67:

ՀՏԴ 81՝28 Բանասիրություն

Նուշիկ Դանիելյան
Արցախի պետական համալսարան, ՀԼԳ 4-րդ կուրս
nushikdanielyan@mail.ru

ԱՌԱՐԿԱՅԱԿԱՆ ԻՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԳՈՒՆԱՆՈՒՆՆԵՐԸ ՂԱՐԱԲԱՂԻ ԲԱՐԲԱՌՈՒՄ

Մարդու աշխարհընկալման ու աշխարհաճանաչողության տարածքում գույների համակարգը որոշակի գործառույթ ունի. նրանցով է նաև առկայանում իրականության ընկալումը, նրանցով ձևավորվում և արտահայտվում է վերաբերմունքը իրականության նկատմամբ:

Գույն եզրույթը հայերենում հոմանշային շարքով է դրսևորվում. **երանգ, երփն, թույր, ժեռ, շորթ, մույն, ռանգ**[1]: **Գույն-ը** և **երանգ**-ը իրանական փոխառություններ են, իսկ *երփն-ի և թույր-ի* ծագումն անհայտ է նշվում: **Երփն** եզրի՝ հնդեվրոպական *խայտաբղետ* իմաստն ունեցող բառարմատի հետ կապը խիստ կասկածելի է համարում Գ. Ջահուկյանը[2]: Արցախի բարբառում «գույն» բառին համարժեք գործածվում է **ռանգ/ըռանգ** բառը, որը նույնպես պարսկական փոխառություն է: Ինչպես գրական հայերենում է գույնը այլ գունանունների կազմության դեպքում կենսունակ, այնպես էլ իմաստային բարդ կառուցվածքով և բառակազմական հնարավորություններով բարբառում *ըռանգ*-ն է դրսևորվում:

Ինչպես՝ Էտ շօրին ըռանգ ը կնգավը սըրտավը չինում:

Ռանգ բառի իմաստային կառուցվածքում դրսևորվող իմաստներն են.

1. Տարատեսակ, կարգ. *Մըհենգ՝ Մելիք Շահնազարը սահանց անա հըրցնում ա թա հի՞նչ ռանգ ի պատիժ տա դերվիշին*: (ՀԺՀ, V, 256)

2. Ներկ. *Մնացած փուլն էլ տաս ա ռանգ՝ ինք՝ օնե*: (ՀԺՀ, V, 259)

3. Թեյի չորացած տերևներից պատրաստած թուրմ, որից թեյ են ստանում. *Ըռանգ ին կըլխավը վեր ճուր ըծրէցեր չայը կընհամէ*: (Բ)

Հատկանշելի է գունային բնորոշումների արտահայտությունը դարձվածներով, և Արցախի բարբառի դարձվածային միավորներում *ռանգ*-ով բաղադրվածները մեծ թիվ են կազմում: Ինչպես՝

Ըռանգ՝ան ըղնել
Ըռանգ ի ը փախչիլ
Ըռանգ ի ը մըռավու ըռանգ՝ տըէռնալ
Ըռանգ ի ը վըէղ /պատէն ծէփը տըէռնալ: (Գունատվել)
Շօրը ռանգ՝ ան ըղնալ ա:
Էտ վեր տըէսնում ա, վախան նըհըէտ ըռանգ՝ ը մըռավու ըռանգ՝ ա տըէռնում:
Ըռանգ՝ ը յըրան
Ըռանգ՝ ը տըէղը (գեղեցիկ արտաքինով, սիրունատես)
Ըռանգ՝ ը տուս տալ/քըցիլ (թրջվելուց գույնը տարածվել)
Ըռանգ՝ ը փըխըփօխ անել (խիստ վախենալ)
Ըռանգ՝ ը նըհաշ տալ (վախեցնել)

[1] *Սուքիասյան Ա., Հայոց լեզվի հոմանիշների բառարան, Երևան 1967, էջ 156:*
[2] *Ջահուկյան Գ., Ստուգաբանական բառարան, 2012, էջ 228:*

Թազզա նախագան ըտըրանց ըռանգ՝ա նհաշ տամ, զինք՝ ընէն հըվաքում ըն:

Արցախի բարբառում գործածվում է **ըռանգ ›ռուշտ** բառը, որը նշանակում է *«դեմքի գույնը, արտաքին կերպարանքը»*: Բառն իրանական ծագում ունի. rang+rast (փխրուն): Բարբառում բառիմաստն ընդլայնվել է. ինչպես՝ *Ըտրան ըռանգ՝ռուշտըն էլ էնքան կէշա ինում՝վէր վէշ մինը իրըէսէն յէշում չի: (2)*

Ըռանգ՝ռուշ(տ)ը տըէղը (գեղեցիկ արտաքինով, սիրունատես). *Թաքավըէրեն տըղան մին ըռանգ՝ռուշտը տըէղը ախմիգ՝չի ճարում: (2)*

Ռուշտ բառը *ներկված, շաղախված* իմաստն ունի, նշվում է իբրև փոխառություն, բայց աղբյուրը չի հավաստվում[1]: Բարբառում և գրական հայերենում առանձին գործածված չէ, գրական հայերենում հանդես է գալիս «արյունռուշտ» բարդությամբ, որը ՆՀԲ-ն մեկնում է «շառագույն, արյունգույն»՝ բերելով հետևյալ օրինակը. «Աչք ի բարկութենէ շառագոյն արինռուշտ լինին» [2]: Բարբառում *ռուշտ*-ով բաղադրված է թե՛ ռանգը-ռուշտը, թե՛ կիրմիրռուշ/կիմբիրռուշ՝ «կարմրավուն, կարմրին տվող» նշանակությամբ: Առաջին դեպքում՝ գիտակցվում է բառարմատը՝ որպես հիմնական ձևույթ, իսկ երկրորդ դեպքում՝ իբրև բառակազմական ձևույթ: Հետաքրքրական է,որ **ռուշտը** -*ավուն* ածանցական նշանակությամբ միայն *կարմիր* գունանվանն է առդրվում. սա, կարծում ենք, բառի բնիմաստով է պայմանավորված, և այն առավելապես կապվում է առողջ մարդու մաշկի նկարագրությանը: Թե՛ գրական հայերենի, թե՛ բարբառի արյան ու կարմիրի զուգորդումը դրա վկայությունն է:

Լ. Հովհաննիսյանը նշում է, որ մարդկության զարգացման նախնական շրջանում գույների անվանումների համակարգում պետք է փնտրել գոյաբանական հիմքը՝ իրականության որևէ բնորոշ առարկայի և նրան բնորոշ գույնի կապը, միասնական ընկալումը[3]: Արցախի բարբառի գունանունների քննությունը հաստատում է, որ գունանունը դառնում է բնական պայմանների, իրերի ու երևույթների ճանաչողության հնարավորություն՝ մի կողմից, մյուս կողմից՝ իրականության բնութագրության խորհրդանիշ: Արցախի բարբառի մեծ թվով գունանուններ առարկաների իրական անվանումներ են՝ իմաստափոխությամբ՝ բառիմաստի նեղացմամբ դրսևորվող: Ինչպես՝

Լ՝ուս (գրբ. լոյս, բնիկ հայ. բառ՝ հնխ. louḱo) «լուսավոր, լուսավորել» հիմնական նշանակությամբ [4] իմաստափոխության հիմունքով բառն ունի նաև *սպիտակ, ճերմակ, սպիտակափայլ* գունային նշանակությունները: Արցախի բարբառում պահպանելով իր բնիմաստը՝ գործածվում է իբրև գունանուն՝ *ճերմակ* նշանակությամբ. ինչպես՝ *Լ՝ուս իրըէսավ ախմիգ ա Մայրանգյուլը*:

Լույս բառի սպիտակ նշանակությունը պահպանված է նաև լուսնավըէղ՝ բառում (կավահողը): Օրինակ՝ *Լ՝ուսնըվըէղա տուս յէկած*: Այս դեպքում լ՝ուսնավըէղ անունը անվանական հակադրությունն է սըէվ վըէղի, մյուս կողմից՝ լ՝ուսանվըէղը բարբառում նաև *շիգյավըէղ* բառանվամբ է նշվում . այս դեպքում՝ լ՝ուսը հոմանիշ է դառնում շէգյին, այսինքն՝ լ՝ուս՝ ճերմակ, սպիտակ, լ՝ուս՝ պայծառ, արևագույն:

Բ՝ուլբ՝ուլ նշանակում է «ճերմակ և թեթև ծաղիկներով մի տեսակ խոտաբույս»[5], իսկ փխբ. «սպիտակ, ճերմակ» նշանակություններն ունի: Արցախի բարբառում առաջնային

---

[1] *Ջահուկյան Գ., Ստուգաբանական բառարան, 2012, էջ 658:*

[2] *Ավգերյան Հայր Մ., Նոր Հայազեան բառարան, Վենետիկ, 1836, էջ 382*

[3] *Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, I մաս, 2008, էջ 105*

[4] *Ջահուկյան Գ., Ստուգաբանական բառարան, 2012, էջ 658*

[5] *Ռ. Ղազարյանը «խատուտիկ» ծաղկի տարբերակ տալիս է նաև «բուբու» ձևը (Բուսանունների բառարան)*

իմաստով է գիտակցվում ճերմակը. ինչպես՝ *Էրկու բ՚ալբ՚ալ ախճիգյ օնէ: Էտ դաչնիկին ծէրքէրը վրէդ տրէսած չի, հանց ա բ՚ալբ՚ալ ինի*:

Խաս-ը նույնպես գունանշային արժեքով գործածական է: Այն փոխառություն է արաբ.՝ xass, թրք. xasa)[1], ունի «սպիտակ» (կտորի, շորի մասին) նշանակությունը. բարբառում պահպանել է իր բնիմաստը. *Խաս կըտոր ա, հանցա լըհա պիմբըկըքօլա ինի:* Նշանակում է նաև *մետաքս*. ինչպես՝ *Խաս շօր ա կյէցալ:* Այդ իմաստին է աղերսվում նաև *խալիս*-ը՝ *մաքուր, զուտ, իսկական* իմաստներով. Ինչպես՝ *Խալիս ցօրէն ա, հանց ա Աստուծ մաչին նըստած:*

Նույն շարքի բառամիավոր է նաև **պէմբակ/ պա՚մբակ** (պհլ. pambak «բամբակ»), որը շատ դարձվածներում գունանվան արժեքով էլ վկայվել է. ինչպես՝ *Պէմբակ հաց ա: Այան պիմբակալ ա: Մին սիպտակ պիմբըկքոլա ախճիգյ ա ինում, մին հուրըմալագյ, վէչ օտիս, վէչ խըմիս, քըշէր-ցիրէկ թիմաշա անիս*:

Սպիտակ և փափուկ պտղամսով տանձի մի տեսակն էլ Արցախում **պիմբըկէնէ** անունն ունի. *Պիմբըկըէնէն համբէդ տանձյ ա:*

Արցախի բարբառում հաճախական է գունանվան գործածությունը գույնը բնորոշող առարկայի միասնությամբ. սա յուրօրինակ սաստկանության աստիճան է հաղորդում, և գույնի ընկալումն ավելի առարկայական է դառնում, մյուս կողմից՝ հաստատվում է այն իրողությունը, որ գունանուններն իրականում առաջացել են նրանցով հատկանշվող առարկաներից վերացարկվելով: Բոլոր գունանուններում այդպիսի վկայություններ կան: Ինչպես՝ *կա՚պուտ լէղակ*- մուգ կապույտ, *սիպտակ բըլբուլ*- շատ սպիտակ,*սիպտակ պիմբըկքօլա/ փըրփօր*- ճերմակ, *սըէվ տրզ, կանանչ մըրտոց նաև սըէվ մըրտոց* և այլն:

Մութ/մըթէն ծագում է հ.ե. «mut» արմատից[2]: Այդ արմատից է նաև մթար-ը. բարբառում ունենք *սըվըմթէն* բառամիավորը: Սև-ի հոմանիշն է նաև թօխ-ը, որը, ըստ Ջահուկյանի, ուրարտական ծագման է, թեև մերժելի չէ հ.ե ծագումը՝ *սևագույն* և *խավար* նշանակություններով[3]: Գունային սաստկականությունն ընդգծող միավորներ են՝ *սըվըթօխը, սըվըմըթէնը, սըէվ մըրտոցը*: Սև-ը հայկական մտածողության մեջ և բանադարձումներում բացասական ընկալում ունի, և հատկանշելի է, որ այն միշտ համապատասխան գույնն ունեցող գոյականի հետ է զուգորդվում՝ սաստկականության իմաստն ընդգծելով . ինչպես՝ սըէվ տրզ - *Մին սըէվ տրզ ախճիգյ օնէ*: //Սըէվ քաշ-*Հարթնը հանց ա սըէվ քաշ ինի*: // սըէվ սիրէկ, սըէվ սաթ//սըէվ սապի//սըէվ սըդանա: Իսկ **սըէվ սար** դարձվածը *ծանր* նշանակությունն ունի, որը սև գույնի ծանրության ու ճնշող ազդեցության վկայությունն է:

Վըէսկէ/վըսկէ/վէսկէ (գրբ. ոսկի) – Լ. Հովհաննիսյանը նշում է, որ հնարավոր է նախագրաբարյան ինչ-որ շրջանում *դեղին* հասկացությունն արտահայտված լինի ոսկի բառով՝ նկատի ունենալով մետաղի գույնը[4]: Բարբառում ոչ միայն բարդություններում, այլև պարզ կազմությամբ այն գունանվան նշանակությամբ գործածվում է. ինչպես՝ *Մին ծէրք ա քաշում, վէր նըկարնէրան ըրէվէն վըէսկէն լյրհա իրէսրտ յէր ծիծաղում ա*:

Իբրև գունանուն բարբառում փոխաբերաբար կարող է հանդես գալ *ցօրէնը*՝ որպես դեղին-ի հոմանիշ. ինչպես՝ *Ցօրէն իրէս օնե*:

Լիղակէ-Լեղակ-ը պարսկերենից փոխառություն է՝ *lēlak, մի տեսակ կապույտ

---

[1] *Արաբ. hass «ընտիր, լավորակ» ըստ Ջահուկյանի*

[2] *Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. Նախագրային շրջան, Երևան, 1987, էջ 139:*

[3] *Տե՛ս նույնը, էջ 436:*

[4] *Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշար իմաստային խմբերի քննություն, Ամաս, Երևան, 2008, էջ 111:*

ներկանյութ[1], որից լեղակե գույն ունեցող, լեղակագույն: Բարբառում մուգ կապույտն է *լէղակ* է բառանվամբ նշվում. ինչպես՝ **Սաղ ջանը լէղակ ա ըրալ: Էնքան թակէլ բիդիս, վէր լէղակ տըէռնա ջանը:**

Այդ շարքի բառամիավոր է նաև **լալազար**-ը: Գ. Ջահուկյանն այն կասկածով իրանական փոխառություն է դիտում. lalazar նշանակում է *կակաչապատ մարգագետին*, Հ. Աճառյանը այն պրսկ. lala՝ կակաչ, բառից է բխեցնում և նշում որ բառի փոխաբերական նշանակությունն է *խիստ կարմիր*: Բարբառում բառը պահպանել է իր բուսանվանական նշանակությունը, ինչպես՝ *Յէս լալազարն ըմ, լալազարը, խստէն նըհրէտ խըռնըխառնը*: Փոխաբերաբար և ավելի հաճախաբար գործածվում է գունանվան արժեքով. Ինչպես՝ *Լալազար կյէցվալ ա, հանց ա մին պըճրղված վարթ:*

Գիլգանզ բառը նույնպես *կարմիր* գունանվան շարքի անդամ է՝ *վարդանման կարմիր* նշանակությամբ[2]: Բառը փոխառություն է իրանական աղբյուրից՝ gul՝ վարդ նշանակությամբ, որից էլ գունանունը և փոխաբերական գործածությունը՝ *գեղեցիկ, սիրուն* նշանակությամբ: Այսպես՝ *Գիլգանզ շորը կէցալ ա, ճրկատէն վրէսկէ շարալ ա, Խաբար տարէքյ էն տրդէն, Սրէրտը սէրավ դաղվալ ա:*

Նօռնէգյ գունանունն էլ նույնանուն մրգից է առաջացել և նշանակում է *նռան գույն ունեցող*, կարմիր. Ինչպես՝*Քու նօռնէգյ թօշէրտ ինձ էրում-խըրավում ա*: Հիմնականում այդ գույնով բնորոշվում է մարդու մարմնի մաշկը: Ինչպես՝ *Նօռնէգյ իրէս, նօռնէգյ ծէրքէր... Ամրունը մաչին պըլթպըլթամ ա, հանց ա մին հըրէղան:*

Կանանչ - կապույտի և դեղինի միջինը, կանաչ գույն: *Կանաչ* բառը Հայերեն արմատական բառարանում ստուգաբանված չէ[3]: Գ.Ջահուկյան նույնպես ստույգ չի պարզաբանում: Լ. Հովհաննիսյանը նշում է, որ այս գունանունը դասական մատենագրության մեջ հաճախական չէ, թեև կան որոշ վկայություններ, ինչպես Աստվածաշնչից, այնպես էլ ինքնուրույն գրականությունից: Նա ընդգծում է, որ կանաչ-ը գրաբարում օգտագործվում է նաև «կանաչի, տունկ, բույս, խոտ » իմաստներով, թեպետ հստակ չէ, բայց կարելի է կարծել, որ գոյականական իմաստից է առաջացել ածականական իմաստը, մանավանդ որ գունային անվանումների համակարգում այդ երևույթը օրինաչափ է[4]: Բարբառում բառը ն հնչյունի հավելումով է առկա՝ կանանչ, որն ունի թե՛ գոյականական՝ խոտ, բույս, թե՛ գունային նշանակություն: Ինչպես՝ *Ղարաբաղա կանանչը (բուսականությունը) շատ ա: Էրկան վախտ տրփէրէն կանանչ չի ինում, էծէրը տուզնանում ըն, ըստրկօտում: Եվ՝ Էտ տրղան մինչէվ քրշէրին կէսը, կանանչ խուտէրումը թէքյ ընգած, յրրգյինքին ա յէշրմ...*

Կանանչ մրրտոց (գրբ. մուրտ, մրտենի՝ մշտադալար թփաբույս) նշանակում է *վառ կանաչ*. Ինչպես՝ *Կանանչ մրրտոց բոստան ա*: Կա նաև սրէվ մրրտոց, որն էլ նշանակում է *շատ սև, խիստ սև*: Խառ կանանչ նշանակում է «մուգ կանաչ» (խառ/խար պրս. xar «փուշ կամ փշոտ թուփ»):

Խակի-ն իբրև գունանուն վկայված է բարբառում, բառի ծագումը կապվում է պրս. haki *հողային, կանաչադեղնավուն* նշանակությամբ բառին[5]: *Խակի պէնջակը օսէրն ա կալալ, վրէննը կացալ*: *Խակի* գունանունը կապ չունի *խակ* «տհաս, անպտուղ, անվարժ » բառի հետ,

---

[1] *Ջահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 294:*

[2] *Ա. Յու. Սարգսյան, Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, էջ 108:*

[3] *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 2, Երևան, 1926, էջ 510:*

[4] *Լ. Հովհաննիսյան, նշվ. աշխ., էջ 112:*

[5] *Ա. Յու. Սարգսյան, Ղարաբաղիբարբառիբառարան, Երևան, 2013, էջ 260:*

և թեպետ խակ, չհաս պտուղները կանաչ են լինում, բայց գույնն այս դեպքում չի աղերսվում այդ հատկանիշին:

Մօխրի //մուխ(ը)րի- Մոխիր՝ *այրված բանի փոշի* նշանակությամբ բառից է առաջացել գունանունը: *Մոխիր* բառը ՆՀԲ-ում նշանակում է «աճյուն»[1]: Բառի ծագումն անհայտ է նշում Գ. Ջահուկյանը[2]: Ի մասնիկով *մոխիր* բառից կազմվել է բարբառային գունանունը: Հայերենում – ի ձևույթը համանուն է, այն ավելի գործառական է ծառանունների, տեղանունների կազմություններում, գունանուններում այդ ձևույթը նույնպես ակտիվ է: Վերջինս, կարծում ենք, ռուսերեն –ый հատկանշանիշ ածանցի ազդեցությունն է և բարբառային տարբերակը:

Մոխրագույն-ի բարբառային արտահայտություններից է ***գյօգյի-*** ն: Ինչպես՝ *Գյօգյի յէգնը փախավ, կյարմուրը մընաց նըստած:*

Շարմաղ (գրբ.շարմաղ) - ի սկզբանե եղել է գոյական (մաղ՝ շատ մանր ծակոտկիներով. Թէ զիր ալուրն՝ շարմղէն մաղես)[3]: Այնուհետև նշանակել է *այդ մաղով մաղված սպիտակ ալյուրը* , այսինքն՝ շատ նուրբ , դրանից էլ փխբ. Գործածվել է որպես «սպիտակամաշկ , ճերմակ» : Արցախի բարբառում գործածվում է փոխաբերական իմաստով:

Վըլլամաղ նույնպես նշանակում է *ճերմակ, մաքուր*: Ունի նաև «չքնաղագեղ» իմաստը. *Վըլլամաղ մաննէր օնէ: Վըլլամաղ ախճիգ՛ա Մանէն:*

Սարխօշ – փոխառություն է պարսկերենից sar-xōš «հարբելուց զվարթացած». Օրինակ՝ *Սարխօշ մըկըռնէն ըսքըսում ըն պար կալ*: Ունի նաև երկրորդ իմաստը՝ շիկավուն. ինչպես ՝*Սարխօշ մազէր օնէ:*

Նարընջի/նարինջի/նըրընջէ/նըրընջի- նարնջագույն. Ծաղիկ ում քաղալ նարինջի, ա՛յ տըղա, յէ՛ր կալ՝, փընջի՛... : *Նարինջ* բառը ուշ շրջանի փոխառություն է պարսկերեն «nārinj» բառից: Բառը բնիկ հնդկական է, հմմտ.՝ սանս. Nāranga կրճատված է nagaranga բառից: Կազմված է naga «պղինձ» և ranga «երանգ,գույն» բառերից, որից էլ՝ *նարինջ* նշանակում է «պղնձագույն»: 11-րդ դարում նարինջ-ը արաբների միջոցով անվան հետ Հնդկաստանից անցավ Արևմտյան Ասիա, հետո Եվրոպա[4]: (Նարինջ պ. նարէնգ, նարէնկ, այսինքն՝ «հրագույն» «Պտուղ գեղեցիկ իբրև ոսկի խնձոր, և ծառ նորա») [5]:

Նարին- այգաբացի առավոտի գույնը, մուգ դեղնակարմիր գույն. ինչպես՝ Ռանգ՛էրան ամէնաշատը նարինըն ըմ սիրում: Գ.Ջահուկյանը և Հր.Աճառյանը բառի ծագումը անստույգ են համարում: Աճառյանը հանդիպել է միայն. «Ներձուն նպաստ նաջան նեռին նարին կիզողական» նախադասության մեջ, կիզողական բառը ենթադրել է տալիս, որ նարին՝ արաբ. nār «կրակ» բառի սեռականն է[6]:

Զում(բու)ռուտ - գրբ. զմրուխտ բառից է, որն էլ փոխառվել է պրս. zumurrud բառից, «կանաչ գույնի թանկագին քար[7]», որից էլ առաջացել է գունանունը՝ կանաչ, զմրուխտի գույն ունեցող. ինչպես՝ *Զումբուրռուտ շօրէր ա կ՛ըէցալ:*

Չուրէյի/չուրհէյի/չիրէյի-բաց դարչնագույն՝ *Չուրէյի թիլավ գ՛ուլբա յա կ՛օրծում*:

---

[1] *Ավգերեան Հայր Մ.,Նոր բառգիրք հայկազեան լեզուի, , հ.2, 1836, էջ 295:*
[2] *[Տե՛ս Գ. Ջահուկյան, նշվ. աշխ, էջ 533:*
[3] *Ղազարյան Ռ.Ս., Ավետիսյան Հ. Մ., Հայերենի բառարան, Երևան, 2009, էջ 591:*
[4] *Հ. Աճառյան, Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, էջ 431:*
[5] *Ավգերեան Հայր Մ.,Նոր բառգիրք հայկազեան լեզուի, , հ.2, 1836, էջ 1572:*
[6] *Տե՛ս նույնը, էջ 1824:*
[7] *Տե՛ս նույնը, էջ 807:*

Երևի թե կապված է չոր (չիր) բառերի հետ, քանի որ պտուղները, արևից ստանում են հենց այդ գույնը: Բնիկ հայերեն բառ, հնխ. ksoros ձևից, որի kseros ձևից էլ ենթադրվում է «չիր» ձևը, սրանց ցեղակիցն է սանս. ksara «կիզիր, հրավառ»[19]:

Այս բառի հետ կարելի է կապել նաև **սըմկած/սմքած** բառը, որը նշանակում է «դժգունած, գույնը գցած» (նաև հյութը կորցնել, կուչ գալ). ինչպես՝ *Սըմկալ ա, ըռանգը տըէռալ մռալու ըռանգ*: Զահուկյանը սմքել (սմքիլ) բառը կապում է *ցամաք* բառի հետ , այսինքն՝ ցամաքել, չորանալ: *Ցամաք* բառը բնիկ հնդեվրոպական է «ksāma», «ksa» արմատից. հմմտ. հնդկ. kšama «չոր, ցամաք»[1]:Իսկ Աճառյանը հմմտ. է եբր. smq «չորացնել» արմատի հետ՝ բխեցնելով ասոր. բրբ. մի ձևից:

Առարկայից հատկանիշի վերացարկումը մարդկության պատմության բոլոր ժամանակներում եղել է ճանաչողության ընդլայնման հնարավորություն: Եվ այդ հատկանիշներից ամենաբնորոշը եղել ու մնում է գույնը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աճառյան Հ., Հայերեն արմատական բառարան, հ. 3, Երևան, 1977, 636 էջ
2. Ավգերեան Հայր Մ.,Նոր բառգիրք հայկազեան լեզուի, , հ.2, 1836, 2235 էջ
3. Հովհաննիսյան Լ., Գրաբարի բառապաշարի իմաստային խմբերի քննություն, I մաս, Երևան, 2008:
4. Ղազարյան Ռ. Ս., Ավետիսյան Հ. Մ., Հայերենի բառարան, Երևան, 2009:
5. Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, 820 էջ:
6. Զահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն. նախագրային շրջան, Երևան., 1987 :
7. Սարգսյան Ա. Յու., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2013, 846 էջ:

[1] *Զահուկյան Գ., Հայերեն ստուգաբանական բառարան, Երևան, 2010, էջ 741:*

ՀՏԴ 808.1 Բանասիրություն

Սամվել Եղիազարյան
ԵՊՀ, Հայ բանասիրության ֆակուլտետ, բակալավրիատ
Գիտական ղեկավար՝ բ.գ.թ., դոց. Վ. Ավագյան
Էլ. հասցե samveleghiazayan1998@mail.ru

ԱՇՈՏ ԵՐԿԱԹԻ ԿԵՐՊԱՐԸ ՊԱՏՄԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐՈՒՄ ԵՎ ՄՈՒՐԱՑԱՆԻ «ԳԵՎՈՐԳ ՄԱՐԶՊԵՏՈՒՆԻ» ՊԱՏՄԱՎԵՊՈՒՄ

Պատմությունն առհասարակ մեծ տեղ ունի գրական ստեղծագործությունների գեղարվեստական համակարգում: Բազմաթիվ են դեպքերը հայ գրականության պատմության մեջ, երբ հեղինակի ստեղծագործական նյութի համար հիմք է դառնում պատմական որևէ ժամանակաշրջանն ընդգրկող այս կամ այն երկը:

Հայ պատմիչների աշխատությունները կարևոր և օգտակար ազդեցություն ունեցան ոչ միայն իրենց ապրած ժամանակաշրջանի համար, այլև դարեր շարունակ: Աշխատություններից յուրաքանչյուրը իր յուրովի ներդրումն ունեցավ հայ գրականության մի շարք երկերի ստեղծման համար: Ստեղծագործական այս մոտեցումը հիմնարար նշանակություն ունեցավ նաև հայ մեծանուն գրող Մուրացանի պատմագեղարվեստական երկերի համար: Կարելի է ասել, որ պատմությունը մի գանձարան էր, որտեղից Մուրացանը քաղել է ազգի, հայրենիքի պահպանության իր իդեալը և այդ իդեալը մարմնավորող հերոսներին: Հենց ինքը՝ Մուրացանը, գրում է. «Ամեն մի գործ ստեղծելու ժամանակ իմ աչքի առջև ունեցել եմ հայ ժողովուրդը, նրա անցյալը, նրա պատմությունը, նրա տխուր ներկան. Լա՞վ եմ գրել թե վատ, նրա համար եմ գրել, նրան եմ կամեցել իմ մտքերն ու զգացմունքները հաղորդել»[1]: Այս ոգով էլ գրվել են Մուրացանի պատմագեղարվեստական երկերը՝ «Անդրեաս երեց», «Ռուզան», «Գևորգ Մարզպետունի»:

Պատմության, արվեստի, հզոր տաղանդի փառահեղ ծնունդ է «Գևորգ Մարզպետունի» պատմավեպը՝ լի պատմականությամբ և գեղարվեստով հարուստ երևակայությամբ: Մուրացանը գրում է. «Պատմագեղարվեստական գործի հեղինակը պարտավոր է խորապես ուսումնասիրել պատմությունը, աղբյուրները և ձգտել ճիշտ ներկայացնել պատմությունը... Եթե գեղարվեստագետը փաստերն ու դեպքերը նկարագրի «ճիշտ այնպես» ինչպես պատմագիրները, այն ժամանակ նա, Բելինսկու արտահայտությամբ, կդառնա «միայն ընդօրինակող, արտագրող և ոչ թե ստեղծագործող, այն ժամանակ նա չի կարող քննադատական մոտեցում հանդես բերել պատմագիրների նկատմամբ, ինչպես և կդադարի գեղարվեստական գործի հեղինակ լինելուց...»[2]:

Պատմությունն ընդունելով որպես ուղենիշ և պատմությունից դասեր քաղելով՝ Մուրացանը գրում է իր հայտնի պատմավեպը՝ «Գևորգ Մարզպետունի»-ն: Վեպի նյութը առնված է Բագրատունիների՝ տասներորդ դարի թագավորական հարստության իրադարձություններից: Տասնիններորդ դարից տասներորդ դար հետադարձ թռիչքը Մուրացանը կատարել է՝ հենվելով մասնավորապես Հովհաննես Դրասխանակերտցու, Թովմա Արծրունու և Անանուն պատմիչի պատմագրությունների վրա:

Վերոբեյալը ի նկատի ունենալով կփորձենք քննության առնել Աշոտ Երկաթի կեր-

[1] *Պարտիզունի Վ., Մուրացան, Երևան, 1956, էջ 3:*
[2] *Տես՝ նույն տեղում, էջ 260:*

պարը՝պատմության և Մուրացանի «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի մեջ:

Աշոտ Երկաթը Բագրատունյաց հարստության երրորդ գահակալն է: Նա հաջորդում է քաջ և հայրենասեր հորը՝ Սմբատ Բագրատունուն: Աշոտ արքայի մասին բավականին շատ տեղեկություններ են պահպանվել պատմական սկզբնաղբյուրներում: Պատմիչ Հ. Դրասխանակերտցին գրում է, որ Աշոտի մասին մեծաքանակ տեղեկություններ է տալիս Շապուհ պատմագիրը՝ նրա մանկության, երիտասարդության, հարձակումների ու արշավանքների մասին: Դրասխանակերտցին գրում է. «Իր հոր՝ Սմբատի փոխարեն (Աշոտն) է տիրում Հայոց սպարապետությանը, իրենից առաջ եղողներից գրեթե ամենաբարձրը ինքն է ճանաչվում, քանի որ ընդունելով մեծարանքներ արհամարհում էր անարգանքը և միշտ իրեն վարժեցնում էր բարի կրթության ու ուսման մեջ»[1]: Այնուհետև Հ. Դրասխանակերտցին ներկայացնում է Աշոտի՝ իշխանաց իշխան կարգվելը Ալի Արմանի անունով ոստիկանի կողմից. «Հայաստան ուղարկված Ալի Արմանի անունով մի ոստիկան ամիրապետի հրամանով նրան (Աշոտին) կարգում է Հայոց իշխանաց իշխան՝ զարդարելով բազում զգեստներով և արքունական պատվով, նրան վստահելով Հայոց հարկերն ու արքունի ամբողջ տուրքը»(137): Վ. Պարտիզունին, անդրադառնալով Աշոտ արքայի կերպարին, մեջբերում է Ասողիկի «Տիեզերական պատմության» այն հատվածը, երբ հոր մահից հետո Աշոտն է ղեկավարում կռիվը հակառակորդների դեմ և միավորում է երկրի ուժերը ընդդեմ ներքին ու արտաքին թշնամիների: Հատկապես արաբական զորքերի դեմ մղած ծանր և երկարատև մարտերում Աշոտ Երկրորդը դրսևորեց տաղանդավոր ու աննկուն զորավարի գծեր, որի համար հռչակվեց «Երկաթ»[2]: Հ. Դրասխանակերտցու մոտ Աշոտ արքայի մականվանը որևէ անդրադարձ չկա: Պատմիչի աշխատության մեջ առաջին անգամ Աշոտը հանդիպում է դեռ այն ժամանակ, երբ որպես պատանդ գտնվում էր Ափշին ամիրայի մոտ: Ափշինն օգտվում է հայ նախարարների անմիաբանությունից և սկսում իր արշավանքները դեպի Հայաստան: Դաժան գործողությունների հետևանքով Ափշին ամիրայի մոտ պատանդ են մնում թագաժառանգ Աշոտը և նրա հորեղբոր որդին Սմբատը:

«Գևորգ Նահապետի մահվանից առաջ Աշոտ արքայորդին դեռ պատանդ էր Ափշինի մոտ: Նույն այն ներքինապետը, որ Սևորդյաց Նահապետին սպանեց, մտերիմ բարեկամ էր Սմբատ թագավորին: Վերջինս երբ նահապետի մահվան լուրը լսեց, մեղադրական գրեց ներքինապետին՝ այնպիսի անմեղ մարդը սպանելուն համար: Ներքինապետը որպեսզի թագավորի սիրտն ամոքե, Ատրպատական վերադառնալուն պես, Ափշինից ծածուկ, ազատեց Աշոտ արքայորդուն և մի քանի իշխանազն հայ կանանց և ուղարկեց Սմբատին: Թագավորն իհարկե շնորհակալ եղավ ներքինապետին... »[3]: Այս փաստի առումով Մուրացանը հարազատ է մնացել պատմական աղբյուրներին: Հետևելով Դրասխանակերտցու Պատմությանը՝ նա նույնությամբ ներկայացնում է Աշոտի պատանդությունից ազատվելը. «Բայց երբ ներքինապետը գնում է արքայի մոտից, ճանապարհին հրապուրվում է դեպի չարը հակամիտված ու բանսարկու մարդկանց խոսքերով, մեկնում է Սևորդյաց Գեորգ նահապետի մեծ զորքի հետ, և այնուհետև նրանք խմբով հարձակում են գործում... նրանք սրի քաշվեցին և իրենց անունները գրեցին կենաց գրքում»(191): Այսպես է ներկայացնում Հ.

---

[1] ***Դրասխանակերտցի Հ.,*** *Հայոց պատմություն, Երևան, 1995, էջ 135: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների տեղը կնշվի շարադրանքում՝փակագծերի մեջ՝միայն էջը:*

[2] *Տես՝* ***Պարտիզունի Վ.****, Մուրացան, Երևան, 1956, էջ 376:*

[3] ***Մուրացան****, Գևորգ Մարզպետունի, Երևան, 1989, էջ 28: Այսուհետ այս հրատարակությունից արված մեջբերումների տեղը կնշվի շարադրանքում՝փակագծերի մեջ՝Մ տառը և էջը:*

Դրասխանակերտցին Սևորդյաց Գևորգ նահապետի մահվան պատմությունը, իսկ Աշոտ արքայորդու՝ պատանդությունից ազատվելու վերաբերյալ հետևյալն է գրում. «Իսկ դրանից հետո ներքինապետը, վախենալով ու հեռանալով Ափշինից և իր հետ վերցնելով արքայի որդի Աշոտին, ով պատանդ էր և գտնվում էր ներքինու մոտ՝ բանտում, ինչպես նաև նրա եղբայր Մուշեղի կնոջը, ում գերել և տարել էին Կարուց բերդից, իսկույն գալիս հասնում է Սմբատ արքայի մոտ և նրան տալիս է նրա որդուն հարսի հետ միասին»(191): Պատմական աղբյուրներում Սմբատ արքան պատվում է ներքինապետին՝ որդուն ազատելու համար: Սմբատ արքայի եղերական մահվանից հետո արքայորդի Աշոտը գրավում է հոր տերության այն տարածքները, որոնք նվաճվել էին հագարացիների կողմից: Նաև իր եղբայր Աքասը իրենց զորաջոկատներով հանկարծակի ու սրընթաց հարձակումներով լուրջ հարվածներ են հասցնում թշնամու ուժերին և քայլ առ քայլ ազատագրում երկիրը: Ասպատակություններից մեկի ժամանակ Աշոտը հարձակում է գործում Տփխիսի (Թիֆլիս) ամիրայության վրա, 200 հոգով ջախջախում Յուսուֆի կայազորը: Եվ այս ժամանակ հայոց երկրի ուժերը պառակտելու միտումով արաբները Հայասատանի թագավոր են հռչակում Աշոտի հորեղբորորդուն՝ Աշոտ սպարապետին: Երկրում սարսափելի իրավիճակ է ստեղծվում՝ իշխանների անմիաբանություն, պետության պառակտվածություն, թշնամիների ոտնձգություններ, սով, մահ, ավեր: Պատմական փաստերին հարազատ մնալով՝ Մուրացանն իր պատմավեպում անդրադառնում է երկրի այս ծանր ժամանակաշրջանին. «Ամբողջ երկու տարի բուն Հայաստանը կռվի և արյան դաշտ էր դարձած, բոլոր այդ ժամանակ գյուղացիք վարել, ցանել ու հնձել չէին կարողացել: Եվ ինչպե՞ս կարողանային, քանի որ դաշտ ու ձոր, լեռ ու անտառ հագարացի զորքերով ու հելուզակներով էին բռնված, իսկ ազատ անկյուններումն էլ հայ զորքերն էին միմյանց կոտորում, հայ իշխաններն իրար ջնջում: Այս պատճառով երկրագործները ցրվեցան, այգիներն ու դարաստաններն անխնամ մնացին, ժողովրդի վերջին պաշարը վայրենի զորքերը սպառեցին, և սովը յուր զարհուրելի հետևանքներով բռնացավ Հայաստանի մեջ... հրապարակները լցվել էին մերկ կամ հազիվ ցնցոտիներով ծածկված սովատանջ մարդկանցով, որոնք շրջում էին իբրև ուրվականներ և միմյանց դիպչելուց անշնչացած ընկնում փողոցի մեջ... Փոքր ի շատե ուժ ունեցողները հարձակվում էին այդ դիակների վրա և նրանց միսը ատամներով հոշոտելով լափում...»(Մ 49): Այս պատկերները նույնությամբ կան նաև պատմական սկզբնաղբյուրներում, սակայն վեպում իրականությունը ներկայացված է ավելի վառ գույներով: Մուրացանը կարողացել է իր երևակայության շնորհիվ սարսռազդու տեսարաններ ստեղծել: Եվ այս պայմաններում հայոց սպարապետ Աշոտը դեռ միաբանված էր Յուսուֆի հետ, իսկ թագաժառանգ Աշոտը շարունակ տեղից տեղ էր անցնում և բազում քաջագործություններ գործում պարտության մատնելով նաև Աշոտ սպարապետի զորքին: Իսկ կաթողիկոս Հ. Դրասխանակերտցին ամեն ինչ անում էր՝ այս երկուսի միջև հաշտություն սերմանելու համար, որի հետևանքով նրանք հաճախ կշտամբում էին կաթողիկոսին: Այսքանն է պատմում Հ. Դրասխանակերտցի պատմիչը մինչ Աշոտի թագադրությունը Հայստանում տեղի ունեցող իրադարձությունների և Աշոտ Երկրորդի գործողությունների մասին: Կարելի է ասել, որ Աշոտ Երկրորդի հարձակումները, ճակատամարտերը, ապաստանությունները նկարագրելիս Մուրացանը մեծ մասամբ կրկնել է պատմիչին՝ նրան համարելով հավաստի աղբյուր: Գործողությունների հետագա շղթայում պատմիչն անդրադառնում է Աշոտի ամուսնությանն ու թագադրությանը: Պատմական աղբյուրները Աշոտ արքայի անձնական կյանքի վերաբերյալ առատ տեղեկություններ չեն հաղորդում: Հ. Դրասխանակերտցին գրում է Աշոտի և Սահակ իշխանի դստեր ամուսնության մասին, անդրադառնում է նաև Աշոտի

դեմ Սահակ իշխանի և Ցլիկ Ամրամի կատարած ապստամբություններին, Սահակ իշխանի և նրա որդու՝ Գրիգորի կուրացմանը: Ահա համառոտակի այն բոլորը, ինչ հաղորդում է Դրասխանակերտցին Աշոտի մասին: Դրանից հետո մեկ էլ նա Աշոտի մասին հիշատակում է, երբ պատմում է Բեշիրի՝ Սևանի կղզու վրա հարձակվելու և Աշոտի կողմից պարտության մատնվելու մասին: Մնացած բոլորը Մուրացանն ինքն է ավելացրել: Պատմիչների մոտ չկան *Սահականույշ, Մեղա, Ասպրամ, Շահանդուխտ, Գոհար* անուններով մարդիկ, և այդ բոլորը, ինչպես նաև դրանց հետ կապված դեպքերն ու զրույցները, նույնպես Մուրացանի մտքի վառ դրսևորումներն են:

Վեպում Աշոտը հանդես է գալիս իբրև քաջ ու խիզախ հերոս: Նա ստիպված է ծանր, հաճախ անահավասար մարտեր մղել մի կողմից հազարական զորքի, մյուս կողմից իր և միմյանց դեմ կռվող նախարարների դեմ: Նա առաջին հաղթանակը տանում է Բագրևանդում՝ իրենից խույս տված Յուսուֆի զորքերին ջախջախելով: Աշոտը նրանց գլխավոր իշխանին տիկ է հանում և կախում ամրոցի աշտարակից: Այնուհետև նա հազարացիների դեմ կատաղի մարտեր է մղում Շիրակում և Գուգարքում, իսկ վերջում ազատում է Տփխիսը արաբներից և վերադառնում Ուտիք: Աշոտ արքայի կերպարը քննելիս չենք կարող բավարարվել միայն Աշոտի գործողություններին, պատերազմներին և քայլերին հետևելով: Արքայի վիպական կերպարը բացահայտվում է *Աշոտ-Սահականույշ, Աշոտ-Ասպրամ, Աշոտ-Գևորգ Մարզպետունի* հարաբերությունների ընթացքում: Հիմնվելով Հովհաննես պատմիչի սկզբնաղբյուրի վրա՝ Մուրացանը ոճական հնարքներով ներկայացնում է Աշոտի թագադրությունն ու ամուսնությունը: Բոլոր այս իրադարձությունները վեպում տեղ են գտել հիշողությունների տեսքով ն բացահայտվում են Սեդայի և Սահականույշի զրույցի ժամանակ: Միևնույն զրույցի ընթացքում էլ ի հայտ է գալիս արքայի անհավատարմությունը: Պատանդությունից ազատվելով և վերադառնալով Հայաստան՝ Աշոտը գնում է Ուտիք գավառ՝ Սևորդյաց սգավոր իշխանուհուն մխիթարելու: Այստեղ ահա երիտասարդ Աշոտը տեսնում է Սևորդյաց գեղանի օրիորդ Ասպրամին և սիրահարվում: Այսպես է գրում Մուրացանք, երբ ներկայացնում է, թե ինչ պայմաններում է Աշոտի սրտում երկրային ու երկնային զորության ուժգնությամբ սեր առաջացել: Սակայն պատմիչ Հ. Դրասխանակերտցին ոչինչ չի հայտնում այդ հանցավոր կապի մասին: Պատմիչը միայն այն է հիշատակում, որ Աշոտը այսուհետ հաճախ է այցելում իր սիրելի Ուտիք աշխարհը: Այդ ակնարկը առիթ է տալիս Մուրացանին ստեղծելու լայնածավալ գեղարվեստական կտավ՝ պատմական դեպքերը լրացնելով ստեղծագործական երևակայության պատկերներով:

Պատմական աղբյուրներում և պատմավեպում Բագրատունի երիտասարդ գահաժառանգ Աշոտ Երկրորդը ներկայացված է իբրև բոլոր ժամանակների Բագրատունիներին հատուկ ու ինչ-որ տեղ նաև առավել գերմարդկային հատկանիշներով օժտված անձնավորություն հայրենասեր, աննկուն, անձնուրաց, շնորհաշատ, այլ խոսքով՝ հանճարեղ այր և սպասավոր հայրենիքի համար: Սահակ Սևադայի հպարտ դուստրը, որ այնպես համառորեն մերժել էր իր ձեռքը խնդրած բազմաթիվ իշխանների, մի գաղտնի զորությամբ մղվում է դեպի Աշոտ Երկաթը, դեպի պերճահասակ, վեհադեմ, քաջությամբ և իմաստությամբ այդքան առաջադեմ դյուցազնը. «Չեմ կարող նկարագրել, թե ինչպիսի՜ անձկությամբ էի փափագում տեսնել երիտասարդ թագավորին. ա՛յն դյուցազնին, որ այնքան կարճ ժամանակում ընկճեց, խորտակեց թշնամու զորությունը... ուրախ էի, որ վերջապես պիտի տեսնեմ այսքան ժամանակներից ի վեր ցանկացածս դյուցազնին... և վախենում էի, թե միգուցե նա անտարբերությամբ ընդունե ինձ...»(Մ **40):** Սիրո, երջանկության բուռն ապրումների ժամանակ թագուհուն դեռևս անծանոթ էին գալիք վշտերը: Նա երջանիկ էր ողջ էությամբ:

Նա սիրում էր իր արքայազն Աշոտին, դեռ այն ժամանակ, երբ չէր էլ տեսել, երբ միայն լսել էր այդ դյուցազնի քաջագործությունների մասին, և մի երազանք ուներ սիրել ու սիրվել նրանից:

Հարց է առաջանում, ինչու՞ է Մուրացանը նման կաղապարի մեջ դիտարկում Աշոտ արքայի կերպարը, ի՞նչն է նրան ստիպում որպես թիրախ ընտրել արքայի սերը երբ իբրև թագավոր՝ նա խելոք ու հեռատես է, հասկանում է իր արքայական պարտականությունները և նվիրում հայրենիքի ազատագրման գործին: Վ. Պարտիզունին գրում է. «Վեպում Մուրացանը ցանկացել է անպայման քննել իրեն հուզող մի կարևոր խնդիր՝ ընտանիքի հարցը: Թեև հայրենասիրության համեմատությամբ ընտանիքի հարցը երկրորդական պլան է մղված, սակայն ընտանիքը ազգության պահպանության հիմնական գործոններից մեկը համարելը, Աշոտ Երկաթի անձնական սիրային դրաման պետական մասշտաբի կարևորություն ունեցող խնդրի վերածելը Մուրացանին երբեմն խանգարել է պատմական իրականության առանձին հարցերը ճիշտ ըմբռնելուն, Աշոտ Երկաթի կերպարի ճշմարտացի վերարտադրմանը»[1]: Աշոտ Երկրորդի կերպարի միջոցով Մուրացանը ցանկանում է ցույց տալ, որ ազգի լիարժեքության, ամուր գոյատևման համար անհրաժեշտ է նախ և առաջ խնամքով հոգ տանել ընտանիքի ամրության մասին: Ընտանիքի սրբությունը չհարգելը կործանարար կերպով կարող է ազդել պետության վրա: Այս է Մուրացանի վեպի գաղափարը, իսկ գաղափարակիրը Գևորգ Մարզպետունին է, գաղափարը խեղաթյուրողը՝ Աշոտ արքան: Ազգի ուժը սիրով ու միությամբ ապրող ընտանիքների մեջ է. զորավոր է այն ազգը, որն ունի զորավոր ընտանիքներ: Աշոտ Երկաթն այն կերպարն է, ով դուրս է գալիս այս գաղափարախոսության դեմ: Նրա ամենամեծ հանցանքն այն է, որ ամուսնանում է Սահականույշի հետ այն դեպքում, երբ իր սիրտն արդեն մեկ ուրիշին էր ընտրել: Աշոտը կարողանում է իշխել իր զգացմունքներին և սիրելով, հոգով ու սրտով նվիրված լինելով Ասպրամին, պետական շահերը նկատի ունենալով, «զորավոր թշնամիների առաջ» գրեթե մենակ մնացած՝ ամուսնանում է Սևադա հզոր նախարարի դստեր՝ Սահականույշի հետ, որպեսզի Սևադայի պես ուժեղ զինակից ունենա: Սակայն որոշ ժամանակ անց այլևս հնարավոր չի լինում բռնանալ զգացմունքների վրա: Աշոտն սկսում է ապօրինի կապեր պահպանել Ասպրամի հետ, որը հայտնի է դառնում նաև թագուհուն, Սահակ Սևադային, Ցլիկ Ամրամին: Վեպի հերոսները դատապարտում են Աշոտին Ասպրամի նկատմամբ տածած սիրո համար: Աշոտը ևս իրեն չի արդարացնում: Ապօրինի կապեր հաստատելը սխալ է բոլոր պարագաներում: Բայց կրկնակի մեծ է սխալը, եթե այն թույլ է տալիս ոչ թե հասարակ մի մարդ, այլ արքա, երկրի առաջնորդ, մեկը, ով հազարների համար պետք է օրինակ ծառայի: Նա գիտակցում է իր սխալը. «Ես մի չարագործ եմ»,- ասում է նա իր մասին: Մարզպետունու հետ խոսելիս Աշոտն իրեն համարում է անարժան թագավոր իր ժողովրդի ու հայրենիքի համար: Նա հանցավոր է և՛ հայրենիքի, և՛ Ասպրամի, և՛ իր կնոջ հանդեպ, սակայն իրեն անզոր և անկարող է համարում «չարիքը դարմանելու», որովհետև բնությունը նրան «հրամայել է սիրել Ասպրամին, իսկ մարդ արարածը թշվառ խաղալիք է բնության հզոր ձեռքում»: «Ամենքին կարելի է ներել, բացի նրան, որ կոչված է մարդկանց բախտը կառավարելու, որ պաշտոն ունի ժողովուրդ հովվելու. Առաքինության օրինակ ու առաջնորդ հանդիսանալու.. հասարակաց բարվույն ու երջանկության հսկելու...: Ես այսպիսի մի պատասխանատու անձն էի. աստված ինձ պետ ու առաջնորդ էր կարգել այս ժողովրդյան:

[1] *Տես՝ **Պարտիզունի Վ.**, Մուրացան, Երևան, 1956, էջ 380:*

Բայց միթե պատկառ մնացի ես իմ կոչման. մի՞թե իմ սրբազան պաշտոնը չանարգեցի, մի՞թե բազմաթիվ չարյաց պատճառ չդարձա... Ո՞վ կարող է ինձ ներել, և ինչու՞ պիտի ներե»(Մ 213):

Այս խոսքերն է արտասանում արքան, երբ Սահականույշ թագուհու հետ գտնվում էր Սևանա կղզում: Նա միայնակ էր եկել այստեղ: Եկել էր խորհելու, առանձնանալու, վշտերի ու հանցանքների համար միայնակ արտասվելու: Ամոթն ու խիղճը տանջում են արքային, նա տեսնում է իր արածի կորստաբեր հետևանքները: Հենց այդ պահին Տավուշի մթին խորշերում միայնակ հեծում է իրեն սիրող մի դժբախտ կին, որն ապրում է իր անարգանքի ու նվաստության հետ: Աշոտը սիրում է Ասպրամին, սիրում է ողջ էությամբ, ամբողջ ուժով, նրա ականջին հչում են Ասպրամի տխուր հեծությունները, նրա աչքերի առաջ միշտ երևում են Ասպրամի արցունքոտ աչքերը. «Այդ կնոջ մրմունջը հասնում է մինչև իմ գահույքը, նա շշնջում է իմ ականջին դառն և սրտահույզ խոսքեր. «Մի՛ ծիծաղիր դու, երբ լալիս եմ ես, մի՛ զվարճանար երբ սգում եմ ես...», ասում է նա ինձ, այդ ինչ իրավունքով ես պիտի նորեն աշխարհ մտնեմ, կյանքի բարիքները վայելեմ, քանի որ յուր սիրտն ու էությունը ինձ նվիրող կինը կենդանի թաղված է անհայտության մեջ»(Մ 216): Վաչե Պարտիզունու կարծիքով այս խորհրդածությունների միջոցով Մուրացանը ցանկացել է ընդգծել Աշոտ արքայի մեջ առավել երկրային հատկանիշներ, նրան չի վերագրել սրբի հատկանիշներ, բայց միաժամանակ ծայրահեղության մեջ է ընկել: Հաճախ Աշոտն ընթերցողի աչքին շատ է նսեմանում, դատապարտվում է իբրև ոչ առաքինի վարքի տեր թագավոր. «Նա դարձել է մի թուլամորթ, որի կամքը ավելի անզոր է, քան հովտի եղեգը, որին տատանում է նույնիսկ հովտի շունչը: Նա երկրի օրհասական վիճակում գտնված ժամանակ փակվել է Սևանում, ատում է իրեն և եթե կռվի է դուրս գափս (Ծովամարտ), ապա՝ այդ կռվում սպանվելու, խղճի խայթից ազատվելու ցանկությունն է նրան առաջ մղող հիմնական պատճառը»[1]: Սակայն կարող ենք ասել, որ վեպի ընթացքին զուգահեռ Աշոտ Երկաթի վիպական և պատմական կերպարները միմյանցից հեռանում են: Վեպում Աշոտը նախ և առաջ մարդ է զգացմունք-ներով, հույզերով, թուլություններով: Այնուհետև նա արքա է՝ քաջ, զորավոր, խիզախ, բայց սխալական: Պատմիչ Դրասխանակերտցին բարձր է գնահատում Աշոտ արքային որպես քաղաքական և ռազմական հմուտ գործչի, սակայն երբեմն, երբ նրա արշավանքները անհաջողության են մատնվում, Դրասխանակերտցին դա մեկնաբանում է ամբարտավան կամքի և բղջախոհության հետևանք: Այս հատկանիշների վրա հենվելով՝ Մուրացանը Աշոտ Երկաթին ներկայացնում է նախ որպես մարդու, ապա որպես Աշոտ «Երկաթ»: Ս. Սարինյանը գրում է. «Պատմությունն Աշոտ Երկաթի մեջ կերտում էր հերոսության լեգենդը, բնությունն իր հերթին հյուսում էր մի այլ սիրո գեղեցկության լեգենդը»[2]: Աշոտ Երկաթի դրամատիկ վիճակը, որը Մուրացանը պատկերում է շատ բարձր արվեստով, տարբեր է պատմական Աշոտ Երկաթից: Հոգեբանական այս ծանր վիճակում Աշոտ արքան մնում է միայնակ: Նրանից երես են թեքում մինչև անգամ իր ռազմական դաշնակիցները: Ցլիկ Ամրամը, ում ինքն էր նշանակել Ուտիքի վերակացու, դարձել էր իր առաջին թշնամին: Նա նույնպես հոգեկան ծանր ընկճվածություն էր ապրում: Պատմավեպի մյուս ողբերգական կերպարը հենց ինքն է Ամրամ սեպուհը: Նա իր կնոջը զոհում է խանդի կրքից դրդված: Մուրացանի այս հերոսը խանդը համարում է «ցավերից ամենաանտանելին»: Եթե Սևադա իշխանն իր պատվի համար է դառնում թշնամի, Ցլիկ Ամրամին խանդն է դարձնում վայրագ գազան, որի սրտի մեջ վառվում է «չարության դժոխքը»: Եվ նրանց միակ թշնամին արքան է՝

[1] *Տես՝ **Պարտիզունի Վ.**, Մուրացան, Երևան, 1956, էջ 383:*
[2] ***Սարինյան Ս.**, Մուրացան, Երևան, էջ 293:*

Աշոտ Երկաթը՝ հայոց գահն ու Սահականույշ թագուհուն դավաճանողը, երկու իշխանների պատիվն անարգողը: Այս օրհասական պահին միայն մեկն է թագավորի կողքին՝ հավատարիմ Մարզպետունի իշխանը: Սակայն Մարզպետունին ամենևին չի արդարացնում Աշոտ Երկաթի արարքները, բայց գիտակցում է, որ ամեն ինչից վեր հայրենիքն է, իսկ նա հայրենիքի առաջնորդն է և չի կարելի անձնական վրեժխնդրության զոհ դարձնել հայրենիքը: «Գևորգ Մարզպետունի» պատմավեպի կերպարների առիթով Ա. Տերտերյանը նշում է, որ, եթե Մուրացանը կարողացել է կենդանացնել Ցլիկ Ամրամին և Սահակ Սևադային, ապա Աշոտի կերպարն ամբողջապես տալ նրան չի հաջողվել. «Մենք չենք ասում, թե այդպիսի մարդ հնարավոր չէ, այլ պնդում ենք, որ Մուրացանը չի կարողացել համոզիչ դարձնել գծագրած տիպը: Իր կրքի խաղալիքը դառնալով իբրև մի երեխա Աշոտը գործում է անլուր հանցանքներ, զրպարտում է իր անարատ և առաքինի կնոջը, կալանավորում է բոլորովին անմեղ Վասակին և այդ բոլոր դեպքերում մեղադրում է ինքն իրեն, իր սերը անվանելով «հանցավոր կիրք»... Այդ բոլորը հոգեբանորեն և գեղարվեստորեն չեն ներդաշնակված... Մինչդեռ Մուրացանը կենդանացրել է այնպիսի երկրորդական դեմքեր, ինչպես օրինակ Գոռը, Սեդան. նրան չի հաջողվել Աշոտը»[1]: Այսպիսին է Աշոտ Երկրորդի կերպարի վերաբերյալ Ա. Տերտերյանի կարծիքը: Նույն կերպ է Ա. Տերտերյանը մեկնաբանում նաև Սահականույշի կերպարը: Սակայն նշենք, որ Մուրացանի նպատակը այլ էր. գուցե նա շատ է կենտրոնանում Աշոտի մարդկային թերությունների վրա, բայց իր գաղափարը լիարժեք ներկայացնելու համար հեղինակը, կարծում ենք, ուներ այդ իրավունքը: Այս պարագայում նա ցանկացել է ասել, որ անգամ Աշոտի նման Երկաթին՝ հզոր դյուցազնին, սերը կարող է դարձնել անզոր ու թուլակամ: Դատապարտելով Աշոտ Երկաթ արքային՝ Մուրացանը նախատում է նրան կամային թույլ հատկանիշների, ընտանիքի նկատմամբ ունեցած անհավատարմության համար, բայց չի համարում դավաճան: Ծովամարտը ևս մեկ անգամ ցույց տվեց Աշոտ արքայի ռազմական հանճարը, որ նա տակավին լի էր հայոց երկրի ճակատագիրը տնօրինելու ներքին կորովով: Պատմական վավերագրերում չի նշվում արքայի՝ Սևանի ճակատամարտում վիրավորվելու մասին: Մուրացանը վիպական լուծում է տալիս դեպքերին. «Արաբացու բազուկը չէր կարողացել Աշոտ Երկաթին սպանելու չափ ուժով ձգել աղեղը...»(Մ 242): Աշոտ արքան վիրավորվել էր նետի հարվածից: Մի երկու օրից վախճանվում է թագավորը: Արքունիքում պնդում էին, թե նրա վախճանն արագացրեց Ասպրամ իշխանուհու ինքնասպանությունը: Արքայի կյանքի վերջին տարիները իսկական տառապանք էին նրա համար, այդ պատճառով է Մուրացանը գրում, որ մահը նրա համար հրեշտակի ձեռքով եկավ: Անկախ ամեն ինչից՝ Աշոտ Երկրորդը այնպիսի հերոսական կերպար է, որ թե՛ պատմագրության մեջ, թե՛ Մուրացանի պատմավեպում շարունակում է կրել «Հայոց շահնշահ» պատվավոր տիտղոսը:

[1] ***Տերտերյան Ա.,*** *Մուրացան, Երևան, 1971, էջ 264:*

ՀՏԴ 808.1 **Բանասիրություն**

Անահիտ Հայրապետյան
ԱՀ, Ստեփանակերտ, Արցախի պետական համալսարան
e-mail: hayrapetyana97@mail.ru

ՀԱՅԿԱԿԱՆ ԳՅՈՒՂԻ ՊԱՏԿԵՐԸ Ս. ԱՅՎԱԶՅԱՆԻ ՊԱՏՄՎԱԾՔՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր: *Սուրեն Այվազյան, գյուղագրություն, «Խիղճը» ժողովածու, գյուղացու կերպարներ, Հայրենական պատերազմ, գյուղական աշխատանք, Վարդգես Պետրոսյան, գյուղագրության պատմական արժեք, բանավեճ:*

Անոտացիա: *Հոդվածը նվիրված է 20-րդ դարի երկրորդ կեսի ականավոր արձակագիր Սուրեն Այվազյանի գյուղական կյանքը պատկերող պատմվածքների քննարկմանն ու գնահատմանը: Առանձնապես ուշադրության կենտրոնում է գտնվում գրողի «Խիղճը» ժողովածուն, որին բարձր գնահատական են տվել նշանավոր գրականագետներ Ս. Աղաբաբյանը և Ն. Ադալյանը: Հոդվածում անդրադարձ է կատարված այն բանավեճին, որ տեղի է ունեցել Հ. Մաթևոսյանի և Վարդգես Պետրոսյանի ու Գևորգ Արշակյանի միջև:*

Հոդվածի հեղինակը մատնանշում է Հր. Մաթևոսյանի բարձր կարծիքը գյուղագրության վերաբերյալ, ընդունում է այն ճշմարտությունը, որ գրականության մեջ կարևորը ոչ թե թեման է, այլ գրականության գլխավոր առարկայի՝ մարդու կերպարի ստեղծումը: Հաստատվում է, որ Ս. Այվազյանի գյուղական կյանքը պատկերող արձակն արժանի է ուշադրության:

Анаит Айрапетян

Ключевые слова: *Сурен Айвазян, сельская литература, сборник “Совесть”, образы, отечественная война, сельская работа, Вардгес Петросян, историческая ценность сельской литературы, дискуссия.*

Статья посвящена обсуждению рассказов о сельской жизни известного армянского писателя 2-ой половины 20-го века С. Айвазяна. В центре внимания находится сборник автора “Совесть”, который был высоко оценен известными литературными критиками С. Агабабяном и Н. Адаляном. В статье говорится о дискуссии, которая состоялась между Г. Матевосяном и В. Петросяном, Г. Аршакяном.

Автор статьи положительно оценивает отношение Г. Матевосяна к сельской теме, признает, что в литературе важна не только тема, но и создание образа человека, который является главным предметом литературы. Подчеркивается, что проза С. Айвазяна заслуживает внимания.

Հայ գրականության պատմության մեջ պատմվածքը՝ որպես գրական ժանր, առանձնացել է ժանրային յուրահատկություններով: Տարբեր ժամանակներում, ընդգրկելով թեմատիկ լայն սահմաններ, այն ճշմարտացիորեն արտացոլել է ժամանակի պատկերը: Հայրենական մեծ պատերազմի և դրան հաջորդող տարիներին մի խումբ քննադատներ հակված էին այն կարծիքին, որ պատմվածքը մղված է երկրորդական պլան, քանզի այդ ժամանակ հիմնականում ստեղծվում էին լայն կտավի գործեր: Այդ շրջանում լույս տեսան Դ. Դեմիրճյանի «Վարդանանք», Ստ. Զորյանի «Պապ թագավոր»,Ն. Զարյանի «Արա Գեղեցիկ» և այլ արժեքավոր ստեղծագործություններ: Այդ փուլում, սակայն, հանդես եկան մի խումբ արձակագիրներ, որոնք, ժառանգելով գրական նախորդ շրջանների լավագույն ավանդույթները, խորհրդահայ իրականության մեջ վերաարժևորեցին պատմվածքի գրական ժանրը: Գրականագետ Նորայր Ադալյանը 1950-60-ական թթ. հայ արձակի զարգացման միտումների մասին նկատում է. «*Պատմվածքի վերածնունդը տեղի է ունենում հոգեբանական խոր պեղումներով: Երևան են գալիս նոր հերոսներ՝ իրենց ճակատագրով, մտավոր ու զգացմունքային նկարագրով, իրենց հոգսով*» [3,էջ 167]: Նրանց շարքերում է նաև հայ անվանի արձակագիր Ս. Այվազյանը, ով հանդես եկավ արձակի մեծ թե փոքր ժանրերի շրջանակներում: Հեղինակի վեպերի ու վիպակների կողքին դրվեցին նրա «Անավարտ գորգը» (1947), «Խիղճը» (1956), «Գարունս ձյուների տակ» (1972) ժողովածուները:

Ս. Այվազյանի վերոնշյալ ժողովածուների մեջ իր գեղարվեստական առանձնահատկություններով աչքի է ընկնում «Խիղճը» ժողովածուն: Այն բաղկացած է երեք շարքից՝ «Ձորերի ձայնը», «Հանդիպումներ ճանապարհին», «Նավթաշխարհում» խորագրերով: Դրանցում ընդգրկված են հեղինակի կյանքի վերջին տարիներին գրված պատմվածքները, նովելները և մի քանի արձակ բանաստեղծություններ: Ժամանակային ու տարածական առումով ժողովածուում գործողությունները կատարվում են պատմական Խնձորեսկ գյուղում՝ Հայրենական մեծ պատերազմի տարիներին:

Այս ժողովածուի մեջ Ս. Այվազյանը պատմական թեմայից անցում է կատարում ժամանակի հասարակական կյանք, շոշափում սիրո, ընտանիքի, կարոտի, մարդկային փոխհարաբերությունների և այլ հիմնախնդիրներ: Սակայն հեղինակը չի շրջանցում պատերազմն ու պատմական անցյալը: Պատերազմն արդեն ներկայանում է վերհուշի տեսքով: Այս երկերում չկան անմիջական գործողություններ, կան հիշողություններ ու խորհրդանիշ-իրեր: Այսպիսինն են «Լուռ Լալազար», «Եվա», «Փակ դարպասի առաջ», «Փրթոսի ընկուզենին» պատմվածքները: Հերոսներից յուրաքանչյուրն ունի իր ողբերգական պատմությունը: Չնայած Լալազարը պատերազմի հետևանքով կորցրել էր ականջը, այլանդակվել է դեմքը, բայց նա խնամքով ու առանձնակի ջերմությամբ էր պահում պատերազմից բերված կաթսայիկն ու տափաշիշը: Եվա Սոլոմոնովնան («Եվա») մայրական ողբերգություն է ապրել՝ կորցնելով որդուն: Իսկ ահա Փրթոսի ընկուզենին,համանուն պատմվածքում, պատմության վկայագիրն է, ինչպես կարդում ենք պատմվածքում,«նրա տակ է մեծանում Խնձորեսկի պատմությունը»: Ընկուզենու տակ են հավաքվում առօրյա հոգսերից ծանրացած գյուղացիները և պատմում իրենց քաջերի մասին. *«Հին է այն ընկուզենին, որ խշշում է գյուղից վեր մեծ ճանապարհների վրա, ու խշշոցը գիշերվա լռության մեջ հոսող ավազի պես իջնում է ձորը…Եվ ինչե՞ր է հիշեցնում այդ խշշոցը… Ինչպիսի պատմություններ մեռած-գնացած խնձորեսկցիների մասին, որ խշշոցի պես սկզիբ են առել հինավուրց ընկուզենու տակից, տարածվել գյուղում, ապա ուրիշ տեղեր»* [2, էջ. 18]: Ժողովրդի հավաքական կերպարն է ներկայացնում Ունանանց Ունանը, որ միշտ նստում էր ընկուզենու տակ և փիլիսոփայական խոր ընդհանրացումներ անում ժամանակի իրադարձությունների մասին: Նրա կողքին են Ղրդիլ Ալեքսանը, ով մարմնավորում է խնձորեսկցիների անհնազանդությունը, ծեր Խաչի ապերը, որ, թեկուզ կուրացած, տեսնում է իր միակ որդու՝ Արմենակի մահը, Սահականց Բարխուդարը, որ պատերազմ է ուղարկում չորս որդիներին՝ պատգամելով. «*Էնպես արեք օջախիս ծուխը չկտրեք, չեմ ասում գլուխ պահեցեք, վայ ձեզ, թե խնձորեսկցու անունը ոտնատակ տաք*» [2, էջ 29], Թոփչի Խաչանը, որ ամեն պատրաստակամություն հայտնում է պատերազմին մասնակցելու համար: Նրանց բոլորին հակադրված է Դնգլաց Արշակը՝ իր վարքագծով: Նա կտրել է տալիս Փրթոսի ընկուզենին՝ չգիտակցելով, որ ծառը հայ ժողովրդի հարատևության, վերածնության խորհրդանիշն է: Այս մասին են վկայում երիտասարդների տնկած նոր շիվերը:

Ս. Այվազկանի «Խիղճը» ժողովածուի շարքերի վերնագրերը որոշակի հոգեբանական նախահիմք են ստեղծում՝ նրանցում ընդգրկված պատմվածքների գաղափարն առավելագույնս ընկալելու համար: Խղճի, խղճահարության և մարդկային այլ որակներ են արտահայտված «Ձորերի ձայնը» պատմվածքում: Այստեղ մարդու ցավի ու տառապանքի սպեղանին բնությունն է: Որդեկորույս Շափաղաթ ապորն արձագանքում են ձորերը: Այս արձագանքի հետևից է գալիս վիպական հերոսը և տեսնում զոհված ընկերների հիշատակին կառուցված աղբյուրները. «*Ձորերը խոսում են խաղաղ և հուզող լեզվով… Ձորե՞ր երակների պես ճյուղավոր, հոգու պես խոր, խորախորհուրդ… Թվում է՝ ոչինչ, ոչինչ*

չի փոխվել մեր ձորերում: Բայց այդ պահին Շափաղաթ ապերն է կանգնում իմ առաջ, իր կախված հոնքերի տակից նայում ինձ» [2, էջ 16-17]:

Ընտանիքի, ամուսնության, մարդկային հարաբերությունների խնդիրներն են շոշափվում «Վիշտը», «Թխկուտի ձորում», «Գող», «Հերիք», «Մարդը» պատմվածքներում: Կնոջ նկատմամբ ունեցած անսահման սերը ծանր տառապանքների մեջ էր գցել Մեհրուն, որի միակ սփոփանքն աշխատանքն էր. «*Տանը խեղդվում էր վշտից: Նա ուզում էր միշտ մարդկանց մեջ լինի: Դրա համար էլ սեղանը քաշեց լուսամուտի առաջ, որի տակով ճանապարհն էր անցնում*» [2, էջ 58]: Տառապանքից է ծնվում նրա սերը Սոնայի նկատմամբ, որն այնքան նման էր հանգուցյալ կնոջը՝ Շարմաղին: Հոգեբանական խոր դրամատիկ պատկեր է ստեղծված «Թխկուտի ձորում» պատմվածքում: Գլխավոր հերոսը՝ Շամոն, դեմ է կանգնում ավանդական կապանքներին՝ ամուսնանալով Շուշանի հետ: Այս անցումը կատարվում է շատ արագ և սահուն: Սակայն սա չի նշանակում, որ կերպարն անհամոզիչ է, քանզի Շամոն անգամ ամուսնացած ժամանակ ծանր ապրումների մեջ էր. «…*Երեխային բարձրացնում է ձեռքերի վրա, բայց ուրախության խանդաղատանքի հետ միասին, նրա սրտում խլրտում է և վիշտը, որ նրա ծիծաղող աչքերը լցնում է արցունքով*» [2, էջ 55]: Սոցիալական ծանր պայմանների արձագանքն է «Հերիք» գործը: Սակայն ամենադժվարին պահին Հակոբջանի մեջ խոսում է հայրական բնազդը. «*Ջադու, թե մեկ էլ էդպես բան ասացիր՝ լեզուդ տեղից կհանեմ: Մարդ իր երեխային ինչպե՞ս կարող է սպանել*» [2, էջ 73]:

Նահապետական բարքերի զոհերն են նաև Հաբին («Խիղճը») և Շուշանը («Բախտը»): Շուշանը սիրում էր Դավիթին, բայց ինչպե՞ս ասեր, ընդունված չէր. «*Աղջիկն ինչպե՞ս կարող է սիրել, նա պետք է սպասի, որ մեկն իրեն սիրի*» [2, էջ 95]: Ցավը, հիշողություններից ծնված տառապանքը, անսեր ընտանիքն ինքնամփոփ ու լռակյաց էին դարձրել Հաբուն: Նա ապրում էր միայն խղճի զգացումով. «*…Ինքն ամուսնացել է Կատինի հետ, Շուշանին է սիրում, Շուշանն էլ իրեն է սիրում, իսկ ամուսնանալ չեն կարող… և՛ Կատինին է խղճում, և՛ Շուշանին, և՛ երեխաներին*» [2, էջ 89]:

«Ձորերի ձայնը» շարքում Ս. Այվազյանը ամբողջացնում է մարդու կերպարն՝ նրան ներկայացնելով աշխատանքի մեջ, քանզի ինչպես գրականագետ Ս. Աղաբաբյանն է ասում. «*Աշխատանքը մարդու կյանքի հիմքն է… Այդ պատճառով էլ նոր մարդու հոգեկան աշխարհի գեղարվեստական յուրացումը պետք է սկսվի նրա հիմքերի նվաճումից, աշխատանքի գաղափարի, նրա փիլիսոփայության խոր և լայն յուրացումից*» [1, էջ 8]: Նույն մոտիվներով են գրված «Հովասափ պապը», «Հովասափ պապը և կենտկոմի քարտուղարը», «Սուկուլենց Լևոնը», «Լակը» երկերը: Այգեպան Հովասափը համոզված է, որ իրեն աշխատանքն է պահում. «*աշխատանք չարի՝ կմեռնեմ… Աշխատանքն է պահում: Ասեմ, թե ինչպես. ծառ տնկեցիր՝ ջրել է պետք, մտածում ես ջրելու մասին ու չես մեռնում…Դե ինչպես մեռնես, ծառը ո՞վ պիտի ջրի*» [2, էջ 139]: Բոլորովին այլ բնույթ ունի Սոնան («Կինը»): Կոլտնտեսության չարքաշ աշխատանքը խլել էր նրա գեղեցկությունը և պատճառ դարձել մեկ այլ ողբերգության. Սոնայի ընկերը՝ Մուշեղը, չի կարողանում ընդունել Սոնայի «գեղեցկության կորուստը» և մտածում է, որ «*իր կորցրած Սոնային պետք է գտնի այս Սոնայի մեջ*»:

Բացի բովանդակային ու կերպարային նշված առանձնահատկություններից Ս. Այվազյանի վարպետությունը դրսևորվում է նաև պատկերակերտման մեջ: Գրողին հաջողվել է առանձնակի նրբությամբ նկարագրել Խորաձորի տեղանքը, բնությունը. «*Ձորը լցվել է ամպերով: Ամպերի տակ մնացել գյուղը, գետակը, բլուրները՝ բարձր ու ցածր: Ամպերից վեր լեռնագագաթներ են, որ ասես իրենց վրա պահում են երկնքի կապո՛ւյտ,*

կապո՛ւյտ կամարը…» [2, էջ 40]: Այստեղ հստակորեն գծագրվում է խորաձորցու բնավորությունը, արտաքինը՝ լայնաթիկունք, սևաբեղ:

«Խիղճը» ժողովածուի պատմվածքներով Ս. Այվազյանը հարստացրեց գյուղական արձակը, որը քաղաքակրթության, գիտատեխնիկական այդ փոփոխությունների շրջանում թվում էր, թե պետք է մոռացվեր:

Այստեղ արժե հիշել Հր. Մաթևոսյանի բանավեճն արձակագիրներ Վ. Պետրոսյանի և Գ. Արշակյանի հետ: Վերջիններս ձգտում էին ապացուցել, որ գյուղագրությունը հնացած երևույթ է: Հր. Մաթևոսյանը չէր ընդունում այդ, իրոք, անհեթեթ կարծիքը՝ գրելով, «Գրականությունը գյուղական **ես**-ի արտացոլումն է, և եթե դու մարդ ես, գրող ես, քսաներորդ դարի երկրորդ կեսի հայ գրող ես, եթե իսկապես գրող ես, կամ քո գրվածքները ցողված են ամենաչնչին իսկ անկեղծությամբ, ապա չի կարող պատահել, որ քո ծնած մարդիկ լինեն տասնմեկերորդ դարի շվեդներ: Իսկ եթե գրող չես, ապա գումարիր ու բաժանիր բոլոր ֆիզիկոսներին, հովիվներին ու հանքափորներին, քանորդում ստացիր քսաներորդ դարի հայ իրականության երկրորդ կեսը ճշգրտորեն արտացոլող մի ֆիզիկոս-հովիվ, բայց դա չի լինի մարդ, այլ կլինի գումարում, բաժանում և քանորդի պատասխան» [5, էջ 31]:

Ինչպես դիտարկում է գրականագետ Սոկրատ Խանյանը՝ «Հր. Մաթևոսյանը սպառիչ պատասխան է տվել գյուղագիր և գյուղագրություն հասկացությունների մասին եղած հնամաշ կարծիքին: Նա չի ընդունում գրողներին ըստ թեմաների դասակարգելու երևույթը, ընդգծելով գրականության գլխավոր առարկայի՝ հասարական մարդու կերպարի ստեղծման առաջնահերթ խնդիրը» [4, էջ 6]:

Ժամանակին Ս. Այվազյանի ստեղծագործությունն արժանացել է անվանի գրողների և գրականագետների ուշադրությանը: Նա համարվել է նորագույն շրջանի հայ գրականության տաղանդավոր ներկայացուցիչներից մեկը:

Հիրավի, այդպես է: Ս. Այվազյանի ստեղծագործությունը սպասում է իր նոր գրաքննադատների ուսումնասիրությանը:

Օգտագործված գրականության ցանկ

1. Աղաբաբյան Ս., Արդիականություն և գրականություն, «Հայաստան» հրատ, Երևան, 1965թ.:
2. Այվազյան Ս., Խիղճը, ՀայՊետ հրատ, Երևան 1953թ.:
3. Ժամանակակից հայ արձակ,ՀՍՍՀ ԳԱԱ հրատ., Երևան, 1981թ.:
4. Խանյան Ս., Հրանտ Մաթևոսյանի գրական հայացքները, «Դիզակ Պլյուս» հրատ., Ստեփանակերտ, 2006:
5. Մաթևոսյան Հր., Սպիտակ թղթի առջև, Երևան, 2004:

ՀՏԴ 809.198 Բանասիրություն

Անահիտ Մատինյան
Վանաձորի պետական համալսարան
matinyan.anahit@bk.ru

ԳՐԱԲԱՐԻ «Ե» ԽՈՆԱՐՀՄԱՆ ԱՆԿԱՆՈՆ ԲԱՅԵՐԻ ՔԵՐԱԿԱՆԱԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *անկանոն բայ, անկանոնություն, զարտուղություն, հիմք, ձևային փոփոխություն, կանոնավորում:*

Դեռևս գրաբարի քերականները նկատել են, որ բայերի խոնարհման համակարգում կան շեղումներ կանոնավոր ձևերից, այսինքն՝ բայերի մի մասն *ունի խոնարհման յուրահատուկ ձև:* Օրինակ՝ Կղեմես Գալանոսը բայերի համար թվարկում էր հինգ լծորդություն՝ իբրև հինգերորդ խումբ առանձնացնելով անկանոն բայերը, որոնց անցյալ կատարյալի հիմքը կազմվում էր նախորդ լծորդություններից տարբեր ձևով: Ոսկան Երևանցին առանձնացնում էր բայերի տասը կարգ, որոնցից մեկը ներկայի և անցյալի տարբեր արմատներ ունեցող բայերն էին՝ անկանոն բայերը, Մխիթար Սեբաստացին նույնպես բայերի շարքում առանձնացնում էր անկանոն խոնարհում ունեցող բայերը և այսպես շարունակ[1]:

Հայոց լեզվի պատմության բոլոր շրջաններում անկանոն բայեր գոյություն են ունեցել: Սրանց մասին քերականության մեջ տարածված են հակասական կարծիքներ. լեզվաբանների մի խումբ՝ Մ. Չամչյանը[2], Ա. Այտընյանը[3], Հր. Աճառյանը[4] զարտուղի են համարում այն բայերը, որոնք խոնարհման սովորական ձևից որոշ շեղումներ են ցույց տալիս (*ասեմ-ասաց*), իսկ երբ այդ շեղումներն ավելի խոր են և ազդում են նաև արմատի վրա, կոչում են *անկանոն* բայեր (*առնեմ-արար*)[5]: Նման տեսակետ ունեն նաև Ա. Ղարիբյանը[6], Ա. Աբրահամյանը[7], Հ. Ավետիսյանը, Ռ. Ղազարյանը[8]: Մինչդեռ լեզվաբանների մեկ այլ խումբ՝ Մ. Աբեղյանը[9], Գ. Խաչատրյանը[10], Պ. Շարաբխանյանը[11] դրանք չեն առանձնացնում իրարից:

Անկանոն բայերի համակարգը կայուն ու միօրինակ չէ: Սրանք լեզվի պատմական զարգացման տարբեր շրջաններում ենթարկվել են զանազան փոփոխությունների: Գրաբարից մեզ հասած անկանոն բայերը նույնությամբ չեն պահպանվել. դրանց մի մասն արևելահայ գրական լեզվում վերածվել է կանոնավոր բայերի:

Գրաբարում անկանոն էին *«ե»* խոնարհման *ուտեմ, դնեմ, առնեմ լսեմ, յառնեմ, ըմպեմ*

---

[1] *Տե՛ս **Ջահուկյան Գ.**, Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:*
[2] *Տե՛ս **Չամչյան Մ.** ,Քերականութիւն հայկազեան լեզուի, ի Վենետիկ, 1779, էջ 103:*
[3] *Տե՛ս **Այտընյան Ա.**, Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987, էջ 454:*
[4] *Տե՛ս **Աճառյան Հ.**, Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Ա, Երևան, 1959, էջ 311:*
[5] *Տե՛ս նույն տեղում, էջ 324:*
[6] *Տե՛ս **Ղարիբյան Ա.**, Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Յերևան, 1937, էջ 143:*
[7] *Տե՛ս **Աբրահամյան Ա.**,Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 186:*
[8] *Տե՛ս **Հ. Ավետիսյան, Ղազարյան Ռ.**, Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976, էջ 163:*
[9] *Տե՛ս **Աբեղյան Մ.**, Երկեր, հ. Զ, Երևան, 1974, էջ 735:*
[10] *Տե՛ս **Խաչատրյան Գ.**, Գրաբար, Երևան, 2014, էջ 283:*
[11] *Տե՛ս **Շարաբխանյան Պ.**, Գրաբարի դասընթաց, Երևան, 1974, էջ 197:*

բայերը[1]:

Ինչպես, օրինակ, ***ուտեմ*** բայը *գրաբարում* անկանոն էր անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում (այն է՝ անցյալ կատարյալ, երկրորդ ապառնի, բուն հրամայական, հորդորական հրամայական, անցյալ դերբայ, ենթակայական (ներկա) դերբայ)[2], քանի որ այստեղ հանդես էր գալիս ***կեր*** արմատը…, ***դնել*** բայի շեղումներն ու յուրահատկությունները նույնպես երևան էին գալիս անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերում: Անցյալ կատարյալում հանդես էր գալիս ***եդ*** հիմքը (որտեղ *է*-ն հավելում էր)՝ *Վիշապազունք զողացան զմանուկն Արտաւազդ//Եւ դն փոխանակ* ***եդին*** [12, 14], ***Եդին*** *զանձինս զրաւականս բազմաց//Եւ եդեն փրկանք անծանօթ աշխարհին* [13, 90]: ***Առնեմ*** բայը անկանոն էր, քանի որ անցյալ կատարյալի հիմքը հանդես էր գալիս ***արար*** ձևով՝ ***ար*** արմատի կրկնությամբ: Նույնը կարող ենք ասել նաև ***լսեմ, յառնեմ, ըմպեմ*** բայերի մասին, որոնք անցյալ կատարյալի հիմքը կազմում էին մասնակի կամ ամբողջական փոփոխություններով, ինչպես՝ ***Լուան*** *թագաւորք և լցան խնդութեամբ* [13, 88]:

Գրաբարի *«է»* խոնարհման անկանոն բայերը, ըստ կրած ձևային փոփոխությունների, դասակարգել ենք հետևյալ կերպ.

ա) բայեր, որոնք լեզվի զարգացման բոլոր շրջաններում պահպանել են և՛ անկանոնությունը, և՛ ելակետային ձևը՝ բառույթը[3]՝ ***ուտեմ, դնեմ,***

բ) բայեր, որոնք լեզվի զարգացման բոլոր շրջաններում պահպանել են անկանոնությունը, բայց փոխել են բառույթը՝ ***առնեմ,***

գ) բայեր, որոնք լեզվի զարգացման բոլոր շրջաններում պահպանել են բառույթը, բայց վերածվել են կանոնավոր բայերի՝ ***լսեմ, ըմպեմ,***

դ) բայեր, որոնք լեզվի զարգացման շրջաններում փոխել են բառույթը և վերածվել կանոնավոր բայերի՝ ***յառնեմ:***

Վերը նշված խմբավորումը կարող ենք արտահայտել նաև հետևյալ գծապատկերով (տե՛ս գծապատկեր 1).

Գծապատկեր 1



[1] *Անկանոն բայերի մեկ այլ խումբ՝ ասեմ, գիտեմ, կարեմ և այլն ընդհանուր օրինաչափության մեջ բերվում էին որպես բացառություններ: Սրանք կոչվումէին զարտուղի բայեր: Մեր աշխատանքում մենք անդրադարձել ենք միայն բուն անկանոն բայերին:*

[2] *Մեր աշխատանքում մենք անդրադարձել անկանոն բայերի միայն անցյալ կատարյալի հիմքից կազմվող ձևերին, քանի որ, ինչպես գիտենք, անկանոնությունները երևան են գալիս անցյալ կատարյալում ու նրա հիմքից կազմվող ձևերում, իսկ ներկայի հիմքից կազմվող ժամանակների մասին կխոսենք ըստ անհրաժեշտության:*

[3] *Բառույթի փոփոխություն ասելով՝ մենք նկատի չունենք մ>լ անցումը:*

Միջին հայերենում վերը նշված անկանոն բայերի մի մասը պահպանվել էր նույնությամբ, մյուս մասն արդեն ձեռք էր բերել կանոնավորման հատկանիշներ: Ինչպես, օրինակ, ***ուտել*** բայը անկանոն էր. անցյալ կատարյալի հիմքում ու նրանից կազմվող ձևերում նույնպես հանդես էր գալիս ***կեր*** արմատը՝ «*Բ մթխալ տէկ պարտէկ* ***կերաւ»***[1]***,*** *Ա՜յ իմ մարիկ, ես քեզ ծառայ,//Զկաթդ որ* ***կերայ****, հալալ արայ* [10, 228]: ***Դնել*** բայի անցյալ կատարյալը հանդես էր գալիս ***եդ, եդաք*** ձևերով, ինչպես՝ *«Արդուն դանըն աստված* ***եդիր****,//Ո՞վ է հաղթող Արդուն դանին»*[2], *«Փառք զնա զարդարեաց և* ***եդ*** *ի դրախտին»*[3]: Հրամայականում արդեն գործածական էր ***դրէ՛ք*** ձևը՝ *Գործեցի զչարն զայն կամօք բանսարկուին,//Դու ծանր ապաշխարանք* ***դիր*** *իմում անձին* [14, 115], *Խն Յովաննէս Թուրկուրանցի,//****Մի՛ դներ*** *զքեզ պիղծ բաներու* [10, 38]*:* ***Առնեմ*** բայը հանդես էր գալիս ***անել, այնել, այրնել*** ձևերով:[4] Միջին հայերենում այս բայը նույնպես անկանոն էր, այն պահպանել էր գրաբարի անցյալ կատարյալի անկանոն ձևերը՝ ***արարիր, արար…*** ՝ «*Տեսեք, թե ի՞նչ* ***արար*** *աստված,//Ի հատուցումըն հրզորին»*[5], *Կտրեց ւ՚անցաւ առիւծնման,//Զհեծելն* ***արար*** *փախըստական* [10, 59]*,* սակայն հրամայականը կազմում էր կանոնավորված՝ ***արէ՛ք*** ձևով՝: Միջին հայերենի հաջորդ շրջաններում՝ *15-17-րդ դդ.,* տարածվում են ***առնել*** բայի անցյալ կատարյալի ***արի, արիր, արեց կամ արաւ…,*** ձևերը իսկ հրամայականում՝ ***արա՛, արէ՛ք*** նոր ձևերը[6]՝ *«Զամենն է հաշվով զուգեր անղալատ աստված դատավոր,//Ե՞յ, Չարիս, ա՞մ հերիք* ***արա՛****, ու ձրգե ըզքակդ ի հ՚ոլոր»*[7], *«Զիս արժան տեսոյդ քո* ***արա՛»***[8]: *«Նա ամենայն զբլխավորացն,//Զինչ ի մեկտեղ խորհուրդ* ***արին»***[9]: ***Լսել*** բայի անցյալ կատարյալը կազմվում է կանոնավոր կերպով՝ ***լսեցի, լսեցիր»*** ՝ *Խն Յովաննէսն երբ զայն* ***լսեց****,//Բռնեց զճանփան ի յետվնին* [10, 228]: Հրամայականում տարածված ձևեր են ***լսէ՛, լսեա՛, լսեցէ՛ք, լսէ՛ք:*** Հանդիպում են նաև գրաբարյան ձևերը՝ ***լուայ, լուարուք***[10]: *«Այդանօր* ***լո՛ւր*** *զիմս հառաչանք յերկինսդ»:* Ավելի ուշ շրջանում հրամայականը հանդիպում է ***լսէ՛, լսեցէ՛ք*** ձևերով՝ «*Իբրն* ***լսեցին*** *գողքն զբանս զայս, խիստ ուրախացան և հաւատացին պատրողական բանիցն..»*[11]:

Արևելահայերենում անկանոն բայերը կա՛մ պահպանվել են նույնությամբ, կա՛մ վերջնականապես վերածվել կանոնավոր բայերի: Այստեղ արդեն չունենք միջինհայերենյան խառը վիճակը: *Արևելահայերենում* բայը պահպանել է անկանոնությունը, անցյալի հիմքը շարունակում է կազմվել ***«կեր»*** ձևով, ինչպես՝ *«…վրա եկանք,* ***կերա՞նք, կերա՞նք****…»*[12]: *«Ինձ քըրքըրի, ինձ* ***կե՛ր*** *հում-հում»*[13]: *«Այս է մարմինն իմ. առեք ու* ***կերեք»***[14]: ***Դնել*** բայի

---

[1] ***Խաչատրյան Գ., Շահվերդյան Թ., Պետրոսյան Լ.****, Գրական հայերենի պատմության դասընթաց, մաս Ա, Երևան, 2018, էջ 270:*

[2] ***Ֆրիկ****, Ժողովածու, Յերեվան, 1937, էջ 163:*

[3] ***Աղթամարցի Գ.****, Տաղեր, Երևան, 1984, էջ 18:*

[4] ***Ղազարյան Ռ., Ավետիսյան Հ.****, Միջին հայերենի բառարան, Երեւան, 2009, էջ 42:*

[5] ***Ֆրիկ****, Ժողովածու, Յերևան, 1937, էջ 164:*

[6] *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան, 1972, էջ, էջ 399:*

[7] ***Ֆրիկ****, Ժողովածու, Յերևան, 1937, էջ 159:*

[8] ***Աղթամարցի Գ.****, Տաղեր, Երևան 1984, էջ 17:*

[9] *Նույն տեղում, էջ 164:*

[10] *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան 1972, էջ 351:*

[11] *Խաչատրյան Գ., Շահվերդյան Թ., Պետրոսյան Լ., Գրական հայերենի պատմության դասընաց, մաս Ա, Երևան 2018, էջ 247:*

[12] ***Թումանյան Հ.****, Ընտիր երկեր, Երևան 1978, էջ 368:*

[13] *Նույն տեղում, էջ 118:*

[14] ***Սևակ Պ.****, Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1973, էջ 245:*

անցյալի հիմքն է ***դիր***, սրանից կազմված համապատասխան ձևերով: ***Դրեցի, դրեցիր***… ձևերին զուգահեռ գործածվում են նաև ***դրի, դրինք***… ձևերը՝ «*Պղինձը **դրին** կրակին, քարերն ածին կրակի մեջ ու նստոտեցին*»[1]: Հրամայական եղանակում նույնպես ունի զուգաձևեր՝ «*Միրո՛ւն տիկնայք, ջահե՛լ տըղերք,//Լա՛վ ու **դրրեք** իմ խաղին*»[2]:

Աղյուսակ 1

Գրաբար	Միջին հայերեն	Արևելահայերեն
Ուտեմ	Ուտել	ուտել
Դնեմ	Դնել	Դնել
Առնեմ	Անել, այնել, այրնել	Անել
Լսեմ	Լսել	Լսել
Յառնեմ	Հ?առնել	Հառնել???
Ըմպեմ	Ըմպել	ըմպել

Նշված բայերից բացի՝ գրաբարում անկանոն էին նաև *«է»* խոնարհման *ասեմ, գիտեմ, կարեմ, մարթեմ, մերկեմ, ածեմ, բերեմ, հանեմ, համբերեմ, հեղուսեմ, դարմանեմ, սերմանեմ, ժամանեմ, խափանեմ, կործանեմ, հարկանեմ, ատեմ, յանցանեմ, մեղանչեմ* և մի շարք այլ բայեր, սակայն սրանք, մի շարք հեղինակների գնահատմամբ, ինչպես վերը նշվեց, գնահատվում էին ոչ թե անկանոն, այլ զարտուղի: Զարտուղի բայերին մեր աշխատանքում մենք չենք անդրադարձել:

Այսպիսով՝ անկանոն բայեր գոյություն են ունեցել հայերենի պատմական զարգացման բոլոր շրջաններում: Միջին հայերենից սկսած՝ գրաբարի անկանոն բայերի համակարը փոփոխվել է. դրանց քանակը ժամանակի ընթացքում նվազել է՝ աստիճանաբար ավելի պարզեցնելով ու միօրինակ դարձնելով լեզուն: Անկանոն բայերի քանակային փոփոխությունները պայմանավորված են եղել անկանոնության ըմբռնումներով, հեղինակային տեսակետներով ու լեզվի՝ անմիօրինակությունների հաղթահարման ու պարզեցման միտումներով: Գրաբարի անկանոն բայերի աստիճանական պարզեցումը և դրանց քանակի նվազումը կարող ենք արտահայտել հետևյալ գծապատկերով (Տե՛ս գծապատկեր 1):

Գծապատկեր 1



Կանոնավորից անցումը անկանոնության կամ հակառակը տեղի չի ունեցել միանգամից

[1] ***Թումանյան Հ.***, *Ընտիր երկեր, Երևան, 1978, էջ 300:*
[2] *Նույն տեղում, էջ 247:*

և կոնկրետ որևէ ժամանակաշրջանում, այլ լեզվի գոյություն ունեցող քերականական կանոնների աստիճանական, երկար դարերի ընթացքում կրած փոփոխություններով, նոր կանոնների առաջացումով ու հների վերացումով, աստիճանաբար ի հայտ են եկել կանոնավորման միտումները, ու հաջորդ որևէ փուլում արդեն տվյալը բայը դարձել է կանոնավոր: Այսպես, օրինակ, ***ըմպել*** բայի անցյալ կատարյալի հիմքում ու նրանից կազմվող ձևերում գրաբարում միշտ հանդես էր գալիս ***արբ*** արմատը՝ ***արբի, արբեր…, արբեալ..,*** միջին հայերենում այս բայն անցյալ կատարյալում հանդիպում է կանոնավոր ***ըմպեաց*** ձևով, իսկ ենթակայականը, ինչպես գրաբարում՝ ***արբեցող***[1]: Արևելահայերենում բայը վերջնականապես կանոնավորվել է՝ բոլոր ձևերը կազմում է հենց ***ըմպել*** բայով՝ ***ըմպեցի, ըմպեցիր…, ըմպող…:*** Կամ արևելահայերենում ***ելնել*** բայն անկանոն է, քանի որ եզակի հրամայականը կազմում է ***ե՛լ*** անկանոն ձևով[2], սակայն սրան զուգահեռ սկսել է կիրառվել նաև այս բայի կանոնավորված՝ ***ելի՛ր*** ձևը և հնարավոր է, որ ժամանակի ընթացքում պահպանվեն միայն կանոնավոր ձևերը, ու բայն արդեն անկանոն չլինի:

Լեզուն ձգտում է միօրինակության, անկանոնություններն ու շեղումները վերացնելու: Ժամանակի ընթացքում որոշ բայեր դադարել են պակասն ուրիշ բայով լրացնելը, ու այդ պակաս տեղերը մնացել են բաց, այդ պատճառով էլ բայը դարձել է պակասավոր: Այստեղ կարող ենք նշել Գ. Ջահուկյանի խոսքը, ըստ որի՝ «…հանդես եկած անհամապատասխանությունները որոշ չափով հաղթահարվում, բայց մինչև վերջ չեն հաղթահարվում համաբանության գործողությամբ, այս հանգամանքը հիմք է տալիս նոր հակասությունների և նոր անկանոնությունների առաջացման համար»[3]: Օրինակ՝ *ունեմ* բայը գրաբարում հենց անկանոն էր՝ բուն անկանոն, քանի որ պակասը լրացվում էր այլ բայով: Բայց արևելահայերենում այն հենց պակասավոր է, քանի որ չկան տվյալ բայի պակաս տեղերը:

Ամփոփելով՝ կարող ենք ասել, որ *«ե»* խոնարհման բայերի մեծ մասը պահպանել է իր անկանոնությունը, ընդ որում, անկանոն բայերի համակարգի պարզեցումը կատարվել է երկու ուղղությամբ՝ կանոնավորմամբ և պակասավորի վերածմամբ՝

Անկանոն	⇨	Կանոնավոր
Անկանոն	⇨	Պակասավոր

1. Աբեղյան Մ., Երկեր, հ. Զ, Երևան, 1974:
2. Աբրահամյան Ա., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
3. Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Ա., Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974:
4. Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, Երևան, 1972:
5. Աղայան Է., Ժամանակակից հայերենի հոլովումը և խոնարհումը, Երևան, 1967:
6. Աղայան Է., Լեզվաբանության հիմունքներ, Երևան, 1987:
7. Աճառյան Հ., Լիակատար քերականություն հայոց լեզվի, հ. 4, գիրք Ա, Երևան, 1959:
8. Այտընյան Ա., Քննական քերականություն աշխարհաբար կամ արդի հայերեն լեզվի, Երևան, 1987:
9. Առաքելյան Վ., Գրաբարի քերականութիւն, Երևան, 2010:

[1] *Ակնարկներ միջին գրական հայերենի պատմության, հ. Ա, Երևան 1972, էջ 351:*

[2] *Տե՛ս **Աբրահամյան Ս., Պառնասյան Ն., Օհանյան Հ.**, Ժամանակակից հայոց լեզու, հ. 2, Երևան, 1974, էջ 430:*

[3] ***Ջահուկյան Գ.,** Հայոց լեզվի պատմություն, Նախագրային շրջան, Երևան 1987, էջ 10:*

10. Ասատրյան Մ., Ժամանակակից հայոց լեզվի ձևաբանության հարցեր, հ. Գ, Երևան, 1977:
11. Ավետիսյան Հ., Ղազարյան Ռ., Գրաբարի ձեռնարկ, Երևան, 1976:
12. Խաչատրյան Գ., Շահվերդյան Թ., Պետրոսյան Լ., Գրական հայերենի պատմության դասընթաց, Մաս Ա, Երևան, 2018:
13. Խաչատրյան Լ., Տեղաշարժեր բառերի ձևաբանական իմաստի մեջ, Երևան, 1985:
14. Ղազարյան Ս., Հայոց լեզվի համառոտ պատմություն, Երևան, 1981:
15. Ղարիբյան Ա., Հայոց լեզվի պատմության ուսումնասիրության ներածություն, Յերևան, 1937:
16. Մարգարյան Ալ., Ժամանակակից հայոց լեզու, Բառագիտություն, Երևան 1993:
17. Չամչյան Մ., Քերականութիւն հայկազեան լեզուի, ի Վենետիկ 1779:
18. Պետրոսյան Հ., Գալստյան Ս., Ղարագյուլյան Թ., Լեզվաբանական բառարան, Երևան, 1975:
19. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի զարգացումը և կառուցվածքը, Երևան 1969:
20. Ջահուկյան Գ., Հայոց լեզվի պատմություն, Նախագրային ժամանակաշրջան, Երևան, 1987:
21. Ջահուկյան Գ., Գրաբարի քերականության պատմություն, Երևան, 1974:
22. arevak.am Հասանելի է եղել աշխանքը կատարելու ընթացքում՝ 07.08.2019 – 09.10.2019:

ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐ

1. Իսահակյան Ա., Երկեր, Երևան, 1987:
2. Ակսել Բակունց, Երկեր, հատոր 1, Երևան, 1976:
3. Աղթամարցի Գ., Տաղեր, Երևան, 1984:
4. Չարենց Ե., Երկեր, Երևան 1985:
5. Չարենց Ե., Երկեր, Երևան, 1983:
6. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 1, Երևան, 1969:
7. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 2, Երևան, 1972:
8. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 3, Երևան 1974:
9. Ժամանակակից Հայոց լեզվի բացատրական բառարան, հ. 4, Երևան 1980:
10. Թլկուրանցի Հ., Տաղեր, Երեվան, 1960:
11. Թումանյան Հ., Ընտիր երկեր, Երևան, 1987:
12. Սահյան Հ., Երկեր, հ. 2, Երևան, 1984:
13. Հայ հին և միջնադարյան քնարերգություն, Երևան, 1986:
14. Միջնադարյան հայ տաղերգուներ, Աղթամարցի Գ., Երեվան 1963:
15. ՆՀԲ, հ. 1, Երևան 1979:
16. ՆՀԲ, հ. 2, Երևան 1981:
17. Սևակ Պ., Երկերի ժողովածու, հ. 4, Երևան, 1973:
18. Ղազարյան Ս., Ավետիսյան Հ., Միջին հայերենի բառարան, Երևան, 2009:
19. Մալխասյնց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 1, Երեւան, 1944:
20. Մալխասյնց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 2, Երեւան, 1944:
21. Մալխասյնց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 3 Երեւան, 1944:
22. Մալխասյնց Ստ., Հայերէն բացատրական բառարան, հ. 4, Երեւան, 1945:
23. Տերյան Վ., Բանաստեղծություններ, Երևան, 1985:
24. Ֆրիկ, Ժողովածու, Յերևան 1937:

ՀՏԴ 801:37.01 Բանասիրություն

Հայկուշ Մելիքջանյան
Վանաձորի պետական համալսարան,
Տարրական մանկավարժություն և մեթոդիկա, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Լ. Պետրոսյան***
Էլ. Փոստ՝ haykush.meliqjanyan.99@bk.ru

ԿԱՊԱԿՑՎԱԾ ԽՈՍՔԻ ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՄԱՅՐԵՆԻ» ԵՎ «ԵՐԱԺՇՏՈՒԹՅՈՒՆ» ԱՌԱՐԿԱՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Հանգուցային բառեր՝ *մայրենի լեզու, մաթեմատիկա, կերպարվեստ, ժողովրդական ստեղծագործություն, հեղինակային ստեղծագործություն, երգային, պարային, քայլերգային երաժշտություն:*

Ժամանակակից դպրոցում «Մայրենի» դասընթացի սահմաններում անցկացվող բոլոր տեսակի պարապմունքների վերջնական նպատակը խոսքային հմտությունների ձևավորումը, մշակումն ու կատարելագործումն է:

Ուսումնասիրելով «Երաժշտության» դասագրքի բովանդակությունը, այն ներկայացնելով ընդհանուր տարրական կրթության մանկավարժության մեթոդաբանությամբ՝ հանգեցինք այն եզրակացության, որ այս դասերը նպատակահարմար է կիրառել անպայման միջառարկայական կապերի բացահայտմամբ, քանի որ այստեղ անընդհատ զուգահեռվում են «երգ և բառ», «երաժշտություն և կերպարվեստ», «երաժշտություն և չափ» հասկացությունները:

Айкуш Меликджанян
Ванадзорский государственный университет
Элементарная педагогика и методология, 4-ый курс
Научный руководитель – к.ф.н., доцент ***Л. Петросян***

ОСОБЕННОСТИ ОБУЧЕНИЯ СВЯЗНОЙ РЕЧИ В КОНТЕКСТЕ ПРЕДМЕТОВ «РОДНОЙ ЯЗЫК» И «МУЗЫКА»

Ключевые слова *– родной язык, математика, изобразительное искусство, народное произведение, авторское произведение, песенная музыка, танцевальная музыка, музыка для маршировки*

Конечная цель всех типов занятий, проводимых в современной школе в рамках курса «Родной язык» - развитие, обработка и совершенствование вербальных навыков.

Изучая содержание учебника "Музыка", представив его методологией педагогики начального общего образования, мы пришли к выводу, что целесообразно обязательно использовать эти занятия путем выявления внутрипредметных связей, так как здесь понятия песня и слово, музыка и изобразительное искусство, музыка и мера постоянно идут параллельно.

Ժամանակակից դպրոցում «Մայրենի» դասընթացի սահմաններում անցկացվող բոլոր տեսակի պարապմունքների վերջնական նպատակը խոսքային հմտությունների ձևավորումը, մշակումն ու կատարելագործումն է, որն իրականանում է կապակցված խոսք կառուցել ուսուցանելով՝ դասավանդման հիմքում ունենալով «Խոսք կառուցելու յուրաքանչյուր ակտ ստեղծագործական գործընթաց է» [3, 23] գիտական դրույթը: Կապակցված խոսքի զարգացման համար կարևոր է բազմակողմանի կրթության ինքնուրույնաբար գիտելիքներ ձեռք բերելու կարողությունների և հմտությունների մշակումը [1, 5]:

Աշխատանքի փորձագիտական շրջանը կատարել ենք Վանաձորի թիվ 3-րդ դպրոցում դասղեկ Լ. Մկրտչյանի ղեկավարությամբ՝ մանկավարժական փորձուսուցման ընթացքում: Փորձը ցույց է տվել, որ «Մայրենի» և «Երաժշտություն» միջառարկայական կապի ամրապնդման շնորհիվ կապակցված խոսքի ուսուցումն ավելի գրավիչ է դառնում՝ շնորհիվ խոսքի արվեստային ներկայացման [7], որի արդյունքում գիտություն տանող ճանապարհը դառնում է գեղեցիկ և գրավիչ: Երգը և երաժշտությունը կարող են լայնորեն օգտագործվել գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման ժամանակ՝ որպես նրա ընկալման ու յուրացման օժանդակ միջոց, որը կօգնի ավելի հեշտ ըմբռնելու ստեղծագործության բովանդակությունը:

Երրորդ դասարանում «Երաժշտություն» առարկայի ուսուցումն սկսվում է «Ողջույն ուսուցչին» [4, 5] երգի կատարմամբ, որը համեմատելի է մայրենիի դասին սովորած «Դպրոցի ճամփան» [6, 5] ստեղծագործության հետ: 3-րդ դասարանի «Երաժշտության» դասագրքի բնագրերից շատերը աշակերտները որպես գրական ստեղծագործություններ սովորել են առաջին և երկրորդ դասարաններում:

Նկատելի է, որ հատկապես տարրական դասարաններում որքան դյուրըմբռնելի են երգն ու երաժշտությունը, նույնքան դժվար ընկալելի են երաժշտագիտության տերմինները: Ուսումնասիրելով երգահան հեղինակների կյանքն ու կենսագրությունը՝ աշակերտները ծանոթանում են իրենց առօրյայում չգործածվող բազմաթիվ տերմինային միավորների, որոնց բացատրության շնորհիվ է միայն հնարավոր իմաստալից ուսուցում կազմակերպել: Այս նպատակով առաջարկում ենք հետայբբենական շրջանից հետո ունենալ «**Երաժշտաբառարան»**, որտեղ բացատրության տարբեր եղանակներով կներկայացվեն երաժշտագիտության հետ կապված բառերն ու արտահայտությունները:

Երաժշտության ուսուցումը երրորդ դասարանի առաջին կիսամյակում կազմակերպվում է յոթաստիճան համակարգով: Ուսուցման առաջին աստիճանում մայրենիի և երաժշտության դասերը իմաստով զուգադրելի չեն, որը ավելի է դժվարացնում ուսուցման գործընթացը: Ուստի այստեղ առաջարկում ենք երաժշտության դասերին կարևորել աշակերտների խոսքի ուսուցման ու զարգացման որդեգրած ուղին և բառապաշարային միավորների ուսուցումը կազմակերպել ոչ միայն սահմանումային բացատրություններով, այլ նաև այդ բառերը խոսքի մեջ կիրառելով՝ հատուկ ուշադրություն դարձնել դրանց կապակցելիական հնարավորություններին:

3-րդ դասարանում աշակերտների համար Մայրենին բացահայտում է «Փոքրիկ պատուհան դեպի մեծ աշխարհ» թեման [5, 3], որտեղ հիմնական կերպարային դերով հանդես է գալիս **գիրքը**՝ բառերի իմաստային տարբեր ընկալումներով զարգացնելով աշակերտների խոսքը: Գեղարվեստական ստեղծագործությունների ուսուցման հիմքով քննելով երգի և երաժշտության էությունը՝ երաժշտության դասին աշակերտները ծանոթանում են ինչպես հայ, այնպես էլ արտասահմանցի երաժիշտ հեղինակների կյանքին ու ստեղծագործությանը: Եթե մայրենիի դասերի հեղինակների կենսագրական տվյալները դասագրքում ներկայացված չեն, և նրանց մասին կենսագրական տեղեկությունները աշակերտները ներկայացնում են իբրև ինքնուրույն որոնողական աշխատանքներ, ապա երաժշտության դասագրքում կոմպոզիտոր հեղինակների մասին կենսագրական համառոտ տեղեկությունները ներկայացված են, որոնց ընթերցանության ժամանակ ի հայտ են գալիս տարբեր բարդություններ՝ կապված նրանց գործունեության և մասնագիտության բացահայտման հետ: Այսպես՝ Ա. Սպենդիարյանի կենսագրության ներկայացման համար անհրաժեշտ է լինում բացահայտել *դասական, օպերային, սիմֆոնիկ երաժշտություն,*

օպերա, ռոմանս, քարավան բառերը:

Ա. Սպենդիարյանի ստեղծագործությունները դասավանդելիս առաջարկվում է զուգահեռել «Տեխնոլոգիա» և «Կերպարվեստ» առարկաները, քանի որ հեղինակը սիրել է «.... *թղթից պատրաստել տարբեր թռչուններ և գազանիկներ, որով հիացել ու զարմացել է իր ազգական՝ հայ մեծ Հ. Այվազովսկին*»: «Երաժշտություն» և «Կերպարվեստ» զուգահեռով է ներկայացվում «Քարավանի երթը» երգը և Վ. Խաչիկյանի «Ուղտերի քարավանը» բնանկարը, որը տարրական դասարանի աշակերտների համար առաջին հայացքից դժվար է ընկալվում որպես բնանկար, քանի որ Հայաստանում ապրող երեխայի համար բնությունը պատկերվում է ծառ ու ծաղկով, լեռներով ու դաշտերով: Այստեղ նրանց բառապաշարում լեզվական նոր միավորներ են ի հայտ գալիս՝ կապակցական նոր արտահայտություններով, ինչպես՝ 3-րդ դասարանցի Ալիկն իր տետրում գրել էր ոսկեգույն ավազի, անապատի և ուղտերի քարավանի մասին, քանի որ ամառային արձակուրդներն անցկացրել էր Եգիպտոսում, իսկ մյուս աշակերտներն ինքնուրույն չէին կարողացել արտահայտել իրենց մտքերը, քանի որ բնության այդ տեսարանը նրանց ծանոթ չէր:

Ուսուցման երկրորդ աստիճանում առաջարկվում է ուսուցանել Ժորժ Բիզեի «Կարմեն» օպերայից հատվածներ՝ նախ դաշնամուրային, ապա սիմֆոնիկ նվագախմբի կատարմամբ: Ունկնդրումից հետո բացահայտվում է «նախերգանք» բառի նշանակությունը: Շարունակելով ֆրանսիական երաժշտության բացահայտումը՝ ուսուցման հաջորդ աստիճանում ներկայացվում է ֆրանսիական ժողովրդական «Հովվի երգը»: Այստեղ որպես գիտական հասկացություն է ուսուցանվում **լա** ձայնաստիճանը՝ ըստ ձեռքի նշանի և աստիճանավանդակի:

Ընդհանուր կեպով ներկայացնելով երգային, պարային, քայլերգային երաժշտությունը՝ առանձին ներկայացվում է երգային երաժշտությունը, որը բացահայտվում է նորվեգացի կոմպոզիտոր Էդվարդ Գրիգի «Առավոտ» ստեղծագործության ունկնդրմամբ, որին զուգահեռ է ներկայացվում Հ. Այվազովսկու «Առավոտ» ծովանկարը: Երաժշտության ուսուցումը այստեղ ներկայացվում է որպես եռամաս տակտ, որի ուսուցումը կարելի է զուգահեռել մաթեմատիկայի ուսուցմանը:

Աշնանային տրամադրությունները երաժշտության դասին եզրափակվում են Ա. Մանուկյանի «Աշուն» երգի ուսուցմամբ, որն առաջարկվում է կատարել Ի. Լևիտանի «Աշուն» նկարի զուգադրմամբ: Այստեղ աշակերտները վերհիշում են Հ. Թումանյանի բանաստեղծությունը, որը սովորել են առաջին դասարանում:

Մասնավորելով պարային երաժշտության մասին գիտելիքները՝ աշակերտներին են ներկայացվում Ֆ. Շոպենի «Պոլոնեզ» և «Մազուրկա» ստեղծագործությունները, որոնց իմաստային բացատրությունները ներկայացվում են դասագրքում: Առաջինը որպես լեհական պարահանդեսային պար՝ **քայլ-պար**: Այս դասի շրջանակներում համադրությունը կատարվում է երգ-պար զուգահեռով, որի արդյունքում բացահայտվում են **պարայնություն** և **քայլերգայնություն** բառերի նշանակությունները: Ռիթմական տարբեր յուրահատկություններով ներկայացնելով **պոլոնեզ** և **մազուրկա** օտարաբանությունները՝ աշակերտներին ավելի լավ հասկանալու համար առաջարկվում է ունկնդրել երաժշտությունները և կատարել: Դասի ամրապնդման նպատակով առաջարկվում է սովորել նաև «Ջա՛ն ծաղիկ» հայկական ժողովրդական երգը, որտեղ հատկապես կարևորում են ժողովրդական արտահայտչամիջոցների ընկալումը՝ բացահայտելով **ոսկի քամար, աղբերը սարումն է, գոտկա ծալումն է** արտահայտությունների բացատրությունը:

Առաջնորդվելով բարդ բառերի ուսուցման՝ բառաբաղադրիչների մասնատման և

իմաստավորման մեթոդաբանությամբ՝ աշակերտներին ենք ուսուցանում նաև «երկձայն երգեցողություն» արտահայտությունը, որը գիտական գրականության մեջ կոչվում է **կանոն**: Այստեղ հանգում ենք գիտական համանունների ուսուցմանը, այսինքն՝ տարբեր առարկաներում նույն իմաստի տարբեր ընկալումներին, որը ավելի դյուրըմբռնելի է դառնում զուգադրության միջոցով:

Երաժշտության դասերին հատկապես հետաքրքիր է ձայնարկությունների ուսուցումը, որոնք երգաբառապաշարում կարևոր նշանակություն ունեն. հատկապես դրանց միջոցով են արտահայտվում երգի և երաժշտության իմաստները: Այսպես՝ երգային և պարային ստեղծագործությունների ուսուցման ժամանակ աշակերտները սովորում են *Տրա՛-տա՛-տա՛-տա՛, տու՛-ռու՛-ռու՛ [Ե 10], Վու՛յ [Ե 28] Հա՛-հա՛-հա՛, հի՛-հի՛-հի՛ [Ե 31], Լե՛-լե՛-,լո՛-լո՛ [Ե 32], Բո՛ւմ-բո՛ւմ-բո՛ւմ [Ե 9]* ձայնարկությունները:

Ուսուցման երրորդ աստիճանում ներկայացվում է քայլերգային երաժշտությունը, որն ուսուցանվում է Լյուդվիգ վան Բեթհովենի 5-րդ սիմֆոնիայից մի հատվածի և Գեղունի Չթչյանի «Սիմֆոնիկ պատկերից» «Քայլերգի» կատարումների զուգադրումով: Այնուհետև ուսուցանվում է Ե. Սահառունու «Ջան հայրենիք» երգը, որի ուսուցման շրջանակներում բացահայտվում է **տոնիկա** հասկացությունը՝ որպես երաժշտական հնչյուն, որով ավարտվում է երգը:

Դասագրքերի վերլուծությունից պարզ է դառնում, որ մայրենիի դասերին ներկայացվող վարժությունները իրենց զուգահեռներն ունեն նաև երաժշտության դասերին: Այստեղ «Երաժշտական ժամանց» կոչվող դասերի ընթացքում աշակերտներին հանձնարարվում են «Երգել և ցուցադրել ձեռքի նշաններով», «Խաչբառ», «Խխունջ» առաջադրանքները:

Ուսուցման չորրորդ աստիճանում սովորեցնում ենք հնչերանգի նշանակությունը երաժշտության մեջ, այստեղ աշակերտները սովորում են Մ. Մազմանյանի «Մաքրասեր Նունիկը» և Էմմա Միհրանյանի «Օրորոցային» երգերը: Բացատրելով **հնչերանգ** հասկացությունը՝ անդրադառնում ենք դրա կիրառություններին մայրենիի և երաժշտության դասերին: Այստեղ համեմատություն ենք կատարում մաթեմատիկայի և մայրենիի դասերի ընթերցանության կանոնների միջև:

Խոսքային տարբեր ելևէջների արտահայտությունը գրավոր խոսքում կատարվում է առոգանության նշաններով, որոնց աշակերտները ծանոթ են դեռևս այբբենական շրջանի դասերից: Այստեղ հաճախ են կիրառվում երկխոսություններ, որոնց մեջ կարևոր նշանակություն ունեն շեշտի, բացականչական և հարցական նշանները: Այս դասի շրջանակներում աշակերտները վերհիշում են Հ. Թումանյանի մանկական ստեղծագործությունները՝ իբրև երգ կատարելով «Առաջին ձյունը» և «Լուսիկի կատուն» ստեղծագործությունները:

Համադրելով գրավոր խոսքի արտահայտչամիջոցները՝ անդրադառնում ենք գրերի, կետադրական նշանների, թվերի և նոտաների բնույթներին՝ վերջիններս սահմանելով որպես երաժշտական արտահայտչամիջոցներ: Հնչերանգի արտահայտչամիջոցներն ուսուցանվում է «ծաղիկ» մեթոդով, որի արդյունքում բացատրվում են **ռիթմ**, **տեմպ**, **հնչյունների բարձրություն**, **ձայներանգ**, **հնչողության ուժգնություն**, **հնչյունաշար** բառերը:

«Կերպարվեստ», «Մայրենի», «Երաժշտություն» միջառարկայական կապերի բացահայտմամբ ներկայացված է «Պոչատ աղվես» հեքիաթի նկարազարդումը, որի դիտումից հետո առաջարկվում է աշակերտներին բացահայտել իրենց տրամադրությունը, կատարել երաժշտական համեմատություն, փորձել ստեղծել մեղեդի՝ նկարներին համապատասխան: Այսպիսով՝ «Մայրենի» և «Երաժշտություն» առարկաների համադրումը

կատարվում է խոսակցական և երաժշտական լեզուների ընդհանրությունների բացահայտումով. *Երկու դեպքում էլ* իրար հաջորդում են խոսքերի և մոտիվների ուժեղ և թույլ մասերը, երկուսն էլ բաղկացած են ավարտուն միտք պարունակող մասերից՝ դարձվածքներից և նախադասություններից: Երգի մեջ խոսակցական և երաժշտական հնչերանգները միաձուլվում են ու արտահայտում երգի իմաստը, տրամադրությունը [Ե 28]:

Երաժշտական բառերի ուսուցումը շարունակվում է իտալերեն բառերի ուսուցումով, ինչպես՝ **պիանո** բառը նշանակում է մեղմ հնչողություն, **ֆորտե** բառը՝ ուժեղ հնչողություն [Ե 29]:

Հնչերանգային ձևերի բազմազանությունը բացահայտվում է Տ. Մանսուրյանի «Խուտուտ-մուտուտ» և Ռ. Մելիքյանի «Աշնան երգը» ստեղծագործությունների կատարմամբ: Կարդալով Տ. Մանսուրյանի ստեղծագործությունները՝ աշակերտները տեղեկանում են օտար ափերում ծնված, բայց հայրենիք վերադարձած երաժշտի կենսագրությանը: Այստեղ նրանք սովորում են նաև **կինոերաժշտություն** բառը, որի իմաստի բացահայտմամբ աշակերտների հետ դիտում ենք մի քանի հայկական ֆիլմեր, որոնց երաժշտության հեղինակը Տ. Մանսուրյանն է:

«Խուտուտ-մուտուտ» կատակային երգի կատարմամբ բացահայտում ենք ինչպես նոտաների տարբեր աստիճանները, այնպես էլ բառապաշարային միավորները, որոնք ներկայացվում են բառերի տարբեր ձևաիմաստային խմբերով՝ հոմանիշներով, հականիշներով, համանուններով և հարանուններով: Ս. Կապուտիկյանի «Հովիվ» բանաստեղծության երգի կատարմամբ սովորում ենք **հովիվ - հոտաղ, պտուղ - բար** հոմանիշային զույգերը և դրանց ուղիղ ու փոխաբերական նշանակությունները:

Հատկապես հետաքրքիր են «Հնչերանգի հատիկի» դասերը, որ ներկայացվում են Լյուդվիգ վան Բեթհովենի 5-րդ սիմֆոնիայի առաջին և երկրորդ մասերի ունկնդրմամբ: Անընդհանուր կրկնվող երաժշտական միավորը, որ կոչվում է *երաժշտական դարձված*, օգնում է ճանաչել երաժշտական ստեղծագործությունը: Այսպիսով՝ երաժշտական ստեղծագործությունների էությունը բացահայտելիս նույնպես հանգում ենք **դարձվածք** հասկացությանը՝ երկու կամ ավելի հնչյուններ, որ արտահայտում է որոշակի երաժշտական միտք՝ տրամադրություն իմաստով: Ինչպես խոսքային դարձվածքներին, այնպես էլ երաժշտական դարձվածքներին նույնպես բնորոշ է հաճախակի կիրառությունը և խոսքային միջավայրում, ընդհանուր ձևը պահելով, ձևափոխությունները: Այստեղ աշակերտներին ուսուցանվում են «Գարուն» և «Վա՛յ լե՛ լե՛» հայկական ժողովրդական ստեղծագործությունները: Այս դասի շրջանակներում սովորում են **լիգա** բառը՝ միևնույն բարձրությունն ունեցող երկու նոտաների միացնող նշանակությամբ [Ե 38]: Աշակերտներին հանձարարվում է երգերում իմաստավորել կայուն արտահայտությունները և դարձվածքները, որն օգնում է աշակերտների աղքատ բառապաշարը [2, 98] հարստացնելով ժողովրդական խոսքով, թևավոր արտահայտություններով:

Կիսամյակի ավարտին աշակերտներին ներկայացվում են «Արտահայտչական և նկարագրական հնչերանգները»՝ Գ. Չթչյանի «Տապկնոցին», «Կենդանիների շքերթը» և «Ծովը ծփում է» երգերի կատարմամբ:

Առաջին կիսամյակը փակվում է «Շնորհավոր Նոր տարի» վերանագրով թեմայով, որի ժամանակ միջառարկայական կապերով են հանդես գալիս հայերեն, ռուսերեն և անգլերեն լեզուներով ներկայացվող դասերը. աշակերտներին հանձնարարվում է սովորել նոր տարվա վերաբերյալ երգեր՝ գրված երեք լեզուներով:

Առաջին կիսամյակի ավարտին զուգահեռվում են **նախադասություն** և **մեղեդի**

հասկացությունները զուգադրության միջոցով. *Ինչպես պատահական բառերի համատեղումից իմաստալից նախադասություն չի կազմվում, այնպես էլ առանձին ցաքուցրիվ երաժշտական հնչյունների միացությունից արտահայտիչ մեղեդի չի ստեղծվում: Իսկ մեղեդին հնչերանգներով իմաստավորված երաժշտական ավարտուն միտք է:*

Ուսումնասիրելով «Երաժշտության» 23 դասագրքի բովանդակությունը, այն ներկայացնելով ընդհանուր տարրական կրթության մանկավարժության մեթոդաբանությամբ՝ հանգեցինք այն եզրակացության, որ այս դասերը նպատակահարմար է կիրառել անպայման միջառարկայական կապերի բացահայտմամբ, քանի որ այստեղ անընդհատ զուգահեռվում են երգ և պար, *երաժշտություն* և *կերպարվեստ*, *երաժշտություն* և *չափ* հասկացությունները:

Հետաքրքիր են նաև այստեղ կոմպոզիտորների կենսագրության ուսուցման դասերը, որ առանց աշխարհագրական տեղանունների բացահայտման կլինեն անորոշ ու տարտամ: Ուստի առաջարկում ենք այս դասերի շրջանակներում կիրառել նաև քարտեզներ՝ բացահայտելով տարբեր տեղանունների դիրքերը երկրի վրա՝ այս դասերը համադրելով «Ես և շրջակա աշխարհը» դասընթացի բնագրերին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աթալյան Հ., Կապակցված խոսքի ուսուցման համակարգը, Երևան, 1986:
2. Գյուլբուդաղյան Ս., Հայոց լեզվի դասավանդման մեթոդիկա, Երևան, 1987:
3. Ղարիբյան Ա., Հայ մանկավարժական լեզվաբանություն, Երևան, 1969:
4. Յուզբաշյան Յ., Փահլևանյան Ա., Երաժշտություն, 3-րդ դասարան, Երևան, 2013: Սույն գրքից կատարված մեջբերումները այսուհետ կներկայացնենք ստեղծագործություններին կից փակագծերում Ե համառոտագրությամբ:
5. Սարգսյան Վ., Թորոսյան Կ., Մայրենի 3, Երևան, 2009:
6. Սարգսյան Վ., Մայրենի 1, Երևան, 2016:
7. https://forum.armedu.am/showthread.php/2005 Հասանելի է 20. 09. 2019 թ.:

ՀՏԴ 398 Բանասիրություն

Դիանա Մովսեսյան
ՎՊՀ, Մանկավարժության ֆակուլտետ,
Տարրական կրթություն և մեթոդիկա, 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ ***Հեղինե Մելքոնյան***

ՀՈՒՅԶԵՐ ԱՐՏԱՀԱՅՏՈՂ ԴԱՐՁՎԱԾՔՆԵՐԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ ԵՎ ՌՈՒՍԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *դարձվածք, հույզ, ուրախություն, տխրություն, զարմանք, զզվանք, զայրույթ, վախ:*

Դարձվածքը, ինչպես գիտենք, «բառերի կայուն, պատրաստի վերարտադրելի, վերաիմաստավորված կապակցություն է, ուր բաղադրիչ բառերի ինքնուրույնությունը ձևական է, շարահյուսական կապը՝ մթագնած» [3, էջ 5]:

Սույն աշխատանքում հանձն ենք առել ուսումնասիրել հույզեր արտահայտող դարձվածքները հայերենում և ռուսերենում:

Диана Мовсесян
ВГУ, Педагогический факультет,
Начальное образование и методика, 3-ий курс
Научный руководитель – канд. филол. наук, доцент ***Эгине Мелконян***

ОСОБЕННОСТИ ФРАЗЕОЛОГИЗМОВ, ВЫРАЖАЮЩИХ ЭМОЦИИ В АРМЯНСКОМ И РУССКОМ ЯЗЫКАХ

Ключевые слова: *фразеологизм, эмоция, радость, грусть, удивление, отвращение, гнев, страх.*

Среди армянских и русских фразеологизмов есть большое количество фразеологизмов, выражающих эмоции. В обсуждаемых нами выроженях в армянском языке самое большое количество имеют фразеологизмы выражающие страх – 103 едениц (32%), в русском - фразеологизмы выражающие гнев –32 едениц (36%). Фразеологизмы, выражающие отрицательные эмоции на обоих языках, перевешивают, фразеологизмов выражающих положительные эмоции. В рассмотренных примерах использовались как двуязычные эквиваленты, так и особенные применения.

Հույզը սուբյեկտի վերաբերմունքի արտացոլումն է շրջապատող աշխարհի նշանակալի օբյեկտների նկատմամբ: Հույզերը մարդու կյանքի անբաժան մասն են կազմում, և անշուշտ դրանք արտացոլվում են նաև լեզվի և խոսքի մեջ: Բազմաթիվ գիտություններ և գիտաճյուղեր ուսումնասիրում են հույզերը որպես հոգեբանական բարդ գործընթացներ, սակայն ուսումնասիրությունները չեն հանգեցնում միասնական տեսակետի: Բանն այն է, որ հույզերը, զգացմունքները և զգացողությունները այնքան կապված են, որ ոչ միշտ է հնարավոր ստույգ որոշել դրանց սահմանները: Հոգեբանական տեսությունները հակված են ուսումնասիրելու հույզերը մարդկային գործունեության մեջ, սակայն դրանք տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ են մեկնաբանվում և դասակարգվում, ինչն առաջ է բերում դժվարություններ նաև լեզվաբանության ոլորտում: Ըստ Վ. Գալունովի՝ հույզերի կոնկրետ դասակարգման բացակայությունը սկզբունքային դժվարություններից առաջինն է, որին հանդիպում է լեզվաբանը հույզերի կիրառությունը լեզվի մեջ ուսումնասիրելիս [6, էջ 5-7]:

Բազմաթիվ ուսումնասիրություններից հետո մեր աշխատանքում հիմք ենք ընդունել լայնորեն ընդունված Ռ. Պլուչիկի տեսակետը, ըստ որի՝ մարդկային հիմնական հույզերն են՝ **ուրախություն, տխրություն, վախ, զարմանք, զզվանք, զայրույթ** [11]:

Քննության առնելով բոլոր հույզերին վերագրվող դարձվածքները՝ սույն հոդվածում ընդգրկել ենք ուրախություն, տխրություն, վախ, զարմանք, զզվանք, զայրույթ արտահայտողները: Աշխատանքում տեղ չեն գտել բացականչությունները, բարեմաղթություններն ու անեծքները:

Հայերեն լեզվանյութը քաղել ենք Ա. Սուքիասյանի և Ս. Գալստյանի համահեղինակած դարձվածաբանական բառարանից [5], իսկ ռուսերենը՝Ա. Մոլոտկովի [8] և Ա. Ֆեդորովի [10] դարձվածաբանական բառարաններից: Ընտրանքը կազմել է 326 հայերեն և 89 ռուսերեն դարձվածք *(ըստ հույզերի հարաբերակցության՝տե՛ս 1-ին և 2-րդ տրամագրերը)*: Հանդիպել են դարձվածքներ, որոնք միաժամանակ 2 հույզ են արտահայտել: Այդ դարձվածքները հաշվել ենք երկու հույզերի մեջ էլ: Հայերենում դրանք թվով 5-ն են՝

գլուխը կպչել – 1.վախենալ, սարսափել, 2. զարմանալ,
հոնքերը աչքին քաշել – 1.վախենալ, 2. զայրանալ,
հոնքերը կիտել – 1.տխրել, մռայլվել, 2. զայրանալ,
մազերը բիզ-բիզ կանգնել – 1. վախենալ, 2. զարմանալ,
մազերը դիք-դիք կանգնել – նույնն է՝ մազերը բիզ-բիզ կանգնել:

Ռուսերենում հանդիպել են նմանատիպ բացականչություններ, սակայն դրանք մեր ընտրանքի մեջ չեն մտել:

***Տրամագիր 1-ին**. Հույզեր արտահայտող դարձվածքների հարաբերակցությունը հայերենում*



***Տրամագիր 2-րդ**. Հույզեր արտահայտող դարձվածքների հարաբերակցությունը ռուսերենում*



Ստորև փորձենք ներկայացնել քննված երկլեզու նյութի վերլուծության արդյունքները: Ըստ վիճակագրական տվյալների՝ կարելի է արձանագրել, որ՝

1. Հայերեն օրինակներում շատ են դարձվածքային տարբերակները, այդ թվում՝ հոմանիշային կամ բարբառային: Այսպես՝ ուքները կիտել – հոնքերը կիտել, աչքը արյուն – աչքը արուն, թուքը ցամաքել – թուքը չորանալ, աչքը սառել – աչքը պաղել, մազերը բիզ-բիզ կանգնել – մազերը դիք-դիք կանգնել:

2. Հայերենի դարձվածքային տարբերակներ էլ հակադրվում եմ բաղադրիչ բայի սեռով (չեզոք, ներգործական-պատճառական, կրավորական): Այսպես՝ սիրտը փորը ընկնել – սիրտը փորը գցել, սիրտը վախ ընկնել – սիրտը վախ գցել, շուն դառնալ – շուն դարձնել, ահ ընկնել – ահ գցել, գլխի որդը շարժել – գլխի որդը շարժվել, հավասարակշռությունից դուրս գալ – հավասարակշռությունից հանել, սրտաճաք անել – սրտաճաք լինել:

3. Տարբերակների մեջ քիչ չեն օրինակները, որոնցում մի կողմը բայանվանական կամ անվանական դարձված է, մյուսը՝ բայական բառակապակցություն: Դրանցից են՝ աչքը արյուն – աչքը արյուն կոխել, քիթը կախ – քիթը կախել, մռութը կախ – մռութը կախել, երեսը կախ – երեսը կախել, տրամադրությունը բարձր – տրամադրությունը բարձրանալ, աչքերը բաց – աչքերը բաց մնալ:

Դարձվածքային տարբերակները հատուկ են նաև ռուսերենին: Օրինակ՝ быть на седьмом небе – попадать в седьмое небо , сердце ёкает – сердце ёкнуло .

4. Երկու լեզուներում էլ գերակշռում են բացասական հույզեր արտահայտող դարձվածքները, ինչը կարելի է բացատրել այն բանով, որ մարդը բացասական երևույթներին ավելի բուռն է արձագանքում, այդպիսին է նրա բնույթը: Օրինակ՝ բիտ ու ճիտ կտրել (զայրույթ), թունդ ելնել (վախ), արյուն տաս՝ չի կաթի (տխրություն), туча тучей (տխրություն), свет меркнет в глазах (զզվանք), бросает в дрожь (վախ):

5. Թե՛ հայերենում, թե՛ ռուսերենում հանդիպում են կազմաբանություններ պարունակող դարձվածքներ: Օրինակ՝ ա) *թևերը լայն բանալ* – ուրախանալ, հրճվել, ուրախությամբ ընդունել, բ) *դեմքը բացվել* – զվարթանալ, ուրախանալ, ուրախ տրամադրվել, գ) *մատը բերանում մնալ* – զարմանքից ապշել, շվարած մնալ, դ) *քիթը կախել* – տխրել, դեմքի վրա դժգոհություն արտահայտել, ե) *ձեռ ու ոտը խաղս լինել* – սաստիկ ուրախանալ, ցատկոտել, զ) *թև առնել-թռչել* – շատ ուրախանալ, ուրախությունից թռվռալ է) *мороз по коже* – ощущается озноб от сильного страха, ужаса, волнения, ը) *разводить руками* – удивляться, недоумевать; не знать, как поступить в затруднительном положении, թ)*сердце упало* – неожиданно возникает чувство испуга, тревоги, отчаяния :

Սա կապված է այն բանի հետ, որ որոշ հույզերը իրենց արտաքին դրսևորումն են գտնում մարմնի վրա՝ անկախ մեր կամքից՝ ուղեկցվելով դիմախաղով, ժեստերով և դիրքափոխությամբ [9, էջ 540-541]:

6. Երկու լեզուներում էլ հաճախադեպ է «սիրտ» բաղադրիչը: Օրինակ՝ ա)*սիրտը ցավել* – վշտանալ, տխրել, հուզվել, ափսոսալ, բ)*դողը սիրտը մտնել* – սաստիկ վախ զգալ, սարսափել, գ)*սիրտը ահ ընկնել* – վախենալ, վախ զգալ, դ)*սիրտը նեղվել* – տխրել, տրտմել, սրտնեղել, ե) *сердце ёкает* – кто либо испытывает мгновенный страх, неожиданную тревогу, плохое предчувствие, необъяснимое волнение, զ) *сердце упало* – огорчиться, расстроиться, է) *сердце зашлось* – кто-либо испытывает сильные неприятные ощущения или тоску, страх, ужас: Բանն այն է, որ սիրտը համարվում է զգացմունքի օրգան, իսկ հույզերը սերտորեն կապված են զգացմունքների հետ [4, էջ 423]:

7. «Հոգի» բաղադրիչը հայերեն դարձվածքներում շատ է հանդիպում: Դրանք են՝ ա) *հոգին ահ պատել* – վախենալ, սարսափել, բ) *հոգին տապ անել* – սաստիկ վախենալ, գ) *հոգին խորան բռնել* – շատ ուրախանալ, դ) *հոգու ծերը եռ ընկնել* – սաստիկ ուրախանալ:

Ռուսերենում душа բաղադրիչով 2 դարձվածք է հանդիպում: Դրանք են՝ ա) *душа ушла в пятки* – о том, кто испытывает сильный страх, испуг, բ) *с камнем на душе* – кто-либо испытывает тяжёдоеб гнетщее чувство:

Քրիստոնյա ժողովուրդը հոգին համարում է մարդու ոչ նյութական մարմին, նրա հետ է կապում իր ներքին ապրումները: Հոգին զգում է, իսկ այդ զգացմունքներն իրենց արտաքին դրսևորումն են գտնում բանավոր խոսքում:

8. Տրամադրությունն անմիջականորեն կապվում է հույզերի և զգացմունքների հետ, սակայն настроение բաղադրիչով դարձվածքներ ռուսերենում ընդհանրապես չեն հանդիպել, իսկ հայերենում՝ փոքր թիվ են կազմել: Օրինակ՝ *տրամադրությունը բարձր* – ուրախ, *տրամադրությունը բարձրանալ* – ուրախանալ, տրամադրությունը տեղը – նույնն է՝ տրամադրությունը բարձր:

9. Երկու լեզուներում էլ գրեթե չեն հանդիպում «Աստված» բառով բաղադրված հույզեր արտահայտող դարձվածքներ: Դրանք հիմնականում բացականչություններ են, բարեմաղթություններ և անեծքներ, որոնք սույն աշխատանքում չեն ընդգրկվել: Ըստ երևույթին, սա կապված է այն բանի հետ, որ մարդը զարմանքի, ուրախության, հուզմունքի պահին Աստծո անունն է տալիս: Նա իր թե՛ լավ, թե՛ վատ իղձերն ու ակնկալիքները Աստծո հետ է կապում:

10. Հույզեր արտահայտող դարձվածքների կազմում հանդիպում են կենդանանուն պարունակող դարձվածքներ: Հայերենում՝ ա) *գայլի աչք* – վախ, երկյուղ, սարսափ, բ) *այծ-այծ լինել* – վախենալ, խրտնել, գ) *շուն դառնալ* – սաստիկ բարկանալ, կատաղել, զայրանալ:

Դարձվածքներից յուրաքանչյուրի բացատրությունը կապվում է տվյալ իրավիճակում կենդանու դրսևորած վարքի կամ նրան հատուկ հատկանիշների հետ:

Ռուսերենի օրինակներից են՝

ա) *мурашки забегали по спине* – ощущение озноба от внезапного сильного страха, волнения, возбуждения и т. п. ,

բ) *дуться как мышь на крупу* – обидеться, принять недовольный, сердитый вид:

Առաջին դարձվածքի հիմքում ընկած են այն զգացողությունները, որոնք մարդը կզգար եթե նրա մեջքի վրայով մրջյուններ վազվզեին: Իսկ երկրորդ դարձվածքը Վ. Դալի բառարանում ներկայացված է այսպես. «Надулся, как мышь на крупу, все съесть хочет, грозен» [7], այսինքն՝ խոսքը այն մարդու մասին է, ով բորբոքվում է՝ հասկանալով և գիտակցելով իր սեփական առավելությունը:

11. Ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել են համարժեք (հայերեն, ռուսերեն) դարձվածքներ, ինչն ըստ երևույթին կապվում է այն բանի հետ, որ երկու ժողովուրդներն էլ բնակվում են նույն տարածքում, ունեն մշակութային ընդհանրություններ և, ի վերջո, կրում են նույն լեզվաընտանիքին պատկանող լեզուներ: Այսպես՝ սիրտը փորը ընկնել – сердце упало, մազերը բիզ-բիզ կանգնել – волосы становяться дыбом, սրտին յուղ կանգնել (քսել) – как маслом по сердцу, յոթերորդ երկնքում լինել – быть в седьмом небе, սիրտը նեղվել – сердце сжимается, թևերը կախ – отпустить руки, քիթը կախել – вешать нос, մռութը (երեսը) – вешать голову, ատամները կրճտել – скрежетать зубами.

11. Հետաքրքիր է **«տաճիկ կտրել»** (= սաստիկ բարկանալ, զայրանալ) դարձվածքը: «Տաճիկ»-ը հայերենում ունի երեք մեկնաբանություն՝ գոյական (= *թուրք*), ածական (= *արագավազ*՝ ձիու, ուղտի համար) [1], ածական (= *բիրտ, տանջարար*) [2, էջ 365]: Հ. Աճառյանի ստուգաբանությամբ՝ «տաճիկ»-ը վերագրվել է նախ արաբներին, ապա իսլամի ներկայացուցիչներին, այդ թվում՝ թուրքերին: Վերջին դեպքում բառն ստացել է լրացուցիչ իմաստ՝ «տանջարար» [2, էջ 365-366]:

12. Ռուսերենում հանդիպում են «видал в гробу»/ «видал в гробу в белых тапочках»

դարձվածքները, որոնք արտահայտում են *զզվանք*: Երկրորդ դարձվածքն օգտագործել է բանաստեղծ Ն. Անցիֆերովը, իսկ առաջինն այդ դարձվածքի կրճատ տարբերակն է: Անցյալում մահացած մարդկանց թաղելիս սպիտակ հողաթափեր են հագցրել, որպեսզի դրանցով քայլեն երկնքում: Մահացած մարդն ունի ոչ բնական արտաքին, ինչը կարող է զզվանք առաջ բերել: Կարծում ենք՝ սրա հետ է կապված դարձվածքի բացատրությունը:

Ամփոփելով ողջ շարադրանքը՝ կարող ենք եզրակացնել, որ՝

1. Հայերենի և ռուսերենի դարձվածքների շարքում մեծ թիվ են կազմում հույզեր արտահայտողները:
2. Հայերենում դրանցից ամենաշատը **վախ** արտահայտող դարձվածքներն են՝ 103 միավոր (32%), ռուսերենում՝ **զայրույթ** արտահայտողները՝ 32 միավոր (36%):
3. Երկու լեզուներում էլ բացասական հույզեր արտահայտող դարձվածքները գերազանցում են դրական հույզեր արտահայտողներին:
4. Քննված օրինակներում եղել են ինչպես երկլեզու համարժեքներ, այնպես էլ առանձնահատուկ կիրառություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աղայան Է., Արդի հայերենի բացատրական բառարան, Ա-Բ, Երևան, «Հայաստան» հրատ., 1976, 1642 էջ:
2. Աճառյան Հ., Հայերէն արմատական բառարան, ԵՊՀ հրատ., Դ հատոր, 1979, 674 էջ:
3. Բեդիրյան Պ., Ժամանակակից հայերենի դարձվածաբանություն, Երևան, «Լույս» հրատ., 1973, 230 էջ:
4. Պետրովսկի Ա., Ընդհանուր հոգեբանություն, «Լույս» հրատ., Երևան 1974թ, 540 էջ:
5. Սուքիասյան Ա., Գալստյան Ս., Հայոց լեզվի դարձվածաբանական բառարան, Երևան, Երևանի համալսարանի հրատ., 1975, 634 էջ:
6. Бабенко Г., Лексические средства обозначения эмоций в русском языке, Издательство Уральского университета, 1989, 184 с.
7. Даль И., Большой иллюстрированный толковый словарь русского языка, 2004, 352 с.
8. Молотков А., Фразеологический словарь русского языка, Москва, изд. «Советская энциклопедия», 1968, 543 с.
9. Никандров В., Психология: учебник, Москва, изд. «Волтерс Клувер», 2009 (М., «Наука» РАН), 974 с.
10. Фёдоров А., Фразеологический словарь русского литературного языка: 3-е изд., испр., Москва. изд. «Астрель: АСТ», 2008, 878 с.
11. Plutchik, R., Emotions and Life: Perspectives from Psychology, Biology, and Evolution, Washington, DC: American Psychological Association, 2002.

ՀՏԴ 398 Բանասիրություն

Սոնա Մուսայելյան
mousayelyan@mail.ru

ԱՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՐՑԱԽԻ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԲԱՆԱՀՅՈՒՍՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր: *Արցախ, ավանդություն, ազգային, դիմագիծ, արժեք:*

Հայի գոյության առանցքը պատմականորեն ձևավորված հիմնարար արժեքների ու բարոյական նորմերի պահպանումն ու ամբողջացումն է: Մեր պահպանողականությունը ոչ թե առհասարակ հնի, այլ հավերժականի հաստատումն է: Մենք ոչ թե անցյալի, այլ մնայունի պաշտպանն ենք: Մեր նպատակը անցյալում ստեղծված և հաստատված արժեքների սերնդեսերունդ փոխանցելն է: Վերջինիս համար անհրաժեշտ է առավելապես խոր ուսումնասիրել մեր անցյալը, բացահայտել մեր ինքնությունը՝ նպաստելով ավանդականի ու նորի միաձուլմանը: Մենք փորձել ենք առանձնացնել մեր ազգային տոհմիկ նկարագիրն ամբողջացնող նշխարները՝ մատնացույց անելով նախնիներին բնորոշ կենսակերպը:

Сона Мусаелян

ПРЕДАНИЯ В УСТНОМ НАРОДНОМ ТВОРЧЕСТВЕ АРЦАХА

Ключевые слова: *Арцах, предание, национальный, облик, ценность.*

Стержень существования армянина в сохранении и целостности исторически сложившихся ценностей и моральных норм. Наша консервативность заключается в утверждении не старого вообще, а вечного. Мы защитники не прошлого, а постоянного. Наша цель – передача из поколения в поколение созданных и установленных в прошлом ценностей. Для последнего необходимо особенно глубоко изучать наше прошлое, раскрывать нашу сущность, способствуя слиянию традиционного и нового. Мы старались выделить реликвии, делающие целостным наш национальный облик, указывая на образ жизни, присущий нашим предкам.

Հայ բանարվեստի պատմության մեջ իր անգնահատելի տեղն ունի Արցախի ժողովրդական բանահյուսությունը, որի արմատները գտնվում են խոր հնադարում: Արցախի ժողովրդական բանահյուսության հավաքման ու հրատարակման գործում անգնահատելի է Մակար Բարխուդարյանի, Երվանդ Լալայանի, Բահաթրյան եղբայրների, Կոստանդին Մելիք-Շահնազարյանի, Մարգարիտ Գրիգորյանի, Ալվարդ Ղազինյանի, Լևոն Հարությունյանի, Արմեն Սարգսյանի և այլոց աշխատանքը:

Բազմաժանր բանահյուսությունը մեր ժողովրդի կենսագրությունն է՝ ամփոփված ավանդության, զրույցի, հեքիաթի, լեգենդի և այլ ժանրերի մեջ: Դրանք արցախցու կենսափորձից, ընտանեկան օջախի, պատվասիրության մշտահունչ հարցերից հյուսված ստեղծագործություններ են: Ժողովրդական բանահյուսությունը ազգային հոգևոր արժեքի մի մասն է, որը, սերնդեսերունդ փոխանցվելով, բյուրեղացել, հասել է մինչև մեր օրերը՝ ձևավորելով ու ամբողջացնելով այն կրողների ազգային դիմագիծը և հարուստ նյութ դառնալով ինչպես ժամանակակից գեղարվեստական գրականության, այնպես էլ պատմագիտության և արվեստի զարգացման համար:

«Արցախահայ բանահյուսությունը իր մեկուկեսդարյա գրավոր կենսագրությամբ հայ բանագիտության մեջ նշանավորվում է մեծարժեք ժառանգությամբ՝ լեզվամտածողության

ու արժեքային ուրույն համակարգով[1]»: Ժողովրդական բանահյուսության մեջ նշանակալից են ժողովրդական ավանդությունները, որոնք պատմողական ժանրի ստեղծագործություններ են: Ավանդություններում հրաշքայնության հետ միաձուլվում են արկածային իրադարձությունները: Նրանցում գերազանցապես ոչ իրական, ոչ հավաստի պատմություններ են:

«Ավանդությունների սյուժեները հարուստ են և ընդգրկում են մարդկային կյանքի բազմաթիվ ոլորտներ: Նրանք մասնակի դեպքի պատմությունից գրեթե միշտ բարձրանում են գեղարվեստական մեծ ընդհանրացման աստիճանի և հարազատորեն արտացոլում ժողովրդի կյանքի ու մտածողության այս կամ այն բնորոշ կողմը: Կան նաև կրոնական սյուժեներով ավանդություններ, որոնց մեջ գերակշռողը սրբերն են, հայտնություններն ու հրաշքները: Ավանդությունները անընդհատ մշակվող բարձրարվեստ ստեղծագործություններ են[2]»:

Դրանք վիպական ժանրի ժողովրդական ստեղծագործություններ են, որոնք ստուգաբանում, բացատրում, ներկայացնում են անցյալում եղած և տեղի ունեցած իրերն ու դեմքերը, դեպքերն ու երևույթները:

Հայկական ավանդությունների և ավանդական զրույցների հավաքման և ուսումնասիրության գործում ուշագրավ է Արամ Ղանալանյանի դերը: Ավանդությունները ժողովրդական բանահյուսության այն տեսակներից էին, որ թե՛ հայ, թե՛ միջազգային բանագիտության մեջ ամբողջական համակարգման և հետազոտության չէին արժանացել: Ժանրի սահմանները ճշգրտված չէին: Վիպական բանահյուսության տարբեր տեսակների անուններով էին երբեմն ներկայացվում բուն ժողովրդական ավանդությունները: Բնականաբար Ա. Ղանալանյանի «Ավանդապատում» հատորը լույս սփռեց ավանդությունների և ավանդական զրույցների գիտականորեն մեկնաբանման վրա: «Ավանդությունների հիմնական նպատակը ոչ թե ունկնդիրների գեղարվեստական պահանջների բավարարումը, այլ գլխավորապես նրանց համապատասխան աշխարհագրական, պատմական, կենցաղային, կրոնական ու այլ կարգի տեղեկություններ ու գիտելիքներ հաղորդելն է[3]»:

Ղանալանյանը հենց դրանով է բացատրում նաև ավանդությունների ճակատագրորեն անհրաժեշտ կապը որոշակի առարկաների, տեղավայրերի ու անձանց հետ; Այս մասին կարդում ենք Սարգիս Հարությունյանի «Արամ Ղանալանյան» հոդվածում: Ղանալանյանը ավանդություններն ու ավանդազրույցները բաժանում է 3 հիմնական խմբի՝ ստուգաբանական և բացատրական ավանդությունների և վարքաբանական ավանդազրույցների: Մեր նպատակն է քննել արցախյան ավանդապատումները և փորձել դասակարգել դրանք՝ ելնելով նրանց ժանրային առանձնահատկություններից և բնույթից:

Բանահյուսությունը ժողովրդական խոսքի արվեստ է՝ ստեղծված բանավոր խոսքին հատուկ չափանիշներով: Բանահյուսական ստեղծագործություններում դրսևորվող լեզվական կառուցվածքի յուրաքանչյուր միավոր նաև ոճական միջոց է և արտահայտում է ժողովրդի լեզվամտածողությունը[4]»

Արցախի բանահյուսության մեջ առանձնահատուկ տեղ ունեն հայրենի բնաշխարհին և նրա հետ կապված հավատալիքներին ու պաշտամունքին վերաբերող ավանդությունները:

---

[1] ***Մարգարյան Լ.***, *Արցախի բանահյուսության լեզուն,Ստեփանակերտ, 2011 թ., էջ 9:*
[2] ***Գրիգորյան Գր.***, *Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967թ., էջ 297-299:*
[3] ***Ղանալանյան Ա.***, *Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985 թ., էջ 196:*
[4] ***Մարգարյան Լ.***, *Արցախի բանահյուսության լեզուն, Ստեփանակերտ, 2011թ., էջ 88:*

Արցախում ևս ժամանակին մեծ հավատ կար ոգիների գոյության վերաբերյալ, որի մնացուկները առայսօր պահպանվում են: Ահա թե ինչու ոգեղենացվել ու անձնավորվել են հայրենի լեռներն ու քարերը, ջրերը, բույսերն ու կենդանիները, առանց որոնց անհնար է արցախցու գոյությունը:

Այսպես՝ *«Հացվա կլէրան տէն, Հրվալուք սարան մոտէ մին վանք ա ըլա՞ղ, անումը Անահիտ: Վանքը էն ա ըլա՞ղ Հրբանուն տափումը: Կօխկէ հղրցէն էլ ըսէիս ըն ըլա՞ղ Հրբանուն հղէ: Հացվա Անահիտին ըխպրան կնանէքը կուժավ ճուր ըն ըլա՞ղ տնէիս, վանքէն քարէրը լվընայիս, հանցու թոռ կյա: Արաշտ տարէն վէր վանքէն քարէրը լղրցրալ ըն, թոռ ա յ էկալ[1]»:*

Լեռներից հատկապես պաշտամունքի առարկա են դարձել Քիրսը, Մռավն ու Դիզափայտը, որոնց վրա գտնվող ուխտատեղիները իրենց արտացոլումն են գտել մի շարք ավանդություններում:

«Վաչական թաքավէրը վէր մէռալ ա, տարալ ըն Մռավա սարէն կլխէն թաղալ: Ամէն տարէ ու՞րան խօխէքը պցրընայիս ըն ըլալ Մռավը, կյրզմանան էրկու հափուռ վեղ քամուն տայիս: Ասըմ ըն, հա՞ղը մինչէվ մէռնէլը տի յա ըլալ թափշուր ըրած[2]»:

Իրենց շուրջը հյուսած ավանդություններով հայտնի են նաև մի շարք քարեր ու ժայռեր, ինչպես նաև սարեր, բլուրներ, ձորեր, դաշտեր և այլն:

Դեռևս պահպանվում են ջրի պաշտամունքի մնացուկները, մի քանի աղբյուրներ, սուրբ համարվելով, շարունակում են մնալ հիվանդություններ բժշկող: Դրանցից մի քանիսն ամեն տեսակի, իսկ մյուսները միայն որոշ հիվանդությունների բուժիչ սրբատեղիներ են համարվում:

«Դրանք երեք հսկա ճյուղատարած ընկուզենիներ են, որ երկինք են միտել Խաչմաչ գյուղի դիմաց: Ծառերն աճել ու զորացել են Վերին աղբյուրի ջրերով: Հիմա աղբյուրը չկա, մնացել է անունը՝ Կույրախպյուր:

Պատմում են, որ գյուղ կար աղբյուրի կողքին, որտեղ մի սիրուն աղջիկ էր ապրում: Մի անգամ աղջիկը կուժն առած ջրի է գնում, իսկ տղան սպասում դարձին: Ջուր-վիշապը կլանում է շտապող աղջկան: Սիրատոչոր տղան փնտրում է և միայն դիակն է գտնում խայտացող ջրերի վրա:

«Չորանաս, աղբյուր, կուրանաս, աղբյուր»,- մղկտացել է երիտասարդը: Տղայի անեծքից չորացել-կուրացել է աղբյուրը: Ցամաքած աղբյուրից երեք ծառ է զորացել[3]»:

Բազմաթիվ են այն աղբյուրները, որոնք չեն պաշտվում, բայց նրանց մասին հյուսվել են գեղեցիկ ավանդություններ:

«Թութին մին սվրկյարի նախշուն ախճիգա ընում, լավ յէրգ ասօղ, լավ պար կյվօղ: Թուքմաննէն հիշտէղ նրան սպանում ըն, ընդրղան մին պրզաճյուր ախպյուր ա տուս կյամ, անումը տնում ըն Թութուն ախպուր: Վէլէլնէն Թութուն մէյդը յոր ըն օնում, սոպքար ընէլավ տանում Յղնախտութ, էն պէցիր տէղը թաղում: Ընդրղան էլա մին ախպյուր տուս կյամ: Անումը տնում ըն Թութուն ախպյուր: Հիշքան դաշանգ դուշէր կան Թութուն ըխպրին ակնան ըն տուս կյամ, հանցու վեր ու՞րան յէրքէրն ասին, ու՞րան պարէրը կյան, սրտեէը տէղ տան[4]»: Մի շարք ավանդություններում արտացոլվում է քրիստոնեական կրոնի և հատկապես Քրսիտոսի հանդեպ ունեցած մեծ հավատը:

---

[1] ***Հարությունյան Լ.,*** *Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991 թ., էջ 89:*

[2] *Նույն տեղում, էջ 93:*

[3] *Նույն տեղում, էջ 90:*

[4] ***Հարությունյան Լ.****., Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991 թ. էջ 92:*

«Ըստծու օժը վանքէն տված ա: Հու վէր խնթիրք ա անում, կնգանը փօրումը ախճիգը տղա յա շու°°նու°°մ, տղան՝ ախճիգ: Հայէրն ըն հնարալ, հանցու թօրքերը վանքը քանդին ույ: Տի էլ տէռալ ա[1]»:

«Մին կնէգ պռոնստում ա.- Իմ իրէսս քու վէննանդ տակը, աստուծ, ինձ էրկու խօխա բախշի, էրկու ծեծ օնիմ, օտին մծանան: Աստուծ ասից.- Կտամ էն պայմանավ, վէր խօխէքը էս աշխարքը կյան, տու էն աշխարքը քյընիս: Կնէգն ասից.- Հինչ կընի: Համա, աստուծ, խօցս թողիս ոչ ծծընռված: Մարը մէռնում ա: Տանում ըն վէղէն թափշուր առում: Ժամանակավ մորը ծծէրան էրկու տօնգ ա տուս կյամ. մինը՝ թութէն, մինն էլ՝ թուզին: Մօրը կաթնը թօթ ու թօզ ա տէռնում, խօխէքը օտում ըն մծանում[2]»: Արցախում յուրահատուկ է բույսերի և կենդանիների պաշտամունքը: Բանահավաքները գրի են առել դրանք՝ քաջ գիտակցելով դրանց ճանաչողական արժեքն ու նշանակությունը:

«Մուշրհավը կտօց-կտօց յէրք ըսէլավ էն ա ընում մօշէն քօլէն տակէն քթուր ընէիս: Աղվէսն էլ մտքէն դօնն ընգած, ինքը ու°°ռան անավ հյիլ-մայիլ կտրած, մին կյիր էլ կռուտակէն, օշը բդի յէրգինքն ըրած էն ա ընու°°մ քյընիյիս: Էլ ծառէն կօխկէ վէրը տէսնում չի, հանկարծ ըղնում ա մաչը: Մկրծէռնը տէսնում ա, ծծաղում ուշրհան ընու°°մ: -Վէրումը հի՞նչ կօրծ օնիս, ա քամէ նհէտ տվօղ: -Մարկյավաքյ իմաստունն ասալ ար. Յրգինքին աստխէրը հաշէվ ըրա, ես էլ հաշէվմ՝ անում: Մին կօրած ասթխ կար՝ ինձ շատ չրչարից, վէննանս տակէն էլ յշէցէ վույ: Ծառէն ախպէր, մունք մին ցէղա յընք, պարդավէր ընք ու°°ռու °°ր քյօմագ ընինք,. Ծէրքդ տօ պցըրանամ: -Ես կարէլ չըմ քէզ նման հիմարէն լվօթուն անիմ: Ընձանա քէզ ամանաթ. առաջ վէննանդ տակէ վէղը ճնանչի, յէտնան յրգինքին աստխէրը հաշն ըրա[3]»: «Կքավէն ասում ըն. – Խէ յէրք ըս ասում, չէ՞ վէր տանավ դուլուղ ըս անում վրսկննէրէն, մահլու°°մ ըս անում քու քօլէդ տէղը: Կաքավը ըստի յա բաղասխանում. – Ես յէրք ըմ ասում, սկընօղէն նէղ սէրտը լնրցնիմ: Ես յէրքը հո՞ւնց չասիմ, վէր էն ա սրտումս յէրք կա: Մարթին մինը վէրսկան կընի, հարուրը վէրսկան չընիլ: Վէր օգում ըս գյիդաս, շատը վրսկննէրէն հէտէ՝ յըմ ասում[4]»:

«Կատուն վեր տու°°զն ա ընում, էշու քուռակու նման ըռաչավդ թավիլ ա տամ. Վէր լիուլի յա ընու °°մ, շան նման պպզում ա, վէր հիվանդ ա ընու °°մ կյառնու նման մա յա անում, վէր կյոթուն ըրած ա ընու °°մ , ըղվէսու նման սիլի-բիլի յա անում, հաքյին հարուր հէտ վէննէրդ ա քսում, վէր քէզ վնաս տալի յա ընու °°մ, վագրու նման ժռնգում ա, վէր մուկուն փռնած-կէրած ա ընու °°մ, նստում ա արքայավայէլ, առյուծու նման ըռաչի վէննէրը ու °°ռու °°ր ա փթաթում, աշկէրքը հօփ օնում, յանի՝ ես ըմ վէր կամ[5]»:

Քիչ չեն նաև այն ավանդությունները, որոնցում դրսևորվում է մաքառող ժողովրդի անսասան հավատը:

«Մարը կուրցընում ա մինուճար բլէն: Ամեն օր քշէրավ յէր ա կէնում քյընում մդարէն կյրզմանէն կռանում, ըրտասունք թափում, ըստի մինչև ռու՛՛գյու: Մին օր շատ-շատ ա լավ ընում, լոխ մննան ըղնում ա, ու՛՛ռան էլ ա ա մննան քցում, վէր օշը հլօ՛՛ռում ա, տէսնում ա՝ մթնքշէր: Կնէգը վախում ա, մէռած վէրթուն ա ծէն տամ: Մարը վէր նէղ օրում ընի, հու՛՛ր ծէն կտա: -Արտավազ, Արտավազ, Արտավազ… Մնէլ ա տէսնում հանգիստարանէն խօրան սա՛՛սէր ա կյամ. -Վէ՞ր Արտավազ, ըստէղ մունք շատ ընք, թաքավէր Արտավազան մինչև

---

[1] Նույն տեղում, էջ 95:
[2] Նույն տեղում, էջ 80:
[3] Նույն տեղում, էջ 69:
[4] **Հարությունյան Լ.**, Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991 թ., էջ 73:
[5] Նույն տեղում, էջ 75::

տվարած Արտավազը: Մարը էլ վախում չի, խուխէն հնգերունքը լօխ էն ընի ու՛ռան չօրք ընգյունին: Շատունքէն մաչին վախէլ չրն[1]»:

«Քրիստոսը փախավ յէկավ Հայացտուն: Ըսէցէն՝ պա տու հրրէցէ չը՞ս: Ասից.- Հիշտէդ վարթաբէդ կա, էն իմ յէրգիրս ա, հու վէր ինձ անգուճ օնէ, էն էլ իմ վերթիս ա[2]»:

Երբեմն ավանդությունները ստեղծվում են՝ նկարագրելու ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքը, առօրյա կենցաղը: Այսպիսի ավանդություններում առավելապես դրսևորվում են արցախցուն հատուկ մի շարք գծեր, մի դեպքում բախտավորություն, մյուս դեպքում՝ հարստություն:

«Էրկու մարթ ծմակավը քյընիյիս ըն ընում վէրսի: Ծրավում ըն, շօռ կյամ մին ախպյուր ա ջհում, էրկու ախճիգ էլ էն ըն ընում ըխպրին ղրաղէն նստած, էրկու ըմանում ամէգը ու՛՛ռանց հետե մուշըփրթուշ ուտէիս:Վրսկննէն ասում ըն. -Սէրուն ըխճրկէրք, ճու՛՛ռ տվէք մեզ: Հիճրկուրանցան մինը կյէվաթը մուշըթաթախ, յէխտուտ ճրա՛՛վ լցնում ա, տամ ղարիբ տղրմրթունցան մնին: Էն մինն էլ թա՛՛մուզ ամանը լվանում ա, ճրա՛՛վ լցնում, օղօղ տամ, նօրը լցնում, տամ էն մարթին: Ղարիբ մարթն ասում ա. –Տու անիս, տու օտիս.- թամուզ լվընողէն: Էն մնին էլ ասում ա.- Հու վէր անե՝տու օտիս[3]»:

Մարդը ստեղծվում է բնությունից, ապրում, արարում, գնում դեպի բնություն: Մարդու էությունը ամփոփված է բնության ամբողջությամբ:

«Ասում ըն մարթին աշկը վէչ մին պէնա քուշտանալ չի: Մէ հէտ մին մարթ մէռնում ա, աշկէրը հիշքան անում ըն, կարում չրն կապին: Վէր տնում ըն վէղումը, ինքը-ինքը կապվում ըն: Մին օր տա յրա խօսք ա վէր կյամ, մին ընչատար մարթ ասում ա. – Հինչ աշկ օգում ըք տվէք, ես դա՛՛ստի կքուշտացընիմ: Պու՛՛ռու՛՛մ ըն մին մռալու աչք տուս օնում, տամ էդ մարթին: Սա տանում ա կշռքեն մին ընգյունին էդ աշկը տնում, մին ընգյունին էլ ու՛՛ռան սաղ հրստոթունը, է՝լհա աշկը ծանդր ա ընում: Հունցու անում ա, աշկը տեղան եր չի կենում: Մին օրիշ մարթ ա կյամ, թա՝վեսկավ-ըրծաթավ կարէլ չրս մարթին աշկը քուշտըցնիս: Էս խէլունք մարթը պու՛՛ռու՛՛մ ա մի հափուռ վէղ տնում կշռքէն էն ընգյունին, աշկը դա՛՛ստի պցըրանում ա: Ժղովուրթը իմաստուն ա, ասում ա՝մարթին աշկը մինակ վէղը կքուշտըցնէ[4]»:

Երբեմն մարդու երջանկության համար պակասում է շատ քիչ բան: Հավասարություն լինելու դեպքում մարդկային կյանքը կդառնա ավելի գեղեցիկ: *«Թաքավէրը մին ուստա յա ծէն տամ, ասում.- Տանս ակուշկան փոխէ, հանց հիլի քցի, վէր հիշտեղ յէշիմ՝կննչկյարմուր ըրվա, ըշխարքէս ըռնգնէն յրա փլստրատէ տա: Սարկյավաք իմաստունը դաթն ընգավ ասից.- Թաքավէրն ապրած կէնա, տու ըշխարքէս էդ ակուշկավը մ՛էր յէշիլ, տու ըշխարքէս, հանե՛, էն մաճը ծէրքէն մարթին ըշկէրավը յէշի[5]»:*

Արցախցու բնավորության մեջ առանձնանում է հատկապես նրա կանոնակարգված և կողահաստ լինելը: Շատ գործերի հաջողության հիմքն էլ հենց արցախցու կողահաստությունն է: *«Կնէգն ասում ա.- Յէր կէնամ մին վէլա մանիմ, մին քօլա թակիմ, Չալաղրզը (կովի անուն) տանիմ կապիմ: Կյօղը սկանում ա, ասում.- Մինչէվ էս կնէգը մին վէլա մանէ, մին քօլա թակէ, ես յէր կէնամ Չալաղրզը սարավն անց կրցնիմ: Առակս ասում ա՝կօրծը վախտէն բդի անիս, համ էլ*

---

[1] *Նույն տեղում, էջ 73:*
[2] *Նույն տեղում, էջ 74:*
[3] *Նույն տեղում, էջ 74:*
[4] ***Հարությունյան Լ.,*** *Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991 թ., էջ 74:*
[5] *Նույն տեղում, էջ 76:*

անէլ բդիս, յէտնան ասիս[1]»:

Երբեմն արցախցուն բնորոշում են նրա հոգատարությամբ:Նա ոչ միայն մտածում է իր, այլև շրջակա միջավայրի, կենդանիների, թռչունների մասին:

«Հարը վէրթուն ասում ա.- Քյընի բազար, մին հանց պէն պէր, վէր համ մունք օտինք, համ հավէրը, համ էշը: Տղան քյընում ա ծմէրուկ պու՛՛ռու՛՛մ: Քչէվը էշին, կօրէզը՝ հվէրէն, մաչն էլ ու՛՛ռանց[2]»:

Խելոք ու ողջամիտ են մեզ ավանդված ավանդությունները: Նրանք լեռնային աղբյուրաջրի պես մաքուր են, թափանցիկ ու պարզ, բազմաբույր ու բազմախոխոջ և արտացոլում են պատմականորեն արված մեր հաստատուն ու անշեղ քայլերը, նաև վրիպումները, սայթաքումները, խոստումները, բացթողումները:

Ավանդությունների ընձեռած հնարավորություններով պիտի փորձենք ինչ-որ դասեր քաղել նրա փորձառությունից, դասեր, որոնք դրոշմված են մեր հիշողության հավերժախոս մատյանին և մեր արդիմտածողությունը թարմացնելու և նրան ճիշտ ուղղություն տալու հանձնարարականների նշանակություն կարող են ունենալ: Չէ՞ որ պատմական դեպքերը համարյա թե նույնությամբ կրկնվում են: Ասել է թե՝ պատմությունը դեպքերի պարբերական կրկնություն է:

Այսպիսով՝ սույն հոդվածում փորձ է արվում պատմական անցյալի և արդի մտածողության համատեքստում ցույց տալ արցախյան ավանդությունների կարևորությունը՝ հայ ժողովրդի ազգային ինքնության պահպանման, զորացման, հայության համախմբման ու զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գր., Հայ ժողովրդական բանահյուսություն, Երևան, 1967թ:
2. Հարությունյան Լ., Նշխարներ Արցախի բանահյուսության, Երևան, 1991 թ:
3. Ղանալանյան Ա., Դրվագներ հայ բանագիտության պատմության, Երևան, 1985թ:
4. Մարգարյան Լ., Արցախի բանահյուսության լեզուն,Ստեփանակերտ, 2011 թ:
5. Սարգսյան Ա., Ղարաբաղի բարբառի բառարան, Երևան, 2019 թ:
6. Սարգսյան Ա., Արցախի բանահյուսությունը, Երևան, 2016 թ:

[1] *Նույն տեղում, էջ 77:*

[2] *Նույն տեղում, էջ 78:*

ՀՏԴ 81՝37 Բանասիրություն

Շուշան Ներսեսյան
Վանաձորի պետական համալսարան
«Հայոց լեզու և գրականություն» մասնագիտություն, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտ. ղեկավար՝ բ. գ. թ., դոցենտ Լ. Պետրոսյան

«ՀԱՅՐ» ՀԱՍԿԱՑՈՒՅԹԻ ԻՄԱՍՏԱՅԻՆ ԸՆԿԱԼՈՒՄՆԵՐԸ ՀԱՅԵՐԵՆՈՒՄ

Բանալի բառեր *հայր, հասկացույթ, բառ, առաջնային իմաստ, երկրորդական իմաստ, ծնող:*

Սույն հոդվածում քննել ենք ազգակցական հարաբերություն ցույց տվող հայր հասկացույթի իմաստային ընկալումները: Անդրադարձել ենք ոչ միայն հասկացույթի առաջնային, այլև մի շարք երկրորդական իմաստներին, որոնք այնուամենայնիվ սերտորեն կապված են առաջնային իմաստի հետ և բխում են նրա բովանդակությունից: Քննելով բառարանային վերլուծությունները՝ կատարել ենք համեմատական աշխատանք՝ պարզելով, թե իմաստային ինչ փոփոխություններ են գրանցվել բառի պատմական զարգացման ընթացքում:

Աշխատանքի ավարտին եկել ենք այն եզրակացության, որ հայոց լեզվի բնիկ շերտի բառերից մեկը՝ հայրը, ժամանակի ընթացքում սկսել է գործածվել ոչ միայն անձնանիշ, այլև իրանիշ գոյականներին վերագրվելիս:

Шушан Нерсесян

СЕМАНТИЧЕСКИЕ РЕЦЕПЦИИ КОНЦЕПТА «МАТЬ» В АРМЯНСКОМ ЯЗЫКЕ

Ключевые слова: *отец, концепт, первичное значение, вторичное значение, родитель.*

В данной статье мы проанализировали семантическую рецепцию концепта «отец» в системе родственных отношений. Мы исследовали не только первичное значение концепта, но и ряд второстепенных смыслов, которые, тем не менее, тесно связаны с первичной семантикой и вытекают из ее содержания. На основе анализа словарных статей, мы провели также сравнительное исследование и выяснили, какие семантические трансформации были зафиксированы на всем протяжении исторического развития данного слова.

В конце работы мы пришли к выводу, что одна из исконных лексем армянского языка – «отец» – с течением времени стала употребляться не только с терминами, обозначающими лицо, но и с предметными существительными.

Հայր բառի հիմնական իմաստն է *«Այր կամ արու ծնօղ զաւակի» (12, 32)* : Այս բացատրությունը գրեթե նույնությամբ կրկնում են հետագա շրջանների բանասիրական բառարանների հեղինակները: Ս. Մալխասյանը «Հայերէն բացատրական բառարան»-ում որպես այս բառի առաջնային իմաստ՝ նշում է. *«արական սեռի անձ, որ որդի ունի, արու ծնող» (10, 39)* : Է. Աղայանը «Արդի բացատրական բառարան»-ում որպես այս բառի առաջնային իմաստ նշում է *«Տղամարդը իր որդիների համար, ծնող արական անձը»* և *«Տղամարդ, որ արդեն որդի ունի կամ ունեցել է» (1, 813)* : ***Հայր*** բառի առաջնային իմաստը գործածելի է հայերենի պատմական զարգացման բոլոր երեք գրային շրջաններում և բարբառներում: Այն իր առաջնային իմաստով պահպանվել է հայ բազմաժանր գրականության և ժողովրդական բանահյուսության մեջ:

Այսպես՝ հայր հասկացույթի առաջնային՝ «Այր կամ արու ծնօղ զաւակի» իմաստը գործածված է «Աստվածաշունչ» երկում՝ վերագրվելով «Աստուած» հասկացությանը. *«Եւ նախ յաստուած որպէս* ***ծնօղ*** *էական և աստուածային՝ առաջին անձն յերրորդութեան, որոյ ծնունդ է բանն Աստուած համագոյ»* նախադասության մեջ:

«Աստվածաշունչ» երկում ***հայր*** հասկացությունը իր առաջնային իմաստով հանդիպում է «Գիրք ծննդոց»-ում *«Վասն այնորիկ թողցէ այր **զհայր** իւր՝ և զմայր իւր, և երթիցէ՛ զհետ կնոջ իւրոյ»* նախադասության մեջ, որտեղ առաջնային իմաստի պարզաբանման համար հիմք են հանդիսանում զուգահեռ գործածվող ազգակցական հարաբերություն արտահայտող բառերը՝ *զմայր, կնոջ:*

Հայ հին և միջնադարյան տարբեր հեղինակների ստեղագործություններում *(8)* ***հայր*** հասկացությն օգտագործված է իր երկրորդական իմաստներով, սակայն հանդիպում են նաև առաջնային իմաստով կիրառություններ: Այդ շրջանի ստեղծագործություններում նույնպես այս բառի առաջնային իմաստը հստակորեն տարբերակելու համար հիմք են ծառայում զուգահեռ գործածվող ազգակցական հարաբերություն արտահայտող այնպիսի բառեր, ինչպիսիք են՝ *մայր, պապ, եղբայր, քույր, որդի* և այլն: Օրինակ՝ *«Բարբանջեալ բարձին Զիսելքն խիկարին, Ետուն սպանանել, զիւր մօրուն, **Հօր** աչքից հանին»* (8,159), «*Պապուս անունն ասեն մօլլայ, Աղբօրս ասեն քաղքին շահնայ, Ու զիմ անունս ասեն Այշալ, Մէկալ քուրոջս Օղուլդայ, Զիմ մօրս անունն ասեն Ֆաթմայ, Ու **հօրս** ասեն դատի մօլլայ»* (8, 320), *«**Հայրն** չկարաց փրկել զորդին իւր սիրական, Որդին ելաց և հառաչեաց յոգւոց եհան»* (8, 343), *«Զիս այլ սիրո տէր արիր, ու հանիր իմ հօրն ի տանէն», «Աղուո՛ր, քեզ բան մի կ՛ասեմ, հօրդ ահուն չեմ իշխեր ասել»* (8) *և այլն:*

Աշխարհաբար գրականության մեջ ***հայր*** հասկացությն արդեն հաճախադեպ է իր առաջնային իմաստի կիրառմամբ: Աշխարհաբար մի շարք հեղինակների ստեղծագործություններում, հատկապես երբ դրանք ընտանեկան հարաբերություններ են պատկերում, հանդիպում ենք այս բառի առաջնային իմաստի կիրառմանը, ինչպես՝ *«-Անցածը վերադարձնել չի կարելի, **հա՛յր,** օրինի՛ր,-արտասանեց որդին մի տեսակ խուլ ձայնով» (14, 292), «Ու ողորմելի **հայրը** կխոստանար, ամեն բան կխոստանար, կանուխ պիտի գար ու պտտցնելու պիտի տաներ այս հեք գրկյալ որբերը» (14, 78), «-Կուզե՞ս ես քո քույրը լինեմ, դու իմ եղբայրը: Ես կխնդրեմ **հորս,** որ դու մեր տանն ապրես և ինձ համար միշտ այդպիսի եղանակներ նվագես»(14, 147), «Շմավոնը **հորը** տեսնելով՝ ավելի մռայլվեց և մեղավորի պես, կարծես ինքը լիներ աղետի պատճառը, չպատասխանեց և աչքերը գետնին գցեց» (3, 4)* և այլն:

Հայ նոր գրականության հատկապես չափածո ստեղծագործություններում նույնպես հանդիպում ենք ***հայր*** հասկացության առաջնային իմաստով կիրառություններին, ինչպես՝ *«**Հայրը** ինչպես մռայլ մի ամպ, Աղջիկն անուշ մի լուսին» (5, 122), «-Սա էլ **հորս** տնկածն է,-պարծենում էր քույրս քաջ, Գոհար քույրս, որ **հորս** «դոչաղ» տղեն էր* դարձել» *(13, 180), «Մինչ **հայրը** նրա՝ Գևոն կոշկակար, Գոգնոցը հանեց, արխալուղ հագավ» (15, 4), «Գեթ **հայրը** մնար…Բայց **հայրն** էլ գնաց, Երբ որդին չկար տասը տարեկան»* (15, 7) և այլն: Չափածո խոսքում ***հայր*** հասկացությը շատ հաճախ օգտագործվում է որպես կոչական՝ երբեմն ունենալով **իմ** դերանունով արտահայտված հատկացուցիչ, ինչպես՝ «-**Հայր՛իկ**, ինչո՞ւ ետ չդարձան էն քաջերը սիրատենչ, Մի՞թե, **հայրիկ**, ինձ մոռացան, էլ չեն բերի հուրն անշեջ» (5, 124), *«**Հայրի՛կ, հայրի՛կ**, մի՞թե չկա էս աշխարհքում անշեջ հուր»* (5, 125), *«Գտնեմ դեռ կորած խաչքար մի, **հայր իմ**, Որպես շիրիմդ՝ համբուրեմ ու լամ»* (13, 183), *«**Հայր իմ**, արծիվ կուզեիր, բուերի փառքն ինձ մնաց»* (13, 201), և այլն: Հ. Շիրազի ստեղծագործություններում նույնպես ***հայր*** բառը կոչական է և կապակցվում է այնպիսի որոշիչների, ինչպիսիք են ***խեղճ, ծերուկ, սուրբ, քաղցր, հրաշք*** և այլն, ինչպես՝ *«Մանուկ աչքիս՝ **հայրիկս** ծերուկ հսկա էր թվում,* (13, 184), *«Ու փշրեցին սուրբ **հորս** արպես կավե մի արձան»* (13, 192), *«Միայն քաղցր **հայրիկիս** նուրբ շշուկն է դեռ ինձ հետ»* (13, 192), «*Երբ **հայրիկիս** շնչին էր միշտ կարոտում որբ հոգիս,*

Հարցնում էի ծերերից՝ թե տեսե՞լ եք ***հորս*** *խեղճ»* (13, 194), *«Հրաշք* ***հայր էր,*** *մարդ էր, մարդ և աստվածն էր բոստանի…»* (13, 209) և այլն:

Հայոց հին հավատալիքներում *(9)* ավանդազրույցները ներկայացվում են ընտանեկան հարաբերությունների տեսքով: Այս դեպքում ***հայր*** հասկացույթն անմիջականորեն առնչվում է ***մայր*** հասկացույթին, և բնության երևույթների՝ անձնավորում պատկերավորման միջոցով ներկայացվում են ընտանեկան հարաբերությունները, ինչպես՝ *«Երկինքն ու երկիրը ամուսիններ են: Երկինքը* ***հայր*** *է, երկիրը՝ մայր»*: (9, 12): Երբեմն ***հայր*** հասկացույթը դառնում է որոշիչ, ինչպես՝ *«Ամպրոպի ժամանակ* ***հայր*** *երկինքն ու մայր երկիրը ծիրանի ծովի միջոցով միանում են իրար»* (9, 21) և այլն:

Հայր հասկացույթը հայերենի բարբառներում հանդես է գալիս հետևյալ հնչյունական տարբերակներով ***հայր*** (Ագլ.), ***հար*** (Ախց., Ակն., Ասլ.,Կր., ՆՆխ., Պլ., Ռ., Սեբ., Սչ.), ***հէր*** (Ղրբ.), ***հէր*** (Ալշ, Գոր, Երև, Հմշ, Մշ, Շմ, Տփ), ***խէր*** (Մկ., Մրդ., Ջղ., Սլմ., Վն.), ***խէր*** (Ոզմ), որոնցում ակնհայտ է երկբարբառի պարզեցումը (***այ>ա, է, է***) *(2, 32)*:

Ժամանակակից հայերենում ***հայր*** հասկացույթը, պահպանելով առաջնային իմաստը, աստիճանաբար ընդլայնում է իր երկրորդական իմաստների շրջանակը՝ ձեռք բերելով նոր իմաստներ և կապակցելիական նոր հնարավորություններ: ***Հայր*** հասկացույթի իմաստաբանական քննությունը ցույց է տալիս, որ այս հասկացույթը վերագրվում է *աստվածանիշ*, *անձնանիշ* և *իրանիշ* գոյականների՝ իմաստային համապատասխան հերթագայություններով:

1. **Աստվածանիշ գոյականների վերագրվելիս**

Հայր հասկացույթը, ի տարբերություն մնացած ազգակցական հարաբերություն ցույց տվող բառերի, ամենահաճախադեպն է կրոնաեկեղեցական գրականության մեջ, որտեղ նրա գործածումը վերագրվում է ***Աստված*** հասկացույթին՝ *«****Հայր*** *տեառն մերոյ կամ* ***հայրն*** *ձեր երկնաւոր»* (12, 32) իմաստով, ինչպես՝ *«Զայ ասի՝ հայելով յառաջին անձն յանուն հօր, և Որդւոյ, և Հոգւոյն սրբոյ: Առ* ***հայր*** *իմ (բնութեամբ), և առ* ***հայր*** *ձեր շնորհօք:* ***Հայր*** *տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի և այլն: Կամ* ***Հայրն*** *ձեր երկնաւոր: Տէր* ***հայր*** *մեր:* ***Հայր*** *մեր՝ որ յերկինս»:* Այս իմաստի ընդլայնմամբ *«Աւետարանում»* ***հայր*** հասկացույթը վերագրվում է *«Հայր տեառն մերոյ Յիսուսի Քրիստոսի»*: Ս. Մալխասյանցը այս իմաստի պարզաբանման համար բերում է *«Աստված, իբրև արարիչ ամենքի»* (10, 39) բացատրությունը: Այս իմաստի դրսևորմանը հանդիպում են Ե. Կողբացու *«Եղծ աղանդոց»*- ում, ինչպես՝ *«Եթե* ***հայրն*** *յորդւոյն արարածս ոչ խնայեաց այնու, զի ի ձեռս չարին մատնեաց, որդին զիւրսն զի՞ արդ ոչ զընդայցէ. Առ տկարութեա՞ն ինչ, թե՞ առ չարակամութեան» (7, 465)*:

Կապված կրոնաեկեղեցական իրականության հետ՝ աստվածանիշ գոյականների վերագրվելուց բացի այս հասկացույթը վերագրվում է նաև անձնանիշ գոյականների, ինչպես՝ *«եկեղեցու* ***հայրեր,*** *հոգևոր կոչման անձեր կամ հեղինակներ, որոնց գրուածքները կամ որոշումները վայելում են հեղինակութիւն»* (10, 39): Սրանցից բացի ***հայր*** հասկացույթը առհասարակ համարվում է *«հարգական մակդիր հոգևորականների»* (1, 813), այս հասկացույթով է բնութագրվում նաև *«կնքահայր»* (12, 32) իմաստը:

«Աբբայ, վանական, միայնակեաց և վարդապէտ եկեղեցւոյ կամ հայրապէտ» իմաստներով ***հայր*** հասկացույթը գործածվել է *«Վարք հարանց և բանք նոցա լուսաւորեն զանձն»* երկի և միջնադարյան հեղինակների մի շարք երկերում: Այս իմաստով գործածվելիս հասկացույթը հիմնականում կապվում է որևէ անձնանիշ, արական սեռի հատուկ գոյականի, ինչպես՝ *«Ասաց* ***հայրն*** *Անտոն»*, *«Արսենիոս* ***հայրն»*** և այլն: Այս իմաստին բնորոշ են նաև *լուսաւորել, ժողովել, ասել* գործողություն ցույց տվող բառերը և

աստվածաբան, սուրբ, բազմերջանիկ որոշիչները, ինչպես՝ *«վարք **հարանցն** և բանք նոցա լուսաւորեն զանձնն, Ասաց **հայրն** Գրիգոր աստուածաբան, սուրբ **հարքն** ի նիկիա ժողովեալքն, բազմերջանիկ **հարանցն**»* և այլն:

2. **Անձնանիշ գոյականների վերագրվելիս**

Հայր հասկացությունը իմաստի ընդլայնմամբ գրաբարում նշանակում է նաև «նախահայր», որ վերագրվում է *Սամուել, Նախաստեղծ, Աբրահամ* անձնանիշ գոյականներին, ինչպես՝ *«Սամուել **հայր** Ասորւոց», «Նա զնախաստեղծն **զհայրն** աշխարհի», «**Հայր** մեր Աբրահամ է»* և այլն: Այս իմաստով գործածվելիս հասկացությունը գործածվում է նաև որպես օրէնք հասկացության հատկացուցիչ, օրինակ՝ «Ի վերայ հարցն օրինաց», «Անցանել զհարցն օրինօք» և այլն:

«Նախահայր» իմաստով գործածվելիս հասկացությունը հարաբերվում է նաև անդրաշխարհային իմաստով՝ կապակցվելով *վախճան, ննջել, գեհեն* բառերին, օրինակ՝ «Ննջեաց ընդ **հարս** իւր, Որպէս զվախճան սրբոցն, որ իբրև զաբրահամ, յաւելուլ ասէ առ **հարս** դիրն, այսպէս զմեղօք մեռեալսն՝ ի գեհեն **հարց** իւրեանց երթալ ասեմք, **հարս** զնմանապէս չարսն ասելով»: Լինելով անձնանիշ հասկացություն՝ ***հայր*** բառը կիրառվում է և եզակի և հոգնակի թվով՝ ի տարբերություն առաջին իմաստի, օրինակ՝ «Ով հարք սուրբք»: Է. Աղայանը, անդրադառնալով այս իմաստին, նշում է, որ այս իմաստն է ենթադրում նաև ***հայր*** հասկացության հոգնակի ձևը՝ «հայրեր, նախնիներ, նախորդ սերունդներ» (1, 813) և *«հայրեր, պատվավոր, նշանավոր այրեր»* իմաստներով: Ըստ Ս. Մալխասյանցի՝ ***հայր*** հասկացության հոգնակին ենթադրում է *«նախնիք, պապեր, նախապապեր»* (10, 39) իմաստը: ***Հայր*** հասկացության հոգնակի թվով կիրառման ևս մեկ իմաստ են բերում ՆՀԲ-ի հեղինակները՝ վկայելով, որ ***հայր*** հասկացությունը ասորերենի նմանությամբ կիրառվում է նաև ***ծնող*** իմաստով «Ըստ ասորի ոճոյ՝ փոխանակ ասելոյ հայրն և մայրն, ծնօղք», ինչպես՝ *«Կայեն ծնաւ անիծիւք, զոր զգեցեալ էին **հարք** նորա», «Օր մի երբեմն ով ոչ դիտեին **հարք** նոցա, ասէ Կայեն զհաբել, եկ երթամք ի դաշտ», «Զադամ և զեւոյ **զհարս** ամենայն երկրի»* և այլն: Օրինակներից պարզ է դառնում, որ իմաստային այս կիրառությունը հատուկ է հոգնակի թվով արտահայտություններին:

Այս ենթաիմաստի ընդլայնմամբ ***հայր*** հասկացության հոգնակի կիրառությունը նշանակում է նաև ***սկեսրայր*** և ***սկեսուր***, ինչպես՝ «Արդ նոքա են քո ***հայր*** և մայր»

Ինչպես ժողովրդախոսակցական լեզվում, այնպես էլ աշխարհիկ բովանդակությամբ գեղարվեստական գործերի մեջ ***հայր*** հասկացությունը նշանակում է նաև *«ցեղի կամ ազգի նախահայր, վերակացու, տնօրէն, գլուխ, տէր, առաջնորդ»* (12, 32):

Հայր հասկացությունը հանդիպում ենք նաև *խնամակալ* իմաստով՝ «խնամող, խնամակալ» (1, 813) և «խնամող, վերահսկող» (10, 39): Այս իմաստով ազգակցական հարաբերություններ ցույց տվող բառերից որպես խնամակալ առանձնանում էր *քույրը*:

Հայր հասկացությունը որպես իրանիշ գոյական *«առաջին յիմիք կարգի»* իմաստով գործածվում է Եղիշեի մոտ *«Ամենայն տառից առաջին և հայր այբն է»* (12, 32) նախադասության մեջ՝ առարկայացում գեղարվեստական պատկերավորման միջոցով:

Օրենքի և իրավունքի տեսանկյունից ավելի արդարացված կլինի ավագանու համար սահմանել տվյալ համայնքում մշտապես կամ առավելապես բնակվելու պայման: Այդ դեպքում անձը ապրելով այդ համայնքում ավելի քաջատեղյակ կլինի համայնքի խնդիրներին, թույլ օղակներին և խնդիրների լուծման արդյունավետ մեթոդներին:

Իմ կարծիքով համայնքի ավագանու իր դերին չհամապատասխանելը պայմանավորված է նաև ավագանու համար սահմանված նվազագույն տարիքային շեմի (21) հանգամանքով: Փորձը ցույց է տալիս, որ ավագանու անդամների մեծամասնությունը ավելի փոքր տարիք ունի քան համայնքի ղեկավարը, ինչն էլ իր բացասական ազդեցությունն է շատ դեպքերում ունենում համայնքի ղեկավարին զսպելու, կամայականություններից զերծ պահելու հարցում: Տարիքային խնդիրը սերտ փոխկապակցված է կրթական մակարդակի և մասնագիտական որակներ ունենալու խնդրի հետ: Պարզից էլ պարզ է, որ 21 տարեկան անձը, որպես կանոն չունի բարձրագույն կրթական մակարդակ, օժտված չէ այնպիսի մասնագիտական որակներով, որոնք անհրաժեշտ կամ գոնե բավարար են՝ ավագանու վրա դրված այդպիսի ծանր և պատասխանատու պարտականությունների կատարման համար:

Համայնքի ավագանին կհամապատասխանի իր դերին ու նշանակությանը միայն այն ժամանակ, երբ այդ կազմում տեղ գտնեն պրոֆեսիոնալ մասնագետներ: Ես առաջարկում եմ, որ ավագանու անդամները համապատասխանաբար լինեն տնտեսագետներ, իրավաբաններ, բնապահպաններ և «ՏԻՄ» օրենքով նախատեսված լիազորությունների ոլորտին համապատասխանող մասնագետներ:

Ամփոփելով վերոշարադրյալը՝ հանգում եմ այն եզրակացությանը, որ վերանայվեն համայնքի ավագանուն ներկայացված հետևյալ պահանջները.

1. բարձրագույն կրթություն ունենալու պարտադիր պահանջ,
2. տվյալ համայնքում մշտապես կամ առավելապես բնակվելու պահանջ,
3. նվազագույն տարիքային ցենզի բարձրացում:

Հաջորդ խնդիրը, որին կցանկանայինք անդրադառնալ,համայնքի ավագանու հասարակական հիմունքներով աշխատելու հանգամանքն է:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի համաձայն՝ համայնքի ավագանին ունի ավելի քան 40 լիազորություն ,ընդ որում այնպիսի լիազորություններ, ինչպիսիք են՝ բյուջեի կատարման վերահսկումը, համայնքի ղեկավարի վարձատրության չափը որոշելը, համայնքի ղեկավարի կողմից իր լիազորությունների կատարման նկատմամբ վերահսկողություն սահմանելը և այլն:

Փաստորեն հենց ավագանին է համայնքի բնականոն գործունեության համար մեկ երաշխավորը:

Ավագանուն է վստահված լիազորությունների այնպիսի շրջանակ,որոնց անշեղ կատարումը ցանկացած համայնքի զարգացման գրավականն է:

Սակայն, ինչպես երևում է վերոշարադրյալից, ավագանին լիազորությունները իրականացնում է հասարակական հիմունքներով:

Եթե մեկ անձի վրա օրենսդիրը դրել է ավելի քան 40 պարտականություն , ապա որքանով է արդարացված այդ 40 պարտականության անշեղ կատարումը պահանջել մի անձից,ով իր գործունեությունը ծավալում է առանց վարձատրության:

<<Տեղական ինքնակառավարման մասին>> ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի համաձայն ՝ համայնքի ավագանու նիստերն անցկացվում են ոչ պակաս քան 2 ամիսը մեկ, և կարող են անցկացվել արտահերթ նիստեր:

Նախքան նիստերի անցկացումը ավագանին պետք է ունենա օրակարգ ,քննարկման ենթակա հարցերի ցանկ:Այսինքն ավագանու անդամը մեկ նիստին մասնակցելու համար, ծախսում է բավականչափ ռեսուրս, թե մտավոր և թե ժամանակային:

Եվ հետո ավագանին հանդիսանում է համայնք ղեկավարի <<զսպող-կանխարգելող>> մարմին, համայնքի ղեկավարի կողմից կամայականությունները բացառող մարմին:

Հայաստանի 3 խոշոր քաղաքներում (Երևան, Գյումրի, Վանաձոր) ավագանին վարձատրվում է, իսկ մնացած վայրերում՝ ոչ:

Հետևաբար, օրենսդրի նման կամքը պայմանավորված է հիշյալ համայնքների մեծությամբ, բնակչության թվով, բայց չէ որ այդ համայնքների ավագանու անդամներն էլ իրականացնում են այն նույն 43 գործառույթները, ինչ որ մնացած համայնքներում:

Կարծում ենք, որ համայնքի ավագանու արդյունավետ աշխատանքի համար հարկավոր է սահմանել որոշակի վարձատրություն, քանի որ եթե անձը ստանում է որոշակի վարձատրություն, նա ավելի պատասխանատու կերպով է մոտենում իր վրա դրված պարտականությունների կատարմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. « Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք:
2. «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենք:
3. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2015:
4.«Համայնքային ծառայության մասին» ՀՀ օրենք:

ՀՏԴ 341.6 Իրավագիտություն

Шушанна Алексанян
Российско-Армянский (Славянский) университет
Аспирант 1 года обучения
Научный руководитель,
к.ю.н. Калашян Марианна Ашотовна
marianna.kalashyan@rau.am

РАЗВИТИЕ СИСТЕМЫ МЕЖДУНАРОДНЫХ КОММЕРЧЕСКИХ СУДОВ В СОСТАВЕ НАЦИОНАЛЬНЫХ СУДОВ ЕВРОПЕЙСКОГО СОЮЗА

Ключевые слова: *международный коммерческий суд, Европейский Союз, Парижский апелляционный суд.*

В данной работе рассмотрены изменения в системе рассмотрения международных коммерческих споров в рамках Европейского Союза, возникшие в связи с выходом Великобритании из состава ЕС. В результате изучения выявлены достоинства международных коммерческих судов, создающихся в составе национальных судов ЕС.

Շուշաննա Ալեքսանյան

ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ԱԶԳԱՅԻՆ ԴԱՏԱՐԱՆՆԵՐԻ ԿԱԶՄՈՒՄ

Բանալի բառեր. *միջազգային առևտրային դատարան, Եվրոպական Մություն, Փարիզի վերաքննիչ դատարան:*

Այս հոդվածը նվիրված է Եվրոպական Միության կազմում միջազգային առևտրային վեճերի քննման համակարգի այն փոփոխությունների ուսումնասիրությանը, որոնք առաջացել են ԵՄ-ից Մեծ Բրիտանիայի դուրս գալու հետ կապված: Ուսումնասիրության արդյունքում պարզվել են որպես ԵՄ ազգային դատարանների մաս ստեղծված միջազգային առևտրային դատարանների արժանիքները:

В течение долгого времени Лондон считается главным центром для разрешения трансграничных коммерческих споров, возникающих на европейском рынке, и не только.

Согласно статистическим данным ежегодно в 80% случаев предъявленных споров в суд Лондона хотя бы одна из сторон является иностранной, а в почти 50% из требований, обе стороны являются иностранными. Более того, в 2016 году рынок юридических услуг по коммерческим спорам в Великобритании в общей сложности составил 16 миллиардов евро[1].

Этот успех обусловлен доступом к механизму автоматического признания и исполнения иностранных судебных решений на территории ЕС[2].

Так, на сегодняшний день процесс признания и приведения в исполнение иностранных

---

[1] *См. Ioana Knoll-Tudor, 'Specialised Chambers for International Commercial Disputes: Paris in the Spotlight', Kluwer Arbitration Blog, February 14 2018, [Электронный ресурс]: http://arbitrationblog.kluwerarbitration.com/2018/02/14/specialised-chambers-international-commercial-disputes-paris-spotlight/; https://portland-communications.com/pdf/Portland's%208th%20Commercial%20Courts%20report%20(2016).pdf (дата обр. 20.09.2019)*

[2] *Regulation (EU) No 1215/2012 of the European Parliament and of the Council of 12 December 2012 on jurisdiction and the recognition and enforcement of judgments in civil and commercial matters [Электронный ресурс]: http://eur-lex.europa.eu/eli/reg/2012/1215/oj (дата обр. 20.09.2019)*

судебных решений в рамках ЕС регулируется Регламентом N 1215/2012[1], которым введены существенные изменения в части признания и приведения в исполнение иностранных судебных решений. Проведено упрощение системы признания и исполнения – отменена процедура по выдаче экзекватуры. Это, по мнению Комиссии ЕС, окажет максимальный эффект на реализацию цели создания пространства со свободным передвижением судебных решений в ЕС[2].

В отличие от ранее действовавшей системы, теперь лицу, которое хочет исполнить решение на территории другого государства-члена ЕС, не нужно получать декларацию об исполнимости судебного решения (ст.39). Достаточно лишь направить в орган иностранного государства, ответственный за исполнение судебных решений, копию судебного решения, сертификат, выданный по стандартной форме и требуемые переводы. После этого иностранное решение подлежит исполнению как любое решение национального суда.

Однако, это не означает полного ущемления интересов ответчика. Он может предъявить свои возражения в компетентный суд иностранного государства, и в исполнении может быть отказано при наличии соответствующих оснований.

Таким образом, Регламент N 1215/2012 устанавливает процедуру автоматического признания судебных решений на территории ЕС, что существенно ускоряет эту процедуру и позволяет сторонам значительно сэкономить в финансовом плане.

Другим фактором, влияющим на привлекательность суда Лондона в качестве центра разрешения споров, является то, что английское право уже давно становится предпочтительным выбором в качестве права, применимого к международным торговым и финансовым операциям, а английский язык служит языком международной торговли.

Однако, после выхода Великобритании из состава Европейского союза, она больше не будет иметь доступа к системе взаимного признания и исполнения иностранных судебных решений, и стороны споров будут вынуждены прибегать к системе экзекватуры, что существенно затруднит процесс как во временном аспекте, так и финансовом. Эта потенциальная проблема не распространяется на решения Лондонского арбитражного суда, решения которого приводятся в исполнении в соответствии с Нью-Йоркской конвенцией.

В связи с этим, стороны, желающие разрешения их споров судами согласно английскому праву и/или на английском языке, имея при этом возможность свободного исполнения этих решения на территории ЕС, вынуждены искать альтернативы.

Среди стран-конкурентов по предложению соответствующих возможностей иностранным физическим и юридическим лицам, наибольший интерес представляет Франция, в связи с изменениями в судебной системе, внесёнными совсем недавно.

Соглашение о создании Международной судебной палаты при Парижском апелляционном суде было подписано 7 февраля 2018 года на основании доклада, подготовленного 15 мая 2017 года Высшим юридическим комитетом финансового рынка Парижа (HLCP) по запросу министра юстиции.[3]

В компетенцию Международной судебной палаты при Парижском апелляционном суде будут входить рассмотрение апелляций на решения международной судебной палаты коммерческого суда Парижа первой инстанции между французской и иностранной сторонами, двумя иностранными сторонами, или всякий раз, когда иностранное право применимо к спору, а также в случае наличия специальной оговорки в договоре между сторонами.[4]

---

[1] *Там же*

[2] *Commission staff working paper – Impact Assessment Accompanying document to the Proposal for a Regulation of European Parliament and of the Council on jurisdiction and the recognition and enforcement of judgments in civil and commercial matters (Recast). – Brussels, 14.12.2010 SEC(2010) 1547 final. – P. 18.*

[3] *Xandra Kramer, The domino effect of international commercial courts in Europe – Who's next?, February 20, 2018 [Электронный ресурс]: http://conflictoflaws.net/2018/the-domino-effect-of-international-commercial-courts-in-europe-whos-next/#respond (дата обр. 24.09.2019)*

[4] *Ioana Knoll-Tudor, 'Specialised Chambers for International Commercial Disputes: Paris in the Spotlight', Kluwer*

В добавок к этому, новая палата будет компетентна рассматривать требования против международных арбитражных решений, включая связанные с процедурами экзекватуры или регистрации иностранного арбитражного решения. Международная судебная палата сможет разрешать споры, связанные с действиями, совершёнными после 1 марта 2018 года[1].

Хотя действующие процессуальные нормы французского права будут продолжать применяться, для Международной палаты предусмотрены также важные нововведения.

Во-первых, при согласии сторон, процедура будет вестись на английском языке, и доказательства также смогут быть предъявлены на английском. Это расширит круг лиц – юристов, экспертов, не имевших ранее возможности участвовать в процессе из-за языкового барьера, а также поспособствует финансовой экономии сторон из-за отпадания необходимости в переводе документов и других доказательств. Хотя решение будет выноситься на французском языке, оно будет сопровождаться английским переводом[2]. Однако документы о вызове в суд и краткое изложение дела продолжают оставаться на французском[3].

Во-вторых, существенное изменение претерпят сроки. Все дела будут рассматриваться по строгому расписанию, и в отличие от обычной процедуры, когда стороны могут просить о продлении сроков, теперь они станут императивными[4].

В-третьих, палаты будут состоять из высококвалифицированных постоянных судей, специализированных в торговых, финансовых и экономических делах, со знанием применимого иностранного права и английского языка.[5]

Эти и другие изменения могут оказать положительное воздействие и привлечь иностранных лиц для разрешения коммерческих споров именно в новой палате при Парижском апелляционном суде. Как видно из нововведений, они создадут довольно благоприятные условия, позволят произвести экономию в двух самых важных аспектах – финансовом и временном, и при этом не отразятся на качестве, так как для рассмотрения дел будут привлечены компетентные юристы.

Следует указать, что опыт Франции в данной сфере не является единственным и уникальным в рамках ЕС. Так, соответствующие палаты, с разбирательством на английском языке открылись в Амстердаме, Брюсселе и Франкфурте, что создаёт возможность выбора для заинтересованных лиц.

Итак, выход Великобритании из состава ЕС послужил импульсом, мотивацией для стран континентальной Европы, которые стали по пути создания собственных специализированных палат для рассмотрения международных коммерческих споров, с главным нововведением для привлечения иностранных лиц – английским языком рассмотрения дела. Какой из стран отдаст предпочтение заинтересованное лицо – пока не ясно. Однако, можно предположить, что

Arbitration Blog, February 14 2018, [Электронный ресурс]: http://arbitrationblog.kluwerarbitration.com/2018/02/14/specialised-chambers-international-commercial-disputes-paris-spotlight/ (дата обр. 24.09.2019)

[1] *Helen Conybeare Williams, Brexit: Is Opportunity Knocking for Paris' New International Chamber of the Paris Court of Appeal?, February 21, 2018, [Электронный ресурс]: http://www.haynesboone.com/alerts/international-chamber-of-paris-court-of-appeal (дата обр. 24.09.2019)*

[2] *Debevoise & Plimpton, Paris Commercial Courts Create New International Chambers, January 12, 2018, [Электронный ресурс]: https://www.debevoise.com/~/media/files/insights/publications/2018/01/2018_0112_paris_commercial_courts_create_new_international_chambers.pdf (дата обр. 24.09.2019)*

[3] Xandra Kramer, The domino effect of international commercial courts in Europe – Who's next?, February 20, 2018 (дата обр. 24.09.2019)

[4] *Debevoise & Plimpton, Paris Commercial Courts Create New International Chambers, January 12, 2018*

[5] *Ioana Knoll-Tudor, 'Specialised Chambers for International Commercial Disputes: Paris in the Spotlight', Kluwer Arbitration Blog, February 14 2018, [Электронный ресурс]: http://arbitrationblog.kluwerarbitration.com/2018/02/14/specialised-chambers-international-commercial-disputes-paris-spotlight/ (дата обр. 24.09.2019)*

Франция в этом плане является фаворитом. Это обусловлено тем, что Международный арбитражный суд при Международной торговой палате (ICC), а также единственное учреждение МЦУИС за пределами Вашингтона расположены именно в Париже. В связи с этим рынок юридических услуг Парижа насчитывает большое число юридических фирм, предлагающих услуги по международным арбитражным и судебным спорам, а судебные издержки остаются довольно скромными по сравнению с высоким качеством предоставляемых услуг.

СПИСОК ИСПОЛЬЗОВАННЫХ ИСТОЧНИКОВ

1. Ioana Knoll-Tudor, 'Specialised Chambers for International Commercial Disputes: Paris in the Spotlight', Kluwer Arbitration Blog, February 14 2018, [Электронный ресурс]: http://arbitrationblog.kluwerarbitration.com/2018/02/14/specialised-chambers-international-commercial-disputes-paris-spotlight/; https://portland-communications.com/pdf/Portland's%208th%20Commercial%20Courts%20report%20(2016).pdf (дата обр. 24.09.2019)
2. Regulation (EU) No 1215/2012 of the European Parliament and of the Council of 12 December 2012 on jurisdiction and the recognition and enforcement of judgments in civil and commercial matters [Электронный ресурс]: http://eur-lex.europa.eu/eli/reg/2012/1215/oj (дата обр. 24.09.2019)
3. Xandra Kramer, The domino effect of international commercial courts in Europe – Who's next?, February 20, 2018 [Электронный ресурс]: http://conflictoflaws.net/2018/the-domino-effect-of-international-commercial-courts-in-europe-whos-next/#respond (дата обр. 24.09.2019)
4. Helen Conybeare Williams, Brexit: Is Opportunity Knocking for Paris' New International Chamber of the Paris Court of Appeal?, February 21, 2018, [Электронный ресурс]: http://www.haynesboone.com/alerts/international-chamber-of-paris-court-of-appeal (дата обр. 24.09.2019)
5. Regulation (EU) No 1215/2012 of the European Parliament and of the Council of 12 December 2012 on jurisdiction and the recognition and enforcement of judgments in civil and commercial matters [Электронный ресурс]: http://eur-lex.europa.eu/eli/reg/2012/1215/oj (дата обр. 20.09.2019)
6. Debevoise & Plimpton, Paris Commercial Courts Create New International Chambers, January 12, 2018, [Электронный ресурс]: https://www.debevoise.com/~/media/files/insights/publications/2018/01/2018_0112_paris_commercial_courts_create_new_international_chambers.pdf (дата обр. 24.09.2019)

ՀՏԴ 342.8 Իրավագիտություն

Հովհաննես Աղասարյան, Ս.Շ.Ծաղիկյան
Հայ—ռուսական համալսարան
Քրեական իրավունքի և դատավարության ամբիոն
Մագիստրատուրա II կուրս
Crimlaw.rau@mail.ru, hovhannes022@mail.ru

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՔՎԵԱՐԿՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ԿԵՂԾՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ ԵՎ ԱՅԼ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր: *Կոռուպցիա, քաղաքական իրավունքներ, ընտրություններ, կեղծիք, քվեարկություն:*

Սույն աշխատանքում ուսումնասիրվել է քաղաքական իրավունքների դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործություններից մեկը՝ ՀՀ քրեական օրենսգրքում ամրագրված ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելը (150-րդ հոդված): Հստակեցվել է որոնք են քաղաքական իրավունքները: Կքննենք ՀՀ քր. օրենսգրքի 150-րդ հոդվածը, որը ունի կոռուպցիոն բնույթ, ներկայացնելով նրա որակման առանձնահատկությունները:

Ованнес Агасарян, С. Цахикян

ФАЛЬСИФИКАЦИЯ РЕЗУЛЬТАТОВ ВЫБОРОВ И ГОЛОСОВАНИЯ В АРМЕНИИ И ДРУГИХ СТРАНАХ

Ключевые слова. *Коррупция, политические права, выборы, мошенничество, голосование.*

В статье исследуется одно из коррупционных преступлений против политических прав - фальсификация результатов выборов или результатов голосования, предусмотренная Уголовным кодексом РА (статья 150). Проясняется, что такое политические права. Обсуждается Статья 150 Кодекса РА, имеющая коррупционный характер, излагаются особенности ее квалификации.

<<Եթե Դուք ճիշտ վարքագծի օրինակ եք ծառայում,
ապա ով կհամարձակվի շարունակել սխալ
վարքագիծ դրսևորել>>, Կոնֆուցիոս

Արդիականությունը: Քաղաքական իրավունքների առանցքային հատկանիշը քաղաքացիությունն է, քանի որ սահմանադրական և քաղաքական իրավունքները պատկանում են այս կամ այն պետության քաղաքացիներին: Քաղաքական իրավունքները ունեն հետևյալ հատկանիշները՝

- Քաղաքական իրավունքները անձի մոտ ծագում են սահմանված կարգով քաղաքացիություն ստանալու պահից, կամ քաղաքացիությունն առաջացել է ծննդյան ուժով, նրա չափահաս դառնալուց(ակտիվ ընտրական իրավունք) կամ օրենքով սահմանված տարիքից(պատիվ ընտրական իրավունք):
- Քաղաքական իրավունքները հավասար ծավալով պատկանում են յուրաքանչյուր քաղաքացու, այսինքն՝ ընտրություններում կամ հանրաքվեներում մեկ ձայնի իրավունքը պատկանում է մեկ քաղաքացու:

Հետազոտության նպատակը և խնդիրները։

- Հստակեցնել ընտրությունների կամ քվեարկության արդյունքների կեղծումը հանցագործության քրեաիրավական բնութագիրը,
- ՈՒսումնասիրել ՀՀ և արտասահմանյան օրենսդրությունները,
- Վերլուծել իրավական կարգավորման հնարավոր այլ տարբերակները։

Հետազոտման օբյեկտը և առարկան։

- Հանցագործության օբյեկտը ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը։
- Հանցագործության առարկան ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքները պարունակող փաստաթղթերն են (քվեաթերթիկներ, ընտրողների գրանցման ցուցակներում քվեարկության ամփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրություններ), որոնց ձևն ու լրացման կարգը սահմանվում են օրենքով, ինչպես նաև քվեատուփն ու համապատասխան համակարգչային տեղեկատվությունը։

Ըստ ՀՀ Սահմանադրության՝ ՀՀ-ում իշխանությունը պատկանում է ժողովրդին, և ժողովուրդն իր իշխանությունն իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով[1], ինչպես նաև յուրաքանչյուր ոք ունի ընտրական և հանրաքվեին մասնակցելու իրավունք[2], և ոչ ոք չի կարող խոչընդոտել դրանց իրականացմանը։ Քաղաքական իրավունքների դեմ ուղղված հանցագործությունները իրենց բնույթով մեծ վտանգավորություն են ներկայացնում, հատկապես այն հանցագործությունները, որոնք կոռուպցիոն բնույթ ունեն։ Էական վնաս են պատճառում պետությանը և հասարակությանը, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքներին, ովքեր ցանկանում են ազատ և անկախ իրականացնել իրենց քաղաքական իրավունքները։ Կոռուպցիան՝ որպես վտանգ քաղաքական իրավունքների իրականացման ընթացքում, նաև խախտում է և ուղղված է ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը։

Քաղաքական իրավունքներն ու ազատությունները այն իրավունքներն ու ազատություններն են, որոնք երաշխիք են հանդիսանում քաղաքացիների և հասարակության համար, որպեսզի կարողանան ազդեցություն ունենալ պետության կառավարման համակարգում[3]։ Քաղաքական իրավունքները և ազատությունները քաղաքացու իրավունքների և ազատությունների կարևորագույն խումբն են, որոնց ամբողջությունն ապահովում է պետության քաղաքական կյանքին քաղաքացիների ակտիվ մասնակցությունը՝ դրանով իսկ նախապայմաններ ստեղծելով մարդկանց անձնական իրավունքների և ազատությունների դրսևորման համար։ Պետության հասարակական-քաղաքական կյանքին մասնակցելն առաջին հերթին նշանակում է մասնակցել պետական իշխանության ձևավորմանը և այդ իշխանության իրականացմանը։ Որքանով ժողովրդավարական պետությունները որդեգրել են «իշխանությունը պատկանում է ժողովրդին, իշխանության աղբյուրը ժողովուրդն է» սկզբունքը, անհրաժեշտ է, որ

---

[1] *ՀՀ Սահմանադրություն,06.12.2015թ.,հոդված 2-րդ, http://www.president.am/ru/constitution-2015/*

[2] *Նույն տեղում։ Հոդված 48-րդ*

[3] *http://allstatepravo.ru/mpkp/mkp2/80-kons252.html*

քաղաքացիները կարողանան ազատորեն արտահայտել իրենց կամքը, այլ կերպ ասած՝ ունենան քաղաքական իրավունքներ ու ազատություններ և որոշակի կարգով դրանք գործադրելու հնարավորություն[1]:

Կոռուպցիայի (corumpire) սահմանումը հռոմեական իրավունքում տրվում էր զգալիորեն լայն և ընդարձակ, և նշանակում էր *ջարդել, փչացնել, քայքայել, խախտել, կաշառել*, ինչը ընդհանուր համատեքստում նշանակում էր անօրինական վարքագիծ(գործողություն): Այստեղից հետևություն, որ հին հռոմեացիները կոռուպցիոն վարքագծի տակ հասկանում էին ոչ միայն բացառապես կաշառելու միջոցով կատարված գործողությունները, այլև ցանկացած գործողություններ, որոնք խախտում էին հասարակության կառավարման հաստատված գործընթացը[2]: Կոռուպցիան անձնական կամ այլ շահադիտական նպատակով, տարբեր ձևերով արտահայտված (գործողությամբ կամ անգործությամբ), ի պաշտոնե տրված իշխանական լիազորությունների չարաշահումն է: Կոռուպցիան՝ որպես վստահված իշխանության չարաշահում, ունի մի շարք դրսևորումներ և բազում «նրբերանգներ», որոնցից են՝ կաշառակերությունը՝ կաշառք ստանալը, տալը, կաշառքի միջնորդությունը, կաշառքի շորթումը, հովանավորչությունը, պաշտոնական դիրքի կամ կապերի չարաշահումը, պաշտոնական լիազորությունները չարաշահելը կամ անցնելը, պաշտոնական կեղծիքը, պաշտոնական դիրքի օգտագործմամբ պետական սեփականության յուրացումն ու վատնումը, ինչպես նաև պաշտոնեական այլ չարաշահումները[3]:

Քաղաքական կոռուպցիայի հաղթահարման համար կարևոր նշանակություն ունի ընտրական համակարգի կատարելագործումը: Հանրապետությունում ընտրությունների կազմակերպումը միջազգային չափանիշներին համապատասխանեցնելու համար կարևոր է ընտրացուցակների կազմման, դրանց պարբերաբար թարմացման գործընթացի կանոնակարգումը համայնքներում, դիտորդների ինստիտուտի ուժեղացումը, մասնավորապես՝ տեղացի դիտորդների ուսուցումը, ընտրական հանձնաժողովների ձևավորման օպտիմալ սկզբունքի ներդրումը: Կարևոր խնդիր է նաև ընտրությունների, դիտորդների և կազմակերպիչների վարքագծի կանոնների մշակումը[4]:

ՀՀ քր. օր.-ի հոդված 150-ը պատասխանատվություն է սահմանում հանրաքվեի կամ ընտրությունների ընթացքում ձայներն ակնհայտ սխալ հաշվելու կամ ընտրությունների արդյունքները, այդ թվում՝ արձանագրությունները, դրանց պատճենները, այլ ընտրական փաստաթղթերը և դրանց քաղվածքներն ակնհայտ սխալ տվյալներով հաստատելու, քվեատուփը հափշտակելու, համակարգչում ակնհայտ սխալ տվյալներ մուտքագրելու կամ մուտքագրված տվյալները փոփոխելու, ինչպես նաև որևէ այլ եղանակով ընտրությունների կամ քվեարկության արդյունքները կեղծելու կամ այդ նպատակով ընտրական փաստաթղթերը վերադաս ընտրական մարմիններին սահմանված ժամկետում չներկայացնելու համար[5]: Հանցագործության հանրային վտանգավորությունը կայանում է նրանում, որ այն խոչընդոտում է քաղաքացու Սահմանադրությամբ ամրագրված ազատ և

---

[1] http://civilngo.com/vorong-en-qaghaqakan-iravunqnern-u-azatutyunnery/

[2] *Տե՛ս Հակակոռուպցիոն ռազմավարությունը քրեակատարողական համակարգում/ Ս.Շ.Ծաղիկյան:*

[3] *Տե՛ս ՀՀ Կառավարության որոշում, ՀՀ Հակակոռուպցիոն ռազմավարության և դրա իրականացման միջոցառումների ծրագիրը հաստատելու մասին, 6 նոյեմբերի 2003 թվականի N 1522-Ն:*

[4] *Տե՛ս https://www.arlis.am/documentview.aspx?docid=11547:*

[5] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 150-րդ, ընդունված է 18ապրիլի 2003թ./փոփոխություններ և լրացումներ 12օգոստոս 2015թ./, Երևան 2015թ., էջ81:*

հավասար ընտրական իրավունքի և հանրաքվեի իրականացմանը[1]:

Տվյալ հանցակազմի անմիջական օբյեկտը ընտրությունների և հանրաքվեի անցկացումն ապահովող հասարակական հարաբերություններն են, որոնք ուղղված են պետական իշխանության և տեղական ինքնակառավարման մարմինների ձևավորմանը կամ ՀՀ քաղաքացիների կողմից անմիջականորեն ժողովրդի իշխանության իրականացմանը[2]: Հանցագործության առարկան ընտրությունների կամ հանրաքվեի արդյունքները պարունակող փաստաթղթերն են(քվեաթերթիկներ, ընտրողների գրանցման ցուցակներում քվեարկության ամփոփիչ և անճշտությունների վերաբերյալ արձանագրությունները), որոնց ձևն ու լրացման կարգը սահմանվում են օրենքով, ինչպես նաև քվեատուփն ու համապատասխան համակարգչային տեղեկատվությունը: Կաշառումը կոռուպցիոն հանցագործությունների հիմնական միջոցն է: Իսկապես, զանգվածային կեղծիքների մասին պատկերացում կազմելու համար բավական է հիշել 1927թ. Լիբերիայի Հանրապետության նախագահական ընտրությունները: Այդ ընտրություններում հաղթած Չարլզ Քինգը հայտարարել է, որ իր օգտին քվեարկել է 234 հազար մարդ, որը 15,5 անգամ գերազանցել է գրանցված ընտրողների թիվը:

Քրեական պատասխանատվության կանոնակարգում կարելի է առանձնացնել երեք իրավական մոտեցում՝ ընտրությունների արդյունքները կեղծելու վերաբերյալ. առաջին մոտեցումը՝ ընտրությունների արդունքների կեղծումը, երկրորդը՝ քվեարկության արդյունքների կեղծման համար պատժամիջոցների ձևակերպումը, երրորդը՝ համապատասխան փաստաթղթերի կեղծման համար: Այսպես, Շվեյցարիայի ՔՕ 282-րդ հոդվածը և Գերմանիայի ՔՕ 107-րդ հոդվածը նախատեսում են քրեական պատասխանատվություն ընտրությունների արդյունքները կեղծելու համար, Ավստրիայի ՔՕ 266-րդ հոդվածի 2-րդ մասը՝ ընտրությունների կամ համաժողովրդական քվեարկության արդյունքների կեղծման համար[3]:

Շվեյցարիայի քրեական օրենսգրքի համաձայն ընտրությունների արդյունքների կեղծման օբյեկտիվ կողմի հատկանիշներն են՝

- կեղծումը, կամ քվեարկության արդյունքների ցուցակի ոչնչացումը,
- ընտրություններին կամ քվեարկությանը, հանրաքվեին կամ այլ նախաձեռնությանը անօրինական մասնակցությունը,
- ընտրությունների արդյունքների կեղծումը,
- հանրաքվեի կամ այլ նախաձեռնության անցկացման համար ստորագրություններ հավաքելը, քվեաթերթիկներ ավելացնելը, փոփոխելը, ինչպես նաև բացառելու կամ ջնջելու միջոցով ընտրությունների արդյունքների սխալ հաշվարկը[4]:

Շվեյացարիայի քրեական օրենսգրքի 282-րդ հոդվածի 2-րդ մասն առավել խիստ պատասխանատվություն է սահմանում նույն արարքի կատարման համար պաշտոնական

---

[1] Տե՛ս Կ.2 ст. 32 Конституции, ст. 5 Закона об основных гарантиях избирательных прав.

[2] Տե՛ս ՀՀ քրեական իրավունք դասագիրք: Հատուկ մաս./Երևանի պետ. համալս.-Եր.:ԵՊՀ հրատ., 2009թ. էջ 301-303:

[3] Saltman R.G. The History and Politics of Voting Technology: In Quest of Integrity and Public Confidence [Electronic resource] / R.G. Saltman.— Political & International Studies Collection, 2006.— 256 p.— DOI: 10.1057/9781403977212. —Mode of access : http://www.palgraveconnect.com/pc/doifinder/10.1057/9781403977212.

[4] Տե՛ս Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. 2015. Т. 9, № 3. էջ 550.

դիրքի օգտագործմամբ[1]: Հետաքրքրություն է ներկայացնում Լատվիայի ընտրական իրավունքների պաշտպանության վերաբերյալ քրեական օրենսգիրքը, որտեղ ոտնձգության օբյեկտը հանդիսանում է հենց պետությունը: Գլուխ X Լատվիայի ՔՕ-ի <<Պետության դեմ ուղղված հանցագործություններ>> մասում նախատեսված է նորմ, որը պաշտպանում է ընտրությունների ընթացակարգը, ընտրական փաստաթղթերի և ժողովրդական քվեարկության փաստաթղթերի կեղծումը(հոդված 92)[2]:

Արտասահմանյան երկրներում ընտրական իրավունքների քրեորեն պատժելի հանցագործությունները ձևակերպվում են հետևյալ կերպ՝

- ընտրական իրավունքի օգտագործում, այն չունեցող անձի կողմից(բուլղարիայի քօ 168-րդ հոդված)
- պաշտոնական ընտրություններին մասնակցելն այն անձի կողմից, ով դիտավորյալ կերպով հանդես է գալիս որպես այլ անձ(նիդեռլանդների քօ 12-րդ հոդված)
- քվեարկություն այն անձի կողմից, ով չունի ընտրական իրավունք կամ զրկված է(ավստրիայի ՔՕ 266-րդ հոդված):

Սակայն այս գործողությունները(ի տարբերություն Գերմանիայի և Շվեյցարիայի ՔՕ) չեն նշվում որպես ընտրությունների արդյունքների կեղծում: Իր հերթին Գերմանիայի քր. օրենսգրքի 107-րդ հոդվածի 1-ին և 2-րդ մասերը ներառում են՝

1. ընտրություններին մասնակցելը նրանց կողմից, ովքեր չունեն ընտրական իրավունք, կամ այնպիսի գործողությունները որոնք հանգեցնում են ընտրությունների սխալ արդյունքի
2. ընտրությունների արդյունքների կեղծում
3. ընտրությունների արդյունքների սխալ հրապարակումը կամ այնպիսի գործողություններ, որոնք թույլ են տալիս դա կատարել[3]:

Գերմանիայի քր. օրենսգրքի 107-րդ հոդվածում առանձին նախատեսվում է պատասխանատվություն ընտրությունների հետ կապված փաստաթղթերի կեղծման համար՝

1. անձի կողմից կեղծ տվյալներ ներկայացնելը՝ ընտրողների ցուցակում ընդգրկվելու համար
2. ընտրության իրավունք ունեցող անձին չընդգրկել ընտրողների ցուցակ
3. որպես թեկնածու է առաջադրվում այն անձը, ով իրավունք չունի ընտրվել

ՌԴ քրեական օրենսգրքի 142[1] հոդվածում նկարագրված արարքը կարող է սահմանվել որպես քվեարկության և ընտրությունների արդյունքների կեղծումը: Ինչպես նաև նորմի դիսպոզիցիան բլանկետային է: Օրենսդիրը առանձնացրել է հանցագործության օբյեկտիվ կողմի մի շարք հատկանիշներ.

1.չհաշվառված քվեաթերթիկների ընդգրկումը քվեարկության ժամանակ օգտագործված քվեաթերթիկների թվին,

2.ընտրողների, հանրաքվեի մասնակիցների վերաբերյալ ակնհայտ սխալ տեղեկություններ ներկայացնելը,

3.ընտրողների, հանրաքվեի մասնակիցների ցուցակների ակնհայտ սխալ կազմումը,

4.ընտրողների, հանրաքվեի մասնակիցների ցուցակներում ստորագրության կեղծումը,

5.քվեաթերթիկների փչացումը, որը հանգեցնում է ընտրողների, հանրաքվեի

---

[1] *Швейцарский Уголовный кодекс 1937г./Науч. ред.*

[2] *Уголовный кодекс Латвийской Республики / Науч. ред. Е.А. Лукашова. – СПб.: Юридический центр Пресс 2001. էջ 126.*

[3] *Уголовный кодекс ФРГ.- Гамбург, 2006. Ст. 107.*

մասնակիցների կամարտահայտությունը որոշելու անհնարինության,

6.քվեաթերթիկների ապօրինի ոչնչացումը,

7.ընտրողների, հանրաքվեի մասնակիցների, ձայների ակնհայտ սխալ հաշվարկը,

8.ընտրական հանձնաժողովի անդամների կողմից մինչև ձայների հաշվարկը կամ քվեարկության արդյունքների սահմանումը, քվեարկության արդյունքների մասին արձանագրության ստորագրումը,

9.քվեարկության արդյունքների արձանագրության ակնհայտ սխալ կազմումը,

10.քվեարկության արձանագրության մեջ փոփոխություններ կատարելն, այն լրացնելուց հետո,

11.ընտրությունների և քվեարկության արդյունքների ակնհայտ սխալ սահմանումը[1]:

Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ տեղամասային, ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ, ով այս կամ այն եղանակով կեղծել է հանրաքվեի կամ քվեարկության արդյունքները[2]: Պատիժ նշանակելիս դատարանը կարող է նշանակել լրացուցիչ պատիժ՝ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելը[3]: ՀՀ քր. օր.-ի 150-րդ և ՌԴ քր. օր.-ի 142-րդ[1] հոդվածների սուբյեկտիվ կողմը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ: Այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար, ակնհայտորեն կեղծի հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները: Այլ անձանց գործողությունները, ովքեր այս կամ այն կերպ աջակցել են հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները կեղծելուն, կարող են որակվել որպես քր. օր.-ի հոդված 150-ով նախատեսված հանցագործության օժանդակություն[4]:

Ամփոփելով սույն աշխատանքը՝ կարելի է հակիրճ եզրահանգել, որ՝

1. Քաղաքացիների քաղաքական իրավունքների դեմ ուղղված կոռուպցիոն հանցագործություններից է ընտրությունների կամ քվեարկության արդյունքների կեղծումը հանցակազմը, որը էական վնաս է պատճառում պետությանը և հասարակությանը, ինչպես նաև մարդու և քաղաքացու իրավունքներին:

2. Սուբյեկտիվ կողմը կատարվում է միայն ուղղակի դիտավորությամբ, այսինքն՝ հանցավորը տվյալ դեպքում պետք է գիտակցաբար, ակնհայտորեն կեղծի հանրաքվեի կամ ընտրությունների արդյունքները:

3. Հանցագործության սուբյեկտը հատուկ է՝ տեղամասային, ընտրատարածքային կամ կենտրոնական ընտրական հանձնաժողովի անդամ հանդիսացող յուրաքանչյուր անձ, ով այս կամ այն եղանակով կեղծել է հանրաքվեի կամ քվեարկության արդյունքները, որն էլ հենց հանցագործությունը դարձնում է կոռուպցիոն:

1. Առաջարկում ենք ՀՀ ՔՕ 150-րդ հոդվածի օբյեկտիվ կողմի հատկանիշներին ավելացնել և կոնկրետացնել հետևյալ գործողությունները՝

---

[1] *Տե՛ս Уголовно-правовая охрана избирательных прав и права на участие в референдуме, Шапиев С.М., Соктоев З.Б., Кругленя А.Н., Москва 2016год, էջ 91-93.*

[2] *Տե՛ս ՀՀ քրեական իրավունք դասագիրք: Հատուկ մաս./Երևանի պետ. համալս.-Եր.:ԵՊՀ հրատ., 2009թ. էջ 301-303:*

[3] *ՀՀ քրեական օրենսգիրք, հոդված 52-րդ, ընդունված է 18ապրիլի 2003թ./փոփոխություններ և լրացումներ 12օգոստոս 2015թ./, Երևան 2015թ., էջ 38:*

[4] *Տե՛ս Комментарий к уголовному кодексу Российской Федерации (Постатейный), Издание шестое, переработанное и дополненное, Москва, 2016год, էջ 204:*

- Հանրաքվեի կամ այլ նախաձեռնության անցկացման համար ստորագրություններ հավաքելը, քվեաթերթիկներ ավելացնելը, փոփոխելը:
- Ընտրություններին մասնակցելը նրանց կողմից, ովքեր չունեն ընտրական իրավունք, կամ այնպիսի գործողությունները, որոնք հանգեցնում են ընտրությունների սխալ արդյունքի:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քրեական օրենսգիրք, ընդունված 2003թ.-ի ապրիլի 18-ին:
2. ՀՀ Սահմանադրություն, 06.12.2015թ:
3. ՀՀ քրեական իրավունք դասագիրք: Ընդհանուր մաս մաս./Երևանի պետ. համալս.-Երևան:ԵՊՀ հրատ.:
4. ՀՀ քրեական իրավունք դասագիրք: Հատուկ մաս./Երևանի պետ. համալս.-Երևան:ԵՊՀ հրատ., 2009թ:
5. Швейцарский Уголовный кодекс 1937г./Науч. ред.
6. Уголовный кодекс ФРГ.- Гамбург, 2006. Ст. 107
7. Уголовный кодекс Латвийской Республики / Науч. ред. Е.А. Лукашова. – СПб.: Юридический центр Пресс 2001.
8. ՀՀ Կառավարության որոշում, 6 նոյեմբերի 2003 թվականի N 1522-Ն
9. Հակակոռուպցիոն ռազմավարությունը քրեակատարողական համակարգում/ Ս.Շ.Ծաղիկյան,
10. Уголовно-правовая охрана избирательных прав и права на участие в референдуме, С.М. Шапиев, З.Б. Соктоев, А.Н. Кругленя, Москва
11. Комментарий к уголовному кодексу Российской Федерации (Постатейный), Издание шестое, переработанное и дополненное, Москва, 2016год
12. Криминологический журнал Байкальского государственного университета экономики и права. 2015. Т. 9, № 3.
13. http://www.president.am/ru/constitution-2015/
14. https://www.arlis.am/documentview.aspx?docid=11547
15. http://civilngo.com/voronq-en-qaghaqakan-iravunqnern-u-azatutyunnery/
16. http://allstatepravo.ru/mpkp/mkp2/80-kons252.html
17. http://www.palgraveconnect.com/pc/doifinder/10.1057/9781403977212

ՀՏԴ 343.6 Իրավագիտություն

Միքայել Արշակյան
Հայ-Ռուսական(Սլավոնական) համալսարան
Իրավագիտություն

ՍՏԱՄԲՈՒԼՅԱՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ ՎԱՎԵՐԱՑՈՒՄԻՑ ՀԵՏՈ ԴՐԱ ՀՆԱՐԱՎՈՐ ՆԵՐԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ՄՇԱԿՈՒՅԹԻ ՎՐԱ

Բանալի բառեր՝ *կանայք, ընտանեկան բռնություն, կոնվենցիա, պաշտպանություն, ինտեգրված քաղաքականություն, զոհերի աջակցություն, հանցագործների հետապնդում:*

Հոդվածում ուսումնասիրվում են «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա»-ն, դրա հիմնական դրույթներն ու հասկացությունները և թե ինչքանով է այն ազդել վավերացրած երկրների իրավական և հասարակական կյանքին: Կտարվեն զուգահեռներ, թե ինչպես այն կարող է ազդել Հայաստանի վրա վավերացնելու և չվավերացնելու դեպքում, ինչ լավ և վատ հետևանքներ կունենա դրա պրակտիկ կիրառումը: Հատկապես ուշադրությամբ կուսումնասիրվեն կովախնձոր դարձած հոդվածները, որոնք շատերի կարծիքով «տրոյական ձիու» սկզբունքով այլասերման վտանգ են պարունակում:

Михаил Аршакян

ВОЗМОЖНОЕ ВЛИЯНИЕ СТАМБУЛЬСКОЙ КОНВЕНЦИИ НА ПРАВОВУЮ СИСТЕМУ И ПРАВОВУЮ КУЛЬТУРУ АРМЕНИИ ПОСЛЕ ЕЕ РАТИФИКАЦИИ

Ключевые слова*: женщины, насилие в семье, конвенция, защита, интегрированная политика, поддержка жертв, преследование преступников:*

В статье изучается конвенция "О предупреждении насилия в отношении женщин и семейного насилия и борьбе с ним", ее основные положения и понятия и насколько она повлияла на правовую и общественную жизнь стран, ратифицировавших ее. Будут проведены параллели о том, как она может повлиять на Армению в случае ратификации и нератификации, какие хорошие и плохие последствия будет иметь ее практическое применение. Особенно внимательно будут изучены статьи, ставшие яблоком раздора, которые, по мнению многих, содержат в себе угрозу извращения по принципу «троянского коня».

Նախաբան

Աշխարհաքաղաքական զարգացումներին զուգընթաց զարգանում են նաև մարդու պատվի և արժանապատվությանն ուղղված իրավական կարգավորումները: Հայաստանը, որպես համաշխարհային հանրության անբաժանելի մաս, նույնպես կիրառում է միջոցներ դրա պահանջներին համապատասխանելու նպատակով: Այս, առաջին հայացքից համակողմանի դրական թվացող գործընթացում, այնուամենայնիվ ստեղծվում են շահերի բախումներ և հակասություններ: Հայկական իրավագիտության զարգացման ուղիների և վերջնանպատակների շուրջ շատ հաճախ ծավալվում են բանավեճեր, որոնց պատճառներից մեկը հայկական և միջազգային հասարակությունների բարոյականի մասին պատկերացումներն են: Այս հակասությունը շատ հաճախ հանդիսանում է հիմնաքար Հայաստանի քաղաքական միտվածությունը ընտրելիս: Վերջին ամիսների ամենաքննարկված թեմաներից մեկը «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա»-ն է, ավելի հայտնի որպես «Ստամբուլյան կոնվենցիա»: Այս փաստաթղթի ստորագրումը Հայաստանի կողմից

առաջացրեց բազում վեճեր՝ կապված հայկական մտածելակերպի և հայկական ավանդական ընտանիքի տեսլականի աղավաղման փորձի հետ: Նման իրավիճակում դժվարանում է այնպիսի որոշումների կայացումը, որը կլինի ընդունելի բոլորի համար: Ստեղծված դեպքում կարևորագույն պայման է քայլերի ճիշտ հերթականությունը, որը Հայաստանի և հայկական իրավական դաշտի համար կապահովի քայլ դեպի զարգացում և ինտեգրում միջազգային իրավաբանական դաշտ: Կարևորելով ստեղծված իրավիճակի լրջությունը և հետաքրքրությունը՝ ցանկանում եմ ուշադրություն սևեռել այս հարցի բոլոր տեսակետներին և ուսումնասիրել այն տարբեր անկյուններից: Աշխատանքի նպատակն է ստանալ ուսումնասիրությունից հետո առաջացած ներքին բանավեճ, որի միջոցով էլ հենց կգտնվեն շատ հարցերի պատասխաններ:

1.Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա

1.1Կոնվենցիայի մասին հիմնական տեղեկություններ, դրույթները, նպատակները և հասկացությունները

Ամբողջ գործընթացը սկսվեց, երբ 2008 թվականի դեկտեմբերին Եվրոպայի խորհուրդը հիմնեց հանձնաժողով՝ «կանանց և բռնության դեմ ընտանեկան բռնության կանխարգելման և դրանց դեմ պայքարի ժամանակավոր հանձնաժողով» (CAHVIO), որը կազմված էր Եվրոպայի Խորհրդի անդամ երկրների կառավարությունների ներկայացուցիչներից: Այս հանձնաժողովի անդամներին առաջին անգամ հանդիպեցին 2009թ. ապրիլի 6-8 և քննարկեցին հանձնաժողովի հետագա գործունեությունը և պայմանագրի կետերի նախնական պարունակությունը:[1] Հայաստանը այդ հանձնաժողովին ուներ 3 ներկայացուցիչ, որոնցից ի դեպ երեքն էլ կին էին:[2]

Հետագայում հանձնաժողովը հանդիպեց ևս ութ անգամ, և 2010թ. դեկտեմբերին այն ներկայացրեց կոնվենցիայի վերջնական նախագիծը, որը և հետագայում ընդունվեց Նախարարների հանձնաժողովի կողմից և ստորագրման համար բացվեց 2011թ. մայիսի 11-ին Ստամբուլում: 2014թ. ապրիլի 22-ին Անդորրայի կողմից դրա 10-րդ վավերացումից հետո այն մտավ ուժի մեջ 2014թ.Օգոստոսի 1-ին:

Կոնվենցիան ներկա պահին ստորագրվել է 46 երկրի կողմից, որոնցից 34-ը վավերացրել են այն: Այն կազմված է 81 հոդվածից, որոնք զետեղված են 12 գլուխների մեջ: Ընդհանուր կառուցվածքը դասավորված է հետևյալ տրամաբանական հերթականությամբ՝ կանխարգելում (prevention), պաշտպանություն (protection), զոհերի աջակցությունն հանցագործների հետապնդում (prosecution), ինտեգրված քաղաքականություն (integrated policies):[3]

Կանխարգելում (prevention)

Կանանց հանդեպ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելումը կարող է փրկել կյանքեր և հասցնել մինիմումի մարդկային տանջանքները: Կառավարությունները, որոնք պարտավորվածություն են իրենց վրա վերցրել,պետք է կատարեն հետևյալը.

- պատրաստեն մասնագետներ բռնությունների զոհերի հետ մոտ կոնտակտի համար,
- պարբերաբար նախաձեռնեն տեղեկացվածության մակարդակը բարձրացնող միջոցառումներ,

[1] *CAHVIO, REPORT OF THE 1st MEETING, Strasbourg 6-8 April 2009:*

[2] *CAHVIO, REPORT OF THE 2nd MEETING, Strasbourg 25-27 May 2009:*

[3] *Council of Europe <https://www.coe.int/en/web/istanbul-convention/the-convention-in-brief#{%2211642301%22:[0]}>:*

- քայլեր ձեռնարկեն՝ ներառելու այնպիսի հարցեր, ինչպիսիք են՝ գենդերային հավասարությունը և ոչ բռնի կոնֆլիկտների լուծումը միջանձնային հարաբերությունների մեջ,
- ստեղծել ռեաբիլիտացիոն ծրագրեր ընտանեկան բռնության հանցագործների և սեռական հանցագործություն կատարողների համար,
- նեղ համագործակցեն ՀԿ-ների հետ,
- ներգրավեն լրատվամիջոցներին և մասնավոր հատվածին՝ գենդերային կարծրատիպերը արմատախիլ անելու և փոխադարձ հարգանքի խթանման գործում:[1]

Պաշտպանություն (protection)

Երբ կանխարգելումը ձախողվում է և բռնություն է տեղի ունենում գործի մեջ է մտնում պաշտպանության մասը: Սա նշանակում է ոստիկանության միջամտություն ու պաշտպանություն, ինչպես նաև հատուկ օժանդակ ծառայությունների տարամադրում, ինչպիսիք են՝ ապաստարանները, հեռախոսային թեժ գծերը և այլն: Դա նաև նշանակում է, որ ընդհանուր սոցիալական ծառայությունները պետք է ուսումնասիրեն ընտանեկան բռնության և կանանց նկատմամբ բռնության զոհերի իրողություններն ու մտահոգությունները և համապատասխանաբար աջակցեն նրանց որոնումների, կյանքի մեջ գործում:

Օրինակի համար, ոստիկանությանը տրվում են լայն լիազորություններ: Հարկ եղած դեպքում ոստիկանությունը կարող է պահանջել, որ հանցագործը լքի իր ընտանիքը որոշ ժամանակով, զոհի համար վտանգավոր իրադրությունում ոստիկանությունը պարտավոր է ապահովել նրա պաշտպանվածությունը:

Զոհերը նման իրավիճակներից հետո լինում են շատ խոցելի և նրանց այդ ժամանակ պետք է տրամադրվի ադեկվատ տեղեկություն նրանց իրավունքների և այն ծառայությունների մասին, որոնցից նրանք իրավասու են օգտվել: Այդ ամենը պետք է կատարվի զոհի համար պարզ տարբերակով և հասկանալի լեզվով:

Կան մի շարք այլ ծառայություններ, որոնք պետք է կիրառվեն պաշտպանության նպատակով, դրանցից են՝ ապաստանների տրամադրում, 24/7 ռեժիմով աշխատող անվճար թեժ գիծ զոհերի աջակցման համար, զոհերի օգնության և աջակցման կենտրոնների բացում և այլն:

Տեղեկացվածությունը դիտվում է որպես պաշտպանության կարևորագույն միջոցներից մեկը, ինչը պարզ արտացոլվում է այս մասում:

Զոհերի աջակցություն և հանցագործների հետապնդում (prosecution)

Կոնվենցիան սահմանում և քրեականացնում է կանանց նկատմամբ բռնության տարբեր ձևերը, ինչպես նաև ընտանեկան բռնությունը: Այս փաստին իրավական ուժ տալու նպատակով, անդամ երկրները պետք է սահմանեն նոր պատիժներ այն տեղերում, որտեղ դրանք նախկինում չկային: Դա կարող է ներառել՝ հոգեբանական և ֆիզիկական բռնություն, սեռական բնույթի բռնություններ և բռնաբարություն, հետապնդում, կանանց սեռական օրգանների խեղում, ստիպողաբար ամուսնություն, հարկադիր վիժումներ և հարկադիր ստերիլիզացում: Բացի այդ, պետությունները պետք է ապահովեն, որ մշակույթը, ավանդույթը կամ, այսպես կոչված, «պատիվը» չեն դիտարկվում որպես արդարացում՝ վերը նշված վարքագծի որևէ մեկի դրսևորման համար:

---

[1] *Council of Europe <https://www.coe.int/en/web/istanbul-convention/the-convention-in-brief#{%2211642301%22:[0]}>:*

Սկսած այն պահից, երբ նոր օրենքները արդեն տեղ կգտնեն ներպետական իրավական համակարգում, իրավախախտներին չպատժելու պատճառ էլ չի լինի: Պետությունները պարտավորված կլինեն իրենց վրա վերցնել պատշաճ և մանրազնին հետաքննության պարտականությունը: Դա նշանակում է, որ ուժային կառույցները պետք է պատասխանեն զանգերին և անմիջապես միջոցներ ձեռնարկեն զոհերի պաշտպանության ուղղությամբ:[1]

Ինտեգրված քաղաքականություն (integrated policies)

Կոնվենցիան կազմվել է այն համոզմամբ, որ ոչ մի կառույց կամ պետություն չի կարող պայքարել բռնության դեմ միայնակ: Այդ իսկ պատճառով կոնվենցիան պահանջում է մասնակից երկրներից իրականացնել համապարփակ և համակարգված քաղաքականություն՝ ներառելով պետական մարմինները, հասարակական կազմակերպությունները, ինչպես նաև ազգային, տարածաշրջանային և տեղական խորհրդարաններն ու իշխանությունները: Սա արվում է՝ նպատակ ունենալով բռնության դեմ պայքարը հասցնել համապետական մակարդակի, պայքարի մեջ ներգրավել պետության բոլոր ռեսուրսները և բոլոր սոցիալական խավերը: Ցանկալի է, որ նույնիսկ մշակվի պետական ծրագիր և գործողությունների հստակ բաժանում պետական ուժային կառույցների միջև:

Փորձելով արմատախիլ անել բռնությունը կոնվենցիան սահմանում է, որ յուրաքանչյուր տղամարդ, յուրաքանչյուր կին, յուրաքանչյուր տղա և աղջիկ, յուրաքանչյուր ծնող պետք է սովորի, որ բռնությունը՝ յուրաքանչյուր բռնություն, ճիշտ միջոց չէ դժվարությունները լուծելու և խաղաղ կյանք վարելու համար: Բոլորը պետք է հասկանան, որ այժմ և ապագայում բռնությունն ընդդեմ կանանց և ընտանիքների այլևս չի հանդուրժվում հասարակության կողմից:[2]

1.2 Բանավեճերի առանցք դարձած հոդվածները

Ինչպես արդեն նշվել էր, կոնվենցիայի ստորագրումը բազում բանավեճեր առաջացրեց հասարակության շրջանում և քաղաքական տարբեր ուժերի միջև: Թերևս այս բողոքների ամենաակտիվ մասնակիցներից են հասարակական կազմակերպությունները. մասնավորապես ակտիվությամբ առանձնանում է «Կամք» ՀԿ-ն, որը ստորագրահավաքների և այլ միջոցառումների միջոցով փորձում է կանխել կոնվենցիայի վավերացումը:

Այժմ անցնենք նրան, թե հենց ո՞ր դրույթներին են դեմ այդ կազմակերպությունները: «Կամք» ՀԿ-ի ներկայացուցչի հետ զրույցից հետո և գրասենյակի տրամադրած նյութի ուսումնասիրման արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ հոդվածները՝ հդ.4 մ.3, հդ.12 մ.1, հդ.14 մ.1, հդ.60 մ.2, հդ.78:

Հոդված 4. մաս 3

Մասնակից պետությունների կողմից սույն Կոնվենցիայի դրույթների կատարումը, մասնավորապես՝ զոհերի իրավունքների պաշտպանությանն ուղղված միջոցները պետք է ապահովվեն առանց խտրականության, այն է՝ անկախ սեռից, ռասայից, մաշկի գույնից, լեզվից, կրոնից, քաղաքական կամ այլ համոզմունքից, ազգային կամ սոցիալական ծագումից, ազգային փոքրամասնությանը պատկանելուց, գույքային դրությունից, ծննդից,

[1] *Council of Europe <https://www.coe.int/en/web/istanbul-convention/the-convention-in-brief#{%2211642301%22:[0]}>*

[2] *Council of Europe <https://www.coe.int/en/web/istanbul-convention/the-convention-in-brief#{%2211642301%22:[0]}>*

սեռական կողմնորոշումից, գենդերային ինքնությունից, տարիքից, առողջական վիճակից, հաշմանդամության առկայությունից, ամուսնական դրությունից, գաղթահանի կամ փախստականի կամ այլ կարգավիճակից :[1]

Այս հոդվածում կազմակերպությունը վտանգ է տեսնում նրանում, որ հոդվածը սահմանում է «գենդերային ինքնություն» հասկացությունը, որը բացահայտված չէ, ինչպես նաև հատուկ կերպով ընդգծվում է «սեռական կողմնորոշում» հասկացությունը:

Հոդված 12. մաս 1

Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ միջոցներ ձեռնարկեն՝ կանանց և տղամարդկանց վարքագծի սոցիալական և մշակութային վարվելակերպերում փոփոխություններ մտցնելու նպատակով՝ այն հաշվով, որպեսզի արմատախիլ արվեն այն նախապաշարմունքները, սովորույթները, ավանդույթները և մյուս բոլոր այն երևույթները, որոնք հիմնված են կանանց ստորադասվածության կամ կանանց և տղամարդկանց կարծրատիպային դերաբաժանման գաղափարի վրա:[2]

Տվյալ հոդվածի վտանգը, ըստ կազմակերպության, թաքնված է կանանց և տղամարդկանց կարծրատիպային բաժանման հստակ սահմանման բացակայությունում: Այդ դերաբաժանումներն ըստ ՀԿ-ի պետք է հստակեցվեն, որպեսզի այլասերման հիմք չդառնան:

Հոդված 14. մաս 1

Մասնակից պետությունները պետք է անհրաժեշտ վերապատրաստում տրամադրեն կամ կատարելագործեն վերջինիս տրամադրումը սույն Կոնվենցիայի առարկա հանդիսացող բռնության բոլոր գործողությունների զոհերի և դրանք կատարողների հետ առնչվող համապատասխան մասնագետների համար այնպիսի հարցերով, ինչպիսիք են՝ նման բռնության կանխարգելումն ու բացահայտումը, տղամարդկանց և կանանց միջև հավասարությունը, զոհերի կարիքներն ու իրավունքները, ինչպես նաև՝ թե ինչպես կանխել կրկնակի զոհականացումը:

Ըստ կազմակերպության՝ **կարծրատիպերից զերծ գենդերային դեր** հասկացությունը կարող է առնչվել ԼԳԲՏ կոչվող անձանց, և որ այս կարգավորումը ամենախնդրահարույցներից է, քանի որ ներառում է նաև «պրոպագանդայի» պարտականություն և այն էլ՝ երեխաների շրջանակում:

Հոդված 60. մաս 2

Մասնակից պետությունները պետք է ապահովեն, գենդերային բաղադրիչը հաշվի առնող մեկնաբանություն տրվի Կոնվենցիայի հիմքերից յուրաքանչյուրին, և եթե հաստատվի, որ հետապնդման վախը առկա է այդ մեկ կամ մեկից ավելի հիմքերի նկատմամբ, ապա փախստականի կարգավիճակը դիմումատուներին պետք է տրվի կիրառելի համապատասխան իրավական գործիքներին համապատասխան:[3]

Այստեղ հարկավոր է ներառել նաև կոնվենցիային կից բացատրական զեկույցի 60-րդ հոդվածին վերաբերող 313-րդ կետը, որը սահմանում է, որ որոշ կանայք կարող են հալածանքների ենթարկվել՝ հասարակության մեջ ընդունված վարքագիծ կամ

---

[1] *«Եվրոպայի Խորհրդի կոնվենցիան Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» < https://rm.coe.int/168046246d>*

[2] *«Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» < https://rm.coe.int/168046246d>:*

[3] *«Եվրոպայի խորհրդի կոնվենցիան կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման և դրա դեմ պայքարի մասին» < https://rm.coe.int/168046246d>:*

դերակատարություն չդրսևորելու համար, ինչպես նաև ավանդական գենդերային դերերին դեմ խոսելու համար: Կողմերը ցանկության դեպքում կարող են նշված մեկնաբանությունը տարածել նաև գեյերի, լեսբուհիների, բիսեքսուալների և տրանսգենդերների նկատմամբ, ովքեր նույնպես հանդիպում են գենդերային դերակատարության հիմքով հետապնդումների և բռնությունների:[1]

Մտահոգության պատճառ այստեղ ըստ «Կամք» ՀԿ-ի հանդիսանում է այն հեռանկարը, որ մեր երկրում կոնվենցիայի ընդունումից հետո հնարավորություն է ստեղծվելու այլ երկրների ԼԳԲՏ անձանց տրամադրել ապաստան և փախստականի կարգավիճակ՝ գենդերային հիմքով:

Հոդված 78

Պետությունները կոնվենցիան վավերացնելիս չեն կարող կատարել վերապահումներ հետևյալ հոդվածների բացառությամբ՝

- 30-րդ հոդվածի 2-րդ մաս;
- 44-րդ հոդվածի 1-ին մասի (ե) կետ, 3-րդ և 4-րդ մասեր;
- 55-րդ հոդվածի 1-ին մաս՝ 35-րդ հոդվածով նախատեսված ոչ ծանր հանցագործությունների առնչությամբ;
- 58-րդ հոդված՝ 37-րդ, 38-րդ և 39-րդ հոդվածների առնչությամբ;
- 59-րդ հոդված

2.Կոնվենցիան ընդունած երկրների փորձը և փոփոխությունները

2.1 Վավերացումից հետո ստեղծված վիճակագրական տվյալները

Կոնվենցիան վավերացրած երկրները ամեն տարի ներկայացնում են հաշվետվություն GREVIO-ին և այդ հաշվետվությունը տեղադրվում է Եվրոպայի խորհրդի պաշտոնական կայքում: Այդ հաշվետվության մեջ գրվում են տարատեսակ տվյալներ՝ կապված երկրում իրականացված այն միջոցառումների հետ, որոնք ազդում են երկրում կոնվենցիայի գործելու վրա՝ մասնագետների պատրաստման տեմպերը, զոհերի աջակցության համար կառուցված ապաստանների ու կենտրոնների քանակը և այլն:[2]

Համաձայն հենց այդ հաշվետվությունների, ներկայացված են մի քանի հետաքրքիր տվյալներ տարբեր երկրներից:

Ամբողջ 2015թ. ընթացքում գրանցվել են կոնվենցիայում ներառված կանանց հանդեպ բռնության դեպքեր Սերբիայում՝ 5803, Իտալիայում՝ 44151, Ալբանիայում՝ 5281, Մոնտենեգրոյում՝ 246: Հայաստանում միայն 2015 թվականին և միայն Կանանց աջակցման կենտրոն 2023 ահազանգ է ստացվել: Եթե բաժանենք այս թիվը բնակչության իգական սեռի ներկայացուցիչների թվով, ապա կտեսնենք, որ Հայաստանը գտնվում է գրեթե նույն մակարդակում, ինչ կոնվենցիան վավերացրած Սերբիան կամ Իտալիան:

Հետևելով GREVIO-ին ներկայացրած այդ հաշվետվությանը՝ կարող ենք պնդել, որ փաստաթուղթը լրացրած երկրներում, անշուշտ, կատարվել են մի շարք բարելավումներ՝ կոնվենցիայի պահանջները կյանքի կոչելու նպատակով: Մասնավորապես, կառուցվել են ընտանեկան բռնությունների զոհ դարձած քաղաքացիների աջակցման կենտրոններ և այդ կենտրոններում աշխատելու համար պատրաստվել են մասնագետներ, գործում է շուրջօրյա

[1] *"Explanatory Report to the Council of Europe Convention on preventing and combating violence against women and domestic violence"* https://rm.coe.int/CoERMPublicCommonSearchServices/DisplayDCTMContent?documentId=09000016800d383a.

[2] *Council of Europe, Country-monitoring work* <https://www.coe.int/en/web/istanbul-convention/country-monitoring-work>

թեժ գիծ, որը ամեն հնարավոր կերպով աջակցություն է ցուցաբերում տուժածներին:

2.2 Բուլղարիայի Սահմանադրական դատարանի որոշումը «Ստամբուլյան կոնվենցիա»-ի վերաբերյալ

Զարգացնելով իրավական մշակույթը՝ պետությունը միշտ փորձում է դասեր քաղել միջազգային հարթակում տեղի ունեցած նախադեպերից: Անդրադառնալով «Ստամբուլյան կոնվենցիա»-ի շուրջ իրավիճակին՝ թերևս ամենանշանակալից նախադեպը տեղի է ունեցել 2018թ.-ի հուլիսի 27-ին, Սոֆիայում, որտեղ Բուլղարիայի Սահմանադրական դատարանը հակասահմանադրական ճանաչեց այս կոնվենցիան՝ 8 կողմ, 4 դեմ ձայների բաշխմամբ:

Դատարանը իր հրապարակած որոշման մեջ ասում է. «Գենդերը՝ որպես սոցիալական կոնստրուկտոր սահմանելիս Կոնվենցիան, ըստ էության, հարաբերականացնում է ինչպես սեռի, այնպես էլ արական և իգական սեռի սահմանները, որպես կենսաբանորեն որոշված: Այնուամենայնիվ, եթե հասարակությունը կորցնում է կնոջ և տղամարդու միջև տարբերակելու կարողությունը, կանանց դեմ բռնության պայքարը շարունակում է մնալ ձևական, բայց չկատարված պարտավորություն»:[1] Որոշումը ընդունելուց հետո Բուլղարիայի Սահմանդրական դատարանն արժանացավ բազում քննադատությունների միջազգային մարդասիրական կազմակերպություններից: Որոշման դեմ դուրս եկած ցուցարարների կողմից այն անվանվեց դատարանի պատմության ամենավատ որոշումը, որ դատարանը երբևիցե ընդունել էր: *Որոշմանը* կից հատուկ կարծիքներ են արտահայտել նաև 4 դատավորներ՝ Ռումեն Նենկովը, Գեորգի Անգելովը, Կոնստանտին Պենչևը և Ֆիլիպ Դեմիտրովը: Մասնավորապես, Դեմիտրովը իր կարծիքում քննադատում է դատարանին՝ «Գենդերային գաղափարախոսություն» վիճահարույց տերմինի օգտագործման համար: Անգելովը և Նենկովը այս որոշումն անվանել են «նվեր բոլոր գույների քաղաքական գործիչներին»: Այս արտահայտության հետևում այն փաստն է, որ շատ լրատվամիջոցներ և քաղաքագետներ այս մերժման մեջ քաղաքական ենթատեքստ են տեսնում և ըստ նրանց՝ իշխանությունը, որը ի սկզբանե դեմ էր կոնվենցիային, բավական քաղաքական համարձակություն չի ունեցել, որպեսզի կոնվենցիային դեմ հանդես գա:

Որոշումից հետո շատ քաղաքական ուժեր նաև աջակցեցին դատարանի նման որոշմանը, մասնավորապես՝ Կրասիմիռ Կառակաչանովը՝ «Միացյալ հայրենասերներ» կուսակցության նախագահը և երկրի պաշտպանության նախարարը, որակեց այս որոշումը որպես հաղթանակ «գենդերային գաղափարախոսության» հանդեպ: Դատարանի որոշմանը կողմ արտահայտվեցին նաև եկեղեցին և Բուլղարիայի Սոցիալիստական կուսակցությունը:[2]

Դատարանի որոշումից հետո Բուլղարիան այդպես էլ չվավերացրեց կոնվենցիան և դրան միտված գործողությունները դադարեցրեց՝ ստորագրման փուլում:

3.Կոնվենցիան և Հայաստանը: Ինչ ենք շահում մենք

3.1 Հասարակական կարծիքը կոնվենցիայի վերաբերյալ

Ծառացած հակասականության պայմաններում չի կարելի անտեսել նաև հասարակական կարծիքը, որը իրականում այնքան էլ միատարր չէ, որքան կարող է

[1] *Constitutional Court of Bulgaria, Р Е Ш Е Н И Е № 13, София, 27 юли 2018 г.,(обн., ДВ, бр. 65 от 07.08.2018 г.).*
[2] *www.Balkaninsight.com <https://balkaninsight.com/2018/07/27/bulgaria-s-constitutional-court-says-istanbul-convention-not-in-line-with-basic-law-07-27-2018/>.*

թվալ: Հիմք վերցնելով իմ կողմից անցկացրած փոքրիկ հարցումի արդյունքները՝ պարզ երևում է, որ հարցվածների մի մասը ընդհանրապես տեղյակ չէ այս կոնվենցիայի մասին: Հարկավոր է նշել նաև, որ հարցվածների մեծամասնությունը 18-24 տարեկան է և ունի բարձրագույն կրթություն: Ինչ վերաբերում է նրանց, ովքեր ծանոթ են կոնվենցիային, նրանց պատասխանները հիմնականում միանման էին և ուղղված կոնվենցիային դեմ: Կոնվենցիային կողմ են արտահայտվել հարցվածների 10%-ը, իսկ մնացածը դեմ են կամ չունեն դիրքորոշում հարցի շուրջ:

Հասարակական կարծիքները վերլուծելիս նաև հարկ է հաշվի առնել հասարակական կազմակերպությունների դիրքորոշումները և լրատվամիջոցների արձագանքը, որոնք սերտ կապի մեջ են հասարակական կամաարահայտության ձևավորման հետ:

Լրատվամիջոցներից կարող ենք տեղեկանալ կոնվենցիայի շուրջ տարբեր պաշտոնյաների կարծիքների մասին: Կարծիքներից կնշեմ Հայ առաքելական եկեղեցու դիրքորոշումը, արդարադատության նախարարի դիրքորոշումը և արդարադատության նախարարության դիրքորոշումը:

Մեր՝ հայերիս իրականության և աշխարհայացքի մեջ անշուշտ մեծ դեր է խաղում Հայ առաքելական եկեղեցին, որը կոնվենցիայի մասին արտահայտվել է մեծ մտահոգությամբ՝ նշելով մասնավորապես «սեռն ընտրելու ազատության» կոնվենցիայի ենթատեքստը և մի քանի հոդվածներ՝ կապված գենդերային պատկանելության և «կարծրատիպերից զերծ գենդերային դերերի» գաղափարն ուսումնական ծրագրի մեջ մտցնելու վերաբերյալ: Հայ առաքելական եկեղեցին իր դիրքորոշման մեջ նշում է, որ ընտանիք կարող են կազմել այրը և կինը, որոնք սուրբ պսակով նվիրագործված ամուսնությամբ դառնում են մեկ մարմին և մեկ ամբողջություն *(Սուրբ Գիրքը Ծնն. 2.24, Մարկ. 10.7-8, Եփես. 5.31):*[1]

Քննարկումների ընթացքում կոնվենցիայի ընդունման մասին իր ֆեյսբուքյան էջում իրեն հարց ուղղած օգտատերերից մեկին արդարադատության նախարար Ռուստամ Բադասյանը պատասխանել է, որ «…Կոնվենցիան հստակ կառուցակարգեր է սահմանում: Այն կանանց և ընտանեկան, կենցաղային, կարելի է ասել, բռնության տարբեր տեսակներ կանխարգելելու, մարդկանց իրավական պաշտպանության կառուցակարգեր սահմանելու մասին է… Իսկ ինչո՞ւ չվավերացնենք, որևէ մեկը բացատրե՞լ է: Ասում են՝ «մեր ազգային արժանապատվությանը, արժեքներին, ընտանեկան արժեքներին դեմ է»: Ո՞ր արժեքին, մի՞թե ինչ-որ մեկը կարծում է, որ բռնությունը մեր ընտանեկան արժեքն է կամ ազգային: Որոշ մասնագետներ ասում են, որ թարգմանությունը հաջող չէ՝ անգլերենից հայերեն, ես համաձայն եմ»:[2] Նախարարի այս արձագանքից բացի նաև կա արդարադատության նախարարության հայտարարությունը հարցի շուրջ. «…Կոնվենցիան որևէ կերպ չի հակասում Սահմանադրությամբ նախատեսված ընտանիքի կամ սեռերի կոնցեպտին, Կոնվենցիան **չի կարգավորում ընտանեկան կյանքը կամ ընտանիքի կառուցվածքը, և որևէ պետություն պարտավոր չէ ըստ Կոնվենցիայի փոխել ընտանիքի մասին ավանդական պատկերացումները: Այն չի պարունակում «ընտանիքի» սահմանումը և ոչ էլ խրախուսում է ընտանիքի որևէ կառուցվածք: Կոնվենցիան որևէ կերպ չի ազդում ամուսնության մասին ազգային օրենսդրության վրա: Կոնվենցիան որևէ կերպ վտանգի տակ չի առնում ազգային ավանդույթներն ու արժեքները, ավելին, այն չի պարտավորեցնում վերացնել**

[1]< http://ter-hambardzum.net/stambulyan-konvenciayi-veraberyal-pashtonakan/>.
[2] <https://www.azatutyun.am/a/30094631.html>.

ավանդույթները, ինչպես դա փորձ է արվում ներկայացնել: Կոնվենցիան միմիայն նշում է, որ ավանդույթները, մշակույթը և կրոնը չեն կարող կանանց նկատմամբ բռնությունն արդարացնելու հիմք հանդիսանալ»:[1]

3.2 Վավերացման հնարավոր ազդեցությունը իրավական դաշտի վրա

Միջազգային պայմանագրի վավերացումը ենթադրում է այդ պայմանագրի նորմերի կատարում և ներքին օրենսդրության ու պայմանագրի նորմերի միջև հակասությունների բացառում: Այնուամենայնիվ, միջազգային պայմանագիրը չպետք է հակասի վավերացնող երկրի սահմանադրությանը: Հենց այս գլխավոր հիմքը խնդիրներից շատերի հիմնաքարն է դարձել: Մի մասը ասում է, որ ամեն ինչ ընթանում օրենքի տառին համապատասխան և ոչ մի հակասություն չկա, մյուս մասը պնդում է, որ «Կանանց նկատմամբ բռնության և ընտանեկան բռնության կանխարգելման ու դրա դեմ պայքարի մասին կոնվենցիա»-ն հակասահմանադրական է, և Հայաստանը պետք է հետևի Բուլղարիայի օրինակին ու չվավերացնի կոնվենցիան: Այս հարցի լուծումը Արդարադատության նախարարությունը փորձեց գտնել Եվրոպայի խորհրդի սահմանադրական հարցերով մասնագիտացված խորհրդատվական կառույցի՝ Վենետիկի հանձնաժողովի կարծիքի հարցման միջոցով: Հանձնաժողովը հայտարարել է իր որոշումը բոլորովին վերջերս և ըստ դրա՝ հանձնաժողովը չի գտել ոչ մի հակասություն ՀՀ Սահմանադրության և կոնվենցիայի միջև: Վենետիկի հանձնաժողովի կարծիքի հայտարարումից հետո սկսվեցին նոր բանավեճեր, թե որքան է այդ խորհրդատվական մարմնի կարծիքի իրավական ուժը:

- Կոնվենցիայի վավերացումը, անշուշտ, խթան կհանդիսանա ընտանեկան բռնությունը և բռնությունը կանանց հանդեպ արմատախիլ անելու համար: Դրանք հասկացություններ են, որոնք տեղ չունեն հայկական հասարակության մեջ: Պետությունը կպարտավորվի վերապատրաստել մասնեգետների, ովքեր լավագույն կերպով կաջակցեն բռնությունների զոհերին, կբացվեն կենտրոններ, որոնք կապահովեն լավագույն պայմանները այդ աջակցությունը ցուցաբերելու համար, կներմուծվի թեժ գիծ, որի միջոցով օգնությունը հասանելի կդառնա բոլորի համար: Այս բոլոր բարեփոխումներից բացի կա ևս մեկը, որի մասին դեռ չի խոսվել, և դա ֆինանսական մեծ ներդրումներն են, որոնք արվելու են բոլոր այս ծրագրերի իրականացման համար: Ֆինանսական աջակցությունը ներդրումների տեսքով առավել քան կարևոր տնտեսական բաղադրիչ է, որը չի կարելի հաշվի չառնել լավ փոփոխությունների մասին խոսելիս:
- Մեդալի հակառակ կողմում դրված են այն վտանգները, որոնք կան կամ կարող են լինել կոնվենցիայում: Փաստ է, որ կոնվենցիան տարանջատում է սեռ և գենդեր հասկացությունները, փաստ է, որ կոնվենցիայի հիման վրա բոլորը. ովքեր հալածվել են իրենց երկրներում գենդերային հիմունքներով, կարող են ապաստարան ստանալ Հայաստանում և վերջապես փաստ է, որ հասարակությունը ճնշող մեծամասնությամբ դեմ է այս փաստաթղթի վավերացմանը: Ամենամեծ բացասական ազդեցությունը կարող է լինել հենց ժողովրդի վրդովվածությունը և հետո արդեն պոտենցիալ ռիսկեր՝ կապված ազգային արժեքների հետ:

Եզրակացություն

Վերլուծելով վերը նշված բոլոր փաստերն ու կարծիքները՝ կարելի է կատարել հետևություններ, թե որքանով են իրական այն վտանգները, որոնք կարող են վնասել

[1] *ՀՀ ԱՆ <http://moj.am/article/2461>:*

հայկական ավանդական ընտանիքի տեսլականին, և թե ինչքանով են այդ վտանգները ենթադրյալ: Իրականում կոնվենցիայի վավերացումը չի ենթադրում միասեռական ամուսնություններ կամ որդեգրումներ, դրանք միայն տեսականորեն տրամաբանական հետևություններ են, որոնք պրակտիկ ապացույցներ չունեն: Այնուամենայնիվ, այդ հետևանքները ինչ-որ չափով իրատեսական են, ուստի այստեղ խոսք է գնում վավերացման որոշումը կայացնելու ռիսկայնության մասին, և թե արդյոք պետությունն ունի բավարար հիմքեր, որպեսզի հավաստիանա, որ ներպետական արժեքները կպահպանվեն:

Քաղաքական տեսանկյունից նույնպես այս որոշումը պետության համար բարդ կլինի, քանի որ վավերացումը ոչ պոպուլյար որոշում է հասարակության համար ու քաղաքական ուժերը կբախվեն քննադատությունների մեծ ալիքի, ինչն ամենևին ցանկալի չէ իշխանության համար՝ հաշվի առնելով վերջերս կայացված ևս մեկ ոչ պոպուլյար որոշում՝ կապված Ամուլ սարի շահագործման հետ:

Իրավական տեսանկյունից՝ այս կոնվենցիան միանշանակ նոր մակարդակի է բարձրացնում Հայաստանում կանանց իրավունքների պաշտպանությունը: Հայկական իրավական համակարգի յուրաքանչյուր առաջընթաց ողջունելի է միջազգային հանրության կողմից, ինչը չի կարող լավ ազդեցություն չունենալ մեր իրավական մշակույթի զարգացման վրա:

ՀՏԴ 343.3 Իրավագիտություն

Մարինա Գաբրիելյան
Արցախի պետական համալսարան
marinaa.gabrielyan.0929@gmail.com

ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅԱՆ ՍՈՒԲՅԵԿՏԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *Հանցագործություն,հանցագործության սուբյեկտ,հանցագործության հատուկ սուբյեկտ,հանցագործության սուբյեկտի տարիք, մեղսունակություն, անմեղսունակություն, ֆիզիկական անձ:*

ՈՒսումնասիրելով հանցագործության սուբյեկտին ՝նախ և առաջ հանգում ենք այն եզրակացությանը, որ այս ինստիտուտը կարևոր տեղ է զբաղեցնում ողջ քրեական օրենսդրությունում: Պարզ ու հասկանալի է դառնում, որ սոցիալապես վտանգավոր գործողությունը կարող է կատարվել միայն անձի կողմից: Այնուամենայնիվ, կոնկրետ անձին քրեական պատասխանատվության ենթարկելու համար անհրաժեշտ է ունենալ մի շարք նախապայմաններ, որոնք բնութագրում են նրան՝ որպես հանցագործության մեջ մեղադրվողի: Ուսումնասիրելով արտասահմանյան երկրներում և ԱՀ-ում հանցագործության սուբյեկտի հատկանիշները ՝կարելի է եզրակացնել ,որ ԱՀ-ում նրանց նկատմամբ կիրառվում են ավելի մեղմ պատիժներ: Այնուամենայնիվ, դատարանի կողմից սուբյեկտի նկատմամբ պատիժ նշանակելը պետք է ուղղված լինի արդարադատության արդարացի իրականացմանը, սոցիալական արդարության վերականգմանը, հանցագործի՝ որպես հանցակազմի գլխավոր տարրի ուղղմանը, ինչպես նաև նոր հանցագործությունների կանխմանը:

Марина Габриелян

ХАРАКТЕРИСТИКА СУБЪЕКТА ПРЕСТУПЛЕНИЯ

Ключевые слова: *преступление, субъект преступления, особый субъект преступления, возраст субъекта преступления, здравомысленность, невменяемость, физическое лицо.*

Изучая субъект преступления, мы приходим к выводу,что этот институт имеет важное значение для всего уголовного законодательства. Становится ясно, что социально опасные действия могут быть выполнены только человеком.
Однако, чтобы привлечь конкретного человека к ответственности,необходимо иметь ряд предпосылок, которые характеризуют его как обвиняемого.Изучая характеристику субъекта преступления зарубежных стран и РА,можно сказать,что в РА к ним применяются более легкие наказания.
Однако,при вынесении субъекту приговора судом,приговор должен быть направлен на справедливое провосудие,на восстановление социальной справедливости,на исправление преступника как основного элемента преступления, а также на предотвращение новых преступлений.

Հանցագործության սուբյեկտը ընդհանուր իմաստով հանցանք կատարած անձն է, այսինքն՝ հանցագործը, ով ընդունակ է պատասխանատվություն կրել իր կատարած արարքի համար: Հանցագործության սուբյեկտը քրեական իրավունքի գիտության կողմից ուսումնասիրվող հասկացություն է՝ անձ, որը կատարել է քրեական օրենքով արգելված արարք (գործողություն կամ անգործություն) և որի համար ընդունակ է քրեական պատասխանատվություն կրել: Մի շարք արտասահմանյան երկրներում հանցագործության սուբյեկտ կարող է լինել ինչպես անհատը, այնպես էլ իրավաբանական անձը (կորպորացիա):

Այնուամենայնիվ, նախքան իրավաբանական անձանց պատասխանատվության հարցի քննարկմանն անցնելը, մենք հաշվի ենք առնում հանցագործության սուբյեկտի ընդհանուր առանձնահատկությունները, որն այս դեպքում անհատն է:[1]

Ընդհանրապես, ընդունված է այն տեսակետը, որ քրեական պատասխանատվության ենթակա են միայն ֆիզիկական անձինք:Միայն արտահայտությունը վկայում է, որը իրերը, կենդանիները, բնության ուժերը , որոնք պատճառել են գույքային, բարոյական կամ այլ վնաս, չեն կարող դիտվել որպես հանցագործության սուբյեկտներ: Չնայած պատմությունը վկայում է այն մասին ,որ հնում քրեական պատասխանատվության էին ենթակում նույնիսկ կենդանիներին:[2]

Այսպարագայում առանձնահատուկ կարգավորում ունի ԱՀ քրեական օրենսգիրքը: Քրեական օրենսգրքի 23-րդ հոդվածի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է միայն մեղսունակ ֆիզիկական անձը, ով հանցանք կատարելու պահին հասել է քրեական օրենսգրքով սահմանված տարիքի: Այսպիսով հանցագործության սուբյեկտը այն անձն է ով ազդեցություն է գործում քրեական իրավունքի պաշտպանության օբյեկտի վրա և իվիճակի է պատասխանատվություն կրել դրա համար: Հանցագործության սուբյեկտը կազմում է հանցակազմի տարրերից մեկը:[3]

Թվարկված հատկանիշները ցանկացած հանցագործության սուբյեկտի պարտադիր իրավաբանական հատկանիշներ են, որոնցից թեկուզև մեկի բացակայությունը վկայում է արարքում հանցակազմ չլինելու մասին: Միևնույն պարտադիր հատկանիշներով օժտված սուբյեկտները համարվում են հանցագործության ընդհանուր սուբյեկտներ: Տեսական գրականության մեջ առանձնացնում են հանցագործության հատուկ սուբյեկտներ: Հատուկ սուբյեկտը հանցանք կատարած անձն է, որը բացի հանցագործության սուբյեկտի ընդհանուր հատկանիշներից , պետք է բավարարվի նաև այլ հատկանիշների, որոնք քրեական օրենքը սահմանում է առանձին հանցակազմի համար:

Որոշ գիտնականներ հատուկ սուբյեկտ են անվանում այն անձնավորությանը, ով, առարկայի ընդհանուր բնութագրերով, ունի նաև լրացուցիչ որակներ (Բ. Գ.Օրլով, Ա. Մ. Լազարև, Գ. Ն. Բորզենկով): Մյուսները խոսում են հատուկ սուբյեկտի մասին՝ որպես անձի ով ունի հոդվածի բնութագրում նշված առանձնահատկությունները (Ն. Ս. Լեյկինա, Ն. Պ. Գրաբովսկայա, Վ. Ա. Վլադիմիրով, Գ. Ա. Լևիցկի): Իսկ մյուսները հասկանում են որպես հատուկ սուբյեկտներ, ովքեր, բացի հանցագործության սուբյեկտի անհրաժեշտ առանձնահատկություններից (հասնելով որոշակի տարիքի, առողջության), պետք է ունենան նաև հատուկ այլ հատկանիշներ, որոնք որոշվածեն իրենց գործունեությամբ կամ իրենց պարտականությունների բնույթով, նշաններ, որ միայն նրանք կարող են կատարել այդ հանցագործությունը (Ս. Ս. Ռաշկովսկայա, Ռ. Օրամբաև)):Հատուկ սուբյեկտի հետ կատարված հանցագործության առանձնահատկություններն այնպիսին են, որ հասարակայնության հետ կապը (հանցագործության օբյեկտը) վնասում է ներսից՝ իրավահարաբերությունների սուբյեկտներից որևէ մեկի կողմից, որը նույնպես հանդիսանում է հանցագործության առարկա:[4]

Այսպիսով, սուբյեկտի այս տեսակը 3 պարտադիր հատկանիշներից (ֆիզիկական անձ, մեղսունակություն և քրեական պատասխանատվության տարիք) բացի բնութագրվում է նաև ոչ պարտադիր հատկանիշներով, որոնք նախատեսված են քրեական օրենսգրքի Հատուկ մասի նորմերով:

---

[1]*Տե՛ս՝* ***Кузнецова Н.Ф., Тяжкова И.М.****. Курс уголовного права в пяти томах. Том 1. Общая часть: Учение о преступлении.*

[2]*Տե՛ս՝ Уголовное право России. Часть Общая / Отв. ред. Кругликов Л. Л. . М.: ВолтерсКлувер, 2005. С. 182—183.*

[3]*Տե՛ս՝ Уголовное право России. Части Общая и Особенная: учебник / Под ред. Рарога А. И. М.: ТКВелби, Изд-во Проспект, 2004. С. 114.*

[4]*Տե՛ս՝****Семенов С. А.*** *Понятие специального субекта преступления /Журнал российского права. N 7*

Հանցագործության հատուկսուբյեկտի հատկանիշները տեսական գրականության մեջ երբեմն անվանվում են ֆակուլտատիվ, քանի որ նախատեսված են ոչ բոլոր հանցակազմերում:

Հանցագործության հատուկ սուբյեկտի *ոչ պարտադիր* հատկանիշների առանձնահատկությունների նշանակությունը կարելի է դիտել 3 տեսանկյունով:

Առաջին նախատեսված են կոնկրետ հանցակազմի դիսպոզիցիայում՝ հանդիսանալով տվյալ հանցագործության պարտադիր հատկանիշներ, առանց որոնց բացակայում է հանցակազմը:

Երկրորդ ՝ հանդիսանում են հանցակազմը որակյալ դարձնող հատկանիշ՝ ծանրացնող հանգամանք:

Երրորդ ՝ չեն ազդում արարքի որակման վրա, բայց կարող են որոշակի նշանակություն ունենալ պատժի անհատականացման համար և հաշվի առնվել դատարանի կողմից պատժի տեսակը և չափը ընտրելիս:

Հատուկ սուբյեկտի հատկանիշները կարելի է խմբավորել 3 խմբի՝

I. Առարկայի իրավական կարգավիճակի բնութագրերը.

1. Պետաիրավական կարգավիճակ (քաղաքացիություն).
2. Գործողություն ներպետական պաշտպանության ոլորտում.
3. Տրանսպորտային գործունեություն (տրանսպորտայինմիջոցիվարորդ).
4. Պաշտոնական լիազորություն.
5. Այլ հատուկ լիազորություններ (օրինակ՝պետականգաղտնիքպահելը).
6. Գործունեություն որպես ձեռնարկատեր.
7. Ամուսնական և ընտանեկան կարգավիճակ.
8. Առարկայի կարգավիճակ ՝որպես դատական գործընթացների մասնակից.
9. Գործունեություն բժշկության ոլորտում:

II.Հանցագործի անձի սոցիալ-իրավական և հոգեֆիզիոլոգիական հատկությունները.

1. սեռ.
2. տարիք.
3. այլ կենսաբանական ցուցանիշներ:

III. Ըստ հանցագործության կատարման գործընթացում նրա դերի.

1. կազմակերպիչ.
2. վերահսկիչ.
3. մասնակից.
4. դրդիչ[1]:

Հանցագործության սուբյեկտ հասկացությունից պետք է տարբերել նաև *հանցագործի անձ* հասկացությունը: Հանցագործության սուբյեկտն այն հատկանիշների ամբողջությունն է, առանց որի չկա և չի կարող լինել որևէ հանցակազմ:Հանցագործի անձը նրա տարբեր հատկանիշների ամբողջությունն է, օրինակ՝ բնավորությունը, հակումները, խառնվածքը: Հանցագործության սուբյեկտը իրավաբանական հասկացություն է և իրավաբանորեն բնութագրում է հանցանք կատարած անձին: Բնութագրիչներն այս դեպքում երեքն են՝ ֆիզիկական անձ լինելը, մեղսունակությունը, օրենքով սահմանված տարիքին հասնելը:Այսպես, *հանցագործի անձ* հասկացությունն ավելի լայն է, քան *հանցագործության սուբյեկտ* հասկացությունը: Այն ընդգրկում է մարդկային հատկանիշների բազմությունը:

Հանցագործության սուբյեկտի բնութագրիչ հատկանիշներից է հանդիսանում օրենքով սահմանված տարիքին հասնելը: Օտարերկրյա պետությունների քրեական օրենսդրության

[1]*Տե՛ս՝ См.: Российское уголовное право. Общая часть / Под ред. В. С. Комиссарова. СПб.: Питер, 2005. С. 219.*

մեջ քրեական պատասխանատվության տարիքը տարբերվում է: Շատ պետություններում քրեական պատասխանատվության տարիքը կիրառվում է 18 տարեկանում: Քրեական պատասխանատվության տարիքի ստորին սահմանը տատանվում է 10-ից 16 տարի: Որոշ երկրներում քրեական պատասխանատվության ցածր տարիքը փոխհատուցվում է անչափահասների համար սովորական քրեական պատիժ կիրառելու արգելքի հետ (Իտալիա, Շվեյցարիա, Անգլիա, Կանադա և այլն): Նույնիսկ ԱՄՆ-ի նահանգներից յուրաքանչյուրում նախատեսում են քրեական պատասխանատվության տարբեր տարիքներ: Այսպիսով, ըստ Մինեսոտայի քրեական օրենսգրքի՝ քրեական պատասխանատվության տարիք է սահմանում 14-18 տարեկանը: Քրեական պատասխանատվության ամենացածր տարիքը սահմանվում է Կոլորադոյի և Լուիզիանայի նահանգներում՝ 10 տարի: Ֆրանսիայում քրեական պատասխանատվություն կարող է նշանակվել նույնիսկ 13 տարեկան անչափահասի նկատմամբ: Այնուամենայնիվ, եթե նա դեռ 16 տարեկան չէ, դատարանը իրավունք ունի նշանակել միայն պատժի կեսը:[1]

ԱՀ Քրեական օրենսգրքի 23 հոդվածի 1-ին մասի համաձայն՝ քրեական պատասխանատվության ենթակա է անձը , ում տասնվեց տարին լրացել է նախքան հանցանք կատարելը: Նույն հոդվածի 2-րդ մասով որոշ հանցագործությունների համար քրեական պատասխանատվություն է սահմանվում 14 տարին լրացած անձանց նկատմամբ: Ընդունված է տարբերակել տարիքային հետևյալ չափանիշները ՝ժամանակագրություն (անձնագրային), կենսաբանական (գործառնական), սոցիալական (քաղաքացիական) և հոգեբանական (հոգեկան): Բազմաթիվ հանցագործությունների համար այն վրա է հասնում ոչ թե 16, այլ ավելի բարձր տարիքից: Այսպես, պետական ծառայության դեմ ուղղված հանցագործությունների համար պաշտոնական լիազորությունները չարաշահելու (քրեական օրենսգրքի հոդված 322), կաշառք ստանալու (քրեական օրենսգրքի հոդված 325) և այլն, պատասխանատվությունը հնարավոր է միայն 18 տարեկանից: Արդարադատության դեմ ուղղված հանցագործությունների սուբյեկտներ, եթե դրանք կատարվել են, օրինակ, դատավորների կողմից, կարող են լինել միայն 25 տարին լրացած անձինք, քանի որ դատավոր նշանակելու նվազագույն հնարավոր տարիքը ԱՀ-ում 25 տարեկանն է (Արդարադատության խորհուրդի մասին ԱՀ օրենք):

Ֆիզիկական անձը կարող է մեղավոր ճանաչվել հանցագործության մեջ, ուրեմն և հանցագործության սուբյեկտ համարվել, եթե նա մեղսունակ է, այսինքն՝ օժտված է գիտակցությամբ և կամքով:

Մեղսունակություն բառի լայն, տարածված իմաստը նշանակում է իրենց գործողությունների համար օրենքի առջև պատասխանատվություն կրելու ունակություն: Օրենքի այս դրույթից մենք կարող ենք եզրակացնել, որ մեղսունակությունը մտավոր վիճակ է, որի դեպքում մարդը սոցիալապես վտանգավոր արարք կատարելու պահին կարող է գիտակցել իր գործողությունների նշանակությունը և ղեկավարել դրանք, ուստի ի վիճակի է պատասխանատու լինել իր գործողությունների համար:[2]

Մեղսունակությունը անձի այն հոգեբանական վիճակն է ,երբ նա սոցիալ-հոգեբանական զարգացման, սոցիալիզացիայի, տարիքի և հոգեկան առողջության մակարդակով ընդունակ է հանցագործության պահին հաշիվ տալ իր գործողությունների (անգործության) համար և ղեկավարել դրանք և որպես հետևանք՝ քրեական պատասխանատվություն ու պատիժ կրել: Փաստորեն սեփական գործողությունների փաստական կողմն ու սոցիալական նշանակությունը հասկանալու ունակությունը և միաժամանակ գիտակցաբար

[1] *Տե՛ս Кузнецова Н.Ф., Тяжкова И.М.. Указ. соч.*
[2] *Տե՛ս Кузнецова Н.Ф., Тяжкова И.М.. Указ. соч.*

ղեկավարելու ունակությամբ օժտված անձի գործողությունները տարբերվում են անմեղսունակ անձի գործողություններից:
Անմեղսունակության հասկացությունը բացահայտվում է երկու չափանիշներով՝ բժշկական և իրավաբանական: Անձի մեղսունակությունը կարող է սահմանվել միայն այդ երկու չափանիշների միաժամանակյա առկայության դեպքում, քանի որ նրանցից յուրաքանչյուրն առանձին կարող է բնութագրել հանցագործության նկատմամբ անձի հոգեբանական վերաբերմունքը կա՛մ բժշկական, կա՛մ միայն իրավաբանական տեսանկյունից: Անմեղսունակության բժշկական չափանիշների հիմքը կազմում են դատական հոգեբուժության գիտության դրույթները:Բժշկական չափանիշները, քրեական օրենսգրքի հոդված 24-ի առաջին մասի համաձայն, ընգրկում են հոգեկան գործունեության խանգարման 4 ձևեր:
Քրոնիկ հոգեկան հիվանդություններն անբուժելի կամ դժվար բուժելի, երկարատև և սաստկացող բնույթ կրող հիվանդագին երևույթներ են, որոնց թվին կարելի է դասել շիզոֆրենիան, էպիլեպսիկհիվանդությունը (արտահայտված փոփոխություններով, հաճախակի ցնցումներով), մանիակալդեպրեսիվ փսիխոզը, սաստկացողկաթվածը (պարալիչ), գլխուղեղի օրգանական ախտահարումները (արտահայտված փոփոխություններով), սոմատոգենը (քրոնիկ) և այլն:
Հոգեկան գործունեության ժամանակավոր խանգարումները հոգեկան հիվանդագին վիճակներ են , որոնք զարգանում են արագորեն, համեմատաբար կարճատև ընթացք ունեն և ավարտվում են հիվանդի առողջացմամբ. Դրանք են՝պաթոլոգիկ աֆեկտը, հոգեկան ծանր ապրումների արդյունք հանդիսացող ռեակտիվ ախտանշման վիճակները և այլն:

Տկարամտությունը հոգեկան գործունեության լրիվ կամ մասնակի անկումն է, որն արտահայտվում է մարդու մտավորան կարողությամբ: Տարբերվում են տկարամտության 3 աստիճաններ՝ ա)դեբիլություն, որը տկարամտության ամենաթեթև ձևն է և իր հերթին լինում է թեթև, չափավոր և արտահայտված, բ) իմբեցիլություն գ) ապուշություն: Տկարամտությունը լինում է բնածին և ձեռքբերովի , որը կարող է որևէ ծանր հիվանդության կամ գլխուղեղի վնասվածքի արդյունք լինել:
Հոգեկան այլ հիվանդագին վիճակները գտնվում են հոգեկան հիվանդությունների շրջանակից դուրս բայց այնուհանդերձ ուղեկցվում են հոգեկան խանգարումներով: Անմեղսունակության հաստատման համար անպայմանորեն անհրաժեշտ է նաև իրավաբանական չափանիշների առկայությունը: Վերջիններս ներառում են 2 հատկանիշ՝ մտավոր (ինտելեկտուալ) և կամային:
Անմեղսունակության և լիակատար հոգեկան առողջության միջև բացակայում է հստակ սահմանագիծը:Միջանկյալ վիճակների գնահատման համար դեռևս 19-րդ դարում առաջարկվեց սահմանափակ մեղսունակության հայեցագակարգ: Առաջին անգամ այն օգտագործվեց 19-րդ դարում գերմանական քրեական իրավունքում: Սահմանափակ մեղսունակությունը՝ որպես մեղմացնող հանգամանք, հաշվի է առնվում պատիժ նշանակելիս և կարող է հիմք դառնալ պատժի հետ միաժամանակ բժշկական բնույթի հարկադրանքի միջոց նշանակելու համար: Հատուկ ուշադրության է արժանի ալկոհոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի ազդեցությամբ՝ հարբած վիճակում հանցանք կատարած անձանց քրեական պատասխանատվության հարցը:
Պարզ ալկոհոլային, թմրամիջոցների կամ թունավոր թունավորումների վիճակը չի ճանաչվում որպես հոգեկան խանգարում, փորոքություն կամ հոգեբուժության այլ վիճակ, որն համաձայն է փաստաբանների և հոգեբույժների մեծամասնությունը: Որոնք միևնույն ժամանակ նշում են, որ հարբած վիճակը, կախված հարբածության աստիճանից, ազդում է

հոգեկան նորմալ ընթացքի վրա՝ վերամշակում, խաթարում է հուզմունքի և արգելքի գործընթացը, ինչպես նաև ազդում է իրադարձություններին պատշաճ արձագանքելու ունակության վրա: Մարդու վարքագիծը հարբած վիճակում կախված է ոչ միայն օգտագործված հոգեակտիվ նյութերի չափաբաժնից, այլև դաստիարակությունից, մշակութային մակարդակից, սովորույթներից, մարմնի ֆիզիոլոգիական բնութագրերից և այլն, ինչը պատճառներից մեկն է, որը թույլ չի տալիս հարբած վիճակը վերագրել ցավոտ հոգեկան խանգարում :[1]

Ինչպես նաև հոգեբուժության բնագավառի փորձագետները նշում են, որ ալկոհոլային պարզ թունավորումների կամ թմրամիջոցների կամ թունավորումների դեպքում միայն հուզական-կամային դրսևորումների քանակական աճ է նկատվում՝ առանց որակապես տարբեր հոգեբանական խանգարումների (դելիրիում, հալյուցինացիաներ, խանգարված գիտակցություն): Հետևաբար, պարզ ալկոհոլային թունավորումները (ի տարբերություն պաթոլոգիական), ինչպես նաև ոչ հոգեկան թմրամիջոցները և թունավորումները չեն կարող դիտարկվել որպես անմեղսունակության չափանիշ :[2]

Այս երևույթի քրեաիրավական նշանակությանն են նվիրված ԱՀ քրեական օրենսգրքի հոդված 26-ը. Ըստ որի՝ ալկոհոլի, թմրամիջոցների կամ թմրեցնող այլ նյութերի օգտագործման հետևանքով հարբած վիճակում հանցանք կատարած անձը քրեական պատասխանատվությունից չի ազատվում:Այս հոդվածը նկատի ունի սովորական (ֆիզիոլոգիական) հարբածությունը, որն ալկահոլի, թմրամիջոցների կամ այլ թմրեցնող նյութերի օգտագործման արդյունք է:Սովորական հարբածությունից անհրաժեշտ է տարբերել պաթոլոգիկ հարբածությունը: Պաթոլոգիկ հարբածությունը առաջանում է ալկոհոլի առավել հաճախ օգտագործումից:

Միևնույն ժամանակ, հոգեակտիվ նյութերը կարող են առաջացնել մտավոր և վարքային խանգարումներ, որոնց ծանրությունը տատանվում է հարբած ժամանակավոր վիճակից մինչև ծանր հոգեկան խանգարումներ և ձեռք բերված թուլություն: [3]

Առաջացման պատճառներից կախված՝ կարելի է տարբերել ինքնակամ և հարկադրական հարբածությունը: Ինքնակամ հարբածությունը վրա է հասնում, երբ անձը առանց հարկադրանքի օգտագործում է դրանք: Անձի մոտ հարկադրական հարբածության վիճակ կարող է առաջանալ բռնության կամ սպառնալիքի գործադրման դեպքում, կամ երբ դրանք օգտագործվում են սխալմամբ, օրինակ՝խաբեության արդյունքում:

---

[1]*Տե՛ս* ***Наумов А. В****. Российское уголовное право. Общая часть. М., 2000. С. 215 ; Уголовное право России. Общая часть / под ред. В. Н. Кудрявце-ва, В. В. Лунева, А. В. Наумова. М., 2004. С. 170.*

[2]*Տե՛ս* ***Клименко Т. В.*** *Судебная психиатрия : учебник для бакалавров. М., 2012. С. 369.*

[3]*Տե՛ս Клиническое руководство: модели диагностики и лечения психических поведенческих расстройств. М., 2000. С. 4, 13.*

ՀՏԴ 342.8 Իրավագիտություն

Աննա Գրիգորյան
Իրավագիտություն 3-րդկուրսիուսանողուհի
*Էլ.հասցե՝annagrigoryan1103.@mail.*ru

ԱՀ ԸՆՏՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԸ

Բանալի բառեր՝ *ընտրություններ, ընտրական համակարգ, սահմանադրություն, ժողովրդավարություն, նախագահ,ազգային ժողով, իրավունք, օրենք*

Նշված հոդվածում քննարկվում է ԱՀ ընտրական համակարգը՝հիմքընդունելով ԱՀ նորընտրական օրենսգրքի նախագիծը: Իմկարծիքով, թեմայում շոշափվող դրույթները շատ կարևոր են յուրաքանչյուր ժողովրդավարական պետության համար: Ժողովրդավարական է համարվում է այն պետությունը, որի գործունեությունը համապատասխանում է ժողովրդի կամքին, մարդուն քաղաքացու հանրաճանաչ իրավունքներին և ազատություններին: Ժողովրդավարությունը ենթադրում է ժողովրդի կողմից՝ ազատընտրությունների և հանրաքվեի միջոցով իշխանության իրականացման իրավունքը: Այդ իրավունք ըիրականացվում է ժողովրդի կողմից ընտրություններին մասնակցելու միջոցով: Այդ պատճառով էլ ընտրական իրավունքը հանդիսանում է անձի կարևորագույն քաղաքական իրավունքներից մեկը: ԱՀ ընտրական օրենսգրքի նախագծով սահմանվեցին ընտրությունների հիմունքները, մանրամասնվեցին ԱՀ սահմանադրությամբ ամրագրված ընտրական իրավունքի սկզբունքները, մասնավորապես, սահմանվեց, որ ընտրություններն անցկացվում են ընտրական իրավունքի իրականացման՝ ազատության նկամավորության սկզբունքների հիման վրա:

Анна Григорян

ИЗБИРАТЕЛЬНАЯ СИСТЕМА РА

Ключевые слова: *выборы, избирательная система,конституция,демократия,президент, национальное собрание,право,кодекс*

В данной статье поднимается актуальная для всех демократических стран тема-избирательная система .Демократической считается та страна, чья деятельность соответствует воле народа. Демократия подразумевает реализацию власти людьми посредством референдума и свободных выборов. Именно свободное волеизъявление граждан является одной из основ конституционного строя. Проект избирательного кодекса РА устанавливает основы выборов ,а также предусмотренные конституцией принципы избирательного права. В частности было установлено, что выборы проводятся, реализуя право голоса , на основе принципа свободы.

Ընտրությունները և ընտրական իրավունքի իրականացումը յուրաքանչյուր ժողովրդավարական պետության հասարակական կյանքում կարևորագույն նշանակություն ունեցող միջոցառումներն են: Ընտրություն համապատասխան մարմնի կազմավորման կամ պաշտոնատար անձին լիազորություններով օժտելու գործընթաց է,որն իրականացվում է իրավազոր անձանց քվեարկության միջոցով[1]:Ընտրական իրավունքը քաղաքական իրավունքների միջուկն է,այն առանցքը,որի շուրջ պտտվում են գրեթե բոլոր քաղաքական իրավունքները:

Արցախի Հանրապետությունում ընտրական հարաբերություններ իրենց իրավական կարգավորումն են ստանում ԼՂՀ 2014թ-ի հոկտեմբերի 29-ին ընդունվել ընտրական

[1]*ՀՀ սահմանադրական իրավունք/Վ.Այվազյան և ուրիշներ –Երևանի պետական համալսարան,2012թ.,էջ 464*

օրենսգրքով:Սակայն,պայմանավորված նրանով, որ 2017թ-ի փետրվարի 20-ին համաժողովրդական հանրաքվեի արդյունքում ԱՀ-ում ընդունվում է նոր սահմանադրություն,ընտրական օրենսգիրքը որոշ չափով կորցրել է իր արդիականությունը և արդեն ամբողջությամբ չի արտացոլում Սահմանադրությամբ ամրագրված իրավակարգավորումները: Ուստի առաջացել է նոր իրավական ակտի ընդունման անհրաժեշտությունը:

Թեմայի ընտրությունը պայմանավորված է 2020թ.-ի ԱՀ-ում կայանալիք նախագահական և ԱԺ ընտրություններով: Ուստի կփորձեմ վերլուծել և մեկնաբանել ԱՀ ընտրական համակարգը՝ հենվելով 2020թ.-ին ուժի մեջ մտելիք ընտրական օրենսգրքի վրա:

Նախագծում ընտրությունների նախապատրաստական փուլն ընդգրկում է կազմակերպական մի քանի միջոցառումներ:

1.Ընտրություններ նշանակելը

Հերթական ընտրություններ

ԱՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝Հանրապետության նախագահի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի լիազորությունների ավարտից 50 օր առաջ:Իսկ սահմանադրության 109-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի հերթական ընտրությունն անցկացվում է Հանրապետության նախագահի ընտրություններ հետ միաժամանակ [1]:Նախագծի 97-րդ հոդվածի 2-րդ մասով և 121-րդ հոդվածով սահմանվեց,որ Հանրապետության նախագահի և ԱԺ ընտրության օրվա մասին Արցախի հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝քվեարկության օրվանից 70 օր առաջ:

Նախագծի 138-րդ հոդվածի համաձայն՝տեղական ինքնակառավարման մարմինների հերթական ընտրություններն անցկացվում են ոչ ուշ, քան տեղական ինքնակառավարման մարմինների լիազորությունների ավարտից 30 օր առաջ:Համայնքում տեղական ինքնակառավարման մարմինների ընտրություններն նշանակում է ԱՀ կառավարությունը՝համայնքի ղեկավարի,ավագանու անդամների լիազորությունների ժամկետը լրանալուց ոչ ուշ, քան 70 օր առաջ:

Հանրապետության նախագահի ընտրությունների 2-րդ փուլ

Եթե քվեարկվել է 2-ից ավելի թեկնածու,և նրանցից ոչ մեկին կողմ չի քվեարկել թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին ,ապա քվեարկությունից հետո՝14-րդ օրը, անցկացվում է Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլի քվերկություն:2-րդ փուլին մասնակցում են այն 2 թեկնածուները,որոնց կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:2-րդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն ,որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Արտահերթ ընտություններ

Արցախի Հանրապետության Սահմանադրության 90-րդ հոդվածի համաձայն՝ Հանրապետության նախագահի հրաժարականի,մահվան,լիազորությունների դադարեցման կամ նրան անվստահություն հայտնելու ,պաշտոնանկ անելու,ինչպես նաև Ազգային ժողովի արձակվելու դեպքում նշանակվում են Հանրապետության նախագահի և Ազգային ժողովի արտահերթ ընտրություններ:[2]Արտահերթ ընտրությունների դեպքում,

[1] *ԱՀ սահմանադրություն,2017թ*

[2] *ԱՀ սահմանադրություն,2017թ*

քվեարկությունն անցկացվում է Հանրապետության նախագահի պաշտոնը թափուր մնալուց հետո՝40-րդ օրը:Արտահերթ ընտրությունների մասին Արցախի հանրային ռադիոյով և հանրային հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս Կենտրանական ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրվանից ոչ ուշ ,քան 39 օր առաջ:

Ընտրությունների անցկացման սահմանափակումները

ԱՀ Սահմանադրության 76-րդ հոդվածով ամրագրված ընտրությունների անցկացման սահմանափակումները մանրամասնվեցին Նախագծի 7-րդ,100-րդ,122-րդ,140-րդ հոդվածներում:Ռազմական,արտակարգ դրության կամ պատերազմի ժամանակ ընտրություններ չեն անցկացվում:Ռազմական,արտակարգ դրության կամ պատերազմի ավարտից ոչ շուտ, քան 50, և ոչ ուշ, քան 65 օր հետո անցկացվում են արտակարգ դրության կամ պատերազմի պատճառով տեղի չունեցած՝նոր հերթական ընտրություններ:Նոր հերթական ընտրության օրվա մասին Արցախի հանրային ռադիոյով և հեռուստատեսությամբ հաղորդագրությամբ հանդես է գալիս Կենտրոնական ընտրական հանձնաժողովի նախագահը՝Հանրապետության նախագահի հրամանագրով ռազմական դրության ժամանակ ընտրություններ չանցկացնելու հիմքը վերանալուց ոչ ուշ,քան 7 օր հետո:[1]

2.Ընտրողների ցուցակներ կազմելը,ընտրական տեղամասեր,տեղամասային կենտրոններ կազմավորելը

Ընտրական ցուցակներ կազմելը

Նախագծի 9-րդ հոդվածի համաձայն՝ ընտրողներին ընտրական ցուցակներում ընդգրկելը քաղաքացիների ընտրական իրավունքի իրականացման անհրաժեշտ պայմաններից է:Արցախի Հանրապետության ընտրողների ռեգիստրում ընդգրկվում են Արցախի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում ընդգրկված և ընտրելու իրավունք ունեցող ԱՀ քաղաքացիները: ԱՀ հաշվառում չունեցող ընտրողներն համապետական ընտրությունների ժամանակ քվեարկությանը մասնակցելո ւհամար քվեարկության օրվանիցոչուշ, քան 7 օրառաջ լիազոր մարմիններ կայացնում են դիմում՝ ընտրողների ցուցակում ժամանակավորապես ընդգրկելու մասին՝ նշելով քվեարկության օրը Արցախի Հանրապետությունում գտնվելու վայրի հասցեն: Լիազոր մարմինը դիմումը ստանալուց հետո՝ 3-օրյա ժամկետում, ընտրողին ընդգրկում է քվեարկության օրը ԱՀ-ում գտնվելու վայրի մոտակա ընտրական տեղամասի ընտրողների լրացուցիչ ցուցակումը այդ մասին նրան տրամադրում տեղեկանք Նախագծի 10-րդհոդված):

Ընտրական տեղամասեր,տեղամասային կենտրոններ կազմավորելը

Նախագծի 16-րդ հոդվածի համաձայն՝լիազոր մարմինը համայնքի ղեկավարի և տարածքային ընտրական հանձնաժողովի անդամի մասնակցությամբ կազմավորում է ընտրական տեղամասեր քվեարկության օրվանից ոչ ուշ,քան 45 օր առաջ՝հաշվի առնելով տեղական և այլ պայմաններ,նպատակ ունենալով առավել նպաստավոր պայմաններ ստեղծել քվեարկության կազմավորման համար:

Նախագծի 18-րդ հոդվածի համաձայն՝համայնքի ղեկավարը քվեարկության օրվանից ոչ ուշ,քան 43 օր առաջ սահմանում է տեղամասային կենտրոն:Համայնքի ղեկավարն այդ մասին տեղեկացնում է լիազոր մարմնին,համապատասխան տարածքային ընտրական հանձնաժողովին և տեղամասային կենտրոնի տարածքը տիրապետողին,իսկ

[1] *Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագիծ:*

քրեակատարողական հիմնարկի ղեկավարը՝տարածքային ընտրական հանձնաժողովին:

3.Նախընտրական քարոզչություն

Նախընտրական քարոզչության ժամանակահատվածը այն ժամանակահատվածն է,որի ընթացքում Հանրապետության նախագահի թեկնածուներին,ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցություններին ,համայնքի ղեկավարի թեկնածուներին,համայնքի ավագանու անդամի թեկնածուներին հավասար հնարավորություններ ապահովելու նպատակով գործում են հանրային ռեսուրսներից օգտվելու,քարոզչություն իրականացնելու և ֆինանսական թափանցիկությունն ապահովելու՝սույն օրենսգրքով սահմանված կանոնները:Նախընտրական քարոզչության ժամանակահատվածի սահմանված լինելը չի սահմանափակում սույն օրենսգրքով չարգելված այլ ժամանակահատվածում քարոզչության իրականացումը:

4.Ընտրությունների ֆինանսավորումը

Ընտրությունների կազմակերման և անցկացման,ինչպես նաև ընտրական հանձնաժողովների գործունեության համար անհրաժեշտ ծախսերի ֆինանսավորումը կատարվում է պետական բյուջեի միջոցների հաշվին:Այդ ծախսերը նախատեսվում են պետական բյուջեի առանձին հոդվածով:

Հանրապետության նախագահի թեկնածուները,Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները,համայնքի ղեկավարի թեկնածուները,համայնքի ավագանու անդամի թեկնածուները Կենտրոնական ընտրական հանձնաժողովի հաշվեհամարին վճարում են ընտրական գրավ:Հանրապետության նախագահի թեկնածուները,Ազգային ժողովի ընտրություններին մասնակցող կուսակցությունները պարտավոր են բացել նախընտրական հիմնադրամ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովի վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը

Նախագծի համաձայն Վերահսկիչ-վերստուգիչ ծառայությունը մշտապես գործող մարմին է,որն իրականացնում է նախընտրական հիմնադրամներ կատարվող մուծումների,ծախսերի և դրանց հաշվարկման,ինչպես նաև կուսակցությունների ընթացիկ ֆինանսական գործունեության նկատմամբ վերահսկողություն:

5.Ընտրական հանձնաժողովները

Ընտրությունների կազմակերպման և անցկացման նպատակով կազմավորվում է ընտրական հանձնաժողովների եռաստիճան համակարգ՝ Կենտրոնական ընտրական հանձնաժողով ,տարածքային ընտրական հանձնաժողովներ և տեղամասային ընտրական հանձնաժողովներ(Նախագծի 42-44-րդ հոդվածներ):

6.Թեկնածուների առաջադրումը և գրանցումը

Թեկնածուների առաջադրումը կարևորվում է նրանով,որ առաջադրված անձանց թվից են ընտրվում ժողովրդի լիազոր ներկայացուցիչները և կազմավորվում պետական և տեղական ինքնակառավարման մարմինները:Առաջադրված թեկնածուների գործարար հատկանիշներից է կախված կազմավորվող պետական և տեղական ինքնակառավարման մարմինների գործունեության արդյունավետությունը:

Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելն ու թեկնածուների գրանցումը

Հանրապետության նախագահի թեկնածու առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները և Արցախի Հանրապետության քաղաքացիները՝ ինքնաառաջադրման միջոցով (Նախագծի79-րդհոդված): Հանրապետության նախագահի թեկնածուի գրանցման համար անհրաժեշտ փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 օրառաջ՝ մինչևժամը 18:00-ն:

Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 25 և ոչ ուշ, քան 20 օր առաջ՝ մինչ և ժամը 18:00-ն (Նախագծի 102-րդհոդված):

Ազգային ժողովի պատգամավորի թեկնածու առաջադրելն ու թեկնածուների գրանցումը

Նախագծի 121-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուներ առաջադրելու իրավունք ունեն կուսակցությունները: Ազգային ժողովի պատգամավորի թեկնածուն կարող է առաջադրվել միայն 1 կուսակցության ընտրական ցուցակով: ԱԺ ընտրություններին մասնակցող կուսակցությունները գրանցման համար փաստաթղթերը Կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացնում քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 55 և ոչ ուշ, քան 45 օրառաջ՝ մինչև ժամը 18:00: ԱԺընտրություններինմասնակցողկուսակցություններիընտրականցուցակներիգրանցումը կատարվումէքվեարկությանօրվանիցոչշուտ,քան 45 նոչուշ,քան 35 օրառաջ՝մինչև 18:00:

Համայնքի ղեկավարի և համայնքի ավագանու անդամի թեկնածուներ առաջադրելն ու թեկնածուների գրանցումը

Նախագծի 126-րդհոդվածիհամաձայն՝ համայնքի ղեկավարին համայնքի ավագանու անդամի թեկնածուներ կարող են առաջադրել կուսակցությունները, ինչպես նաև ընտրվելու իրավունք ունեցող ԱՀ քաղաքացիները՝ ինքնաառաջադրման կարգով: Նախագծի 128-րդհոդվածիհամաձայն՝թեկնածուներիգրանցմանհամարանհրաժեշտփաստաթղթերըտարածքայինընտրականհանձնաժողովենեներկայացվումքվեարկությանօրվանիցոչշուտ,քան 35 նոչուշ,քան 30 օրառաջ՝ մինչևժամը 18:00: Թեկնածուների գրանցումը կատարվում է քվեարկության օրվանից ոչ շուտ, քան 30 նոչուշ, քան 25 օրառաջ՝մինչևժամը 18:00:[1]

Քվեարկությանկազմակերպումըևանցկացումը

Քվեարկության կազմակերման ու անցկացման փուլը ընտրական գործընթացի վճռական փուլն է:

Նախագծի 56-րդ հոդվածի 1-ին մասի համաձայն՝քվեարկությունը,բացառությամբ ընտրական օրենսգրքով սահմանված դեպքերի,անցկացվում է միայն ԱՀ տարածքում կազմավորված տեղամասային կենտրոններում:

Նախագծի 60-րդ հոդվածի համաձայն՝համապետական ընտրությունների դեպքում յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հատկացվում են Հանրապետության նախագահի ընտրությունների քվեաթերթիկների և Ազգային ժողովի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված առանձին առնվազն մեկական քվեատուփեր: ՏԻՄ ընտրությունների դեպքում, յուրաքանչյուր տեղամասային ընտրական հանձնաժողովի հատկացվում է համայնքի ղեկավարի ընտրությունների քվեաթերթիկների և համայնքի ավագանու անդամի ընտրությունների քվեաթերթիկների համար նախատեսված առանձին առվազն մեկական քվեատուփեր:

Նախագծի 66-րդ հոդվածի համաձայն՝ընտրողը քվեարկությանը մասնակցում է անձամբ. լիազորված քվեարկությունն արգելվում է:Յուրաքանչյուր ընտրող գրանցվում է տեղամասային ընտրական հանձնաժողովի՝գրանցման համար պատասխանատու անդամի մոտ գտնվող ընտրողների ցուցակում:

Ձայները հաշվելը, քվեարկության արդյունքները որոշելը

Ձայները հաշվելը, քվեարկության արդյունքները որոշելը հանդիսանում են ընտրությունների ավարտական փուլ:

Նախագծով մանրամասնվել են քվեարկության արդյունքներն ամփոփելու,

[1] *Արցախի Հանրապետության ընտրական օրենսգրքի նախագիծ:*

աղյուսակավորելու, անճշտությունները որոշելու, ընտրությունների արդյունքները ամփոփելու կարգը:

Տեղամասային ընտրական հանձնաժողովի նախագահը քվեարկության օրը ժամը 20:00-ին հայտարարում է քվեարկության ավարտի մասին և արգելում ընտրողների մուտքը քվեարկության սենյակ: Նախագծի 69-րդ հոդվածի համաձայն՝ Տեղամասային ընտրական հանձնաժողովն ընտրական հանձնաժողովի նիստին ներկա լինելու իրավունք ունեցող անձանց ներկայությամբ սկսում է քվեարկության արդյունքների ամփոփման նիստը: Նախագծի 93-րդ հոդվածի համաձայն՝ կենտրոնական ընտրական հանձնաժողովը որոշում է ընդունում այն թեկնածուի՝ Հանրապետության նախագահ ընտրվելու մասին, որին կողմ է քվեարկել թեկնածուներին կողմ քվեարկած ընտրողների թվի կեսից ավելին: 1 թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին: Հանրապետության նախագահի ընտրության 2-րդ փուլում Հանրապետության նախագահ է ընտրվում այն թեկնածուն, որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:

Նախագծի 120-րդ հոդվածի համաձայն՝ազգային ժողովի մանդատները բաշխվում են այն կուսակցությունների ընտրական ցուցակների միջև,որոնք ստացել են կողմ քվեարկված քվեաթերթիկների ընդհանուր թվի և անճշտությունների թվի գումարի համապատասխանաբար առնվազն՝ կուսակցության դեպքում՝ 5, իսկ կուսակցությունների դաշինքի դեպքում՝7 տոկոս կողմ քվեարկված քվեաթերթիկներ:

Նախագծի 136-րդ և 137-րդ հոդվածների համաձայն՝համայնքի ղեկավար է ընտրվում այն թեկնածուն,որին կողմ են քվեարկել առավել թվով ընտրողներ:1 թեկնածու քվեարկվելու դեպքում նա ընտրվում է, եթե կողմ է քվեարկել քվեարկության մասնակիցների կեսից ավելին:Համայնքում ընտրվում են առավելագույն թվով կողմ քվեարկված քվեաթերթիկներ ստացած համապատասխան թվով համայնքի ավագանու անդամի թեկնածուները:

Նոր ընտրական օրենսգիրքի նախագիծը բաղկացած է 3 մասից, 31 գլխից, 141 հոդվածից: Օրենսգիրքը ուժի մեջ է մտնելու 2020 թ-ի հունվարի 1-ին: Օրենսգիրքը ուժի մեջ մտնելու պահից ուժը կորցրած է ճանաչվելու 2014թ-ի հոկտեմբերի 29-ի ընտրական օրենսգիրքը:

ՀՏԴ 341 Իրավագիտություն

Մերի Գրիգորյան
Արցախի պետական համալսարան
Էլ. հասցեն՝ mary.grigorian99@mail.ru

ՄԱՐԴՈՒ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎԱԿԱՆ ՀԻՄՔԵՐԸ

Բանալի բառեր. *մարդու իրավունքներ, միջազգային իրավունք, Սահմանադրություն, հռչակագիր, մարդու իրավունքների պաշտպանություն, միջազգային պայմանագիր, միջազգային իրավունքի սկզբունքներ և նորմեր:*

Հոդվածը նվիրված է մարդու իրավունքների ոլորտում միջազգային և ներպետական իրավունքի փոխգործակցության տեսական-իրավական հիմնախնդիրների հետազոտմանը: Հեղինակի կողմից ուսումնասիրվել են մարդու իրավունքների միջազգային իրավական հիմքերի ձևավորման պատմությունը, մարդու իրավունքների ապահովման բնագավառում պետության պարտավորությունները և միջազգային ստանդարտները, մարդու իրավունքների սահմանափակման հնարավոր սահմանները: Աշխատանքում հեղինակի կողմից վերլուծության են ենթարկվել նաև մի շարք միջազգային իրավական և սահմանադրահիրավական նորմեր նվիրված մարդու իրավունքների պաշտպանությանը :

Мери Григорян

МЕЖДУНАРОДНЫЕ ПРАВОВЫЕ ОСНОВЫ В ОБЛАСТИ ЗАЩИТЫ ПРАВ ЧЕЛОВЕКА

Ключевые слова: *права человека, международное право, Конституция, декларация, защита прав человека, международный договор, принципы и нормы международного права.*

Статья посвящена изучению теоретико-правовых проблем, связанных с взаимодействием международного и внутригосударственного права в области защиты прав человека. Автор изучил историю формирования международно-правовых основ прав человека, обязательства государства и международные стандарты в области защиты прав человека, возможные пределы ограничений прав человека. В работе автор также проанализировал ряд международно-правовых и конституционных норм, посвященных защите прав человека.

Մարդու իրավունքներն արժեք են, որ պատկանում են համաշխարհային հանրությանը: Երկրորդ համաշխարհային պատերազմից հետո համաշխարհային հանրության կողմից սկսվեց ինտենսիվ տեղեկացվածություն մարդու իրավունքների խնդրի կարևորության մասին: Խնդիրն աստիճանաբար միջազգային բնույթ ստացավ, որի արդյունքում սահմանադրական իրավունքը աստիճանաբար սկսեց ընկնել միջազգային ստանդարտների ազդեցության տակ: Այսօր բոլորս տեղյակ ենք, որ մարդու իրավունքները յուրաքանչյուր երկրում, որտեղ նա ապրում է, պաշտպանված են համաշխարհային հանրության կողմից և հանդիսանում են ամբողջ քաղաքակրթության սեփականությունը:

Թեև մարդու իրավունքների հարգման և պահպանման գաղափարն ունի վաղեմի պատմություն, այնուհանդերձ, այն միջազգային հանրության կողմից որպես սոցիալական բարձր արժեք ճանաչվել, ձևավորվել և իրավաբանական պաշտպանության է վերցվել վերջին հարյուրամյակում:

Պատմական տարբեր փուլերում <<մարդու իրավունքներ և ազատություններ>> հասկացության բովանդակությունն ու ծավալը միատեսակ չեն եղել: Մինչև 20-րդ դ. սկիզբը

մարդու իրավունքների վերաբերյալ հարցերը կարգավորվել են առավելապես ներպետական օրենսդրությամբ: Պետություններն ու նրանց իշխանավորներն իրենց հպատակներին ավելի շատ ծանրաբեռնել են պարտականություններով, քան օժտել իրավունքներով:

Հիշյալ շրջանում միջպետական հարաբերություններ կառուցելիս պետություններն անվերապահորեն ելնում էին այն կանխադրույթից, թե պետության և նրա հպատակների փոխհարաբերությունը յուրաքանչյուր պետության ներքին գործն է և չի կարող միջպետական հարաբերությունների հարց հանդիսանալ:

Միաժամանակ, բուրժուական հեղափոխությունների ժամանակաշրջանի սահմանադրությունները, որոնք կրում էին այդ հեղափոխությունների կողմից առաջ քաշված հավասարության և եղբայրության կարգախոսների ազդեցությունը, թեկուզ ձևականորեն, սակայն օրենսդրորեն արդեն հռչակել էին մարդու քաղաքացիական իրավունքների բնական և անօտարելի բնույթը:

Մարդու բնական իրավունքների տեսությունը, որի համաձայն՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքները յուրաքանչյուր անձի ի ծնե պատկանող բնական և անօտարելի իրավունքներ են, բուրժուական հեղափոխությունների մեծագույն նվաճումներից մեկն էր և ընկած էր 1789թ. Մարդու և քաղաքացու իրավունքների Ֆրանսիական հռչակագրի, 1787թ. ԱՄՆ-ի Սահմանադրության և մարդու իրավունքների բնական բնույթը ճանաչող այլ պետությունների կողմից ընդունված օրենսդրական ակտերի հիմքում: Ֆրանսիայի՝ 1789թ. օգոստոսի 26-ի Մարդու և քաղաքացու իրավունքերի վերաբերյալ հռչակագրում մասնավորապես ասվում է.

ա) մարդիկ ծնվում և ապրում են հավասար իրավունքերով:

բ) ազատությունը կայանում է այն ամենն անելու մեջ, ինչը մյուսներին վնաս չի պատճառում:

գ) ոչ ոք չի կարող մեղադրվել, ձերբակալվել կամ կալանվել այլ կերպ, քան օրենքով նախատեսված դեպքերում և օրենքով նախատեսված կարգի պահպանմամբ:

դ) յուրաքանչյուր ոք համարվում է անմեղ, քանի դեռ հակառակը չի ապացուցված:

ե) իր մտքերն ու կարծիքը ազատորեն արտահայտելը մարդու ամենաթանկ իրավունքներից մեկն է, այդ պատճառով յուրաքանչյուր ոք կարող է արտահայտվել, գրել և տպագրվել ազատորեն: Այդ ազատության չարաշահման համար պատասխանատվություն կարող է կիրառվել օրենքով նախատեսված դեպքերում[1]:

Եթե բուրժուական հեղափոխությունները և 19-20-րդ դարերում տեղի ունեցած սոցիալական մյուս խոշոր ցնցումները շատ երկրների կանգնեցրին ժողովրդավարացման ուղու վրա, որով հիմք դրվեց պետությունների ներսում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների ճանաչմանը, ապա Առաջին համաշխարհային, հետագայում նաև Երկրորդ համաշխարհային պատերազմներն առավել ցայտուն բացահայտեցին մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում գործող միջազգային իրավական համակարգի թերությունները: Այդ պատերազմների ընթացքում միլիոնավոր մարդիկ զրկվեցին ամենակարևոր իրավունքից՝ կյանքի, ապրելու իրավունքից:

Ճիշտ է, Ազգերի լիգայի կազմավորումից (1919) հետո ընդունվեցին մի շարք միջազգային համաձայնագրեր, որոնք վերաբերում էին կանանց և երեխաների առևտրի կանխմանը, ստրկության և ստրկավաճառության դեմ պայքարին, զինված ընդհարումների ժամանակ մարդու իրավունքների պաշտպանությանը, սակայն մարդու իրավունքների

[1] *Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագիր, 1789թ. օգ. 26:*

համընդհանուր պաշտպանության միջազգային իրավական սկզբունքի և նորմերի ձևավորման հիմքը դրվեց ՄԱԿ-ի ստեղծմամբ:

1945թ-ի ՄԱԿ-ի կանոնադրության ընդունումը շրջադարձային եղավ մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության գործում: Դրանում մարդու իրավունքների և հիմնական ազատությունների վերաբերյալ հատուկ դրույթների նախատեսումը նպատակ ուներ վերականգնել Երկրորդ համաշխարհային պատերազմի տարիներին միլիոնավոր մարդկանց ոտնահարված իրավունքներն ու ազատությունները:

ՄԱԿ-ի կանոնադրության առաջաբանում նշվում էր, որ միացյալ ազգերի ժողովուրդները վճռել են վերահաստատել հավատը մարդու հիմնական իրավունքների, անհատի արժանապատվության և արժեքի, տղամարդու և կնոջ իրավահավասարության նկատմամբ:

Կանոնադրության 1-ին հոդվածում որպես անդամ պետությունների նպատակ է հռչակվում մարդու իրավունքների և բոլորի համար հիմնական ազատությունների հարգման խրախուսումն ու զարգացումը՝ առանց ռասայական, սեռային, լեզվական և կրոնական խտրականության[1]:

ՄԱԿ-ի կանոնադրությունը մարդու հիմնական իրավունքների և ազատությունների հարգման հարցում ոչ միայն խտրականություն չի դնում սեռային, ազգային, ռասայական կամ այլ հատկանիշների առումով, այլև որևէ տարբերակում չի նախատեսում՝ ինքնիշխան պետության տարածքում բնակվող անձանց և անկախությունից զրկված ազգերի ու ժողովուրդների ներկայացուցիչների միջև:

ՄԱԿ-ի կանոնադրությանը հաջորդեց 1948թ. դեկտեմբերի 10-ին ՄԱԿ-ի Գլխավոր ասամբլեայի կողմից ընդունված Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիրը՝ <<որպես առաջադրանք, որի կատարմանը պետք է ձգտեն բոլոր ազգերը և պետությունները>>: Համընդհանուր հռչակագիրը ճանաչեց մարդու իրավունքների բնական բնույթը և առաջին իսկ հոդվածում հռչակեց, որ <<բոլոր մարդիկ իրենց արժանապատվությամբ և իրավունքներով ծնվում են ազատ և հավասար>>[2]: Չնայած այդ փաստաթուղթը կրում էր հռչակագրի բնույթ, սակայն այն, ըստ էության, բարեխղճորեն կատարվում է անդամ պետությունների կողմից:

ՄԱԿ-ի հովանու ներքո հետագայում ընդունվեցին մարդու իրավունքների պաշտպանության վերաբերյալ բազմաթիվ միջազգային պայմանագրեր, դաշնագրեր և համաձայնագրեր, որոնցով կարգավորվում և պաշտպանվում էին ինչպես մարդկանց առանձին խմբերի (կանանց, երեխաների, ազատազրկվածների, փախստականների և այլն), այնպես էլ անհատ անձանց անձնական իրավունքներն ու ազատությունները:

Մարդու իրավունքների և հիմնական ազատությունների պաշտպանության վերաբերյալ կարևորագույն փաստաթղթեր հանդիսացան Ցեղասպանության ոճրագործության կանխման և դրա համար պատժի մասին 1965թ. դաշնագիրը, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. ընդունված միջազգային դաշնագիրը և դրան կից արձանագրությունը, ինչպես նաև Տնտեսական, սոցիալական և մշակութային իրավունքների մասին 1966թ. դաշնագիրը, 1975թ. ԵԱՀԽ եզրափակիչ ակտը և մարդու իրավունքների վերաբերյալ տարածաշրջանային մյուս կազմակերպությունների ընդունած փաստաթղթերը:

---

[1] *ՄԱԿ-ի կանոնադրություն, 1945թ.:*

[2] *Մարդու իրավունքների համընդհանուր հռչակագիր, 1948թ. դեկ. 10:*

Մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության միջազգային իրավունքի հիմնական աղբյուրները բազմաթիվ համընդհանուր պայմանագրերն են՝ մարդու իրավունքներին վերաբերող կոնվենցիաները: Դրանցում ամրագրված նորմերը միանգամայն ընդհանրացված են, և կոնվենցիաներն իրենք են դարձել միջազգային ընդհանուր իրավունքի մաս[1]:

Պետությունները մարդու իրավունքների վերաբերյալ պայմանագրեր կնքելիս հաճախ իրենց իրավունքների մի մասը կամովին զիջում են միջազգային այնպիսի մարմինների, ինչպիսիք են՝ միջազգային դատարանները, հանձնաժողովներն ու կոմիտեները, որոնք իրավասու են հսկողություն իրականացնել պայմանագրի մասնակից պետության կողմից իր պարտավորությունների կատարման վրա[2]: Սակայն մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության հիմքում ընկած են մի շարք հանրաճանաչ նորմեր, որոնք պետությունները պարտավոր են պահպանել ամենայն բարեխղճությամբ՝ անկախ այդ կապակցությամբ միջազգային կառույցների կողմից իրականացվող վերահսկողությունից: Դրանք են՝ պետությունների ինքնիշխան հավասարությունը, նրանց ներքին գործերին չմիջամտելը, բոլոր մարդկանց իրավահավասարությունը և նրանց նկատմամբ խտրականության արգելումը, բոլոր պետությունների կողմից մարդու իրավունքների և ազատությունների համընդհանուր հարգումն ու պահպանումը, մարդու առանձին իրավունքների ճանաչումը և պաշտպանությունը՝ անկախ ցանկացած արտակարգ իրավիճակից և պայմաններից:

Նշված սկզբունքները պետությունները հաշվի են առնում մարդու իրավունքների վերաբերյալ ինչպես երկկողմ, այնպես էլ բազմակողմ պայմանագրեր կնքելիս: Ընդ որում, եթե կնքվի որևէ պայմանագիր, որը կհակասի նշված և միջազգային իրավունքի մյուս հիմնական սկզբունքներին, ապա նման պայմանագիրը կհամարվի անիրավազոր:

Ներկայումս մարդու իրավունքներին առնչվող տարբեր հարցերի վերաբերյալ կնքվել են վիթխարի թվով միջազգային երկկողմ և բազմակողմ պայմանագրեր: Հայաստանի Հանրապետությունը միացել է ավելի քան 50 միջազգային բազմակողմ պայմանագրերի, որոնք կարգավորում են մարդու իրավունքների պաշտպանությանն առնչվող առավել կարևոր հարաբերությունները:

Մարդու իրավունքների միջազգային իրավական պաշտպանության հիմքում ընկած շատ փաստաթղթեր նախատեսում են, որ մարդու համար կենսական նշանակություն ունեցող իրավունքները պետք է պաշտպանվեն ցանկացած իրադրության դեպքում: Այսպես, Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասին 1966թ. դաշնագրի 4 հոդվածի համաձայն, նույնիսկ պետության մեջ արտակարգ դրության ժամանակ, երբ ազգի կյանքին վտանգ է սպառնում և դրա առկայության մասին հայտարարվում է պաշտոնապես, միևնույն է չի կարելի որևէ շեղում թույլատրել մարդու այնպիսի իրավունքների նկատմամբ, որոնք առնչվում են ռասայական, սեռային, լեզվական, կրոնական և այլ հատկանիշներին, ինչպես նաև չի կարող որևէ կերպ վտանգվել մարդու ապրելու, մտքի, խղճի և կրոնի ազատության իրավունքը, նա չի կարող ենթարկվել խոշտանգումների կամ դաժան, անմարդկային կամ արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի կամ պատժի[3]:

Դրա հետ մեկտեղ, մարդու բնական իրավունքների և ազատությունների վերաբերյալ

---

[1] *Международно – правовые основы обеспечения прав человека в Россиской Федерации, Игнатов Е.А.*

[2] *ՀՀ Սահմանադրական իրավունք, Ն.Ա.Այվազյան, 2008թ.*

[3] *<<Քաղաքացիական և քաղաքական իրավունքների մասի>> միջազգային դաշնագիր, 1966թ.*

միջազգային դաշնագրերին միացած պետությունները պարտավոր են իրենց ազգային օրենսդրության մեջ արտացոլել այդ դաշնագրերում բովանդակված նորմերի պահանջները: Այդ ճանապարհով է ընթացել Հայաստանի Հանրապետությունը, որի Սահմանադրության 2 գլխում (<<Մարդու և քաղաքացու հիմնական իրավունքները և ազատությունները>>) ամրագրված բոլոր նորմերն ընդօրինակված են իր կողմից ստորագրված միջազգային իրավական փաստաթղթերից: Ավելին, Հայաստանի Հանրապետությունը, ելնելով մարդու իրավունքների վերաբերյալ միջազգային իրավական նորմերից և սկզբունքներից, իր Սահմանադրության մեջ նախատեսում է, որ պետական ու հասարակական անվտանգության, հասարակական կարգի, հանրության առողջության ու բարքերի, այլոց իրավունքների ու ազատությունների, պատվի ու բարի համբավի պաշտպանության նպատակով մարդու առանձին իրավունքներ օրենքի հիման վրա կարող են սահմանափակվել, միաժամանակ հատուկ նշելով, որ չեն կարող սահմանափակվել Հիմնական օրենքում նշված մի շարք իրավունքներ ու ազատություններ: Իսկ դրանք վերաբերում են մարդու կյանքի իրավունքին, որ մարդուն չի կարելի ենթարկել խոշտանգումների, դաժան կամ նրա արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի ու պատժի, որ յուրաքանչյուր ոք ունի իր անձնական և ընտանեկան կյանքն անօրինական միջամտությունից, իր պատիվն ու բարի համբավը ոտնձգությունից պաշտպանելու իրավունք և այլն:

Ներկայումս մարդու իրավունքների պաշտպանությունը ճանաչված է որպես միջազգային իրավունքի հիմնական սկզբունք: Սա նշանակում է, որ պետությունները, անկախ իրենց զարգացման մակարդակից, քաղաքական, տնտեսական և սոցիալական կառուցվածքից, պարտավոր են ստանձնել միասնական համընդգրկուն միջազգային իրավական պարտականություններ՝ ի շահ մարդու իրավունքների և ազատությունների պաշտպանության, և դրանք ապահովել յուրաքանչյուրի համար՝ անկախ սեռից, ազգությունից, ռասայից, դավանանքից կամ այլ հատկանիշներից[1]:

Այսպիսով, հարկ է ընդգծել, որ մարդու իրավունքների պաշտպանությունն այսօր իրագործվում է ինչպես ներպետական, այնպես էլ միջազգային իրավական համակարգերի օգնությամբ, որոնք գործում են ոչ թե որպես առանձին, միմյանցից անջատ, այլ մեկ միասնական համակարգի տարբեր ճյուղեր: Ավելին, միջազգային հարաբերությունների զարգացումը, պետությունների տնտեսական և քաղաքական ինտեգրացման խորացումն ի վերջո հանգեցրին նրան, որ այսօր աշխարհի շատ ու շատ երկրներ միարժեք ընդունում են միջազգային իրավունքի առաջնայնությունն իրենց ազգային օրենսդրության նկատմամբ:

[1] *Международно – правовые основы обеспечения прав человека в Россиской Федерации, Игнатов Е.А.*

ՀՏԴ 342.7 Իրավագիտություն

Ани Давтян
магистрант второго года обучения
юридического факультета направления «Корпоративный юрист»,
Российско-Армянский (РАУ) университет, г. Ереван;
e-mail: *davtian.lawyer@outlook.com*

ОРГАНЫ И ТКАНИ ЧЕЛОВЕКА, КАК ОБЪЕКТЫ ГРАЖДАНСКИХ ПРАВ

Ключевые слова: *органы и ткани человека, объекты гражданских прав, изъятые из оборота объекты гражданских прав, гражданские права, донор, новые медицинские виды репродукции.*

В данной статье исследованы вопросы относительно того, являются ли органы и ткани человека объектами гражданских прав, несмотря на то, что на сегодняший день органы и ткани человека изъяты из оборота, в статье приведено множество примером, которые показывают, что в некоторых случаях органы и ткани человека можно считать объектами гражданских прав.

На сегодняшний день органы и ткани человека считаются изъятыми их гражданского оборота и регулируются законом "О трансплантации органов и (или) тканей человека" [1], Федеральным законом "Об основах охраны здоровья граждан в Российской Федерации" [2], законом "О донорстве крови и ее компонентов"[3]. Однако, возникают множество вопросов, которые, к сожалению, вышеперечисленные законы оставили не урегулированными. С развитием науки и медицины, когда органы одного человека могут спасти жизнь другому, необходимо провести законодательные установки и строгое регулирование данного вопроса. Также, с появлением новых медицинских видов репродукции, таких, как суррогатное материнство, экстракорпоральное оплодотворение (ЭКО), Перенос зигот в маточные трубы (ZIFT), и т.д., данный вопрос стал наиболее актуальным, ибо, к примеру, есть возможность найти банки репродукции для совершения искусственного оплодотворения, где донор получает определенную плату, а искусственно оплодотворяемый оплачивает определенную сумму специальной клинике. Также существуют препараты, которые созданы на основе органов человека, к примеру, омолаживающее лекарство лаеннек создается из плаценты женщин. Разве данные сделки не есть гражданско-правовые и почему законодателем они досконально не урегулированы?

Целями данной работы являются выяснения вопроса относительно того, являются ли органы и ткани человека объектами гражданского права или нет, каким образом законодателю необходимо урегулировать данный вопрос, чтобы не происходило преступлений закона (к примеру, убийство человека с целью изъятия у него органов) и может ли человек распоряжаться своими органами посмертно.

Можно ли считать органы и ткани человека объектами гражданских прав? Для того, чтобы дать ответ на данный вопрос, необходимо понять, что из себя представляют объекты гражданских прав.

Исходя из ст.128 Гражданского Кодекса Российской Федерации (далее ГК РФ) [4]: «К объектам гражданских прав относятся вещи, включая наличные деньги и документарные ценные бумаги, иное имущество, в том числе безналичные денежные средства, бездокументарные ценные бумаги, имущественные права; результаты работ и оказание услуг; охраняемые результаты интеллектуальной деятельности и приравненные к ним средства индивидуализации (интеллектуальная собственность); нематериальные блага» [5]. Закон дает не исчерпывающий перечень объектов гражданского права и придерживаясь данной логики, можно считать, что

органы и ткани можно отнести к особым объектам гражданских прав. Но, прежде чем перейти к данной идее, стоит отметить также точку зрения некоторых отечественных юристов, которые причисляют органы и ткани к вещному праву или не считают объектами гражданских прав вовсе.

Вещным правом является абсолютное гражданское право лица, предоставляющее ему возможность непосредственного господства над вещью и отстранения от нее всех других лиц, защищаемое специальными гражданско-правовыми исками[6].

Вещные права, а именно, право собственности, определяется триадой таких атрибутов, как владение, пользование, распоряжение. Владение представляет из себя обеспеченную законом возможность обладать вещью, иметь ее у себя физически, господствовать над нею [7]. Пользование- это установленная законом возможность извлекать из вещи полезные свойства. А распоряжение- это возможность определять юридическую судьбу вещи, к примеру отчуждать, уничтожать (если данное уничтожение не нарушает прав иных лиц) и т.д.

Характерными чертами вещного права являются абсолютный характер, право следования и явление индивидуально-определенной вещью.

Абсолютный характер защиты вещи представляет из себя обязанность неопределенного круга лиц воздерживаться от нарушения прав владельца. Можно ли считать данную черту вещного права характерной для органов и тканей человека? Отчасти да, так как иные лица не имеют права каким-либо образом нарушать телесную неприкосновенность лица, а нелегальная трансплантация органов человека карается уголовным законом (УК РФ, Статья 120. Принуждение к изъятию органов или тканей человека для трансплантации [8])!

Право следование представляет из себя переход обременений данного права при переходе вещи (к примеру, в случае с залогом). Данная черта вряд ли подходит к органам и тканям, ибо закрепление законодательно возможности сдать в залог свои органы или обеспечить ими кредит в банке является не только не целесообразным, но и не этичным.

Относительно индивидуально-определенности можно заметить, что достаточно спорно причисление органов и тканей к индивидуально-определенной категории ибо несмотря на то, что органы и ткани каждого человека отличается определенными признаками, которые присуще только ему, некоторые из них могут быть с легкостью заменены другими, что присуще родовой категории вещей. К примеру, в случае необходимости, человеку делается операция и ему устанавливают иное сердце или же переливается чужая кровь.

Профессор Сергеев определяет вещь следующим образом: «данные природой и созданные человеком ценности материального мира, выступающие в качестве объектов гражданских прав [9]». Исходя из данного определения, можно сделать вывод, что органы и ткани человека подходят под вышеупомянутое понятие вещи. Но, естественно, оно распространяется исключительно на те органы и ткани, которые посредством хирургического или иного медицинского вмешательства являются извлеченными из тела человека. Ибо в противном случае, органы составляют единым целым человеческого организма и самого человека, которого, в данном случае ни в коем случае нельзя считать объектом права, так как человек- это субъект права.

Данное мнение подтверждает также апелляционное определение Мосгорсуда от 16 сентября 2013 г., в котором констатированы следующие обстоятельства: «истец обжаловала решение суда первой инстанции в той части, в которой оно признало законным изъятие Городской клинической больницей органов ее дочери без предварительного согласия. Она аргументировала это следующим: «Органы человека являются целой и неделимой частью самого человека, а в течение всей жизни человек имеет право как пользования, так и распоряжения своими органами, что является одним из квалифицирующих признаков собственности. Ввиду того, что человек является полноправным собственником своих органов, то в соответствии с действующим законодательством, а именно в соответствии со ст.1110, 1112 ГК РФ истец, считая себя единственным наследником погибшей дочери, полагает, что ответчик, произведя трансплантацию органов, нарушил ее права как наследницы всего, чем владела погибшая [10]».

С данными доводами судебная коллегия не согласилась, мотивировав это тем, что органы человека, которые имеются у него с момента рождения, действующее законодательство к вещам не относит, следовательно, они не могут входить в состав наследственной массы, в связи с чем, требования истца удовлетворению не подлежат [11]».

Но определение Апелляционной коллегии Мосгорсуда можно считать спорным, так как человеку дано право определять судьбу своих органов посмертно, о чем более подробно будет ниже.

Но насколько правильно применять к органам и тканям атрибуты содержания вещного права, а именно права собственности? Владение, пользование и распоряжение? Насколько правильно давать субъекту право, к примеру, распоряжаться своими органами?

В Белорусской Республике представлены более современные взгляды на сей счет, а именно в законе от 1997г. «О трансплантации органов и тканей человека [12]», устанавливается, что органы и ткани «не могут быть объектом гражданско-правовых сделок, за исключением сделок, носящих безвозмездный характер [13]».

Мнения ученых разделились, так как есть ученые, которые действительно считают, что произведение безвозмездных сделок относительно своих органов является допустимым, видимо, белорусский законодатель того же мнения.

В Конвенции «О защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине [14]» 1997 года (далее Конвенция 1997г.) в ст. 21 говорится следующее: «Тело человека и его части не должны в качестве таковых являться источником получения финансовой выгоды [15]». К сожалению, Российская Федерация не является членом данной конвенции и конвенционным путем не ставит запретов на извлечение финансовой выгоды от сделок с человеческим телом и его частями, то есть, органами и тканями.

Российский законодатель в законе РФ «О донорстве крови и ее компонентов [16]» указал возможность возмездного донорства, то есть, получение выгоды от передачи своей крови и ее компонентов, а именно посредством отказа от бесплатного питания донора с заменой на денежную сумму.

Но можно ли считать данные действия договором купли-продажи, ведь подобными действиями донор продает не кровь и ее компоненты, а всего лишь получает гарантию обеспечения быстрой регенерация и восстановление здоровья. Ведь после сдачи крови донор нуждается в употреблении специальных продуктов, помогающих восстановить потерянное, так как в противном случае возможно плохое самочувствие, обмороки и т.д. Убедительным считается в данном случае мнение профессора М.Н. Малеиной, исходя из которой возмездную сделку донорства следует считать «не разновидностью договора купли-продажи, а договором sui generis».

Что же касается репродуктивных тканей человека, необходимо заметить, что данный аспект законодателем фактически не урегулирован и возможность возмездного донорства на основе договорных начал имеет место быть. По первой же ссылке в Информационно-коммуникационной сети (далее Интернет) можно найти сайт Банка репродуктивных тканей (далее Репробанк), в котором можно с легкостью посредством заключения договора приобрести необходимое (сперму или яйцеклетку [17]).

В одной из научных статей посвященных данной теме, автор отмечает: «Основное отличие исследуемого объекта от крови и ее компонентов заключается в том, что забор, например, спермы возможен лишь в пределах, определенных физиологической нормой, в то время как донорство крови ограничено медицинскими критериями, когда ценой ошибки может стать угроза здоровью человека. Поэтому применение модели договора купли-продажи в отношении репродуктивных тканей представляется вполне обоснованным [18]».

Так как репродуктивное донорство является на сегодняшний день очень актуальным, не носит вреда организму, создает возможность определенным людям, лишенных возможности создания

дальнейшего поколения приобретать это, стоит, законодательно урегулировать данный вопрос, так как фактически существующие реалии не урегулированы со стороны законодателя.

Думаем, что органы и ткани человека следует разделить на несколько категорий. Донцов Д.С. предложил классификацию по определенным качествам. Им были выделены две группы. В первую группу Донцов включил такие органы и ткани, «при отделении которых либо не происходит каких-нибудь неблагоприятных изменений в организме человека (например, ногти, волосы, продукты выделения и т.д.), либо, если изменения происходят, то они носят временный характер и не имеют серьезных последствий для здоровья человека [19]». Ко второй группе им были причислены такие «органы и ткани, изъятие которых либо невозможно вовсе, т.к. это неизбежно приведет к смерти человека, либо такое изъятие может быть чревато неблагоприятными для здоровья последствиями [20]».

Вернемся к определению апелляционной инстанции Мосгорсуда, в котором Суд не посчитал органы и ткани человека вещами и посчитал невозможным к причислению их в наследственную массу. Однако, данной решение является спорным ибо как было упомянуто ранее, исходя из презумпции согласия на изъятие органов и тканей у трупов, лицо имеет право в течение своей жизни письменным подтверждением отказать медицинским учреждениям в данном праве. Не выходит ли из этого, что человек все же имеет право распоряжаться своими органами?

Данная презумпция вызывает массу критики, так как множество граждан даже не знают об существовании таковой, это выходит и из статистических данных проведенных в итоге опроса среди 206 граждан Российской Федерации и Республики Армения.

Исходя из проведенного опроса, стало известно, что 51,5% (106 человек) из числа опрошенных не знают о существовании данной презумпции, 37,4% (77 человек)- знают о ней, а 11,2% (23 человека)- затруднились ответить вовсе.

Почему государство не дает право лицу решать кому посмертно могут быть переданы его органы? Естественно, государство исходит из общественного интереса, ведь при смерти человека может возникнуть ситуация, в которой будет немедленно необходим орган, который у него здоров. Орган трансплантируется и реципиент посредством хирургического вмешательства получает возможность восстановления своего здоровья. В случаях, если бы лицо имело право, к примеру, завещать свои органы посмертно, оно могло было быть унаследовано лицам, которые, в принципе, не имели никакой необходимости для хирургического вмешательства и замене органов нездоровых на здоровые.

В другой ситуации, если человек бы имел каких-либо близких людей, действительно нуждающихся в данных органах, то, думается, что мнение донора все же стоило бы учесть, однако, если бы это делалось путем завещания, то пока бы завещание открылось, возможно, срок хранения органов истек бы (возможным сроком хранения считается двое суток [21]).

Для того, чтобы не было подобных случаев, считаем, что просто необходимо

усовершенствовать сложившийся подход. Так как сейчас существуют очереди за получением необходимых органов и тканей и доставляются они по необходимости, а множество граждан не в курсе о существовании презумпции на извлечение органов и тканей у трупов, государство должно обеспечивать максимальное знание данной презумпции, люди должны извещаться и давать свое не согласие на случай не желания извлечения органов посмертно.

Исходя из ст.11 Закона «О трансплантации органов и (или) тканей человека» изъятие органов у живого донора допускается исключительно при генетической связи, за исключением случаев с костным мозгом. Считаем, данное ограничение нарушением прав доноров, так как при соблюдение всех названных законодателем условий, а именно: «если донор предупрежден о возможных осложнениях для его здоровья в связи с предстоящим оперативным вмешательством по изъятию органов и (или) тканей;

если донор свободно и сознательно в письменной форме выразил согласие на изъятие своих органов и (или) тканей;

если донор прошел всестороннее медицинское обследование и имеется заключение консилиума врачей-специалистов о возможности изъятия у него органов и (или) тканей для трансплантации [22]»,- то внесение ограничений на выбор лица, которому передается орган или ткань, является нарушением прав доноров. Исходя из опроса 43,7% считают, что стоит совершать безвозмездные сделки с органами, то есть, закрепление возможности донора выбрать реципиента вне зависимости от генетической связи позволит реализовать данное право.

Исходя из всего вышеназванного, а также перечисленных классификаций, можно сделать вывод, что, органы и ткани человека являются единым целым организма, когда не трансплантированы, а после того, как они трансплантируются из организма донора становятся самостоятельным особым объектом права. Причисление их к вещам является спорным, но все же. То есть, органы и ткани делятся на три категории- те, которые находятся в теле человека- являются составной частью субъекта права; те, которые изъяты из организма- особые объекты гражданского права; и наконец те, извлечение в определенных урегулированных количествах которых не носит никакого вреда для организма (кровь, сперма, яйцеклетка и т.д.), некоторые ученые выделяют еще одну категорию- называя их «отходами» и причисляют к ним состриженные ногти, волосы и т.д.

Так как не все содержимое атрибутов права собственности распространяется на органы и ткани человека- а именно, владение, пользование и распоряжение,- сложно назвать органы и ткани собственностью человека как до так и после их извлечение. Но если лицо при жизни в случае необходимости имеет возможность при генетическом родстве распоряжаться своим органом, это значит, что право распоряжения в ограниченном порядке все же присутствует как до извлечения органа, так и после.

Исходя из статистических данных проведенного опроса среди жителей Республики Армения и Российской Федерации, в котором приняли участие 206 человек и ответили на данный вопрос 190, выявилось, что 27,7% (53 человек) считают, что органы и ткани не являются объектами гражданских прав; 24,1% (46 человек) посчитали, что органы и ткани, все же, являются объектами гражданский прав; 23% (44 человек) отнесли их к особым объектам гражданского права; а 25,1% (48 человек) вовсе затруднились дать ответ на вышеуказанный вопрос.



Считаем, что органы и ткани человека стоит причислить к категории особых объектов гражданского права. Особые объекты обладают специальными, различающими их от иных объектов гражданского права признаками. Так как органы и ткани человека являются биологическими объектами, являются составляющей человеческого тела и организма, то есть- составной частью субъекта права и могут быть отчуждены исключительно после извлечения их из организма и в предусмотренных законом случаях- то есть, они еще и ограничены в обороте, то, сгруппировав данные признаки, можно прийти к выводу, что органы и ткани являются особыми объектами гражданских прав.

ЛИТЕРАТУРА

1. Закон РФ от 22 декабря 1992 г. N 4180-I "О трансплантации органов и (или) тканей человека" (с изменениями и дополнениями);
2. Федеральный закон "Об основах охраны здоровья граждан в Российской Федерации" от 21.11.2011 N 323-ФЗ (последняя редакция);
3. Федеральный закон "О донорстве крови и ее компонентов" от 20.07.2012 N 125-ФЗ (последняя редакция);
4. Гражданский кодекс Российской Федерации (ГК РФ)// 30 ноября 1994 года N 51-ФЗ;
5. ст. 128 Гражданского кодекса Российской Федерации (ГК РФ)// 30 ноября 1994 года N 51-ФЗ;
6. http://www.studfiles.ru/preview/6304981/page:27/;
7. http://studbooks.net/970863/pravo/vladenie_polzovanie_rasporyazhenie_imuschestvom;
8. ст. 120 "Уголовный кодекс Российской Федерации" от 13.06.1996 N 63-ФЗ (ред. от 17.04.2017);
9. Абрамова Е.Н, Аверченко Н.Н, Байгушева Ю.В, Под ред. Сергеева А.П. Гражданское право. В 3-х томах. М.: 2010, Т. 1 1008 с.;
10. Апелляционное определение Московского городского суда от 16 сентября 2013 г. по делу №11-27391 В удовлетворении требований о признании операции по изъятию органов незаконной, взыскании компенсации морального вреда отказано правомерно, т.к. на момент констатации биологической смерти и на момент непосредственно процедуры изъятия органов для трансплантации никто из близких родственников или законных представителей умершей не сообщил о несогласии умершей на посмертное изъятие органов;
11. http://femida-science.ru/index.php/home/vypusk-2/item/66-transplantatsiya-organov-i-tkanej-cheloveka-grazhdansko-pravovye-voprosy
12. Закон Республики Беларусь «О трансплантации органов и тканей человека» от 4 марта 1997 г. № 28-З;
13. Закон Республики Беларусь «О трансплантации органов и тканей человека» от 4 марта 1997 г. № 28-З;

14. СОВЕТ ЕВРОПЫ КОНВЕНЦИЯ «О ЗАЩИТЕ ПРАВ И ДОСТОИНСТВА ЧЕЛОВЕКА В СВЯЗИ С ПРИМЕНЕНИЕМ ДОСТИЖЕНИЙ БИОЛОГИИ И МЕДИЦИНЫ: КОНВЕНЦИЯ О ПРАВАХ ЧЕЛОВЕКА И БИОМЕДИЦИНЕ» (ETS N 164) (Овьедо, 4 апреля 1997 года)
15. ст.21 Конвенции «О защите прав и достоинства человека в связи с применением достижений биологии и медицины: Конвенция о правах человека и биомедицине»
16. Федеральный закон от 20.07.2012 N 125-ФЗ (ред. от 23.05.2016, с изм. от 19.12.2016) "О донорстве крови и ее компонентов"
17. см. подробнее на http://reprobank.ru/bank-donorov/stoimost-spermy-i-yajcekletok#
18. ВЕЩНО-ПРАВОВОЙ СТАТУС ОРГАНОВ И ТКАНЕЙ ЧЕЛОВЕКА: ДИФФЕРЕНЦИРОВАННЫЙ ПОДХОД К РАЗРЕШЕНИЮ ПРОБЛЕМЫ // Молодежный научный форум: Гуманитарные науки: электр. сб. ст. по материалам XVIXVII студ. междунар. заочной науч.-практ. конф. — М.: «МЦНО». — 2014 —№ 9-10(16) / [Электронный ресурс] — Режим доступа. — URL: https://nauchforum.ru/archive/MNF_humanities/9-10(16).pdf
19. Донцов Д.С. Органы и ткани человека как объекты вещного права в РФ // Медицинское право. 2009. №2. С. 22.
20. Донцов Д.С. Органы и ткани человека как объекты вещного права в РФ // Медицинское право. 2009. №2. С. 22.
21. см. подробнее о сроке хранения органов http://travmaorto.ru/238.html
22. Закон РФ от 22 декабря 1992 г. N 4180-I "О трансплантации органов и (или) тканей человека" (с изменениями и дополнениями)

Լուսինե Թադեվոսյան
Ռուս – Հայ (Սլավոնական) համալսարանի
իրավագիտության մագիստրոս և
ՀՀ Սնանկության դատարանի իրավական
ծառայությունների գլխավոր մասնագետ
համահեղինակությամբ
գիտությունների թեկնածու՝ ***Կ.Մ. ՀՈՎՀԱՆԻՍՅԱՆ***

ՍՆԱՆԿՈՒԹՅԱՆ ՎԱՐՈՒՅԹԻ ԻՐԱՎԱԿԱՆ ՈՐՈՇ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ ԵՎ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆՆ ԱՅԼ ԵՐԿՐՆԵՐԻ ՀԵՏ

Բանալի բառեր՝ *անվճարունակություն, սնանկության ինստիտուտ, օտարերկրյա օրենսդրություն, իրավական գործիքներ, դատավարություն:*

Հոդվածում ուսումնասիրվել են սնանկության վարույթի որոշ հիմնախնդիրներ՝ թե դատավարական և թե նյութական, և տրվել են դրանց լուծումները: Փորձ է արվել նաև համեմատել Հայաստանում գործող սնանկության մասին օրենսդրությունը և զարգացած իրավական համակարգ ունեցող որոշ երկրներում սնանկության վարույթի առանձնահատկությունները:

Лусине Тадевосян
в соавторстве с К. ю. н. ***К.М. Оганисян***

НЕКОТОРЫЕ ПРОБЛЕМЫ БАНКРОТСТВА В АРМЕНИИ И СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ С ДРУГИМИ СТРАНАМИ

Ключевые слова: *несостоятельность, институт банкротства, зарубежное законодательство, правовые инструменты, судебный процесс.*

В статье рассматриваются некоторые проблемы процедур банкротства, как процессуальные, так и материальные и данны их решения. Также была предпринята попытка сравнить законодательство о банкротстве в Армении и особенности процедур банкротства в некоторых странах с развитыми правовыми системами.

Սնանկացման գործընթացի կարգավորումը տնտեսության կառավարման կարևորագույն գործիքներից մեկն է: ՀՀ-ում շուկայական առևտրային հարաբերությունների զարգացմանը համընթաց, բազմակի փուլեր անցնելով, ձևավորվել է նաև սնանկացման կարգավորման համակարգը:[1]

Իհարկե հարկ է նշել, որ առկա է անհրաժեշտություն ընդհանուր սնանկության համակարգը բարելավելու, կլինի դա նոր օրենք/օրենսգիրք ընդունելով, թե հստակեցնելով սնանկության օրենքի նպատակները: Բացի այդ, անհրաժեշտ է զարգացնել կառավարիչների ինստիտուտը, նաև ճիշտ կլինի բարձրացնել քաղաքացիների իրավագիտակցությունը, ինչը կնպաստի սնանկության գործերի քանակի կրճատմանը:

Նախնառաջ նշենք, որ անցկացնելով հարցումներ՝ պարզեցինք, որ սնանկության խնդիրներից առաջնային են **համակարգային** խնդիրները, մասնավորապես՝ *բարձրացված շահերի գերակայության հարցը*՝ պարտապան, պարտատեր, թե բիզնես միջավայրի առողջացում: Բիզնես միջավայրի համար առաջնային նպատակն է նվազագույնի հասցնել

[1] http://ysu.am/files/05V_Sargsyan.pdf.

ակտիվների ոչնչացումը:

Անդրադառնանք մեկ այլ կարևորագույն խնդրի, այն է՝ լուծարման փուլում է, **հնարավորություն չի տրվում կազմակերպության առողջ մասն առանձնացնել և վաճառել,** ինչը հնարավոր է միայն առողջացման փուլում: Իսկ դրա հնարավորության դեպքում Ընկերությունը միանգամից չէր լուծարվի այլ կկարողանար առողջանար, ինչպես նաև կստանար բավականին եկամուտներ: Այս ամենը կաջակցեր կազմակերպությունների հետագա տնտեսաիրավական աճին:

Էրջագույն խնդիրներից է նաև **սեփականության իրավունքի պաշտպանության հարցը**, մասնավորապես՝ *գույքի գնահատման ինստիտուտը, թե գրավադրվելիս այն ինչպես է գնահատվում, և հետագայում աճուրդի դնելու հարցերը:*

Օրինակ, ֆիզ. անձինք, գրավադնում են իրենց գույքը, պահանջատերերի գույքի իրացումի հետո առաջանում է հարկային պարտավորություն, որի կրողը գույքի սկզբնական սեփականատերն է, այսինքն՝ գույքը գրավ դրած ֆիզիկական անձը:

Վերջինս շատ դեպքերում տեղյակ էլ չի լինում, որ ունի հարկային պարտավորություն: Հարկ ենք համարում նշել, որ երրորդ անձի իրավունքների հետ կապված խնդիները մենք դիտարկում են այն տեսանկյունից, երբ վերջինս **պարտապան չի հանդիսանում, սակայն նրա** գույքն իրացվում է**:**

Անգամ օրենքում այդ ֆիզ. անձի իրավունքների մասին ոչ մի դրույթ առկա չէ, նույնիսկ այդ մարդուն ծանուցելու պարտավորություն չկա, ինչը խախտում է մարդու իրավունքները, որը ամրագրված է *<<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայում:*

Այս հարցի վերաբերյալ իր գույքը գրավադրած երրորդ անձին ծանուցման հետ կապված ՀՀ վճռաբեկ դատարանն ունի մի շարք նախադեպային որոշումներ, որոնց մեկը կայացվել է **թիվ ԵՇԴ/0072/04/17** սնանկության գործով:

Վճռաբեկ դատարանի վերը նշված որոշման համաձայն՝ <<Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին>> եվրոպական կոնվենցիայի (այսուհետ՝ Կոնվենցիա) թիվ 1 արձանագրության 1-ին հոդվածի համաձայն՝ յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել սեփական գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմանների, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով: Վճռաբեկ դատարանը կարևորում է այն հանգամանքը, որ թեև <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքն ուղղակիորեն չի պարտավորեցնում սնանկության գործով կառավարչին՝ ապահովված պահանջների դեպքում ծանուցելու նաև երրորդ անձանց, ում գույքով է ապահովված համապատասխան պահանջը, իսկ <<Սնանկության մասին>> ՀՀ օրենքի 43-րդ հոդվածը նախատեսում է միայն կառավարչի, պարտապանի և պարտատերերի կողմից պահանջների նախնական ցուցակի դեմ առարկություն ներկայացնելու հնարավորություն, այդուհանդերձ, անհրաժեշտ է կարևորել այն հանգամանքը, որ երրորդ անձը (մասնավորապես գրավատուն) պետք է իրական հնարավորություն ունենա տեղեկացված լինելու ներկայացված պահանջի մասին՝ անհրաժեշտության դեպքում ներկայացնելով առարկություն՝ նկատի ունենալով, որ ապահովված պահանջի հաստատումն ուղղակիորեն առնչվում է երրորդ անձի սեփականության իրավունքին և այդ իրավունքի դատական պաշտպանությանը:[1]

[1] *Տե՛ս թիվ ԵՇԴ/0072/04/17, Վճռաբեկ դատարանի դիրքորոշումը:*

Վճռաբեկ դատարանի նման դիրքորոշումը համապատասխանում է նաև ՀՀ Սահմանադրական դատարանի 19.07.2016 թվականի **թիվ ՍԴՈ-1294 Սահմանադրական դատարանի որոշմամբ** արտահայտած դիրքորոշմանը: Նշված որոշմամբ քննարկելով ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 249-րդ հոդվածի (Գրավ դրված գույքի վրա առանց դատարան դիմելու բռնագանձում տարածելու կարգը) սահմանադրականությունը՝ ՀՀ սահմանադրական դատարանը մասնավորապես կարևորել է, որ օրենսդրի կողմից գրավառուի՝ գրավատուին պատշաճ կարգով ծանուցելու պարտականության ամրագրումը նպատակ է հետապնդում երաշխավորելու գրավատուի դատական պաշտպանության իրավունքը:[1]

Օրենսդրական խնդիրներից կարելի է առանձնացնել սնանկության վարույթ սկսելու համար նախապայման հանդիսացող 1 մլն դրամ պարտավորության առկայությունը՝ նախատեսված թե ֆիզիկական անձի համար, թե՝ իրավաբանական:

Այս նորմը վիճելի է, քանի որ կազմակերպությունները համարյա միշտ էլ կարող ենունենալ մեկ միլիոնից ավել պարտք:

Մենք կարծում ենք, որ այս նորմը փոփոխման կարիք ունի իրավաբանական անձի մասով, այն է՝ կազմակերպությունների չվիճարկվող պարտավորության չափը սահմանանել 2 մլն դրամ:

Օրենսդրական բացերից է նաև հետևյալը:

Սնանկության մասին գործող օրենքի համաձայն՝ սնանկության վարույթ սկսելու վերաբերյալ դիմումը վարույթ ընդունելուց հետո **պարտապանին արգելվում է առանց դատարանի որոշման իր պարտավորությունների կատարումը:** Մյուս կողմից, հարկային օրենսգրքի համաձայն՝ դիմումը վարույթ ընդունվելիս տույժերը դեռևս չեն կիրառվում: Հարկ վճարողի կողմից միլիոնից ավելի պարտք կուտակելու դեպքում պետական մարմինների վրա որոշակի ժամկետում սնանկության դիմում ներկայացնելու պարտականություն է դրված: Անձը սնանկության որոշումը դատարանից ստանալուց անմիջապես հետո ցանկություն է հայտնում բանկի միջոցով կատարել գումարի վճարում, սակայն օրենքն ասում է, որ դա կարող է իրականացվել դատարանի որոշմամբ: Գործնականում, սնանկության կառավարիչները նման վճարման կատարման մասին տեղեկանալուց անմիջապես հետո պահանջում են, որ տվյալ պետական մարմինն այդ գումարը հետ փոխանցի սնանկության հատուկ հաշվեհամարի վրա, այնինչ, որոշ դեպքերում պետական մարմինը, տեսնելով, որ անձը վճարել է ոչ միայն պարտքը, այլ նաև տույժերը, հետ է վերցնում սնանկության վարույթ սկսելու մասին դիմումը, ինչն իրականում միանշանակ չի կարող մեկնաբանվել իրավական տեսանկյունից: **Հիմա օրենքը արգելում է ցանկացած վճարային պարտավորություն, բացառությամբ առողջացման ծրագրի:** Համաձայն Սնանկության մասին օրենքի՝ առողջացման ծրագիրը տևում է 45 օր, հետո հրավիրվում է առաջին ժողով, ու նոր հաստատվում է: Այսինքն, եթե անձն այս ընթացքում ցանկանում է թեկուզ իր ընթացիկ վճարումները կատարել, նա չի կարող անել դա, քանի որ օրենքի մեջ առկա է այդ բացը: Մասնագետները խնդիր են տեսնում սեփականության իրավունքի միջամտության հարցում, երբ երրորդ անձի գրավի սեփականատերը անմասն է: Օրենքը չունի կարգավորումներ:[2]

Կարևոր նաև քննարկել մի շարք հարցեր, որոնք կապված են օրենսդրության կիրառման

[1] *Տե՛ս թիվ ՍԴՈ-1294 Սահմանադրական դատարանի արտահայտած դիրքորոշումը:*
[2] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=76772 :

հետ, մասնավորապես՝ *դատավարական ժամկետների*: **Որպես** օրինակ նշենք, սնանկության **ժամանակավոր կառավարչի ինստիտուտը**, որը ըստ մասնագետների՝ անիմաստ է, քանի որ **կամավոր սնանկության դեպքում** պարտապանը անգամ սնանկության ժամ. կառավարիչ չի էլ նշանակում:

Համաձայն «Սնանկության մասին» օրենքի 3-րդ հոդվածի՝ պարտապանը կարող է սնանկ ճանաչվել դատարանի վճռով՝ սեփական նախաձեռնությամբ (կամավոր սնանկության դիմում) կամ պարտատիրոջ պահանջով (հարկադրված սնանկության դիմում), եթե պարտապանն անվճարունակ է:

Նույն օրենքի 13-րդ հոդվածի համաձայն՝ դիմումը վարույթ ընդունելու մասին դատավորը կայացնում է որոշում: Դիմումը վարույթ ընդունելու հետ միաժամանակ՝ սույն հոդվածի 2.1-ին մասով սահմանված կարգով դատարանը նշանակում է սնանկության **ժամանակավոր կառավարիչ:**

Համաձայն 2.1. կետի՝ Սույն հոդվածի 2-րդ մասով նախատեսված դեպքում դատարանը որպես սնանկության ժամանակավոր կառավարիչ նշանակում է՝ բ) **կամավոր սնանկության** դիմումով հարուցված գործի դեպքում՝ կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպության կողմից սույն օրենքի 22-րդ հոդվածով սահմանված կարգով ներկայացված թեկնածուին: Ընդ որում, դատարանը ժամանակավոր կառավարչի թեկնածություն ներկայացնելու պահանջագիրը կառավարիչների ինքնակարգավորվող կազմակերպություն է ներկայացնում **դիմումը վարույթ ընդունելու մասին որոշում կայացնելուց հետո՝ մեկ աշխատանքային օրվա ընթացքում:**

Համաձայն «Սնանկության մասին» օրենքի 16-րդ հոդվածի՝ պարտապանի կամավոր սնանկության դիմումը վարույթ ընդունելու պահից ոչ ուշ, քան 3 օրվա ընթացքում դատավորն առանց դատական նիստ հրավիրելու վճիռ է կայացնում պարտապանին սնանկ ճանաչելու մասին, եթե պարտապանն առերևույթ անվճարունակ է:[1]

Վերոգրյալից հարց է առաջանում, թե **ի՞նչ է անում ժամանակավոր կառավարիչը,** եթե անգամ ֆինանսական վերլուծություն չի հասցնում անել, քանի որ կառավարչին փաստաթղթեր տրամադրում են հիմնական կառավարիչ նշանակելուց հետո:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

- Նախատեսել իրավական ընթացակարգ՝ արտադատական կարգով կազմակերպությանը սնանկ ճանաչելու համար այն դեպքերում, երբ ակնհայտորեն բացակայում են կեղծ սնանկության հատկանիշներ, իսկ անձը նպատակահարմար չի գտնում դիմելու առողջացման ծրագրի համար:
- Բարձրացնել սնանկության կառավարիչների անկախությունը և մասնագիտական հմտությունները, ինչը կհանգեցնի վերջիններիս անկախ գործունեության ապահովմանը և դատարանների ազդեցության բացառմանը:
- Սնանկության կառավարիչների գնահատման, պատասխանատվության կանչելու և խրախուսման մեխանիզմներ ներդնել, որոնց չափման ստանդարտները կարող են լինել ոչ միայն իրականացված գործողությունների որակը, այլ նաև ժամկետները, մասնավորապես՝ որոշ գործողություններն ինչ ժամկետում են կատարվել և արդյոք դրանք ողջամիտ են և համապատասխանում են օրենքի պահանջներին:

[1] *Տե՛ս Սնանկության մասին ՀՀ օրենք /2018թ./:*

- Ավելացնել սնանկության դատարանի դատավորների և նրանց աշխատակազմի թվաքանակը, վերջիններս կնպաստեն գործերի ավելի խորը ուսումնասիրության և մի շարք թղթաբանությունների արագացմանը:
- Սահմանել լրացուցիչ օրենսդրական պահանջներ, որոնց առկայությունը պարտադիր նախապայման է սնանկության գործընթաց սկսելու համար, ինչը կբացառի այնպիսի մի իրավիճակներ, երբ սնանկության ուղով գնալը դարձել է առաջացած պարտավորությունների կատարումից խուսափելու միջոց /միտումնավոր սնանկություն/:
- Ճիշտ կլինի վերահսկողական գործառույթներ տալ պետական մարմիններին՝ սնանկության հատկանիշների վաղաժամկետ բացահայտման նպատակով:
- Սնանկության ինստիտուտը պետք է հստակեցնել, սակայն ոչ թե օրենքում փոփոխություն մտցնելով, այլ մեր կարծիքով հարկավոր է ընդունել նոր սնանկության մասին օրենք, իսկ ավելի ճիշտ՝ օրենսգիրք, դա կկարգավորի ինչպես սնանկության վարույթը և դատարանի գործողությունները, այնպես էլ սնանկության կառավարիչների աշխատանքը, պարտապանների և պարտատերերի գործողությունները:

Սնանկության իրավական կարգավորումը տարբեր երկրներում զգալիորեն տարբերվում է:

Այս տարբերությունները կարող են կապված լինել սնանկության չափանիշների հետ՝ այն անձանց շրջանակը, որոնք կարող են սնանկ ճանաչվել, սնանկության վարույթի ընթացքում կատարվող գործողությունները; պարտատերերի որոշակի կատեգորիայի սնանկության առանձնահատկությունները, սնանկության դատավարության կանոնները և այլն:

Տարբեր երկրների տնտեսությունների միջազգայնացման համատեքստում, երբ անվճարունակ պարտապանն ու պարտատերերն ունեն տարբեր ազգություններ, կամ պարտատերերի կողմից գանձվող անվճարունակ պարտապանի գույքը գտնվում է տարբեր երկրներում, սնանկության իրավական կարգավորման ազգային համակարգերի տարբերությունները լուրջ խոչընդոտ են՝ պարտապանին սնանկ ճանաչելու հետ կապված հարաբերությունների կարգավորման համար և պարտատերերի պահանջների բավարարվածության հետ կապված կարգավորումները: Միջսահմանային կամ միջազգային, սնանկության խնդիր կա:

Կրճատ կներկայացնենք որոշ երկրներում սնանկության կառավարիչների իրավունքներն ու լիազորությունները և Մեծ Բրիտանիայի սնանկության վարույթի որոշ առանձնահատկություններ:

Օրինակ՝ **Ավստրիայի** օրենսդրությամբ սահմանվում են սնանկության կառավարիչների վարձատրության ռեժիմներ՝ կախված այն հանգամանքից, թե *արդյոք սնանկության վարույթն ավարտվել է առվորական կարգով, թե վերակառուցման ծրագիր ընդունելու միջոցով* (այս վերջին դեպքը ըստ էության ՀՀ օրենսդրությամբ նախատեսված ֆինանսական առողջացման ծրագիրն է):[1]

Ավստրիայի օրենսդրությամբ նախատեսվում են նաև այն դեպքերը, երբ վարձատրությունը կարող է նվազեցվել կամ ավելացվել: Վարձատրության **նվազեցման** դեպքերում հաշվի են առնվում հետևյալ հանգամանքները.

I. *սնանկության վարույթի թեթև ծանրաբեռնվածությունը կամ պարզ բնույթը,*
II. *սնանկության կառավարիչների անձնակազմի անդամների քիչ քանակը,*

[1] *Bundesgesetz, mit dem die Insolvenzordnung, das Gerichtsgebührengesetz, das InsolvenzEntgeltsicherungsgesetz und die Exekutionsordnung geändert werden (Insolvenzrechtsänderungsgesetz 2017 – IRÄG 2017).*

III. այն հանգամանքը, որ սնանկության կառավարիչը ունի ազդեցություն պարտապանի գործունեության գոյություն ունեցող կառուցվածքների վրա,

IV. այն իրողությունները և արդյունքները, որոնք վկայում են, որ սնանկության վարույթում սնանկության կառավարիչը հնարավորություն չի ունեցել հասնելու իր կողմից մշակված նպատակներին, որոնք գերազանցապես պայմանավորված են վերջինիս ձախողմամբ և ոչ թե պարտատերերի կամ երրորդ անձանց բացթողումներով կամ ձախողումներով: [1]

Սնանկության կառավարչի վարձատրությունը կարող է **ավելացվել** հետևյալ բացառիկ հանգամանքներից ելնելով՝

I. սնանկության վարույթի բարդությունը և ծավալը,

II. աշխատանքային հարաբերությունների կանոնակարգման ռիսկի աստիճանը,

III. հատուկ ջանքերը, որոնք գործադրվել են առաջնային բավարարում ունեցող պարտատերերի պահանջների բավարարման համար, սնանկության պարտատերերի համար բացառիկ արդյունքների հասնելու հանգամանքը: [2]

Սերբիայի Սնանկության մասին օրենքի 34-րդ հոդվածի համաձայն՝ սնանկության կառավարչին վերապահվում է վարձատրություն և իրական փաստացի ծախսերի հատուցում ստանալու իրավունք: Սնանկության կառավարչի վարձատրության չափը որոշվում է դատարանի կողմից սնանկության վարույթի ավարտի պահին՝ հաշվի առնելով ցանկացած հանգամանք: Սակայն օրենքը հնարավորություն է ընձեռում սնանկության կառավարչին, որպեսզի պարտատերերի հանձնաժողովի որոշմամբ վերջինիս տրվի նախնական վարձատրություն մինչ վերջնական վարձատուություն տալու մասին որոշման կայացումը: Նախնական վարձատրություն սահմանելու մասին որոշումը բողոքարկման ենթակա չէ: Նախնական վարձատրության չափը սահմանվում է սնանկության զանգվածի մեջ մտնող գույքի ամբողջական արժեքի նկատմամբ որոշակի տոկոսադրույք սահմանելու ձևով: Դատարանը իրավասու է սահմանել սնանկության կառավարչի ամսական վարձատրություն՝ հաշվի առնելով սնանկության կառավարչի կողմից պարտականությունների կատարման ծավալը և արդյունքները:[3]

Ֆրանսիայում կիրառվում են օրենսդրությամբ նախատեսված դրույքաչափերը: Սնանկության կառավարչի վարձատրության չափերը հաշվարկելիս հիմք է ընդունվում օրենսդրորեն սահմանված չափով ընկերության ակտիվների արժեքը: Որպես հաշվարկման հիմք, օրինակ, ընդունվում են յուրաքանչյուր սնանկության գործով ֆիքսված գումարի չափը, կամ չափը որը հաշվարկվում է սնանկության կառավարչի աշխատակիցների քանակը հաշվարկելիս, կամ իրացված ակտիվների քանակը և արժեքը, կամ սնանկության վարույթի ընթացքում ներկայացված դիմումների քանակը:[4]

---

[1] *https://www.ris.bka.gv.at/Dokumente/RegV/REGV_COO_2026_100_2_1357797/REGV_COO_2026_100_2_1357797.pdf.*

[2] *Տե՛ս նույնը:*

[3] *Սերբիայի <Սնանկության մասին> օրենք:*
https://www.tikrf.org/ru/%D0%BD%D0%BE%D0%B2%D1%8B%D0%B5-%D0%B8%D0%B7%D0%BC%D0%B5%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%B8-%D0%B4%D0%BE%D0%BF%D0%BE%D0%BB%D0%BD%D0%B5%D0%BD%D0%B8%D1%8F-%D0%B2-%D0%B7%D0%B0%D0%BA%D0%BE%D0%BD-%D0%BE/.

[4] *Ֆրանսիայի <Սնանկության մասին> օրենք:*

Եթե սնանկության կառավարչին հաջողվում է պարտապանի գույքը իրացնել հնարավորինս արագ և բարձր գնով, ապա միևնույն է, դրանից վերջինիս համար լրացուցիչ վարձատրություն չի նախատեսվում, այսինքն՝ այստեղ այսպես կոչված *<<հաջողակ վարձատրության>>* գաղափարը չի գործում: Եթե սնանկության կառավարիչը հանդես է գալիս որպես հաշտարար կամ կառավարիչ (trustee) ad-hoc, ապա նման իրավիճակներում այս վարձատրության չափը սահմանվում է պայմանագրային հիմունքներով: Յուրաքանչյուր դեպքում վարձատրության չափը սահմանվում է դատական նիստը նախագահողի կողմից: Մինչ 2004թ. սնանկության կառավարիչները չէին վարձատրվում, եթե սնանկացող ընկերությունը չուներ ակտիվներ: Իսկ հիմա վարձատրության չափը յուրաքանչյուր գործի համար կազմում է 1500 եվրո գումար, որը տրվում է Ֆրանսիական ֆինանսավորման ֆոնդի կողմից:[1]

Կանադայի «Անվճարունակության և սնանկության մասին» օրենքի 39-րդ հոդվածը սահմանում է, որ սնանկության կառավարչի վարձատրությունը սահմանվում է պարտատերերի ժողովի կողմից: Նույն հոդվածի երկրորդ մասի համաձայն՝ եթե վերոհիշյալ ձևով սնանկության կառավարչի վարձատրության չափ չի սահմանվել, ապա վարձատրություն ստանալու վերաբերյալ սնանկության կառավարիչը իր վերջնական միջնորդության մեջ պետք է նշի դրա չափը, որը կարող է ավելացվել կամ նվազեցվել, սակայն այն չպետք է գերազանցի սնանկության զանգվածի իրացումից և ապահովված պարտատերերի պահանջների բավարարումից հետո մնացած պարտապանի ամբողջ ակտիվների 7.5 տոկոսը: Այն դեպքում, երբ սնանկության կառավարչի վրա դրվում է նաև պարտապանի գործունեությունը կառավարելու պարտականություն, ապա նա կարող է ստանալ նաև հատուկ վարձատրություն պարտատերերի որոշմամբ պարտապանի համաձայնության դեպքում, իսկ եթե պարտապանի համաձայնությունը բացակայում է, ապա դատարանի որոշմամբ: Եթե սնանկության վարույթում մասնակցում են երկու կամ ավելի սնանկության կառավարիչներ և որոնք սնանկության վարույթում հաջող են իրականացնում իրենց պարտականությունները, ապա նրանց տրվում է լրացուցիչ վարձատրություն սնանկության կառավարիչների համաձայնությամբ, իսկ նման համաձայնության բացակայության դեպքում՝ դատարանի որոշմամբ:[2]

Մեծ Բրիտանիայում իրավակարգավորումներն ունեն որոշակի առանձնահատ կություններ, մասնավորապես՝ ընկերությունների լուծարման գործընթացը, որի վրա կցանկանայի սևեռել Ձեր ուշադրությունը:

Այսպես՝ համաձայն **«Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված կոմերցիոն ընկերությունների մասին» օրենքի** 213-րդ հոդվածի <u>առաջին մասի</u>՝ ընկերությունները գրանցող մարմինը կարող է ջնջել ընկերության անվանումը ռեեստրից, եթե ընկերությունը՝

1) դադարեցրել է իր բիզնեսի վարումը,
2) իրականացնում է գործունեություն առանց համապատասխան լիցենզիայի,
3) ունի չվճարած հարկային պարտավորություններ:

Մենք տեսնում ենք, որ ընկերությանը ռեեստրից հանելու և ՀՀ օրենսդրությամբ սահմանված սնանկ ճանաչելու հիմքերը լրիվ տարբեր են:

Իսկ հիմա փորձենք հասկանալ թե ինչ է նշանակում *գրանցումից հանել ընկերությանը /*

---

[1] https://zavtrasessiya.com/index.pl?act=PRODUCT&id=3120.

[2] *Անվճարունակության և սնանկության մասին Կանադայի օրենք, https://vestnik.ca/bankrotstvo-proposal-canada-russian-specialist-2018_qs/:*

ջնջել ընկերության անվանումը ռեեստրից՝ ըստ Բրիտանական օրենսդրությամբ*:*

«Strike off» - ռեեստրից ջնջում՝ **չի համարվում լուծարում,** Ընկերությունը կորցնում է իր իրավունքները ողջ ծավալով, սակայն պահպանում է իր պատասխանատվությունը:

«Dissolved», **«liquidation»** - լուծարում, լիկվիդացում:

Նախնառաջ նշենք, որ ի տարբերություն ՀՀ-ում գործող կարգավորումների՝ Մեծ Բրիտանիայում ընկերությունները գրանցող մարմինը սկզբից, այսպես ասած, գրանցումից հանում է ընկերությանը **«Strike off»**՝ նրան տալով 7 տարվա ժամանակ, որի ընթացքում իրավաբանական անձը կամ պետք է վերացնի իրեն գրանցումից հանելու պատճառ(ներ)ը, կամ ներկայացնի լուծարման հայտ: Նշենք նաև, որ եթե ընկերությունը տրամադրված ժամանակահատվածում ցուցաբերի անգործություն, ապա 7 տարին լրանալուց հետո այլևս չի կարող վերականգնել գրանցման ռեեստրում և կստանա **«Dissolved»** կարգավիճակ :

Համաձայն «Բրիտանական Վիրջինյան կղզիներում գրանցված կոմերցիոն ընկերությունների մասին» օրենքի՝ ընկերությունը կարող է 7 տարվա ընթացքում վերացնել այն հանգամանքները որոնց հետևանքով նրա անվանումը ջնջվել է Բրիտանական ընկերությունների ռեեստրից և ներկայացնել հայտ՝ այն վերականգնելու համար:

Եթե ընկերությունը, պահպանելով օրենքով սահմանված բոլոր դրույթները և հայտ ներկայացնելու կարգը, վճարելով իր հանդեպ ծագած բոլոր պարտավորությունները, ինչպես նաև պետական տուրքը և հարկերը՝ *Հայտ է ներկայացնում ընկերության անվանումը ռեեստրում վերականգնելու մասին,* ապա ընկերությունները գրանցող մարմինը **վերականգնում է ընկերության** անվանումը ռեեստրում, որի մասին տալիս է **տեղեկանք;**

Համաձայն նույն օրենքի 217-րդ հոդվածի 4-րդ մասի՝ եթե ընկերությունները գրանցող մարմինը /քարտուղարը/ ***մերժել է*** *ընկերության անվանումը ռեեստրում վերականգնելու մասին հայտը,* ապա ընկերությունը կամ ընկերության տնօրենը, անդամները կարող են **90 օրյա ժամկետում դիմել դատարան** և եթե դատարանը համոզվի, որ դա միայն ընկերությունը ռեեստրում վերականգնելու համար է, ապա դատարանը կարող է հանձնարարել քարտուղարին վերականգնել ընկերությունը այնպիսի պայմանների հիման վրա, որոնք դատարանը անհրաժեշտ կհամարի կիրառել:

Համաձայն նույն օրենքի 217-րդ հոդվածի 6-րդ մասի՝ եթե ընկերությունը վերականգնվում է նման ձևով ապա համարվում է, որ ընկերությունն երբևից է չի եղել ջնջված այդ ռեեստրից:

[2] *Закон Респ. Армения от 15 июня 2006 г. Об авторском праве и о смежных правах: [Электронный ресурс] / Всемирная организация интеллектуальной собственности. Режим доступа http://www.wipo.int/wipolex/ru/details.jsp?id=15942 .*

с тем принести его создателю или обладателю прав на него экономическую выгоду от использования. Такая дуалистичная природа произведения находит свое выражение в праве посредством установления системы интеллектуальных прав на результаты интеллектуальной деятельности. Согласно нормативной дефиниции в состав **интеллектуальных прав** входит **исключительное право**, являющееся имущественным, а в случаях, предусмотренных ГК РФ, также **личные неимущественные права** и **иные права**. Армянский законодатель воздержался от употребления понятия «иные прав», установив, что автору результатов интеллектуальной деятельности принадлежит в отношении этих результатов личные неимущественные и имущественные права (ч. 1 ст.1102 ГК РА) [1].

В ст. 1226 ГК РФ в качестве «иных прав» прямо указаны только **право следования** и **право доступа**. Анализ законодательства позволяет сделать вывод о том, что «иные права» объединяет срочный характер их действия, а также сочетание личного и имущественного элементов в содержании. Следует также отметить, что оба указанных права не имеют отношения к аудиовизуальному произведению в силу прямого указания закона на виды произведений, к которым они применяются.

Поскольку перечень иных интеллектуальных прав не ограничивается вышеперечисленными правами и является открытым, в научной литературе к их числу относят также право на вознаграждение за использование служебного произведения, право на указание на экземплярах фонограммы, базы данных и (или) их упаковке своего имени или наименования, право на обнародование фонограммы и другие[2].

Бернская конвенция по охране литературных и художественных произведений от 9 сентября 1886 г признает за авторами два личных неимущественных интеллектуальных права – право авторства и право на неприкосновенность произведения [3].

Право авторства как право признаваться автором произведения (п. 1 ст. 1265 ГК РФ) обеспечивает надлежащую персонификацию результата творческой деятельности и является ключевым в системе авторских прав. Право авторства, по сути, олицетворяет собой правовую связь между автором и созданным им произведением. Оно возникает вместе с созданием самого произведения. Традиционно в праве авторства выделяют две содержательные стороны – «возможность лица считаться автором созданного им произведения» и «возможность требовать признания указанного факта со стороны всех третьих лиц». Права авторства на аудиовизуальное произведение в силу закона возникает одновременно у трех субъектов – режиссера-постановщика, сценариста и композитора (п. 2 ст. 1263 ГК РФ). В отличие от других произведений, которые могут создаваться как в соавторстве, так и индивидуально, аудиовизуальное произведение всегда является результатом работы множества лиц, три из которых признаются авторами аудиовизуального произведения в целом. Отметим, что согласно ч. 2 ст. 34 Закона РА авторами целостного аудиовизуального произведения являются: режиссер-постановщик, автор сценария, автор музыкального произведения, специально созданного для данного произведения, автор диалога, оператор-постановщик. Следовательно, право авторства на аудиовизуальное произведение признается за вышеперечисленными лицами.

Близким по правовой природе к праву авторства является **право автора на имя-**право использовать произведение под своим именем, под псевдонимом или анонимно либо разрешать такое использование. Ценность права автора на имя как нельзя лучше проявляется в аудиовизуальной сфере. Зачастую с именем режиссера связывают будущий успех кинофильма.

Следует заметить, что право авторства и право автора на имя становятся одними из наиболее уязвимых при использовании аудиовизуальных произведений в сети, поскольку в условиях

---

[1] *Гражданский кодекс Республики Армения от 05.05.1998 г. (с последними изменениями, внесёнными от 20.02.2017 г.)*

[2] ***Кондратьева Е.*** *Разграничение личных неимущественных и иных прав // Интеллектуальная собственность. Авторское право и смежные права. 2009. № 8. С. 28.*

[3] *Бернская конвенция об охране литературных и художественных произведений 1886 года. [Электронный ресурс]. – URL: www.wipo.int/treaties/ru/ip/berne/ (дата обращения: 01.08.2017).*

доступности процессов копирования и распространения цифровых копий произведений установление личности автора произведения, размещенного в сети, становится весьма затруднительным. Способность к быстрой трансформации произведений, выраженных в электронном форме, указывается зарубежными авторами в качестве ключевой проблемы охраны личных неимущественных прав авторов в сети Интернет[1].

Близким по содержанию к праву автора на имя является **право на указание имени**, предоставленное законом лицу, организовавшему создание сложного объекта (п. 4 ст. 1240 ГК РФ). Таким правом, в частности, обладает и продюсер аудиовизуального произведения (п. 4 ст. 1263 ГК РФ). Несмотря на неимущественный характер указанного права, его нельзя рассматривать как разновидность или частный случай традиционного права автора на имя, поскольку субъект данного права не является автором произведения.

Право на неприкосновенность произведения представляет собой гарантированную возможность автора донести до публики воплощенный в произведении творческий замысел в неизменном виде. Как подчеркивается в п. 31 Постановления Пленумов ВС РФ и ВАС РФ № 5/29 от 26.03.2009 г., право на неприкосновенность затрагивает лишь такие изменения, которые не приводят к образованию нового произведения на основе имеющегося, и тем самым отличается от переработки произведения как правомочия в составе исключительного права[2]. В армянском законодательстве вышеупомянутое право автора имеет иное содержание, сделав акцент на защиту достоинства и репутации автора. Так, согласно п. “в” ч. 2 ст. 12 Закона РА автору в отношении его произведения принадлежит право защищать произведение от возможных искажений, изменений или иных посягательств, наносящих ущерб репутации либо достоинству автора **(право на репутацию и достоинство).**

Помимо вышеуказанных личных неимущественных прав, автору произведения принадлежит также **право на обнародование произведения**, под которым понимается право осуществить действие или дать согласие на осуществление действия, которое впервые делает произведение доступным для всеобщего сведения (ст. 1268 ГК РФ). Хотя авторские права распространяются как на обнародованные, так и на необнародованные произведения, реализация права на обнародование влечет за собой изменение правового режима произведения. С моментом правомерного обнародования произведения связано начало правовой охраны произведений, обнародованных анонимно или под псевдонимом.

В настоящее время размещение произведения в сети Интернет является одним из самых быстрых способов сделать произведение достоянием общественности. В этом отношении представляет интерес вопрос о том, *можно ли признать обнародованием произведения размещение его на сайте с ограниченным доступом?* Полагаем, что этот вопрос должен решаться, исходя из цели, которую преследовал автор. Например, создание локальной сети с ограниченным числом пользователей следует, на наш взгляд, рассматривать как «ознакомление в частном порядке третьих лиц с невыпущенным в свет произведением». В то время как коммерциализация использования произведения путем установления платного доступа на сайт ничем не отличается от выпуска в свет произведения путем размещения его в свободной продаже и является по своей сути обнародованием произведения.

Сущность и содержание исключительного права на результаты интеллектуальной деятельности, выраженные в ст. 1229 ГК РФ и ст. 13 Закона ГК РА, состоят в возможности правообладателя:

---

[1] ***Fernández-Molina, J. Carlos, Eduardo Peis.*** *The Moral Rights of Authors in the Age of Digital Information // Journal of the American Society for Information Science and Technology 52 (2), 2001. [Электронный ресурс]. – URL: https://pdfs.semanticscholar.org/77c5/9be2793f83d61e97657526b4612a86dcae8e.pdf (дата обращения: 10.05.2018 г.).*

[2] *Постановление Пленума Верховного Суда РФ № 5, Пленума ВАС РФ № 29 от 26.03.2009 г. «О некоторых вопросах, возникших в связи с введением в действие части четвертой Гражданского кодекса Российской Федерации». // Вестник ВАС РФ. – 2009. – № 6.*

❖ использовать такой результат или такое средство по своему усмотрению любым не противоречащим закону способом;

❖ распоряжаться исключительным правом.

Прежде чем перейти к рассмотрению отдельных способов использования аудиовизуальных произведений, которые могут быть реализованы в сети Интернет, следует разграничить понятия **«оригинал произведения»**, **«экземпляр»**, **«копия»** и **«материальный носитель»**, которые будут использоваться в тексте настоящей статьи. Как следует из п. 3 ст. 1259 ГК РФ и ч. 1 ст. 3 ГК РА, произведение должно быть выражено в объективной форме. Одним из способов такого выражения является воплощение произведения на материальном носителе. Материальным носителем для любого произведения, преобразованного в электронную форму, будет выступать то техническое устройство, в котором такое произведение выражено (диск, флеш-карта, память телефона или компьютера пользователя, сервер в сети Интернет и т.д.). Такие материальные носители обладают универсальностью и могут содержать в себе различные объекты авторских прав, которые объединяет электронная форма их выражения. Термин «оригинал произведения» используется для обозначения того материального носителя, в котором произведение изначально было зафиксировано. Впоследствии могут быть созданы экземпляры или копии указанного произведения путем реализации права на воспроизведение произведения. В условиях сети Интернет термины «оригинал произведения», «экземпляр», «цифровая копия» могут быть использованы как синонимы, поскольку электронная форма выражения таких произведений позволяет создавать копии, полностью идентичные оригиналу произведения.

Аудиовизуальное произведение может быть использовано любым из предусмотренных в законе способов, за исключением практической реализации произведения (пп. 10 п. 2 ст. 1270 ГК РФ), применимой к прямо указанным в законе объектам авторских прав. При этом к использованию аудиовизуального произведения в сети Интернет применимы далеко не все предусмотренные ст. 1270 ГК РФ и ч. 1 ст. 13 Закона РА способы использования произведений. В частности, **распространение и прокат оригинала или экземпляра произведения** непосредственно связаны с действиями над материальным носителем произведения. Указанный вывод находит подтверждение в Договоре Всемирной организации интеллектуальной собственности (ВОИС) по авторскому праву и согласованных заявлениях к нему, принятых на Дипломатической конференции по некоторым вопросам авторского и смежных прав (1996 г.)[1]. Договор ВОИС по авторскому праву однозначно исключает применение права на прокат и распространение к использованию произведений в сети Интернет. Распространение и прокат аудиовизуального произведения возможны только путем передачи от одного лица к другому диска или кассеты, на которой такое произведение зафиксировано.

Экстерриториальный характер сети Интернет исключает **импорт аудиовизуального произведения** в сети в целях распространения. Представляется, что **публичный показ и публичное исполнение аудиовизуального произведения** также осуществимы только за пределами сети Интернет. Публичный показ предполагает демонстрацию отдельных кадров аудиовизуального произведения, а публичное исполнение – показ всего аудиовизуального произведения с помощью технических средств. Оба указанных способа использования произведения характеризует признак «публичности», т.е. показ или исполнение произведения осуществляются в месте, открытом для свободного посещения, или в месте, где присутствует значительное число лиц, не принадлежащих к обычному кругу семьи. Сеть Интернет не требует физического присутствия публики в каком-либо одном месте, а позволяет получать доступ к произведению из любого места и в любое время по желанию пользователя.

Из числа способов использования произведений, предусмотренных законом, аудиовизуальное произведение в сети Интернет может использоваться посредством воспроизведения, сообщения в эфир или по кабелю, перевода или иной переработки произведения, а также путем доведения

---

[1] *Договор ВОИС по авторскому праву и согласованные заявления в отношении договора ВОИС по авторскому праву 1996 года. [Электронный ресурс]. – URL: www.wipo.int/treaties/ru/ip/wct/ (дата обращения: 01.08.2017).*

произведения до всеобщего сведения.

Воспроизведением произведения является изготовление одного и более экземпляра произведения или его части в любой материальной форме. При этом запись в память ЭВМ также признается воспроизведением.

Использование аудиовизуальных произведений в сети посредством **сообщения в эфир или по кабелю** стало возможным с развитием интернет-телевидения, которое основано на цифровой передаче телевизионного сигнала посредством интернет-соединения.

Переработка как способ использования аудиовизуального произведения применима к аудиовизуальному произведению в двух аспектах. Во-первых, переработке подвергаются произведения, входящие в фильм как сложный объект. Так, например, литературное произведение может быть подвергнуто переработке для создания сценария к фильму. Многие аудиовизуальные произведения созданы посредством экранизации литературно-художественных произведений. Во-вторых, переработка может осуществляться в отношении аудиовизуального произведения в целом. Речь идет, например, о переводе фильма на другой язык, его колоризации, монтаже и так далее.

Доведение аудиовизуального произведения до всеобщего сведения означает предоставление доступа к произведению неограниченному кругу лиц с возможностью осуществления такого доступа в любое время и из любого места по собственному выбору.

С точки зрения защиты авторских прав в сети Интернет наибольший интерес представляют два из всех предусмотренных законом способов использования произведений – право на воспроизведение и право на доведение произведения до всеобщего сведения. Особенность вышеуказанных правомочий в составе исключительного права состоит в том, что в силу особого интерактивного режима передачи данных в сети они выступают необходимым условием и предпосылкой реализации авторских прав в сети Интернет.

Использование произведения в сети Интернет предполагает осуществление ряда последовательных действий – загрузку копии произведения на сервер (воспроизведение), открытие доступа для интернет-пользователей (доведение до всеобщего сведения), загрузку копии произведения на устройство конечного пользователя (воспроизведение). Таким образом, трем этапам использования охраняемых авторским правом объектов в цифровой сети соответствуют два используемых авторско-правовых правомочия. [1]

Между тем нередко в судебной практике размещение на сайте произведения квалифицируется также как нарушение исключительного права автора на распространение[2]. Указанная позиция судов представляется не бесспорной ввиду следующего.

Распространение аудиовизуального произведения, зафиксированного на материальном носителе, через торговую сеть и распространение того же произведения в электронном виде через сеть Интернет не тождественны с правовой точки зрения. Как было указано выше, распространение как способ использования произведения предполагает передачу от одного лица к другому материального носителя, в котором зафиксирован результат интеллектуальной деятельности. Материальным носителем произведения, выраженного в электронной форме, можно признать любое техническое устройство, в памяти которого оно зафиксировано (сервер, телефон, планшет, жесткий диск компьютера пользователя сети и др.).

Произведение в глобальной сети может переходить от одного пользователя к другому посредством постоянного и многократного воспроизведения в памяти нового устройства. Таким образом, имеет место не переход одного и того же экземпляра произведения, как в случае с распространением, а создание в каждом случае новой копии произведения. По сути, функцию

---

[1] ***Близнец И.А., Леонтьев К.Б****. Авторское право и смежные права: учебник / под ред. И.А. Близнеца. – М.: Проспект, 2011.*

[2] *Решение Арбитражного суда Свердловской области от 21.03.2014 г. по делу № А60-43812/2013 [Электронный ресурс]. – URL: http://kad.arbitr.ru/ (дата обращения: 15.08.2017).*

Постановление ФАС Московского округа от 20.02.2013 г. по делу № А40-45216/12-51-367 [Электронный ресурс]. – URL: http://kad.arbitr.ru/ (дата обращения: 15.08.2017).

распространения в общепринятом смысле этого слова в сети Интернет выполняют два исключительных правомочия автора – право на воспроизведение и право на доведение до всеобщего сведения. Принципы функционирования сети Интернет, основанные на цифровой, а не материальной передаче данных, исключают переход произведений от одного интернет-пользователя к другому посредством распространения как способ использования произведения в том смысле, который придает ему пп. 2 п. 2 ст. 1270 ГК РФ. В связи с изложенным полагаем, что взыскание компенсации за нарушение исключительного права на распространение произведений в сети Интернет не основано на нормах права и является нарушением прав пользователей сети.

Завершая рассмотрение системы интеллектуальных прав на аудиовизуальное произведение, отметим следующее. Правоотношения, возникающие по поводу создания и использования результатов интеллектуального творчества, в настоящее время являются наиболее динамично развивающейся сферой из числа всех регулируемых гражданским правом отношений. Особенностью оформленной единой системы прав на результаты интеллектуальной деятельности и приравненные к ним средства индивидуализации является гибкость правового регулирования, позволяющая оперативно реагировать на изменения, происходящие в сфере интеллектуальной собственности.

Основополагающими принципами, положенными в основу построения системы интеллектуальных прав, являются признание и защита личных неимущественных прав авторов, прежде всего права авторства, права автора на имя и на неприкосновенность произведения, а также предоставление авторам имущественных прав, нашедших свое выражение в конструкции исключительного права. Открытый перечень способов использования результатов творческой деятельности позволяет легитимизировать возникающие на практике, в том числе и в сети Интернет, новые способы использования произведений. Наличие в системе интеллектуальных прав категории «иных» прав отражает многообразие складывающихся в данной сфере отношений, требующих закрепления за правообладателями прав, выходящих за рамки строго обозначенной дихотомии интеллектуальных прав.

Таким образом, существующая в настоящее время система интеллектуальных прав создает прочную правовую основу для создания, использования и защиты аудиовизуальных произведений в рамках сети Интернет.

СПИСОК ЛИТЕРАТУРЫ

Нормативно-правовые акты и официальные документы

1. Бернская конвенция об охране литературных и художественных произведений 1886 года. [Электронный ресурс]. – URL: www.wipo.int/treaties/ru/ip/berne/ (дата обращения: 01.08.2017).
2. Договор ВОИС по авторскому праву и согласованные заявления в отношении договора ВОИС по авторскому праву 1996 года. [Электронный ресурс]. – URL: www.wipo.int/treaties/ru/ip/wct/ (дата обращения: 01.08.2017).
3. Гражданский кодекс Российской Федерации (часть четвертая) от 18.12.2006 № 230-ФЗ (с изм. от 13.07.2015 № 216-ФЗ) // СЗ РФ. 2006. № 52 (1 ч.). Ст. 5496.
4. Гражданский кодекс Республики Армения от 05.05.1998 г. (с последними изменениями, внесёнными от 20.02.2017 г.)
5. Закон Респ. Армения от 15 июня 2006 г. Об авторском праве и о смежных правах: [Электронный ресурс] / Всемирная организация интеллектуальной собственности. Режим доступа http://www.wipo.int/wipolex/ru/details.jsp?id=15942 .

Научная и учебная литература

6. Близнец И.А., Леонтьев К.Б. Авторское право и смежные права: учебник / под ред. И.А. Близнеца. – М.: Проспект, 2011.

7. Кондратьева Е. Разграничение личных неимущественных и иных прав // Интеллектуальная собственность. Авторское право и смежные права. 2009. № 8. С. 28.

8. Fernández-Molina, J. Carlos, Eduardo Peis. The Moral Rights of Authors in the Age of Digital Information // Journal of the American Society for Information Science and Technology 52 (2), 2001. [Электронный ресурс]. – URL: https://pdfs.semanticscholar.org/77c5/9be2793f83d61e97657526b4612a86dcae8e.pdf (дата обращения: 10.05.2018 г.).

Материалы судебной практики

9. Постановление Пленума Верховного Суда РФ № 5, Пленума ВАС РФ № 29 от 26.03.2009 г. «О некоторых вопросах, возникших в связи с введением в действие части четвертой Гражданского кодекса Российской Федерации». // Вестник ВАС РФ. – 2009. – № 6.

10. Решение Арбитражного суда Свердловской области от 21.03.2014 г. по делу № А60-43812/2013 [Электронный ресурс]. – URL: http://kad.arbitr.ru/ (дата обращения: 15.08.2017).

11. Постановление ФАС Московского округа от 20.02.2013 г. по делу № А40-45216/12-51-367 [Электронный ресурс]. – URL: http://kad.arbitr.ru/ (дата обращения: 15.08.2017).

ՀՏԴ 342.8 Իրավագիտություն

Պարույր Մարտիրոսյան
Արցախի պետական համալսարան
Էլ. հասցե՝ paruyr.martirosyan@gmail.com
Գիտ. ղեկ.՝ իր.գ.թ., դոց. Ռիտա Առուստամյան

ԴԻՏՈՐԴՆԵՐԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ ԱՐՑԱԽԻ ԸՆՏՐԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *միջազգային և տեղական դիտորդներ, դիտորդների իրավական կարգավիճակը, դիտորդական առաքելության նպատակը, դիտորդների իրավունքները, դիտորդների հավատարմագրումը, դիտորդների լիազորությունները, դիտորդների պարտականությունները, միջազգային դիտորդական կազմակերպություններ, ընտրական համակարգը, դիտորդական վերահսկողություն:*

Հոդվածում նշվում է միջազգային և տեղական դիտորդների իրավական կարգավիճակը Արցախի Հանրապետության ընտրական համակարգում: Տրվում են տեղեկություններ, թե ինչ իրավունքներ ու լիազորություններ ունեն տեղական ու միջազգային դիտորդները և ամենակարևորը՝ նրանց առաքելության նպատակը: Հոդվածում հստակորեն նշվում է, թե ինչպես են հավատարմագրվում դիտորդները և ովքեր կարող են հրավիրել նրանց դիտորդական առաքելություն իրականացնելու համար: Անդրադարձ է կատարվում միջազգային այն հեղինակավոր կազմակերպություններին, ովքեր իրականացնում են դիտորդական առաքելություն: Հոդվածում նշվում է դիտորդների կարևորությունը ընտրական գործընթացներում:

Паруйр Мартиросян

КОНСТИТУЦИОННО-ПРАВОВОЙ СТАТУС НАБЛЮДАТЕЛЕЙ В ИЗБИРАТЕЛЬНОМ ЗАКОНОДАТЕЛЬСТВЕ АРЦАХА

Ключевые слова: *Международные и местные наблюдатели, правовой статус наблюдателей, цель наблюдательной миссии, права наблюдателей, аккредитация наблюдателей, полномочия наблюдателей, обязанности наблюдателей, международные организации наблюдателей, избирательная система, наблюдательный надзор.*

В статье описывается правовой статус международных и местных наблюдателей в избирательной системе Республики Арцах. Предоставляет информацию о правах и полномочиях местных и международных наблюдателей и, что наиболее важно, цели их миссии. В статье четко указано, как аккредитованы наблюдатели и кто может пригласить их для проведения наблюдательной миссии. Упоминаются те авторитетные международные организации, которые осуществляют миссию по наблюдению. В статье подчеркивается важность наблюдателей в избирательных процессах.

Իմ ուսումնասիրության արդիականությունը պայմանավորված է Արցախի Հանրապետությունում ժողովրդավարության ամրապնդման խնդրով: Պետական և մունիցիպալ իշխանությունների լեգիտիմությունը, նրանց նկատմամբ բնակչության վստահությունը մեծապես կախված են ազատ ու թափանցիկ ընտրություններից: Արցախի Հանրապետության հիմնական օրենքը՝ Սահմանադրությունը, փաստում է, որ Արցախի Հանրապետությունում իշխանությունը պատկանում է ժողովրդին: Ժողովուրդը իր իշխանությունը իրականացնում է ազատ ընտրությունների, հանրաքվեների, ինչպես նաև Սահմանադրությամբ և օրենքներով նախատեսված պետական և տեղական ինքնակառավարման մարմինների ու պաշտոնատար անձանց միջոցով **(ԱՀ Սահմանադրության 2-րդ հոդված)**: Մեծանում է ուշադրությունը իրապես ժողովրդավարական ու չկեղծված ընտրությունների ապահովման մեխանիզմի նկատմամբ:

Արդիականությունը պայմանավորված է նաև ԸՕ-ի (Ընտրական օրենսգրք) սրընթաց

զարգացմամբ: Դիտորդները կարևոր գործառույթ են իրականացնում՝ հետևելով ձայների հաշվարկմանը: Նրանք ապահովում են քվեարկության արդյունքների հասարակական անկախ վերահսկողությունը, օրինական միջոցները ու մեթոդները:

Այսպիսով դիտորդները անկախ լրատվության աղբյուրներ են հանդիսանում: Հենց նրանց գնահատականների հիման վրա հնարավոր է ասել քվեարկության պաշտոնական արդյունքների իսկության մասին:

Հանրապետության նախագահի, Ազգային ժողովի, համայքների ավագանիների ընտրությունները, ինչպես նաև հանրաքվեներն անցկացվում են ընդհանուր, հավասար, ազատ ու ուղղակի ընտրական իրավունքի հիման վրա՝ գաղտնի քվեարկությամբ:[1]

Ընդհանուր ընտրական իրավունք

Ընդհանուր է այն ընտրական իրավունքը, որն ընտրական իրավունք է տալիս տվյալ երկրի չափահաս քաղաքացիներին, բացառությամբ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճռով անգործունակ ճանաչված, ինչպես նաև օրինական ուժի մեջ մտած դատավճռով դատապարտված և պատիժը կրող անձանց: Այսինքն, ընտրական իրավունք ունեցող անձինք՝ անկախ ազգությունից, ռասայից, սեռից, լեզվից, դավանանքից, քաղաքական կամ այլ հայացքներից, սոցիալական ծագումից, գույքային կամ այլ դրությունից, ունեն ընտրելու և ընտրվելու իրավունք:

Հավասար ընտրական իրավունք

Ընտրողներն ընտրություններում մասնակցում են հավասար հիմունքներով: Այս սկզբունքի կիրառումը նշանակում է, որ յուրաքանչյուր ընտրող քվեարկության ժամանակ ունի մյուսներին հավասար թվով ձայն:

Ազատ ընտրական իրավունք

Ընտրություններն անցկացվում են ազատության և կամավորություն սկզբունքների հիման վրա: Ոչ ոք իրավունք չունի պարտադրելու ընտրողին քվեարկելու որևէ թեկնածուի կուսակցության օգտին կամ դեմ, ինչպես նաև հարկադրելու ընտրողին մասնակցելու կամ չմասնակցելու ընտրություններին:

Ուղղակի ընտրական իրավունք

Հանրապետության նախագահը, Ազգային ժողովը և տեղական ինքնակառավարման մարմինները ընտրվում են անմիջականորեն՝ ընտրողների կողմից:

Գաղտնի քվեարկություն

Քվեարկությունը գաղտնի է: Ընտրողի համար քվեարկության գաղտնիությունը ոչ միայն իրավունք է, այլ նաև պարտականություն: Քվեարկողի կամքի ազատ արտահայտման նկատմամբ վերահսկողությունն արգելվում է: Քվեարկության գաղտնիության սկզբունքը նշանակում է, որ ոչ ոք, բացի ընտրողից, իրավունք չունի իմանալու նրա կամարտահայտության բովանդակությունը: Քվեաթերթիկը լրացվում է հատուկ կահավորված քվեարկության խցիկում: Ընտրողը քվեարկելուց հետո իրավունք չունի քվեաթերթիկը ցույց տալու որևէ անձի, և դրան ընտրողին չի կարող հարկադրել ոչ ոք, բացառությամբ այն դեպքի, երբ ընտրողը կարծում է, որ քվեաթերթիկը սխալ է լրացրել և դիմում է ընտրական հանձնաժողովին՝ նոր քվեաթերթիկ ստանալու համար: Քվեարկության գաղտնիության խախտում չի համարվում քվեաթերթիկը ինքնուրույն լրացնելու հնարավորություն չունեցող անձի փոխարեն քվեաթերթիկը լրացնելը: Այս պարագայում քվեաթերթիկ լրացնողը պարտավոր է քվեաթերթիկը լրացնել այն կերպ, ինչպես ցանկանում է ընտրողը և իրավունք չունի հրապարակելու այն:[2]

---

[1] *ՀՀ Սահմանադրության 7-րդ հոդված*

[2] *Այվազյան Ն. Ա. Հայաստանի Հանրապետության Սահմանադրական իրավունք*

Ընտրությունների դիտարկումը ենթադրում է մոնիտորինգ մեկ կամ մի քանի միջազգային կամ տեղական կազմակերպությունների կողմից: Դիտարկման նպատակն է ապահովել արդար ընտրական գործընթաց՝ ընդհանուր առմամբ ընդունված միջազգային ստանդարտներին համապատասխան՝ քաղաքացիական և քաղաքական իրավունքների պաշտպանության համար: Դիտորդները կարող են բարձրացնել ընտրությունների օրինական բնույթի հարցը: ՄԱԿ-ի ընտրական մոնիտորինգի դեպարտամենտը ներկայումս ընտրական օրենսդրության և գործընթացների բնագավառում դիտորդների և փորձագետների ամենահայտնի մշտական կորպուսն է, որոնք աշխատում են ամբողջ աշխարհում: Ընտրությունների դիտարկման լիազորություններ ունեն նաև այլ միջազգային կազմակերպություններ, ինչպիսիք են Եվրոպայում անվտանգության և համագործակցության կազմակերպությունը (ԵԱՀԿ), Եվրամիությունը, Եվրոպայի խորհրդի տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը և Աֆրիկյան միությունը: Միջազգային կազմակերպությունների մեծամասնությունը վերահսկում է խորհրդարանական ընտրությունները, և միայն Եվրոպայի խորհրդի Տեղական և տարածքային իշխանությունների կոնգրեսը, համագործակցելով Վենետիկի հանձնաժողովի հետ (երկուսն էլ ԵԽ բաղադրիչներ են), իրավունք ունի դիտարկել տարածաշրջանային և ավագանու ընտրությունները: 1990 թվականից ի վեր Կոնգրեսը իրականացրել է ավելի քան 50 դիտորդական առաքելություն: Կարևոր է նշել, որ ցանկացած ժողովրդավարություն պետք է հիմնված լինի ամուր հիմքի վրա:[1]

Ընտրությունների դիտարկումն իրականացվում է տարբեր ձևերով: Որպես կանոն, հսկողությունը իրականացվում է ընտրատեղամասերում տեղակայված լուսանկարչական ապարատներով և տեսախցիկներով մարդկանց փոքր խմբի կողմից, որտեղ հնարավոր է՝ խախտումներ լինեն: Արտասահմանյան դիտորդները հազվադեպ են հասկանում այն երկրի մշակույթը և լեզուն, որտեղ անցկացվում են ընտրությունները, ուստի նրանց օգնում են թարգմանիչները: Բազմաթիվ դիտորդական առաքելություններ իրականացվում են ոչ միայն ընտրությունների օրը, այլև դրա սկսվելուց շատ առաջ: Այս դեպքում վերլուծվում է նաև նախընտրական քարոզչության ընթացքը: Դիտորդական առաքելության նպատակն ընտրական գործընթացների վերաբերյալ հավաստի տեղեկությունների հավաքումն է և դրանց հիման վրա անկախ եզրակացության կազմումը: Դիտորդական առաքելությունն իրականացվում է դիտորդների միջոցով՝ պահպանելով չեզոքություն, անկողմնակալություն և ընտրական գործընթացներին չմիջամտելու սկզբունքները:

Ընտրությունների ժամանակ դիտորդական առաքելության իրավունք ունեն՝

1. միջազգային կազմակերպությունները,
2. օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները,
3. Արցախի Հանրապետության և օտարերկրյա հասարակական այն կազմակերպությունները, որոնց կանոնադրական խնդիրները ներառում են ժողովրդավարության և մարդու իրավունքների պաշտպանության հարցեր, և որոնք չեն աջակցում թեկնածուների կամ կուսակցություններին, կուսակցությունների դաշինքներին:

Միջազգային կազմակերպությունները, օտարերկրյա պետությունների ներկայացուցիչները և օտարերկրյա հասարակական կազմակերպությունները դիտորդական առաքելություն կարող են իրականացնել հրավերի առկայության դեպքում: Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների կազմում որպես դիտորդ

[1] https://en.wikipedia.org/wiki/International_Observer

Արցախի Հանրապետության քաղաքացիներ ընդգրկվել չեն կարող:

Սույն մասում նշված կազմակերպություններին և անձանց դիտորդական առաքելություն իրականացնելու հրավեր ուղարկելու իրավունք ունեն՝

1. Հանրապետության նախագահը,
2. Ազգային ժողովի նախագահը,
3. ԿԸՀ (Կենտրոնական ընտրական հանձնաժողովը):

Միջազգային կազմակերպությունների, օտարերկրյա հասարակական կազմակերպությունների դիտորդական առաքելությունների՝ ընտրությունների վերաբերյալ զեկույցները տեղադրվում են կենտրոնական ընտրական հանձնաժողովի կայքում:[1]

Կազմակերպությունների դիտորդներն իրենց առաքելությունն իրականացնում են կենտրոնական ընտրական հանձնաժողովում հավատարմագրվելուց հետո:

Հավատարմագրվելու կամ հավատարմագրված դիտորդների ցանկում փոփոխություններ (լրացումներ) կատարելու համար դիմումները կենտրոնական ընտրական հանձնաժողով են ներկայացվում ընտրությունները նշանակելու օրվանից հետո, բայց քվեարկության օրվանից ոչ ուշ, քան տասն օր առաջ:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը դիտորդներին տրվող վկայականներն այդ կազմակերպություններին հանձնում է դիմումն ստանալուց ոչ ուշ, քան յոթ օր հետո:

Կենտրոնական ընտրական հանձնաժողովը մերժում է դիտորդների հավատարմագրման մասին դիմումը, եթե կազմակերպության կանոնադրական խնդիրները չեն բավարարում ընտրական օրենսգրքի պահանջները, կամ ներկայացված փաստաթղթերը չեն համապատասխանում կենտրոնական ընտրական հանձնաժողովի որոշման պահանջներին:

Դիտորդի կողմից որևէ թեկնածուի, համամասնական ընտրակարգով ընտրություններին մասնակցող կուսակցության, կուսակցությունների դաշինքի աջակցելու դեպքում կենտրոնական ընտրական հանձնաժողովն իրավունք ունի համապատասխան կազմակերպությանը զրկելու դիտորդական առաքելություն իրականացնելու իրավունքից:

Դիտորդների լիազորությունները դադարում են ընտրությունների արդյունքների պաշտոնական հրապարակումից հետո՝ ութերորդ օրը, եթե ընտրության արդյունքները չեն բողոքարկվել: Ընտրությունների արդյունքները դատարան բողոքարկվելու դեպքում դիտորդների լիազորություններն ավարտվում են դատական ակտի հրապարակման օրվա հաջորդ օրը, եթե վերաքվեարկություն չի նշանակվել: Վերաքվեարկության դեպքում դիտորդների վերագրանցում չի պահանջվում:

Դիտորդների հավատարմագրման կարգը, դիտորդների հավատարմագրման համար անհրաժեշտ փաստաթղթերի և տեղեկությունների ցանկը, դիտորդների վկայականների ձևերը և դրանց լրացման կարգը սահմանում է կենտրոնական ընտրական հանձնաժողովը:[2]

Դիտորդը իրավունք ունի՝

1. ներկա լինելու ընտրական հանձնաժողովի նիստերին, իսկ քվեարկության ընթացքում՝ նաև քվեարկության սենյակում,
2. կենտրոնական ընտրական հանձնաժողովի սահմանված կարգով հետևելու քվեաթերթիկների տպագրման, պահպանման և քվեաթերթիկների հաշվարկման գործընթացներին.
3. անարգել ծանոթանալու քվեաթերթիկների նմուշներին, ընտրական հանձնաժողովի

---

[1] *ԱՀ Ընտրական օրենսգիրք*

[2] *Նույն տեղում*

նախագահի, նախագահի տեղակալի, հանձնաժողովի քարտուղարի կամ հանձնաժողովի անդամներից որևէ մեկի ներկայությամբ, ում կհանձնարարի հանձնաժողովի նախագահը, անարգել ծանոթանալու տվյալ ընտրական հանձնաժողովի տնօրինության տակ գտնվող ընտրական փաստաթղթերին, ընտրական հանձնաժողովների որոշումներին, նիստերի արձանագրություններին, դատարանի համապատասխան վճիռներին, լիազոր մարմնի՝ ընտրողին տրամադրած համապատասխան տեղեկանքին, ստանալու դրանց պատճենները կամ դրանցից քաղվածքներ (բացառությամբ ընտրողների ստորագրած ցուցակների) քվերակության արդյունքների վերահաշվարկի ժամանակ ինքնուրույն կատարելու քաղվածքներ ընտրողների ստորագրած ցուցակներից.

4. ազատ տեղաշարժվելու քվեարկության սենյակում՝ քվեաթերթիկների ու քվեատուփի դիտարկման համար.

5. օգտվելու ընտրական օրենքով նախատեսված այլ իրավունքներից:

Դիտորդը իրավունք չունի միջամտելու ընտրական հանձնաժողովի աշխատանքներին:

Դիտորդը քվեարկության օրը հետևում է ընտրական հանձնաժողովի աշխատանքներին և կարող է հանձնաժողովի նախագահին ներկայացնել իր դիտարկումներն ու առաջարկությունները:

Դիտորդի՝ ընտրական օրենսգրքով սահմանված իրավունքների որևէ սահմանափակում չի թույլատրվում: Ոչ ոք (այդ թվում՝ ընտրական հանձնաժողովները) իրավունք չունի դիտորդին դուրս հանելու քվեարկության սենյակից կամ ցանկացած այլ կերպ նրանց մեկուսացնելու հանձնաժողովի աշխատանքներին ներկա լինելուց, բացառությամբ նրանց ձերբակալելու կամ կալանավորելու դեպքերի: Դիտորդը պարտավոր է պահպանել ընտրական օրենսգրքի պահանջները:[1]

Եվ այսպես, դիտորդների՝ իբրև ընտրական իրավունքի սուբյեկտների իրավական կարգավիճակ կվերլուծությունը հանգեցնում է հետևյալ եզրակացության՝

դիտորդների իրավական կարգավիճակը ներկա դրությամբ մեծապես հանդիսանում է ընտրական իրավունքի մյուս սուբյեկտների ներկայացուցչական ինստիտուտի մի մասը: Իմ կարծիքով դիտորդների իրավական կարգավիճակի կատարելագործումը պետք է ընթանա ոչ այնքան նույն կարգավիճակի հղկման ճանապարհով, ոչ այնքան ներկայացուցչական ինստիտուտի կատարելագործման ուղիով, որքան ընտրություններում դիտորդական վերահսկողության լիարժեք ինստիտուտի ձևավորման ընթացքով: Ընտրություններում դիտորդության վերահսկողության լիարժեք ինստիտուտի ձևավորումը մենք կապում ենք տեղական դիտորդների ինքնուրույնության աստիճանի հետ: Դիտորդների ինքնուրույնության աստիճանի բարձրացումը, այդ թվում անկախ դիտորդների ստեղծման հաշվին, ազատ ու թափանցիկ ընտրությունների միջազգայնորեն ճանաչված սկզբունքի իրականացման կարևորագույն երաշխիքն է:

Շատ կարևոր է սահմանազատել դիտորդների և վստահված անձերի կարգավիճակները:

[1] *ԱՀ Ընտրական օրենսգիրք*

Մերի Մկրտումյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաաշխարհագրական ֆակուլտետի
«Իրավագիտություն» բաժին առկա 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ Էդուարդ Գյունաշյան
mary.mkrtumyan@email.ru

ԷՎԹԱՆԱԶԻԱՅԻ ԻՐԱՎԱԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *էվթանազիա, կյանք, մահ, սպանություն, իրավունք, օրենք, հիվանդ,բժիշկ, քրեական պատասխանատվություն:*

Սույն թեմայի շրջանակներում անդրադառնալու ենք.

1. *«Էվթանազիա» հասկացությանը և դրա տեսակներին.*
2. *հին, միջնադարյան և նորագույն շրջանի փիլիսոփաների, բժիշկների,հոգեբանների և իրավաբանների՝ խնդրի վերաբերյալ դիրքորոշումներին.*
3. *էվթանազիան արդարացնողների և դրանց հակառակորդների փաստարկներին.*
4. *գթասրտությունից մղված սպանության վերաբերյալ տարբեր երկրների դիրքորոշումներին.*
5. *ոլորտում գործող օրենսդրական բացերին:*

Мери Мкртумян

ПРАВОВОЕ РЕГУЛИРОВАНИЕ «ЭВТАНАЗИИ» В РА

Ключевые слова*: эвтаназия, жизнь, смерть, убийство, право, закон, больной, врач, уголовная ответственность.*

В рамках этой темы мы рассмотрим:

1. *Понятие«Эвтаназия» и ее типы.*
2. *Позиции философов, врачей, психологов и юристов древних, средневековых и новейших времен в отношении данной проблемы.*
3. *Доводы сторонников и противников «Эвтаназии»*
4. *Позиции разных стран в отношении убийства из сострадания.*
5. *Законодательные пробелы в данной сфере.*

Կյանքի և մահվան մասին մտքերը ուղեկցում են մեզ մեր ամբողջ կյանքի ընթացքում: Դրանք հանդիսանում են երկու՝ միմյանց հետ փոխկապակցված ասպեկտներ: Այս փոխկապակցվածությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ կյանքը և մահը կախված են մեկը մյուսից և հաջորդում են իրար: Կյանքի և մահվան մասին խոսելիս անհնար է չանդրադառնալ էվթանազիայի խնդրին, որը համարվում է արդի աշխարհի վիճելի թեմաներից մեկը: Իսկ ի՞նչ է էվթանազիան, ե՞րբ է այն առաջացել և ինչու՞ է վեճերի տեղիք տալիս: Կարճ ներկայացնենք էվթանազիայի պատմությունը:

Էվթանազիա բառը հունարենից թարգմանաբար նշանակում է «լավ մահ»: Առաջին անգամ այս եզրույթը գործածել է անգլիացի փիլիսոփա Ֆրենսիս Բեկոնը իր « Նոր օրգանոն» աշխատությունում՝ «թեթև մահ» բառակապակցություն սահմանելու համար: Բեկոնը գտնում էր, որ բժշկի պարտքն է ոչ միայն վերականգնել հիվանդի առողջությունը, այլև ապահովել անբուժելի հիվանդի հանգիստը, առանց տառապանքների մահը [1] :

Էվթանազիայի վերջնական պարզաբանումը տրվում է Դավանաբանության 1980թ. մայիսի 5-ին ընդունված «Հոչակագիր էվթանազիայի մասին» փաստաթղթում, համաձայն որի՝ *էվթանազիա* ասելով հասկացվում է ցանկացած գործողություն կամ ընդհակառակը անգործություն, որն իր էությամբ կամ դիտավորությամբ հանգեցնում է մահվան: Այսինքն՝ իր ուղղակի նշանակությամբ էվթանազիան բժշկի օգնությամբ կանխամտածված սպանությունն է [2] :

Ըստ հիվանդին մահ պատճառելու եղանակի՝ տարբերում են էվթանազիայի երկու տեսակ՝ պասիվ(բացասական)և ակտիվ(դրական): Պասիվ էվթանազիայի դեպքում դադարեցվում է բժշկական օգնությունը, ինչն էլ արագացնում է մարդու բնական մահը: Ի տարբերություն պասիվ էվթանազիայի՝ ակտիվ էվթանազիայի դեպքում մահը վրա է հասնում մեռնողի օրգանիզմի մեջ մահաբեր դեղամիջոցներ ներարկելով: Ակտիվ էվթանազիան արտահայտվում է 3 ձևով: Մի դեպքում մեռնողի հարազատները կամ բժիշկը, տեսնելով, թե ինչպես է տանջվում անհուսալի հիվանդը և ի զորու չլինելով մեղմելու նրա ցավերը, հիվանդի օրգանիզմի մեջ ներմուծում է ցավազրկող դեղերի գերչափաբաժին, որի հետևանքով էլ վրա է հասնում մահը: Այս ձևը բժշկության մեջ կոչվում է «կարեկցող» սպանություն: Իսկ մյուս երկու ձևերը, որոնք կոչվում են ինքնասպանություն և « օժանդակող» սպանություն, կատարվում է առանց բժշկի անմիջական օգնության: Հիվանդն իր կամքով միացնում է մահվան մեքենան, որն էլ հանգեցնում է արագ և ոչ ցավագին մահվան:

Էվթանազիան կարող է լինել կամավոր և ոչ կամավոր: Կամավոր էվթանազիան իրականացվում է հիվանդի համաձայնությամբ կամ նախապես ձևակերպված իրավական պայմանավորվածությամբ: Ոչ կամավոր էվթանազիան իրականացվում է անկախ հիվանդի կամքից, եթե նա անգիտակից է և անկարող է իր կամքը արտահայտել [3] :

Չնայած էվթանազիայի արդիականությանը, այն այդքան էլ նոր երևույթ չէ, և հիմքեր կան կարծելու, որ էվթանազիան տարածված է եղել նաև հին աշխարհում: Դրա մասին է վկայում այն հանգամանքը, որ Պլատոնը իր «Հանրապետություն» հռչակավոր աշխատության մեջ իդեալական պետության կառուցվածքի հիմնական գծերը նշելիս գրել է, որ բժիշկները չպետք է խնամեն այն մարդուն, որն այլևս ի վիճակի չէ ապրելու: Պետք է թույլ տալ, որ նա մահանա: Այդպիսի վերաբերմունքն ըստ Պլատոնի նպաստավոր է և՛ պետության, և՛ տվյալ մարդու համար [4]: Այսինքն կարող ենք ասել, որ Պլատոնը պասիվ էվթանազիայի կողմնակից էր:

Էվթանազիային վերաբերող մտքերի հանդիպում ենք նաև միջնադարյան հայ մտածողների, մասնավորապես Դավիթ Անհաղթի գրվածքներում: Նա իր «Սահմանք իմաստասիրութեան» գրքում նշում էր. « Բժիշկությունը առողջության արարիչ է, քանզի բժշկության նպատակն է կամ առկա առողջության պահպանումը, կամ էլ կորցրած առողջության վերականգնումը»:Դավիթ Անհաղթը մերժում էր ստրիկյան փիլիսոփաների ուսմունքը, ովքեր որոշ դեպքերում (սով, մերձավորների կորուստ, տարերային աղետ, մարդկային արժանապատվության ոտնահարում, անբուժելի հիվանդություն) արդարացնում էին ինքնասպանությունը: Նա ասում էր. «Իսկ փորձությունները, որտեղ էլ նրանք պատահեն, գոյություն ունեն ոչ նրա համար, որ մարդ վերջ տա ինքն իրեն, այլ որպեսզի փորձեն մարդու ոգին: Որովհետև ինչպես լավ նավապետը փորձվում է ոչ թե խաղաղ ծովում, այլ ալեկոծության ժամանակ, նույնպես և վեհագույն հոգին խիզախորեն փորձությանն ընդառաջ է գնում» [5] :

Դավիթ Անհաղթի այս մտքերը բխում են փիլիսոփայական նույն դիրքերից, որոնք

արտահայտվել են Հիպոկրատի հանրահայտ երդման մեջ, որտեղ ի թիվս այլ արգելքների բժիշկը երդվում է. « Ես ոչ մեկին չեմ տա այն մահացու միջոցը, որը նա խնդրում է ինձանից և ցույց չեմ տա այնպիսի միջոցներ, որոնց օգնությամբ նա կարող է իրագործել մեռնելու իր մտադրությունը» [6] :

Մխիթար Գոշն իր Դատաստանագրքում նույնպես անդրադարձել է բժշկի կողմից հիվանդին սպանելու խնդրին՝ այն դասելով ակամա հանցագործությունների շարքին:

Էվթանազիայի խնդիրը ներկայումս լրջորեն քննարկվում է բժիշկների, փիլիսոփաների, հոգեբանների և իրավաբանների շրջանում:

Բժիշկների մի մասը կողմ է էվթանազիայն: Նրանք գտնում են, որ եթե հիվանդը գտնվում է գիտակից վիճակում և լիովին իրեն հաշիվ է տալիս իր հիվանդության ծանրության, տառապանքների և մահվան անխուսափելիության մասին, կամավոր վճռում է արագացնել իր մահը, ապա նման ազատ ընտրությունը պետք է հարգել: Նրանք կարծում են, որ տառապող ու անխուսափելի մահվան դատապարտված հիվանդի կյանքը երկարացնելը դաժանություն է:

Բժիշկների մի մասն էլ դեմ է արտահայտվում էվթանազիային՝ այն համարելով հակաբարոյական: Նրանք կարծում են, որ «հեշտ» մահը կարող է հանգեցնել մահացությունների մեծ թվի:

Նշենք նաև, որ մարդու կյանքը բացառիկ արժեք է, այն անփոխարինելի է և եզակի: Հետևաբար բժիշկը ամեն ինչ պետք է անի՝ այդ արժեքը պահպանելու համար: Եվ ինչպես գրում է Պյոտր Բեյլինը իր «Բժշկի պատվիրաններում». «Բժիշկը պետք է պայքարի մարդու կյանքի համար մինչև վերջին հնարավորությունը, որպեսզի նրան ասեն, որ նա սպառեց բոլոր միջոցները և չխնայեց ուժերը» [7] :

Ի դեպ, համաշխարհային կրոնները նույնպես մերժում են էվթանազիան՝ այն համարելով Աստծու գործերին միջամտություն, որն իհարկե աններելի քայլ է:

Հոգեբանները նույնպես միանշանակ եզրահանգման չեն գալիս: Նրանց մեծ մասը կարծում է, որ չնայած անձն ինքն է որոշում իր ապրելու կամ չապրելու հարցը, սակայն էվթանազիա իրականացնելու որոշումը երբեմն կարող է կայացվել դեպրեսիվ համախտանիշի ազդեցության ներքո, որի ժամանակ հիվանդն անցնում է դեպրեսիայի միջով, առանձնանում ու մեկուսանում է մարդկանցից և կարծում է, թե ինքն այլևս ի վիճակի չէ դիմակայելու: Այդպիսի հոգեվիճակում կայացրած որոշումը կլինի ոչ թե լուրջ վճիռ, այլ էպիզոդիկ ցանկություն, որը հետագայում ենթակա կլինի փոփոխման:

Էվթանազիայի խնդիրը բազմաթիվ տարակարծությունների տեղիք է տալիս՝ այն քննարկողներին բաժանելով կողմ և դեմ խմբերի: Այսպես՝ էվթանազիայի կողմնակիցները դրա իրականացումն արդարացնելու համար բերում են հետևյալ փաստարկները.

1. Մարդը ազատվում է ավելորդ տանջանքներից:
2. Հիվանդը մտահոգվում է իր հարազատների համար՝ չցանկանալով բեռ դառնալ նրանց ուսերին:
3. Հիվանդը ցանկանում է մահանալ արժանապատվորեն:
4. Էվթանազիան կարող է օգտագործվել որպես հանրության մեջ հիվանդագին գեների տարածումը կանխելու ձև:
5. Ֆինանսական և բժշկական միջոցները խնայելու միջոց. այսինքն՝ անհուսալի հիվանդների կյանքի պահպանությանն ուղղված անարդյունք ու երկարատև միջոցառումների դադարեցում, որպեսզի այդ միջոցները հատկացվեն այն հիվանդների

բուժմանը, ովքեր ապաքինումից անմիջապես հետո ի վիճակի կլինեն շարունակել իրենց աշխատանքային գործունեությունը:

Իսկ էվթանազիայի հակառակորդները բերում են հետևյալ փաստարկները.

1. Հոգու ինքնամաքրում տանջանքի միջոցով:
2. Կրոնական և բարոյական դիրքորոշումներ՝ աստվածաշնչյան «Մի՛ սպանիր» և «Սիրի՛ր մերձավորիդ հանուն Աստծո» պատվիրանների կատարում:
3. Բժշկությանը հայտնի այնպիսի դեպքերի առկայություն, որոնց ժամանակ անբուժելի համարվող հիվանդությունը ինքն իրեն բուժվել է, կամ ժամանակի ընթացքում հայտնագործվել է հիվանդությանը համարժեք դեղամիջոց, կամ էլ հիվանդը երկար տարիներ հետո դուրս է եկել կլինիկական մահից:
4. Բժիշկները պիտի պայքարեն հիվանդությունների և մահվան դեմ՝ հնարավորինս երկարացնելով հիվանդի կյանքը, եթե բժիշկները հեշտ ճանապարհով ազատվեն հիվանդներից, ապա նրանք այլևս չեն պայքարի հիվանդի կյանքի համար:

Մեր կողմից հավելենք նաև, որ էվթանազիան վտանգավոր է այնքանով, որ կարող է մահը վերածել կենցաղային ծառայությունների, որն էլ իր հերթին կարող է հանգեցնել վատ հետևանքների, որպիսին կարող է լինել, օրինակ, երբ բժիշկը էվթանազիա իրականացնելու համար (որպեսզի ավելի շատ եկամուտ ստանա) հակված կլինի մեծ թվով հիվանդների հորդորել,որ համաձայնվեն ենթարկվել էվթանազիայի, որն էլ իր հերթին կհանգեցնի լուրջ չարաշահումների:

Բացի դա, կավելանան նաև ժառանգների կողմից կտակի համար շահադիտական նկատառումներից ելնող ոչ կամավոր էվթանազիա իրականացնելու դեպքերը: Կամ էլ բժիշկների կողմից էվթանազիայի անվան տակ իրականացվող սպանությունները և այլն:

Նախքան ՀՀ-ում էվթանազիայի իրավակարգավորմանը անդրադառնալուն,մի փոքր խոսենք խնդրի իրավակարգավորման վերաբերյալ տարբեր երկրների դիրքորոշումներից: Այսպես. պետությունների մեծ մասը արգելում է ցանկացած տիպի էվթանազիայի կիրառումը, որի իրականացման համար նշանակում է քրեական պատասխանատվություն: Օրինակ՝ Գերմանիան, որը, հիշելով 1939-1941թթ. իրականացրած էվթանազիայի հետևանքները, մերժում է դրա օրինականացումը և էվթանազիա իրականացնելու համար քրեական օրենսգրքով նախատեսում է պատիժ՝ առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկում [8]: Իսկ Իտալիայում ոչ միայն մերժում են էվթանազիան,այլև այն համարում են ցեղասպանությանը հավասար երևույթ, և դրա իրականացման համար նախատեսվում է առավելագույնը 5 տարի ժամկետով ազատազրկում: Էվթանազիայի համար խիստ պատիժ սահմանող երկրներից է համարվում Կորեայի Հանրապետությունը, որը նախատեսում է մինչև 10 տարի ժամկետով ազատազրկում: Մեր հարևան Ադրբեջանը էվթանազիայի համար նախատեսում է մինչև 2 տարի ժամկետով ուղղիչ աշխատանքների իրականացում կամ ազատազրկում՝ առավելագույնը 3 տարի ժամկետով [9] :

Պետությունների մի զգալի մասն էլ օրինականացրել են էվթանազիայի կիրառումը: Այդ երկրներից են՝ Նիդեռլանդները, Հոլանդիան, Բելգիան, Շվեդիան,Ֆինլանդիան,Ֆրանսիան, Շվեյցարիան,Իսրայելը և այլն:

Հետաքրքիր է էվթանազիայի շվեդական մոդելը, որի շնորհիվ ինքնասպանությունների թվաքանակը Շվեդիայում զգալի չափով կրճատվել է:

Նշենք նաև, որ դեռևս 1977թ. Կալիֆոռնիայում ընդունվել է «Մարդու մահվան իրավունքի մասին» օրենք, ըստ որի՝ անբուժելի հիվանդ անձինք կարող են պատրաստել փաստաթուղթ կամ գրել կտակ, որում կարող են արտահայտել վերականգնողական սարքավորումները

անջատելու մասին իրենց որոշումը [10] :

Այժմ անդրադառնանք էվթանազիայի վերաբերյալ Ռուսաստանի Դաշնության դիրքորոշմանը: Այսպես, ՌԴ քրեական օրենսգիրքը էվթանազիայի համար պատասխանատվություն սահմանող հատուկ նորմ չունի: Այստեղ էվթանազիան դիտվում է որպես հասարակ սպանություն, որի համար պատասխանատվությունը սահմանվում է 105-րդ հոդվածով [11]: Սակայն դրա հետ մեկտեղ « Քաղաքացիների առողջության պահպանման մասին» ՌԴ օրենքի 45-րդ հոդվածով բժշկական անձնակազմին արգելվում է էվթանազիայի իրականացումը [12] :

Վերադառնալով մեր երկրին՝ նշենք, որ Հայաստանի Հանրապետությունում նույնպես արգելվում է էվթանազիայի իրականացումը: Համաձայն «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի. «Հայաստանի Հանրապետությունում արգելվում է էվթանազիան՝ պացիենտի խնդրանքով նրա մահվան արագացումը որևէ գործողությամբ և միջոցներով: Այն անձինք, ովքեր պացիենտին գիտակցաբար դրդում են էվթանազիայի կամ իրականացնում են այն, կրում են պատասխանատվություն՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով» [13] :

Սակայն ՌԴ քրեական օրենսգրքի նման՝ ՀՀ քրեական օրենսգիրքը նույնպես էվթանազիայի համար պատասխանատվություն սահմանող հատուկ նորմ չի պարունակում: Օրենսգիրքը էվթանազիան դիտում է որպես հասարակ սպանություն և դրա համար պատիժ նշանակում 104-րդ հոդվածի առաջին մասով: Օրենսդիրը էվթանազիան որակում է որպես տուժողի համաձայնությամբ կամ խնդրանքով սպանություն՝ առանց ծանրացուցիչ և մեղմացուցիչ հանգամանքների, որի իրականացման համար նախատեսում է 8-15 տարի ազատազրկում [14] :

Սակայն գտնում ենք, որ էվթանազիայի բոլոր տեսակների համար հնարավոր չէ նույն պատիժը սահմանել: 104-րդ հոդվածի առաջին մասով պատասխանատվության կարող են ենթարկվել միայն կամավոր էվթանազիա իրականացրած բժիշկները: Հարց է առաջանում, իսկ ոչ կամավոր էվթանազիայի դեպքում ի՞նչ պատիժ է նախատեսված: Քանի որ ոչ կամավոր էվթանազիան իրականացվում է տուժողի հարազատների և բժշկի միջև կայացված հանցավոր համագործակցությամբ, իսկ ՀՀ քրեական օրենսգրքի հատուկ մասում հանցավոր համագործակցության կողմից հանցանք կատարելը որպես պատասխանատվությունը ծանրացնող հանգամանք նախատեսված չէ, ապա ոչ կամավոր էվթանազիա իրականացնելու համար պատիժը պետք է նշանակվի 104-րդ հոդվածի երկրորդ մասի 7-րդ կետով. այն է՝ մի խումբ անձանց կամ կազմակերպված խմբի կողմից կատարված սպանություն, որը պատժվում է ազատազրկմամբ տասներկուսից քսան տարի ժամկետով կամ ցմահ ազատազրկմամբ [15] :

Իսկ ինչպես վարվել այն բժիշկների հետ, ովքեր իրենք չեն իրականացնում էվթանազիա, սակայն օժանդակում են հիվանդի ինքնասպանությանը: Քանի որ ըստ ՀՀ քրեական օրենսգրքի ինքնասպանությունը ինքնին պատժելի արարք չէ, հետևաբար պատժելի չեն կարող համարվել նաև ինքնասպանությանն օժանդակելը: Այստեղից էլ կարող ենք եզրակացնել, որ բժիշկը, հիվանդի ինքնասպանությանն օժանդակելով, նրա նկատմամբ իրականացնում է էվթանազիա և մնում է անպատիժ: Սա կարող ենք դիտել ՀՀ քրեական օրենսգրքի լուրջ բաց, քանի որ բժիշկները, որպեսզի զերծ մնան քրեական պատասխանատվությունից, կարող են ինքնասպանությանն օժանդակելու միջոցով հիվանդների նկատմամբ իրականացնել էվթանազիա:

Մի կողմից համամիտ ենք օրենսդրի հետ այն բանում, որ եթե ինքնասպանությունը

պատժելի արարք չէ, ապա դրան օժանդակելը նույնպես պատժելի չէ: Սակայն հաշվի առնելով, որ ՀՀ-ում քրեական պատասխանատվությունը կրում է դաստիարակչական բնույթ, իսկ անպատժելիության գաղափարը ծնում է նոր հանցագործություններ, ապա առաջարկում ենք ՀՀ քրեական օրենսգիրքը լրացնել նոր հոդվածով, այն է հոդված 111 պրիմ 1 բժշկի կողմից ինքնասպանությանը օժանդակելը.

Ինքնասպանությանը օժանդակելը անձին համապատասխան դեղերի, միջոցների, պայմանների ապահովելու միջոցով, եթե անձն ինքնասպանությամբ կյանքին վերջ է տվել կամ ինքնասպանության փորձ է կատարել, պատժվում է ազատազրկմամբ երկուսից վեց տարի ժամկետով կամ որոշակի պաշտոններ զբաղեցնելու կամ որոշակի գործունեությամբ զբաղվելու իրավունքից զրկելով առավելագույնը երեք տարի ժամկետով:

Այսպիսով, կարող ենք ասել, որ էվթանազիայի հիմնախնդրին վերաբերող շատ հարցեր դեռ չունեն հաստատուն պատասխաններ և մնում են վիճելի մասնագիտական շրջանակների ներկայացուցիչների կողմից, բայց եթե նույնիսկ օրերից մի օր ՀՀ քրեական օրենսգիրքը որոշի թույլատրել էվթանազիայի իրականացումը, գործնականում շատ դժվար կլինի որոշել այն սահմանը, որից այն կողմ անձն իր հիվանդությամբ անխուսափելիորեն դատապարտված կլինի մահվան: Ընդ որում, ցանկության դեպքում հանցավորն այդ սահմանը հեշտությամբ կարող է տեղափոխել իրեն ձեռնտու կողմ՝ դրանով իսկ նպաստելով դատական պրակտիկայում սպանությունների վերաբերյալ գործերով սխալների քանակի ավելացմանը:

Առաջարկում ենք նաև, որ մեր պետությունը ուշադրություն դարձնի արհեստական շնչառության ապարատներց օգտվող անձանց իրավունքներին և հնարավորության դեպքում նրանց բուժումը վերցնի իր ուսերին, քանի որ էվթանազիան մեծամասամբ իրականացվում է այդ հիվանդների նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Տե՛ս Бэкон Ф., Соч. в 2 т., т. 2, I, 1978, էջ 269:
2. Declaration on Euthanasia - May 5, 1980, www.vatican.va.
3. Биоэтика Учебное пособие С.А.Давтян, Ереван 2013, ст.121.
4. Նալչաջյան Ա.,Մահվան հոգեբանություն կամ ինչպես է հոգին հեռանում մարմնից, Եր., 1992, էջ 25:
5. Վարդանյան Ա., Ասլանյան Ա.. Բժշկության պատմություն: Երևան, 2017, էջ141
6. Աստվածատրյան Վ. «Բժշկական էթիկա», Երևան 1984
7. Медицинская газета 18/XII, 1962
8. Уголовный кодекс ФРГ:§ 217
9. Биоэтика Учебное пособие С.А.Давтян, Ереван 2013, ст.126.
10. "Уголовный кодекс Российской Федерации" от 13.06.1996 N 63-ФЗ (ред. от 02.08.2019).
11. Федеральный закон «Об основах охраны здоровья граждан в Российской Федерации» от 21.11.2011 N 323-ФЗ (ред. от 29.05.2019).
12. «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ օրենք Ընդունված է Ազգային ժողովի կողմից 04 մարտի, 1996թ.:
13. ՀՀ Քրեական օրենսգիրք. Ընդ.է 2003թ. ապրիլի 18-ին, փոփոխություններ և լրացումներ՝ 2018թ. օգոստոսի 8:

ՀՏԴ 347.9 Իրավագիտություն

Эмма Мнацаканян, Луиза Атаян,
Научный Руководитель – к.ю.н. К. М. Оганесян
Российско-Армянский университет
Институт права и политики
luizaatayan3@gmail.com, emma.mnatsakanyan13@gmail.com

КРИПТОВАЛЮТА В СИСТЕМЕ ОБЪЕКТОВ ГРАЖДАНСКИХ ПРАВ

Ключевые слова: *криптовалюта, объект, права, деньги, технология, имущество, вещь.*

В статье анализируется правовой режим криптовалюты в системе объектов гражданских прав. Рассматривается соотношение криптовалюты и наличных, безналичных и электронных денег, определяются их общие и особые признаки. Выделяется ряд общих признаков с другими формами денег, но в целом устанавливается, что криптовалюта – особый объект. С учетом системы транзакций, который является открытым и децентрализованным, выявляются характерные черты криптовалюты.

Էմմա Մնացականյան, Լուիզա Աթայան

ԿՐԻՊՏՈՎԱԼՅՈՒՏԱՆ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՕԲՅԵԿՏՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ

Բանալի բառեր՝ *կրիպտովալյուտա, օբյեկտ, իրավունքներ, փող, տեխնոլոգիա, գույք, իր:*

Սույն հոդվածում ուսումնասիրվել է կրիպտովալյուտայի իրավական կարգավիճակը քաղաքացիական իրավունքի օբյեկտների համակարգում: Քննարկվում է կրիպտովալյուտայի և կանխիկ, անկանխիկ ու էլեկտրոնային փողերի հարաբերակցությունը, սահմանվել են դրանց ընդհանուր և հատուկ հատկանիշները: Չնայած առանձնացվում են մի շարք ընդհանուր հատկանիշներ, սակայն ընդհանուր առմամբ կրիպտովալյուտան դիտարկվում է որպես քաղաքացիական իրավունքի յուրահատուկ օբյեկտ: Հաշվի առնելով գործարքների համակարգի թափանցիկությունը և ապակենտրոնացվածությունը վեր են հանվում կրիպտովալյուտայի բնորոշ հատկանիշները:

В какой-то момент деньги начали "оцифровываться". Они развивались, углубляясь в сеть, пока не появились полностью виртуальные формы: криптовалюта. Наиболее широко известной и спорной криптовалютой является *биткоин*. **Биткойн** был создан на основе технологии блокчейн. Криптовалюты, работающие на технологии блокчейн, впечатляют нас уже несколько лет, но большинство людей до сих пор не знают о происхождении такой технологии. Впервые, что-то вроде современной технологии блокчейн, было создано еще в 1998 году и нашло свое первое воплощение в 2009 году. Человек, который вложился в тот момент, сейчас богаче на целых 50 миллионов.

Целью являлось создание электронной одноранговой системы, которая позволяла бы людям переводить наличные деньги, так как люди давно пытались создать какую-то цифровую валюту, но всегда были ограничены вопросом централизации. С тех пор, как Биткоин был введен на рынок вышло несколько сотен других криптовалют.

Основная идея криптовалюты - это создания безопасного и анонимного способа передачи валюты от одного человека к другому и с тех пор это было названо как *"цифровое золото"*. Цифровые деньги похожи на электронное хранение наших обычных счетов дебетовых карт, однако разница в том, как валюта может быть переведена без вмешательства банков или других посредников. Те, кто сейчас пользуются биткоином, сохраняют эту валюту в качестве инвестиций, а не для повседневных покупок или переводов.

Несмотря на популярность криптовалюты, ее все еще не принимают в банках в качестве депозитов. Но банки начинают интегрировать новую валюту и разрабатывать способ их

применения. В Японии происходит интеграция биткоина в современную экономику государства.

Каждый созданный Биткоин имеет связь с определенным ключом или адресом, что делает каждый **биткоин уникальным**. Публичная база данных записывает каждую транзакцию или торговлю Биткоина. База данных называется "***блокчейн***". Каждый биткоин существует внутри базы данных, и поэтому никакие монеты не хранятся за ее пределами. Эмиссия криптовалют зависит от "майнинга". **Майнинг** – *это сложный вычислительный процесс, производимая через компьютерные мощности, направленная на валидацию транзакций, в результате которого эмитируется новая единица криптовалюты.* При этом майнер (лицо, занимающееся майнингом), получает вознаграждение в виде криптовалюты или комиссии. Мощные майнинговые компьютеры необходимы для эффективного извлечения криптовалюты, но из-за сложности алгоритма центральный процессор потребляет много ресурсов. С каждым днем процесс майнинга все затрудняется, алгоритмы усложняются и вознаграждение уменьшается.

С юридической точки зрения, вопрос определения майнинга остается спорным. По мнению одних ученых майнинг является предпринимательской деятельностью, по мнению других – нет. По нашему мнению, майнинг можно регулировать согласно положениям договора предоставления услуг в результате чего одна сторона (майнер) получает оплату в виде вознаграждения. Другой вариант регуляции, возможна через положения договора аренды, в котором майнер предоставляет свои компьютерные мощности другому лицу и получает оплату, в виде награждения. Биткоины имеют связь с определенным "адресом", открытым ключом в транзакциях биткоинов. Этот метод шифрования с открытым ключом шифрует и расшифровывает сообщения для проверки каждой транзакции. Биткоины отправляются на открытый ключ каждого человека и хранятся в закрытом ключе владельца.

Одна из самых больших проблем с цифровой валютой заключается в том, что создание битов можно обеспечить на любом компьютере без труда. Но для того, чтобы валюта работала в экономике, ее должно быть крайне сложно создавать. Кроме того, чтобы иметь ценность, валюта должна иметь некоторую защиту от многократного использовния одной и той же монеты – она должна перемещаться между владельцами при расходовании. Решением этой проблемы является наличие доверенного центрального органа, который ведет учет всех совершаемых операций. Биткоин работает на очень сложных математических алгоритмах, чтобы регулировать создание новых биткоинов и не допускать двойных расходов в сети.

В правоведении криптовалюта рассматривается в качестве объекта гражданских прав. Однозначного подхода относительно какому из видов объектов гражданских прав относится криптовалюта в настоящее время отсутствует. В теории существует спор между авторами, одни из которых считают, что криптовалюту совсем не следует отнести к системе объектов гражданских прав. Другие авторы рассматривают криптовалюту в качестве вещи, другие относят их к имущественным правам, а третьие – к иному имуществу. В законодательстве РФ объектами гражданских прав являются объекты материального и нематериального мира по поводу которых возникают, изменяются и прекращаются гражданско-правовые отношения. Согласно Гражданскому кодексу РФ к объектам гражданских прав относятся вещи, включая наличные деньги и документарные ценные бумаги, иное имущество, в том числе безналичные денежные средства, бездокументарные ценные бумаги, имущественные права; результаты работ и оказание услуг; охраняемые результаты интеллектуальной деятельности и приравненные к ним средства индивидуализации (интеллектуальная собственность); нематериальные блага[1]. В РФ выделяются следующие признаки предмета гражданских правоотношений. Такими являются следующие:

- *отсутствие четкой зависимости между физическими и правовыми свойствами вещи.* Одинаковым статус могут приобретать как предметы, имеющие индивидуально-определенные физические параметры, так и объекты с особенными формами визуализации.

[1] *Гражданский Кодекс РФ от 30 ноября 1994 года N 51-ФЗ, ст. 128*

Вещные права на них возникают не из-за их физических свойств, а в силу потребностей общества в их регулировании (например, энергия, газ, микроорганизмы, органы и ткани человека и др.). По мнению ученого А. Синицына, «признанное законодательством качество и свойство вещи как объекта гражданских прав предопределены совокупностью факторов: потребностями гражданского оборота, физическими свойствами самой вещи, законодательной регламентацией и причислением отдельных объектов к видам вещей (пусть и особого рода). Именно потребности оборота являются фактором вынужденного распространения на объекты гражданских прав, не являющихся по своей сути вещами, правового режима вещи, включая и правовые последствия ее оборота»[1].

- *оборотоспособность как обязательный признак объекта гражданских прав.* Данный признак предполагает, что вышеуказанные объекты могут свободно отчуждаться или переходить от одного лица к другому в порядке универсального правопреемства (наследование, реорганизация юридического лица) либо иным способом, если они не ограничены в обороте. В случае криптовалюты, возможность последних свободно отчуждаться или переходить от одного лица к другому происходит с помощью трансферов через **крипто – кошельки,** которые в свою очередь изъяты или ограничены в обороте. Следовательно, криптовалюты могут характеризоваться таким признаком объекта гражданских прав как оборотоспособность.

На основании вышеуказанного, можем сделать вывод о том, что криптовалюта хоть и не имеет свойств физической вещи, однако это не является препятствием для признания в гражданско-правовом смысле. Необходимость регулирования не отпадает. По этой причине законодатель признал наличие у некоторый предметов (например, энергия, газ, микроорганизмы, органы и ткани человека и др.) гражданско-правового оборота режим регулирования вещей, однако эти предметы не являются вещами. Именно такой подход не исключает возможность включения криптовалюты в ряд вещей. Следовательно, если рассмотреть криптовалюту как вещь, то сделки с криптовалютами можно признать **бартером (обмен товара на товар, мена).** Однако разработка такого статуса криптовалюты на теоретическом уровне еще не достаточна. Без искажения смысла и сути криптовалют (децентрализованность, анонимность, саморегулируемость и т.д.), государство не может реализовать свою принудительную функцию в случае споров контрагентов конкретных правоотношений, связанные с криптовалютами, в силу децентрализованности и анонимности.

Согласно ГК РФ наличные деньги относятся к вещам, в то время как безналичные денежные средства относятся к иному имуществу. Ст. 140 ГК РФ устанавливает, что платежи на территории РФ осуществляются путем наличных и безналичных расчетов[2]. В целях сравнения денег и криптовалют следует выявить функции и характерные черты денег.

И так, в работе Карла Маркса «К критике политической экономии» было отмечено пять функций денег, которые по сей день являются основополагающими в экономической теории[3]:

1. *Мера стоимости* – это функция, в которой деньги обеспечивают выражение и измерение стоимости товара придавая ей форму цены;
2. *Средство обращения* - это функция, в которой деньги являются посредником в обмене товаров и обеспечивают их оборот;
3. *Средство образования сокровищ и накопления* - это функция, в которой деньги обслуживают накопление стоимости в общей и абстрактной форме;
4. *Средство платежа* - это функция, в которой деньги обслуживают погашение различных долговых обязательств между субъектами экономических отношений;
5. *Мировые деньги* - это функция, в которой деньги обеспечивают движение стоимости в международном экономическом обороте и обеспечивают реализацию взаимоотношений между странами.

---

[1] ***Синицын С. А.*** *Вещь как объект гражданских прав: возможные и должные критерии идентификации // Законодательство и экономика. 2016. № 11. С. 7–17.*

[2] *Гражданский Кодекс РФ от 30 ноября 1994 года N 51-ФЗ, ст. 140*

[3] ***Карл Маркс****. «К критике политической экономии». 1859*

Мера стоимости криптовалют состоит в том, что большое количество хозяйствующих субъектов во всем мире имеют криптовалютное отражение цен на товары и услуги, в том числе в РА и РФ. Средство обращения криптовалют состоит в том, что на сегодняшний день они используются в качестве посредников в разных сделках.

Криптовалюта как средство платежа признан законным во многих развитых государствах и имеет перспективы стать очень популярной. Когда-то в качестве мировых денег выступало золото, сейчас – в основном доллар США. Самым важным фактором для распространения криптовалют в качестве мировых денег является факт, что криптовалюта не централизована в руках государства.

В экономической теории понятие деньги определяется как особый товар, выполняющее в экономике роль всеобщего эквивалента[1]. Из вышесказанного можно сделать вывод, что теоретически деньгами (всеобщим эквивалентом) может служить любой товар или вещь, если он будет приниматься в качестве такового контрагентами или субъектами гражданских правоотношений, примером может служить вышеизложенный вид денег – товарные деньги.

Одним из важных инструментов регулирования денежной системы со стороны государства является **эмиссионная функция денег.** Эмиссию совершает Центральный Банк, тем самым контролируя оборот денежной массы в экономике государства. Эмиссия криптовалют в основном происходит с помощью майнинга[2]. Для распространения на криптовалюту режим денег необходимым и важным условием является контроль оборота денежной массы со стороны государства (в частности - ЦБ), которая, в случае криптовалют полностью отсутствует. Еще одним проблематичным вопросом, для придания криптовалют статуса денег, является специфика разновидностей криптовалют. Например, биткоин ограничен в своем количестве (может выпускаться до 21 миллиона биткоинов), а эфириум – нет. Следовательно, эмиссионная функция криптовалют разнообразна, тем самым не является аналогичным с деньгами. Однако криптовалюту можно сравнить с **иностранной валютой**, как это сделали некоторые государства. Иностранная валюта законом определена как *денежные знаки в виде банкнот, казначейских билетов, монеты, находящиеся в обращении и являющиеся законным средством наличного платежа на территории соответствующего иностранного государства (группы иностранных государств), а также изымаемые либо изъятые из обращения, но подлежащие обмену указанные денежные знаки.*[3] С формально-юридической точки зрения криптовалюта может подпадать под это определение, так как криптовалюта является законным платежным средством на территории иностранного государства (например, Япония), но с экономической точки зрения это нецелесообразно, так как пусть ЦБ и не эмитирует иностранную валюту, но так или иначе регулирует национальный денежный оборот с помощью купле-продажи иностранной или национальной валюты на бирже, тем самым регулируя курс и денежный оборот национальной валюты. А в случае криптовалюты такая регуляция практически невозможна и, следовательно, с экономической точки зрения – нецелесообразна. Сравнительно недавно, электронные денежные средства стали регулироваться на законодательном уровне и целесообразным считаем их сравнение с криптовалютами. По мнению председателя совета ассоциации «Электронные деньги» В. Достов и аналитик П. Шуст “криптовалюта из себя представляет негосударственные расчетные единицы, не имеющие единого эмиссионного центра”[4]. Отождествление криптовалюты с электронными денежными средствами ученые считают нецелесообразным, о чем свидетельствует п. 18 ст. 3 Федерального закона No 161-ФЗ от 27 июня 2011 г. (ред. от 05.05.2014) «О национальной платежной системе». Следовательно,

---

[1] ***Ю.А. Давыдова, А.В. Матюхин*** *// учебник: «Обществознание» Московская финансово-промышленная академия 2011 г. // тема: Понятие «деньги», их виды и функции// стр. 98*

[2] *Майнинг - деятельность по созданию новых блоков в блокчейне для обеспечения функционирования криптовалютных платформ. За создание очередной структурной единицы обычно предусмотрено вознаграждение за счёт новых (эмитированных) единиц криптовалюты и/или комиссионных сборов.*

[3] *Федеральный закон от 10 декабря 2003 г. N 173-ФЗ "О валютном регулировании и валютном контроле"*

[4] ***Достов В.Л., Шуст П.М****. Рынок криптовалют: риски и возможности для кредитных организаций // Расчеты и операционная работа в коммерческом банке. - 2014. - No 1*

криптовалюта не имеет следующие признаки, присущие ЭДС:

1. ЭДС имеют **предоплаченную природу**, тогда как эмиссия криптовалют осуществляется самими пользователями и не обусловлена внесением фиатных денег;
2. переводы ЭДС из себя представляет **переводы денежных средств без открытия банковского счета,** что предполагает безналичное движение средств, однако тоже самое нельзя утвердить про криптовалюту, потому что последний не является ни наличным денежным средством и в целом не рассматривается как валюта, так как биткоин не является «денежным знаком в виде банкнот и монет Банка России» либо «денежными знаками в виде банкнот, казначейских билетов, монет, находящихся в обращении и являющихся средством наличного платежа на территории соответствующего иностранного государства (группы иностранных государств)». Также биткоины не учитываются на банковских счетах или в банковских вкладах в соответствии со ст. 1 Федерального закона «О валютном регулировании и валютном контроле»;
3. некоторые системы электронных денег в России строили свою работу на основе переуступки права требования, тогда как к криптовалютам это не применимо. У обладателя биткоинов просто не возникает права требования к лицу или группе лиц. Ликвидность средства платежа определяется только положением на рынке, привязки к национальным валютам или иным активам нет. Соответственно, криптовалюту можно рассматривать как специфический объект гражданских прав.[1]

Как отмечает А. Лейба, биткоин не подпадает под определение электронных денежных средств, следующее из смысла ст. 3 Федерального закона «О национальной платежной системе», а также под определение платежной системы, которое содержится в этом законе. Отмечается также, что в соответствии п. 2 ч. 1 ст. 1 Федерального закона «О валютном регулировании и валютном контроле», биткоин не является иностранной валютой и не подпадает под объекты гражданских прав, перечисленные в ст. 128 ГК РФ, поскольку не является вещью (товаром), наличными или безналичными деньгами, бездокументарными ценными бумагами и имущественными правами. Соответственно, биткоин следует отнести только к иному имуществу.[2]

Понятие **“иное имущество”** включает те объекты гражданских прав, которые не отнесены четко к другим исчерпывающим видам объектов, то отнесение криптовалют к этому ряду вполне логично, как и поступил законодатель в свою очередь.

Хотелось обратить ваше внимание на регулирование правового статуса криптовалюты в законодательстве РА. Все началось с объявления 1 августа 2017 года, согласно которой биткоин, разделилась на классический биткоин (BTC) и Bitcoin Cash (BCC). Новые биткоины поддержали некоторые майнеры (специализированные компьютеры, которые обеспечивают безопасность сети биткоинов, подтверждают платежи и выпускают новые цифровые монеты), которые частично переориентировались на получение BCC, а также обменники и разработчики кошельков, обеспечившие пользователей возможностью покупать, хранить и расплачиваться новой валютой. Центральный банк Армении призывает граждан воздержаться от использования виртуальных валют до внедрения соответствующего регулирования. На законодательном уровне биткоины не признаются электронными деньгами. Вслед за этим, ЦБ призывает воздержаться от их использования, учитывая отсутствия четкой регламентации данных правоотношений в законодательстве. В ЦБ также указали на необходимость составить общую картину эмиссии и оборота этих валют, а также уточнить вопросы по защите интересов потребителей этих денег.

Однако уже 2018 г. предложение о легализации майнинговой валюты поддерживает депутат оппозиционной парламентской фракции «Елк» Эдмон Марукян. Основные аргументы последний указал в законопроекте «О цифровых технологиях». Либеральное

---

[1] ***Достов В.Л., Шуст П.М***. *Рынок криптовалют: риски и возможности для кредитных организаций // Расчеты и операционная работа в коммерческом банке. - 2014. - No 1*

[2] ***Лейба А***. *Реальная жизнь виртуальных денег // ЭЖ-Юрист. - 2014. - No 23*

предложение господина Марукяна заключается в том, чтобы любое физическое или юридическое лицо, которому исполнилось 18 лет, может заниматься майнингом на территории Армении. Впрочем, для осуществления наличие лицензии или особого разрешения не требуется. В случае одобрения представленного оппозицией законопроекта, Армения станет вторым после Белоруссии государством в ЕАЭС, где будут разрешены операции с виртуальными валютами.

Кроме того, согласно законопроекту, до вступления в силу данного закона, а также после его вступления в силу, до 31 декабря 2023 года, майнинговые операции освобождаются от любого вида налогов и налогообложения. Вместе с тем, для лиц, занимающихся майнингом на территории Армении, могут быть установлены другие виды налоговых, таможенных или иного рода льгот, при условии, что не будет нарушена равная экономическая конкуренция между лицами, занимающимися майнингом на данном рынке.

ЛИТЕРАТУРА

Нормативно-правовые акты и официальные документы

1. Конституция Российской Федерации (принята всенародным голосованием 12.12.1993) (с учетом поправок, внесенных Законами РФ о поправках к Конституции РФ от 30.12.2008 N 6-ФКЗ, от 30.12.2008 N 7-ФКЗ, от 05.02.2014 N 2-ФКЗ, от 21.07.2014 N 11-ФКЗ) [Электронный ресурс]: // Система Консультант Плюс. Версия Проф.
2. Гражданский кодекс Российской Федерации (часть первая)" от 30.11.1994 N 51-ФЗ (ред. от 03.08.2018) (с изм. и доп., вступ. в силу с 01.01.2019).
3. Федеральный закон «О национальной платежной системе» от 27 июня 2011 г. № 161-ФЗ // СЗ РФ. – 2011. – № 28.
4. Федеральный закон «О валютном регулировании и валютном контроле» от 10 декабря 2003 г. № 173-ФЗ // СЗ РФ. – 2003. – № 49.
5. Информация Пресс-службы Банка России Об использовании при совершении сделок «виртуальных валют», в частности, Биткойн [Электронный ресурс]: // http://www.cbr.ru/press/PR/?file=27012014_1825052.htm

Научная и учебная литература

1. А. А. Максуров // научная статья// Майнинг как юридическая и информационная категория// [Электронный ресурс]: http://apel.ieml.ru/storage/archive_articles/9852.pdf
2. Алимов, О.В. Есть ли правовое будущее у криптовалюты? / О.В. Алимов // Перспективы развития науки и образования. – 2017. – № 6. – С. 78 – 82.
3. Бабкин, Д.Д. Анализ развития и регулирования криптовалют: зарубежный и российский опыт / Д.Д. Бабкин // МИР (Модернизация. Инновация. Развитие). – 2017. – № 3. – С. 17 – 24.
4. Бутенко, Е.Д. Биткойн. Состояние и перспективы развития криптовалюты / Е.Д. Бутенко // Финансы и кредит. – 2015. – № 23 (599). – С. 44 – 48.
5. Гокоев, С.А., Чернышова, М.В. Сферы применения криптовалюты и возможности замещения денег / С.А. Гокоев, М.В. Чернышова // Символ науки. – 2017. – № 6. – С. 116 – 122.
6. Гутор, А.А. Перспективы развития криптовалют / А.А. Гутор // Общество и право. – 2018. – № 2. – С. 96 – 99.

ՀՏԴ 342.4 Իրավագիտություն

Դավիթ Մուրադյան
ՇՊՀ /Գավառ/
d.muradyankareni1998@gmail.com,
Գիտական ղեկավար՝ Ռուզաննա Հակոբյան
rektor@gsu.am

ՀՀ ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎԻ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎԻՃԱԿԸ

Բանալի բառեր. *օրինաստեղծ իշխանություն, ինքնիշխանություն, Ազգային ժողով, խմբակցություն, պառլամենտական դիվանագիտություն, սահմանադրաիրավական կարգավիճակ, ներկայացուցչություն, պատգամավորական մանդատ, պետաիրավական ինստիտուտ, օրենսդրական նախաձեռնություն:*

Ключевые слова. *Законодательная власть, суверенитет, Национальное собрание, фракция, парламентская дипломатия, конституционный статус, представительство, парламентский мандат, государственный правовой институт, законодательная инициатива.*

В статье автор анализирует конституционно-прававой статус Парламента РА и его полномочия., Общеизвестно, что для нормального функционирования парламентаважное значение имеет деятельность партийных фракций, комитетов (комиссий), депутатского корпуса. Предметом исследований также являются дисуккии по основным направлениям внешней политики РА.

Պառլամենտը (Սենատ, խորհրդարան)՝ որպես պետաիրավական ինստիտուտ, ունի բազմադարյան պատմություն: «Պառլամենտ» տերմինն առաջացել է ֆրանսերեն բառից, որը նշանակում է «խոսել»: Պառլամենտի նախատիպերը ձևավորվել են Հին Հունաստանում և Հռոմում՝ որպես օրենքներ մշակող մարմիններ, որոք իրավագիտության պատմության մեջ հայտնի են որպես«400-ի խորհուրդ» և «500-ի խորհուրդ»[1]: Այն առաջին անգամ կազմակերպվել է Անգլիայում, թերևս 12-ից 13-րդ դարերում: Սակայն ժամանակակից պառլամենտները, որոնք բուրժուական հեղափոխությունների հաղթանակների արդյունքում հանդես եկան որպես պետական իշխանության կարևորագույն մարմիններից մեկը, ձեռք են բերել մի շարք նոր բնորոշ գծեր, որոնց շնորհիվ կազմում են հասարակության պետական կառավարման յուրահատուկ համակարգ: Իշխանությունների բաժանման պայմաններում պառլամենտը, որպես օրենսդիր իշխանություն իրականացնող մարմին, «Առաջինն է հավասարների մեջ»[2]: Օրենքներ ընդունելուց զատ, նրա իրավասության ոլորտի մեջ է մտնում պետության ներքին և արտաքին քաղաքականության նորմատիվ իրավական հիմքերի որոշումը, հիմնարար ծրագրերի մշակումը և ընդունումը, բյուջեի հաստատումը և այլն: Պառլամենտը երկրի բնակչության կողմից ընտրվող ներկայացուցչական մարմին է, օրինաստեղծ իշխանության կրողը, ժողովրդավարական պետական կառուցվածքի անբաժանելի ինստիտուտը[3]:

Պառլամենտարիզմի կարևորագույն հատկանիշների թվին են դասվում.

- իշխանությունների բաժանումը ,
- ներկայացուցչությունը,

---

[1] *Տե՛ս **Հակոբյան Հ. Հ.**, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան: Տիգրան Մեծ հրատ., 2007, էջ 23:*
[2] *Տե՛ս **Արշակյան Ա. Պ.**, Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2007, էջ 153:*
[3] *Տե՛ս **Баглай М., Туманов В.**, Малая энциклопедия конституционного права, М., 1998, էջ 300:*

- օրինականությունը,
- օրինաստեղծ գործունեությունը:

Պառլամենտների բնութագրի հարցում առանձնակի կարևորվում է ներկայացուցչությունը: Ըստ էության, միայն ժողովրդի անկաշկանդ և բոլոր տեսակի ազդեցությունների (նյութական, բարոյական, ֆիզիկական) ազատ կամքի արտահայտման դեպքում է, որ պառլամենտը կարող է ձեռք բերել իրական ժողովրդավարական և օրինական ներկայացուցչական մարմնի բնույթ: Ներկայացուցչական այդպիսի համաժողովը միայն կարող է հանդես գալ որպես ժողովրդի ինքնիշխանության կրող և համարվել պառլամենտական ժողովրդավարության սկզբունքների իրականացնող:

Ամեն մի երկրում պառլամենտը հանդես է գալիս որպես տվյալ ազգի քաղաքական ավանդույթների, սովորույթների և քաղաքական մշակույթի մակարդակի յուրօրինակ մարմնավորողը: Նկատի ունենալով նշված հանգամանքները՝ ՀՀ 2015 թվականի փոփոխություններով Սահմանադրությունը հրաժարվեց խառը՝ կիսանախագահական (կիսախորհրդարանական) կառավարման ձևից, և անցում կատարվեց կառավարման խորհրդարանական ձևին: Արդյունքում գործող Սահմանադրությամբ էապես բարելավվեց Ազգային ժողովի կազմակերպման կարգը, և ընդլայնվեցին նրա լիազորությունները պետական շինարարության տարբեր ոլորտներում:

Հայաստանի Հանրապետությունը՝ որպես խորհրդարանական կառավարման ձևի պետություն, լուրջ դերակատարություն է վերապահել ՀՀ Ազգային ժողովին: ՀՀ Ազգային ժողովը, համարվելով ժողովրդի ներկայացուցչական մարմինը, իրականացնում է օրենսդիր իշխանությունը, վերահսկողություն է իրականացնում գործադիր իշխանության նկատմանբ, ընդունում է պետական բյուջեն, վերահսկում է ՀՀ պետական բյուջեն, Կառավարության ծրագրի կատարման ընթացքը, հաստատում հաշվետվությունը, իրականացնում է Սահմանադրությամբ իրեն վերապահված այլ գործողություններ: Միայն ՀՀ Սահմանադրությամբ են ամրագրված Ազգային ժողովի լիազորությունները: Այլ ակտով օրենսդիր մարմնի նոր լիազորություններ սահմանվել չեն կարող: Իսկ իր լիազորությունները և գործառույթներն իրականացնելիս օրենսդիր մարմինը գործում է «Ազգային ժողովի կանոնակարգ» ՀՀ սահմանադրական օրենքին համապատասխան՝ նստաշրջանների, նիստերի, ինչպես նաև իր մարմնինների աշխատանքի միջոցով: Ազգային ժողովն ընտրվում է հինգ տարի ժամկետով: Հերթական ընտրության դեպքում նորընտիր Ազգային ժողովի լիազորությունների ժամկետը սկսվում է նախորդ գումարման Ազգային ժողովի լիազորությունների ժամկետի ավարտման օրը հրավիրված նորընտիր Ազգային ժողովի առաջին նստաշրջանի բացման պահից: Ազգային ժողովի կազմավորված լինելը հավաստվում է ՀՀ Ընտրական օրենսգրքին համապատասխան[1]: Ազգային ժողովի հիմնական գործառույթներն են՝

ա) օրենսդիր իշխանության իրականացման գործառույթ,
բ) գործադիր իշխանության նկատմամբ վերահսկողական գործառույթ,
գ) ֆինանսական գործառույթ,
դ) կազմակերպչական գործառույթ,
ե) արտաքին գործառույթ
զ) պառլամենտական դիվանագիտության իրականացման գործառույթ:

Ազգային ժողովի մարմիններն են՝ պատգամավորները, Ազգային ժողովի նախագահը,

[1] *Տե՛ս « Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք // ՀՀՊՏ 2016.05.30/42(1222):*

նրա տեղակալները, Ազգային ժողովի խորհուրդը, խմբակցությունները, հանձնաժողովները: ՀՀ Սահմանադրության 89-րդ հոդվածի համաձայն՝ Ազգային ժողովը կազմված է առնվազն 101 պատգամավորից: Ազգային ժողովն ընտրվում է համամասնական ընտրակարգով՝ ձևավորելով կայուն խորհրդարանական մեծամասնություն: ԱԺ պատգամավորը ներկայացնում է ամբողջ ժողովրդին, կաշկանդված չէ հրամայական մանդատով, առաջնորդվում է իր խղճով և համոզմունքներով[1]: Պատգամավորն իր գործունեությունն իրականացնում է մի շարք եղանակներով: Դրանք են՝ հանդես է գալիս օրենսդրական նախաձեռնությամբ, ներկայացնում է Ազգային ժողովի որոշման, հայտարարության, ուղերձի նախագիծ, ունենում է ելույթներ և առաջարկներ ներկայացնում Ազգային ժողովին, նրա հանձնաժողովների աշխատանքային խմբերի նիստերում, ինչպես նաև խորհրդարանական լսումներում, գրավոր հարցեր է ուղղում Կառավարությանը, բանավոր հարցերով դիմում է Կառավարության անդամներին, զբաղեցնում է իր կարգավիճակով պայմանավորված պաշտոններ, ընդգրկվում է մշտական, կամ ժամանակավոր հանձնաժողովների կամ աշխատանքային խմբի կազմում, կարող է ծանոթանալ Ազգայի ժողովին, իր խմբակցությանը կամ հանձնաժողովին հասցեագրված ցանկացած փաստաթղթի, բացառությամբ անվանական կամ անձնական նյութերի, ինչպես նաև պետական կամ ծառայողական գաղտնիք պարունակող այնպիսի տեղեկությունների, որին իրավասու չէ իրազեկվելու, իրավունք ունի հարցումներով և առաջարկներով դիմելու պետական և տեղական ինքնակառավարման մարմիններին ու պաշտոնատար անձանց, կարող է ունենալ 2 օգնական, որոնցից մեկը՝ վճարովի, իսկ մյուսը՝ հասարակական հիմունքներով:

Բացի լիազորություններից, պատգամավորն ունի մի շարք պարտականություններ. մասնավորապես՝ ընդգրկվել մեկ մշտական հանձնաժողովի կազմում, բացառությամբ Ազգային ժողովի Նախագահի և նրա տեղակալների, ինչպես նաև խմբակցությունների ղեկավարների պարտավոր է մասնակցել Ազգային ժողովի, ինչպես նաև իր անդամակցած հանձնաժողովի և աշխատանքային խմբի նիստերին, մասնակցել իր անդամակցած հանձնաժողովի հրավիրած խորհրդարանական լսումներին[2]: Ոչ պակաս կարևոր է պատգամավորական էթիկայի կանոնների պահպանումը, որի խախտումը հանգեցնում է էթիկայի և որակավորման հանձնաժողովի սահմանած պատասխանատվությանը: Պատգամավորները պարտավոր են կազմակերպել քաղաքացիների ընդունելություն, ինչպես նաև իրենց լիազորությունների շրջանակում օրենքով սահմանված կարգով պատասխանել քաղաքացիների գրավոր առաջարկներին:

ՀՀ Սահմանադրությունը 107-րդ հոդվածով Ազգային ժողովին իրավունք է վերապահում առանձին օրենքների, Ազգային ժողովի որոշումների, հայտարարությունների և ուղերձների նախագծերի, ինչպես նաև պատգամավորական էթիկային առնչվող հարցերի քննարկման և դրանց վերաբերյալ Ազգային ժողովին եզրակացություններ ներկայացնելու համար ստեղծել ժամանակավոր հանձնաժողովներ: Ազգային ժողովը ժամանակավոր հանձնաժողով ստեղծելիս սահմանում է նրա խնդիրները, գործողության ժամկետը և կարգը Սահմանադրության և օրենքների շրջանակներում: Իր գործունեության արդյունքների մասին ժամանակավոր հանձնաժողովը պարտավոր է զեկուցել Ազգային ժողովի նիստում՝

---

[1] Տե՛ս Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2015, 94-98-րդ հոդվածներ:

[2] Տե՛ս «Ազգային ժողովի կանոնակարգ» << Սահմանադրական օրենք, 4-րդ հոդված // www.arlis.am

նրա կողմից սահմանված ժամկետում:

Ազգային ժողովի բնականոն գործունեության համար առանցքային նշանակություն ունի խմբակցությունների ստեղծումը: Խմբակցությունները նպաստում են Ազգային ժողովի քաղաքական կամքի ձևավորմանը: Խմբակցության մեջ ընդգրկվում են միայն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի պատգամավորները: Խմբակցություն-ները ստեղծվում են նորընտիր Ազգային ժողովի առաջին նիստի բացման օրը՝ Ազգային ժողովի մանդատների բաշխմանը մասնակցած կուսակցությունների թվին և անվանումներին համապատասխան: Խմբակցություններում ընդգրկվում են միևնույն կուսակցության կամ կուսակցությունների դաշինքի ընտրական ցուցակով մանդատ ստացած պատգամավորները: Ազգային ժողովի ընտրության արդյունքում մանդատների թվի ոչ պակաս, քան 54% ստացած կուսակցության կամ քաղաքական կոալիցիայի անդամ կուսակցության ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր: Այսինքն՝ Կառավարության կազմավորման վերաբերյալ հուշագիր ստորագրած կուսակցությունների ստեղծած խմբակցությունները համարվում են կառավարող, իսկ մյուս խմբակցությունները՝ ընդդիմադիր: Կառավարող խմբակցության ղեկավարը կամ քարտուղարն Ազգային ժողովի առաջիկա նիստերում հանդես է գալիս հուշագրի ստորագրման վերաբերյալ հայտարարությամբ: ՀՀ Ազգային ժողովի կանոնակարգ օրենքը խմբակցություններին տալիս է մի շարք լիազորություններ. մասնավորապես, խմբակցությունը իրավունք ունի հանդես գալ օրենսդրական նախա-ձեռնությամբ, Ազգային ժողովի քննարկմանը ներկայացնելու Ազգային ժողովի որոշման, հայտարարությամբ կամ ուղերձի նախագիծը, քաղաքական կոալիցիա կազմելու այլ խմբակցությունների հետ, ինչպես նաև դուրս գալ կոալիցիայից, Ազգային ժողովի հանձնաժողովում իրեն վերապահված տեղում նշանակելու խմբակցության անդամի, ինչպես նաև նրան փոխելու, առաջադրել վարչապետի թեկնածու, առաջարկել Բարձրագույն դատական խորհրդի անդամի թեկնածու, ներկայացնելու Սահմանադրական փոփոխությունների, օրենքի, Ազգային ժողովի որոշման, հայտարարության կամ ուղերձի նախագծի վերաբերյալ և այլն: Իր լիազորությունները իրականացնելիս խմբակցությունը ընդունում է որոշումներ: Խմբակցության որոշումներն ընդունվում են քվեարկությանը մասնակցած խմբակցության անդամների ձայների մեծամասնությամբ, եթե քվեարկությանը մասնակցել է խմբակցության անդամների ընդհանուր թվի կեսից ավելին: Խմբակցության անդամ հանդիսացող պատգամավորը կարող է խմբակցությունից դուրս գալ խմբակցության ղեկավարին ուղղված գրավոր դիմումով կամ Ազգային ժողովի նիստում՝ այդ մասին հայտարարությամբ հանդես գալով: Խմբակցության գործունեությունը դադարում է, եթե նրա բոլոր անդամները դուրս են գալիս խմբակցությունից, և վերակազմակերպվում է, եթե նրա կազմում ընդգրկվում է դրա իրավասությունը ունեցող առնվազն մեկ պատգամավոր:

Ինչ վերաբերում է Ազգային ժողովի՝ երկրի արտաքին քաղաքականության իրականացմանը մասնակցելուն, ապա ՀՀ Սահմանադրության 116-րդ հոդվածը ամրագրում է, որ Ազգային ժողովը վավերացնում, կասեցնում կամ չեղյալ է հայտարարում այն միջազգային պայմանագրերը, որոնք վերաբերում են մարդու և քաղաքացու հիմնական իրավունքներին և ազատություններին, ինչպես նաև պարտականություններին, որոնք ունեն քաղաքական կամ ռազմական բնույթ, որոնք նախատեսում են ՀՀ անդամակցություն միջազգային կազմակերպությանը, որոնք Հայաստանի Հանրապետության համար նախատեսում են ֆինանսական կամ գույքային պարտավորություններ, որոնց կիրառումը

նախատեսում է օրենքի փոփոխություն կամ նոր օրենքի ընդունում կամ որոնք պարունակում են օրենքին հակասող ներմեր, որոնք ուղղակիորեն նախատեսում են վավերացում, որոնք պարունակում են օրենքի կարգավորմանը ենթակա հարցեր: Ազգային ժողովը, Կառավարության առաջարկությամբ, միջազգային պայմանագրերը վավերացնում, կասեցնում և չեղյալ է հայտարարում օրենքով՝ պատգամավորների ընդհանուր թվի ձայների մեծամասնությամբ:

Կարծում ենք, սահմանադրական նոր փոփոխությունների դեպքում անհրաժեշտ է վերանայել ՀՀ Ազգային ժողովի արձակման հիմքերն ու կարգը:

Ամփոփելով վերը շարադրվածը՝ կարելի է եզրակացնել, որ ժողովրդավարական, քաղաքացիական հասարակության ձևավորման համար էական նշանակություն ունի պետական կառավարման մարմինների նկատմամբ ժողովրդի կողմից վերահսկողության ուժեղացումը, որը նա կատարում է հիմնականում պառլամենտի միջոցով: Ինչպես ցույց է տալիս համաշխարհային փորձը՝ առանց արդյունավետ գործող պառլամենտի և նրա օրինաստեղծ գործունեության չկա և չի կարող լինել պառլամենտարիզմ, պառլամենտական ժողովրդավարություն, ինչը քաղաքացիական հասարակության, ինքնիշխան, ժողովրդավարական, սոցիալական և իրավական պետության կառուցման անհրաժեշտ պայմանն է[1]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ‹‹Ազգային ժողովի կանոնակարգ››, ՀՀ սահմանադրական օրենք:
2. Արշակյան Ա. Պ., Արտասահմանյան երկրների պետության և իրավունքի պատմություն, Երևան, 2007, էջ 153:
3. Հակոբյան Հ. Հ., Պառլամենտը և պառլամետարիզմը ՀՀ-ում, Երևան, 2007թ.:
4. Հայաստանի Հանրապետության Սահմանադրություն, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2015:
5. « Ընտրական օրենսգիրք» ՀՀ սահմանադրական օրենք:
6. Баглай М., Туманов В. Малая энциклопедия конституционного права, М., 1998:

[1] *Տե՛ս **Հակոբյան Հ. Հ.**, Պառլամենտը և պառլամենտարիզմը Հայաստանի Հանրապետությունում, Երևան, Տիգրան Մեծ հրատ., 2007, էջ 633:*

ՀՏԴ 343.9 Իրավագիտություն

Լուիզա Ներսեսյան
Քրեական իրավունք և քրեական դատարավություն
մագիստրատուրա 2-րդ կուրսի ուսանողուհի
lu.nersesyan@mail.ru
գիտական ղեկավար՝ ի.գ.թ. Առստամյան Տ.

ԸՆՏԱՆԵԿԱՆ - ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԲՌՆՈՒԹՅԱՄԲ ԿԱՏԱՐՎՈՂ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻԿՏԻՄՈԼՈԳԻԱԿԱՆ ՊՐՈՖԻԼԱԿՏԻԿԱՆ

Բանալի բառեր՝ *կրիմինալոգիա, վիկտիմոլոգիա, զոհաբանություն, քրեաբանություն, ընտանեկան-կենցաղային վիկտիմոլոգիա, վիկտիմիզացիա, ընտանեկան վիկտիմիզացիա:*

Սույն հոդվածի ուսումնասիրության առարկա է հանդիսանում ընտանեկան-կենցաղային ոլորտում բռնությամբ կատարվող հանցագործությունների, վիկտոմոլոգիական բնութագիրը և դրա պրոֆիլակտիկան: Աշխատության մեջ համեմատություններ են իրականացվել ընտանեկան-կենցաղային բռնության դրսևորումների և դրանց դեմ պայքարի տարբեր մեթոդների միջև՝ հաշվի առնելով տարբեր գիտնականների համեմատական հետազոտությունները: Ընտրված թեման առավել քան արդիական է՝ պայմանավորված Հայաստանում և Արցախում ընտանեկան-կենցաղային բռնության հետևանքով կամ այդ բռնության դրսևորվող հանցագործությունների վիճակագրությամբ, ինչպես նաև հանցագործությունների լատենտ բնույթով: Գիտական աշխատանքի միջոցով կատարվում է ոչ միայն տեսական ակնարկ, այլև փորձ է արվում վեր հանել հասարակության մեջ տեղ գտած վիկտոմագեն երևույթները, տալ դրանց պատճառներն ու պայմանները, հնարավոր բացասական հետևանքների կանխատեսումները, ինչպես նաև փորձ է կատարվում վեր հանել պատճառների և պայմանների վերացման ուղիները:

Луиза Нерсесян

ВИКТИМОЛОГИЧЕСКАЯ ПРОФИЛАКТИКА НАСИЛЬСТВЕННЫХ ПРЕСТУПЛЕНИЙ, СОВЕРШАЕМЫХ В СЕМЕЙНО-БЫТОВОЙ СФЕРЕ

Ключевые слова: *криминология, виктимология, семейно-бытовая виктимология, виктимизация, семейная виктимизация.*

Предметом исследования данной статьи является изучение виктимологического профиля семейно-бытового насилия и его профилактики. С учетом сравнительных исследований различных ученых, в работе были проведены параллели между проявлениями бытового насилия и различными методами борьбы с ним. Выбранная тема более чем актуальна с учетом последствий бытового насилия в Армении и Арцахе или статистики таких преступлений, а также латентного характера этих преступлений. В данной работе дается не только теоретический обзор, но и предпринимаются попытки выявить виктимогенные проявления в обществе, очертить их глубинные причины и условия, дать прогнозы потенциальных негативных последствий, а также определить пути устранения глубинных причин и условий.

Ընտանիքում հանցավոր վարքագիծ դրսևորելուն դրդող վիկտիմոլոգիական մեխանիզմներ:

Մարդու կերպարը սերտ կապված է փոքր սոցիալական խմբերի գործողությամբ, որոնք իրենցից ներկայացնում են այն բուն միջավայրը, որտեղ մարդը ապրում է, դաստիարակվում և գործում: Դրանց թվին կարող ենք դասել ընտանիքը, դպրոցը, մոտ շրջապատը /բարեկամներ, ընկերներ, ծանոթներ/, աշխատավայրը: Ընտանեկան ոլորտում կատարվող կյանքի և առողջության դեմ ուղղված հանցագործությունների կոնտեքստում հենց ընտանիքում են թաքնված այն վիկտիմոլոգիական մեխանիզմները, որոնք գործարկում /կամ

դրդում/ են անհատի հանցավոր վարքագիծը:

Հաստատված է, որ անձի զարգացման վրա ընտանիքի բացասական ազդեցության հիմնական գործոնը ոչ թե կառուցվածքային է, այլ՝ ընտանիքի հոգեբանական դեֆորմացիա: Եվ սա համաշխարհային միտում է: Ընտանիքը կարող է լինել ինչպես կանխարգելման, այնպես էլ վիկտիմ վարքագծի արտահայտման ռիսկի գործոն:[1]

Խոսելով ընտանեկան ոլորտում կատարվող հանցագործությունների կանխարգելման վիկտիմոլոգիական ասպեկտների մասին Ա.Ի.Մորչևը նշում է. «Ինչ վերաբերում է ներընտանեկան բռնությամբ կատարվող հանցագործությունների վիկտիմոլոգիային, ապա այն, ինչպես համալիր կրիմինոլոգիական խնդիր ուսումնասիրված է ծայրաստիճան անբավարար»: Ճիշտ է, Մորչևը այս դիտարկումը կատարել է ՌԴ իրականության վրա, սկսած 1996 թվականին քրեական օրենսգրքի լույս տեսնելուց և մինչ օրերս, սակայն նույն դիտարկումը կարելի է կատարել նաև ՀՀ և ԱՀ իրականությանը: Նշված հանցագործությունների վիկտիմոլոգիական ուսումնասիրությունը անհրաժեշտ է և արդիական:

Ուսումնասիրելով ընտանեկան հանցագործությունները, անհրաժեշտ է իրականացնել դրանց վիկտիմոլոգիական անալիզը: Այն բավարար կերպով տեղավորվում է կրիմինոլոգիական ուսումնասիրությունների շրջանակներում և համարվում է վերջինիս հիմնական ուղղություններից: Եթե կրիմինոլոգիան բուն թարգմանմամբ նշանակում է «հանցագործության մասին ուսմունք», ապա վիկտիմոլոգիան՝ «հանցագործության զոհի մասին ուսմունք»:

Բայց կարևորը, որ ինչպես կրիմինոլոգիայի, այնպես էլ վիկտիմոլոգիայի համար դա «հանցագործ - զոհ», կամ այլ կերպ ասած «մեղավոր - տուժող» փոխհարաբերությունն է: Ուսումնասիրելով ընտանեկան հանցագործությունները, անհրաժեշտ է ուսումնասիրել դեպքի բոլոր «մասնակիցներին»:

Վ.Ի.Պոլուբինսկին նշում է. «Հանցագործությունը՝ երկու զուգահեռ է, որոնք վաղ թե ուշ կհատվեն, իսկ անհատները /հանցագործ և տուժող/ կբախվեն. Ով նրանցից կդառնա հանցագործ, իսկ ով տուժող՝ ցույց կտա պահը, ստեղծված իրադրությունը և շատ այլ հանգամանքներ»: Այդպիսի «միասնության» մասին մանրամասն գրել է Լ.Վ.Ֆրանկը, առանձնացնելով հանցագործություններ, որոնց կատարմանը նպաստում է տուժողի վիկտիմային վարքագիծը: Նա նշում էր ուսումնասիրությունների տարբեր ուղղություններ, բայց առավել շատ առանձնացնում էր ընտանեկան-կենցաղային հանցագործությունները: Ըստ այդմ, մասնագետները նշում են, որ վիկտիմոլոգիական ուսումնասիրությունները, որոնք վերաբերում են ընտանեկան հարաբերությունների ոլորտին, մինչ օրս չեն բռնում համապատասխան զարգացման ուղի: Նշված ոլորտում փորձի առկայության պակասը արգելափակում է զարգացման միտումները, իսկ արտասահմանյան գործելաոճին ծանոթանալը առայժմ առաջնային ուշադրության կենտրոնում չի գտնվում: Ինչ վերաբերում է ընտանեկան հարաբերություններին, ապա հենց դա է կապված վիկտիմոլոգական խնդիրների սոցիալական նշանակության գիտակցման և հանցագործության զոհի հետ ճիշտ վարվելակերպի ու գործելավոճի դերի նվազ գնահատման հետ:

Հանցավոր ոտնձգության զոհը կրիմինոլոգիական ուսումնասիրությունների հիմնարար օբյեկտներից մեկն է համարվում:

Որոշակիացնելով վիկտիմությունը որպես որոշակի անհատի, սոցիալական դերի կամ սոցիալական իրավիճակի հատկանիշ, որը դրդում կամ թեթևացնում է հանցավոր վարքագիծը, Ս.Մ.Ինշակովը առանձնացնում է **անհատական, դերային և իրավիճակային**

[1] ***Варчук Т.В***. *«Виктимология», Մոսկվա, 2009թ. Էջ 188-189*

վիկտիմություն, ինչպես նաև նշում է վիկտիմության գործոնները. Տուժողի անհատական բնութագրիչները, իրավիճակի կոնֆլիկտայնության աստիճանը, այն տեղի և ժամանակի առանձնահատկությունները, որտեղ զարգանում է այդ իրավիճակը:

Նմանօրինակ միտք է արտահայտում նաև Ա.Ի.Ալեքսեևը, ընդգծելով, որ «հանցավոր վարքագծի մեխանիզմում կարևոր են այն մարդկանց անհատական հատկանիշները, որոնք հետագայում դառնում են հանցագործության զոհ»:

Սոցիոլոգիայում ընդունված է երևույթների դասակարգումը ***պատահականի, կանոնավորի, մասսայականի և ընդհանրականի***: Կենտրոնական սահմանները որոշվում են նշված գործընթացներում ուսումնասիրության միավորների մասնակցությամբ:

Երևույթը *կանոնավոր է* համարվում, եթե նրանում մասնակցում են ուսումնասիրության միավորների 10-40%-ը, և, ***մասսայական***, եթե նրանում մասնակցում են 60-90% ուսումնասիրության միավորներ: Եթե այսպիսի միավոր ճանաչենք այն ընտանիքի վիկտիմ անդամին, որտեղ կա գոնե մեկ թմրամոլ, ապա նրա մասնակցությունը ընտանեկան կոնֆլիկտային իրավիճակներում անհրաժեշտ է գնահատել որպես կանոնավոր, կամ, նույնիսկ մասսայական:

Սոցիոլոգների տվյալները վկայում են, որ առավել հաճախ հակասությունները սրվում են և վեր են ածվում կոնֆլիկտների այն ընտանիքներում, որտեղ կան մեծ երեխաներ: Դեպքերի 65%-ում դա ամուսինների միջև կոնֆլիկտներն են, 28%-ում՝ ծնողների և մեծ երեխաների միջև, 7%-ում՝ երեխաների միջև:

Հոգեբանները, իրենց հերթին նշում են, որ կոնֆլիկտների ժամանակ ծնողների կողմից երեխաների նկատմամբ բռնության գործադրումը տեղի է ունենում դեպքերի 65%-ում, իսկ երեխաների կողմից ծնողների նկատմամբ՝ դեպքերի 35%-ում: Սակայն, եթե երեխաների թվից ընտրենք միայն 14-17 տարեկան անչափահասներին, ապա բռնությունը նրանց կողմից կաճի մինչև 80%-ը: Բայց վերոշարադրյալը վերաբերում է միայն այն ընտանիքներին, որտեղ իրականացվել են անհատի նկատմամբ բռնության գործադրմամբ հանցագործություններ՝ երբ իրականում առկա էր համապատասխան կրիմինոլոգիական իրավիճակ: Կարծվում է, որ կարելի է խոսել այնպիսի հասկացության մասին, ինչպիսին է ընտանեկան կրիմինոլոգիական /կամ հանցավոր/ իրավիճակը: Այն հյուսված է ընտանեկան հարաբերությունների համակարգում: Նկատի է առնվում իրավիճակ, երբ գլխավոր բաղադրիչներն են համարվում. անհատը և նրա վարքագիծը ընտանիքում, անհատի զբաղեցրած դիրքը ընտանիքում, նրան հատուկ հատկանիշները, հանցավոր գործողությունների ձևավորման գործընթացի առանձնահատկությունը և դրա մոտիվացիան, տուժածի վիկտիմային վարքագիծը, մեղավորի գործողությունների նկատմամբ նրա արձագանքը:

Ընդհանուր առմամբ դա, այսպես ասած ընտանեկան դրությունն է, կրիմինոլոգիական իրավիճակի առանձնահատկություններով ընկղմված: Առավել առանձնանում է բռնության բնույթը, ինչը սերտ կապված է ընտանեկան հանցագործության մոտիվացիայի հետ: Տվյալ պարագայում շարժառիթը և բռնությունը չի կարելի առանձնացնել մեկը մյուսից: Ինչպես նշվում է գրականության մեջ, ընտանեկան բռնություններում դրանց միասնականությունը առավել պարզ է:

Ուշագրավ տեղեկություններ են ներկայացնում գիտական-կրիմինալիստներ Յու.Մ.Անտոնյանը և Ս.Վ.Բորոդինը: Հոգեկան անոմալիաներիով հանցագործների ուսումնասիրությունը ցույց է տվել, որ ընտանիքների 14.3%-ը, որտեղ նրանք դաստիարակվում էին, եղել են «դրական» /հարցվածների և հետազոտություն իրականացնողների կարծիքով/, 40.5%-ը՝ «բացասական», 35.7%-ը՝ «անորոշ», այսինքն այնտեղ առկա էին և դրական և բացասական երևույթներ: Բացասական չափանիշի տակ

հասկացվում էր ալկոհոլի պարբերաբար չարաշահումը, ընտանիքում վեճերի առկայությունը, կոնֆլիկտների լուծումը կոպտության և բռնության միջոցով, ծնողական պարտականությունների նկատմամբ ծնողների անտեսող վերաբերմունը, նրանց կողմից իրավախախտումների իրագործումը և այլն[1]:

Այսպիսով, 40.5% «բացասական» ընտանիքների առկայությունը, որտեղ դաստիարակվում էին հանցագործները, հաստատում է երեխայի հոգեկան աշխարհի վրա մոտ շրջապատի ազդեցության հետևությունը, նպաստում է բնավորության առանձնահատկությունների ձևավորմանը, որոնք բերում են հակահասարակական վարքագծի, բարենպաստ նախադրյալներ են ստեղծում հոգեկան անոմալիաների առաջացման կամ զարգացման համար, որոնք հետադարձ ազդեցության ուժ ունեն ապրելակերպի և վարքագծի վրա:

Վիկտիմ պահվածքը շեղվող պահվածքների մի տեսակ է:

Հենց շրջապատը խաղում է նորմերի համակարգի կրիչի դերը, որոնք կազմում են ցանկացած սոցիալական կազմավորման համար սոցիալական ծրագիր՝ անկախ դրա մեծությունից: Նշված ծրագրի առկայությունը ենթադրում է կոնկրետ սոցիալական միջավայր կազմողների կողմից նրան ենթարկվելու անհրաժեշտություն: Սակայն անհատականության յուրահատկությունը ենթադրում է հնարավոր անհամաձայնություն ենթադրյալ ծրագրի հետ, և այդ ժամանակ ոչ իրավաչափ է միանշանակ խոսել միջավայրի ազդեցության մասին /«դրական» ընտանիքների 14,3%-ի առկայությունը/: Այսինքն՝ հանցագործների վրա կարող են ազդել ավելի ուժեղ ազդակներ, որոնք կարող են համապատասխանաբար ազդել հոգեֆիզիոլոգիական համակարգի վրա՝ դառնալով գերիշխող:

Ընտանեկան վիկտիմիզացիան և ընտանեկան հանցագործությունները:

Ինչ վերաբերում է ընտանեկան հարաբերություններին, ապա այստեղ վիկտիմոլոգիան զբաղվում է ընտանեկան վիկտիմիզացիայի գործընթացների ուսումնասիրությամբ եւ առաջին հերթին ուսումնասիրում է հանցագործի եւ տուժողի միջեւ հարաբերությունների հետեւողական զարգացման խնդիրը:

Հարցը կայանում է նրանում, արդյո՞ք ընտանեկան վիկտիմիզացիան բերում է ընտանեկան հանցագործություններին: Այս հարցին պատասխանելիս պետք է նկատի ունենալ, որ նման վիկտիմացման գործընթացի ոչ ճիշտ մեկնաբանությունը կարող է հանգեցնել հանցագործության մասին խեղաթյուրված պատկերացումների:

Արդյոք այն կապված է քրեականացման գործընթացների հետ:

Ըստ Հ.Յ.Շնայդերի՝ վիկտիմիզացիան և կրիմինալիզացիան ունեն նույն աղբյուրները՝ նախնական սոցիալական պայմաններ, երբ հանցագործը և զոհը պատկանում են նույն սոցիալական միջավայրին: Բանն այն է, որ հանցավորությունն ու վիկտիմությունը դիտարկվում են ոչ միայն որպես ստատիկ մեծություններ: Ինչ վերաբերում է նույն սոցիալական միջավայրին՝ ընտանիքին, ապա այդ դեպքում քրեականացումը /հանցագործի կայացումը/ և վիկտիմիզացիան /զոհի կայացումը/ կարող են վերլուծվել որպես սոցիալական փոխգործակցության գործընթացներ :

Ընտանեկան հանցագործությունների 50%-ում զոհը /եթե նա և հանցագործը պատկանում են նույն սոցիալական միջավայրին/, իր բնույթով, վարքագծով, հայացքներով, ձգտումներով, կարիքներով, շարժառիթներով «ընդառաջում է» գործքին, թեքելով նրան իր դեմ, հաճախ հրահրելով մեղավորին:

Ընտանեկան հարաբերությունների ոլորտում հանցավոր գործողություններ առանց զոհերի չեն լինում: Զոհ դառնում է միշտ կոնկրետ անձ /կամ անձինք/: Ընտանեկան հանցագործը իր հանցավոր վարքագծով միշտ վիկտիմիզացնում է իր մերձավոր /այդ թվում՝

[1] ***Антонян Ю.М., Бородин СВ***. *Преступное поведение и психические аномалии. Մոսկվա 1998թ.*

ընտանեկան/ շրջապատի մարդկանց: Ըստ Հ.Յ.Շնայդերի՝ մանկության կամ պատանեկության ժամանակ հանցագործությունների զոհ դարձած մարդկանց 64 տոկոսը, չափահաս տարիքում դառնում են հանցագործ, իսկ այն մարդիկ, ում նման ճակատագիր մանկության և պատանեկության տարիներին չի հասել, ընդհամենը՝ 22%-ը:[1] Ա.Է. Պոբեգայլոյի կարծիքով՝ անչափահասների կողմից իրավախախտման դեպքերի 30-40%-ում առկա է անմիջական կապ ընտանիքում անձի ձևավորման անբարենպաստ պայմանների հետ: Հեղինակը նաև նշում է անապահով ընտանիքներից անչափահասների բարձր վիկտիմայությունը, որն արտահայտվում է նրանով, որ հենց նրանք են առաջին հերթին ենթարկվում ընտանեկան շրջապատից դուրս հանցավոր և այլ հակահասարակական գործունեության մեջ ներգրավվելուն[2]:

Եթե ընտանեկան անբարոբության խնդիրը դիտարկենք ավելի լայն, ապա այն վնաս է հասցնում ազգային անվտանգությանը, իսկ մայրության, մանկության, ընտանեկան բռնության զոհերի պաշտպանությունը և դրա դեմ պայքարը /ընտանեկան անապահովություն/ պետության ոչ պակաս կարևոր խնդիրներից է:

Ընտանեկան վիկտիմությունն ունի արտահայտված տարիքային ասպեկտ: Ընտանեկան հանցագործություններից տուժածների շրջանում վիկտիմիզացիան բաշխվում է անհավասար՝ եթե անչափահասների մոտ, հատկապես 14-15 տարեկան հասակում, և 50 տարեկան ու բարձր տարիքի մեծահասակների մոտ զոհ դառնալու ռիսկը բավական մեծ է, ապա 30-40 տարեկան և 41-50 տարեկան անձանց մոտ համեմատաբար ցածր է: Առավել վիկտիմային են 16-17 տարեկան անչափահասներն և 18-20, 21-25 ու 26-30 տարեկան մեծահասակները, օրինակ, սպանվածների թվում նրանք միջինը կազմում են 60%: 31-35 և 36-40 տարեկան հասակում վիկտիմիզացիայի ցուցանիշները համեմատաբար կայուն են (միջինը 30%): Մոտավորապես 41-45 տարի եւ ավելի բարձր հավանականությունը հետապնդումները զգալիորեն նվազել է /մինչեւ 10%/: Տոկոսային առումով ամենամեծ վտանգը 21-25 և 26-30 տարեկան կանանց սպանության զոհ դառնալն է: Փոքր-ինչ պակաս է 16-17 տարեկան անչափահաս կանանց և 31-40 տարեկան կանանց մոտ ռիսկը, իսկ ամենափոքրը՝ 14-15 տարեկան անչափահաս աղջիկների և 40 տարեկանից բարձր կանանց մոտ: Այստեղ, ինչպես երևում է, հաշվի են առնվում միայն երկու գործոններ՝ սեռը և տարիքը[3]:

Ընտանեկան-կենցաղային ոլորտում վիկտիմության մակարդակի նվազեցման ուղիները:

Գրականության մեջ առանձնացվում են վիկտիմության մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցների հետևյալ տեսակները՝

1) վնաս պատճառելու հնարավորությամբ հղի իրավիճակների վերացմանն ուղղված միջոցներ,

2) միջոցներ, որոնք թույլ են տալիս ապահովել հանցագործության հնարավոր զոհի անձնական անվտանգությունը /ըստ էության, դրանք անհատական վիկտիմոլոգիական կանխարգելման միջոցներ են/:

Վերացումը իրավիճակների հետ կապված ռիսկի կյանքի և առողջության ընտանիքի անդամների թմրամոլության, ներկայացնում է չափազանց բարդ առումով հասնելու նպատակին: Դա պայմանավորված է ներընտանեկան կոնֆլիկտների բարձր գաղտնիությամբ, որոնց զարգացումն ուղեկցվում է կոնկրետ վիկտիմոգեն իրավիճակների ձևավորմամբ և շատ արագ զարգացմամբ:

Այս առումով առավել արդյունավետ է վիկտիմ վարքագծի անհատական կանխարգելումը:

---

[1] ***Шнайдер Г. Й***. *Криминология / Пер. с нем. М., 1994թ. էջ 358*

[2] http://yangurcha.ru/page/profilaktika-semejno-bytovyh-konfliktov-domashnego-nasilija

[3] ***Подольская А.В***.. *"Некоторые вопросы виктимологии" Известия Южного федерального университета. Технические науки, vol. 39, h.4, 2004թ. էջ 286-289.*

Հեռանկարային է ընտանիքի անդամներից մեկի ալկոհոլային կամ թմրադեղերի կախվածության հողի վրա ընտանեկան ոլորտում բռնությամբ կատարվող հանցագործությունների վիկտիմոլոգիական կանխարգելման մեկ այլ ուղղություն: Գիտության և պրակտիկայի առջև խնդիր է դրված հետևողական կերպով հասնել սոցիալական խաղաղության հանցագործի և տուժողի միջև, ինչպես նաև մշակել և պահպանել դրան նպաստող սոցիալական նորմերն ու արժեքները:

Այս նպատակին հասնելու իրավական միջոցը վերականգնողական արդարադատության դոկտրինայի իրականացումն է: Վերականգնողական արդարադատության հայեցակարգի էությունը հանցագործության և դրա համար պատժի, հանցագործություն կատարած անձի և հանցագործության հետևանքով տուժած անձի նկատմամբ հատուկ վերաբերմունքն է:

Առաջնային կարևոր է հայմարվում պատճառված բարոյական, հոգեբանական և նյութական վնասի հատուցումը, պատժի փոխարինումը՝ սոցիալական ռեաբիլիտացիայի գործընթացում մեղավորին ներգրավելով: Վերականգնողական արդարադատության գաղափարն ի սկզբանե պայմանավորված է հանցագործության հետևանքով տուժողի, հանցագործի և հասարակության շահերի խախտված հավասարակշռության վերականգնման սոցիալ և իրավաբանորեն ընդունելի հնարքների որոնման անհրաժեշտությամբ:

Ենթադրվում է, որ հասարակությանն անհրաժեշտ է ողջամիտ հավասարակշռություն հանցավորության վրա ազդելու առաջնահերթությունների սահմանման ժամանակ: Եթե խոսքը վերաբերում է հասարակական վտանգի բարձր գործակից չունեցող հանցագործություններին, ապա տեղին է հարցը դնել կոնֆլիկտի քրեաիրավական կարգավորման վրա, ինչպիսին է հանցանքը, մեղսակից կողմերը, այսինքն ՝ մեղավորը և տուժողը:

Վերականգնողական արդարադատության հիմքում ընկած է կողմերի հաշտեցման ընթացակարգը /իհարկե, դա հնարավոր չէ սպանության եւ առողջությանը ծանր վնաս պատճառելու գործերով/, մեղավոր անձի զղջման ցուցադրումը, ապա այդ գործողությունն ինքնին կարող է չեզոքացնել վիկտիմոլոգիական իրավիճակը, պարզել ընտանիքի անդամների փոխհարաբերությունները պրոֆեսիոնալ հոգեբանի մասնակցությամբ[1]:

Բացի այդ, կողմերի հաշտեցումը կանխում է տուժողի կրկնակի վիկտիմիզացիան, որն առաջանում է գործի նախաքննության ընթացքում: Դատավարական գործողությունների ընթացքում տուժողը ենթարկվում է բազմակի հարցաքննությունների, առերեսումների, անպայման ենթարկվում է փորձագիտական հետազոտության: Նրա գիտակցության մեջ կրկին վերստեղծվում է և որոշակիորեն արձանագրվում է վերապրած բռնության և նվաստացման պատկերը: Անշուշտ, այն դեպքերում, երբ դրանից հնարավոր է խուսափել, պետք է կիրառել իրավական և հոգեբանական տեսանկյունից ավելի մեղմ ընթացակարգեր, մասնավորապես՝ վերականգնողական արդարադատության ընթացակարգ:

Բացի առավել տարածված կարծիքից այն մասին, որ իրավապահ մարմինների և տեղական դատական համակարգի հետ շփումը հենց կարող է դառնալ տուժողի համար ոչ սակավ հոգեբանական վնասվածք, քան հանցագործությունը, կարելի է նաև ենթադրել հետևյալը.

1. Կանանց մոտ սեփական իրավունքները պաշտպանության կամքի պակաս
2. Սեփական իրավունքները պաշտպանելու սակավ ունակություններ
3. Հատուկ մասնագետների մասին սակավ տեղեկատվություն, որոնք կարող են օգնել տվյալ իրավիճակում

[1] ***Фатеев Александр Николаевич***. *«Социально-правовые и криминологические аспекты борьбы с домашним насилием» Юристъ - Правоведъ, h. 4, 2011, էջ 5-10.*

Ընտանեկան բռնության վիկտիմոլոգիական կանխարգելումը կապված է հետևյալ քայլերի հետ.

1. կոլեկտիվ ներընտանեկան հարբեցողության, ալկոհոլիզմի և թմրադեղերի մակարդակի նվազեցմանն ուղղված միջոցառումները,
2. ներընտանեկան բռնության դեմ պաշտպանության իրավական և հոգեբանական միջոցների լայն քարոզչությունը,
3. ընտանեկան բռնության նույնիսկ եզակի դրսևորման փաստերին իրավապահ մարմինների ժամանակին և համարժեք արձագանքը,
4. անհատական կանխարգելիչ աշխատանքը ընտանիքի վիկտիմ անդամների հետ, որոնցում արձանագրվել են ընտանեկան բռնության փաստեր,
5. անհատական պրոֆիլակտիկ աշխատանք ընտանեկան բռնության փաստեր արձանագրված ընտանիքների վիկտիմ անդամների հետ,
6. անհատական վիկտիմոլոգիական կանխարգելմանն ուղղված մասնագետ-հոգեբանների լայն ներգրավում,
7. օրենքով նախատեսված դեպքերում վերականգնողական արդարադատության ընթացակարգերի կիրառում՝ տուժողների կրկնակի վիկտիմիզացիայից խուսափելու նպատակով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Абельцев С.Н. Личность преступника и проблемы криминального насилия.– М.: Юнити-Дана, Закон и право, 2000.
2. Антонян Ю.М., Бородин СВ. Преступное поведение и психические аномалии. Մոսկվա 1998թ.
3. Вандышев В.В. Изучение личности потерпевшего в процессе расследования.
4. Варчук Т.В. «Виктимология», Մոսկվա, 2009թ.
5. Васильев В.Л. Юридическая психология, Սանկտ-Պետերբուրգ, 2000թ.
6. Виктимологические проблемы борьбы с преступностью.– Иркутск. 1988.
7. Виктимология и профилактика правонарушений.– Иркутск. 1979.
8. Реан Артур Александрович Семья как фактор профилактики и риска виктимного поведения // Национальный психологический журнал. 2015. №1 (17). Էջ 4-8
9. Ривман Д.В. Криминальная виктимология – СПб.: Питер, 2002. 6. Франк Л.В. Виктимология и виктимность.– Душанбе, 1972.
10. Ривман Д.В. Криминальная виктимология – СПб.: Սանկտ-Պետերբուրգ, 2002.
11. Фатеев Александр Николаевич «Социально-правовые и криминологические аспекты борьбы с домашним насилием» Юрисртъ Правоведъ 2011.
12. Фатеев Александр Николаевич. «Социально-правовые и криминологические аспекты борьбы с домашним насилием» Юристъ - Правоведъ, h. 4, 2011, էջ 5-10.
13. Франк Л.В. Виктимология и виктимность.– Դուշանբե, 1972թ.
14. Христенко В.Е. Психология поведения жертвы, Դոնի-Ռոստով 2004թ.
15. Шнайдер Г. Й. Криминология / Пер. с нем. М., 1994թ. Էջ 358.

ՀՏԴ 347.4 Իրավագիտություն

Լուսինե Նավթալյան
Արցախի պետական համալսարան
Էլ. հասցե՝ lusin_navtalyan@mail.ru
Ղեկ.՝ իր. գիտ.թեկն., դոցենտ Գ. Մ. Արզումանյան

ԳՈՒՅՔԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՀԱՍԿԱՑՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԱՎԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀ -ՈՒՄ

Բանալի բառեր՝ *գույքի հավատարմագրային կառավարում, հավատարմագրային կառավարիչ, կառավարման հիմնադիր, շահառու, անշարժ գույքի հավատարմագրային կառավարում:*

Հոդվածում պարզաբանվել են գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի հասկացությունը, նշանակությունը, և էությունը, իրավական կարգավորման առանձնահատկությունները: Այս ինստիտուտը ԱՀ-ում գործողության մեջ է դրվել 2001թ.: Իսկ դա կատարվել է ոչ միայն քաղաքացիաիրավական, այլև տնտեսաիրավական՝ շուկայական հարաբերությունների պահանջմունքներից ելնելով:

Հոդվածում ներկայացվել են մի շարք խնդիրներ, ինչպես նաև առաջարկվել համապատասխան լուծումներ, որոնք իրենց հերթին կնպաստեն մասնավոր իրավահարաբերությունների զարգացմանը:

Ключевые слова: *Договор доверительного управления имуществом, договор доверительного управления недвижимым имуществом, доверительный управляющий, учредитель управления, бенефициар.*

В статье уточняются понятие сущность договора доверительного управления имуществом, особенности правового регулирования. Институт доверительного управления имуществом в Арцахе был введен в эксплуатацию в 2001г. А это произошло не только для нужд гражданско-правовых, но и исходя из требований экономико-правовых и рыночных отношений.

В статье был представлен ряд вопросов, а также предложены соотвествующие решения, которые, в свою очередь, будут способствовать развитию частных правовых отношений.

Գույքի հավատարմագրային կառավարումը հայրենական իրավունքում նորույթ է: Այն՝ որպես ինքնուրույն իրավական ինստիտուտ, առաջին անգամ ընդգրկվեց 1998 թվականի մայիսի 5-ին ընդունված Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքում, այնուհետև գործողության մեջ դրվեց ԱՀ-ում: Համաձայն ԼՂՀ քաղաքացիական օրենսգրքի (այսուհետ՝ Քաղ.օր) 954-րդ հոդվածի՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով մեկ կողմը (կառավարման հիմնադիրը) որոշակի ժամկետով գույք է հանձնում մյուս կողմի (հավատարմագրային կառավարչի) հավատարմագրային կառավարմանը, իսկ մյուս կողմը պարտավորվում է այդ գույքի կառավարումն իրականացնել՝ ի շահ կառավարման հիմնադրի կամ նրա նշած անձի (շահառուի):

Գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտի ներառումը հայրենական օրենսդրության մեջ առաջին հերթին պայմանավորված է մեր երկրում շուկայական տնտեսության ի հայտ գալով և զարգանալով: Հաճախ են հանդիպում դեպքեր, երբ սեփականատերն ի վիճակի չի լինում արդյունավետորեն օգտագործել իր գույքը, քանի որ չի տիրապետում անհրաժեշտ գիտելիքների: Ձեռնարկատերերը կարիք են զգում

մասնագիտական լավ կառավարման, ինչը հնարավորություն կտա իրենց կազմակերպությունը հանել ճգնաժամային վիճակից կամ էլ իրենց կապիտալից ստանալ ավելի մեծ շահույթ: Բելոռուսում, ՌԴ-ում և մի շարք այլ երկրներում կառավարման այս ձևն իր իրավական կառուցվածքով հանդես եկավ որպես մրցակից՝ տնտեսվարման և օպերատիվ կառավարման իրավունքների նկատմամբ:

Գույքի հավատարմագրային կառավարումը գույքի կառավարման մասնավոր դեպք է: Այն՝ որպես սոցիալ-տնտեսական երևույթ, ներառում է երեք հիմնական հասկացություններ՝ կառավարում, շահ և վստահություն[1]:

Մ. Բրագինսկու հավաստմամբ՝ «կառավարում-ղեկավարումը տնտեսական գործունեության իրականացում է»[2], այսինքն՝ ձեռնարկության կառավարումը ուղղված է տվյալ ձեռնարկության տնտեսական գործունեության իրականացմանը:

Գույքի կառավարման հաջորդ կառուցվածքային տարրը շահն է: Անհրաժեշտ է նշել, որ հավատարմագրային կառավարման մեջ առկա է հիմնադրի և կառավարչի շահերի հարաբերակցություն: Նրանց նպատակները մի դեպքում կարող են համընկնել (երկու կողմերն էլ ձգտում են եկամուտի մեծացմանը և ծախսերի փոքրացմանը), մեկ այլ դեպքում՝ հակադրվել (սեփականատերը ձգտում է իր կապիտալը ներդնել ավելի արդյունավետ ոլորտում, իսկ մասնագետ-կառավարիչը կենտրոնանում է որոշակի կապիտալի վրա և փորձում է իր դիրքն ամրապնդել տվյալ ձեռնարկությունում):

Գույքի հավատարմագրային կառավարման երրորդ կառուցվածքային տարրը վստահությունն է: Վստահությունը գույքի հավատարմագրային կառավարման մեջ կարող է դրսևորվել առաջին հերթին այնպիսի համապատասխան անձի (հավատարմագրային կառավարչի) ընտրությամբ, որն արդյունավետ ու բարեխիղճ ձևով կկառավարի սեփականատիրոջ գույքը, և գույքի հավատարմագրային կառավարման հանձնմամբ:

Հավատարմագրային կառավարման հարաբերությունների զարգացման երկրորդ փուլը հավատարմագրային կառավարիչ ընտրված անձի կողմից գույքի կառավարումն է: Գույքի կառավարումն, առանց կողմերի միջև վստահության, գործնականում անհար է:

ԼՂՀ օրենսդրությունը որոշակիորեն ընդգծում է հավատարմագրային կառավարչի գործունեության ինքնուրույնությունը՝ միաժամանակ չբացառելով օրենքի գերակայությունը և սեփականատիրոջ (շահառուի) շահերի կարևորությունը: Կառավարիչը բավարար չափով ազատ է կառավարման միջոցների և եղանակների ընտրության մեջ, որոնք իր կարծիքով ամենաճիշտը կարտահայտեն հիմնադրի (շահառուի) շահերը:

Գույքի հավատարմագրային կառավարման ինստիտուտը մոտ է անգլո-ամերիկյան իրավական համակարգում հայտնի հավատարմագրային սեփականության /տրաստի/ ինստիտուտին, սակայն այդ իրավունքում սեփականատերը կորցնում է գույքի նկատմամամբ սեփականության իրավունքը, որն անցնում է հավատարմագրային սեփականատիրոջը, հավատարմագրային սեփականատերն իրավունք ունի գույքի կառավարման միջոցների ու ձևերի մասին հիմնադրին (շահառուին) տեղեկություններ չտրամադրել և չբացահայտել իր մասնագիտական գաղտնիքները, եթե դա դուրս է գալիս սովորական հաշվետվությունների սահմաններից: Միաժամանակ, հիմնադիրը և շահառուն կարող են պահանջել հավատարմագրային սեփականատիրոջ ամենօրյա գրառումները, որոնք սովորաբար տրամադրվում են դատարանի վճռով և միայն հատուկ

[1] *Տես* ***Տոնոյան Լ.Ժ.,*** *<<Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր», 2007թ., էջ 8:*
[2] *Տես* ***Брагинский М. И.****, Общее учение о хозяйственных договорах, Минск, 1967, ст. 177:*

դեպքերում:

ԱՀ օրենսդիրը հակված է հավատարմագրային կառավարչի կողմից մասնագիտական գաղտնիքի պահպանմանը, սակայն, պետք է նշել, որ երկարաժամկետ հարաբերությունների համար բավականին կարևոր է անձնական վստահության պահպանումը՝ հատկապես ոչ ձեռնարկատիրական հարաբերություններում:

Հավատարմագրային հարաբերությունների զարգացման երրորդ փուլը դրանց ավարտն է: Այն կարող է արտահայտվել նաև վստահության խախտմամբ:

Այսպիսով, գույքի հավատարմագրային կառավարումը ի շահ հիմնադրի (շահառուի) իրականացվող գործունեություն է՝ հիմնված հատուկ վստահության վրա:

Հիմք ընդունելով Քաղ. օր. 954 հոդվածը՝ կարելի է առանձնացնել հավատարմագրային կառավարման պայմանագրի հետևյալ հատկանիշները՝

1. գույքի հանձնումը հավատարմագրային կառավարման չի ենթադրում սեփականության իրավունքի անցում հավատարմագրային կառավարչին. կառավարման հիմնադիրը մնում է գույքի սեփականատեր: Հավատարմագրային կառավարիչը իրականացնում է սեփականատիրոջ իրավասությունները միայն պայմանագրով և օրենքով նախատեսված սահմաններում:

2. հավատարմագրային կառավարչի գործունեությունը ոչ միայն իրավաբանական գործողությունների, այլ նաև փաստացի գործողությունների կատարում է: Հետևաբար, գույքի հավատարմագրային կառավարումն կարող է կիրառվել, երբ այն կոչված է ոչ թե միանգամյա, այլ երկարատև և իրար հաջորդող գործողությունների կատարման համար:

3. հավատարմագրային կառավարիչը գործում է բացարձակապես իր անունից, սակայն օրենքը պարտավորեցնում է, որպեսզի երրորդ անձանց հետ հարաբերություններում մշտապես նշվի նրա հավատարմագրային կառավարիչ լինելու հանգամանքը (Քաղ. օր. 954 հոդվ.,կետ3), հակառակ դեպքում նրանց առջև կառավարիչը պատասխանատվություն կկրի միայն իրեն պատկանող գույքով:

Գույքի սեփականատիրոջ և հավատարմագրային կառավարչի միջև իրավահարաբերությունների ծագման հիմք է հանդիսանում գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը, որի կնքման կարգը սահմանվում է ԱՀ օրենսդրությամբ: Կառավարման հիմնադրի և հավատարմագրային կառավարչի կնքած պայմանագրի էությունը կայանում է նրանում, որ հիմնադիրը որոշակի գույք է հանձնում կառավարչին, իսկ վերջինս պարտավորվում է իրականացնել փաստացի և իրավաբանական գործողություններ՝ ի շահ հիմնադրի կամ երրորդ անձի (շահառուի) (Քաղ. օր. 954 հոդվ., կետ 1,2): Առաջին դեպքում մենք գործ ունենք սովորական երկկողմանի պայմանագրի հետ, իսկ երկրորդ դեպքի վերաբերյալ գոյություն ունի բավականին տարածված կարծիք, ըստ որի գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը երրորդ անձանց օգտին կնքվող պայմանագրի մասնավոր դեպք է, որ շահառուի մասնակցությամբ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է երրորդ անձի օգտին կնքվող պայմանագրի օրինակով[1] :

Գույքի հավատարմագրային կառավարման իրավահարաբերությունների կառուցվածքը բարդ է, սակայն Քաղ. օր. 954-968 հոդվածները, այնուամենայնիվ, այս պայմանագիրը երրորդ անձանց օգտին կնքվող պայմանագիր համարելու հիմք չեն տալիս: Նախ և առաջ հավատարմագրային կառավարիչը գործում է «ի շահ», և ոչ թե «հօգուտ» շահառուի (Քաղ.

[1] *Տես* ***Витрянский В.В.****, Договор доверительного управления имуществом, М., 2001, էջ 61:*

օր. 446 հոդվ.), և երկրորդ, Քաղ. օր. 52-րդ գլուխը չի նախատեսում այնպիսի կարգ, ըստ որի՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը չի կարող լուծվել առանց շահառուի համաձայնության:

Պետք է նշել, որ ՌԴ դատական պրակտիկան ձևավորել է մոտեցում, ըստ որի՝ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կարող է որակվել որպես երրորդ անձի օգտին կնքված պայմանագիր միայն այն դեպքում, եթե երրորդ անձը (շահառուն) ինքնուրույն պահանջ ներկայացնելու իրավունք է ստանում[1]: ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրքը գույքի հավատարմագրային կառավարմանը վերաբերող հոդվածներում չի հիշատակում շահառուի նման իրավունքի մասին: Այդ առումով կարծում եմ, որ պետք է անդրադարձ կատարվի երրորդ անձի կնքած գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրում շահառուի որոշման հարցին:

Որպես կանոն, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրն ազատորեն կնքվող պայմանագիր է, որն ամբողջությամբ կախված է կողմերի կամահայտությունից: Սակայն գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կարող է կրել նաև պարտադիր բնույթ այն դեպքում, երբ հավատարմագրային կառավարումը հիմնադրվում է օրենքով նախատեսված հիմքերով: Այդ հիմքերը նախատեսված են Քաղ.օր.968 հոդվածի 1-ին մասում, համաձայն որի գույքի հավատարմագրային կառավարում կարող է սահմանվել

1/խնամարկյալի գույքի մշտական կառավարման անհրաժեշտությամբ,

2/ կտակի հիման վրա, որում նշանակված է կտակակատար,

3/ օրենքով նախատեսված այլ հիմքերով:

Այսպես, օրինակ, գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքումը պարտադիր է դառնում խնամակալության և հոգաբարձության մարմինների համար, եթե դատարանի օրինական ուժի մեջ մտած վճիռը սահմանում է անհայտ բացակայող ճանաչված քաղաքացու գույքի նկատմամբ մշտական կառավարման անհրաժեշտություն: Իհարկե, այս դեպքում ևս գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր կնքելու համար հավատարմագրային կառավարչի համաձայնությունը պարտադիր է:

Քաղ. օր. 954 հոդվածի այն շարադրանքը, որ կառավարման հիմնադիրը «գույք է հանձնում» հավատարմագրային կառավարչին, հիմք է հանդիսանում նշելու, որ կողմերի կամահայտությունը բավարար հիմք չի հանդիսանում գործարքը կայացված համարելու համար: Անհրաժեշտ է, որ գույքն իրականում հանձնվի հավատարմագրային կառավարչին, ընդ որում, այդ հանձնումը ձևակերպվում է հանձման-ընդունման ակտով:

Անշարժ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի էությունը կայանում է նրանում, որ ոչ մասնագետ սեփականատերն իր օբյեկտը հանձնում է անշարժ գույքի օգտավետ կառավարման գործում մասնագիտացված անձի:

Հարկ է նշել, որ անշարժ գույքի հավատարմագրային կառավարման հարաբերությունները կարգավորող նորմերում առկա են որոշակի խնդրահարույց հարցեր[2]: Դրանք են՝ անշարժ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կնքման պահի որոշումը և այն պահի ճշգրտումը, որից սկսած՝ հավատարմագրային

---

[1] *Տես՝ **Захаров Ю.**, Особенности договора доверительного управления имуществом с назначением выгодоприобретателя, Хозяйство и право, 2003, N1, էջ 115:*

[2] *Տես՝ **Зернова Е. В.**, Спорные вопросы договора доверительного управления недвижимым имуществом.2002.И1 ст.130:*

կառավարիչն իրավունք ունի հավատարմագրային կառավարման հանձնված անշարժ գույքի նկատմամբ իրականացնել գործարքներ:

Պետք է նշել, որ պետական գրանցման է ենթարկվում անշարժ գույքի նկատմամբ ծագող հավատարմագրային կառավարման իրավունքը, իսկ անշարժ գույքը հավատարմագրային կառավարչին հանձնելու և նման հանձնումից ծագող իրավունքների գրանցման պահը պրակտիկայում կարող է չհամընկնել:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրի կողմերն են կառավարման հիմնադիրը՝ պարտատեր, և հավատարմագրային կառավարիչը՝ պարտապան: Երբ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը կնքվում է հօգուտ երրորդ անձի՝ շահառուի, ապա հիշյալ պայմանագրից բխող պարտավորության կողմ հանդիսանում է նաև շահառուն:

Հավատարմագրային կառավարման օբյեկտ կարող են լինել անշարժ գույքի առանձին տեսակներ, արժեթղթեր, ոչ փաստաթղթային արժեթղթերով հավաստված իրավունքներ, բացառիկ իրավունքներ և այլ գույք:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիրը այն պայմանագրերի թվին է դասվում, որոնց էական պայմաններն օրենքում ուղղակիորեն նշված են (Քաղ.օր.958 հոդվ.).

1. հավատարմագրային կառավարման հանձնված գույքի կազմը,
2. իրավաբանական անձի անվանումը կամ քաղաքացու անունը՝ ի շահ որի իրականացվում է գույքի կառավարումը,
3. կառավարչի վարձատրության չափը և ձևը, եթե պայմանագրով նախատեսված է վարձատրություն,
4. պայմանագրի գործողության ժամկետը:

Բացի վերը թվարկված էական պայմաններից, անհրաժեշտ է նշել նաև ինչպես հավատարմագրային կառավարչի կողմից գույքի օգտագործման սահմանները, այնպես էլ հավատարմագրային կառավարման հանձնվող գույքի արժեքի, որակական հատկանիշների վերաբերյալ տվյալներ, ինչը ոչ պակաս կարևորություն ունի:

Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագրով թե հավատարմագրային կառավարիչը և թե կառավարման հիմնադիրը ձեռք են բերում մի շարք իրավունքներ և կրում պարտականություններ: Ինչ վերաբերում է շահառուին, ապա նշեմ, որ վերջինիս իրավասությունների շրջանակը օրենսդրությամբ նշված չէ, կողմերն իրենք են սահմանում շահառուի իրավունքներն ու դրանց իրավաբանական կարգը: Շահառուի իրավասությունները հիմնականում պայմանավորված են նրա շահի բավարարմամբ և կառավարման ընթացքում բաց թողնված օգուտի վերականգնման պահանջով:

Քաղ. օր. 1241-րդ հոդվածի 1-ին կետի համաձայն՝ եթե ժառանգության զանգվածում առկա է ոչ միայն պահպանելու, այլ նաև կառավարելու կարիք ունեցող գույք (տնտեսական ընկերակցության կամ ընկերության կանոնադրական (բաժնեհավաք) կապիտալի բաժնեմաս, արժեթղթեր, բացառիկ իրավունքներ և այլն), նոտարը՝ որպես հավատարմագրային կառավարման հիմնադիր, կնքում է այդ գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր:

Ինչպես հետևում է նշված նորմից, օրենսդիրը հստակ չի կարգավորում, թե ո՞վ կարող է հանդես գալ որպես շահառու նշված պայմանագրում՝ կառավարման հիմնադրման պահին ժառանգությունն ընդունած բոլոր ժառանգնե՞րը, թե՞ բոլոր ժառանգները, ովքեր ժառանգության իրավունք կունենան պայմանագիրը դադարելու պահին, թե՞ ժառանգությունը պահպանելու նպատակով կառավարում հիմնադրելու համար դիմած

անձը, թե՞ նոտարն ինքը: Խնդիրն այն է, որ Քաղ. օր. 1239-րդ հոդվածի իմաստով շահառուն համարվում է ժառանգը, սակայն շատ հաճախ պայմանագիրը կնքելու պահին հնարավոր չի լինում պարզել ժառանգների շրջանակը: Նույնիսկ ըստ կտակի ժառանգման դեպքում, երբ նշված են ժառանգությունը ստացող կոնկրետ անձինք, դա դեռ չի նշանակում , որ նրանք ի վերջո դառնալու են շահառու կնքված պայմանագրով: Այսպես, կարող է պարզվել, որ որոշ անձինք ունեն պարտադիր բաժնի իրավունք, կամ կտակում նշված անձինք կարող են հրաժարվել ժառանգությունն ընդունելուց, կամ կտակը կարող է անվավեր ճանաչվել: Այս առումով խնդիրը, մեր կարծիքով, օրենսդրական կարգավորման կարիք ունի:

Անդրադառնալով կողմերի իրավունքներին և պարտականություններին՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքին, որ հավատարմագրային կառավարիչն հակվածություն ունի օգտագործել իրեն հանձնված գույքը՝ իր պահանջները բավարարելու նպատակով: Ուստի անհրաժեշտ է քաղաքացիական օրենսգրքում ուղղակիորեն ամրագրել դրույթ այն մասին, որ հավատարմագրային կառավարչին արգելվում է կատարել գործարքներ, որտեղ առկա է իր անձնական շահագրգռվածությունը: Չնայած այն բանին , որ Քաղ. օր հանձնարարում է կատարել բոլոր գործարքները ի շահ սեփականատիրոջ, հաճախ կարող է դժվար լինել որոշել, թե արդյոք այդ գործողությունները իրականացվել են սեփականատիրոջ շահերից ելնելով, թե ոչ: Այս կապակցությամբ անհրաժեշտ է քաղաքացիական օրենսգրքվ սահմանափակել կառավարչի՝ փոխանցված գույքի նկատմամբ գործարքներ կնքելու հնարավորությունը, եթե մյուս կողմում հանդես է գալիս ինքը՝ հավատարմագրային կառավարիչը կամ նրա ազգականը կամ կազմակերպությունը, որում հավատարմագրային կառավարիչը ունի մասնակցություն:

Այսպիսով, գույքի հավատարմագրային կառվարումը համալիր իրավական ինստիտուտ է: Այն կիրառվում է ինչպես պայմանագրային հիմքերով՝ ձեռնարկատիրական գործունեության ոլորտում, այնպես էլ օրենքով նախատեսված դեպքերում՝ պայմանավորված խնամարկյալի գույքի մշտական կառավարման անհրաժեշտությամբ, ինչպես նաև կտակի հիման վրա, որում նշանակված է կտակատար և այլն:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԼՂՀ քաղաքացիական օրենսգիրք /24.02.2016թ./, ՀՕ-8-Ն:
2. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք/05.05.1998թ./, ՀՕ-239:
3. <<Նոտարիատի մասին>> ԱՀ օրենք /23.03.2005թ./, ՀՕ-184:
4. Гражданский кодекс РФ (часть 2) /30.11.1994г./, №51 – ФЗ:
5. Բարսեղյան Տ. Կ., Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք: Առաջին մաս /երրորդ հրատարակություն/: Եր. համալսարանի հրատ., Եր. 2009, 560 էջ:
6. Տոնոյան Լ.Ժ., Գույքի հավատարմագրային կառավարման պայմանագիր, 2007թ, էջ 135:
7. Витрянский В.В., Договор доверительного управления имуществом, М., 2001, ст 61:
8. Захаров Ю., Особенности договора доверительного управления имуществом с назначением выгодоприобретателя, Хозяйство и право, 2003, ст 115:
9. https://moluch.ru/archive/:

ՀՏԴ 340 Իրավագիտություն

Ինեսա Ներսեսյան
Հայ-ռուսական համալսարանի իրավունքի տեսության և սահմանադրական իրավունքի ամբիոնի ասպիրանտ,
Հայ-ռուսական համալսարանի Իրավունքի և քաղաքականության ինստիտուտի քաղաքացիական իրավունքի և քաղաքացիական դատավարության իրավունքի ամբիոնի վարիչի օգնական

ՓՈՐՁԱԳԵՏԻ ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՈՐՊԵՍ ԱՊԱՑՈՒՅՑ ԴԻՏԱՐԿԵԼՈՒ ՀԻՄՆԱՀԱՐՑԸ ՀՀ ՎԱՐՉԱԿԱՆ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր. *ապացույց, փորձագետի եզրակացություն, ցուցմունք, բացատրություն:*

Սույն գիտական հոդվածում ներկայացված են ապացույցի, փորձագետի եզրակացության, ցուցմունքի, բացատրության օրենսդրական, դոկտրինալ սահմանումները և առանձնահատկությունները: Հետազոտվել և վերլուծության է ենթարկվել ՀՀ վարչադատավարական օրենսդրությունը ապացույցների վերաբերյալ սահմանված իրավակարգավորումների մասով: Ներկայացվել է Ռուսաստանի Դաշնության փորձը սույն հոդվածի վերնագրով նշված հիմնահարցի վերաբերյալ: Ներկայացվել են ՀՀ վարչական դատավարության օրենսգրքում համապատասխան փոփոխություններ կատարելու առաջարկներ:

Инна Нерсесян

ОБЪЯСНЕНИЕ ЭКСПЕРТА КАК ДОКАЗАТЕЛЬСТВО В АДМИНИСТРАТИВНОМ СУДОПРОИЗВОДСТВЕ РА

Ключевые слова: *доказательство, заключение эксперта, показания, объяснение.*

В данной научной статье представлены доктринальные и законодательные определения к понятиям доказательство, заключение эксперта, показание и объяснение эксперта. Исследовано и анализировано законодательство об административном судопроизводстве РА в части правовых установок, касающихся доказательств. Изучен опыт РФ в рассматриваемой области. Представлены также определенные предложения о внесении изменений в Кодекс административного судопроизводства РА.

1. «Ապացույց», «ցուցմունք» և «բացատրություն» հասկացությունների առանձնահատկությունները և դրանց սահմանման հարցերը:

Նախքան բացատրությունը որպես ապացույց օգտագործելու իրավական հնարավորությունները դիտարկելը հարկ ենք համարում դիտարկել «ապացույց», «ցուցմունք» և «բացատրություն»հասկացությունների սահմանումները:

Համաձայն Ա.Մ. Սուքիասյանի հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի՝ *ապացույց* նշանակում է *փաստ, փաստարկ, փաստարկություն* (որևէ բանի ճշմարտությունը հաստատող)[1]: Իսկ ըստ հայերենի օնլայն բառարանի՝ *ապացույց* նշանակում է *անհերքելի փաստ՝ փաստարկ, որ հաստատում է որևէ բանի ճշմարտությունը* [2]:

Եթե անդրադառնանք ապացույցի իրավաբանական բովանդակությանը և նշանակությանը, ապա աննկատ չենք կարող թողնել այն հանգամանքը, որ դատավարական իրավունքում լայն կիրառվող այս հասկացությունն ունի օրենսդրական

բազմազան սահմանումներ, բայց դատավարական իրավունքի բոլոր ճյուղերում իմաստային առումով ունի մեկ համընդհանուր նշանակություն:

Այսպես, օրինակ, համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 57-րդհոդվածի՝ ապացույց է այն փաստական տվյալը, որի հետազոտման և գնահատման հիման վրա դատարանը պարզում է գործին մասնակցող անձանց պահանջների և առարկությունների հիմքում դրված, ինչպես նաև գործի կամ հարցի լուծման համար նշանակություն ունեցող այլ փաստերի առկայությունը կամ բացակայությունը[3]: Համաձայն ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի՝ վարչական գործով ապացույցներ են համարվում նշված օրենգրքով և այլ օրենքներով սահմանված կարգով ձեռք բերված տեղեկություններն այն փաստերի մասին, որոնք հիմք են հանդիսանում դատարանի կողմից այն հանգամանքների առկայությունը կամ բացակայությունը հաստատելու, որոնցով հիմնավորվում են գործին մասնակցող անձանց պահանջները և առարկությունները, ինչպես նաև այն հանգամանքները, որոնք վարչական գործերի ճիշտ քննության և լուծման համար ունեն նշանակություն[4]:

Հարկ ենք համարում ընդգծել, որ ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի սահմանում ապացույցի հասկացությունը: Կարծում ենք, որ դատավարական այդպիսի բարձր նշանակություն ունեցող եզրույթի հասկացության սահմանումը անհրաժեշտ է նախատեսել նաև ՀՀ վարչական դատավարության օրենսգրքով:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանում է այն բոլոր ապացույցների տեսակները, որոնք կարող են հետազոտվել և գնահատվել վարչական գործի քննության շրջանակներում: Դրանք են՝ վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իրեղեն ապացույցները: Սակայն հարկ ենք համարում ուշադրություն դարձնել այն հանգամանքին, որ օրենսդիրն ապացույցների նման դասակարգման շրջանակներում երկու անգամ է օգտագործել ցուցմունք եզրույթը, դրանով իսկ սահմանել ցուցմունքի երկու տեսակ (վկայի և փորձագետի ցուցմունք): Օրենսդրինշվածմոտեցմանըհարկենքհամարումանդրադառնալ«ցուցմունք»եզրույթիսահ մանումներըդիտարկելուցներկայացնելուցհետո:

Իսկ ի՞նչ է ցուցմունքը և ո՞րն է դրա դատավարական նշանակությունը: Համաձայն Ա.Մ. Սուքիասյանի հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի՝ *ցուցմունք* նշանակում էվ *կայություն*[5]: Իսկ մեծ իրավաբանական բառարանի համաձայն՝ *ցուցմունք* նշանակում է *փաստական հանգամանքների վերաբերյալ անձի այն հաղորդումը, որը նա տալիս է հարցաքննության ժամանակ* [6]:Ակնհայտ է դառնում, որ «ցուցմունք» հասկացությունն ընդգրկում է «վկայություն» և «հարցաքննություն» հասկացությունները և դիտարկվում է որպես այդ եզրույթների հոմանիշ: ՌԴ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է վկայիցուցմունքի հասկացությունը, մասնավորապես վկայի ցուցմունք է համարվում վկայի իրեն հայտնի հանգամանքների վերաբերյալ բանավոր ձևով այն հաղորդումները դատարանին, որոնք վարչական գործի ճիշտ քննության և լուծման համար ունենկարևորնշանակություն (69-րդհոդվածի1-ինմաս):Հարկ ենք համարում ընդգծել այն, որ «ցուցմուն քտալը» ենթադրում է «որևէ տեղեկություն վկայության ձևով ներկայացնելը», այնդեպքում, երբ բացատրություն տալուց անձն ըստ էության «չի ներկայացնում որևէ վկայություն», այլ միայնպարզաբանում է այն, ինչնարդենհայտնիէ:

Իսկի՞նչէբացատրությունը և ո՞րն է դրա իրավական նշանակությունը: Այս հարցերի

պատասխանը հանդիսանում է այն անկյունաքարը, որի հիման վրա կարելի է դատողություններանելբացատրությունըորպեսապացույցիտեսակդասակարգելումասին: ՀամաձայնԱ.Մ. Սուքիասյանի հայոց լեզվի հոմանիշների բացատրական բառարանի՝ *բացատրություն* նշանակում է *մեկնաբանություն, պարզաբանություն, լուսաբանություն[7]*: Համապատասխանաբար, բացատրությունը՝ որպես դատավարական փաստաթուղթ, պետք է կրի որևէ օբյեկտի պարզաբան ման կամ լուսաբանման նշանակություն, այն չի կարող ուղղակի վկայություն (ցուցմունք) լինել, քանի որ ի տարբերություն վկայության, բացատրությունով հայտնի չի դառնում նոր հանգամանք, այլ լուսաբանվում է արդենհայտնի դարձածիրողությունը:

2. Փորձագետի եզրակացությունը և ցուցմունքը դատավարական իրավունքում:

Համաձայն ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդհոդվածի 2-րդ կետի՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետի եզրակացությունը (ցուցմունքը), գրավոր ապացույցները, իր եղենապացույցները: Ակնհայտ է, որ օրենսդրի կողմիցնման իրավադրույթիսահմանումըհիմքէհանդիսանումփորձագետիեզրակացությունըորպեսնա ցուցմունքդիտարկելուկամփորձագետիկողմիցտրվածեզրակացությանվերաբերյալցուց մունքտալուկամվերցնելուհամար: Սակայնհարկենքհամարումնսմեկանգամընդգծել, որփորձագետիեզրակացությունըևցուցմունքըորպեսդատավարականփաստաթղթերկրու մենայլբնույթ, իսկ փորձագետի հարցաքննությունըհետապնդումէփորձագիտական եզրակացության լուսաբանման նպատակ:

Նախքաննշվածհարցերովհետազոտությունևվերլուծությունանելը, հարկենքհամարումներկայացնել«փորձագիտականեզրակացություն»հասկացությանսահ մանումները: Համաձայն ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգրքի 84-րդ հոդվածի 1-ին մասի՝ փորձագետի եզրակացությունը գործի քննության ընթացքում գիտության, տեխնիկայի, արվեստի, արհեստի կամ որևէ այլ բնագավառում հատուկ գիտելիքների օգտագործում պահանջող հարցերի բացահայտման և պարզաբանման նպատակով ձեռք բերված գրավոր փաստաթուղթն է, որը տրվում է փորձաքննություն նշանակելու մասին որոշմամբ առաջադրված հարցերին պատասխանելու միջոցով: Համաձայն իրավաբանական բառարանների՝ փորձագետի եզրակացություն է համարվում ապացույց հանդիսացող գրավոր փաստաթուղթը, որով փորձաքննությամբ նշանակված հարցերի վերաբերյալ փորձագետը տալիս է հիմնավոր պատասխաններ [8]: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը չի նախատեսում «փորձագիտականեզրակացություն»հասկացությանսահմանումը, սակայն հարկ ենք համարում նշել, որ օրենսդրական և դոկտրինալ սահմանումները թույլ են տալիս պնդել այն, որ փորձագիտական եզրակացությունը դատավարական փաստաթուղթ է, որը ապացույցի տեսակ է համարվում, և որի հիմնական նպատակն է դատական գործում ծառացած խորը մասնագիտական գիտելիքներ պահանջող հարցերին տալ հիմնավոր պատասխան:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը սահմանել է լրացուցիչ և կրկնակի փորձաքննության ինստիտուտը, որը կարծումենք, որկարող է էլ ավելի արդյունավետգործելօրենսդրականորոշակիփոփոխություններիկատարմանարդյունքու մ:

Այսպես, օրինակ, ՀՀ վարչականդատավարության40-րդհոդվածի6-րդ մասի համաձայն՝ փորձագիտական եզրակացության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում դատարանըկարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը

հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի: Նույնհոդվածի7-րդ մասիհամաձայն՝եթեդատարանըկասկածներունիփորձագիտականեզրակացությանարժանահավատությանկամիմնավորվածությանվերաբերյալ, կամ առկա են հակասություններ մի քանի փորձագետների եզրակացություններում, ապա դատարանը միևնույն հարցերի վերաբերյալ կարող է նշանակել կրկնակի փորձաքննություն, որի կատարումը հանձնարարվում է մեկ այլ փորձագետի: Կարծումենք, որ նման կարգավորումները որոշակի չափով հարթում են փորձագետի կողմից հիմնավորված, բավարարչափովհստակելրիվփորձագիտականեզրակացությունստանալուհարցումառաջացողինարավորխնդիրները:

Սակայն հարկ ենք համարում վերլուծության ենթարկել ՀՀ վարչական դատավարության 40-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված դրույթները, որոնցհամաձայն՝դատարանըկարողէորոշումկայացնելգրավորեզրակացություններկայացրածփորձագետինդրավերաբերյալցուցմունքտալունպատակովդատարանհրավիրելուվերաբերյալ, եթե դա անհրաժեշտ է գործի առանձինհանգամանքներպարզելուհամար և նման պայմաններում փորձագետի ցուցմունք տալու նկատմամբ կիրառվում են վկայի ցուցմունք տալուն վերաբերող կանոնները: Կարծումենք, որ գործի առանձի նհանգամանքները պարզելու դեպքում փոփոխվում է նաև պարզման ենթակա օբյեկտը, քանիոր «գործի առանձին հանգամանքներ» բառակապակցությունն ինքնին մատնանշում է ներկայացված փորձագիտական եզրակացության առարկայից դուրս եկող հանգամանքները: Նման պայմաններում, կարծում ենք որ փորձագետը չպետք է ցուցմունք տա, այլ պետք է նշանակվի լրացուցիչ փորձաքննություն, համապատասխանաբար գործի առանձին հանգամանքների պարզումը ևս մեկ իրավական հիմք է լրացուցիչ փորձաքննության նշանակմանը: Միևնույն ժամանակ հարկ ենք համարում ընդգծել նաև այն հանգամանքը, որ ցուցմունքը, ինչես արդեն պարզաբանվել էր, հանդիսանում է այս կամ այն հանգամանքի մասին վկայություն և փորձագետի կողմից փորձագիտական եզրակացության հիման վրա գործի առանձին հանգամանքների պարզումը չի կարող որպես վկայություն որակվել:

Կարծում ենք, որ ցանկացած դեպքում փորձագետի կողմից փորձագիտական եզրակացության վերաբերյալ հարցաքննությունը պետք է ամրագրվի դատավարական այլ փաստաթղթի ձևով, այն է՝ բացատրությունը: ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը պետք է սահմանի փորձագետի կողմից բացատրություն տալու իրավունքը:

3. Փորձագետի բացատրությունը որպես ապացույց օգտագործելու հիմնահարցը:

ՀՀ վարչական դատավարության օրենսգիրքը, ինչպես արդեն նշվելէր, սահմանում է ապացույցների տեսակների նեղ շրջանակ: Մասնավորապես՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդհոդվածի 2-րդ մասի համաձայն՝ ապացույցներ են վկայի ցուցմունքը, փորձագետիեզրակացությունը (ցուցմունքը), գրավորապացույցները, իրեղենապացույցները: Նշված հոդվածի ուժով բացատրությունն ապացույց չի հանդիսանում:

Հարկ ենք համարում անդրադառնալ ռուսական իրավական մտքին: Օրինակ, Օ.Յա. Մամեդովը գտնում էր, որ բացատրությունն ունի ապացուցողական նշանակություն [9]: Նույն տեսակետն էր պաշտպանում Վ.Ս. Բալաշկինը, պնդելով, որ բացատրությունը չի կարող դիտարկվել որպես «այլ փաստաթուղթ», քանի որ այն ունի ապացուցողական նշանակություն և կարող է որոշակի նշանակություն ունենալ ապացույցների հետազոտման և գնահատման փուլերում [10]:

Համաձայն ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի՝ որպեսապացույցթույլատրվումենգործինմասնակցողանձանցբացատրությունները, վկայի ցուցմունքը, գրավոր և իրեղենա պացույցները, աուդիո- և վիդեո ձայնագրությունները, փորձագետիեզրակացությունը: Համաձայն ՌԴ վարչական դատավարության օրենսգրքի6-րդգլխի (ապացույցներ և ապացուցում վերնագրով) 68-րդ հոդվածի 1-ին մասի՝ գործին մասնակցող անձինք տալիս են բանավոր կամ գրավոր ձևովբացատրություններ իրենց հայտնի հանգամանքների վերաբերյալ, որոնք նշանակությունուն են գործի ճիշտ քննությանկլուծման համար: Կարծումենք, որՌուսաստանիԴաշնությանօրենսդրինմանմոտեցումըվարչականդատավարությունում թույլատրելիևօգտագործվողապացույցներիշրջանակըսահմանելուհարցումողջունելիէ, քանի որ բացատրությունը իրապես կարող է պարունակել գործի լուծման համար կարևոր նշանակություն ունեցող տեղեկություն: Օրինակ, իրավակիրառական պրակտիկան չի կարող կաշկանդվել դեպքերով, երբ փորձագետի կողմից տրված եզրակացությունը և դրա բացատրությունն իրար հակասում են կամ առաջացնում են անորոշություն: Ապաայսպարագայում բացատրությունն ակամայից ստանում է ապացույցի ուժ, քանիորվկայումէփորձագետիկողմիցերկակիևհակասականտեղեկատվությանտրամադրելումասին:

ՀարկենքհամարումնանվկայակոչելՌԴվարչականդատավարությանօրենսգրքի82-րդ հոդվածի 7-րդ մասը, որի համաձայն՝ փորձագիտական եզրակացության հրապարակումից հետո փորձագետը կարող է տալան հրաժեշտ պարզաբանումներ և պարտավոր է պատասխանել գործին մասնակցող անձանց և դատարանի հարցերին:

Կարծումենք, որ փորձագիտական եզրակացության պարզաբանման նպատակով հարց ու պատասխանի ենթարկված փորձագետի կողմից տրված միակ դատավարական փաստաթուղթը պետք է համարվի բացատրությունը, այլ ոչ թե ցուցմունքը, և, ունենալովապացուցողականնշանակությունփորձագետիեզրակացությունըպետքէհանդի սանաապացույցիտեսակ:

Սակայնհարկենքհամարումպատասխանելնանայնպնդմանը, որցուցմունքըկրումէփորձագետին սուտտեղեկատվությունտալուցզսպող բնույթ՝ այն իմաստով, որ փորձագետը նախազգուշացվում է սուտ ցուցմունք տալու համար քրեական պատասխանատվության մասին, իսկ բացատրություն տալու դեպքում նա չի զգուշացվել ու սուտ բացատրություն տալու համար քրեական պատասխանատվության մասին: ՀՀ վարչականդատավարության 37-րդհոդվածի 1-ին մասի համաձայն՝ գործիքննությանժամանակծագողհատուկգիտելիքներպահանջողհարցերիպարզաբանմ աննպատակովդատարանըկարողէկողմի (կողմերի) միջնորդությամբկամիրնախաձեռնությամբփորձաքննությունննշանակել, որը կարող է հանձնարարվել կամմասնագիտացվածփորձագիտականհաստատությանը, կամ փորձագետին, իսկ նույնհոդվածի 6-րդ մասի համաձայն՝ դատարանը նախազգուշացնում է փորձագետին՝ ակնհայտ կեղծ եզրակացություն տալու համար քրեական պատասխանատվության մասին և դատարանը փորձագետից ստորագրություն է վերցնում նախազգուշացմանմասին, որըկցվումէդատականնիստիարձանագրությանը: Այսպիսով՝ անկախ այն հանգամանքից թե որ կողմի միջնորդությամբ է նշանակվել փորձաքննությունը, փորձաքննությաննշանակմանմասինորոշումըընդունումէդատարանըևդատարանընախ ազգուշացնումէփորձագետինակնհայտկեղծեզրակացությունտալուհամար,

ինչիհամարփորձագետըստորագրությունէտալիս:
Ուստիբացատրությունըհանդիսանումէփորձագիտականեզրակացությանըկիցփաստաթուղթ (անկախնրանիցայնբանավորէթեգրավոր), քանի որ փորձագետից բացատրություն վերցնելու միակ նպատակը փորձագիտական եզրակացության բարդ և մասնագիտական եզրաբանության պարզաբանումը կամ լուսաբանումն է:

Համապատասխանաբարարդենիսկսուտեզրակացությանհամարքրեականպատասխանատվությանմասիննախազգուշացվածփորձագետինլրացուցիչանգամքրեականպատասխանատվությանմասիննախազգուշացնելուկարիքչիառաջանում:

Եվ, համապատասխանաբար փորձագետին կեղծ բացատրություն տալուց զսպելու առաջին և հիմնական միջոցը՝ ակնհայտ կեղծ եզրակացության համար քրեական պատասխանատվության մասին նախազգուշացումն է, որի համար փորձագետը արդենիսկ ստորագրություն է տալիս:

4. Եզրակացություն և առաջարկություններ:

Հիմնվելով վերը շարադրված դրույթների, մոտեցումների և վերլուծության վրա՝ առաջարկում ենք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 25-րդ հոդվածի 2-րդ մասը փոփոխել հետևյալ կերպ՝

«2. Ապացույցներենվկայիցուցմունքը, փորձագետի եզրակացությունը և բացատրությունը, գրավորապացույցները, իրեղենապացույցները»:

Հիմնվելով վերը շարադրված դրույթների, մոտեցումների և վերլուծության վրա՝ առաջարկում ենք՝ ՀՀ վարչական դատավարության օրենսգրքի 40-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ մասերը փոփոխել հետևյալ կերպ՝

«4. Փորձագետը կարող է գրավոր կամ բանավոր ձևով բացատրություն ներկայացնել փորձագիտական եզրակացության վերաբերյալկողմերի միջնորդությամբ կամ դատարանի որոշմամբ: Փորձագետը պարտավոր է պատասխանել փորձագիտական եզրակացության վերաբերյալ լրացուցիչ հարցերին»,

«6.Փորձագիտական եզրակացության և (կամ) բացատրության պարզ կամ ամբողջական չլինելու դեպքում, ինչպես նաև գործի առանձին հանգամանքներ պարզելու նպատակով, դատարանը կարող է նշանակել լրացուցիչ փորձաքննություն՝ դրա կատարումը հանձնարարելով միևնույն կամ մեկ այլ փորձագետի (մասնագիտացվածփորձագիտականհաստատության)»:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՍուքիասյանԱ.Մ.,Հայոցլեզվիհոմանիշներիբացատրականբառարան, 2-րդհրատարակություն, Եր.: ԵՊՀհրատ., 2009թ., 1242 էջ, էջ82:
2. Հայերենիօնլայնբառարան /http://bararanonline.com/(06.11.2018)
3. ՀՀքաղաքացիականդատավարությանօրենսգիրք09.04.2018 թվականիդրությամբ / www.arlis.am:
4. Кодекс административного судопроизводства РФ, ред. от 19.07.2018, N 21-ФЗ / http://www.consultant.ru.
5. ՍուքիասյանԱ.Մ.,Հայոցլեզվիհոմանիշներիբացատրականբառարան, 2-րդհրատարակություն, Եր.: ԵՊՀհրատ., 2009թ., 1242 էջ, էջ1137:
6. Большой юридический словарь / https://petroleks.ru/dictionaries/dict_big_law16.php (06.11.2018).
7. ՍուքիասյանԱ.Մ.,Հայոցլեզվիհոմանիշներիբացատրականբառարան, 2-րդհրատարակություն, Եր.: ԵՊՀհրատ., 2009թ., 1242 էջ, էջ155:
8. Большой юридический словарь “Академик” / https://jurisprudence.academic.ru/ (11.11.2018).
9. Мамедов О.Я. Объяснение в системе доказательств по уголовному делу, научная статья / https://cyberleninka.ru/(11.11.2018).
10. Балакшин В.С. Объяснение как доказательство в уголовном и административном судопроизводстве//Российский юридический журнал. 2012. №5. С.124-126.

Անահիտ Շահինյան
Գավառի պետական համալսարանի
Իրավագիտության բաժնի 4-րդ կուրսի ուսանողուհի
anahit.shahinyan.1998@mail.ru
Գիտական ղեկավար՝ Օլգա Հովհաննիսյան

ԳՈՐԾԱՐՔՆԵՐԸ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *գործարքներ, իրավահարաբերություններ, կամահայտնություն, գործողություններ, սուբյեկտներ, պայմանագիր, ֆիզիկական անձինք, իրավաբանական անձինք:*

Анаит Шагинян

СДЕЛКИ В ГРАЖДАНСКОМ ПРАВЕ

Ключевые слова*: сделки, правоотношения, волеизъявление, действие, субъекты, договор, физические лица, юридические лица*

Роль сделок в гражданских правоотношениях весьма велика. Они являются важными институтами гражданского права как неотъемлемая часть участников гражданского оборота. Как физические, так и юридические лица постоянно имеют дело с различными видами сделок, заключенными как в письменной, конклюдентно так и устной формах. Представляется, что в Армении по образу других стран может быть использован более эффективный способ формы заключения сделок, а именно, онлайн.

Գործարքը իրավաբանական փաստ է, որի կատարման համար անհրաժեշտ է որոշակի գործողությունների կատարում:

Գործարքն է այն իրավական միջոցը, որի օգնությամբ հասարակության իրավահավասար սուբյեկտները սահմանում, փոփոխում կամ դադարեցնում են իրենց իրավունքներն ու պարտականությունները: Գործարքների սոցիալ-տնտեսական նշանակությունը կանխորոշվում է իրենց էությամբ և իրավական առանձնահատկություններով:

Գործարքների ընտրությունը պայմանավորված է նրանով, որ այն գլոբալ իրավական ինստիտուտ է և իր բնույթով պահանջված է եղել մարդկության ողջ ժամանակաշրջաններում: Մենք գիտենք, որ գործարքը մեկն է ամենաընդգրկուն իրավաբանական փաստերից, քանի որ համարվում է իրավահարաբերությունների առաջացման հիմնական նախապայմանը:

Մեր աշխատանքին կարևորություն է հաղորդում այն հանգամանքը, որ գործարքները հանդիսանում են, քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ առաջացնող ամենատարածված հիմքերից մեկը:

Փաստացի անձը միշտ գտնվում է քաղաքացիաիրավական հարաբերությունների մեջ, ինչպես պետության, այնպես էլ հասարակության և նրա անդամների հետ: Կասկած չկա այդ փաստի առթիվ, որ գործարքները հասարակական կյանքում բազմաբովանդակ դեր են կատարում[1]:

Քաղաքացիները ամեն օր գտնվում են քաղաքացիական հարաբերությունների մեջ՝ կնքելով գործարքներ:

[1] *Տե՛ս* ***Ильков С.В.****, Все о Сделках.М.-СПБ. 2000, էջ 140.*

Կարող ենք առանձնացնել գործարքների հետևյալ հատկանիշները՝

1. գործարքը համարվում է իրավաբանական փաստ,
2. գործարքը միշտ իրավաչափ գործողություն է,
3. գործարքը կամային գործողություն է,
4. գործարքն ուղղված է սուբյեկտների միջև քաղաքացիական իրավահարաբերություններ առաջացնելուն, փոփոխելուն կամ դադարեցնելուն,
5. գործարքն իրավունքներ ու պարտականություններ է առաջացնում միայն այն կնքած անձանց , երբեմն էլ նաև երրորդ անձի համար:

Քաղաքացիական իրավունքի աղբյուրներից գիտենք, որ գործարքների մասին գիտական դրույթները ձևավորվել են գերմանական իրավական համակարգում, որտեղ գործարքը բնորոշվում է որպես անձի կամքն արտահայտելուն ուղղված իրավական գործողությունների ամբողջություն՝ օրենքով թույլատրված շրջանակներում: Գործարքների մասին նշվում է համապատասխան օրենքներում և նորմատիվ իրավական ակտերում: Օրինակ՝ ՀՀ Սահմանադրության 60-րդ հոդվածը սահմանում է, որ յուրաքանչյուր ոք ունի սեփականության և ժառանգման իրավունք: Սեփականությունից կարող է զրկել միայն դատարանը՝ օրենքով նախատեսված դեպքերում [1]:

Սահմանդրությամբ սահմանվում է, որ ՀՀ քաղաքացիները իրավունք ունեն անկաշկանդ տնօրինելու իրենց պատկանող գույքը՝ չխոչընդոտելով այլոց իրավունքների իրականացմանը:

ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 289-րդ հոդվածով սահմանվում է, որ ‹‹Գործարքները քաղաքացիների և իրավաբանական անձանց այն գործողություններն են, որոնք ուղղված են քաղաքացիական իրավունքներ և պարտականություններ սահմանելուն, փոփոխելուն և դրանց դադարելուն›› [2]:

Քաղաքացիական իրավունքը կարգավորում է տնտեսական շրջանառության հարաբերությունները, որոնք բազմաբնույթ են և անընդմեջ փոփոխությունների են ենթարկվում:

ՀՀ քաղաքացիական իրավունքում սահմանվում է, որ գործարքի «կողմ», սուբյեկտ կարող են հանդես գալ քաղաքացիական իրավունքի սուբյեկտներ:

Քաղաքացիական իրավունքի սուբյեկտներն են.

1. քաղաքացիները,
2. իրավաբանական անձինք,
3. օտարերկրյա քաղաքացիները,
4. քաղաքացիություն չունեցող անձինք և այլն. . . [3]

Իրավաբանական անձինք իրենց խնդիրները կատարելու համար միմյանց հետ մտնում են բազմաթիվ գործարքների մեջ՝ անհրաժեշտ գույք, պահեստամասեր, հումք, նյութեր ձեռք բերելու, ինչպես նաև արտադրանքն իրացնելու համար:

---

[1] Տե՛ս ՀՀ Սահմանադրություն № ՀՕ-60 ՀՀՊՏ 2015.12.21/Հատուկ թողարկում:

[2] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, № ՀՕ-289 ՀՀՊՏ 1998.08.10/17(50).05.05.1998.:

[3] Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական իրավունք , դասագիրք բուհերի համար, մաս 1-ին– ԵՊՀ հրատ. 2000, էջ192 :

Գործարքն անվավեր է համարվում Քաղաքացիական օրենսգրքով սահմանված հիմքերով դատարանի կողմից այն այդպիսին ճանաչելու ուժով կամ անկախ ճանաչումից:[1]

Գործարքում առանձնանում են երկու կարևոր տարր.

1. կամքը,
2. կամարտահայտությունը:

Տվյալ տարրերի կամ դրանցից որևէ մեկի բացակայության դեպքում գործարքը անվավեր է համարվում: Գործարքների բուն էությունը կազմում է սուբյեկտի կամահայտնությունը: Սուբյեկտի կամքը պետք է արտահայտված լինի որևէ կերպ, որպեսզի այն ընկալելի լինի շրջապատի համար: Անվավեր է համարվում այն գործարքը, որն իրականացվել է բռնությամբ, խաբեությամբ կամ սպառնալիքի ներքո, քանի որ այդպիսի գործարքը չի հանդիսանում մասնակիցների իրական, գիտակցված կամքի դրսևորում (ՀՀ քաղ. օր 313-րդ հոդված):[2]

Գիտենք, որ գործարքները մեծ մասամբ առաջացնում են իրավահարաբերություններ:

Քաղաքացիաիրավական գործարքները լինում են բազմազան և բաժանվում են մի շարք տեսակների: Օրինակ՝ միակողմ, երկկողմ և բազմակողմ գործարքներ . . .

Համաձայն ՀՀ քաղաքացիական օրենսգրքի 290-րդ հոդվածի 2-րդ կետի. «Պայմանագիր կնքելու համար անհրաժեշտ է երկու կողմի (երկկողմ գործարք) կամ երեք ու ավելի կողմերի (բազմակողմ գործարք) համաձայնեցված կամքի արտահայտությունը»: Երկկողմ են համարվում այն գործարքները, որոնք իրավական հետևանքներ են առաջացնում, երբ առկա է երկու կողմերի կամքը և այն էլ այնպիսի, որ մեկ կողմի կամահայտնությունը լրացվում է մյուս կողմի հակադարձ կամահայտնության միջոցով: Գործարքները լինում են հատուցելի և անհատուցելի: Գործարքների հատուցելի և անհատույց լինելը կարող է որոշվել ըստ իրենց բնույթի կամ կողմերի համաձայնության:

Գործարքում հատուցումը կարող է դրսևորվել՝ Օրինակ՝ ապրանքի դիմաց գումարի փոխանցմամբ, իրերի փոխանցմամբ, փոխադարձ պայմանի, ծառայությունների կատարման, ծառայությունների տրամադրման և այլ միջոցներով:

Քաղաքացիաիրավական գործարքների հիմնական մասը հատուցելի է:

Անհատույց են համարվում այն գործարքները, որոնք բացառություն են հանդիսանում ընդհանուր կանոնների համեմատությամբ, երբ մի կողմի կատարածի դիմաց մյուս կողմը պարտավոր չէ հատուցում կատարել:

Անհատույց գործարքներ են համարվում նվիրատվությունը և գույքն անհատույց օգտագործելու պայմանագրերը:

Անհատույց գործարքների դեպքում բացակայում է հանդիպակաց պարտավորությունը, ինչն էլ թույլ է տալիս հանգելու, որ հատուցելի են երկկողմ և բազմակողմ գործարքները: Միակողմ գործարքները միշտ անհատույց են:

Ռեալ են այն գործարքները, որոնք կնքված են համարվում միայն այն պահից, երբ տեղի է ունենում պայմանագրի առարկայի գույքի հանձնում գործարքի մեկ մասնակցի կողմից մյուսին:

Կոնսենսուալ է այն գործարքը, որը կնքված է համարվում, երբ կողմերի միջև կայացվում է համաձայնություն:

---

[1] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք № ՀՕ-303 ՀՀՊՏ 1998.08.10/17(50).05.05.1998.:*

[2] *Տե՛ս Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգիրք, № ՀՕ-313 ՀՀՊՏ 1998.08.10/17(50).05.05.1998.:*

Պայմանագրերի հիմնական մասը կոնսենսուալ է:

Մենք գիտենք, որ ռեալ գործարքները նկարագրելիս նշվում է, որ գործարքի կողմը փոխանցում է մյուս կողմին որոշակի ապրանք, ինչն էլ նշանակում է, որ գործարքի կնքման պահը համընկնում է գույքի փոխանցման պահի հետ[1]: Առօրյայում կատարվող մի շարք գործողություններ ռեալ գործարքներ են:

Օրինակ՝ ռեալ գործարքի տեսակ է փոխառության պայմանագիրը, խանութից գնումներ կատարելը, բեռնափոխադրում կատարելը, ինչպես նաև հասարակական տրանսպորտից օգտվելը և այլն:

Կախված գործարքի իրավական հիմքի որոշակիությունից՝ գործարքները լինում են՝

1. կաուզալ
2. վերացական:

Յուրաքանչյուր գործարք ունի իրավական հիմք, իրավական նպատակ, ինչին էլ սուբյեկտները ձգտում են: Գործարքը համարվում է կաուզալ, երբ բովանդակությունից պարզ է դառնում նրա իրավական հիմքը և հետապնդած նպատակը:[2]

Գործարքի մասնակիցների իրավահարաբերությունների ընդհանուր բնորոշումից ելնելով՝ գործարքի ինքնուրույն տեսակ են համարվում նաև վստահության վրա հիմնված կամ, ինչպես ընդունված է անվանել, ֆիդուցիար (ծագել է լատիներեն *վստահություն* բառից) գործարքները:

Ուսումնասիրելով տարբեր աշխատություններ, հանգում ենք այն եզրակացությանը, որ գործարքների իստիտուտում նպատակահարմար կլինի կատարել փոփոխություններ՝ առաջին հերթին, նոտարական վավերացում պահանջող գործարքների շրջանակը լայնացնել:

Քանի որ ներկայումս քաղաքացիական գործերը կազմում են դատարաններում քննվող գործերի ավելի քան 75 տոկոսը, դատարանը, նյութերը հետազոտելիս չունենալով գրավոր ապացույցներ, կարճում է գործի վարույթը, ապացույցի բացակայության հիմքով, որի արդյունքում կողմերի վեճը չի լուծվում: Հենց այս պարագայում էլ ակնառու է դառնում նոտարական վավերացման անհրաժեշտությունը:

Մեր կարծիքով՝ առավել արդյունավետ կլինի նաև առցանց կատարվող գործարքների շրջանակները լայնացնել, որը քաղաքացիական շրջանառության մասնակիցների իրավունքների իրացման գործընթացը զգալիորեն կհեշտացնի, քանի որ շատ դեպքերում քաղաքացիները չեն ցանկանում մասնակցել քաղաքացիական իրավահարաբերությունների՝ տեղափոխման խնդիր ունենալու պատճառով:

Վերոհիշյալ առաջարկությունը կլուծի այդ խնդիրը, որպեսզի ՀՀ քաղաքացիներն էլ կարողանան օգտվել արտասահմանում գործող նորմերից:

Հոդվածի նպատակն է համապատասխան մասնագիտական գրականության հիման վրա վերլուծել առցանց ռեսուրսների դերն ու նշանակությունը ընտրարշավի արդիականացման մեջ: Ընտրարշավների հաջողությունը շատ դեպքերում կախված է ընտրողների հետ արդյունավետ հաղորդակցությունից: Համացանցը համեմատաբար քիչ ծախսատար և արդյունավետ միջոց է քարոզարշավների անցկացման համար: Դրա համար էլ ընտրարշավների ժամանակ Համացանցի նկատմամբ հետաքրքրությունն ավելի է մեծանում, առաջին հերթին, քաղաքական առաջնորդների մոտ:

Ирина Габриелян

РОЛЬ ОНЛАЙН-РЕСУРСОВ В МОДЕРНИЗАЦИИ ИЗБИРАТЕЛЬНОЙ КАМПАНИИ

Ключевые слова: *онлайн-ресурсы, Интернет, избирательная кампания, электорат, политическая мобилизация, интернет-конференции, интернет-голосование, информационное воздействие, информационная безопасность.*

Цель статьи - проанализировать роль и значение онлайн-ресурсов в модернизации избирательной кампании на основе соответствующей профессиональной литературы. Успех избирательных кампаний во многом зависит от эффективности коммуникации с избирателями. Интернет - относительно экономное и эффективное средство для ведения пропагандистских кампаний. Поэтому интерес к Интернету растет в период избирательных кампаний в первую очередь у политических лидеров.

Տեղեկատվական տեխնոլոգիաների և համացանցային հաղորդակցման միջոցների զարգացումը անխուսափելի տենդենց է վերջին տասնամյակներում: Համաձայն պաշտոնական վիճակագրության՝ այսօր աշխարհի յուրաքանչյուր երկրորդ մարդ հանդիսանում է Համացանցի ակտիվ օգտատեր:

Համացանցային հաղորդակցության լայն կիրառումը չէր կարող չազդել քաղաքականության ոլորտի վրա: Քաղաքականության մեջ Համացանցի օգտագործման արդի ուղղվածություններից մեկը ընտրություններն ու նախընտրական քարոզարշավներն են: Նախընտրական քարոզարշավը (նույն ինքը՝ ընտրարշավը) ընտրական գործընթացի առանձին փուլ է, որը սահմանափակվում է կոնկրետ ժամանակի շրջանակում: Այն քարոզչական միջոցառումների համախումբ է, որն իրականացվում է առաջադրված թեկնածուների և իրենց կուսակցությունների կողմից ընտրապայքարի ժամանակ՝ նպատակ ունենալով գալիք ընտրություններում իրենց համար ապահովել առավելագույն աջակցություն:

Քաղաքակրթության զարգացման տարբեր էտապներում կիրառվում էին քաղաքական քարոզչության և էլեկտորատի քարոզարշավի տարբեր մեթոդներ՝ սկսած հանրային ելույթներից, քարոզչական թերթիկներից և ԶԼՄ-ի գործողություններից: Բնականաբար, Համացանցը՝ որպես ընտրողների վրա ներգործության ուժեղ միջոց, չի կարող անմասն մնալ այդ գործընթացից: Հակառակը, նկատվում է Ցանցի դինամիկ մուտքը ընտրական գործընթացի մեջ:

Համացանցը համեմատաբար քիչ ծախսատար և արդյունավետ միջոց է քարոզարշավների անցկացման համար: Դրա համար էլ ընտրարշավների ժամանակ Համացանցի նկատմամբ

հետաքրքրությունն ավելի է մեծանում, առաջին հերթին, քաղաքական առաջնորդների մոտ:

Համացանցը նաև օգտակար հարթակ է քաղաքական կուսակցությունների համար՝ իրենց օրակարգը էլեկտորատին ներկայացնելու և ավելի շատ աջակցություն մոբիլիզացնելու նպատակով: Սահմանափակ ռեսուրսներ ունեցող փոքր քաղաքական կուսակցությունները և անկախ թեկնածուները, մասնավորապես, կարող են շահել հաղորդակցման այս տիպից: Համացանցի աճող դերի գլխավոր պատճառներից մեկը կայանում է նրանում, որ շնորհիվ մեծ լսարանի՝ այն դառնում է հզոր էլեկտորալ ռեսուրս: Համացանցի միջոցով քաղաքական սուբյեկտները կարող են ինչպես ձեռք բերել լուրջ հասարակական աջակցություն, այնպես էլ կորցնել մարդկանց վստահությունը:

Նոր մեդիամիջավայրում քաղաքական դերակատարները ստիպված են ստեղծել ամբողջական կերպար ոչ միայն հեռուստատեսությամբ կամ մամուլով, այլ նաև տարբեր համացանցային տարածքներում /սեփական կայք, բլոգ, տեղեկատվական պորտալներ, սոցիալական ցանցեր և այլն/, որտեղ քաղաքական գործիչն օգտատերերի ուշադրության համար կմրցակցի այլ խաղացողների հետ, և այդ մրցակցությունը կարող է լինել ավելի կոշտ, քան օֆ-լայն միջավայրում:

Հետազոտությունները ցույց են տվել, որ Համացանցում կան քաղաքական արշավներ նախաձեռնող երկու խմբեր՝ պատվիրատուներ և ակտիվիստներ: Հարցվողները առաջին շարքին դասեցին քաղաքական գործիչներին, իսկ երկրորդին՝ իրադարձությունների անմիջական մասնակիցներին:

Քաղաքական արշավի մասին տեղեկատվության տարածման երկու մեխանիզմներ են առանձնացվում: Առաջին դեպքում պատվիրատուն, իր շահերից ելնելով, վարձում է մասնագետների, ովքեր նախաձեռնում են արշավը: Ստեղծվում է փաթեթ, որը նրանք սկսում են տարածել բլոգներում, սոցիալական ցանցերում և այլուր: Թիրախային լսարանի կողմից տվյալ փաթեթի աջակցության դեպքում այն հետագայում սկսում է ինքնուրույն տարածվել Ցանցով վերահրապարակումների, հղումների, փոխանցումների միջոցով:

Ցանցային տեղեկատվական աղբյուրները, որոնք օգտագործվում են ընտրական գործընթացի մասնակիցների կողմից, չափազանց տարբեր են: Դրանց մեջ մտնում են և՛ պետական իշխանության մարմինների տվյալները, և՛ ընտրական հանձնաժողովների էջերը: Հանրաճանաչ են դառնում քաղաքական կուսակցությունների և թեկնածուների կայքերը, որոնց հիմնական խնդիրն է ինքնաներկայացումը, քարոզչությունն ու նոր ընտրողների՝ դեպի իրենց կողմը գրավելը: Ստեղծվում են մասնագիտացված հարցումների կայքեր, որտեղ առաջարկվում է քվեարկել այս կամ այն թեկնածուի օգտին կամ առաջարկել այլ նախընտրելի թեկնածուի, իսկ քվեարկության արդյունքները սովորաբար վերահսկվում են կայքի տիրոջ կողմից և այդպիսով այնտեղ նշված թեկնածուների համար ձևավորվում են կեղծ վարկանիշներ: Բացի դրանից, ստեղծվում են վերլուծական կայքեր, որտեղ ներկայացված են տարբեր քաղաքական ուժեր (նրանց քարոզչական նյութերը, փորձագետների գնահատականը, թեկնածուների հարցազրույցները):

Հաշվի առնելով, որ համացանցի օգտատերերի քանակը գնալով մեծանում է՝ լայնամասշտաբ քաղաքական արշավների սուբյեկտներին, ովքեր կողմնորոշված են դեպի զանգվածային թիրախային լսարաններ, անհրաժեշտ է օգտագործել առցանց ռեսուրսները, մասնակցել առցանց-հաղորդակցություններին և դրանք դարձնել առավելապես <<հորիզոնական>>, քանզի ոչ բոլոր թիրախային լսարանների վրա այսօր կարելի է ազդել հաղորդակցման ավանդական ալիքների օգտագործմամբ:

Պատահական չէ, որ մի շարք քաղաքական ուժեր ու գործիչներ, ինչպես նաև քաղտեխնոլոգներ փորձում են ակտիվ փոխգործակցել համացանցային լսարանի հետ տարբեր օնլայն տարածքներում հենց հորիզոնական մակարդակով, որպեսզի նվաճեն

վստահության և աջակցության անհրաժեշտ աստիճանը, ինչպես նաև անմիջական մասնակցություն ունենան համացանցային միջավայրում իրենց դրական իմիջի ձևավորման գործում:

Քաղաքական էլիտաներն առավել, քան երբևէ ընդգրկվում են բլոգային միջավայրի մոնիթորինգի, վիկի-ռեսուրսների պարունակության վրա վերահսկողության և իրենց համար անսովոր այնպիսի միջավայրերում սեփական ներկայության ամրագրման գործընթացի մեջ, ինչպիսիք են՝ Facebook-ը և YouTube-ը:

Բնական է, որ ինտերնետ-կոնֆերանսներին մասնակցելու մղումը թեկնածուների համար էկզոտիկ ինտերնետ-շփման համար չէ, այլ նպատակ ունի ստանալ ընտրողի աջակցությունը, ով Համացանցի օգտատեր է, տեղեկանալ նրա խնդիրների մասին ու իմանալ, թե ինչ են մտածում զանգվածները իր և այլ թեկնածուների գործունեության մասին: Մյուս կողմից, ընտրողների մասնակցությունը ինտեռնետ-կոնֆերանսներում թույլ է տալիս ստանալ տեղեկատվություն սկզբնաղբյուրից, տալ հետաքրքրող հարցեր, երկխոսել թեկնածուի հետ:

Ներկայումս անընդհատ աճում է տեղեկատվական ներգործության նոր տեխնոլոգիաների ազդեցությունը հասարակության, մարդկանց կազմակերպված և ոչ կազմակերպված խմբերի, զանգվածների և առանձին մարդու վրա: Այդ տեխնոլոգիաները դառնում են ուժեղ գործիք գիտակցության վրա ներգործելու և դրանք մանիպուլացնելու համար:

Հասարակության քաղաքական կյանքի մեջ ընտրական տեխնոլոգիաների նոր հնարավորությունների ներդնումը դառնում է որոշիչ գործոն, որը որոշում է էլեկտորատի ընտրությունը: Համացանցը ստեղծել է քաղաքական մոբիլիզացիայի նոր ցանցային հնարավորություններ: Քաղաքական մոբիլիզացիայի տակ հասկանում ենք գործընթաց, որի հաշվին քաղաքական ակտորները ներգործում են անհատների վրա՝ նպատակ ունենալով ազդել ընտրողների վարքագծի, ինչպես նաև որևէ քաղաքական որոշում ընդունելու վրա: Համացանցը դարձել է հասարակական բողոքի կազմակերպման և քաղաքական ռեսուրսի մոբիլիզացման նոր միջոց (վառ օրինակ են այսպես կոչված «Ինտերնետ-հեղափոխությունները» Թունիսում, Եգիպտոսում, Լիբիայում): Դրա հետ մեկտեղ, սակայն, չպետք է չափազանցնել ցանցի ավտոնոմությունը:

Խոսելով հեղափոխություններում համացանցի դերի մասին՝ կարելի է անդրադառնալ նաև ՀՀ-ում տեղի ունեցած իրադարձություններին: Մեդիափորձագետ Սամվել Մարտիրոսյանը իր հարցազրույցներից մեկի ժամանակ նշել է, որ «համացանցի ազդեցությունը իշխանափոխության շրջանում ահռելի էր, իսկ ամենալուրջ երևույթներից են եղել ուղիղ եթերները: Ն. Փաշինյանը ուղիղ եթեր էր մտնում իր ֆեյսբուքից, բանակցությունները ուղիղ եթեր էին գնում: Դա հաստատեց մի բան՝ քարոզչական մեթոդները չէին աշխատում: Այսինքն՝ մարդիկ ստիպված չէին միջնորդավորված վերլուծությունների հիման վրա հասկանալ, թե ինչ է կատարվում, նրանք այդ իրադարձությունների անմիջական ականատեսներն էին»:

Այսպիսով, Համացանցի միջոցով կարելի է կազմակերպել փոխգործակցություն ընտրողների հետ՝ օգտագործելով այնպիսի ծառայություններ, ինչպիսիք են՝ ֆորումները, չաթերը, ինտերնետ-կոնֆերանսները, էլեկտրոնային փոստը, ինտերնետ-քվեարկությունը և այլն: Այդկերպ Համացանցը ընտրարշավի ժամանակ իրականացնում է տեղեկատվական-հաղորդակցային գործառույթ: Ընտրությունների ընթացքում Համացանցը նպաստում է քաղաքական գործչի իմիջի ձևավորմանը, ստեղծում է թեկնածուի վիրտուալ կերպարը: Ցանցում թեկնածուների կերպարի վիրտուալացումն իրականացվում է նրանց ծրագրերի, հայտարարությունների, բաց նամակների և կոչերի, կայքերում զանազան վերլուծական և փորձագիտական կարծիքների վիրտուալացման շնորհիվ:

Պետք է ընդգծել, որ սոցիալական ցանցերը, թեկուզև քաղաքական գործիչներին նոր հնարավորություններ են տալիս, բայց նաև կրում են նոր վտանգներ: Անհրաժեշտ է նոր

մեդիաոլորտում ներգրավել ոչ միայն փորձագետների, ովքեր սոցիալական ցանցերում հաղորդագրություններ են պատրաստում, տեղեկատվական դաշտի վերլուծությամբ են զբաղվում, այլ նաև տեղեկատվական անվտանգության ոլորտի մասնագետների:

Խոսելով Համացանցի՝ որպես քաղաքական մանիպուլացիայի գործիքի մասին անհրաժեշտ է նշել, որ Համացանցը նաև շշուկների և ապատեղեկատվության տարածման հիանալի զենք է: Համացանցում դա մեծ խնդիր է, քանզի այստեղ գործում է անանություն և չկա ընտրական ինտերնետ-տեխնոլոգիաների կիրառման իրավական կարգավորում: Պետք է ընդգծել, սակայն, որ բացասական տեղեկատվության և ապատեղեկատվության տարածումն ընտրությունների ընթացքում մասնավորապես բարոյական վնաս է հասցնում ողջ հասարակությանը, քանզի ստեղծվում է անվստահություն և մտավախություն քաղաքական գործչի նկատմամբ, հանգեցնում է քաղաքական ապատիայի:

Այսքանով հանդերձ, կարելի է գալ այն եզրահանգման, որ ընտրարշավների ժամանակ գնալով մեծանում է Համացանցի դերը որպես էլեկտորատի հետ շփման տեղեկատվական-հաղորդակցային ալիք:

Հղումների ցանկ

1. Лагутина О.В., Избирательные кампании и СМИ, Учебное пособие, Курск, 2014, с.7 https://swsu.ru/structura/up/flmk/kip/folder4/Lagutina(SMI).pdf
2. Бронников И.А., Внедрение онлайн-ресурсов в электоральный процесс (опыт США) // Социодинамика.–Москва, 2013. – № 9. – С. 130 – 152 https://e-notabene.ru/pr/article_9058.html
3. Study on the use of internet in electoral campaigns, Council of Europe study, DGI (2017)11, p. 7 https://rm.coe.int/use-of-internet-in-electoral-campaigns-/16807c0e24
4. Неяскин Г.Н., Интернет в политических кампаниях США и России: сравнительный анализ // Бизнес. Общество. Власть, 2010. № 5., с. 5 https://www.hse.ru/data/2011/05/23/1213977786/12Neyaskin_Internet.pdf
5. Соколов А.В., Интернет-технологии политического участия и их влияние на офлайн-политику // Известия Алтайского государственного университета, 2014. № 4-1 (84), с. 305 https://cyberleninka.ru/article/v/internet-tehnologii-politicheskogo-uchastiya-i-ih-vliyanie-na-oflayn-politiku
6. Большаков С.В. и др., Интернет и выборы, Издательская версия: "Современные избирательные технологии", Москва, 2002, с. 30 http://www.rcoit.ru/upload/iblock/da8/03.pdf
7. Особенности интернет-коммуникаций, Студми. Учебные материалы для студентов © 2013 – 2019 https://studme.org/304297/sotsiologiya/osobennosti_internet_kommunikatsiy#aftercont
8. Большаков С.В. и др., Интернет и выборы, Издательская версия: "Современные избирательные технологии", Москва, 2002, с. 45 http://www.rcoit.ru/upload/iblock/da8/03.pdf
9. Малиновский С.С., Политическая коммуникация в Рунете как фактор российского политического процесса. Диссертация на соискание ученой степени кандидата политических наук. Москва, 2013, с 58 https://www.hse.ru/data/2013/12/02/1277188847/dis%20malin.pdf
10. Аветисян Н., Влияние интернета на революцию в Армении, Armtimes, 14.05.2018 https://armtimes.com/ru/article/136946
11. Свинин А.А., Использование социальных сетей как интернет-технологий в избирательных кампаниях: международный опыт// Вестник РУДН, серия Политология, 2013, № 2, с 161 https://cyberleninka.ru/article/v/ispolzovanie-sotsialnyh-setey-kak-internet-tehnologiy-v-izbiratelnyh-kampaniyah-mezhdunarodnyy-opyt

ՀՏԴ 327.5 Պատմություն և քաղաքագիտություն

Աննա Գասպարյան
ԱրՊՀ պատմության և իրավագիտության ֆակուլտետ
«Քաղաքագիտություն» մագիստրատուրա 2-րդ կուրս
Էլ.հասցե՝ gasparyananna122@gmail.com

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԸ ՂԱՐԱԲԱՂՅԱՆ ՀԱԿԱՄԱՐՏՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր: *Ղարաբաղյան հակամարտություն, տեղեկատվական պատերազմ, հոգեբանական պատերազմ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, ԶԼՄ-ներ, քարոզչություն, հակաքարոզչություն, ադրբեջանական կայքեր, հայկական կայքեր, տեղեկատվական անվտանգություն:*

Տարիների ընթացքում մշակված քարոզչական ապարատն այսօր էլ որպես զենք օգտագործվում է հայ-ադրբեջանական հակամարտության տեղեկատվական, հոգեբանական և գաղափարախոսական ճակատամարտերում: Հակամարտության երկու կողմերն էլ մշակել և օգտագործել են համապատասխան «քարոզչական առասպելաբանություն» ՝ բաղկացած փաստերի, առասպելների և կարծրատիպերի խայտաբղետ խառնուրդից, որի նպատակն է արդարացնել և խրախուսել հակառակորդի դեմ ուղղված հետագա քայլերը:

Анна Гаспарян

ИНФОРМАЦИОННАЯ ВОЙНА В КОНТЕКСТЕ КАРАБАХСКОГО КОНФЛИКТА

Ключевые слова*: Карабахский конфликт, информационная война, психологическая война, информационные технологии, СМИ, пропаганда, антипропаганда, азербайджанские сайты, армянские сайты, информационная безопасность.*

Разработанный на протяжении многих лет пропагандистский аппарат и сегодня используется в качестве оружия в информационных, психологических и идеологических сражениях армяно-азербайджанского конфликта. Обе стороны конфликта разработали и использовали соответствующую "пропагандистскую мифологию", состоящую из пестрой смеси фактов, мифов и стереотипов, целью которой является оправдание и поощрение дальнейших шагов против противника.

Ղարաբաղյան հակամարտության մեջ տեղեկատվական պատերազմը, սկսած կոնֆլիկտի ժամանակակից փուլի սկզբից (1988թ.), ուղեկցում էր կոնֆլիկտային փոխգործողություններին՝ ձևավորելով թշնամու կերպար, փորձելով մոբիլիզացնել բնակչությանը կոչ անելով հայրենասիրության, ատելության, թշնամության, որի արդյունքում տեղի ունեցան հայերի ջարդերը ադրբեջանական քաղաքներում՝ Բաքվում և Սումգայիթում: Ռազմական գործողություններին զուգահեռ կողմերի միջև զարգանում էին կոնֆլիկտային հաղորդակցություններ՝ ուղղակի կամ անուղղակի տեղեկատվական պատերազմների տեսքով[1]:1994թ. զինադադարից հետո կոնֆլիկտային ողջ պոտենցիալը և ռեսուրսներն ուղղված էին տեղեկատվական պատերազմի իրականացմանը, որն այսօր ավելի ինտենսիվ, բազմակողմանի, պրոֆեսիոնալ և ծրագրավորված ձևով է

[1] *Տե՛ս* ***Атанесян А.В.****, Актуальные проблемы современных политических и конфликтных комуникаций. Ереван 2008, стр. 174.*

իրականացվում:

Տեղեկատվական պատերազմի ժամանակակից ուսումնասիրություններն իրականացվում են մի շարք ուղղություններով, այդ թվում.

1. տեղեկատվական պատերազմի տեղն ու դերը ավանդական պատերազմի իրականացման համակարգում,
2. տեղեկատվական պատերազմի գործառույթները,
3. տեղեկատվական պատերազմի ռազմավարությունները[1]:

Տեղեկատվական պատերազմը հաճախ համեմատվում է հոգեբանական պատերազմի հետ, քանի որ երկուսն էլ ներազդում են մարդկանց հոգեբանական առանձնահատկությունների և ունակությունների վրա՝ մարդկանց հոգեբանորեն ընկճելու, նրանց համոզմունքները խեղաթյուրելու, խուճապի մատնելու, շահագործելու, արդյունքում՝ այդ մարդկանց նկատմամբ սեփական իշխանությունը հաստատելու նպատակով: 1988թ. սկսած Լեռնային Ղարաբաղի հիմնախնդրի շուրջ թե՛ ադրբեջանական և թե՛ հայկական կողմից իրականացվում է տարատեսակ քարոզչություն և հակաքարոզչություն: Արդյունավետ քարոզչության իրականացման անհրաժեշտությունն էլ ավելի է կարևորվում օրեցօր զարգացող տեղեկատվական տեխնոլոգիաների և տեղեկատվական հոսքերի ինտենսիվության պարագայում, երբ յուրաքանչյուր պետության և հասարակության համար լուրջ խնդիր է դառնում տեղեկատվական դաշտի անվտանգության ապահովումը:

Տեղեկատվական անվտանգությունը (ՏԱ) ծավալուն և բովանդակալից հասկացություն է, որը ներառում է ոչ միայն տեղեկատվական-տեխնիկական համակարգերի ապահովության խնդիրները, այլև այն ամենը, ինչ վերաբերում է հոգևոր-հոգեբանական, մտավոր-գիտելիքային ոլորտներին: ՏԱ համակարգում պետք է գործեն անհրաժեշտ մեխանիզմներ, որոնք կառավարման մարմիններին, ձեռնարկություններին և հանրությանը պետք է ապահովեն ճշգրիտ տեղեկատվությամբ և տեղեկատվական հոսքերի համապատասխան վերլուծությամբ: Գերադասելի է, որ պետական մարմինները ստանան տեղեկատվություն ոչ միայն իրենց անմիջական ենթակայության տակ գտնվող ծառայություններից, այլև պետական հովանու տակ գտնվող, սակայն անկախ կարգավիճակ ունեցող տեղեկատվական - վերլուծական կառույցների ցանցից[2]:

Ժամանակակից տեղեկատվական պատերազմների (ՏՊ) ուսումնասիրության և դրանց կիրառման շուրջ առկա է բազմապիսի գրականություն: Այս առումով հատկանշական է 1995թ. ԱՄՆ Պաշտպանության ազգային ինստիտուտի թողարկած Մարթին Լիբիկիի «Ի՞նչ է տեղեկատվական պատերազմը» աշխատությունը, որում հեղինակը խոսում է ՏՊ յոթ տարատեսակների մասին՝[3]

1. հրամանատարական-կառավարչական
2. հոգեբանական
3. հետախուզական
4. հակերական
5. տնտեսական

---

[1] *Տե՛ս ԼՂՀ Անցյալը, ներկան և ապագան, Միջազգային գիտաժողով, Երևան 2006թ., էջ 296:*

[2] *Տե՛ս **Հարությունյան Գ.**, ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համակարգում, Երևան, 2003թ., «Նորավանք» ԳԿՀ, էջ 25:*

[3] *Տե՛ս **Դեմոյան Հ.** «Ադրբեջանական քարոզչությունը ԼՂ հիմնախնդրի շուրջ և հայկական կողմի անելիքները», Խորհրդարանական լսումներ, 2005թ., էջ 61:*

6. էլեկտրոնային
7. կիբերպատերազմ:

Տեղեկատվական պատերազմը կարելի է բնորոշել որպես տեխնիկական և հոգևոր-գաղափարական բնույթի տեղեկատվածին սպառնալիքների գործնական իրագործում:

Մեր օրերում տարվող տեղեկատվական պատերազմները պայմանականորեն բաժանվում են 2 խմբի՝ մարտավարական և ռազմավարական ՏՊ[1]:

Ինտերնետ ցանցի առաջացումը և աննախադեպ զարգացումը լուրջ մարտահրավեր են քարոզչություն և հակաքարոզչություն իրականացնելու առումով: Այսօր համացանցը քարոզչական աշխատանքի իրականացնողներին հնարավորություն է ընձեռում ավելի հասցեագրված և նպատակաուղղված իրականացնել իրենց ծրագրերը: Տեղեկատվական պատերազմի կարևորագույն բաղադրիչը հոգեբանական պատերազմն (ՀՊ) է, որի հիմնական նպատակը հակառակորդի վրա զանգվածային հոգեբանական ներգործությունն է:

Քարոզչությունը մարդկանց որոշակի խմբի գիտակցության, զգացմունքների և տրամադրության վրա ռազմական-տնտեսական, քաղաքական նպատակներով իրականացնող ներգործությունն է՝ հաղորդակցության ցանկացած միջոցի պարբերաբար օգտագործմամբ: Այսպիսով, ցանկացած տեղեկություն, որի տարածողը հետապնդում է որևէ նպատակ, դառնում է քարոզչություն:

ԶԼՄ-ները ժամանակակից ՏՊ իրականացման ամենազորեղ միջոցներից մեկն են: Միևնույն ժամանակ ԶԼՄ-ները կարող են դառնալ հակառակորդ կողմի գործիք՝ ապատեղեկատվություն տարածելու և կեղծ հաարակական մթնոլորտ ստեղծելու առումով:

Համացանցը (ինտերնետ) հնարավորությունների և մարտահրավերների ունիվերսալ համակարգ է, որն այսօր դարձել է քարոզչական և հակաքարոզչական աշխատանքների իրականացման կարևորագույն միջոց:

Քարոզչությունը և հակաքարոզչությունը կոչված են տվյալ երկրի միջազգային հեղինակության ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային հեղինակության ամրապնդմանը, ինչպես նաև միջազգային կազմակերպություններում ոչ ձեռնտու բանաձևերի չընդունմանն ուղղված քայլերի մշակմանը: Ժամանակակից միջազգային հարաբերություններում ընդունված է աշխարհաքաղաքական տեղեկատվական մրցակցությունը համարել միջպետական պայքարի կարևոր ձևերից մեկը:

Ժամանակակից տեղեկատվական պատերազմի իրականացման ամենազորեղ միջոցներից են ԶԼՄ-ները: Ոչ ճիշտ լրատվական քաղաքականության իրականացման, տեղեկատվության արագ և օպերատիվ ապահովման բացակայության, ինչպես նաև լրատվության աղբյուրների ոչ գրագետ ընտրության դեպքում մենք գործ ունենք տեղեկատվական անվտանգությանը սպառնացող վտանգի և դրանից բխող լուրջ հետևանքների հետ:

Ամերիկյան հետազոտող Գ. Լասուելը ԶԼՄ-ի համար առանձնացնում է չորս հիմնական գործառույթներ.

1. աշխարհում տեղի ունեցող իրադարձություններին հետևելը (տեղեկատվության հավաքում և տարածում),
2. «խմբագրումը» (տեղեկատվության հավաքում և մեկնաբանում),
3. հասարակական կարծիքի ձևավորումը,

[1] *Տե՛ս Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ,Գ.Հարությունյան, 02.09.05* www.noravank.am.

4. մշակույթի տարածումը[1]:

Լրատվամիջոցներին կարևոր տեղ է հատկացվում նաև «սև քարոզչության» տարածման համար, որը հիմնականում դրսևորվում է ապատեղեկատվության տարածմամբ: Ապատեղեկատվության օգտագործումն ապակողմնորոշում է հակառակորդ կողմին, կոնկրետ իրավիճակում ապահովում է առավելություն, ինչպես նաև դրդում է կայացնել ոչ ճիշտ և թերի որոշումներ:

Ինտերնետը ունի ավելի շատ հանրաճանաչություն, քան ավանդական ԶԼՄ-ները: Բայց ինտերնետային տեղեկատվության անսահմանափակությունն ու բոլորի համար հասանելի լինելը իրավական տեղեկատվական սպառնալիք է ստեղծում անհատի և հասարակության կայունության համար: Ինտերնետում զետեղված տեղեկատ-վությունը հաճախ չի ստուգվում և վերահսկվում: Ինտերնետում զետեղված կեղծ տեղեկատվությունը պրակտիկորեն անպատժելի է, քանի որ հաճախ ինտերնետային կայքը գրանցվում է մեկ երկրում և տեղեկատվական պատերազմ իրականացնում այլ պետության քաղաքացիների նկատմամբ, որոնք ի վիճակի են վերահսկելու միայն սեփական պետության տեղեկատվական տարածությունը: Այսօր ինտերնետը հասանելի է բոլորին, այդ թվում՝ հասարակության ահաբեկող, ծայրահեղական խմբերին, որոնք փորձում են ինտերնետի միջոցով քարոզել իրենց կեղծ արժեքները[2]:

Այսօր բազմաթիվ միջէթնիկ հակամարտությունների լուսաբանումը Ինտերնետում արվում է ոչ թե նրա համար, որ անմիջական մասնակիցներն ու այլ տերությունների ներկայացուցիչները ծանոթանան կոնֆլիկտի օբյեկտիվ կողմերին, այլ հիմնականում քարոզչական նպատակներով:

Հարկ է նշել ինտերնետային չորս տիպի կայքերի մասին, որոնք նվիրված են ղարաբաղյան հակամարտությանը: Դրանք են՝

1. հայկական կայքեր,
2. ադրբեջանական կայքեր,
3. ղարաբաղյան կայքեր,
4. «երրորդ կողմի» կայքեր:

Ինչպես նաև գոյություն ունեն պաշտոնական և ոչ պաշտոնական կայքեր, որոնք վերաբերում են ղարաբաղյան հակամարտությանը: Օրինակ, պաշտոնական և ուղղակի տեղեկատվություն այդ մասին զետեղված է ԼՂՀ (www.nkr.am) կայքում, որի հեղինակներն են ԼՂՀ պաշտոնական տեղեկատվական մարմինները և պատասխանատու են կայքում տեղադրվող յուրաքանչյուր տեղեկատվության համար[3]:

Ի տարբերություն սրա՝ (www.karabakh.org) ինտերնետային կայքում տեղադրված տեղեկատվությունը ավելի հեշտ է գտնել ինտերնետում՝ լինելով չեզոք ունկնդիր և փնտրելով ինտերնետում Karabakh բառով այդ մասին ցանկացած տեղեկատվություն: Այդ կայքը պատրաստված է ադրբեջանցի մասնագետների կողմից և, չնշելով տեղադրված տեղեկատվության «ադրբեջանական» ծագումը, այստեղ խոսվում է «հայ ահաբեկիչների», «հայ ագրեսորների» և այլ կեղծ գաղափարների մասին: Այստեղ տեղադրվող նյութը մատուցվում է ինչպես անգլերենով, այնպես էլ ռուսերեն լեզուներով, որպեսզի մատչելի լինի առավել լայն շրջանակներին:

---

[1] Տե՛ս ԼՂ հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին Դեմոյան Հ., Երևան , 2005, էջ 52:

[2] Տե՛ս ԼՂՀ Անցյալը, ներկան և ապագան, միջազգային գիտաժողով, Երևան, 2006թ., էջ 297:

[3] Տե՛ս նույն տեղում:

Ղարաբաղյան հակամարտության սկզբից սեթ պաշտոնական Բաքուն հետևողականորեն փորձում է ՀՀ-ն և ԼՂՀ-ն վարկաբեկելու եղանակով ամրացնել իր դիրքերը Ղարաբաղյան հիմնախնդրի շուրջ միջազգային հանրության կարծիքի ձևավորման գործընթացում: Ներկայումս ադրբեջանական կողմը հետևողականորեն ամրագրում է հետևյալ քարոզչական ելակետերը[1]՝

1.Հայաստանը՝ որպես ագրեսիվ երկիր ներկայացնելը, որը զավթել է Ադրբեջանի տարածքների 20 տոկոսը՝ 1մլն ադրբեջանցիների դարձնելով փախստական,

2.Երկրորդ հայկական պետության հռչակման բացառում՝ հղումներ կատարելով հայերի կողմից արդեն իսկ ինքնորոշված լինելու հանգամանքին՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության,

3.հայկական ահաբեկչության ակտիվ լուսաբանում և դրա արդյունքում Ադրբեջանի՝ որպես միջազգային ահաբեկչական ցանցի հանգրվան լինելու փաստի քողարկում,

4.հիմնականում ներքին քարոզչության նպատակով Հայաստանի՝ որպես շրջափակման արդյունքում փլուզված տնտեսության և կիսաասված բնակչություն ունեցող երկրի կերպարի մատուցում,

5.հայկական բանակի հանդեպ ադրբեջանական բանակի ռազմավարական գերիշխանության թեզի ամրագրմանն ուղղված ջանքեր,

6.Հայոց ցեղասպանության պատմական իրողության հերքում,

7.հայերի կողմից ադրբեջանցիների «ցեղասպանություն» իրականացնելու մտացածին թեզի զարգացում և դրա ամրագրում պետականորեն ընդունված օրենսդրական ակտերի միջոցով:

Ադրբեջանական քարոզչության կարևորագույն բաղադրիչներից է հայ ժողովրդի պատմության կեղծման փորձերը, արհեստածին և գիտականորեն չհիմնավորված տեսակետների առաջ քաշումը:

Ադրբեջանական կողմը առաջ է քաշում հետևյալ պատմական փաստարկները[2]՝

1. Արցախը բնակեցված է եղել ադրբեջանցիներով, իսկ քանի որ ադրբեջանցիները ալբանացիների հետնորդներն են, ապա Արցախը պատմականորեն ադրբեջանական է:
2. Բոլոր քրիստոնեական հուշարձանները տարածաշրջանում ալբանական են:
3. Չկա ՀՀ, կա «Արևմտյան Ադրբեջան»:
4. 1917թ. մարտի կովկասյան թաթարների կոտորածները:
5. Հայերն ու ադրբեջանցիները համերաշխ ապրում էին, այս ամենը արվեց մի քանի գող տնօրենների և ցեխավիկների շահերը պաշտպանելու համար:
6. Ինչպե՞ս կարող են հայերը հավակնել Ղարաբաղին, եթե Հայաստանը նույնիսկ սահման չունի ԼՂԻՄ-ի հետ:
7. 1988-1990թթ. ընթացքում Հայասատանի տարածքում սպանվել են 225 ադրբեջանցիներ:

Ըստ թեմատիկ ուղղվածության հայերին ուղղված քարոզչության հիմնական թեզերը կարելի է բաժանել հետևյալ խմբերի՝

- Պատմական բնույթի փաստարկներ,
- «Պրագմատիկ» - տնտեսական փաստարկներ,
- Միջազգային - իրավական փաստարկներ:

---

[1] *Տե՛ս **Հայկ Դեմոյան** «Ադրբեջանական քարոզչությունը ԼՂ հիմնախնդրի շուրջ և հայկական կողմի անելիքները», Խորհրդարանական լսումներ, 2005թ., էջ 62-63:*

[2] *Տե՛ս **Վրթանեսյան Կ.**, հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը, www.noravank.am (29.05.2009) analitika.*

Պատմական բնույթի փաստարկներին անդրադարձել ենք վերևում:

«Պրագմատիկ» - տնտեսական փաստարկներ՝

- Հայաստանը մեկուսացված է տարածաշրջանային նախագծերից, մեկուսացումը գնալով ուժեղանում է:
- Տնտեսական կապերի զարգացումը կնպաստի հակամարտության լուծմանը:
- Արցախյան հիմնախնդրի լուծված չլինելը խոչընդոտում է ՀՀ տնտեսական զարգացմանը:
- Անհնարին է անվերջ մնալ այսպիսի իրավիճակում, հակամարտությունը պետք է կարգավորվի հնարավորին չափ արագ:
- «Պրագմատիկ» թեզ.պետք է պահել այն տարածքները, որոնք կարող են զարգացվել, իսկ մնացածը պետք է հանձնել ադրբեջանական հանրապետությանը:

Ադրբեջանական կողմի միջազգային-իրավական փաստարկները հետևյալն են՝

- «Տարածքային ամբողջականությունը» որպես բարձրագույն արժեք,
- Հայաստանը գրավել է Ադրբեջանի տարածքի 20%-ը,
- Հայկական բանակը կանգնած է Արցախում, նշանակում է ՀՀ-ն «օկուպացրել» է Արցախը,
- Ադրբեջանում 1 մլն փախստականներ և տեղահանվածներ կան,
- ՄԱԿ-ի և այլ կազմակերպությունների բանաձևերը Արցախի մասին,
- Ոչ մի երկիր, այդ թվում նաև Հայաստանը, չի ճանաչել ԼՂՀ անկախությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Атанесян А.В., Актуальные проблемы современных политических и конфликтных комуникаций. Ереван 2008, стр. 174.
2. ԼՂՀ անցյալը, ներկան և ապագան Միջազգային գիտաժողով, Երևան, 2006թ., էջ 296:
3. Հարությունյան Գ., ՀՀ տեղեկատվական համակարգի զարգացման հիմնախնդիրները ազգային անվտանգության համակարգում, Երևան, 2003թ., «Նորավանք» ԳԿՀ, էջ 25:
4. Դեմոյան Հ. «Ադրբեջանական քարոզչությունը ԼՂ հիմնախնդրի շուրջ և հայկական կողմի անելիքները» Խորհրդարանական լսումներ, 2005թ., էջ 61:
5. Տեղեկատվական անվտանգության որոշ խնդիրների շուրջ,Գ.Հարութունյան, 02.09.05 www.noravank.am.
6. ԼՂ հիմնախնդրի շուրջ քարոզչության և հակաքարոզչության կազմակերպման և իրականացման եղանակների մասին, Հայկ Դեմոյան, Երևան, 2005, էջ 52:
7. Վրթանեսյան Կ., Հայ-ադրբեջանական հակամարտության քարոզչական թեզերը, www.noravank.am (29.05.2009) analitika.

ՀՏԴ 941(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Հարութ Դավթյան
ԳՊՀ

ՏԵՂ ԳՅՈՒՂԻ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻՆ

Բանալի բառեր՝ *Արցախյան պատերազմ, Թուրուսի Խութ, Դեյխան, Ղոչազ, Կուբաթլու, Կրկժան, Զանգելան, Տեղ գյուղ, մասնակիցներ, կամավորական:*

Ի թիվս Արցախի և Հայաստանի Հանրապետությունների բոլոր բնակավայրերի՝ Տեղ գյուղը ևս իր մեծ ավանդն ու մասնակցությունն ունի Արցախյան պատերազմին: Արցախյան պատերազմի վճռական գործողություններից մեկը Թուրսուսի Խութի գրավումն էր Մելիքսեթ Պողոսյանի հրամանատարությամբ, քանի որ այդ բարձունքից էր հրետակոծվում Գորիսն իր բոլոր բնակավայրերով: Տեղ գյուղի ազատամարտիկներն իրենց զինվորականի աննկուն ոգին ցույց տվեցին նաև Քառօրյա պատերազմում:

Арут Давтян

УЧАСТИЕ СЕЛА ТЕХ В АРЦАХСКОЙ ВОЙНЕ

Ключевые слова*: Арцахская война, Турецкий хут, Дейхан, Гочаз, Кубатлу, Кркджан, Зангелан, село Тег, участники, волонтеры.*

Среди всех населённых пунктов Арцаха и Республики Армения , село Тех также внес свой большой вклад и участие в Арцахской войне. Одним из решающих действий Арцахской войны стало освобождение Турус-Хута под командованием Меликсета Погосяна, поскольку из высот Турус-Хута обстреливали Горис и его население. Ветераны войны села Тех продемонстрировали свой непоколебимый военный дух также в Четырёхдневной войне .

Արցախյան հաղթական պատերազմը մեր պատմության ամենափայլուն էջերից մեկն է, երբ հայ ժողովուրդն ապացուցեց, որ համախմբվածության, միաբանության շնորհիվ կարող է վերադարձնել հայրենյաց հողերը: Արցախյան գոյամարտին, ի թիվս մնացած գյուղերի, իր ակտիվ մասնակցությունն է ունեցել նաև ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղը: Ազերիների հարձակումներից ավելի շատ տուժում էին Արավուս, Խանածախ, Տեղ գյուղերը, քանի որ ամենամոտն էին գտնվում թշնամուն: Իսկ թշնամին նպատակ ուներ գրավելու նաև Գորիսն ու ողջ Սյունիքը: Դեռ մինչ պատերազմը սկսելը Տեղ գյուղը շատ էր տուժել ազերիներից: Այսպես, գյուղացիները լուր էին ստացել, որ ազերիները դաժանորեն ծեծել են Տեղ գյուղում հարգված վարորդ Վալոդին, մեքենան յուրացրել, իսկ վարորդին քարշ տվել, բերել սահմանի վրա գցել, ասելով՝ եկեք ձեր մեռելը տարեք [2, էջ 4]: Այնուհետև գյուղացիները ստանում են հաջորդ լուրը. թշնամին «Սև քերծ» կոչված տեղանքում հարձակվել է Սամսոն Բաբայանի վրա և փորձել տանել ոչխարի հոտը….

Բնականաբար, ամեն օր ստանալով նման լուրեր՝ տեղցիները առաջիններից պետք է կռվի ելնեին և պաշտպանեին գյուղը:

Դեռևս 998 թ. Շահանդուխտ թագուհու կողմից հիմնադրված Տեղ գյուղը [3, էջ 251] իր քաջորդիներով մեկ մարդու նման մասնակցել է Արցախյան պատերազմին: Այդ պատերազմում Տեղի գյուղացիների ամենանշանավոր գործողություններից մեկը, թերևս Թուրուսի Խութի գրավումն էր 1992 թ. մայիսի 16-ին: Թուրուսի Խութը Բերձորի տարածքի ռազմաստրատեգիական բարձունք է, որտեղից ազերիները հրետակոծում էին Գորիս քաղաքը և նրա շրջակա բնակավայրերը: Թուրուսի Խութից գրեթե ամեն օր հրետակոծություն էր լինում, հրդեհվում, փլվում էին տներ, զոհվում խաղաղ բնակիչներ: Տարածաշրջանի համար այդ բարձունքը դարձել էր մի իսկական չարիք, մանավանդ օր օրի

թեժացող պատերազմի պայմաններում: Հենց այդ պատճառով էլ 1992թ մայիսի 12-ին Տեղ գյուղում գտնվող Մելիք –Բարխուդարի տանը ժողով է տեղի ունենում, որտեղ որոշվում է գրավել *Թուրուսի խութ*, կոչվող ռազմավարական հենակետը: Ի դեպ, նշենք, որ Մելիք Բարխուդարը Դավիթ Բեկի զինակիցն էր: Ժողովում կազմվում է գրավմանը մասնակցող անձանց ցուցակը, իսկ գործողությունը գլխավորելու էր Մելիքսեթ Պողոսյանը: Մինչև Թուրուսի Խութի գրավումը գրավելը ջոկատի հրամանատար Մելիքսեթ Պողոսյանը, Սևադա Շեգունցը և Արմեն Ավագյանը 1992 թվականի մայիսի 13-ին եղել են *Թուրուսի խութ* կոչվող բարձրունքի մոտ՝ թշնամու քթի տակ, հետախուզության էին գնացել, նրանք ուսումնասիրել թշնամու զինական ուժը և եկել այն համոզման, որ թուրքը այնտեղ ամուր է նստած, և մեր ուժերով գրավել այն համարյա անհնար էր: 1992 թ. մայիսի 16-ին՝ գիշերվա ժամը 4-ին, նախօրոք մշակված ծրագրով 34 հոգուց բաղկացած Տեղ գյուղի կամավորական ջոկատը անցավ հարձակման: Թշնամին չէր սպասում գիշերային հարձակմանը, բայց հենց գիշերային հարձակումը վճռեց ճակատամարտի ելքն ի հօգուտ տեղցիների: Մինչև վաղ լուսաբաց կամավորական ջոկատը հաղթանակ տարավ՝ չտալով ոչ մի մարդկային կորուստ, ունենալով 4 վիրավոր, մինչդեռ թշնամու զոհերը շատ էին, իսկ ամբողջ զինանոցն առգրավված: Ի դեպ նշենք, որ փախչող ազերիների համար միջանցք էր բացվել: Բայց հենց փախչող ազերիների վրա կրակ են բացում ազերիները: Մելիքսեթ Պողոսյանի հրամանով գերի ընկածներին տեղափոխում են Գորիս՝ հետագայում գերիների փոխանակության համար: Մայիսի 16-ի առավոտյան կայծակի արագությամբ Թուրուսի Խութի գրավման լուրը տարածվում է: Ժողովուրդը հպարտանում էր, քանի որ բարձունքը գրավել էին ոչ թե բանակն ու զորքը, այլ երեք տասնյակ գյուղացիներ, որոնցից կռվում աչքի են ընկել Սասուն Բաղասյանը, Սամվել Շիրինյանը, Մարտին Իսունցը, Սաքո Բաղասյանը, Սասուն Բեգլարյանը, Արայիկ Մովսիսյանը, Ալեքսան Ալեքսանյանը և ուրիշներ, որոնք հետագայում ևս շարունակեցին իրենց ներդրումն ունենալ Արցախյան պատերազմում: Որպես այդ փառապանծ գյուղի ներկայացուցիչ և բնակիչ՝ գյուղում հաճախ եմ հանդիպում Արցախյան պատերազմի մասնակիցներին, լսում նրանց հետաքրքիր պատմությունները պատերազմական տարբեր գործողությունների մասին: Այժմ անդրադառնանք Արցախյան պատերազմի մասնակից մի քանի նշանավոր Տեղ գյուղացիների՝ հայցելով բոլոր նրանց ներողամտությունը, ում այս հոդվածի շրջանակներում անդրադարձ չենք կատարել:

Մելիքսեթ Պողոսյան կամ ինչպես անվանում են «Սյունյաց Մելոն»[1]:

Մելիքսեթ Պողոսյանը ծնվել է 1960 թվականին Տեղ գյուղում: Միջնակարգ կրթությունը ստացել է Տեղ գյուղի միջնակարգ դպրոցում՝ 1967-1977 թվականներին: Այնուհետև զորակոչվել է խորհրդային բանակ: Ծառայությունը անց է կացրել Հունգարիայում, եղել է տանկիստ: Արցախյան շարժման առաջին օրերից որպես կամավորական, մասնակցել է գյուղի պաշտպանությանը: Միավորել է Տեղ գյուղի կամավորական ջոկատները, ստեղծել «Մելիք-Բարխուդար» ինքնապաշտպանական ջոկատը և կամավորների կողմից ընտրվել ջոկատի հրամանատար: «Մելիք-Բարխուդար» կամավորական ջոկատը 1989-1990 թվականներին մասնակցել է Տեղ, Խնձորեսկ, Խոզնավար, Կոռնիձոր, Խնածախ գյուղերի

պաշտպանությանը:

Մելիքսեթ Պողոսյանը իր ջոկատով մասնակցել է Դեյխանի, Ղոչազի, Կուբաթլիի, Ջեբրայիլի, Զանգելանի, Ֆիզուլիի գրավմանը, որտեղ էլ վիրավորվել է: 2007թ. նշանակվել է Գորիսի զինկոմ, 2017թ. ՊՆ հրամանով զորացրվել: Այժմ Մելիքսեթ Պողոսյանը Սյունիքի ԵԿՄ վարչության ղեկավարն է: Ամուսնացած է, ունի երկու զավակ: 2016 թ. Քառօրյա պատերազմին Մելիքսեթ Պողոսյանը կամավորական ջոկատի գլուխ անցած նորից մասնակցել է պատերազմին՝ ապացուցելով, որ ժամանակը, պաշտոնը և տարիքը չեն կարող փոխել հայրենասեր զինվորականին: Փաստորեն, Մելիքսեթ Պողոսյանը հավատարիմ մնաց դեռևս 2002 թ. իր ասած հետյալ մտքին.«Ես ինձ համարել ու համարում եմ նրա շարքային զինվորը և համոզված եմ, որ եթե նորից ոտնձգության փորձ անի թշնամին՝ դարձյալ կջախջախվի մեր բանակի ուժի և հերոսական ոգու առաջ»[1, էջ 31]: Մելիքսեթ Պողոսյանը պարգևատրվել է մի շարք մեդալներով և պատվոգրերով, այդ թվում՝ Արիության համար մեդալով, 1-ին աստիճանի Մարտական խաչ շքանշանով, «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 2-րդ աստիճանի մեդալով, Գարեգին Նժդեհ մեդալով և այլն:

Արցախյան պատերազմի նշանավոր մասնակիցներից է **Վարդան Մարտունի Ավետիսյանը**: Ծնվել է 1967թ. ապրիլի 24-ին, ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղում՝ մտավորականի ընտանիքում: Վարդանը, ավարտելով Տեղի միջնակարգ դպրոցը, բարձրագույն կրթություն ստանալու նպատակով մեկնել է Արցախ և ընդունվել Ստեփանակերտի մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: Վարդանը դեռ ուսանող էր, երբ 1988թ. փետրվարին հուժկու ալիքի պես պայթեց Արցախի ազգային ազատագրական պայքարը ընդդեմ Ադրբեջանի բռնակալության: Սկզբնական շրջանում, երբ անհրաժեշտ էր ժողովրդին նախապատրաստել ապագա հանրահավաքներին և ցույցերին, Վարդանը ընդգրկված էր թռուցիկ խմբում: Ընդհարումներն աստիճանաբար լայնածավալ պատերազմի բնույթ են կրում. տեղական ջոկատները սկսեցին մարտնչել ադրբեջանական բանակի դեմ: Առաջիններից մեկն էլ Վարդան Ավետիսյանն էր, որ զենք վերցրեց դարավոր թշնամու դեմ: Շարքային զինվորից սկսելով, զբաղեցնելով հետագայում միջին հրամանատարական պաշտոններ՝ նա մարտնչել է ամենավտանգավոր կետերում: Մասնակցել է Կրկժանի, Զանգելանի, Շուշիի, Աղդամի, Ֆիզուլիի և այլ շրջանների ազատագրական մարտերին: Մարտերի ժամանակ երկու անգամ վիրավորվել է և հոսպիտալում բուժման ընթացքում գտել իր երկրորդ կեսին՝ապագա կնոջը, որը նրա բուժող բուժքույրն էր: Պատերազմի հաղթական ավարտից հետո նա հերթափոխությամբ ստանձնել է Հադրութի, Մարտակերտի, Խոջալուի գնդերի հրամանատարությունը:

2009 թվականի հունվարի 31-ին ՀՀ Նախագահի հրամանագրով նշանակվել է Հայաստանի Հանրապետության զինված ուժերի անձնակազմի հետ տարվող աշխատանքների վարչության պետ: 2016 թվականին նշանակվել է ՀՀ պաշտպանության նախարարի խորհրդական[4]: Վարդան Ավետիսյանը նաև հայտնի գրող է: Հեղինակ է գիտական, հրապարակախոսական հոդվածների, պատմվածքների և

բանաստեղծությունների ժողովածուների: Արցախի գրողների միության անդամ է:

Վարդան Ավետիսյանը պարգևատրվել է ԼՂՀ «Մարտական խաչ» 1-ին և 2-րդ աստիճանի շքանշաններով, «Մայրական երախտագիտություն Արցախի քաջորդիներին», ՀՀ «Մարշալ Բաղրամյան-100» հուշամեդալներով, «Անդրանիկ Օզանյան» մեդալով: 2012 թ. պարգևատրվել է «Վարդան Մամիկոնյան» շքանշանով: 2015 թ. սեպտեմբերի 5-ին ՀՀ Նախագահի հրամանագրով պարգևատրվել է «Հայրենիքին մատուցած ծառայությունների համար» 1-ին աստիճանի մեդալով [5]:

Արցախյան պատերազմում իր անուրանալի ներդրումն ունի նաև գնդապետ Վահան Վարդանյանը: Գնդապետ Վահան Վարդանյանը ծնվել է Սյունիքի մարզի Տեղ գյուղում: Ավարտել է Գորիսի գյուղատնտեսական տեխնիկումը, ծառայել խորհրդային բանակում: Զորացրվելուց հետո ընդունվել է Երևանի պոլիտեխնիկական ինստիտուտը, սակայն սկսված Արցախյան շարժման պատճառով ուսումն ինստիտուտում մնացել է թերի: Հարազատ գյուղի հանրահայտ «Մելիք Բարխուդար» կամավորական ջոկատի կազմում Վ. Վարդանյանն ակտիվորեն մասնակցել է հանրապետության հարավարևելյան սահմանների պաշտպանությանը, Արցախի ազատագրմանը, Լաչին, Ֆիզուլի, Հորադիզ ուղղություններով հակառակորդի կրակակետերի չեզոքացմանը: Այնուհետև ծառայությունը շարունակել է ազգային բանակում, եղել է գումարտակի հրամանատար, զորամասի հրամանատարի տեղակալ: Սովորել է ՌԴ հրազորային ակադեմիայի հրամանատարական ֆակուլտետում: Վերադառնալով՝ նշանակվել է զորամասի հրամանատար: Հայրենիքին մատուցած ծառայությունների համար պարգևատրվել է «Մարտական ծառայություն», «Արիություն», «Գարեգին Նժդեհ», «Զորավար Անդրանիկ», և Արցախի «Մայրական երախտագիտություն» մեդալներով: Ամուսնացած է, ունի երկու աղջիկ և մեկ տղա:

Արցախյան պատերազմին Տեղ գյուղից մասնակիցների թիվը շատ է, հատկապես շատ են այն մասնակիցները, ովքեր պատերազմի ժամանակ կռվելով ամենաթեժ կետերում, խաղաղ ժամանակ սկսեցին զբաղվել ամենօրյա գյուղատնտեսական աշխատանքներով: Նրանց թվում կան մարդիկ, որոնց համար նույնիսկ օրվա հացը վաստակելը ստացվում է մեծ դժվարությամբ, բայց նրանք ոչնչից դժգոհ չեն, երբեք չեն բողոքում, քանի որ կռվել են հանուն հայրենիքի, ոչ թե հանուն իշխանության: Նրանք նաև 2016 թ. Քառօրյա պատերազմում առաջնագիծ մեկնածների խումբն էին գլխավորում:

Արթուր Նիկոլայի Բալաչյանը ծնվել է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղում, 1970թ. հունիսի 15-ին, աշխատավոր գյուղացու ընտանիքում: Նախնական կրթությունը ստացել է Տեղի Արամայիս Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցում: Ուսումնառության տարիներին աչքի է ընկել գերազանց վարքով և պատշաճ առաջադիմությամբ: 1987թ. զորակոչվել է խորհրդային բանակ: 1990-ական թվականներին մասնակցել է հայ-ադերբեջանական պատերազմական գործողություններին: 1990թ. ընդգրկվել է «Մելիք-Բարխուդար» ինքնապաշտ—պանական ջոկատի կազմում:1990-1992թթ. մասնակցել է Տեղ, Խնձորեսկ,Կոռնիձոր գյուղերի

պաշտպանական կռիվներին:1993-1994թթ. մասնակցել է Հորադիզի ազատագրման ու պաշտպանության մարտերին: 1994թ. մարտի 22-ին Հորադիզում վիրավորվել է, ստացել գլխուղեղի ցնցում: 2000-2004թթ. ծառայել է Վազգեն Սարգսյանի անվան զորամասում՝ որպես զրահատանկային գումարտակի ավագ: Ներկայումս ապրում է Տեղ գյուղում, զբաղվում է գյուղատնտեսական աշխատանքներով: Ծառայության ընթացքում Արթուր Բալաչյանը իրեն դրսևորել է, որպես բանիմաց, ամուր կամքի տեր զինծառայողի, որի համար էլ արժանացել է խրախուսանքների:

Մարտին Կոլյայի Իսունց, ծնվել է ՀՀ Սյունիքի մարզի Տեղ գյուղում:1978թ. հաճախել է Տեղի Ար. Սարգսյանի անվան միջնակարգ դպրոցը և ավարտել 1988թ.: 1989թ. զորակոչվել է խորհրդային բանակ, զորացրվել 1991թ.: 1991թ. մինչև 1993թ մասնակցել է Արցախի ազատագրման համար մղվող մարտերին, որի ժամանակ վիրավորվել և զրկվել է ձախ ոտքի սրունքից: ՀՀ նախագահի կողմից պարգևատրվել է Մարտական ծառայության մեդալով, ՀՀ պաշտպանության նախարարի կողմից՝ մի քանի մեդալներով և շքանշաններով: Նա մասնակցել է Արցախյան պատերազմին «Մելիք-Բարխուդար» ջոկատի կազմում, որպես ազատամարտիկ: Մարտին Իսունցը ակտիվ մասնակցություն է ունեցել ՀՀ հարավ-արևելյան սահմանների՝Խնածախ, Արավուս, Խնձորեսկ, Կոռնիձոր գյուղերի պաշտպանությանը և մարտական գործողություններին: Նա ջոկատի կազմում մասնակցել է Տեղ գյուղի և Լաչինի սահմանագծում Թուրուսի խութ կոչվող, հակառակորդի համար մարտավարական նշանակություն ունեցող կրակակետի ոչնչացմանը:

Վլադիկ Գրիգորի Թոխունց, ծնվել է 1950թ. Տեղ գյուղում: 1957-ից մինչև 1968թ. սովորել է Տեղի միջնակարգ դպրոցում: 1969թ. նոյեմբերին զորակոչվել է խորհրդային բանակ: Հայրենիքի սահմանների պաշտպանությունը նրա համար վեհ, անձնական խնդիր էր: 1989թ-ից Վլադիկը իր ջոկատով Խանածախի, Կոռնիձորի, Տեղ գյուղերի ինքնապաշտպանական մարտական դիրքերում էր: Բավականին հմուտ ռազմական ընդունակությունների տեր էր Վլադիկ Թոխունցը: Մեծ էր Վլադիկ Թոխունցի ավանդը Արցախյան գոյամարտին: Պատմում է Վլադիկ Թոխունցը. «1992թ մայիսի 13-ից - 15ը կամավորներով՝ իմ գլխավորությամբ մեր փոքրիկ ջոկատով գտնվում էինք Հազարի գետի կողքին՝դեպի Լաչին տանող ճանապարհի շրջակայքում: Երեք օր առանց ուտելիքի և բավարար զինամթերքով ամրացել էինք այդտեղ, որպեզի թուրքերը դեպի Լաչին օգնություն չուղարկեն: Արդեն երրորդ օրը թուրքերը մեծաթիվ ուժեր ուղարկեցին մեր ուղղությամբ, մեր ջոկատի

փամփուշտները գրեթե վերջացել էին, և ես կապ տվի մեզնից ոչ հեռու գտնվող մեծ Սոսին և ասացի. «Մեծ եղբայր, սեմիչկա չունեմ չրթելու», իսկ նա պատասխանեց՝ «Մերն էլ ա վերջացել, բարձրացեք»…..: Այնուհետև մի փոքր խորամանկության դիմեցինք և այնպես դուրս եկանք մեր խրամատներից, որ թուրքերն առանց գիտակցելու ընկան մեր պատրաստած ծուղակը: Թուրքերի 2 ուղղաթիռները գալիս էին այդ ուղղությամբ մենք այնպես կրակ բացեցինք, որ նրանց թվաց, որ այդ դիրքերում դեռևս մենք ենք, և կրակ բացեցին իրենց իսկ զորքերի վրա, իսկ նրանց հետևակը խփեց իրենց իսկ ուղղաթիռները: Այդպիսով մենք կարողացանք դուրս գալ այդ իրավիճակից»:

Սամվել Շիրինյանը ծնվել է 1967թ. հունվարի 21- ին, Տեղ գյուղում: Նախնական կրթությունը ստացել է Տեղ գյուղի դպրոցում: 1985թ. զորակոչվել է խորհրդային բանակ, ծառայել է Ուկրանիայում: Արցախյան շարժմանը ակտիվ մասնակցություն է ունեցել հենց առաջին օրվանից: Մասնակցել է 1992թ-ի փետրվարի Խոջալուի, Շուշիի, մայիսի 18-ի Լաչինի ազատագրմանը: Սամվել Շիրինյանը պատմում է «1991թ.-ից կամաց-կամաց պատերազմական վիճակը լարվում է, դրա հետ մեկտեղ խորհրդային զորքերը կանգնած էին հայերի և թուրքերի միջև, որպեսզի պատերազմը չխորանա, բայց ռուսները ավելի շատ թուրքերի կողմից էին»: Շիրինյանը նշում է, «1991թ.-ին՝ Խորհրդային միության փլուզումից հետո, ռուսներն իրենց զորքերը հանեցին պատերազմի կիզակետից՝ թողնելով հայերին և թուրքերին մենակ: Միամուռ ջանքերով մայիսի 8-ին Շուշին ազատագրեցինք: 1993թ-ը հայերի համար հաջողության տարի էր, մեկը մեկի հետևից գրավում էին կորցրած տարածքները»: Սամվել Շիրինյանն, ով ակտիվորեն մասնակցել է Թուրսուսի Խութի գրավմանը, նույն համառությամբ ու ոգևորությամբ մասնակցեց նաև Քառօրյա պատերազմին:

Արցախյան պատերազմին մասնակցած Տեղի գյուղացիների շարքը կարելի է դեռ երկար շարունակել, քանի որ գրեթե բոլորը մասնակցել են պատերազմին, չեն լքել հարազատ գյուղը; Նրանց հուշերը հենց մասնակիցներից գրի առնելը շատ կարևոր գործընթաց է, որովհետև նրանք Արցախյան պատերազմի տարեգիրներն են: Ես հպարտ եմ, որ անձնապես ճանաչում եմ Արցախյան պատերազմին մասնակցած Տեղի գյուղացիներին, լսել եմ նրանց պատմությունները, զրուցել նրանց հետ: Նրանք կենդանի լեգենդներ են:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Բաբաջանյան Ս., Սյունյաց Մելոն, Երևան, 2002:
2. Ծատուրյան Ա., Թուրուսի Խութի գրավումը, Երևան, 1999, էջ 4:
3. Օրբելյան Ս., Սյունիքի պատմություն, թարգմանությունը, ներածությունը և ծանոթագրությունները Ա. Ա. Աբրահամյանի, Երևան, 1986թ., էջ 251:
4. http://yerkirmedia.am/social/vardan-avetisyan-pn-khorhrdakan/
5. https://www.president.am/hy/decrees/item/2024

ՀՏԴ 94 Պատմություն և քաղաքագիտություն

Աննա Դեմիրխանյան
Վանաձորի պետական համալսարան, պատմաաշխարհագրական ֆակուլտետ,
պատմության բաժին, մագիստրոս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ պրոֆեսոր Ֆելիքս Մովսիսյան
«Էլ.փոստ»՝ anna.demirxanyan

ՕՆՈՐԵ ՄԻՐԱԲՈ. ՄԵԾ ՀԵՂԱՓՈԽԱԿԱՆՆ ՈՒ ՄԱՍՈՆԸ

Բանալի բառեր. *Հեղափոխություն, մասոն, բացարձակապետություն, օթյակ, Միրաբո:*

Օնորե Միրաբոն պատմությանը հայտնի է ոչ միայն որպես նշանավոր հեղափոխական գործիչ այլ նաև որպես մասոն: Միրաբոյի մեծությունը հեղափոխական գործընթացում կայանում է նրանում,որ նա առաջինն էր այն մարդկանցից, ով գիտակցեց երկրում տիրող անարդարություններն ու սկսեց բարձրաձայնել այն: Միրաբոյի առաջադրած հիմնական խնդիրը բացարձակապետության դեմ մղվող պայքարում ժողովրդի բոլոր ուժերի և դասակարգերի համախմբումն էր, որն իրականացվում էր մասոնական օթյակների հետ համագործակցության արդյունքում:

Анна Демирханян

ОНОРЕ МИРАБО - ВЕЛИКИЙ РЕВОЛЮЦИОНЕР И МАСОН

Ключевые слова: *революция, масон, абсолютизм, ложа, Мирабо.*

Оноре Мирабо в истории известен не только как выдающийся революционер, но и как масон. Величие Мирабо в революционном процессе заключается в том, что он первым осознал несправедливость в стране и придал ее оглоске. Основным вопросом в боре против абсолютизма для Мирабо была консолидация всех сил и классовых сословий, которая осуществлялась в результате сотрудничества с масонскими ложами.

Օնորե Միրաբոն ծնվել է 1749 թվականի մարտի 9-ին, Գատինում՝ Ֆրանսիայի հարավում՝ Բինյոն դղյակում, որը նրա հորն էր անցել որպես նրա կնոջ՝ Մարիա Ժենեվևայի օժիտի մի մասը :

Իր հոր տանը Օնորե Միրաբոն մանկության, իսկ այնուհետև պատանեկության տարիներին մեծանում էր մտավոր զարգացման համար բացառապես նպաստավոր պայմաններում: Հոր գրադարանը Ֆրանսիայում լավագույն գրադարաններից մեկն էր, և փոքրիկ Օնորեն, ով վաղ հասակից տարվել էր ընթերցանությամբ, օրուգիշեր անց էր կացնում գրքի առաջ: Կասկածի ենթակա չէ, որ նրա ապշեցնող հանրագիտական կրթվածությունը ապշեցնելով , սկսել էր ձևավորվել դեռևս հոր տանը:

Ինչպես ժամանակի կրթված երիտասարդների մեծամասնությունը,այնպես էլ կրտսեր Միրաբոն նույնպես Լուսավորության և ամենից առաջ ժան-ժակ Ռուսսոյի սոցիալ-քաղաքական հայացքների համոզված կողմնակիցն էր:1760-ական թթ. Ռուսսոյի ամենամեծ փառքի ժամանակներն էին, և ամբողջ Ֆրանսիան տարված էր նրա <<Նոր Էլոիզ>> աշխատությունը կարդալով. պատանի Միրաբոն նրա ամենախանդավառ երկրպագուներից էր: Լինել Ռուսսոյի հետևորդը՝ նշանակում էր լինել բռնապետության թշնամին, ճնշել նրա դրսևորման ցանկացած ձգտում, լինել Ժողովրդի պաշտպանն ու

բարեկամը, մարտնչել հանուն արդարացի գործի,մոտ լինել բնությանը:

1774 թվականին Մանոսկում գտնվելու ժամանակ Միրաբոն, իր ձեռքը վերցնելով փետուրե մեծ գրիչները, սկսում է հապճեպորեն գրել:

Վերնագրելով այն <<Փորձ բռնակալության մասին>>՝ նա սուր քննադատության էր ենթարկում այն Ժամանակվա Ֆրանսիայի քաղաքացիական կյանքը: <<Փորձ բռնակալության մասին>> երկում Միրաբոն գրում էր. <<Պարտքը,շահը և պատիվը թելադրում են դիմադրել միապետի բարձր կարգադրություններին և խլել նրանից իշխանությունը,եթե նրա չարաշահումները կարող են ոչնչացնել ազատությունը և եթե այլ միջոցներ չէին մնում այն փրկելու համար>>: Միրաբոյի տարբեր խոսքերով արտահայտված հիմնադրույթները կայանում են այն բանում,որ եթե միապետի բռնակալությունը ոտնահարվում է,ապա ժողովուրդը ոչ միայն իրավունք ունի, այլև պարտավոր է դիմադրություն ցույց տալ, ընդհուպ մինչև միապետության տապալումը, եթե դա անհրաժեշտ լինի:

1778 թ-ից Միրաբոն իր գրական գործունեությունը շարունակում է Վենսենյան ամրոցում: Վենսենի զնդանում Միրաբոն ավելի շատ է գրել,քան երբևէ: Այստեղ է ստեղծվել նրա ամենահասուն և ուժեղ քաղաքական աշխատությունը ՝ «Գաղտնի հրամանների և պետական բանտերի մասին»: Այն գրված է պարզ, ստույգ,երբեմն արձանագրային չոր, բայց առավել ևս տպավորիչ լեզվով: Երկը վերաստեղծում է անձի նկատմամբ այն հրեշավոր կամայականության, անօրինականության, ապօրինության, բռնության պատկերը, որոնք կազմում են պետական իշխանության վարչակարգի գործելակերպի հիմքը: Սառնասիրտ ձևակերպված հավաստումների այս զուսպ հակիրճ թվարկումներից հետո հեղինակը կատարում է համառոտ,բայց խռովարար ոգով լեցուն եզրակացություններ: Դրանից ամենակարևորը երկուսն էին: Առաջինը ձևակերպված էր այսպես. «Ես միշտ ենթադրում եմ և պետք է այսուհետ ևս այդպես ենթադրեմ,որ անտարբերությունը անարդարության հանդեպ դավաճանություն ու ստորություն է»: Երկրորդ ընդհանրացող եզրակացությունն ավելի հեռուն էր գնում և արդեն ուներ պարզորոշ հեղափոխական բնույթ. «Իր շղթաները փշրելու համար մարդուն թույլատրելի են առանց բացառության բոլոր միջոցները…» : Միրաբոյի խռովությունը արտոնյալ դասի դեմ, որին նա պատկանում էր իր ծագմամբ, սկիզբ էր առել ամենից առաջ հայրական բռնակալության դեմ նրա ընդվզումներից:

1783 թվականից սկսած Միրաբոն ամբողջ Ֆրանսիայում դարձավ նշանավոր դեմք: Նրա հռետորական արվեստի մասին, որն ի հայտ եկավ դատական այդ մենամարտերի ժամանակ, կիսաերևակայական պատմություններ էին պատմում: Միրաբոյի շուրջ համախմբվում էին երիտասարդներ, որոնք մեծ մասամբ առաջավոր հայացքների տեր էին: Նրանցից էին Բրիսսոն՝ ժիրոնդիստների ապագա պարագլուխը, Կլավիերը՝ Ժնևի դեմոկրատների առաջնորդներից մեկը, ով հետագայում ժիրոնդիստական շարժման մեջ նույնպես նշանակաի դեր խաղաց, Նիկոլա Շամֆորը՝ նախահեղափոխական դարաշրջանի ականավոր գործիչներից մեկը, որը գրականության մեջ ձեռք էր բերել ճանաչում և պատվավոր դիրք:

1783 թվականին Ֆրանսիան ԱՄՆ-ի հետ մեկտեղ ստորագրեց Վերսալյան պայմանագիրը, որը վերջ դրեց Անգլիայի դեմ պատերազմին: Դա հույս ծնեց, որ թանկ նստող պատերազմի ավարտմամբ թագավորության ֆինանսական դրությունը կբարելավվի, սակայն իրար հետևից երկու անբերրի տարիները՝ 1787-1788թթ. և 1788-1789 թթ, դաժան ձմեռները, որի հետևանքով սառցակալվեցին Սենան և Ֆրանսիայի հյուսիսի մյուս գետերը, վատացրին գյուղացիության, չքավորության և քաղաքների խղճուկ ամբոխի

դրությունը: Ժողովուրդը չէր կարող և չէր ուզում հաշտվել զրկանքների և տառապանքների հետ: Փորձելով հաղթահարել վարչակարգի արագորեն խորացող ճգնաժամը՝ թագավորական իշխանությունը հայտարարեց Գլխավոր շտատների ընտրություններ անցկացնելու մասին:

Թագավորը հույս ուներ, որ Գլխավոր շտատները նրան հնարավորություն կտան հետաձգել կամ լիովին խուսափել հեղափոխական ճգնաժամի սաստկացումից և կապահովեն ֆինանսական սնանկացումը հաղթահարելու և թագավորական դատարկ գանձարանը լրացնելու ուղիները:

Միրաբոն առանց տատանվելու վճռեց, որ պետք է առաջադրվի որպես թեկնածու Պրովանսից:

XVIII դարում ընդունված էր ճառերը կարդալ նախապես գրված տեքստով: Այդպես էր ժամանակին վարվում նաև Միրաբոն:

1788-1789 թթ. Պրովանսում ունեցած բազմաթիվ ելույթների ժամանակ նա ապացուցեց, որ իր մոտ առավել հաջող են ստացվում հանպատրաստից ճառերը: Նրա ճառերը անսպասելիորեն ստանում էին այնպիսի վառ գույներ, ունկնդիրների գիտակցության մեջ մխրճվող արտահայտություններ, որը անհնարին կլիներ խնամքով կշռադատված, նախապես գրված ճառերում: Անբացատրելի էր թվում թե ինչպես էր նա կարողանում կառավարել ձայների այդ հալված հեղեղի նման սրընթաց տարածվող հնչյունները, որոնք նա արտաբերում էր ամբիոնից: Միրաբոն ուներ լսարանի, նրա նվիրական մտքերի, ցանկությունների, չգիտակցված ըմբռնողության ապշեցուցիչ զգացողություն: [1]

Միրաբոն իհարկե ավելի լավ գիտեր իրենց փիլիսոփայական անաչառությամբ կամ էլ կարմիր կրունկներով նրբագեղ կոշիկներ հագած, ասպետական առաքինություններով պարծեցող մեծահարուստ պարոնների բոլոր գաղտնի արատները, նենգավոր մտադրությունները, գործերը և անողոքաբար մերկացնում էր նրանց՝ ընտրողներին ներկայացնելով նրանց իսկական տեսքը, նրանց անվանելով «բռնակալության ծառաներ»:

Միրաբոն լինելով փորձված և իմաստուն քաղաքական գործիչ հասկանում էր, որ սոսկ մերժողական ծրագիրը բռնակալության համակարգի դեմ բավարար չէր: Հարկավոր էր մշակել դրական ծրագիր: Միրաբոն ընդհանուր քաղաքական լոզունգներ հռչակեց ազատությունը և հավասարությունը: Եղբայրությունը՝ երրորդ գլխավոր լոզունգը, նույնպես կարելի էր հանդիպել Միրաբոյի ելույթներում, բայց դրան նա քիչ էր ուշադրություն դարձնում, ամենից կարևորը նրա համար ազատությունն էր:

Ազատության լոզունգն ուներ պարզ բովանդակություն. այն նշանակում էր բացարձակապետական վարչակարգի ոչնչացման պահանջ և Ֆրանսիայի վերածում սահմանադրական միապետության: Միրաբոն այս ամենի ի կատար ածումը տեսնում էր ամբողջ երրորդ դասի անխախտ միությամբ, ազգի բոլոր ուժերի համախմբմամբ, միավորմամբ և միասնությամբ: [2]

Միրաբոյի այն ժամանակի ճառերի համար հատկանշական էր, որ նա խոսում էր ոչ թե այն հակասությունների մասին, որ իրական կյանքում գոյություն ունեին տերերի և բանվորների, հարուստների և չքավորների միջև, այլ այն մասին, ինչ նրանց միավորում է: Բոլոր մարդիկ, որոնք զբաղվում էին արտադրողական աշխատանքով և ստեղծում էին նյութական արժեքներ, այժմ դարձել էին իրավազուրկներ:

Միրաբոյի բացառիկ ժողովրդավարությունը, հսկայական հեղինակությունը, որ նա արագորեն ձեռք բերեց սկզբնապես Պրովանսում, և որի արձագանքները լսելի դարձան ամբողջ Ֆրանսիայում, ավելի շատ բացատրվում էին ոչ թե նրա հռետորական ձիրքով, այլ

այն ժամանակի պահանջներին համապատասխանող նրա քաղաքական ծրագրի հստակությամբ և որոշակիությամբ: Ոչ ոք չկարողացավ այն պահին Ֆրանսիայի առջև ծառացած խնդիրները բնութագրել այնպիսի հստակությամբ և ուժով, ինչպես Միրաբոն: Դա էր հիմնականում նրա հաջողության գրավականը:

1789 թվականի մայիսի 5-ին Վերսալում թագավորի ներածական ճառով և Ժակ Նեկկերի՝ կառավարության փաստացի ղեկավարի զեկուցումով տեղի ունեցավ Գլխավոր շտատների հանդիսավոր բացումը:

Գլխավոր շտատների աշխատանքի առաջին իսկ օրերից քննարկվում էր քվեարկություն անցկացնելու խնդիրը՝ ըստ դասերի և միասին: Թագավոր աջակցությունը վայելող արտոնյալ դասերը պնդում էին անցկացնել քվեարկություն, իսկ երրորդ դասի պատգամավորները առարկեցին՝ պնդելով անցկացնել անհատական միասին քվեարկություն, պատճառաբանելով, որ երկուսը միշտ ավելի լավ է լինում մեկից: [3]

Վերջնական բեկումը տեղի ունեցավ 1789թ. հունիսի 23-ի նիստում, որտեղ արքունիքի ավագ արարողապետ մարկիզ դը Բրեզեն հրապարակեց թագավորի կարգադրությունը, որով պատգամավորներին պատվիրում էր անհապաղ բաժանվել ըստ դասերի և նիստերն անցկացնել առանձին-առանձին:

Շփոթմունքի և տատանումների այդ պահին Միրաբոն գրեթե հրամայական տոնով պատասխանեց դը Բրեզենին. «Դուք, որ մեր շարքերում ոչ տեղ ունեք, ոչ ձայն, ոչ էլ խոսելու իրավունք, գնացեք ձեր պարոնի մոտ և ասացեք նրան, որ մենք այստեղ ենք գտնվում ժողովրդի կամքով, և չի կարելի մեզ այստեղից հեռացնել այլ կերպ, քան սվինների ուժով»:

Միրաբոյի այդ կարճ ճառը ներկաների վրա մեծ տպավորություն գործեց: Այդ օրվանից և այդ պատմական նախադասությամբ: Միրաբոն մտավ համաշխարհային պատմության մեջ: Մինչև հունիսի 23-ը նա միայն երրորդ դասի պատգամավորներից մեկն էր, որ կարողանում էր քիչ թե շատ հաջող ելույթներով հանդես գալ ժողովներում: Հունիսի 23-ից հետո նա դարձավ հեղափոխության առաջնորդը: Միաբոյի անունը և հեղափոխությունը դարձան անբաժանելի: Թագավորական իշխանության ներկայացուցչին Միրաբոյի տված պատասխանից հետո ըստ էության սկսվեց երրորդ դասի բացահայտ դիմադրությունը և հակազդեցությունը բացարձակ միապետությանը:

Հունիսի առաջին օրերին Վերսալ և մայրաքաղաքի արվարձաններ մուտք էին գործել գնդեր, որոնք գալիս էին թագավորության հեռավոր գավառներից: Կենտրոնացվել էին հրետանու զգալի ուժեր: Փարիզի և Վերսալի շրջանները վերածվել էին զինված ճամբարների: [4]

Միրաբոն առաջինն էր, որ ճիշտ էր կռահել արքունիքի հակահեղափոխական ծրագրերը, և ազգի անունից պահանջեց որ զորքերն անհապաղ հեռացնեն Փարիզի և Վերսալի շրջակայքից: Հունիսի 8-ին Միրաբոն Ազգային ժողովում հանդես եկավ ճառով, որով առաջարկում էր սպառազինված զորամասերը փոխարինել «ժողովրդի ստեղծած ազգային գվարդիայով»:[5] Դա առաջին քաղաքական ճառն էր, որը հող նախապատրաստեց Բաստիլի գրավման համար:

Հուլիսի 11-ից մինչև 14-ը տեղի ունեցող իրադարձությունների ժամանակ, երբ թատերաբեմում հանդես էր գալիս գլխավոր գործող ուժը՝ ժողովուրդը, երբ նրանց հարվածների տակ հուլիսի 14-ին փլուզվում էր բացարձակ միապետության պատվարը՝ Բաստիլը, Միրաբոյի անունը ոչ մի տեղ չի հիշատակվում: Պատճառն այն էր, որ հուլիսի 13-ին մահացել էր նրա հայրը, և նա կատարելով ավագ որդու իր պարտականությունը՝ մեկնել էր հուղարկավորության:

1789 թվականը Օնորե Միրաբոյի փառքի գագաթնակետի շրջանն էր: Հեղափոխության հինգ ամիսների ընթացքում նա դարձավ Ֆրանսիայի ամենանշանավոր քաղաքական գործիչներից մեկը, հեղափոխական երիտասարդության կուռքը: Միրաբոյի անունը ֆրանսիական հեղափոխության մարմնացումն էր: [6]

Պատմագիտության մեջ հստակ կարծիք չկա, թե Միրաբոն մասոն էր թե ոչ, թեև նրա շատ կողմնակիցներ պատկանում էին տարբեր օթյակների, իսկ անձամբ իրեն, մեկ անգամ չէ որ մեղադրել են եղբայրության պատկանելության մեջ :

Ընդհանրապես, ֆրանսիական մասոնության ակունքները գալիս են դեռևս 1688 թվականից, երբ Անգլիայում Ստյուարտների արքայատոհմի վերջնական տապալումից հետո Ջեյմս II թագավորը իր հետևորդների հետ ապաստան գտավ Ֆրանսիայի թագավոր Լյուդովիկոս XIV-ի մոտ, և հենց այդ գաղթականներն էլ դարձան Ֆրանսիայում մասոնական օթյակների առաջին հիմնադիրները: [7]

Ձևավորված Ֆրանսիական մասոնական օթյակներում հիմնականում մեծ թիվ էին կազմում լուսավորիչներն ու քաղաքական գործիչները: 1769թ հիմնադրված «Ինը քույրեր» օթյակի անդամներ են եղել Վոլտերը, Ռուսոն, Կոնդորսեն, Դանտոնը, Կամիլ Դեմուլենը, Սիեյեսը և այլք:

1760թ. մասոն Ռուսոն գրել է. «Իմ կարծիքով՝ անհնար է, որ մեծ միապետությունները երկար գոյատևեն: Մենք մոտենում ենք ճգնաժամին՝ հեղափոխության դարին», իսկ 1762թ Մասոն Վոլտերը գրել է. «Այն ամենը, ինչ ես հիմա տեսնում եմ, ապագա հեղափոխության սերմեր է ցրում, որն անխուսափելիորեն պետք է տեղի ունենա, բայց որին ես արդեն վկան լինելու հաճույք չեմ ունենա»:

Այս ամենից կարելի է ենթադրել, որ հեղափոխական նշանավոր գործիչ Միրաբոն նույնպես եղել է մասոն, որևհետև դեռ երիտասարդ տարիներից հանդիսացել է մասոն Ժ.Ժ Ռուսոյի սոցիալ- քաղաքական հայացքների կողմնակիցը: Հեղափոխության բոլոր իրադարձությունները ծրագրվել, կազմակերպվել, մանրամասն մշակվել և ի կատար են ածվել մասոնների կողմից:

Ֆրանսիական միապետության դեմ կազմակերպված դավադրության մեջ ակտիվ դեր են խաղացել նաև Իլյումինատները: Իլյումինատների օրդենը (միաբանությունը) կազմավորվել է 1776 թվականին Գերմանիայում: Նրա հիմնադիրը Ադամ Վեյսգաուպտն էր, ով Բավարիայի Վ.Ինգոլշտադտի համալսարանի պրոֆեսոր էր: [8]

Իլյումինատները ձգտում էին ժողովրդին ազատել միապետի և հոգևորականության բռնապետությունից:

Միաբանության բոլոր անդամների նվիրական նպատակը համաշխարհային հեղափոխություն իրականացնելն էր:

Նպատակին հասնելու համար Վեյսգաուպտը բոլոր միջոցները համարում էր թույլատրելի և արդարացված: «Նրանք (Իլյումինատները), - ասում էր Միրաբոն. կրկնօրինակել են ճիզվիտների միաբնությանը, բայց իրենց առջև դրել են տրամագծորեն հակառակ նպատակներ»: [9]

1784 թվականին Վիլհելմսբադենում տեղի է ունեցել համաեվրոպական մասոնական կոնգրեսը: Այնտեղ մշակելով գործողությունների ծրագիր՝ մասոններն ակտիվորեն գործի են անցնում:

Փարիզում մինչև հեղափոխությունը Վեյսգաուպտի ոգով գործում էին մի խումբ իլյումինատներ, որոնց թվում էին նաև հեղափոխության ամենանշանավոր գործիչները, ինչպես օրինակ՝ Միրաբոն, Ռոբեսպիերը և ուրիշներ: Սա ևս մեկ փաստ է, որը

պատմաբաններին թույլ է տալիս մտածել, որ Օներե Միրաբոն եղել է մասոն:

Լ. դը Պոնսենն իր «Հեղափոխության գաղտնի ուժերը» աշխատության մեջ գրում է.«1789 թվականի հեղափոխությունը ո՛չ ինքնաբուխ շարժում էր հին կարգի «բռնապետության» դեմ, ո՛չ էլ ազատության, հավասարության և եղբայրության նոր գաղափարների անկեղծ պոռթկում, ինչպես դա ուզում են հավատացնել մեզ»: [10]

Հայտնի է, որ Ֆրանսիայում հեղափոխության մեկնարկից առաջ պետության բոլոր ծայրերում արդեն գոյություն է ունեցել 282 մասոնական օթյակ, որոնցից առավել հայտնի էր «Մեծ Արևելք» օթյակը, և դա պատմաբան Նիսին հիմք էր տվել կարծելու, որ «առանց մասոնների մասնակցության ֆրանսիական հեղափոխությունը տեղի ունենալ չէր կարող: Իսկ «Մարդու և քաղաքացու իրավունքների հռչակագրի» որոշ կետեր ըստ պատմաբան Նիսի արտահայտում էին մասոնական գաղափարներ, հատկապես «Ազատություն, հավասարություն, եղբայրություն» կարգախոսը, որը հանդիսանում էր մասոնների կարգախոսը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Грим Э.Д. Мирабо-очерк из истории Великой французской революции ст.118:
2. Жорес Ж. Социалистическая история французской революции том 1, ст. 110:
3. Жорес Ж. Ук.соч. том 1, ст.105:
4. Афанасьев Г.Е. Мирабо, ст.150:
5. Афанасьев Г.Е. Ук.соч., ст. 151:
6. Лозинский С.Б. Мирабо ,ст. 52:
7. Боровой А. А., “Современное масонство на Западе”, стр.12
8. Философов А. Д.. “Разоблачение великой тайны франк-масонов”, стр. 79
9. Селянинов А. “Тайная сила масонства”, стр. 73
10. bibliotekar.ru

ՀՏԴ 941(479.25)2-72 Պատմություն և քաղաքագիտություն

Զարուհի Խաչատրյան
Վանաձորի պետական համալսարան
«Պատմություն» մասնագիտություն, մագիստրատուրա, 1-ին կուրս
Գիտ. ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Մ. Բրուտյան

ԿԻԼԻԿՅԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅՈՒՆԸ 12-13-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ (ԱԿՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ)

Բանալի բառեր: *Կիլիկյան մանրանկարչություն, ակունքներ, ազդեցություն, ձեռագրեր, Մատենադարան, մշակութային առնչություն:*

Կիլիկյան մանրանկարչության ակունքների սահմանումը հանդիսանում է հայկական արվեստի պատմության բարդագույն հարցերից մեկը: Իր արմատներով կիլիկյան մանրանկարչությունը կապված էր, գլխավորապես, բուն Հայաստանի արվեստի հետ: Կիլիկյան մանրանկարչական արվեստի ուսումնասիրությունը թույլ է տալիս այն համեմատել այն երկրների մանրանկարչության բնորոշ գծերի ու առանձնահատկությունների հետ, որոնք սերտ կապի մեջ են եղել Կիլիկյան Հայաստանի հետ: Ուսումնասիրելով այդ երկրների և Կիլիկյան Հայաստանի միջև եղած մշակութային կապերը՝ կարող ենք տեսնել, որ կիլիկյան մանրանկարչությունը, ազդեցություն կրելով Հայաստանի, Բյուզանդիայի, Արևմուտքի և Արևելքի երկրների մանրանկարչական արվեստից, ինքը ևս իր ազդեցությունն է թողել եվրոպական մի շարք քաղաքների մանրանկարչական արվեստի վրա:

Заруи Хачатрян

КИЛИКИЙСКАЯ МИНИАТЮРНАЯ ЖИВОПИСЬ В 12-13 ВЕКАХ (ИСТОКИ И ВЛИЯНИЕ)

Ключевые слова: *Киликийская миниатюра, происхождение, влияние, рукописи, Матенадаран, культурные отношения.*

Определение истоков киликийской миниатюрной живописи является одним из самых сложнейших вопросов по истории армянского искусства. Своими корнями она в основном была связана с искусством в самой Армении. Изучение киликийского миниатюрного искусства позволяет сравнить его с характерными чертами миниатюр и особенностями тех стран, которые были тесно связаны с Киликийской Арменией. Изучая культурные связы между этими странами и Киликийской Арменией, мы видим, что киликийская миниатюра, находящаяся под влиянием миниатюрного искусства Армении, Византии, стран Запада и Востока, также повлияла на искусство миниатюры ряда европейских городов.

Կիլիկյան հայկական պետության սահմաններում զարգացող մշակույթն իր գոյության մոտ երեք դարերի ընթացքում անընդհատ բախվել է ինչպես Արևմուտքի, այնպես էլ Արևելքի մշակույթների հետ: Այս հանգամանքը չէր կարող իր հետքը չթողնել կիլիկյան մանրանկարչության վրա: Այդ պատճառով էլ հարևան ժողովուրդների արվեստների, հատկապես, բյուզանդական արվեստի ազդեցությունը Կիլիկիայում ավելի ցայտուն է դրսևորվել, քան այլուր: Հաճախ հայկական մանրանկարչությունը դիտվել է որպես բյուզանդականի կամ սիրիականի ճյուղավորում, և ստվերի տակ են թողնվել այն գծերը, որոնք հայկական մանրանկարչությանը տալիս են ինքնուրույն դեմք: Այս իմաստով կիլիկյան մանրանկարչության առանձնահատկությունների լուսաբանումը առանձին կարևորություն է ստանում, մանավանդ, երբ նկատի ենք առնում Կիլիկյան Հայաստանի և Բյուզանդիայի միջև եղած քաղաքական և մշակութային հարաբերությունները: Ամեն կարգի

փոխառումները կամ ազդեցությունները, չեն կարող մերվել որևէ ժողովրդի արվեստի հետ, եթե վերջինիս մեջ չեն գտնում տեղական սովորույթների հաստատուն հիմքեր. այս առումով կիլիկյան մանրանկարչությունն ուներ ոչ միայն հաստատուն հիմքեր, այլև դարերի խորքից եկած տեղական ինքնուրույն որոշակի ակունքներ, որոնք ստեղծել էին բուն հայկական մանրանկարչական ոճը [2, 15]:

12-րդ դարի առաջին քառորդում պատկերազարդված ձեռագիր հուշարձանների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ կիլիկյան մանրանկարչությունն իր արմատներով առաջին հերթին կապվում է բուն Հայաստանի հետ: Կիլիկյան մանրանկարչական դպրոցի ձևավորման համար հիմնական նշանակություն ունեցան այն սովորույթները, որոնք մշակվել էին բուն Հայաստանում և ներմուծվել Կիլիկիա, հայերի՝ Բյուզանդական կայսրության արևելյան շրջանները գաղթելու ժամանակ: Դրան մեծապես նպաստեցին Կիլիկիա տեղափոխված այն գրիչներն ու մանրանկարիչները, որոնք իրենց գործերը սկսել էին բուն Հայաստանում [2, 18]:

Մեզ հայտնի է Կիլիկիայի վաղ շրջանի երեք պատկերազարդված ձեռագիր: Դրանք են՝ Տյուբինգենի համալսարանի գրադարանում պահպանվող 1113 թ. Ավետարանը՝ պատկերազարդված Գրիգորի ձեռքով, Երևանի Մատենադարանում պահպանվող N7737 (12-րդ դ. առաջին քառորդ) և 1113 թ. N6763 ձեռագրերը: Այս ձեռագրերի մանրանկարների ոճային ընդհանրությունները ենթադրել են տալիս, որ նրանց գեղարվեստական դրվագներն ունեն ընդհանուր սկզբնաղբյուր, որը, իր հերթին, սերտորեն կապված է բուն Հայաստանի հնավանդ սովորույթների հետ: Թվարկված ձեռագրերի պատկերազարդման մեջ պարզորոշ արտացոլվել են 11-րդ դարի վերջի և 12-րդ դարի սկզբի բուն Հայաստանի ձեռագրերի գրեթե բոլոր առանձնահատկությունները: Այստեղ գերիշխողը դեռևս մոնումենտալ բնույթն է, որը մինչկիլիկյան շրջանի մանրանկարչության բնորոշ գծերից մեկն է: Ավետարանիչների ֆիգուրները ծանրաքաշ են, մարմնի առանձին մասերը կորչում են պայմանականորեն մեկնաբանված հագուստի ծալքերի մեջ: Գունային գամման կազմվում է պարզ, լոկալ ներկերից (ոսկու ֆոնի վրա կանաչ, դեղին, կարմիր, մանուշակագույն) [1, 40]:

Մատենադարանի 1113 թ. ձեռագրի մանրանկարների կատարման գրաֆիկական-ակվարելային բնույթը, զարդապատկերներում գերիշխող բուսական մոտիվները, նրանց ընդհանուր մոնումենտալությունը, սահմանափակ գունային գամման (կանաչ, դեղին, կարմիր և սև) և այլն, անմիջապես կապվում են բուն Հայաստանի ձեռագրերի ոճական առանձնահատկությունների հետ: Հիշատակության արժանի է նաև Մատենադարանի 1166 թ. ձեռագիրը (ձեռագիր N7347): Այս ձեռագրի պատվիրատու Առաքելի և ավետարանիչների պատկերները իրենց չոր գծանկարով, հագուստի ծալքերի պայմանական մեկնաբանությամբ, որի շնորհիվ մարմնի մասերը զրկվում են ծավալայնությունից, անշարժ դիրքով և այլն, դրսևորում են արխայիկ մի ոճ, որը ցույց է տալիս, որ մանրանկարիչը դեռևս գտնվում է բուն Հայաստանի բնորոշ սովորույթների ազդեցության տակ [1, 41]:

Այս ձեռագրերի ձևավորման մեջ դրսևորվել է կապը բուն Հայաստանի մանրանկարչության, քանդակագործության և որմնանկարչության հետ: Մանրանկարների խտացված գույները, խորանների ճարտարապետական կոնստրուկտիվ բնույթը, ազատ գեղանկարչական ոճը, կատարման տեխնիկան ուսումնասիրվող ձեռագրերը մոտեցնում են այնպիսի հուշարձանների, ինչպիսիք են «Մուղնիի ավետարանը» (11-րդ դ. առաջին կես, Մատենադարան, ձեռ. N7736) և 1053 թ. ավետարանը (Մատենադարան, ձեռ. N3593), որոնք իրենց հերթին կապվում են հայկական միջնադարյան որմնանկարչության հետ [2, 20]:

Խոսելով արտաքին ազդեցությունների մասին՝ առաջին հերթին անհրաժեշտ է կանգ

առնել բյուզանդական մանրանկարչության վրա: Անդրադառնալով կիլիկյան մանրանկարչության վրա բյուզանդական արվեստի թողած ազդեցության հարցին՝ հարկ է ընդգծել, որ կիլիկյան մանրանկարչությունն իր գոյության հենց առաջին շրջանում բախվում է իր հիմնական գծերով արդեն ձևավորված բյուզանդական դասական արվեստի հետ [2, 24]:

Գրքի ձևավորման բյուզանդական արվեստի ազդեցությունը հայկական մանրանկարչության վրա դիտելի է դեռևս 11-րդ դարի մի շարք ձեռագրերում: Այդ ձեռագրերից հնագույնը 1007 թ. ավետարանն է (Վենետիկ, սբ. Ղազար, N887): Ձեռագիրն ունի հետևյալ մանրանկարները. Աստվածամայրը Հիսուս մանկան հետ գահի վրա՝ «օդիգիտրիի»[1] կերպարանքով, հանդիպակաց էջում պատվիրատու Հովհանի պատկերն է՝ բյուզանդական պալատական աստիճանավորի հագուստով, ապա երկու էջի վրա զույգ-զույգ պատկերված են կանգնած ավետարանիչները՝ ձեռքներին բաց գրքեր: Մանրանկարների վրա կան հունարեն, իսկ Աստվածամոր, ավետարանիչներ Մատթեոսի և Մարկոսի պատկերների վրա՝ հայերեն մակագրություններ: Բնորոշ է, որ այս ձեռագիրը, գրված և պատկերազարդված լինելով Բյուզանդիայում, տարբերվում է 11-րդ դարի բյուզանդական ձեռագրերի ոճից: Աստվածամոր պատկերը մանկան հետ՝ «օդիգիտրիի» կերպարանքով, բնորոշ է Սիրիայի ու Եգիպտոսի համար և քիչ է հանդիպում բյուզանդական ձեռագրերում: Կանգնած ավետարանիչների ծանր, մոնումենտալ ֆիգուրների տեղադրումը ձեռագրերի սկզբում իր հերթին բնորոշ է 10-11-րդ դարերի հայկական ձեռագրերին: Ուսումնասիրվող մանրանկարների նման տարբերությունը 11-րդ դարի բյուզանդական ոճից խոսում է այն մասին, որ, չնայած հունարեն մակագրությանը, դրանց կատարողը հույն չէ: Կասկածից դուրս է, որ նա հայ է, բայց ընդունել է բյուզանդական արվեստի որոշ ձևերը [1, 42-44]:

Այսպիսով, բյուզանդական ազդեցությունը բուն Հայաստանի ձեռագրերում զգացվում է դեռ 11-րդ դարից:

Բյուզանդական մանրանկարչության ազդեցությունը Կիլիկիա է ներթափանցում 12-րդ դարի սկզբից շատ ավելի ուշ, այսինքն այն ժամանակ, երբ Կիլիկիա են բերվում այնպիսի ձեռագրեր, որոնց մանրանկարներում արտացոլվել են բյուզանդական արվեստին բնորոշ ձևերը: Մեծ հետաքրքրություն է ներկայացնում Մատենադարանում պահպանվող 1066 թ. ավետարանը (ձեռ. N311): Պահպանված հիշատակարանները վկայում են, որ ձեռագիրը պատրաստվել է 1066 թ. Սեբաստիայում, գրիչ և նկարիչ Գրիգոր Ակոռեցու ձեռքով, գրվելուց մոտ հարյուր տարի հետո բերվել է Կիլիկիա և դարձել Ներսես Շնորհալու սեփականությունը: Այսպիսով, ձեռագիրը Կիլիկիա է բերվել մոտավորապես 1160-1177 թթ., այսինքն, հենց այն ժամանակ, երբ սկսում է ձևավորվել կիլիկյան մանրանկարչության ինքնուրույն ոճը [3, 22-23]:

Կոստանդնուպոլսի գրավումը խաչակիրների կողմից (1204 թ.) և Բյուզանդական կայսրության ժամանակավոր բաժանումը նպաստեց հույն վարպետների գաղթին դեպի հարևան երկրները: Այս հանգամանքը իր հերթին խթան հանդիսացավ բյուզանդական արվեստի ազդեցության աշխուժացմանը մյուս ժողովուրդների արվեստի վրա: Կիլիկիայում

---

[1] *Աստվածամոր և մանուկ Հիսուսի պատկերման ամենատարածված տիպերից է, որտեղ Հիսուսը նստած է Մարիամի գրկում, աջ ձեռքով օրհնում է, ձախով բռնած է փաթաթած թուղթ, ոչ հաճախ՝ գիրք: Որպես կանոն, Աստվածամայրը պատկերված է մինչև գոտկատեղը, սակայն հանդիպում են օրինակներ, որոնցում նա ողջ հասակով է պատկերված: Այստեղ, արդեն, պատկերված չէ Աստվածամոր և Հիսուսի անսահման սերը. այստեղ կենտրոնական կոմպոզիցիան հանդիսանում է Քրիստոսը՝ դեմքով ուղղված դեպի դիտողը: Աստվածամայրը նույնպես դեմքով ուղղված է դեպի դիտողը (կամ գլխի թեթև խոնարհմամբ) և ձեռքով ցույց է տալիս Հիսուսին:*

որպես դրա օրինակ կարող է ծառայել, այսպես կոչված, Սմբատ Գունդստաբլի ավետարանը (Մատենադարան, ձեռ. N7644), որը գրված և պատկերազարդված է ոչ շուտ, քան 12-րդ դարի երկրորդ կեսը (Սմբատն ապրել է 1206-1276 թթ.): Սմբատի ձեռագրի ավետարանիչների պատկերները և տերունական մյուս մանրանկարները իրենց բարդ ճարտարապետական ֆոնով և ոճավորված բնապատկերներով ուղղակի կապվում են 12-րդ դարի բյուզանդական մանրանկարչության հետ [2, 31]:

Բյուզանդական մանրանկարչության որոշ փոխառումներ կարելի է նշել Թորոս Ռոսլինի անվան հետ կապված, ինչպես նաև, Կիլիկիայի զանազան գրչատներից դուրս եկած ձեռագրերում: Բայց դրանք կրում են մասնակի բնույթ, քանի որ 13-րդ դարում գրքի ձևավորման արվեստը Կիլիկիայում արդեն հասել էր կատարելության այնպիսի աստիճանի, երբ ինքն էր սկսում որոշ ազդեցություն թողնել բյուզանդական մանրանկարչության վրա [3, 24]:

Անդրադառնալով հայկական և արևելյան արվեստների փոխհարաբերությանը՝ չպետք է աչքաթող անել մի կարևոր հանգամանք, այն է՝ այդ երկու մշակույթների համակցությունը սկսվում է ամենահին ժամանակներից. երբեմն նրանք այնքան են մոտենում իրար, որ դժվար է լինում որոշել, թե այս կամ այն մոտիվը ով ումից է փոխառել: Մի շարք զարդապատկերներ հավասարապես բնորոշ են ու տարածված են եղել ինչպես Հայաստանում, այնպես էլ՝ Մերձավոր Արևելքում: Սակայն գրքի ձևավորման գործում մահմեդական կրոնական բնույթի ձեռագրերը, հակառակ բյուզանդականի, կրոնական թշնամանքի հետևանքով չէին կարող ազդել հայկական մանրանկարչության վրա: Հետևաբար, հայ մանրանկարիչները հնարավորություն ունեին օգտագործել Արևելքի աշխարհիկ բովանդակություն ունեցող ձեռագրերի մանրանկարները միայն: Այս հանգամանքն իր հերթին նպաստում է աշխարհիկ մոտիվների ուժեղացմանը հայկական մանրանկարչության մեջ[1, 46]:

Ուշագրավ է, որ հայկական ձեռագրերում, մյուս զարդապատկերների հետ մեկտեղ, մենք հանդիպում ենք մահմեդական կիսալուսնին: Այն սովորաբար տեղավորում են խաչի ներքևի մասում՝ շուռ տված դիրքով. հավանաբար, դրանով մանրանկարիչը ցանկացել է ընդգծել խաչի առավելությունը կիսալուսնի նկատմամբ [2, 34]:

Կիլիկյան հայկական պետությունն իր գոյության հենց առաջին տարիներին շփվում է խաչակիրների հետ: Խոսելով կիլիկյան մանրանկարչության վրա թողած արևմտաեվրոպական մանրանկարչության ազդեցության մասին, անհրաժեշտ է հենց սկզբից նշել, որ Արևմուտքի ավանդները Կիլիկիա են ներթափանցել շատ ավելի ուշ, քան բյուզանդականը կամ արևելյանը: Արևմուտքի արվեստի ազդեցությունը Կիլիկիայի մանրանկարչության վրա կրում է մասնակի բնույթ և այնպիսի խորը արմատներ չի գցում, ինչպես բյուզանդական արվեստը [2, 35]:

Ուսումնասիրվող ժամանակաշրջանից մեզ հայտնի չէ ոչ մի ձեռագիր, որն ամբողջապես կախման մեջ լիներ արևմտյան մանրանկարչության սովորույթներից: 13-րդ դարում արևմտյան մանրանկարչության մեջ գերիշխում էր գոթական ոճը, որը իր բարձր արտահայտությունը գտավ Ֆրանսիայում: Ահա, 13-րդ դարում ձևավորված այս ոճն է թափանցում Կիլիկիա և որոշ հետքեր թողնում տեղի մանրանկարիչների ստեղծագործությունների վրա: Գոթական ձևերի փոխառման ցայտուն օրինակ է «Աստվածամայրը մանկան հետ» մանրանկարը (1295 թ.): Այստեղ Աստվածամայրը պատկերված է ամբողջ հասակով՝ մանուկը ձեռքին: Աստվածամոր հեզանազ դիրքը, մարմնի ձգված համամասնությունները ընդգծող հագուստի ծալքերը հիշեցնում են

գոթական քանդակագործության հուշարձաններ: Այս մանրանկարի սրածայր կամարներով ճարտարապետական ֆոնը նույնպես կապվում է գոթական ձևերի հետ [2, 37]:

Արևմուտքին բնորոշ գծերից կիլիկյան մանրանկարչության մեջ իրենց արտացոլումն են գտել նաև յուրովի ոճավորված բուսական մոտիվները: Գոթական ոճը 13-րդ դարի կիլիկյան ձեռագրերում համեմատաբար ավելի պարզ է արտահայտել օրնամենտալ մոտիվների յուրահատուկ ոճավորումը: Բուսական այլ դրվագները, որոնք պարունակում են թեմատիկ պատկերները, ստեղծելով ինքնատիպ շրջանակներ, բարակ ցողունով ձգվելով ամբողջ էջի երկարությամբ, զարդարում են անվանաթերթը, լուսանցազարդերը: Տերևները մեկնաբանված են չոր, կարծես մետաղից պատրաստված լինեն [1, 51]:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանը, իր պատմական զարգացման որոշ շրջանում իր հիմքում ունենալով ազգային հարուստ ավանդույթներ և օգտագործելով հարևան ժողովուրդների արվեստի նվաճումները, ստեղծում է արվեստի ինքնատիպ ոճ, որը սկսում է արդեն իր ազդեցությունը թողնել հարևան երկրների արվեստի վրա:

Եվրոպացի մի շարք արվեստաբաններ, ուսումնասիրելով կիլիկյան մանրանկարչությունը, աղերսներ են գտել եվրոպական մանրանկարչության շատ նմուշների և կիլիկյան մանրանկարչության միջև:

Այդ հետազոտողներից է գերմանացի գիտնական Վոլֆգանգ Գրաֆը, որն իր «Բյուզանդական մշակույթի սահմանային խնդիրները» վերնագրով մենագրության մեջ վեր է հանել մի շարք հարցեր, որոնք, նրա կարծիքով, ընդգծում էին կիլիկյան մանրանկարչության և վենետիկյան արվեստի նմուշների միջև եղած նմանությունները: Նա ապացույցներ էր գտել Ջիովաննի դա Գաիբանայի՝ 1259 թվականով թվագրվող «Ուղերձների գրքում», որոնք վերաբերում էին վենետիկյան և կիլիկյան մանրանկարների նմանություններին [5, 1]:

Իտալացի արվեստաբան Վալենտինո Պաչեն 1983 թ. հետազոտություններ է սկսել Բյուզանդիայի միջերկրածովյան տարածքներում՝ Կիպրոսում, Կիլիկիայում, և համեմատել Բյուզանդիայի միջերկրածովյան տարածքների մշակույթը իտալականի հետ՝ կենտրոնացնելով իր ուշադրությունը, հատկապես, «Մարզոլինիի եռապատկերի» վրա, որը գտնվում էր Պերուջայում: Հեղինակը կիլիկյան մանրանկարչության հետ է կապում Սինայի լեռան վրա գտնվող սբ. Եկատերինայի մենաստանում գտնվող մի քանի մանրանկարներ: Դրանց մեջ էր մտնում, այսպես կոչված, «Պրոկոպիոսի երկպատկերը», որը մեկ էլ գիտնական՝ Քուրթ Վեյցմանը, սխալմամբ վերագրել էր վենետիկցի նկարիչներին [5, 2]:

Գլխավոր օրինակը, որը ցույց է տալիս կիլիկյան մանրանկարչության հետքն Իտալիայում, «Մարզոլինիի եռապատկերն է»: Այն ոչ միայն առաջին հայացքից է հիշեցնում կիլիկյան մանրանկարչական արվեստի ոճը, այլև չկան ապացույցներ ու հիշատակություններ այդ եռապատկերի տեղական ծագման մասին (ոչ Պերուջայում, ոչ էլ հարակից Ումբրիայում կամ Տոսկանայում): Հետևությունները, որոնք արվել են, ցույց են տալիս, որ ոչ թե հայ նկարիչն է Պերուջա գնացել և այն նկարել, այլ պերուջացի նկարիչն է տեսել հայկական մանրանկարները և օգտագործել դրանց առանձնահատկությունները իր ստեղծագործության մեջ [5, 3]:

Ձեռագրերը, որոնք փոխանցվել են Պերուջայի հայկական մենաստաններին և հայերի առկայությունը այդ քաղաքում վառ ապացույցն են հանդիսանում Ումբրիայի և հայկական, տվյալ դեպքում, կիլիկյան մանրանկարչության միջև եղած մշակութային առնչությունների:

Մշակութային փոխհարաբերությունների մեկ այլ ճամփա կարող էին լինել ֆրանցիսկյան և հոգևոր ասպետական միաբանությունները, որոնց ազդեցությունը պետք է ոչ միայն

արևելքում գործած լիներ, այլև արևմուտքում, քանի որ արշավանքների ընթացքում նրանք իրենց հետ արևելքի մշակութային ավանդները բերում էին արևմուտք: Պետք է նշել, որ Կիլիկյան Հայաստանի Հեթում Բ արքան դեռ արքայազն եղած ժամանակ հարել էր ֆրանցիսկյան միաբանությանը և հովանավորում էր վերջինիս: Եվ այս առումով հատկանշական է Հեթում Բ արքայի «Ճաշոցը» (որը պահվում է Մատենադարանում), որը, ըստ Վալենտինո Պաչեի, Կիլիկիայի կողմից հրաշալի «բնորդ» կարող էր հանդիսանալ «Մարզոլինիի եռապատկերի» համար [5, 4]:

Անհրաժեշտ է նշել նաև կիլիկյան մանրանկարչության հետ աղերսներ ունեցող ևս մի արվեստի նմուշ՝ Ումբրիայի Սան Ֆրանցիսկո եկեղեցին իր մանրանկարներով, որը մշակութային երկխոսության վառ օրինակ է [5, 4]:

13-րդ դարի վերջին Մոդենայի համալսարանի շրջանավարտի ձեռքով է նկարված «Անդրեաս առաքյալի խաչելությունը» նկարը, որի վերին մասում արաբական ու հայկական տառեր են նշմարվում: Նման ոճը, երբ նկարի վերին մասում գրություն կա, հատուկ չէ իտալական մանրանկարչությանը. ենթադրվում է, որ մանրանկարի հեղինակը ոգեշնչվել է կիլիկյան մանրանկարչության նմուշներից [5, 6]:

Այսպիսով, Կիլիկյան Հայաստանը, սերտ առնչությունների մեջ գտնվելով եվրոպական երկրների հետ, ինչպես իր արվեստում կրել է այդ երկրների մշակութային ազդեցությունը, այնպես էլ ինքն է մեծ ազդեցություն թողել վերջիններիս արվեստի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազարյան Լ. Ա., «Կիլիկյան մանրանկարչության ակունքները», Պատմաբանասիրական հանդես, Երևան, 1960, N3:
2. Ազարյան Լ. Ռ. Կիլիկյան մանրանկարչությունը 12-13 դդ., Երևան, 1964:
3. Հակոբյան Հ., Կորխմազյան Է. Հայկական մանրանկարչություն, Երևան, 1987:
4. Valentino Pace «Thirteenth-century Cilician manuscript illumination, Umbria and Bologna: old and new evidence of the Armenian contribution to Italian painting», «Հասկ» հայագիտական տարեգիրք, 2010:

ՀՏԴ 941(479.25) Պատմություն և բաղաքագիտություն

Էմիլիա Խաչատրյան
ԳՊՀ

ՍՅՈՒՆՅԱՑ ՀՈԳԵՎՈՐ ԿԵՆՏՐՈՆՆԵՐԻՑ՝ ՎԱՀԱՆԱՎԱՆՔԸ

Բանալի բառեր: *Վահանավանք, Զագիկյաններ, Վահան, Ստեփանոս Օրբելյան, Բաղք, սելջուկ թուրքեր , Կապան, Շահանդուխտ, Տիգրանակերտ:*

Բագրատունյաց թագավորության շրջանում էր տեղի ունեցել քննվող կարևոր իրադարձությունը՝Վահանավանքի կառուցումը: Վանքը կառուցվել է 911թ և կոչվել Սյունյաց իշխան Վահանի անունով, որը եղել է Բաղքի գահակալ Զագիկի որդին: Չենք կարող ժխտել մի կարևոր փաստ, որ վանքի մասին առաջին տեղեկությունները մեզ հասել են Սյունյաց աշխարհի պատմիչ Ստեփանոս Օրբելյանից: Վահանավանքը եղել է Զագիկյանների նստավայրը, հետո դարձել է Սյունիքի թագավորության հոգևոր կենտրոնը: Վահանավանքը ծաղկում է ապրել Սյունյաց թագավորության շրջանում, իսկ նրա անկումը կարող ենք համարել սելջուկների արշավանքից հետո՝ 1170 :

Վահանավանքը հարուստ է եղել հուշարձաններով, նախշաքանդակներով, խաչքարերով, վիմական արձանագրություններով և այլն:

Արդիական է այս պահին Վահանավանքում ուսումնասիրություններ կատարվելը, որովհետև դեռևս կան որոշ չբացահայտված հարցեր, օրինակ՝Վահանավանքի միաբանությունը: Շատ կարևոր է այն հանգամանքը, որ Վահանավանքը այսօր էլ շարունակում է մնալ Սյունիքի պատմամշակութային կարևոր հուշարձաններից մեկը:

Эмилия Хачатрян

ДУХОВНЫЙ ЦЕНТР СЮНИКА ВАГАНАВАНК

Ключевые слова: *Ваганаванк, Дзагикян, Ваган, Степанос Орбелян, Бахк, Сельджук турок, Капан, Шагандухт, Тигранакерт.*

Во времена правления Багратидов произошло важное событие - строительство Ваганаванкского монастыря, который был воздвигнут в 911 году и был назван в честь Сюникского князя Вагана, сына Дзагика-правителя Бахка. Первые сведения о Ванке до нас дошли от историка Сюникского мира Степаноса Орбеляна. Ваганаванк был резиденцией Дзагикянов, а затем он стал духовным центром Сюникского королевства, во времена которого пришелся его расцвет а его падение произошло после похода селджуков в 1170-ом году.

Ваганаванк был богат своими памятниками, орнаментами, крест-камнями-хачкарами, клинописями и другими культурными ценностями.

Исходя из этого мы предлагаем его дальнейшее изучение, поскольку Ваганаванский комплекс до сегоднящнего дня продолжает оставаться важнейшим историко-культурным памятником.

9-րդ դարի վերջին քառորդում Հայաստանում վերականգնվում է հարյուրամյակներ առաջ կորցրած պետականությունը: Երկրի քաղաքական և տնտեսական համակողմանի զարգացման համար ստեղծվում են բարենպաստ պայմաններ: Այդ նշանակալի վերափոխումների ոլորտից, հարկավ, դուրս չէր մնացել նաև Սյունյաց աշխարհը, որի իշխողների քաղաքական և ռազմական հզորությունն այդ տարիներին վճռական դեր էր խաղում հայոց նորահաստատ արքունիքում :

Հաջորդիվ ներկայացնեմ, թե որտեղից է բխել այն մտահղացումը, որ ցանկացել են կառուցել Վահանավանքը: Բացի այդ ընթացքում կբացահայտեմ, որ Վահանավանքը

կառուցելը արդեն պահանջմունք էր դարձել:

906 թվականին Սյունյաց եպիսկոպոսական կենտրոն Տաթևի վանքի գլխավոր տաճարի՝ Պողոս-Պետրոս մայր եկեղեցու օծման արարողություններին՝ Նավակատիքին, մասնակցում էին Հայաստանի քաղաքական և հոգևոր առաջնորդները, այդ թվում նաև Սյունյաց Բաղք գավառի գահակալ իշխան Զագիկը, ով Տաթևից վերադառնալով հայրենի Կապան, իր ավագ որդու՝ գահաժառանգ Զևանշերի հետ խորհում է իր տիրույթների սահմաններում նույնպես կառուցել Տաթևի մայր տաճարի նման բարձրարվեստ մի սրբարան: Սակայն այս միտքը ի կատար է ածում Զագիկի կրտսեր որդի իշխանազուն Վահանիկը, որը Տանձափարախի, ապա և Շատինի վարդապետարանների մոտ բուժվելուց հետո վերադարձել էր հայրենի օջախը [1,էջ 5] :

Վահանավանքը գտնվում է Սյունիքի մարզկենտրոն Կապանից 5 կմ հյուսիս-արևմուտք՝ Տիգրանասարի լանջերին: Առաջին գրավոր տեղեկությունները Վահանավանքի կառուցման մասին պահպանվել են Ստեփանոս Օրբելյանի «Պատմություն տանն Սիսական» պատմագիտական երկում: Պատմիչի վկայությամբ՝ Բաղք գավառի գահակալ իշխան Զագիկի կրտսեր որդի Վահանը, Բաղաբերդ ամրոցի մոտակայքում ընտրելով «տեղի մի հարթ և յոյժ ի ճահ», այսինքն՝ հարթ և հարմարավետ մի վայր, իր իշխանազուն եղբոր աջակցությամբ սկսում է կառուցել տաճարը «յոյժ գեղեցիկ յօրինուածովք, գմբեթայարկ և եռախորան, հաստահեղոյս և տաշածոյ վիմօք» [4,էջ174] : Ստեփանոս Օրբելյանը գրում է, որ վանքը կառուցվել է 360թ., այսինքն ընդհանուր 911թ.- ին, և այնուհետև վանքը Վահանը կոչում է իր անունով Վահանավանք: Ճիշտ եմ համարում այն փաստը, որ ինչ-որ կառույց կառուցելուց հետո տվյալ կառուցողը իր անունով է կառույցը կոչում: Այս հանգամանքը հնարավորություն է տալիս նրան դարեր հետո հիշելու, ու ավանդը փոխանցելու ու փառաբանելու նրա աշխատանքները [1,էջ 5-7]:

Վահանի պատվանունը՝ Նախաշինող, պատմիչն չունի, այն նշված է միայն,տապանաքարին: Նախաշինող, այսինքն՝ առաջին կառուցող կամ նախագնաց կառուցումների,որը վախճանվում ու թաղվում է տաճարի դռանը: Վանքի հիմնադիր Վահանին հաջորդում է իր եղբորորդին՝նույնպես Վահան անունով(Ստեփանոս Օրբելյան մյուս Վահան), որը հետագայում դարձավ Սյունյաց եպիսկոպոս: Սա ևս կառուցում է մի շարք նոր շենքեր ու վանքը զարդարում բարեկարգումներով: Եկեղեցու բակում կառուցեց աղոթատուն՝ վիմակերտ մահարձաններով: Գեղեցիկ հորինվածքով շինեց եկեղեցու գավիթը: Վանքի դռանը կամար կանգնեցրեց՝ վրան 2 խորան, Պողոս և Պետրոս սուրբ առաքյալների անվամբ: Կառուցեց սեղանատուն ու խողովակով ջուր բերեց նրա դուռը: Եվ զանազան կառույցներով գեղեցկացրեց վանքը [4,էջ 218]:

Վահանավանքի մասին խոսելիս պետք է հաշվի առնել, որ այն Սյունիքի գահերեց և գահակալ իշխանների, ամենից առաջ Զագիկյանների նստավայր, գահանիստ, արքունանիստ, իսկ հետո Սյունիքի թագավորության մայրաքաղաք Կապանի գլխավոր տաճարն էր: Պետք է հաշվի առնել նաև այն, որ Վահանավանքի ծնունդը, որքան էլ Վահան Նախաշինողը պատճառներ ունենար կառուցելու համար, այնուամենայնիվ կապված էր քաղաքական իրավիճակի հետ: Այսինքն, IX-X դդ. Սյունիքյան իշխանության քաղաքական կենտրոնը տեղափոխվում է Բաղք, որի գլխավոր կենտրոնը Կապանն էր: Ուրեմն քաղաքի մերձակայքում պետք է լիներ Աստծո տաճար, իսկ այդ ժամանակ գահանիստ քաղաքին հարիր տաճար չկար: Այդպես էլ ծնվեց Վահանավանքը [2,էջ 70-71] :

Բաղաց աշխարհն իր գահերեց և գահակալ իշխանների հմուտ քաղաքականության, անշուշտ նաև հայրենասեր ազգաբնակչության միաբանության շնորհիվ զգալապես

հզորացավ 10-րդ դարի երկրորդ կեսին: Նոր մայրաքաղաքը՝Կապանը, շրջապատված էր հզոր ամրոցների ցանցով, ինչպիսիք էին՝ Սյունյաց «հոյս և ապավէն» Բաղաբերդը, Բաղակու քարը, Գեղին, Շլորուտը, Գրհամը և այլ բերդեր: Արքունական տունը պետք է ունենար նաև իր տոհմական գերեզմանոցը, որպիսին հանդիսացավ մայրաքաղաքի շրջակայքում գտնվող Վահանավանքը:

Այսպիսով կարող ենք ասել, որ Վահանավանքի դերն ու նշանակությունը շատ մեծ է եղել Սյունյաց աշխարհի համար, որովհետև այն միայն վանք չի եղել:

Վահանավանքը քանիցս ենթարկվել է կողոպուտի և ավերի:Վահանավանքը ծաղկում է ապրել Սյունյաց թագավորության շրջանում, իսկ նրա անկումը կարող ենք համարել սելջուկների արշավանքից հետո՝ 1170:Իսկ ինչ վերաբերում է Վահանավանքի միաբանությանը, ոչինչ հստակ չենք կարող ասել: Թե մինչև երբ է գործել Վահանավանքի միաբանությունը, և երբ են այս տաճարները վերածվել ավերակների, առայժմ, միայն կռահումներ են: Այս առեղծվածը, ամենայն հավանականությամբ, կլուծվի ամբողջ հուշարձանախումբը պեղելուց և մաքրելուց հետո միայն [1,էջ15-18]: Միայն կարող ենք ասել, որ Վահանավանքի միաբանությունն ունեցել է ավելի քան 100 անդամ, կից գործել է վանական դպրոցը, ուր ուսանել են ոչ միայն Բաղք, այլև մյուս գավառների պատանիները: Նպաստավորողները եղել են Զագիկյան իշխաններն ու Սյունյաց եպիսկոպոսական աթոռը:

Վահանավանքի հուշարձանները, նախշաքանդակները, խաչքարերը, դրամները, վիմական արձանագրությունները:

Վահանավանքի, նրա հուշարձանախմբերի մասին խոսելիս առաջնահերթ պետք է նշեմ Ս. Գրիգոր Լուսավորիչ եկեղեցու մասին: Եկեղեցու կառուցումն ավարտվել է 911թ.: Ս. Գրիգոր Լուսավորիչը հատակագծում խաչաձև հորինվածքով, կենտրոնագմբեթ կառույց է, որի ավագ խորանի երկու կողմերում՝ հյուսիսից և հարավից, կան մեկական ավանդատներ՝ պատրահաններով: Ավագ խորանի բեմը սկզբնապես եղել է արևմուտք՝ մարմարացված կրաքարի կարմրավուն սալաքարերով: Լավ պահպանվել են կենտրոնական խորանի սրբատաշ որմնակամարի կլոր սյունաքարը և եկեղեցու սալահատակը: Ս. Գրիգոր Լուսավորիչն ունի երկու մուտք, որոնցից մեկը գնում է դեպի արևմտյան գավի, իսկ մյուսը դուրս է գալիս հարավային սյունասրահ: Հարավային մուտքի ճակատակալ քարին փորագրված են 12 համաչափ գծախաչեր, որոնք խորհրդանշում են Քրիստոսի 12 աշակերտներին: Եկեղեցու ներսում թաղումներ չեն եղել, ինչը չի կարելի ասել գավթի կամ սյունասրահի մասին [1, էջ20]:

1968թ. ամռանը Վահանավանքի սյունազարդ ու կամարածածկ մեծ տաճարի բակում դարերի ընթացքում գոյացած 3 մ բարձրությամբ հողաթումբը հեռացնելուց հետո բացվեցին միջնադարյան 2 թաղումներ, որոնցից մեկի տակ՝ բրոնզեդարյան քարարկղային դամբարան: Այն բացվեց միջնադարյան թաղումից 30 սմ ցած: Հին դամբարանի ծածկաքարերից մեկ նոր թաղում կատարելու համար՝ գերեզմանափոս փորելու ընթացքում նկատել և տեղաշարժվել էր, այսինքն՝ տեսել էին հին դամբարանի պարունակությունը և թաղման ձևը: Բայց բացված ծածկաքարերի վրա հող են լցրել և ծածկել, հետո թաղումը կատարել: Դա երևաց այն բանից, որ լցված հողի մեջ կային միջնադարյան կավամանների բեկորներ և այլ արտեֆակտներ: Սա չափազանց հետաքրքիր երևույթ է, որն հանդիպում է առաջին անգամ: Իհարկե, առաջներում եղել է մեկ դամբարանում կրկնակի թաղման բնույթ, որը կատարվել է հենց այդ ժամանակի սահմաններում, սակայն նախորդ դամբարաններում հազարամյակներ հետո թաղում չի կատարվել: Բնականաբար մեր հոգևոր հայրերը

գիտակցել են, որ նախկին թաղվածն իրենց ցեղակից կամ ազգակից մարդ էր, և հետո գերեզմանի վրա կատարել նոր թաղում, այլապես այլազգի կամ այլադավան մարդու գերեզմանին քրիստոնյա հայի թաղում չէին կատարի: Հին դամբարանի գերեզմանախցում, թաղված էր 1 մարդ՝ կծկված, ձախ պառկած, ձեռքերը դեմքի ուղղությամբ, դեմքով դեպի արևելք, որի շուրջ դրված էր 12 կավաման, միջին մեծության, բաժակաձև, տափականոթներ՝ նման Սյունիքի տարածաշրջանի՝Շիկահողի, Սրաշենի, Առաջաձորի և այլ վայրերից հայտնաբերվածներին: Դրանք ուշ բրոնզեդարյան խեցեղենին են նման, որոնց նախատիպերը հայտնաբերվել են նաև Տաթևի Քրիանոց վայրից:

Վահանավանքի հին դամբարանի նյութերը վկայում են հայ ժողովրդի տեղաբնակ լինելու փաստը: Վանքից հարավ-արևելք կա բրոնզեդարյա ընդարձակ դամբարանադաշտ, որտեղից Վահանավանք տանող ճանապարհի լայնացման աշխատանքներ կատարելու ժամանակ պատահականորեն գտնվել է բրոնզե դուռ պատրաստելու կավե կաղապար: Վահանավանքից հյուսիս՝մոտ 300 մ հեռավորության վրա, 80-ական թվականներին՝ շինարարական աշխատանքներ կատարելու ժամանակ բացվել են հին դամբարաններ, բայց ցավոք ավերվել են: Հնագետ Հուսիկ Մելքոնյանի ստուգողական պեղումների շնորհիվ հայտնաբերվել է նաև նոր դամբարանադաշտ: Դամբարանները ծավալով փոքր են, հազարաշեն կամ ղուբաշեն ծածկով: Հայտնաբերված կավամանների մեջ կա 27 կավաման, 3 բրոնզե դաշունաձև շեղբ, 9 հատ բարակ լարից պատրաստված օղակ, 2 մատանի, բևեռաձև 1 մեծ կոճակ, ոսկրե սանրատամ տեսքի առարկաներ, խխունջի խեցուց պատրաստված կախազարդ, ագաթից, դաշտային կրից ու ոսկրից ուլունքներ: Կավամանները ունեն նուրբ կառուցվածք, պատրաստված են ձեռքով, բացի այդ կան լայն ու տափակ կանթերով կավամաններ՝ նման Վահանավանքից հայտնաբերվածներին: Թերևս այս դամբարանադաշտից հայտնաբերված ամենաուշագրավ իրերը բրոնզե դաշույնաձև շեղբերն են: Դրանց հետ հայտնաբերված բրոնզե իրերը՝ օղերը, բարակ են, օգտագործվել են կոտրվածքները կապելու, ամրացնելու համար: Հետաքրքիր է, որ վիրահատման մետաղե գործիքներ առաջին անգամ հայտնաբերվել են Վահանավանքից: Այն հաստատել է ակադեմիկոս Սերգեյ Հարությունյանը[3, էջ17]:

Վահանավանքում հայտնաբերված խաչքարերից առավել նշանավոր են 2-ը՝ Շահանդուխտի մոր՝ Սոփիի հիշատակին 1081թ. կանգնեցրած խաչքարը, 1046թ. կերտված եզակի կոթողը՝ արֆայաձև խաչը: Դեկորատիվ արվեստի տեսանկյունից առանձնանում է «Շահանդուխտի խաչքարը», որն ամբողջապես պատված է հյուսկեն զարդանախշերով: Խաչքարի հորիզոնական խաչաթևերից վեր՝ աջ և ձախ կողմերից, նռան քանդակներ են, ներքևում՝ հավերժության նշանն է, երկրաչափական զույգ գծազարդերով: Ներքևի խաչաթևը ընդգծող բուսական պատկերաքանդակի վերնամասի կենտրոնում թվականն է՝: ՇԼ: (1081թ.): Եզրերին շրջանաձև փորագրված է Սոփիի և նրա 3 զավակների՝ Շահանդուխտի՝ Սյունյաց թագուհու, նրա քույր Կատայի և Սենեքերիմ թագավորի անունների արձանագրությունը: Դեկորատիվ արվեստն առավել ցուցադրական է սպիտակ կրաքարե խաչքարերի բեկորների վրա: Առանձնապես տպավորիչ են նրբագեղ տերևների, հասկի ցողունների, փնջերի, խաղողի ողկույզների, ինչպես նաև նռան նախշաքանդակները: Այս բոլորը կատարված է հմտորեն և համբերությամբ, բայց ճաշակի տեր քարագործ վարպետների ձեռքով [1,էջ 80] :

Հայաստանի հարավային շրջան Սյունիքի մարզը հայտնի է իր դրամական գտածոների բազմազանությամբ և բազմաքանակությամբ: Այդ տարածաշրջանից հայտնաբերված դրամներն ընդգրկում են պատմական ամենատարբեր շրջաններ. անտիկ, միջնադար, նոր

շրջան: Դա բացատրվում է նրանով, որ առևտրական կարևոր ճանապարհներն անցնում էին Սյունիքով՝հանդիսանալով կապող օղակ՝ Արևելք-Արևմուտք տնտեսական հարաբերություններում: Հայաստանը, հատկապես Սյունիքը, Իրանի անմիջական հարևանն էր, որի հետ դարերի ընթացքում ձևավորվել են որոշակի պատմամշակութային առնչություններ: Հայ բնակչությունը երբեք իր համար չի ընտրել քարավանները թալանելու միջոցով ապրուստ հայթհայթելու եղանակը: Արաբական աղբյուրները, քրդերին համարում էին «մեծ գլխացավանք», որոնք ավազակությունը դարձրել էին զբաղմունք: Վահանավանքից հայտնաբերված դրամները բնորոշ են միջնադարյան Հայաստանի դրամաշրջանառությանը: Դրամների առաջին խումբը արաբական խալիֆայության Աբբասյան ժամանակաշրջանի հատած դիրհեմներ են, որոնք շրջանառվել են10-11-րդ դդ.: Իսկ մյուս խումբը Իկոնիայի(Ռումի) սելջուկների և մոնղոլական Հուլավյան արծաթե դիրհեմներն են, որը բնորոշ է XII դարի Հայաստանին:

Հայաստանը միանգամից չընդգրկվեց Աբբասյանների դրամական տնտեսության և շրջանառության ոլորտում: Դրա մասին վկայում է այն փաստը, որ Աբբասյան առաջին խալիֆի օրոք՝ Ալ-Աբասի, Արմինա նահանգի որևէ դրամատանը դրամներ չեն թողարկվել: Հայաստանի տարածքից գտնված դրամական գյուտերի և գանձերի մեջ բացակայում են Ալ-Աբասի ժամանակաշրջանի դրամները: Այս առումով բացառիկ արժեք են ներկայացնում 1965թ. Սյունիքի մարզի Արծվանիկ գյուղից հայտնաբերված Ալ-Աբասի ոսկե դինարը:

Հայաստանի տարածքից հայտնաբերված մոնղոլական և սելջուկյան դրամների հայտնաբերումը, ցույց է տալիս, որ չնայած Իկոնիայի սուլթանները ճանաչեցին մոնղոլների գերիշխանությունը,այնուամենայնիվ, նրանց դրամները դուրս չեկան շրջանառությունից: Նրանց դրամներն աչքի են ընկնում իրենց որակով արծաթի բարձր պարունակություն ունեն: Վահանավանքից հայտնաբերված սելջուկյան դրամը հատվել է Իլ ադ դին Քայ-Քաուս II, Ռուքն ադ դին Կըլըչ-Արսլան IV, Ալադ-դին Քայ-Քոբադ2-րդ-ի օրոք Սվասում: Մոնղոլական հուլավյան դրամները երկլեզվյան են՝արաբերեն և ույղուրերեն: Վահանավանքից գտնված ամենավաղ դրամներն այսպես կոչված «անանուն» դիրհեմներն են, որոնց վրա անուն գրված չէ, այլ միայն տիտղոս՝ մեծ կան: Հուլավյան մյուս դրամների վրա կա խալիֆի պատկեր և արաբերեն գրություն՝ քրիստոնեական բովանդակություն՝ Հանուն հոր և որդու և սուրբ հոգու: Նման դրամներ հատվում էին նաև Վրաստանում տեղի քրիստոնյա բնակչությանը սիրաշահելու համար [3, էջ 17] :

Վահանավանքի վիմագրերի նկատմամբ առաջին հետաքրքրությունը դրսևորել է Ատրպատականի հայոց թեմի առաջնորդ, ազգային հասարակական գործիչ, հայոց եկեղեցական իրավունքի մասնագետ Ներսես Մելիք-Թանգյանը: Նա Թիֆլիսում լույս տեսնող «Նոր դար» օրաթերթում հրապարակել է Վահանավաքի 1086թ. շինարարական վկայագիրը, նաև ակնարկել Աղվանից Ստեփանոս կաթողիկոսի արձանագրության մասին: Վահանավանքի վիմագրերը գիտական պահանջներին համապատասխան հավաքել ու հրատարակել է Սեդրակ Բարխուդարյանը: Նա «Դիվան հայ վիմագրության» մատենաշարի II պրակում Վահանավանքից զետեղել է 5 արձանագրություն:

Ավելի քան չորս տասնամյակ տևած պեղումների արդյունքում հայտնաբերվեցին բազմաթիվ արձանագրություններ, որոնք հարստացրին Վահանավանքի վիմագրական ժառանգությունը՝ քարակերտ բնագրերի թիվը հասցնելով 77-ի: Նորահայտ վիմագրերը շրջանառության մեջ են դրվել Գր. Գրիգորյանի կողմից: Դրանք կարևորագույն սկզբնաղբյուրներ են հանդիսանում ոչ միայն հայ ժողովրդի միջնադարյան անցյալի, Բաղաց թագավորության, Սյունիք-Արցախ առնչությունների, այլև Հայաստանյաց առաքելական

եկեղեցու պատմության համար: Այդ արձանագրություններից երևում է Սյունյաց աստվածասեր արքաների ու բարեպաշտ թագուհիների եկեղեցաշեն գործունեությունը: Վահանավանքի արձանագրությունները հնարավորություն են տալիս կազմել տեղի սուրբ ուխտի վանահայրերի մոտավոր ժամանակագրությունը, հիշատակված կրոնավորների, երեցների, քահանաների անուններն ու թվերը [3, էջ 18] :

Ինչպես Արցախում Տիգրանակերտն է համարվում Արցախի սրտերից, այնպես էլ Վահանավանքը՝ Սյունիքի համար: Տիգրանակերտի, Վահանավանքի և մնացած պատմամշակութային արժեքների շնորհիվ է, որ կարողանում ենք ադրբեջանցիների առաջ մեծ խոչընդոտներ դնել իրենց կողմից պատմության կեղծման մեջ: Հայագիտական ուսումնասիրություններում մենք ոչ միայն ունենք փաստեր, ապացույցներ, այլև ունենք այդ պատմամշակույթին հուշարձանները, որոնք մեր ուժ ու կորովներից մեկն են: Ադրբեջանագետները շատ լավ են հասկանում, որ չեն կարող փոխել վիմական արձանագրությունը կամ դրամները և մնացած այլ փատեր, որոնք ապացույց են հանդիսանում: Նրանք շարունակում են պնդել, որ Արցախն ու Զանգեզուրը իրենցն են, բայց քանի որ չունեն ոչ մի ապացույց, նրանց ամբողջ քայլերը զուր են ու անտեղի: Իրենց դասագրքերում կարող են փոխել ու հնարել պատմությունը, բայց այս ժառանգություններում առկա փաստերի շնորհիվ է, որ համայն աշխարհի առաջ չեն կարող հանդես գալ իրենց սուտ պատմությամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Գրիգորյան Գ., Վահանավանք, Երևան, 2007:
2. Գրիգորյան Գր, Հախվերդյան Ս.,Սյունիքի պատմություն, Երևան, 2001:
3. Սյունաց երկիր, №30, 2012թ:
4. Օրբելյան Ս., Պատմություն տանն Սիսական, Երևան, 1986:

ՀՏԴ 941(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Մերի Կարապետյան
ԳՊՀ Հումանիտար մասնագիտությունների ֆակուլտետ
Պատմություն բաժին
3-րդ կուրսի ուսանողուհի
Գիտական ղեկավար՝ ԳՊՀ դասախոս,
պ.գ.դ., պրոֆեսոր Համլետ Հարությունյան

ԿՐԹԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ԿՅԱՆՔԸ ՆՈՐ ԲԱՅԱԶԵՏԻ ԳԱՎԱՌՈՒՄ 1920-1930ԹԹ.

Բանալի բառեր՝ *Սարգիս Կասյան, Լուսավորության ժողովրդական կոմիսարիատ, Նոր Բայազետ, Փետրվարյան ապստամբություն, Սարգիս Բոշնաղյան, խորհրդային իշխանություններ, ժողովրդական վիճակագրություն, սոցիալական վիճակ, կրթամշակութային կյանք. Հայհեղկոմ:*

Սույն հոդվածում ներկայացված են Նոր Բայազետի գավառում 1920-1930թթ. ընթացքում կրթամշակութային կյանքում արձանագրված դրական և բացասական տեղաշարժերը: 1920-ական թվականներին Նոր Բայազետի գավառը կրթական ցածր մակարդակի վրա էր գտնվում: Գավառում կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվեցին միջոցառումներ, ինչի արդյունքում Հանրապետությունում և նաև Նոր Բայազետի գավառում առաջընթաց է նկատվում: Նոր Բայազետի գավառում 1920-1930 թթ.ընթացքում զարգացում ապրեց և նոր հունի մեջ մտավ թատերական կյանքը: Վերջինիս համահունչ զարգացում էր ապրում նաև կինոն:

Мери Карапетян

ПРОВИНЦИЯ НОВЫЙ БАЯЗЕТ. КУЛЬТУРНО – ОБРАЗОВАТЕЛЬНАЯ ЖИЗНЬ В 1920-1930гг.

Ключевые слова: *Саргис Касьян, Нарком просвещения, Нор Баязет, февральское восстание, Саргис Бошнагян, советская власть, народная статистика, социальное положение, культурно- образовательная жизнь, Армянский революционный комитет.*

В статье представлена позитивная и негативная динамика в культурно-образовательной жизни провинции Нор Баязет в период с 1920 по 1930 гг., где образование находилось на крайне низком уровне.

С целью его повышения были приняты меры, в результате которых был достигнут определенный прогресс в области образования. новую струю получила театральная жизнь. В соответствии с последним получило свое развитие также кино.

Թեման կարևոր է և խիստ արդիական, քանի որ բացահայտում է Նոր Բայազետի մշակութային, կրթական իրավիճակը խորհրդային իշխանության հաստատման և հետագա տարիներին:

1920 թ. Հայաստանում խորհրդային իշխանության հաստատումով նոր փուլ էր սկսվում դարավոր հայ մշակույթի զարգացման համար: Խորհրդայնացումից անմիջապես հետո իշխանությունները երկրում իրականացրին մշակութային շինարարություն, մի շարք միջոցառումներ ձեռնարկեցին կրթական համակարգը բարեփոխելու և այն արմատապես վերակառուցելու ուղղությամբ: Կրթական համակարգը վերակառուցելով և այն ավելի կատարյալ դարձնելով՝ իշխանությունները հետապնդում էին երեք նպատակ. առաջին՝ մեծահասակ բնակչության մեջ վերացնել անգրագիտությունը, երկրորդը՝ կրթել նոր սերնդին, երրորդ՝ հասարակությանը դաստիարակել

կոմունիստական գաղափարներով [1]:

1920 թ. դեկտեմբերի 17-ին Հեղկոմի նախագահ Սարգիս Կասյանի և լուսժողկոմ Աշոտ Հովհաննիսյանի հավանությամբ ընդունվում է մի դեկրետ, ըստ որի՝ պետականացվում էին կուլտուր-կրթական հիմնարկությունները (դպրոցները, հնագիտական և ազգագրական թանգարաններ, մատենադարաններ ու տպարաններ), որոնք մինչ այդ պատկանում էին հոգևոր հաստատություններին: Երկրում պետական լեզու էր ճանաչվելու հայերենը, արգելվելու էր հոգևոր առարկաների դասավանդումը , կրոնական բնույթի ծեսեր անցկացնելը, վերացվելու էին մասնավոր դպրոցները և դպրոցական հին պաշտոնների փոխարենսն ստեղծվելու էին ժողկրթբաժիններին ենթակա դպրոցական մշտական խորհուրդներ [2]:

Հանրապետությունում դպրոցական աշխատանքները կազմակերպելու և վերահսկելու նպատակով 1920թ. դեկտեմբերի 12-ին ստեղծվում է Լուսավորության ժողովրդական կոմիսարիատը: Հայհեղկոմը 1921թ. փետրվարին ընդունում է <<Միասնական աշխատանքային դպրոցի կանոնադրության>> մասին որոշումը, որի համաձայն՝վերացվում է դպրոցների բաժանումը տարրականի ու միջնակարգի, փոխարենը ստեղծվում են <<Ա>> և <<Բ>> աստիճանի դպրոցներ [3] :

1920-ական թվականներին Նոր Բայազետի գավառը կրթական ցածր մակարդակի վրա էր գտնվում: Գավառում կրթական մակարդակը բարձրացնելու նպատակով ձեռնարկվեցին միջոցառումեր. 1921թ. հունվարին ստեղծվեց հեղկոմի լուսավորության բաժանմունքը, որի կառավարիչ նշանակվեց Սարգիս Բոշնաղյանը: 1921թ. փետրվարին Նոր Բայազետի գավառում գործում էին 40 դպրոցներ, որոնցից 39-ը՝ <<Ա>> աստիճանի, իսկ 1-ը՝ <<Բ>>աստիճանի (դպրոցը համալրված էր շուրջ 3453 աշակերտներով):

1921թ. փետրվարի 13-ին սկիզբ առած հակախորհրդային շարժումը՝ Փետրվարյան ապստամբությունը, ճնշվեց իշխանությունների կողմից, և երկրում Խորհրդային իշխանությաունը վերահաստատվեց: Այդ ժամանակամիջոցում դպրոցների մեծ մասը վերածվել էր զորանոցների, իսկ դպրոցական գույքը հափշտակվել էր կամ օգտագործվել էր որպես վառելափայտ [4] : Երկրում իրավիճակը վերահսկելու նպատակով անհրաժեշտ էր որոշակի միջոցառումներ ձեռնարկել, քանի որ իշխանությունները հասկանում էին, որ նման պայմաններում կրթությունը զարգանալ չի կարող, և անհրաժեշտ է իրականացնել օրենսդրական ու գործնական մի շարք բարելավումներ: 1921թ. հոկտեմբերին ՀԽՍՀ ժողկոմխորհը ընդունեց մի դեկրետ, ըստ որի՝ <<Քաղաքացիական և զինվորական կազմակերպություններից պահանջվում էր ազատել զբաղեցրած դպրոցական շենքերը՝ դրանք հանձնելով լուսժողկոմատի տնօրինությանը>> [5] :

Տեղին է նշել , որ երկիրը գտնվում էր շատ ծանր սոցիալ-տնտեսական վիճակում և չունենալով համապատասխան միջոցներ՝ իշխանությունները չէին կարող ֆինանսավորել մշակութային օջախները, ինչի արդյունքում գյուղական համայնքներում գյուղացիները ինքնահոժար կերպով միջոցներ էին տրամադրում դպրոցներին , որպեսզի համայնքում զարգանա կրթամշակութային կյանքը: Կարելի է ասել՝ նույն պատկերն էր և քաղաքային դպրոցներում, քանի որ դպրոցականները պարտավոր էին ուսման վարձ վճարել:

Հանրապետությունում և նաև Նոր Բայազետի գավառում առաջընթաց է նկատվում կրթության ոլորտում: Կրթամշակութային կյանքի զարգացմանը նպաստող մի շարք պայմաններ կային երկրում մեծ թափ ստացավ դպրոցաշինությունը , ինչը , որպես այդպիսին, առաջնահերթ լուծում պահանջող հարցերից մեկն էր, մեծ նշանակություն ունեցան նաև, դպրոցներում որակյալ մասնագետների առկայությունը, դպրոցական

ուսումնական ծրագրերի ու առարկաների վերափոխումը և համապատասխանեցումը նոր ժամանակների ոգուն և այլն:

Երկրում կրթամշակութային կյանքի առաջընթացի մասին է վկայում այն փաստը, որ 1924թ. օգոստոսի 26-ին Կ. Ստեփանյանը Նոր Բայազետի գավառի գործադիր կոմիտեի նիստում նշում է, որ 1923-1924 թթ. ուսումնական տարվա ընթացքում գավառում գործել է 50 դպրոց , նախորդ ուսումնական տարվա 41-ի համեմատությամբ [6]:

Սակայն մշակույթի զարգացումը ուղեկցվում էր նաև անդառնալի կորուստներով: Հայ ժողովուրդը տվյալ ժամանակահատվածում բազմաբնույթ արհավիրքների բախվեց , ինչի արդյունքն էլ եղավ ժողովրդի ծանր սոցիալական վիճակը, նման պայմաններում բոլոր երեխաները չէ , որ կարող էին օգտվել կրթություն ստանալու իրավունքից , քանի որ ծնողները չունեին համապատասխան միջոցներ երեխային ուսման տալու համար:

1923-1924 թթ. Նոր Բայազետի գավառում բնակվող մոտ 15936 երեխաներից դպրոց հաճախում էին 3863-ը (պետք է նշել , որ դպրոց չհաճախող երեխաների թիվը իրականում ավելի մեծ էր): [7]

1924-1925թթ. Նոր Բայազետի գավառի կրթամշակութային կյանքում որոշակի տեղաշարժեր արձանագրվեցին: Հանրապետության տարածքում ընդլայնվեց դպրոցական ցանցը, և ստեղծվեց կրթության լայն համակարգ (Նոր Բայազետում դպրոցներն ավելացան ևս 6-ով) : Ըստ վիճակագրական տվյալների՝ գավառում գործում էր 62 դպրոց, որից 56-ը՝ առաջին աստիճանի ,1 երկրորդ աստիճանի , 1՝ գյուղատնտեսական, 2՝ մանկապարտեզ [8]: Տեղին է նշել,որ գավառում գործում էին երկու տիպի դպրոցներ ՝ պետական և մասնավոր: Վերջինիս դեպքում դպրոցները բոլորովին պիտանի չէին օգտագործման համար, գրեթե նույն պատկերն էր նաև պետական դպրոցներում : Այսինքն, անհրաժեշտություն էր դարձել դպրոցների վերանորոգումը:

Հանրապետությունում կային կրթամշակութային կյանքի զարգացմանը խոչնդոտող, մի շարք հանգամանքներ. դրանցից էին ՝ դպրոցականների անապահովվածությունը և գրենական պիտույքների բացակայությունը, դպրոցի ներսում նյութատեխնիկական կահավորանքի բացակայությունը: Գավառում դպրոցների նման անմխիթար վիճակը բացասական ազդեցություն էր ունենում կրթության որակի վրա :

Սակայն, կրթական համակարգի զարգացման ճանապարհին ամենից լուրջ խնդիրներից մեկը դպրոցում որակյալ մասնագետների բացակայությունն էր: 1924-1925 ուսումնական տարում դպրոցները համալրված էին հին ու ցածրորակ մասնագետներով , 141 ուսուցիչներից միայն 5-ը ուներ բարձրագույն կամ թերի բարձրագույն կրթություն, 60-ը միջնակարգ, 76-ը՝ միջնակարգից ցածր [9]: Կրթության որակը որոշ չափով բարձրացնելու նպատակով իշխանությունները ձեռնարկեցին որոշակի միջոցառումներ, կազմակերպվելու էին դասընթացներ դպրոցում աշխատող մանկվարժական կադրերի համար:

Հատկանշական է, որ 1927-1929 ուսումնական տարիների ընթացքում Հանրապետության ողջ տարածքում և նաև Նոր Բայազետի գավառում կրթամշակութային կյանքում արձանագրվեցին դրական տեղաշարժեր ինչի արդյունքում էլ կրթական համակարգը որակական առումով նոր աստիճանի վրա բարձրացավ: Երկրում ընդլայնվեցին դպրոցական ցանցերը և նաև վերանորոգվեցին հները: Տեղին է նշել, որ դպրոցաշինության գործում իրենց ավանդն են ունեցել գյուղական համայնքները և նաև անհատ բարերարները: Դպրոցները համալրվում են հիմնականում միջին որակավորում ունեցող մասնագետներով, նյութատեխնիկական միջոցներով, մեծ քանակներով տպագրվում են դպրոցականների համար նախատեսված դասագրքերը: Այս ամենը ի վերջո հանգեցնում

է նրան, որ 1928 թ. ՀԽՍՀ ժողկոմի համաձայնությամբ լուսժողկոմատը մշակում է Հայատանում ընդհանուր պարտադիր ուսուցում անցնելու հեռանկարային ծրագիրը , որը պետք է կենսագործվեր 1930-1931 թթ. ուսումնական տարվանից [10]: Չնայած իրենց լուծումը ստացան դպրոցի զարգացմանը խոչնդոտող մի շարք հարցեր , սակայն դեռ կային բազմաբնույթ խնդիրներ , որոնք հրատապ լուծում էին պահանջում: Այդպիսի խնդիրներից էին ՝ դպրոցում բարձր որակավորում ունեցող մասնագետների պակասը, դպրոցում անհրաժեշտ քանակությամբ դասագրքերի պակասը, դպրոցական շենքերը, որոնք չէին համապատասխանում տվյալ ժամանակաշրջանի օր օրի աճող պահանջներին :

Խորհրդային իշխանությունները գիտակցում էին, որ կրթամշակութային կյանքը բարելավելու և նոր մակարդակի վրա բարձրացնելու համար առաջին հերթին անհրաժեշտ է մեծահասակ բնակչության մեջ վերացնել անգրագիտությունը: Ըստ 1922թ. ժողովրդական վիճակագրության՝ պարզ դարձավ, որ ՀԽՍՀ բնակչության կազմում անգրագետների տեսակարար կշիռը 83,1 % էր [11]: Նոր Բայազետի գավառում այս ցուցանիշը հասնում էր[12] :

1921 թ. սեպտեմբերի 21-ին Հանրապետության ժողկոմխորը ընդունեց դեկրետ՝ ՀԽՍՀ-ում անգրագիտությունը վերացնելու մասին: [12] Դեկրետը բաղկացած էր մի շարք կետերից, առաջին հերթին՝ բնակչության մեջ 15-50 տարեկան բոլոր անգրագետ ու կիսագրագետ քաղաքացիները պետք է հատուկ դպրոոում գրագիտություն սովորեին, երկրորդ ՝քաղլուսվարը և նրա տեղական մարմինները իրավունք էին ստանում հրավիրել հանձնաժողով, որի անմիջական ղեկավարության ներքո պետք է ստեղծվեին հատուկ կենտրոններ (լիկկյաններ), որոնց նպատակը պետք է լիներ հատուկ դասընթացներ կազմակերպել հասարակության մեջ՝ անգրագիտությունը վերացնելու նպատակով: [14] Անգրագիտության վերացման նպատակով իշխանությունների կողմից իրագործված միջոցառումերն, ունեցան դրական ազդեցություն երկրի կրթական համակարգի զարգացման վրա:

1926 թ. մարդահամարների տվյալներով՝ Նոր Բայազետի գավառում մեծահասակ բնակչության մեջ գրագետների թիվը հասնում էր 14141-ի, այսինքն ընդհանուր բնակչության 13,92%-ը: [15]

Հանրապետությունում 1929թ. ամռանը ստեղծվում է արտակարգ հանձնաժողով, որը պետք է լուրջ քայլեր ձեռնարկեր ՝ բնակչության մեջ անգրագիտության վերացման և գրագիտության բարձրացման ուղղությամբ : [16]

Չնայած գործադրված ջանքերին, պետք է նշել, որ Նոր Բայազետի գավառում 1920-1930 թթ.անգրագիտության վերացման հարցը ամբողջությամբ չլուծվեց:

Նոր Բայազետի գավառում 1920-1930 թթ.ընթացքում զարգացում ապրեց և նոր հունի մեջ մտավ թատերական կյանքը: Հատկանշական է , որ թատերական արվեստի զարգացման գործում մեծ ավանդ ունեցան տեղական իշխանությունները և անհատ բարերարները: Նոր Բայազետի գավառում զարգացման առումով իրար համընթաց քայլում էին թատերական արվեստը և կինոն: 1929թ. Նոր Բայազետի գավառում գործում էր երեք շրջիկ և մեկ ստացիոնար կինո:[17] Խորհրդային իշխանությունները վարում էին իրենց շահերից բխող քաղաքականություն, ինչն էլ, բնականաբար, իր ազդեցությունն էր ունենում թատրոնի և կինոյի վրա:

Այսպիսով, Նոր Բայազետի գավառում գործում էր 6 գրադարան, յուրաքանչյուր շրջանում մեկը, սակայն այս ամենով հանդերձ բնակչության մեջ գրագիտությունը ցածր մակարդակի վրա էր գտնվում:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հարությունյան Հ. Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.,2015. էջ 211։
2. ՀԽՍՀ դեկրետների և հրամանների ժողովածու, (1920թ.նոյեմբերի թչ-1921թ. փետրվարի 18), Էջմիածին1921 էջ 7, 16-17,43։
3. <<Հայոց պատմություն>>, հ. IV, գիրք առաջին , էջ 659։
4. Նույն տեղում, էջ 659։
5. Նույն տեղում, էջ 659-660։
6. Հարությունյան Հ., Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ.,2015. էջ 216։
7. Նույն տեղում, էջ 216։
8. Նույն տեղում, էջ 217-218։
9. Հարությունյան Հ. , Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ., 2015. էջ 220-221։
10. Հայոց պատմություն, հ. IV, գիրք առաջին , էջ 662։
11. Ղազախեցյան Վ ., Սովետական Հայաստանի գյուղացիության պատմությունը, էջ 325, Հայոց պատմություն, հ.IV գիրք առաջին էջ. 663։
12. Հարությունյան Հ. ,Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ., 2015. էջ 234։
13. ՀԽՍՀ դեկրետների և որոշումների հավաքածու, Էջմիածին, 1921, էջ 63։
14. նույն տեղում ։
15. Հարությունյան Հ.,Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ., 2015. էջ 239։
16. Հայոց պատմություն, հ.IV գիրք առաջին էջ. 664։
17. Հարությունյան Հ.,Նոր Բայազետի գավառը 1920-1930թթ., 2015. էջ 248։

ՀՏԴ 94(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Կոստանդյան Դավիթ
ՎՊՀ Պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Պատմություն» մագիստրատուրա II կուրս
Գիտական ղեկավար՝պ.գ.դ. ,պրոֆեսոր Ֆ.Մովսիսյան

ՎՈՒԴՐՈ ՎԻԼՍՈՆԻ «14 ԿԵՏԵՐԸ» ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԸ

Բանալի բառեր՝ *Վուդրո Վիլսոն, Ազգերի լիգա, դե ֆակտո, ԱՄՆ, Սևր, Վերսալ-Վաշինգտոնյան համակարգ, Հայաստան*

ԱՄՆ-ի նախագահ Վուդրո Վիլսոնի կողմից առաջ քաշված «14 կետերը» իրականում աշխարհը նորովի վերաբաժանելու, ԱՄՆ-ի ազգեցիկ դիրքը ամրապնդելու նշանակություն ունեին: Պատահական չէ, որ այդ դրույթներից միայն մեկը՝ Ազգերի լիգայի ստեղծումը, դարձավ իրականություն, քանզի մնացած բոլոր դրույթները հակասում էին Անգլիայի և Ֆրանսիայի մեծապետական շահերին: Իսկ իբր թե այդքան մտահոգիչ թվացող Հայաստանի հովանավորչության ստանձնումը իրականում նպատակ էր հետապնդում սպառնալ Թուրքիային՝ Մեծ Հայաստան ստեղծելով:

Давид Костандян

“14 ПУНКТОВ” ВУДРО ВИЛЬСОНА И АРМЕНИЯ

Ключевые слова: *Вудро Вильсон, Лига Наций, де факто, США, Севр, Версальско-Вашингтонская система, Армения*

«14 пунктов», выдвинутые президентом США Вудро Вильсоном, касались на самом деле пересмотра установившегося миропорядка и укрепления националистических позиций США. Не случайно, что только одно из этих положений, создание Лиги Наций, осуществилось, поскольку все другие положения противоречили суверенным интересам Англии и Франции. А, казалось бы, тревога за судьбу Армении и создание Великой Армениина самом деле имело целью угрожать Турции.

Ռուսաստանում Լենինի իշխանության գալուց հետո պարզ դարձավ, որ ԱՄՆ-ի կառավարության փորձերը՝ վարկերի և սիրաշահելու միջոցով ռուսական բանակին ու ժողովրդին պատերազմի մեջ պահելուն ուղղված, իրենց նպատակին չծառայեցին:Նոր կառավարությունը իր ձեռքը վերցրեց իշխանությունը և Անտանտի իմպերիալիստական երկրների ու օվկիանոսից այն կողմ գտնվող նրանց դաշնակցի ձեռքին եղած խաղաքարտերը:Այնուամենայնիվ, 1917թ. նոլեմբերի 8-ին Վաշինգտոն հասավ հաղորդագրություն, ըստ որի՝ Խորհուրդների համառուսաստանյան 2-րդ համագումարը առաջարկում է բոլոր կռվող ազգերին և նրանց կառավարություններին, սկսել բանակցություններ՝ շտապ և համընդհանուր խաղաղություն հաստատելու համար: Բոլշևիկյան կառավարությունն առաջարկեց հայտարարել 3-ամսյա զինադադար,որի ընթացքում էլ կանցկացվեին անհրաժեշտ բանակցություններ: Եթե դաշնակիցները չմիանային Ռուսաստանին, ապա նա միակողմանի կարգով պայմանագիր կկնքի: Միաժամանակ Խորհրդային կառավարությունը պաշտոնապես և հրապարակայնորեն հրաժարվեց նախկին կառավարության բոլոր գաղտնի համաձայնություններից, որոնք

բովանդակում էին այլ տարածքների նկատմամբ հավակնություններ: Բոլշևիկները հարված հասցրին բաց դիվանագիտությամբ. նրանք խոստացան հրապարակել բոլոր գաղտնի համաձայնությունները, որոնց նախկինում մասնակցել էր Ռուսաստանը:

Դա պատմական այն ժամանակաշրջանն էր, երբ առաջին աշխարհամարտի և դրան հաջորդած պետությունների վերաձևումների ընթացքում կործանվում էին կայսրություններ, պատմական ասպարեզ էին իջնում նորանոր երկրներ: Անուրանալի է ԱՄՆ նախագահ, իրավագիտության դոկտոր Վուդրո Վիլսոնի դերը ազգերի ինքնորոշման իրավունքի քաղաքական հասկացության առաջադրման, մշակման և աներկբա սատարման և Ազգերի լիգայի, և դրա իրավահաջորդը հանդիսացող ՄԱԿ-ի ստեղծման գործում [1,63]:

1918թ հունվարի 8-ին Վիլսոնը ուղերձով դիմեց ԱՄՆ Կոնգրեսին, որում նա արդարացրեց Բրեստ-Լիտովսկում ռուսական ներկայացուցիչների որոշումը՝ ընդհատել բանակցությունները,քանի որ ռուսները չէին կարող համաձայնվել գերմանացիների առաջ քաշած տարածքային ձգտումների հետ: Այդ ուղերձում էլ ձևավորված էր նախագահի «խաղաղության ծրագիրը »՝վերնագրված «Պատերազմի նպատակները և խաղաղության պայմանները »,որը ավելի հայտնի դարձավ Վիլսոնի «14 կետերը » անունով:Այս ամենի կողքին պետք է նշել, որ այդ ուղերձի համաժողովրդականությունը փորձ էր խլելու բոլշևիկներից խաղաղության նախաձեռնությունը և չթողնել նրանց դառնալ Եվրոպայում արդարացի խաղաղության և դեմոկրատական վերափոխման ակտիվ շարժման արտահայտողը:

Վիլսոնի կողմից այդպես հպարտ հայտարարված «14 կետեր»-ից միայն համեմատաբար ձեռնտուներն են իրականանում կամ համենայն դեպս գոնե նրանք,որոնք հակառակ չէին Անգլիայի և Ֆրանսիայի շահերին:

Վիլսոնի « 14 կետեր »-ի էությունը հետևյալն էր.

1-ին կետով Վիլսոնը առաջարկում է արգելք դնել գաղտնի դիվանագիտության վրա՝ իր բոլոր դրսևորումներով:Այդ թվում նա առաջարկում է արգելել դաշնակիցների թիկունքում յուրաքանչյուր բանակցություն:

2-րդ կետով հաստատվում էր ծովերի ազատության սկզբունքը:Ամենից առաջ այս կետով ակնարկ էր տրվում Մեծ Բրիտանիային,Ֆրանսիային և Թուրքիային՝ Բոսֆորի և Դարդանելի նկատմամբ: ԱՄՆ-ի համար,ով կառուցել էր Անգլիային հավասար նավատորմ,այդ նախկինում անմիտ ոտնձգությունը այժմ դատարկ խոսք չէր:Այսուհետ բոլոր ծովերը պետք է լինեն ազատ նավարկության համար՝ և' խաղաղ պայմաններում,և' պատերազմական:Բացառություն կարող էին լինել այն դեպքերը,որոնք նախատեսված էին միջազգային պայմանագրերով:

3-րդ կետում նախագահն առաջարկում էր դաշնակիցներին իրենց տարածքներում հաստատել հավասար իրավունքներ բոլոր չարգելված ապրանքների առևտրի համար:

4-րդ կետով Վիլսոնը բոլոր պետություններին առաջարկեց ապառազմականացվել:ԱՄՆ-ն, որ շրջապատված էր օվկիանոսներով, վախենալու կարիք չուներ Կանադայից և Մեքսիկայից:Բացի այդ, գայթակղիչ հնչող կարգախոսը նախ և առաջ պահանջում էր նրանց ապառազմականացումը,ովքեր կարող էին եթե ոչ տնտեսապես,ապա ռազմական ուժով մրցակցել ԱՄՆ-ի հետ:

5-րդ կետը բերում էր գաղութային ձգտումների « ազատ,բաց, բացարձակ և անաչառ» կարգավորման: Վիլսոնը առաջարկում էր գաղութային վեճերի լուծման ժամանակ առաջնորդվել գաղութային բնակչության շահերից,այլ ոչ թե մենաշնորհի:

6-րդ կետը վերաբերում էր Ռուսաստանին:Վիլսոնը պետք է յուրահատուկ զգուշություն

ցուցաբերեր այդ հարցում,քանի որ Արևելյան ճակատում գործերից և Ռուսաստանի դիրքից էր կախված Արևմուտքի ճակատագիրը: Ռուսական տարածքի էվակուացիան և Ռուսաստանի հետ կապված հարցերի լուծումը կապահովեն ամենալավ և ամենաազատ համագործակցություն այլ ազգերի հետ:

7-րդ կետով գրավված Բելգիան պետք է ազատագրվեր,ինչից հետո նրա բնակչությունը կունենար նույնպիսի իրավունք,ինչ որ տրվել էր մնացած ազատագրված ժողովուրդներին:

8-րդ կետով Ավստրո-Հունգարիայի ժողովուրդներին Վիլսոնը խոստացավ «ինքնուրույն զարգացման ամենաազատ հնարավորությունները»:

Նախագահն ավելի քիչ մեծահոգի գտնվեց Էլզասի և Լոթարինգիայի հարցի քննարկման ժամանակ:Վերջնական արդյունքում նա արտահայտվեց այսպես. «Անարդարությունը,որ հաստատվել է Պրուսիայի կողմից Ֆրանսիայի նկատմամբ 1871թ. պետք է ուղղվի:Այդպիսի լակոնիկությունը դժվար թե ոգևորեր ֆրանսիական վարչապետին՝ Կլեմասոյին:Բայց չէ որ ընդհանուր առմամբ հենց ֆրանսիացիներն էին պահում Արևմտյան ճակատը»:Այս կետով Գերմանիայի կողմից շրջափակված ֆրանսիական տարածքները ենթարկվում էին ապառազմականացման,իսկ հասցված վերջին վնասը պետք է փոխհատուցվեր ամբողջությամբ:

Համաձայն հաջորդ կետի՝ Իտալիան պետք է վերադառնար իր ազգային տարածքներին,որն ավերվել էր գերմանացիների շրջափակման ժամանակ:

11-րդ կետով Ռուսաստանի,Սերբիայի և Չեռնոգորիայի ժողովուրդները իրավունք էին ստանում ձևավորել սեփական տարածքային անկախ պետություն,իսկ նրանցից խլված բոլոր տարածքները պետք է վերադարձվեին:Սերբիան,բացի սրանից,ստացավ նաև ելք դեպի ծով [4, 696]:

Սույն փաստաթղթի 12-րդ կետը վերաբերում էր իբր թե հայ ժողովրդի ապագային և ստեղծվելիք Հայաստանի Հանրապետությանը: Դրանում նշված էր Օսմանյան կայսրության ոչ թուրք ազգերի, մասնավորապես հայության, ազատորեն ապրելու և սեփական ճակատագիրը տնօրինելու իրավունքը: Այն հայտարարում էր. «Ներկայիս Օսմանյան կայսրության թուրքական մասի համար պետք է հավաստել անվտանգ ինքնիշխանություն, սակայն մյուս ազգերի համար, որոնք ներկայումս գտնվում են թուրքական իշխանության տակ, պետք է ապահովել կյանքի աներկբա անվտանգություն և ինքնավար զարգացման կատարելապես անխափան հնարավորություն: Դարդանելը՝ որպես ազատ ջրուղի, միջազգային երաշխիքների ներքո մշտապես պետք է բաց լինի բոլոր երկրների նավերի և առևտրի համար»:

Առաջին աշխարհամարտում պարտված պետությունների հետ հաշտության պայմանագիր կնքելու համար Փարիզում հաղթող երկրների կողմից բացվեց միջազգային խորհրդաժողով, որը ընդմիջումներով տևեց 1919թ. հունվարի 18-ից մինչև 1920թ. հունվարի 21-ը: Հայաստանի առաջին հանրապետությունը պաշտոնապես հրավիրված չէր կոնֆերանսի աշխատանքներին մասնակցելու: Այնուամենայնիվ, հայկական պահանջները ներկայացնելու համար պառլամենտը 1918թ. դեկտեմբերի 3-ին որոշեց կազմել մի պատվիրակություն՝ Փարիզ ուղարկելու համար, քանի որ Հայկական հարցի լուծման մեծ հույս ունեին: Պատվիրակությունը ղեկավարում էր Ավետիս Ահարոնյանը, անդամներն էին Միքայել Բաբաջանյանը, Համազասպ Օհանջանյանը: Հայաստանյան պատվիրակությունից առանձին ստեղծվել էր նաև մեկ այլ պատվիրակություն, որը գլխավորում էր մեծահարուստ Պողոս Նուբար փաշան: Պատվիրակության անդամ էին Փարիզում ապրող Արշակ Չոպանյանը, Վահան Թեքեյանը և այլք: Հայկական երկու պատվիրակությունները հանդես

էին գալիս առանձին-առանձին ցանկություններով և տարբեր կերպ էին պատկերացնում Հայաստանի ազատագրումը թուրքական լծից և նրա հետագա ճակատագիրը: 1920թ. հունվարին Փարիզի կոնֆերանսը որոշում ընդունեց ՀՀ-ն դե ֆակտո ճանաչելու մասին: Այդ որոշումը վերաբերում էր լոկ ՀՀ-ին, այլ ոչ թե Արևմտյան Հայաստանին: Որովհետև այդ ժամանակ Արևմտյան Հայաստանը փաստացի կերպով արդեն քեմալականների տիրապետության տակ էր, իսկ ֆրանսիացիները և անգլիացիները սկսել էին մեծ ծավալի սիրախաղ Թուրքիայի հետ: 1918թ. մայիսի 14-ին Հայաստանի մանդատը որոշվեց հանձնել ԱՄՆ-ին: Փարիզի կոնֆերանսում գիտակցում էին Հայաստանի մանդատի դժվարությունների խնդիրները: Օրինակ՝ Հայկական հարցի լուծումը բարդանում էր նրանով, որ այն Արևմտյան Հայաստանում անմիջականորեն առնչվում էր քրդական հարցին: Լլ. Ջորջը գտնում էր, որ եթե Հայաստանը անջատվի Թուրքիայից: Բնականաբար Հայաստանի տարածքից թուրքական զորքերը պետք է դուրս բերվեին: «Այդ դեպքում հայերը կմնան քրդերի ողորմածությանը» [3, 552]:

Թեև Հայաստանի Հանրապետությունը մեծ տերությունների կողմից դե յուրե չէր ճանաչվել, սակայն նրա պատվիրակությունը հրավիրվեց Իտալիայի Սան Ռեմո քաղաք՝ միջազգային կոնֆերանսին մասնակցելու համար: Կոնֆերանսը տեղի ունեցավ 1920 թ. ապրիլի 19-26-ին, որի նպատակն էր պատրաստել պարտված Թուրքիայի հետ պայմանագիր ստորագրելու նախագիծը: Պետությունների միջև կռվախնձորը Մոսուլի նավթի շուրջ էր: Սան Ռեմոյում ՀՀ պատվիրակության ղեկավարն էր Ավետիս Ահարոնյանը, Ազգային պատվիրակության ղեկավարը՝ Պողոս Նուբարը:

1920 թ. ապրիլին դաշնակիցները վերջնական հավանություն տվեցին Թուրքիայի հետ կնքվելիք հաշտության պայմանագրին: Այն հանգամանքը, որ արդեն 1920 թ. գարնանը Թուրքիայում ռեալ իշխանությունը պատկանում էր քեմալականներին (ոչ թե սուլթանին, ով ստորագրեց), այդ պայմանագիրը վերածում էր «մեռելածին ակտի»: Ստորագրվեց օգոստոսի 10-ին Փարիզի մոտ՝ Սևր քաղաքում: Դա Վերսալ-Վաշինգտոնյան համակարգի բաղկացուցիչ մասերից էր:

Պայմանագիրը ստորագրեց նաև Ա.Ահարոնյանը: Վեցերորդ բաժինը (հոդված 88-93) ամբողջությամբ Հայաստանին էր վերաբերում:

Պայմանագրի ստորագրումից հետո Վիլսոնի կողմից կազմված հանձնաժողովը կազմեց սահմանների վերաբերյալ նախագիծը, որով Հայաստանը ուներ ելք դեպի ծով: Հայաստանն ունենալու էր 100.000 քկմ տարածք, իսկ միավորվելով ՀՀ հետ՝ մոտ 150.000 քկմ [3, 554-558]:

Կարծես թե իրականանում էր հայ ժողովրդի դարավոր երազանքը: Իհարկե Սևրի պայմանագրի նշանակությունը առաջին հերթին նրանում էր, որ Անտանտը ճանաչում էր Հայաստանի անկախ գոյության իրավունքը, նաև Արևմտյան Հայաստանի տարածքները հայ ժողովրդին պատկանելու իրավունքները: Սակայն քեմալական կառավարությունը չընդունեց այդ պայմանագիրը, այլև զինված շարժում սկսեց այն ոչնչացնելու համար

Սևրի պայմանագիրը ըստ էության մարտահրավեր էր Թուրքիային, որի տարածքում օր օրի մեծանում էր ֆրանսիական և անգլիական գործոնի դերը: Իրականում թե՛ Սևրի պայմանագիրը, և թե՛ Վիլսոնի կողմից ստանձնած ՀՀ մանդատը միայն և միայն Թուրքիային սթափեցնելու բնույթ ունեին և ամենևին չէին բխում Վլիսոնի մարդասիրական շահերից, որպեսզի օգներ թշվառության մեջ հազիվ գոյատևող մի խեղճ ժողովրդի: Սևրի պայմանագրով ստեղծվում էր նաև քրդական պետություն՝ հենց Հայաստանի տարածքի վրա. սա նոր առճակատումեր էր բերում հայերի և քրդերի միջև [3, 558-562]:

Իսկ վերջին 2 հոդվածներն ունեին հետևյալ բովանդակությունը.

Վիլսոնը, Լեհաստանը տեսնելով որպես կոմունիստական վտանգից պաշտպանվելու միակ միջոց,պայքարում էր անկախ Լեհական պետության ստեղծման համար,որի մեջ պետք է մտնեին լեհերեն խոսող բնակչության բոլոր տարածքները: Բացի այդ այս 13-րդ կետով Լեհաստանը ստացավ ծովում ազատ և անսահմանափակ նավարկելու իրավունք,իսկ նրա ամբողջականությունը պետք է երաշխավորեին միջազգային պայմանագրերը:

Վիլսոնը,ի տարբերություն ամերիկացիների մեծամասնության, սիրում էր «13» թիվը և հենց 13-րդ կետով էլ ցանկանում էր ավարտել իր՝ աշխարհի ուժերի գործնական վերանայման ծրագիրը: Բայց ստիպված էր ավելացնել ևս մեկ դրույթ՝14-րդ կետը,որը որոշակի իմաստով դարձավ հենց ամենագլխավորը:

Այս վերջին ամենակարևոր կետը հիշեցում էր պարունակում հզոր կազմակերպության ստեղծման մասին, որը ընդունակ կլիներ միավորելու հետպատերազմյան պետությունները՝ հանուն համընդհանուր խաղաղության և բարգավաճման:Այսպիսի կազմակերպությունը պետք է միավորեր աշխարհի երկրների մեծ մասին և պետք է կրեր Ազգերի լիգա անունը:

Պետք է ստեղծվեր ընդհանուր ասոցիացիա՝համաձայն հատուկ հրավերների, որոնք կապահովեն ընդհանուր քաղաքական անկախություն և տարածքային ամբողջականություն ինչպես հզորների,այնպես էլ փոքր պետությունների համար: Չկա կասկած, որ Վիլսոնը հույս ուներ այդպիսի կազմակերպությունը դարձնել մեխանիզմ իր ամերիկյան գաղափարների տարածման (և անգամ սահմանադրության) համար, դարձնել աշխարհի տարբեր շրջանների վրա ազդեցություն տարածելու միջոց: Նա ծրագրել էր մի հսկայական մեխանիզմ. որը թույլ կտար ԱՄՆ-ին դառնալ միջազգային դատավոր [5, 352]:

Ամերիկյան պատմաբան Ու. Ուիլյամսի ճշմարտացի խոսքերի համաձայն՝ «14 կետերը»-ի նպատակը «միջազգային հարաբերությունները վերափոխելն էր համաձայն ամերիկյան սկզբունքների, և հենց դրանով էլ պետք է հնարավոր դարձվեր ԱՄՆ-ին քաղաքական և տնտեսական ազդեցիկ դիրք գրավել աշխարհում՝ չգնալով մեծ պատերազմի» [2, 227]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Гершов З. М., Вудро Вильсон, М.: Мысль, 1983.

2.Мнухина Р.С., Источниковедение истории нового и новейшего времени, М., 1970.

3.Уткин А. И. Вудро Вильсон, М.: Культурная Революция, 2010.

4.«Четырнадцать пунктов» Вильсона //Иванян Э.А., Энциклопедия российско-американских отношений. XVIII-XX века, М: Международные отношения, 2001.

5.Яковлев Н. Н.,Преступившие грань, М: Международные отношения, 1971.

Ալյոնա Հայրապետյան
ԱրՊՀ, Պատմության և իրավագիտության ֆակուլտետ
«Քաղաքագիտություն», մագիստրատուրա 2-րդ կուրս
Էլ. հասցե՝ hayrapetyanalyona13@gmail.com
Գիտական ղեկավար՝ փ. գ.թ., դոցենտ Աննա Հակոբյան

ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ԸՆԿԱԼՈՒՄԸ ԴԱՍԱԿԱՆ ՓԻԼԻՍՈՓԱՅՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Բանալի բառեր՝ *քաղաքացիական հասարակություն, քաղաքական հանրույթ, ազատ քաղաքացի, ընդհանուր պարտավորություն, մասնավոր շահ, միասնություն, բարիք, ինքնակազմակերպման ունակություն, երջանիկ քաղաքացի:*

Սույն հոդվածն ուղղված է բացահայտելու, թե ինչպիսին էր քաղաքացիական հասարակության ընկալումը հունական փիլիսոփայության մեջ: Համապատասխան գրականության վերլուծության արդյունքում պարզ է դառնում, որ քաղաքացիական հասարակության դասական պատկերացումը լիովին տարբերվում է ժամանակակից հայեցակարգերից. հույն փիլիսոփաներ Պլատոնն ու Արիստոտելը պետության ու հասարակության միջև գրեթե ոչ մի տարանջատում չէին դնում:

Алена Айрапетян

КОНЦЕПЦИЯ <<ГРАЖДАНСКОЕ ОБЩЕСТВО>> В КЛАССИЧЕСКОЙ ФИЛОСОФИИ

Ключевые слова: *гражданское общество, политическая общность, свободный гражданин, общая приверженность, частный интерес, соединение, благо, самоорганизация, счастье.*

Данная статья направлена на исследование концепции <<гражданское общество>> в греческой философии. При анализе соответствующей литературы, становится ясно что понимание гражданского общества в античности весьма отличается от современных концепций. Платон и Аристотель в своих работах не различают существенно отношения между государством и обществом.

Հասկանալու համար, թե ինչ է քաղաքացիական հասարակությունը և ինչ դեր ունի այն այսօր, անհրաժեշտ է հղում կատարել ժողովրդավարության ժամանակակից տեսաբաններին: Ժողովրդավարության տեսաբան ամերիկացի Լարրի Դայմոնդը նշում է, որ <<քաղաքացիական հասարակությունը կազմակերպված խմբերի և ինստիտուտների ամբողջական շղթա է, որոնք անկախ են պետությունից, գործում են կամավորության հիմքով և ինչ-որ չափով ինքնուրույն ու կայացած են: Ոչ կառավարական կազմակերպություններից բացի այդ շղթան ընդգրկում է նաև ԶԼՄ-ը, վերլուծական կենտրոնները, համալսարանները, սոցիալական և կրոնական խմբերը>>: Քաղաքացիական հասարակության խմբերը կապեր են հաստատում պետության ու քաղաքական կուսակցությունների հետ, սակայն անկախ են նրանցից ու չեն ձգտում իշխանության:[1] Ռոբերտ Փաթնեմը (ամերիկացի քաղաքական տեսաբան) իր <<Ինչպես է աշխատում ժողովրդավարությունը>> աշխատության մեջ օգտագործում է

[1] ***Larry Diamond***. *What Civil Society Can Do to Develop Democracy. https://clck.ru/JaSAz:*

<<քաղաքացիական հանրություն>> եզրույթը: Նա գրում է, որ <<քաղաքացիությունը քաղաքացիական հանրությունում արտահայտվում է հասարակական հարցերում ակտիվ մասնակցությամբ>>:[1] Քաղաքական մասնակցությանը խթանելը քաղաքացիական հասարակության կարևոր գործառույթներից մեկն է: Հասարակական կազմակերպությունները, որոնք քաղաքացիական հասարակության կարևորագույն ինստիտուտներից մեկն են համարվում, կարող են իրականացնել վերոնշյալ գործառույթը՝ կրթելով, սովորեցնելով մարդկանց իրենց իրավունքների ու պարտականությունների մասին: Եվ վերջապես, քաղաքացիական հասարակություն - պետություն հարաբերությունների շրջանակում չպետք է լինի լարվածություն: Քաղաքացիական հասարակության անկախությունը դեռևս չի ենթադրում մշտական քննադատություն և ընդդիմություն պետության նկատմամբ: Դեռ ավելին, ուժեղ քաղաքացիական հասարակությունն ամրացնում է քաղաքացիների հարգանքը պետության նկատմամբ և նպաստում է այդ երկուսի հետ ակտիվ ու դրական համագործակցությանը: Ժողովրդավարության այլ տեսաբաններ Խուան Լինցն ու Ալֆրեդ Ստեփանը <<Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները>> գրքում գրում են, որ քաղաքացիական հասարակությունը հասարակարգի այն հարթությունն է, որտեղ պետությունից հարաբերականորեն անկախ ինքնակազմակերպվող խմբերը, շարժումներն ու անհատները փորձում են սահմանել արժեքներ, ստեղծել ասոցիացիաներ ու դաշինքներ և առաջ մղել իրենց շահերը: <<Քաղաքացիական հասարակությունը կարող է ներառել զանազան սոցիալական շարժումներ(կանանց խմբեր, թաղային միություններ, կրոնական խմբեր ու մտավորականների կազմակերպություններ) և քաղաքացիական միություններ բոլոր սոցիալական խավերից(ինչպես օրինակ՝ արհեստակցական միությունները, ձեռնարկատիրական խմբերը, լրագրողները կամ իրավաբանները)>>:[2]

Քաղաքացիական հասարակության մասին պատկերացումները որպես քաղաքականորեն կազմակերպված միավորներ, սկիզբ են առնում հունական փիլիսոփայությունից: Հին հույները չէին կարող պատկերացնել իրենց կյանքն առանց պոլիսի: Քաղաքականը հին հունական մտածողների աշխատանքներում ընդգրկում էր հասարակության բոլոր կարևորագույն ոլորտները: Լինել պոլիսի անդամ նշանակում էր լինել քաղաքացի: Սակայն պոլիսում ապրող ոչ բոլորն էին քաղաքացի: Ստրուկները, օտարերկրացիները, ապօրինի ծնվածները այդպիսին չէին համարվում:[3]

Ծնված լինելով մ.թ.ա 428թ.՝ Պերիկլեսի մահվանից մեկ տարի հետո, հույն փիլիսոփա Պլատոնը մեծացել է Աթենքում, ռազմական ջախջախվածության, տնտեսական քաոսի, քաղաքական անկայունության, բարոյական անորոշության պայմաններում: Կառավարման համար բարոյական սկզբունքներ հաստատելու նրա ձգտումն ուղիղ պատասխանն էր իր օրերի անհստակությանն ու անկարգությանը: Առաջնայնությունը, որը նա տալիս է, քաղաքական գիտելիքներին, վերջնական հաշվով, ձևավորել է քաղաքացիական հասարակության մի տեսություն, որը մեծ հաշվով կապված է ճշմարտության միասնական(*unified*) հայեցակարգի հետ այնքանով, ինչքանով

[1] ***Putnam, Robert D****. Making democracy work : Civic traditions in modern Italy.1992. pages 87-88 .*

[2] ***Լինց Խուան****, Ալֆրեդ Ստեփան Ժողովրդավարությանն անցնելու և ժողովրդավարության կայացման խնդիրները. – Եր.: Կովկասի ինստիտուտ,2011 – էջ 27 :*

[3] *Концепт <<Гражданское общество>> в западной философской мысли. От Платона до Гегеля. https://clck.ru/JagNz .*

մասնավոր շահերի ու ոլորտների տարանջատվածության նկատմամբ ուժեղ հակակրանքի:[1]

Պլատոնը տալիս է պետության այսպիսի սահմանում. <<Պետությունը ծագում է, ինչպես ենթադրում եմ, երբ մեզանից յուրաքանչյուրը չի կարողանում բավարարել ինքն իրեն, բայց շարունակում է շատ բաների կարիք զգալ>>: Մարդիկ վերջնական հաշվով միավորվում են՝ միասին ապրելու, միմյանց օգնելու և սեփական պահանջմունքները բավարարելու նպատակով: Ձևավորված հասարակության մեջ մարդիկ իրենց գործունեությունը ծավալում են տարբեր ոլորտներում: Ու նրա <<քաղաքացիական հասարակությունը>> իր նշած <<արդար հասարակությունն>> է, որտեղ անհատները իմաստության քաղաքացիական առաքինությանն են ենթարկում իրենց հոգին ու անհատականությունը: Նրանք ձգտում են հասնել ֆիզիկական բավարարվածության, հատկապես, ձգտում են սոցիալական հավանության և ճշմարտության՝ թե ինչպիսին պետք է լինի իրերի ճիշտ կարգը: Արդար հասարակության մեջ մարդիկ իրենց նվիրում են ընդհանուր բարիքին: Նրանք իրականացնում են այնպիսի մասնագիտական դերակատարություն, որին առավել շատ են համապատասխանում: Օրինակ՝ Պլատոնի իդեալական պետությունը պետք է ղեկավարի փիլիսոփա-թագավորը, որովհետև, ըստ Պլատոնի, նա իմաստուն է և խելացի:[2]

Սակայն <<Պետության>> կենտրոնական պնդումն այն է, որ անհատական (մասնավոր) շահը երբեք չի կարող ապահովել երջանիկ, արդար կյանքի բավարար հիմք էր: Ստացվում էր, որ քաղաքացիական հասարակությունը կարող էր հասկացվել միայն պետության կազմակերպման սկզբունքների հետ հարաբերության մեջ:[3] Պլատոնի համար կարևոր էր հասկանալ հասարակության մեջ ձևավորված ոլորտներից յուրաքանչյուրը, բայց միայն ամբողջը լրիվությամբ հասկանալու նպատակի համար: Նա վստահ էր, որ չկա ավելի մեծ չարիք, քան ամբողջը քանդելը, մինչդեռ ոչինչ ավելի լավ չէ, քան միասնականը: Ըստ նրա, մասնավոր շահերը և հակվածությունները պետք է լինեն վերահսկողության տակ, որովհետև դրանք կարող են միայն քայքայել այն կապերը, որոնք քաղաքացիական հասարակությունը պահում են մեկ միասնության մեջ: Պլատոնը համոզված էր, որ ամբիցիաներն ու մրցակցությունը քաղաքացիական հասարակության հավերժ սպառնալիքներն են: Դժվար է վերահսկել <<մասնավոր ախորժակը>> ընդհանուր պարտավորության (*shared commitment*) բացակայության պայմաններում: Ահա այսպիսի ընկալումը Պլատոնի քաղաքացիական հասարակությունը փաստորեն վերածել է <<սառը միասնության>> և <<լուռ կայունության>> քաղաքացիական հասարակության:

Մյուս առավել նշանակալի փիլիսոփան վերջինիս աշակերտն էր՝ Արիստոտելը: Նա ամենահին ու ամենահիմնարար գործընկերությունը համարել է տղամարդկանց ու կանանց համագործակցությունը, որի գոյության պատճառը Արիստոտելը համարում է մարդ տեսակի շարունակականությունն ապահովելու բնական բնազդը: Այս միությունը երեխաների, ընտանիքի այլ անդամների, ծառաների կամ ստրուկների հետ միասին վերածվում է տնային տնտեսության: Մի քանի տնային տնտեսությունների

[1] *Ehrenberg, John Civil Society: The Critical History of an Idea. 1999. pages 4-5* .

[2] *Philosophical Foundations of Civil Society, https://www.scribd.com/document/166825345/Topic-2-Philosophical-Foundations-of-Civil-Society.*

[3] ***Wiel, Boris**. A Conceptual History of Civil Society. From Greek Beginnings to the End of Marx. https://journals.library.ualberta.ca/pi/index.php/pi/article/view/1422.*

համագործակցությունը ձևավորում է համայնք, գյուղ, մինչդեռ մի քանի գյուղերի համագործակցությունը բերում է քաղաք-պետության: Այսպիսով Արիստոտելը եզրակացնում է, որ քաղաքը(*polis)* գոյություն ունի բնականից, քանի որ սահմանում է այն նպատակը, որի համար համագործակցության մյուս ձևերը գոյություն ունեն:[1]

Արիստոտելը գրում է, որ յուրաքանչյուր պետություն ներկայացնում է իրենից որոշակի շփում, իսկ յուրաքանչյուր շփում ինչ-որ բարիքի հասնելու նպատակ ունի: Ամենավեհ բարիքին ձգտում է հասնել այն շփումը, որն ամենակարևորն է և ընդգրկում է մյուս բոլոր շփումները: Հենց այդպիսի շփումն էլ նա անվանում է պետություն կամ *քաղաքական շփում*:[2] Այնուհետև նա մարդուն անվանում է *քաղաքական կենդանի*: Մարդը ծնվում է պետության մեջ, որը ստեղծել է բնությունը: Դրա ապացույցն այն է, որ երբ անհատը մեկուսանում է, ինքնաբավ չի դառնում: Այլ կերպ ասած, Արիստոտելի պետությունը չունի այն հասարակությունից բաժանող բնորոշ գիծ: Պետությունը ստեղծվում է մարդու հիմնական կարիքների ի հայտ գալուն պես և շարունակում է գոյությունը՝ լավ կյանք ապահովելու նպատակով: Քաղաքացիական հասարակությունը նա նկարագրել է որպես ազատ և հավասար քաղաքացիների էթիկական-քաղաքական հանրություն: Նրանց նա բնութագրել է որպես լավ, պատասխանատու վարքագիծ ունեցող քաղաքացիների: Այդ քաղաքացիները փոխադարձաբար համաձայնել են ապրել այնպիսի օրենքի համակարգի տակ: Այդ համակարգն արտահայտում է այն նորմերն ու արժեքները, որոնք նրանք կրում են: Արիստոտելի համար քաղաքացիական հասարակությունը նշանակում էր քաղաքակրթված հասարակություն, որտեղ մարդիկ ենթարկվում են բացարձակ միապետի իշխանությանը: Վերջինս պահում է իշխանությունը՝ քաղաքացիների ագրեսիվ ու ինքնամեծարող բնազդները վերահսկողության տակ պահելու համար: Քաղաքացիական հասարակությունը նրա համար նաև քաղաքական հասարակություն է: Քաղաքացիական հասարակության արիստոտելյան հայեցակարգը հիմնված էր այն ենթադրության վրա, որ մարդկանց բնորոշ է ինքնակազմակերպման ունակությունը, որը հիմնված է հոգևոր միասնության ընդհանուր զգացման վրա:[3]

Այսպիսով, դասական փիլիսոփայության մեջ քաղաքացիական հասարակությունը ասոցացվում է քաղաքական հանրությունում բարեկեցիկ կյանքի հետ: Դասական շրջանում փիլիսոփաները պետության և հասարակության միջև հստակ տարանջատում չեն անում: Նրանք գտնում են, որ պետությունը հասարակության քաղաքացիական ձևն է, իսկ քաղաքակրթվածությունը՝ քաղաքականորեն կազմակերպված հասարակության մեջ ակտիվ քաղաքացիության անհրաժեշտությունը:

---

[1] *Civil Society Theory: Aristotle. https://www.researchgate.net/publication/271212659_Civil_Society_Theory_Aristotle.*
[2] *Политика / Аристотель; Азбука-Аттикус, 2016.- с. 5.*
[3] *Philosophical Foundations of Civil Society, https://www.scribd.com/document/166825345/Topic-2-Philosophical-Foundations-of-Civil-Society.*

ՀՏԴ 94(330.1) Պատմություն և քաղաքագիտություն

Gayane Gharibyan
gayane.gharibyan2000@gmail.com
Bagrat Avetisyan
bagrat782@gmail.com
Scientific adviser: Varazdat Avetisyan avetvarazdat@gmail.com
ՇՊՀ /Գավառ/

THE INFLUENCE OF FOURTH INDUSTRIAL REVOLUTION ON SOCIETY

Keywords: *Industry 4.0, society, future, community, social impact, research, inequality, tipping points, "World Economic Forum".*

Գայանե Ղարիբյան, Բագրատ Ավետիսյան

ՉՈՐՐՈՐԴ ԱՐԴՅՈՒՆԱԲԵՐԱԿԱՆ ՀԵՂԱՓՈԽՈՒԹՅԱՆ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Բանալի բառեր՝ *Արդյունաբերություն 4.0, հասարակություն, ապագա, համայնք, սոցիալական ազդեցություն, հետազոտություն, անհավասարություն, հուշող կետեր, «Համաշխարհային տնտեսական ֆորում»:*

Ամփոփելով հոդվածը՝ նկատում ենք, որ 4-րդ արդյունաբերական հեղափոխությունն ունի առավելություններ ու հնարավորություններ, բայց դրա հետ մեկտեղ նաև թերություններ, որոնցից պետք է նախազգուշանալ:

Չկա հնարավորություն առանց ռիսկի գործոնի, բայց եթե կառավարությունները, կազմակերպությունները, ինչպես նաև անհատները կարողանան հասկանալ և գնահատել ռիսկի չափը, կանխարգելումն ավելի հեշտ կլինի: Այն կլինի ամենալավ լուծումը զարգացնելու մեր հասարակությունը առանց որևէ սպառնալիքների:

Introduction

The First Industrial Revolution used water and steam power to mechanize production. The Second used power to form production. The Third used physics and information technology to automatize production. currently a Fourth Industrial Revolution is building on the Third, the digital revolution that has been occurring since the center of the last century.[1]

The Fourth Industrial Revolution may be an approach of describing the blurring of boundaries between the physical, digital, and biological worlds. It's a fusion of advances in computer science (AI, cyber security), robotics, the Internet of Things (IoT), 3D printing, biotechnology, quantum computing, and different technologies. It's a collective force behind several product and services that are unit quick turning into indispensable to trendy life. Assume GPS systems that recommend the quickest route to a destination, voice-activated virtual assistants like Apple's Siri, customized Netflix recommendations, and Facebook's ability to acknowledge your face and tag you on a friend's photo[2].

As Klaus Schwab represents in his book there are 3 reasons why today's transformations represent not just a prolongation of the Third Industrial Revolution however rather the arrival of a fourth and distinct one: rate, scope, and systems impact.[3] The speed of current breakthroughs has no historical precedent.

As a results of this excellent storm of technologies, the Fourth Industrial Revolution is paving the approach for transformative changes within the approach we tend to live and radically disrupting almost each business sector we can think about. It's all happening at an unprecedented, whirl wind pace.

Tipping Points

When these megatrends are unit mentioned generally terms, they look rather abstract. They are, however, giving rise to very practical applications and developments. A World Economic Forum report revealed in Sept. 2015 presents twenty one tipping points – moments once specific technological shifts hit thought society – that may form our future digital and hyper-connected world.[4] They're all expected to occur within the next ten years and thus vividly capture the deep shifts triggered by the

fourth industrial revolution. The tipping points were known through a survey conducted by the World Economic Forum's Global Agenda Council on the Future of Software and Society, during which over 800 executives and consultants from the data and engineering sector participated. [4]

Table 1 also presents the proportion of respondents who expect that the particular tipping point can have occurred by 2025.

These tipping points give necessary context as they signal the substantive changes that lie ahead - amplified by their general nature - and the way best to organize and respond. As I justify within the next chapter, navigating this transition begins with awareness of the shifts that are going on, as well as those to come, and their impact on world society.

Table 1 Tipping Points Expected to Occur by 2025

	%
10% of people wearing clothes connected to the internet	91.2
90% of people having unlimited and free (advertising-supported) storage	91.0
1 trillion sensors connected to the internet	89.2
The first robotic pharmacist in the US	86.5
10% of reading glasses connected to the internet	85.5
80% of people with a digital presence on the internet	84.4
The first 3D-printed car in production	84.1
The first government to replace its census with big-data sources	82.9
The first implantable mobile phone available commercially	81.7
5% of consumer products printed in 3D	81.1
90% of the population using smartphones	80.7
90% of the population with regular access to the internet	78.8
Driverless cars equalling 10% of all cars on US roads	78.2
The first transplant of a 3D-printed liver	76.4
30% of corporate audits performed by AI	75.4
Tax collected for the first time by a government via a blockchain	73.1
Over 50% of internet traffic to homes for appliances and devices	69.9
Globally more trips/journeys via car sharing than in private cars	67.2
The first city with more than 50,000 people and no traffic lights	63.7
10% of global gross domestic product stored on blockchain technology	57.9
The first AI machine on a corporate board of directors	45.2

Society

Scientific advancement, development and therefore the diffusion of innovation area unit social processes that unfold as humanity develop and exchange ideas, values, interests and social norms in a different style of contexts. This makes it onerous to recognize the total social group impact of new technological systems: there are several interwoven parts that comprise our societies and lots of innovations that are in somehow co-produced by them.

The big challenge for many societies is going to be the way to absorb and accommodate the new contemporaneity whereas still embrace the nutritive aspects of our ancient value systems. The fourth

industrial revolution,that tests such a lot of our basic assumptions, could exacerbate the tensions that exist between deeply religious societies that defend their basic values and people whose beliefs are formed by a more secular worldview. the big danger to world cooperation and stability could come from radical teams fighting progress with extreme, ideologically motivated violence.

As sociologist Manuel Castells, professor of communication technology and society at the Annenberg School of Communication and Journalism at the University of Southern California, has noted: "In all moments of major technological change, people, companies, and institutions feel the depth of the change, but they are often overwhelmed by it, out of sheer ignorance of its effects".[5] Being powerless because of ignorance is exactly what we should always avoid, notably once it involves however the numerous various communities that comprise trendy society type, develop and relate to one another.

Inequality and the middle class.

The discussion on economic and business impacts highlighted a number of different structural shifts which have contributed to rising inequality to date, and which may be further exacerbated as the fourth industrial revolution unfolds.

Robots and algorithms increasingly substitute capital for labour, while investing becomes less capital intensive. Labour markets, meanwhile, are becoming biased towards a limited range of technical skill sets, and globally connected digital platforms and marketplaces are granting outsized rewards to a small number of "stars". As all these trends happen, the winners will be those who are able to participate fully in innovation-driven ecosystems by providing new ideas, business models, products and services, rather than those that offers solely low-skilled labour or normal capital.

These dynamics are why technology is regarded as one of the main reasons incomes have stagnated, or even decreased, for a majority of the population in high-income countries. Today, the world is very unequal indeed. According to Credit Suisse's Global Wealth Report 2015, half of all assets around the world are now controlled by the richest 1% of the global population, while "the lower

half of the world population jointly own but I Chronicles of worldwide wealth".

The Organisation for Economic Cooperation and Development (OECD) reports that the average income of the richest 10% of the population in OECD countries is approximately nine times that of the poorest 10%. [7]

Rising inequality is more than an economic phenomenon of some concern – it is a major challenge for societies. In their book The Spirit Level: Why Greater Equality Makes Societies Stronger, British epidemiologists Richard Wilkinson and Kate Pickett put forward data indicating that unequal societies tend to be more violent, have higher numbers of people in prison, experience greater levels of mental illness and obesity, and have lower life expectancies and lower levels of trust. The corollary, they found, is that,after controlling for average incomes, more equal societies have higher levels of child well-being, lower levels of stress and drug use, and lower infant mortality.[8] Other researchers have found that higher levels of inequality increase segregation and reduce educational outcomes for children and young adults.

Today, a middle-class job no longer guarantees a middle-class lifestyle, and over the past 20 years, the four traditional attributes of middle-class status (education, health, pensions and house ownership) have performed worse than inflation. In the US and the UK, education is now priced as a luxury. A winner-takes-all market economy, to which the middle-class has very limited access, may percolate into democratic malaise and dereliction which compound social challenges.

Community

From a broad societal standpoint, one of the greatest effects of digitization is the emergence of the "me-centred" society – a process of individuation and emergence of new forms of belonging and community. Contrary to the past, the notion of belonging to a community today is more defined by personal projects and individual values and interests rather than by space, work and family.

New forms of digital media, which form a core component of the fourth industrial revolution, are more and more driving our individual and collective framing of society and community. Digital media is connecting people one-to-one and one-to-many in entirely new ways, enabling users to maintain friendships across time and distance, creating new interest groups and enabling those who are socially or physically isolated to connect with likeminded people. The high availability, low costs and

geographically neutral aspects of digital media also enable greater interaction across social, economic, cultural, political, religious and ideological boundaries.

Access to online digital media creates substantial benefits for many. Beyond its role in providing information, it also provides opportunities for individuals to have a voice and participate in civic debate and decision making.

Unfortunately, while the fourth industrial revolution empowers citizens, it can also be used to act against their interests. The phenomenon of the "(dis)empowered citizen", whereby individuals and communities are simultaneously empowered and excluded by the use of emerging technologies by governments, companies and interest groups.

The democratic power of digital media means that it may be employed by non-state actors, significantly communities with harmful intentions to unfold info and to mobilize followers in favour of extremist causes, as has been seen recently with the rise of Da'esh and other social-media-savvy terrorist organizations.

There is the danger that the dynamics of sharing that typifies social media use can skew decision-making and pose risks to civil society. Counter-intuitively, the fact that there is so much media available through digital channels can mean that an individual's news sources become narrowed and polarized into "spiral of silence". This matters because what we read, share and see in the context of social media shapes our political and civic decisions.

As an example, a study of the impact of get-out-the-vote messages on Facebook found that they "increased turnout directly by about 60,000 voters and indirectly through social contagion by another 280,000 voters, for a total of 340,000 additional votes." [9] This research highlights the power that digital media platforms have in selecting and promoting the media we consume online. It also indicates the opportunity for online technologies to blend traditional forms of civic engagement,such as voting for local, regional or national representatives, with innovative ways to give citizens more direct influence over decisions that affect their communities.

Conclusion

We can say that a world of greater connectivity and higher expectations can create significant social risks if populations feel they have no chance of attaining any level of prosperity or meaning in their lives.

As with almost all the impacts addressed in this paper, it is clear that the fourth industrial revolution brings great opportunities while also posing significant risks. One of the key challenges the world faces as this revolution emerges is how to gather more and better data on both the benefits and challenges to community cohesion.

REFERENCES

1. World Economic Forum, "The Fourth Industrial Revolution: what it means, how to respond", 2016
2. Salesforce blog, What Is the Fourth Industrial Revolution? Dec. 2018
3. Klaus Schwab, The Fourth Industrial Revolution, 2016
4. World Economic Forum, Deep Shift – Technology Tipping Points and Societal Impact, Survey Report, Global Agenda Council on the Future of Software and Society, Sep. 2015.
5. Manuel Castells, "The impact of the Internet on Society: A Global Perspective", MIT Technology Review, Sep. 2014.
6. Credit Suisse, "Global Wealth Report 2015", Oct. 2015
7. OECD, "Divided We Stand: Why Inequality Keeps Rising", 2011
8. Richard Wilkinson and Kate Pickett, The Spirit Level: Why Greater Equality Makes Societies Stronger, Bloomsbury Press, 2009.
9. Robert M. Bond, Christopher J. Fariss, Jason J. Jones, Adam D. I. Kramer, Cameron Marlow, Jaime E. Settle, and James H. Fowler, "A 61-million-person experiment in social influence and political mobilization", Nature, Sep. 2012.

Ջուլիետա Մարգարյան
Գավառի պետական համալսարանի ուսանողուհի
Էլ. հասցե: julya.margaryan1999@mail.ru
Գիտական ղեկավար՝ Վ.Գ. Թունյան – պ.գ.դ., պրոֆեսոր
Էլ. հասցե tunyanvalery@rambler.ru

1932 ԹՎԱԿԱՆԻ ՀԱՅ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ ԵԿԵՂԵՑՈՒ ԱԶԳԱՅԻՆ-ԵԿԵՂԵՑԱԿԱՆ ՀԱՄԱԺՈՂՈՎԸ ԵՎ ԴՐԱ ԱՐԴՅՈՒՔՆԵՐԸ

Բանալի բառեր՝ *Տ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյան, ազգային եկեղեցական ժողով, «Հայրապետական ընտրական կանոնադրություն», ազգային եկեղեցական սահմանադրություն, բարեփոխումներ, Գերագույն հոգևոր խորհուրդ, կաթողիկոսական ընտրություն, անհանդուրժողականություն, պատգամավորներ, լիազոր ներկայացուցիչներ:*

1930 թ. մայիսի 8-ին Ամենայն Հայոց Կաթողիկոս Տ. Տ. Գևորգ Ե Սուրենյանցի մահից հետո Գերագույն հոգևոր խորհրդի խնդիրը և նպատակը դարձավ հրավիրել ազգային-եկեղեցական ժողով: Երկու տարի ձգձգումից հետո, իշխանությունների թույլտվությամբ, 1932թ. նոյեմբերի 10-13-ը տեղի է ունենում ազգային եկեղեցական ժողով, որի արդյունքում Ամենայն Հայոց Կարթողիկոս է ընտրվում Տ. Տ. Խորեն Մուրադբեկյանը: Քննարկվում են ազգային եկեղեցու սահմանադրության նախագիծը, եկեղեցու կանոնակարգերի բարեփոխումների խնդիրը, Ս. էջմիածնի ապահովվածության հարցը:

Джулиета Маргарян

НАЦИОНАЛЬНО- ЦЕРКОВНАЯ КОНФЕРЕНЦИЯ АРМЯНСКОЙ АПОСТОЛЬСКОЙ ЦЕРКВИ 1932 ГОДА И ЕГО РЕЗУЛЬТАТЫ

Ключевые слова: *Архиепископ Хорен I Мурадбекян, национально-церковное собрание, «Патриаршеский избирательный регламент», национальная церковная концтитуция, преобразования, Высший духовный совет, выборы католикоса, непереносимость, депутаты, уполномоченные представители.*

8-ого мая 1930 года после смерти Католикоса Всех Армян св. Геворга Суренянца Высшый духовный совет объявил о созыве национально-церковного собрания. После двухлетней затяжки, с разрешения властей, с 10 по13 ноября 1932 г. состоялось собрание, на котором св. Хорен Мурадбекян был избран Католикосом Всех Армян, обсудили проект концтитуции национальной церкви, а также проблему реформирования устава церкви и вопрос безопасности св. Эчмиадзина.

1930 թվականի մայիսի 8-ին 83 տարեկան հասակում, վախճանվում է Գևորգ Ե վշտալի Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Գերագույն հոգևոր խորհրդի օրակարգային հարցն է դառնում Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողով հրավիրելը և նոր կաթողիկոս ընտրելը: Գևորգ Ե-ի մահից անմիջապես հետո Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը, որը 1923 թվականին հայրապետական մասնավոր կոնդակով նշանակվել էր Ամենայն Հայոց կաթողիկոսի տեղակալ և նախագահող անդամ Գերագույն հոգևոր խորհրդի, 1930 թվականի մայիսից ստանձնում է իր պատասխանատու և ծանր պաշտոնը՝ իր ժողովրդի և եկեղեցու նկատմամբ պարտքի ու պարտականության խորը գիտակցությամբ[10] :

Հայ առաքելական եկեղեցու կարկառուն դեմքերից մեկը՝ Կիլիկյան Աթոռի Տ. Բարկեն Ա աթոռակից կաթողիկոսը, բարի վկայություն է բերում Տ. Խորեն արքեպիսկոպոսի

տեղակալության շրջանի գործունեության մասին՝ նշելով, որ նա «իր տեղակալի պաշտոնը կատարեց վայելչությամբ»՝ արժանանալով բովանդակ հայության վստահությանը, համակրանքին և հայրենի կառավարության սիրալիր ուշադրությանը [2] :

Լուսահոգի Գևորգ Ե-ի թաղումից և ավանդական սգո շրջանի ավարտից հետո տեղակալ Խորեն արքեպիսկոպոսի և Գերագույն հոգևոր խորհրդի գործունեության հիմնական ու գլխավոր նպատակը Մայր Աթոռի ընթացիկ գործերի ղեկավարության հետ վեց ամսվա ընթացքում ս. Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումն ու նոր կաթողիկոսի ընտրության նախապատրաստական աշխատանքներն էին [10] :

Տ. Խորեն արքեպիսկոպոսը և Գերագույն հոգևոր խորհրդի անդամներն անմիջապես ձեռնամուխ են լինում բանակցություններ վարել ՀՍԽՀ իշխանությունների հետ՝ եկեղեցական ժողով հրավիրելու կապակցությամբ: Այս առիթով մայիսի 29-ին Գերագույն հոգևոր խորհրդի նախագահ Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը գրությամբ դիմում է ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ Ս. Կասյանին և ՀՍԽՀ ժողկոմխորհի նախագահ Ս. Տեր-Գաբրիելյանին [4] :

Նամակում մասնավորապես նշվում էր՝

1. «Հայրապետական ընտրական կանոնադրության» 22-րդ հոդվածի համաձայն՝ «Նոր կաթողիկոսի ընտրությունը պետք է տեղի ունենա կաթողիկոսի մահվանից ոչ ուշ, քան վեց ամիս հետո հրավիրված ազգային-եկեղեցական ժողովում»: Ուստի Գերագույն հոգևոր խորհուրդը որոշել է նոր կաթողիկոսի ընտրության համար ազգային-եկեղեցական ժողով գումարել հոկտեմբերի վերջին կամ նոյեմբերի սկզբներին, որի համար և խնդրում են իշխանության գրավոր թույլտվությունը:

2. Ազգային-եկեղեցական ժողովի գումարման համար անհրաժեշտ են հետևյալ պայմանները. ա) Խորհրդային Հայաստանի Կառավարությունը երաշխավորի բոլոր միութենական հանրապետությունների պատվիրակների ու պատգամավորների ազատ մուտքը Խորհրդային Հայաստան, ինչպես նաև ազգային-եկեղեցական ժողովի ավարտից հետո նրանց անարգելք վերադարձը իրենց բնակավայրերը: բ) Հնարավորություն տալ բոլոր արտասահմանյան հյուրերին անարգել մասնակցել գումարվելիք եկեղեցական ժողովին: գ) Արտոնել գումարվելիք ազգային-եկեղեցական ժողովի օրակարգի հարցերի ազատ և անկաշկանդ քննություն:

3.Գերագույն հոգևոր խորհուրդը խնդրում էր եկեղեցական ժողովին վերաբերող մի շարք կարևորագույն հարցեր լուսաբանելու համար պարբերական մամուլում հրատարակության իրավունք ստանալ [8] :

Գերագույն հոգևոր խորհուրդը իր ընդարձակ նամակով հիմնավորում էր Էջմիածնում կաթողիկոս ընտրելու համար եկեղեցական ժողով գումարելու անհրաժեշտությունը: Նամակում ընդգծվում էր Էջմիածնի կարևոր նշանակությունը արտասահմանի թեմերի գործունեության համար, Էջմիածինը խորհրդային իշխանության շահերին ծառայեցնելու կարևորությունը՝ «Հայկական եկեղեցու և նրա արտասահմանյան ներկայացուցիչներին չեզոքացնելու, հնարավորինս վնասազերծելու նպատակով» [6] :

Մյուս կարևոր հարցը, որ բարձրացվում էր նամակում, վերաբերում էր հայոց հոգևոր կենտրոնի տեղափոխության հարցին: Բանն այն է, որ արտասահմանում աշխուժացել էին քննարկումները հատկապես ՀՅԴ կողմից՝ կաթողիկոսի ընտրություններն արտասահմանում անցկացնելու և նրա նստավայրը Էջմիածնից արտասահման փոխադրելու հնարավորությունը, կամ «Համաաթոռ» ստեղծելու, այսինքն՝ երկրորդ

համահայկական կաթողիկոս ունենալու մասին: Դրա հետևանքով կստեղծվեր «Համազգային կենտրոն և հեղինակություն, որի շուրջ կհավաքվեր արտասահմանյան հակահեղափոխությունը»: Այդ ամենը կանխելու համար անհրաժեշտ էր համարվում Էջմիածնի օգտագործումը, կաթողիկոս ունենալը և նրա միջոցով գաղտնի ղեկավարում ու համապատասխան միջոցառումներ ապահովելը [17] :

Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանի գրությանն ի պատասխան՝ 1930թ. հունիսին ՀՍԽՀ կենտգործկոմի նախագահ Կասյանը հայտնում է, որ կենտգործկոմը երբեք արգելք չի հանդիսացել կրոնական ժողովների գումարմանը, եթե դրանք զբաղվել են միայն կրոնական-եկեղեցական խնդիրներով, հետևաբար նույն պատճառաբանությամբ Գերագույն հոգևոր խորհրդի առաջարկած, Էջմիածնում գումարվելիք կաթողիկոսական ընտրության առթիվ համաեկեղեցական ժողովը կարող է տեղի ունենալ, թույլատրվում էր նաև կաթողիկոսի ընտրության համար Խորհրդային Հայաստան արտասահմանյան հյուրերի մուտքը: Ինչպես նաև մամուլում, հարցի խնդրից ելնելով, հրապարակումները, որի համար համապատասխան մարմիններին կտրվեն նախնական ցուցումներ:[8]

Կենտգործկոմի դրական պատասխանը ստանալուց հետո՝ 1930 թ. հուլիսի 18-ին, Տ. Խորեն արքեպիսկոպոսն ազգային-եկեղեցական ժողով գումարելու առիթով շրջաբերական է հղում՝ ուղղված Կիլիկիայի կաթողիկոսներին, Երուսաղեմի և Պոլսի պատրիարքներին, բոլոր թեմական առաջնորդներին ու եպիսկոպոսներին: Շրջաբերականում մասնավորապես ասված էր, որ Գերագույն հոգևոր խորհրդի խնդիրն է Ամենայն Հայոց Կաթողիկոս Գևորգ Ե Սուրենյանցի մահից հետո Հայրապետական աթոռը երկար թափուր չթողնել և արագ կազմակերպել կաթողիկոսի ընտրություն: Այս առիթով նախապես համաձայնություն է ձեռք բերվել Խորհրդային Հայաստանի իշխանությունների հետ և որոշվել եկեղեցական ժողովը գումարել հոկտեմբերի 26-ին՝ օրակարգում ներառելով հետևյալ հարցերը.

1. Ամենայն Հայոց Կաթողիկոսի ընտրություն,
2. Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալի ընտրություն,
3. Ս. Էջմիածնի Գերագույն հոգևոր խորհրդի անդամների ընտրություն,
4. ազգային-եկեղեցական սահմանադրության քննարկում,
5. զեկուցում Հայոց ազգային եկեղեցու բարեփոխությունների մասին,
6. Ս. Էջմիածնի և նրան հարակից հոգևոր, կրթական, մշակութային հաստատությունների նախահաշվի վավերացում [9] :

Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը իր 1930 թվականի հուլիսի 18-ի շրջաբերականին կցում է նաև «Հայրապետական ընտրական կանոնադրությունը», որի համաձայն ազգային-եկեղեցական ժողովը պետք է գումարվեր բոլոր թեմերում նախապես ընտրված պատգամավորների մասնակցությամբ, ինչպես նաև ըստ կանոնակարգի 5-րդ և 6-րդ հոդվածների՝ ազգային-եկեղեցական ժողովին կարևորվում էր պատրիարքների մասնակցությունը: Կաթողիկոսի բացակայության դեպքում նիստը ղեկավարելու էր կա՛մ Կիլիկիայի կաթողիկոսը, կա՛մ էլ Երուսաղեմի պատրիարքը, իսկ երկուսի բացակայության դեպքում՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսի տեղակալը:

Մայր Աթոռում ազգային-եկեղեցական ժողով հրավիրելու և կաթողիկոսական ընտրություն կատարելու բարի լուրը երախտագիտությամբ և ուրախությամբ է ընդունվում բովանդակ հայ ժողովրդի կողմից:

Թվում էր, թե Հայոց ազգային-եկեղեցական ժողովի հրավիրումն արդեն իրականություն էր, սակայն 1930 թվականի հուլիսից մինչև սեպտեմբեր անցնող ամիսների ընթացքում

վիզաների և արտոնագրերի թույլտվության բացակայության պայմաններում այն նորից հետաձգվում է [10] :

Սակայն ազգային-եկեղեցական ժողովի հետաձգման առավել հիմնավոր պատճառը խորհրդային իշխանությունների կողմից բացահայտ հակաեկեղեցական և հակակրոնական քաղաքականությունն էր՝ Էջմիածինն իրենց ենթարկելու և վերջնականապես կազմալուծելու նպատակով: Ի վկայություն ասվածի ներկայացնենք հետևյալ փաստաթուղթը:

1930 թ. սեպտեմբերի 7-ին Անդրպետքաղվարչության նախագահի տեղակալ Լ. Բերիան և Անդրպետքաղվարչության գաղտնի բաժնի վարիչ Մուղդուսին Մոսկվա ուղարկած հույժ գաղտնի զեկուցագրում գրում են, որ մինչև հիմա Էջմիածինն իշխանության ազդեցության ներքո վերցնելու բոլոր ջանքերն ապարդյուն են անցել: Հետևաբար Էջմիածնում ստեղծված իրավիճակը պետք է օգտագործել՝ այն ամբողջովին նվաճելու համար: Գաղտնիք չէ, թե ինչ դերակատարում ուներ Էջմիածինը ոչ միայն Խորհրդային Հայաստանում, այլև Սփյուռքում: Էջմիածնի կաթողիկոսարանը՝ հայոց եկեղեցու հոգևոր, քաղաքական և կազմակերպչական կենտրոնը Հայաստանի և ողջ հայ ժողովրդի հասարակական-մշակութային և քաղաքական կյանքի զարգացման խոշոր գործոն է: Պետք է անպայման Ս. Էջմիածնում ժողով հրավիրելու հնարավորություն տալ, քանի որ հակառակ դեպքում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կարող էր ընտրվել Սփյուռքում, որով խորհրդային կառավարությունը կկորցներ հայ առաքելական եկեղեցին իր հսկողության տակ պահելու վերջին հնարավորությունը: Նույն զեկուցագրում նշվում են կաթողիկոսի բոլոր թեկնածուների անունները՝ իրենց քաղաքական և կուսակցական կողմնորոշումներով: Թեկնածուների շարքում էին Սպահանի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Մեսրոպ Տեր-Մովսիսյանը, Եվրոպական թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Թորգոմ Գուշակյանը, Թավրիզի թեմի առաջնորդ արքեպիսկոպոս Մելիք-Թանգյանը, Կաթողիկոսի տեղակալ արքեպիսկոպոս Խորեն Մուրադբեկյանը՝ որպես դաշնակցականների խիստ ջատագով և հակախորհրդային կողմնորոշում ունեցող անձ, վերջում նշվում է արքեպիսկոպոս Գևորգ Չորեքչյանի անունը, որը, ըստ զեկուցագրի, ներկայացվում է որպես հակադաշնակցական կողմնորոշմամբ և խորհրդային մամուլի կողմից ամենաքիչ վարկաբեկված հոգևորական, ով նաև Թիֆլիսում Վրաստանի թեմի առաջնորդության տարիներին կապ է ունեցել իշխանությունների հետ և նրանց հետ տարել համաձայնեցված աշխատանք: Բերիան զեկուցագրում առաջարկում էր ձգձգել ազգային-եկեղեցական ժողովի հրավիրման թույլտվությունը, որպեսզի կարողանան ժամանակ շահել և ընտրությունների ընթացքում որպես կաթողիկոսի թեկնածու անցկացնել Գևորգ Չորեքչյանին: Շուրջ երկու տարի ձգձգումներից ու Գերագույն հոգևոր խորհրդի կողմից ակտիվ բանակցություններից հետո՝ 1932 թ. ապրիլի 1-ին, Հայաստանի կոմկուսի կենտկոմի բյուրոն կայացնում է գաղտնի որոշում և թույլ է տալիս Ս. Էջմիածնում ազգային-եկեղեցական ժողովի անցկացումը [11]:

Վերջապես երջանկահիշատակ Տ. Գևորգ Ե Ամենայն Հայոց կաթողիկոսի մահից շուրջ երկուսուկես տարի հետո, 1932 թվականի նոյեմբերի 10-ին, Մայր Աթոռում հանդիսավոր իրադրության մեջ և խանդավառ պայմաններում գումարվում է ազգային-եկեղեցական ժողովը՝ Կաթողիկոսի տեղակալ Խորեն արքեպիսկոպոսի նախագահությամբ, որին մասնակցում էին Սփյուռքի, Խորհրդային Հայաստանի և միութենական հանրապետություններից նախապես ընտրված 80 պատգամավորներ, որոնցից 72-ը հոգևորականներ էին, 8-ը՝ աշխարհիկ [16] : Մուտքի թույլտվության հետ կապված խնդիրների պատճառով հայոց ազգային-եկեղեցական ժողովին չեն կարողանում

մասնակցել Կիլիկիայի կաթողիկոսությունը, Երուսաղեմի և Կ. Պոլսի պատրիարքները: Երեք նվիրապետական Աթոռներն էլ նշանակում են իրենց անձնափոխանորդներին. Տ. Խորեն արքեպիսկոպոսը ներկայացնում էր Կիլիկիայի կաթողիկոսությունը, իսկ Տ. Բագրատ արքեպիսկոպոսը՝ Երուսաղեմի պատրիարքին [13] :

Նոյեմբերի 10-13-ը ազգային-եկեղեցական ժողովի ընթացքում զումարվում է 6 նիստ, որտեղ քննարկման և հաստատման են դրվում օրակարգի հետևյալ հարցերը.

1. Ամենայն Հայոց կաթողիկոսի ընտրության եղանակի քննարկում և հաստատում,
2. գերագույն հոգևոր խորհրդի զեկուցումներ. ա) Գերագույն հոգևոր խորհրդի հաստատության և գործունեության մասին, բ) Մայր Աթոռի նյութական կարիքների մասին, գ) Հայ առաքելական եկեղեցու սահմանադրության մասին:
3. զեկուցումներ Հայ առաքելական եկեղեցու բարեփոխումների մասին,
4. ընտրություն Ամենայն Հայոց կաթողիկոսի,
5. ընտրություն Գերագույն հոգևոր խորհրդի անդամների,
6. ողջույն և գոհունակություն ազգային-եկեղեցական ժողովի կողմից Խորհրդային Հայաստանի կառավարությանը [14] :

Նիստում կաթողիկոսի տեղակալը կարդում է Գերագույն հոգևոր խորհրդի կողմից զեկուցում նրա հաստատման և ութամյա գործունեության մասին: Ժողովը հանձնարարում է կազմել ատենապետության բանաձև: Նույն երեկոյան նիստում Տ. Գարեգին արքեպիսկոպոսը կարդում է Գերագույն հոգևոր խորհրդի կազմած սահմանադրության նախագիծը, իսկ Տ. Մատթեոս արքեպիսկոպոսը՝ Մայր Աթոռի նյութական կարիքների մասին զեկուցումներ:

Գերագույն հոգևոր խորհրդի հաստատության և գործունեության մասին որոշվում է՝

1. հավանություն տալ 1924 թվականի հունվարի 1-ի հայրապետական կոնդակին, որով կազմավորվել է Գերագույն հոգևոր խորհուրդը,
2. ընդունել Գերագույն հոգևոր խորհրդի ներկա կազմի հրաժարականը՝ խնդրելով աշխատանքները առժամանակ շարունակել մինչև նոր կազմի ընտրությունը [15] :

Հանձնարարվում է Գերագույն հոգևոր խորհրդին կազմել հատուկ հանձնաժողով՝ Հայոց ազգային եկեղեցու սահմանադրության նախագիծը մշակելու համար՝ հաշվի առնելով Կիլիկիայի կաթողիկոսության և Երուսաղեմի պատրիարքության կարծիքները, կարևորելով հայ առաքելական եկեղեցու նոր սահմանադրության անհրաժեշտությունը, որը պետք է կազմվեր հայոց եկեղեցու պատմական, նվիրական ավանդույթներին համաձայն, արդի մարտահրավերներին ու պահանջներին համապատասխան: Ինչ վերաբերում է Մայր Աթոռի նյութական կարիքներին, որոշվում է՝ նրա նյութական վիճակը ճանաչել միանգամայն անապահով [16] :

1932 թ. նոյեմբերի 12-ին՝ առավոտյան ժամը 11:30-ին, Տ. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը հայտարարում է ազգային-եկեղեցական ժողովի հերթական նիստի բացումը՝ 72 պատգամավորների ներկայությամբ և 80 ձայների իրավասությամբ: Քննարկման են դրվում հայրապետի և Գերագույն հոգևոր խորհրդի ընտրությունների հարցերը: Այնուհետև բաժանվում են քվեաթերթիկները՝ 80-ի փոխարեն 79-ը (Արշակ Չոպ-անյանը ժողովին ներկայանում է քվեարկությունից հետո):

Նախնական ընտրության արդյունքում ստացվում է հետևյալ պատկերը. Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը ստանում է 51 ձայն, Մատթեոս արքեպիսկոպոս Մատթեոսյանը՝ 12 ձայն, Մեսրոպ արքեպիսկոպոսը՝ 10 ձայն, Բագրատ արքեպիսկոպոսը՝ 2 ձայն, Թորգոմ և Գարեգին արքեպիսկոպոսները՝ մեկական ձայն:

Բացի Խորեն և Մաթեոս արքեպիսկոպոսներից՝ մյուսները հաջորդ քվեարկության ժամանակ հրաժարվում են իրենց թեկնածությունից: Մեսրոպ արքեպիսկոպոսը հայտնում է, որ միակ արժանավոր թեկնածուն Մատթեոս արքեպիսկոպոսն է: Կես ժամ ընդմիջումից հետո սկսվում է քվեարկության երկրորդ փուլը: Խորեն արքեպիսկոպոս Մուրադբեկյանը ստանում է 60 ձայն, իսկ Մատթեոս արքեպիսկոպոս Մատթեոսյանը՝ 19 ձայն: Ժողովի նախագահ Խորեն արքեպիսկոպոսը հայտնում է ընտրությունների արդյունքները և հայտարարում Տ. Խորեն արքեպիսկոպոսին Ամենայն Հայոց Կաթողիկոս:

Նոյեմբերի 12-ին՝ Հայրապետի ընտրությունից հետո, հաստատվում է նաև Գերագույն հոգևոր խորհրդի կազմը. 4 հոգևորական (Տ. Գարեգին արքեպիսկոպոս Հովսեփյան, Տ. Գևորգ արքեպիսկոպոս Չորեքչյան, Տ. Արտակ եպիսկոպոս Սմբատյան և Տ. Արսեն եպիսկոպոս Ղլտրճյան), 2 աշխարհիկ ներկայացուցիչներ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսի օծման արարողությունը տեղի է ունենում նոյեմբերի 13-ին Մայր տաճարում՝ 12 եպիսկոպոսների, ազգային-եկեղեցական ժողովի պատգամավորների և հավատացյալ ժողովրդի ներկայությամբ [17] :

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հատիտյան Ա, «Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.)», «Նվիրապետական աթոռները»», էջ 21:
2. «Հասկ», 1932, էջ 51:
3. Հատիտյան Ա, «Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.)», «Նվիրապետական աթոռները»», էջ 22:
4. «Բանբեր» հայագիտական միջազգային հանդես. Hayrapetyan K.- About Archbishop Khoren Muradbekyan՝s Election as Catholicos of all Armenians. 2019p.6.
5. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, Գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ·), կազմեց՝ Բեհբուդյան Ս·, Երևան, 1996, էջ 255:
6. Հայոց պատմություն, հատոր 4, գիրք Ա, Երևան 2010, էջ 525:
7. Նույն տեղում, էջ 526:
8. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, Խորեն Ա Մուրադբեկյան Կաթողիկոս Ամենայն Հայոց (հոգևոր գործունեությունը 1901-1938թթ·), Կազմեց՝ Բեհբուդյան Ս·, Երևան, 1996, էջ 255:
9. «Բանբեր» հայագիտական միջազգային հանդես. Hayrapetyan K.- About Archbishop Khoren Muradbekyan՝s Election as Catholicos of all Armenians. 2019p.6
10. Հատիտյան Ա, «Համառոտ ակնարկ Մ. Աթոռ Ս. Էջմիածնի պատմության վրա (1920-1967թթ.)», «Նվիրապետական աթոռները»», էջ 22:
11. «Բանբեր» հայագիտական միջազգային հանդես. Hayrapetyan K.- About Archbishop Khoren Muradbekyan՝s Election as Catholicos of all Armenians. 2019pp8-9:
12. Էջմիածին», Բ, 1968, Հատիտյան Ա, , էջ 27:
13. «Հասկ», 1932, էջ 43:
14. «Էջմիածին», Բ, 1968, Հատիտյան Ա, , էջ 28:
15. Վավերագրեր հայ եկեղեցու պատմության, գիրք Բ, N 221, էջ 353-357:
16. «Էջմիածին», Բ, 1968, Հատիտյան Ա, , էջ 29:
17. Նույն տեղում, էջ 30:

Միրանուշ Շահբազյան
ՎՊՀ, Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Պատմություն» բաժին 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դոկտոր, պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան
Էլ. փոստ՝ siranush.shahbazyan99@mail.ru

ԱՐԵՎՄՏԱՀԱՅ ՄԱՄՈՒԼԸ ՀՅՈՒՍԻՍԳԵՐՄԱՆԱԿԱՆ ՊԵՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻԱՎՈՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Բանալի բառեր՝ *Ավստրիա-Պրուսիա հակամարտություն, Սադովա, Շլեզվիգ Հոլշտայն, գերմանական միություն, «Արշալոյս Արարատեան», «Մասիս»:*

Արևմտահայ իրականության մեջ իրենց կարևոր տեղն ու նշանակությունն ունեցող «Արշալոյս Արարատեան» և «Մասիս» թերթերը, կարևոր նշանակություն տալով ազգային միասնության գաղափարին, հանգամանորեն ներկայացնում են Հյուսիսգերմանական պետությունների միավորման համար մղվող պատերազմները և դրան նախորդող իրադարձությունները: Այս պարբերականները Հյուսիսգերմանական պետությունների միավորումը համարում են «սրբազան գործ», որն ըստ էության վերջ կդներ գերմանական պետությունների մասնատվածությանը:

Сирануш Шахбазян

ЗАПАДНОАРМЯНСКАЯ ПРЕССА О СОЗДАНИИ СЕВЕРНОГЕРМАНСКОГО СОЮЗА

Ключевые слова: *Австро-Прусский конфликт, Садова, Шлезвиг-Гольштейн, Германский союз, “Аршалуйс, Араратеан”, “Масис”.*

Газеты “Аршалуйс Араратеан” и “Масис”в западноармянской действительности придавали важное значение идее национального единства, подробно описывали войны за единство северногерманских государств и предшествующие этому события. Объединение северногерманских государств в единый союз газеты считают “священным делом”, который положил конец раздробленности германских государств.

1815թ. հունիսի 9-ի Վիեննայի վեհաժողովի եզրափակիչ ակտով հավանության տրվեց Ավստրիայի կանցլեր Մետերնիխի առաջարկին՝ «գերմանական միություն» ստեղծելու մասին:

Միության կազմի մեջ էին մտնելու 38 գերմանական պետություններ, այդ թվում՝ Ավստրիան և Պրուսիան[1]: Երկար տարիներ Գերմանական պետությունները մնացին քաղաքականապես մասնատված: 1848թ. մայիսի 18-ին Ֆրանկֆուրտում հրավիրված համագերմանական խորհրդարանը փորձեց սահմանադրական ճանապարհով միավորել գերմանական պետությունները, բայց հաջողության չհասավ: Միայն 1860-ական թվականներին Պրուսիայի կանցլեր Օտտո Բիսմարկի շնորհիվ Գերմանական պետությունները միավորվեցին, որը լուրջ հարված էր Վիեննայի համակարգին[2]: 1866թ.

[1] *Տե՛ս **Зак Л.**, Монархи против народов, М. 1966, с. 155.*

[2] ***Хиллыгрубер А.**, Отто фон Бисмарк (Основатель великой европейской державы Германской Империи) Ф. 1998., с. 7.*

ավստրո-պրուսական պատերազմում՝ Սադովա գյուղի մոտ տեղի ունեցած ճակատամարտում, Պրուսիան լիակատար հաղթանակ տարավ, որը հիմք հանդիսացավ Գերմանիայի միավորման համար[1]:

Ժամանակի հայ հասարակական միտքը և հատկապես արևմտահայ պարբերական մամուլը կարևորել են Հյուսիսգերմանական պետությունների միավորումը: Այս մասին արևմտահայ պարբերականների հրապարակումները կրել են մշտական բնույթ: Պոլսահայ «Մասիս» թերթը եվրոպական հրապարակումների հիման վրա մշտապես լուսաբանում էր ավստրո-պրուսական պատերազմի ընթացքը: Թերթը ստացված լուրերի ընտրության հարցում որևէ կաշկանդվածություն չուներ և հրապարակում էր հասարակական քաղաքական տարբեր ուղղվածություն ունեցող նյութեր: Դրանով թերթի խմբագիր Կ. Յութաճյանը դրանց իսկության և հավաստիության հարցը թողնում էր ընթերցողներին:

Զմյուռնիայում լույս տեսնող ազգային պահպանողական հոսանքը ներկայացնող «Արշալոյս Արարատեան» քաղաքական, հասարակական, առևտրային թերթը (խմբագիր Ղուկաս Գ. Պալտազարյան), 1860թ. ապրիլի 2-ի համարում գրում է, որ Պրուսիայի և Ավստրիայի միջև Շլեզվիգ-Հոլշտայնի դքսության համար ծագած վեճը գնալով ծանրանում և խիստ վտանգավոր է դառնում[2]:

«Արշալոյս Արարատեան»-ի համոզմամբ՝ այս ծանր վեճի շարունակությունը հանգեցնելու է երկու մեծ տերությունների միջև պատերազմի:

Անդրադառնալով Ավստրիայի և Պրուսիայի միջև տեղի ունեցած Սադովայի ճակատամարտին՝ թերթը գրում է. «Այժմ, որ Բրուսիան իւր յաղթութեան գինովութեան մէջ կրնայ երևակայել գերմանական կայսրութեան երազը որ յառաջագոյն մտացածին բան մը կերևէր, Գաղիոյ կացութիւնը բոլորովին կըփոխուի: Կայսրը ըսաւ թէ 1815թ. դաշնադրութիւններէն մեզի համար ծագած ամենէն վտանգաւոր բանը՝ Բրուսիան է. Բրուսիա մը՝ որ կընդարձակէ իւր սահմանները՝ նոյն իսկ դաշնադրութիւններէն աւելի յոռի պիտի ըլլայ»[3]: Սրանով «Արշալոյս Արարատեանը» իրավացիորեն բացահայտում է այն իրողությունը, որ Պրուսիան նպատակ է հետապնդում իր շուրջը համախմբել Հյուսիսգերմանական պետությունները:

1866թ. պատերազմում Պրուսիան Իտալիային դարձրեց իր դաշնակիցը, որի կապակցությամբ «Արշալոյս Արարատեանը» գրում էր. «Իսկ Բրուսիոյ դաշնակից Իտալիան միայն Վենետիկը առնելով գոհ չլլար, այլ կուզէ որ հարաւային Թիրջն ալ իրեն տրուի, ուր մինչև ցայսօր Կարիպալտին կամաւոր զինուորները թեպէտև շատ աշխատեցան այլ տակաւին ներս չկրցան մտնել»[4]:

«Արշալոյս Արարատեանը» նաև նշում է, որ 1866թ. ճակատամարտում ավստրիացիների կրած վնասները հազիվ թե 2000 զոհ և վիրավոր լինի, իսկ պրուսացիների վնասները եթե ոչ ավել, ապա պակաս չի լինի: Այստեղ նաև խոսվում էր այն մասին, որ պրուսացիների նկատմամբ եղած թշնամությունը գնալով ավելի էր մեծանում, և որ Ավստրիայի կայսրը չէր ցանկանում անպատիվ հաշտություն կնքել:

Թերթի հաջորդ համարում ներկայացվում են այն պահանջները, որոնք Պրուսիան ներկայացնում էր Ավստրիային՝ «Բրուսիան նախ կըպահանջէ, որ Աւստրիան գերմանական դաշնակցութենէ ելլէ, և ուրիշ նոր դաշնակցութիւն կազմուի նախագահութեամբ Բրուսիոյ կառավարութենէ, որ օտար տէրութեանց առջև պիտի ներկայացնէ գերմանական ազգը:

---

[1] *«Մասիսը», Կ. Պոլիս, 1866թ., 2 հուլիս, թիւ 747:*

[2] *«Արշալոյս Արարատեան», Զմիւռնիա, 2 ապրիլ, 1860, թիւ 776:*

[3] *«Արշալոյս Արարատեան», 1866 թ., թիւ 776:*

[4] *Նույն տեղում, 23 օգոստոս, 1866թ., թիւ 783:*

Երկրորդ կրպահանջէ, որ Շլեզվիկ-Հոլշտայնի դքսութիւնները, ինչպես նաև Բրուսիոյ զգաբանակէն գրաւուած քանի մի նահանգները Բրուսիոյ միապետութեանը հետ միաւորուին: Երրորդ կրպահանջէ, որ Աւստրիան յանձառու ըլլայ վճարելու պատերազմին ծախքը...»[1]: Թերթը նաև նշում էր, որ Պրուսիան այլ պահանջներ էլ ունի, սակայն հարկ չի համարում ներկայացնել դրանք:

Արևմտահայ հասարակական - քաղաքական հոսանքների պատմության մեջ նշանակալից դեր խաղացած «Մասիս» հասարակական, քաղաքական և գրական թերթը ընդգծված համակրանք է տածում Եվրոպայում ծայր առած ազատագրական, ինչպես նաև ազգային միասնությանն ուղղված շարժումների նկատմամբ՝ հետևողականորեն պաշտպանելով ազգային ինքնուրույնության սկզբունքները: Ավստրիայի և Պրուսիայի միջև տեղի ունեցող պատերազմի պատճառներից մեկը «Մասիսը» համարում է Շլեզվիգ-Հոլշտայնի խնդիրը[2], բայց նաև գրում է, որ Շլեզվիգ-Հոլշտայնը Պրուսիայի փառասիրությունը բավարարելու միայն փոքր մասն է: Ուստի Պրուսիան միայն Շլեզվիգ-Հոլշտայնի համար Ավստրիայի դեմ պատերազմ չէր սկսի: Պրուսիայի բուն նպատակը իր սահմանները ընդարձակելն է, և այդ նպատակին է ծառայում գերմանական պետությունների միավորման առաջարկությունը:

Գերմանական պետությունների միավորման հարցում Ֆրանսիայի օգնությունը ստանալու համար Օտտո Բիսմարկը Ֆրանսիային խոստանում էր Ռեյնի ձախ հատվածը: Սակայն Ֆրանսիան, որ գերմանական պետությունների միավորումը համաեվրոպական խնդիր էր համարում, չէր կարող բավարարվել միայն Ռեյնի գավառներով: Ուստի իր չեզոքության մասին հայտարարություններ տարածելով՝ Ֆրանսիան սպասում էր Ավստրիայի ու Պրուսիայի միջև պատերազմին, քանի որ ինքը դրանից վնաս չուներ[3]:

«Մասիսը» 1866թ. մարտի 26-ին լույս տեսած համարում նշում է, որ վերջին ամիսների ընթացքում Պրուսիան ոչ միայն ամեն միջոց գործադրում էր դքսությունների մեջ Ավստրիայի իշխանությունը թուլացնելու համար, այլև այնպիսի ծանուցումներ էր ուղարկում Վիեննա, որոնք սպառնալիք էին դիտարկվում[4]: Լրագիրը կանխատեսում էր, որ հնարավոր է՝ այս հարցին միջամտի Ֆրանսիան, խնդիրը լուծի՝ հաշվի առնելով Շլեզվիգ-Հոլշտայնի բնակչության կամքը: Սակայն մինչև հիմա դքսության բնակչության փափագը գերմանական դաշնակցության մեջ առանձին իշխանություն կազմելն էր, և «անոնց կամքն հարցընելու մտօք եղած իրաւարարութիւն մ' ամենեւին Բրուսիոյ բանին չդար»[5]: Ուստի լրագիրը գտնում է, որ դրությունը երկու կողմից էլ ծանր էր, և պատերազմն անխուսափելի է:

1866թ. լույս տեսած համարներում «Մասիսը» Պրուսիայի և Ավստրայի միջև եղած հակամարտությունը ներկայացնում է արտասահմանյան լրագիրների հրապարակումներով, որը վկայում է թերթի հետաքրքրությունը այս խնդրի վերաբերյալ: Կարևորելով այն

---

[1] *Նույն տեղում, 23 հունիս, 1866թ., թիւ 784:*

[2] *1863թ. նոյեմբերի 13-ին Դանիայի թագավոր Ֆրեդերիկ VII-ը դանիական սահմանադրությունը տարածեց Շլեզվիգի և Լաուենբուրգի վրա, որոնք միավորվում էին Հոլշտայնի հետ անձնական դաշինքով: Շլեզվիգի և Լաուենբուրգի գերմանական բնակչությունը ընդվզեց դանիական սահմանադրության դեմ: Չնայած Ավստրիայի և Պրուսիայի լարված հարաբերություններին, նրանք համատեղ հանդես եկան Դանիայի դեմ: Ավստրո-պրուսական զորքերը 1864թ. փետրվարի 1-ին ներխուժեցին Շլեզվիգ: Օգոստոսի 2-ին կնքվեց զինադադար, իսկ հոկտեմբերի 30-ին հաշտության պայմանագիր, որով Ավստրիան և Պրուսիան ձեռք էին բերում Շլեզվիգի, Հոլշտայնի և Լաուենբուրգի համատեղ կառավարումը: Սակայն այս պայմանները կողմերին չէր բավարարում, որն էլ դառնում է պատերազմի առիթներից մեկը: Տե՛ս Чубинский В.В. Бисмарк. Политическая биография, М. 1988., Г. 5, с. 145:*

[3] *«Մասիս», Կ. Պոլիս, 1866թ. 9 ապրիլ, թիւ 735:*

[4] *Նույն տեղում:*

[5] *Նույն տեղում:*

հանգամանքը, թե ով է սկսել պատերազմը, «Մասիսը» հանգամանորեն ներկայացնում է նախապատերազմական դրությունը երկու երկրներում: Իրավիճակը ճիշտ որոշելու համար «Մասիսը» անդրադառնում է երկու երկրների դեսպանների նամակագրություններին: Ավստրիայի արտաքին գործերի նախարարը ապրիլի 26-ին Օտտո Բիսմարկին գրած նամակում ասում էր, որ Ավստրիան իր զորքերը դուրս է բերում Բոհեմիայից և Պրուսիային մնում է միայն վեճի լուծումը թողնել գերմանական պետություններին և խաղաղության երաշխիքներ տալ: Օտտո Բիսմարկը ապրիլի 30-ին այս ծանուցագրին պատասխանելով զարմանում էր, որ Ավստրիան հակառակ է գործում իր ապրիլի 18-ի ծանուցագրին, որով առաջարկում էր երկու կողմերին դադարեցնել պատերազմի նախապատրաստությունները: Բիսմարկը գրում էր, որ Ավստրիան Բոհեմիայից զորքը ետ է կանչում, բայց այլ ուղղություններում զորք է պատրաստում, և սա արդարացնում է նրանով, թե Իտալիայի կողմից կա[1]:

«Մասիս»-ը 1866թ. հուլիսի 12-ի համարում գրում է, որ կարևոր լուրեր են ստացվել Գերմանիայից և դրանց հետևանքների մասին ներկայացնում է հետևյալը. «1866թ. հուլիսի 3-ին Սավոյի մոտ տեղի է ունենում ճակատամարտ, որտեղ Պրուսացիները ունեին 280000 զորք, իսկ Ավստրիացիները 250000 զորք, Պրուսիան լիակատար հաղթանակ է տանում»[2]:

«Մասիսը» Պրուսիայի հաղթանակի երկու հիմնական պատճառ է ներկայացնում. «Նախ իրենց զորապետներուն ռազմագիտական ճարատրութեանը, իսկ Աւստրիոյ ձախորդութեան գլխաւոր մէկ պատճառն ալ իրենց զորապետոյ դանդաղութիւնը կը համարուի. Բրուսիացիք Սիլեզիայի մէջ ամուր բերդեր շինած ըլլալով Պէնէէք չէ կրցեր համարձակիլ հոն արշաւելու. Իսկ բրուսաիացիք իրենց Պօհէմիայի սահմանադրրու հոները լաւ ամրացուած չըլլալով Բրուսիացիք դիմրութեամբ կրցեր են յառաջ քայլել Հանութէ և Պոհէմիա լեռնոա երկիր մ՚ըլալով» [3]:

1866թ. հուլիսի 12-ի համարում «Մասիսը» գրում էր, որ Ավստրիան այս պատերազմից կարող էր մեծ օգուտներ քաղել, սակայն վախկոտ զորավարների սխալների պատճառով թշնամին հաղթանակ է տանում: Սրանից կարելի է հասկանալ Բեռլինում կատարված հաղթական հանդեսների և Վիեննայում տիրող վախի ու սարսափի մասին:

Այսպիսով, հանգամանորեն ներկայացնելով Հյուսիսգերմանական պետությունների միավորման համար Ավստրիայի և Պրուսիայի միջև մղած պատերազմները և դրան նախորդող իրավիճակը «Մասիսը» փորձում է հնարավորինս չեզոք դիրքից հանդես գալ, թերևս ակնհայտ է այն ոգևորությունը, որ ապրել են արևմտահայերը, այդ թվում նաև «Մասիսը» Հյուսիսգերմանական պետությունների միավորման հարցում՝ հաճախ նաև համեմատականներ տանելով սեփական երկրի միավորման անհրաժեշտության հետ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արշալոյս Արարատեան», Զմիյուռնիա, 1866թ:
2. «Մասիս», Կ. Պոլիս 1866թ:
3. Чубинский В.В. Бисмарк. Политическая биография, М. 1988.
4. Зак Л. Монархи против народов. М. 1966.
5. Хиллгрубер А. Отто фон Бисмарк (Основатель великой европейской державы Германской Империи) Ф. 1998.

[1] *Նույն տեղում, 1866թ. մայիս 7, թիւ 739:*

[2] *Նույն տեղում, 1866թ. հուլիս 12, թիւ 747:*

[3] *Նույն տեղում:*

ՀՏԴ941 (327.5/479.243) Պատմություն և քաղաքագիտություն

Շարոյան Էլեն
ՎՊՀ, Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Պատմություն» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր, Ֆ. Մովսիսյան
Էլ. փոստ՝ elen2099@mail.ru

ԱՄՆ - Ի ՀԱՅ ԴԱՏԻ ՀԱՆՁՆԱԽՄԲԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽՅԱՆ ՀԱՐՑԻ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՈՒՂՂՈՒԹՅԱՄԲ

Բանալի բառեր՝ *հայ-ադրբեջանական հակամարտություն, արցախա-ադրբեջանական շփման գիծ, դիվերսիա, ԵԱՀԿ Մինսկի խումբ, լոբբիստական կազմակերպություն*

Սույն զեկույցի նպատակն է կրկին ուշադրության արժանացնել Սփյուռքում գործող հայկական լոբբիստական կազմակերպությունների գործունեությունը: Արցախյան խնդրի կարգավորումը մշտապես եղել է սփյուռքահայության ուշադրության կենտրոնում, որի ապացույցն է Հայ դատի հանձնախմբի գործունեությունը: Այն թեև սպասված արդյունքը չտվեց, սակայն կրկին աշխարհին լսելի դարձրեց հայության պահանջը և ցույց տվեց, որ անհրաժեշտության դեպքում հայ ժողովուրդը կարող է միավորվել և պաշտպանել իր ազատ ապրելու իրավունքը:

Элен Шароян

ДЕЯТЕЛЬНОСТЬ КОМИТЕТА АМЕРИКИ ПО АРМЯНСКОМУ ДЕЛУ ПО УРЕГУЛИРОВАНИЮ КАРАБАХСКОГО ВОПРОСА

Ключевые слова: *армянско-азербайджанский конфликт, карабахско-азербайджанская контактная линия, диверсия, Минская группа ОБСЕ, лоббистская организация*

Привлечь вновь внимание общественности к деятельности армянских лоббистских организаций, которые работают в диаспоре является целью данной статьи. Урегулирование карабахского вопроса всегда было в центре внимания армянской диаспоры, доказательством которого является деятельность комитета по армянскому вопросу. Хотя он не дал ожидаемого результата, тем не менее мир еще раз услышал справедливое требование армян и подчеркнул, что в случае необходимости армянский народ может объединиться и защитить свое право на жизнь.

Խորհրդային միության անկումից և Հայաստանի Հանրապետության հռչակումից հետո ամերիկահայ լոբբիստական մի շարք ընկերություններ սկսեցին հսկայական գործունեություն ծավալել ոչ միայն Հայկական հարցի և հայոց ցեղասպանության ճանաչման ու դատապարտման, այլ նաև Արցախյան հարցի կարգավորման ուղղությամբ: Չնայած այն հանգամանքին, որ ԱՄՆ-ում գործում են շուրջ մեկ տասնյակ հայկական լոբբինգային կազմակերպություններ, այնուամենայնիվ, իրենց դերով և ազդեցությամբ առանձնանում են երկուսը՝ Ամերիկայի հայկական համագումարը և Ամերիկայի Հայ ազգային կոմիտեն: Վերջինս հայտնի է նաև *ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբ* անունով[1]:

1988 թվականի փետրվարին սկսված պայքարը մինչ օրս չի ավարտվել և իր հանգուցալուծումը չի գտել: 1994 թվականի մայիսին կնքված զինադադարը սոսկ ձևական և ժամանակավոր բնույթ էր կրում, որում մենք մինչ օրս էլ համոզվում ենք: Մեր օրերում ադրբեջանական ագրեսիան դեռևս պահպանվում է, որի դրսևորումներին մենք բազմիցս ականատես ենք եղել: Ընդ որում, այն իրականացվում է ոչ միայն արցախ-ադրբեջանական, այլ նաև հայ-ադրբեջանական սահմանին :

Ամերիկայի Հայ ազգային կոմիտեն կամ Հայ դատի հանձնախումբը հիմնադրվել է 1918

[1] *«21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հինադրամի հանդես, Երևան, 2017թ., Թիվ 6(76), էջ 120:*

թվականին Ուոթերթաունում[1]: Այն ԱՄՆ-ում գործող հայկական խոշոր և ազդեցիկ լոբբիստական կազմակերպություններից է և իրականացնում է համայն հայության շահերի պաշտպանության քաղաքականություն տարբեր ոլորտներում: Գործելով Ամերիկայի Միացյալ Նահանգների ամբողջ տարածքում՝ Հայ դատի հանձնախումբը ակտիվորեն առաջ է մղում ԱՄՆ-ի հայ համայնքի շահերը:

Ներկայումս ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի գործունեության մեջ առանձնացվում են չորս հիմնական ուղղություններ.

1. Հայոց ցեղասպանության միջազգային ճանաչում,
2. Արցախյան հիմնահարցի կարգավորում,
3. Հայաստանին Ամերիկայի Միացյալ նահանգների կողմից տրամադրվող օգնության ավելացում,
4. Հայ-ամերիկյան հարաբերությունների զարգացում[2] ((121):

Այս բոլոր 4 ուղղություններով տարվում են ակտիվ աշխատանքներ, որի լավագույն ապացույցներից մեկն այն է, որ 2016 թվականի դեկտեմբերի 3-ին Հայ դատի հանձնախումբը ԱՄՆ-ի Իլինոյզ նահանգի սենատոր Մարկ Քըրքին պարգևատրեց բարձրագույն՝ Ազատության շքանշանով: Այսպես Ամերիկայի հայ համայնքը իր երախտագիտությունն էր հայտնում Մարկ Քըրքի հայ-ամերիկյան հարաբերությունների լավացման, ԱՄՆ-ի կողմից Հայոց ցեղասպանության ճանաչման և Արցախին ու Հայաստանին տրամադրվող օգնության մեծացմանն ուղղված գործունեության համար[3]:

Արցախյան հիմնահարց ասելով մենք պետք է նկատի ունենանք ոչ միայն Արցախի անկախության ճանաչման գործընթացը, այլ նաև արցախա-ադրբեջանական շփման գծում հրադադարի ռեժիմի ամրապնդումը, սոցիալական ծրագրերի իրականացումը և իհարկե ԱՄՆ-ի կողմից Ադրբեջանին տրվող ռազմական օգնության սահմանափակումը:

1994 թվականի զինադադարը միայն ժամանակավորապես հանգստացրեց Ադրբեջանում տիրող հակահայկական տրամադրությունները: Վերջին տասնամյակում հայ-ադրբեջանական և արցախա-ադրբեջանական շփման գծում լարվածությունը չի դադարում: Հայ դատի հանձնախումբը որպես Արցախյան հիմնահարցի լուծումը կարևորող կառույց, իր ակտիվ դերակատարումն ունի Արցախյան խնդրի կարգավորման գործում:

2009 թվականի հուլիսի 10-11-ին Հայ դատի կենտրոնական խորհրդի նախաձեռնությամբ Արցախի Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտում հրավիրվեց համահայկական խորհրդաժողով, որը նվիրված էր հայ-թուրքական հարաբերություններին և Արցախյան հարցի կարգավորմանը: Խորհրդաժողովին ներկա էր նաև Արցախի Հանրապետության նախագահ Բակո Սահակյանը: Երկու օր տևած քննարկումների արդյունքում խորհրդաժողովը հրապարակեց միացյալ բանաձև, որով աշխարհի 25 պետություններից ժամանած հայ պատվիրակները վճռականություն դրսևորեցին բոլոր միջոցներ գործի դնել ազգային, պետական շահի պաշտպանության համար և հակամարտության կարգավորման հարցում միասնականություն ցուցաբերել[4]:

ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը մշտապես հետևում է Հայաստանում և Արցախում ընթացող գործընթացներին՝ հատկապես շփման գծում տիրող իրավիճակին:

---

[1] *Հայ Սփյուռք Հանրագիտարան, Երևան, 2003թ., էջ 59»*

[2] *«21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հինադրամի հանդես, Երևան, 2017թ., թիվ 6(76), էջ 120 -121:*

[3] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 4 դեկտեմբերի 2016թ., թիվ 252(22628) էջ 3:*

[4] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 11 հուլիսի, , 2009թ., թիվ 136(20586) էջ 1:*

Հանձնախումբը բազմիցս հանդես է եկել հայտարարություններով և կոչերով, որոնք ուղղված են եղել ոչ միայն ԱՄՆ-ի կառավարող շրջանակներին, այլ նաև Ադրբեջանին:

2012 թվականի հունիսի 4-ին ադրբեջանական զինված ուժերը իրականացրին դիվերսիոն ներթափանցման փորձ՝ կրակահերթ բացելով ՀՀ Տավուշի մարզի Բերդավան և Չինարի գյուղերի ուղղությամբ: Հրաձգության արդյունքում հայկական կողմը տվեց երեք զոհ (Հրաչ Սարգսյան, Զոհրաբ Բալաբեկյան, Կարեն Դավթյան) և հինգ վիրավոր: Այս դեպքերի կապակցությամբ նույն օրը Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը նամակ է ուղղում ԱՄՆ-ի պետքարտուղար Հիլարի Քլինթոնին՝ կոչ անելով խստորեն դատապարտել ադրբեջանական ագրեսիան: Հանձնախումբը հատկապես ուշադրության էր արժանացնում այն հանգամանքը, որ ադրբեջանական դիվերսիան իրականացվեց Քլինթոնի տարածաշրջանային եռօրյա այցի շրջանակներում[1]:

Պետքարտուղար Հիլարի Քլինթոնը, սակայն, առանձնապես չդատապարտեց Չինարիում տեղի ունեցածը, այլ բավարարվեց միայն խորին մտահոգություն հայտնելով: Միևնույն ժամանակ Քլինթոնը հերթական անգամ ընդգծեց, որ հակամարտությունը ունի միայն խաղաղ լուծում, և կոչ արեց հակամարտող կողմերին զերծ մնալ ուժի կիրառումից՝ կրկին հստակ չմատնանշելով հրադադարը խախտող կողմին[2]:

Միաժամանակ ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախումբը գրություններ է ուղարկում Կոնգրեսին և Սպիտակ տանը՝ կոչ անելով կասեցնել Ադրբեջանին տրամադրվող ռազմական օժանդակությունը:

Այս առումով հատկանշական է այն հանգամանքը, որ Հայ դատի հանձնախմբի իրականացրած գործունեության արդյունքում ԱՄՆ-ի մի քանի նահանգներ՝ Ռոդ Այլենդը, Մասսաչուսեթսը, Մենը, Լուիզիանան, 2012-2013 թվականների ընթացքում ընդունեցին Արցախի ինքնորոշմանն ու անկախությանը վերաբերող բանաձևեր[3]:

Ողջունելի է Ամերիկայի նահանգային իշխանության վարած այս քաղաքականությունը, որը պայմանավորված էր մի քանի հանգամանքներով: Նախ՝ այս նահանգներում, որոնց 2014 թվականին միացավ նաև Կալիֆոռնիան, հայկական լոբբիստական կազմակերպությունները բավականին ակտիվ գործունեություն են ծավալում: Մյուս կողմից, 2012-2013 թվականներին որոշակի լարվածություն մտավ նաև ադրբեջանա-ամերիկյան հարաբերություններում, որը ևս նպաստեց նահանգների կողմից Արցախի անկախությանն ու ինքնորոշմանը վերաբերող բանաձևերի ընդունմանը: Սակայն, որքան էլ այս ամենում լինեն քաղաքական դրդապատճառներ, այն, անշուշտ, մեկ քայլ առաջ էր բանակցային գործընթացում:

Սակայն այս ամենը ոչ միայն չզսպեց ադրբեջանական ագրեսիան, այլ նաև մի նոր թափ հաղորդեց դրան: 2014 թվականի հունվարի 19-ի լույս 20-ի գիշերը Արցախի Հանրապետության Մարտակերտ քաղաքից ոչ հեռու՝ Զրաբերդի շրջանում, ադրբեջանական զինված ուժերի կողմից իրականացվեց դիվերսիոն ներթափանցման փորձ, որը կանխվեց հայ դիրքապահների կողմից: Բախման արդյունքում հայկական կողմը տվեց մեկ զոհ: Մարտի դաշտում հերոսաբար ընկավ Պաշտպանության բանակի կրտսեր սերժանտ Արմեն Հովհաննիսյանը[4]:

---

[1] *Տե՛ս «Ազգ» օրաթերթ, Երևան, 5 հունիսի, 2012թ., թիվ 100 (4952), էջ 1-2:*

[2] *Տե՛ս «Ազգ» օրաթերթ, 6 հունիսի, 2012թ., թիվ 101(4953), էջ 1:*

[3] ***Մամյան Լ.**, Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովումը ամերիկահայ լոբբիստական կազմակերպության գործունեության առանցքում, էջ 7:*

[4] *Տե՛ս «Լույս» ամսագիր, Թեհրան, Թիվ 183, հունվար, 2014թ.:*

Նույն թվականի հուլիսին ադրբեջանական կողմը կրկին խախտեց հրադադարի ռեժիմը: Հուլիսի 26-ից օգոստոսի 2-ը արցախա-ադրբեջանական շփման գոտում ընթացան ծանր մարտեր, որի արդյունքում հայկական կողմը տվեց հինգ զոհ (Խաչատուր Բադասյան, Արարատ Խանոյան. Ազատ Ասոյան, Զորիկ Գևորգյան, Սարգիս Մովսիսյան) և 7 վիրավոր: Ադրբեջանական կողմի կորուստներն անհամեմատ ավելի մեծ էին (25 զոհ և 30 վիրավոր)[1]:

Այս իրադարձություններին արձագանքեց նաև Ամերիկայի Հայ դատի հանձնախումբը, որի անդամներ Արամ Համբարյանը և Քեյթ Նահապետյանը օգոստոսի 8-ին հանդիպեցին ԵԱՀԿ Մինսկի խմբի համանախագահ Ջեյմս Ուորլիքի հետ և նրան փոխանցեցին Հանձնախմբի նախագահ Քեն Խաչիկյանի նամակը: Նրանում մասնավորապես նշվում էր, Ադրբեջանի նախագահ Ալիևի կողմից սանձազերծված հարձակումները Հայաստանի և Լեռնային Ղարաբաղի նկատմամբ ճակատագրական էին ու տասնյակ մարդկանց կյանք խլեցին՝ միաժամանակ բացասաբար անդրադառնալով ԵԱՀԿ Մինսկի խմբի աշխատանքների վրա[2]: Նամակի ամբողջական տեքստը տեղադրվեց «Ալիք» օրաթերթում, որի հերթական համարի հղումը տրված է ստորև[3]:

Սակայն ադրբեջանական իշխանությունը, հավատարիմ մնալով իր որդեգրած ագրեսիվ քաղաքականությանը, շարունակում է խախտել հրադադարի ռեժիմը՝ այս անգամ արդեն հարձակվելով հայկական օդուժի վրա: Այսպես, 2016 թվականի նոյեմբերի 13-ին արցախա-ադրբեջանական շփման գծի արևելյան հատվածի օդային տարածքում ուսումնավարժական թռիչքի ժամանակ ադրբեջանական զինված ուժերի կողմից խոցվում է Արցախի Հանրապետության ռազմաօդային ուժերի «MI-24» ուղղաթիռը: Խոցված ուղղաթիռի բոլոր 3 անդամները զոհվում են[4]:

Այս դեպքերի առթիվ անմիջապես հայտարարություն տարածեց Հայ դատի ամերիկյան հանձնախումբը՝ կոչ անելով ԱՄՆ-ի Կոնգրեսին դատապարտել ադրբեջանական հարձակումը արցախյան օդուժի անզեն ուղղաթիռի վրա: Նշվում էր, որ այս կերպ Ադրբեջանը ևս մեկ անգամ խախտում է 1994-ի հրադադարը և մարդկային կյանքերի կորստի համար զոջում արտահայտելու փոխարեն ռազմական մեղալ է շնորհում ուղղաթիռը խփողին[5]: Ողջունելի է Հանձնախմբի այսչափ սրտացավ և հստակ դիրքորոշումը, սակայն ինչպես գրեթե միշտ է եղել, այս անգամ ևս հանձնախմբի կոչը մնաց անարձագանք, քանզի այս անգամ ևս ԵԱՀԿ Մինսկի խմբի հայտարարությունը կոնկրետ հասցեատեր չուներ: Ինչպես նախորդ դեպքերում, այս անգամ նույնպես Համանախագահների կոչը ուղղված էր հակամարտող երկու կողմերին[6]:

Համանախագահների հայտարարությունը ինչպես նախորդ դեպքերում, այնպես էլ հիմա ոչ մի ազդեցություն չունեցավ ադրբեջանական կառավարության վրա: Արդյունքում հրադադարի խախտման և դիվերսիոն ներթափանցման հերթական փորձը գրանցվեց 2015 թվականի հունվարին, որի արդյունքում հայկական կողմը կրկին հետ շպրտեց հակառակորդին: Ողջ 2015 թվականի ընթացքում լարվածությունը թե՛ հայ-ադրբեջանական և թե՛ արցախա-ադրբեջանական սահմանին պահպանվեց:

Լարվածությունն իր գագաթնակետին հասավ 2016 թվականի ապրիլին: Ապրիլի 1-ի լույս

---

[1] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 2 օգոստոսի 2014թ., Թիվ 151 (21976) էջ 1*

[2] ***Մամյան Լ.**, նշվ. աշխ., էջ 9:*

[3] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 10 օգոստոսի 2014թ., թիվ 15(821983) էջ 1 և 8:*

[4] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 13 նոյեմբերի 2014թ., թիվ 160 (21985) էջ 3:*

[5] *Հայաստանի Հանրային ռադիո, 13 նոյեմբերի, 2014թ.:*

[6] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 16 նոյեմբեր 2014թ., թիվ 237 (22062), էջ 2:*

2-ի գիշերը ադրբեջանական կողմը, կոպտորեն խախտելով 1994 թվականի մայիսի 12-ին կնքված զինադադարի դրույթները, լայնածավալ հարձակում սկսեց արցախա-ադրբեջանական շփման գոտու ողջ երկայնքով: Ապրիլի 2-5-ը ընթացած մարտերի արդյունքում երկու կողմերն էլ կրեցին հսկայական մարդկային և նյութական կորուստներ:

Ապրիլյան քառօրյա պատերազմի վերաբերյալ հայտարարություններ տարածեցին ողջ աշխարհում գործող Հայ դատի գրասենյակները: Ապրիլի 6-ին հայտարարությամբ հանդես եկավ նաև Ամերիկայի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արմեն Համբարյանը: Համբարյանն իր ուղերձում հորդորում էր ԱՄՆ-ի նախագահ Բարաք Օբամայի վարչակազմին վերջ դնել Իլհամ Ալիևի կողմից սանձազերծած հարձակումներին Արցախում, որը վատթարագույնն էր 1994 թվականի զինադադարից հետո: Հայտարարության մեջ ուշադրություն էր դարձվում այն հանգամանքին, որ Վաշինգտոնում ԱՄՆ-ի ղեկավարության կողմից ջերմ ընդունելության արժանանալուց հետո՝ Ալիևը սանձազերծել է լայնամասշտաբ հարձակումներ: Համբարյանը նաև շեշտել է այն փաստը, որ ո՛չ ԱՄՆ-ի փոխնախագահ Ջո Բայդենը, ո՛չ էլ ԱՄՆ-ի պետքարտուղար Ջոն Քերին Ալիևի հետ ունեցած հանդիպումների ժամանակ որևէ կերպ նրան չեն հորդորել գնալ իրադրության լարվածությունը թոթափելուն ուղղված քայլերի: Ադրբեջանի նախաձեռնած ռազմական գործողությունների արդյունքում հայկական կողմի զոհերի մեջ եղել են նաև քաղաքացիական անձինք:[1]:

Ռազմական գործողությունների վերաբերյալ հայտարարություն տարածեց ԱՄՆ-ի արտաքին գործերի նախարարությունը, որում մասնավորապես նշվում էր, որ Միացյալ Նահանգները խստորեն դատապարտում է Արցախում շփման գոտում հրադադարի լայնածավալ խախտումները, որոնք դարձել են թե՛ զինվորականների, թե՛ քաղաքացիական անձանց շրջանում: Հայտարարության առանցքային արտահայտությունը հետևյալն էր. «Կողմերին կոչ ենք անում ցուցաբերել զսպվածություն, զերծ մնալով հետագա լարումից պահպանել հրադադարի ռեժիմը»[2]:

Հաշվի առնենք այն հանգամանքը, որ ԱՄՆ-ի ղեկավարության տարածած հայտարարությունը հերթականն էր, այն շարքից, որոնք հստակ հասցեատեր չունեին և ուղղված էին միաժամանակ երկու կողմերին, այն դեպքում, երբ շատ պարզ էր, որ հրադադարի խախտման ողջ պատասխանատվությունը պետք է դրվեր ադրբեջանական կողմի վրա:

Ապրիլյան քառօրյա պատերազմից հետո Արցախյան հարցի կարգավորման խնդիրը և հատկապես Արցախի անկախության միջազգային ճանաչման հարցը դառնում են հայկական լոբբիստական կազմակերպությունների, այդ թվում՝ ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի գլխավոր խնդիրներից մեկը:

Ադրբեջանական հերթական ագրեսիան, որը իրականացվում է 2016 թվականի դեկտեմբերին հայ-ադրբեջանական սահմանին, կրկին ստիպում է Հայ դատի հանձնախմբին մեծ տերությունների ուշադրությունը հրավիրել այս խնդրի վրա: 2016 թվականի դեկտեմբերի վերջին ադրբեջանական զորքերի կողմից հրադադարի հերթական խախտումը գրանցվեց, այս անգամ հայ-ադրբեջանական սահմանին: Ադրբեջանական զորքերը հարձակման ենթարկեցին Տավուշի մարզի Չինարի գյուղից հարավ ընկած

---

[1] *Տե՛ս «Ալիք» օրաթերթ, 6 ապրիլի, 2016թ., թիվ 66 (22442), էջ 1:*

[2] *Տե՛ս «Ազդակ» օրաթերթ, Բեյրութ, 4 ապրիլի, 2016թ, թիվ 25 (25179), էջ 3:*

հատվածներում: Մարտերի արդյունքում հայկական կողմը տվեց 3 զոհ [1]: Այս դեպքերից հետո Հայ դատի ամերիկյան հանձնախումբը ձեռնամուխ եղավ համացանցային արշավի կազմակերպմանը՝ Կոնգրեսում, Սպիտակ տանը և ԵԱՀԿ Մինսկի խմբի ղեկավարության մոտ՝ դատապարտելու ադրբեջանական ագրեսիան[2]:

2017 թվականի ողջ ընթացքում շփման գծում լարվածությունը շարունակվեց: Ադրբեջանական կողմը շարունակում էր լարվածություն առաջացնել շփման գծի ողջ երկայնքով: 2018 թվականի Թավշյա հեղափոխությունից հետո ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի հետ հանդիպումներ ունեցան ՀՀ նախագահ Արմեն Սարգսյանի, ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինյանի, արտաքին գործերի նախարար Զոհրաբ Մնացականյանի հետ: Վերջինիս հետ հանդիպումը տեղի ունեցավ Երևանում՝ հունիսի 26-ին: Հանդիպման ընթացքում Հայ դատի հանձնախմբի ատենապետ Ռաֆֆի Համբարյանը և արտգործնախարար Զոհրաբ Մնացականյանը քննարկեցին Հայ դատի հանձնախմբի գործունեությունը, իրականացրած քայլերն ու ծրագրերը՝ ուղղված հայ-ամերիկյան հարաբերությունների բարելավմանը, համահայկական նշանակություն ունեցող խնդիրների բարձրաձայնմանը[3]: 2018 թվականի հունիսի 29-ին ՀՀ նախագահի մամուլի ծառայությունը հայտարարություն տարածեց, որ Վաշինգտոնում տեղի է ունեցել Արմեն Սարգսյանի և ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի հանդիպումը, որի ընթացքում նախագահի կողմից կարևորվել է համահայկական նշանակության հարցերով Միացյալ Նահանգներում մշտապես զբաղվող հայկական կազմակերպությունների գործունեությունը[4]: Տարբեր մակարդակներում հանդիպումները շարունակական բնույթ ստացան: 2018 թվականի սեպտեմբերի 26-ին տեղի ունեցավ հանդիպում վարչապետ Նիկոլ Փաշինյանի և Հայ դատի ամերիկյան հանձնախմբի միջև: Պատվիրակությունը գլխավորում էր ԱՄՆ-ի Հայ դատի հանձնախմբի գործադիր տնօրեն Արամ Համբարյանը: 45 րոպե տևած այս հանդիպման ընթացքում հիմնական շեշտը դրվեց Հայաստան-Սփյուռք ԱՄՆ-Հայաստան հարաբերությունների վրա[5]:

Երկրի ղեկավար շրջանակների հանդիպումները Հայ դատի հանձնախմբի անդամների հետ վկայում են, որ իր երկարամյա գործունեության ընթացում այն իրապես դարձել է ազդեցիկ կառույց, որի դերն ու նշանակությունը ընդունում են ոչ միայն Սփյուռքում, այլ նաև հայրենիքում:

Այսպիսով, ուսումնասիրելով 1994 թվականի զինադադարի կնքումից հետո Արցախյան հարցի կարգավորման գործում Հայ դատի հանձնախմբի կատարած աշխատանքը, կարող ենք նշել, որ ի թիվս այլ կազմակերպությունների, Հայ դատի հանձնախումբը ակտիվորեն ներգրավվել է հարցի կարգավորման գործին՝ կոչ անելով և հորդորելով ԱՄՆ-ի ղեկավարությանը, ԵԱՀԿ-ի Մինսկի խմբի համանախագահներին և առաջադեմ Եվրոպային քայլեր ձեռնարկել ադրբեջանական կողմի ագրեսիան զսպելու համար: Սակայն, ԱՄՆ-ի կառավարությունը, առաջնահերթ համարելով սեփական շահերը, մինչ օրս իր կոչերում չի նշում հստակ հասցեատիրոջ, ամեն անգամ քողարկելով Ադրբեջանի ագրեսիվ

---

[1] *Տե՛ս «Արարատ» օրաթերթ, 30 դեկտեմբերի, 2016թ., թիվ 288 (20003), էջ 1:*

[2] *«21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես, էջ 122*

[3] *«Ասպարեզ» օրաթերթ, Լոս Անջելես, 27 հունիսի ,2018թ., թիվ 15 (764), էջ 5:*

[4] *ՀՀ նախագահի պաշտոնական կայք https://www.president.am/hy/press-release/item/2018/06/29/President-Armen-Sarkissian-met-with-members-of-Hay-Dat-in-America/:*

[5] *«Ասպարեզ» օրաթերթ, 28 սեպտեմբերի 2018թ., թիվ 15 (828), էջ 1:*

քաղաքականությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ազգ» օրաթերթ, Երևան
2. «Ալիք»օրաթերթ, Թեհրան
3. «Ազդակ» օրաթերթ, Բեյրութ
4. «Ասպարեզ» օրաթերթ, Լոս Անջելես
5. «Արարատ» օրաթերթ, Բեյրութ
6. Լիանա Մամյան, Արցախյան հիմնախնդրի կարգավորումը և Հայաստանին ու Արցախին տրամադրվող ամերիկյան օգնության ապահովումը ամերիկահայ լոբբիստական կազմակերպության գործունեության առանցքում
7. «21-րդ դար», «Նորավանք» գիտակրթական հիմնադրամի հանդես
8. Հայաստանի հանրային ռադիո
9. Հայ Սփյուռք հանրագիտարան, Երևան

ՀՏԴ 94(070/479.243) Պատմություն և քաղաքագիտություն

Չոփուրյան Լուսինե
ՎՊՀ, Պատմաշխարհագրական ֆակուլտետ,
«Պատմություն» բաժին 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր, Ֆ. Մովսիսյան
Էլ. փոստ՝ Lusinechopuryan@mail.ru

«ՖՈՒՏԲՈԼԱՅԻՆ ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅԱՆ» ԳՆԱՀԱՏԱԿԱՆԸ ՍՓՅՈՒՌՔԱՀԱՅ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր՝ *Հայ-թուրքական հարաբերություններ, Արցախյան հարց, Աբդուլլահ Գյուլ, Սերժ Սարգսյան, «ֆուտբոլային» հրավեր:*

2008թ. սեպտեմբերի 6-ին՝ երկու պետությունների նախագահների հանդիպման ժամանակ, քննարկվեց Արցախյան հիմնախնդրի և հայ-թուրքական սահմանի բացման հարցը: Այն, որ Հայաստանը փորձեց բարելավել հայ-թուրքական հարաբերությունները, ակնհայտ է: Այլ բան է, որ այն ոչ մի դրական արդյունքի չհանգեցրեց: Ուսումնասիրելով սփյուռքահայ մամուլը՝ նկատեցինք, որ այս դիվանագիտական քաղաքականության վերաբերյալ նրանք ձեռնպահ են մնում հստակ դիրքորոշում արտահայտելուց և չեզոք դիրքից ներկայացնում են տարբեր քաղաքական գործիչների տեսակետները:

Лусине Чопурян

ОЦЕНКА “ФУТБОЛЬНОЙ ДИПЛОМАТИИ” В ПРЕССЕ АРМЯНСКОЙ ДИАСПОРЫ

Ключевые слова: *армянско-турецкие отношения, карабахский вопрос, Абдулла Гюль, “футбольное” приглашение.*

6-ого сентября 2008 года на встрече президентов двух стран был обсужден вопрос карабахской проблемы и открытия армянско-турецкой границы. То, что Армения попыталась улучшить армянско-турецкие отношения, очевидно. Другое дело, что он не дал никаких положительных результатов. Изучая прессу армянской диаспоры, обнаруживаем, что они воздерживаются выражать четкую позицию по поводу этой дипломатической политики, освещаются с нейтральной позиции взгляды различных политических деятелей.

Տարածաշրջանային հարաբերությունների կտրուկ փոխակերպումների համատեքստում 2008թ. դարձավ հայ-թուրքական հարաբերությունների նոր փուլի սկզբնավորման տարին: ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը հունիսի 25-ին Մոսկվայում, հանդիպելով Ռուսաստանի հայ համայնքի ներկայացուցիչների հետ, հայտարարեց առաջիկայում հայ-թուրքական հարաբերությունները բարելավելու ուղղությամբ նոր քայլեր ձեռնարկելու մասին: Նա հայտնեց նաև իր մտադրությունը՝ Երևան հրավիրել Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին՝ դիտելու Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլի ազգային հավաքականների հանդիպումը:

Այս իրադարձությամբ էլ սկիզբ առավ «Ֆուտբոլային դիվանագիտությունը» կամ «Հայ-թուրքական հարաբերությունների բարելավման» գործընթացը:

2008թ. հուլիսի 24-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը պաշտոնապես Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին հրավիրեց Հայաստան՝ դիտելու Հայաստան-Թուրքիա

ֆուտբոլային խաղը:

Թուրքական «Ռադիկալ» օրաթերթի տված հարցին, թե «քաղաքական ի՞նչ ակնկալիքներ ունեիք, երբ հրավիրեցիք Թուրքիայի նախագահ Աբդուլլահ Գյուլին միասին դիտելու հանդիպումը», Հայաստանի Հանրապետության նախագահ Սերժ Սարգսյանը պատասխանեց. «Իմ առաջնահերթ նպատակը մեր երկրների հարաբերությունների կարգավորումն էր: Նախագահի պաշտոնում իմ ընտրության առթիվ նախագահ Գյուլի հղած շնորհավորական ուղերձում խոսվում էր հարաբերությունների զարգացման հնարավորության մասին»[1]:

Այս հարցազրույցի ժամանակ վարչապետ Էրդողանը նշել է, որ ինքը ևս մտադրվել է օգտագործել հարմար առիթը՝ բարելավելու հայ-թուրքական հարաբերությունները:

Հայաստանի և Թուրքիայի ֆուտբոլային թիմերի հավաքականների հանդիպմանը մասնակցելու նպատակով Աբդուլլահ Գյուլը Երևան ժամանեց սեպտեմբերի 6-ին: Երկու երկրների նախագահների հանդիպումը լայն արձագանք գտավ միջազգային հանրության լայն շրջանակներում, դարձավ տարաբնույթ քննարկումների առարկա: «Ֆուտբոլային դիվանագիտության» հարցում անտարբեր չմնաց նաև սփյուռքահայ մամուլը, որն իր բազմաթիվ հրապարակումներում հանգամանորեն անդրադառնում էր երկու երկրների նախագահների հանդիպմանը, այնպես էլ դրա արձագանքներին և դրան հաջորդած իրադարձություններին:

Թեհրանում լույս տեսած «Ալիք» օրաթերթը տպագրում է «Արարատ» ռազմավարագիտական կենտրոնի տնօրեն, քաղաքագիտութեան դոկտոր Արմէն Այվազեանի կարծիքը: Ըստ նրա՝ «Թուրքիա-Հայաստան երկխօսության այս առաջին փուլն անցաւ անհավասարութեան եւ թրքական կողմի խոշոր առավելութեան պայմաններում: Հայաստանի դիւանագիտութեան դարպասին թրքական գոլերի թիւը կարող է աճել, եւ առաջիկայում, նրա խօսքով, գուցէ խօսենք ոչ թէ ֆուտբոլային, այլ հոկէյի հաշւի մասին»[2]: Նա շեշտում է այն միտքը, որ Ադրբեջանը և Թուրքիան միշտ միասին են, և երկուսն էլ իրենց օրակարգում ունեն Հայաստանը ոչնչացնելու ծրագիր: Ուստի Հայաստանի ձեռնարկած քաղաքականությունը չէր կարող հաջողությամբ պսակվել:

«Ալիքը» ներկայացնում է նաև ՀՅԴ բյուրոյի ներկայացուցիչ Հրանտ Մարգարյանի դիրքորոշումն այդ մասին: Նրա կարծիքով. «Թուրքիայի այսօրուայ պահւածքը ինձ յոյս չի ներշնչում, որ կարող է այս յարաբերութիւնների մէջ առաջընթաց լինել»[3]: Այն հարցին, թե ինչպե՞ս եք բացատրում Հայոց Ցեղասպանությունը ուրացող Թուրքիայի Հանրապետության նախագահի Հայաստան այցելությունը, Հ. Մարգարյանը պատասխանել է. «Կովկասեան իրադարձութիւններին յաջորդող հանգրւանում Թուրքիան ունեցաւ մի հետաքրքրական նախաձեռնութիւն, որը կոչւում է «Կովկասեան խաղաղութեան նախագիծ»: Այս ծրագրով Անկարան փորձում է աւելի ազդու ներկայութիւն դառնալ շրջանում: Այս ձեւով Թուրքիան փորձում է որոշակի փոփոխութիւն ներմուծել արտաքին քաղաքականութեան մէջ»[4]: Այսինքն՝ Թուրքիան աստիճանաբար հրաժարվում է Եվրոպական ուղղվածությունից և փորձում է Փոքր Ասիայում և Կովկասում քաղաքական իրավիճակը կարգավորողի դեր ստանձնել: Այս

---

[1] *«Լույս» ամսագիր, Թեհրան, օգոստոս, 2008, թիվ 145, էջ 8:*

[2] *«Ալիք» օրաթերթ, Թեհրան, 5 հոկտեմբեր, 2008թ., թիվ 204 (20379), էջ 2:*

[3] *Նույն տեղում, թիվ 205 (20380), էջ 3:*

[4] *Նույն տեղում, էջ 3:*

քայլով Թուրքիան փորձում էր լավ հարաբերություններ հաստատել Ռուսաստանի հետ՝ միաժամանակ փորձելով կայուն հարաբերությունները պահպանել ԱՄՆ-ի հետ:

Ըստ Հ. Մարգարյանի՝ ծրագրի իրականացման համար անհրաժեշտ է համագործակցության մեջ ներառել Վրաստանին, Հայաստանին, Ադրբեջանին, Ռուսաստանին և Իրանին: Եվ այս երկրներից որևէ մեկի բացակայության դեպքում համագործակցությունը մնում է թերի: Հենց այս ամենն էլ Թուրքիային ստիպեց, որ կարգավորի իր հարաբերությունները Հայաստանի հետ, ինչը որևէ արդյունք չտվեց:

2008թ. սեպտեմբերի 14-ին ՀՀ նախագահ Սերժ Սարգսյանը ԱՄՆ-ում հանդիպեց ամերիկահայ համայնքի ներկայացուցիչների հետ, որի ժամանակ նա խոսեց իր և Թուրքիայի նախագահի հանդիպման մասին: Նա նշեց, որ երկու կողմերը եկել են համաձայնության, որ երկու երկրների միջև առկա խնդիրները պետք է լուծեն իրենք, այլ ոչ թե գալիք սերունդները:

«Մեր հանդիպման ժամանակ Թուրքիայի նախագահը պատրաստակամութիւն յայտնեց հարկ եղած դէպքում օժանդակել, կրկնում եմ, օժանդակել Արցախեան հիմնախնդրի խաղաղ կարգաւորման գործընթացին»[1]: Արցախյան հիմնախնդիրը կլուծվի միայն այն ժամանակ, երբ Ադրբեջանը ճանաչի Արցախի ինքնորոշման իրավունքը:

Այդ մասին Պոլսահայ «Ժամանակ» թերթը գրում է, որ Սերժ Սարգսյանը հարցազրույցի ժամանակ հանդես է եկել հետևյալ խոսքերով. «Արցախեան հիմնախնդրի կարգաւորման համար ռազմական ճանապարհ գոյութիւն չունի: Կը կարծեմ, որ հասարակական քննարկումները օգտակար են եւ խորապէս համոզուած եմ, թէ մենք տակաւին պիտի թեւակոխենք շատ աւելի աշխոյժ հասարակական քննարկումներու ժամանակաշրջան: Մենք նուիրական հարց կը լուծենք, կարեւոր պատմական խնդիր կը լուծենք եւ այս պատմական խնդրի լուծման ընթացքին եթէ որեւէ մէկը կը փորձէ այլ շահ փնտրել, ապա սա բարոյական չէ»[2]:

Կարևոր տեղեկություն է հաղորդում Փարիզում տպագրված «Աշխարհ» երկշաբաթաթերթը, որտեղ ներկայացված է Թուրքիայի վարչապետի դիրքորոշումը ՀՀ նախագահի հրավերի վերաբերյալ. «Եթէ երբեք խիստ դատապարտելի է Թուրքիոյ վարչապետ Ռէճէպ Թայիպ Էրտօղանի Միւնիխի մէջ առանց ամչնալու, կարմրելու, յախուռն ու գիտակցաբար արձակած յայտարարութիւնը, թէ «չկայ որեւէ ցեղասպանութիւն Թուրքիոյ ո՛չ պատմութեան, ո՛չ ալ քաղաքակրթութեան մէջ», խորշանքով դիմաւորելի ու առ աւելի ծանրապէս պախառակելի է հետեւեալը, զորս ընդվզում ու նողկանք ալ կը պատճառէ՝ Հայաստանի Հանրապետութեան նախագահ Սերժ Սարգսեանի հրաւէրը՝ փոխանցուած իր թուրք պաշտօնակիցին, ոտնագնդակի հասարակ մրցումի մը առիթով»[3]:

Թուրքական աղբյուրների համաձայն՝ Աբդուլլահ Գյուլը, ժամանելով Երևան, օդանավակայանից անմիջապես գնում է Հրազդան մարզադաշտ, այնուհետև խաղի ավարտից հետո (այն ավարտվում է 2-0 հաշվով՝ հօգուտ Թուրքիայի) հանդիպում է ՀՀ նախագահի հետ և նույն օրը վերադառնում Անկարա:

Փասադենայում տպագրված «Մասիս» շաբաթաթերթը գրում է. «Անգարա վերադարձին նախագահ Աբդուլլա Գիւլ յայտարարեց, որ Սերժ Սարգսեան «ոչ մէկ անգամ չյիշատակեց այսպէս կոչուած ցեղասպանութեան հարցը եւ ան նոյնիսկ չակնարկեց այդ մասին՝ այդ

[1] *Նույն տեղում, համար 206 (20381), էջ 3:*
[2] *«Ժամանակ» օրաթերթ, Կ.Պոլիս, 27 հոկտեմբեր 2008, համար 8731, էջ 1,4:*
[3] *«Աշխարհ» երկշաբաթաթերթ, Փարիզ, 11 հոկտեմբեր 2008, թիւ 455, էջ 7:*

հարցը ձգելով մէկ կողմ»: Զրոյցի ընթացքին բանակցութիւններ չեն եղած նաեւ հայ-թրքական սահմանի բացման վերաբերեալ, սակայն, ինչպէս յայտարարեց Աբդուլլահ Գիւլ, շատ մանրակրկիտ զրոյց տեղի ունեցած է Արցախյան հակամարտութեան վերաբերեալ»[1]:

Աբդուլլահ Գյուլի հետ Հայաստան ժամանած լրագրողների մեջ էր Արա Գոչունյանը՝ Կ.Պոլսում տպագրված «Ժամանակ» օրաթերթի գլխավոր խմբագիրը՝ ով «Ազատություն» ռադիոկայանի հետ հարցազրույցի ժամանակ հայտնեց, որ Թուրքիայի նախագահը դրական է գնահատել իր այցը Երևան, երախտագիտությամբ խոսում էր նաև Սերժ Սարգսյանի ջերմ ընդունելության մասին:

«Առաջին հերթին Գիւլը ըսաւ, որ իր այցելութեամբ երկու կողմերու միջեւ արդէն վերացած է բարոյահոգեբանական պատնէշը»[2]: Լրագրողների հետ զրույցի ժամանակ Գյուլը անդրադարձել է նաև Արցախյան հարցին, նշելով, որ այդ հարցի նախաձեռնողը Հայաստանի նախագահն է եղել, և որ այդ հարցի քննարկումը շատ երկար է տևել:

Լոնդոնում լույս տեսած «Նոր սերունդի ձայն» թերթում իր դիրքորոշումն է արտահայտել տնտեսագիտության դոկտոր պրոֆեսոր Թաթուլ Մանասէրեանը, որը «Դիւանագիտական ֆուտբոլն» ավելի շատ նմանեցնում էր շախմատային լաւ մտածուած քայլի, որը «պատային» իրավիճակ ստեղծեց Թուրքիայի համար, որը վերջին տասնամեակներին Սեւ ծովի տարածաշրջանում միշտ ջանում է նախաձեռնող եւ առաջատարի դեր ստանձնել[3]:

Այն, որ Հայաստանը Թուրքիայի հետ հարաբերությունների կարիք ունի՝ հատկապես հաղորդակցական ուղիների բացման իմաստով, այդ պարզից էլ պարզ է, բայց նշենք նաև, որ այդ հարցում շահագրգռված է նաև Թուրքիան:

Ինչ վերաբերում է հայ-թուրքական հարաբերություններին և Թուրքիայի կողմից միջնորդի դեր ստանձնելու մտադրությանը, ապա Հրանտ Մարգարանը նշել է, որ կան մտահոգիչ խնդիրներ: «Թուրքիան չի կարող միջնորդ լինել Արցախեան հարցում, դա մեզ համար մերժելի հարց է: Հայ-թրքական յարաբերութիւնների հարցում կան շատ պարագաներ, որոնք հիմնական են եւ ենթակայ չեն քննարկման: Դա, առաջին հերթին, Հայոց Ցեղասպանութեան հարցն է: Մենք հաւատացած ենք, որ հայ-թրքական սահմանի բացումը չի կարող այնքան կարեւոր լինել հայ ժողովրդի համար, որ դիմենք սկզբունքային զիջումների: Տարածաշրջանում լարուած իրավիճակը նոյնպէս չի կարող մեզ պարտադրել սկզբունքային զիջումներ անելու»[4]:

Կա տեսակետ, թե հայ-թուրքական շփումները միջնորդավորված են Մոսկվայով, և հենց Ռուսաստանն է Հայաստանին ստիպում որոշ քայլեր կատարել Անկարային ընդառաջ: Այս հարցի առնչությամբ իր կարծիքն է արտահայտել ՀՅԴ Հայ Դատի Հայաստանի գրասենյակի պատասխանատու Կիրո Մանոյանը. «Կարծում եմ Մոսկվայում շատ լաւ հասկանում են, որ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորում վաղ թէ ուշ սկսւելու է: Չմոռանանք նաեւ, որ վերջին մէկուկէս տասնամեակում այդ նպատակով Թուրքիայի վրայ ճնշում կիրառել են բացառապէս ԱՄՆ-ը եւ Եւրոմիութիւնը, որ հայ-թրքական յարաբերութիւնների կարգաւորման պարագայում Հայաստանում ռուսական ռազմակայանների առկայութեան անհրաժեշտութիւնը կը վերանայ»[5]:

Այսպիսով՝ Հայաստանի նախագահի «Ֆուտբոլային» հրավերով և Թուրքիայի

---

[1] *«Մասիս» շաբաթաթերթ, Փասադենա, 13 սեպտեմբեր 2008, թիւ 32 (1382), էջ 1:*

[2] *Նույն տեղում, էջ 1,5:*

[3] *«Նոր սերունդի ձայն», Լոնդոն, 2008, համար 121/222/324, էջ 10:*

[4] *«Ալիք» օրաթերթ, Թեհրան, 13 հոկտեմբերի 2008, թիւ 210 (20385), էջ 1:*

[5] *Նույն տեղում, թիւ 213 (20388), էջ 2:*

նախագահի Երևան այցելությամբ սկսվեցին հայ-թուրքական դիվանագիտական հարաբերությունները:

Հարկ ենք համարում նշել, որ Թուրքիան ավելի շատ էր շահագրգռված շարունակելու դիվանագիտական հարաբերությունները, բայց իրականում նրա այս քայլը հետապնդում էր երկու նպատակ.

Առաջինը՝ Եվրոպայի և ԱՄՆ-ի ղեկավար շրջանների մոտ փորձում էր ամրապնդել այն տպավորությունը, թե Թուրքիան շատ լուրջ և անկեղծ է Հայաստանի և հայության հետ մերձեցման գործում:

Երկրորդը՝ Թուրքիան Ադրբեջանին ասում էր, որ այդ դիվանագիտական հարաբերության հարցում մտահոգվելու կարիք չկա, այն պարզապես ձևական բնույթ է կրում:

Այսպիսով՝ ուսումնասիրելով սփյուռքահայ մամուլը նկատեցինք, որ 2008թ. «Ֆուտբոլային դիվանագիտության» վերաբերյալ կան տարբեր արձագանքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Ալիք» օրաթերթ, Թեհրան, 2008:
2. «Աշխարհ» երկշաբաթաթերթ, Փարիզ, 2008:
3. «Ժամանակ» օրաթերթ, Կ. Պոլիս, 2008:
4. «Լույս» ամսագիր, Թեհրան, 2008:
5. «Մասիս» շաբաթաթերթ, Փասադենա, 2008:
6. «Նոր սերունդի ձայն», Լոնդոն, 2008:

ՀՏԴ 941(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Գոհար Պետրոսյան
Գավառի պետական համալսարանի ուսանողուհի
Էլ.հասցե gohar-petrosyan-1999@mail.ru
Գիտական ղեկավար՝ պ. գ.թ., դոցենտ Ա.Ա. Պողոսյան
Էլ.հասցե ashkhunjpoghosyan@gmail.com

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ՆԿԱՐԱԳԻՐԸ 19 -ՐԴ ԴԱՐԻ 2-ՐԴ ԿԵՍԻՆ

Բանալի բառեր՝ *Նոր Բայազետ, Գեղարքունիք, ժողովրդագրություն, միգրացիա, բնական և մեխանիկական վերարտադրություն, քանակական աճ, վիճակագրական տվյալ, ներգաղթ, արտագաղթ, ծնելիություն, մահացություն:*

Սույն հոդվածում ներկայված է Գեղարքունիքի XIX դարի II կեսի ժողովրդագրությունը՝ ծնելիության և մահացության, արտագաղթի և ներգաղթի ցուցանիշներով:

Ռուսաստանի կազմի մեջ մտնելը Արևելյան Հայաստանի և Նոր Բայազետի բնակչության համար արագ և կայուն աճի նոր գործոն հանդիսացավ: Ստեղծվեցին պայմաններ խաղաղ ապրելու և վերարտադրվելու համար: Բնակչության քանակի ավելացման վրա դրական արդյունք ունեցան նաև Պարսկաստանից և Արևմտյան Հայաստանից ներգաղթածները, նրանք խթան հանդիսացան նաև բնակչության բնական աճի գործընթացի բարձրացմանը:

Петросян Гоар

ДЕМОГРАФИЧЕСКОЕ ОПИСАНИЕ ГЕГАРКУНИКА В СЕРЕДИНЕ XIX ВЕКА

Ключевые слова*: Новый Баязет. Гегаркуник, демография, миграция, естественное и механическое воспроизводство, количественный рост, статистические данные, иммиграция, эмиграция, рождаемость, смертность.*

В статье представлена демография Гегаркуника второй половины XIX века по показателям рождаемости и смертности, эмиграции и иммиграции. Присоединение к России стало новым фактором быстрого и устойчивого роста для населения Восточной Армении и Нового Баязета. Были созданы условия для жизни и воспроизводства. Иммиграция из Персии и Западной Армении также оказала положительное влияние на увеличение численности населения, а также способствовала увеличению естественного прироста населения.

Որևէ մի տարածաշրջանի հետ կապված ցանկացած հետազոտություն իրականացնելու հարցում չափազանց կարևոր է դրա ժողովրդագրական նկարագրի մասին բավարար պատկերացում ունենալը: Ժողովրդագրական կազմը ազգաբնակչության խտացված արտահայտությունն է նրա հայելին, որն արտահայտում է բնակչության ընդհանուր թիվը, էթնոդավանաբանական ու սեռատարիքային կազմը, տեղաշարժերը և տեղաբախշվածությունը [11] :

Աշխարհում յուրաքանչյուր ազգ ու ժողովուրդ՝ որպես կենդանի հավաքական մարմին, ունի շարունակականության, լինելիության իր ներքին տրամաբանությունը. վերարտադրվում և սերնդափոխվում է, որն ուղեկցվում է նրա թվաքանակի փոփոխություններով՝ աճելով կամ նվազելով:

Դա կատարվում է երկու ճանապարհով՝ բնական և մեխանիկական: Հիմնական աղբյուրը բնական աճն է, որը որոշվում է միավոր ժամանակամիջոցում ծնվածների և մահացածների

տարբերությամբ: Ամեն մի ժողովրդի բնականոն վերարտադրության համար խիստ անհրաժեշտ են հետևյալ պայմանները՝ սոցիալ-տնտեսական, քաղաքական, արտաքին բարենպաստ և սոցիալական առողջ միջավայրը:

Բնակչության թվաքանակի փոփոխությունները տեղի են ունենում նաև այլ ճանապարհներով, որոնք հիմնականում կապված են լինում տարածաշրջանային ու նաև աշխարհաքաղաքական նշանակության իրադարձությունների հետ: Խնդրո առարկա տարածաշրջանի համար այդպիսինն էր՝ Արևելյան Հայաստանի՝ Ռուսաստանի կազմի մեջ մտնելը: Մինչ այդ, Գեղարքունիքում և ընդհանրապես Սևանի ավազանում բնակչության տոկոսային հարաբերակցության մեջ գերակշռում էին 18-րդ դարի կեսերից այդտեղ հայտնված մահմեդական տարատեսակ ցեղերը [2] :

Ռուս – թուրքական պատերազմից հետո այստեղ հաստատվեցին Բայազետ քաղաքի ու մերձակա բնակավայրերի հայերը, որի արդյունքում հիմնադրվեց Նոր Բայազետ քաղաքն, ու արմատապես փոխվեց նաև Գեղարքունյաց գավառի ժողովրդագրական նկարագիրը: Համետաբար նպաստավոր պայմանները հնարավոր դարձրին բնակչության թվաքանակի նորմալ աճն ու ընդհանրապես տարածաշրջանի տնտեսական, մշակութային կյանքի վերելքը: Ստեղծվեցին պայմաններ՝ խաղաղ ապրելու և վերարտադրվելու համար: Նախորդ տարիների համեմատ՝ Գեղարքունիքում նկատելիորեն կրճատվեց մահացության տոկոսը:

1852 թվականների դրությամբ Գեղարքունիքի բնակչության ընդհանուր թիվը կազմում էր 33250 մարդ, որից 17966-ը արական սեռին էին պատկանում, 15284՝-ը իգական: Հայերը բնակչության մեջ կազմում էին 23812 մարդ: Այդ տարիներին բնակչության մեջ փոքր թիվ էին կազմում նաև թաթարները՝ մոտ 9438:

1859 թ. տվյալներով՝ Գեղարքունիքում բնակչությունը կազմում էր 55339 մարդ, որից 31145-ը՝ արական, 24194-ը՝ իգական: Հայերը 35808 շունչ էին, թաթարները՝ 17077, ռուսները՝ 2237, քրդերը՝ 217: Թաթարները բնակչության մեջ սկսել էին մեծ թիվ կազմել՝ 17077 մարդ:

1864թ բնակչության ընդհանուր թիվը 75141 մարդ էր, հետևյալ հարաբերակցությամբ՝ 43876 մարդ արական, 31268 մարդ իգական: Բնակչության մեջ 50229-ը հայեր էին, 22457-ը՝ թաթարներ, 2164-ը՝ ռուսներ, 302-ը՝ քրդեր:

1873թ. բնակչությունը կազմում էր 73254 մարդ, որի 38412-ը՝ արական սեռի, 34842-ը՝ իգական: Տվյալ ժամանակահատվածում հայերի թիվը 48993 էր, թաթարներինը՝ 21460, ռուսներինը՝ 2860, քրդերինը՝ 276:

1886թ. տվյալներով 101491 մարդ էր բնակվում Նոր Բայազետում, որից 53427-ը՝ արական, 48064-ը իգական: Հայերը 68702 մարդ, թաթարները՝ 28855, ռուսները՝ 2567, այլ ազգությունները բնակչության մեջ կազմում էին 245 շունչ:

1897թ. Նոր Բայազետում ապրում էր 122573 մարդ, արական սեռի բնակիչները 63128-ն էին, իգական սեռի բնակիչները՝ 59445: Հայերը բնակչության մեջ սկսեցին նկատելի աճել՝ 81185 մարդ՝ մնացած տարիների համեմատ: Թաթարները 35883 մարդ էին, ռուսները՝ 3139, քրդերը՝ 2312, այլ ազգությունների ներկայացուցիչներն էլ կազմում էին 54 մարդ [3] :

Վերը բերված տվյալները ներկայացնում են բնակչության թվաքանակում տեղի շուրջ վաթսուն տարվա ընթացքում տեղի ունեցած շարժընթացը: Ըստ այդմ՝ Նոր Բայազետի գավառի բնակչության թիվը XIX դարի II կեսին ավելացել էր շուրջ 80%-ով: Բացի բնակչության թվաքանակի բնական աճից, մեծ նշանակություն էր ունեցել Արևմտյան Հայաստանից Արևելյան Հայաստան ու այդ թվում նաև Գեղարքունիք կատարված գաղթականների նոր հոսքերը [4] :

Արխիվներում պահպանված փաստաթղթերից երևում էին, որ արևմտահայության

ներգաղթը արագ ընթացք է ստացել 1877-1878թթ. ռուս-թուրքական պատերազմից հետո, երբ Բեռլինի դաշնագրով Ռուսաստանը պարտադրված էր գրաված տարածքները նորից վերադարձնել Թուրքիային: Բեռլինի դաշնագիրը արևմտահայությանը դրեց էլ ավելի ծանր կացության մեջ:

Հարկ է նշել, որ Ռուսաստանը ամեն կերպ փորձում էր ոգևորել արևմտահայությանը՝ արտագաղթը արագացնելու համար: Մյուս կողմից էլ, Թուրքիան շահագրգռված էր ամեն կերպ Արևմտյան Հայաստանը հայաթափելու: Կոստանդնուպոլսի ռուսական դեսպանի տվյալներով, դժվարին կացության մեջ հայտնված Ալաշկերտի և Բայազետի գավառներից գաղթել ցանկացողների թիվը հասնում էր մոտ 1000 ընտանիքի, տարբեր տվյալների համաձայն արտաղաթելու ցանկություն ունեցողները մեծ թիվ էի կազմում:

Այս պայմաններում, 1877թ. սեպտեմբերին Բայազետից և մոտակա բնակավայրերից ռուսական զորքերի հետ Երևանի նահանգ են տեղափոխվում 1856 հայ, 39 հույն և եզդի ընտանիքներ [5] :

Բայազետից, Ալաշկերտից և նրանց գավառներից ներգաղթածների մեծ մասը վերաբնակվեցին Նոր Բայազետի գավառում: Ըստ Մատենադարանում պահվող վավերագրերից մեկի տվյալների՝ 1877 թ. վերջին Գեղարքունիքի տարածաշրջան եկածների թիվը կազմում էր 2476 մարդ, որից 40 ընտանիք (170 մարդ՝ 92 արական և 78 իգական) բնակություն հաստատեց Նոր Բայազետ քաղաքում, իսկ 2306-ը՝ գավառի գյուղերում [11] :

1882-1884 թթ., 1886-1888 թթ. և 1891-1896 թթ. կամերալ ցուցակագրության տվյալներով՝ Նոր Բայազետի գավառում վերաբնակություն հաստատած գաղթականների թիվն անցավ 1000 շնչի սահմանագիծը:

Գաղթականների մի փոքր զանգված էլ՝ 10 ընտանիք (31 տղամարդ, կանանց թիվը հայտնի չէ) բնակություն հաստատեցին Նոր Բայազետ քաղաքում [17] :

1896 թ. Նոր Բայազետում հաստատվեցին 12 ընտանիք, որոնց մեջ 54-ը արական սեռի ներկայացուցիչներն էին, 39-ը իգական:

1897 թ. գավառի տարածքում գաղթականների թիվը հասնում էր մոտ 1300 մարդու կամ 214 ընտանիքի [8] :

Տարբեր նյութերի և աղբյուրների ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ տվյալ ժամանակահատվածում Արևմտյան Հայաստանից, մասամբ Պարսկաստանից Նոր Բայազետի գավառ ներգաղթողների ընդհանուր թիվը կազմում էր մոտ 22,8 հազար մարդ, այդ թվում 3520-ը կամ 15,4%՝ Պարսկաստանից [9] :

Դեռևս 1830-40-ական թվականներից այստեղ, ինչպես որ Արևելյան Հայաստանի մի շարք այլ գավառներում էր, ցարական իշխանությունները վերաբնակեցնում էին ռուս աղանդավորներին՝ մասնավորապես բաբտիստներին ու դուխոբորներին, ու նրանց համար հիմնում նոր բնակավայրեր:

Ռուս վերաբնակիչների թիվը զգալիորեն աճում է՝ 1851-1873 թթ. ընթացքում ավելանալով 1988 մարդով ՝ հասնելով 2860-ի կամ աճելա 69,5%-ով:

XIX դարի վերջերից Գեղարքունիքի բնակչությունն արտահոսք սկսեց դեպի Անդրկովկասի այլ քաղաքներ, Հյուսիսային Կովկաս, Ռուսաստան և արտասահման: Հիմնական պատճառը տնտեսության զարգացման ոչ բավարար մակարդակը, աշխատուժի օգտագործման սահմանափակ հնարավորությունները և մշակելի հողերի սակավությունն էր: Պաշտոնական տվյալների համաձայն՝ տարեկան միջինը 800-1000 մարդ արտագնա աշխատանքի համար մեկնում էր նահանգի սահմաններից: 1882 թ-ին Նոր Բայազետի ոստիկանական վարչության տվյալների համաձայն՝ անցագիր է տրվել 1242 մարդու՝ գավառից դուրս գալու և արտագնա աշխատանքի մեկնելու նպատակով [10] :

XIX դարի II կեսին Նոր Բայազետի բնակչության քանակական աճի հիմնական աղբյուրը հանդիսանում էր սեփական վերարտադրությունը, ցավոք, այդ ամենն ուղեկցվում էր մահացության բարձր մակարդակով: Վիճակագրական տվյալների համաձայն՝ Նոր Բայազետ քաղաքի բնակչության բնական աճը ավելի բարձր էր, քան գյուղական բնակչությանը: Դրա հիմնական պատճառն այն էր, որ քաղաքներում ծնելիության մակարդակը կտրուկ աճել էր, իսկ մահացության մակարդակը նկատելի նվազել:

Այսպիսով, 1864 թ. քաղաքի բնակչության բնական աճը 1000 շնչի հաշվով կազմում էր 19, իսկ ամբողջ գյուղական բնակչությունը չէր անցնում 15-16 մարդուց [11] :

Գյուղական բնակչության շրջանում բարձր էր մահացության ցուցանիշը, այդ իսկ պատճառով բնական վերարտադրությունն ուներ ցածր մակարդակ:

1864 թ. ավելի քան 68,4 հազար (միայն գյուղականը) բնակչություն ունեցող գավառում ծնվել է 1978, մահացել 1695 երեխա, այսինքն՝ բնական աճը կազմել է ընդամենը 280 մարդ [12] :

Քաղաքային բնակչության ծնելիության բարձր մակարդակը պայմանավորված էր միգրացիոն տեղաշարժերով, երիտասարդների հոսքը դեպի քաղաք մեծացնում էր բնակչության թվի երիտասարդացումը ընդհանուր բնակչության թվաքանակի կազմի մեջ: 1831-1886 թթ., այսինքն՝ 55 տարվա ընթացքում Նոր Բայազետի գավառում բնական աճի շնորհիվ բնակչությունն ավելացել է շուրջ 48 հազար մարդով, այսինքն տարեկան միջինը 872 մարդով, և ընդհանուր բնակչության աճի մեջ նրա տեսակարար կշիռը կազմում էր 63,5%:

1886 թ. 1000 շնչի հաշվով Նոր Բայազետի գավառում ամուսնացել է 14,4, 1890 թ. ին 29,3, 1897 թ-ին 47,6 մարդ: Նոր Բայազետում 1000 տղամարդու հաշվով 1886 թ. ամուսնացել է 6,8, 1890 թ.-ին 14,0, 1897 թ.-ին 23,1 մարդ, 1000 կանանցից համապատասխանաբար՝ 7,6, 15,3, 24,5 մարդ [13] :

Գավառում ծնելիությունն արագ տեմպերով է աճել XIX դարի 80-ական թվականներին: Հիմնականում արական սեռի տեսակետից:

Նոր Բայազետում 1886 թ. տվյալներով գյուղական բնակչության շրջանում տղաների և աղջիկների ծնելիության ցուցանիշը կազմել է 18.4 և 16.4, նույն տարում գյուղական բնակչության շրջանում 1000 շնչի հաշվով մահացել է 33 մարդ [14] :

Այսպիսով՝ տարաբնույթ ուսումնասիրությունների արդյունքում կարող ենք որոշակի պատկերացում կազմել Գեղարքունիքի ժողովրդագրական նկարագրի , կազմավորման գործընթացների, հայ բնակչության ներհոսքերի ու ընդհանրապես՝ տարածաշրջանի էթնիկական նկարագրում եղած փոփոխությունների մասին:

Այդ ամենն ու մեր ձեռքի տակ եղած արխիվային վիճակագրական տվյալներն էլ թույլ են տալիս ներկայացնել բնակչության թվակազմն ու սեռատարիքային հարաբերակցությունը:

ՀՂՈՒՄՆԵՐԻ ՑԱՆԿ

1. Հարությունյան Հ.Մ.,Նոր Բայազետի գավառը 1828-1913 թթ., Եր. 2008, էջ 130
2. Պողոսյան Ա.Ա., Հայաստանի պատմական ժողովրդագրություն, Եր., 2018, էջ 49։
3. Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ. , Աղյուսակ 9, էջ 132-134
4. Պողոսյան Ա.Ա., նշվ. աշխ., էջ 53։
5. «Մշակ», 28 օգոստոսի, 1878թ.։
6. Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ., էջ 139։
7. Նույն տեղում, էջ 140։
8. «Մշակ», 3 ապրիլի, 1897 թ, «Մշակ», 28 հունիսի, 1897 թ., «Մշակ», 3 հուլիսի, 1897 էջ. 175-176։
9. Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ., էջ 141։
10. Պատմա-բանասիրական հանդես , թիվ 4, 1965, էջ 47-48։
11. Հարությունյան Հ.Մ., նշվ. աշխ., էջ 155։
12. Նույն տեղում, էջ 155։
13. Նույն տեղում, էջ 155։
14. Նույն տեղում, էջ 159։

ՀՏԴ 941(37)/070 Պատմություն և քաղաքագիտություն

Մարիամ Սիմոնյան
Վանաձորի պետական համալսարան, պատմաաշխարհագրական ֆակուլտետ
պատմության բաժին, մագիստրոս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ֆելիքս Մովսիսյան
Էլ.փոստ՝ mar-simon@mail.ru

ԻՏԱԼԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ-ԱԶԱՏԱԳՐԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ (1859-1861) ԱՐՁԱԳԱՆՔԸ ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՄԱՄՈՒԼՈՒՄ

Բանալի բառեր՝ *Վիկտոր Էմանուել II, Իտալիա, թերթ, Ֆրանսիա, Նապոլեոն, հաղորդում, կայսր, տեղեկություններ:*

XIX դ. Իտալիայի ազգային-ազատագրական պատերազմն իր արժանի արձագանքն է գտել հայ պարբերական մամուլում:

«Արեւմուտք»-ը, լինելով Եվրոպայում լույս տեսնող լրագիր. իր գովասանքն էր հայտնում տեղի ունեցած իրադարձությունների նկատմամբ՝ ցանկանալով նույն եռանդով ոգևորել նաև հայ ժողովրդին:

«Արշալոյս Արարատեան» թերթը, լինելով պահպանողական բնույթի, բացահայտ կերպով ցույց չէր տալիս իր համակրանքը այս իրադարձությունների վերաբերյալ:

Мариам Симонян

НАЦИОНАЛЬНО-ОСВОБОДИТЕЛЬНАЯ ВОЙНА В ИТАЛИИ (1859-1861) И ЕЕ ОТРАЖЕНИЕ В АРМЯНСКОЙ ПЕЧАТНОЙ ПРЕССЕ

Ключевые слова: *Виктор Эммануил II, Италия, газета, Франция, Наполеон, доклад, император, информация*

Итальянская национально-освободительная война нашла справедливый отклик в армянских периодических изданиях. Сама эта проблема отдельно представлена в каждой из следующих газет: Запад, Аршалуйс Араратян. Запад, будучи газетой, издающейся в Европе, восхваляет эти события, желая вдохновить армянский народ той же энергией.Консервативная газета "Аршалуйс Араратян" открыто не проявляет симпатии к этим событиям.

1848-1849 թվականներին անկախության համար պատերազմից հետո իտալական պետություններում, բացառությամբ Սարդինական թագավորության, վերացվեցին սահմանադրությունները. ամենուր մոլեգնում էին բռնությունները: 1855-1856 թվականներին իտալական պետություններում ազգային անկախության և Իտալիայի միավորման համար նոր ուժով ծավալվեց բանավեճ: Սակայն այս ամենն էլ ավարտվեց պարտությամբ: Պայքարը նոր թափով ծավալվեց 1859 թվականից: Այս իրադարձություններն աննկատ չեն մնացել նաև հայ պարբերական մամուլի ուշադրությունից:

Նրանցից «Արեւմուտք»-ն այս խնդրին է անդրադառնում հենվելով եվրոպական մամուլի լրատվության վրա: Թերթում ներկայացվում են լուրեր՝ պատերազմը սկսվելուն պես: Նշվում է, որ ֆրանսիական կայսեր խոհեմ քաղաքականությանը իրենց հավանությունը կտան ազգային ժողովը և ծերակույտը: Սարդինիայի թագավորի խոսքերը նույնպես հիշատակվում են թերթում, որում ասվում է. «Զինուորք զէնք առնունք, ահա թշնամին ձեր դէմ է, կը տեսնէք, կը ճանչնաք զանի ի վաղուստ և որչափ որ վարժ և արի սեպուի, դուք անորմէ վար չ'էք մնար … զինուորք զէն առէ՛ք, Ֆրանսա ձեզի հետ է… »: [1]

Թերթի մյուս համարում նշվում է, որ ֆրանսիական տերությունը զարմանալի արագությամբ զինվորներ է ուղարկում Սարդինիա: Թե՛ ցամաքով, թե՛ ծովով ուղարկված զորքի թիվը մինչև մայիսի 4-ը 50000-ից ավելի է: Մի քանի օրվա ընթացքում այդ թիվը կանցնի 100000-ը: Թերթը Փարիզի օրագրից ստացվող տեղեկություններով հայտնում է, որ ինը տերություններում առկա Իտալիայի ժողովրդի թիվը հասնում է 26 միլիոնի, և այդ թիվը տարեցտարի ավելանում է: Այստեղից ստացվող տեղեկություններում նշվում է, որ Գարիբալդի զորավարի գունդը բաղկացած է 20000 կամավորից, որը Սարդինիայի, Տոսկանայի, Բարմայի, Մոտենայի բանակների հետ 160000 է կազմում: [2]

Թերթում հրատարակվել է Նապոլեոն կայսեր կոչն ուղղված զինվորներին և «Ե գումարտակի իտալական բանակին», որից պարզ է դառնում, որ մայիսի 12-ին արդեն կայսրը գտնվում է Իտալիայում, ով մեկնելուց առաջ երկու մասնավոր հրովարտակով տերության կառավարումը հանձնել էր կայսրուհուն և իր հորեղբորը: Թերթում ստացված լուրերի հիման վրա հաղորդվում է, որ կայսեր բանակի կազմում 40000 զինվոր կա, և ութ օրից նրանք առաջ են շարժվելու: Կայսեր կոչում ասվում էր. «… Իդալեան ժողովուրդներու ընդունելութիւնը, զոր կ՚ընեն իրենց ազատիչներուն, վկայ է որ Կայսրը արդար խնդիր մը պաշտպանելու ձեռք զարկաւ: Ապրի՜ կայսրը, ապրի՜ Ֆրանսայ, ապրի՜ Իդալեան անկախութիւնը »: [3]

Այնուհետև նշվում է, որ վեհափառ կայսեր հրամանով տպարան է կառուցվելու իտալական բանակի ու պատերազմի մասին լուրերը կամ այլ կարևոր վճիռներ տարածելու համար:

Անգլիայից ստացված լուրերի հիման վրա հաղորդվում է, որ վեհափառ թագուհին մասնավոր հրովարտակով հայտնել է Իտալիայի պատերազմում իր չեզոքության մասին:

Այս խնդրին է անդրադարձել նաև «Արշալոյս Արարատեան» թերթը: Թերթը հաղորդում է, որ Եվրոպայից ստացվում են լուրեր, թե Ֆրանսիայի և Ավստրիայի կառավարության միջև պատերազմը խիստ մոտավոր է: Թերթը նշում է, որ այս ամենի պատճառը հունվարի առաջին օրերին Նապոլեոն կայսեր կողմից, սովորության համաձայն, բոլոր բարեկամ տերությունների դեսպանների ընդունելության ժամանակ Ավստրիայի դեսպանին ասած խոսքերն էին: Նա հավելել էր, որ ցավում է, որ Ֆրանսիայի և Ավստրիայի կառավարության միջև եղած հարաբերություններն այնպիսին չեն, ինչպիսին որ ինքը կցանկանար: [4]

«Արշալոյս Արարատեան» թերթի հաջորդ համարում ներկայացվում են Ավստրիայի կողմից Սարդինիային ներկայացրած պայմանները, որում Ավստրիան պահանջում էր երեք օրվա ընթացքում ռազմական նախապատրաստությունները դադարեցնել և զորքը զինաթափել: Այս պահանջները մերժվեցին Սարդինիայի կողմից, որն էլ պետք է հանգեցներ պատերազմի: [5]

1859 թվականի մայիսի 20-ին Մոնտեբելլոյի մոտ տեղի ունեցավ առաջին խոշոր ճակատամարտը, որտեղ դաշնակցային զորքերը ետ մղեցին ավստրիացիների հարձակումը: Այս ճակատամարտի մասին «Արշալոյս Արարատեան» թերթում նշվում է, որ կռիվը տևեց չորս ժամ, որտեղ ավստրիացիները տվեցին 1000 սպանված և 200 գերի, իսկ ֆրանսիացիների կորուստը կազմում էր 5-600 հոգի: [6]

«Արեւմուտք» թերթը հաղորդում է, որ մայիսի 30-ին Վիկտոր Էմանուել թագավորը հարձակվեց Բալեսթրոյի վրա, որպեսզի Սեզիա գետի վրա կամուրջ անցկացնի: Նրանք կարողանում են հաջողության հասնել և ավստրիական զորքին իր դիրքերը ետ շպրտել: Վիկտոր Էմանուել թագավորի զորքերը գերի են վերցնում 1000 հոգու և 3 թնդանոթ: Թերթը ներկայացնում է նաև Վիկտոր Էմանուել թագավորի խոսքերը ուղղված իր զինվորներին հաղթական ճակատամարտից հետո. «Այսօր նոր և փառաւոր ռազմ մը նոր յաղթութիւն մը

նշանակեց … Զինուորք, յարատեւութիւն այսպիսի վսեմ ընթացքի մէջ. մի փոխուիք և ես ձեզի կապահովցնեմ որ երկնաւոր Տէրը պիտի պսակէ ձեր գործը զոր արիաբար ըսկսաք»:

Այնուհետև թերթը ներկայացնում է Գարիբալդու 4-5 կամավորների ունեցած հաջողությունները, ով մայիսի 23-ին Սեսթո-Քալենտե մտավ, հաջորդ օրը Վարեզե քաղաքը գրավեց՝ 6000 ավստրիացիների հաղթելով, ապա մայիսի 27-ին հասավ են Կոմո, Բերգոմո, Պալադզոլո քաղաքներ: Վալթելինա նահանգում այսպիսով հաստատվեց Վիկտոր Էմանուելի իշխանությունը, և Լոմբարդիայի այս կողմն ազատվեց Ավստրիայի տիրապետությունից: [7]

«Արեւմուտք» թերթը իր համարում ներկայացնում է «Անցք Թեսենի և Պատերազմ Մաժենթայի» պաշտոնական օրագրից ստացված տեղեկությունները: Նրանում հաղորդվում է, որ կայսրը թշնամուն խաբելու նպատակով իր հիմնական ուժերը որոշեց կենտրոնացնել ձախ թևում, իսկ աջ թև ուղարկեց որոշակի քանակությամբ զորք՝ փորձելով ստեղծել տպավորություն, թե այդ հարվածով է ծրագրում հարձակումը: Հունիսի 4-ին դաշնակիցները խոշոր հաղթանակ տարան Մաջենտայի մոտ, որի արդյունքում գրեթե ողջ Լոմբարդիան ազատագրվեց: Ըստ «Անցք Թեսենի և Պատերազմ Մաժենթայի» պաշտոնական օրագրի՝ ավստրիացիները նախապես իմանալով դավադրության մասին, 125000 զինվորով դուրս եկան կայսեր դեմ: Կայսրը 4 ժամ սպասեց մինչև զորապետների գալը, որից հետո սկսվեց ահեղ պատերազմ, որը տևեց գրեթե ութ ու կես ժամ: Ավստրիացիները տվեցին 20000 սպանված և վիրավոր, կորցրին 12000 հրացան, 4 թնդանոթ, 2 դրոշակ: Ավստրիացիները Ժյուլե սպարապետի հրամանով նահանջեցին 4 գումարտակով: [8]

Ուշագրավ են թերթում առկա նամակները՝ գրված Նապոլեոն կայսեր կողմից կայսրուհուն, որում նա ներկայացնում է ինչպես Մաջենտայի մոտ տեղի ունեցած ճակատամարտում ֆրանսիական բանակի կորուստները՝ 5000 սպանված ու վիրավոր և 1 թնդանոթ, և ավստրիական կողմինը: «Մեծ յաղթութիւն: Հինգ հազար կալանաւոր, տասն և հինգ հազար թշնամի սպանուած կամ վիրաւոր: Յետոյ պարագաները …»: Թերթում կա նաև 1859 թվականի հունիսի 3-ին Նապոլեոնի՛ ուղղված կոչը իտալական բանակի զինվորներին. «… Ձեզ կը վստահիմ: Քաջալերութի՛ւն ուրեմն արի՛ զինուորք Իդալիայի բանակին: Երկինքին բարձրութենէն նախահարք ձեր վրայ ակնապիշ կը նայի՛ն պարծելով …»:

Հունիսի 12-ով թվագրվող «Մեծ Զօրապետն առ Պաշտօնեայ պատերազմի» հրապարակման մեջ նշվում է հունիսի 8-ին Մարիյնյան կայանի մոտ տեղի ունեցած ճակատամարտի մասին: Պատերազմը տևեց երեք ժամ, որտեղ թշնամին ազդեցիկ դիմադրություն էր ցույց տալիս, բայց ի վերջո նահանջեց՝ թողնելով 1 թնդանոթ և 1000 գերի: Հակառակ կողմից 50 պաշտոնատար և 800 զինվոր սպանվեց և վիրավորվեց: [9]

1859 թվականի հունիսի 3-ին Նապոլեոնը, դիմելով իտալացիներին իր հրապարակման մեջ նշում է, թե ինչու է գտնվում Միլանում. «Երբ անիրավ Ավստրիան արշավեց Պիեմոնտի վրա՝ որոշեցի ձեռնտու լինել իմ դաշնավոր Սարդինիայի թագավորին: Ֆրանսիայի պատիվը և շահերը իմ վրա պարտավորություն են դնում, որ այսպես վարվեմ … »: [10]

Նապոլեոն կայսեր կողմից կայսրուհուն գրած մեկ այլ նամակ կրկին ներկայացվում է «Արեւմուտք» թերթում, որում կայսրը նշում է հունիսի 24-ին տարած հաղթանակի մասին, որը տևել էր առավոտյան ժամը 4-ից մինչև երեկոյան ժամը 8-ը: Ավստրիական կոմոը Սոլֆերինոյի մոտ տեղի ունեցած ճակատամարտում տվեց 7000 գերի, կորցրեց երեսուն թնդանոթ և երեք դրոշակ:Սարդինիայի բանակը կռվելով ձախ թևում զգալի կորուստներ պատճառեց ավստրիացիներին: [11]

Նապոլեոնի՝ կայսրուհուն ուղղված մեկ այլ հրապարակման մեջ ցրվում է հուլիսի 7-ին

Ավստրիայի կայսեր հետ հաստատած զինադադարի մասին, որում նշվում է, որ հետագայում պետք է որոշվեն պայմանները և տևողությունը: [12]

«Արեւմուտք» թերթում այլ լրագրերից ստացվող տեղեկություններից պարզ է դառնում, որ Պարմայում, Մոդենայում, Տոսկանայում և պապական պետության մի շարք գավառներում սկսվել են ապստամբություններ: Դքսություններից ավստրիական զորքերը դուրս մղվեցին, ստեղծվեցին ժամանակավոր կառավարություններ, իսկ պապական լեգատներում՝ ժամանակավոր ջոկատներ: Նրանք հանրագրերով դիմեցին Վիկտոր Էմանուելին՝ խնդրելով միավորվել Սարդինական թագավորության հետ: [13]

«Արեւմուտք» թերթը տեղեկություններ է հրապարակում «Մոնիթոր» լրագրից, ըստ որի՝ Մաջենտայի ճակատամարտից հետո այդտեղից անհետացան նաև Մոնթեպելլոյի և Բալեսթրոյի կռիվների վերաբերյալ բոլոր փաստաթղթերը, որում հաղորդվում էր ավստրիական գնդերի կրած կորուստների մասին: Այս լրագիրը Սոլֆերինոյի ճակատամարտից հետո այնուհետև հրատարակում է յուրաքանչյուր կողմի կորուստները, որը ներկայացրել է «Արեւմուտք»-ը: Ըստ այդմ՝ Սարդինիայի բանակը տվեց 5525 զոհ, ֆրանսիական կողմը 12000 վիրավոր և սպանված: [14]

Հուլիսի 8-ին Վիլլաֆրանկում ստորագրվեց զինադադար, և կրակը դադարեցվեց, որը ստորագրեցին Ֆրանսիայի կողմից մարշալ Վայլեանը և Ավստրայի կողմից զորապետ Հեսսը: Այս մասին Նապոլեոն կայսեր հրապարակումը տեղ է գտել «Արեւմուտք» թերթում: « Զինադուլ մը որոշուեցաւ, յուլիսի 8ին, երկու դիմամարտ կողմերու մէջ և պիտի տևէ մինչև գալ օգոստոսի տաս և հինգը … »:

«Մօնիթkor»-ը, հրապարակելով մի հոդված, նշում էր, որ չեզոք տերությունները՝ Ռուսիան, Պրուսիան և Անգլիան, ցանկանում էին միասնական միջնորդություն ներկայացնել պատերազմի դադարեցման համար: Ֆրանսիայի կայսրը արյունահեղությունը դադարեցնելու համար որոշեց զինադադար հաստատել, որն ընդունվեց ավստրիական կայսեր կողմից: Նրանք Վիլլաֆրանկում միմյանց էին հանդիպել հուլիսի 11-ին: [15]

Իրականում ազգային-ազատագրական շարժումը լայն թափ էր ստացել և կարող էր հանգեցնել միասնական և անկախ Իտալիայի ստեղծմանը, որը չէր մտնում Նապոլեոն III-ի ծրագրերի մեջ: Նա մտածում էր, որ հաղթանակների շնորհիվ կարող է Ավստրիայից իրեն ձեռնտու զիջումներ ստանալ, ուստի շտապեց իր դաշնակցի թիկունքում ավարտել պատերազմը:

Կայսրուհուն ուղղված հրապարակման մեջ Նապոլեոնը նշում է հաշտության պայմանները, որը ներկայացվում է «Արեւմուտք» թերթում: Այսպես, Ավստրիան Լոմբարդիան զիջում էր Ֆրանսիային, որն իր հերթին այն նվիրում էր Պիեմոնտի թագավորին: Վենետիկը մնում էր Ավստրիայի տիրապետության տակ, Տոսկանայի և Մուդենայի դքսերը վերադառնալու էին իրենց գահերին: [16]

«Արեւմուտք»-ը ներկայացնում է Նապոլեոնի կոչն՝ ուղղված իր բանակին և Սարդինիայի բանակին: Վերջիններիս նա դիմում էր հետևյալ խոսքերով. «Զինուորք յաղթութիւնը ծանր զոհերով մեր ձեռք ինկալ, բայց այն ազնիւ արիւնը որ երեկ կը հոսհոսէր ամենէն սուր իրաւունքի մը համար, Եւրոպային պիտի յայտնէ որ Իդալիա արժանի է ազգերու մէջ իբրև ազգ երևիլ և իր տեղը որոշել … »: [17]

Թերթում առկա է նաև Վիկտոր Էմանուելի կոչը Լոմբարդիայի ժողովրդին, որում ասվում էր. « … Զինադուլը և հաշտութեան պայմանները, որք անկէ կը հետևին, Լօմպարտիաի անկախութիւնը ապահովցուցին … »:

Հուլիսի 14-ին Միլանում Նապոլեոնը և Վիկտոր Էմանուելը հանդիպեցին: Մեծ

ընդունելություն կազմակերպվեց, որից հետո Վիկտոր Էմանուելը նրան ճանապարհեց Սյուզ քաղաք, իսկ արդեն հուլիսի 17-ին Նապոլեոնը Ֆրանսիայում էր:[18]

«Արեւմուտք»-ը այնուհետև ստացված տեղեկությունների հիման վրա հաղորդում է, որ պարոն Կավուրը հաշտության պայմանագրից հետո հրաժարական է տվել: [19]

«Արեւմուտք» թերթն իր համարներից մեկում նշում է, որ պատերազմի սկսվելուն պես թերթը տերությունից խնդրեց քաղաքական մանր լուրեր տալ և պաշտոնական գրվածքներ ներկայացնել: Հաշտության կնքման հետ դադարեց նաև այս թերթին տրված արտոնությունը և այն ներկայացրեց կայսեր ճառը Սեն Լուի պալատում տերության ժողովների անդամներին. « … Ֆրանսայի ռազմական զօրութեան նոր փաստ մը ևս տալէն ետև, հաշտութիւնը զոր ըրի, պիտի արդիւնաւորը բարօրութեան հետևանքները: Ապագայն օրէ օր աւելի լաւ պիտի յայտնէ զանոնք, Իդալիաի երանութեան, Ֆրանսաի ազդումին և Եւրոպաի հանգստութեան համար»: [20]

Վիլլաֆրանկի զինադադարը իտալական պետություններում զայրույթի հզոր ալիք առաջացրեց, որի արդյունքում 1859 թվականի ամռանը և աշնանը զանգվածային ելույթներ տեղի ունեցան: Հոկտեմբերին Սիցիլիայի դեմոկրտաներն ապստամբություն նախապատրաստեցին, որն արագ ճնշվեց:

«Արշալոյս Արարատեան» թերթի համարներից մեկը տեղեկացնում է «Ժուռնալ տէ Տէպա» լրագրից ստացած տեղեկություններով, որ Ֆրանսիայի կառավարության և Նիցայի ու Սավոյայի միավորման վերաբերյալ պայմանագիրը վավերացվեց մարտի 15-27-ն ընկած ժամանակահատվածում: Մինչ այդ «Արշալոյս Արարատեան» թերթը տեղեկացնում է, որ միավորման վերաբերյալ մարտի 11-23-ը Սավոյայի գավառական խորհրդականներից բաղկացած պատգամավորությունը Նապոլեոն կայսերը ներկայացրեցին միավորման վերաբերյալ իրենց համաձայնությունը: Թերթը նշում է, որ եթե մինչ այդ Սարդինիայի թագավորը կընդդիմանար, ապա այժմ հաճությամբ ընդունում է Սավոյայի և Նիցայի միավորումը Ֆրանսիային: [21]

«Արշալոյս Արարատեան» թերթը իր հաջորդ համարում հայտնում է, որ առայժմ մեծ տերությունները ծածուկ կամ բարոյական միջամտությամբ հանդիսատեսի դերում են Իտալիայում կատարվող դեպքերի նկատմամբ: «Եվրոպայի քաղաքականությունը թեպետ հանդարտ վիճակի մեջ էր գտնվում, սակայն այնպիսի հանդարտություն էր, որ դժբախտությամբ խռովահույզ փոթորիկ էր գուշակում»: [22]

«Արշալոյս Արարատեան» թերթը իր համարներից մեկում հրատարակում է «Ֆրանսիան. Հռոմ և Իտալիան» խորագիրը կրող տետրակը: Այս տետրակի հեղինակը հորդորում է, որ պապությունը և Իտալիան իրար հետ պետք է միավորվեն և հոգևոր իշխանությունը միշտ պետք է մնա պապի ձեռքում, իսկ աշխարհիկ իշխանությունը՝ Վիկտոր Էմանուել թագավորի ձեռքին: Այս տետրակում նշվում է նաև Նապոլեոն կայսեր կողմից սուրբ աթոռի պաշտպանության համար գործադրած ջանքերը: Այս տետրակն ըստ էության ծանոթացնում է, որ Նապոլեոն կայսրը իր զորքը պետք է պահի Հռոմում՝ Պապին պաշտպանելու համար: [23]

«Մորնինկ Բոսըն» օրագիրը հաղորդում է, որ Անգլիայի կառավարությունը հաստատակամությամբ կարողացավ արգելել Ֆրանսիային նախ՝ չմիջամտելու Գարիբալդիի հարձակմանը, երկրորդ՝ Անգլիայի կառավարության կողմից Փարիզ ուղարկած հանդիմանությունները շտապեցրին ֆրանսիական նավատորմին մեկնելու «Կայէթայէն» և երրորդ՝ Անգլիայի բարեկամական խրատները օգտակար էին Սարդինիայի վեհապետի և նրա նախարարների համար, որպեսզի Վենետիկի դեմ կանխահաս հարձակում չիրականացվի: [24]

«Արշալոյս Արարատեան» թերթը տեղեկացնում է, որ Վիկտոր Էմանուել թագավորը փետրվարի 6-ից 18-ը անձամբ բացեց Իտալիայի օրենսդրական ժողովները, ինչի առթիվ նշում էր. «Իտալիան ազատ, և Գրեթէ բովանդակապէս միաւորեալ ձեր խոհեմութեանը կապաւինուի: Ուստի ձեզ կըվերաբերի բարեկարգել զնա, կառավարական ամենամեծ ազատութիւններ հիմնադրելով … »: [25]

«Արշալոյս Արարատեան» թերթը իր հաջորդ համարում նշում է, որ Հռոմի հետ կապված գործը առանց մեծ դժվարության շուտով պետք է վերջանա, բայց Վենետիկի պաշտպանության համար Ավստրիան մեծ պատրաստություններ է տեսնում թե՛ ծովային կողմից, թե՛ ցամաքից:

Ֆլորենցիայի «Լա Նացիօնէ» անունը կրող օրագիրը հրատարակում է Պիզայի կանանց ուղերձը կամ աղերսագիրը՝ ուղղված Իտալիայի թագավորին: Նրանով կանայք հայտնում են, որ Վենետիկն անպատճառ պետք է միավորվի իտալական թերակղզու հետ, և դրա համար նրանք պատրաստ են իրենց հացի մի մասը տալ, որի կապակցությամբ թագավորն իր շնորհակալությունն էր հայտնում այս կանանց:

Կոմս Կավուրը, ով Իտալիայի թագավորության պաշտոնեից ժողովի նախագահն ու արտաքին գործերի և ծովային զորության վերատեսուչն էր, մարտի 12-24-ը ազգային երեսփոխանների խորհրդաժովի նիստերի ժամանակ հայտնեց, որ իտալացիներն իրավունք ունեն պահանջելու Հռոմն, որպեսզի իրենց մայրաքաղաքը դարձնելու, որն էլ իր հերթին պետք է համաձայնեցվեր Ֆրանսիայի հետ: [26]

Այսպես, 1861 թվականի հունվարի 27-ին կայացան իտալական խորհրդարանի ընտրությունները: Նոր խորհրդարանը օրենք ընդունեց Իտալական թագավորություն կազմավորելու մասին, և մարտի 17-ին Վիկտոր Էմանուել II-ին հռչակեց Իտալիայի թագավոր:

«Արեւմուտք», «Արշալոյս Արարատեան» թերթերից յուրաքանչյուրն այս խնդրին տվել է յուրովի մեկնաբանություն՝ ներկայացնելով եվրոպական երկրների դիրքորոշումները, խնդրի կարգավորման ուղղությամբ նրանց գործադրած ջանքերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Արեւմուտք», 1859, մայիսի 15, թիւ 10, էջ 77:
2. «Արեւմուտք», 1859, հունիսի 1, թիւ 11, էջ 86:
3. «Արեւմուտք», 1859, հունիսի 1, թիւ 11, էջ 82:
4. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1859, հունվարի 9, թիւ 588:
5. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1859, ապրիլի 17, թիւ 595:
6. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1859, մայիսի 29, թիւ 598:
7. «Արեւմուտք», 1859, հունիսի 15, թիւ 12, էջ 92-93:
8. «Արեւմուտք», 1859, հուլիսի 1, թիւ 13, էջ 99-100:
9. «Արեւմուտք», 1859, հուլիսի 1, թիւ 13, էջ 98-99:
10. «Արեւմուտք», 1859, հուլիսի 1, թիւ 13, էջ 97:
11. «Արեւմուտք», 1859, հուլիսի 15, թիւ 14, էջ 105-106:
12. «Արեւմուտք», 1859, հուլիսի 15, թիւ 14, էջ 106:
13. «Արեւմուտք», 1859, հուլիսի 15, թիւ 14, էջ 108:
14. «Արեւմուտք», 1859, հուլիսի 15, թիւ 14, էջ 112:
15. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 1, թիւ 15, էջ 113-114:
16. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 1, թիւ 15, էջ 114:
17. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 1, թիւ 15, էջ 115:

18. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 1, թիւ 15, էջ 116:
19. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 1, թիւ 15, էջ 119
20. «Արեւմուտք», 1859, օգոստոսի 15, թիւ 16, էջ 121-122:
21. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1860, ապրիլի 1, թիւ 620:
22. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1860, օգոստոսի 6, թիւ 629:
23. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1861, փետրվարի 25, թիւ 643:
24. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1861, փետրվարի 25, թիւ 643:
25. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1861, փետրվարի 25, թիւ 643:
26. «Արշալոյս Արարատեան», Զմյուռնիա,1861, մարտի 25, թիւ 645:

ՀՏԴ941(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Շարմաղ Սուքիասյան
ՎՊՀ Պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Պատմություն» մագիստրատուրա II կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.թ., դոցենտ Մ. Բրուտյան

ԼԻԲԱՆԱՆԻ ՀԱՅԿԱԶՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ

Բանալի բառեր՝ *Հայկազյան համալսարան, Լիբանան, Բեյրութ, Սփյուռք, 1955*

Լիբանանի Հայկազյան համալսարանը սկսած 1955 թ. կարևոր տեղ է գրաղեցնում ոչ միայն Լիբանանում, այլև Սփյուռքում: Համալսարանը սփյուռքահայ միակ բարձրագույն ուսումնական հաստատությունն է: Այն նպաստում է հայագիտության զարգացմանը և հայապահպանությանը: Հայկազյան համալսարանի դասավանդվող առարկաների և մասնագիտությունների բազմազանությունը իրենց մեծ ներդրումն ունեն ինչպես սփյուռքահայ տարբեր համայնքներում կրթական գործի կազմակերպման, այնպես էլ հայաստանյան կրթական համակարգի զարգացման տեսանկյունից:

Шармаг Сукиасян

ИЗ ИСТОРИИ УНИВЕРСИТЕТА АЙКАЗЯНА В ЛИВАНЕ

Ключевые слова: *Университет Айказян, Ливан, Бейрут, Диаспора, 1955.*

Ливанский университет Айказян с 1955 года играет важную роль не только для Ливана, но и для армянской диаспоры. Университет является единственным высшим учебным заведением в диаспоре, всей способствует развитию арменоведения, сохраняя армянскую идентичность. Опыт, накопленный Университетом Айказяна, может быть полезен как с точки зрения организации воспитательной работы в различных армянских общинах диаспоры, так и для развития армянской образовательной системы.

Սփյուռքահայ կրթական կառույցների շարքում իր ուրույն տեղն ունի Սփյուռքի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ Լիբանանի Հայկազյան համալսարանը: Այն, լինելով լիբանանյան բարձրագույն ուսումնական հաստատություն, կարողացել է պահպանել իր հայկականությունը:

Բեյրութի Հայկազյան համալսարանը 1955թ. հոկտեմբերի 17-ին հիմնադրվել է Ամերիկայի հայ ավետարանչական ընկերակցության (ԱՀԱԸ) և Մերձավոր Արևելքի Հայ ավետարանական եկեղեցիների միության (ՄԱՀԱԵՄ) կողմից՝ ամերիկահայ բարերարներ Ստեփան Մեխակյանի և Սթիվըն Փիլիպոսյանի նվիրատվությամբ:[1] Այն կառավարվում է խորհրդի միջոցով, որի երկու երրորդը ներկայացված է ԱՀԱԸ-ի, մեկ երրորդը՝ ՄԱՀԱԵՄ-ի կողմից:[2] Սկզբնական շրջանում կրթօջախը ստացել է քոլեջի կարգավիճակ: Հաշվի առնելով կրթության բարձր որակը՝ 1966թ. մարտի 25-ին Լիբանանի կրթության նախարարությունը Հայկազյան քոլեջը ճանաչեց որպես բարձրագույն ուսումնական հաստատություն: Քոլեջի շնորհած արվեստի և գիտության բակալավրի աստիճանը հավասարեցվեց Լիբանանի համալսարանի շնորհած աստիճանին: Արդեն 1996թ. դեկտեմբերի 26-ին Հայկազյան քոլեջն իրավունք ստացավ իրականացնել մագիստրոսական կրթական ծրագրեր և կոչվել Հայկազյան համալսարան: Հաստատվեցին արվեստի մագիստրոսի տիտղոս շնորհող դասընթացներ մանկավարժության, հոգեբանության և առևտրական վարչագիտության գծով:

---

[1] *Համալսարանը կոչվել է բարերար Մեխակյանի անունով՝ Կոնյայի Ճենանյան ինստիտուտի նախկին ուսուցչապետ Արմենակ Հայկազյանի անունով:*
[2] *Հայ սփյուռք հանրագիտարան, Երևան, 2003, էջ 306:*

Չնայած ուսումնառությունն իրականացվում է անգլերենով, հայկական և արաբական մշակույթներին վերաբերող առարկաները դասավանդվում են համապատասխանաբար հայերենով և արաբերենով: Համալսարանում ուսանում են Լիբանանի և Մերձավոր Արևելքի այլ երկրների բազմաթիվ հայ և օտարազգի ուսանողներ: Առաջին տարում ուսանողների թիվը կազմում էր 43, 1975-1976թթ.՝ 650, 2003թ.՝ 534 հոգի: 2011թ. տվյալներով Հայկազյան համալսարանում սովորում էր մոտ 800 ուսանող, դասախոսական կազմը գերազանցում է հարյուրը, իսկ համալսարանի անձնակազմը բաղկացած է 55 հոգուց: Ընդհանուր առմամբ 1955 թ. ի վեր համալսարանում կրթություն են ստացել 4305 ուսանողներ:[1]

Համալսարանի հիմնադրման գլխավոր նպատակն է եղել Մերձավոր Արևելքի հայ համայնքներն ապահովել բարձրորակ ուսուցիչներով, մտավորականներով ու հայ ավետարանական եկեղեցու ծառայողներով:

Ներկայումս մեծ թվով ուսանողներ հետևում են նաև համալսարանի առևտրական վարչագիտության (բիզնես էդմինիստրեյշընն), համակարգչային և կլինիկական լաբորատորիայի գիտաճյուղերին: Շրջանավարտներն ստանում են արվեստի պսակավորի (բակալավր) և գիտության պսակավորի տիտղոսներ, որոնք 1971-ից պետականորեն հավասարազոր են լիբանանյան պետական համալսարանի շնորհած աստիճանին:

Հայկազյան համալսարանն ունի հայագիտական ամբիոն, որի անխափան գործունեությունն ապահովելու խնդրում տարիների ընթացքում մեծ ավանդ են ներդրել Տիգրան Խրլոպյանը, Տիգրան Գույումճյանը, Վահե Օշականը, Երվանդ Քասունին, Լևոն Վարդանը և ուրիշներ: Ներկայումս համալսարան հաճախող բոլոր հայազգի ուսանողները՝ անկախ իրենց ընտրած մասնագիտությունից, պարտավոր են ուսման ընթացքում հետևել հայագիտական առնվազն երկու առարկաների: Համալսարանն ունի առանձին հայագիտական գրադարան (տեղավորված է 1972-ին բարերար Ստեփան Մյուզարի նվիրատվությամբ ձեռք բերված շենքում), որն ամեն տարի հարստացվում է Հայաստանից և այլ երկրներից ձեռք բերված հայերեն և օտարալեզու գրքերով և հրատարակություններով:

Համալսարանը հրատարակում է «Հայկազյան հայագիտական հանդեսը» (1970-ից), անգլերենով՝ «Հայկազյան հերալդ» ուսանողական պարբերաթերթն ու «Ֆոկուս» ուսանողական տարեգիրքը: Համալսարանում գործում են մի շարք ուսանողական ակումբներ և ընկերություններ[2]:

Հայկազյան համալսարանի նախագահներն են եղել Ջոն Մարգարյան (1955-66, 1971-1982), Ջիլբերտ Բիլեգիկյան (1968-1971), Վեռն Ֆլետչեր (1982-85), ժան Խանճյան (1995-2002) և Փոլ Հայտոսթյան (2002-ից): 1966-68-ին նախագահի պաշտոնակատարն է եղել Ջոզեֆ Սփրեդլին, իսկ 1985-95-ին ղեկավարն էր վարչական հարցերի գծով դեկան Վիլմա Չոլաքյանը: Հայկազյան համալսարանի կայացման և ընդհանրապես լիբանանահայ կրթական կյանքում մեծ է Տիգրան Խրլոպյանի դերը, ով եղել է Հայկազյան համալսարանի Հայագիտական ամբիոնի առաջին վարիչը:[3]

Համալսարանը թեև գործում է Հայ Ավետարանական եկեղեցու հովանու ներքո, սակայն իր գործունեությամբ հայության համար ունի համազգային նշանակություն : Այստեղ ուսանելու են գալիս հայ և այլազգի երիտասարդներ ոչ միայն Լիբանանից, այլև այլ երկրներից: Նույն կերպ համալսարանի շրջանավարտները հետագայում իրենց գործունեությունը ծավալում են ոչ միայն Լիբանանի, այլև այլ երկրների հայ համայնքներում և համազգային կառույցներում:

---

[1] *http://www.haigazian.edu.lb/*

[2] *«Հայկազեան հայագիտական հանդէս», Պէյրութ, 1970, էջ 7:*

[3] *Հայ սփյուռք հանրագիտարան, էջ 306:*

Բեյրութի Հայկազյան համալսարանի համազգային նշանակությունը երևում է ևս երկու հանգամանքով: Նախ՝ համալսարանը, հիմնված լինելով Հայ Ավետարանական եկեղեցու կողմից և պատկանելով վերջինիս, այնուամենայնիվ, ինչպես նշում է համալսարանի նախագահ, վերապատվելի դոկտոր Փոլ Հայդոստյանը, ֆինանսապես անկախ է նրանից: Դա արվել է համալսարանի անկախության առավելագույն մակարդակը և համազգային բնույթն ապահովելու նպատակով: Հաջորդ փաստը, որը խոսում է Բեյրութի Հայկազյան համալսարանի գործունեության համազգային բնույթի մասին, այն է, որ համալսարանի ինչպես պրոֆեսորադասախոսական կազմում, այնպես էլ վարչական աշխատողների շրջանում, բացի հայ ավետարանականներից, մեծ է նաև հայ առաքելականների և կաթողիկեների թիվը: Մասնավորապես, համալսարանի գիտակրթական գործունեության ապահովման մեջ իրենց նշանակալի դերն ունեն այնպիսի գործիչներ, ինչպիսիք են Մեծի Տանն Կիլիկիո կաթողիկոս Արամ Ա-ն, ով համալսարանում հանդես է գալիս դասախոսություններով, և հայ կաթողիկե վարդապետ Անդրանիկ վարդապետ Կռանյանը, ով համալսարանի կողմից հրատարակվող Հայկազյան հայագիտական հանդեսի պատասխանատու խմբագիրն է:

Հայկազյան համալսարանն ունի ուսուցման երկու ուղղություններ (դպրոցներ)՝

1. արվեստների և գիտության,
2. բիզնեսի կառավարման և տնտեսագիտության:

Արվեստների և գիտության դպրոցն ընդգրկում է երեք ֆակուլտետներ՝ գիտությունների ֆակուլտետ (բնական գիտություններ, բժշկագիտական լաբորատորիա, քիմիա, կենսաբանություն) և մաթեմատիկական գիտություններ (ֆիզիկա, համակարգչային գիտություններ, մաթեմատիկա): Մյուսը հասարակական գիտությունների ֆակուլտետն է, որտեղ ներառվում են սոցիոլոգիան, հոգեբանությունը, հասարակական աշխատանքը, քաղաքագիտությունը և կրթությունը: Հոգեբանության և կրթության բնագավառներում տրվում են արվեստի մագիստրոսի, ինչպես նաև բակալավրի կոչումներ: Իսկ հումանիտար գիտությունների ֆակուլտետն ընդգրկում է արաբերենի և հայերենի ուսումնասիրություններ, անգլերեն, անգլիական գրականություն, պատմություն, երաժշտություն, փիլիսոփայություն, կրոն, արվեստ և միջմշակութային ուսումնասիրման ծրագիր: Կարևոր նշանակություն ունի նաև բիզնեսի կառավարման և տնտեսագիտության ֆակուլտետը՝ որպես բիզնեսի կրթության և ուսումնասիրության կենտրոն: Ֆակուլտետի առաջարկած բոլոր ծրագրերը լիազորված են Լիբանանի կրթության նախարարության կողմից: Ներկայումս ֆակուլտետը շնորհում է արվեստի և բիզնեսի կառավարման բակալավրի աստիճան՝ շեշտը դնելով հաշվապահության, տուրիզմի և ինֆորմացիոն համակարգի կառավարման, ֆինանսների, գովազդի և հաղորդակցության վրա:[1]

Համալսարանը կարևորում է նաև ուսանողների հոգևոր զարգացումը. այստեղ գոյություն ունի առանձին հոգևոր տեսչի պաշտոն: Բացի հոգևոր ոլորտից, առաջնային նշանակություն ունի համալսարանի հայկականության պահպանման խնդիրը: Համալսարանի այդ կողմնորոշումը դրսևորվում է հայոց լեզվի բաժանմունքում, որը տալիս է այս ոլորտի կրթական աստիճան և կոչված է ապահովելու հայ գրականության, պատմության, քաղաքագիտական խնդիրների և մշակույթի ակադեմիական հիմնարար գիտելիքների մատուցում: Ծրագիրն ուսանողներին պատրաստում է ուսուցչության, համայնքային ծառայության և նպաստում ավարտական ուսումնասիրություններ կատարելու գործին: Բաժանմունքը պատասխանատու է նաև ընդհանուր կրթության հայկական մասի համար: Այն օգնում է հայկական գրադարանին, հրատարակում է հայերեն ուսումնասիրություններ,

[1] *«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 2002, N 3, էջ 6-7:*

կազմակերպում հանրային դասախոսություններ և մշակութային միջոցառումներ:

Համալսարանի կրթական ծրագրերում կարևորվում են նաև Լիբանանի պատմության, գրականության, քաղաքական խնդիրներին առնչվող դասընթացները: Դասախոսները և ուսանողական կազմակերպությունները նախաձեռնում են ճանաչողական այցեր դեպի պատմական տեսարժան վայրեր:

Ինչ վերաբերում է հայագիտական տեսանկյունից համալսարանի գործունեությանը, ապա միանշանակ հարկ է նշել, որ իր երկու կառուցվածքային օղակների՝ Հայագիտության ամբիոնի և Հայկական Սփյուռքի ուսումնասիրությունների կենտրոնի գործունեության շնորհիվ այն հանդիսացել և այսօր էլ հանդիսանում է աշխարհի նշանավոր հայագիտական կենտրոններից մեկը: Այսպիսով, Բեյրութի Հայկազյան համալսարանի հայագիտական կառույցների գործունեությունը հանդիսանում է արաբական երկրներում ակադեմիական կառույցների և հայկական համազգային կառույցների շրջանակում հայագիտության զարգացման համադրություն, քանի որ համալսարանը միաժամանակ և՛ լիբանանյան ակադեմիական կառույց է, և՛ պատկանում է համազգային հայկական կառույցին՝ Հայ Ավետարանական եկեղեցուն:[1] Անհրաժեշտ է ընդգծել, որ Հայկազյան համալսարանը, չնայած ունի հայագիտական ամբիոն, այնուամենայնիվ, այստեղի բազմաթիվ հայազգի դասախոսներ հումանիտար և հասարակական տարբեր գիտությունների մասնագետներ են: Հետևաբար, Հայկազյան համալսարանը ոչ միայն հայագիտական, այլև սփյուռքահայ գիտավերլուծական հանրության համախմբման օրինակ է: Միաժամանակ պետք է նշել, որ ինչպես դասախոսների, այնպես էլ ուսանողների զգալի մասը հայեր չեն, ինչի հետևանքով առավել դյուրին է տեղական կրթական համակարգում ինչպես համալսարանի, այնպես էլ նրա անհատ դասախոսների ինտեգրման խնդրի լուծումը:

2005թ. նշվեց Հայկազյան համալսարանի հիմնադրման 50-ամյակը: Համալսարանի դերի մասին է վկայում այն հանգամանքը, որ արարողությանը ներկա էին Լիբանանի կառավարության անդամներ, Լիբանանի նախագահի ներկայացուցիչը, Լիբանանի խորհրդարանի պատգամավոր Հակոբ Բագրատունին, վարչապետի և կրթության նախարարության ներկայացուցիչները: Հանդիսության պատվավոր հյուրն էր ՀՀ արտաքին գործերի այն ժամանակվա նախարար Վարդան Օսկանյանը:[2]

Կարևոր նշանակություն ունի Հայկազյան համալսարանի ակտիվ համագործակցությունը հայկական այլ կրթական հաստատությունների հետ: Յուրահատուկ նշանակություն ունեն հայաստանյան կառույցների հետ հարաբերությունները: Այս առումով պետք է նշել Հայկազյան համալսարանի համագործակցությունը Երևանի պետական համալսարանի հետ: 2009թ. հոկտեմբերի 3-ին Բեյրութի Հայկազյան համալսարանի նախագահ Փոլ Հայդոսթյանի և ԵՊՀ ռեկտոր Արամ Սիմոնյանի միջև ստորագրվեց գործակցության համաձայնագիր. «Երկու համալսարաններն ընդունելով, որ ակադեմիական և գիտական հետազոտական նպատակների համար գործակցությունը անփոխարինելի ազդակ է երկուստեք զարգացման համար, հանձն են առնում ըստ կարիքի և հնարավորության պայմաններ ստեղծել իրենց աշխատակիցների, մասնագետների, ուսանողների և հրատարակությունների փոխանակության համար»:[3]

Հայկազյան համալսարանի գործունեության կազմակերպման մեջ կարևոր է ԱՀԱԸ դերակատարությունը: Հատկապես մեծ է նրա նյութական օգնությունը համալսարանին:[4]

---

[1] *Հովյան Վ., «Մերձավոր Արևելքի հայագիտական կենտրոնները», Երևան, 2015, թիվ 3, էջ 101:*

[2] *«Հայաստանյայց Ավետարանական եկեղեցի», 2005, N 3, էջ 7:*

[7] *Նույն տեղում, 2009, N 4, էջ 18:*

[4] ***Ղանալանյան Տ.**, «Բեյրութի Հայկազյան համալսարանը» , «Գլոբուս» վերլուծական հանդես, թիվ 2, 2013, էջ 48:*

Հայկազյան համալսարանի շրջանավարտներից շատերը կարևոր պաշտոններ են զբաղեցնում սփյուռքահայ տարբեր կառույցներում:

Համալսարանի զարգացման տեսանկյունից կարևորվում է նաև շենքային, նյութատեխնիկական անհրաժեշտ բազայի ապահովումը: Վերոհիշյալի համատեքստում նշանակալի էր համալսարանի շենքի վերակառուցումը: 2010թ. ապրիլի 29-ին մեծ հանդիսությամբ, Լիբանանի վարչապետի հովանավորությամբ տեղի ունեցավ Հայկազյան համալսարանի վերակառուցված շենքի բացման արարողությունը:

Հետաքրքիր է նաև համալսարանում ուսանողների ազգային կազմը: Ինչպես նշվել է, կրթօջախի կողմից չի դրվել ազգային խտրականություն: Այսպես, 2007թ. դրությամբ Հայկազյան համալսարանի ուսանողների 51%-ը հայեր էին, 49%-ը՝ օտարազգիներ:

Հայկազյան համալսարանում իրականացված հետազոտությունների մեջ մշտապես աչքի են ընկել հայկական Սփյուռքի ամենատարբեր հիմնախնդիրներին վերաբերող ուսումնասիրությունները: Այդ աշխատանքներն առավել կազմակերպված և ծավալուն դարձնելու նպատակով 2012թ. սկզբում Հայկազյան համալսարանում հիմնադրվեց հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնը:

2012թ. հունվարի 25-ին տեղի ունեցավ Հայկազյան համալսարանի Հայկական սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի բացումը: Իրադարձության կարևորության մասին է վկայում արարողության մասնակիցների ներկայացուցչական կազմը: Մասնավորապես, ներկա էին Լիբանանի Հայոց թեմի առաջնորդ Գեղամ արք. Խաչերյանը, Լիբանանում Հայաստանի արտակարգ և լիազոր դեսպան Աշոտ Քոչարյանը, Լիբանանի համալսարանի նախագահ, նախկին նախարար, դոկտոր Ատնան Սեյիտ Հուսեյնին, խորհրդարանի պատգամավորների, ազգային, կուսակցական, միությունների ներկայացուցիչները և մշակութասեր հանրությունը: Համալսարանի նախագահ վեր. դոկտ. Փոլ Հայդոսթյանն ընդգծեց հայկական Սփյուռքի ուսումնասիրության կենտրոնի հիմնման կարևորությունը և նշեց. «Մշակութային իր բացառիկ աւանդով ու հայկական արմատական ու հոծ ներկայութեամբ յատկանշուող Լիբանան խթան կը հանդիսանայ, Հայկազեան համալսարանը նկատելու բնական վայրը՝ հայութեան ու անոր միջինարեւելեան սփիւռքի ուսումնասիրութեան»:[1] Նորաբաց կենտրոնի տնօրենն է դոկտ. Անդրանիկ Տագեսյանը:

Կարևոր նշանակություն ունի Հայկազյան համալսարանի և սփյուռքահայ տարբեր կրթօջախների փոխհարաբերությունների զարգացումը, ինչը կարող է նպաստել ոչ միայն տվյալ կրթական հաստատությունների, այլև միջհամայնքային կապերի սերտացմանը: Հայկազյան համալսարանի կուտակած փորձը կարող է օգտակար լինել ինչպես սփյուռքահայ տարբեր համայնքներում կրթական գործի կազմակերպման, այնպես էլ հայաստանյան կրթական համակարգի զարգացման տեսանկյունից:[2]

Այսպիսով, Հայկազյան հաստատությունն անցել է շուրջ 64 տարվա ճանապարհ և այն Սփյուռքի ամենանշանակալի կրթական հաստատություններից է: Լինելով Սփյուռքի հայկական միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ այն առանձնանում է ինչպես Լիբանանի ու ընդհանրապես սփյուռքահայ համայնքերի կրթական կառույցների, այնպես էլ հայ ավետարանական կրթօջախների մեջ, և չնայած Լիբանանի հայկական համայնքի աստիճանական թուլացմանն ու նվազմանը, Հայկազյան համալսարանն այսօր էլ ունի թե՛ կրթական, թե՛ հետազոտական ուղղություններով զարգացման ներուժ:

[1] *http://hayernaysor.am/1327564076*

[2] *http://www.noravank.am*

ՀՏԴ 941(479.25) Պատմություն և քաղաքագիտություն

Տաթյանա Օհանյան
ՎՊՀ պատմաշխարհագրական ֆակուլտետ
«Պատմություն» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ պ.գ.դ., պրոֆեսոր Ֆ. Մովսիսյան
Էլ. փոստ՝ tanya.ohanyan.98@mail.ru

1999Թ. ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 27-Ի ԱՀԱԲԵԿՉՈՒԹՅԱՆ ԱՐՁԱԳԱՆՔՆԵՐԸ ՖՐԱՆՍԻԱՀԱՅ «ՅԱՌԱՋ» ՕՐԱԹԵՐԹՈՒՄ

Բանալի բառեր՝ *ահաբեկչություն, բանակցություն, դատական նիստ, Նաիրի Հունանյան, Վազգեն Սարգսյան, բանտարկություն, միջազգային հանրության արձագանք*

Հայաստանի երրորդ հանրապետության պատմության ողբերգական իրադարձություններից է 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը: Ահաբեկչություն, որը խլեց քաղաքական 8 գործիչ կյանք, և երկար ժամանակ երկրի ներքաղաքական կյանքը պահեց լարված վիճակում: Ձեկուցցի նպատակն է լուսաբանել հոկտեմբերի 27-ի վերաբերյալ ֆրանսիահայ մամուլի արձագանքները: Թե՛ արևմտահայ, թե՛ արևելահայ մամուլը դեպքերին չի անդրադառնում, միայն «Յառաջ» թերթն է հանգամանորեն ներկայացնում դեպքերի ընթացքը, սակայն որևէ քաղաքական գնահատական չի տալիս:

Татьяна Оганян

ОТРАЖЕНИЕ ТЕРАКТА 27-ГО ОКТЯБРЯ ВО ФРАНЦУЗСКО-АРМЯНСКОЙ ГАЗЕТЕ “ЯРАДЖ”

Ключевые слова: *теракт, переговоры, судебное заседание, Наири Унанян, Вазген Саргсян, заключение, реакция международного сообщества*

Одной из трагических событий третьей армянской республики, является теракт 27-ого октября 1999 года. Теракт, который лишил жизни восьмерых известных политических деятелей и повлиял на внутриполитическую жизнь страны, которая оставалась напряженной еще долгое время. Цель статьи осветить реакцию французско-армянской прессы относительно 27-ого октября. Западноармянская и восточноармянская пресса не комментировали эти события, только газета «Ярадж» подробно описывает ход событий, не давая ни одной политической оценки.

1999թ. հոկտեմբերի 27-ին ընթանում էր ԱԺ հերթական նիստը, երբ մի խումբ զինված մարդիկ ժամը 17:10-ին ներխուժեցին Ազգային ժողովի նիստերի դահլիճ և անկանոն կրակ բացեցին: Դահլիճում գտնվող լրագրողները նշում են, որ իրենց հնարավորություն է տրվել դուրս գալ շենքից, սակայն նախ նրանցից պահանջել են բջջային հեռախոսները և գետնին պառկած մնալը՝ հայտարարելով, որ հեղաշրջում են կատարում և պատանդ են պահում պատգամավորներին: Այս դեպքերից անմիջապես հետո հայկական և միջազգային լրատվականները հակասական լուրեր էին հաղորդում՝ վարչապետ Վազգեն Սարգսյանի ճակատագրի հետ կապված: Սակայն երեկոյան ժամը 23:00-ին ԱԺ շենքից դուրս բերվեցին ոչ միայն Վազգեն Սարգսյանի, այլ նաև. «Ազգային Ժողովի նախագահ Կարէն Դեմիրճեանի, փոխ-նախագահներ՝ Ռուբէն Միրոյեանի եւ Եուրի Բախշեանի, Օպէրատիւ հարցերու նախարար՝ եւ Ղարաբաղի նախկին վարչապետ Լէոնար Պետրոսեանի, «Հայաստան» թերթի նախկին գլխաւոր խմբագիր Հէնրիկ Աբրահամեանի, ակադեմիական Միքայէլ Քոթանեանի, երեսփոխան Արմենակ Արմենակեանի դիերը[1]»: Շենքը անմիջապես շրջապատում են իրավապահ մարմինները, սակայն շուրջ 50 պատգամավորների էլ 5 հոգանոց խումբը պահում էր պատանդ: Խմբի ղեկավարն էր Նաիրի Հունանյանը, անդամներ՝ Նաիրի Հունանյանի եղբայր Կարեն Հունանյանը, քեռին՝ Վռամ Գալստյանը, Էդիկ Գրիգորյանը, Դերենիկ Բեջանյանը:

Շփոթությունը մեծ էր, քանի որ շատերը չէին հասկանում նրանց նպատակը: Նաիրի

[1] *«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 29 հոկտեմբերի 1999թ., թիվ 19-762, էջ 1:*

Հունանյանը ասում էր. «ժողովուրդը պիտի փրկեն իշխանաւորներէն, որոնք իր արիւնը կը ծծեն[1]»: Նաիրի Հունանյանը նախկինում եղել է Հայ հեղափոխական դաշնակցության անդամ, սակայն ՀՅԴ Գերագույն մարմինը պաշտոնական հաղորդագրություն տարածեց, որ մի քանի տարի առաջ նա արտաքսվել է կուսակցությունից: Նույն օրը ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը անձամբ եկավ բանակցելու ահաբեկիչների հետ: Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ բանակցություններն ընթացան դռնփակ, որին մասնակցում էր նաև աշխատակազմի պետ Ալեքսան Հարությունյանը, որը եղել է Նաիրի Հունանյանի դասընկերը: Նաիրի Հունանյանը նշել է, որ իր արածը ահաբեկչություն չէ, և ինքը չէր հանդուրժում ժողովրդի վերջին 6-7 տարիների թշվառ վիճակը: Նա նշել է. «Բուն թիրախը Վ. Սարգսեանն էր միայն եւ միւսները պատահական զոհեր եղած են[2]»: Հոկտեմբերի 28-ի կեսօրին նրանք սկսեցին ազատ արձակել պատանդներին, ապա անձնատուր եղան:

Այս դեպքերից անմիջապես հետո հրաժարական է ներկայացնում ներքին գործերի նախարար Սուրեն Աբրահամյանը:

Հայաստանում տեղի ունեցած այս դեպքերը դատապարտեցին մի շարք երկրներ: Այսպես ԱՄՆ նախագահ Բիլլ Քլինթոնը իր ցավակցությունը հայտնեց սպանությունների կապակցությամբ: Բորիս Ելցինն էլ իր ցավակցական հաղորդագրության մեջ նշում էր որ «ցնցված են ահաբեկիչների բարբարոսական գործողություններից[3]»:

Ուշադրության է արժանի Ադրբեջանի կառավարող շրջանների արձագանքը Հայաստանում տեղի ունեցած դեպքերի վերաբերյալ: Արտաքին գործերի փոխնախարար Խալաֆովը չի բացառում, որ այս քայլը ուղղված է Ղարաբաղի բանակցությունների ժամանակ երկիրը ապակայունացնելուն: Իսկ նախագահ Ալիևի նախկին խորհրդական Վ. Գյուլիզադեն նշում էր, որ Հայաստանի համար ներկա պահին դժվար կլինի Ադրբեջանի հետ պայմանագիր կնքել, քանի որ կան «արտաքին ուժեր», որ դա չեն ցանկանում: Արտաքին ուժեր ասելով ակնարկում էր Ռուսաստանին:

Եվրոպայում լույս տեսնող թուրքական թերթեր «Հյուրրիեթը» և «Միլլիեթը», ինչպես նաև քրդական «Էոզկյուր պոլիտիկ» օրաթերթը ահաբեկչությունը կապում էին Արցախյան հարցի հետ. «մէջբերելով ադրբեջանցի դէմքերու յայտարարութիւնները թէ արարքը գործուած է այն ուժերուն կողմէ որոնք դէմ են հայեւադրբեջանական խաղաղութեան[4]»:

Նշենք նաև այն փաստը, որ հոկտեմբերի 27-ին Հայաստան էր ժամանել ԱՄՆ Արտաքին գործերի փոխնախարար Թալպոթը՝ Արցախյան հարցի կարգավորման նպատակով: Խորհրդակցությունից հետո նա Երևանից գնում է Բաքու, և մի քանի ժամ հետո տեղի է ունենում ահաբեկչությունը:

Հոկտեմբերի 28-ին ՀՀ նախագահ Ռոբերտ Քոչարյանը հանրապետությունում եռօրյա սուգ հայտարարեց, որն ավարտվում է հոկտեմբերի 31-ին զոհերի հուղարկավորությամբ:

Հոկտեմբերի 30-ին սգավոր Երևանի կենտրոնում՝ Օպերայի շենքի դահլիճում դրված էին հոկտեմբերի 27-ի ահաբեկչության զոհերի մարմինները: Արմենակ Արմենակյանի մարմինը հողին հանձնվեց Նորք-Մարաշ համայնքում՝ իր կողմից կառուցված եկեղեցու բակում: Նույն օրը՝ ժամը 14:00-ին, զոհերի մարմինները դուրս են բերվում Օպերայի շենքից, և հուղարկավորության թափորը բաժանվում է երեք ուղղության. «Կ. Դեմիրճեանի հետեւորդները ուղղուեցան Կոմիտասի այգիի Պանթէոնը, վարչապետ Վ. Սարգսեանի ընկերակցողները դէպի Եռաբլուր, իսկ Ե. Բախչեանին, Լ. Պետրոսեանին, Ռ. Միրոյեանին, Մ. Քոթանեանին ճանապարհորդները՝ դէպի Երեւանի գերեզմանատունը: Իսկ Հ. Աբրահամեանին մարմինը արդէն փոխադրուած էր Գեղարքունիքի մարզի իր գիւղը՝ Սարուխան»[5]:

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Նույն տեղում:*

[3] *Նույն տեղում, էջ 4:*

[4] *«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 30-31 հոկտեմբերի 1999թ., թիվ 19-763, էջ 1:*

[5] *«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 3 նոյեմբերի, 1999թ., թիվ 19-764, էջ 1:*

Հոկտեմբերի 31-ին ԱԺ փոխնախագահ Յուրի Բախշյանի կինը՝ Անահիտ Բախշյանը, հանդես է գալիս հայտարարությամբ՝ պահանջելով ՀՀ նախագահից ոչ միայն դատապարտել 5 ռճրագործներին, այլն բացահայտել նրանց հետևում կանգնած ուժերին. «որոնք փորձում են սասանել մեր պետութեան հիմքերը»[1]:

Քանի որ հոկտեմբերի 27-ի ահաբեկչությամբ երկրի իշխանությունը «գլխատվեց» , նոր ԱԺ նախագահ ընտրվեց Արմեն Խաչատրյանը, վարչապետ՝ Վազգեն Սարգսյանի եղբայր՝ Արամ Սարգսյանը:

Հոկտեմբերի 27-ի դեպքերի առնչությամբ հարուցվել է քրեական գործ ՀՀ քրեական օրենսգրքի 2 հոդվածներով, 61-րդ հոդվածի առաջին մասով, այն է՝ ահաբեկչական արարք, և 99-րդ հոդվածի 4-րդ և 6-րդ կետերով՝ դիտավորյալ սպանություններ ծանրակշիռ հանգամանքներով: Այս հոդվածներով նախատեսվում է 10-15 տարի ազատազրկում, անգամ մահապատիժ: Նախաքննությունը կատարում է քննչական խումբը, որը գլխավորում է զինվորական դատախազ, գլխավոր դատախազի տեղակալ Գագիկ Ջհանգիրյանը[2]:

2001թ. փետրվարի 15-ին Երևանի Կենտրոն և Նորք Մարաշ առաջին ատյանի դատարանում սկսվել է հոկտեմբերի 27-ի դատավարությունը, սակայն նիստին ներկա չեն եղել ամբաստանյալների պաշտպանները և ամբաստանյալ Միսակ Մկրտչյանը, այդ իսկ պատճառով նիստը հետաձգվեց մինչև փետրվարի 12-ին[3]:

Փետրվարի 12-ի դատական նիստին պաշտպան կողմը պահանջ է ներկայացնում, որ ազգային հեռուստատեսությունը Նաիրի և Կարեն Հունանյանների անձնական գործերը ներկայացնի: Պարզվում է՝ Նաիրի Հունանյանը 1992թ. Դաշնակցության շարքերից հեռացվելուց հետո՝ 1993թ., գնացել է Եվպատորիա: 1997թ. վերջին Եվպատորիայի իր բնակարանը 15հազար դոլարով վաճառել է և հայտարարել, որ գնում է Հայաստան, որ 2-3 տարի հետո դառնա նախագահ: 1998թ. ընտրությունների ժամանակ իր ծառայություններն է առաջարկել Կարեն Դեմիրճյանին, ապա փորձել մերձենալ Երկրապահներին[4]:

Ուշադրության է արժանի այն հանգամանքը, որ Նաիրի Հունանյանը նշել է, թե 2-3 տարի հետո կդառնա նախագահ: Ուստի կարող ենք նշել, որ նա նպատակ է ունեցել պետական հեղաշրջման և իշխանությունը իր ձեռքը վերցնելու:

Նաիրի Հունանյանը իր ցուցմունքներում նշել է, որ իրեն մեղավոր չի համարում և մերժել է ահաբեկչական արարքի մեղադրանքը, նշելով, որ «երկիրը բռնակալութեան վտանգին դէմ էր ու ինքը փորձած էր պայքարիլ[5]»:

Ապրիլի 19-ին Նաիրի Հունանյանի փաստաբան է նշանակվում Արտավազդ Կարապետյանը: Հետագա նիստերին Նաիրի Հունանյանը պատմում է, թե քաղաքական գործիչների հետ երբ և ինչ պայմաններում է ծանոթացել, ինչպես նաև ժխտում է այն, որ Եվպատորիայից վերադառանալիս, ասել է, թե 2-3 տարի հետո նախագահ պիտի դառնա:

Հուլիսի 31-ի նիստին փորձագետները ներկայացրել են խմբի մյուս անդամ Նորայր Եղիազարյանի մահվան պատճառները, այն է՝ սրտի կաթված, էլեկտրահարություն կամ երկուսը միաժամանակ[6]:

Հուլիսի 9-ին հոգեբան Նադեժդա Տարաբլինան Նաիրի Հունանյանի հետ զրույցից հետո նշել է, որ նա իշխելու ձգտող անձնավորություն է, կարող է ընկնել ավելի հեղինակավոր անձանց ազդեցության տակ, ինչպես նաև մտավոր ավելի ցածր մակարդակի մարդկանց վրա ազդել[7]:

Սեպտեմբերի 3-ի նիստում տեսնում ենք, որ Հունանյանը ունի հիշողության հետ կապված

---

[1] *Նույն տեղում:*

[2] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 3 նոյեմբերի, 1999թ., թիվ 19-764, էջ 1, 10 նոյեմբերի 1999թ., թիվ 19-770, էջ 1:*

[3] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 17-18 փետրվարի, 2001թ., թիվ 20-105, էջ 1:*

[4] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 24-25 փետրվարի, 2001թ., թիվ 20-110, էջ 1:*

[5] *«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 12 ապրիլի, 2001թ., թիվ 20-145, էջ 1:*

[6] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 2 օգոստոսի, 2001թ., թիվ 20-223, էջ 1:*

[7] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 24 օգոստոսի, 2001թ., թիվ 20-236, էջ 1:*

խնդիրներ, այնուամենայնիվ նա նշում է, որ ինքն է պատասխանատու բոլոր մարդկանց սպանության համար, իսկ սեպտեմբերի 5-ին ասել է, որ դյուրին էր իր համար գալ ԱԺ շենք և ոճիրն իրականացնել, առավել ևս, որ նիստերը հեռարձակվում էին հեռուստացույցով[1]:

Հոկտեմբերի 27-ին ընդդիմադիր կուսակցություններ Հանրապետությունը, Ժողովուրդը և Ազգային միաբանությունը ցույց են կազմակերպում. «Լրանում է Հոկտ. 27-ի ոճրագործութեան երկու տարին: Այսօր արդեն ակնյայտ է, որ իշխանութիւնները բացայայտօրեն հովանաւորում են ահաբեկիչներին[2]»:

Ուշադրության է արժանի այն, որ Խոսրով Հարությունյանը իր ցուցմունքում նշում է, որ հոկտեմբերի 27-ին ԱԺ դահլիճի դռների մոտ ոստիկան չի եղել:

2003թ. հունվարի 14-ի նիստում Արամ Սարգսյանի փաստաբան Օլեգ Յունչևը հայտատարեց, որ Տիգրան Նաղդալյանը (սպանվել է 2002թ. դեկտեմբերի 28-ին) հոկտեմբերի 27-ի հետ կապված պետք է տեսաերիզ տրամադրեր, և Նաղդալյանը նշել է, որ այն ինչ հեռուստատեսությամբ եթեր է հրապարակվել, սրբագրված է, 11 վայրկյան հանված է, որտեղ պարզ երևում էր, որ բացի 5 ահաբեկիչներից խորհրդարանում եղել են նաև այլ զինված մարդիկ[3]:

2003թ. դեկտեմբերի 2-ին դատախազ Գ. Ավետիսյանը հրապարակում է դատավճիռը. «Նայիրի եւ Կարէն Յունանեան եղբայրները, Էդիկ Գրիգորեանը, Դերենիկ Բեջանեանը, Վռամ Գալստեանը, Աշոտ Կնեազեանը դատապարտված է ցմահ բանտարկութեան, իսկ Համլէթ Ստեփանեանը՝ 14 տարուան»[4]: Դատավարության ընթացքում գումարվել է 297 նիստ:

Համեմատության համար կարող ենք նշել, որ Լոնդոնում լույս տեսնող «Նոր սերնդի ձայն» թերթը փորձել է բացատրել 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչության քաղաքական պատճառները.

1. արտաքին ուժերի կողմից, քանի որ Արցախյան հարցը այդ ժամանակ պետք է լուծում ստանար
2. Վազգեն Սարգսյանին և Կարեն Դեմիրճյանին քաղաքական ասպարեզից հեռացնելու համար,
3. քիչ հավանական, որ ուղղակի Նաիրի Հունանյանն է ցանկացել, վրեժխնդիր լինել: Քիչ հավանական քանի որ նախ ինչպե՞ս կարող էին մի խումբ մարդիկ ներխուժել ԱԺ շենք, հոկտեմբերի 27-ին դռների մոտ ոստիկաններ չեն եղել, արդյո՞ք Նաիրի Հունանյանը և մյուսները զենքերով են մտել ներս, ինչու՞ նախագահի հետ բանակցություններն ընթացան դռնփակ, ինչու՞ դատավճիռը կայացվեց այն ժամանակ, երբ մահապատիժը սահմանադրությամբ արգելվեց[5]:

Ամփոփելով կարող ենք նշել, որ 1999թ. հոկտեմբերի 27-ի ահաբեկչությունը խաթարեց երկրի ներքաղաքական կյանքը: Հայկական մամուլում դեպքերը գրեթե լուսաբանված չեն, սփյուռքահայ մամուլում միայն «Յառաջ» թերթն է հանգամանորեն ներկայացնում դեպքերի ընթացքը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 1999-2003:
2. «Նոր սենդի ձայն» ամսագիր, Լոնդոն, 1999:

[1] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 5 սեպտեմբերի, 2001թ., թիվ 20-245, էջ 1, 7սեպտեմբերի 2001թ., թիվ 20-247, էջ1:*
[2] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 30 հոկտեմբերի, 2001թ., թիվ 20-285, էջ 1:*
[3] *Տե՛ս «Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 16 հունվարի, 2003թ., թիվ 20-601, էջ 1:*
[4] *«Յառաջ» օրաթերթ, Փարիզ, 4 դեկտեմբերի, 2003թ., թիվ 20-828, էջ 1:*
[5] *Տե՛ս «Նոր սերնդի ձայն», Լոնդոն, հոկտեմբեր, 1999թ., թիվ 923(17-925), էջ 2-5:*

ՀՏԴ 339.1 Տնտեսագիտություն

Անահիտ Աբրահամյան
Գավառի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժին, 3-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ ԳՊՀ դասախոս Աստղիկ Հովեյան

ՄՐՑԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԵՌԱԽՈՍԱԿԱՊԻ ՇՈՒԿԱՅՈՒՄ

Բանալի բառեր՝ *մրցակցություն, հեռախոսակապի շուկա, հաճախորդներ, բջջային օպերատոր:*

Հոդվածում ներկայացված է մրցակցության վերլուծություն տնտեսության կոնկրետ ճյուղի՝ ՀՀ հեռախոսակապի շուկայի օրինակով: Իրականացվել է հետազոտություն՝ նպատակ ունենալով պարզել մրցակցությունը Գեղարքունիքի մարզի հեռախոսակապի շուկայում: Կատարված վերլուծությունից պարզ են դարձել օպերատորների մատուցած ծառայությունների որակի, թերությունների և առավելությունների գնահատականները: Ելնելով շուկայի ներկա վիճակից՝ օպերատորներից յուրաքանչյուրը հետևողական պետք է լինի մրցակիցների նկատմամբ, կանխատեսի նոր հնարավոր մրցակցի մուտքը շուկա, ինչպես նաև նորարարությունների միջոցով դիմակայի OTT ծառայությունների լուրջ մարտահրավերներին:

Анаит Абраамян

КОНКУРЕНЦИЯ НА РЫНКЕ ТЕЛЕФОННОЙ СВЯЗИ ГЕГАРКУНИКСКОЙ ОБЛАСТИ

Ключевые слова: *конкуренция, рынок телефонной связи, клиенты, оператор сотовой связи.*

В статье представлен анализ конкуренции на рынке телефонной связи как одной из сфер экономики РА. Цель исследования - выявление проблемы конкуренции на рынке телефонной связи Гегаркуникской области. Анализ выявил качество, недостатки и преимущества услуг, предоставляемых операторами. Учитывая текущее состояние рынка, каждый оператор должен не упускать из виду своих конкурентов, предвидеть появление на рынке нового потенциального конкурента и посредством инноваций противостоять серьезным проблемам в сфере услуг OTT.

Մրցակցությունն հանդիսանում է շուկայական տնտեսության անհրաժեշտ և կարևորագույն տարրերից մեկը, կարգավորիչ ուժ, առանց որի այն լիարժեք գոյություն ունենալ չի կարող: Մրցակցությունն արտադրության արդյունավետության բարձրացման կարևորագույն գործոններից է, որը կազմակերպությանը հարկադրում է կատարել նորամուծություններ, կատարելագործել արտադրության տեխնոլոգիան:[1] Ընդունված է, որ հաջողությունը շուկայում հաջողությունն է մրցակցային միջավայրում: Յուրաքանչյուր կազմակերպության համար մեծ նշանակություն ունի մրցակցային ռազմավարությունը, եթե այն կազմակերպությանը թույլ է տալիս հաճախորդներին սպասարկել ավելի լավ, քան մրցակիցները, ապա կազմակերպությունը մրցակիցների հետ պայքարում զբաղեցնում է ամուր դիրքեր, ունենում է մրցակիցների համեմատ որոշակի և ընդգծված առավելություններ:[2] Մրցակցությունն անխուսափելի է և բնորոշ է տնտեսության բոլոր

[1] *Տե՛ս **Մելքումյան Մ.**, Միկրոէկոնոմիկա, Երևան, Տնտեսագետ, 2011, էջ 344:*
[2] *Marketing Strategy, O.C. Ferrell The University of New Mexico Michael D. Hartline The Florida State University, Copyright 2010, page 38.*

ճյուղերին:[1] Հայաստանի Հանրապետության հեռախոսակապի շուկայում ևս առկա է բարձր մրցակցություն:

Չնայած շատ մասնագետներ պնդում են, որ ներկայումս միայն սպառողներին ճանաչելը բավարար չէ շուկայում և մրցակցության մեջ հաջողության հասնելու համար, սակայն եվրոպական մրցակցային քաղաքականության մեջ գլխավոր շեշտը դրվում է հաճախորդների բավարարվածության վրա:[2] Այս եզրույթն հիմք ընդունելով՝ իրականացվել է հետազոտություն հաճախորդների շրջանում՝ ուսումնասիրելու համար մրցակցությունը Գեղարքունիքի մարզի հեռախոսակապի շուկայում:

2004 թվականից ի վեր Հայաստանը հեռահաղորդակցության ոլորտում դարձավ Արևմտյան Ասիայի գերարագ զարգացող երկրներից մեկը, երբ ՎիվաՍել-ՄՏՍ բջջային օպերատորը մուտք գործեց շուկա և վերացրեց բջջային շուկայի մենաշնորհը՝ առաջարկելով մատչելի GSM ծառայություններ: Ներկայումս ՀՀ-ում հեռահաղորդակցության ոլորտը գնահատվում է հագեցած:[3]

Ըստ ՀՀ վիճակագրական կոմիտեի տվյալների՝ Հայաստանի Հանրապետությունում բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցումն հեռահաղորդակցության ոլորտում ամենամեծ մասնաբաժինն ունի:[4] ՀՀ-ում այս շուկան բնութագրվում է մուտքի բարձր արգելքներով:

Գծապատկեր 1-ից տեսնում ենք, որ 2013-2017 թթ. բջջային հեռախոսակապի ենթաոլորտի հասույթը նվազել է կիսով չափ, սակայն միշտ գերիշխող դիրք է ունեցել ոլորտի ընդհանուր հասույթի կառուցվածքում:



Գծապատկեր 1. ՀՀ հեռահաղորդակցությունների շուկայի կառուցվածքային ենթաշուկաների դինամիկան՝ ըստ բացարձակ հասույթի 2013-2017 թթ. (մլն. դրամ)

Գծապատկեր 2-ում պատկերված է բջջային կապի ակտիվ բաժանորդների քանակը, որը 2012- 2018 թթ-ի ընթացքում ավելացել է 256 հազարով (256420 բաժանորդ):

---

[1] *Տե՛ս* ***Կիրակոսյան Գ.Ե.****, Խլղաթյան Ի.Ե, Տնտեսագիտության տեսություն, Երևան, Տնտեսագետ, 2009:*

[2] *European Competition Law and Economics: A Comparative Perspective 2001, page 1.*

[3] *Համաձայն GSMA "The Mobile Economy" 2018թ.-ի զեկույցի:*

[4] *ՀՀ ՎԿ, Վիճակագրական տարեգիրք, 2018, Տրանսպորտ և կապ>*



Գծապատկեր 2. ՀՀ բջջային հեռախոսակապի ակտիվ բաժանորդների թիվը (տարեվերջին) 2012- 2018 թթ., (1000 մարդ)[1]

Ինչպես երևում է գծապատկեր 1-ում և 2-ում ներկայացված տվյալներից, 2016թ-ին բջջային հեռախոսակապի հասույթը և ակտիվ բաժանորդների թիվը նվազել է: Որոշ լրատվամիջոցներ կատարել են հետազոտություններ և պնդում են, որ դրա պատճառներից է հագեցած շուկան և սուր մրցակցության պայմաններում ձայնային և տվյալների փոխանակման ծառայությունների գների զգալի նվազումը: Հասույթի անկմանն է նպաստում նաև ձայնային տրաֆիկի որոշակի նվազումը, ինչը համաշխարհային միտում է՝ պայմանավորված շարժական ինտերնետի զարգացմամբ:

Աշխարհում այսօր բջջային օպերատորների համար ամենալուրջ մարտահրավերներից են OTT (անգլ. Over the Top) ծառայությունները՝ Skype-ը, Viber-ը, Messenger-ը, WhatsApp-ը, Telegram-ը և այլն: Այս ծառայությունների տարածումը հանգեցրել է հեռախոսակապի դերի նվազմանը, բջջային ավանդական ծառայությունների բաժանորդագրությունների թիվը վերջին տարիներին սկսել է աճել ավելի դանդաղ տեմպով, ինչի հետևանքով էլ պակասել է բջջային օպերատորների հասույթը շուկայում[8]: Հետևաբար բջջային օպերատորների միջև մրցակցությունը դարձել է է՛լ ավելի լարված: GSMA վերլուծականի գնահատմամբ 2017-2020թթ. ընթացքում համաշխարհային բջջային հասույթի տարեկան աճի միջին տեմպը կկազմի միայն 1% և 2020 թվականին կհասնի մոտ 1.1 տրիլիոն ԱՄՆ դոլարի:

Ներկայումս ՀՀ հեռախոսակապի շուկայում գործում են 3 կազմակերպություններ՝ «ՄՏՍ Հայաստան» փակ բաժնետիրական ընկերությունը (ՓԲԸ)՝ իր «Vivacell-MTS» ապրանքանիշով, «ՅՈՒՔՈՄ» սահմանափակ պատասխանատվության ընկերությունը (ՍՊԸ)՝ իր «Ucom» ապրանքանիշով և «Վեոն Արմենիա» փակ բաժնետիրական ընկերություն (ՓԲԸ)՝ իր «Beeline» ապրանքանիշով: Գծապատկեր 3–ում ներկայացված է 2012-2018թթ. բաժանորդների թվաքանակի համեմատական աղյուսակ՝ ըստ շարժական կապի ընկերությունների, որը փաստում է «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ի՝ բջջային հեռախոսակապի ծառայությունների մատուցման ենթաոլորտում առաջատար լինելը: Այնուհետև բաժանորդների թվաքանակով 2-րդ և 3-րդ տեղում են համապատասխանաբար «Վեոն Արմենիա» ՓԲԸ-ն և «ՅՈՒՔՈՄ» ՍՊԸ-ն:

[1] *http://www.psrc.am*



Գծապատկեր 3. Շարժական կապի ծառայությունների 2012-2018 թվականների բաժանորդների թվաքանակի համեմատական աղյուսակ ըստ շարժական կապի ընկերությունների

Գեղարքունիքի մարզի հեռախոսակապի շուկայում մրցակցությունը ուսումնասիրելու նպատակով իրականացվել է հետազոտություն 3 ապրանքանիշների շրջանում՝ «Vivacell-MTS», «Beeline», «Ucom»: Մարզում անցկացվել է գրավոր հարցում 150 բաժանորդների շրջանում: Հարցվածների 74%-ը օգտվում է ՎիվաՍել-ՄՏՍ-ի ծառայություններից, 17.3%-ը՝ «Beeline»-ից, իսկ 8.7%-ը՝ «Ucom»-ից:

Ըստ հարցվածների՝ «ՄՏՍ Հայաստան» ՓԲԸ-ն՝ իր «Vivacell-MTS» ապրանքանիշով շուկայում առաջատար բջջային օպերատոր է, քանի որ ունի փաթեթների լայն հնարավորություններ (55.1%-ը), ցանցի ներսում խոսելու մատչելի տարբերակներ (42.5%-ը), հաճախորդին ներկայանում է պարբերաբար կատարվող փոփոխություններով (41.7%-ը), իրականացնում է բարեգործություններ (33.9%-ը): Առավել կարևոր հատկանիշները, որոնց համար հարցվածները օգտվում են ՎիվաՍելի ծառայություններից, մատչելիությունն է (40%-ը) և այն, որ շրջապատի մարդիկ օգտվում են տվյալ օպերատորից (63%-ը): Իսկ ահա 1-5 բալանոց համակարգով ՎիվաՍել-ՄՏՍ օպերատորի ծառայությունների որակի գնահատման արդյունքում (որտեղ 1-ը նշանակում է շատ ցածր,

5-ը՝ շատ բարձր) ունենք հետևյալ արդյունքը (տես գծապատկեր 4-ը):



Գծապատկեր 4. ՎիվաՄել-ՄՏՍ օպերատորի ծառայությունների որակի գնահատում 1-5 բալանոց համակարգով

Յուքոմը նույնպես ունի առավելություններ, դրանք են՝ բնակավայրերից մինչև սպասարկման կենտրոններ եղած հեռավորությունը (գծապատկեր 5) և գին-որակ հարաբերակցությունը (գծապատկեր 6):



Գծապատկեր 5, Սպասարկման կենտրոնների մատչելի հեռավորության վրա գտնվելը բաժանորդների բնակության վայրից

Հարցվածները օպերատորների գին-որակ հարաբերակցությունը գնահատել են հետևյալ կերպ՝ (տես գծապատկեր 6): Գծապատկեր 6-ում երևում է, որ Յուքոմը մատուցում է ծառայություններ մատչելի գներով, իսկ ՎիվաՄել-ՄՏՍ-ը թանկ գներով:



Գծապատկեր 6. Օպերատորների գին-որակ հարաբերակցությունը ըստ հարցվածների

1-5 բալանոց համակարգով օպերատորների ծառայությունների որակի գնահատման արդյունքները /որտեղ 1-ը նշանակում է շատ ցածր, 5-ը՝ շատ բարձր/ այսպիսին են՝

	1	2	3	4	5
ՎիվաՍել-ՄՏՍ	-	2%	10%	53%	35%
Բիլայն	-	-	45%	23%	32%
Յուքոմ	-	-	-	27%	73%

Յուքոմը՝ ըստ մատուցած ծառայությունների որակի, Գեղարքունիքի մարզի հեռախոսակապի շուկայում առաջատար է: Հարցվածները որակ հասկացության տակ նկատի են ունեցել անխափան հեռախոսազանգերը:

Հարցվածները օպերատորների իրականացրած զեղչերի մասին տեղեկանում են հիմնականում օպերատորների կողմից ուղարկված հաղորդագրությունների (72.4%) և սոցիալական ցանցերի (15%) միջոցով (տես գծապատկեր 7):



Գծապատկեր 7. Ձեղչերի մասին տեղեկատվության ստացման աղբյուրները

Այսպիսով՝ ուսումնասիրելով և վերլուծելով Գեղարքունիքի մարզի հեռախոսակապի շուկայի ներկա վիճակը, հանգել ենք հետևյալ եզրակացությանը.

✓ Շատ կարևոր է մշտապես պահել *հաճախորդ-բիզնես* ամուր կապը: Անհրաժեշտ է ընդլայնել բաժանորդների հետ շփման շրջանակը, այսինքն՝ հաճախորդը կարող է ներկայացնել իր առաջարկները, իսկ բիզնեսը՝ լսել և փոփոխություններ իրականացնել: Արդյունքում հաճախորդը կլինի «բավարարված»:

✓ Օպերատորներից յուրաքանչյուրը պետք է հետևողական լինի մրցակիցների նկատմամբ, հավաքի հնարավորինս շատ տեղեկատվություն նրանց վերաբերյալ, համեմատի մատուցված ծառայությունները և համանման ցուցանիշները: Արդյունքում՝ կբացահայտվի մրցակցի առավելություններն ու թերությունները, որոնց օգնությամբ կարելի է ամուր դիրքեր գրավել շուկայում:

✓ Մարզում OTT ծառայությունները լուրջ մարտահրավերներ են հանդիսանում օպերատորների համար, ուստի անհրաժեշտ է կատարել նորարություններ, մշակել նոր գործիքներ կամ ստեղծել բջջային հավելվածներ, որոնք կօգտագործվեն որպես OTT-ին փոխարինող ծառայություններ: Պետք է շարունակել հետևել համաշխարհային միտումներին, ներդրումներ կատարել հարակից ոլորտներում՝ իրենց հասույթի աղբյուրները դիվերսիֆիկացնելու նպատակով:

✓ Եվ չպետք է մոռանալ, որ յուրաքանչյուր պահ շուկա կարող է մուտք գործել նոր հնարավոր մրցակից: Անհրաժեշտ է լինել զգոն մրցակցային հարաբերություններում: Հնարավոր «երևակայական մրցակցի» մասին մտածելը հնարավորություն է տալիս նրան վերագրել ուժեղ կողմեր, ապա փորձել ինքնուրույն հասնել նշված ուժեղ հատկանիշներին:

ՀՏԴ 330 Տնտեսագիտություն

Մարիա Անտոնովա
ԱրՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի
Ֆինանսներ 4-րդ կուրսի ուսանողուհի
Էլ. Փոստի հասցե՝ maria.antonova.99@mail.ru

ՇԱՀՈՒՅԹԸ ՈՐՊԵՍ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՄԱԿՐՈՏՆՏԵՍԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐ

Բանալի բառեր: *Զուտ շահույթով պայմանավորված ներդրումային ներուժ, կապիտալ ներդրումներ, տնտեսության համախառն շահույթ, տնտեսության սեփական միջոցներով վարկավորում, վարկային ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ, սեփական ինվեստիցիոն միջոցներ, զուտ շահույթի և ներդրումների կորելյացիոն կապը:*

ԱՀ տնտեսության կայուն զարգացման համար անհրաժեշտ ներդրումների աղբյուրներից է շահույթը: Սույն հոդվածում դիտարկվել են ԱՀ տնտեսության զուտ շահույթով պայմանավորված ներդրումային ներուժի դինամիկան, ԱՀ տնտեսության ներդրումային ներուժի և ՀՆԱ-ի փոխառնչությունները: ԱՀ տնտեսության ներդրումային ներուժի և ներդրումների կորելյացիոն կապի միջոցով ներկայացվել է ԱՀ-ում կազմակերպությունների զուտ շահույթի ավելացման ներդրումների մակրոտնտեսական դերն ու նշանակությունը:

Мария Антонова

ПРИБЫЛЬ КАК МАКРОЭКОНОМИЧЕСКИЙ ИСТОЧНИК ИНВЕСТИЦИЙ

Ключевые слова*: Инвестиционный потенциал, основанный на чистой прибыли, капитальные инвестиции, валовая прибыль экономики, кредитование экономики собственными ресурсами, доля кредитных инвестиций в ВВП, собственные инвестиционные ресурсы, корреляционная связь чистой прибыли и инвестиций.*

Прибыль является одним из источников инвестиций, необходимых для устойчивого развития экономики Арцахской Республики. В статье «Прибыль как макроэкономический источник инвестиций» рассматривается динамика инвестиционного потенциала (основанный на чистой прибыли) экономики, взаимосвязь инвестиционного потенциала экономики страны и ВВП. С помощью корреляционного анализа инвестиционного потенциала экономики АР и ВВП была выявлена макроэкономическая роль и значение инвестиций в увеличении чистой прибыли организаций в АР.

Ցանկացած տնտեսական համակարգում տնտեսական աճի համար նյութական հիմք են հանդիսանում ներդրումները: Ներդրումային գործընթացների հետազոտումը հնարավորություն է տալիս բացահայտել ոչ միայն լրացուցիչ կապիտալային ռեսուրսների ներգրավման աղբյուրներն ու հնարավորությունները, այլև դրանց առավել արդյունավետ օգտագործման եղանակները: Արցախի Հանրապետությունում տնտեսվարման ներկա պայմաններում խիստ կարևոր է ներդրումների ներգրավման և դրանց արդյունավետ բաշխման գործընթացի ճիշտ կազմակերպումը: Ներդրումների ներգրավման համար առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել ներդրումների մակրոտնտեսական աղբյուրները, որոնց մեջ իր ուրույն տեղն է զբաղեցնում շահույթը:

Գործնականում շահույթը իրենից ներկայացնում է սեփականության ցանկացած ձևի ձեռնարկությունների կողմից ստեղծված կուտակումների որոշակի մասի դրամական

արտահայտություն[1]: Որպես տնտեսագիտական հասկացություն՝ այն բնութագրում է ձեռնարկչատիրական գործունեության ֆինանսական հետևանքը: Այս տեսանկյունից էլ շահույթը համարվում է արտադրության արդյունավետության, արտադրված արտադրանքի ծավալի ու որակի, աշխատանքի արտադրողականության ու ինքնարժեքի մակարդակի փոփոխության հետ կապված կարևոր ցուցանիշ՝ միաժամանակ ունենալով առևտրային հաշվարկի հստակեցման, գիտատեխնիկական առաջադիմության, սոցիալ–տնտեսական զարգացման և ֆինանսավորման անփոխարինելի աղբյուրի դեր: Զուգահեռաբար, շահույթը ոչ միայն ներտնտեսական կարիքների ապահովման աղբյուր է, այլև բյուջեի եկամուտների և արտաբյուջետային ֆոնդերի ձևավորման ռեսուրս:

Շուկայական տնտեսության պայմաններում շահույթը ձեռք է բերում բազմանշանակ դեր: Բանն այն է, որ բաժնետիրական, մասնավոր և այլ տիպի ձեռնարկությունները, ստանալով լայն ինքնուրույնություն և անկախության հնարավորություն, իրավունք ունեն որոշելու, թե բյուջեի վերաբերմամբ պարտականությունները կատարելուց հետո իրենց տրամադրության տակ մնացած շահույթից ո՛ր նպատակի համար և որքան հատկացնել:[2]

Տնտեսության համախառն շահույթը և համախառն խառը եկամուտները ավելացած արժեքի այն մասը են, որը մնում է արտադրողների մոտ վարձու աշխատողներին աշխատանքի հետ կապված վարձատրության հետ կապված ծախսերը և արտադրության հարկերը հանելուց հետո (ներառում է ամորտիզացիոն մասհանումները):

Համախառն շահույթը չի պարունակում աշխատանքի վարձատրության տարր, ինչպես նաև գործուղումների, ներկայացուցչական ծախսերի գերնորմատիվային վճարումները, չի ընդգրկում ակտիվների գների բարձրացման արդյունքում ձևավորված շահույթը: Այն ներառում է հիմնական կապիտալի սպառումը:

Կապիտալ ներդրումների կարևոր աղբյուր են հանդիսանում ձեռնարկությունների սեփական ինվեստիցիոն միջոցները՝ շահույթի կուտակման մասը, հիմնական ֆոնդերի ամորտիզացիոն հատկացումները, արժեթղթերի իրացումից ստացվող գումարները: Կարող են օգտագործվել նաև առկա ավելորդ սարքավորումները, այլ պաշարներ, նվիրատվություններ, տեխնիկական ու բարեգործական օգնություն, անվերադարձ այլ հատկացումներ: Շահույթից ներդրումները կատարվում են հիմնականում արտադրության ընդլայնման, իսկ ամորտիզացիոն ֆոնդից՝ հիմնական ֆոնդերի պարզ վերարտադրության (փոխարինման) համար:

Կազմակերպությունների կողմից կատարվող ներդրումները իրականացվում են կուտակվող շահույթից, որը հավասար է զուտ շահույթի և ընդհանուր վճարված շահութաբաժինների տարբերությանը: Քանի որ բոլոր կազմակերպությունները տարբեր համամասնությամբ են վճարում դիվիդենտները և յուրաքանչյուրի մոտ կուտակվող շահույթը տարբեր է, մենք չենք կարող վերլուծել ընդհանուր տնտեսության մեջ կուտակվող շահույթը: Սակայն հաշվի առնելով զարգացած երկների փորձը և արդեն իսկ հաշվարկված որոշակի համամասնություններ կարող ենք դիտարկել՝ շահույթով պայմանավորված տնտեսության ներդրումային ներուժի դինամիկան վերջին ութ տարիներին՝ հիմնվելով տնտեսության մեջ զուտ շահույթի դինամիկայի վրա[3]:

---

[1] ***Балабанов А.***, *Финансы, Питер, г. Москва, 2002г., стр. 166:*

[2] ***Բաղանյան Լ.Հ.,*** *Ֆինանսներ, Դրամաշրջանառություն և վարկ , Երևան, 2010թ., էջ 265:*

[3] *Շահույթով պայմանավորված ներդրումային ներուժի տակ դիտարկվել է զուտ շահույթի 25%-ը՝ որպես չբաշխվող, կուտակվող շահույթ:*

Աղյուսակ 1. ԱՀ տնտեսության զուտ շահույթով պայմանավորված ներդրումային ներուժի (չբաշխվող շահույթ՝ զուտ շահույթի 25%-ը) դինամիկան 2011-2018թթ.[1]

	Տարի	Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ(մլն դրամ)	Տնտեսության շահույթով պայմանավորված ներդրումային ներուժը (մլն դրամ)
1	2011	46236,8	11559,2
2	2012	49999,2	12499,8
3	2013	56099,2	14024,8
4	2014	60041,4	15010,35
5	2015	67073,2	16768,3
6	2016	73378,0	18344,5
7	2017	132507,9	33126,9
8	2018	152953,4	38238,35

Գծապատկեր 1. Տնտեսության շահույթի մեծությունը և շահույթով պայմանավորված ներդրումային ներուժը ԱՀ-ում 2011-2018թթ. (մլն դրամ)



ԱՀ տնտեսության շահույթով պայմանավորված ներդրումային ներուժի դինամիկան ներկայացված է գծապատկերի 2-ի միջոցով:

Գծապատկեր 2. ԱՀ տնտեսության շահույթով պայմանավորված ներդրումային ներուժի դինամիկան 2011-2018թթ.



Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, ԱՀ տնտեսության ներդրումային ներուժը ապահովում է դրական դինամիկա, ինչն էլ իր հերթին արտացոլում է տնտեսության մեջ

[1] *www.stat-nkr.am*

առկա աշխուժացումը:

Որպես ներդրումների սեփական աղբյուրներ են՝ զուտ շահույթը, բնակչության խնայողությունները (ավանդները) և ամորտիզացիոն մասհանումները:

Աղյուսակ 2. ԱՀ տնտեսության ներդրումային ներուժը 2011-2018թթ.[1]

Տարի	Տնտեսության զուտ շահույթի 25% (մլն. դրամ)	Հիմնական կապիտալի ապառում (մլն. դրամ)	Ավանդներ (մլն. դրամ)	Տնտեսության ներդրումային ներուժը (մլն. դրամ)
2011	11559,2	10422,9	30855.9	52838
2012	12499,8	11536	49307,4	73343,2
2013	14024,8	15323,6	55902,1	85250,5
2014	15010,35	18391,8	58619,1	92021,25
2015	16768,3	24270,9	61340,2	102379,4
2016	18344,5	31646,6	78012,6	128003,7
2017	33126,9	49347,3	97589,5	180063,7
2018	38238,35	54320,2	113741,2	206299,75

Աղյուսակ 3. ԱՀ տնտեսության ներդրումային ներուժը և ՀՆԱ-ն 2011-2018թթ.

Տարի	Համախառն ներքին արդյունք(մլն. դրամ)	Տնտեսության ներդրումային ներուժը (մլն. դրամ)	Տնտեսության ներդրումային ներուժը ՀՆԱ-ի մեջ տեսակարար կշիռը(%)
2011	135498,5	52838	39
2012	150015,7	73343,2	48,89
2013	168563,6	85250,5	50,58
2014	188840,3	92021,25	48,73
2015	209345,7	102379,4	48,9
2016	229651,6	128003,7	55,74
2017	272100	180063,7	66,18
2018	310252,7	206299,75	66,5

Գծապատկեր 3. ԱՀ տնտեսության ներդրումային ներուժը և վարկային ներդրումների տեսակարար կշիռը ՀՆԱ-ի մեջ 2011-2018թթ.

[1] *www.stat-nkr.am*

Ներդրումային ներուժի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը վկայում է, որ դիտարկվող ժամանակահատվածում ներդրումային ներուժը աճել է, աճել է նաև ներուժի տեսակարար կշիռը ՀՆԱ-ի կառուցվածքում՝ 2018թ. կազմելով 66,5%: Դրական դինամիկա է առկա նաև վարկային ներդրումների և վարկային ներդրումներ ՀՆԱ հարաբերակցության մեջ: Ընդ որում տնտեսության վարկավորման ներուժը և վարկային ներդրումները ՀՆԱ-ի համեմատությամբ գրեթե համընկնում են՝ վկայելով տնտեսության սեփական միջոցներով վարկավորման մասին:

Զուտ շահույթի տնտեսության վարկավորման վրա ազդեցությունը գնահատելու համար իրականացված կորելյացիոն հաշվարկը ցույց է տալիս, որ շահույթի1% աճի (նվազման) հետևանքով տնտեսության մեջ կատարված ներդրումները նվազում (ավելանում) են 0,7104 %-ով:

Զուտ շահույթի և ներդրումների կորելյացիոն կապը ԱՀ-ում 2011-2016թթ.

Տարի	Տնտեսությունում կատարված ներդրումները (%)	Տնտեսության զուտ շահույթ և զուտ խառը եկամուտներ (%)	x^2	y^2	x*y(միջին)
2011	100	100	10000	10000	
2012	148,8	108,1	22141,44	11685,61	16085,28
2013	111,8	121,3	12499,24	14713,69	13561,34
2014	118,5	129,9	14042,25	16874,01	15393,15
2015	135,4	145	18333,16	21025	19633
2016	78,2	158,7	6115,24	25185,69	12410,34
Միջին	118,54	132,6	14626,26	17896,8	15416,62

$$r = \frac{x*y(\text{միջին})-x(\text{միջին})*y(\text{միջին})}{\sigma_x*\sigma_y}$$

$\sigma_x = x^2(\text{միջին}) - x(\text{միջին})^2$ = 14626,266- 14051,7316 = 574,5344

$\sigma_y = y^2(\text{միջին}) - y(\text{միջին})^2$ = 17896,8 – 17582,76 = 314,04



$x(միջին) * y(միջին) = 15718,404$

$r = \frac{15718,404-1541\ ,622}{\sqrt{180426,783}} = \frac{301,782}{424,7667} = 0,7104$

$r \approx 0,7104\ \%$

Նշված փոխառնչությունը վկայում է՝ կապված զուտ շահույթից՝ ներդրումային գործընթացի զգայության բարձր մակարդակի առկայության մասին: Հետևապես, մակրոտնտեսական առումով ներդրումների աճի ապահովման համար խիստ կարևոր է կազմակերպությունների, ձեռնարկությունների շահութաբեր գործունեությունը և զուտ շահույթի մեծությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Բաղանյան Լ.Հ., Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ , Երևան, 2010թ., 593 էջ:
2. Սալնազարյան Ա.Բ, Ֆինանսական շուկաներ և ծառայություններ, «Տնտեսագետ», Երևան, 2014թ., 111 էջ:
3. Մ. Գալստյան, Ձեռնարկության ֆինանսներ, Ֆինանսաբանկային քոլեջ, Երևան, 2003թ., 148 էջ:
4. А. Балабанов, Финансы, “Питер”, г. Москва, 2002г., 190 стр.
5. Stat-nkr.am:

ՀՏԴ 330.3 Տնտեսագիտություն

Ռոզա Արսենյան
ՎՀՊ

ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *ՎԱԿ, ՕՈՒՆ, ՀՆԱ-ի ծավալներ ,գործազրկություն, ՀՀ-ում գործող ՎԱԿ-եր:*

Յուրաքանչյուր երկրի ազգային տնտեսության, ինչպես նաև համաշխարհային տնտեսության զարգացման գործընթացում մեծ դերակատարում ունի վերազգային կորպորացիաների գործունեությունը: ՎԱԿ-երը գործունեություն ծավալելով տվյալ երկրում, կարող են խթանել մի շարք տնտեսական ցուցանիշների բարելավմանը: Ուսումնասիրության նպատակն է պարզել, թե ինչ գործունեություն են ծավալում ՎԱԿ-երը ՀՀ-ում, արդյոք ՀՀ-ի ներդրումային դաշտը բարենպաստ է ՎԱԿ-երի կողմից ներդրումներ կատարելու համար, արդյոք նրանց գործունեությունը նպաստում է ՀՀ տնտեսության բարելավմանը: Ուսումնասիրվել է որոշ ՎԱԿ-երի կողմից կատարվող հարկային վճարների դինամիկան, նրանց դրական ու բացասական կողմերը և ընդունող և հիմնադիր երկրների համար: Ուսումնասիրվել է նաև ՕՈՒՆ-երի և ՀՆԱ-ի միջև կապը, կատարվել է ռեգրեսիոն վերլուծություն:

Роза Арсенян

АНАЛИЗ РАБОТЫ ТНК В АРМЕНИИ

Ключевые слова: *ТНК, ПИИ, обьемы ВВП, безработица, действие ТНК в Армении.*

В экономике любой страны, а так же во всемирной экономике большую роль в развитии играет деятельность национальных корпораций. Обьемы действий ТНК могут способствовать улучшению ряда показателей в данной стране. Цель исследования деятельность ТНК в определенной стране, на самом ли деле инвестиции благоприятно для ТНК и способствуют ли они развитию экономики. Была рассмотрена динамика некоторых налоговых платежей осуществляемых ТНК , их положительные и отрицательные стороны как для принимающих стран так и для стран основателей. Были изучены также связи между ПИИ и ВВП и был проведен регрессионный анализ.

Ըստ ՄԱԿ-ի Առևտրի և զարգացման հանձնաժողովի (UNCTAD)՝ վերազգային կորպորացիաները (այսուհետև ՎԱԿ) կազմակերպություններ են, որոնք կազմված են գլխամասային ընկերություններից և դրանց արտասահմանյան մասնաճյուղերից: Իր հերթին մայր ընկերությունն այն օղակն է, որը վերահսկում է ձեռնարկության ակտիվներն արտասահմանյան երկրներում՝ դրանց բաժնետիրական կապիտալում մասնակցություն ցուցաբերելով [4.] :

Յուրաքանչյուր երկրի համար կարևորվում է ներդրումների իրականացումը ինչպես ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների կողմից: ՎԱԿ-երը հանդես են գալիս որպես օտարերկրյա ներդրողներ: Նրանց կողմից ներդրումներ կատարելու հավանականությունը կախված է տնտեսության և ներդրումային դաշտի կայունությունից: Օտարերկրյա ներդրողը ներդրում կատարելուց առաջ նախ ուսումնասիրում է ներդրումային միջավայրը, դրա կայունությունը, անհրաժեշտ տնտեսական ցուցանիշները (համախառն ներքին արտադրանքի (ՀՆԱ-ի) աճի տեմպերը, ինֆլյացիայի մակարդակը, աշխատավարձերի մակարդակը, բնակչության կենսամակարդակը, տեղական հումքի առկայությունն ու գինը և այլն): Ներդրումային դաշտի գրավչության վրա կարող են ազդել ՀՆԱ-ի ցածր

մակարդակը, ներքին խնայողությունների և աշխատավարձերի ցածր մակարդակը, բնակչության փոքր թիվը, հարկերի դրույքաչափերը, երկրի քաղաքական ու ռազմական կայունությունը և այլն:Օտարերկրյա ներդրողի համար կարևոր են նաև արժութային կարգավորումները, մասնավորապես ազգային արժույթի փոխանակային կուրսի տատանումները, քանի որ ներդրումները մեծ մասամբ իրականացվում են արտարժույթով, իսկ տատանումների ընթացքում հնարավոր են կորուստներ, սակայն կարող են նաև ստանալ որոշակի շահույթ:

Օտարերկրյա ներդրողների կողմից ՀՀ-ում ներդրում կատարելու համար մեծ խթան են հանդիսանում ցածր աշխատավարձերը, որի շնորհիվ հնարավոր է լինում իջեցնել արտադրանքի գները, ինչի արդյունքում այն կարող է շուկայում դիմակայել մրցակցությանը և ձեռք բերել սպառողների մեծ բազա: Կարևորվում է նաև երկրում «առողջ» մրցակցության առկայությունը: Երբեմն կոռուպցիաների կամ ստվերային տնտեսությունների, այսինքն ոչ ճիշտ մրցակցության հետևանքով դժվարություններ են առաջանում օտարերկրյա ներդրողների համար, և նրանք, չկարողանալով դիմակայել ներքին շուկայում առկա մրցակցությանը, դուրս են մղվում շուկայից:

Օտարերկրյա ներդրողների համար կարևորվում է նաև տվյալ երկրում ներդրումային դաշտի վերաբերյալ օրենքների առկայությունը, որը որոշ չափով անվտանգության երաշխիք է:

ՎԱԿ-երը, ներդրումներ կատարելով որևէ երկրում նպաստում են տվյալ պետության տնտեսության զարգացմանը՝ նոր աշխատատեղեր են բացվում, այսինքն՝ կրճատվում է գործազրկությունը, և բարձրանում է զբաղվածությունը, ինչպես նաև կարող է կատարվել նոր տեխնոլոգիաների ներմուծում տվյալ ոլորտում, միջազգային փորձի կիրառում և այլն: ՎԱԿ-երի գործունեությունը խթանելու համար տրամադրվում են որոշակի հարկային և օրենսդրական արտոնություններ: Դա մի կողմից նպաստում է ՎԱԿ-երի կողմից ներդրումներ կատարելուն, սակայն մյուս կողմից վնաս է հասցնում տվյալ երկրի արտադրողներին: Քանի որ ՎԱԿ-երին տրամադրվում են արտոնություններ, նրանք հնարավորություն են ձեռք բերում շուկայում հանդես գալ ավելի ցածր, մրցունակ գներով, որի շնորհիվ տեղական արտադրողները չեն կարողանում մուտք գործել շուկա կամ մուտք գործելուց հետո չեն կարողանում դիմակայել մրցակցությանը:

Ուսումնասիրենք ՀՀ-ում օտարերկրյա ուղղակի ներդրումների (այսուհետ ՕՈՒՆ-երի) ծավալները [Գրաֆիկ 1][1] : Օտարերկրյա ուղղակի ներդրումը ներդրումների զուտ ներհոսք է ձեռնարկության կառավարման (10% կամ ավելի քվեարկող բաժնետոմսերի) կայուն մասնաբաժնի ձեռքբերման համար: Սա կապիտալի, վերաապահովագրված եկամտի, այլ երկարաժամկետ կապիտալի և կարճաժամկետ կապիտալի գումարն է, որն արտացոլվում է վճարումների հաշվեկշռում [3] :

[1] *Գրաֆիկը կազմված է հեղինակի կողմից:Տվյալները վերցված են https://knoema.ru/ կայքից:*

Գրաֆիկ 1. ՕՈՒՆ-երի քանակը ՀՀ-ում 2008-2018թթ. (մլն ԱՄՆ դոլար)

Գրաֆիկում տրված է 2008թ. ճգնաժամից հետո ՕՈՒՆ-երի ծավալների դինամիկան: Ինչպես երևում է գրաֆիկից այս ժամանակահատվածում ամենաշատ ՕՈՒՆ-եր կատարվել են 2008թ-ին: Այնուհետև ճգնաժամից հետո սկսվել է ՕՈՒՆ-երի հոսքերի նվազում: 2018թ-ին ՕՈՒՆ-երի ծավալը 2008թ-ի համեմատ կրճատվել է մոտ 19.4%-ով: Այսինքն՝ կարող ենք ասել, որ ճգնաժամից հետո անկայունացել է ներդրումային դաշտը, տնտեսությունը նույնպես գտնվում է անկայուն վիճակում, ինչի արդյունքում նվազել են ներդրումները: Այդ իսկ պատճառով, պետք է ձեռնարկել միջոցառումներ, որոնք ուղղված կլինեն ներդրումային միջավայրի գրավչության բարձրացմանը, որի արդյունքում կմեծանա ՕՈՒՆ-երի հոսքը դեպի ՀՀ:

Այժմ ուսումնասիրենք, թե ՕՈՒՆ-երը ՀՆԱ-ի որ տոկոսն են կազմում: Տե՛ս [Գրաֆիկ 2][1]



Գրաֆիկ 2. ՀՀ ուղղված ՕՈՒՆ-երի բաժինը ՀՆԱ-ում(%)

Գրաֆիկից պարզ է դառնում, որ 2008-2009թթ-ին ՕՈՒՆ-երի բաժինը ՀՆԱ-ում գրեթե 4 անգամ ավելի մեծ է եղել, քան 2018 թ.: Այս ժամանակահատվածում ամենաքիչ բաժինը կազմել է 2016թ-ին՝ 1.7%: Այսինքն՝ ՕՈՒՆ-երի ծավալների նվազումը ազդեցություն է ունենում նաև ՀՆԱ-ի վրա: Այժմ ՀՆԱ-ի շատ քիչ մասն է ապահովվում ՕՈՒՆ-երի միջոցով: Սա նույնպես վկայում է այն բանի մասին, որ անհրաժեշտ է կատարել քայլեր, որոնք կնպաստեն ՕՈՒՆ-երի ավելացմանը: Այսինքն՝ ներդրումային միջավայրի բարելավմանը

[1] *Գրաֆիկը կազմված է հեղինակի կողմից:Տվյալները վերցված են https://knoema.ru/ կայքից:*

զուգընթաց նաև կավելանան ՎԱԿ-երի կողմից կատարվող ներդրումները, որը կնպաստի մեր տնտեսության զարգացմանը:

2017թ. հունվար-հունիս ամիսների ընթացքում օտարերկրյա ուղղակի ներդրումների զուտ ներհոսքի առյուծի բաժինը՝ 31.6 մլրդ դրամ, ուղղվել է հանքարդյունաբերության ոլորտ: Զուգահեռաբար, խոշոր ներդրումներ են կատարվել նաև անշարժ գույքի միջոցով գործառնությունների (3.8 մլրդ դրամ) և հիմնային մետաղների արտադրության ոլորտներում (3.7 մլրդ դրամ): Դրան հակառակ՝ նախորդ տարվա համեմատությամբ ընթացիկ տարվա առաջին կիսամյակում ներդրումային հոսքերի կտրուկ անկում է գրանցվել հեռահաղորդակցության (-17.9 միլիարդ դրամ) և խմիչքների արտադրության (-9.5 միլիարդ դրամ) ոլորտներում [2] :

Այժմ մեծ ուշադրություն է դարձվում նորարարությունների, գիտության, ինովացիոն ոլորտներում ներդրումների իրականացմանը: ՎԱԿ-երն էլ հանդիսանում են նոր տեխնոլոգիաների ու նոու հաուների տիրապետողը : ՎԱԿ-երը հատկապես մեծ ուշադրություն են դարձնում տվյալ երկրում մտավոր սեփականության պաշտպանվածությանը: Եթե տվյալ երկրում չկան կամ ոչ հստակ են ձևակերպված համապատասխան օրենքները, ապա ՎԱԿ-երը չեն ցանկանում տվյալ երկրում որևէ ներդրումային գործունեություն ծավալել:

Կատարենք ռեգրեսիոն վերլուծություն և պարզենք, թե ինչ կապ կա ՀՆԱ-ի և ՕՈՒՆ-երի միջև: Վերցնենք 2008-2018թթ-ին ՀՆԱ-ի և ՕՈՒՆ-երի ծավալները մլրդ դոլարով՝ որպես հաստատուն գործակից վերցնելով ՕՈՒՆ-երը: Տե՛ս [Աղյուսակ 1,Գրաֆիկ 4][1]

	ՕՈՒՆ	ՀՆԱ
2008	0,9	11,66
2009	0,76	8,65
2010	0,53	9,26
2011	0,65	10,14
2012	0,49	10,62
2013	0,35	11,12
2014	0,4	11,61
2015	0,18	10,55
2016	0,33	10,55
2017	0,25	11,54
2018	0,18	12,41

Աղյուսակ 1. ՕՈՒՆ-երի և ՀՆԱ-ի ծավալները 2008-2018թթ-ին(մլրդ դոլար)

[1] *Գրաֆիկը և աղյուսակը կազմված են հեղինակի կողմից:Տվյալները վերցված են https://knoema.ru/ կայքից:*



Գրաֆիկ 4. ՕՈՒՆ-երի և ՀՆԱ-ի ծավալները 2008-2018թթ-ին(մլրդ դոլար)

Վերլուծության արդյունքները հետևյալն են.

Model Summary[b]

Model	R	R Square	Adjusted R Square	Std. Error of the Estimate	Durbin-Watson
1	,420[a]	,176	,085	1,05595	1,597

a. Predictors: (Constant), FDI

b. Dependent Variable: GDP

Աղյուսակ 2. R^2 գործակիցը ՀՆԱ-ի և ՕՈՒՆ-երի միջև[1]



Գրաֆիկ 5. ՀՆԱ-ի և ՕՈՒՆ-երի միջև կապը գրաֆիկորեն[2]

[1] *Աղյուսակը արտահայտվել է SPSS ծրագրային փաթեթի միջոցով:*
[2] *Գրաֆիկը արտահայտվել է SPSS ծրագրային փաթեթի միջոցով:*

R^2 գործակիցը տատնվում է [-1,1] միջակայքում, և որքան այն մոտ է 1-ին, ապա դա վկայում է այն մասին, որ այդ երևույթների միջև կապը սերտ է: Իսկ եթե ձգտում է -1-ին,ապա կարող ենք ասել, որ կապը թույլ է: Կատարելով վերլուծությունը՝ ստացանք, որ ՀՆԱ-ի և ՕՈՒՆ-երի միջև կապն այդքան էլ ուժեղ չէ, որի մասին վկայում է R^2 գործակիցը, քանի որ այն մոտ է 0-ին: Ինչպես երևում է Գրաֆիկ 5-ից, կետերը շատ ցրված են դասավորված և մոտ չեն գտնվում գրաֆիկում պատկերված ուղիղ գծին: Այս ամենը նույնպես վկայում է այն մասին, որ կատարվող ՕՈՒՆ-երը այնքան քիչ են, որ մեծ ազդեցություն չունեն ՀՆԱ-ի փոփոխության վրա:

ՎԱԿ-երի գործունեությունը նպաստում է ինչպես տվյալ երկրի, այնպես էլ համաշխարհային տնտեսության զարգացմանը: Դա հատկապես կարող է կարևորվել զարգացող երկրների համար, քանի որ նրանց տնտեսությունը դեռևս կայուն վիճակում չէ, իսկ ՎԱԿ-երի գործունեությունը կարող է բերել տարբեր տնտեսական ցուցանիշների բարելավմանը: Այդ իսկ պատճառով պետք է կատարել քայլել, որոնք ուղղված կլինեն ՎԱԿ-երի գործունեության խթանմանը և ընդլայնմանը: ՎԱԿ-երի գործունեությունը թե ընդունող, թե հիմնադիր երկրների համար ունի դրական և բացասական ազդեցություն: Տե՛ս [Աղյուսակ 3][1]

[1] *Աղյուսակը կազմված է հեղինակի կողմից:*

	ԸՆԴՈՒՆՈՂ ԵՐԿԻՐ	ՀԻՄՆԱԴԻՐ ԵՐԿԻՐ
ԴՐԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ	1.Ներդրումների ծավալների մեծացում 2.Նոր աշխատատեղերի բացում,այսինքն զբաղվածության աճ 3.Պետբյուջե հարկերի մուտքերի ավելացում 4.ՀՆԱ-ի ավելացում 5.Նոր ռեսուրսների ձեռքբերում(միջազգային փորձի կիրառում,նոր հումքի,տեխնիկայի ու տեղնոլոգիայի ներմուծում,նոր մասնագիտական որակավորում ունեցող աշխատուժ) 6.Բարձր աշխատավարձ 7.Ժամանակակից կարևոր ոլորտների զարգացում	1.Ցածր հարկեր ընդունող երկրում 2.Ցածր աշխատավարձերը ընդունող երկրում 3.Հնարավորություն է ստանում ստանալ բարձր շահույթ 4.Ներդրումների արդյունավետ իրականացում 5.Միջազգային շուկայում մրցակցային դիրքի ձեռքբերման հնարավորություն 6.Մաքսատուրքերի քիչ վճարումներ 7.Կապիտալի հեշտ փոխանցումը մի երկրից մյուսին 8.Ռեսուրսների արդյունավետ օգտագործում
ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐ	1.Տեղական ընկերությունների հետ խիստ մրցակցությունը և մենաշնորհների հաստատումը 2.Տվյալ գործունեության միջոցով շրջակա միջավայրի աղտոտում 3.Տեղակն օրենքների խախտում՝ եկամուտների ծավալները թաքցնելով, 4.Աշխատողների կենտրոնացում տվյալ ընկերություններում,քանի որ աշխատավարձերը ավելի բարձր են ,քան տեղական ընկերություններում 5.տեղական արդյունաբերական և գիտահետազոտական տարբեր կառույցների բռնագրավումը օտարերկրյա ընկերությունների կողմից 6.Վերահսկողություն հիմնադիր երկրի կողմից	1.Ընդունող երկրում ոչ արդյունավետ օրենսդրական դաշտի առկայություն 2.Իրենց արտադրությունը կազմակերպելով օտար երկրներում վնաս են հասցնում այդ երկրիտնտեսությանը 3.Փոխարժեքի կուրսի տատանումները 4.Առանձին ոլորտներում ներդրումների արգելք

Աղյուսակ 3. ՎԱԿ-երի դրական և բացասական ազդեցությունը ընդունող և հիմնադիր երկրների վրա

ՀՀ-ում գործող որոշ ոլորտներում գործող ՎԱԿ-երը ներկայացված են աղյուսակով: Տե՛ս[Աղյուսակ 4][1]

[1] *Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից:*

Ոլորտներ	ՀՀ-ում գործող Խոշոր ՎԱԿ-երը
Էներգետիկա	Գազպրոմ Արմենիա ՓԲԸ
Հեռահաղորդակցման ոլորտ	ԱրմենՏել ՓԲԸ՝ Beeline ապրանքանիշով Vivacell MTS
Հանքարդյունաբերություն	Զանգեզուրի Պղնձամոլիբդենային Կոմբինատը
Տեղեկատվական տեխնոլոգիաներ	Synopsys Microsoft Ինովացիոն Կենտրոն
Սննդարդյունաբերության ոլորտ	Coca-cola Երևանի Կոնյակի Գործարան ՓԲԸ

Աղյուսակ 4. ՀՀ-ում գործող որոշ ՎԱԿ-եր

Հանքարդյունաբերության ոլորտում ՎԱԿ-երը իրենց գործունեությունը իրականացնելիս պետք է ուշադրություն դարձնեն նաև շրջակա միջավայրի պահպանմանը, քանի որ այս ոլորտներում գործունեություն իրականացնելը վտանգավոր է շրջակա միջավայրի համար :

ՎԱԿ-երը լայն գործունեություն են իրականացնում ՀՀ-ում: Նրանք ունեն սպառողների մեծ բազա, իրականացնում են լայնամասշտաբ արտադրություն, իրենց արտադրանքը նաև արտահանում են: Այս ամենը կարող է նպաստել ՀՆԱ-ի ծավալների մեծացմանը,հաստատվում են տարբեր միջազգային հարաբերություններ, նրանց գործունեությունը խթանում է տնտեսության զարգացմանը: Այժմ ուսումնասիրենք, թե ՎԱԿ-երը ինչ չափի հարկեր են վճարում պետբյուջե: Տե՛ս [Գրաֆիկ 5][1]



[1] *Գրաֆիկը կազմված է հեղինակի կողմից:Տվյալները վերցված են http://www.petekamutner.am/ կայքից:*

Գրաֆիկ 5. ՎԱԿ-երի կողմից վճարված հարկերը 2014-2018թթ-ին(մլն դրամ)

Գրաֆիկում արտացոլված են 5 ՎԱԿ-երի կողմից վճարված հարկերը, որոնք ընդգրկված են 1000 խոշոր հարկատուների շարքում: Ինչպես երևում է գրաֆիկից ամենաշատ հարկեր վճարողը հանդիսանում է Գազպրոմ Արմենինան, նրան հաջորդում է Զանգեզուրի պղնձամոլիբդենային կոմբինատը (ԶՊՄԿ) : Իսկ մնացածը համեմատաբար ավելի քիչ հարկ են վճարել: Այսինքն՝ ՎԱԿ-երը իրենց գործունեության ընթացքում վճարում են մեծ ծավալներով հարկեր, որի շնորհիվ ավելանում են մուտքերը պետբյուջե, ինչը կարող է օգտագործվել տարբեր տեսակի խնդիրների լուծման համար:

ՎԱԿ-երի ստեղծումը բերում է նաև նոր աշխատատեղերի ստեղծմանը: Այս ՎԱԿ-երը, ՀՀ-ում ծավալելով մեծ գործունեություն, կարող են մեծ թվով մարդկանց ապահովել աշխատանքով: Օրինակ՝ Կոկա-Կոլա ՀԲՔ-ում աշխատում է 370-ից ավելի աշխատող, Գազպրոմ-ում՝7000, Վիվասել ՄՏՍ-ում՝ 30815, ԶՊՄԿ-ում՝ 3200:

Ուսումնասիրելով ՎԱԿ-երի տեղաբաշխվածությունը կարող ենք նկատել , որ դրանք հիմնականում տեղակայված են Երևանում: Այն ՎԱԿ-երը, որոնք արդյունաբերական գործունեություն են իրականացնում, հիմնականում տեղակայվում են մարզերում, ինչը կապված է շրջակա միջավայրի աղտոտման հետ: Այս ամենը այդքան էլ նպաստավոր չէ տնտեսության համար, քանի որ խախտվում է համաչափ զարգացումը, տեղի է ունենում կենտրոնացում:

Ամփոփելով այս ամենը՝ կարող ենք ասել, որ ՀՀ-ում դեռևս չկա կայուն ձևավորված ներդրումային ոլորտ, ինչի արդյունքում ՎԱԿ-երն այդքան էլ շահագրգռված չեն ՀՀ-ում կատարել ներդրումներ: Այդ իսկ պատճառով պետք է կատարել ներդրումային դաշտի գրավչության բարձրացում, ինչպես նաև կարելի է կատարել այս ոլորտի վերաբերյալ առկա օրենքների որոշակի փոփոխություններ, որի շնորհիվ հնարավորություն ձեռք կբերենք ՎԱԿ-երին ներգրավելու ներդրումային գործընթացում, ինչն էլ կնպաստի մեր երկրի տնտեսության զարգացմանը: Եվ ինչպես նկատվում է, ՕՈՒՆ-երի մասնաբաժինը փոքր է ՀՆԱ-ում: Եթե կարողանանք նպաստել ՕՈՒՆ-երի ներգրավմանը և դրանց ծավալների ավելացմանը, կարող ենք ավելացնել նաև ՀՆԱ-ի ծավալները,որը կնպաստի տնտեսության զարգացմանը: ՎԱԿ-երի գործունեությունը թե ընդունող և թե հիմադիր երկրների համար ունի մեծ նշանակություն և խթանում է տնտեսության զարգացմանը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.petekamutner.am/
2. https://epress.am/
3. https://knoema.ru/
4. https://www.isec.am/images/gitakan_hraparakumner/CONFERENCE.pdf - էջ 425.

ՀՏԴ 339.13 Տնտեսագիտություն

Աննա Բաբայան
Ֆինանսներ , դրամաշրջանառություն և վարկ
մագիստրատուրա I կուրս, ԱրՊՀ
anbabaian555@mail.ru
Ղեկավար՝ տ.գ.թ. դոցենտ Ն.Հ.Ավանեսյան

ՆԵՅՐՈՄԱՐՔԵԹԻՆԳԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ

Բանալի բառեր: *Նեյրոմարքեթինգ, նեյրոմարքեթինգային հետազոտություն,, սպառողների ենթագիտակցություն, նեյրոֆիզիոլոգիա, այթրեքինգ, էլեկտրասրտագրություն (ԷՍԳ), պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիա, մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիա(ՄՌՏ), մագնիսաէնցեֆալոգրաֆիա (ՄԵԳ) :*

Նեյրոմարքեթինգ-նորարական մարքեթինգ՝ ամենաուսումնասիրվող և ակտուալ գիտությունն այսօր: Ավանդական մարքեթինգը, չնայած իր բոլոր ձեռքբերումներին, հեռու է կատարելությունից: Գովազդի նոր տեսակների և ստեղծագործական մոտեցումների առաջացման հետ այն չի կարող պարծենալ ճշգրիտ արդյունքներով կամ կառուցողական վերլուծությամբ: Տերմինի հեղինակ Էիլ Սմիդթսը կարծում է, որ նեյրոմարքեթինգը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ սպառողին և ուղեղի ռեակցիայի ուսումնասիրության միջոցով բարձրացնել մարքեթինգային մեթոդների արդյունավետությունը: Այս հոդվածում ընդգրկված է նեյրոմարքեթինգի էության և նշանակության նկարագիրը , տարբեր գիտնականների կողմից տրված սահմանումները, *տեսակները և ֆունկցիաները, մեթոդները և գործիքները:*

Анна Бабаян

НЕЙРОМАРКЕТИНГ В СОВРЕМЕННОМ МИРЕ

Ключевые слова:*Нейромаркетинг,нейромаркетинговое исследование,потребительское подсознание, нейрофизиология, айтрекинг, электрокардиография, позитронно-эмиссионная томография, магнитно резонансная томография, магнитоэнцефалография .*

Нейромаркетинг - инновационный маркетинг,который является самой изучаемой и актуальной наукой сегодня.Традиционный маркетинг, несмотря на все его достижения, далек от совершенства. С появлением новых видов рекламы и креативных подходов, он не может похвастаться точными результатами или конструктивным анализом. Эйл Смидтс, автор этого термина, считает, что нейромаркетинг позволяет потребителям лучше понимать и повышать эффективность методов маркетинга с помощью исследований реакции мозга. В этой статье содержится описание сущности и значения нейромаркетинга, виды и функции, методы и инструменты, определения, данные различными учеными.

Գնողունակության ակտիվացումը պայմանավորում է մարքեթինգի ավանդական դրույթների և մեթոդների կատարելագործման անհրաժեշտություն, որոնք արագորեն կորցնում են իրենց արդյունավետությունը հասարակության սպառման պայմաններում: Սա պահանջում է մարքեթինգային տեսության և մեթոդաբանության հիմունքների խորը ուսումնասիրություն՝փոփոխվող միջավայրի և սպառողների վարքագծի հետ կապված, որոնցից մեկը համարվում է նեյրոմարքեթինգը: Նեյրոմարքեթինգը գնորդի վրա ունեցած ազդեցության մասին կիրառական գիտություն է, որը, օգտագործելով նյարդաբանության

ասպարեզում ունեցած ձեռքբերումները, թույլ է տալիս բացահայտել սպառողների վարքագծի առանձնահատկությունները՝ ի պատասխան տարբեր մարքեթինգային խթանների:

Զարգացած տնտեսություն ունեցող երկրներում խոշոր ձեռնարկությունները հաճախ են կիրառում նեյրոմարքեթինգային հետազոտություններ: Նեյրոմարքեթինգային գործիքների և մեթոդների ճիշտ կիրառությամբ կարելի է գրանցել ապշեցուցիչ արդյունքներ, այդ թվում՝ ունենալ վաճառքի հսկայական ծավալներ, ապրանքի նկատմամբ մեծ հետաքրքրվածություն և պահանջվածություն, սպառողների հավատարմություն: Մարդիկ միշտ չէ, որ ռացիոնալ են՝ գնումներ կատարելու կամ ծառայություններից օգտվելու հարցում, այսինքն՝ այս կամ այն գործողության կատարման ժամանակ հաճախ չեն հետևում առողջ դատողությանը: Հաճախ ղեկավարում են էմոցիաները: Ապրանքի ընկալումից ունեցած իսկական հույզերն ու զգացմունքներն էլ ուսումնասիրում է նեյրոմարքեթինգը, որպեսզի պարզի այն թաքնված դրդապատճառները, որոնք մղել են այդ գնումը կատարելուն, և հետագայում այն որպես զենք օգտագործել՝ սպառողներին ներգրավելու համար:

Նեյրոմարքեթինգը տնտեսագիտության բավականին երիտասարդ բնագավառ է և որպես գիտություն՝ առաջացել է մի քանի ուղղությունների սիմբիոզի արդյունքում՝տնտեսագիտություն, հոգեբանություն, նյարդաբանություն, նեյրոֆիզիկա, տեղեկատվական ծրագրեր և այլն:

Նեյրոմարքեթինգի ընդհանուր հայեցակարգը մշակվել է 90 - ականների վերջին Հարվարդի համալսարանի պրոֆեսոր Ջերրի Զալտմանի կողմից՝ ֆունկցիոնալ մագնիսառեզոնանսային տոմոգրաֆիայի կիրառմամբ՝ ZMET անվանմամբ(Zaltman Metaphor Elicitation Method) : Հետագայում այդ տեխնոլոգիան արտոնագրվեց որպես «Զալտմանի՝ մետաֆորների դուրսբերման մեթոդ» (Zaltman Metaphor Elicitation Method կամ ZMET): ZMET -ի էությունը մարդու ենթագիտակցությունը ճանաչելն է՝ հատուկ ընտրված նկարների միջոցով, որոնք առաջացնում են դրական էմոցիոնալ արձագանք և դրդում են գնումների: ZMET- ը արագորեն հայտնի դարձավ այնպիսի խոշոր պատվիրատու - ընկերությունների շրջանում, ինչպիսիք են՝ Coca – Cola , Pepsi, Nestle, General Motors, Procter & Gamble :

Սակայն <<նեյրոմարքեթինգ >> տերմինը առաջին անգամ առաջարկել է Ռոտերդամի Էրազմա համալսարանի պրոֆեսոր Էյլ Սմիդսը 2002 թ-ին: Ըստ նրա՝ << նեյրոմարքեթինգը թույլ է տալիս ավելի լավ հասկանալ սպառողին և ուղեղի արձագանքի ուսումնասիրության միջոցով բարձրացնել մարքեթինգային մեթոդների արդյունավետությունը>>, իսկ առաջին միջազգային գիտաժողովը, որն ամբողջությամբ նվիրված էր նեյրոմարքեթինգային հետազոտություններին, անց է կացվել ԱՄՆ-ի Հյուստոն քաղաքում, 2004 թ-ին[1]:

Նեյրոմարքեթինգի սահմանումներ կան: Պատկերը հետևյալն է.

Էիլ Սմիդթս, 2002թ. նյարդավիզուալիզացիոն տեխնոլոգիաների և նյարդաբանության կոմերցիոն կիրառում, ուղեղի քարտեզագրում:

Դեվիդ Լյուիս, 2015թ. հստակ սահմանում չկա: Օգտագործվում է սպառողների

[1] ***Льюиц Д.***, *Нейромаркетинг в действии.Как проникнуть в мозг покупательа/пер. с англ.:М,:Манн,Иванов и Фербер,2015,304с.*

վարքագիծը ավելի լավ հասկանալու համար[1]:

Մարտին Լինդսթրոմ, 2008թ. հստակ սահմանում չկա:Մարդու մասին գիտության և մարքեթինգի սիմբիոզ է[2]:

Դուգլաս վան Փրայեթ, 2012թ. մարքեթինգային հետազոտությունների ոլորտներից մեկը, որն ուսումնասիրում է սպառողների արձագանքը մարքեթինգային խթանների նկատմամբ այնպիսի մեթոդների օգնությամբ,ինչպիսիք են՝ ԷԷԳ-ն, ՖՄՐՏ-ն, մաշկա-գալվանական ռեակցիաները[3]:

Ա.Ի.Կիսելյովա, 2013թ. գործողության նկատմամբ ուղեղի հակազդեցության (մարդկային վարքագծի) հետազոտության արդյունքների վրա հիմնված մարքեթինգ՝ ուղղված մարդու տարբեր զգայարաններին՝ տեսողությանը, հոտառությանը, լսողությանը, համի զգացողությանը[4]:

Ե.Ա.Դերկաչևա, Օ.Ա. Կուզնեցովա, Գ.Վ.Միխեև, 2016թ. մարքեթինգային ազդեցությունների համալիր գործողություններ,որոնք թույլ են տալիս մոդելավորել սպառողի վարքագիծը՝ նյարդահոգեբանական գործիքների առկայությամբ, ժամանակակից գործարար միջավայրում սպառողների վարքագծի դրսևորման մանիպուլյացիոն արդյունքի ուժեղացման մեթոդով[5]:

Այսպիսով, դեռևս գոյություն չունի նեյրոմարքեթինգ տերմինի միասնական սահմանումը: Շատ գիտնականներ նկարագրում են դրա էությունը, սակայն որպես այդպիսին տերմինաբանությունը չի ձևակերպվում: Գիտնականները համակարծիք են, որ նեյրոմարքեթինգը բարդ միջգիտաճյուղ է, որը ներառում է տնտեսական, հոգեբանական, նյարդակենսաբանական, նյարդաֆիզիոլոգիական բաղադրիչներ: Իսկ եթե խոսենք նեյրոմարքեթինգային միջոցառումների կիրառման նպատակների մասին, ապա դա հիմնականում վաճառքի ծավալների ավելացումն է պոտենցիալ սպառողների ուսումնասիրության հաշվին :

Նեյրոմարքեթինգն ունի տեսակներ:

1.Ֆունդամենտալ (հիմնարար) նոյրոմարքեթինգ առավելապես հիմնված է էմպիրիկ գիտական հետազոտությունների վրա(20 – րդ դարի կեսերից մինչև վերջը): Այս ոլորտում հրապարակվել են տասնյակ գրքեր, որոնցում հստակորեն նկարագրված են հոգեկան, նյարդային համակարգի և գլխուղեղի կառուցվածքի օրենքները, ինչը միասին տալիս է մարդու վարքագծի մասին շատ ճշգրիտ տեղեկատվություն: Բարդությունը կարող է լինել միայն այն, որ տվյալ մոտեցման գրագետ ուսումնասիրության համար անհրաժեշտ են համալիր գիտելիքներ թեկուզ այնպիսի ոլորտներից, ինչպիսիք են՝ նեյրոֆիզիոլոգիան, ճանաչողական հոգեբանությունը և վարքագծային տնտեսագիտությունը :

---

[1] ***Линдстром М***., *Buyology: увлекательное путешествие в мозг современного потребителя/ пер. с англ.:М.:Эксмо,2009,240с.*

[2] *Прает Ван Д., Бессознательный брендинг. использование в нейромаркетинге новейших достижений нейробиологии / пер. с англ: М.: Азбука Бизнес, 2014 – 320с.*

[3] *Прает Ван Д.,- 320.*

[4] ***Киселева А.И***. *Новая ступень в «управлении» людьми – нейромаркетинг // Перспективы социально-экономического развития Республики Саха (Якутия) в XXI веке. Сборник материалов V и VI республиканских научно-практических конференций студентов, аспирантов, молодых ученых и специалистов Республики Саха (Якутия), Якутск, Северо-Восточный федеральный университет им. М.Аммосова, 21-22 марта 2012 г., 4 апреля 2013 г. / под ред. Проф. Пахомова А.А.. – Киров: МЦНИП, 2013, 168с.*

[5] ***Деркачева Е. А***., *Кузнецова О. А, Михеев Г. В. Нейромаркетинг: терминологические аспекты // International scientific review. 2016, 27с*

Ի՞նչն է առաջնորդում մարդկանց. առաջին հերթին՝ վախը, կարծրատիպերը, պարադիգման ,ասոցիացիաները, պահանջները , ինչպիսիք են՝ որոշակի սոցիալական խմբին պատկանելու ցանկությունը, անվտանգության և ապահովվածության մեջ լինելը, շփվելը և այլն: Ուսումնասիրել այս բոլոր գործոնները և հասկանալ ,թե ինչպես են դրանք ազդում որոշակի ապրանքանիշի և դրա արտադրանքի ընկալման վրա, ֆունդամենտալ նեյրոմարքեթինգի հիմնական խնդիրն է : Այս ուղղությունը զբաղվում է թիրախային լսարանների և հաղորդակցման այն ալիքների վերլուծությամբ, որոնցում սպառողի հետ շփումը կլինի առավել արդյունավետ:

2.Գործիքային նեյրոմարքեթինգը ներառում է նեյրոֆիզիոլոգիական ռեակցիաների գրանցման սարքերի հետ աշխատանք: Այն կիրառության համար բարդ է , կապված է հատուկ սարքավորումների օգտագործման հետ, որոնք թանկ լինելու պատճառով չեն կարող լինել գովազդի արդյունավետության ցուցանիշները բարձրացնել ցանկացող յուրաքանչյուր ընկերության գրասենյակում: Ամենատարածված և ամենահասանելի գործիքներն են՝ այթրեքերը (աչքի շարժումներին հետևող սարքը), պոլիգրաֆը և էլեկտրաէնցեֆալոգրաֆը (սարք, որն օգնում է որոշել ուղեղի արձագանքը որոշակի խթանների նկատմամբ)[1]:

Քանի որ նեյրոմարքեթինգը ավանդական մարքեթինգի համալրումն է, ուստի նրանց գործառույթները նույնն են[2]

1. Անալիտիկ(վերլուծական) գործառույթ - ուսումնասիրում և գնահատում է ֆիրմայի ներքին և արտաքին միջավայրը: Նեյրոմարքեթինգի անալիտիկ գործառույթը շուկայի, սպառողի, ապրանքների, կազմակերպության կառուցվածքի, ձեռնարկության ներքին միջավայրի վերլուծությունն է:
2. Արտադրական գործառույթ - նոր ապրանքի արտադրության, մատակարարման կազմակերպումն է, արտադրության որակի կառավարումը: Ապրանքաարտադրական գործառույթը նոր ապրանքների ստեղծումն է, որոնք առավել կհամապատասխանեն սպառողների պահանջներին: Ազդում է արտադրության վրա, փորձելով այն դարձնել բավականին ճկուն, ունակ արտադրելու մրցունակ ապրանքներ, որը համապատասխանում է տեխնիկատնտեսական պարամետրերին և համեմատաբար ցածր ծախսերին:
3. Իրացման գործառույթ - ապրանքաշրջանառության կազմակերպում, ծառայության մատուցման կազմակերպում, ապրանքային և գնային քաղաքականության ձևավորում, պահանջարկի ձևավորում և վաճառքի խթանում: Այս գործառույթը ներառում է այն ամենը , ինչ տեղի է ունենում ապրանքի հետ այն արտադրելուց մինչև իրացումը: Ապրանքաշրջանառության համակարգը ձեռնարկությանը (և սպառողին) ապահովում է այնպիսի պայմանների ստեղծմամբ, որպեսզի ապրանքը լինի այնտեղ, որտեղ այն անհրաժեշտ է, այն ժամանակ, երբ այն անհրաժեշտ է, այն քանակներով, ինչքան պահանջված է, և ունենա այն որակը, որը ակնկալում է սպառողը:
4. Կառավարման և վերահսկողության գործառույթ - իրենից ներկայացնում է ռազմավարական և գործառնական պլանավորման և վերահսկողության կազմակերպում, կառավարման տեղեկատվական ապահովում, հաղորդակցման գործառույթ:

[1] *www.radnews.ru*
[2] ***Сурковка Е.В**., Основы маркетинга,2007,16с.*

Ձեռնարկության ղեկավարության կառավարման խնդիրն է նվազեցնել անորոշության և ռիսկի աստիճանը տնտեսական գործունեության մեջ:

Այսպիսով, նեյրոմարքեթինգի տեսակներն են՝ ֆունդամենտալ(հիմնարար) նեյրոմարքեթինգ և գործիքային, գործառույթներն են՝ անալիտիկ(վերլուծական), արտադրական, իրացման, կառավարման և վերահսկողության:

Նեյրոմարքեթինգում օգտագործվում են բազմաթիվ մեթոդներ, որոնք թույլ են տալիս բացահայտել սպառողի ենթագիտակցական վերաբերմունքը արտադրանքի, դիզայնի, գովազդի և դրանց բաղադրամասերի նկատմամբ: Ահա դրանցից մի քանիսը[1]՝

- մարդու սիրտ-անոթային համակարգի հսկողություն (սրտի կծկումների, ճնշման և անոթների տոնուսի չափում),
- դեմքի մկանների կծկման գրանցում,
- հոգելեզվաբանական հետազոտություն (ուսումնասիրում է լեզվի, մտածողության և գիտակցության փոխհարաբերությունը),
- այթրեքինգ (կարևոր է կայքերի հարմարավետության ստուգման տեսանկյունից):

Բայց ավելի մեծ նշանակություն ունեն այն մեթոդները, որոնք տեղեկություններ են տրամադրում ուղեղի ֆունկցիոնալ վիճակի մասին[2]՝

1. Էլեկտրասրտագրություն (էլեկտրոկարդիոգրաֆիա / ԷԿԳ) ուղղված է ուղեղի էլեկտրական պոտենցիալ տատանումների մակարդակի ստացմանը, ինչպես նաև նեյրոնների ընդհանուր էլեկտրական ակտիվության որոշմանը որևէ կոնկրետ պահին: Ավելին, նեյրոմարքեթինգի համար հատուկ կարևորություն ունեն ռիթմի երեք տեսակները, որոնք գրանցում է ԷԿԳ-ն ՝ բետա - ռիթմը, գամմա - ռիթմը, տետա-ռիթմը : Բետա-ռիթմը ամենից ակտիվ նկատվում է ճակատային շրջանում և կապված է ուղեղի ինտենսիվ գործունեության հետ: Գամմա ռիթմը առաջանում է խնդիրների լուծման ընթացքում , որոնք մարդուց առավելագույն ուշադրություն են պահանջում: Սպառողի համար նման խնդիր կարող է լինել գնման մասին որոշում կայացնելու գործընթացում իրար հետ մրցակցող ապրանքների հատկությունների և բնութագրերի համեմատությունը: Տետա-ռիթմը որոշում է որոնողական վարքագծային գործողությունները, բացի դրանից հակված է ուժեղանալ էմոցիոնալ լարվածության դեպքում: Ուղեղի ակտիվությունն է կապված որևէ ապրանքի ներկայացման ընկալման ձևի հետ:

2. Պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիա – Ա.Թրեյնդլը հետևյալ օրինակն է բերում: Ուղեղի մագնիսական ակտիվության չափման ընթացքում փորձարկվողներին ներկայացվել է երկու տեսակի ապրանք՝սովորական և ապրանքի տեսականու մասին բազում հույզեր առաջացնող նկարներով հագեցած: Յուրաքանչյուր մասնակից պիտի գնահատեր՝ դուր է գալիս,դուր չի գալիս, չեզոք: Հարկ է նշել, որ ուղեղի ակտիվության չափման գործընթացում ամենամեծ նեյրոմագնիսական բռնկումները գրանցվել են նկարներով հագեցած ապրանքը նայելիս: Այսպիսով, գիտնականը եկել է այն եզրակացության, որ նեյրոնային ակտիվությունն աճում է ներկայացման հուզական բաղադրիչը մեծացնելու դեպքում : Ուղեղի պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիայի կիրառումը հնարավորություն տվեց Թրեյնդլին ստանալ ուղեղի պատկերը որպես

[1] *DR.DAVID LEWIS.THE BRAIN SELL.WHEN SCIENCE MEETS SHOPPING.2015-77pg*
[2] *DR.DAVID LEWIS.THE BRAIN SELL.WHEN SCIENCE MEETS SHOPPING.2015-26pg, 72pg*

կտրվածք՝ ցանկացած մակարդակում: Այլ կերպ ասած, գիտնականը համակարգչի էկրանին մարդու ուղեղի պատկեր է ստանում իր գրանցած որոշակի մակարդակում:

3. Մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիա(ՄՌՏ)- նեյրոմարքեթինգի հայտնի մեթոդներից է, որը չափում է ուղեղի նեյրոնային ակտիվությունը այն հատվածներում,որոնք վերահսկում են՝ տեսողությունը, հոտը, համը, հիշողությունը, խոսքը, շարժումը: Նեյրոպատկերը որը ստացում է ՄՌՏ-ի ժամանակ, թույլ է տալիս հասկանալ թե ինչպիսի արդյունավետ ազդեցություն է թողել գովազդը փորձարկվողի տեսողության և լսողության վրա:

4. Մագնիսաէնցեֆալոգրաֆիա (ՄԵԳ)- մագնիսական դաշտերի ոչ կոնտակտային գրանցում գլխամաշկի մակերեսին, մարդու գլխուղեղի կեղևի նյարդային բջիջներում տանգենցիալ հոսանքների հոսքի արտացոլումը, որը թույլ է տալիս հաշվարկել հոսանքի աղբյուրի ինտենսիվությունը և տեղայնացումը՝ ձևավորելով նեյրոնների ակտիվությունը այդ քարտեզում: Ի տարբերություն ԷԿԳ-ի, օգտագործվող սենսորները չեն հպվում փորձարկվողի գլխին:

Նեյրոմարքեթինգի գործիքներն են՝

1. հոգեֆիզիկական գործիքներ- գրանցում են մարմնի տարբեր մասերի ֆիզիոլոգիական ռեակցիաները,բացի ուղեղից, և ցույց են տալիս նյարդաբանական գործառույթների աճը կամ նվազումը.

2. ուղեղի էլեկտրական գործունեությունը ֆիքսող գործիքներ - նշում և վերահսկում են միլիվայրկյանների ընթացքում կատարվող նյարդաբանական գործառույթների փոփոխությունը .

3. ուղեղի մետաբոլիկ ակտիվությունը սահմանող գործիքներ- ապահովում են տարածական չափումների բարձր աստիճան, թույլ են տալիս ուղեղի որոշակի կառույցների գործունեությունը բացահայտել, որպես կանոն, մինչև միլիմետր ճշգրտությամբ[1]:

Ավելի ճշգրիտ տվյալներ ստանալու համար կարելի է միառժամանակ օգտագործել բոլոր խմբերի գործիքները:

Այսպիսով, նեյրոմարքեթինգի մեթոդներն են՝ էլեկտրասրտագրությունը (էլեկտրոկարդիոգրաֆիա / ԷԿԳ) , պոզիտրոնային էմիսիոն տոմոգրաֆիան, մագնիսական ռեզոնանսային տոմոգրաֆիան, մագնիսաէնցեֆալոգրաֆիան, իսկ գործիքները՝ հոգեֆիզիկական գործիքները , ուղեղի էլեկտրական գործունեությունը ֆիքսող գործիքները և ուղեղի մետաբոլիկ ակտիվությունը սահմանող գործիքները:

Եթե տնտեսագիտության և հոգեբանության հանգույցի վրա մշակված տեխնոլոգիաներին հաջողվի հաղթահարել ընթացիկ դժվարությունները, ընկերություններն զգալիորեն կնվազեցնեն մարքեթինգի ծախսերը, կսովորեն ավելի խորը հասկանալ սպառողին: Աշխարհում հայտնվել են ավելի քան 200 ընկերություններ, որոնք առաջարկում են նեյրոմարքեթինգային հետազոտությունների ծառայություններ:

2019թ-ի նեյրոմարքեթինգային ընկերություններ են - Ասիա ՝ 9 ընկերություն, Եվրոպա՝ 88 ընկերություն , Հյուսիսային Ամերիկա ՝ 43 ընկերություն , Հարավային Ամերիկա ՝16 ընկերություն , Աֆրիկա ՝ 3 ընկերություն , Ավստրալիա ՝ 4 ընկերություն :

[1] ***Дершень В***. *Инструменты нейромаркетинга: проблемы и перспективы. 2018. № 6. 19-20с.*

Նեյրոմարքեթինգը բավական ծախսատար է՝ 40000 – 50000 դոլար: Սակայն այնպիսի խոշոր ընկերություններ ինչպիսիք են Procter& Gamble, General Motors, Coca-Cola չեն ափսոսում այդպիսի գումարներ, և մինչև նոր արտադրանքի կամ գովազդի մեկնարկը հաճախ են օգտվում նեյրոմարքեթինգի մեթոդներից:

Ռուսական բրենդները ևս օգտագործում են նեյրոմարքեթինգը՝առաջատար ռուսական բջջային օպերատորները, ГК Черкизово, Боржоми, Faberlic , նույնիսկ «Ёлки 1914», «Горько» ֆիլմի 2 մասերը , «Легенда № 17», «Экипаж» ֆիլմերը:

Նշենք, որ 2017 թվականին աշխարհում նեյրոմարքեթինգային ծառայությունների ծավալը կազմել է մոտ մեկ միլիարդ դոլար, ընդ որում, այդ շուկան ներդրումներ է կատարել հետազոտության մեջ գրեթե 29 մլրդ դոլարով ։

Հայաստանում «Նեյրոհաբ» ընկերությունը բացվել է 2011 թվականին՝ մասնագիտանալով մարքեթինգային գործունեության մեջ: Սակայն մի քանի տարի անց ՝ 2016 թվականին, ռեբրենդինգ իրականացնելով ՝ շեշտը դրեց նեյրոմարքեթինգի վրա ՝ մի ուղղության, որի մասին մինչև վերջերս մեր երկրում քչերն էին նույնիսկ հեռահար պատկերացում ունեցել, էլ չենք խոսում գործնական կիրառման մասին ։ Առաջին և առայժմ միակ ընկերությունը, որը մասնագիտացած է նեյրոմարքեթինգի ոլորտում «Նեյրոհաբ»-ն է:Այստեղ զբաղվում են գիտական վերլուծությունով օգտագործելով էլեկտրաուղեղագրությունը, որը նեյրոմարքեթինգային հետազոտություններում օգտագործվում է հիմնականում գովազդային նյութերի ընկալման ուսումնասիրության և դրանց հնարավոր արդյունավետության վերաբերյալ եզրակացություններ անելիս:

Տեղական գործարարների համար սա եզակի հնարավորություն է դարձել հաղորդակցվելու նոր տեխնոլոգիաներին, արհեստավարժներից լսելու, թե ինչպես ստեղծել գրագետ ապրանք, որը պահանջված կլինի ոչ միայն Հայաստանում, այլև սպառողների ուշադրությունն է հրավիրելու այլ շուկաներում:

Այո, նեյրոմարքեթինգը էժանագին հաճույք չէ[1], ուստի հիմնականում այն նախատեսված է միջին և խոշոր ձեռնարկությունների համար, որոնք ուղղված են արտադրանքի արտահանմանը: Բայց փոքր բիզնեսի համար նույնպես շատ հետաքրքիր բաներ կան, և կազմակերպվող գիտաժողովների ընթացքում նրանք կարող են իմանալ նոր հետազոտությունների արդյունքների մասին (օրինակ, այն մասին, թե որ գույնն ունի ամենամեծ ազդեցությունը սպառողի վրա և այլն) և հետագայում օգտագործել այդ տեղեկություններն իրենց բիզնեսում:

Աաշխարհում բավական շատ կիրառություն ունի նեյրոմարքեթինգը , գործում են ավելի քան 200 ընկերություններ, որոնք առաջարկում են նեյրոմարքեթինգային հետազոտությունների ծառայություններ,իսկ Հայաստանում դեռևս գործում է մի ընկերություն , որը զբաղվում է գիտական վերլուծությամբ:

---

www.golosarmenii.am

ՀՏԴ 34.72.012.6 Տնտեսագիտություն

Մերի Բաղդասարյան
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Կառավարում» բաժին, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ռ. Մանգասարյան

ՓՄՁ-ՆԵՐԻ ԴԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՂՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԱՅԻՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ԱՐԴԻ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *փոքր և միջին ձեռնարկություններ, ներդրումային միջավայր, ֆինանսական գրագիտություն, կանանց ձեռներեցություն, երիտասարդների զբաղվածություն, նորարական բիզնես:*

ՓՄՁ-ների ուղղակի աջակցությունը կարևորվում է նաև այն պատճառով, որ մանր և միջին կազմակերպությունների թվի ավելացումը երկրում միջին խավի ձևավորման կարևոր գործոն է: Այս առումով պետք է հետևողականորեն իրականացվեն հատուկ քաղաքականության միջոցառումներ, որոնք աջակցելու են միջին խավի ձևավորմանը, տնտեսությունում սեփական գործարար նախաձեռնություններ իրականացնող անձանց խրախուսմանն ու աջակցությանը:

Мери Багдасарян

РОЛЬ МАЛЫХ И СРЕДНИХ ПРЕДПРИЯТИЙ И СИСТЕМНЫЕ ПОДХОДЫ К РАЗВИТИЮ В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ

Ключевые слова: *малый и средний бизнес, инвестиционная среда, финансовая грамотность, женское предпринимательство, занятость молодежи, инновационный бизнес.*

Прямая поддержка МСП также важна, потому что увеличение числа малых и средних предприятий является важным фактором формирования среднего класса в стране. В связи с этим необходимо последовательно осуществлять конкретные политические меры для поддержки формирования среднего класса, поощрения и поддержки отдельных лиц, осуществляющих свои собственные предпринимательские инициативы в экономике.

Երկրում սոցիալական համերաշխության և տնտեսական աճի ապահովման երաշխավորված միջոցը զարգացած փոքր և միջին ձեռնարկատիրության առկայությունն է: Փոքր և միջին բիզնեսի ոլորտը իրենից ներկայացնում է կարևորագույն ռազմավարական ռեսուրս և ի վիճակ է ինովացիոն զարգացման միջոցով ապահովել տնտեսության արդիականացում և սոցիալ-տնտեսական զարգացում:

Աշխատանքի ուսումնասիրության առարկան հանրապետությունում ձեռնարկատիրական գործունեության կազմակերպման դերի, հիմնախնդիրների ուսումնասիրությունն է, իսկ ուսումնասիրության օբյեկտը՝ ԱՀ-ում գործող ՓՄՁ-երի գործունեությունն է:

ԱՀ-ում հաշվի առնելով ՓՄՁ ոլորտի զարգացման դերակատարությունը տնտեսական զարգացման, միգրացիոն գործընթացների վրա, սոցիալական կայունության, նոր աշխատատեղերի ստեղծման, ֆինանսական խնդիրների լուծման գործընթացներում, պետք է մեծ ուշադրություն դարձվի ՓՄՁ ոլորտի զարգացմանն ու կայացմանը: Կան խնդիրներ ու

դժվարություններ, որոնք լուծելի են խոշոր եւ միջին բիզնեսի համար, սակայն անհաղթահարելի՝ փոքր ձեռնարկատիրությունների համար, ուստի շատ կարևոր է, որ օրենսդրական մեխանիզմներով ու կարգավորումներով պետությունը պաշտպան և հենարան հանդիսանա ՓՄՁ-ների համար: Դրա համար պետք է պատրաստել մասնագետներ, որի արդյունքում կձևավորվեն սոցիալական ձեռնարկություններ, որոնք էլ կնպաստեն համայնքների զարգացմանը՝ տարբեր ուղղություններով:

ԱՀ աշխատանքի շուկայում զարգացման հնարավորությունների բացակայության պայմաններում ամենաարժեքավոր կապիտալն արտագաղթում է երկրից, այն էլ մեծամասամբ անվերադարձ, ավելին՝ իր հետևից տանելով ոչ միայն ներդրումները, որոնք կատարվել են երկրի ներսում և պետք է ծառայեին երկրի առաջընթացին, այլև պահպանեին ամենաթանկարժեք համարվող աշխատանքային ռեսուրսը: Ընդ որում, եթե աշխատողն արտագաղթում է ողջ ընտանիքով, ապա տեղի է ունենում մարդկային կապիտալի բազմապատիկ կորուստ: Այն ոչ միայն հանգեցնում է սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական, այլև մշակութային, ազգային ինքնության և անվտանգության հետ կապված լուրջ խնդիրների: Այդ իսկ պատճառով պետության գերակայություններից է դառնում համապատասխան միջավայրի ձևավորումը՝ մարդկային կապիտալի զարգացման և «ուղեղների հայրենադարձության» համար:

Գյուղական բնակչության ցածր կենսամակարդակի և գործազրկության առկա բարձր տեմպերի պայմաններում աշխատանքային տեղաշարժերը դարձել են նրանց եկամուտների գոյացման կարևոր աղբյուր և աղքատության դիմակայության ռազմավարություն: Աշխատանքային միգրացիայի հետևանքով միգրանտների որոշ մասը, որ տարիների ընթացքում ձեռք է բերում մեծ կարողություն, որոշակիորեն նպաստում է գյուղական համայնքների զարգացման գործին: Նրանց շրջանում մեծ տարածում է ստացել բարեգործությամբ զբաղվելը: Արտագնացությունը ազդում է նաև գյուղի բարեկեցության մակարդակի վրա: Բայց պետք է հաշվի առնել նաև այն հանգամանքը, որ հանրապետական մակարդակով փաստորեն այդ աշխատուժը չի մասնակցում երկրի ՀՆԱ-ի ստեղծմանը: Նա այն ստեղծում է երկրի սահմաններից դուրս և չի մասնակցում ազգային տնտեսության զարգացման խնդիրներին ու տնտեսության զարգացմանը:[1]

Ասիական զարգացման բանկի տվյալներով՝ 2017թ. Հայաստանում գրանցված ձեռնարկությունների 97%-ը տղամարդկանց կողմից ստեղծված և ղեկավարվող բիզնես կառույցներ են: Եվ դա անգամ այն դեպքում, որ վերջին տարիներին տղամարդկանց շրջանում արձանագրված միգրացիայի բարձր տոկոսի պատճառով փոխվել է նաև Հայաստանի ժողովրդագրական պատկերը: Թվերը բավականին խոսուն են և բոլորովին հուսադրող չեն: Փոքր և միջին ձեռնարկատիրության ոլորտում կանայք դեռ ոչ մեծ տոկոս են կազմում: Հայաստանում կին գործարարների ցուցիչը բավականին ցածր է՝ 13%: Հաշվի առնելով այն փաստը, որ կանանց տեսակարար կշիռը բնակչության կազմում 50 տոկոսից ավելի է, սա շատ փոքր ցուցանիշ է: Նշանակում է՝ ՀՀ-ում առկա է կանանց ձեռներեցության զարգացման մեծ ներուժ:

Զարգացած երկրներում ավելի ու ավելի է մեծանում կանանց դերակատարությունը պետության և շրջանների մրցունակության ձևավորման հարցում: Վերջին 40

[1] ***Հարությունյան Դ.***, *Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում, Եր., Զանգակ, 2016թ., էջ 157.*

տարիների ընթացքում ծավալուն աշխատանք է տարվել ամբողջ աշխարհում կարծրատիպերը և հայրիշխանական կարգերը փոխելու նպատակով: Իսկ համաձայն ԳԿԻ (Գենդերային կոնֆլիկտի ցուցանիշ) ցուցանիշի՝ աշխարհի 135 երկրների ցանկում Հայաստանը զբաղեցնում է 92-րդ տեղը:

Հասարակության մեջ սկսնակների, ինչպես նաև կին աշխատակիցների և ձեռներեցների թվի ավելացումը դրական տեղաշարժ է համարվում տնտեսական զարգացման առումով: Հաշվի առնելով տիրող իրավիճակը՝ ակնհայտ է դառնում, որ և ՀՀ-ում, և ԱՀ-ում պետք է ավելի մեծ ջանքեր գործադրվեն աջակցելու կին գործարարներին նոր աշխատատեղերի ստեղծման հարցում: Այս նպատակների համար անհրաժեշտ է նաև զարկ տալ նորարարական բիզնեսի զարգացմանը: Գոյություն ունեցող կանանց ձեռնարկությունների մեծամասնությունը պատկանում է այն ոլորտին, ուր հասարակությունը բնականորեն ակնկալում է տեսնել կին գործարարի: Միևնույն ժամանակ բիզնեսները պատկանում են այնպիսի ոլորտների, ուր շուկաներն արդեն բավականին հագեցած են, և մեծ մրցակցությունը հանգեցնում է ավելի ցածր եկամտի:

Կին գործարարներին հատուկ թույլ կողմերը կարելի է առանձնացնել հետևյալ ոլորտներում:

- Ընդհանուր ձեռնարկատիրական գիտելիքներ՝ կապված գործնական փորձի և շուկայի վերաբերյալ տեղեկացվածության հետ: Սա ակնհայտ է դառնում մասնավորապես գործարար գաղափարների ընտրության ժամանակ, որոնք հիմնականում կենտրոնացած են այնպիսի ոլորտների վրա, ուր հեշտ է կրկնօրինակել որևէ բիզնես: Դրանք հիմնականում այն ոլորտներն են, որոնք ունեն գիտելիքի համեմատաբար ցածր պահանջ: Նրանք կենտրոնանում են առաջին անհրաժեշտության ապրանքների վաճառքի և ծառայությունների մատուցման վրա: Դրանք նաև համեմատաբար ավելի հագեցած և սուր գնային մրցակցություն ունեցող շուկաներն են:
- Ծառայության ոլորտում կին գործարարները հիմնականում ավելի ակտիվ են քիչ գիտելիք պահանջող ոլորտներում, որոնք, միևնույն ժամանակ, քիչ պահանջարկ ունեն շուկայում:Տարածքային անհամաչափ զարգացումը, գյուղական վայրերում բնակչության թերզբաղվածությունը, ոչ գյուղատնտեսական զբաղվածության անբավարար մակարդակը:
- Տեղական ինքնակառավարման մարմինների, հասարարական կազմակերպությունների հետ սոցիալական երկխոսության անբավարար մակարդակը:
- Երբ գործը հասնում է արտաքին գործարար կապերին, մատակարարներին և վաճառող-գնորդ փոխհարաբերություններին, կին գործարարները բավականին սահմանափակ են, որի պատճառը հիմնականում ժամանակի սղությունն է՝ կապված նաև ընտանիքի ներսում իրենց կրկնակի դերի հետ՝ որպես մոր և տնային տնտեսուհոոոոոու:
- Կին գործարարները շատ թույլ դերակատարություն ունեն արտադրության ոլորտում, ուստի նաև թույլ դերակատարություն ունեն ավելացված արժեքով արտադրանքի և դրա հետ կապված այլ արժեշղթաներում: Երբ խոսքը գյուղատնտեսության, արդյունաբերության կամ առևտրի ոլորտների մասին է, ապա այս արժեշղթայում կանայք հիմնականում ընդգրկված են որպես աշխատողներ:

Հանրապետությունում գործազրկությունը մեծ է հատկապես երիտասարդների շրջանում: Գործազրկության ամենաբարձր մակարդակը գրանցվել է 25-34 տարիք ունեցող բնակչության մեջ՝ 34,5 %: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ դա պայմանավորված է հիմնականում մասնագիտական կողմնորոշման համակարգի

բացակայությամբ, աշխատաշուկայի ներկայիս պահանջներին երիտասարդների մասնագիտական կրթության և որակավորման անհամապատասխանությամբ, աշխատանքային փորձի բացակայությամբ: [1]

Գործազրկությունը համաշխարհային տնտեսության, հատկապես անցումային շրջանում գտնվող երկրների տնտեսությունների աքիլլեսյան գարշապարն է: Այն համարվում է անցումային շրջանում գտնվող ՀՀ-ի և ԱՀ-ի սոցիալ-տնտեսական վիճակի կարևոր բնութագրիչներից մեկը: Լինելով արտադրության անկման ծնունդ՝ գործազրկությունը դառնում է տնտեսական անկայունության այն օղակը, որն ընդունակ է խորացնել այդ անկումը: Աշխատատեղի կորուստը բնակչության ամենալայն զանգվածի համար նշանակում է կենսամակարդակի կտրուկ անկում և բարոյահոգեբանական ծանր հարված:

Վերջին տարիներին ԱՀ-ում և ՀՀ-ում գործազրկության մակարդակը շարունակաբար աճում է, և սոցիալ-տնտեսական վիճակից բխող հետևանքներից առաջնայինն արտագաղթն է: ԱՀ-ում գործազրկության համեմատաբար բարձր մակարդակով առանձնանում են Մարտունու, Մարտակերտի և Ասկերանի շրջանները, ինչպես նաև մայրաքաղաք Ստեփանակերտը:

Զբաղվածության խթանման և գործազրկության կրճատման համար կարևոր նախապայման է տնտեսության զարգացումը, իսկ զբաղվածության մակարդակն ու տնտեսության զարգացումը սերտորեն փոխկապակցված են ՓՄՁ-ների զարգացման մակարդակի հետ: Աշխատանքի շուկայի ակտիվ քաղաքականությունները մշակելիս ապագայում պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձվի երիտասարդության շրջանում գործազրկության հիմնախնդիրներին: Մասնավորապես, պետք է մանրամասն վերլուծվեն երիտասարդության շրջանում բարձր գործազրկության պատճառները:

Ընդհանուր առմամբ, կանանց ձեռնարկատիրության խթանման ուղղվածությունը էականորեն կախված է նաև հասարակության զարգացման մակարդակից և գերիշխող մոդելներից, ինչպես նաև ավանդական վարքագիծը, կարծրատիպերը և նահապետական վերաբերմունքը փոխելու պատրաստակամությունից:

Վերամշակող ընկերությունները նույնպես բավականին լուրջ դերակատարություն ունեն ԱՀ-ում ՓՄՁ ոլորտի զարգացման գործում, մասնավորապես՝ գյուղատնտեսության ոլորտում: Դրանք հողօգտագործողներին հնարավորություն են տալիս մտածելու նաև ոչ ավանդական մշակաբույսերի մշակման ուղղությամբ, լուծում են իրացման հետ կապված կարևոր խնդիրը, ինչն աջակցում և վստահություն է հաղորդում հողագործներին՝ ցանքատարածքների ավելացման հարցում:

Թթենու պլանտացիաների խնամքի կարգավորման և նոր պլանտացիաների ստեղծման շնորհիվ Լեռնային Ղարաբաղը կարող է դառնալ բուժիչ նշանակություն ունեցող բարձրորակ թթի օղու, սպիրտի, դոշաբի, չրի եզակի արտադրող: Անհրաժեշտ է նաև ընդլայնել շերամապահության համար նախատեսված թթի պլանտացիաները, ինչը հնարավորություն կտա վերականգնել բնական մետաքսի արտադրությունը, որը կարևոր դեր կխաղա կանանց աշխատուժի օգտագործման տեսանկյունից : Թթի ծառը շատ քիչ խնամք է պահանջում, բայց ապրում է 300 տարի :

[1] stat-nkr.am

Արցախում նաև պետք է զարգացնել այսպես կոչված կանաչ տնտեսությունը, այդ թվում ստեղծելով վերականգնվող էներգետիկայի ձեռնարկություններ, որոնք օգտագործում են արևի, քամու, գեոթերմալ տաք աղբյուրների էներգիան: Կարևորվում է նաև կենցաղային թափոնների վերամշակման կազմակերպումը, ինչը կարող է նույնպես ապահովել լրացուցիչ էներգետիկ ռեսուրսներ:

Արցախում ՓՄՁ-երի զարգացման ուղղություններից է նաև զբոսաշրջության բոլոր տեսակների, այդ թվում էկոտուրիզմի զարգացումը: Այդ տեսանկյունից կարևորվում է ենթակառուցվածքների զարգացումը, այդ թվում՝ ճանապարհային և հյուրանոցային ցանցի, բարձրակարգ ծառայությունների, տրանսպորտի: Համապատասխանաբար, անհրաժեշտ է այդ ոլորտի մասնագետների սպասարկող անձնակազմի վերապատրաստում և ուսուցում: Բնական և պատմական հուշարձաններով առավել հանրահայտ Մարտակերտի շրջանի զգալի մասերը, այդ թվում Թարթառ և Խաչեն գետերի հովիտները նպատակահարմար է դարձնել արգելավայր: Զբաստաշրջության խթանմանը կնպաստի նաև Շուշին Շոշ գյուղի հետ կապող ճոպանուղու կառուցումը, ինչը նաև լրացուցիչ աշխատատեղեր կստեղծի:

Ակնհայտ է, որ բնակչության ֆինանսական գրագիտությամբ է պայմանավորված երկրում տնտեսական զարգացման մակարդակը: Տեղեկատվության ցածր մակարդակը և դրա ոչ ճիշտ մեկնաբանությունը կարող են հանգեցնել սխալ որոշման կայացմանը, տարատեսակ անհիմն լուրերի տարածմանը, անգամ խուճապի առաջացմանը ոչ միայն սպառողների նեղ օղակում, այլև ամբողջ հասարակության շրջանում՝ խաթարելով տնտեսության զարգացումը:[1]

Աշխարհում ֆինանսական գրագիտության մակարդակը հասկանալու նպատակով 2018թ. Համաշխարհային բանկը հարցում է անցկացրել աշխարհի 140 երկրներում: Հարցումը ցույց տվեց, որ ֆինանսական գրագիտության ամենաբարձր մակարդակն առկա է Ավստրիայում, Կանադայում, Ֆինլանդիայում, Գերմանիայում, Իսրայելում, Հոլանդիայում, Նորվեգիայում, Շվեդիայում և Մեծ Բրիտանիայում: Այս երկրներում չափահասների 65%-ից ավելին գրագետ են ֆինանսական հարցերում:Հարցման համաձայն՝ Հայաստանում ֆինանսական գրագիտություն ունի չափահասների 18%-ը:

Ժամանակակից աշխարհում փոքր և միջին ձեռնարկատիրության զարգացման անհրաժեշտությունն ազգային տնտեսությունների վերակառուցման և զարգացման գլխավոր հրամայականներից մեկն է: Այն հանդիսանում է շուկայական հարաբերությունների արմատավորման և տնտեսական առաջընթացի հիմնական երաշխիքը: ՓՄՁ ոլորտը ներառում է տնտեսության բավականին լայն հատված և ներկայացնում է արտադրական և վերամշակող ձեռնարկություններ, արհեստները, մանրածախ ու մեծածախ առևտուրը, ֆերմերային տնտեսությունները, ծառայությունների ու սպասարկման ոլորտը և այլն:

ՓՄՁ-ն շուկայական տնտեսության զարգացման հիմնական շարժիչ ուժն է: Այն խթանում է մասնավոր սեփականությունը և ձեռնարկատիրական հմտությունները, ճկուն է փոփոխվող շուկայական տնտեսության պայմաններում, օգնում է դիվերսիֆիկացնել տնտեսական գործունեությունը և կարող է էական ներդրում ունենալ միջազգային առևտրի, արտահանման խթանման և, իհարկե, նոր աշխատատեղերի ստեղծման գործում: Արդյունքում ապահովվում է տնտեսության կայուն աճ և հասարակության միջին խավի

[1] http://www.un.am

ձևավորում: Փոքր և միջին ձեռնարկությունները հաճախ գնահատվում են որպես բարգավաճող տնտեսությունների տնտեսական զբաղվածության ողնաշար, ինչպես նաև՝ որպես նորարարության և հավելյալ արժեքի ստեղծող արտադրության շարժիչ ուժ:

Փոքր և միջին բիզնեսը միանման հավասար կարևոր դեր է կատարում եվրոպական երկրների և Հյուսիսային Ամերիկայի երկրների տնտեսության մեջ, որի մասին են վկայում փոքր և միջին ձեռնարկությունների մեծ չափաբաժնի հիմնական տնտեսական ցուցանիշները: Դիտարկվող արդյունաբերական բարձր զարգացած երկրներում, ինչպես առանձին ընկերություններ, կառավարում են և ընդլայնում են իրենց գործունեությունը կամ դադարեցնում են իրենց գործունեությունը, փոքր և միջին ձեռնարկությունների հավաքական գործունեության հիմնական տնտեսական ցուցանիշները մնում են կայուն: Այսպիսով, իր ամբողջության մեջ, փոքր և միջին ձեռնարկությունների դերը տնտեսության բիզնեսի մեջ ժամանակի ընթացքում մնում է կարևոր և կայուն: Հայաստանը ետ է մնում բազմաթիվ զարգացած երկրներից իր հիմնական ցուցանիշներով, որը բնութագրում է փոքր և միջին բիզնեսի գործունեությունը: Հայաստանի տնտեսության մեջ փոքր բիզնեսի տվյալների դերն ու տեղը բնութագրում է ոչ բավարար զարգացածության մեջ:

Զարգացած, կայուն և դինամիկ աճ ունեցող երկրներում համախառն ներքին արդյունքի մեծ մասը ձևավորվում է փոքր և միջին ձեռնարկատիրության հաշվին: Փոքր ձեռնարկությունների ակտիվ զարգացումը սկսվեց 20-րդ դարի 90-ական թվականներին և շարունակվում է մինչև օրս:

ԱՄՆ-ում ամեն տարի ստեղծվում են շուրջ 600 հազար փոքր ձեռնարկություններ, սակայն նրանց կեսը դադարեցնում է իր գործունեությունը առաջին 18 ամսվա ընթացքում: Դանիայում ամեն տարի հանդես են գալիս շուրջ 15 հազար բացարձակապես նոր ձեռնարկություններ, սակայն հինգ տարի հետո նրանցից միայն 58% է կարողանում դիմակայել շուկայում: ՄԱԿ-ի փորձագետների տվյալներով՝ փոքր ձեռնարկատիրության մեջ զբաղված է աշխարհի բնակչության շուրջ 50%-ը: Զարգացած երկրների համար այս ցուցանիշը զգալիորեն բարձր է:

Ըստ Doing Business-2018 զեկույցի՝ գործարարությամբ զբաղվելու դյուրինության տեսանկյունից աշխարհի առաջատար երկիրը 2017թ. համարվել է Նոր Զելանդիան, այնուհետև՝ Սինգապուրը, երրորդ հորիզոնականը զբաղեցնում է Դանիան, չորրորդը՝ Կորեան, հինգերորդը՝ Հոնկոնգը և Չինաստանը: Հայաստանի Հանրապետությունը 2015 թ. զբաղեցրել է 43-րդ տեղը, 2016 թ. 38-րդն էր, իսկ 2017 թ.՝ 47-րդը:

Ինչպես երևում է աղյուսակի տվյալներից, 2016-2017 թթ. միայն Հայաստանի վարկանիշն է անկում ապրել, չնայած տարածաշրջանի երկրների հնգյակի շարքում գործարարության դյուրինության ցուցանիշներով զբաղեցնում է 3-րդ տեղը:

Վարկանիշային դիրքը որոշվում է ըստ սահմանային արժեքից հեռավորության ցուցանիշների միջին արժեքի, որը հաշվարկվում է յուրաքանչյուր տնտեսության համար 10 թեմատիկ ուղղություններով: Տվյալ ցուցանիշը թույլ է տալիս գնահատել, թե որքանով է յուրաքանչյուր տնտեսություն մոտեցել գործարարության միջազգային լավագույն փորձի ցուցանիշներին: Որքան բարձր է միավորը, այնքան ավելի արդյունավետ է համարվում գործարարության միջավայրը:

Փոքր և միջին բիզնեսի զարգացումը յուրահատուկ և արդյունավետ նախադրյալ է նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման համար: Այդ է վկայում այն

հանգամանքը, որ Եվրոպական տնտեսական գոտում աշխատատեղերի 2/3-ը ապահովում են փոքր և միջին ձեռնարկությունները՝ ՀՆԱ 40-60%-ը:

Ինչպես ցույց են տալիս ուսումնասիրությունները՝ անցած 2-3 տասնամյակների ընթացքում շատ ՏՀԶԿ երկրներ անցել են ՓՄՁ-ների դերն ամրապնդելուն ուղղված քաղաքականության մի քանի սերունդների միջով: Դա նպաստել է մի շարք գործնական լաբորատորիաների ստեղծմանը, որտեղ փորձարկվել են շատ տարբեր մոտեցումներ, գործիքներ և մեթոդաբանություններ: Նշենք նաև, որ ՏՀԶԿ երկրներում կազմակերպությունների 99%-ը ՓՄՁ-ներն են: Նրանք մասնակցում են տնտեսության մեջ հավելյալ արժեքի 2/3-ի ստեղծմանը: ՏՀԶԿ բազմաթիվ երկրներում ՓՄՁ-ները սկսել են ավելի մեծ դեր խաղալ առևտրի, ներդրումների և մրցակցության մեջ:

Այսպիսով, ընդհանրացնելով ընդգծենք, որ կան ՓՄՁ-ների խթանման շատ տարբեր արդյունավետ եղանակներ, և ՓՄՁ-ների զարգացման ռազմավարությունները պետք է համապատասխանեն տեղական և ազգային սոցիալ-քաղաքական համատեքստին: ՓՄՁ-ների խթանման ռազմավարություններում անհատական աջակցության փոխարեն ավելի ու ավելի շատ պետք է կիրառվեն գործնական կապերի մոտեցումներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հարությունյան Դ., Գործարարության ծավալման տնտեսական խթանները Հայաստանի Հանրապետությունում, Եր., Զանգակ, 2016թ., էջ157:

2. Հովհաննիսյան Հ.Ա., Ձեռնարկատիրական միջավայրի գնահատականը ՀՀ-ում , Երևան, Տիգրան Մեծ, 2015թ., էջ 145:

3. Догиль Л. Филипович, Семенов Б. Дмитриевич, Предпринимательство и малый бизнес, Минск, Юрайт, 2016г. Стр 137.

4. stat-nkr.am

5. http://www.un.am

6. https://hy.wikipedia.org

ՀՏԴ 336.2 Տնտեսագիտություն

Մարիամ Գևորգյան
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Հաշվապահական հաշվառում և հարկում» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., ավագ դասախոս Լ. Բեգլարյան
Էլ. փոստ՝ gevorgyanmariam01@gmail.com

ՀԱՐԿԱՅԻՆ ՆԵՐՈՒԺԻ ՎՐԱ ԱԶԴՈՂ ԳՈՐԾՈՆՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *հարկային ներուժ, հարկային համակարգ, հարկային եկամուտներ, ներքին գործոններ, արտաքին գործոններ:*

Համաշխարհային պրակտիկայում տարածաշրջանի հարկային ներուժի տակ հասկացվում է բյուջե մուտքագրվող հարկերի և պարտադիր վճարների առավելագույն հնարավոր գումար, որը կարող է ստացվել ժամանակի որոշակի միջակայքում՝ ելնելով գործող օրենսդրության պայմաններից: Աշխատանքի նպատակն է բացահայտել ԱՀ հարկային ներուժի վրա ազդող գործոնները և հարկային ներուժի բարելավման ուղիները:

Мариям Геворгян

ФАКТОРЫ, ВЛИЯЮЩИЕ НА НАЛОГОВЫЙ ПОТЕНЦИАЛ В АР

Ключевые слова: *налоговый потенциал, налоговая система, налоговые доходы, внутренние и внешние факторы.*

В мировой практике налоговый потенциал региона означает максимальную сумму налогов и обязательных платежей в бюджет, которые могут быть получены в течение определенного периода времени, в соответствии с действующим законодательством. Целью работы является выявление факторов, влияющих на налоговый потенциал АР и пути повышения налогового потенциала.

Հարկային ներուժը այն հարկերի գնահատումն է, որոնք կարող են հավաքագրվել որոշակի տարածքում: Երկրի հարկային ներուժը կախված է մի շարք գործոններից: Այդ գործոնները կարելի է դասակարգել առաջնայինի և երկրորդայինի, արտաքինի և ներքինի, հաստատունի և փոփոխունի և այլն:

Մեր կարծիքով, առավել նպատակահարմար է հարկային ներուժի վրա ազդող գործոնները բաժանել արտաքինի և ներքինի: Արտաքին գործոններին կարելի է դասել գնաճը, պետական կառավարման համակարգը, աշխարհագրական, քաղաքական, մակրոտնտեսական և այլ գործոններ:

Գնաճային գործոն: Գնաճը դրսևորվում է գների ընդհանուր մակարդակի բարձրացմամբ: Գնաճի ազդեցության տակ հարկային բազան և համապատասխանաբար նաև երկրի հարկային ներուժը աճում են, սակայն այդ աճը ձևական է: Հետևաբար, ճիշտ գնահատման համար անհրաժեշտ է ճշգրտել հարկային բազան՝ հաշվի առնելով գնաճի մակարդակը, որպեսզի դրանք հավասարակշռվեն:

Պետական կառավարման համակարգը՝ որպես հարկային ներուժի ձևավորման և իրացման գործոն, նույնպես կարևոր նշանակություն ունի: Բյուջետային համակարգում պետության եկամուտների ձևավորումը մեծապես կախված է նրանից, թե ինչպես է կազմակերպվում պետական համակարգը:

Աշխարհագրական գործոն: Այս գործոնը որոշում է երկրի տնտեսական զարգացման հեռանկարները, որն էլ իր հերթին ազդում է ռեսուրսային ապահովվածության մակարդակի աճի կամ նվազման վրա:

Քաղաքական գործոններ: Հարկային քաղաքականության արդյունավետությունը կախված է կառավարման տարբեր մակարդակների միջև հստակ և կառուցողական համագործակցությունից, նրանից, թե որքանով են նրանց գործառույթներն ու շահերը ճիշտ սահմանազատված:

Մակրոտնտեսական գործոններ: Այս գործոնների շարքին կարելի է դասել համաշխարհային տնտեսության վիճակը, երկրի արտաքին տնտեսական գործունեությունը:

Հարկային ներուժի վրա ազդող ներքին գործոնները պետության կողմից կարող են ենթարկվել փոփոխությունների: Ազդելով դրանց վրա՝ կարելի է հասնել հարկային ներուժի աճին կամ նվազմանը: Այս գործոնների առանձնահատկությունը կայանում է նրանում, որ իրականացվող քաղաքականության միջոցով կարող են ազդել դրանց վրա և հարմարեցնել դրանք երկրի տնտեսությանը՝ զերծ մնալով արտաքին գործոնների խոցելիությունից:

Ներքին գործոններից են օրենսդրական, սոցիալ-ժողովրդագրական, ռեսուրսահումքային, ենթակառուցվածքային, նորարարության, ներդրումային գործոնները և այլն: Ներկայացենք դրանցից յուրաքանչյուրը:

Օրենսդրական գործոններ: Այս գործոնները արտացոլում են օրենքի ազդեցությունը երկրի հարկային ներուժի վրա հետևյալ գործողությունների միջոցով՝ հարկերի ներդրում, հարկային դրույքաչափերի փոփոխություն, հարկային արտոնությունների ներդրում, ֆինանսական պատժամիջոցներ հարկային օրենսդրությունը խախտելու համար:

Սոցիալ-ժողովրդագրական գործոններ: Սոցիալ-ժողովրդագրական գործոնների վիճակը և արդյունավետությունը որոշում են երկրի տնտեսական աճի հնարավորությունները, քանի որ երկրի զարգացման արդյունավետությունը կախված է առկա ռեսուրսների օգտագործման եղանակից: Այս գործոններին կարելի է վերագրել նաև աշխատանքային գործոնը: Աշխատանքային գործոնը ազդում է հարկային ներուժի վրա՝ ապրանքների, ծառայությունների և քաղաքացիների եկամուտների սպառման միջոցով:

Ռեսուրսահումքային գործոն: Այս գործոնը բնութագրվում է երկրի ֆիզիկական և աշխարհագրական դիրքով: Եթե երկիրը հարուստ է բնական ռեսուրսներով, ապա այդ գործոնը մեծացնում է երկրի մրցունակությունը և տնտեսական աճի իրական աղբյուր է հանդիսանում: Հետևաբար կարող ենք ասել, որ ռեսուրսահումքային ներուժը որոշում է տնտեսական զարգացման հնարավորությունները:

Ենթակառուցվածքային գործոն: Դա երկրի աշխարհագրական-տրանսպորտային դիրքն է և ենթակառուցվածքային ապահովվածությունը: Զարգացած տրանսպորտային ենթակառուցվածքները մեծ ազդեցություն ունեն երկրի մրցունակության վրա, հետևաբար պետք է մեծ ուշադրություն դարձվի երկաթուղային և միջքաղաքային գծերի, ավիաընկերությունների զարգացմանը՝ նյութատեխնիկական տրանսպորտային բազան զարգացնելու համար:

Նորարարության գործոն: Հարկային ներուժի վրա ազդող այս գործոնը ներառում է ժամանակակից հետազոտական ծրագրերի զարգացման մակարդակը և դրանց ֆինանսավորումը: Երկրում գիտատեխնիկական առաջընթացի նվաճումների ներդրումը կնպաստի տնտեսության զարգացմանը և բարենպաստ պայմաններ կստեղծի ներդրումներ կատարելու համար:

Ներդրումային գործոն: Այս գործոնը կապված է երկրի արտադրական ներուժի, ներքին և արտաքին ներդրումների մակարդակի հետ: Բարենպաստ ներդրումային միջավայրը

նպաստում է երկրի ֆինանսական հատվածում տարբեր տեսակի ներդրումների իրականացմանը և դրանով իսկ ավելացնում է հարկային բազան:

«Ստվերային» տնտեսության գործոն: Այս գործոնը մեծ ազդեցություն է ունենում երկրի հարկային ներուժի ձևավորման վրա: Տնտեսության ստվերային հատվածը նվազեցնում է հարկման պոտենցիալ հնարավորությունները: Ստվերային տնտեսության դեմ պայքարի լավագույն միջոցներն ու մեթոդները գտնելը թույլ է տալիս բարձրացնել առանձին շրջանների և ամբողջ երկրի հարկային ներուժը:[1]

Այսպիսով, թե՛ արտաքին, թե՛ ներքին գործոնները անմիջական ազդեցություն են ունենում երկրի հարկային ներուժի վրա, որը կախված է ընդհանուր եկամտի ծավալից, տնտեսական կառուցվածքից, հարկային համակարգի առանձնահատկություններից:

Մեր կարծիքով, ԱՀ-ում նշված բոլոր գործոնները հավասար ազդեցություն ունեն հարկային ներուժի վրա, սակայն ներքին գործոնները այսօր ավելի կառավարելի են իրականացվող հարկային ճկուն քաղաքականության շնորհիվ:

Շուկայական տնտեսության պայմաններում, ինչպես գիտենք, պետության գործողությունները էապես պայմանավորված են պետական եկամուտների, այն է՝ հարկային և մաքսային ոլորտում իրականացվող քաղաքականությամբ: Դա այն կարևոր գործիքն է, որի միջոցով պետությունը հնարավորություն է ապահովում խթանելու գործարար ակտիվությունը, ազդելու զբաղվածության և այլ գործընթացների վրա: Այս առումով պետական քաղաքականությունն ուղղված է հետևյալ երկու կարևոր խնդիրների լուծմանը.

1. տնտեսավարող սուբյեկտների համար նպաստավոր գործարար միջավայրի ձևավորումը,
2. հարկման բազայի ընդլայնումը:

Գործարար միջավայրի բարելավման առաջնային քայլը բիզնեսի ինստիտուցիոնալ մուտքի ու ելքի արգելքների կրճատումն է: ԱՀ-ում պետական գրանցում ստացող անհատ ձեռնարկատերերն ու կազմակերպությունները հարկ վճարողի հաշվառման համարն այժմ ստանում են պետական ռեգիստրի միջոցով: Նրանք այլևս ստիպված չեն լինում նախկին ավելորդ քաշքշուկներով ձեռք բերել իրենց հաշվառման համարը: Հաշվառման կանգնելուց հետո առաջին մեկ տարվա ընթացքում հարկային մարմնի կողմից առնվազն երկու անգամ կազմակերպվում են օժանդակման այցելություններ նոր ստեղծված հարկ վճարողներին՝ վերջիններիս կողմից ցանկություն հայտնելու դեպքում:[2] 2016 թվականին մշակվել է «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ», որի նպատակն է ապահովել հարկ վճարողներին բարձրորակ սպասարկմամբ, բացատրական աշխատանքների իրագործման միջոցով բարձրացնել նրանց իրազեկվածության մակարդակը, ինչպես նաև ներկայացնել գործող հարկային և պարտադիր վճարների մասին օրենսդրության և դրանց հետ կապված այլ նորմատիվ ակտերի պահանջները: Նոր ստեղծված հարկ վճարողների մոտ հաճախ օրենսդրությամբ սահմանված հարկման պայմանների, սահմանային չափերի փոփոխությամբ պայմանավորված՝ նախկին հարկման ռեժիմից այլ հարկման ռեժիմին անցնելու հետ կապված, առաջանում են լրացուցիչ հարկային պարտավորություններ: Կանոնակարգը տնտեսավարող սուբյեկտներին թույլ է տալիս զերծ մնալ լրացուցիչ պարտավորություններից:

---

[1] ***Филатова Е.А.,*** *"Анализ факторов, влияющих на величину налогового потенциала региона", Вестник экономики, 2013, №1, стр. 1-4*

[2] *Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների նպատակով այցելությունների կանոնակարգ», 2016:*

Մշակվել է հարկային ստուգումների պլանավորման հայեցակարգ, որը ռիսկային չափորոշիչներով ստուգումների իրականացման համար հարկ վճարողների ընտրության գործընթաց է: Արդյունքում այսօր ընդհանուր մասսայական ստուգումներից անցում է կատարվում ռիսկային չափանիշների հիման վրա թիրախային ստուգումների համակարգին:

Վերլուծելով ԱՀ հարկային եկամուտների աճի միտումները՝ մուտքերը 2010 թվականի համեմատ 2018 թվականին աճել են շուրջ 149 %-ով *(Գծապատկեր 1):*

Գծապատկեր 1. Հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականը 2010-2018 թվականներին



Իսկ հարկային եկամուտների և պետական տուրքի գծով կատարողականները՝ ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2018 թվականներին տատանվել են 29,3-33,7 %-ի սահմաններում:

Աղյուսակ 1. Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ 2010-2017 թվականներին

Տարեթիվը	Հարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ՀՆԱ-ի հարկվող ճյուղերի նկատմամբ (%)
2010	29,7
2011	29,6
2012	30,9
2013	29,3
2014	29,3
2015	33,7
2016	29,8
2017	30,3
2018	32,9

Գործարար միջավայրի բարելավումը առաջին հերթին պայմանավորված է տնտեսության ներսում տեղի ունեցող գործընթացներով, որոնց արդյունավետ

կառավարումը նպաստում է գործարար ակտիվության բարձրացմանը և տնտեսության զարգացմանը: Պետք է նշել, որ ինչպես զարգացած, այնպես էլ հետանցումային բոլոր երկրներում գերակա խնդիրներից մեկը ՓՄՁ-ների խթանումն է, իսկ տնտեսական գործընթացներում կատարվող շարունակական բարեփոխումների նպատակներից մեկը ՓՄՁ-ների ավելացումն է, քանի որ աշխարհի բոլոր երկրներում հարկային եկամուտների գերակա մասը ապահովում են ՓՄՁ-ները:

ԱՀ–ում գործարար միջավայրը բարենպաստ է, որի արդյունքում 6 տարվա կտրվածքով, 2015 թվականին 2009 թվականի համեմատ դրանց թիվը աճել է ավելի քան 2 անգամ՝ 4086-ից հասնելով 8141-ի[1]:

Սակայն նշենք, որ այսօր օրենսդրական որոշակի դրույթներ տնտեսավարման տարբերակված պայմաններ են ենթադրում ՓՄՁ-երի և խոշոր ձեռնարկությունների համար, օրինակ՝ «Շահութահարկի մասին» ԱՀ օրենքով հարկվող շահույթը որոշելիս կատարվող որոշ ծախսեր ճանաչվում են որպես այդպիսին միայն ԱՀ կառավարության սահմանած նորմերը չգերազանցող մասի չափով: Նման սահմանափակումը կարող է խոչընդոտել ՓՄՁ-երի գործունեությանը, քանի որ սահմանած չափը գերազանցող ծախսերի բացարձակ մեծությունը խոշոր ընկերությունների ընդհանուր շրջանառության նկատմամբ շատ ավելի փոքր մասնաբաժին է կազմում, քան ՓՄՁ-երի համար: Հարկման դաշտը արդարացի չէ նաև «Եկամտային հարկի» մասին օրենքով սահմանված որոշակի գործունեություններից տարեկան համախառն եկամուտներից 20 տոկոս հարկման դրույքաչափի մասով, երբ «Շահութահարկի մասին» ԱՀ օրենքով սահմանված է 10 տոկոս և բարձր շահութաբերություն ունեցող ոլորտներում՝ 20 տոկոս դրույքաչափ:

Հարկային համակարգի ազդեցությունը գործարար միջավայրի վրա կարևոր և արդիական է նաև օտարերկրյա ներդրումների ներգրավման մեխանիզմների ձևավորման գործընթացում, ինչը հնարավորություն է համաշխարհային տնտեսությանը սերտ ինտեգրման համար: Այս տեսանկյունից կարևորվում է օտարերկրյա ներդրողների համար հարկման առանձնահատկություններ, տարբերակված հարկային արտոնությունների կիրարկում և այլն: Այսպես, «Շահութահարկի մասին» ԱՀ օրենքի 25-րդ հոդվածով նախատեսված հարկվող շահույթը որոշելիս նախորդ 3 տարիների հարկային գործունեությունից ռեզիդենտի վնասը նվազեցվում է: Միևնույն ժամանակ, օրենքի 54-րդ հոդվածի 2-րդ կետով ոչ ռեզիդենտ ընկերությունները տվյալ նվազեցումից օգտվելու իրավունք չունեն: Նշենք նաև, որ օրենքով շահութահարկի կանխավճարների ինստիտուտը ոչ ռեզիդենտ ընկերությունների համար գործում է նրա նախորդ տարվա շահութահարկի գումարը միայն 2 մլն դրամը գերազանցելու դեպքում, ռեզիդենտների համար՝ այդ շեմը 100.0 հազար դրամ է: Մեր կարծիքով դա հավասարակշռում է ռեզիդենտների և ոչ ռեզիդենտների իրավունքների ու պարտականությունների զամբյուղը: Իսկ նախորդ տարիների ոչ ռեզիդենտի հարկային վնասի նվազեցման հնարավորությունը, կարծում ենք, կբարձրացնի երկրի ներդրումային գրավչության մակարդակը և կապահովի մրցակցային հավասար պայմաններ՝ միևնույն ժամանակ համահարթեցնելով համապատասխան օրենսդրական դաշտը ռեզիդենտ ու ոչ ռեզիդենտ ընկերությունների համար:

Եթե նախկինում առաջնային նպատակ էր մեծ շահույթի ստացումը, ապա տնտեսության ներկայիս զարգացումներում կարևորվում են այլ գործոններ: Այսօր արդյունքում շահույթ է ստանում իր գործունեության ընթացքում լավագույն պայմաններ հաշվի առնող ձեռնարկությունը, որը կհամապատասխանեցնի արտադրությունը տեղի ունեցող դինամիկ տատանումներին: Եթե կազմակերպությունները շահույթ են ստանում առանց

[1] *stat-nkr.am*

նորարարությունների, առանց գործարարության կատարելագործման, խոչընդոտում են ճյուղի զարգացումը, նաև՝ տնտեսության հետագա զարգացումը: Այս խնդրի լուծման համար անհրաժեշտ է վերանայել «Շահութահարկի մասին» ԱՀ օրենքով սահմանված ամորտիզացիոն քաղաքականության սկզբունքները՝ օրենսդրությամբ սահմանված ամորտիզացիոն ժամկետները կրճատելու և արագացված ամորտիզացիա իրականացնելու ուղղությամբ: Կարծում ենք, որ այդպիսի մոտեցումը կնպաստի հայրենական տնտեսության արդիականացմանն և վերազինմանը, մրցունակության բարձրացմանը: Կարծում ենք, որ տնտեսության իրական հատվածում, հատկապես ինովացիոն ոլորտում բիզնես ծրագրերի իրականացման ժամանակ առաջին տարիների ընթացքում հարկային արտոնությունների տրամադրումը դարձել է տնտեսության արդիականացման հրամայական պահանջ, իսկ ամորտիզացիոն մասհանումների նոր նորմաները հարկային պարտավորությունների տարաժամկետման և կատարված ներդրումների արագ հետգնման մեծ հնարավորություններ կտան: Արտադրությունում ներդրումների ներգրավումը խթանելու համար անհարաժեշտ է շահութահարկից մասնակի կամ ամբողջությամբ ազատել ընկերության շահույթի այն մասը, որը կներդրվի ինովացիոն տնտեսական ծրագրերում: «Շահութահարկի մասին» ԱՀ օրենքով ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված խորհրդատվական ծառայությունների ծախսերը՝ հաշվետու տարվա համախառն եկամտի՝ ԱՀ կառավարության սահմանած նորմաները չգերազանցող մասի՝ միայն 2 տոկոսը չգերազանցող գումարի չափով են թույլատրվում նվազեցնել: Այս դրույթները չեն կիրառվում տեղեկատվական տեխնոլոգիաների և համակարգչային տեխնիկայի բնագավառում նորամուծությունների ներդրման և ինովացիոն գործունեություն իրականացնող ԱՀ ռեզիդենտ կազմակերպությունների հիմնադիր հանդիսացող ոչ ռեզիդենտ կազմակերպություններից, օտարերկրյա քաղաքացիներից և քաղաքացիություն չունեցող անձանցից ստացված կառավարման ծառայությունների ծախսերի նկատմամբ: Դրանց կիրառումը կխթանի ինովացիոն տնտեսական ծրագրերի ներդրումները: Նշենք, որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի զարգացմանը նպաստելու և ոլորտում նոր աշխատատեղերի ստեղծումը խթանելու նպատակով ընդունվել է «Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի պետական աջակցության մասին» օրենքը և հարկային օրենսդրությունում փոփոխությունների միջոցով 2019թ. սեպտեմբերի 1-ից տեղեկատվական ոլորտում գործունեություն իրականացնող ընկերություններին տրամադրվել են արտոնություններ՝ երկու ուղղություններով: Առաջինը վերաբերում է պետական աջակցության ծրագրերին և ներառում է ներդրումային ծրագրերը, դրամաշնորհներն ու տեխնիկական աջակցությունը, իսկ երկրորդը՝ հարկային արտոնությունների տրամադրումը: Մասնավորապես, ոլորտում գործունեություն իրականացնող կազմակերպությունները մինչև 2029թ. հունվարի 1-ը կազատվեն շահութահարկից, իսկ աշխատավարձից եկամտային հարկը կհաշվարկեն 5 տոկոս դրույքաչափով՝ 20 տոկոսի փոխարեն:

Ամփոփելով կարող ենք ասել, որ Արցախի Հանրապետությունում հարկային ներուժի բարելավման գործընթացում հրատապ խնդիրներից մեկը տնտեսական և ինստիտուցիոնալ բարեփոխումների իրականացումն է, հատկապես սոցիալ-տնտեսական խնդիրների լուծման համատեքստում: Պետք է նշել, որ գործարար միջավայրի գրավչությունը պայմանավորված է ոչ միայն հարկային համակարգով, այլև մակրոտնտեսական այնպիսի ցուցանիշներով, որոնք ուղղակի և անմիջական ազդեցություն են ունենում, օրինակ՝ արտահանման և ներմուծման ծավալների դինամիկայի, տրանսֆերտների, վարկային տոկոսադրույքների, ֆինանսական ռեսուրսների հասանելիության աստիճանի, իրավական

համակարգի, ներդրողների շահերի պաշտպանվածության վրա, որոնք առավել անմիջական ազդեցություն են ունենում գործարար միջավայրի վրա, քան հարկերը[1]:

Չնայած իրականացված հարկային բարեփոխումներին, հարկային ներուժի բարելավման ուղղությամբ դեռևս առկա են որոշակի խնդիրներ: Մասնավորապես.

1. հարկային պարտավորությունների կուտակումը,
2. հարկային համակարգում կիրառվող տեղեկատվական տեխնոլոգիաների շրջանակների ընդլայնման անհրաժեշտությունը:

Հարկայի ներուժի բարելավման համատեքստում շեշտը դրվում է ոչ միայն նոր պարտավորությունների կուտակումներ թույլ չտալուն, այլ նաև առկա պարտավորությունների նվազեցման օրենսդրական մեխանիզմների հետևողական կիրառությանը: Այս ուղղությամբ անհրաժեշտ է՝

1) կուտակված պարտավորությունների դասակարգում ըստ ռիսկայնության՝ բարձր ռիսկային դասակարգված հարկային պարտավորությունների մասով կիրառելով արգելադրման համակարգը, իսկ սնանկության հատկանիշների դեպքում՝ օրենսդրությամբ սահմանված կարգով սնանկության հայցերի ներկայացման գործընթացը: Այս ուղղությամբ կոնկրետ քայլեր արդեն ձեռնարկվել են և 2018 թվականին օրենսդրությամբ հստակեցվել է պարտավորություններ կուտակած հարկ վճարողների դրամարկղի վրա արգելանք կիրառելու գործընթացը:

2) անհուսալի ճանաչված պարտավորությունների կատարման նպատակով անհրաժեշտ զույք կամ եկամուտներ հայտնաբերելու ուղղությամբ միջոցառումների ձեռնարկում: Այս առումով կարևորվում է նաև դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության հետ համագործակցության խորացումը[2]:

Այս միջոցառումները հնարավորություն կտան կարգավորելու իրական հարկային հավաքագրումների և հնարավոր հարկային հավաքագրումների հարաբերակցությունը, որը ենթադրում է հարկային պարտավորությունների կատարման ընթացքի բարելավում, հարկային ներուժի բարձրացման նոր հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Նոր ստեղծված հարկ վճարողներին օժանդակության և սպասարկման ծառայությունների այցելությունների կազմակերպման կանոնակարգ», 2016թ.
2. Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.
3. Романенко Е.В., Особенности развития и взаимодействия малого, среднего и крупного предпринимательства [Текст] / Вестник СибАДИ, 2011, № 3(21), стр. 65-68.
4. Филатова Е.А., Анализ факторов, влияющих на величину налогового потенциала региона, Вестник экономики, 2013, №1, стр. 1-4.
5. www.stat-nkr.am
6. www.tax.nk.am

[1] ***Романенко Е.В***. *Особенности развития и взаимодействия малого, среднего и крупного предпринимательства [Текст] // Вестник СибАДИ., 2011, № 3(21), стр. 65-68.*

[2] *Հարկային բարեփոխումների հայեցակարգ, 2018թ.*

ՀՏԴ 31:336 Տնտեսագիտություն

Կրիստինա Գրիգորյան
Տնտեսագիտության ֆակուլտետի «Ֆինանսներ» 4-րդ կուրսի ուսանողուհի
kristik.grigoryan363@gmail.com
Ղեկավար՝ Շուշանիկ Ասրյան
տ. գ. թ., ԱրՊՀ տնտեսագիտության տեսության և
կառավարման ամբիոնի դոցենտ

ՀԻՄՆԱԿԱՆ ԿԱՊԻՏԱԼԻ ԿՈՒՏԱԿՈՒՄԸ ԵՎ ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՓՈԽԱՌՆՉՈՒԹՅՈՒՆԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *հիմնական կապիտալի կուտակում, ներդրում, ամորտիզացիա, աճի տեմպեր, ինքնաֆինանսավորում, ամորտիզացիոն քաղաքականություն:*

Արցախի Հանրապետության տնտեսական, սոցիալական, ինչպես նաև գիտատեխնիկական զարգացումն, առաջին հերթին կապված է ներդրումային գործունեության հետ: Միանշանակ պարզ է, որ ներդրումների ֆինանսավորման աղբյուրները դրամական միջոցներն են, որոնք կարող են օգտագործվել որպես ինվեստիցիոն ռեսուրսներ: Ներդրումային գործընթացի բնականոն ընթացքը մեծապես կախված է այդ միջոցների անխափան շրջանառությունից:

Հոդվածում դիտարկվել են ԱՀ տնտեսությունում հիմնական կապիտալի կուտակման՝ որպես ներդրումների ֆինանսավորման սեփական աղբյուրի հետ կապված հիմնախնդիրները:

К. Григорян

ВЗАИМНООТНОШЕНИЕ МЕЖДУ НАКОПЛЕНИЕМ ОСНОВНОГО КАПИТАЛА И ИНВЕСТИЦИЯМИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ

Ключевые слова: *Накопление капитала, инвестиции, амортизация, темпы роста, самофинансирование, амортизационная политика.*

Экономическое, социальное и научно-техническое развитие Республики Арцах в первую очередь связано с инвестиционной деятельностью. Очевидно, что источниками финансирования инвестиций являются денежные средства, которые можно использовать в качестве инвестиционных ресурсов. Нормальный ход инвестиционного процесса во многом зависит от бесперебойного притока этих средств.

В статье рассматриваются вопросы, связанные с накоплением основного капитала в Республики Арцах как собственного источника финансирования инвестиций.

Ներդրումները, անշուշտ, տնտեսության զարգացման համար ունեն էական դեր ու նշանակություն, քանի որ գոյություն ունի ուղղակի փոխառնչություն ներդրումների և տնտեսական աճի, զբաղվածության, բնակչության բարեկեցության և բազմաթիվ այլ մակրոտնտեսական բնութագրիչների միջև: Այդ իսկ պատճառով ազգային տնտեսությունները միշտ էլ ձգտում են գտնել ներդրումներ իրականացնելու աղբյուրներ՝ նպատակ ունենալով ավելացնել ներդրումների ծավալը: Երկրները ավելի հաճախ ապավինում են ներդրումների սեփական աղբյուրներին, որոնցից է հիմնական կապիտալի կուտակումը: Հիմնական կապիտալի համախառն կուտակման որոշակի տեմպի ապահովումը թույլ է տալիս շարժվել տնտեսության արդիականացման՝ 21-րդ դարին համահունչ ճանապարհով:

Ներդրումների ֆինանսավորման մեթոդներից է ինքնաֆինանսավորումը, որն օգտագործվում է ոչ մեծ ինվեստիցիոն նախագծերի իրականացման ժամանակ՝ հիմնվելով բացառապես սեփական ռեսուրսների, այսինքն՝ շահույթի, ամորտիզացիոն հատկացումների և ներտնտեսական ռեզերվների վրա:

Ինչպես հայտնի է, ամորտիզացիայի ֆոնդին հատկացվող միջոցներն ազատվում են հարկերից և կարող են օգտագործվել միայն ներդրումների ֆինանսավորման համար: Հատկացված միջոցները, մտնելով ամորտիզացիայի ֆոնդի մեջ, երկար ժամանակ չեն կարող մնալ առանց շարժի, որովհետև այդ կապիտալը վերարտադրական է: Ձեռնարկատիրոջ բնական ձգտումն է այդ կապիտալը շրջանառության մեջ արագ մտցնելը, այսինքն՝ դա ներդնել նոր հիմնական կապիտալի ստեղծման կամ վերակառուցման մեջ: [1]

Դիտարկելով զարգացած երկրների՝ հիմնական կապիտալի կուտակման փորձը՝ կարող ենք միանշանակ պնդել, որ զարգացած երկրներում ամորտիզացիայի հատկացումները գլխավոր աղբյուր են ծառայում ներդրումների ֆինանսավորման համար: Այսպես, օրինակ, Մեծ Բրիտանիայում հիմնական կապիտալի կուտակումը կազմում է ՀՆԱ 16-18%-ը, Գերմանիայում, ԱՄՆ-ում, Շվեդիայում՝ ՀՆԱ 18-20%-ը, Կանադայում և Ճապոնիայում ՀՆԱ-ի 22-24%-ը:

Զարգացող երկրներում ամորտիզացիայի հատկացումները ՀՆԱ-ում ունեն հետևյալ մասնաբաժինները. Արգենտինա՝ ՀՆԱ-ի 24-26%, Հնդկաստան՝ 35-40% , Թայլանդ՝ 26-30%: ՀՀ-ում, որը ևս դասվում է զարգացող երկրների շարքին ՝ 19%-ը,[2] իսկ ԱՀ-ում 17,5%-ը: Այսինքն՝ ՀՀ-ն այդ երկրների շարքում համեմատելի է Գերմանիայի, ԱՄՆ-ի, Շվեդիայի, իսկ ԱՀ-ն Մեծ Բրիտանիայի հետ, թեև ՀՀ-ն և ԱՀ-ն տնտեսական զարգացմամբ էականորեն զիջում են նշված երկրներին:

Մաշվածությունն ակտիվի մաշվածության գումարի պարբերական բաշխումն է նրա օգտակար ծառայության ընթացքում: Մաշվածության գումարն ակտիվի հաշվեկշռային արժեքի և մնացորդային արժեքի տարբերությունն է, որը որոշվում է ակտիվի մնացորդային արժեքը հանելուց հետո միայն:[3]

Ամորտիզացիոն հատկացումները հանդիսանում են ներդրումների ֆինանսավորման սեփական աղբյուրներ, քանի որ այդ հատկացումները իրականացվում են կազմակերպության կողմից ստեղծված արդյունքների հաշվին: Ամորտիզացիոն ֆոնդին հատկացվող միջոցներն ազատվում են հարկերից և, հետևաբար, կարող են օգտագործվել միայն ներդրումների ֆինանսավորման համար:

Պետք է նշենք, որ Արցախի Հանրապետությունում կիրառվում է ամորտիզացիոն հատկացումների հաշվարկման գծային կամ հավասարաչափ հաշվարկի մեթոդը:

Աղյուսակ 1. ԱՀ հիմնական կապիտալի կուտակում,մլն դրամ (2011-2018թթ. ընթացիկ գներով)[4]

Տարեթիվ	Համախառն ներքին արդյունք	Հիմնական կապիտալի կուտակում
2011	135499,0	10422,9

[1] ***Ղուշչյան Հ. Բ.,*** *Մակրոտնտեսական կարգավորում, Երևան, «Տնտեսագետ», 2005, էջ 350:*
[2] http://armstat.am
[3] ***Մարգսյան Ա. Հ.,*** *Հաշվապահական հաշվառում, Երևան, հեղին. Հրատ. 2014թ.:*
[4] http://stat-nkr.am

2012	150016,0	11536,0
2013	168564,0	15323,6
2014	188840,0	18391,8
2015	209346,0	24270,9
2016	229652,0	31646,6
2017	272100,0	49347,3
2018	310252,7	54320,2

ԱՀ-ում հիմնական կապիտալի կուտակման տեմպերի դիտարկումները ցույց են տալիս, որ եթե 2011թվականին հիմնական կապիտալի կուտակումը կազմում էր ընդամենը 10422,9 մլն դրամ, ապա 2017 թվականին այն կազմում է 49347,3 մլն դրամ: Իսկ արդեն 2018 թվականին այն հասնում է 54320.2 մլն դրամի:

Ըստ վերլուծությունների 2011-2018թթ ընթացքում հիմնական կապիտալի ամորտիզացիոն հատկացումների դինամիկան դրական է: Դա վկայում է այն մասին, որ ԱՀ ներդրումների ծավալում աճում է սեփական աղբյուրների հիման վրա իրականացվող ներդրումները:

Գծապատկեր 1. ԱՀ 2011-2018թթ ընթացքում հիմնական կապիտալի ամորտիզացիոն հատկացումների դինամիկան



Հիմք ընդունելով այն հանգամանքը, որ կապիտալ ներդրումների աճը պայմանավորող գործոնները բազմաբնույթ են, իսկ ներդրումների ներգրավման և իրականացման գործընթացները ներառում են ժամանակային մեծ լագ, կարող ենք ենթադրել, որ վերոնշյալ աճը պայմանավորող նախադրյալները ձևավորվել էին ավելի վաղ:

Աճի ամենամեծ տեմպը գրանցվել է 2017 թվականին, երբ հիմնական միջոցների համախառն կուտակման աճի տեմպը կազմել է 35,9%, իսկ այնուհետև այն սկսել է

դանդաղել, և արդեն 2018 թվականի վերջին աճի տեմպը կազմել է ընդամենը 9,2%:

Հիմնական կապիտալի կուտակման աճի բարձր տեմպեր դիտվել են հատկապես 2016 թվականի IV եռամսյակում և 2017 թվականի I եռամսյակում: Սա նշանակում է, որ ձեռնարկատերերը շահագրգռված էին կապիտալը արագ մտցնել շրջանառության մեջ:

Ներդրումների վրա հիմնական կապիտալի կուտակման դերը գնահատելու առումով կարևոր է ՀՆԱ-ում հիմնական կապիտալի կուտակման մասնաբաժնի մեծությունը: Ամորտիզացիայի որպես ներդրումների ֆինանսավորման աղբյուրի դիտարկման ժամանակ անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե երկրում արտադրված ՀՆԱ-ի ո՞ր մասն է հենց բաժին ընկնում այդ հատկացումներին:

Ըստ աղյուսակ 1-ի տվյալների՝ վերջին 8 տարիների ընթացքում հիմնական կապիտալի սպառումն ՀՆԱ-ում անընդհատ աճում է՝ ստեղծելով տնտեսական աճի նախադրյալներ:

2018 թվականին ամորտիզացիոն հատկացումները գերազանցել են 2017 թվականի նույն ցուցանիշը 4972.9 մլն դրամով: Նշենք, որ, ի համեմատ 2016-2017 թվականների (17700,7 մլն դրամ աճ), այս ցուցանիշը 2018 թվականին գրանցել է աճի ավելի դանդաղ տեմպ: Համախառն ներքին արդյունքի և հիմնական կապիտալի կուտակման աճի տեմպերը ավելի պատկերավոր երևում են գծապատկեր 2-ում:

Գծապատկեր 2 ԱՀ համախառն ներքին արդյունքի և հիմնական կապիտալի կուտակման աճի տեմպերը 2011-2018 թթ. (մլն ՀՀ դրամ)



ՀՆԱ հիմնական կապիտալի կուտակում հարաբերակցության դիտարկումները ցույց են տալիս, որ եթե 2011 թվականին հիմնական կապիտալի կուտակումը կազմում էր ՀՆԱ-ի 7,69%-ը կամ 10422.9 մլն դրամ, ապա 2017 թվականին դրա տեսակարար կշիռը ՀՆԱ-ում կազմել է 18,13%, 2018 թվականի տվյալների հիման վրա՝ այն կազմում է համախառն ներքին արդյունքի 17,51 %, կամ՝ գրեթե 1/5 մասը:

Գծապատկեր 3. ԱՀ հիմնական կապիտալի կուտակման տեսակարար կշիռը ՀՆԱ-ում



Ինչպես տեսնում ենք, 2011-2017 թվականների ընթացքում հիմնական կապիտալի կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում գրանցել է աճի միտում, իսկ արդեն 2018 թվականին այն ՀՆԱ-ի կառուցվածքում նվազել է 0,62 տոկոսային կետով: Այսպես. 2011-2012 թթ. հիմնական ֆոնդերի կուտակման համար օգտագործվել է ՀՆԱ 7.7%-ը, 2016թ.՝ 13, 8%-ը, 2017թ.՝ 18,1%-ը, իսկ 2018 թվականին ՝ 17,5%-ը: Դա վկայում է այն մասին, որ ներդրումների սեփական աղբյուրները 2011-2018 ժամանակահատվածում ՀՆԱ կառուցվածքում աճել են 9,8 տոկոսային կետով, և հիմնական կապիտալի կուտակումը դարձել է մեր ներդրումների իրականացման համար որպես կայուն ու բավարար միջոց:

Հասկանալի է, որ տնտեսական աճը և բնակչության բարեկեցությունը անհնար է ապահովել առանց տնտեսության իրական հատվածում կապիտալ ներդրումներ կատարելու: Այնուամենայնիվ ԱՀ տնտեսության զարգացման արդի պայմաններում կարիք կա առավել մեծ ծավալի միջոցների: Դա է պատճառը, որ պետությունը կարող է վերանայել ամորտիզացիոն քաղաքականությունը, ինչը կարող է հանգեցնել ՀՆԱ-ի կառուցվածքում հիմնական կապիտալի կուտակման մասնաբաժնի փոփոխությանը:

Պետք է նաև նշենք, որ ձեռնարկությունները շահագրգռված են ամորտիզացիոն ֆոնդերում ավելացնել հատկացումները: Այդ միջոցները, շահույթի համեմատ, շահավետ է օգտագործել ներդրումների ֆինանսավորման համար, քանի որ դրանք չեն հարկվում:

Աղյուսակ 2 ԱՀ հիմնական կապիտալի կուտակման մասնաբաժինը ՀՆԱ-ում [1]

								%
	2011	**2012**	**2013**	**2014**	**2015**	**2016**	**2017**	**2018**
Հիմնական կապիտալի սպառում	7,7	7,7	9,1	9,7	11,6	13,8	18,1	17,5

[1] *Հաշվարկները կատարվել են ԱՀ ԱՎԾ պաշտոնական տվյալների հիման վրա:*

Ինչպես արդեն տեսանք, չնայած ՀՆԱ մակարդակի աճին զուգընթաց հիմնական կապիտալի կուտակումը ևս աճի միտում է ցուցաբերում, այնուամենայնիվ, վերջին տարվա տվյալները երևան են հանում ՀՆԱ-ում դրա տեսակարար կշռի նվազումը:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ հիմնական կապիտալի կուտակումը ներդրումային գործունեության ակտիվացման և հատկապես ձեռներեցության զարգացման համար նախադրյալներ է ստեղծում, քանի որ այն նպաստում է նոր հիմնական միջոցների գործարկմանը, գործող հիմնական միջոցների ընդլայնմանը, վերակառուցմանն ու վերազինմանը:

Կառավարելով այս գործընթացը՝ պետությունը կարող է խթանել բիզնեսի զարգացումը անհրաժեշտ ուղղություններով, խրախուսել կամ զսպել որոշակի նորարարությունների և ծրագրերի ներդրումը, փոխել մասնավոր բիզնեսի կողմից մատուցվող սոցիալական ծառայությունների ծավալը և այդպիսով պետական մակարդակով լուծել սոցիալ-տնտեսական խնդիրները: Այստեղ հնարավոր է իրատեսական և օրինականորեն համատեղել պետական և մասնավոր շահերը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Սարգսյան Ա. Հ., Հաշվապահական հաշվառում, Երևան, հեղին. հրատարակչություն 2014թ. , 337 էջ:
2. Եղիազարյան Բ.Հ., Եգանյան Ա. Ն., Կապիտալ ներդրումների հասկացությունը և կազմը, Բանբեր Երևանի համալսարանի, 1994թ.,195 էջ:
3. Ղուշչյան Հ. Բ., Մակրոտնտեսական կարգավորում, Երևան, «Տնտեսագետ», 2005թ., 605 էջ:
4. Солодов А. К., 'Амортизация как инструмент социально-экономической политики государства', 2007г. 12 стр.
5. http://armstat.am
6. http://stat-nkr.am

ՀՏԴ 336.5 Տնտեսագիտություն

Անահիտ Խաչատրյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
«Կառավարում» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝տ. գ. թ. դոցենտ Վ. Հարությունյան
Էլեկտրոնային հասցե՝anahit.khachatryan.1998@mail.ru

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ԳՆԱՀԱՏՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *ներդրումներ, ներդրումների գնահատում, օտարերկրյա ներդրումներ, ներդրումների ռազմավարական պլանավորում:*

Ներդրումային նպատակաուղղված ռազմավարության մշակումն ու արդյունավետ իրականացումը, ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, ապահովումը այսօր կարելի է համարել արդյունաբերական ձեռնարկության ընդհանուր տնտեսական քաղաքականության կարևոր ուղղություններից: Սույն աշխատանքում վերլուծվել են Հայաստանի Հանրապետության միջազգային ներդրումային դիրքը, օտարերկրյա ներդրումները 2017-2018 թվականներին՝ ըստ գործունեության տեսակի և ըստ երկրների բաշխվածության, ներդրումային գործընթացներին և ռազմավարությանն առնչվող հիմնախնդիրները, դրանց լուծման հնարավոր ուղիները:

Анаит Хачатрян

ВЫБОР СТРАТЕГИИ ОЦЕНКИ ИНВЕСТИЦИЙ В РА

Ключевые слова: *инвестирование, оценка инвестиций, иностранные инвестиции, стратегическое планирование инвестиций.*

Разработка и эффективная реализация целенаправленной инвестиционной стратегии, формирование и обеспечение благоприятной инвестиционной и деловой среды сегодня можно считать важными направлениями общей экономической политики промышленного предприятия. В этой работе были проанализированы международные инвестиционные позиции Республики Армения, иностранные инвестиции в 2017-2018 гг. по типу деятельности и по распределению стран, проблемы, связанные с инвестиционными процессами и стратегией, возможные пути их решения

Ներդրումների գնահատման ռազմավարական պլանավորումը կառավարչական որոշումների նախապատրաստման գործընթաց է՝ հիմնված մուտքային տեղեկատվության մշակման, նպատակների ընտրության և դրանց գիտականորեն հիմնավորման, նպատակների ապահովման միջոցների սահմանման, ինչպես նաև՝ այլընտրանքային տարբերակների համեմատական վերլուծության և սպասվող իրավիճակին առավել համահունչ և ընդունելի որոշման կայացման վրա:

Ներդրումների գնահատման ռազմավարական պլանավորումը ենթադրում է.

- ներդրումային գործընթացների առկա միտումների քանակական և որակական վերլուծություն, առկա խնդիրների վերհանում,
- երկրի տնտեսության ոլորտների հետագա զարգացման այլընտրանքային կանխատեսում՝ որպես կապիտալ ներդրումների հնարավոր ուղղություններ,
- տնտեսության կոնկրետ ոլորտներում ներդրումների հնարավորությունների և դրանց արդյունքների գնահատում:

Ներդրումների ռազմավարական պլանավորումը նախևառաջ պետք է հիմնվի նպատակայնության և առաջնահերթության սկզբունքների պահպանման վրա, որոնք պահանջում են հասարակական պահանջմունքների հիերարխիայի կառուցում և պետության ներդրումային քաղաքականության առաջնահերթ ոլորտների ձևավորում:

Բացի վերագրյալից՝ որպես պետության կողմից ներդրումային գործունեության պլանավորման հիմնական սկզբունքներ, կարող են ձևակերպվել նաև հետևյալները.

- գիտական սկզբունք
- օպտիմալության սկզբունք
- սոցիալական ուղղվածության սկզբունք
- ներդրումային ցուցանիշների հավասարակշռվածության սկզբունք
- պետական ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացման սկզբունք
- անընդհատության սկզբունք
- առաջնահերթությունների սկզբունք
- այլընտրանքային պլանի առկայության սկզբունք

Պետության կողմից ներդրումային ռազմավարական պլանավորումը պետք է իրականացվի ինչպես տնտեսության մակրոմակարդակում, այնպես էլ տնտեսության առանձին ճյուղերի և տարածաշրջանների մեզոմակարդակով: Մակրոմակարդակում իրական ներդրումների կանխատեսումը և պլանավորումը հիմնված է երկրի սոցիալ-տնտեսական զարգացման ռազմավարության, տնտեսության կառուցվածքային քաղաքականության վրա, իսկ մեզոմակարդակում՝ տնտեսության ճյուղերի և տարածաշրջանների ռազմավարական զարգացման ծրագրերի մշակման ու իրականացման վրա [1] :

Երկրի միջազգային ներդրումային դիրքը տվյալ երկրի ֆինանսական ակտիվների ու ֆինանսական պարտավորությունների տարբերությունն է: Ֆինանսական ակտիվներն արտերկրում կատարված ներդրումներն են, իսկ ֆինանսական պարտավորությունները՝ դրանց մուտքը: Եթե ֆինանսական ակտիվների և ֆինանսական պարտավորությանների տարբերությունը դրական է, ապա տվյալ երկիրը ներդրումներ արտահանող երկիր է, հակառակ դեպքում՝ ներդրումներ ընդունող: Ֆինանսական ակտիվների և պարտավորությունների կառուցվածքում առանձնացվում են ուղղակի ներդրումները, պորտֆելային ներդրումները, այլ ներդրումները: ՀՀ միջազգային ներդրումային դիրքը 2014-2018 թվականների կտրվածքով ներկայացնենք հետևյալ աղյուսակում՝

Աղյուսակ 1. ՀՀ միջազգային ներդրումային դիրքը 2014-2018 թթ. (մլն ԱՄՆ դոլար)

(կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ www.armstat.am կայքի տվյալների)

	2014	2015	2016	2017	2018
Զուտ ներդրումային դիրքը	**-7 780,83**	**-7 931,04**	**-8 372,10**	**-8 828,07**	**-9 455,74**
Ակտիվներ	4 008,02	4 403,53	5 206,05	5 172,27	5 208,65
Ուղղակի ներդրումներ արտերկրեր	310,77	495,85	567,99	590,29	605,56

Պորտֆելային ներդրումներ	22,08	41,85	65,06	95,10	109,58
Այլ ներդրումներ	2 181,55	2 089,07	2 363,11	2 171,21	2 243,34
Պարտավորություններ	11 788,85	12 334,58	13 578,14	14 000,34	14 664,39
Ուղղակի ներդրումներ արտերկրից	4 213,04	4 338,07	4 634,84	4 751,52	5 511,02
Պորտֆելային ներդրումներ	691,44	928,38	1 068,15	1 064,84	985,49
Այլ ներդրումներ	6 881,11	7 065,92	7 869,96	8 182,05	8 167,21

ՀՀ զուտ ներդրումային դիրքը եղել է բացասական մեծության, ինչը նշանակում է, որ մեր հանրապետությունը բնորոշվում է որպես ներդրումներ ընդունող երկիր: Այսպես, դիտարկված ժամանակահատվածում զուտ ներդրումային դիրքը բացարձակ մեծությամբ ավելացել է 1 674,91 մլն ԱՄՆ դոլարով, իսկ ակտիվները և պարտավորությունները՝ համապատասխանաբար՝ 1.200,63 և 2.875,54 մլն ԱՄՆ դոլարով:

Այժմ անդրադառնանք արտերկրից ուղղակի ներդրումների դինամիկային Հայաստանում:

Գծապատկեր 1. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալն ըստ գործունեության տեսակների (մլն դրամ)

(կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ www.armstat.am կայքի տվյալների)



Ինչպես տեսնում ենք, զգալի փոփոխություններ են գրանցվել հանքագործության ու էլեկտրականության ոլորտներում: Հանքագործության ոլորտում գրանցվել է ներդրումների նվազում 38 017 մլն դրամի չափով, իսկ էլեկտրականության ոլորտում, հակառակը, ավելացել է 54 244 մլն դրամի չափով:

Ստորև ներկայացվում են իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների հոսքերն՝ ըստ երկրների, 2017-2018թթ. դրությամբ:

Գծապատկեր 2. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ներդրումների զուտ հոսքերի ծավալներն ըստ երկրների (մլն դրամ)

(կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ www.armstat.am կայքի տվյալների)



Իսկ այստեղ զգալի փոխվել են Ջերսիից և Ռուսաստանից եկող ներդրումները: Ջերսիից եկող ներդրումները նվազել են 38 259 մլն դրամի չափով, իսկ Ռուսաստանից եկող ներդրումները, հակառակը, ավելացել են 52 377 մլն դրամի չափով [2] :

Ստացված տվյալների միջև զուգահեռներ տանելով կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները՝

- հանքագործական արդյունաբերության ոլորտում ներդրումների նվազումը հիմնականում կապված է Ամուլսարի ծրագրի փաստացի դադարեցման հետ, որն էլ զգալիորեն նվազեցրել է Ջերսիից եկող ներդրումները,
- հեռահաղորդակցման ոլորտում զգալիորեն ներդրումների մեծ հոսքեր են եկել Լիբանանից,
- Ռուսաստանի Դաշնությունից ներդրումային հոսքերը ուղղվել են հիմնականում էլեկտրականության և գազի մատակարարման ոլորտին:

Հաշվարկենք օտարերկրյա ներդրումների հոսքերը նաև 2018 թվականի առաջին և երկրորդ եռամսյակներում և համեմատենք դրանք նախորդ տարվա նույն եռամսյակների հետ:

Գծապատկեր 3. Օտարերկրյա ներդրումների հոսքերը (մլն ԱՄՆ դոլար)

(կազմվել է հեղինակի կողմից)



Ինչպես տեսնում եք, 2018 թվականի երկրորդ եռամսյակում կատարվել է 525.5 մլն դոլարի ընդամենը ներդրում, որը 2017 թվականի երկրորդ եռամսյակի ցուցանիշից բարձր է 18 մլն դոլարով կամ 3.5%-ով: Առաջին եռամսյակում ընդամենը ներդրումների աճն ավելի մեծ էր՝ 116.4 մլն դոլար կամ 22.5%: Ուղղակի ներդրումների գծով ստացումները, հակառակը, նվազել են: Ընդ որում, եթե առաջին եռամսյակում նվազումը մեծ չէր՝ 8 մլն դոլար կամ 4.1 մլն դոլար, ապա երկրորդ եռամսյակում մտահոգիչ ցուցանիշ է: Ուղղակի ներդրումների ստացումները երկրորդ եռամսյակում նվազել են 58.3 մլն դոլարով կամ 43.5%-ով [3] :

Ստացվածից կարող ենք ենթադրել, որ Հայաստանի Հանրապետությունում ներդրումային գործընթացներին առնչվող չլուծված խնդիրները կարելի է բաժանել երկու խմբի՝ առանցքային և ուղեկից: Առանցքային խնդիրների խմբին են դասվում.

- օտարերկրյա ներդրումների կողմնորոշվածությունը դեպի հումքային ոլորտներ,
- ներդրումային անբարենպաստ միջավայրը թե օտարերկրյա և թե հայրենական ներդրողների համար
- արժեթղթերի շուկայի հարաբերական չզարգացվածությունը, ինչը դժվարացնում է ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա պորտֆելային ներդրումների ներգրավումն ու օգտագործումը,
- օտարերկյա ներդրողների ներգրավման և դրա հնարավորության տեսանկյունից տնտեսության ճյուղերի և արտադրությունների դասակարգված չլինելը:

Ուղեկից խնդիրների խմբին են դասվում.

- կորպորատիվ կառավարման համակարգի ոչ բավարար զարգացած լինելը,
- ներդրումային նախագծերի ընտրության հստակ չափորոշիչների բացակայությունը,
- մենեջմենթի և մարկետինգի ժամանակակից մեթոդներին տիրապետող անձնակազմի պակասը, ներդրումային միջավայրի գնահատման սեփական համակարգի բացակայությունը հատկապես առանձին տարածաշրջաններում, ներդրումային միջավայրի մշտադիտարկման հայրենական համակարգի բացակայությունը:

Օտարերկրյա ներդրումների շուկայում Հայաստանը մրցակցում է բազմաթիվ երկրների հետ, որոնց մի մասի տնտեսություններն ավելի գրավիչ են ներդրողների համար: Ներկայումս, թեև կառավարության կողմից վերջին տարիներին կատարված մի շարք բարեփոխումների, որոնց արդյունքում արձանագրվեցին որոշակի դրական տեղաշարժեր, հանրապետության ներդրումային գործընթացը բարձր արդյունավետություն չունի և ներդրումային միջավայրը դեռևս անկայուն է՝ ինչպես տեղական, այնպես էլ օտարերկրյա

ներդրողների տեսանկյունից [4] :

2017 թվականին Հայաստանում իրականացվել են ընդհանուր՝ 856,5 մլն դոլար ծավալով ներդրումային ծրագրեր, որոնք իրականացվել են գերատեսչությունների համակարգման ոլորտներում: Նույն տարում Հայաստանի մարզերում իրականացված ներդրումային ծրագրերը կազմել են 170,9 մլն դոլար, որոնք ներառված չեն վերոնշյալ 856,5 մլն դոլարի ծրագրերում [5] : Վերը նշված ներդրումներն ըստ ֆինանսավորման աղբյուրների բաշխված են եղել հետևյալ կերպ.

Գծապատկեր 4. 2017 թվականի ներդրումներն ըստ ֆինանսավորման աղբյուրների (կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ www.cba.am կայքի տվյալների)



Ինչպես երևում է գծապատկերից, 2017 թվականին Հայաստանում ներդրումների հիմնական մասը՝ 68%-ը, Հայաստանի Հանրապետությունում իրականացվել է մասնավոր աղբյուրների հաշվին: Մեծությամբ ներդրումների հաջորդ աղբյուրներն են վարկային միջոցները՝ 19%, և դրամաշնորհային ծրագրերը՝ 6%: Պետական բյուջեի միջոցների հաշվին իրականացված ներդրումները կազմել են ընդհանուր ներդրումների ընդամենը 4%-ը:

Հայաստանում ներդրումների կառուցվածքը պայմանավորված է նաև ՀՀ ֆինանսական շուկայի առանձնահատկություններով, որում գերակշիռ դերը կատարում են առևտրային բանկերը: 2016թ-ին ֆինանսական համակարգում ակտիվների 88,4%-ը պատկանում էր բանկերին, վարկային կազմակերպությունների բաժինը 8,7% էր, իսկ ներդրումային ընկերությունների ու այլ ֆինանսական կազմակերպությունների բաժինը 0,90% տոկոս: Նշենք որ այս պատկերը հիմնականում նույնն է եղել նախորդ ժամանակաշրջաններում: Այս ցուցանիշները թույլ են տալիս եզրակացնել տնտեսության ֆինանսավորման գործում բանկերի կարևոր դերի մասին [6] :

Ներդրումների ֆինանսավորման աղբյուրների օպտիմալ կառուցվածքի սահմանման համար անհրաժեշտ է ներդրումների գնահատման ռազմավարական պլանավորում:

Պետք է նշել, որ Հայաստանում ներդրումային գործընթացի վրա բացասաբար է անդրադառնում այն հանգամանքը, որ հանրապետությունում դեռևս ձևավորված չէ ներդրումների ռազմավարական պլանավորման համակարգ: Ավելին, Հայաստանում տնտեսության իրական ակտիվներում կատարված ներդրումների ծավալների, կառուցվածքի և ուղղությունների վերաբերյալ ամբողջական հետազոտություն ՀՀ ազգային վիճակագրական ծառայության կողմից իրականացվել է միայն 2001 թվականի համար, իսկ հետագա ժամանակահատվածում նման հետազոտություններ չեն իրականացվել, բացառությամբ 2017 թվականին Հայաստանում իրականացված ներդրումների վերաբերյալ ՀՀ կառավարության հաշվետվության, որի մեջ ընդամենը արտացոլված է ներդրումների ամփոփ կառուցվածքը [2] :

Ներդրումային միջավայրի բարելավման ուղղությամբ որպես միակ ռազմավարական նշանակության փաստաթուղթ կարելի է համարել ՀՀ կառավարության կողմից 2015 թվականի հոկտեմբերի 19-ին ընդունված Ներդրումային քաղաքականության հայեցակարգը: Վերջինիս գլխավոր նպատակն է՝ բնութագրել ՀՀ ներդրումային միջավայրը, սահմանել ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակները և նախանշել դրանց իրականացման համար անհրաժեշտ սկզբունքները, ուղղություններն ու միջոցառումները: Ըստ նշված փաստաթղթի՝ Հայաստանում ներդրումային ոլորտում պետական քաղաքականության հիմնական խնդիրներն են՝ ներդրումային միջավայրի բարելավումը, օրենսդրական դաշտի կատարելագործումը և ՀՀ տնտեսության մեջ ներդրումների, այդ թվում՝ ՕՈՒՆ խթանումը, հիմնանպատակը՝ ներդրումային և գործարար բարենպաստ միջավայրի ձևավորումը, կարգավորող միջավայրի թափանցիկության բարձրացումը, երկրի մրցակցային առավելությունների բացահայտումը, Հայաստանում իրականացվող ներդրումների ծավալների մեծացումը, շուկայական ենթակառուցվածքի զարգացումը, որակյալ և բարձր վարձատրվող աշխատատեղերի ստեղծումը, մարդկային կապիտալի զարգացումը և այդ բոլորի հիման վրա՝ տնտեսական կայուն աճի և բնակչության բարեկեցության ապահովումը, ինչը համահունչ է ՀՀ 2014-25թթ. հեռանկարային զարգացման ռազմավարական ծրագրի գերակայություններին [7] :

Այս ամենը վկայում է այն մասին, որ Հայաստանում դեռևս ձևավորված չէ ներդրումների ռազմավարական պլանավորման համակարգ, ինչը բացասաբար է անդրադառնում ներդրումային գործընթացների ակտիվացման և ռիսկերի չեզոքացման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Черныш Е.А., Молчанова Н.П. и др., Прогнозирование и планирование в условиях рынка, 1999, стр. 110.
2. www.armstat.am
3. www.aysor.am
4. Մենեջմենթ , Յու. Սուվարյանի ընդհանուր խմբագրությամբ, Երևան, 2009 թ.:
5. ՀՀ կառավարության հաշվետվություն 2017 թ. Հայաստանում իրականացված ներդրումային ծրագրերի կատարողականի վերաբերյալ:
6. www.cba.am
7. www.gov.am

ՀՏԴ 332.2 Տնտեսագիտություն

Վահագն Խաչատրյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
«Ֆինանսներ» բաժին, 3-րդ կուրս
Մանուշակ Մկրտչյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ,
Ֆինանսահաշվային ամբիոնի դոցենտ, ս.գ.թ.

ՀՀ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՊԱՀՈՎԱԳՐԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ՀԻՄՆԱՀԱՐՑԵՐԸ

Բանալի բառեր՝ *ապահովագրություն, ապահովագրական համակարգ, գյուղատնտեսության ապահովագրություն, ռիսկերի ապահովագրությունն, գյուղատնտեսություն:*

Գյուղատնտեսության մի շարք առանձնահատկություններ, այդ թվում ռիսկի բարձր աստիճանը, պայմանավորված են նրանով, որ այս արտադրությունն ուղղակիորեն կախված է բնական գործոնների ազդեցությունից: Իսկ գյուղատնտեսության ոլորտի տնտեսական սուբյեկտներն էլ կրում են զգալի կորուստներ բնական տարատեսակ աղետների և անկանխատեսելի պատահարների հետևանքով : Կորուստները մեղմելու համար առանձնահատուկ նշանակություն ունի ռիսկերի կանխարգելմանն ուղղված միջոցառումների իրականացումը և այդ ռիսկերի համար ապահովագրական համակարգի ներդրումը:

Ваагн Хачатрян

ВНЕДРЕНИЕ СТРАХОВОЙ СИСТЕМЫ В *СФЕРУ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА* РА (ОСНОВНЫЕ ВОПРОСЫ)

Ключевые слова: *страхование, система страхования, аграрное страхование, страхование рисков, сельское хозяйство.*

Ряд особенностей сельского хозяйства, в том числе высокая степень риска, обусловлены тем, что это производство непосредственно зависит от влияния природных факторов, а хозяйствующие в сельском хозяйстве субъекты несут значительные потери по причине различных природных бедствий и непредвиденных несчастных случаев.

Для смягчения убытков особо важное значение имеет осуществление мероприятий по предотвращению рисков и внедрение системы страхования этих рисков.

21-րդ դարում ժամանակակից ապահովագրական համակարգը զարգացած երկրներում նպաստում է հասարակության սոցիալ-տնտեսական զարգացմանը և համարվում է տնտեսության ռազմավարական կարևորագույն հատվածներից մեկը: Այն ընդգրկում է տնտեսության և հասարակական կյանքի գրեթե բոլոր ոլորտները և դրանցում առկա ռիսկերի մեծամասնությունը: Ապահովագրությունը մարդու կյանքի ընթացքում նրա համար ապահովում է պաշտպանվածություն գույքի ոչնչացումից կամ վնասումից, եկամուտների կորուստների փոխհատուցումից, կյանքին և առողջությանը վերաբերող ռիսկերից և այլն: Ապահովագրության դերը ժամանակակից տնտեսության մեջ կարևորվում է բնակչության ֆինանսական և սոցիալական պաշտպանվածության ապահովման, գործարար գործունեության խթանման, մակրո- և միկրոմակարդակներում երկրի ֆինանսական կայունության ապահովման, տնտեսության մեջ որպես նեղրումների աղբյուր հանդես գալու, պետությանը հավելյալ ծախսերից ազատման և այլնի մեջ:

Ըստ ՀՀ ՔՕ-ի՝

1. Ապահովագրությունն իրականացվում է ապահովագրողի հետ ապահովադրի կնքած ապահովագրության պայմանագրի և (կամ) ապահովագրական վկայագրով:

2. Հայաստանի Հանրապետությունում կարող է իրականացվել կամավոր և պարտադիր ապահովագրություն: Կամավոր ապահովագրությունն ապահովադրի կամավոր ցանկությամբ ապահովագրողի հետ ապահովագրության պայմանագիր կնքելու միջոցով իրականացվող ապահովագրությունն է: Պարտադիր ապահովագրությունը ապահովադրի կամքից անկախ ապահովագրողի հետ օրենքի ուժով ծագող հարաբերություններն են, որի տեսակները, պայմաններն ու իրականացման կարգը կարգավորվում են սույն օրենսգրքով, «Ապահովագրության և ապահովագրական գործունեության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և պարտադիր ապահովագրության մասին համապատասխան օրենքներով:[1]

Ըստ «Ապահովագրության մասին» ՀՀ օրենքի՝ «**ապահովագրության պայմանագիրը** ապահովագրողի և ապահովադրի միջև առաջացող հարաբերությունները կարգավորող և նրանց միջև կնքվող գրավոր համաձայնություն է, ըստ որի սահմանված ժամկետում ապահովադրի կողմից վճարվող ապահովագրավճարների դիմաց ապահովագրողը պարտավորվում է ապահովագրական պատահարի առաջացման դեպքում կատարել ապահովագրական հատուցում կամ վճարել ապահովագրական գումար ապահովադրին կամ այն անձին, որի օգտին կնքվել է պայմանագիրը»:[2]

ՀՀ-ում կնքվող ապահովագրության պայմանագրի և վկայագրի պարտադիր ու էական պայմաններն են՝ ապահովագրության օբյեկտը, ապահովագրական պատահարը (պատահարները), ապահովագրական գումարի չափը, ապահովագրավճարի չափը, վճարելու ժամկետները և կարգը, ապահովագրավճարի՝ պայմանագրում սահմանված ժամկետներում և կարգով չվճարելու հետևանքները, ապահովագրական հատուցման կարգը, վնասի գնահատման կարգը, ապահովագրական պատահարի տեղի ունենալու մասին ապահովադրի և (կամ) շահառուի կողմից ապահովագրողին տեղեկացնելու կարգը և ժամկետները:[3] Ապահովագրական պայմանագրում պետք է նշվեն նաև ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրական պայմանագրի փոփոխման, լրացման և վաղաժամկետ լուծարման կարգը, նշում այն մասին, որ ապահովադիրը ծանոթացել է ապահովագրության վկայագրի պայմաններին, ապահովագրական պայմանագիրը կնքելու տարին, ամիսը, ամսաթիվը:[4]

Ապահովագրության միջազգային պրակտիկայում ապահովագրական պայմանագրերին անհրաժեշտ պայմաններն են՝ իրադարձությունները, որոտց տեղի ունենալու դեպքում ապահովագրողը պարտավոր է վճարել ապահովագրական հատուցում, այն տարածքը, որտեղ գործելու է ապահովագրական պայմանագիրը, ապահովագրության օբյեկտը, ապահովագրական գումարը, ապահովագրության հատուցման կարգը և ժամկետները, ապահովագրության պայմանագրի գործողության ժամկետը, ապահովագրողի պատասխանատվության ժամկետը իր պարտավորությունների հանդեպ, պայմանագրի պայմանները փոփոխելու կարգը, պայմանագրի մասնակիցների կողմից պայմանագրի կետերի խախտման իրավական հետևանքները և վեճերի լուծման կարգը:

ՌԴ օրենսդրությունը ապահովագրական պայմանագրերի պայմանների մասով մի քիչ այլ է, քանի որ ՌԴ ՔՕ-ը սահմանում է ապահովագրական պայմանագրերի 4 հիմնական պայման: Ըստ ՌԴ ՔՕ-ի 942-րդ հոդվածի՝ ապահովագրողի և ապահովագրվողի միջև

---

[1] *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998 թ-ի մայիսի 5-ին, հոդված 983, 1-ին և 2-րդ կետեր:*

[2] *«Ապահովագրության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի հունիսի 11-ին, հոդված 3:*

[3] *https://sme.acba.am/hy/insurance-contract-and-certificate-conditions.*

[4] *ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, հոդված 998, կետ 2:*

ապահովագրության պայմանագիր կնքելիս պետք է համաձայնություն ձեռք բերվի՝

1. ապահովավագրության օբյեկտ հանդիսացող գույքի մասին,
2. այն ապահովագրական պատահարը, որի տեղի ունենալու դեպքում ապահովագրողի մոտ առաջանում են պարտավորություններ ապահովագրված անձի հանդեպ,
3. ապահովագրական գումարի չափի մասին,
4. ապահովագրական պայմանագրի գործողության ժամկետի մասին:[1]

Այսօր աշխարհում ստեղծվել է մի իրավիճակ, երբ տարեցտարի եղանակային անբարենպաստ պայմանների պատճառով ավելի ու ավելի են աճում գյուղատնտեսության ոլորտում նյութական վնասների և կորուստների չափերը: Կապված վերջին տարիներին նկատվող կլիմայական փոփոխությունների հետ՝ գյուղատնտեսությունն անընդհատ ենթարկվում է բնական, տարերային աղետների և դասվում է բարձր ռիսկայնություն ունեցող տնտեսական գործունեության ոլորտների շարքին: Միայն անցած տասնամյակում աշխարհում տեղի ունեցող բնական աղետների քանակը մի քանի անգամ աճել է՝ պատճառելով միլիոնավոր դոլարների վնաս թե՛ գյուղատնտեսներին , թե՛ պետություններին: Վնասի հիմնական մասը ստիպված կրում են գյուղատնտեսները, քանի որ պետական աջակցությունը շատ քիչ է լինում, որպեսզի ամբողջությամբ ծածկի վնասը: Գյուղատնտեսների կրած կորուստները և դրանց փոխհատուցման համար բյուջեից կատարվող ծախսերը շատ ավելի քիչ կլինեն, եթե երկրում գործի գյուղատնտեսական ապահովագրության գործուն համակարգ: Նման համակարգերը կարող են ապահովել գյուղատնտեսների և պետության ավելի մեծ ֆինանսական կայունություն անցանկալի եղանակային ռիսկերից:

Քանի որ ՀՀ-ում գյուղատնտեսությունը հայտարարված է տնտեսության գերակա ոլորտ, այդ պատճառով էլ ՀՀ գյուղի և գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարական փաստաթղթերում բազմիցս նշվել են գյուղատնտեսությունում ռիսկերի գնահատման և կառավարման արդյունավետության բարձրացման մասին, իսկ 2017-2022թթ. ՀՀ Կառավարության ծրագրով նախատեսվել է 2018-2020 թ-ի ընթացքում պետական աջակցությամբ իրականացնել գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական համակարգի ներդրման փորձնական ծրագիր:[2]

Ժամանակի ընթացքում շատ երկրներ մշակել և ներդրել են տարբեր տեսակի գյուղատնտեսական ապահովագրության համակարգեր, քանի որ ի տարբերություն գյուղատնտեսական ռիսկերի կառավարման այլ մեթոդների, գյուղատնտեսական ապահովագրությունը համարվում է ամենաարդյունավետ գործիքներից մեկը: Այսօրվա դրությամբ ագրոապահովագրության համաշխարհային պրակտիկայում կարելի է առանձնացնել պետական և մասնավոր-պետական աջակցությամբ գործող 5 ապահովագրական համակարգեր, որոնք իրենց առանձնահատկություններով տարբերվում են իրարից: Զարգացած երկրներում հիմնականում գյուղատնտեսական բերքը ապահովագրվում է միայն կարկուտից, սակայն որոշ պետություններում գործում են բերքի բազմառիսկային ապահովագրական համակարգեր, որոնք տարածվում են գյուղատնտեսական կենդանիների վրա: Այն երկրներում, որտեղ չի գործում գյուղատնտեսական ապահովագրություն, վնասները փոխհատուցվում են պետբյուջեից:[3]

ԱՄՆ–ում առկա է պետության և մասնավոր հատվածի միջև մաքսիմալ արդյունավետ

---

[1] *Гражданский кодекс РФ, Часть вторая, Раздел IV . Отдельные виды обязательвств (ст.ст. 454 - 1109), Глава 48. Страхование (ст.ст. 927 - 970), Статья 942.*

[2] *ՀՀ կառավարության ծրագիր, 2017-2022թթ.:*

[3] *agroinsurance.com*

համագործակցություն: Մշակաբույսերի ապահովագրման համակարգում գործում է Ֆեդերալ կոոպերացիան, որը սահմանում է ապահովագրավճարների դրույքաչափերը, սուբսիդիաների չափը և սահմանում է ապահովագրական պրոդուկտները: Վերջինիս գործունեությունը վերահսկում է ԱՄՆ գյուղնախարարությանն առընթեր Ռիսկերի կառավարման գործակալությունը: Ֆեդերալ ապահովագրումն իրագործվում է մասնավոր ապահովագրական կազմակերպությունների միջոցով, որոնք կրում են ամբողջ պատասխանատվությունը ապահովագրվածների առջև և երաշխավորում են ապահովագրվողներին ապահովագրավճարների վերադաձը: Վերջիններս ստանում են սուբսիդիաներ, որոնց միջին մակարդակը կազմում է ապահովագրավճարի գումարի 50%-ը և ապահովագրության ծածկման գումարի 70%-ը: Իսրայելում գյուղատնտեսության արտադրությունն ապահովագրված է 100%-ով: Ձևավորվել է բնական աղետների պաշտպանության պետական ֆոնդ, որը սուբսիդավորում է գյուղատնտեսական բոլոր մշակաբույսերի և անասունների ապահովագրությունը: Իսպանիայում 1978 թ. ստեղծվել է գյուղապահովագրության ազգային պետական ծրագիր, որը կառավարվում էր պետական կազմակերպության կողմից: Վերջինս ստեղծում է գյուղատնտեսական ապահովագրական պրոդուկտներ, որոնց համար էլ պետությունը սահմանում է սուբսիդավորման չափեր (կազմում է միջինում շուրջ կեսը): Արդյունքում, այս երկրում ապահովագրված է ֆերմերների ավելի քան 70%-ը: Թուրքական գյուղատնտեսական ապահովագրության մոդելը համարվում է աշխարհում լավագույններից: 2005 թ. երկրում ընդունվել է գյուղատնտեսության ապահովագրության մասին օրենք, որով ստեղծվել է Ագրարային ապահովագրական կազմակերպություն, որն ապահովագրում է ֆերմերներին և ստանում է ապահովագրավճարների շուրջ կեսը պետական սուբսիդիաների ձևով: Կարծում ենք՝ վերը բերված մոդելներից յուրաքանչյուրը ապացուցել է իր գոյության արդարացվածությունը: Մոդելների այս տեսակները թույլ են տալիս մյուս երկրներին ճիշտ վերլուծության և ներդրման միջոցով ցանկացած երկրում մաքսիմալ արդյունավետ ագրոապահովագրություն ձևավորել ու զարգացնել:[1]

Ներկայացնենք գյուղատնտեսական ապահովագրության առանձնահատկությունները ՀՀ-ում: Հայաստանի բոլոր մարզերը գտնվում են բնական աղետների միջին կամ բարձր ռիսկային գոտում: Համաշխարհային բանկը Հայաստանը դասում է աշխարհի 60 ամենաաղետավտանգ երկրների շարքում: Աշխարհում հայտնի բնական վտանգներից Հայաստանին բնորոշ են շուրջ 110-ը: Պետք է նշել, որ այդ 110 բնական վտանգներից հանրապետությանն առավել հաճախ սպառնում են շուրջ 10 տեսակը, որոնց ազդեցությունը կրում է աղետալի բնույթ: Համաձայն ՀՀ ԱԻՆ փրկարարական ծառայության տվյալների՝ հանրապետության տարածքը ենթակա է՝

- 0,5%՝ փլուզումների, քարաթափումների,
- 4,1%՝ սողանքների,
- 12% ՝ ցրտահարությունների,
- 15% ՝ երաշտի,
- 17%՝ կարկտահարման,
- 30%՝ սելավների և հեղեղումների,
- 100% ուժեղ երկրաշարժերի և այլն:

Հանրապետության հողատարածքների 80%-ից ավելին ենթակա է էրոզիայի, աղակալման կամ ալկալիացման, գերխոնավության, ջրակալման վտանգների

[1] ***Անտոնյան Ք. Գյոլչանյան Շ. «****ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունները», Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 4-րդ գիտաժողովի նյութեր – Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2016 – 288էջ, էջ 17-18:*

ազդեցության:[1] Լեռնային երկիր լինելով՝ Հայաստանը ունի երաշտների և ջրային ռեսուրսների անհամաչափ բաշխվածություն: Ենթարկվելով էրոզիայի և տարերային աղետների՝ երկիրն առավել զգայուն է կլիմայական անբարենպաստ փոփոխությունների նկատմամբ՝ խոցելի դարձնելով գյուղական բնակչության ապրուստի միջոցները: Իսկ գյուղատնտեսության ոլորտը Հայաստանի համար չափազանց կարևոր նշանակություն ունի: Այն ապահովում է գյուղական վայրերում ապրուստի միջոցների, պարենային ապահովության, գյուղերի զարգացման և արտահանման զգալի մասը:

Գյուղատնտեսության ապահովագրության պիլոտային ծրագրի ներդրման մասին Հայաստանում խոսվում է 2013 թ.-ից, սակայն ըստ ԿԲ փոխնախագահ Ն. Երիցյանի՝ Հայաստանում գյուղատնտեսական ռիսկերի պարտադիր ապահովագրության ներդրումն առայժմ տնտեսապես հիմնավորված չէ, քանի որ Հայաստանի վիճակագրությունը ցույց է տալիս, որ գյուղացիները գործնականում վճարելու են նույնքան, որքան և ստանում են որպես փոխհատուցում, ինչը ռացիոնալ չէ ծախսերի կառավարման տեսանկյունից: Առավել ևս, կամավոր այդ մեխանիզմը չի գործի, քանի որ մինչև մենատնտեսները կոնկրետ ռիսկեր չունենան, չեն մտածի ապահովագրության համակարգին մասնակցելու մասին:[2]

Գյուղատնտեսական ապահովագրության դեպքում կարևորվում է մարդկային գործոնը , այսինքն՝ գյուղատնտեսությամբ զբաղվողների մասնագիտական գիտելիքները խիստ ազդեցություն ունեն վնասների մեծության և դրանց հաշվարկի վերաբերյալ: Նման անձինք պարտավոր են բավականաչափ տեղեկեցված լինել մեր երկրի կլիմայական առաձնահատկություններից և կանխարգելիչ միջոցառումների: Հայաստանում գոյություն ունի ապահովագրման պոտենցիալ շուկա, սակայն այն դեռևս լայն պահանջարկ չի վայելում գյուղացիական տնտեսությունների կողմից, քանի որ գյուղացիական տնտեսությունների գերակշռող մասը գյուղատնտեսական մթերքներ արտադրողներ են: Ուստի ագրարային ոլորտի ապահովագրության առաջարկը ապահովագրական ընկերությունների կողմից պետք է կրի համապարփակ բնույթ և ընդգրկի գյուղատնտեսության ոլորտում առկա բոլոր ռիսկերը:

Սակայն վերջին շրջանում հանրապետությունում գրանցվող անասունների տարբեր հիվանդությունների հաճախակի կրկնությունը, անասնապահությամբ և թռչնապահությամբ զբաղվող տնտեսությունների կողմից ձևավորում է պահանջարկ ապահովագրական ծառայությունների նկատմամբ: Անասունների և թռչունների ապահովագրության համար նախ և առաջ պետք է կատարվի դրանց անձնագրավորում, և քանի դեռ այս իստիտուտը չի ձևավորվել, դեռևս վաղ է խոսել այս ոլորտում ապահովագրության իրականացման մասին: Առավել շատ տնտեսությունները հետաքրքրված են բերքի ապահովագրությամբ, բայց այս ոլորտում էլ ապահովագրվող է համարվում միայն կարկտահարումից ապահովագրումը, մյուս ռիսկերը համարվում են ոչ ապահովագրելի կամ պետական աջակցությամբ ապահովագրելի: Բերքի կարկտահարումից ապահովագրումը բարդ կառավարելի է՝ կախված տարեցտարի փոփոխվող արդյունքներից, և կառավարման մեծ ծախսերի հետ է կապված:[3]

ՀՀ-ում 2019 թ-ի սեպտեմբերի 30-ից մեկնարկում է գյուղատնտեսական ապահովագրությունը: Գյուղատնտեսությամբ զբաղվողները դեռևս կարող են

---

[1] *Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց, Երևան, 2015:*

[2] https://ampop.am

[3] ***Դավթյան Ս.**, «Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման արդյունավետության բարձրացման գործոն»:*

ապահովագրել միայն 2 մշակաբույս՝ ծիրան և խաղող՝ հետևյալ3, ռիսկերից.

- կարկուտ,
- հրդեհ,
- գարնանային ցրտահարում:

Կարկուտի և հրդեհի հետևանքով առաջացած վնասների ապահովագրությունը հասանելի է Արմավիրի, Արարատի, Արագածոտնի, Տավուշի և Վայոց Ձորի մարզերում: Գարնանային ցրտահարման հետևանքով առաջացած վնասների ապահովագրությունը հասանելի է միայն Արմավիրի և Արարատի մարզերում: Ամեն տարի ապահովագրվող մշակաբույսերի և մարզերի քանակը աստիճանաբար ավելանալու է՝ հետագայում ծածկելով Հայաստանի բոլոր մշակաբույսերն ու ընդգրկով բոլոր մարզերը: Գյուղատնտեսը հնարավորություն ունի ընտրել 5 ապահովագրական ծածկույթներից միայն մեկը: Ընտրված ծածկույթի՝ բերքին հասցրված փաստացի վնասի հիման վրա կհաշվարկվի ապահովագրական հատուցումը: Ապահովագրավճարը տարբերվելու է ըստ հատուկ ռիսկային գոտու, որը որոշվում է՝ ելնելով հողամասի գտնվելու վայրից: Գյուղատնտեսի կողմից վճարվելիք ապահովագրավճարի առնվազն կեսը վճարվելու է կառավարության կողմից, իսկ այն դեպքում, երբ գյուղատնտեսը որոշի ապահովագրել բոլոր ռիսկերը միասին, կգործի 10% զեղչ:

Ապահովագրական ծածկույթները հաշվարկվել են՝ համաձայն գյուղատնտեսի կողմից արված բերքի արտադրական ծախսերի: Այսինքն՝ այն ծախսերի, որոնք գյուղատնտեսը կատարում է մշակաբույսի մեկ տարվա խնամքի համար՝ սկսած վաղ գարնանային աշխատանքներից, ամբողջ բուսաճի ընթացքում մինչև ուշ աշնանային վերջին աշխատանքները: Ապահովագրական ծածկույթի մակարդակները ներկայացված են Աղյուսակ 1-ում՝

Աղյուսակ 1. Ապահովագրական ծածկույթի 5 մակարդակներ.

Մակարդակ	Ապահովագրական ծածկույթ	
—	Ծիրան	Խաղող
1	400 000 ՀՀ դրամ	750 000 ՀՀ դրամ
2	600 000 ՀՀ դրամ	1 000 000 ՀՀ դրամ
3	800 000 ՀՀ դրամ	1 250 000 ՀՀ դրամ
4	1 000 000 ՀՀ դրամ	1 500 000 ՀՀ դրամ
5	1 200 000 ՀՀ դրամ	1 800 000 ՀՀ դրամ

Ապահովագրավճարը կախված է լինելու հենց այս ծախսերի մակարդակից, մասնավորապես՝ ինչքան բարձր է գյուղատնտեսի կողմից ընտրված ծածկույթը՝ այնքան բարձր է լինելու ապահովագրական կազմակերպությանը վճարվող գումարը և առավելագույն հատուցման չափը:

Գյուղատնտեսության ապահովագրության ներդրման համար ստեղծված պատասխանատու մարմինն է «Գյուղատնտեսությունը ապահովագրողների ազգային գործակալություն» հասարակական կազմակերպությունը (ԳԱԱԳ), որն իրականացնելու է գյուղատնտեսության ղեկավարումն ու զարգացումը:[1]

Կենսունակ գյուղատնտեսական ապահովագրություն ունենալու հարցում բացի պետությունից պետք է շահագրգռված լինեն նաև գյուղատնտեսությունը վարկավորող առևտրային բանկերը: Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը թույլ կտա բանկերին մեծացնելու վարկավորման ծավալները: Բացի այդ, շատ հաճախ բնական աղետների հետևանքով գյուղատնտեսները ի վիճակի չեն լինում վճարելու իրենց վարկերը,

[1] https://aina.am

իսկ բանկերն էլ հրաժարվում են նոր վարկերի տրամադրումից՝ ուշադրություն դարձնելով վարկերի հետ վերադարձման խնդրին: Բայց գյուղատնտեսական ապահովագրության դեպքում բանկերը ավելի վստահ կլինեն իրենց վարկերի ժամանակին հետ վերադարձման հարցում և կկարողանան ավելացնել տրվող վարկերի ծավալը:

Ապահովագրությունը կարող է հնարավորություն ստեղծել նաև վարկային միջոցների էժանացման համար: ՀՀ-ում այսօր, համեմատած զարգացած երկրների հետ բարձր են վարկային միջոցների տոկոսները՝ կապված գյուղատնտեսության բարձր ռիսկային ոլորտ լինելու հետ: Ապահովագրությունը ֆինանսավորող կառույցներին հնարավորություն կընձեռի երկարաժամկետ կանխատեսումներ կատարել առանց մտավախության, թե կարկուտ լինի կամ երաշտ, ծրագրեր իրականացնել, մասսայական վարկավորում իրականացնել, որի արդյունքում հնարավոր կլինի վարկավորման տոկոսադրույքն իջեցնել:[1] Հայաստանում հիմնական խնդիրը միշտ կապված է լինում հենց վարկերի վճարման հետ: Վարկերի ապահովագրությունը էապես կնպաստի ոլորտի խնդիրների լուծմանը, ինչը հնարավորություն կտա նաև բանկերին՝ ավելի ցածր տոկոսադրույքով վարկեր տալ: Իսկ բերքի մթերման պարտավորության համակարգի հստակ ներդրումը հնարավորություն կտա լուծել մթերման հիմնական խնդիրը:

Եզրակացնենք, որ գյուղատնտեսության ոլորտի ապահովագրության գործընթացի իրականացումը լավագույն լուծումը կհանդիսանա ՀՀ գյուղատնտեսության ոլորտում առկա խնդիրների լուծման և ռիսկերի արդյունավետ կառավարման համար, կնվազեցնի եղանակային աղետներից տուժողներին որպես փոխհատուցում պետբյուջեից հատկացումները, ինչպես նաև կմեծացնի գյուղատնտեսության ոլորտը վարկավորող ընկերությունների վստահությունը գյուղատնտեսների հանդեպ, կանի ավելի ձեռնտու պայմաններով և ցածր տոկոսադրույքներով վարկերի տրամադրում և վարկերի ժամանակին հետ ստացում:

Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության ոլորտում ապահովագրական կենսունակ համակարգի ներդրումը երկրի տնտեսության ագրարային հատվածի կայուն ու համաչափ զարգացման հիմնական նախապայմաններից է:

Ըստ տնտեսագիտության դոկտոր, պրոֆեսոր Ս. Ավետիսյանի ՀՀ-ում գյուղատնտեսության ապահովագրության գործընթացը կարող է հաջող իրականացվել, եթե առաջնորդվենք հետևյալ պայմաններով.

1. ապահովագրության օբյեկտն ունենա եկամտաբերության ողջամիտ մակարդակ,
2. առկա լինի մթնոլորտային ռիսկերի կանխատեսման և ահազանգման արդիական համակարգ,
3. ստեղծվի գյուղատնտեսության ապահովագրության ազգային մարմին և պատրաստվեն գործին տիրապետող մասնագետներ,
4. կիրառվեն գյուղատնտեսական մշակաբույսերի մշակության արդյունավետ տեխնոլոգիաներ,
5. ապահովագրության օբյեկտի վերաբերյալ լինի բազմամյա տարիների հավաստի վիճակագրական տեղեկատվություն,
6. կատարվի հիմնական ռիսկերի գնահատում,
7. ընտրվեն ապահովագրավճարի սահմանման և հասցված վնասի փոխհատուցման ընդունելի կառուցակարգեր,

[1] ***Դավթյան Ս.***, *«Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման արդյունավետության բարձրացման գործոն»*

8. պետությունը պատրաստակամ լինի գործընկերային սկզբունքով (ապահովագրող-ֆերմեր-պետություն) մասնակցել գյուղատնտեսության ապահովագրմանը,
9. ֆերմերների գերակշիռ մասն ունենա կամավոր ապահովագրությանը մասնակցելու ցանկություն,
10. օրենսդրորեն սահմանվեն առանձնահատուկ դեպքերում գյուղատնտեսության պարտադիր ապահովագրության պայմանները և օբյեկտները:[1]

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ՀՀ քաղաքացիական օրենսգիրք, ընդունված 1998 թ-ի մայիսի 5-ին:
2. «Ապահովագրության մասին» ՀՀ օրենք, ընդունված 2004 թվականի հունիսի 11-ին:
3. Гражданский кодекс РФ,
4. ՀՀ կառավարության ծրագիր 2017-2022թթ.:
5. Կիրակոսյան Կ., Ապահովագրական գործ. ուսումնական ձեռնարկ, «Սարվարդ հրատ», Երևան 2003:
6. Անտոնյան Ք., Գյոլչանյան Շ., ՀՀ գյուղատնտեսության ոլորտում ապահովագրության համակարգի ներդրման հնարավորությունները, Տնտեսագիտության ժամանակակից հիմնահարցեր: Միջազգային 4-րդ գիտաժողովի նյութեր – Եր.: ԵՊՀ ԵԳՄ, 2016 – 288էջ:
7. Դավթյան Ս., Գյուղատնտեսության ոլորտի ապահովագրությունը որպես վարկավորման արդյունավետության բարձրացման գործոն:
8. Ավետիսյան Ս., Գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի հաջողության նախապայմանները, ԱՄԲԵՐԴ, 2019:
9. Հայաստանի Հանրապետությունում գյուղատնտեսությանը վնաս պատճառող բնական և մարդածին աղետների ռիսկերի նվազեցման ուղեցույց, Երևան, 2015:
10. https://sme.acba.am/hy/insurance-contract-and-certificate-conditions,
11. https://ampop.am,
12. https://aina.am ,
13. agroinsurance.com,

[1] ***Ավետիսյան Ս.,*** *Գյուղատնտեսության ապահովագրության գործընթացի հաջողության նախապայմանները, ԱՄԲԵՐԴ, 2019:*

ՀՏԴ 336.5 Տնտեսագիտություն

Անուշ Ծատուրյան
ԱրՊՀ Տնտեսագիտության ֆակուլտետի
<<Ֆինանսներ>> բաժնի 4-րդ կուրս
anoush.tsatryan.98@mail.ru
Գիտական ղեկավար՝ Շուշանիկ Ասրյան
տ. գ. թ., ԱրՊՀ տնտեսագիտության
տեսության և կառավարման ամբիոնի դոցենտ

ՆԵՐԴՐՈՒՄՆԵՐԻ ՎԱՐԿԱՎՈՐՄԱՆ ՀՆԱՐԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *ներդրում, սեփական ֆինանսական ռեսուրսներ, փոխառու ֆինանսական միջոցներ, վարկային ներդրումներ, կարճաժամկետ վարկեր, երկարաժամկետ վարկեր, տարադրամով վարկեր, ազգային արժույթով վարկեր, ավանդներ, օտարերկրյա ներդրումներ:*

ԱՀ տնտեսության զարգացման ժամանակակից պայմաններում ներդրումների վարկավորման հիմնախնդիրների ուսումնասիրությունը խիստ կարևոր է՝ տնտեսության վարկավորման հետ կապված խնդիրները վեր հանելու առումով: Սույն հոդվածում դիտարկվել են ներդրումների վարկավորման կառուցվածքի, ներդրումների և ՀՆԱ-ի փոխառնչության, արտարժութային, երկարաժամկետ վարկերի հետ կապված հարցերը՝ առաջ քաշելով ներդրումների կառուցվածքի բարելավման, ներդրումների նոր աղբյուրների ձևավորման անհարաժեշտությունը:

А. Цатурян

ВОЗМОЖНОСТИ ИНВЕСТИЦИОННОГО КРЕДИТОВАНИЯ В РА

Ключевые слова: *Инвестиции, собственные финансовые ресурсы, заемные средства, кредитные вложения, краткосрочные кредиты, долгосрочные кредиты, валютные кредиты, кредиты в национальной валюте, депозиты, иностранные инвестиции.*

Для развития экономики Республики Арцаха очень важно исследование проблем инвестиционного кредитования для постановки проблем, связанных с экономическим кредитованием. В статье рассматриваются вопросы инвестиционного кредитования, связь инвестиций и ВВП, валютные кредиты, долгосрочного кредитования, улучшения структуры инвестиций и создания новых источников инвестиций.

Յուրաքանչյուր երկրի տնտեսության կայացման ու զարգացման մասին խոսելիս առաջին հերթին անհրաժեշտ է ուսումնասիրել երկրի ներդրումային ներուժը, քանի որ վերջինս նպաստում է երկրի տնտեսական առաջընթացին և վերջնական հաշվով բնակչության կենսամակարդակի բարելավմանը:

Ներդրումները երկրի համախառն ներքին արդյունքի մի մասն են, որոնք ընթացիկ ժամանակահատվածում չեն սպառվում՝ տնտեսության մեջ ապահովելով տնտեսական աճ: Ներդնել, լայն առումով, նշանակում է «այսօր բաժանվել փողից՝ ապագայում ավելի մեծ գումար ստանալու համար»:

Ներդրումների իրականացման համար անհրաժեշտ են որոշակի ռեսուրսներ: Հետևաբար, կապիտալ ներդրումները պետք է ֆինանսավորվեն որոշակի աղբյուրներից: Գոյություն ունեն ներդրումների ֆինանսավորման հետևյալ աղբյուրները.

❖ սեփական ֆինանսական ռեսուրսներ՝ շահույթը, կուտակված մաշվածքը կամ ամորտիզացիան, սեփական կապիտալը, լրացուցիչ կապիտալը, պահուստային ֆոնդը, ապահովագրական փոխհատուցումները,

❖ փոխառու ֆինանսական միջոցներ՝ բանկային կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերը, բյուջետային վարկերը, փոխառությունները:

Վարկը՝ որպես ներդրումների ֆինանսավորման փոխառու միջոց կարելի է դիտարկել ինչպես միկրոմակարդակում, այնպես էլ մակրոմակարդակում:

Միկրոմակարդակում այն առանձին կազմակերպության կամ ֆիզիկական անձի կողմից ձեռք բերված դրամական միջոցն է, որն ուղղվում է տվյալ պարագայում ներդրումների իրականացմանը:

Մակրոմակարդում այն կազմակերպությունների և ֆիզիկական անձանց կողմից ձեռք բերված դրամական միջոցների ամբողջությունն է, որը դիտարկվում է ամբողջ երկրի տնտեսության մասշտաբով:

Վարկը ընդհանուր առմամբ տնտեսական այնպիսի հարաբերություն է, որն առաջանում է արժեքը (բնաիրային և դրամական ձևով) մեկ անձի, կազմակերպության, պետության կողմից վերադարձելիության ու վճարելիության սկզբունքներով ուրիշին ժամանակավոր օգտագործման հանձնելու ընթացքում: Դրա էությունը, ձևերն ու դերը որոշվում են հասարակության տնտեսական կառուցվածքով:

Այսպիսով, վարկը պայմանավորվածություն է բանկի, վարկային կազմակերպության կամ գրավատան և հաճախորդի միջև, որի համաձայն՝ այդ պահին ձեռք են բերվում դրամական միջոցներ, ապրանք, ծառայություն՝ հետագայում վճարելու նախապայմանով[1]:

Բանկային համակարգի ձևավորմամբ՝ զարգացում ապրեցին նաև առևտրային բանկերի կողմից տրամադրված վարկերը, որոնց դինամիկան բնութագրում է երկրի տնտեսական զարգացվածությունը:

ԱՀ 2011-2018թթ. վարկային ներդրումների դինամիկան վկայում է, որ ներդրումների ֆինանսավորման փոխառու միջոցները ունեն իրենց կարևոր տեղը տնտեսության վարկավորման գործընթացում:

Գծապատկեր 4: ԱՀ վարկային ներդրումների աճի դինամիկան 2011-2018թթ. /մլն. դրամ/[2]



Գծապատկեր 1-ից ակնհայտ է, որ ԱՀ-ում վարկային ներդրումները 2011-2018թթ.

[1] https://www.abcfinance.am/credit.html
[2] http://stat-nkr.am/files/yearbooks/2011-2017/19_fin_234-260.pdf

գրանցել են միմիայն աճ՝ ունենալով 1.16 աճի միջին գործակից:

ԱՀ վարկային ներդրումների 2017-2018թթ. ճյուղային կառուցվածքի դիտարկումներից կարելի է եզրակացնել, որ վարկերի գերակշիռ մասը ուղղվում է այլ ճյուղերի ֆինանսավորմանը՝ տրանսպորտ, կապ, ծառայություն: ԱՀ վարկային ներդրումների ճյուղային կառուցվածքը խիստ ձևախեղված է, որը վկայում է ըստ ճյուղերի ոչ համամասնական ֆինանսավորման մասին: Դրանցից ամենաթերֆինանսավորվածը գյուղատնտեսության ոլորտն է, որը երկրի համար ռազմավարական նշանակության ճյուղ է՝ կապված պարենապահովության, պարենանվտանգության, վերամշակող արդյունաբերության հումքային ռեսուրսների ապահովության հետ:

Գծապատկեր 5: ԱՀ վարկային ներդրումների ճյուղային կառուցվածքը 2017-2018թթ./%/



Գյուղատնտեսության ոլորտի վարկավորման բնագառում պետությունն իրականացնում է որոշակի քաղաքականություն՝ ոլորտը խրախուսելու նպատակով տրամադրելով այսպես կոչված <<անտոկոս վարկեր>>, սակայն ֆինանսավորման առկա մակարդակը վկայում է, որ գյուղատնտեսության ոլորտի վարկավորումը պետք է դառնա վարկերի կառուցվածքային բարելավման հիմնական ուղղություններից մեկը:

ԱՀ տնտեսության ֆինանսավորման ուղղություններից մեկը ՓՄՁ-ի վարկավորումն է՝ բիզնես-գործունեությունը ծավալելու նպատակով: ՓՄՁ զարգացումը իր հերթին նպաստում է երկրում միջին խավի ձևավորմանը: Այսինքն՝ նմանատիպ վարկերը անմիջականորեն իրենց ազդեցությունն են թողնում բնակչության կենսամակարդակի բարձրացման վրա: Ուստի ՓՄՁ-ն այն ոլորտն է, որը ենթարկվում է պետական աջակցության: Վերջինիս նպատակը ՓՄՁ սուբյեկտների ֆինանսական և ներդրումային հնարավորությունների, նորարարական և արտաքին տնտեսական գործունեության ընդլայնումը և զարգացումն է:

Հարկ է նշել, որ ԱՀ-ում 2018թ. շարունակվել է ՓՄՁ սուբյեկտներին տրամադրված առևտրային վարկերի տարեկան տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման ծրագիրը, ըստ որի՝ սահմանվել է առևտրային վարկերի տոկոսադրույքների մասնակի սուբսիդավորման հետևյալ չափը՝ կախված գործունեության ոլորտից.

- առևտուր՝ մինչև 30%,
- ծառայությունների մատուցում՝ մինչև 40%,
- շինարարություն՝ մինչև 50%,
- արդյունաբերություն՝ մինչև 60%,

❖ գյուղատնտեսություն՝ մինչև 70%[1]:

Քանի որ գյուղատնտեսությունը ճանաչվել է որպես ռազմավարական ոլորտ, ուստի տվյալ ոլորտը խրախուսելու նպատակով պետական աջակցության ծրագրի շրջանակներում իրականացվում է տրամադրվող առևտրային վարկերի տոկոսադրույքների սուբսիդավորում մինչև 70% չափով, ինչը կարող է բարելավել վարկավորման կառուցվածքում առկա ձևախեղումները:

Ինչպես արդեն գիտենք, ՀՆԱ-ի ծախսային տարրերից են նաև ներդրումները, ուստի անհրաժեշտ է դիտարկել վարկային ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում:

Գծապատկեր 6: ԱՀ վարկային ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում /%/



Տվյալներից պարզ երևում է, որ ԱՀ-ում վարկային ներդրումները կազմում են ՀՆԱ-ի 50%-ից ավելին: Ամենաբարձր ցուցանիշը գրանցվել է 2017թ.՝ կազմելով ՀՆԱ-ի 54.9%-ը: 2018թ.-ին վարկային ներդրումների մասնաբաժինը ՀՆԱ-ում կազմել է 53,8%: Դիտարկումները ցույց են տալիս, որ ԱՀ-ում ներդրումների ֆինանսավորման գլխավոր աղբյուրը վարկն է:

Հարկ է նշել, որ ԱՀ-ում, վճարման ժամկետից կախված, տրամադրվում են ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ վարկեր:

Գծապատկեր 7: ԱՀ առևտրային բանկերի կարճաժամկետ և երկարաժամկետ վարկերի դինամիկան[2]

[1] http://www.aif.am/images/photos/Hashvetv.2018.pdf
[2] http://stat-nkr.am/files/publications/2019/Finance_2018.pdf



Ընդ որում, 2011-2018թթ. երկարաժամկետ վարկերի աճի տեմպը գերազանցում է կարճաժամկետ վարկերի աճի տեմպին, որի արդյունքում դիտարկվող ժամանակահատվածում վարկային ներդրումների մեջ գերակշռող են դարձել երկարաժամկետ վարկերը: Քանի որ դրանք գլխավորապես ուղղվում են բնակարանաշինության ոլորտին, ուստի տնտեսական առումով ունեն կարևոր դեր ու նշանակություն:

Տնտեսության վարկավորման գործընթացը էական ազդեցություն կարող է ունենալ երկրի փոխարժեքի վրա, քանի որ վարկերը տրամադրվում են ինչպես ազգային արժույթով, այսինքն՝ հայկական դրամով, այնպես էլ տարադրամով::

Գծապատկեր 8: ԱՀ առևտրային բանկերի ազգային արժույթով և արտարժույթով տրամադրված վարկերի դինամիկան 2011-2018թթ. /մլն դրամ/



Տնտեսության վարկավորման կառուցվածքը ըստ ազգային արժույթի և տարադրամի ցույց է տալիս, որ 2011-2018թթ. ինչպես կարճաժամկետ, այնպես էլ երկարաժամկետ վարկերի մեջ հիմնականում գերակշռում են տարադրամով տրված վարկերը՝ պայմանավորված արտարժույթային ռիսկի կարգավորման անհրաժեշտությամբ: Սակայն արդեն 2018թ. փոխվեց դրամով ու տարադրամով տրվող վարկերի հարաբերակցությունը՝ հօգուտ դրամով տրվող վարկերի: Ազգային արժույթով՝ դրամով տրամադրված վարկերը գերազանցում են տարադրամով տրված վարկերին շուրջ 1.13 անգամ կամ 10153.8 մլն դրամով: Վերջինս պայմանավորված է վարկային պորտֆելի բարելավմամբ, ինչը բավականին խրախուսելի է ԱՀ տնտեսության համար:

Մակրոտնտեսական առումով կարևոր են նաև ավանդների և վարկային ներդրումների

հարաբերակցության դիտարկումները, որը կարող է վկայել, թե տնտեսության վարկավորման մեջ որքան է ավանդների բաժինը:

Գծապատկեր 6: ԱՀ վարկային ներդրումների և ավանդների գումարի դինամիկան 2011-2018թթ., մլն դրամ



Այսպես, տվյալներից կարելի է եզրակացնել, որ և՛ վարկային ներդրումները, և՛ ավանդները 2011-2018թթ. ցուցաբերել են աճի միտում, սակայն վարկային ներդրումները, ի տարբերություն ավանդների, ավելի արագ են աճում, ինչը վկայում է վերջինիս՝ ներդրումների ֆինանսավորման հիմնական աղբյուրի մասին:

ԱՀ տնտեսության արդիականացման, տեխնոլոգիաների ներգրավման և մրցունակության ապահովման համար խրախուսելի է օտարերկրյա ուղղակի ներդրումների ներհոսքը: Վերջինիս ապահովման նպատակով անհրաժեշտ է իրականացնել.

- ԱՀ օրենսդրական միջավայրի բարելավում,
- ներդրումների ենթակառուցվածքների ստեղծում և կատարելագործում,
- ներդրումային քաղաքականության արդյունավետության բարձրացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆինանսներ, դրամաշրջանառություն և վարկ. դասագիրք, գլխավոր խմբագիր պրոֆեսոր Բաղանյան Լ.Հ., Երևան, «ՍՈՍ» ՍՊԸ, 2010թ. էջ586:
2. Ղուշչյան Հ.Զ., խմբ. տ.գ.դ. պրոֆ., Տնտեսագետ Մակրոտնտեսական կարգավորում, Երևան , 2005թ. էջ 610:
3. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, 2011-2017թթ.:
4. https://www.abcfinance.am/credit.html,
5. http://stat-nkr.am/files/publications/2019/Finance_2018.pdf,
6. http://www.aif.am/images/photos/Hashvetv.2018.pdf,
7. http://stat-nkr.am/files/yearbooks/2011-2017/19_fin_234-260.pdf:

Արսեն Հայրապետյան
ԱրՊՀ
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Իշխանյան Ի.Հ.

ԲՐԵՔՍԻՏ: ՆԱԽԱԴՐՅԱԼՆԵՐԸ, ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԵՎ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ

Բանալի բառեր: *Բրեքսիտ, Միացյալ Թագավորություն, Եվրամիություն, միջազգային հարաբերություններ, միջազգային համագործակցություն, տնտեսական կապեր, քաղաքական միտումներ, տնտեսական միավորում, գլոբալիզացիա:*

Ներկայումս ստեղծվել է պատմության ընթացում նմանը չունեցող քաղաքատնտեսական իրավիճակ, և լուծման տարբերակից անկախ այն ստիպում է վերանայել միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման միտումները: Հոդվածում հետազոտվել է միության կազմից դուրս գալու որոշումը, նախադրյալները, բանակցությունների գործընթացը և հեռանկարները, որը մեծապես պայմանավորված էր ընդհանուր քաղաքականությունից դժգոհությամբ և մայրաքաղաքներից իշխանության տեղափոխմամբ Բրյուսել: Մտավախություններ կան, որ Բրեքսիտը կարող է ուժեղացնել եվրակասկածամիտների դիրքերը առանձին երկրներում և առաջացնել դոմինոյի էֆեկտ: Նախատեսվում է պայմանագրում ամրագրել երկու տարի ժամկետով անցման շրջան բոլոր տնտեսական և իրավական փոփոխությունների իրականացման սահուն գործընթաց ապահովելու համար: Վճարման ենթակա գումարի որոշումը հանդիսանում է բանակցությունների առանցքային հարցերից: Անորոշ է մնում Հյուսիսային Իռլանդիայի և Ջիբրալթարի հարցը: Հասարակական և քաղաքական շրջանակներում հաճախ խոսվում երկրորդ անգամ քվեարկության կազմակերպման օգտին, ինչը ավելի է անորոշ դարձնում ապագան:

Арсен Айрапетян

«БРЕКСИТ: ПРЕДПОСЫЛКИ, ПЕРЕГОВОРНЫЙ ПРОЦЕСС И ПЕРСПЕКТИВЫ»

Ключевые слова: *Брексит, Соединенное Королевство, Евросоюз, международные отношения, международная кооперация, экономические связи, тенденции в политике, экономические объединения, глобализация.*

В настоящее время не существует прецедента для сложившейся политико-экономической ситуации, и, каким бы ни было решение, оно заставляет пересматреть тенденции развития международных экономических отношений. В статье рассмотрены решение, выйти из состава ЕС, предпосылки, переговорные процессы и ожидаемые последствия, что во многом было вызвано неудовлетворенностью общей политикой и передачей власти из национальных столиц в Брюссель. Есть опасения, что Brexit может укрепить позиции евроскептиков в отдельных странах и вызвать эффект домино. Предполагается двухлетний переходный период для обеспечения беспрепятственного осуществления всех экономических и правовых изменений. Определение суммы выплат является одним из ключевых вопросов на переговорах. Вопросы Северной Ирландии и Гибралтаре остаются неясными. Общественные и политические деятели часто говорят о повторном голосовании, что делает будущее еще более неопределенным. Статья 50 ранее не применялась, и потребуется много времени, прежде чем будет достигнуто соглашеине, приемлемое для всех сторон.

Արդի դարաշրջանում ավելի են խորանում տնտեսական կյանքի բոլոր ոլորտների միջազգայնացման գործընթացները: Գլոբալացման մակարդակը հասել է այն աստիճանի, որ հնարավոր բոլոր խնդիրների լուծման համար անհրաժեշտ է միջազգային համագործակցություն: Երկների տնտեսական ու քաղաքական խորը ինտեգրման լավագույն օրինակ էր ծառայում Եվրամիությունը: Հայտնի մյուս միավորումներից այն միշտ

առանձնանում էր ներքին և արտաքին մարտահրավերներին դիմագրավելու համար մշակված միասնական քաղաքականությամբ, և չնայած միությանը անդամակցող երկրների միջև տնտեսական և ազգային գործոններով պայմանավորված տարբերություններին ու պարբերաբար ի հայտ եկող դժվարություններին, Եվրամիությունում գրեթե միշտ գործում էր համերաշխության սկզբունքը: Եվրամիության կազմից Միացյալ Թագավորության դուրս գալու որոշումը ձեռք է բերում առանձնահատուկ նշանակություն: Այս երկիրը միշտ եղել է Եվրամիության զարգացման շարժիչ ոժերից մեկը: Հանդիսանալով միջազգային ֆինանսական խոշոր կենտրոններից մեկը՝ երկրի վարած տնտեսական քաղաքականությունը մեծ նշանակություն ուներ միության մյուս անդամների համար: Քանի որ նախկին տարիների ընթացքում ԵՄ կազմից երկրի դուրս գալու նախադեպ գոյություն չունի, ապա տվյալ գործընթացը ամենայն հավանականությամբ կլինի երկար և բարդ բանակցությունների քննարկման ենթակա, որի արդյունքները, հետևանքներն ու հնարավորությունները կանխատեսելը բավականին դժվար խնդիր է:

Միացյալ Թագավորության միացումը Եվրոպայի ինտեգրացիոն գործընթացին սկսվեց վարչապետ Հարոլդ Մաքմիլլանի «Փոփոխությունների քամիներ» ելույթով: Ապագաղութացման արագ գործընթացը և Միացյալ Թագավորության՝ մայրցամաքային Եվրոպայի տնտեսական հզորությանը դիմակայելու անկարողությունը դրդեցին Մեծ Բրիտանիային 1961 թվականին դիմելու ԵՄ անդամակցության համար, Մեծ Բրիտանիային գոհացնող պայմաններով (այն է՝ Մեծ Բրիտանիան կատեգորիկ դեմ է ֆեդերալիզմին ուղղված ցանկացած քայլի): Սակայն Մեծ Բրիտանիայի պայմանները ընդհանրապես հաշվի չառնվեցին, քանզի Ֆրանսիայի նախագահ Շառլ դե Գոլը երկու անգամ վետո դրեց ԵԸ Մեծ Բրիտանիայի մուտքին (1961 թվականին, 1967 թվականին)՝ պատճառաբանելով, որ Մեծ Բրիտանիայի անդամակցությունը կկործանի «մեծ նախագիծը»:

Իրավիճակը փոխվեց 1969 թվականին, երբ Ֆրանսիայի և Գերմանիայի կառավարությունները փոխվեցին: Հաագայում որոշվեց վերսկսել բանակցությունները Մեծ Բրիտանիայի, Դանիայի, Իռլանդիայի հետ, այն պայմանով, որ նրանք կընդունեն միության նպատակները և պայմանագրերը: 1973 թվականի հունվարի 1-ին Միացյալ Թագավորությունը Դանիայի և Իռլանդիայի հետ դարձավ Եվրոպական ընկերակցության անդամ: Այդ ընդլայնումը հետագայում ստացավ «ընդլայնման առաջին ալիք» անվանումը[1]:

Մեծ Բրիտանիայի և ԵՄ-ի հարաբերությունները սկսեցին փոխվել Դեվիդ Քեմերոնի՝ վարչապետ լինելու ժամանակ: Եվրոկասկասկածամիտների ճնշման տակ Քեմերոնը խոստացավ հանրաքվե անցկացնել Միացյալ Թագավորության՝ ԵՄ-ին անդամակցելու հարցը լուծելու համար: 2016 թվականի հունիսի 23-ին կայացած հանրաքվեի արդյունքով բրիտանացիները ընտրեցին Brexit-ը (Միացյալ Թագավորության դուրս գալը ԵՄ-ի կազմից): 51.9% կողմ է քվեարկել ԵՄ-ից դուրս գալուն, 48.1%-ը՝ դեմ: Հանրաքվեին մասնակցել է բնակչության 71.8%-ը: Անգլիան և Ուելսը քվեարկել էին ԵՄ-ի կազմից դուրս գալու համար, իսկ Շոտլանդիան և Հյուսիսային Իռլանդիան, ընդհակառակը, մնալու համար (Անգլիա-53.4%՝ դուրս գալ, 46.6%՝ մնալ, Ուելս-52.5%՝ դուրս գալ, 47.5%՝ մնալ, Շոտլանդիա-38%՝դուրս գալ, 62%՝ մնալ, Հյուսիսային Իռլանդիա-44.2%՝ դուրս գալ, 55.8%՝ մնալ)[2]:

ԵՄ-ից դուրս գալը, սկսած 2007 թվականից, կատարվում է ըստ ԵՄ-ի անդամ պետությունների մասին ԵՄ-ի պայմանագրի 50-րդ հոդվածի: 50-րդ հոդվածով Միացյալ Թագավորության դուրս գալու գործընթացը մնում է անորոշ, քանի որ պետությունները լքում են ԵՄ-ն համաձայն այդ հոդվածի, բայց այն դեռևս չի կիրառվել, չնայած այն փաստին, որ Գրենլանդիան լքել է ԵՄ-ն 1985 թվականին: Ըստ պայամանգրի լքելու ժամկետը սահմանված է երկու տարի այն պահից, երբ Բրիտանիան պաշտոնապես հայտարարի դրա մասին, և այս տեսակի պաշտոնական նամակը ուղարկվել է 2017թ մարտի 29-ին:

Սահմանվեցին գրավոր տեսքով այն կետերը, որոնք ենթակա են քննարկման և պետք է ներառվեն վերջնական համաձայնագրի շրջանակներում՝ բնակչության ազատ տեղաշարժ, ատոմային էներգետիկայի ոլորտում միասնական համաձայնագրեր, Հյուսիսային ծովում և Լա Մանշի նեղուցում ձկնորսությամբ զբաղվելու թույլտվություն տրամադրելու կարգ, Հյուսիսային Իռլանդիայի և Իրռալնդիայի Հանրապետության միջև սահմանը Ջիբրալթար կղզու պատկանելության հարց, կազմից դուրս գալու պատճառով ԵՄ նկատմամբ ունեցաց պարտավորությունների չկատարման համար վճարվող գումարի չափ, միասնական շուկայի անդամակցության և ապագայում առևտրային համաձայնագիր կնքելու համար նախնական առաջարկների մշակումը, պետական և հասարակական անվտանգության ապահովման գործում փորձի և տեղեկատվության փոխանակումը, միասնական դատական իշախանության որոշումներին ենթարկվել և մի շարք այլ ոլորտներում համագործակցության հարցեր։

Եվրամիության կամից Միացյալն Թագավուրության դուրս գալու որոշումը ինքնանպատակ չէ։ Այն ունի և կողմնակիցներ, և հակառակորդներ, որոնցից ուրաքանչյուրը բերում է իր փաստարկները բրիտանական տնտեսության վրա Բրեքսիտի դրական կամ բացասական ազդեցության վերաբերյալ։

Առաջին և հիմնական փաստարկն է հանդիսանում այն, որ միությունից հեռանալը թույլ կտա բրիտանական տնտեսությունում պահել այն գումարները, որոնք ամեն տարի հատկացվում էին միասնական բյուջեին։ Դիտարկելով 2010-2018թթ Բրիտանիայի կողմից կատարած անդամավճարները՝ երևում է, որ չնայած տարեցտարի փոքր տատանումներին, այնուամենայնիվ գումարների տրենդի գիծը պոզիտիվ է մնում։ Նշված ժամանակաշրջանում առավելագույն տարեկան հատկացումը կազմել է 10,8 մլրդ ֆունտ ստեռլինգ։ Այդ թվերը ավելի մեծ կլինեին, եթե 1985թ-ից ի վեր չգործեր հաշվարկման բարդ մեխանիզմ ունեցող «բրիտանական զեղչը», որը հավասար է Միացյալ Թագավորության կողմից միության բյուջե վճարված գումարի մոտ 66%-ին ու նպատակ է ծառայում չթույլատրել գերավճարները։ Չնայած ԵՄ համաձայնագրերում նախատեսված չլինելուն, այն բանակցվում է Բազմամյա ֆինանսական ծրագրի շրջանակում յուրաքանչյուր 7 տարին մեկ և ենթակա է անանուն կերպով հաստատման բոլոր անդամների կողմից։ 2018թ. ԵՄ բյուջեի եկամուտների կառուցվածքում Բրիտանիան հանդիսացել է 3-րդ ամենախոշոր ներդրողը՝ 13,45% տեսակարար կշռով։ Առաջին և երկրորդ տեղերն զբաղեցնում են Գերմանիան և Ֆրանսիան՝ 19% և 16,63% համապատասխանաբար[2]։

2018-2023թթ. համար կանխատեսումները ցույց են տալիս, որ Եվրամիության կազմում մնալու դեպքում վճարման ենթակա գումարները առաջիկա երկու տարում կշարունակեն աճել բավականին արագ տեմպերով՝ հասնելով 12,2 մլրդ ֆունտի 2020թ, այնուհետև հնարավոր է կարճաժամկետ վերադարձ ներկա մակարդակին՝ մոտ 10,5 մլրդ ֆունտ[3]։

Միկրոմակարդակում առանձնանում է այն հանգամանքը, որ Եվրամիության մակարդակով իրականացվող փոքր և միջին ձեռնարկատիրության աջակցության պետական ծրագրերից օգտվողների ցանկում բրիտանացիները կազմում են շուրջ 5%, այսինքն՝ առկա է բավականին մեծ խզում անդամակցությամբ պարտականությունների կատարման և դրանց դիմաց ստացված օգուտների միջև։

Եվրամիությունը լքելու նախադրյալների շարքին են դասվում նաև հետևյալները.

- եվրոյի գոտու ստեղծման ժամանակ Բրիտանիան հրաժարվեց միանալ, պահպանել է իր սեփական արժույթը և մինչ այսօր վարում է անկախ դրամավարկային քաղաքականություն,
- բազմիցս հրաժարվել է կատարել եվրոպական դատարանների որոշումները՝ նախապատվությունը տալով ազգային դատարանների կայացրած վճիռներին,

- երկիրը մինչև նորագույն դարաշրջանը տնտեսապես ավելի շատ կապված է եղել Ամերիկայի, Հնդկաստանի, Ավստրալիայի, Նոր Զելանդիայի, քան մայրցամաքային Եվրոպայի հետ,
- բրիտանական գրեթե բոլոր կառավարությունները չէին համաձայնվում միանալ բնակչության ազատ տեղաշարժման (շենգենյան) գոտուն և կարծում էին, որ դա և տնտեսական, և անվտանգության մասով բազմաթիվ խնդիրներ է առաջացնում,
- միության անդամակցության շահավետ միակ ոլորտներից առևտուրն էր, սակայն այն հնարավոր է ձեռք բերել առանց անդամակցելու, նման տեսակի հարաբերություններ արդեն գոյություն ունեն ԵՄ և մի շարք պետությունների միջև:

Բրեքսիտից ակնկալվող օգուտներին զուգահեռ առաջ են գալիս նաև որոշակի սպառնալիքներ: Դրանց կառուցվածքի վերլուծությունը ապագայի անորոշության պայմաններում ձեռք է բերում առավել մեծ նշանակություն: 2018թ. հունվարի դրությամբ փորձագետների կողմից առանձնացվում է Միացյալ Թագավորությունում վտանգավոր սցենարների զարգացման ուղղությունների և դրանց հավանականությունների սանդղակը, ըստ որի՝ առավել հավանական է ներքաղաքական իրավիճակի լարվածության աճը (91%), որը իր հերթին կարող է հանգեցնել տարածաշրջանային աշխարհաքաղաքական բարդ իրավիճակի (61%): Սպասվում է կիբերհարձակումների՝ ֆինանսական ապակայունության ձևավորման թվաքանակի և ուժգնության աճ (57%): Մյուս ռիսկերը քիչ հավանական են և ի հայտ գալու դեպում կլուծվեն համեմատաբար կարճ ժամանակահատվածում:

Տնտեսության վրա ուղղակի կերպով անդրադարձող հետևանքների գնահատման համար դիտարկենք 2017-2018թթ Միացյալ Թագավորության արտաքին առևտրի կազմը ու կառուցվածքը (հավելված 1-6)[4]:

Ապրանքային առևտրաշրջանառության ծավալները Մեծ Բրիտանիայի և Եվրամիության անդամ մյուս 27 երկրների միջև տնտեսական հարաբերությունների մակարդակը բնութագրող կարևոր ցուցանիշ են: Բոլոր տվյալները բերված են 2017-2018 թվականների համար, եթե այլ չի նշվում: ԵՄ 27-ից ներմուծման ծավալները կազմել են 306 մլրդ ֆունտ, իսկ նույն ուղղությամբ արտահանումը՝ 184 մլրդ. ֆունտ:

Համեմատության համար նշենք, որ համապատասխան ցուցանիշները ԵՄ 28-ի և ԱՄՆ-ի համար գրեթե նույն տարբերությունը ունեն: 2018թ. այդ ուղղությամբ արտահանումը կազմել 371 մլրդ ֆունտ, իսկ ներմուծումը 250 մլրդ ֆունտ : Այսինքն՝ երկուսն է մոտ 20% ավել, քան առևտուրն հարևանների միջև: Այս տեսանկյունից Brexit-ը կարող է նույնքան կարևոր լինել, որքան ակնկալվող TTIP (Տրանսատլանտյան առևտրային և ներդրումային համագործակցության համաձայնագիրը), իհարկե հակառակ նշանով:

Ըստ անդամ պետությունների՝ մինչ այժմ ամենամեծ արտահանողը Գերմանիան է (69,5 մլրդ. ֆունտ), մյուս խոշոր արտահանողներն են Նիդեռլանդները (40,8 մլրդ ֆունտ), Ֆրանսիան (27,3 մլրդ ֆունտ), Բելգիան և Լյուքսեմբուրգը (25,8 մլրդ ֆունտ), Իտալիան (18,9 մլրդ. ֆունտ), Իսպանիան (15,6 մլրդ. ֆունտ) և Իռլանդիան (14,9 մլրդ ֆունտ): Մյուս բոլոր անդամներից յուրաքանչյուրի արտահանումը կազմում է 10 մլրդ ֆունտ և քիչ: Պատկերը մոտավոր համահունչ է համապատասխան տնտեսությունների չափին, բացառությամբ Բրիտանիայի հարևաններից: Ներմուծման տեսանկյունից պատկերն համարյա թե նույնն է, ուղղակի թվերը ավելի փոքր՝ Գերմանիա (37,2 մլրդ ֆունտ), որին հետևում են Ֆրանսիան (26,6 մլրդ ֆունտ), Նիդեռլանդները (21,4 մլրդ ֆունտ), Իռլանդիան (19,7 մլրդ ֆունտ) և Բելգիան և Լյուքսեմբուրգը (14,1մլրդ ֆունտ):

ՀՆԱ-ի տոկոսային արտահայտությամբ ԵՄ 27-ը արտահանում է դեպի Բրիտանիա ներքին արդյունքի մոտ 2,5%, իսկ Բրիտանիան իր հերթին՝ 7,5%: Ներմուծման համար թվերը հետևյան են՝ 11,9% և 1,5% համապատասխանաբար: Միության անդամ երկրներից

հիմնականում փոքր տնտեսություններն են կախված Բրիտանական շուկայից, մինչդեռ Գերմանիան արտահանում է դեպի կղզիներ իր ՀՆԱ-ի միայն 2,8%: Սա գերազանցում են Բելգիան (6,8%), Իռլանդիան (6,9%) և Նիդեռլանդները (6,3%): Ներմուծման ծավալները անդամ երկրների մեծամասնության համար տատանվում է 1% շուրջ: Անհամեմատելի բարձր է այդ ցուցանիշը նույն Իռլանդիայում, Բելգիայում և Նիդեռլանդներում, ինչը ամենայն հավանականությամբ պայմանավորված է աշխարհագրական մոտիկությամբ և պատմականորեն ձևավորված կապերով:

Ճյուղային բաշխումը այս առևտրի խիստ դիվերսիֆիկացված է: ԵՄ27-ից ՄԹ արտահանող հիմնական ոլորտներն են՝ մեքենայական ու տրանսպորտային սարքավորումները (127 մլրդ ֆունտ), քիմիական արդյունաբերություն (51 մլրդ ֆունտ), պարենային ապրանքներ (32 մլրդ ֆունտ) և հանքային վառելիք (11 մլրդ ֆունտ):

Ծառայությունների առևտուրը ևս հասնում է էական ծավալների՝ 94 մլրդ արտահանմամբ ԵՄ27-ից ՄԹ և 122 մլրդ հակառակ ուղղությամբ: Ուղիղ իրար հետ համեմատելիս, ծառայությունների ծավալը դեռ զիջում է ապրանքների ծավալներին (306 մլրդ. 394 մլրդ-ի դեմ): Սակայն տարբերությունն այն է, որ հենց այս դեպքում Մեծ Բրիտանիան ունի զգալի դրական սալդո (29,6մլրդ ֆունտ) համեմատած ապրանքների ուղղությամբ հսկայական դեֆիցիտի հետ (129 մլրդ ֆունտ):

2018-ին ԵՄ-ի ծառայությունների արտահանումը կազմում էր մոտ 190 մլրդ, իսկ ներմուծումը գրեթե 200 մլրդ: Այդպիսով տրանսատլանտյան շրջանառությունը մոտ 2 անգամ ավել է, քան հարևանների միջև: Ըստ ԵՄ անդամ պետությունների դեպի Բրիտանիա ծառայությունների արտահանման՝ ամենամեծ ծավալները պատկանում են Ֆրանսիային (18 մլրդ ֆունտ), այնուհետև Իսպանիային (15 մլրդ ֆունտ) և Գերմանիային (12 մլրդ ֆունտ): Մյուս երկրների նույն ծավալները չեն գերազանցում 10 մլրդ ֆունտ: Ներմուծումը դիտարկելիս կտեսնենք նման իրավիճակ, երբ Գերմանիան և Ֆրանսիան շարունակում են զբաղեցնել առաջատար դիրքերը, բայց այստեղ հաջորդ ամենամեծ ներմուծողը Նիդեռլանդներն են և Իտալիան:

ՀՆԱ-ի տոկոսային արտահայտությամբ՝ ԵՄ27-ի ծառայությունների արտահանումը դեպի Միացյալ Թագավորություն կազմում է ներքին արդյունքի 0,8%, մինչդեռ վերջինս արտահանում է արդեն ՀՆԱ-ի 4,7%: Փոքր պետությունների համար պատկերն արմատապես տարբեր է. դեպի Բրիտանիա է ուղղվում Կիպրոսի ՀՆԱ-ի 7,5%, Մալթայի և Լյուքսեմբուրգի 5,4%, Իռլանդիայի 2,6%: Ներմուծման տեսանկյունից առաջատար են մնում նույն երկրները՝ Մալթա (10,3%), Լյուքսեմբուրգ (5,9%) և Իռլանդիա (5%): ԵՄ-ի ծառայությունների արտահանումը կենտրոնացված է տրանսպորտի ու զբոսաշրջության ոլորտում (€ 41 մլրդ) և գործարար ծառայությունների ոլորտում (€ 26 մլրդ): Միացյալ Թագավորությունից ներմուծվող ծառայությունները պատկանում են հիմնականում ֆինանսական ոլորտին (25 մլրդ ֆունտ), գործարար ծառայությունների ոլորտին (€ 32 մլրդ.) և տրանսպորտին ու զբոսաշրջությանը (30 մլրդ ֆունտ):

Բրիտանիայում բնակվող ԵՄ քաղաքացիների թիվը գնահատվում է մոտ 3,35 մլն մարդ: Մեծամասնությունը կազմում են աշխատողները (2,202 հազ. մարդ), համեմատած կենսաթոշակառուների (223 հազ.) և գործազուրկների հետ (102 հազ.): Առանձին խումբ են կազմում ուսման նպատակով երկրում բնակվողները (656 հազ.): Բրեքսիտի արդյունքում երկիրը ստիպված կլինեն լքել շուրջ 1,5 մլն աշխատող ԵՄ քաղաքացիներ: Ըստ ոլորտների՝ նրանք տեղաբաշխված են հիմնականում մեծածախ և մանրածախ առևտրում (508 հազ.), ֆինանսական և բիզնեսի ոլորտում (382 հազ.), հասարակական կառավարում, կրթություն և առողջապահություն (362 հազ.), արտադրություն (312 հազ), տրանսպորտ և հաղորդակցություն (243 հազ.): Ամենախոցելի իրավիճակը շինարարության ոլորտում է (185

հազ.)։ Չնայած 8,4% տեսակարար կշռին, հենց այս գծով Բրիտանիայում առկա է աշխատուժի զգալի պակասորդ, որն մոտ ապագայում բավարարել հնարավոր չէ։ Դրան և այլ հարցերին ուղղված մշակման ընթացքում է գտնվում հատուկ օրինական ակտ, որը թույլ կտա պարզեցված համակարգով տրամադրել երկրում բնակվելու և աշխատելու թույլտվություն քվեարկությանը նախորդող 5 տարվա ընթացքում երկիր ժամանած ԵՄ քաղաքացիներին։

Ուսումնասիրության արդյունքում կարող ենք առանձնացնել հետևյալ եզրահանգումները.

1. Ներկայումս ստեղծվել է պատմության ընթացում նմանը չունեցող քաղաքատնտեսական իրավիճակ, և լուծման տարբերակից անկախ այն ստիպում է վերանայել միջազգային տնտեսական հարաբերությունների զարգացման միտումները,
2. Միության կազմից դուրս գալը մեծապես պայմանավորված էր ընդհանուր քաղաքականությունից դժգոհությամբ և մայրաքաղաքներից իշխանության տեղափոխումից Բրյուսել, և մտավախություններ կան, որ Բրեքսիտը կարող է ուժեղացնելեվրակասկածամիտների դիրքերը առանձին երկրներում և դոմինոյի էֆեկտառաջացնել ընդհանուր քաղաքականությունից դժգոհ անդամների շրջանակներում,
3. Նախատեսվում է պայմանագրում ամրագրել երկու տարի ժամկետով անցման շրջան՝ բոլոր տնտեսական և իրավական փոփոխությունների իրականացման սահուն գործընթաց ապահովելու համար,
4. Միացյալ Թագավորության համար Բրեքսիտը կարժի 40-100 մլրդ եվրո։ Վճարման ենթակա գումարի որոշումը հանդիսանում է բանակցությունների առանցքային հարցերից,
5. Անորոշ է մնում առանձնահատուկ նշանակություն ունեցող տարածքների՝ Հյուսիսային Իռլանդիայի և Ջիբրալտարի հարցը, որոնց շուրջ չի հաջողվում համաձայության գալ,
6. Հասարակական և քաղաքական շրջանակներում հաճախ է խոսվում երկրորդ անգամ քվեարկության կազմակերպման օգտին, ինչը ավելի է անորոշ դարձնում ապագան։

Հունիսի 23-ի որոշումը կարող է Մեծ Բրիտանիան և՛ դուրս բերել ԵՄ-ի կազմից, և՛ ոչ, սակայն հանրաքվեի արդյունքները ունեն ժողովրդավարական մեծ ուժ, և այնուամենայնիվ, լուրջ հետևանքներ կունենան Մեծ Բրիտանիա-ԵՄ հարաբերություններում։ ԵՄ-ից դուրս գալը Մեծ Բրիտանիայի համար կունենա ինչպես տնտեսական, այնպես և քաղաքական հետևանքներ։ Տնտեսական խնդիրները կարող էին լուծվել առանց ԵՄ-ին անդամակցելու՝ մնալով ԵՄ-ի ընդհանուր շուկայում։ ԵՄ-ի համար հետևանքներ չեն կարողչ լինել՝ հատկապես դոմինոյի էֆեկտը, այն է՝ եվրակասկածամիտ ԵՄ-ի անդամ-պետությունները նույնպես կցանկանան լքել ԵՄ-ը, ինչը կհանգեցնի խոր ճգնաժամի։ Հիմնական խնդիրն է որքան հնարավոր է սահուն կազմակերպել տարանջատման գործընթացը։ Դժվարությունները պայմանավորված են նաև իրավիճակի աննախադեպությամբ։ Հոդված 50-ը մինչ այս չի կիրառվել, և դրա հետ միասին գոյություն ունեն Հյուսիսային Իռլանդիայի և Իռլանդիայի Հանրապետության միջև սահմանի հարցը, Ջիբրալթարի պատկանելության վեճը և հակառակ կողմերում գտնվող բնակչության իրավունքների պաշտպանության մեխանիզմի մշակման խնդիրը։ Բավականին ժամանակ կպահանջվի, մինչ կգտնվեն բոլոր կողմերի համար ընդունելի լուծումներ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *http://www.wikipedia.org/*
2. *http://www.statista.com/*
3. *http://www.worldbank.org/*
4. *http://www.wto.org/*

Հավելված 1.



Միացյալ Թագավորության կողմից Եվրամիության բյուջե կարատարած զուտ հատկացումները 2010-2017թթ (mln GBP)։

Հավելված 2.



Բրիտանական ֆունտի նկատմամբ եվրոյի փոխարժեքի ամսական տատանումները 2014.01-2019.04թթ. ամսվա վերջի դրությամբ։

Հավելված 3.



Միացյալ Թագավորության արտահանման հիմնական շուկաները 2018թ. (mln GBP)։

Հավելված 4.



Միացյալ Թագավորության ներմուծման հիմնական ուղղությունները 2018թ. (mln GBP)։

Հավելված 5.



Միացյալ Թագավորության արտահայտման կառուցվածքը 2018թ (mln GBP):

Հավելված 6.



Միացյալ Թագավորության ներմուծման կառուցվածքը 2018թ (mln GBP):

ՀՏԴ 338.2 Տնտեսագիտություն

Աննա Ղազարյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաաշխարհագրական ֆակուլտետ
«Կառավարում» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ. Հրայր Պապոյան
Էլեկտրոնային հասցե՝ anna.ghazarian1998@gmail.com

ՊԵՏԱԿԱՆ ԽՈՇՈՐ ՆԱԽԱԳԾԵՐԻ ՂԵԿԱՎԱՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ «ՀՅՈՒՍԻՍ-ՀԱՐԱՎ» ՃԱՆԱՊԱՐՀԱՅԻՆ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԵՐԴՐՈՒՄԱՅԻՆ ԾՐԱԳՐԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանալի բառեր *՝պետական խոշոր նախագծեր, ենթակառուցվածքային նախագծերի ղեկավարում, «Հյուսիս-Հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիր, ձախողված նախագծեր, խոշոր նախագծերի պարադոքսալ բնույթ, նախագծային գերածախսեր, միջազգային տրանսպորտային նախագծեր:*

Ժամանակակից պայմաններում երկրների և առանձին ռեգիոնների միջև ընթացող սուր մրցակցային պայքարը պահանջում է երկրի մրցունակությունը, անվտանգությունն ու սոցիալ-տնտեսական զարգացումն ապահովող նոր ուղիների մշակումը, որոնցից մեկն էլ հանդիսանում է պետական խոշոր ենթակառուցվածքային նախագծերի մշակումն ու իրականացումը: Աշխատանքի նպատակն է՝ ներկայացնել պետական խոշոր նախագծերի պարադոքսալ բնույթը, ձախողման, գերածախսերի, ժամկետային շեղումների հիմնական պատճառները՝ վերլուծելով ենթակառուցվածքային նախագծերի իրականացման ինչպես հայկական, այնպես էլ միջազգային փորձը:

Анна Казарян

ОСОБЕННОСТИ УПРАВЛЕНИЯ КРУПНЫМИ ГОСУДАРСТВЕННЫМИ ПРОЕКТАМИ НА ПРИМЕРЕ ИНВЕСТИЦИОННОЙ ПРОГРАММЫ ДОРОЖНОГО КОРИДОРА "СЕВЕР-ЮГ''

Ключевые слова: *крупные государственные проекты, управление транспортными инфраструктурными проектами, инвестиционная программа дорожного коридора “ Север-Юг”, неудачные проекты, парадоксальный характер крупных проектов, проектные перерасходы, международные транспортные проекты.*

В современных условиях острая конкурентная борьба между странами и отдельными регионами требует разработки новых путей, обеспечивающих конкурентоспособность, безопасность и социально-экономическое развитие страны, одним из которых является разработка и реализация крупных государственных инфраструктурных проектов. Цель работы - представить парадоксальный характер крупных государственных проектов, основные причины провала, перерасходов, временных отклонений, проанализировав как армянский, так и международный опыт реализации инфраструктурных проектов.

Խոշոր նախագծերը իրար հետ փոխկապակցված նախագծերի մեկ միասնական համակարգ են, որոնք ներառում են պետության մի քանի սուբյեկտների, ընդգրկում են մեծ տարածքներ, ունեն համապետական նշանակություն, մեծ արժեք (1 մլրդ և ավելի) և զգալի քանակությամբ մասնակիցներ: Խոշոր նախագծերի ստեղծման և իրականացման գործում պետության դերը կայանում է մասնակիցների տեխնոլոգիական,

աշխարհաքաղաքական, էկոլոգիական և տնտեսական ռիսկերի նվազեցման, միջոեգիոնալ ենթակառուցվածքների ստեղծման և առանձին նախագծերում ներդրումների իրականացման մեջ [4]:

Պետական նախագծերի ղեկավարումը իրականացվում է նույն ձևով, ինչ մասնավոր հատվածի նախագծերինը, սակայն պետք է հաշվի առնվեն այն օրենքներն ու կանոնակարգերը, որոնք կարգավորում են նախագծերի կատարման ընթացքը [6]:

Ծրագրերի և նախագծերի ղեկավարումը կարելի է պատկերացնել որպես **կառուցվածքա-գործառնական** մոդել, որը ներառում է հետևյալ բաժինները.

- Ծրագրի հայեցակարգի մշակում և հաստատում,
- Պետական պատվիրատու-կորդինատորների մշակում և հաստատում, որը ներառում է նախագծային թիմի ձևավորումը,
- Ծրագրային միջոցառումների (ժամկետներ, ծախսեր, ֆինանսավորման աղբյուրներ) տրամադրում կատարողներին և տեղեկատվության փոխանակման կանոնակարգողներին,
- Ծրագրերի իրականացման տվյալների հավաքագրում, ծրագրային միջոցառումների իրականացման վերահսկողություն, նրանց արդյունավետության գնահատում և անհրաժեշտության դեպքում վերաձևափոխման հետ կապված կառավարչական որոշումների ընդունում,
- Պետական ծրագրերի վերաբերյալ հասարակական կարծիքի գնահատում՝ ԶԼՄ-ների, սոցիալական ուսումնասիրությունների կամ փորձագետների կարծիքների վերլուծության միջոցով,
- Առաջացած խնդիրների, նրանց արդյունքների ներկայացում քաղաքացիական հասարակությանը՝ համացանցային հարթակների, պետական կառավարման մարմինների կողմից իրականացվող ելույթների, ԶԼՄ-ների միջոցով [1]:

Միջազգային փորձի վերլուծությունը ցույց է տալիս, որ ռազմավարական խոշոր նախագծերում բիզնեսի ու իշխանության փոխհամագործակցության կազմակերպման համար ստեղծվում է **կոորդինացնող մարմին**, որը ձևավորում է մասնակիցների կազմը, վերհանում է նրանց նպատակները, ներդրումային մտադրությունները, մասնակցության աստիճանն ու սպասվող արդյունքները [4]: Հաշվի առնելով ներդրումային նախագծերի անորոշության բարձր աստիճանը և արտաքին շուկաներում մրցակցության դինամիկ բնույթը՝ խոշոր նախագծերի պլանավորման ժամանակ մեծ նշանակություն ունի տարբեր **սցենարների մշակումը**, որոնց միջոցով հնարավոր է համահարթեցնել ռիսկային գործոնը, թիրախավորել գերածախսը [3]:

Հաշվի առնելով խոշոր նախագծի երկարաժամկետ բնույթը՝ նպատակահարմար է նրա իրականացումը բաժանել մի քանի **փուլերի**: Ամեն մի փուլը միջանկյալ նպատակներին հասնելն է, որոնք վերահսկվում են պետության կողմից: Նախագծերի իրականացման գործընթացի ղեկավարումը ենթադրում է ընկերությունների կողմից իրականացվող նախագծերի մեջ պետության մասնակցության ձևաչափի, պետական և մասնավոր հատվածների համագործակցության մեջ հնարավոր ուղիների սահմանումը, կատարողականի վերահսկումը, ինչպես նաև արտաքին պայմանների փոփոխությունների մոնիթորինգը [4]:

Հայաստանի ռազմավարական խոշոր ենթակառուցվածքային նախագիծ է **«Հյուսիս-Հարավ»** ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագիրը, որի նպատակն է միջազգային բարձր չափանիշներին բավարարող մայրուղային ճանապարհներով Հայաստանի հարավը կապել հյուսիսի հետ և ապահովել ելքը դեպի միջազգային շուկաներ: Հայաստանի հյուսիսը

հարավին կապող Բավրայից Մեղրի ճանապարհի ներկայիս երկարությունը կազմում է **556 կմ** և անցնում է Հայաստանի ողջ տարածքով՝ Մեղրիից մինչև Բավրա հիմնական խոշոր քաղաքներով. Գյումրի, Թալին, Աշտարակ, Երևան, Արարատ, Գորիս, Կապան, Ագարակ [11]:

Ծրագրի ավարտին Մեղրի-Երևան-Բավրա ճանապարհը կկրճատվի շուրջ 85 կմ-ով, իսկ միջազգային չափանիշների համապատասխանությունն ու բարձր որակը թույլ կտան ճանապարհը, նախկին 9,5 ժամի փոխարեն, հաղթահարել ընդամենը 4,5 ժամում: Հնարավոր կլինի ապահովել մինչև 100 կմ/ժ արագություն, ինչպես նաև հաշվարկվել է 2,5 դոլարի խնայողություն՝ յուրաքանչյուր ուղևորի 1 ժամվա երթևեկության և 1-ական դոլարի խնայողություն 1 տոննա բեռի փոխադրման 1 ժամվա համար [9]: Ծրագիրն իրականացվում է բազմատրանշ ֆինանսավորման տարբերակով: Այն բաժանված է առանձին 5 տրանշերի, որոնց շրջանակում կնքվում են վարկային առանձին պայմանագրեր: 2012 թ. հայտարարված ուսումնասիրությունների համաձայն՝ Հյուսիս-հարավ **556 կմ** ճանապարհային միջանցքի կառուցման ծրագիրը գնահատվել էր **962 մլն** ԱՄՆ դոլար [10]:

Ծրագրի մեկնարկը պիտի տրվեր 2009 թ. հոկտեմբերի 12-ին, իսկ ավարտը լիներ 2019 թ. հունիսին, սակայն հաջող է ընթացել միայն վարկ վերցնելու փուլը: 170 մլն վարկ վերցնելու և աշխատանքները սահմանված ժամկետից ուշ սկսելու համար (2009 թ. սեպտեմբերի փոխարեն շինարարական աշխատանքները սկսվել են 3 տարի անց՝ 2012 թ. սեպտեմբերին) Հայաստանի կառավարությունը Ասիական բանկին վճարել է 300 000 դոլար պարտավորության վճար: Ճանապարհի վերջը չի երևում, ինչը կապված է ծրագրի տարբեր փուլերում և իրագործման ողջ ընթացքում թույլ տրված բազմաթիվ սխալների և թերությունների հետ: Քննարկենք տրանշներից յուրաքանչյուրը և պարզենք, թե ինչպիսի խնդիրներ և պարադոքսներ են առաջացել նախագծի իրագործման ընթացքում.

- **Տրանշ 1 (Երևան – Աշտարակ 11, 4կմ, Երևան – Արտաշատ 19, 6կմ)** ընդհանուր երկարությունը՝ շուրջ 31կմ, արժեքը՝ 70.4 մլն ԱՄՆ դոլար

«Հյուսիս-Հարավի» մեկնարկը տրվել է 2013 թվականին՝ տրանշ 1-ից: Որոշ ժամանակ անց պարզ դարձավ, որ ծրագրի իրականացման կապալառուն գործը կատարում է դանդաղ և անորակ, նաև վերահսկիչ պալատի ուսումնասիրությունները ցույց տվեցին, որ ճանապարհի կառուցման որակի վերահսկողությունը կատարվել է ոչ այնքան լավ: Թերությունների շտկման համար ժամանակ տրվեց և տրանշ 1-ը հանձնվեց նախատեսվածից բավականին ուշ՝ 2015 թ. դեկտեմբերին, սակայն այն շուտով նորից փակվեց և վերաբացվեց միայն 2016 թ. հունիսին:

Պետք է նշել, որ ծրագրի մեկնարկն այս հատվածից, մեր կարծիքով, մեծ սխալ էր, քանի որ այն մինչ այդ էլ բավականին բարվոք վիճակում էր գտնվում, բացի այդ, ելնելով տեղանքի հարթ, ոչ լեռնային մակերևույթից՝ աշխատանքներ կատարելը հեշտ էր: Առավել կարևոր էր գործը մեկնարկել ծրագրի սահմանային հատվածներից, ինչը հարևան երկրներին՝ Վրաստանին և Իրանին, կստիպեր բարելավել նաև հյուսիս-հարավի շարունակությունը ապահովող իրենց ճանապարհները, առանց որի ծրագիրը զգալիորեն կկորցնի իր արդյունավետությունը:

Այսպիսով մի քանի տարվա ընթացքում կառուցվել է 556 կմ երկարության ճանապարհի ընդամենը 31 կմ-ը (5,6 %-ը), այն էլ որակային ու նախագծային մի շարք թերություններով, որոնք առ այսօր շտկվում են: Սակայն այստեղ կա ևս մեկ կարևոր խնդիր: Տրանշ 1-ի պայմանագիրը կնքվել է 2009 թ. հոկտեմբերին, պետք է ներառեր Երևան-Աշտարակ, Երևան-Արարատ հատվածը, սակայն ծրագրի ավարտին կապի և տրանսպորտի

նախարարությունը ներկայացվող հաշվետության մեջ որպես տրանշ 1-ի տարածք նշել է ոչ թե Երևան-Արարատ, այլ Երևան-Արտաշատ հատվածը: Փաստորեն Տրանշ 1-ով նախատեսված ճանապարհի երկարությունը՝ 56,4 կմ ճանապարհային տարածքը, կրճատվել, հասցվել է 31-ի, այսինքն՝ կառուցվել է նախատեսված ճանապարհի միայն 54,9 %-ը: Սակայն հատկանշական է նաև այն, որ 24,4 կմ կրճատելով հանդերձ՝ ծախսվել է նույն 70,4 մլն դոլարը, ինչը խոսում է ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործման, ինչպես նաև կոռուպցիոն գործոնների մասին:

- **Տրանշ 2. (Աշտարակ – Թալին)** ընդհանուր երկարությունը՝ շուրջ 42կմ, արժեքը՝ 179.6 մլն. ԱՄՆ դոլար

Այս ճանապարհահատվածի 1 կմ-ի միջին արժեքը կազմում է 4,3 մլն դոլար, ինչը բավականին բարձր ցուցանիշ է՝ հաշվի առնելով այն, որ այս հատվածում խոշոր ինժեներական հանգույցներ չեն կառուցվում: Ժամկետների հետ կապված նույնպես կան խնդիրներ. այն պետք է հանձնվեր 2014 թ. դեկտեմբերի 31-ին, բայց տեղափոխվեց 2017 թ. հունիսի 30, հետո էլ երկարաձգվեց 2019 թ. սեպտեմբերի 14-ը [20]: Հատկանշական է նաև այն, որ 2018 թ. ապրիլի 1-ից վճարվում են 2-րդ տրանշով նախատեսված վարկային պարտավորությունները այն դեպքում, երբ տրանշի շինարարությունը չի ավարտվել:

- **Տրանշ 3. (Թալին-Լանջիկ 18,7 կմ, Լանջիկ-Գյումրի 27,5 կմ)** ընդհանուր երկարությունը՝ շուրջ 46, 2կմ, արժեքը՝ մոտ 200 մլն ԱՄՆ դոլար

Վերջնաժամկետը նույնպես երկարաձգվել է մինչև 2019 թվականի սեպտեմբեր: Ըստ էության, ժամկետի տեսանկյունից արդեն խախտվել են նախնական հաշվարկներն ու պայմանավորվածությունները, սրան զուգահեռ աճում են շինարարության ծախսերը:

- **Տրանշ 4. Արտաշատ-Ագարակ (Արտաշատ-Քաջարան 304կմ, Քաջարան-Ագարակ 42կմ)** ընդհանուր երկարությունը՝ շուրջ 346կմ,
- **Տրանշ 5. Գյումրիի շրջանցիկ, Գյումրի-Բավրա** (երկարությունը՝ շուրջ 60կմ)

Հյուսիս-հարավ ճանապարհի ամենախնդրահարույց և առանցքային թեման այսօր թերևս 4-րդ և 5-րդ տրանշների ապագան է: Այս երկու տրանշների մասով առ այսօր նախագիծ չկա: Շրջանակային համաձայնագրով նախատեսված է, որ ՀՀ-ն կարող է ֆինանսավորման հայտեր ներկայացնել մինչև 2017 թ. դեկտեմբերի 31-ը, սակայն մինչ օրս որևէ նախագիծ չկա, իսկ ֆինանսների ձեռքբերման հարցում այստեղ կան նաև այլ խոչընդոտներ: Նախավերջին՝ 4-րդ տրանշի շրջանակներում ենթադրվում է ևս վարկային միջոցներ բերել, բայց դեռ վարկի ներգրավման իրական գործընթացները չեն սկսվել, որովհետև կա հարաբերակցություն ՀՆԱ-ի հետ, ինչը թույլ չի տալիս այսօր ներգրավել անհրաժեշտ վարկային միջոցները:

Պետական պարտքի մասին ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի համաձայն՝ պետական պարտքը տվյալ տարվա դեկտեմբերի 31-ի դրությամբ՝ չպետք է գերազանցի Հայաստանի Հանրապետության նախորդ տարվա համախառն ներքին արդյունքի 60 տոկոսը [7]:

2018 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ ՀՀ-ի ՀՆԱ-ն կազմել է 6 005 058,1 մլն ՀՀ դրամ, իսկ 2019 թ. հունվարի 31-ի դրությամբ ՀՀ պետական պարտքը կազմում է 3 381 320.9 մլն ՀՀ դրամ [8], ինչը, պարզ հաշվարկների արդյունքում պարզվում է, որ կազմում է ՀՆԱ-ի 56,3 %-ը, ինչը շատ մոտ է 60%-ին: ՀՀ պետական պարտքը գնալով աճում է, ինչն իր հերթին բարդացնում է վարկային միջոցներ ներգրավելու գործընթացը:

Ինչ վերաբերում է 5-րդ տրանշին, ապա այստեղ խնդիրը կայանում է նրանում, որ ըստ նախագծի՝ ենթադրվում է մասնավոր հատվածից ներդրումներ բերել, սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում հյուսիս-հարավը իր տարատեսակ ռիսկային, սկանդալային

գործոններով հանդերձ ձեռք է բերել բավականին բացասական վարկանիշ, ինչը թույլ չի տա, որ մասնավոր սեկտորը նախագիծը համարի գրավիչ:

5 տրանշների կառուցման շինարարական աշխատանքների ժամկետային շեղվածությունը ակնառու երևում է աղյուսակ 1-ում: Ինչպես տեսնում ենք, տեղի են ունեցել շինարարական աշխատանքների իրականացման զգալի շեղումներ, ինչը խոսում է ՊՈԱԿ-ի կողմից իրականացվող ոչ պատշաճ վերահսկման մասին, իսկ Տրանշ 1-ի դեպքում՝ ռեսուրսների անարդյունավետ օգտագործման մասին:

Աղյուսակ 1. «Հյուսիս–Հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային



ծրագրի ժամկետային շեղվածությունը[1]

Խոշոր նախագծերի պլանավորման և իրականացման գործում քննարկման առարկան և խնդիրը դառնում է նախագծի ընդհանուր արժեքը: Պետք է նշել, որ «Հյուսիս-Հարավ» ծրագրի արժեքը գնալով ավելանում է. նախնական փուլում ծրագիրն արժեր 962 մլն դոլար, իսկ հետո պարզ դարձավ, որ իրական արժեքը կարող է հասնել 2 մլրդի, քանի որ, եթե 119.2 կմ ընդհանուր երկարություն ունեցող առաջին 3 տրանշների շինարարության համար պահանջվել է 450 մլն դոլար, ապա պարզ հաշվարկներով կարող ենք կանխատեսել, որ մնացած՝ 406 կմ ճանապարհի համար կպահանջվի առնվազն 1.5 մլրդ դոլար: Բայց, միևնույն ժամանակ, զուտ տնտեսական նպատակահարմարությունից կարող ենք փաստել, որ եթե խոսքը գնում է 2 մլրդ դոլար ներդրում իրականացնելու մասին, ապա երկրում առկա են շատ ավելի լուրջ նշանակության ենթակառուցվածքային ներդրումային ծրագրեր, որոնցից առանցքային է *Իրան-Հայաստան* երկաթուղին, որը մոտակա 10-12 տարիների ընթացքում կկարողանար Հայաստանը դարձնել միջազգային տրանսպորտային երկաթուղային հաղորդակցության լիարժեք անդամ: Մինչդեռ հյուսիս-հարավը թե՛ իր թողունակությամբ, թե՛ իր տնտեսական, կոմերցիոն, մարքեթինգային նշանակությամբ չի կարող լուծել այդ խնդիրը: Առ այսօր՝ իր մեկնարկից գրեթե 10 տարի անց, պարզ չէ, թե երբ կավարտվի «Հյուսիս-Հարավ» ծրագիրը, և կավարտվի՞ արդյոք երբևէ: Եթե առաջին 3 տրանշների շինարարական աշխատանքները համարենք ավարտված (դեռևս պարզ չէ՝ 2-րդ և 3-րդ

[1] *Աղյուսակը կազմվել է հեղինակի կողմից՝ ըստ www.northsouth.am կայքի տվյալների:*

տրանշները հանձնվել են շահագործման, թե ոչ), ապա կարող ենք փաստել, որ ընդհանուր 119,2 կմ ճանապարհի շինարարության համար պահանջվել է 10 տարի, և եթե նույն տեմպերով շարունակվեն շինարարական աշխատանքները, ապա մնացած՝ 406 կմ ճանապարհի շինարարության համար կպահանջվի մոտ 34 տարի, ինչի արդյունքում կասկածի տակ է դրվում նախագծի իրականացման արդյունավետությունը:

Խոշոր նախագծերի պարադոքսն այն է, որ որքան աշխարհում շատ խոշոր ենթակառուցվածքային նախագծեր են առաջարկվում և իրականացվում, այնքան բացահայտ է դառնում այն, որ շատ նախագծերին բնորոշ են խնդիրներ, որոնք կապված են գերածախսերի հետ: Այս առումով հետաքրքիր է տրանսպորտային խոշոր նախագծերի ֆինանսավորման միջազգային փորձը [աղյուսակ 2].

Խոշոր նախագծի տեսակ	Նախագծի անունը, ավարտման թիվը	Ծախսերի գերազանցում (տոկոսներով)	Գերածախսի պատճառներ, խնդիրներ
Ենթակառուցվածքային (տրանսպորտային)	Թունել Լա-Մանշ (Անգլիա-Ֆրանսիա), 1994	80 %	Անվտանգության պահանջների փոփոխություն
Ենթակառուցվածքային (տրանսպորտային)	Մեծ Բելտ (Արևելյան Դանիա – Կոնտինենտալ Եվրոպա), 1997	54 %	Էկոլոգիական խնդիրներ և վթարներ
Ենթակառուցվածքային (տրանսպորտային)	Էրեսունյան կամուրջ-թունել (Շվեդիա - Դանիա), 2000	26 %	Դանիայի սահմանափակ մայրաքաղաքում խոշոր տրանսպորտային համակարգի ինտեգրում
Ենթակառուցվածքային (տրանսպորտային)	Հյուսիս-հարավ ճանապարհային միջանցք (Հայաստան) (շինարարական դեռևս աշխատանքները չեն ավարտվել)	Նախնական արժեք՝ 962 մլն դոլար, այժմ գնահատվում է 2 մլրդ, այսինքն գերածախսը կազմում է 107.9 %	Հողերի օտարման, վարկային միջոցներ ներգրավելու հետ կապված խնդիրներ, ոչ պատշաճ վերհսկողություն, ռեսուրսների անարդյունավետ օգտագործում, կոռուպցիոն ռիսկեր և այլն

Աղյուսակ 2. Գերածախս ունեցող հայտնի տրանսպորտային նախագծեր

Որպես կանոն, խոշոր ենթակառուցվածքային գերածախսերը գլոբալ են և անբաժանելի բնույթ: Փաստացի և կանխատեսված կապիտալային ծախսերի տարբերությունը հաճախ հասնում է **50-100%** [3]: Գերածախսերի հիմնական պատճառն այն է, որ նախագծի մշակման փուլում իրատեսորեն չեն հաշվարկվում ծախսերը, թերագնահատվում են ծախսերի տեխնիկական և նախագծային լուծումները, հաշվի չեն առնվում արժութային կուրսի տատանումները, աշխարհագրական ռիսկերը, շրջակա միջավայրի պաշտպանվածությունը: Թերագնահատման հիմնական պատճառն այն է, որ ի սկզբանե խեղաթյուրվում են ռազմավարական տվյալները, որպեսզի հաստատվի նախագծի մեկնարկը:



Գրաֆիկ 1. 20-րդ դարի 111 խոշոր նախագծերի գերածախսերի տոկոսային հարաբերակցությունը

Գրաֆիկում 1-ում ցույց է տրված 20-րդ դարի 111 խոշոր նախագծերի գերածախսերը՝ %-ային հարաբերակցությամբ: Ինչպես տեսնում ենք, նախագծերի թերածախսի/գերածախսի սահմանը տատանվում է -30%-ից մինչև +50%: Տեսանելի է նաև այն, որ ժամանակի գործոնը առանձնապես չի ազդել նախագծերի՝ գերածախսերի քչացման վրա, քայլեր չեն մշակվել, որպեսզի նախագծերի ծախսերի հաշվարկները լինեն մաքսիմալ իրատեսական [5]: Հավանականությունն այն բանի, որ նախագիծը կձախողվի, ինչպես նաև թե որքան կլինի գերածախսը, կախված է նախագծի տեսակից և ճյուղային պատկանելությունից (աղյուսակ 3) [2].

Ցուցանիշ	Ճանապարհ	Կամուրջ, Թունել	Էներգետիկա	Երկաթուղի	IT-նախագիծ	Օլիմպիական խաղ
Գերածախս, %	20	34	36	45	107	156
Գերածախսի հաճախականությունը	9/10	9/10	6/10	9/10	5/10	10/10
Նախագծի հանձնման հետաձգումներ, %	38	23	38	45	37	0
Ժամկետ	5.5	8	5.3	7.8	3.3	7

Աղյուսակ 3. Տարբեր տեսակի նախագծերի իրագործման ցուցանիշները (միջին)

«Հյուսիս–Հարավ» ճանապարհային միջանցքի ներդրումային ծրագրի դեպքում ամբողջ նախագծի վերջնական հանձնումը հետաձգվել է արդեն իսկ մոտ 100%-ով (միջին ցուցանիշից շեղվել է 62%-ով), իսկ գերածախսը կազմել է 107,9% (շեղվել է 87,9 %-ով), ինչը կարող է աճել նախագծի հետագա իրականացման ընթացքում:

Նախագծի մշակման և փորձարկման ավանդական մոտեցման բնութագրիչներն ու թերություններն են.

1. Նախագծի ցիկլը չի ներառում դրա իրագործելիության նախնական վերլուծության փուլը՝ նախքան լայնածավալ ուսումնասիրություն անցկացնելու մասին որոշում կայացնելը, որի արդյունքը կարող է լինել ռեսուրսների ոչ արդյունավետ օգտագործումը:

2. Նախագծերի իրականացման քաղաքական նպատակների քննարկումը թույլ չի տալիս, որպեսզի քննարկվեն տեխնիկական լուծումների այլընտրանքային տարբերակները:

3. Արտաքին միջավայրի ազդեցության հետ կապված խնդիրները հաշվի չեն առնվում մինչև նախագծի վերջին փուլի մեկնարկը:

4. Նախագիծը, ունենալով հանրային բնույթ, չի ապահովում հետաքրքրվող անձանց և հասարակության մասնակցության բավարար մակարդակը, ինչը հետագայում կարող է խնդիր առաջացնել մասնավոր հատվածին՝ նախագծի մեջ ներգրավելու հարցում:

5. Խորապես հաշվի չեն առնվում ռիսկերը, որոնք կարող են կապված լինել քաղաքական իրավիճակների, եղանակային ոչ բարենպաստ պայմանների և այլ գործոնների հետ, ինչը,

անկասկած անդրադառնում է նախագծի ժամկետների վրա:

Այսպիսով, կարելի է ասել, որ գոյություն ունեն տնտեսապես ոչ արդյունավետ նախագծեր, ինչը չի կարելի համարել պատահականության արդյունք: Եվ այս ամենը չի կարելի կապել միայն ծախսերի ոչ իրատեսական պլանավորման հետ: **Հիմնական խնդիրը** այն կողմերի պատասխանատվության պակասն է, որոնք զբաղվում են նախագծի մշակմամբ և իրականացմամբ, քանի որ շատ հաճախ նախագծերը ֆինանսավորվում են այլ խմբերի/կազմակերպությունների/բանկերի/պետության կողմից, ինչը էլ ավելի է նվազեցնում նախագիծը պատշաճ կերպով վերահսկելու հավանականությունը: Արդյունքում, իրական ծախսերն ու իրական ռիսկերը ի հայտ են գալիս միայն այն ժամանակ, երբ ամբողջապես սկսվում են իրականացվել շինարարական աշխատանքները: «Հյուսիս-Հարավ» ծրագրի օրինակով համոզվեցինք, որ առաջանում են ժամկետային խախտումներ, որոնց առկայության պայմաններում նախագիծը կորցնում է իր արդյունավետությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Алешин А. В. ,Управление проектами. Фундаментальный курс, стр. 470.
2. Жук А. А., Международный опыт создания крупных инфраструктурных проектов [статья], 2017, стр. 1866.
3. Кекелева С. В., Мегапроект как инструмент реализации инновационного подхода в социальноэкономическом развитии России [статья], 2016, стр. 182, 183.
4. Пляскина Н.И. , Согласования стратегических интересов институциональных участников ресурсных мегапроектов [статья], 2014, стр. 5785, 5786, 5787, 5792 .
5. Фливбьорг Б., Мегапроекты и риски: Анатомия амбиций, 2014, стр. 32.
6. Government Extension to the PMBOK Guide, third edition, 2006, p. 21.
7. www.arlis.am
8. www.armstat.am
9. www.finport.am
10. www.northsouth.am
11. www.tpio.am

ՀՏԴ 332.(479.25) Տնտեսագիտություն

Լուսինե Ասատրյան
Ուսանողուհի, ՀՊՏՀ ԳՄ
Գոհար Հովհաննիսյան
Ուսանողուհի, ՀՊՏՀ ԳՄ
Գիտական ղեկավար՝ Տեխն.գ.թ., դոցենտ
Հովհաննես Ուռումյան

ՀՀ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ

Բանալի բառեր՝ վերարտադրություն, ծնելիության գումարային գործակից, բրուտտո, նետտո, արդյունավետության գործակիցներ, պարզ վերարտադրություն, կանխատեսում

ՀՀ բնակչության վերարտադրության գործընթացը դասելով երկրի սոցիալ-տնտեսական և պետական անվտանգության հիմնախնդիրների շարքում, ծնելիության ու դրա ինտենսիվությունը բնութագրող ցուցանիշների համադրումներով և կանխատեսումներով հստակեցվում է անկումային միտումների պատկերը: Գնահատվում է վերջիններս պայմանավորող տարաբնույթ շարժառիթները և ուրվագծվում բնակչության վերարտադրության հիմնական մարտահրավերները:

Лусине Асатрян, Гоар Ованесян

ПРОБЛЕМЫ ВОСПРОИЗВОДСТВА НАСЕЛЕНИЯ РА

Классифицируя процесс воспроизводства населения РА в ряду проблем социально-экономическим и государственной безопасности страны, объединяя и прогнозируя показатели рождаемости и его интенсивности, проясняется картина снижения тенденций. Оцениваются различные мотивы, стоящие за ними, и намечаются основные проблемы воспроизводства населения.

ՀՀ տնտեսության զարգացման հիմնախնդիրների համատեքստում կողմնորոշիչ նշանակություն ունի ժողովրդագրական իրավիճակը, որն հիմնականում պայմանավորված է բնակչության վերարտադրության տեղաշարժերով: Վերջին տասը տարիներին նկատվող միտումները գլխավորապես կապված են բնակչության վերարտադրության գործընթացների հետ:

Բնակչության վերարտադրության դիալեկտիկան ներկայացվում է գործընթացների կոնկրետ տեղի ու ժամանակի պայմաններում դրանց առանձնահատկությունների սոցիալական անհրաժեշտությամբ: Այստեղ առաջնային դերակատարում ունեն ծնելիության հիմնախնդիրները: Դրանց վիճակագրական վերլուծությունը սկսվում է քանակական գնահատումից. որոշվում է ծնելության մակարդակը ամբողջ բնակչության և առանձին խմբերի համար, որպեսզի ուրվագծվեն ինտենսիվության և զարգացման սահմանագծերը: Վերջինս կարևորվում է նրանով, որ այն արտահայտվում է ըստ տարբեր գործոնների հետ խիստ դիֆերենցվածությամբ:

Ծնելիության մակարդակը հաստատուն մեծություն չէ և շարունակաբար փոփոխությունների է ենթարկվում տարածության և ժամանակի մեջ, ուստի, վիճակագրության հիմնական խնդիրն այստեղ ծնելիության ինտենսիվության աստիճանի և միտումների բացահայտումն է: Քանի որ այդ փոփոխությունները տեղի են ունենում բազմաթիվ ու բազմաբնույթ գործոնների ազդեցությամբ, դրանք տարանջատվում են համասեռ խմբերի՝ առանձնացնելով ամենաէականները, որոնցից հիմնականում կախված է ծնելիության մակարդակը և գնահատվում է

դրանց ազդեցությունը ինտենսիվության վրա:

ՀՀ բնակչության վերարտադրության հիմնական բնութագրական ցուցանիշները 2009-2018 թ.թ. ներկայացված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ՀՀ բնակչության վերարտադրության բնութագրական ցուցանիշները 2009-2018 թ.թ.

	Ծնվածն. թիվը /հազ. /	Մահացած. Թիվը /հազ. /	Բնական հավելաճ /հազ. /	Ամուսն. /հազ. /	1000 մարդու հաշվով			
					Ծնված-ներ	Մահա-ցածներ	Բնական հավելաճ	Ամուսնու-թյուններ
2009	44413	27560	16853	18145	13.7	8.5	5.2	5.8
2010	44825	27921	16904	17984	13.8	8.6	5.2	5.5
2011	43340	27963	15377	19706	13.3	8.6	4.7	6.0
2012	42480	27599	14881	19063	14.0	9.1	4.9	6.3
2013	41790	27196	14594	18363	13.8	9.0	4.8	6.1
2014	43031	27714	15317	18912	14.3	9.2	5.1	6.3
2015	41763	27878	13885	17603	13.9	9.3	4.6	5.9
2016	40592	28 226	12 366	16 294	13.5	9.4	4.1	5.5
2017	37700	27 157	10 543	15 214	12.6	9.1	3.5	5.1
2018	36502	25 645	10 857	14 822	12.3	8.6	3.7	5.0

Աղյուսակում բերված ցուցանիշները համապատասխանում են հանրապետության ժողովրդագրական վիճակագրության դինամիկայով ամրագրված միջին մակարդակներին: Տարեկան ծնվածների համակցությունը համասեռ չէ ըստ տարբեր գործոնների: Ծնված տղաների թիվը, գլխավորապես ազգային առանձնահատկությամբ պայմանավորված /աղջիկների ծննդի կասեցումը/ նկատելիորեն գերազանցում է աղջիկների թվին հակառակ այն հանգամաքի, որ մինչև 1 տարեկան տղաների մահացածությունը գերազանցում է աղջիկներինը: Այս խնդիրը հիմնավոր ուսումնասիրման և գնահատման կարիք ունի և ծնվածների շարունակական նվազման հետ Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական կարևորագույն մարտահրավերներ է: Իսկ մշտական բնակչության կառուցվածքում կանանց տեսակակար կշռի առավելությունը պայմանավորված է նրանց կյանքի միջին տևողության ավելի բարձր մակարդակով: Տարածքային առումով ավելի մեծ թիվ են կազմում քաղաքային բնակավայրերում ծնվածները, որը կապված է այն իրողության հետ, որ հանրապետության բնակչության շուրջ 64%-ը կենտրոնացված է քաղաքներում՝ չնայած ծնելիության ինտենսիվության տեսանկյունից պատկերը դարձյալ հակառակն է:

Հայաստանի բնակչության վերարտադրության ընթացքը ներկայումս թևակոխել է մի փուլ, որը կրում է նախորդ փուլի բոլոր բացասական ազդեցությունները, որոնք պայմանավորված են երկրաշարժի և 90-ականների պատերազմական գործողությունների պարտադրած արտագաղթով և բռնագաղթով՝ դրանցից բխող ժողովրդագրական հախուռն տեղաշարժերով: Հատկանշական է, որ պահպանվել է այն հայտնի օրինաչափությունը, որ ժողովրդագրական բնականոն ընթացքը խաթարող մարդկային զանգվածային կորուստներին հետևում են դրանք հակակշռող գործընթացներ: Այսպես, երկրաշարժին հաջորդած տարիներին մինչև 1989-1992 թ.թ. ծնվածների թիվը մոտեցել է հանրապետությունում առավելագույն ծննդաբերություն արձանագրած 1986 թ. մակարդակին /81,2 հազար/՝ կազմելով համապատասխանաբար՝ 75,3 79,9 77,8 և 70,6 հազար մարդ: Եվ այդ տարիներին բնակչության բնական աճի միտումները իրենց բարձրագույն արտահայտություններն ունեցան հենց աղետի գոտում: Այդ բարդ սոցիալ-տնտեսական իրավիճակում երկրաշարժն ու պատերազմը բնակչության թիվն ավելացնելու ազդակներ հանդիսացան: Զգալիորեն բարձրացավ վաղ ամուսնության ինտենսիվությունը, և երեխաների թիվն ավելացնելու բարոյահոգեբանական վարքագիծ ձևավորվեց նույնիսկ այն կանանց մոտ, ովքեր ավարտված էին համարում իրենց ընտանիքի վերարտադրությունը: Այսուհանդերձ, դրանց զուգընթաց Հայաստանին պատուհասող ժողովրդագրական

բացասական երևույթները խստագույնս արտահայտվեցին հենց աղետի գոտում, քանի որ այստեղ բնակչությունն հայտնվել էր կենսապահովման և զբաղվածության բարդ հիմնախնդիրների առջև, որոնք և տեղի տվեցին զանգվածային արտագաղթի: Վերջինս էլ շարունակում է դասվել վերարտադրության բնականոն ընթացքը խաթարող առաջնային մարտահրավերների շարքին: Հետևանքն այն եղավ, որ կտրուկ նվազեցին ծնելիության ցուցանիշները և բնակչության տարիքային կազմում սկսեցին

նշմարվել ծերացման առաջին նախանշանները, որը պարզորոշ երևում է վիճակագրական տվյալների դինամիկայում:

Աղյուսակ 2.ՀՀ բնակչության 60 տարեկանը գերազանցող կազմը 2014-2018 թ.թ.

/հազար մարդ/

Տարիքային խումբը	2014	2015	2016	2017	2018
60-64	142,5	150,8	158,1	164,8	171,7
65-69	83,4	95,7	107,5	115,2	122
70-74	81	67,3	56,7	55,9	61,8
75-79	83,6	88,1	88,2	85,4	77,5
80-ից բարձր	72,7	72	76	79,3	83,3
Ընդամենը	317,58	402,52	486,5	500,6	516,3

Ըստ տարիների մշտական բնակչության նկատմամբ բերված ամփոփ տվյալների աճի տեմպերը կազմում են համապատասխանաբար՝ 10,5, 13,4, 16,2, 16,8 և 17,4 %, իսկ 2017 թ. և 2018 թ. 65 տարիքը գերազանցող բնակչության համար՝ 11,2 % և 11,6 %, այնինչ ծերացող բնակչության ՄԱԿ-ի սահմանած սահմանանիշը 7%-ն է: Բնակչության ծերացման խորացման միտումները Հայաստանի սոցիալ-ժողովրդագրական կարևոր մարտահրավերներից է:

Վերջին տասը տարիների տվյալներով /աղյուսակ 3/ նկատվում է մշտական բնակչության նվազման միտումներին զուգընթաց վերարտադրության հարաբերական ցուցանիշների մակարդակների նույնօրինակ փոփոխություններ:

Պատկերն ամբողջացնում է Հայաստանի բնակչության բացարձակ և հարաբերական ցուցանիշների կանխատեսումները: Միջին մակարդակները որոշվել են ժողովրդագրության մեջ ընդունված միջին լոգարթմականով՝

$$S_{\text{միջ.}} = \frac{S_t - S_0}{lnS_t - lnS_0},$$

Իսկ կանխադեսվող մակարդակները որոշվել են $S_t = S_{\text{միջ.}} + t.m_{\text{միջ.}}$, որտեղ $S_{t\text{-ն}}$ կանխատեսվող մակարդակն է, t-ն՝ ժամանակը, $m_{\text{միջ.}}$-ը՝ տարեկան միջին

բացարձակ հավելաճը: :

Աղյուսակ 3.ՀՀ վերարտադրության հարաբերական ցուցանիշները մշտական բնակչության համադրումներով 2009-2018 թ.թ.

	Մշտական բնակչ. /հազ./	**Ծնելիության գումարային գործակից**	**Վերարտադրության բրուտտ գործակից (R)**	**Վերարտադրության նետտո գործակից (R₀)**	**Արդյունա-վետության գործակից (R/R₀)**	**Աղջիկների տեսակարար կշիռը**
2009	**3240.7**	**1.551**	**0.724**	**0.696**	**1.0402**	**0.47**
2010	**3259.1**	**1.556**	**0.727**	**0.698**	**1.0415**	**0.47**
2011	**3270.0**	**1.516**	**0.707**	**0.679**	**1.0412**	**0.47**
2012	**3282.0**	**1.583**	**0.736**	**0.707**	**1.0410**	**0.47**

2013	3017.0	1.573	0.739	0.710	1.0408	0.47
2014	3009.8	1.651	0.766	0.746	1.0268	0.47
2015	3004.0	1.645	0.801	0.770	1.0402	0.47
2016	2993.9	1.647	0.777	0.747	1.0401	0.47
2017	2979.6	1.576	0.752	0.722	1.0415	0.47
2018	2972.7	1.572	0.745	0.716	1.0405	0.47

Բերված մեթոդաբանության հաշվարկներով ՀՀ կանխատեսվող ծնվածների թիվը 2018 թ. 5 տարի անց կկազմի 34276 մարդ, 10 տարի անց՝ 27748 մարդ, 15 տարի անց՝ 21219 մարդ, 20 տարի անց՝ 14690 մարդ, մահացածների թիվը՝ 5 տարի անց՝ 26397 մարդ, 10 տարի անց՝ 25437 մարդ, 15 տարի անց՝ 24477 մարդ, 20 տարի անց՝ 23517 մարդ: Ինչպես երևում է մահացածների թիվը նվազում է ավելի դանդաղ տեմպերով, ուստի շոշոփելիորեն չի թուլացնում բնական հավելաճի արձանագրված անկումային միտումները:

Վերարտադրության բնութագրական հարաբերական ցուցանիշների կանխատեսվող մակարդակները բերված են աղյուսակ 4-ում:

Ինչպես երևում է ներկայացված մակարդակների դինամիկայից, ՀՀ բնակչության պարզ վերարտադրությունը շարունակում է մնալ ժողովրդագրական կարևորագույն հիմնախնդիրների օրակարգում:

Աղյուսակ 4.ՀՀ բնակչության վերարտադրության հարաբերական ցուցանիշների կանխատեսվող մակարդակները:

Կանխատեսմա տարեթիվը	Ծնելիության գումար. գործակիցը	Վերարտադր. բրուտտո գործակիցը (R	Վերարտադրու թյան նետտո գործակիցը (R_0	Արդյունա վետության գործակիցը, (R/R_0)
2023	1.533	0.729	0.702	1.038
2028	1.454	0.708	0.672	1.053
2033	1.375	0.687	0.642	1.07
2038	1.296	0.666	0.612	1.088
2043	1.217	0.645	0.582	1.108

Վերջին տասնամյակներում ՀՀ բնակչության վերարտադրության ցուցանիշների շեշտակի նվազումը, բնակչության սեռատարիքային բաշխման հավասարակշռության խաթարումը, ֆինանսական և մտավոր կապիտալի արտահանումը հանգեցնում է նրան, որ ՀՀ բնակչության վերարտադրության իրադրությունը առաջնահերթ լուծում պահանջող պետական անվտանգության հիմնախնդիրներից է, որը պարտադրում է պետական նպատակաուղղված ժողովրդագրական քաղաքականության իրականացում:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Հ.Ուռումյան և ուր. «ՀՀ բնակչության կանխատեսումները»: Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, 2012 թ. հ.6., էջ 177-185:

2.Հ.Ուռումյան և ուր. «ՀՀ բնակչության վերարտադրությունը որպես մարդկային կապիտալի զարգացման նախապայման»: ՀՊՏՀ 23-րդ գիտաժողովի նյութեր 2013 թ. , էջ 192-198:

ՀՏԴ 331.5(479.25) Տնտեսագիտություն

Լիանա Ղազարյան
Ուսանողուհի, ՀՊՏՀ ԳՄ
Գիտական ղեկավար՝ Տեխն.գ.թ., դոցենտ
Հովհաննես Ուռուման

ՀՀ ԱՇԽԱՏԱՆՔԻ ՇՈՒԿԱՆ ԺՈՂՈՎՐԴԱԳՐԱԿԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑՆԵՐԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *աշխատանքային ռեսուրս, աշխատուժ, միգրացիա, աշխատուժի ընդհանուր գործակից, աշխատուժի ինդեքս, կանխատեսում*

Ետսեփականաշնորհման ժամանակաշրջանում Հայաստանում տեղի ունեցած քաղաքական, սոցիալ-տնտեսական, ժողովրդագրական արմատական փոփոխությունների ենթատեքստում բերվում է երկրի աշխատանքի շուկայի և ժողովրդագրության փոխկապակցությունների վիճակագրական վերլուծությունը: Ինդեքսային համակարգի օգնությամբ գնահատվում է աշխատուժի մակարդակի վրա ազդող հիմնական գործոնները և նախանշվում պետական կարգավորման հիմնական ուղղությունները:

Лиана Газарян

РЫНОК ТРУДА В КОНТЕКСТЕ ДЕМОГРАФИЧЕСКИХ ПРОЦЕССОВ

В контексте политических, социально-экономических, демографических изменений, произошедших в Армении в период после приватизации, представлен статистический анализ взаимосвязей между рынком труда страны и демографией. Система индексации оценивает основные факторы, влияющие на уровень рабочей силы, и выделяет основные направления государственного регулирования.

ՀՀ տնտեսության զարգացման գործընթացներում հիմնարար դերակատարում ունի ժողովրդագրական իրավիճակը:

Վերջին երեք տասնամյակների ընթացքում Հայաստանի Հանրապետությունում տեղի ունեցած արտակարգ իրադարձությունները հանգեցրին ժողովրդագրական բնականոն ընթացքի խաթարման, որը վատթարագույնս անդրադարձավ տնտեսական գործընթացների վրա: Ուստի ժողովրդագրական նպատակամղված քաղաքականության վարումը երկրի պետականության ամրապնդման և տնտեսության առողջացման առաջնահերթություններից է:

Հնագույն ժամանկանկերից հասարակության հատուկ ուշադրությանն է արժանացել բնակչության թվի փոփոխության ազդեցությունը երկրի տնտեսական, քաղաքական և պաշտպանունակության վրա: Եվ միանգամայն օրինաչափ է, որ Ադամ Սմիթը երկրի բնակչությունն համարել է երկրի գլխավոր հարստությունը: Տնտեսության կառավարման մարդակենտրոն հայեցակարգով են առաջնորդվել Սոլոնը, ԱՄՆ-ի մեծ բարեփոխիչ Թոմաս Ջեֆերսոնը, բայց այն գիտագործնական տեսության վերածվեց արևմյան Գերմանիայի կանցլեր Լյուդվիգ Էրհարդի պաշտոնավարման տարիներին և հայտնի է «սոցիալական շուկայական տնտեսություն» անվանումով, որի հիմնական դրույթները շարադրված են նրա «Տնտեսական հրաշքի գաղտնիքները» գրքում: Սակայն այս մոտեցումը սկիզբ է առել դեռևս 1929-1931 թ.թ. ֆինանսական ճգնաժամի հաղթահարման գաղափարով մտահոգված Ջ.Քեյսի մակրոտնտեսական համակարգում, երբ դրվում էին ՍՇՏ հիմնաքարերը: Այստեղ որպես հիմնարար դրույթ ընդունվում է տնտեսության սոցիալական ուղղվածությունը, այսինքն կենտրոնական տեղ է հատկացնում պետությանը, նրա վերահսկիչ և կարգավորիչ դերին: Լ.Էրհարդը շեշտում էր, որ պետությունը պատասխանատվություն է կրում տնտեսական

քաղաքականության հետևանքների, կայունության ապահովման, համաշխարհային տնտեսությանը ինտեգրվելու համար:

Պետության մտահոգությունների առանցքում մարդն է իր սոցիալական խնդիրներով, մի բան, որ խթանում է բնակչության տնտեսական ակտիվությունը և տնտեսական ներուժի լիարժեք իրացումը: Հատկանշական է, որ իրականացված ներդրումները փոխհատուցվում են և վերածվում նոր ներդրումների աղբյուրի՝ շարունակականաբար թեթևացնելով պետության բեռը:

ՀՀ ամենաիրական հարստությունը մարդն է, ինչն ամրագրված է սահմանադրության մեջ և որպես տնտեսության զարգացման մոդել՝ ՍՇՏ-ն:

Սրանք ելակետային իրավական հիմքեր են ժողովրդագրական գործընթացների և դրանց համաքայլ տնտեսության առաջընթացի համար: Այսինքն երկրի տնտեսական և սոցիալական բոլոր խնդիրների առանցքում պետք է լինի բնակչության տնտեսական ակտիվության բարձրացման, տնտեսական ներուժի բարելավման հիմնախնդիրը: Եվ այս մոտեցումը արդարացվում է նրանով, որ այդ նպատակով իրականացված ներդրումները արագորեն փոխհատուցվում են և վերածվում նոր ներդրումների աղբյուրի: Բացի այդ, դրանով շարունակաբար թեթևանում է պետության հոգսերի բեռը: Հակառակ դրան, իրողությունն այն է, որ անկախացման տարիներից ի վեր անտեսվել է մարդը, հատկապես հայ մարդու ստեղծագործելու բացառիկ կարողությունը, որից շռայլորեն օգտվում են տնտեսական զարգացման բարձր նշաձող ապահովող երկրները: Այս մոտեցումը1929-1931 թ.թ.ֆինանսական ճգնաժանի հաղթահարման գաղափարով մտահոգված Ջ.Քեյսի մակրոտնտեսական համակարգում, ինչպես նաև դրանից սկիզբ առնող տնտեսագիտական հայեցակարգերում, երբ դրվում էին ՍՇՏ հիմնաքարերը: Ինչպես նշվեց, Հայաստանի ամենաիրական հարստությունը մարդն է, նրա մտավոր ներուժը: Նրա առջև ծառացած է երկու խնդիր՝ մտավոր ներուժի օգտագործում և սոցիալական խնդրի լուծման հնարավորություն: Այստեղ գերիշխողը այն գաղափարն է, որ տնտեսական առողջ քաղաքականությունը պետք է հիմնվի սոցիալակն արդարության հաստատման և առողջ մրցակցային միջավայրի ապահովման վրա, քանի որ այս նախապայմանները միայն կարող են ապահովել մարդկային գործոնի լիարժեք դրսևորումը: Այս առումով առաձնակի է կարևորվում տարածքային հավասարաչափ զարգացման պահանջը: Վիճակագրական պատկերը խիստ մտահոգիչ է, քանի որ երկրի բնակչության գերակշռող մասը կենտրոնացված է քաղաքներում, որից 36%-ը՝ Երևանում:

Երկրի աշխատանքային ներուժը աշխատանքային ռեսուրսների հանրագումարի և դրանց որակական հատկանիշների ամբողջականությունն է: Աշխատանքային ռեսուրսների քանակական մակարդակը կապված է ժողովրդագրական իրավիճակի և վերարտադրության բնականոն ընթացքն ապահովող գործոնների հետ, իսկ որակական կողմը աշխատանքային ներուժի ինտենսիվ ցուցանիշ է և արտահայտվում է այն կրողների ֆիզիկական և առողջական վիճակով, աշխատունակությամբ, կրթական-մասնագիտական հմտություններով:

Հայաստանի աշխատանքային ռեսուրսների մակարդակների և դինամիկայի մասին ընդհանուր պատկերացում է տալիս հաշվեկշիռը:

Հատկանշական է, որ հակառակ այն բանին, որ դիտարկվող տարիներին մշտական բնակչության թիվը նվազել է (3076.8-ից հասնելով 2972,7 հազար մարդու), աշխատանքային ռեսուրսների մակարդակները նվազել են ավելի բարձր տեմպերով, որոնք վկայում են այն մասին, որ հանրապետությունից արտագաղթում է գերազանցապես աշխատունակ տարիքի բնակչությունը: Հայտնի է, որ միգրացիոն գործընթացները ինտենսիվ են հատկապես նախկին վարչատնտեսական միավորների միջև, քանի որ ավելի վաղ հաստատված մշակութային, լեզվական, վարչական, ներդրումային, տրանսպորտային ու կոմունիկացիոն կապերը

հնարավորություն են ստեղծել նորովի վերակենդանացնել հին կապերը: Դրա վառ վկայությունը Հայաստանից դեպի Ռուսաստան միգրացիոն հոսքերի ծավալներն են: Երբ դիտարկում ենք արտագաղթի կառուցվածքն ըստ մարզերի, ապա այստեղ ուրվագծվում է երեք խումբ. Էմիգրացիոն ակտիվությունը համեմատաբար ցածր է Արարատի և Արմավիրի մարզերում, միջին էմիգրացիոն ակտիվությամբ են բնորոշվում Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Արմավիրի մարզերը, իսկ Երևանի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Շիրակի էմիգրացիոն ակտիվությունը զգալիորեն գերազանցում է հանրապետության միջին մակարդակը: Բերված իրողությունները վկայում են այն մասին, որ արտագաղթի հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է: Հանրապետությունից բացակայողների 53%-ը երկիրը լքել է կամ գործազրկության պատճառով /33.8%/, կամ բավարար կենսամակարդակ չապահովող գործունեության պատճառով: Մեծ թիվ են կազմում նաև սոցիալական, բարոյահոգեբանական և Հայաստանի ապագայի նկատմամբ հավատի բացակայության պատճառով արտագաղթածները: ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից “TACIS” ծրագրի աջակցությամբ իրականացված հետազոտության համաձայն, արտագաղթվածների ընդհանուր ծավալում 20-30 տարեկան բնակչության տեսակարար կշիռը կազմում է 17.9%: Վերջիններիս վրա երկրի կատարած ծախսերը, այսինքն անվերադարձ կորուստները առողջապահության նախարարության գնահատականով 1796 մլն դոլար է, իսկ տնտեսական կորուստներն ավելի մեծ են:

Հիմնական բնութագրական ցուցանիշները բերված են աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1.ՀՀ աշխատանքի շուկայի բնութագրական ցուցանիշները 2009-2018թ.թ.

/հազար մարդ/

Տարեթիվը	ՀՀ մշտ.բն	Աշխ.ռես.	Աշխատուժ
2009	3076,8	2397,6	1418,8
2010	3055,2	2398,7	1463,3
2011	3018,9	2286,3	1440,9
2012	3021,4	2260,8	1418,3
2013	3026,9	2189,1	1388,4
2014	3017,1	2180,2	1375,7
2015	3010,9	2106,6	1316,4
2016	2998,6	2011,4	1226,3
2017	2986,1	2021,3	1230,7
2018	2972,7	2015,3	1149,5

Մակարդակների միտումները գնահատելու համար կատարենք ինդեքսային վերլուծություն 2018 թ.-ի մակարդակները 2009 թ.-ի նկատմամբ:

Աշխատուժի տեսակարար կշիռները բազիսային և հաշվետու ժամանակաշրջաններում նշանակելով d_0 և d_1, աշխատուժի ընդհանուր գործակիցները՝ $k^0_ը$ և $k^1_ը$, հատուկ գործակիցները՝ $k^0_հ$ և $k^1_հ$, ապա՝

$$k^0_ը = d_0 . k^0_հ \quad \text{և} \quad k^1_ը = d_1 . k^1_հ:$$

Այս առնչությունների հիման վրա կառուցենք ինդեքսների համակարգ:

Աշխատուժի փոփոխուն կազմով ինդեքսը կընդունի հետևյալ տեսքը՝

$$I_{փ.կ}= d_1 . k^1_հ / d_0 . k^0_հ :$$

Կայուն կազմով ինդեքսը կընդունի հետևյալ տեսքը՝

$$I_{կ.կ}= d_1 . k^1_հ / d_1 . k^0_հ :$$

Կառուցվածքային տեղաշարժերով ինդեքսը կընդունի հետևյալ տեսքը՝

$I_{կ.տ} = d_1 . k^0_h / d_0 . k^0_h$

Իսկ ինդեքսների մուլտիպլիկատիվ մոդելը՝

$I_{փ.կ} = I_{կ.կ} = I_{կ.տ.}$:

Աղյուսակ 1-ում բերված տվյալներով կունենանք՝

$d_0 = 2397,6/3076,8 = 0,779$ $d_1 = 2015,3/2972.7 = 0,668$

$k^0_h = 1418,8/2397,6 = 0,592$ $k^1_h 1149,3/2397,6 = 0,479$

$k^0_ը = 1418,8/3076,8 = 0,461$ $k^1_ը = 1149,3/2972,7 = 0,387$

$I_{փ.կ} = d_1 . k^1_h / d_0 . k^0_h = 0,320/0,461 = 0,694,$

$I_{կ.կ} = d_1 . k^1_h / d_1 . k^0_h = 0,32/0,396 = 0,808,$

$I_{կ.տ} = d_1 . k^0_h / d_0 . k^0_h = 0,396/0,461 = 0,859$:

Հաշվարկների ճշտությունը ստուգվում է մուլտիպլիկատիվ մոդելի օգնությամբ՝ 0,808.0,859=0,694:

Այսինքն երկու գործոնների ազդեցությամբ աշխատուժի ընդհանուր գործակիցը նվազել է 30,6 %-ով:

Որոշենք գործոններից յուրաքանչյուրի ազդեցության աստիճանը:

ա/ի հաշիվ աշխատուժի հատուկ գործակցի փոփոխության՝

$I_{ը(k)} = d_1 . k^1_h / d_1 . k^0_h = 0,808$ կամ նվազել է 19,2%-ով:

ա/ի հաշիվ աշխատուժի կառուցվածքային տեղաշարժերի՝

$I_{ը(d)} = d_1 . k^0_h / d_0 . k^0_h = 0,859$ կամ նվազել է 14,1 %-ով:

Բերված ինդեքսային վերլուծությունը վկայում է այն մասին, որ դիտարկված տասնամյա ժամանակահատվածում նկատվում են աշխատուժի մակարդակների կտրուկ անկումային միտումներ, որոնք առավելապես պայմանավորված են աշխատուժի հատուկ գործակցի փոփոխություններով:

2009 թ.աշխատուժը կազմում է աշխատանքային ռեսուրսների 59,2 %-ը, 2018թ.՝ 57,1%-ը, իսկ 2018 թ.աշխատանքային ռեսուրսների և աշխատուժի մակարդակները 2009 թ.-ի նկատմամբ կազմել են համապատասխանաբար 16,3% և 8,3 %-ը, որը տարիների ընթացքում առաջացած սոցիալ-տնտեսական և ժողովրդագրական սպառնալիքների քանակական արտահայտությունն է: Կարելի է ենթատրել, որ աշխատանքային ռեսուրսների 40-50%-ը կազմում են գործազուրկները: Սա լուրջ սոցիալ-ժողովրդագրական մարտահրավեր է, որի հաղթահարումը կապված է պետականորեն իրականացվող համալիր միջոցառումների ծրագրի հետ:

Հայտնի է, որ միգրացիոն գործընթացները ինտենսիվ են հատկապես նախկին վարչատնտեսական միավորների միջև, քանի որ դրա հնարավորությունն ընձեռում էին նախկինում հաստատված բազմաբնույթ կապերը: Եվ բնական էր սպասել, որ Հայաստանից դեպի Ռուսաստան միգրացիոն հոսքերը անհամեմատ մեծ ծավալներ կունենային: Երբ դիտարկում ենք արտագաղթի կառուցվածքն ըստ մարզերի, ապա այստեղ ուրվագծվում է երեք խումբ. Էմիգրացիոն ակտիվությունը համեմատաբար ցածր է Արարատի և Արմավիրի մարզերում, միջին էմիգրացիոն ակտիվությամբ են բնորոշվում Սյունիքի, Վայոց Ձորի, Տավուշի և Արմավիրի մարզերը, իսկ Երևանի, Գեղարքունիքի, Կոտայքի, Լոռու և Շիրակի էմիգրացիոն ակտիվությունը զգալիորեն գերազանցում է հանրապետության միջին մակարդակը: Բերված իրողությունները վկայում են այն մասին, որ արտագաղթի հիմնական պատճառը աշխատատեղերի բացակայությունն է: Հանրապետությունից բացակայողների 53%-ը երկիրը լքել է կամ գործազրկության պատճառով /33.8%/, կամ բավարար կենսամակարդակ չապահովող գործունեության պատճառով: Մեծ թիվ են կազմում նաև սոցիալական, բարոյահոգեբանական և Հայաստանի ապագայի նկատմամբ հավատի բացակայության պատճառով արտագաղթածները:

Հատկանշական է, որ արտագաղթվածների ընդհանուր ծավալում 20-30 տարեկան բնակչության տեսակարար կշիռը կազմում է 17.9%:

Հարկ է նշել, որ արտագաղթը երկակի ազդեցություն է ունենում մարդկային կապիտալի թե՛ քանակական, թե՛ որակական արժեզրկման գործում: Ուստի աշխատանքի շուկայի պետական կարգավորման անհրաժեշտությունը առաջնահերթ խնդիր է, որն անկարելի է լուծել առանց զբաղվածության պետական իրատեսական քաղաքականության ծավալման: Ժողովրդագրական իրավիճակը գործազրկության և թերզբաղվածության հետ կանխորոշում են աշխատանքային շուկայի դրությունը և դրանից բխող միջոցառումների բնույթը: Անհրաժեշտություն է առաջանում բացահայտել աշխատանքի, ապրանքային ու ծառայությունների փոխկապակցությունը և դրա հիման վրա աշխատուժի առաջարկի ու պահանջարկի հարաբերությունը կարգավորել: Պետական քաղաքական ծրագիրը պետք է ներառի ուսուցման, մասնագիտացման բարձրացման գործառույթները, մանր և միջին գործարարությունը, ինքնազբաղվածությունը և դրանց բնականոն ընթացքի համար օրենսդրական դաշտի ապահովումը: Այսպիսով պետական ազգային քաղաքականության առանցքում աշխատատեղերի ստեղծումն է, որի համար պետք է վերակողմնորոշել տնտեսության բոլոր հատվածները: Այնպիսի միջավայրի ստեղծում, որը կնպաստի տեղական և օտարերկրյա ներդրողներին՝ ներառելոն ինչպես հակամենաշնորհային, այնպես էլ մանր ու միջին բիզնեսները խթանող գործառույթներ, ազատ տնտեսական գոտիների ձևավորման իրատեսական հնարավորություններ, հարկային և մաքսային բարեփոխումներ և այլն:

Առանձնակի է կարևորվում լեռնահանքային արդյունաբերության և տեղեկատվական տեխնոլոգիաների ժամանակի պահանջներին համընթաց զարգացման խնդիրները:

Հայաստանի տնտեսության առաջնահերթություններից է գյուղատնտեսության ոլորտի առողջացումը, որի համար անհետաձգելի խնդիրներ են ֆերմերային տնտեսությունների ձևավորումը, գյուղարտադրության արդյունավետությունը բարձրացնող ագրոտեխնիկական միջոցառումների ու մեքենայացման արդիականացումը, սելեկցիոն անվտանգության ապահովումը, սուբսիդավորումը, պետական հոգածու վերաբերմունքը:

Օրակարգային հիմնահարցերի շարքին պետք է դասել մտավոր սեփականության պաշտպանությունը և դրան համապատասխան օրենսդրական դաշտի կատարելագործումը:

Համաշխարահային փորձը թույլ է տալիս կիրառել ավելցուկ աշխատուժի ժամանակավոր արտահանման պրակտիկան, որն հնարավորություն է տալիս թե պահպանել քաղաքացիների մասնագիտական հմտությունները, թե կասեցնել բարձր որակավորում ունեցող մասնագետների արտահոսքը երկրից:

Եվ պետության գերխնդիրը աշխատուժի արտահանության գործընթացը ներգաղթի հետ զուգակցելն է, որի համար անհրաժեշտ է մշակել առանձնահատուկ քաղաքականություն: Միայն հաշվեկշռված խելամիտ քաղաքականությամբ կարելի է բարեփոխել արտագաղթող-ներգաղթող բնակչության կառուցվածքը՝ պահպանելով երկրի աշխատանքային մասնագիտական ներուժը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հ.Ուռումյան և որ. «Մարդկային կապիտալը որպես տնտեսության մրցունակությունը բարձրացնող կռվան», ՀՊՏՀ գիտաժողովի նյութեր, 2012 թ., էջ491-496:
2. Հ.Ուռումյան և որ. «ՀՀ տնտեսության նորաստեղծական զարգացման հիմնախնդիրները և դրանց ժողովրդագրական հետևանքները», ՀՊՏՀ գիտաժողովի նյութեր, 2011 թ., էջ234-240:
3. Հ.Ուռումյան և որ. «Գիտելիքահենք տնտեսության հիմնախնդիրները ՀՀ-ում», Տեղեկատվական տեխնոլոգիաներ և կառավարում, 2012 թ., հ.6., էջ166-174:

ՀՏԴ330.1 Տնտեսագիտություն

Գոհար Ղուլյան
ԱրՊՀ, Տնտեսագիտության ֆակուլտետ
«Ֆինանսներ» բաժին, IV կուրս

ԿԵՆՍԱԹՈՇԱԿԱՅԻՆ ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԵՐԴՐՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅՈՒՆԸ ԱՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *Կուտակային բաղադրիչ, կամավոր կենսաթոշակ, սոցիալական վճար կենսաթոշակային հաշիվ, մասնակից*

Ինչպես հանրապետության տնտեսության մյուս ոլորտներում, այնպես էլ սոցիալական ապահովության ոլորտում բարեփոխումները անընդհատական բնույթ են կրում: Այս համատեքստում Կառավարությունը մեծ կարևորություն է տալիս հատկապես կենսաթոշակային համակարգին, որի բարեփոխումները, ըստ ամենայնի, նպատակաուղղված են ինչպես արցախցի կենսաթոշակառուներին հավուր պատշաճի կենսաթոշակով ապահովելուն, այնպես էլ կենսաթոշակային համակարգը ֆինանսապես ավելի կայուն դարձնելուն:

Гоар Гулян

НЕОБХОДИМОСТЬ ВНЕДРЕНИЯ СИСТЕМЫ ПЕНСИОННОЙ РЕФОРМЫ В АР

Ключевые слова: накопительная компонент, добровольная пенсионная система, социальные выплаты, пенсионный фонд, участник.

В результате пенсионной реформы будет уменьшена бедность среди пенсионеров, и работник будет более заинтересованно реагировать на свою заработную плату. Следует отметить, что спрос на знания финансовых рынков среди молодежи будет расти, а пенсии и неоплачиваемые пенсии могут быть легко переданы по наследству и переведены из страны в страну. И самое главное, возможности для государственных инвестиций увеличатся.

Իրականացվող կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում Արցախում գործում է բազմաստիճան կենսաթոշակային համակարգ, որը ներդրվել է 2019 թվականի հուլիսի 1-ից:

Միջազգային փորձը ցույց է տալիս, որ ֆինանսապես անկայուն կենսաթոշակային համակարգ ունեցող երկրները խնդիրը փորձում են լուծել հիմնականում հետևյալ երեք անցումային միջոցառումները կիրառելով՝

- անցում սերունդների համերաշխության սկզբունքով ֆինանսավորվող կենսաթոշակային բաշխողական համակարգից դեպի ինքնաֆինանսավորվող կուտակային համակարգի,
- անցում բանաձևերի հիման վրա հաշվարկվող և քաղաքական որոշումներով սահմանվող կենսաթոշակի մոդելից դեպի իրական եկամուտների հիման վրա սահմանված վճարների մոդելի,
- անցում պետության կողմից անմիջապես կառավարվող կենսաթոշակային համակարգից դեպի պետության կողմից կարգավորվող և վերահսկվող մասնավոր կենսաթոշակային համակարգի[1]:

Անկախ այն հանգամանքից, թե ինչ բնույթի են հիմնախնդիրներն ու ինչ հրատապության

[1] *114 հարց ու պատասխան Հայաստանի Հանրապետության բազմաստիճան կենսաթոշակային համակարգի վերաբերյալ*

մարտահրավեր են դրանք առաջացրել, բոլոր երկրների կառավարությունները փորձում են հաղթահարել դրանք՝ կիրառելով իրենց երկրների սոցիալ-տնտեսական, քաղաքական իրավիճակին ու հասարակական գիտակցության մակարդակին համապատասխան և միմյանցից հաճախ տարբերվող մոտեցումներ: Գործնականում, երկրները նախաձեռնում և իրականացնում են կենսաթոշակային համակարգերի արմատական կամ մասնակի բարեփոխումներ, որոնք կարելի է խմբավորել ըստ հետևյալ հիմնական ուղղությունների.

1. ***Կենսաթոշակային պետական համակարգի արմատական վերակառուցում***: Այս ուղղությունը հիմնականում իրականացվել է այսպես կոչված «Չիլիական մոդելով»: Ուղղության գաղափարական մոտեցումը նրանում է, որ պետությունը պետք է հոգ տանի միայն աղքատ և խոցելի բնակչության մասին՝ ապահովելով այդ խավերը նպատակային ծերության նվազագույն կենսաթոշակով: Հասարակության կենսունակ խավերը պարտավոր են ինքնուրույն ապահովել իրենց (և իրենց հարազատների) ծերությունը՝ խնայողություններ կատարելու միջոցով:

Բարեփոխումների այս ուղղությունն են ընտրել Լատինական Ամերիկայի և Կարիբյան գրեթե բոլոր երկրները, Ավստրալիան և Իսլանդիան, իսկ ԱՊՀ երկրներից՝ Ղազախստանը:

2. **Կենսաթոշակային պետական համակարգի «բեռնաթափում»՝** կենսաթոշակների հաշվարկման բանաձևի և/կամ կենսաթոշակային իրավունակության կանոնների փոփոխման ճանապարհով: Այս ուղղությունը հայտնի է որպես «պարամետրիկ ռեֆորմ», քանի որ վերաբերում է գործող համակարգի ներսում կենսաթոշակային կարևոր չափորոշիչների վերանայմանը: Նշված տիպի ռեֆորմների գաղափարական մոտեցումն այն է, որ պետությունը պետք է հոգ տանի մեծահասակների կյանքի որակի բարելավման և առողջության պահպանման համար՝ նպաստելով նրանց աշխատունակ տարիների ավելացմանը: Խրախուսելով մեծահասակների աշխատելը և/կամ եկամտաբեր գործունեությամբ զբաղվելը, պետական միջոցները պետք է հիմնականում նպատակաուղղվեն տարեցների այն խմբերին, որոնք իրապես անաշխատունակ են, կամ որոնց եկամուտները ցածր են որոշակի շեմից: Պարամետրիկ ռեֆորմների «բումը» 1990-ականներն էին, երբ դրանք ինտենսիվ կերպով անց էին կացվում հատկապես Արևմտյան Եվրոպայում:

Անցումային տնտեսությամբ երկրները 90-ականների կեսերին նույնպես ստիպված էին անցկացնել որոշ պարամետրիկ փոփոխություններ: Ի թիվս ԱՊՀ բոլոր երկրների, Հայաստանը ևս 1996-ին բարձրացրեց կենսաթոշակային տարիքը, հիմնովին փոխեց կենսաթոշակի հաշվարկման բանաձևն ու մտցրեց ինդեքսավորման նոր սկզբունքը (աշխատավարձի հետ կապը փոխարինվեց կենսաթոշակի ինդեքսավորմամբ):

Բազմաստիճան կենսաթոշակային համակարգի ձևավորման ուղղության ընտրությունը կատարել են արդեն տասնյակ երկրներ, հիմնականում Մերձբալթյան, Արևելյան Եվրոպայի ու ԱՊՀ անցումային տնտեսությամբ երկրները: Բարեփոխումների սկզբնական փուլը վերաբերում է հիմնականում 1998-2002 թվականներին, երբ նախկին սոցիալիստական 10 երկրներ ներդրեցին պարտադիր կուտակային համակարգը: Ըստ որում, որոշ անցումային տնտեսությամբ երկրներում արդեն 1994-1996թթ. օրենսդրությամբ սահմանված էր և խրախուսվում էր աշխատողների կամավոր մասնակցությունը մասնավոր կենսաթոշակային սխեմաներին:[1]

[1] *Կենսաթոշակային համակարգի բարեփոխումների ծրագիր, հիմնական սկզբունքներ, մարտավարական քայլեր և ակտուարական կանխատեսումներ 2008-2080 թթ. համար, Երևան, 2008թ.:*

Արցախի Հանրապետությունում իրականացված կենսաթոշակային բարեփոխումների արդյունքում ներդրվել է երկու նոր՝ կուտակային և կամավոր կենսաթոշակային բաղադրիչներով համակարգ:

Բարեփոխումները առաջին հերթին պայմանավորված էին առկա իրավիճակով, երբ բարձր որակավորում ունեցող անձը, որն ամբողջ կյանքում ստացել էր բարձր աշխատավարձ, հաշվարկվում է այնքան կենսաթոշակ, որքան ամբողջ կյանքում նվազագույն աշխատավարձ ստացած անձինը, ինչն, բնականաբար, արդարացի չէ:

Մյուս կարևորագույն խնդիրն այն է, որ արձանագրվում է բնակչության ծերացում, ինչպես նաև առաջիկայում կանխատեսվում է կենսաթոշակառուների թվաքանակի աճ՝ պայմանավորված այն հանգամանքով, որ 2015-2045 թվականներին կենսաթոշակի իրավունք է ձեռք բերում 1950-80-ական թվականներին ծնված սերունդը, երբ ծնելիությունը եղել է բարձր: [1]

Արցախի Հանրապետությունում 2015 թվականի հուլիսի 1-ից սահմանված հիմնական կենսաթոշակի և աշխատանքային ստաժի 1 տարվա արժեքները մինչ օրս փոփոխության չեն ենթարկվել, արդյունքում վերջին տարիների աշխատանքային կենսաթոշակի միջին չափի դինամիկան ունի հետևյալ տեսքը. 2016թ.՝ 43100 դրամ, 2017թ.՝ 43000, 2018թ.՝ 43100 դրամ, 2019թ.՝ 43000 դրամ:

Հանրապետությունում միջին ամսական անվանական աշխատավարձը 2016թ. կազմել է 150678 դրամ, 2017թ.-ին՝ 152068 դրամ, իսկ 2018 թ.-ին՝ 159382 դրամ, որոնց վճարման ենթակա գումարները համապատասխանաբար կազմել են 118553, 120133 և 125911 դրամ:

2016-2018թթ. անվանական աշխատավարձի և միջին կենսաթոշակի հարաբերությունը կունենա այսպիսի տեսք. 118553/43100, 120133/4300 և 125911/43000: Շուրջ 3 անգամ գերազանցում է միջին աշխատավարձի չափը միջին կենսաթոշակի չափին, այսինքն՝ չկա ուղղակի կապ ոչ կենսաթոշակառուի նախկինում կատարած վճարների ու ներկայիս կենսաթոշակի չափի միջև, ոչ էլ ներկայիս միջին աշխատավարձի ու ներկայիս կենսաթոշակի չափի միջև, որի արդյունքում էապես տարբերվում են կենսաթոշակառուների և աշխատող բնակչության կենսամակարդակները, ինչը հանգեցնում է անցանկալի սոցիալական հետևանքների: Կենսաթոշակների չափերը հիմնականում չեն ապահովում բավարար կենսամակարդակ, այլև կենսաթոշակառուների մի ստվար զանգված շարունակում է ստանալ նվազագույն սպառողական զամբյուղի արժեքից ցածր կենսաթոշակ: Կենսաթոշակառուների շրջանում աղքատությունը նվազեցնելու նպատակով 2019 թ. հունվարի 1-ից պետական կենսաթոշակային ապահովության համակարգում ներդրվել է նոր գործիք՝ նվազագույն կենսաթոշակի չափ, որը կազմում է 25500 դրամ:

Սոցիալական, աշխատանքային և զինվորական կենսաթոշակների չափերը չեն կարող պակաս լինել Արցախի Հանրապետության կառավարության սահմանած նվազագույն կենսաթոշակի չափից՝ 25500 դրամից, որը հավասար է 2019թ. պարենային (ծայրահեղ) աղքատության գծին:

Ըստ այդմ, կենսաթոշակառուների մոտ շարունակում է մեծ մնալ աղքատության ռիսկը: Այս ամենը պատճառ են հանդիսացել կենսաթոշակային բարեփոխումների ներդրմանը:[2]

---

[1] *ԼՂՀ կառավարության 2012 թվականի հունվարի 19-ի «Հիմնական կենսաթոշակի, նվազագույն կենսաթոշակի և թաղման նպաստի չափերը, ստաժի մեկ տարվա արժեքը, պարտադիր ժամկետային զինվորական ծառայության շարքային կազմի զինծառայողների հաշմանդամության և նրանց ընտանիքների անդամների կերակրողին կորցնելու դեպքում կենսաթոշակների չափերը սահմանելու մասին» N 11-Ն որոշում:*

[2] *http://www.stat-nkr.am/hy/component/content/article/691:*

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, կենսաթոշակային բարեփոխումների իրականացումը (կուտակային բաղադրիչի ներդրումը) միաժամանակ նաև տնտեսական աճի լուրջ խթան է:

Բարեփոխումների արդյունքում արցախյան կենսաթոշակային համակարգը բաղկացած է 4 բաղադրիչներից:

0-ական աստիճան. այս աստիճանից սոցիալական կենսաթոշակ է տրամադրվում այն անձանց, ովքեր չունեն օրենքով սահմանված նվազագույն ստաժ և բոլորել են 65 տարեկանը, կամ ճանաչվել են հաշմանդամ, կամ կորցրել են կերակրողին: Այս բաղադրիչի հիմնական նպատակը աղքատության հաղթահարումն է: Սոցիալական կենսաթոշակները ֆինանսավորվելու են ԱՀ պետական բյուջեից: Օրենքով սահմանված նվազագույն ստաժ չունենալու դեպքում սոցիալական կենսաթոշակի իրավունք կունենան նաև այն անձինք, ովքեր հանդիսանում են կուտակային բաղադրիչի մասնակից:

1-ին աստիճան, որը աշխատանային կենսաթոշակ է տրամադրում ներկա կենսաթոշակառուներին և մինչև 1974 թվականի հունվարի 1-ը ծնված այն քաղաքացիներին, որոնք «Պետական կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքով սահմանված կարգով կունենան աշխատանքային կենսաթոշակի իրավունք: Այս աստիճանից կենսաթոշակ կտրամադրվի նաև 1974 թվականի հունվարի 1-ից հետո ծնված այն անձանց, ովքեր 2019 թ. Հուլիսի 1-ի դրությամբ կունենան 10 և ավելի տարվա աշխատանքային ստաժ:

2-րդ աստիճան կամ կուտակային բաղադրիչ. այս բաղադրիչից կենսաթոշակ կվճարվի կուտակային բաղադրիչի մասնակիցներին (այն անձանց, ովքեր կատարել են սոցիալական վճարներ): Կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվելու են սոցիալական վճարներ կատարած անձանց համար (օգտին) փոխանցված կուտակային հատկացումներից ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին:

3-րդ աստիճան կամ կամավոր կենսաթոշակային բաղադրիչ. այս բաղադրիչից կվճարվի կամավոր կուտակային կենսաթոշակ: Կամավոր կուտակային կենսաթոշակները ֆինանսավորվելու են կամավորության սկզբունքով կատարվող վճարների ու դրանց ներդրումից ստացված եկամուտների հաշվին[1]:

Կուտակային բաղադրիչին մասնակցում են՝

1. 1974թ. հունվարի 1-ին և դրանից հետո ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը, եթե կատարում են սոցիալական վճարներ,
2. մինչև 1974թ. հունվարի 1-ը ծնված վարձու աշխատողները, անհատ ձեռնարկատերերը, եթե կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա ստանձնել են սոցիալական վճար կատարելու պարտականություն,
3. ինքնազբաղված անձինք՝ անկախ տարիքից, եթե կենսաթոշակային ֆոնդի ընտրության դիմումի հիման վրա ստանձնել են սոցիալական վճար կատարելու պարտականություն:
4. զինծառայողները և զինծառայողներին հավասարեցված անձինք (ԱՀ զինված ուժերի ծառայողները, ոստիկանները, ԱՀ ազգային անվտանգության ծառայության ծառայողները, հարկադիր կատարողները, քրեակատարողական ծառայողները, փրկարարական ծառայության ծառայողները)՝ անկախ տարիքից, կուտակային բաղադրիչի պարտադիր մասնակիցներ չեն:[2]

---

[1] *ԱՀ բազմաստիճան կենսաթոշակային համակարգի վերաբերյալ տեղեկագիր, 2019 թ.:*

[4] http://mss.nkr.am/?page_id=16803

Անձն ինքն է ընտրում այն պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և ֆոնդի կառավարչին, որը կառավարելու է իր կուտակային կենսաթոշակային միջոցները: Անձը կարող է փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը և ֆոնդի կառավարչին, ինչպես նաև միաժամանակ իր ակտիվները ներդնել մի քանի պարտադիր կենսաթոշակային ֆոնդերում: Օրինակ, նախկինում կուտակված միջոցները թողնել պարտադիր կենսաթոշակային ֆոնդում, իսկ ապագա կուտակային միջոցները կառավարման հանձնել մեկ այլ կենսաթոշակային ֆոնդի կառավարչի:

Մասնակիցը կարող է ցանկացած պահի փոխել պարտադիր կենսաթոշակային ֆոնդը՝ ընտրելով նույն կառավարչի այլ ֆոնդ կամ այլ կառավարչի որևէ ֆոնդ: Ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի փոփոխությունը տարեկան մեկ անգամ կատարվելու է անվճար, իսկ դրանից հետո՝ մեկ տարվա ընթացքում, կրկին ֆոնդի կառավարչի կամ ֆոնդի փոփոխության դեպքում կառավարիչը կարող է գանձել փայերի մարման վճար:

Կուտակային կենսաթոշակի ստացման ձևը կախված է մասնակցի կենսաթոշակային հաշվում առկա միջոցների չափից: Կենսաթոշակային տարիքը լրանալուց հետո մասնակիցը կարող է իր կուտակային կենսաթոշակը ստանալ հետևյալ 3 ձևերով՝

անուիտետ, որը միանվագ փոխանցված գումարի դիմաց ապահովագրական ընկերության կողմից անձին որոշակի ժամանակահատվածում և պարբերականությամբ վճարվող գումարն է: Եթե անձի կուտակային միջոցների ամսական գումարը՝ հավասարաչափ ամսական վճարների վերածելու դեպքում, մեծ է հիմնական կենսաթոշակի 75 տոկոսից, ապա մասնակիցը պարտավոր է ընտրել որևէ ապահովագրական ընկերություն և նրա հետ կնքել անուիտետի պայմանագիր:

- ***միանվագ վճար,*** որը միանվագ վճարը՝ կուտակային կենսաթոշակը ստանալու իրավունք ձեռք բերելուց հետո անձի կենսաթոշակային հաշվում առկա միջոցները (կամ դրանց մի մասը) ամբողջապես մասնակցին միանգամից վճարելն է:
- ***ծրագրային վճար,*** ծրագրային վճարը մասնակցի կենսաթոշակային հաշվում կուտակված միջոցների հաշվին ամսական կտրվածքով վճարվող կենսաթոշակ է, որը բաշխված է ըստ կյանքի սպասվող միջին տևողության ամիսների:

Կուտակային բաղադրիչի յուրաքանչյուր մասնակցի համար մասնակիցների ռեեստրը վարողի մոտ բացվում է անհատական կենսաթոշակային հաշիվ, որտեղ արտացոլվում են մասնակցին պատկանող պարտադիր կենսաթոշակային ֆոնդի փայերի, այդ փայերի հաշվարկային արժեքի, մասնակցի օգտին կատարված սոցիալական վճարների վերաբերյալ տեղեկությունները:

Անձի՝ մինչև 63 տարին լրանալը, մահվան դեպքում կուտակային միջոցները կմնան պարտադիր կենսաթոշակային ֆոնդում և 3 տարի կկառավարվեն ֆոնդի կառավարչի կողմից: 3 տարվա ընթացքում ժառանգներ ի հայտ չգալու և փայերը չժառանգելու դեպքում կուտակային միջոցները՝ սահմանված կարգով, կճանաչվեն անժառանգ և կփոխանցվեն ԱՀ պետական բյուջե:

Կամավոր կենսաթոշակային բաղադրիչի մասնակից կարող է լինել ցանկացած անձ՝ անկախ տարիքից և անկախ այն հանգամանքից, որ նա պարտադիր կուտակային և բաշխողական կենսաթոշակային բաղադրիչի մասնակից է, թե ոչ: Կամավոր կենսաթոշակային բաղադրիչն ընդունված է անվանել *կենսաթոշակային համակարգի 3-րդ բաղադրիչ*: Կատարելով կամավոր կուտակային վճարներ՝ անձը ձեռք է բերում լրացուցիչ կենսաթոշակ ստանալու իրավունք: Անձի օգտին կամավոր կուտակային վճար կարող են կատարել նաև գործատուները՝ այդ նպատակով միանալով կամավոր կենսաթոշակային

բաղադրիչի որևէ կենսաթոշակային սխեմայի: Կամավոր կուտակային վճարի չափը կսահմանվի կողմերի՝ կամավոր կուտակային վճար կատարողի և կամավոր կուտակային սխեմա առաջարկող ֆինանսական կազմակերպության փոխադարձ համաձայնությամբ:[1]

Խոսելով նոր համակարգի անցման արդյունավետության, դրա առավելությունների մասին՝ միաժամանակ անհրաժեշտ է նշել նաև որոշակի էական թերություններ՝ կապված մի համակարգից մյուսին անցնելու հետ:

Այսպես՝ «Կուտակային կենսաթոշակների մասին» ԱՀ օրենքը ուժի մեջ է մտել 2019 թվականի հուլիսի 1-ից, իսկ դա նշանակում է, որ մինչ այդ, եթե անձը մինչ այդ ուներ, օրինակ՝ ինը տարվա աշխատանքային ստաժ, ապա նա չի կարող համարվել 1-ին աստիճանի շահառու: Այսինքն, նա 63 տարեկան հասակում կստանա իր կենսաթոշակային հաշվում կուտակված սոցիալական վճարներին համապատասխան կենսաթոշակ և 65 տարեկանում ծերության սոցիալական կենսաթոշակ: Ներկայումս գործող «Պետական կենսաթոշակների մասին» ԼՂՀ օրենքի համաձայն ևս՝ տասը տարուց քիչ աշխատանքային ստաժ ունեցող անձը 65 տարեկան հասակում ստանում է ծերության սոցիալական կենսաթոշակ, սակայն հնարավորություն ուներ յուրաքանչյուր ժամանակ աշխատելու ձեռք բերելու նվազագույն աշխատանքային ստաժ և ձեռք բերելու աշխատանքային կենսաթոշակի իրավունք, հետևաբար՝ ստանալու աշխատանքային կենսաթոշակ: Իսկ 2019 թվականի հուլիսի 1-ից հետո կուտակային բաղադրիչի մասնակիցը չի կարող որևէ ազդեցություն ունենալ մինչ այդ ձեռք բերած աշխատանքային ստաժի վրա՝ անհրաժեշտ սահմանին հասցնելու համար:

Այսպիսով, բարեփոխումների արդյունքում կենսաթոշակառուների շրջանում կրճատվելու է աղքատությունը, աշխատողը ավելի մեծ պատասխանատվությամբ է վերաբերվելու իր աշխատավարձի հաշվարկման հարցերին: Տեղին է նշել, որ երիտասարդության շրջանում մեծանալու է ֆինանսական շուկաների մասին գիտելիքների նկատմամբ պահանջը, իսկ կենսաթոշակային միջոցները և թե՛ վճարվող կենսաթոշակները հեշտությամբ կարելի կլինի փոխանցել ժառանգության իրավունքով և տեղափոխել երկրից երկիր: Եվ, որ ամենակարևորն է, պետական ներդրումների հնարավորություններն են մեծանալու:

[1] http://minfin-nkr.am/uploadfiles/1561793508.pdf

ՀՏԴ 339.1 Տնտեսագիտություն

Ռազմիկ Մշեցյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ. Հ. Պապոյան
Էլ. հասցե՝ razmik-mshecyan@mail.ru

ԴԻՎԵՐՍԻՖԻԿԱՑԻԱՆ ՈՐՊԵՍ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր՝ *ապրանքային տեսականի, ռիսկ, ֆինանսատնտեսական կայունություն, եկամտաբերություն, նոր շուկաներ, հոլդինգ:*

Դիվերսիֆիկացման մարկետինգային ռազմավարության հիմնական նպատակը գործունեության ռիսկի նվազեցումն է, բիզնեսի եկամտաբերության, մրցունակության բարձրացումը: Հոդվածում ուսումնասիրվել է ձեռնարկությունների գործունեությունը ապրանքային շուկայում, դիվերսիֆիկացիոն ռազմավարությունը, դրա ազդեցությունը ֆինանսատնտեսական գործունեության վրա: Ուսումնասիրության նպատակը դիվերսիֆիկացիայի արդյունավետության, առավելությունների բացահայտումն ու գնահատումն է: Թեմայի արդիականությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ շուկայական տնտեսության պայմաններում արտաքին միջավայրի փոփոխություններին համընթաց քայլելը և այդ փոփոխություններին հարմարվելը ձեռնարկության համար դառնում են ուղղակի անհրաժեշտություն: Իսկ դրա ճանապարհներից մեկն էլ հենց դիվերսիֆիկացիոն ռազմավարության մշակումն է:

Размик Мшецян

ДИВЕРСИФИКАЦИЯ КАК СТРАТЕГИЯ РАЗВИТИЯ

Ключевые слова*: ассортимент продукции, риск, финансово-экономическая стабильность, прибыльность, новые рынки, холдинг.*

Основной целью маркетинговой стратегии диверсификации является снижение бизнес-рисков, повышение прибыльности и конкурентоспособности бизнеса. В статье рассматривается деятельность предприятий на товарном рынке, стратегия диверсификации и ее влияние на финансово-хозяйственную деятельность. Целью исследования является выявление и оценка эффективности и преимуществ диверсификации. Актуальность темы обусловлена тем, что в условиях рыночной экономики для предприятия шагать в ногу с изменениями внешней среды и адаптироваться к этим изменениям становится необходимостью. И одним из этих способов является разработка стратегии диверсификации.

Ցանկացած ձեռնարկություն, նույնիսկ ամենահաջողակը, չի կարող անփոփոխ կերպով երկար ժամանակ գործունեություն ծավալել: Սակայն գոյություն ունի մի կարևոր «գործիք», որը մեծացնում է տվյալ բիզնես-գաղափարի կայունությունը և կրճատում արտաքին միջավայրի փոփոխվող պայմանների ազդեցության պատճառով վնասներ կրելու ռիսկը: Խոսքը դիվերսիֆիկացիայի մասին է:

Արտաքին միջավայրը փոփոխվում է անընդհատ՝ ստիպելով ձեռնարկությանը մշտապես ծանոթ լինել նոր տենդենցներին և բիզնեսը կազմակերպել տնտեսական փոփոխություններին ու նորույթներին համապատասխան:

Դիվերսիֆիկացիան կարող ենք բնութագրել որպես մասնագիտացման հակառակ

գործընթաց: Այն իրենից ներկայացնում է ապրանքների և ծառայությունների տեսականու լայնացում, ինչպես նաև նոր շուկաների գրավում: Այլ կերպ ասած՝ դիվերսիֆիկացիան մարկետինգային ռազմավարություն է, ըստ որի՝ ձեռնարկությունը դուրս է գալիս իր համար նոր շուկա՝ սկսելով արտադրել այնպիսի ապրանքներ, որոնք ուղղակի կապ չունեն տվյալ ձեռնարկության գործունեության նախորդ ոլորտների հետ: Ժամանակավոր դժվարությունների կամ շուկայական որևէ սեգմենտի եկամտա-բերության նվազման պայմաններում պետք է լինեն և գործեն այլընտրանքային ուղղություններ, որոնք կփոխհատուցեն անկում ապրող սեգմենտից կրած վնասները: Դիվերսիֆիկացիան ձեռնարկության գործունեության արդյունավետությունը անկախ է դարձնում որևէ առանձին ապրանքի կյանքի ցիկլից: Այս ռազմավարությունը ընտրելու հիմնական նպատակը հետևյալն է. ձեռնարկության գործունեության արդյունա-վետությունը բարձրացնել ոչ թե միայն տվյալ պահին կամ կարճատև ժամանակահատվածում, այլ երկարատև ժամանակահատվածի կտրվածքով և տնտեսական անկման իրավիճակում պահպանել կազմակերպության աշխատունակությունը, ինչպես նաև եկամտաբերությունը: Ձեռնարկության ակտիվները և կապիտալը բաժանվում են գործունեության տարբեր ուղղությունների միջև ապագա կորուստների ռիսկը նվազեցնելու նպատակով: Դիվերսիֆիկացիոն ռազմավարությունը ճիշտ իրականացման դեպքում կարող է բարձրացնել բիզնեսի կայունությունը, սակայն այն պահանջում է ձեռնարկության ներքին ռեսուրսների, արտաքին միջավայրի գործոնների մանրակրկիտ գնահատում, ինչպես նաև շուկայական տենդենցների վերաբերյալ խորը գիտելիքներ:

Դիվերսիֆիկացիան կարող է հանդես գալ տարբեր ձևերով: Միջազգային պրակտիկայում առանձնացվում է չորս հիմնական ռազմավարություն՝ ուղղահայաց, հորիզոնական, համակենտրոն և կոնգլոմերատային: *Հորիզոնականի* դեպքում ձեռնարկությունը մշակում և արտադրում է այնպիսի նոր ապրանքներ, որոնք կարող է վաճառել իր արդեն ունեցած սպառողներին ու հաճախորդներին՝ հիմնվելով գոյություն ունեցող արտադրական տեխնոլոգիաների և վաճառքի մակարդակի վրա: Այս ռազմավարությունն իրականացնելիս ռիսկերը նվազում են ապրանքային տեսականու բազմազանության հաշվին: Եվ եթե որևէ ապրանք շուկայում կորցնում է իր ակտուալությունը, նմանատիպ այլ ապրանքի թողարկումը և վաճառքը ապահովում է կայուն եկամուտներ: Օրինակ՝ կաթնամթերքի արտադրությամբ զբաղվող ընկերությունը պանրի նոր տեսակ է ավելացնում իր ապրանքային տեսականուն: *Ուղղահայաց* դիվերսիֆիկացիայի ռազմավարությունը ենթադրում է արտադրական շղթայի վրա տվյալ կազմակերպության տեղաշարժը դեպի վերև կամ ներքև: Ձեռնարկությունը իր վրա է վերցնում իր արտադրական ցիկլին նախորդող փուլերը կամ էլ շարժվում է առաջ՝ դեպի հաջորդ փուլեր: Այս ռազմավարության ընտրությունը հնարավորություն է տալիս կրճատել երրորդ կողմից կախվածությունը և բոլոր կարևոր գործընթացները կենտրոնացնել մեկ կազմակերպության մեջ: Ուղղահայաց դիվերսիֆիկացիայի օրինակ է այն դեպքը, երբ ընկերությունը այլևս իր արտադրանքը չի վաճառում միջնորդների միջոցով և բացում է մանրածախ ու մեծածախ առևտրի սեփական խանութ: *Համակենտրոն* ռազմավարություն իրականացնելիս կազմակերպությունը արտադրում է լրացուցիչ ապրանքներ, որոնց օգտագործումը հեշտացնում, բարելավում է հիմնական արտադրատեսակի օգտագործումը: Այս ռազմավարությունը հիմնականում ընտրվում է փոքր ընկերությունների կողմից, և նոր մշակված ապրանքները շատ սերտ են կապված լինում հիմնական բիզնեսի հետ: Վերջինը՝ *կոնգլոմերատային* ռազմավարությունը, իրենից ներկայացնում է բիզնեսի իրարից լրիվ

անկախ ուղղությունների ներդրում: Ընկերությունը գործունեություն է ծավալում իր համար նոր շուկայական սեգմենտում և ձեռք է բերում նոր սպառողներ: Ըստ էության՝ ստացված շահույթը ներ է դնում նոր, աճող ու բարձր եկամտաբեր ճյուղերում: Օրինակ՝ ընկերությունը, որ զբաղվում է կոշիկի արտադրությամբ, դուրս է գալիս իր համար նոր՝ հագուստի շուկա՝ օգտագործելով սպառողների վարքագծի և նախընտրությունների մասին սեփական փորձն ու գիտելիքները:

Գոյություն ունեն բազմաթիվ շարժառիթներ, որոնք կազմակերպությանը դրդում են օգտվել դիվերսիֆիկացիոն ռազմավարությունից.

Շարժառիթ	
Տեխնոլոգիական	• Ձեռնարկության արտադրական կարողությունների լրիվ և արդյունավետ օգտագործում • Հումքի, նյութերի, տեխնոլոգիաների այլընտրանքային օգտագործում
Տնտեսական	• Նոր շուկաների գրավում • Կապիտալի օգտագործման ոլորտների ընդլայնում
Ֆինանսական	• Կապիտալի կայունություն
Սոցիալական	• Նոր աշխատատեղերի ստեղծում
Ռազմավարական	• Շուկայական նոր իրավիճակին հարմարեցում

Աղյուսակ 1. Դիվերսիֆիկացիայի իրականացման շարժառիթները

Բոլոր այս շարժառիթները կարող են գոյություն ունենալ և՛ իրարից անկախ, և՛ միմյանց հետ փոխկապակցված: Դա կախված է ձեռնարկությունից և շուկայական իրավիճակից:

Դիվերսիֆիկացիան՝ որպես գործընթաց, ունի նաև որոշակի թերություններ, որոնք ըստ էության ձեռնարկության համար կարող են սահմանափակումներ լինել:

Առավելություններ	Թերություններ
✓ Ձեռնարկությունը այլևս չի աշխատում ոչ եկամտաբեր ոլորտում: ✓ Նվազում է միատեսակ ապրանքից կախվածությունը: ✓ Ընդլայնվում են շուկայական հատ-վածները, որտեղ գործունեություն է ծավալում տվյալ ձեռնարկությունը: ✓ Զգալիորեն կրճատվում են ռիսկերը:	✓ Ձեռնարկությունը ստիպված է ներդնել նոր տեխնոլոգիաներ, որոնք չուներ նախկինում: ✓ Արտադրության նորացման համար անհրաժեշտ են ավելի շատ ռեսուրսներ, հնարավորություն-ներ, ֆինանսական միջոցներ:

Աղյուսակ 2. Դիվերսիֆիկացիայի առավելությունները և թերությունները

Դիվերսիֆիկացման ռազմավարությունն ընտրելիս ձեռնարկությունը պետք է ընտրի, թե արտադրանքի հնարավոր տարբերակներից որ տեսակները թողարկի, որպեսզի կարողանա իրականացնել առավել արդյունավետ արտադրատնտեսական գործունեություն: Այժմ օրինակով համոզվենք դիվերսիֆիկացման արդյունավետության հարցում: Ենթադրենք, անհատ ձեռներեցը ունի սեփական փոքրիկ սրճարան և ձգտում է առավելագույն շահույթի՝ ցանկանալով նվազագույնի հասցնել գործունեության ռիսկը, ինչպես նաև ձեռք բերել նոր սպառողներ, նոր շուկայական հատված: Նա ունի ընտրության մի քանի հնարավորություն.

- վաճառել միայն զովացուցիչ ըմպելիքներ, պաղպաղակ,
- վաճառել միայն տաք ըմպելիքրներ՝ թեյ, սուրճ,

○ վաճառել և՛ մեկը, և՛ մյուսը:

Ձեռներեցը չգիտի, թե որ ապրանքը ավելի մեծ պահանջարկ կունենա՝ կախված եղանակային պայմաններից: Ռիսկը նվազեցնելու համար նա պետք է վաճառի երկու ապրանքատեսակը միաժամանակ: Դիտարկենք այն դեպքը, երբ անհատ ձեռներեցը վաճառում է միայն զովացուցիչ ըմպելիքներ կամ էլ միայն տաք ըմպելիքներ: Տարվա ընթացքում տաք եղանակին վաճառքից ստացվող եկամուտը կկազմի համապատասխանաբար 1.000.000 և 400.000 դրամ, իսկ ցուրտ եղանակին հակառակը՝ 400.000 և 1.000.000 դրամ:

Ապրանք	*Տաք եղանակ*	*Ցուրտ եղանակ*
Զովացուցիչ ըմպելիք	1.000.000 դրամ	400.000 դրամ
Տաք ըմպելիք	400.000 դրամ	1.000.000 դրամ

Աղյուսակ 3. Վաճառքից ստացվող եկամուտները

Տաք կամ ցուրտ տարի լինելու հավանականությունները հավասար են 0,5: Հետևաբար, եկամտի սպասվող միջին մեծությունը հավասար կլինի 0,5 · 1.000.000 + 0,5 · 400.000 = 700.000 դրամ [1]:

Այժմ դիտարկենք այն դեպքը, երբ ձեռներեցը որոշում է դիմել դիվերսիֆիկացիայի և դրա արդյունքում վաճառքի ռիսկը կիսով չափ նվազում է: Այդ դեպքում նա վաճառում է և՛ տաք, և՛ սառը ըմպելիքներ: Տաք եղանակին զովացուցիչ ըմպելիքների վաճառքից ստացվում է 1.000.000 դրամ եկամուտ, տաք ըմպելիքների վաճառքից՝ 400.000 դրամ: Ցուրտ եղանակին հարաբերակցությունը հակառակն է: Այսինքն, դիվերսիֆիկացիայի արդյունքում եկամուտները ավելանում են՝ նախկին 1.000.000 դրամի փոխարեն դառնալով 1.400.000 դրամ:

Ապրանք	*Տաք եղանակ*	*Ցուրտ եղանակ*
Զովացուցիչ ըմպելիք	1.000.000 դրամ	400.000 դրամ
Տաք ըմպելիք	400.000 դրամ	1.000.000 դրամ
Ընդհանուր	1.400.000 դրամ	1.400.000 դրամ

Աղյուսակ 4. Վաճառքից ստացվող եկամուտները դիվերսիֆիկացումից հետո

Ըստ վիճակագրության՝ դիվերսիֆիկացված կազմակերպության ամենատա-րածված ձևը հոլդինգն է: Հոլդինգը կազմակերպություն է, որը տիրապետում է իր կառուցվածքում ընդգրկված ձեռնարկությունների վերահսկիչ փաթեթներին, որի միջոցով կառավարում, ղեկավարում է վերջիններիս գործունեությունը: Հոլդինգը արտադրական գործունեությամբ չի զբաղվում, իրականացնում է միայն մասնակցության համակարգի միջոցով իր կազմի մեջ մտնող ձեռնարկությունների գործունեության հանդեպ վերահսկողություն: Այդ ձեռնարկությունները ունեն իրավական և տնտեսական ինքնուրույնություն և իրենց անունից կնքում են առևտրային գործարքներ: Սակայն նրանց գործունեությանը վերաբերող հիմնական հարցերի լուծումը իրականացնում է հոլդինգը [2]: Հոլդինգը բաց բաժնետիրական ընկերությունների տեսքով է ստեղծվում: Ծավալում է հիմնականում ներդրումային գործունեություն՝ գնելով և վաճառելով ցանկացած տեսակի արժեթղթեր, թողարկելով և վաճառելով բազմատեսակ ապրանքներ: Այլ կերպ ասած՝ կուտակելով մեծ քանակությամբ տնտեսական ռեսուրսներ՝ ծավալում են տարբերակված բազմապլանային գործունեություն՝ շեշտը դնելով հիմնականում գիտատեխնիկական նորույթների մշակման ու ներդրման, երկարաժամկետ ներդրումային նախագծերի ու ծրագրերի իրականացման վրա: Հոլդինգների ստեղծման դրական կողմն այն է, որ մասնակիցների բաժնետոմսերի

վերահսկող փաթեթների տնօրինման շնորհիվ հնարավորություն են ստանում գործունեության տարբեր ոլորտներում վարել ընդհանուր քաղաքականություն, ավելացնել արտադրության և իրացման ծավալները [3]:

ՀՀ-ում գործում են քիչ թվով հոլդինգներ: Դրանցից է «Էներգո ինվեստ հոլդինգը», որը իրականացնում է հոլդինգային գործունեություն հետևյալ ոլորտներում. վերականգնվող էներգետիկայի զարգացում, հիդրոէներգիայի արտադրություն, արևային էներգիայի արտադրություն, ջերմային էներգիայի արտադրություն, կոշտ կենցաղային թափոններից ջերմային և էլեկտրական էներգիայի արտադրություն, էլեկտրատեխնիկական և էլեկտրամեխանիկական սարքավորումների վերանորոգում և սպասարկում, քաղաքացիական և արդյունաբերական շինարարություն և նախագծում, անշարժ գույքի և ակտիվների կառավարում [4]: «Շեն Հոլդինգը» գործունեություն է ծավալում հանքարդյունաբերության, շինանյութի արտադրության և շինարարության ոլորտներում:

Գործունեության ամենամեծ շրջանակներն ընդգրկում է «Գրանդ Հոլդինգը»: Վերջինս հանդիսանում է պատրաստի արտադրանքի ամենամեծ արտահանող ընկերությունը ՀՀ-ում և ՀՀ-ի ամենախոշոր հարկատուն: Հոլդինգն ընդգրկում է ութ առանձին կազմակերպություններ, որոնք գործում են ինքնուրույն, ընդգրկում գործունեության լրիվ տարբեր շրջանակներ, բայց միավորված են մեկ հոլդինգի մեջ: Արդեն գիտենք, որ դա, ըստ էության, իրենից ներկայացնում է կոնգլոմերատային դիվերսիֆիկացիա, հետևաբար, «Գրանդ Հոլդինգը» իր զարգացման համար ընտրել է հենց կոնգլոմերատային դիվերսիֆիկացիոն ռազմավարությունը: Առանձին ձեռնարկությունների ներսում կիրառվում են դիվեսիֆիկացիայի մյուս ռազմավարությունները նույնպես: *«Գրանդ Քենդի»* ՍՊԸ-ն Հայաստանի սննդի արդյունաբերության ամենախոշոր ձեռնարկությունն է: Այսօր ՀՀ տարածքում գործում են 29 ֆիրմային խանութներ, որոնցից 21-ը, ներառյալ 10 խանութ-սրճարանները, Երևանում են: «Գրանդ Քենդին» տեղական արտադրության ոլորտում Հայաստանի Հանրապետության ամենախոշոր գործատուն է և 3200 աշխատակից ունի [5]: Այն ուղղահայաց դիվերսիֆիկացիայի վառ օրինակ է, քանի որ ունի իրացման սեփական ցանց և արտադրանքը իրացնում է իր խանութներում: *«Ինտերնեյշնլ Մասիս Տաբակ»* ՍՊԸ-ն զբաղվում է ծխախոտի վերամշակմամբ և ծխախոտային արտադրանքի արտադրությամբ: Ընկերության արտադրանքը սպառվում է ինչպես տեղական շուկայում, այնպես էլ արտահանվում է: *«Գրանդ Տոբակո»*-ն հայ-կանադական համատեղ ձեռնարկություն է, որը նույնպես զբաղվում է ծխախոտի արտադրությամբ: *«Մասիս Տոբակո»* ընկերությունը մթերում է ծխախոտատերև և զբաղվում ծխախոտահումքի արտադրությամբ, որը հետագայում օգտագործվում է բուն ծխախոտի արտադրության մեջ: *«Գրանդ Մաստեր»* ՍՊԸ-ն զբաղվում է թղթի, ստվարաթղթի, տարաների արտադրությամբ, օֆսեթ տպագրությամբ: Որպես հումք օգտագործում են ծալքավոր ստվարաթուղթը: Հորիզոնական դիվերսիֆիկացիայի օրինակ է: *«Գրանդ Սպորտ»* ՍՊԸ-ն միջազգային չափանիշներին համապատասխանող մարզաառողջարարական համալիր է: «Գրանդ Սպորտ»-ն աչքի է ընկնում գերհագեցած սպորտային սրահներով, ժամանակակից ու բարձրորակ սարքավորումներով և առողջարարական ծառայություններով: *«Գրանդ Մոթորս»* ընկերությունը հանդիսանում է ճապոնական «Հոնդա Մոթորի» պաշտոնական ներկայացուցիչը Հայաստանում: Հայաստանում առաջարկում է հետևյալ ծառայությունները՝ ավտոմեքենաների վաճառք, երաշխիքային և հետերաշխիքային սպասարկում, օրիգինալ յուղերի և քսահեղուկների վաճառք, «Հոնդա» օրիգինալ պահեստամասերի վաճառք (համակենտրոն դիվերսիֆիկացիա): «*Գրանդ Ավտո*»-ն

ճապոնական «Իսուզու» ընկերության պաշտոնական ներկայացուցիչն է Հայաստանում: Զբաղվում է ավտոմեքենաների, բեռնատար ավտոմեքենաների պահեստամասերի ներմուծմամբ և վաճառքով:

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ ապրանքների դիվերսիֆիկացիան նպաստում է ձեռնարկության համար անբարենպաստ պայմաններում գործունեության շարունակականության ապահովմանը՝ ապահովելով նաև ռեսուրսային հնարավորությունների մաքսիմալ արդյունավետ օգտագործում: Կարճատև ժամանակահատվածում պահանջարկի կամ գների անկումը դառնում է հեշտ հաղթահարելի՝ շնորհիվ դիվերսիֆիկացման: Իսկ երկարատև ճգնաժամի պայմաններում գործունեության այլընտրանքային ուղղությունները կարող են առաջնային պլան դուրս գալ և դառնալ ձեռնարկության նոր ռազմավարությամբ վերակազմավորման հիմքը: Միևնույն ժամանակ պետք է հիշել, որ այս գործընթացը պահանջում է նոր ներդրումներ՝ սարքավորումներ, տեխնոլոգիաներ, անձնակազմ: Ճիշտ որոշումը պետք է հիմնվի վերոնշյալ ծախսերի և ռիսկից ակնկալվող կորուստների համադրման վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Էվինյան Շ., Ձեռնարկության էկոնոմիկա, Երևան, «Տնտեսագետ», 509 էջ, էջ 353-354:
2. Սուվարյան Յու., Մենեջմենթ, Երևան, «Տնտեսագետ», 2002, 560 էջ, էջ 284:
3. Էվինյան Շ., Ձեռնարկության էկոնոմիկա, Երևան, «Տնտեսագետ», 509 էջ, էջ 22:
4. www.eih.am
5. www.grandcandy.am

ՀՏԴ 338 Տնտեսագիտություն

Լուսինե Նահապետյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն. Բարսեղյան
Էլ. Հասցե՝ lusine.nahapetyan98@mail.ru

ՖՐԱՆՉԱՅԶԻՆԳԻ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *ֆրանչայզինգ, ռոյալթի, ապրանքային նշան, ֆրանչայզակալ, ֆրանչայզինգային համաձայնագիր:*

Ֆրանչայզինգը, լինելով բիզնեսի կազմակերպման ուրույն ձև, տնտեսության զարգացման համար կարևորագույն գործոն է: Հոդվածում ներկայացվել են ֆրանչայզինգային շուկայի առաջատար կազմակերպությունները, ուսումնասիրվել ինչպես նրանց գործունեության առանձնահատուկ կողմերը, այնպես էլ Հայաստանում ֆրանչայզինգային գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոնները:

Հոդվածի նպատակը Հայաստանում ֆրանչայզինգի շուկայի ուսումնասիրությունն է, քանզի վերջինս լիարժեք զարգացած չէ, և անհրաժեշտ է բացահայտել այն ուղղությունները, որտեղ առկա է բավարար ներուժ՝ ֆրանչայզինգային գործունեության զարգացման համար:

АНАЛИЗ ОСОБЕННОСТЕЙ ФРАНЧАЙЗИНГА И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова: *франчайзинг, роялти, товарный знак, пользователь, договор франчайзинга.*

Франчайзинг, являясь способом ведения бизнеса, является важным фактором развития экономики. В статье представлены ведущие организации на рынке франчайзинга, рассматриваются как специфические аспекты их деятельности, так и основные факторы, препятствующие франчайзинговой деятельности в Армении.

Целью анализа является изучение рынка франчайзинга в Армении, так как он не полностью развит, и необходимо определить области, где имеется достаточный потенциал для развития франчайзинговой деятельности.

Ֆրանչայզինգը (համալիր ձեռնարկատիրական գործունեության թույլտվությունը) բիզնեսի կազմակերպման ձև է, որը կարող է ընդունվել կազմակերպության կողմից՝ որպես բիզնեսի ընդլայնման ռազմավարություն: Ֆրանչայզինգի իրականացման դեպքում ֆրանչայզատուն արտոնագրում է իր նոու-հաուն, մտավոր սեփականության իրավունքը, իր բիզնեսի մոդելի, ապրանքանիշի և իր ապրանքանիշի արտադրանքը և ծառայությունները ֆրանչայզակալին վաճառելու իրավունքը: Դրա դիմաց ֆրանչայզակալը վճարում է որոշակի վճարներ՝ռոյալթի, և համաձայնում է կատարել որոշակի պարտավորություններ, որոնք սովորաբար սահմանվում են ֆրանշիզի համաձայնագրով:

Ֆրանչայզակալի համար ֆրանչայզինգային համակարգի օգտագործումը բիզնեսի

աճի այլընտրանքային ռազմավարություն է: Ապրանքների և ծառայությունների վաճառքի և բաշխման համար ֆրանչայզինգային համակարգի բիզնեսի զարգացման ռազմավարության ընդունումը նվազագույնի է հասցնում ֆրանշիզակալի կապիտալ ներդրումների և պատասխանատվության ռիսկը:

Ֆրանչայզինգը հավասար գործընկերություն չէ՝ ֆրանշիզի նկատմամբ արտոնյալի գերակշռության պատճառով: Բայց հատուկ պայմաններում, ինչպիսիք են՝ թափանցիկությունը, բարենպաստ իրավական պայմանները, ֆինանսական միջոցները և շուկայի պատշաճ ուսումնասիրությունը, արտոնագրումը կարող է լինել հաջողության գրավական ինչպես ֆրանչայզակալի, այնպես էլ ֆրանչայզատուի համար [2]:

Ֆրանչայզինգային գործունեության դեպքում ֆրանչայզակալը պարտավոր է վաճառել ընկերության ապրանքները/ ծառայությունները՝ սեփականատիրոջ ընկերության կողմից սահմանված սկզբունքների համաձայն:

Ֆրանչայզինգային գործունեության ամենատպավորիչ օրինակներից է <<Subway>> արագ սննդի ռեստորանային ցանցը: Արագ սննդի վաճառքի առաջին հաստատությունը բացվել է 1965 թվականին, այսօր գործում է ավելի քան 43 հազ. հաստատություն ամբողջ աշխարհում, որոնց տարեկան շրջանառությունը գերազանցում է 11 միլիարդ դոլարը:

Ֆրանչայզինգի առավելությունները և թերությունները ներկայացնենք աղյուսակի միջոցով.

Առավելություններ	
Ֆրանչայզատուի համար	**Ֆրանչայզակալի համար**
• բիզնեսի արագ ընդլայնում՝ հնարավորինս քիչ ծախսերով, • ապրանքային նշանի մեծ հայտնիություն: Ինչքան շատ խանութներ/մասնաճյուղեր ունենա ընկերությունը, այնքան ավելի հանրահայտ է դառնում, • կայուն եկամտի ստացում, քանի որ ֆրանշիզի տրամադրումը ենթադրում է դրա դիմաց որոշակի գումարի՝ ռոյալթիի ստացում:	• նոր բիզնեսի ստեղծման սկզբնական փուլում ռիսկի նվազեցում, քանի որ ֆրանչայզակալը ձեռք է բերում արդեն իսկ կայացած բիզնես, • ֆրանչայզատուի կողմից կատարվող մարքեթինգային հետազոտությունների և միջոցառումների միջոցով մշտապես ավելանում է ֆրանչայզակալի հաճախորդների քանակը, • ֆրանչայզակալը զգալի ժամանակ և ռեսուրսներ է խնայում բիզնեսի արդյունավետ վարման ու գովազդի համար:
Թերություններ	
• ֆրանչայզակալը չի հանդիսանում ֆրանչայզատուի աշխատող, հետևաբար, դժվար է դառնում ֆրանչայզակալի կողմից իրականացվող գործողությունների վերահսկումը, • ֆրանշիզի տրամադրման ժամանակ ֆրնաչայզատուն տրամադրում է	• մեծ կախվածություն է առաջանում ֆրանչայզակալի գործունեության կայունությունից, • ֆրանչայզատուն կորցնում է որոշումներ ընդունելու և սեփական կամքով գործելու ազատությունը, որովհետև պետք է գործի ֆրանչայզատուի կողմից սահմանված

նաև իր առևտրային գաղտնիքները, ուստի առաջանում է վտանգ առևտրային գաղտնիքների բացահայտման առումով:	կանոններով, • ֆրանչայզինգային պայմանագրի պայմանների խախտման դեպքում կարող են ի հայտ գալ անցանկալի հետևանքներ:

Աղյուսակ 1. Ֆրանչայզինգի առավելությունները և թերությունները [3]

2019թ. համաշխարհային ֆրանչայզինգային շուկայում առաջատար ֆրանչայզինգային ընկերությունների տասնյակը ունի հետևյալ տեսքը.



Գծապատկեր 1. Ֆրանչայզինգային առաջատար ընկերությունների տասնյակը

Հատկանշական է այն փաստը, որ առաջատար ֆրանչայզինգային բոլոր 10 ընկերություններն էլ ամերիկյան կազմակերպություններ են, և դրանց մեծամասնությունն իրենց գործունեությունը հիմնականում իրականացնում են արագ սննդի ոլորտում [4]:

Ֆրանչայզինգի բիզնեսը հատկապես շատ հեռանկարային և եկամտաբեր ոլորտ է Եվրոպայում՝ 2018թ.-ին ֆրանչայզինգի ոլորտի շրջանառությունը հասել է 24,54 միլիարդ եվրոյի, ինչը 2,2% -ով ավելի է, քան 2017թ-ին: Եվրոպայում ֆրանչայզինգի առավել տարածվածության պատճառներից մեկը կապված է այն բանի հետ, որ բիզնեսի այս տեսակը ավելի ապահովագրված է, քան սեփական բիզնեսը: Սովորաբար, Եվրոպայում ֆրանչայզինգային ընկերությունների ձախողման տոկոսը հասնում է մինչև 5% -ի: Այս ցուցանիշը նշանակալի է, քանի որ առկա է տխուր վիճակագրություն, որ առաջին տարվա ընթացքում փակվում է ոչ ֆրանչայզինգային ոլորտի փոքր ձեռնարկությունների 30% -ը, և միայն 20% -ն է գերազանցում 5 տարվա գոյությունը:

Որպեսզի հասկանանք, թե ինչ բիզնես հեռանկարներ է ներկայացնում եվրոպական շուկան, անհրաժեշտ է հետևել 2019 թվականին Եվրոպայում բիզնեսի տարբեր ոլորտների շարժընթացին:

- Ավանդական շուկայավարումը կորցնում է իր արդիականությունը: Ավելի ու ավելի շատ մարդիկ են օգտվում սոցիալական ցանցերից, որոնք էական ազդեցություն են ունենում գնումների վրա:
- Ավելի ու ավելի շատ ֆրանչայզեր սկսում են ձեռք բերել մի քանի ֆրանշիզաներ, քանի որ նման ռազմավարությունը կարող է ապահովել ավելի մեծ հաջողություն:
- Ֆրանչայզինգի ժողովրդականությունը մեծ է առողջապահության և կրթության ոլորտներում: Մարդիկ ավելի ու ավելի մեծ ուշադրություն են դարձնում իրենց առողջությանը և իրենց ընտանիքների բարեկեցությանը, ուստի նրանք ձգտում են հասնել դրա բարձր մակարդակի:
- Բարձրացել է հաճախորդների ուշադրության կենտրոնացումը: Ձեռնարկատիրոջ նպատակն է ոչ միայն ստեղծել համընդհանուր արտադրանք, որը գրավիչ կլինի շատ սպառողների համար, այլև հոգ տանել նրա անհատականության մասին՝ հարմարվելով հաճախորդների կարիքներին [5]:

Ֆրանչայզինգի զարգացման հեռանկարները Հայաստանում: Անդրկովկասյան երկրները մեծ հետաքրքրություն են առաջացնում թե՛ամերիկյան, թե՛ եվրոպական ֆրանչայզատուների շրջանում, քանի որ վերջին տարիների ընթացքում տվյալ տարածաշրջանի երկրները ցուցաբերել են ՀՆԱ-ի աճ: Ուսումնասիրելով ֆրանչայզինգի զարգացման ներկայիս հնարավորությունները ՀՀ-ում՝ հարկավոր է ընդգծել, որ ՀՀ ֆրանչայզինգի շուկան իր մասշտաբով փոքր է և արտասահմանյան երկրների, ներդրողների մեծամասնությունը տեղեկացված չէ դրա յուրահատկություններին և գործելաոճին, այդ իսկ պատճառով նրանց համար ՀՀ-ում գործունեության իրականացումը դժվարություններ է առաջացնում: Տարածաշրջանում արդեն գործունեություն են իրականացնում ավելի քան հարյուր ֆրանչայզինգային ընկերություններ և նկատի ունենալով երկրների զարգացման հեռանկարները, կարելի է կանխատեսել, որ գալիք տարիներին տարածաշրջանում կարող են ֆրանչայզինգային գործունեությամբ աշխատել գրեթե հազար ձեռնարկություններ, որոնցում կներառվեն ավելի քան 15 հազ. աշխատակիցներ [6]:

Սակայն Հայաստանում ֆրանչայզինգի զարգացմանը խոչընդոտում են բազմաթիվ գործոններ: Այդ գործոնները բացահայտելու նպատակով հետազոտություն է իրականացրել <<Ներդրումների և համագործակցության ասոցացիա>>-ն և <<Գործարար շահերի պաշտպանության ցանց>>-ը՝ հարցում անցկացնելով օտարերկրյա և տեղական գործարարների շրջանում:



Գծապատկեր 2. Ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող հիմնական գործոնները Հայաստանի Հանրապետությունում, 2016թ.(%)

Հարցվածների ճնշող մեծամասնության կարծիքով, գործարարության զարգացմանը խոչընդոտող հիմնական յոթ խոշորագույն արգելքներն են արդար և հավասար մրցակցային միջավայրի բացակայությունը (54%), կոռուպցիան (48%), հարկային ոչ նպաստավոր համակարգը (44%), տեսչական ստուգումների համակարգը (43.5%), ֆինանսական ռեսուրսների հասանելիությունը (36%), ՓՄՁ զարգացման քաղաքականությունը (34%) և մաքսային համակարգը (31%):

Բիզնես միջավայրում ֆրանչայզինգային գործունեության կազմակերպմանը խոչընդոտում են նաև աշխարհաքաղաքական և անվտանգության խնդիրները, քանի որ փակ են երկու հարևան երկրների հետ սահմանները, ինչպես նաև առկա է Լեռնային Ղարաբաղի չլուծված հակամարտությունը [1]:

Հայաստանի Հանրապետության ֆրանչայզինգի շուկայում գործունեություն իրականացնող ամենավառ կազմակերպություններից է <<Օրանժ էլեֆանտ>> ՍՊԸ-ն, որն արտասահմանյան ֆրանշիզի բավականին մատչելի տարբերակ է: Բիզնեսի կազմակերպման համար պահանջվող ներդրումները տատանվում են 1 000 000-ից 3 500 000

ՀՀ դրամի սահմաններում, Երևանում ֆրանչայզինգ գնելու գումարը կազմում է 1000 ԱՄՆ *դոլար*, իսկ մարզերում և Լեռնային Ղարաբաղում՝ 300 ԱՄՆ դոլար: Առաջին անգամ ապրանք գնելու նվազագույն գումարը կազմում է 1500 ԱՄՆ $: Արգելվում է առանց զգուշացնելու այլ ֆրանչայզինգների ապրանքի տարածումը: Յուրաքանչյուր ամիս վաճառքը պետք է կազմի ամենաքիչը 1000 ԱՄՆ $ համարժեք ՀՀ դրամ: Առաջին անգամ տուգանքի գումարը կազմում է 150 000 ՀՀ դրամ, իսկ երկրորդ անգամ ֆրանչայզինգը փակվում է: Համագործակցության պայմանագրով տրամադրվում է գովազդ, որի համար պետք է վճարել 5000 ՀՀ դրամ յուրաքանչյուր ամսվա սկզբին [7]:

ՀՀ-ում գործունեություն իրականացնող ամենավառ ֆրանչայզինգային կազմակերպություններից է նաև <<ՍԱՍ գրուպ>>-ը, որի գործունեության հիմնական ուղղությունը մանրածախ առևտուրն է: Զբաղվում է հագուստի ֆրանչայզով, որը վերջին տարիներին դարձել է բիզնեսի ամենահեռանկարային և արագ զարգացող ուղղություններից մեկը: 2011թ. <<ՍԱՍ գրուպ>>-ը գործարկեց Հայաստանում առաջին օնլայն սուպերմարկետը [8]:

ՀՀ-ում գործող արտասահմանյան հերթական ֆրանշիզը <<Gold's gym>>-ն է, որը համաշխարհային ասպարեզում բնորոշվում է որպես թանկ ֆրանշիզ: Ֆրանչայզինգային գործունեության իրականացման համար մարզասրահի ստեղծման նպատակով անհրաժեշտ ներդրումները տատանվում են 2 218250-5 000 500 ԱՄՆ դոլարի սահմաններում, որի մեջ ընդգրկվում է նաև ֆրանշիզի գինը՝ 40, 000 ԱՄՆ դոլար [9]:

Վերլուծելով ՀՀ ֆրանչայզինգի շուկայի առանձնահատկությունները՝ անհրաժեշտ է ուշադրություն դարձնել այն հանգամանքի վրա, որ վերջին տարիներին զգալիորեն աճել է ՀՀ-ում ֆրանչայզինգային գործունեություն վարելու ցանկություն հայտնող կազմակերպությունների քանակը:



Գծապատկեր 3. ՀՀ-ում ֆրանչայզինգային գործունեություն իրականացնելու ցանկություն հայտնող ընկերությունների թիվն ըստ ֆրանշիզի ձեռքբերման համար անհրաժեշտ գումարի, 2019թ.

Գծագրից ակնհայտ է դառնում, որ Հայաստանում ֆրանչայզինգային գործունեություն իրականացնելու ցանկություն հայտնող կազմակերպությունների մեջ առավել մեծ տեսակարար կշիռ ունեն այն ընկերությունները, որոնք ֆրանշիզի տրամադրման համար պահանջում են 10 000-30 000 դոլար գումար, իսկ այն ընկերությունները, որոնք ֆրանշիզի տրամադրման համար պահանջում են 201 000-500 000 դոլար, ունեն անհամեմատ ցածր տեսակարար կշիռ [3]:

Այսպիսով, վերլուծելով ֆրանչայզինգի կազմակերպման առանձնահատկությունները և ՀՀ-ում ֆրանչայզինգային գործունեություն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը, կարող ենք եզրակացնել, որ.

- համաշխարհային ֆրանչայզինգային շուկայում առաջատար տեղ են գրավում հիմնականում ամերիկյան ֆրանչայզինգային ընկերությունները:
- թեև ֆրանչայզինգի զարգացումը Հայաստանում այդքան էլ հեշտ գործընթաց չէ, որովհետև առկա ֆրանշիզների զգալի մասն արտասահմանյան ծագում ունեն, իսկ նոր ֆրանշիզների ձեռքբերումը հայրենական ձեռներեցի համար այդքան էլ մատչելի չէ, այնուամենայնիվ, ՀՀ տնտեսությունում առկա են ուղղություններ, որոնք ունեն բավարար հնարավորություններ ֆրանչայզինգի հետագա զարգացման համար:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. <<Ձեռնարկատիրական գործունեությանը խոչընդոտող գործոնները Հայաստանում>>, Երևան, 2016, էջ 3-5:
2. en.wikipedia.org
3. www.geniusmarketing.me
4. www.franchisedirect.com
5. www.europebusiness.ru
6. www.buybrandexpo.com
7. www.orange-elephant.am
8. www.sasgroup.am
9. franchising.goldsgym.com

ՀՏԴ 336.7 Տնտեսագիտություն

Արևիկ Պետրոսյան
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Ֆինանսներ» բաժին, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն.Հ.Ավանեսյան

ՖԻՆԱՆՍԱԿԱՆ ՄԻՋՆՈՐԴՈՒԹՅԱՆ ՕՊՏԻՄԱԼ ՄԱԿԱՐԴԱԿԻ ԳՆԱՀԱՏՈՒՄԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ ֆինանսական միջնորդություն, առևտրային բանկեր, ոչ բանկային ֆինանսական հաստատություններ, վարկեր/ՀՆԱ, ավանդներ/ՀՆԱ:

Հոդվածում կատարվել է ԱՀ տարածքում գործող հիմնական ֆինանսական միջնորդների գործունեության վերլուծություն և տնտեսության զարգացման գործում ֆինանսական միջնորդության դերակատարության բացահայտում: Իրականացվել է առևտրային բանկերի և ոչ բանկային ֆինանսական հաստատությունների միջնորդության մակարդակի գնահատում ինչպես ԱՀ-ում, այնպես էլ զարգացած և զարգացող մի շարք երկրներում:

Аревик Петросян

ОЦЕНКА ОПТИМАЛЬНОГО УРОВНЯ ФИНАНСОВОГО ПОСРЕДНИЧЕСТВА В ЭКОНОМИКЕ АРЦАХСКОЙ РЕСПУБЛИКИ

Ключевые слова: финансовое посредничество, коммерческие банки, небанковские финансовые учреждения, кредиты/ВВП, депозиты/ВВП.

В статье анализируется деятельность основных финансовых посредников, действующих на территории Республики Арцах, раскрыта роль финансового посредничества в развитии экономики. Анализируются оценка уровня финансового посредничества коммерческих банков и небанковских финансовых учреждений как в Республике Арцах, так и в некоторых развитых и развивающихся странах.

Ցանկացած պետության զարգացման գործում իր ուրույն տեղն ու դերն ունի ֆինանսական միջնորդության համակարգը, որը մեծամասամբ կանխորոշում է տնտեսության զարգացումը, դրա պոտենցիալ հնարավորությունների աճը, ինչպես նաև հասարակության բարեկեցության դինամիկան: Հայտնի է, որ մեր հանրապետության նման փոքր երկրում, որը չի տիրապետում բնական ռեսուրսների մեծ պաշարների և որն ընտրել է բաց շուկայական տնտեսության մոդելը, տնտեսության զարգացման համար կարևոր նշանակություն ունի ֆինանսական միջնորդների զարգացած համակարգը, որը կիրականացնի խնայողությունների փոխակերպումն իրական նեդրումների: Այս առումով տնտեսության կայուն զարգացման համար ֆինանսական աջակցության արդյունավետ մեխանիզմի կառուցումը պահանջում է ֆինանսական միջնորդության օպտիմալ մակարդակի գնահատում, որն իրականացվում է ֆինանսական տարբեր ինստիտուտների միջոցով:

ԱՀ ֆինանսական միջնորդության համակարգը հարուստ չէ միջնորդական կազմակերպությունների ո՛չ քանակով և ո՛չ էլ դրանցում մատուցվող ծառայությունների բազմազանությամբ, ընդ որում ԱՀ տարածքում գործող ֆինանսական միջնորդները ՀՀ միասնական ֆինանսական համակարգի մասն են կազմում և ենթարկվում այն նույն օրենքներին և նորմատիվ-իրավական ակտերին, որոնք տարածվում են ՀՀ ֆինանսական միջնորդների գործունեության վրա: ԱՀ-ում գործող հիմնական ֆինանսական միջնորդները ներկայացված են Աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. ԱՀ տարածքում գործող հիմնական ֆինանսական միջնորդների քանակը

ԱՀ տարածքում գործող հիմնական ֆինանսական միջնորդները	Ֆինանսական միջնորդների թիվը
Առևտրային բանկեր	31
Վարկային կազմակերպություններ	4
Հիմնադրամներ	2
Ապահովագրական ընկերություններ	6
Գրավատներ	2

ԱՀ ֆինանսական համակարգում, ըստ միջնորդության ցուցանիշների, առաջնային տեղը զբաղեցնում է բանկային համակարգը: Այն երկրի տնտեսության ամենախոշոր և գրեթե այլընտրանք չունեցող ներդրողն է, և դա ունի մի շարք կարևոր պատճառներ: Այս հանգամանքն առաջին հերթին պայմանավորված է նրանով, որ ֆինանսական շուկայի մնացած դերակատարները ոչ բավարար զարգացած են կամ կայացած՝ բանկային համակարգի համեմատ, որն ապացուցել է իր հուսալիությունն ու կայունությունը ֆինանսական ցնցումների նկատմամբ: ԱՀ տարածքում գործում է միայն մեկ գլխամասային առևտրային բանկ՝ «Արցախբանկ» ՓԲԸ, իսկ տարածքում գործող մյուս բանկերը հանդիսանում են ՀՀ առևտրային բանկերի մասնաճյուղերը: 2018թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, ՀՀ-ում կար 17 գործող առևտրային բանկ: Դրանք ունեն 538 մասնաճյուղ, որից 31 գտնվում է ԱՀ-ում [3]: ԱՀ-ում մասնաճյուղեր ունեն 17 առևտրային բանկերից 8-ը: Մասնաճյուղերի ամենամեծ ցանցը, բնականաբար, ունի Արցախբանկը՝ 15 մասնաճյուղ [4]:

ԱՀ տնտեսությունում ֆինանսական միջոցներ ձեռք են բերվում հիմնականում բանկերի միջոցով, այսինքն, վարկային շուկայի բնութագրիչ հիմնական ցուցանիշը՝ տնտեսության ֆինանսական խորությունը հիմնականում ապահովվում է բանկերի միջոցով՝ կազմելով շուրջ 60%, ինչը նշանակում է, որ տնտեսության մեջ մեծ է բանկերի ներգրավվածության աստիճանը: Անցած դարի 80-ական թթ. Համաշխարհային բանկի հետազոտություններում մի քանի տասնյակ երկրների օրինակով ապացուցվել է, որ ինչքան մեծ է տնտեսության ֆինանսական խորությունը, այսինքն՝ որքան բարձր է տնտեսության հագեցվածության աստիճանը դրամական միջոցներով, այնքան, այլ հավասար պայմաններում, բարձր է տնտեսական աճի տեմպը: Այնուամենայնիվ, ֆինանսական խորության և տնտեսական աճի փոխհարաբերության հարցը վիճահարույց է: Շատ դեպքերում մասնավոր հատվածին տրամադրված վարկերը չեն նպաստում տնտեսական աճին, քանի որ իրականում դրանք ուղղված են վարկառուների անձնական կարիքների բավարարմանը: Այդ վարկերը հիմնականում սպառողական են և չեն նպաստում ո՛չ նոր բիզնեսի ստեղծմանը, ո՛չ էլ տնտեսության որևէ ճյուղի զարգացմանը[5]:

ԱՀ-ում գործող առևտրային բանկերի մասնաճյուղերի սակավաթվությամբ

պայմանավորված, վարկային կազմակերպությունների ստեղծումը և գործունեության արդյունավետության բարձրացումը կարևորագույն գործոն է շուկայի սուբյեկտների ձևավորման և զարգացման համար: ԱՀ-ում գործում է չորս վարկային կազմակերպություն: Բոլորն էլ հանդիսանում են ՈՒՎԿ, դրանք են՝ «Արեգակ» ՈՒՎԿ ՓԲԸ՝ Ստեփանակերտի և Մարտունի մասնաճյուղերով, «Ֆիդես հիփոթեքային ընկերություն» ՈՒՎԿ ՓԲԸ, «Բլեսս» ՈՒՎԿ ՍՊԸ և «Վարկս էյ էմ» ՈՒՎԿ ՓԲԸ:

ՀՀ-ում գործող 9 ապահովագրական ընկերություններից 6-ն ունեն իրենց գործակալները ԱՀ-ում: Դրանք են «Արմենիա Ինշուրանս» ԱՍՊԸ, որը ունի 11, «Սիլ Ինշուրանս» ԱՓԲԸ՝ 7, «Ինգո Արմենիա» ԱՓԲԸ՝ 2, «Ռոսգոսստրախ-Արմենիա» ԱՓԲԸ՝ 9, «Նաիրի Ինշուրանս» ԱՍՊԸ՝ 3, «Ռեսո» ԱՓԲԸ՝ 1 գործակալ ԱՀ-ում [4]: Համաշխարհային տնտեսության զարգացմանը ապահովագրական համակարգի մասնակցության վերաբերյալ պատկերացում կարելի է կազմել՝ ուսումնասիրելով ապահովագրավճարներ/ՀՆԱ և բնակչության մեկ շնչին բաժին ընկնող ապահովագրավճարներ ցուցանիշները: Ապահովագրական ընկերությունների ակտիվությունը բնութագրող հիմնական ցուցանիշը՝ հաշվեգրված ապահովագրավճարների մեծությունը, 2018թ. ընթացքում, նախորդ տարվա համեմատ, ավելացել է 2,6%-ով՝ կազմելով 359873,3 հազար դրամ, ապահովագրավճարներ/ՀՆԱ հարաբերակցությունը կազմել է 0.001%: Զարգացած արդյունաբերական երկրներում ոչ կյանքի ապահովագրության գծով ապահովագրավճարներ/ՀՆԱ միջինում կազմել է 3.6%, զարգացող երկրներում՝ 1.5%, ՀՀ-ում՝ 0.6%, իսկ Թուրքիայում, Ուկրաինայում, Վրաստանում, ՌԴ-ում՝ 1-1.5%[6]: Բնակչության մեկ շնչին ընկնող ապահովագրավճարները 2018թ. կազմել են 2432 դրամ՝ 2017թ. 2386 դրամի փոխարեն: ԱՀ-ում կյանքի ապահովագրությունը բացակայում է, և դրանով զբաղվող ընկերությունների հիմնադրման համար դեռ շատ ժամանակ կպահանջվի, մինչև շուկայում ի հայտ գա պահանջարկ, հետևաբար կյանքի ապահովագրության շուկայի կայացումը պետք է դիտարկել երկարաժամկետ հեռանկարում: Ապահովագրական համակարգի նման կարևորագույն միջնորդական ինստիտուտի այսպիսի զարգացումը, անշուշտ չի կարելի համարել երկրի ֆինանսական միջնորդության համակարգի արդյունավետ գործունեության դրական միտում:

Տնտեսության մեջ բանկերի ունեցած դերն ու նշանակությունը առաջին հերթին պայմանավորված է դրանց իրականացրած միջնորդական գործառույթներով [1]: Ներկայումս ԱՀ բանկային համակարգի դերը տնտեսությունում և դրա ֆինանսավորման բնագավառում շարունակում է աճել: 2018թ. տնտեսական աճի 11,9%-ին զուգահեռ բանկային համակարգի աճի տեմպը առաջանցիկ էր, ինչը հանգեցրեց տնտեսությունում բանկային միջնորդության մակարդակի բարձրացմանը [7]:

2008-18 թթ. ԱՀ բանկային համակարգի կողմից սպասարկվող վարկերի ծավալում աճի միտում է արձանագրվել: Աճի դինամիկան առավել արտահայտված սկսել է դրսևորվել 2008թ. սկսած, երբ ԱՀ-ում սկսեցին ակտիվ գործարկվել նորաստեղծ հիմնադրամների վարկային տոկոսադրույքների սուբսիդավորման ծրագրերը: 2019թ. հունվարի 1-ի դրությամբ, ըստ հանրապետության տարածքում գործող առևտրային բանկերի կողմից ներկայացրած հաշվետվությունների, վարկերը կազմել են 167354.1 մլն դրամ և 2018թ. հունվարի 1-ի համեմատ աճել են 17328.4 մլն դրամով կամ 11.6 տոկոսով:

Գծապատկեր 1. ԱՀ տարածքում գործող առևտրային բանկերի կողմից տրված վարկերի ճյուղային կառուցվածքը (հազար դրամ, 2008-2018թթ.) [8]



Եթե 2008-2018թթ. արդյունաբերությանը տրամադրված վարկերը աճել են 7,3 անգամ՝ 3,3 մլրդ դրամից մինչև 24,1 մլրդ դրամ, ինչը կարևոր է այնքանով, որ իրագործվում է ֆինանսական միջնորդության հիմնական՝ իրական տնտեսությանը համապատասխան ֆինանսական ռեսուրսներով ապահովման և տնտեսության իրական ու ֆինանսական հատվածների միջև փոխկապվածության պահպանման գործառույթը: Գյուղատնտեսության, շինարարության, առևտրի ոլորտի վարկավորման աճի գագաթնակետը եղել է 2011թ.: Ի տարբերություն արդյունաբերության, 2018թ. ընթացքում մյուս բոլոր ճյուղերում դիտարկվել է աճ: ԱՀ տնտեսության զարգացման համար առանձնակի նշանակություն ունի գյուղատնտեսությունը: Սակայն այս բնագավառում կան շատ չլուծված հիմնախնդիրներ՝ տեխնիկայի պակաս, բարոյական և ֆիզիկական մաշվածության աճ, գյուղատնտեսությունում նորարարությունների և ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման անհրաժեշտություն, որոնք պահանջում են հսկայական ֆինանսական միջոցներ: Նման միջոցների ներգրավման աղբյուր կարող են ծառայել վարկերը: Ուստի վարկային շուկայում գյուղատնտեսության ոլորտին տրամադրվող վարկերի նկատմամբ առկա է բավականին բարձր պահանջարկ, սակայն տրամադրվող վարկերի բարձր տոկոսադրույքները և բարձր լիկվիդայնության գրավի անհրաժեշտությունը անմատչելի են դարձնում վարկերի ձեռքբերումը տնտեսվարող սուբյեկտների համար: 2018թ. գյուղատնտեսությունում իրականացված վարկավորումը կազմել է 1810.3 մլն դրամ (2017թ-ի համեմատ աճել է 49.3 տոկոսով), իսկ շինարարությունում՝ 3346.5 մլն դրամ (2017թ-ի համեմատ աճել է 10.9 տոկոսով): Հարաբերականորեն անկայուն է առևտրի ոլորտը: 2018թ. առևտրում իրականացված վարկավորումը կազմել է 2424.6 մլն դրամ (2017թ-ի համեմատ աճել է 30.6 տոկոսով):

Ինչ վերաբերում է այլ ճյուղերին (սպասարկման ոլորտ, սպառողական վարկեր, հիփոթեքային վարկեր, տրանսպորտ, կապ և այլն) տրամադրված վարկերին, ապա 2008-2018թթ. տրամադրված ընդհանուր վարկերի կառուցվածքում վերջիններս զբաղեցրել են ամենամեծ մասնաբաժինը, ինչը տնտեսական զարգացման տեսանկյունից դրական միտում չէ: 2008-18թթ. այս ոլորտներում դիտարկվել է վարկավորման ծավալների աճ՝ 19,1 անգամ

(7,7 մլրդ դրամից մինչև 148,3 մլրդ դրամ) [8]:

Արցախի ֆինանսական միջնորդության համակարգը վարկային ռիսկից խուսափելու նպատակով ակտիվորեն չի ներգրավվում տնտեսական համակարգի գործընթացներում: Այս խնդիրը կարգավորելու նպատակով պետք է առևտրային բանկերին թույլատրել զուգահեռաբար զբաղվել տնտեսական գործունեությամբ, ինչպես դա արվում է Գերմանիայում: Այստեղ բանկային համակարգի կապը արդյունաբերության հետ կարգավորվում է այնպես, որ գրեթե բոլոր խոշոր բանկերի ղեկավարները միաժամանակ արդյունաբերական խոշոր ընկերությունների կառավարման խորհրդի անդամներ են և օժտված են հզոր լծակներով: Նման փոխկապվածության շնորհիվ տնտեսության մեջ բանկերի և այլ ընկերությունների շահերը սերտորեն փոխկապակցված են, որի շնորհիվ այստեղ բացառվում են տնտեսությանը և ազատ մրցակցությանը վնասող անբարեխիղճ միաձուլումներն ու մենաշնորհները: Իսկ Մեծ Բրիտանիայում, բանկային համակարգի և երկրի ողջ տնտեսական հատվածի սերտ կապն ապահովելու համար, բանկի խորհրդի 16 անդամներից 12-ը պետք է լինի խոշոր ընկերության ղեկավար, ընդ որում՝ չորսը՝ առևտրային բանկի [2]:

Ֆինանսական միջնորդության քանակական արտահայտությունը գտնելու համար դիտարկենք ֆինանսական հատվածի կողմից տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցության ցուցանիշը տարբեր երկրներում: Ֆինանսական հատվածի կողմից տրամադրված ներդրումների դինամիկան, հարաբերելով երկրի տնտեսության չափման հիմնական գործիքի վրա, կարող ենք գնահատել, թե ինչպիսի ազդեցություն են ունեցել տրամադրված վարկերը տնտեսության վրա:

Գծապատկեր 2. Ֆինանսական հատվածի կողմից տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը տարբեր երկրներում (%, 2017թ.)



Թեև վերջին մի քանի տարում տնտեսությանը տրամադրած վարկեր/ՀՆԱ ցուցանիշի արագատեմպ աճին, այնուհանդերձ ֆինանսական համակարգի միջնորդության մակարդակը դեռևս էականորեն զիջում է մի շարք երկրների համապատասխան ցուցանիշների մակարդակը: Այսպես, Ճապոնիայի տնտեսական բնութագրերի կարևոր առանձնահատկություններից է այն, որ վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը ամենաբարձրն է աշխարհում և 2017թ. արդյունքներով հասնում էր 345.15% սահմանագծին: ԱՄՆ-ն ևս

առանձնանում է վարկեր/ՀՆԱ աշխարհում ամենաբարձր ցուցանիշներից մեկով (241,9%): Զարգացած երկրներում այդ ցուցանիշը տատանվում է 90-350%-ի միջակայքում [9]:

ԱՀ ֆինանսական համակարգը, ինչպես և ընդհանուր տնտեսությունը, գտնվում է զարգացման փուլում և դեռևս չի ապահովում ֆինանսական միջնորդության բարձր, օպտիմալ մակարդակ ֆինանսական հատվածի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցությունը կազմում է 67%, ընդ որում՝ բանկային հատվածի կողմից տրամադրված վարկեր/ՀՆԱ հարաբերակցությունը կազմում է 55%, իսկ ոչ բանկային կազմակերպությունների մասնաբաժինը 12%(2017թ.): 2018թ. ֆինանսական հատվածի կողմից տրամադրված վարկերի և ՀՆԱ-ի հարաբերակցության ցուցանիշը նվազել է՝ կազմելով 65%, որում բանկային հատվածի կողմից տրված վարկեր/ՀՆԱ-ն 53.9% է կազմում, իսկ ոչ բանկային հատվածի կողմից տրված վարկեր/ՀՆԱ-ն 11.1% : Նման տարբերությունը վկայում է այն մասին, որ ԱՀ տարածքում գործող ֆինանսական միջնորդները իրենց վարկային պոտենցիալը օգտագործում են ոչ բավարար մակարդակով արտադրության ֆինանսավորման ոլորտում, իսկ դա ցանկացած ազգային տնտեսության զարգացման գործոն է հանդիսանում: Այնուամենայնիվ, ԱՊՀ անդամ երկրների շարքում ԱՀ-ն գտնվում է բավականին լավ դիրքում և նույնիսկ այդ ցուցանիշով գերազանցում է որոշ երկրների:

Ֆինանսական միջնորդության քանակական չափը որոշվում է նաև ավանդներ/ՀՆԱ հարաբերակցության միջոցով: Ազգային տնտեսության մեջ ավանդները շատ մեծ նշանակություն ունեն, քանի որ հենց դրանք են կազմում առևտրային բանկերի ներգրավված միջոցների նշանակալի բաժինը, որոնք հետո տեղաբաշխելով, բավարարում են դրամական միջոցների կարիք ունեցողների պահանջները: 2019թ. հունվարի 1-ի ներգրավված ավանդները կազմել են 113741.2 մլն դրամ և 2018թ. հունվարի 1-ի դրությամբ աճել են 13.5 %-ով: Ավանդների ընդհանուր կառուցվածքում 83.4% պատկանում է ռեզիդենտներին, 16.6%՝ ոչ ռեզիդենտներին, ընդ որում՝ ռեզիդենտների կողմից ներգրավված ավանդների 18.1% ցպահանջ է, 81.9%՝ ժամկետային: Դիտարկենք 2008-18թթ. ավանդների հարաբերակցությունը ՀՆԱ-ի նկատմամբ:

Գծապատկեր 3. Ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությունը ԱՀ-ում 2008-2018թթ. (%)



2018թ. այդ հարաբերակցությունը կազմել է 36,7%, որը մոտ 1.4 անգամ գերազանցում է 2008թ-ի ավանդներ/ՀՆԱ հարաբերակցությանը: Այդ ցուցանիշի առավելագույն մակարդակը արձանագրվել է 2017թ.:

ԱՀ ոչ բանկային կազմակերպությունների իրականացված փոխառությունները 2018թ. կազմել են 35645.2 մլն դրամ (2017թ-ի 33032.8 մլն դրամի փոխարեն): Տրված փոխառությունները ըստ տնտեսության ճյուղերի ունեն հետևյալ տեսակարար կշիռը՝

արդյունաբերություն 19.1%, գյուղատնտեսություն 17%, շինարարություն 20.9%, առևտուր 7%, այլ ճյուղեր 36%: Այստեղ ևս մեծ տեսակարար կշիռ են կազմում այլ ճյուղերը:

Գծապատկեր 4. ԱՀ ոչ բանկային կազմակերպությունների կողմից իրականացված փոխառությունները ըստ տնտեսության ճյուղերի 2008-2018թթ. (%)[8]



ԱՀ առևտրային բանկերի և ոչ բանկային կազմակերպությունների ընդհանուր ազդեցությունը տնտեսության վրա գնահատելու համար համադրենք երկրի տնտեսության չափման հիմնական գործիքի՝ ՀՆԱ-ի, ինչպես նաև բանկային հատվածի կողմից տրամադրված վարկային ներդրումների դինամիկան ոչ բանկային կազմակերպությունների կողմից վարկային ներդրումների դինամիկայի հետ:

Գծապատկեր 5. ՀՆԱ-ի, բանկային և ոչ բանկային հատվածի կողմից տրված վարկերի դինամիկան ԱՀ-ում 2008-2018թթ. (մլն դրամ)



Վերլուծելով գրաֆիկը՝ բացահայտում ենք, որ տնտեսության վարկավորման հարցում ոչ բանկային կազմակերպությունները բավականին համեստ ներդրում ունեն:

Այսպիսով՝ ԱՀ ֆինանսական միջնորդության համակարգում առաջնային տեղ է զբաղեցնում բանկային համակարգը, ոչ բանկային ֆինանսական միջնորդության ինստիտուտներից գործունեության արդյունավետությամբ առանձնանում են վարկային կազմակերպությունները և հիմնադրամները, իսկ այնպիսի կարևորագույն միջնորդական ինստիտուտները, ինչպիսիք են ապահովագրական ընկերությունները չափազանց թույլ են զարգացած, ընդ որում քիչ է նաև մատուցվող միջնորդական ծառայությունների շրջանակը: Այսօր ֆինանսական միջնորդության խթանումը Արցախի համար կարևոր հարց է, քանի որ առաջադեմ ֆինանսական շուկա ունենալու դեպքում երկրում կստեղծվեն զարգացման և առաջընթացի որակապես նոր նախադրյալներ: Ընդհանուր առմամբ, ԱՀ ֆինանսական ոլորտում բարեփոխումները պետք է իրականացնել համակարգված և համալիր մոտեցմամբ՝ ցանկացած պարագայում ուսումնասիրելով միջազգային փորձը և խրախուսելով միջազգային հաջողված մեխանիզմների կիրառումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Селищев А.С., Деньги, кредит, банки, Москва и др., «Питер», 2007, с. 314
2. Maksimovic V., Beck T., Demirgüç-Kunt A., Levine, R., Financial Structure and Economic Development: Firm, Industry, and Country Evidence. World Bank Policy Research Working Paper, No. 2423, 2000
3. www.home.kpmg.com
4. www.cba.am
5. www.kargavorum.nkr.am
6. www.swissre.com
7. www.a1plus.am
8. www.stat-nkr.am
9. www.data.trendeconomy.ru

Գայանե Պետրոսյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
Գիտական ղեկավար՝տ.գ.թ., դոցենտ Ն. Բարսեղյան

«ՔՎԱԶԻ ՓՈՂԵՐԻ» ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅՈՒՆԸ, ԳՈՐԾԱՌՆԱԿԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԵՌԱՆԿԱՐՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Բանալի բառեր՝ *«քվազի փող», դրամական զանգված, էլեկտրոնային փող, փողի փոխարինիչներ, դրամավարկային համակարգ, ինտերնետ վճարային համակարգեր:*

Իրական փողի փոխարինիչների նկատմամբ հետաքրքրությունը մշտապես եղել է: Բայց մինչ օրս ժամանակակից ֆինանսական համակարգում դրանց տեղի և դերի մասին որևէ միասնական տեսակետ չկա: Հոդվածում ուսումնասիրվել է «քվազի փողերի» շրջանառումը, դրա տարբեր տարատեսակները, յուրաքանչյուրին բնորոշ առանձնահատկությունները, վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեությունը ՀՀ-ում: Նպատակը ՀՀ-ում ոլորտի առկա իրավիճակի ուսումնասիրությունն ու վերլուծությունն է: Թեման առավել քան արդիական է, որը պայմանավորված է ֆինանսատնտեսական կյանքում տեխնոլոգիական զարգացումների, ԳՏԱ նվաճումների առաջացրած փոփոխություններով:

Гаяне Петросян

ОБРАЩЕНИЕ КВАЗИДЕНЕГ, ОПЕРАЦИОННЫЕ СПЕЦИФИКИ И ПЕРСПЕКТИВЫ РАЗВИТИЯ В РА

Ключевые слова: *квазиденьги, денежная масса, электронные деньги, денежные суррогаты, денежно-кредитная система, платежные системы интернета.*

Интерес к денежным суррогатам существовал всегда. Однако до сих пор нет единой позиции относительно их места и роли в современной финансовой системе. В статье рассматривается обращение квазиденег, их отдельные разновидности, характерные особенности каждой, деятельность платежно-расчетных организаций в РА. Цель статьи - рассмотреть и анализировать текущую ситуацию сферы в РА. Актуальность темы исследования обусловлена измененияами в финансово-экономической жизни вызванными технологическим развитием и достяжениями НТП.

Ժամանակակից տնտեսությունում «քվազի փողերը (լատ. quasi-գրեթե)» կազմում են դրամական զանգվածի հիմնական բաղադրիչը: Ըստ «Արժույթի միջազգային հիմնադրամի» մեթոդոլոգիայի՝ այդ փողերին են առնչվում դեպոզիտների կամ խնայողական բանկային հաշիվների տեսքով անկանխիկ դրամական միջոցները, ինչպես նաև բարձր իրացվելիություն ունեցող ֆինանսական գործիքները, որոնք շրջանառվում են շուկայում: Ըստ էության՝ դրանք բանկային համակարգի դեպոզիտներն են և իրացվելի ֆինանսական ակտիվները, որոնք պաշտոնապես չեն համարվում վճարման միջոց, բայց կարող են օգտագործվել պարտավորությունների վերացման, առանձին դեպքերում՝ վճարման նպատակով: Այդ պատճառով «քվազի փողերի» մեջ որոշակի ֆինանսական գործիքների ներառման հիմնական չափանիշը դրանց իրացվելիությունն է: «Քվազի փողերը» չենք կարող համարել լիարժեք դրամական միավոր, այնուամենայնիվ, դրանք օժտված են դրա մի քանի հատկություններով: Դրանք ունեն որոշակի արժեք, որը կարող է լինել հաստատուն կամ փոխվել ժամանակի ընթացքում, և օգտագործվում են որպես վճարամիջոց: Այս ոչ

պաշտոնական դրամական միջոցները պատահական հայտնագործություն չեն: Որպես փողի ձև ի հայտ են եկել այն ժամանակ, երբ դեռ չէին կիրառվում բանկնոտները: Այդ ժամանակներից մինչ օրս «քվազի փողերը» կրել են տարբեր փոփոխություններ՝ այդպես էլ չդառնալով պաշտոնական դրամական միջոց:

Դրամական զանգվածի կառուցվածքում ամենամեծ չափաբաժինը M_2 ագրեգատինն է, ինչը ստացվում է «քվազի փողերի» շնորհիվ: «Քվազի փողերի» մաթեմատիկական չափը ստացվում է որպես M_2 և M_1 կամ M_2 և M_0 ագրեգատների տարբերություն: «Քվազի փողերը» հանդես են գալիս բացառապես անկանխիկ ձևով: Ֆիզիկապես դրանք իրենցից ներկայացնում են տարբեր փաստաթղթեր, որոնք կարող են փոխարինվել իրական փողով: Ժամանակի ընթացքում «քվազի փողերը» կրում են բազմաթիվ փոփոխություններ. որոշ տեսակների կարևորությունը աճում է կամ նվազում, որոշներն էլ դադարում են օգտագործվել: Առանձնացվում են «քվազի փողերի» հետևյալ հիմնական տեսակները՝ *արժեքավոր փաստաթղթեր, բանկային քարտեր, մուրհակներ, հավաստագրեր, չեկեր, ժամկետային ավանդներ*: Սրանք, ըստ էության, «քվազի փողերի» ավանդական տեսակներն են:

Ժամանակակից պայմաններում տեխնոլոգիական զարգացմամբ և ֆինանսական շուկայի կոնյուկտուրայի փոփոխություններով պայմանավորված՝ առաջացել է «քվազի փողերի» ավելի ժամանակակից տեսակ՝ էլեկտրոնային փողերը: Էլեկտրոնային փողը էլեկտրոնային տեխնիկայի միջոցով փոխանակվող արժեք է: Այն չունի ֆիզիկական տեսք, բայց հիմնված է իրական դրամական միջոցների վրա: Էլեկտրոնային փողն իրենից ներկայացնում է դրամական արժեք կամ թողարկողի նկատմամբ պահանջ, որը.

1. գրառված է էլեկտրոնային սարքի վրա,
2. համարժեք է դրա թողարկման համար անհրաժեշտ իրական միջոցների ծավալին (1 միավոր էլեկտրոնային փողը համարժեք է 1 միավոր իրական փողին),
3. ընդունվում է որպես վճարամիջոց ոչ միայն թողարկողի, այլև ուրիշ սուբյեկտների կողմից [2]:

Ներկայումս միջազգային ֆինանսական գործարքների իրականացման նպատակով փողերը շրջանառվում են հենց էլեկտրոնային միջավայրում: Դրանցով կարելի է գնել ապրանքներ, կատարել վճարումներ և այլն: Էլեկտրոնային փողերի իրացվելիությունը բավականին բարձր է, քանի որ ցանկացած պահի կարող են փոխարինվել իրական փողերով: Տարբերում են էլեկտրոնային փողերի երկու տեսակ.

1. Էլեկտրոնային քսակ – այս դեպքում փողը գտնվում է քարտի վրա և անհրաժեշտության դեպքում քարտից կատարվում են վճարումներ: Քարտը լիցքավորվում է անհրաժեշտ դրամական միջոցներով:
2. Վիրտուալ փող – փողը մուտքագրվում է համակարգչային համակարգի մեջ և օգտագործվում համացանցի միջոցով:

Վերոնշյալ երկու տեսակի էլեկտրոնային փողերն էլ կարող են օգտագործվել և՛ անանուն կերպով, և՛ օգտագործողի անձնական տվյալների պարտադիր մուտքագրմամբ: Ներկայումս էլեկտրոնային փողերը դիտարկվում են որպես իրական փողերի պոտենցիալ փոխարինիչնե՝ր փոքր վճարումների համար: Սակայն էլեկտրոնային փողերն ունեն բոլոր հնարավորությունները՝ մինչև անգամ լիարժեք փոխարինելու իրական փողերին: Հնարավորությունների ոչ ամբողջական օգտագործումը պայմանավորված է ապահովության ու անվտանգության միջոցառումներով, որոնք իրականացվում են վճարային համակարգերի կողմից: Խոսքը սահմանափակումների մասին է:

Մասնավորապես, էլեկտրոնային քսակների և վիրտուալ փողերի օգտագործման համար գումարի առավելագույն շեմ է սահմանված, որը տվյալ պահին կարող է լինել քարտի վրա կամ էլեկտրոնային դրամապանակում: Ակնհայտ է, որ համակարգի հուսալիության բարձրացման դեպքում այս սահմանափակումները կնվազեն, նույնիսկ կվերանան:

ԱՌԱՎԵԼՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
Էլեկտրոնային քսակ	**Վիրտուալ փող**
•Արագ և հեշտ գնումների, վճարումների, փոխանցումների իրա-կանացում: •Պարբերաբար քաղվածքների ստացում՝ ֆինանսական վարքի վերահսկման նպատակով: •Cashback-ի հնարավորություն՝ կատարված գնումների դիմաց որոշակի տոկոսի չափով գումարի վերադարձ: •Քարտը կորցնելու դեպքում հաշվի արգելափակում:	•Արագ և հեշտ գնումների, վճարումների, փոխանցումների իրա-կանացում: •Հարմարավետություն՝ կարելի է օգ-տագործել ցանկացած պահի և ցան-կացած տեղում: •Վիրտուալ հաշիվների վերա-հսկում: •Անվտանգություն՝ գործարքների վերաբերյալ տեղեկատվությունը պահ-պանվում է:
ԹԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ	
•Խարդախություններին զոհ գնալու համեմատաբար մեծ հավանականություն: •Պարտադիր գանձվող վճարների առկայություն (սպասարկման):	•Խարդախություններին զոհ գնալու համեմատաբար մեծ հավանականություն: •Վճարային տարբեր համակարգերի միջև անհամագործակցությունից բխող բարդություններ:

Աղյուսակ 1. Էլեկտրոնային փողերի առավելությունները և թերությունները [3]

Քանի որ «քվազի փողերը» օժտված են իրական փողերի տարբեր հատկանիշներով, դրանց օգտագործումը չի կարող տնտեսության վրա ազդեցություն չունենալ: Եվ հիմնականում այդ ազդեցությունը դրական է: Այն դրսևորվում է հետևյալ կերպ. «քվազի փողերի» օգտագործումը՝ որպես վճարման միջոց, հնարավորություն է տալիս.

- բարձրացնելու շուկայի իրացվելիությունը,
- ազդելու դրամական զանգվածի մեծության վրա՝ միջոցները բաշխելով դեպի ավանդներն ու դեպոզիտները,
- իրականացնելու դրամական զանգվածի կարգավորում՝ մեծացնելով կամ նվազեցնելով իրական փողերի նկատմամբ պահանջարկը:

Սակայն տնտեսության վրա ազդեցությունը միանշանակ դրական չէ: Իրական փողի փոխարինիչների շրջանառումը կարող է հանգեցնել կառավարության համար անցանկալի հետևանքների, քանի որ նրանք ազդում են դրամավարկային համակարգի վրա և աղավաղում են մակրոտնտեսական վերլուծության արդյունքները: Շատ կարևոր է, որ «քվազի փողերի» նկատմամբ պահանջարկը մշտապես կառավարության ուշադրության կենտրոնում լինի: Բացասական հետևանքներից խուսափելու համար պետք է նաև օրենքով սահմանափակել «քվազի փողերի» շրջանառումը կամ էմիսիան, փորձել դրանք դարձնել դրամի զանգվածի լիարժեք ագրեգատ և իրականացնել վերահսկողություն:

Փողերի և «քվազի փողերի» միջև սահմանը բավականին նուրբ է: Այն, ինչը պատմականորեն համարվել է «քվազի փող», որոշակի պահից ներառվել է դրամի զանգվածի մեջ և դադարել գոյություն ունենալուց որպես «քվազի փող»: Եվ այստեղ հսկայական դերակատարում ունի հենց տվյալ երկրի կառավարությունը: Վերլուծելով պատմական փորձը՝ կարող ենք ասել, որ տեխնոլոգիական զարգացմանը զուգընթաց կառաջանան «քվազի փողերի» նորանոր տեսակներ: Դա կարող է տեղի ունենալ ճգնաժամի հետևանքով, կամ էլ այն դեպքում, երբ տարբեր պատճառներով փողը չի կարողանում իրականացնել իր որոշ գործառույթները:

ՀՀ-ում դրամի զանգվածի երրորդ ագրեգատը՝ M_2-ը (կանխիկ փող և «քվազի փող») 2018թ. կազմել է 1,464 տրիլիոն ՀՀ դրամ: Ներկայացնենք այս ցուցանիշի տատանումները 10 տարվա կտրվածքով (2008-2018թթ.) [4]:

Տարեթիվ	M_2	Փոփոխությունը
2008	537 958	
2009	450 877	-16,19%
2010	521 632	15,69%
2011	659 436	26,42%
2012	737 982	11,91%
2013	848 045	14,91%
2014	818 277	-3,51%
2015	860 476	5,16%
2016	1 073 730	24,78%
2017	1 368 470	21,5%
2018	1 464 262	6,54%

Աղյուսակ 2. Կանխիկ փողը և «քվազի փողը» (M_2) ՀՀ-ում 2008-2018թթ., մլն դրամ

Աղյուսակից տեսնում ենք, որ այս տարիների ընթացքում M_2 ագրեգատը աճել է, և այդ աճը մեկ տասնամյակի կտրվածքով շուրջ եռակի է:

ՀՀ-ում ինտերնետ վճարային համակարգերի գործունեությունը կարգավորվում է օրենքով և ԿԲ-ի կողմից ընդունված կանոնակարգով: «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենքը ընդունվել է 2004թ.: Սույն օրենքի նպատակն է ՀՀ-ում վճարահաշվարկային համակարգերի կարգավորումն ու զարգացումը, ՀՀ ֆինանսական և բանկային համակարգի կայունության ապահովումը, ինչպես նաև վճարահաշվարկային կազմակերպությունների գործունեության կանոնակարգումը [1]: ԿԲ-ի կողմից ընդունված կանոնակարգը որոշակի սահմանափակումներ է սահմանում՝ կապված էլեկտրոնային փող թողարկելու հետ: Սահմանափակումները կապված են ոլորտում առկա ռիսկերի, մասնավորապես՝

հակերների հարձակումների հետ: Դրանց պատճառը նաև շուկայի մասնակիցների մասնագիտացման ցածր մակարդակն է, քանի որ էլեկտրոնային փողերի կիրառումը մեր հանրապետությունում ֆինանսական նոր գործիքներից է՝ չնայած արդեն մեկ տասնամյակից ավելի գործում է: Էլեկտրոնային փողի հաշվառման հաշվի վրա սահմանված է առավելագույն գումարի չափ, սակայն դա գործարքի առավելագույն գումարը չէ, այլ հաշվի լիցքավորման չափը:

Աշխարհում առաջին ինտերնետ վճարային համակարգը PayPal-ն է, որը սկսել է գործել ԱՄՆ-ում 1988թ-ից: 2014թ-ից այն գործում է նաև հայ օգտատերերի համար: ՀՀ-ում ներկայումս գործում են հետևյալ վճարահաշվարկային կազմակերպությունները.

- **«ԻԴՐԱՄ» ՍՊԸ** - «Իդրամ» վճարային համակարգը ՀՀ-ում գործում է 2004 թվականից՝ հարմարավետ վճարումների հնարավորություններ տալով օնլայն և օֆֆլայն հարթակներում: «Իդրամ» ընկերությունը 2012 թ. Կենտրոնական բանկի կողմից ստացել է էլեկտրոնային փող թողարկելու թույլտվություն՝ դառնալով առաջինը ՀՀ-ում: «Իդրամ» վճարային համակարգի գործունեության առաջնային նպատակներն են՝
- տարածել և խրախուսել էլեկտրոնային փողի լայն կիրառումը՝ նպաստելով էլեկտրոնային առևտրի զարգացմանը ՀՀ-ում,
- հնարավորություն ընձեռել հաճախորդներին առցանց ռեժիմով կատարել բազմատեսակ վճարումներ՝ ստեղծելով հարմարավետ և լայն կիրառություն ունեցող վճարման գործիք
- կատարելագործել դրամական փոխանցումների հնարավորությունները՝ կրճատելով տարածությունը և ժամանակը՝ մասնավորապես միջազգային դրամական փոխանցումների իրականացման համար [5]:
- **«ՄՈԲԻ ԴՐԱՄ» ՓԲԸ :**
- **«ԹԵԼ-ՄԵԼ» ՓԲԸ** - 2007թ. օգոստոսի 4-ին «Թել-Սել» ՓԲԸ-ն սկզբնավորեց ՀՀ-ում նոր բիզնես ուղղություն. ձևավորվեց ինքնասպասարկման տերմինալների միջոցով վճարումների ընդունման առաջին ցանցը:
- **«ԻՋԻ ՓԵՅ» ՍՊԸ** – ՀՀ-ում գործող վճարահաշվարկային կազմակերպություն է (հիմնադրված 2014թ. ապրիլին): Ընկերությունն ունի նաև էլեկտրոնային վճարային համակարգ՝ իր «Իզի Ռալլեթ» էլեկտրոնային դրամապանակով [6]:
- **«ԱՐՄԵՆԻԱՆ ՔԱՐԴ» ՓԲԸ** - «Արմենիան Քարդ» ՓԲԸ-ն հիմնադրվել է ՀՀ Կենտրոնական բանկի և տասը առևտրային բանկերի կողմից 2000թ. մարտին՝ բանկային ոլորտում ժամանակակից վճարահաշվարկային համակարգի ներդրման և զարգացման նպատակով: Ընկերության ստեղծման նպատակն է ՀՀ-ում պլաստիկ քարտերով (այդ թվում՝ միջազգային վճարային համակարգերի) և դրանց հետ կապված վճարման ժամանակակից այլ գործիքների միջոցով հաշվարկների միասնական համակարգի ստեղծումը, որը պետք է ապահովի ապրանքների և մատուցվող ծառայությունների դիմաց անկանխիկ վճարումների իրականացումը [7]:
- **«ՍՏԱԿ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆԳ» ՓԲԸ:**

Անկանխիկ գործարքների մեծ ծավալը ընդհանուր դրամաշրջանառության մեջ վկայում է այն մասին, թե արդյոք գրագետ ու ճիշտ է կազմակերպվում տվյալ երկրում դրամաշրջանառության ողջ գործընթացը: Ներկայումս ՀՀ-ում անկանխիկ գործարքների շրջանառությունը կազմում է մոտ 20%: Համեմատության համար նշենք, որ Ռուսաստանում անկանխիկ գործարքների տեսակարար կշիռը կազմում է 55% [8]: Ընդ որում, վերջին 5 տարիների ընթացքում ՀՀ-ում 9,5%-ից այդ ցուցանիշը հասել է 21,2%-ի:

Անկանխիկ գործարքների ծավալը պլաստիկ քարտերի միջոցով 2018թ. ՀՀ-ում աճել է 47,2%-ով՝ կազմելով 395,9 մլրդ դրամ: Աճի պատճառները կարող են մի քանիսը լինել: Նախ ավելացել են այն առևտրի կետերը, որոնք ընդունում են պլաստիկ քարտերով վճարումներ, նաև բնակչության ավելի մեծ զանգված է սկսում օգտվել քարտերից: Քարտերով կատարված մեկ գործարքի միջին ծավալը նվազել է՝ կազմելով 22 000 ՀՀ դրամ [9]:

Վճարումներ	2016	2017	2018
ԿԲ վճարահաշվարկային համակարգերով	21 961 715	24 193 329	23 644 101
Չեկերով	4 622	8 859	17 861
Քարտերով անկանխիկ գործառնություններ	218 525	269 030	395 937
Ընդամենը	22 184 862	24 471 218	24 057 900

Աղյուսակ 3. ԿԲ վճարահաշվարկային համակարգերով կատարված դրամական փոխանցումները, մլն դրամ [2]

2018 թվականի վերջի դրությամբ հաճախորդներին վճարային քարտեր են տրամադրել և սպասարկել ՀՀ տարածքում գործող 16 առևտրային բանկեր: Շրջանառության մեջ գտնվող քարտերի ընդհանուր քանակն ավելացել է 18%-ով և կազմել է մոտ 2.0 մլն [2]:



Գծապատկեր 1. Շրջանառության մեջ գտնվող վճարային քարտերի քանակը 2007-2018 թթ.

Տեխնոլոգիական փոփոխություններին զուգընթաց՝ բանկերը հանդես են գալիս նորանոր առաջարկներով: Այդպիսի նորարարություն է ինտերնետ բանկինգը, որը բանկային սպասարկման հեռահար տեխնոլոգիա է: Այն հնարավորություն է տալիս ցանկացած պահի և ցանկացած վայրից ինտերնետի միջոցով վերահսկել սեփական հաշիվները, կատարել փոխանցումներ և այլ բանկային գործարքներ՝ առանց այցելելու տվյալ բանկ: Այս համակարգը իրողություն է նաև ՀՀ-ում: Արդեն գրեթե բոլոր բանկերը ներ են դրել ինտերնետ բանկինգի համակարգերը և առաջարկում են բանկային ծառայություններ էլեկտրոնային տարբերակով: Այս գործընթացը ևս նպաստում է կանխիկ դրամաշրջանառության կրճատմանը: Ծրագրերը մշակվում են՝ ապահովելով անվտանգության բարձր մակարդակ:



Գծապատկեր 2. ՀՀ-ում վճարային քարտերով իրականացված գործառնություններ [2]

Այսպիսով, ամփոփելով նշենք, որ ներկայումս ՀՀ-ում «քվազի փողերի» շրջանառումը և մասնավորապես էլեկտրոնային փողերի շրջանառումը գոյության երկար պատմություն չունի: Այն համեմատաբար նոր երևույթ է, որը, սակայն, արագ տեմպերով ինտեգրվում է ՀՀ տնտեսական կյանքին, ինչը դրական տեղաշարժեր է կատարում տնտեսության մեջ, քանի որ «քվազի փողերի» շրջանառումը մեծ առավելություններ ունի և բավականին արդյունավետ է՝ կանխիկ փողերի հետ համեմատած: Զարգացման հեռանկարներ անշուշտ առկա են, իսկ վճարահաշվարկային կազմակերպությունները տարեցտարի ավելանում են՝ ընդլայնելով իրենց գործունեության շրջանակները և սպառողին ներկայացնելով նորանոր առաջարկներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. «Վճարահաշվարկային համակարգերի և վճարահաշվարկային կազմակերպությունների մասին» ՀՀ օրենք:
2. www.cba.am
3. www.abcfinance.am
4. www.knomea.ru
5. www.web.idram.am
6. www.easypay.am
7. www.cabinet.arca.am
8. www.finport.am
9. www.armbanks.am

ՀՏԴ_ 334.726 Տնտեսագիտություն

Էմմա Պետրոսյան
Արցախի պետական համալսարան
emmapetrosyan19@mail.ru
Գիտական ղեկավար՝
տ.գ.թ., դոցենտ Ի.Հ. Իշխանյան,
irina300353@mail.ru,

ԲՐԵՆԴԻ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԱՌԱՎԱՐՈՒՄԸ ՎԵՐԱԶԳԱՅԻՆ ԿՈՐՊՈՐԱՑԻԱՆԵՐԻ ՓՈՐՁԻ ՕՐԻՆԱԿՈՎ

Բանալի բառեր՝ բրենդ, բրենդինգ, բրենդի արժեք(Brand Value), վերազգային կորպորացիա, ապրանքային նշան

Հոդվածում ուսումնասիրվել են գլոբալ մակարդակով աշխարհում առաջատար վերազգային կորպորացիաների բրենդների կառավարման ռազմավարությունները: Իրականացվել է համաշխարհային մակարդակով առաջատար բրենդների արժեքների մակարդակի գնահատում: Ուսումնասիրվել է մի քանի խոշոր կորպորացիաների գործունեությունը ՀՀ-ում:

Эмма Петросян

СОВРЕМЕННЫЕ СТРАТЕГИИ УПРАВЛЕНИЯ БРЕНДОМ НА ОСНОВЕ ОПЫТА ТРАНСНАЦИОНАЛЬНЫХ КОРПОРАЦИЙ

Ключевые слова: *Бренд, брендинг, стоимость бренда, транснациональная корпорация, торговая марка*

В статье рассматриваются стратегии управления брендами ведущих мировых транснациональных корпораций мира. Была проведена оценка уровня стоимости ведущих мировых брендов. В работе представлена деятельность нескольких крупных корпораций в Армении.

Ցանկացած ապրանք կամ ծառայություն, որը հայտնվում է շուկայում անխուսափելիորեն սպառողի մոտ դրական կամ բացասական տպավորություն է ստեղծում: Հենց այդ ասոցիացիաները և սպառողի կողմից տվյալ ապրանքի ընկալումն էլ անվանում են բրենդ: **Բրենդը** սպառողի մտքում ապրանքի որոշակի տպավորությունն է, պիտակ, որը մտավոր կերպով սոսնձվում է տվյալ ապրանքին և այն ճանաչելի է դարձնում մյուս ապրանքներից: Այլ կերպ ասած, մրցակցային ապրանքների շուկայում երկարատև սպառողական նախասիրություններ ունեցող ապրանքային ապրանքանիշը համարվում է **բրենդ**: Բրենդի ստեղծման և կառավարման գործընթացը ընդունված է անվանել **բրենդինգ**: Այն կարող է ներառել բրենդի ստեղծման, ամրապնդման, թարմացման և փոփոխման, ինչպես նաև դրա ընդլայնման և խորացման զարգացման բոլոր փուլերը: Յուրաքանչյուր ընկերություն, որը գիտակցում է իր բրենդի ստեղծման նպատակը, բրենդի կառավարման գործընթացում պետք է այնպիսի ռազմավարություն ընտրի և իրականացնի, որը կներառի սպառողի վերաբերյալ պատկերացումները, նրա անհատականությունը, տվյալ ընկերությանը բնորոշ տարբերակիչ գծերը, նրա ոչ նյութական ակտիվները (օրինակ՝ հեղինակությունը նորարարության և որակի վերաբերյալ), հատկանիշներ, որոնք բրենդի

խորհրդանիշ են հանդիսանում: Որպեսզի օգտագործվող ապրանքանիշը բրենդ դառնա, կազմակերպությանը անհրաժեշտ է մեծ և բազմակողմանի աշխատանք: Միևնույն ժամանակ, ապրանքային նշանը կարող է լինել ցանկացած անուն, նշան, խորհրդանիշ, նկար կամ դրանց համադրություն, որոնք օգտագործվում են ընկերության ապրանքները բնորոշելու և մրցակիցների արտադրանքից տարբերելու համար: Ապրանքային նշանները լայնորեն օգտագործվում են բազմաթիվ երկրներում առևտրային ընկերությունների կողմից, քանի որ դրանք մեծացնում են տվյալ ապրանքի հեղինակությունը սպառողների գիտակցությունում և թույլ են տալիս ստանալ մեծ շահույթ[1]:

Բրենդը անձի ընկալման զգացողությունն է ապրանքի, ծառայության կամ կազմակերպության վերաբերյալ: Դա ընկալման զգացողությունն է, որովհետև մարդիկ հուզական, ինտուիտիվ էակներ են: Դա անձի ընկալման զգացողությունն է, որովհետև բրենդները սահմանվում են անհատների կողմից, այլ ոչ թե ընկերությունների, շուկաների կամ հասարակության: Այլ կերպ ասած՝ դա այն չէ, ինչ դու ես ասում, դա այն է, ինչ նրանք (անձինք, սպառողները) են ասում[2]:

Գլոբալացման շնորհիվ ձեռք է բերվում արտադրության ծախսերի տնտեսում, օպտիմալացվում է ռեսուրսների տեղաբաշխումը համաշխարհային առումով, ընդլայնվում է ազգային շուկայում ապրանքների տեսականին, և բարձրանում է որակը, մատչելի են դառնում գիտության, տեխնիկայի և մշակույթի նվաճումները: Բնականաբար, վերազգայնացման արդյունքը վերազգային կորպորացիաների ձևավորումն է դառնում: **Վերազգային կորպորացիաները** միջազգային տնտեսական կապերում բավականին բարդ և անընդհատ զարգացող դրսևորումներ են, որոնք պահանջում են հատուկ ուշադրություն, հետազոտում և վերահսկում:

Համաշխարհային ապրանքային նշանների օգտագործումն արդարացված է, երբ ապրանքն ունի բարձր իմիջ և դրան համապատասխան բարձր որակ: Վերջին տարիներին կատարված ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ շատ ընկերություններ և, առաջին հերթին վերազգային կորպորացիաները նախընտրում են օգտագործել որոշակի երկրներում տեղական ապրանքային նշանները: Միևնույն ժամանակ, նույն ապրանքային շուկայում կարող են առաջարկվել տարբեր ապրանքային նշաններ ունեցող ապրանքներ: Հետևաբար, յուրաքանչյուր ֆիրմա կանգնում է երկընտրանքի առջև, թե ապրանքային նշանի որ մի մասը և ինչպես կարելի է փոխել, և որն պահպանել և ստանդարտացնել, հաշվի առնելով յուրաքանչյուր երկրի ազգային հատկանիշները, բնակչության ազգային նախասիրություններն և կարծրատիպերի տարբերությունները:

Բրենդի ստեղծման հիմնաքարերց մեկն է հանդիսանում բրենդի անվանումը: Մարքեթինգի պատասխանատուները միշտ ձգտում են գտնել այնպիսի անվանումներ, որ ամբողջ աշխարհի սպառողների մեջ առաջացնեն նույն զգացումներն ու պատկերացումները: Իհարկե, Mercedes-Benz, Կոկա-Կոլա, Xerox, Minolta և բազմաթիվ այլ անվանումներ այնքան հայտնի են աշխարհում, որ մարդիկ արդեն լավ գիտեն, թե ինչ կարելի է ակնկալել այդ անվանումները կրող ապրանքներց: Սակայն միջազգային շուկա նոր մուտք գործողները մեծ դժվարությունների են հանդիպում իրենց ապրանքները ճանաչելի դարձնելու խնդրում, եթե դրանց անվանումները որևէ իմաստ չեն կրում այլ լեզուներում: Նաև հարց է առաջանում. արդյոք ընտրված անվանումը բարեհունչ և հեշտ արտասանելի է տվյալ լեզվում, թե այն ինքնաբերաբար խեղաթյուրվելու է: Օրինակ՝ Ճապոնիայում չկա «լ» հնչյունը, որոշ ասիական լեզուներում՝ «ր» , իսկ արաբականում՝ «օ» : Այսպիսով նույն Marlboro անվանումը այդ լեզուներում արտասանվում է «Մարբորո».

«Մալբորո», «Մալբուրու»[3]:

Ինչպես բրենդինգի ռազմավարության, այնպես էլ բրենդի հետ բոլոր գործողությունների համար առանձնահատուկ նշանակություն ունի դրա արժեքի որոշումը: Առևտրային բրենդի արժեքը (Brand Value), դրա հայտնիությամբ պայմանավորված, այն դրական ազդեցությունն է, որը մակնիշը թողնում է ապրանքի կամ ծառայության նկատմամբ սպառողի վերաբերմունքի վրա: Սովորաբար բրենդի արժեքի գնահատումը դրա համախառն ֆինանսական արժեքի որոշումն է, սակայն բրենդի իրական գինը հաշվարկելը բավականին բարդ է: Բրենդի արժեքի ամենաարդյունավետ չափիչը տվյալ ապրանքի համար մյուսներից ավելի բարձր գին վճարելու պատրաստակամության աստիճանն է: Այս ուղղությամբ իրականացված մարքեթինգային հետազոտությունները ցույց են տալիս, որ սպառողների մինչև 70%-ը պատրաստ են իրենց սիրելի բրենդի համար վճարել 20%-ով բարձր գին, քան մրցակիցների առաջարկած մակնիշների համար, իսկ մոտ 40%-ը պատրաստ է անգամ մինչև 40% բարձր գին վճարել: Այսպիսով, բրենդի արժեքի գնահատումը անհրաժեշտ է, որպեսզի դրա սեփականատերերը հաջողությամբ վարեն հետևյալ գործողությունները և բիզնես գործընթացները՝

- մուտք դեպի IPO (Initial Public Offering),
- բրենդի վաճառքը,
- բրենդի պորտֆելի օպտիմիզացումը,
- ֆրանչայզինգը,
- միաձուլումը և կլանումը,
- դատական գործընթացներ,
- ներդրողների հետ հարաբերությունները,
- ֆինանսական հաշվետվություններում և հաշվապահական հաշվառման մեջ ընդգրկվածությունը:

Ըստ Forbes-ի՝ 2019 թվականի տվյալներով աշխարհում **ամենաթանկ բրենդերն** են համարվում՝ (Աղյուսակ 1):

Ինչպես տեսնում եք, առաջին տեղը գրավում է Apple-ը, ընդ որում՝ աշխարհի ամենաթանկ ապրանքանիշերի ամենամյա վարկանիշը Apple-ը գլխավորում է արդեն 9-րդ տարին անընդմեջ: Տեխնոհսկայի բրենդը արժե $205,5 միլիարդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 12%-ով: iPhone-ի արտադրողը պատմության մեջ դարձավ առաջին ընկերությունը, որի բրենդը գնահատվել է ավելի քան $200 մլրդ դոլար: Apple-ը հմտորեն տեղափոխում է իր հաճախորդների բազան մեկ ապրանքատեսակներից մյուսը: Mac օգտվողները մի ժամանակ ընդունեցին iPod-ը, այնուհետև՝ iPhone-ը, iPad-ը և Apple Watch-ը: Հաճախորդները կարծում են, որ ապրանքանիշը սահուն կաշխատի Apple-ի էկոհամակարգի ներսում գտնվող բոլոր կատեգորիաներում, ինչը նպաստեց Apple-ին աշխարհում ամենաթանկ ընկերություն դառնալուն: Ծառայությունների վաճառքը հաջորդ քայլն է ընկերության և բրենդի համար: iPhone-ի վաճառքը նվազել է 2019 թ. վերջին քառորդում, հատկապես Չինաստանում, որտեղ նրանց ծեծի են ենթարկել մրցակից Huawei Technologies-ի և Xiaomi-ի ավելի էժան սմարթֆոնները: Անցած երեք ամիսների ընթացքում Apple-ի եկամուտները սմարթֆոնների վաճառքից նվազել են 17%-ով և կազմել 31 միլիարդ դոլար, սակայն հաշվետվություններից հետո բաժնետոմսերը աճել են 5%-ով: Դրա հիմնական պատճառներից մեկը ծառայությունների վաճառքից ռեկորդային եկամուտներն են: Այս բիզնեսը ներառում է App Store, Apple Pay, iTunes, ամպային ծառայություններ և այլն: Այդ պատճառով այժմ սա iPhone-ից հետո Apple-ի համար երկրորդ ամենամեծ հատվածն է

հանդիսանում: Անցյալ տարի նա բերեց ընկերությանը 37 միլիարդ դոլար եկամուտ, Morgan Stanley-ն ակնկալում է, որ մինչև 2023 թվականը այդ ցուցանիշը պետք է հասնի 100 միլիարդ դոլարի: Կանխատեսված աճը ցույց է տալիս Apple բրենդի ամրությունը:

Մինչդեռ համաշխարհային սպառողական բրենդերի մեծամասնությունը փորձում են հետևել հաճախորդների փոփոխվող նախընտրություններին, IT ոլորտի խոշորագույն բրենդները շարունակում են մնալ վարկանիշային աղյուսակի առաջատար դիրքերում: Այսպես Google բրենդը, որը զբաղեցնում է սանդղակի 2-րդ տեղը, գնահատվում է 167,7 միլիարդ դոլար, ինչը 27%-ով ավելի է, քան նախորդ տարի: Apple-ի նման Google-ն օգտագործեց իր ապրանքանիշը՝ սպառողների առօրյա կյանքի այլ ոլորտներ անցնելու համար՝ փոստից մինչև վեբ-սերֆինգ, քարտեզներից ընդհուպ ամպային պահեստավորման: Microsoft-ի (123,5 միլիարդ դոլար) և Amazon-ի (97 միլիարդ դոլար) բրենդները լրացնում են լավագույն քառյակը: Մեկ տարվա ընթացքում երկու ապրանքանիշերի արժեքն աճել է ավելի քան 20%-ով: Վերջին 12 ամիսների ընթացքում IT ոլորտի միակ բրենդը, որը զիջել է իր դիրքերը, ը Facebook-ն է՝ 5-րդ տեղում: Միայն առաջին տասնյակում նշված ապրանքանիշի արժեքն ընկել է՝ հասնելով 88,9 միլիարդ դոլարի, ինչը 6%-ով ցածր է նախորդ տարվա ցուցանիշից: Այս տարի Facebook-ի ակտիվ օգտագործողների թիվը հասել է 2,4 միլիարդի, սակայն սոցիալական ցանցի ապրանքանիշի հեղինակությունը վնասվել է անձնական տվյալների պաշտպանության, գաղտնիության քաղաքականության և կեղծ լուրերի շուրջ սկանդալների պատճառով:

IT ոլորտի սահմաններից դուրս Coca-Cola-ն դարձել է ամենաարժեքավոր ապրանքանիշը: Նրա ապրանքանիշը գնահատվում է 59,2 միլիարդ դոլար, ինչը 3%-ով ավելի է, քան նախորդ տարի: Coca-Cola-ն ամբողջ աշխարհում ունի շուրջ 146 000 աշխատակից, այն հանդիսանում է խմելու ջրի, գազավորված և չգազավորված ըմպելիքների, հյութերի, ինչպես նաև սուրճի ու թեյի համար մեկ մատակարարը: Լեգենդար գազավորված ըմպելիքն օգտագործում են ավելի քան 200 երկրում: Ասում են՝ միլիոնավոր մարդիկ ճանաչում են Coca-Cola-ի շիշն անգամ փակ աչքերով: Coca-Cola-ն աշխարհում երկրորդ ամենահասկանալի բառն է «okay» բառից հետո: Իր գոյության ողջ ընթացքում լոգոտիպը ոչ մի անգամ փոփոխության չի ենթարկվել, ընդամենը շատ աննշան ուղղումներ են արվել: «Կոկա-Կոլա» ընկերությունն արտադրում է ավելի քան 3500 տարբեր խմիչքներ: Եթե ցանկանաք ամեն օր փորձել մեկը, ձեզանից կպահանջվի 9 տարի: Ամենահայտնի ըմպելիքի բաղադրատոմսն արդեն 126 տարի գաղտնի է պահվում ոչ միայն մրցակիցներից, այլև հենց արտադրողից: Ընկերության 139 հազար աշխատակիցներից միայն 20 հոգի են տեղյակ ըմպելիքի բաղադրությունից: Լրագրողները մինչև այսօր 1979 թվականի մամուլում փնտրում են ըմպելիքի բաղադրությունը (ասում են, թե այդ տարեթվին թերթերից մեկը տպագրել է դրա ամբողջական բաղադրատոմսը) [4]:

ՀՀ-ում գործունեություն ծավալող ՎԱԿ-երի համար ՀՀ մուտք գործել խոչընդոտող գործոններից են ներքին շուկայի փոքր ծավալները և արտահանման բարձր տրանսպերտային ծախքերը: Ակնհայտ է, որ տվյալ երկու գործոնները խոչընդոտում են հատկապես ՀՀ-ում ՎԱԿ-երի կողմից արտադրություն հիմնելուն: Տվյալ գործոններից զերծ է մնում թերևս միայն բարձր տեխնոլոգիաների ոլորտը: Ուսումնասիրենք մի քանի խոշոր կորպորացիաների գործունեութունը ՀՀ-ում:

«Թեքնոլոջի ընդ Սայնս Դայնամիքս»-ը («Թի-Էս-Դի») հետազոտություններով ու մշակումներով զբաղվող կորպորացիա է, որը գործում է Սանտա Բարբարայում (ԱՄՆ) և Երևանում՝ գործակցելով հետազոտությունների և մշակումների գծով միջազգային ավելի

քան 15 կենտրոնների հետ: Ընկերությունը հիմնադրվել է 1998թ., իսկ 2013 թ.՝ վերանվանվել է «Թի-Էս-Դի»: Այն հայտնի է հայկական արտադրության առաջին սմարթֆոնների, պլանշետների, խելացի ժամացույցի թողարկմամբ: Կենտրոնի թիրախային նպատակը գիտության և տեխնոլոգիաների ներկայացումն է Հայաստանի համար կենսական նշանակություն ունեցող տարածաշրջաններում: «Թի-Էս-Դի»-ն ապահովում է արդի, դինամիկ և բազմաֆունկցիոնալ հետազոտություններ հետևյալ ոլորտներում՝ ճարտարագիտություն, բիոքիմիա, բիոինֆորմատիկա, էլեկտրական և էլեկտրոնային ճարտարագիտություն, համակարգչային գիտություն, արհեստական բանականություն, մեխանիկա, նանոտեխնոլոգիաներ, տեղեկատվական գիտություն, ֆիզիկա Forensic (գիտահետաքննչական) գիտություն և այլն: Սարքերի նախագծմանը զուգահեռ՝ «Թի-Էս-Դի»-ն առաջարկում է ավելի բաց և մատչելի համակարգ, որը կարող է համապատասխանեցվել հաճախորդների պահանջներին: Ընկերության մշակումների շարքում են՝ թվային գիտահետազոտական և հետաքննչական տեխնոլոգիաներն ու դյուրակիր համակարգիչները և այլն: Ընկերությունը ՀՀ երկու ազատ տնտեսական գոտիներից մեկում հիմնել է բարձր տեխնոլոգիաների նախագծման, մշակման, արտադրման և հավաքման գծով առաջատար գործարան: «Թի-Էս-Դի»-ն ներկայումս համագործակցում է ավելի քան 55 դոկտորական հետազոտական անձնակազմերի և ասպիրանտների հետ շուրջ 27 ակադեմիական, առևտրային, պետական կառույցներում ամբողջ աշխարհում: Ընկերությունն ունի ռեսուրս կենտրոններ աշխարհի մի շարք երկրներում և ակտիվորեն համագործակցում է միջազգային փորձագետների ու մասնագետների հետ[5]:

Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոն Հայաստանում հիմնվել է 2011թ. մայիսին: Նպատակն է աջակցել Հայաստանում նորարարության խթանմանը, որի արդյունքում կմշակվեն ինովացիոն ՏՀՏ լուծումներ՝ տարբեր բնագավառներում, այդ թվում նաև մասնավոր, պետական և սոցիալական ոլորտներում կիրառելու համար[6]: Կենտրոնն ինքնարտահայտման և ստեղծագործական մտքի զարգացման հնարավորություն է ընձեռում՝ իրականացնելով միջոցառումներ, որոնք նպաստում են համապատասխան միջավայրի ձևավորման միջոցով ինովացիոն մշակույթի տարածմանը, նոր գաղափարների բացահայտմանն ու կյանքի կոչմանը: Միաժամանակ, Կենտրոնն իրականացնում է մի շարք ծրագրեր՝ ուղղված ՏՀՏ ոլորտի մասնագետների, գործող և նորաստեղծ կազմակերպությունների տեխնոլոգիական և բիզնես գիտելիքների զարգացմանը[7]: Մայքրոսոֆթ ինովացիոն կենտրոնի Հայաստանի գործընկերներն են PicsArt, Sourcio, Monitis, Volo, Praemium, Betconstruct և այլ ընկերություններ:

«Սինոփսիս Արմենիա» ՓԲԸ-ն հանդիսանում է «Սինոփսիս» ընկերության մասնաճյուղը, որը Սիլիկոնյան հովտի էլեկտրոնային ավտոմատացված նախագծման (ԷԱՆ) ոլորտի առաջատար ընկերություններից մեկն է: «Սինոփսիս»-ը Հայաստանում խոշոր ՎԱԿ-ի հաջող նախադեպ է: Այն նպաստեց տեղական SS կլաստերների ընդլայնմանը, բարելավեց տեղական աշխատուժի որակը: Հայաստանում ընկերության տասնամյա գործունեության ընթացքում «Սինոփսիս Արմենիա»-ն դարձել է «Սինոփսիս»-ի ամենամեծ ՀուՄ կենտրոնը Սիլիկոնյան հովտից դուրս: Հայաստանում ՀուՄ կենտրոնի ստեղծման «Սինոփսիս»-ի որոշումը հիմնված էր երկրի ներուժի ուսումնասիրության վրա, որի կիզակետում էին ծրագրավորման և էլեկտրոնիկայի ոլորտներում որակյալ մասնագետները, որոնք աշխատում էին հեղինակավոր արտասահմանյան ընկերությունների հետ: «Սինոփսիս Արմենիա»-ն՝ «Սինոփսիս» ընկերության ամենախոշոր օֆշորային ՀուՄ կենտրոնը, հայտնի

է իր նորարարական լուծումներով: «Սինոփսիս Արմենիա»-ն հիմնադրվեց 2004 թ. Հայաստանում ամերիկյան երկու SS ընկերությունների մասնաճյուղերի՝ «Leda Design»-ի և «Monterrey Arset»-ի ձեռքբերման և միավորման միջոցով: Ավելի ուշ՝ 2005 թ., ձեռք բերեց ամերիկյան կապիտալով մեկ այլ SS ընկերություն՝ «HPLA»-ը, որը կիսահաղորդիչների արտադրողականության բարելավման համար ծրագրավորման գործիքներ էր արտադրում: «Սինոփսիս Արմենիա»-ի հետ միավորումից հետո ընկերությունները ինտեգրվեցին համաշխարհային «Սինոփսիս» խմբի մեջ՝ որպես մասնագիտացված բաժանմունքներ: Այսօր Սինոփսիսը Հայաստանում SS ոլորտի խոշորագույն գործատուներից մեկն է, ով ունի ավելի քան 650 աշխատակից (այդ թվում՝ ավելի քան 600 ճարտարագետներ)[8]: Սինոփսիս Արմենիայի ուսումնական դեպարտամենտը (ՍԱՌԻԴ) խթանում է հասարակության հետաքրքրությունը բարձր տեխնոլոգիաների ոլորտում երիտասարդ մասնագետների և ուսանողների հովանավորելով ամենամյա կրթական պարգևներով: SS ոլորտում լավագույն ուսանողներին և միկրոէլեկտրոնիկայի հայաստանյան ամենամյա օլիմպիադայի մասնակիցներին շնորհվում են խրախուսական պարգևներ: Ներկայումս այն իր գործունեությամբ լավագույն օրինակն է համաշխարհային SS և բարձր տեխնոլոգիաների ինովացիոն ընկերությունների համար և վերջիններիս ներկայացնում է Հայաստանում ՀուՄ կենտրոն հիմնելու առավելությունները:

Ելնելով վերոհիշյալ ուսումնասիրություններից՝ կարելի է հանգել այն կարծիքին, որ չնայած նրան, որ ՀՀ-ում ինովացիոն ոլորտում գործող ՎԱԿ-երի թիվը այդքան էլ մեծ չէ, այնուամենայինիվ, նոր զարգացող և առաջ շարժվող ճյուղի համար արձանագրվել են բավականին բարձր ցուցանիշներ: Դա կարող է հիմք հանդիսանալ կարծելու, որ ապագայում ոլորտի զարգացման հետ մեկտեղ էլ ավելի կմեծանա ՎԱԿ-ի հետաքրքրությունը ՀՀ ոչ մեծ շուկայի, բայց մեծ քանակությամբ SS ռեսուրսներ պարունակող երկրի նկատմամբ:

Աղյուսակ 1. Ըստ Forbes-ի 2019 թվականի տվյալներով աշխարհում ամենաթանկ բրենդերն

Ըստ Forbes-ի 2019 թվականի տվյալներով աշխարհում ամենաթանկ բրենդերն	Բրենդի Արժեք (Brand Value)	Եկամուտ
Apple	$205,5 մլրդ դոլար	$265,8 մլրդ դոլար
Google	$167,7 մլրդ դոլար	$136,2 մլրդ դոլար
Microsoft	$125,3 մլրդ դոլար	$110,2 մլրդ դոլար
Amazon	$97 մլրդ դոլար	$211,4 մլրդ դոլար
Facebook	$88,9 մլրդ դոլար	$48,8 մլրդ դոլար
Coca-Cola	$59,2 մլրդ դոլար	$23,8 մլրդ դոլար
Samsung	$53,1 մլրդ դոլար	$221,6 մլրդ դոլար
Disney	$52,2 մլրդ դոլար	$33,8 մլրդ դոլար
Toyota	$44,6 մլրդ դոլար	$190,8 մլրդ դոլար
McDonald's	$43,8 մլրդ դոլար	$96,1 մլրդ դոլար

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Акулич И.Л., «Международный маркетинг», Москва, Издат. «Вышэйшая школа», 2006, с. 267
2. Marty Neumeier, «The Brand Gap: How to Bridge the Distance Between Business Strategy and Design», New Riders; 2nd edition, 2005, p. 14
3. Թադևոսյան Ա., Մանուկյան Ա., Օդաբաշյան Վ., Լալայան Ա., Միջազգային մարքեթինգ, Երևան, «Ճարտարագետ», 2005, էջ 174Ж
4. www.forbes.ru
5. www.tsd.am
6. www . itguide.eif.am
7. www.micarmenia.am
8. www.synopsys.com
9. www. google. com

ՀՏԴ 338.2 Տնտեսագիտություն

Անի Սարգսյան
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Կառավարում» բաժին, մագիստրատուրա 1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ասրյան Շ.Շ.

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՏԵՂՆ ՈՒ ԴԵՐԸ ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. *գյուղատնտեսություն, բուսաբուծություն, անասնապահություն, գյուղատնտեսական տեխնիկա, գյուղատնտեսական համախառն արտադրանք, ռազմավարական ծրագիր, ՀՆԱ, գյուղատնտեսության տեսակարար կշիռ:*

Գյուղատնտեսությունը հանդիսանում է Արցախի Հանրապետության տնտեսության առանցքային ոլորտներից մեկը, որպես բնակչության՝ պարենի նկատմամբ կենսական պահանջմունքների բավարարման աղբյուր, զբաղվածության ապահովման բնագավառ, ինչպես նաև՝ գյուղական բնակավայրերի զարգացման հիմք և տնտեսական աճի հիմնական բաղադրիչ: Հոդվածում ներկայացված են ԱՀ գյուղատնտեսության զարգացման ժամանակակից մակարդակը, գյուղատնտեսության հիմնական բնութագրիչների՝ գյուղատնտեսական համախառն արտադրանքի ցուցանիշի, գյուղատնտեսության ճյուղային կառուցվածքի, զբաղվածության և այլ ցուցանիշների դինամիկայի միջոցով հիմնավորվել է ճյուղի սոցիալ-տնտեսական կարևոր դերն ու նշանակությունը: Հոդվածում ներկայացված են նաև գյուղատնտեսության զարգացման հիմնախնդիրները:

Ани Саргсян

МЕСТО И РОЛЬ СЕЛЬСКОГО ХОЗЯЙСТВА В СОВРЕМЕННЫХ УСЛОВИЯХ РАЗВИТИЯ ЭКОНОМИКИ РЕУСПУБЛИКИ АРЦАХ

Ключевые слова: *сельское хозяйство, растениеводство, животноводство, сельскохозяйственная техника, валовой сельскохозяйственный продукт, стратегический план, ВВП, удельный вес сельского хозяйства.*

Сельское хозяйство, как источник средств к существованию для населения, источник занятости, экономического роста, а также развития сельских районов, является одной из ключевых отраслей экономики Республики Арцах. В статье представлен текущий уровень развития сельского хозяйства РА, а также важная социально-экономическая роль и значение сектора, которые обосновываются с помощью основных характеристик сельского хозяйства, таких как валовый продукт, отраслевая структура сельского хозяйства, уровень занятости и другие показатели. В статье рассматриваются также проблемы развития сельского хозяйства.

Գյուղատնտեսությունը ԱՀ կառավարության կողմից ճանաչվել է որպես տնտեսության զարգացման գերակա ոլորտ՝ կապված ոլորտի պարենային ապահովության հիմնախնդրի լուծման ռազմավարական նշանակության, գյուղական տարածքների զարգացման ու գյուղական բնակավայրերի ամրապնդման և երկրի անվտանգության, կենսագործունեության և տնտեսության կայունացման գործընթացի հետ: Ոլորտը առանձնահատուկ է նաև բնակչության կենսամակարդակի բարձրացման, զբաղվածության ապահովման և տնտեսական զարգացման տեսանկյունից :

Համաշխարհային մակարդակով համեմատական ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ միջազգային գյուղատնտեսությունում զբաղված է տնտեսապես ակտիվ բնակչության գրեթե 1,1 մլրդ մարդ, այսինքն՝ ՏԱԲ-ի 41%, այդ թվում՝ 22 մլն մարդ՝ զարգացած երկրներում, իսկ միայն Չինաստանում ՝ 450 մլն մարդ, անցումային տնտեսությամբ երկրներում՝ 32 մլն մարդ և զարգացող երկրներում՝ 600 մլն մարդ: Ըստ 2017թ տվյալների՝ ԱՀ գյուղատնտեսության ոլորտում զբաղվածները կազմում են ընդհանուր զբաղվածների 9,7%, կամ որ նույնն է 5,4 հազարը:

ԱՀ գյուղատնտեսության զարգացման առումով կարևոր են ինչպես պետական

քաղաքականությունը այնպես էլ ոլորտի զարգացման բնական պայմանները: Պետք է ասել, որ այդ առումով առկա են հետևյալ նախադրյալները՝

- գյուղատնտեսական մեծ ներուժի առկայությունը,
- նպաստավոր բնակլիմայական պայմանները,
- գյուղատնտեսության համար բարենպաստ հարկային միջավայրը,
- պետական աջակցությունը՝ սուբսիդիաներ, ցածր տոկոսադրույքով փոխատվություններ, անհատույց տրամադրվող միջոցներ:

2019թ հունվարի 1-ի դրությամբ ԱՀ բնակչությունը կազմել է 148,0 հազար, որից գյուղականը կազմել է 43,3 տոկոս, իսկ քաղաքայինը՝ 56,7 տոկոս: ԱՀ-ում մեկ գյուղաբնակ մարդու հաշվով գյուղատնտեսական նշանակության հողերը կազմում են մոտ 9,0 հա, իսկ մեկ ինքնազբաղված գյուղացիական տնտեսության հաշվով 40,8 հա:

2018թ. գյուղատնտեսության համախառն արտադրանքը կազմել է 74 092,8 մլն դրամ (74097,4 մլն դրամ՝ ներառյալ ձկնորսություն): Հինգ տարվա կտրվածքով ՝ 2014թ համեմատ 2018թ գյուղատնտեսության համախառն արտադրանքն աճել է 28,5 տոկոսով, այդ թվում բուսաբուծությունը ապահովել է աճի 51,7 %-ը, իսկ անասնաբուծությունը՝ 48,3 %-ը: Սակայն գյուղատնտեսության աճը խիստ անկայուն է:

Գծապատկեր 1 ԱՀ և ՀՀ գյուղատնտեսության համախառն արտադրանքի աճի տեմպերը տոկոսներով



2018 թվականին Արցախի Հանրապետության համախառն ներքին արդյունքը շուկայական գներով կազմել է 310.3 մլրդ դրամ՝ նախորդ տարվա 11.9 տոկոսով: ԱՀ-ում տնտեսության կարևորագույն ոլորտներից մեկը՝ գյուղատնտեսությունը, ՀՆԱ-ի կառուցվածքում զիջում է արդյունաբերությանը:

Գծապատկեր 2. ԱՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության տեսակարար կշիռը



Զարգացող երկրներին բնորոշ է մեծ կախվածություն գյուղատնտեսական արտադրությունից և տնտեսական՝ զարգացած երկրներից: Սովորաբար զարգացող երկրներում գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում մեծ է, քանի որ այս երկրների տնտեսությունները սովորաբար դեռևս գտնվում են ագրարային փուլում:

Ինչպես երևում է գծապատկեր 2-ից, 2018թ. ԱՀ ՀՆԱ-ում գյուղատնտեսության մասնաբաժինը ՀՆԱ-ում 10,9 % է: Համեմատության համար նշենք, որ զարգացած երկրներում՝ Մեծ Բրիտանիայում, Ֆրանսիայում, այս ցուցանիշը հասնում է 0,7 %-ի և 1,7 %-ի, Գերմանիայում՝ 0,6 %-ի, ԱՄՆ-ում՝ 1,1 %-ի: Ելնելով դրանից կարող ենք պնդել, որ ԱՀ ագրարային երկիր է, փաստորեն, գյուղատնտեսության զարգացումը կարևոր նշանակություն ունի մեր երկրի տնտեսության զարգացման համար:

Թեև ՀՆԱ-ի ծավալում գյուղատնտեսության տեսակարար կշիռը բարձր է, այնուամենայնիվ, ԱՀ-ն, որպես ագրարային երկիր, գյուղատնտեսական մթերքների արտահանմամբ աչքի չի ընկնում: Գյուղատնտեսական նշանակության ապրանքների ներմուծման և գյուղատնտեսության համախառն արտադրանքի հարաբերության ցուցանիշը կազմել է 47,6%, ինչը վկայում է գյուղատնտեսության համախառն արդյունքի աճի ներուժը ներկա պայմաններում:

Գյուղատնտեսության ոլորտում պետությունը իրականացնում է աջակցության քաղաքականություն՝ Ներդրումային հիմնադրամի և Գյուղի և գյուղատնտեսության զարգացման աջակցության հիմնադրամի միջոցով: Դիտարկվող ժամանակահատվածում իրականացված քաղաքականությունը նպատակաուղղվել է գյուղի և նրան սպասարկող ոլորտների արդյունավետության բարձրացմանը և դրա հիման վրա գյուղատնտեսության հետագա զարգացման և ընդլայնված վերարտադրության համար պայմանների ստեղծմանը, գյուղացիական տնտեսությունների իրական եկամուտների ավելացմանը, հանրապետության պարենային անվտանգության մակարդակի բարձրացմանը: Վերջին տարիներին ծրագրված աջակցություն է ցուցաբերվել տնտեսվարող սուբյեկտներին՝ բարձրորակ սերմերի (հացահատիկ, կարտոֆիլ և այլն), հանքային պարարտանյութերի, բույսերի պաշտպանության միջոցների մատակարարման, համապատասխան աշխատանքների կազմակերպման և ագրոտեխնիկայի բարելավման ուղղությամբ:

Գյուղի և գյուղատնտեսության հիմնադրամը իրականացնում է հողագործության, անասնապահության, գյուղատնտեսական մթերքների մթերման, վերամշակման և իրացման ենթակառուցվածքների զարգացմանն ու մատուցվող գյուղատնտեսական մեքենայացված ծառայությունների արդյունավետության բարձրացմանն ուղղված աջակցության ծրագրեր:

Ընդ որում, նշված ժամանակահատվածում ոլորտին հատկացվող գումարները միմիայն աճել են: Այսպես, պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացված միջոցները 2014թ-ի համեմատությամբ աճել են 1,5 անգամ:

Գծապատկեր 3. ԱՀ պետական բյուջեից գյուղատնտեսության ոլորտին հատկացվող ծախսերը



Գծապատկեր 4.ԱՀ գյուղատնտեսության ոլորտում Գյուղի և գյուղատնտեսության աջակցության հիմնադրամի և Արցախի ներդրումային հիմնադրամի կողմից իրակացված ներդրումների ծավալը 2013-2017թթ. մլն դրամ



2008-2018թթ. ժամանակահատվածում հիմնադրամի կողմից իրականացվել է 69,973,817.7 հազար դրամի աջակցություն:

Ընդհանուր աջակցության մեջ 55 %-ը կազմում են Հիմնադրամի կողմից տրամադրված փոխառությունները: 2008-2018թթ. ժամանակահատվածում իրականացված աջակցության 17 %-ը՝ 11,817,738.6 հազար դրամը, կազմում է միայն 2018թ. իրականացված աջակցությունը:

Մեկ շնչի հաշվով ՀՆԱ-ում զգալի բաժին է կազմում գյուղատնտեսական արտադրանքը, ինչը 2018թ. կազմել է 500,6 հազար ՀՀ դրամ կամ 1 շնչի հաշվով ՀՆԱ ծավալի 23,8%-ը: ԱՀ մեկ շնչի հաշվով ՀՆԱ և մեկ շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալները 2018թ-ին 2014թ. նկատմամբ համապատասխանաբար աճել են 60,7 և 25,6 տոկոսով՝ վկայելով պարենապահովության բարձրացման մասին:

Աղյուսակ 1. Մեկ շնչին ընկնող ՀՆԱ-ն և գյուղատնտեսական արտադրանքը 2014-2018թթ.

	2014	2015	2016	2017	2018
1 շնչի հաշվով ՀՆԱ ծավալը (հազար դրամ)	1308,7	1443,8	1577,3	1855,9	2103,3
որից՝1 շնչի հաշվով գյուղատնտեսական արտադրանքի ծավալը (հազար դրամ)	398,7	142,9	468,6	518,2	500,6

Չնայած գյուղատնտեսության աճի մակարդակին և առկա ծավալներին, այնուամենայնիվ, ԱՀ ներկրվող ապրանքների 20,7 %-ը գյուղատնտեսական նշանակության են, իսկ արտահանվող ապրանքների՝ 10,1 %-ը: Փաստորեն, դեռևս ԱՀ կախվածությունը գյուղատնտեսական ապրանքների ներմուծումից բարձր է՝ վկայելով գյուղատնտեսաության զարգացման ոչ բավարար մակարդակի մասին:

Հանրապետությունում գյուղատնտեսության զարգացմանը խոչընդոտող գործոններից են՝

- մասնատված հողակտորները և մանր գյուղացիական տնտեսությունները,
- արտադրողների միջև համագործակցության ցածր մակարդակը,
- գյուղատնտեսության ռիսկայնության բավականին բարձր մակարդակը և ոլորտում ապահովագրական համակարգի բացակայությունը:

ԱՀ գյուղատնտեսության ոլորտի զարգացման հիմնախնդիրներից է գյուղմթերքների իրացման դժվարությունները՝ կապված գյուղատնտեսական մթերքներ գնող-իրացնող ենթակառուցվածքների բացակայությամբ, ոլորտում ներդրումներ իրականացնելու պոտենցիալ ներդրողների բացակայությամբ, գյուղատնտեսության ոլորտի մասնագետների որակավորման բարձրացման անհրաժեշտությամբ և այլն:

Նշված հիմնախնդիրների հաղթահարումը ուրվագծում է գյուղատնտեսության հեռանկարային զարգացման տեսլականները, դրանք են՝

- ✓ առևտրային գյուղատնտեսական կազմակերպությունների, կոոպերատիվների և շուկայական ենթակառուցվածքների հետ ինտեգրված գյուղացիական տնտեսությունների զարգացում ինտենսիվ տեխնոլոգիաների կիրառմամբ,
- ✓ պարենային անվտանգության շահերի և ագրոպարենային արտադրանքների արտաքին առևտրի հարաբերական առավելության սկզբունքների իրատեսական համադրմամբ՝ բնակչության կայուն պարենային ապահովում և ագրովերամշակող հատվածի գյուղատնտեսական հումքի պահանջարկի բավարարում,
- ✓ բարձր ավելացված արժեք ապահովող գյուղմթերքների արտադրության գերակշռություն բուսաբուծության և անասնապահության ներճյուղային կառուցվածքում:

Հաշվի առնելով բոլոր վտանգները և սպառնալիքները, պարզ է, որ ՀՀ և ԱՀ գյուղատնտեսությունը հարաճուն շուկաներից օգտվելու մեծ ներուժ ունի՝ ոլորտում օտարերկրյա ներդրումների ներգրավման միջոցով: Նոր կառավարությունը պետք է ձգտի կենտրոնանալ ներդրումային միջավայրի բարելավման և խթանման, ներդրումներին աջակցող ինստիտուտների ուժեղացման և քաղաքականության բարեփոխումների վրա: Օտարերկրյա ներդրումները կարող են հանդիսանալ ոչ միայն կապիտալի ներգրավման առումով լավ միջոց, այլ նաև՝ գիտելիքի, փորձառության, տեխնոլոգիաների և նոր շուկաների: Բացի այդ, տեղի բնակչությունը կարող է օգտվել ոչ միայն նոր աշխատատեղերի առկայությունից, այլ նաև ապրանքների ավելի բազմազան տեսականուց, որակի բարձրացումից, անվտանգության և ավելի շահավետ գնագոյացումից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱՀ գյուղատնտեսության կայուն զարգացման ռազմավարական ծրագիր:
2. ՀՀ գյուղի և գյուղատնտեսության 2015-2025 թթ. կայուն զարգացման ռազմավարություն:
3. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2015 թ. հաշվետվություն:
4. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2016 թ. հաշվետվություն:
5. ԼՂՀ գյուղատնտեսության նախարարության 2017 թ. հաշվետվություն:
6. ԱՀ «Գյուղի և գյուղատնեսության աջակցության հիմնդրամի» 2018 թ. հաշվետվություն
7. ԱՀ 2018-2020 թվականների պետական միջնաժամկետ ծախսերի ծրագիր:
8. Գյուղատնտեսության և գյուղական շրջանների զարգացման գնահատումը Արևելյան գործընկերության երկրներում:
9. Թադևոսյան Զ., «ՀՀ գյուղատնտեսության՝ որպես գերակա ոլորտի զարգացումը», զարգացման ժամանակակից մարտահրավերներ», գիտական հոդվածների ժողովածու, 2015 թ.:
10. Ավետիսյան Ս., «ՀՀ ագրարային ոլորտի պետական կարգավորման արդի խնդիրները», գիտական հոդվածների ժողովածու:
11. ԼՂՀ 2013թ. պետական բյուջեի կատարման մասին հաշվետվություն, ք. Ստեփանակերտ 2014թ.:
12. ԼՂՀ վիճակագրական տարեգիրք, վիճակագրական ժողովածու,
13. ՀՀ գյուղատնտեսության ոլորտում կոոպերացիայի զարգացման հիմնա- խնդիրները, գիտաժողովի նյութեր (խմբ., Ա. Ա. Հարությունյան), Եր. ՀՊԱՀ, 2010, 114 էջ:
14. Мирось *В. В., Василец В. Г., Ковтун С. Б.*, Производство молока и говядины в фермерском хозяйстве, Изд. Феникс. 2012 г.
15. www. minagro.am
16. www.statnkr.am
17. www.agrofund.am
18. www. mfe.am

ՀՏԴ 336.1 Տնտեսագիտություն

Ռաիսա Սողոմոնյան
Արցախի պետական համալսարան
Տնտեսագիտության ֆակուլտետ
«Ֆինանսներ» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ.գ.թ., դոցենտ Ն. Ավանեսյան

ՔՐԱՈՒԴՖԱՆԴԻՆԳԸ ՈՐՊԵՍ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՖԻՆԱՆՍԱՎՈՐՄԱՆ ՁԵՎ

Բանալի բառեր՝ *քրաուդֆանդինգ, ներդրումներ, ֆինանսավորում, միկրոֆինանսավորում, քրաուդֆանդինգ պլատֆորմա, ստարտափ, IndieGoGo, Kickstarter, սոցիալական ցանց։*

Առաջին գրանցված հաջող քրաուդֆանդինգը տեղի է ունեցել 1997 թ։ Հիմնական կատեգորիաներն են քրաուդֆանդինգ նվիրատվությունը և քրաուդֆանդինգ ներդրումը։ Առաջինի մեջ մտնում են նվիրատվության, պարգևատրման, իսկ երկրորդի մեջ՝ բաժնետիրական կապիտալի, վարկավորման, ռոյալթիների վրա հիմնված բիզնես մոդելները։

Քրաուդֆանդինգ պլատֆորմաները առաջարկում են «Ամեն ինչ կամ ոչինչ», «Պահպանիր, ինչ հավաքես» ֆինանսավորման տեսակները։

Ավելի քիչ բյուրոկրատիան և ցանցերի մեծ հնարավորությունը հանգեցնում են մեծ պոտենցիալի։

Раиса Согомонян

КРАУДФАНДИНГ КАК СОВРЕМЕННЫЙ МЕТОД ФИНАНСИРОВАНИЯ

Ключевые слова*: краудфандинг, инвестирование, финансирование, микрофинансирование, краудфандинг платформа, стартап, IndieGoGo, Kickstarter, социальная сеть.*

Итак, первый зарегистрированный успешный случай краудфандинга произошел в 1997 году. Основные категории - это краудфандинг на основе пожертвований и краудфандинг инвестиции. Первая включает в себя бизнес-модели на основе пожертвований, вознаграждений, а вторая - бизнес-модели на основе акций, кредитов и роялти.

Краудфандинг платформы предлагают финансирование «Все или ничего», «Держи, что поднимешь».

Меньше бюрократии и больше возможностей подключения приводят к увеличению потенциала.

Քրաուդֆանդինգը անհատի կամ կազմակերպության համար գումար հավաքելու միջոց է՝ նվիրատվություններ կամ ներդրումներ հավաքելով ընտանիքի, ընկերների, ընկերների ընկերների, անծանոթների, բիզնեսի և այլնի միջոցով, սովորաբար 1000 մինչև 1 մլն ԱՄՆ դոլարի չափով։ Տեղեկատվությունը տարածելու համար օգտագործելով սոցիալական լրատվամիջոցները՝ մարդիկ կարող են հասնել ավելի հավանական դոնորների, քան դրամահավաքի ավանդական ձևերով է լինում։

Կապիտալի ձևավորման այս նոր ձևը ի հայտ եկավ 2008 թ. ֆինանսական ճգնաժամի ֆոնին՝ ի պատասխան ֆինանսավորման ձևավորման հարցում սկսնակ ձեռնարկությունների առջև ծառացած դժվարությունների։

Մեկ տասնամյակից պակաս ժամանակահատվածում քրաուդֆանդինգը տարածվել է ամբողջ զարգացած աշխարհում և այժմ մեծ հետաքրքրություն է առաջացնում նաև զարգացող աշխարհում։

Առաջին գրանցված հաջող քրաուդֆանդինգը տեղի է ունեցել 1997 թ., երբ բրիտանական Marillon ռոք խումբը ֆինանսավորեց իր վերամիավորման շրջագայությունը Միացյալ Նահանգներում երկրպագուների առցանց նվիրատվությունների շնորհիվ:

Ստեղնաշարահար Մարկ Քելին էլեկտրոնային նամակ է ուղարկել իր փոստային ցուցակի 1000 անձի՝ ասելով, որ խումբը շրջագայության գնալու դեպքում կկորցնի մոտ 60,000 դոլար: Երկրպագուներն ասացին. <<Ինչու հենց մենք գումար չհավաքենք>>: Քարոզարշավն ավարտվեց գումարի հավաքագրմամբ, և խումբը շրջագայեց: Բայց այդ էլ. փոստի ազդեցությունը շատ ավելին էր, քան մեկ երաժշտական շրջագայությունը: Ոգեշնչվելով ֆինանսավորման այս նորարարական եղանակով, ArtistShare-ը 2001թ. դարձավ առաջին առանձնացված քրաուդֆանդինգի հարթակը՝ կենտրոնանալով այն երաժիշտների վրա, ովքեր ցանկանում էին գումար հավաքել ալբոմներ պատրաստելու կամ շրջագայության գնալու համար[1]:

Շատ չանցած՝ սկսեցին ի հայտ գալ ավելի բազմակողմանի հարթակներ ինչպիսիք են IndieGoGo՝ 2007թ, Kickstarter՝ 2009թ.:

Քրաուդֆանդինգի պատմության մեջ կարելի է առանձնացնել հետևյալ շրջադարձային իրադարձությունները[2].

1. 1976թ. Grameen Bank և միկրոֆինանսավորումը

1976-ին պրոֆեսոր Մուհամմադ Յունուսը նախաձեռնել է հետազոտական նախագիծ, որտեղ նա 27 դոլարի չափով վարկ է տվել 42 աղքատ կանանց Բանգլադեշի Ջոբրա քաղաքում: Ծրագիրն այնքան հաջող էր, որ հանգեցրեց Grameen Bank[3] ծրագրի մշակմանը, որը լայնորեն հայտնի է որպես ժամանակակից միկրոֆինանսավորման առաջին օրինակը: Միկրոֆինանսավորումը վարկեր է տրամադրում աղքատության մեջ ապրող մարդկանց, ովքեր չունեն հնարավորություն օգտվելու ավանդական վարկային ձևերից: Միկրոֆինանսական հաստատություններում գումարները կարող են գալ կամ անդամներից (ինչպես վարկային միություններում), կամ նվիրատվություններից, կամ էլ դրանք ավելի շատ նման են ավանդական բանկային հաստատություններին, բայց ավելի ցածր ավանդի գումարներով, վարկի գումարներով և (իդեալականորեն) տոկոսադրույքներով:

2. 2006 թվական. «Crowdfunding» տերմինի առաջին օգտագործումը

«Քրաուդֆանդինգ» տերմինի առաջին գրանցված օգտագործումը եղել է 2006 թվականի օգոստոսին ձեռներեց Մայքլ Սալիվանի կողմից: Սալիվանն այն օգտագործեց իր «fundavlog» ընկերության գործարկման ժամանակ, ինչը վիդեոբլոգ նախագծերի համար ինկուբատոր ստեղծելու (ձախողված) փորձ էր:

3. 2008թ. Մեծ ճգնաժամը

Բնակարանային շուկայի և ֆինանսական արդյունաբերության փլուզումը 2008 թ. հանգեցրեց նրան, որ մարդիկ ստիպված եղան ֆինանսավորում փնտրել այլընտրանքային միջոցներով: Քանի որ ավանդական բանկային հաստատություններն այլևս ի վիճակի չէին կամ ուղղակի չէին ուզում տրամադրել նույն վարկերը, ինչպես նախկինում, մարդիկ դիմում էին ինտերնետին և միմյանց:

4. 2009 - 2015 թթ. քրաուդֆանդինգը հանդես է գալիս որպես ֆինանսավորման հիմնական աղբյուր

Kickstarter-ի և IndieGoGo-ի գործարկումը հանգեցրեց քրաուդֆանդինգի խորքային

[1] https://medium.com/@ImpactGuru/12-key-moments-in-the-history-of-crowdfunding-so-far-3f614273d95
[2] https://www.startups.com/library/expert-advice/history-of-crowdfunding
[3] http://www.grameen.com

հարթակների պայթյունի: Քրաուդֆանդինգի ոլորտը արագորեն դարձավ հանրաճանաչ տարբերակ ձեռնարկատերերի համար՝ ներկայացնելու իրենց գաղափարները, ուշադրություն գրավելու և ֆինանսավորում ստանալու համար:

Դրա օգնությամբ 2009 թ. 530 միլիոն դոլարի հավաքագրված միջոցները եռապատկվել են՝ հասնելով 1,5 միլիարդ դոլարի 2011 թ. դրությամբ.: Մինչև 2012 թվականը գոյություն ունեին քրաուդֆանդինգի ավելի քան 450 հարթակներ, որոնք հավաքել էին ավելի քան 2,7 միլիարդ դոլար ամբողջ աշխարհում: Մինչև 2015 թվականը այդ թիվը հասել է 24,4 միլիարդ դոլարի:

Քրաուդֆանդինգի հիմնական կատեգորիաներն են.

1.Քրաուդֆանդինգ նվիրատվությունները մեծացնում են անբավարար կապիտալը, այլ ոչ թե ստեղծագործական ծրագրերի կամ բարեգործական նպատակների համար արժեթղթերի վաճառքը: Որոշ դեպքերում նվիրատվությունները կարող են օժանդակել նորաստեղծ ընկերությանը կամ արտադրանքի նորարարությանը, երբեմն՝ ապրանքից կամ ծառայությունից վաղաժամկետ օգտվելու դիմաց: Անհատները կամ կազմակերպությունները, որոնք օգտագործում են նվիրատվության վրա հիմնված քրաուդֆանդինգը, առաջարկում են նվիրատվությունների խթանման մի ամբողջ շարք: Փոքր գումարների դոնորները կարող են ստանալ միայն առցանց ճանաչում, մինչդեռ ավելի մեծ գումարներ խոստացող դոնորները կարող են հատուցվել ապրանքով, արտադրանքի անհատականացմամբ կամ անհատականացված ճանաչման որևէ ձևով: Սա նման է ոչ առևտրային ոլորտում դրամահավաքի, որտեղ դոնորները ստացված գումարի չափի հիման վրա ստանում են տարբեր ճանաչում կամ ապրանքներ:

2.Քրաուդֆանդինգ ներդրումը(CFI) վերաբերում է կապիտալի բարձրացմանը՝ ընկերության ակտիվների և (կամ) ֆինանսական գործունեության հետ կապված ֆինանսական գործիքների վաճառքի միջոցով: CFI-ն ներառում է փոխառու կապիտալի բարձրացում վարկերի տեսքով, ընկերության մտավոր սեփականության նկատմամբ պահանջների վաճառք և ներդրողների սեփականության բաժնետոմսերի վաճառք (բաժնետիրական կապիտալի վրա հիմնված քրաուդֆանդինգ): Յուրաքանչյուր դեպքում շատ ներդրողներ կատարում են համեստ ներդրումներ՝ ի տարբերություն այն ավելի ավանդական մոդելի, որում հրեշտակային ներդրողները գնում են ֆինանսավորման մի ամբողջ փուլ: Ներկայումս այս երկու լայն կատեգորիայի շրջանակներում գործնականում կիրառվում են հինգ բիզնես մոդելներ, իսկ քրաուդֆանդինգի հարթակները սովորաբար կազմակերպվում են հինգ մոդելներից մեկի շուրջ:

Առաջին կատեգորիայի մեջ մտնում են երկու բիզնես մոդելներ՝ նվիրատվության վրա հիմնված և պարգևատրման վրա հիմնված: **Նվիրատվության վրա հիմնված քրաուդֆանդինգը** բարեգործական բնույթ է կրում և ֆինանսավորողները նվիրատվություն են անում՝ առանց դրամական փոխհատուցում ակնկալելու: Այս մոդելի դեպքում որպես դրական կողմ կարելի է նշել ռիսկի բացակայությունը, իսկ որպես բացասական այն, որ դոնորները չեն ստանում ներդրումի հետգնման ապահովվածությունը, և ձեռնարկատերերը դժվարանում են զգալի կապիտալ հավաքել:

Քրաուդֆանդինգ նվիրատվության **պարգևատրման վրա հիմնված** բիզնես մոդելի դեպքում ֆինանսավորողները ստանում են ծառայության կամ արտադրանքի նախնական գնման երախտագիտություն կամ նախնական գնման նվեր: Այս մոդելը վերածվում է ինքնուրույն շուկայի, որտեղ ֆիրմաները նախնական վաճառքի միջոցով մեծ գումարներ են հավաքում: Դրական կողմն է ցածր ռիսկը (հիմնականում կատարման և խարդախության

ռիսկը) և ֆինանսական վերադարձի իրական ներուժի բացակայությունը: Բացասական կողմն այն է, որ հնարավոր եկամուտը փոքր է: Անվտանգություն ձեռք չի բերվել, և հաշվետվողականության մեխանիզմ չկա: Ձեռնարկատերերի մեծամասնության մոտ կարող է առաջանալ խնդիր՝ կապված զգալի կապիտալի ներգրավման հետ առանց այն արտադրանքի, որի համար զանգվածային հետաքրքրություն կա:

Երկրորդ կատեգորիայի մեջ մտնում են երեք բիզնես մոդելներ՝ բաժնետիրական կապիտալի , վարկավորման և ռոյալթիների վրա հիմնված քրաուդֆանդինգ ներդրումներ:

Բաժնետիրական կապիտալի վրա հիմնված բիզնես մոդելի դեպքում ֆինանսավորողները ստանում են բաժնային գործիքներ կամ շահույթի բաժանման պայմանավորվածություն: Դրական կողմեր են հանդիսանում ձեռնարկության շահութաբերության մեջ մասնաբաժնի հնարավորությունը, ֆինանսական շահույթի անսահմանափակ պոտենցիալը, համեմատաբար մեծ թվով ներդրողներ ներգրավելու կարողությունը: Իսկ բացասական կողմերն են ներդրումների հավանական կորուստը, սնանկության դեպքում բաժնետերերի ենթակայությունը պարտատերերին, քրաուդֆանդինգի հետ կապված արժեթղթերի մասին օրենքների ընկալման բարդությունը:

Վարկավորման վրա հիմնված բիզնես մոդելի դեպքում ֆինանսավորողները ստանում են պարտքի գործիք, որը վճարում է կայուն տոկոսադրույքներ և վերադարձնում է մայր գումարը սահմանված գրաֆիկով: Դրական կողմերն են վարկատուի և վարկառուի միջև համաձայնեցված և նախապես որոշված վերադարձի տոկոսադրույքի առկայությունը, սնանկության դեպքում պարտատերերի առաջնահերթությունը բաժնետերերի նկատմամբ, ապահովված կարգավիճակի շնորհիվ ձեռնարկատերերի համար կապիտալի հավաքագրման գործի հեշտացումը: Որպես բացասական կողմ կարելի է առանձնացնել ներդրումների հավանական կորուստը, ինչպես նաև սնանկության դեպքում բաժնետերերը ենթական են պարտատերերին: Քրաուդֆանդինգի հետ կապված արժեթղթերի մասին օրենքները կարող են բարդ լինել: Պարտատերը կարող է ենթակա լինել ավագ պարտատերերի: StartUp-երի ձախողման բարձր հավանականությունը ունի վնասի նույն ռիսկայնությունը, ինչ և բաժնային կապիտալում ներդրումները, բայց սահմանափակ պոտենցիալ եկամտաբերությամբ: Պահանջում է բիզնես, որն արդեն իսկ առաջացնում է դրամական միջոցների հոսք: Գոյություն ունեցող / կայացած դրական դրամական հոսքեր ունեցող բիզնեսները կարող են հաշվի առնել այս տարբերակը, քանի որ նրանք կարող են առաջարկել ավելի կառուցվածքային ելքի հնարավորություն, քան սովորական բաժնային առաջարկները:

Այս կատեգորիայի վերջին՝ **ռոյալթիի վրա հիմնված** բիզնես մոդելը ավելի քիչ է տարածված, քան մյուսները: Ներդրողները փայատեր են դառնում թրասթային հիմնադրամի մեջ, որն իր հերթին ստանում է ռոյալթիներ դրամական միջոցներ հավաքագրող կազմակերպության մտավոր սեփականությունից: Եկամտի տոկոսը վճարվում է ժամանակի ընթացքում: Վճարը տատանվում է՝ կախված պարբերական եկամուտից: Հնարավոր շահույթը անսահմանափակ է, բայց շահույթի նորմը որոշվում է տոկոսադրույքով: Այն ներկայացնում է ավելի քիչ ռիսկ, քան բաժնային կապիտալում ներդրումները, բայց ավելին, քան պարտքային գործիքները: Բացասականն այն է, որ հավանական է ներդրումների կորուստ: Կորուստի ռիսկը համեմատելի է արժեթղթերի մեջ ներդրումների ռիսկի հետ, բայց այս մոդելի ներդրումների հավանական եկամուտները ցածր են, քան արժեթղթերինը: Բիզնեսը կարող է դադարեցնել ռոյալթների վճարումը, եթե այն որոշի գործել առանց տվյալ մտավոր սեփականության: Այս գործիքները սովորաբար

ներգրավում են ներդրողների փոքր զանգված, քան CFI-ի մյուս մոդելները, ուստի ձեռներեցների համար ավելի դժվար կլինի այս մոդելի օգնությամբ կապիտալի հավաքագրումը:

Քրաուդֆանդինգ հարթակները իրենց հերթին առաջարկում են ֆինանսավորման տեսակներ: **«Ամեն ինչ կամ ոչինչ»** տեսակի ֆինանսավորումը պահանջում է, որ նախագիծը/ընկերությունը կարողանա հատկացված ժամանակահատվածում հասնի իր ֆինանսավորման թիրախի 100 տոկոսին կամ հակառակ դեպքում գումարը վերադարձնի ֆինանսավորողներին: Այս մեխանիզմն աշխատում է երկու տարբերակով՝ կամ ֆինանսավորողներից գումարները չեն գանձվում, մինչդեռ կազմակերպությունը չի հասնում իր դրամահավաքի նպատակին, կամ միջոցները պահվում են հարթակի միջանկյալ հաշվում և վերադարձվում են, եթե նպատակը չի կատարվել: Kickstarter-ը «Ամեն ինչ կամ ոչինչ» տեսակի ֆինանսավորման օրինակ է: Kickstarter-ը հայտարարում է, որ իր պրոյեկտների հաջողության ցուցանիշը 36.9 %[1] է, որը զգալիորեն բարձր է, քան սովորական դրամահավաքի ջանքերով: Kickstarter-ը նաև նշում է, որ իրենց նպատակին 20 և ավելի %-ով հասած նախագծերի 80%-ի մոտ ի վերջո հաջողվում է ֆինանսավորում ստանալ, ինչը ցույց է տալիս «Ամեն ինչ կամ ոչինչ» տեսակի նախագծերի կարևորությունը սկզբնական շրջանում ֆինանսավորողների ներգրավման գործընթացում:

Բացի «Ամեն ինչ կամ ոչինչ» մոտեցումից IndieGoGo[2] հարթակն առաջարկում է նաև **«Պահպանիր, ինչ հավաքես»** ֆինանսավորման տեսակը, որը հակառակը, սուբյեկտին թույլատրում է պահպանել այն գումարը, որը հավաքվում է մինչև դրամահավաքի նախագծի ավարտը: Նման դրամական միջոցները, որպես կանոն, փոխանցվում են անմիջապես դրամահավաքի ավարտին, որը սովորաբար տևում է 30-ից 90 օր: Ըստ IndieGoGo-ի հրապարակած տվյալների՝ հավանականությունը, որ որևէ քրաուդֆանդինգի նախագիծ կհասնի իր նպատակին կրկնապատկվում է առաջին ներդրումը ստանալուց հետո, քառապատկվում է սահմանված գումարի 10% հավաքելուց հետո և մեծանում է ավելի քան 5 անգամ 25% հասնելու դեպքում: «Պահպանիր, ինչ հավաքես» ֆինանսավորման տեսակի դեպքում նպատակին չհասած նախագծերի համար պլատֆորմայի կողմից գանձվող վճարները ավելի բարձր են, քան սահմանված գումարը հավաքած նախագծերի համար, ինչը հանդիսանում է ֆինանսավորման նպատակին հասնելու խթան:

Այլընտրանքային ֆինանսավորման բոլոր ձևերի միջև կա ընդհանուր կապ. նրանք բոլորն էլ մուտք են ապահովում կապիտալի շուկա բնակչության այն հատվածի համար, որը չի կարողանում մուտք գործել այդ շուկա ավանդական միջոցներով: Այնուամենայնիվ, կան էական տարբերություններ քրաուդֆանդինգի և մեկ այլ ընդհանուր այլընտրանքային ֆինանսավորման մեխանիզմի՝ միկրոֆինանսավորման միջև, որն իր մեջ ներառում է միկրովարկերը և սոցիալական վարկավորումը: Այս մոդելները հիմնովին տարբերվում են, այդ թվում դրանց նպատակներն ու խնդիրները: Միկրոֆինանսավորումը աղքատներին տրամադրում է վարկեր և այլ ֆինանսական ծառայություններ : Grameen Bank-ի նման կազմակերպությունները մասնագիտանում են հասարակության ամենաաղքատ անդամներին շատ փոքրածավալ ֆինանսական ծառայությունների մատուցման մեջ՝ հիմնականում զարգացող աշխարհում, բայց վերջերս ավելի հաճախ զարգացած աշխարհում: Սոցիալական վարկավորումը միկրոֆինանսավորման ենթակատեգորիա է:

[1] https://www.kickstarter.com/help/stats
[2] https://entrepreneur.indiegogo.com/how-it-works/indiegogo-vs-kickstarter/

Kiva-ն[1] մտել է այս ոլորտ, որպեսզի հնարավորություն ընձեռի սովորական մարդկանց վարկ տալ աշխարհով մեկ: Այն ընդլայնում է այն, ինչ անում է Grameen Bank-ը՝ գործընկերների օգնությամբ: Այս ամենը ավելի պատկերավոր ներկայացված է գծագիր 1-ում:



Գծագիր 1. Կապիտալի քանակի աճի և սոցիալական ցանցի փոխկապվածությունը.

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

7. https://medium.com
8. https://www.startups.com
9. http://www.grameen.com
10. https://www.kickstarter.com
11. https://entrepreneur.indiegogo.com
12. https://www.kiva.org

[1] https://www.kiva.org/about

Մանե Վանյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
Գիտական ղեկավար՝տ.գ.թ., դոցենտ Ն. Բարսեղյան

ՕՖՇՈՐԱՅԻՆ ՁԵՌՆԱՐԿՉԱՏԻՐՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԶԱՐԳԱՑՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԳԼՈԲԱԼԱՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *օֆշորային գոտիներ, օֆշորային ձեռնարկություններ, հարկային ապաստարաններ, ազատ տնտեսական գոտիներ, կապիտալի արտահոսք, հարկային պլանավորում:*

Համաշխարհային շուկայում գործունեություն ծավալելու,հարկերից խուսափելու, կապիտալը թաքցնելու լավագույն և արդյունավետ տարբերակը օֆշորային ձեռնարկությունների ստեղծումն է: Աշխատանքի նպատակն է պարզել, թե ինչ են իրենցից ներկայացնում օֆշորային գոտիները, ինչի համար են նախատեսված, որոնք են առավելությունները և թերությունները, ինչպիսի հարաբերություններ են ձևավորվել ՀՀ-ի և օֆշորային երկրների միջև, բացահայտել դրանց ազդեցությունը ՀՀ տնտեսության վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված է տնտեսության գլոբալացման գործընթացում օֆշորային ձեռնարկչատիրության աճող դերով:

Манэ Ванян

АНАЛИЗ ОФФШОРНОГО ПРЕДПРИНИМАТЕЛЬСТВА И ОСОБЕННОСТИ РАЗВИТИЯ В УСЛОВИЯХ ГЛОБАЛИЗАЦИИ ЭКОНОМИКИ

Ключевые слова. *оффшорные зоны, оффшорные компании, налоговые убежища, свободные экономические зоны, отток капитала, налоговое планирование.*

Создание оффшорных компаний-это лучший и самый эффективный способ для деятельности на мировом рынке, избежания налогов и скрытия капитала. Цель данной работы выяснить, что представляют оффшорные зоны, для чего они существуют, каковы преимущества и недостатки, какие отношения сложились между РА и оффшорными странами, раскрыть их влияние на экономику РА. Актуальность темы обусловлена возрастающей ролью оффшорного предпринимательства в процессе глобализации экономики.

XX դարի երկրորդ կեսից սկսած, միջազգային տնտեսական հարաբերությունների անբաժանելի մասն են կազմում ազատ տնտեսական գոտիները: Համաշխարհային տնտեսական կապերի համար ԱՏԳ-ը հանդես են գալիս որպես միջազգային ապրանքաշրջանառության ակտիվացման, ներդրումների ներգրավման, ինտեգրացիոն տնտեսական գործընթացների խորացման հետևանքով տնտեսական աճի ապահովման հիմնական գործոն [1]: Օֆշորային գոտիները համարվում են ազատ տնտեսական գոտիների տարատեսակ, որոնց թիվը, ըստ տարբեր գնահատականների, տատանվում է մի քանի հարյուրից 2000-ի սահմաններում [2]:

Համաշխարհային տնտեսության գլոբալացման գործընթացներում, որը սկսվել է XXI դարի սկզբին, նշանակալից դեր խաղացին կապիտալի միջազգային հոսքերը: Կապիտալի միջազգային շարժման օրինական, բաց և թափանցիկ ձևերին զուգահեռ սկսեցին գործել

նաև կապիտալի շարժման կիսաօրինական և ապօրինի ձևեր: Դրանց մի մասը իրականացվում է օֆշորային բիզնեսի, օֆշորային կենտրոնների և գոտիների, այսպես կոչված, «հանրային ապաստարանների» գործունեության միջոցով [4]:

Օֆշորը բազմաբնույթ երևույթ է, և միջազգային հարթակներում նրա նկատմամբ վերաբերմունքը միանշանակ չի ընկալվում: Օֆշորը («օֆշոր», եզրույթը առաջացել է անգլերեն offshore բառից, որը նշանակում է «ափից հեռու գտնվող» կամ «ափից դուրս») հարկային պլանավորման ամենահայտնի և արդյունավետ մեթոդներից է: Օֆշորների հիմքում ընկած են որոշ երկրների հարկային օրենսդրության առանձնահատկություններ, որոնք հնարավորություն են տալիս արտասահմանյան ընկերություններին ամբողջովին կամ մասնակիորեն ազատվել հարկերից [2]:

Օֆշորային ընկերությունները հատուկ կազմակերպաիրավական կարգավիճակ ունեցող ձեռնարկություններ են, որոնք ապահովագրվում են հարկային առավելագույն ծախսերից [3]:

Գոյություն ունեն օֆշորային ընկերության գոյությունը հաստատող 5 հիմնական գործոններ.

1. Որպես կանոն, օֆշորային ընկերությունը պետք է լինի ոչ ռեզիդենտ այն տարածքում, որտեղ գրանցված է [2]: Այսինքն՝ օֆշորային գոտում հարկային և այլ արտոնություն ունեցողները չպետք է լինեն այն երկրի լիազոր ներկայացուցիչը, որտեղ գտնվում է օֆշորային կենտրոնը [3]: Դա նշանակում է որ ընկերության «վերահսկման և կառավարման» կենտրոնը գտնվում է արտերկրում, և նրա ցանկացած առևտրային գործառնություն նույնպես պետք է իրականացվի այն իրավասության սահմաններից դուրս, որտեղ ընկերությունը գրանցված է [2]:

2. Առհասարակ, օֆշորային գոտիների եկամուտը ձևավորվում է օֆշորային ընկերության գրանցման և վերագրանցման համար նախատեսված վճարներից, հարկային մուտքերից (թեկուզ՝ նվազագույն), օֆշորային գոտում ընկերության մշտական ներկայացուցչության պահպանման ծախսերից (տարածքների վարձակալում, կապ, էլեկտրամատակարարում, բնակության և սննդի ծախսեր, տրանսպորտի, առողջապահության ծախսեր և այլն): Կարևոր է նաև այն հանգամանքը, որ որոշ օֆշորներում դրվում է նաև տեղացի բնակիչներին պարտադիր աշխատանքի ընդունման պահանջ, որի միջոցով տվյալ տարածքներում լուծվում են նաև զբաղվածության խնդիրները [5]:

3. Օֆշորային ընկերության գրանցման և կառավարման պարզեցված համակարգի առկայություն: Թույլատրվում է տնօրենների և սեփականատերերի «ձևական» կազմի առկայություն: Տնօրենների խորհրդի և ընդհանուր ժողովների իրականացման նկատմամբ ներկայացվող պահանջները կրում են ոչ ֆորմալ բնույթ:

4. Գրանցման տարածքում օֆշորային ընկերությունների նկատմամբ, սովորաբար, արժութային վերահսկողություն չի սահմանվում, ֆինանսական հաշվետվությունների ներկայացման նկատմամբ պահանջները հասցվում են նվազագույնի, աուդիտորական ստուգումների անցկացումը ևս պարտադիր չէ:

5. Օֆշորային ընկերությունները գործում են գաղտնիության պայմաններում: Օֆշորային ընկերության սեփականության գաղտնիությունը երաշխավորված է այն երկրի իրավական նորմերով և օրենսդրությամբ, որտեղ ընկերությունը գրացված է [2]:

Օֆշորային գոտիներում գործունեություն ծավալելը բնութագրվում է նաև որոշ բացասական կողմերով: Առաջին հերթին պետք է մանրազնին կերպով իրականացնել

հուսալի օֆշորային գոտու ընտրություն, որտեղ գործելու է նոր բիզնեսը, քանի որ միշտ առկա է բիզնեսը կորցնելու վտանգ նույնիսկ չնչին անհաջողության դեպքում: Հարկ է ուշադրություն դարձնել նաև այն հանգամանքի վրա, որ եվրոպական հեղինակավոր ընկերությունները հազվադեպ են համագործակցում օֆշորային գոտիներում գործող ընկերությունների հետ [6]:

Տարանջատում են օֆշորային գոտիների 3 տեսակ.

1. Դասական օֆշորային գոտիներ, որտեղ բացակայում են հարկերը, հաշվետվություններ չեն պահանջվում: Նման օֆշորային գոտիները բնութագրվում են գաղտնիության բարձր մակարդակով՝ իշխանությունների կողմից վերահսկողությունը բացակայում է: Այդպիսի օֆշորային գոտիներ են Բահամյան կղզիները, Բրիտանական Վիրջինյան կղզիները, Կայմանյան կղզիները, Սեյշելյան կղզիները, Պանաման: Այս պետությունները չունեն տնտեսության զարգացման բարձր մակարդակ,սակայն նրանց բնորոշ է քաղաքական բարձր կայունություն:

2. Օֆշորային գոտիներ՝ բարձր հարմարավետությամբ կամ ցածր հարկահավաքությամբ: Նման գոտիներում ևս տրամադրում են հարկային արտոնություններ, բայց պահանջում են նաև ֆինանսական հաշվետվություններ: Ի տարբերություն առաջին տիպի երկրների, երկրորդ խմբի պետությունները իրականացնում են կոշտ վերահսկողություն: Այդպիսի գոտիներ են Իռլանդիան, Ջիբրալթարը, Մեն կղզին:

3. Ոչ ստանդարտ օֆշորային գոտիներ: Այս խմբում ընդգրկված են այն երկրները, որոնք իրենց մոտ գրանցված և իրենց երկրից օգուտներ չունեցող ընկերություններին տրամադրում են հարկային արտոնություններ կամ բիզնես վարելու այլ առավելություններ [7]: Այս օֆշորային գոտիներում թույլատրվում է նաև գործոնեություն ծավալել երկրի ներսում (միջկառավարական համաձայնագրերի շնորհիվ դրանց կրկնակի հարկումից ազատելով): Այս խմբի երկրներից են Կիպրոսը, Լյուքսեմբուրգը, Լիխտեյնշտեյնը, Հոնկոնգը և այլն [5]:

2018թ. հունվարի 1-ից ուժի մեջ մտած «ՀՀ հարկային նոր օրենսգրքի» կիրառումն ապահովելու նպատակով ՀՀ կառավարությունը հաստատել է օֆշորային գոտիների ցանկը (ընդգրկված է 51 օֆշորային երկիր) [8]:

2019թ. հունվար-մարտ ամիսներին Հայաստանի տնտեսության իրական հատվածում օտարերկրյա ներդրումների հոսքերի ծավալը կազմել է 47 միլիարդ 342.3 միլիոն դրամ, որից՝ ուղղակի ներդրումները 3 միլիարդ 713.1 միլիոն դրամ [9]:

Հայաստանի տնտեսության մեջ ամենաշատ ներդրումներ կատարած երկրների հնգյակը գլխավորում է ՌԴ-ն, որտեղից ընդամենը ներդրումները կազմել են 32 միլիարդ 868.6 միլիոն դրամ իսկ ուղղակի ներդրումները՝ 12 միլիարդ 501.3 միլիոն դրամ: Երկրորդ տեղում ԳԴՀ-ն է 11 միլիարդ 761.1 միլիոն դրամ՝ ընդամենը ներդրումներով, ուղղակի ներդրումները կազմել են 3 միլիարդ 114.7 մլն. դրամ, այս ցուցանիշը փաստում է այն մասին, որ կապիտալի արտահոսքը գերազանցել է ներդրումները: Երրորդը օֆշորային գոտի համարվող Լիբանանն է՝ 2 միլիարդ 129.3 միլիոն՝ ընդամենը և 1 միլիարդ 989.6 միլիոն դրամ՝ ուղղակի ներդրումներով: Հաջորդը օֆշորային երկիր Կիպրոսն է, որի ընդամենը ներդրումների ծավալը կազմել է 1 միլիարդ 123.6 միլիոն դրամ, իսկ ուղղակի ներդրումները՝ 1 միլիարդ 138 միլիոն: Հնգյակը եզրափակում է օֆշորային երկիր համարվող Ֆինլանդիան՝ 1 միլիարդ 63.4 միլիոն դրամ՝ ընդամենը և 1 միլիարդ 947.8 միլիոն դրամ՝ ուղղակի ներդրումների ցուցանիշով:



Գծապատկեր 1. Օֆշորային երկրներից կատարված ներդրումները (մլն դրամ)[9]

Այսպիսով, ստացվում է, որ 2019թ. Հայաստանի տնտեսության իրական հատվածում կատարված օտարերկրյա 47 միլիարդ 342,3 միլիոն դրամ ներդրումներից 6 միլիարդ 21,3 միլիոն դրամ կամ 12%-ից ավելին կատարվել է օֆշորային երկրներից: Ընդ որում, 2019թ. կապիտալի արտահոսք է գրանցվել օֆշորային երկիր համարվող Նիդեռլանդներ, ինչը գերազանցել է ներդրումները 1 մլրդ. 325.1 մլն. դրամով:

Օֆշորային գոտիներից կատարված ներդրումները ուղղվել են հանքարդյունաբերության, խմիչքների արտադրության, շինարարության, հեռահաղորդակցության, մանրածախ և մեծածախ առևտրի ոլորտներ [8]:



Գրաֆիկ 2. Իրական հատվածում կատարված օտարերկրյա ընդհանուր ներդրումների և օֆշորային գոտիներից կատարված ներդումների հարաբերակցությունը (մլն դրամ)[9]

Ինչպես երևում է գրաֆիկից, 2015-2018 թթ. օտարերկրյա ընդհանուր ներդրումները խիստ նվազել են, 2018 թ-ին՝ 2015թ-ի համեմատությամբ, կրճատվելով 96 միլիարդ 78.6 մլն դրամով, որն էլ իր հերթին բացասական հետք է թողնում երկրի տնտեսության վրա: 2016-2018թթ. ստացված թվային տվյալներին նայելով, թվում է թե օֆշորներից կատարված ներդրումները գերազանցում են ՀՀ տնտեսության մեջ ընդհանուր ներդրումները, սակայն նման ցուցանիշի պատճառն այլ է: Դա պայմանավորված է տնտեսության իրական հատվածում կատարված ներդրումների բացասական ցուցանիշներով, որոնք էլ վկայում են այն մասին, որ ՀՀ-ից կապիտալի արտահոսքը գերազանցել է ներդրումները, ինչը անհանգստացնող ցուցանիշ է Հայաստանի նման կապիտալի պակասորդ ունեցող երկրի համար: Մասնավորապես, 2015թ. կապիտալի արտահոսքը 62 միլիարդ 878.9 մլն դրամով գերազանցել է Կիպրոսից, Վիրջինյան կղզիներից, Միացյալ Թագավորությունից և Նիդեռլանդներից կատարված ներդրումները: 2016թ. օֆշորային գոտիներ՝ Կայմանյան կղզիներ, Նիդեռլանդներ, Լիբանան կապիտալի արտահոսքը գերազանցել է 34 միլիարդ 272.7 մլն. դրամով համապատասխան տարածքների ներդրումները, 2017թ. կապիտալի արտահոսքը 26 միլիարդ 47 մլն. դրամով գերազանցել է Կիպրոսից, ԱՄՆ-ից, Վիրջինյան կղզիներից, Կայմանյան կղզիներից, Նիդեռլանդներից և Լիբանանից կատարված ներդրումները: Ի դեպ 2017թ. ներդրումների անհամեմատ խոշոր ներհոսք է գրանցվել Ջերսի կղզուց, որը բավականին հայտնի օֆշորային գոտի է, այդտեղից կապիտալի ներհոսքը կազմել է 107 միլիարդ 888.2 մլն դրամ, որն ամբողջությամբ ուղղվել է հանքարդյունաբերության ոլորտ: 2018թ., ի տարբերություն նախորդ տարիների, կապիտալի արտահոսքը նվազել է, կազմելով 3 միլիարդ 175.4 մլն դրամ, արտահոսք է գրանցվել դեպի Պանամա, Կայմանյան կղզիներ, Վիրջինյան կղզիներ, Կիպրոս: Նշենք նաև, որ 2016-2018թթ. ՀՀ-ից Կայմանյան կղզիներ կապիտալի անընդհատ արտահոսք է նկատվում, ինչից կարելի է եզրակացնել, որ ՀՀ տնտեսվարող սուբյեկտների համար այս օֆշորային գոտին բավականին շահավետ է:

Հետաքննող լրագրողների միջազգային կոնսորցիումը(ICIJ) հրապարակել է փասթաթղթերի փաթեթ, որտեղ ներգրավված է եղել օֆշորային երկրներում գրանցված 214488 ֆիզիկական և իրավաբանական անձանց ցանկ, որտեղ էլ առկա է եղել 37 հայկական ազգանուն: Մասնավորապես, ըստ գաղտնազերծված տվյալների՝ ԴԱՀԿ նախկին պետ Մ. Պողոսյանը բաժնետեր է Պանամայում գրանցված 3 ընկերությունների՝ «Սիգթեմ ռեալ իսթեյթ ինքորփորեյթի» (Sigtem Real Estates Incorporated), «Հոփքինթեն թրեյդինգ ինքորփորեյթինգ» (Hopkinten Trading Incorporated), «Բանջիո ինվեստ» ԲԸ (BANGIO INVEST S.A.): Կապիտալի արտահոսքը պանամական օֆշորներ պայմանավորված է նաև «Քեթրին գրուպ» ընկերության գործունեությանբ հետ: 2012թ. ընկերության բաժնեմասը աստիճանաբար տեղափոխվել է Պանամա [10]: 2018 թ. մայիս ամսին «Քեթրին գրուպ», ինչպես նաև վերջինիս հետ փոխկապակցված «Մաքսֆրուտ», «Ֆրուտ Վորլդ», «Մելատրոպիկ» ընկերություններում նշանակվել են հարկային համալիր ստուգումներ, որոնց արդյունքում այդ ընկերությունների կողմից պետական բյուջե է վճարվել 600 մլն ՀՀ դրամի լրացուցիչ հարկային պարտավորություն, ինչը սիմվոլիկ և իրականությունը մասամբ արտահայտող թիվ է [11]:

Այսպիսով, կարող ենք եզրակացնել, որ տնտեսվարող սուբյեկտները նախընտրում են իրենց գործունեությունը ծավալել օֆշորային գոտիներում կամ գումարները տեղափոխել այդ գոտիներ՝ նման ձևով խուսափելով հարկային պարտավորությունների կատարումից:

ՀՀ-ն պետք է իրականացնի տնտեսվարող սուբյեկտների համար նպաստավոր օրենսդրական դաշտի մշակում, փորձելով խուսափել կապիտալի արտահոսքից:\

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Հովակիմյան Ա., Միջազգային տնտեսական հարաբերություններ, Երևան 2007թ. , էջ 150:
2. Аксенов Д., Офшорный бизнес. Мировой опыт и российская практика,2009г. [статья], стр.14-15.
3. Հովակիմյան Ա., Միջազգային տնտեսական հարաբերություններ, Երևան 2007թ. , էջ 157:
4. www.economy-lib.com
5. www.armeco.am
6. www.expert.ru
7. www.news.am
8. www.b24.am
9. www.armstat.am
10. www.hetq.am
11. www.armlur.am

ՀՏԴ 339.1 Տնտեսագիտություն

Երանուհի Տեր-Մովսիսյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
«Կառավարում» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ամբիոնի դասախոս Արմինե Գևորգյան

ԱՈՒԹՍՈՐՍԻՆԳԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀԱՄԱՇԽԱՐՀԱՅԻՆ ՇՈՒԿԱՅԻ ՓՈՓՈԽՎՈՂ ԿՈՆՅՈՒԿՏՈՒՐԱՅԻ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *աութսորսինգ, աութսորսինգային ծառայություններ, բիզնես-գործընթացի աութսորսինգ, IT ոլորտի աութսորսինգ*

Հաջողակ բիզնես վարելու համար հաճախ պահանջվում են նեղ մասնագիտացում ունեցող մասնագետներ, սակայն ոչ բոլոր կազմակերպությունները կարող են իրենց թույլ տալ նման աշխատակիցներ, քանի որ նրանց ծառայությունները բավականին թանկ են: Ուստի նման իրավիճակների օպտիմալ լուծում է համարվում աութսորսինգը:

Սույն աշխատանքի մեջ ներկայացված են աութսորսինգային ծառայությունների էությունը, առավելություններն ու թերությունները, շուկայի գերակա ոլորտներն ու սեգմենտները: Նաև անդրադարձ է կատարվել ՀՀ աութսորսինգային շուկայի ներկայիս իրադրությանը և զարգացման հեռանկարներին:

Ерануи Тер-Мовсисян

АНАЛИЗ АУТСОРСИНГОВЫХ УСЛУГ В КОНТЕКСТЕ МЕНЯЮЩЕЙСЯ КОНЪЮНКТУРЫ СОВРЕМЕННОГО МИРОВОГО РЫНКА

Ключевые слова: *аутсорсинг, аутсорсинговые услуги, аутсорсинг бизнес-процессов, аутсорсинг ИТ-сферы.*

Для успешного ведения бизнеса часто требуются специалисты узкой специализации, но не все организации могут позволить себе таких сотрудников, так как их услуги довольно дорогие. Поэтому оптимальным решением таких ситуаций считается аутсорсинг.

В данной работе представлена сущность, преимущества и недостатки аутсорсинговых услуг, приоритетные сферы и сегменты рынка. Также была изучена текущая ситуация на аутсорсинговом рынке Армении и перспективы развития.

Ժամանակակից աշխարհում, երբ ձեռնարկությունները «ճնշումների են ենթարկվում» շուկայում տիրող մրցակցության կողմից, երբ նրանց համար առաջնային նպատակ է համարվում մաքսիմալ շահույթի ստացումը, ծախսերի կրճատումը, կատաղի մրցակցության հաղթահարումը և նոր շուկաների նվաճում, հաջողության հասնելու կարևոր հրամայական դառնում այդ նպատակներին հասնելու նորանոր ուղիների բացահայտումը և ներդրումը բիզնես գործունեության մեջ: Ծախսերի մակարդակի օպտիմալացման և ընկերության կառավարման նման մոտեցումներից մեկը հենց աութսորսինգն է, որը կոչված է կազմակերպությունների համար լրացուցիչ մրցակցային առավելություններ ապահովելու համար:

Այն ցանկացած կազմակերպության հնարավորություն է տալիս ստանալ անհրաժեշտ բարձր մակարդակի ծառայություններ, միևնույն ժամանակ պահպանել դինամիկան, խնայել ռեսուրսները, ունենալ ծախսերի ֆիքսված մակարդակ և աճելու լրացուցիչ ներուժ: Թեմայի **արդիականությունը** պայմանավորված է նրանով, որ աութսորսինգը, մեծ տարածում

ունենալով միջազգային պրակտիկայում և տարբեր կազմակերպությունների ու երկրների օրինակով ապացուցելով իր արդյունավետությունը, դեռևս մեծ տարածում չունի Հայաստանում, չնայած դրա համար առկա ներուժը բավականին մեծ է:

Աութսորսինգ (outsourcing) եզրը առաջացել է անգլերեն «outside resource using»՝ *արտաքին ռեսուրսների օգտագործում* հասկացությունից: Աութսորսինգը ենթադրում է, այսպես կոչված, երրորդ կողմի ներգրավում կազմակերպության ինչպես արտաքին հարաբերություններում խնդիրների լուծման, այնպես էլ ներքին խնդիրների լուծման նպատակով՝ կապված որոշակի բիզնես-գործընթացների իրականացման և նոր տեխնոլոգիաների օգտագործման հետ: Աութորսինգի կիրառման նպատակը առաջատար բիզնես-տեխնոլոգիաների և նոու-հաուների օգտագործումն է՝ սրվող մրցակցային պայքարում առավելություններ ձեռք բերելու և դրանք պահպանելու համար [3]:

Աութսորսինգային ծառայությունների առավելություններից մեկը ղեկավարներին հնարավորություն է տալիս ժամանակը չվատնել որոշակի գործառույթների իրականացման վրա և ուշադրությունը կենտրոնացնել բուն բիզնեսի վրա: Այն հնարավորություն է տալիս լուծել որակյալ անձնակազմի հավաքման, պահպանման և վերապատրաստման հետ կապված խնդիրները, ինչպես նաև ապահովել բիզնես-գործընթացի անխափան լինելը: Հաճախորդը հնարավորություն է ստանում խուսափել սարքավորումների ձեռբերման և ծրագրային ապահովման վրա կատարվող ներդրումներից, որը անհրաժեշտ է որոշակի բիզնես-գործընթացներ իրականացնելու համար, ինչպես նաև կրճատել օֆիսների և կառավարման ապարատի վրա կատարվող ծախսերը: Սակայն գլխավոր օգուտն այն է, որ աութսորսինգը հնարավորություն է տալիս օգտագործել ուրիշի բարձր մասնագիտական փորձը, ինչպես նաև նոր տեխնոլոգիաները և գիտելիքները: Կազմակերպությունը, որը որակավորված է կոնկրետ ոլորտում կոնկրետ գործառույթ իրականացնելու համար, անշուշտ առաջինը բախված կլինի տվյալ ոլորտում առկա խնդիրների հետ և քայլեր կձեռնարկի խնդիրներին լուծումներ գտնելու, համապատասխան տեխնոլոգիաների զարգացման և իր անձնակազմի որակավորման անընդհատ բարձրացման ուղղությամբ:

Սակայն, շատ ընկերություններ վախենում են կորցնել վերահսկողությունը իրավիճակի նկատմամբ և խուսափում են վստահել ուրիշներին իրենց առևտրային գաղտնիքները: Որոշ մարդիկ չեն ցանկանում վստահել աութսորսինգային ընկերություններին զուտ հոգեբանական խոչընդոտների պատճառով՝ կապված սեփական հաշվապահությունը «օտար» մարդկանց հանձնելու հետ: Բացի դրանից, աութսորսինգի այլ թերություններից են կարգավորող օրենսդրական նորմերի (նորմատիվային ակտերի) բացակայությունը ու ընկերությունների աշխատակիցների նկատմամբ վերահսկողական լծակների բացակայությունը, ինչը կարող է հանգեցնել գործընթացի արդյունավետության անկմանը և սպասարկման ծախսերի ավելացմանը [2]:

Չնայած գոյություն ունեցող թերություններին, աութսորսինգային ծառայությունների արդյունավետության մասին փաստում են բազմաթիվ հայտնի կազմակերպությունները, ինչպիսիք են՝ «Apple»-ը, «Nike»-ը, «General motors»-ը, «Siemens Business Services»-ը, որոնք իրենց կառավարման ընթացքում կիրառել են նմանատիպ ծառայություններ և դրա միջոցով արձանագրել բարձր ցուցանիշներ:

Ուսումնասիրենք աութսորսինգի համաշխարհային շուկայի ներկայիս իրավիճակը և փորձենք բացահայտել այն գերակա ուղղությունները, որոնց համար աութսորսինգը հանդիսանում է տնտեսության զարգացման կարևոր գրավական:

Ինչպես ցույց է տալիս վիճակագրությունը, 2018 թ. աութսորսինգի համաշխարհային շուկայի հասույթը կազմել է 85.6 միլիարդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 3.3

միլիարդ դոլարով: Աութսորսինգի համաշխարհային շուկան իր էությամբ բավականին ոչ կայուն է, քանի որ արձանագրվում են և՛ շատ ցածր, և՛ շատ բարձր ցուցանիշներ՝ պայմանավորված բազմաթիվ տնտեսական, քաղաքական և այլ գործոններով: Գծապատկերից պարզ է դառնում, որ վերջին տարիներին ամենացածր ցուցանիշը գրանցվել է 2016 թ-ին՝ կազմելով 76.9 միլիարդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով 12 միլիարդ դոլարով: Ընդ որում, հասույթի մեծ մասը ստացվել է Ամերիկայում, հետո Եվրոպայում, Միջին Արևելքում, Աֆրիկայում, իսկ Ասիային է պատկանում հասույթի ավելի փոքր մակարդակը [19]:

Աութսորսինգի համաշխարհային շուկան պայմանականորեն բաժանվում է երկու հիմնական հատվածի՝

1. *Տեղեկատվական տեխնոլոգիաների աութսորսինգն* ընդգրկում է տարբեր ծառայություններ, որոնք մատուցվում են կազմակերպություններին մասնագիտացված ֆիրմաների կողմից՝ տեղեկությունների բազայի մշակում, ծրագրային ապահովում, պլանավորում, համակարգչային միասնականացում, էլեկտրոնային բիզնեսի ոլորտի խորհրդատվություն, կորպորատիվ ցանցերի ինտերնետային ծառայություններ և այլն:
2. *Բիզնես-գործընթացի աութսորսինգը* (BPO-Business process outsourcing) բիզնես գործընթացների փոխանցումն է արտաքին գործընկերոջը, որը կապված է ռիսկի և պատասխանատվության հետ: Բիզնես-գործընթացների աութսորսինգը պատկանում է ռազմավարական բնույթի խնդիրներին և ունակ է սկզբունքորեն փոխելու կազմակերպության ապագան, որը ձևավորում է երկարաժամկետ հարաբերություններ գործընկերոջ հետ [1] :

Ստորև ներկայացված է աութսորսինգի համաշխարհային շուկայի վերլուծությունը՝ ըստ երկու հիմնական սեգմենտների: Ինչպես երևում է Գծապատկեր 1-ից, տարեցտարի նվազում է բիզնես-գործընթացների աութսորսինգի ոլորտից ստացվող հասույթը: 2018 թ-ին կազմել է ընդամենը 23.6 միլիարդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ նվազելով մեկ միլիարդ դոլարով, մինչդեռ IT ոլորտի աութսորսինգը կազմել է 62 միլիարդ դոլար և IT ծառայությունների 31%-ը իրականացվել է հենց աութսորսինգի միջոցով[20]:



Գծապատկեր 1. Աութսորսինգի սեգմենտների հասույթը 2010-2018 թթ.

Բիզնես-գործընթացների աութսորսինգի նվազման հիմնական պատճառներից մեկը գործառույթների ավտոմատացումն է, անցումը «խելացի» տեխնոլոգիաներին: Շատ բիզնեսմեններ արհեստական ինտելեկտը դիտարկում են որպես ցանցակած խնդրի լուծման «պատվաստանյութ» և փորձում են մշտապես ներդնել տեխնոլոգիաները իրենց բիզնեսում՝ առանց անհրաժեշտ հետազոտությունների: Աութսորսինգային շուկայի աճի դինամիկայի անկման մյուս պատճառներից մեկն էլ այն հանգամանքն է, որ խոշոր ընկերությունները նախընտրում են իրենց «ներսում» ստեղծել մասնագետների հզոր խումբ: Իրենց ոլորոտում առաջատար հանդիսացող կազմակերպությունները ցանկանում են ունենալ «տաղանդների»

իրենց սեփական խումբը, ովքեր ամբողջությամբ տիրապետում են համակարգի գործունեության բոլոր դետալներին և կարող են նպաստել դրանց կատարելագործմանը և ամբողջականացմանը: Եվ հենց խոշոր ընկերություններն են, որ կարող են իրենց թույլ տալ նման «ճոխություններ» և ֆինանսապես ապահովել նման ներքին խմբերին [11]:

Բնականաբար, այս հանգամանքները չէին կարող չազդել IT ոլորտի ցուցանիշների վրա. մեծ ընկերությունների կողմից IT ոլորտում ծախսած բյուջեն 2017 թ. նվազել է 8.7%-ով: Համեմատության համար նշենք, որ ՓՄՁ ոլորտի ձեռնարկությունները աութսորսինգային ծառայությունների կատարած ծախսերը կազմել են ընդհանուր բյուջեի 6,5-7,8%-ը: Եվ չնայած այն հանգամանքին, որ նրանց եկամուտները շատ ավելի քիչ են, ՓՄՁ ձեռնարկությունների կողմից ներկայացված պահանջարկը աութսորսինգային ծառայությունների նկատմամբ տարեցտարի աճում է:

Աութսորսինգային կնքված գործարքների շուրջ 84.2% ունի ամերիկյան «ծագում», այսինքն՝ կնքվել է ամերիկյան ընկերությունների կողմից: ԱՄՆ-ին հետևում է Մեծ Բրիտանիան՝ կնքված գործարքների 5.2%-ով, Իսպանիան և Ավստրալիան [9]:

Ամենաշատ աութսորսինգային ծառայություններ մատուցող երկիրը *Հնդկաստանն* է: Կազմակերպությունները հասնում են Հնդկաստան, որովհետև նրանք ունեն բավականին կիրթ և աշխատասեր հասարակություն: Հնդկաստանի ամենաթույլ կողմը երկրում տիրող քաղաքական իրավիճակն է: Մասնավորապես, կառավարությունը ղեկավարում է նախագահը, ով անկախ է օրենսդիր մարմնից և վերահսկողության չի ենթարկվում: 2017 թ. Հնդկաստանում IT-BPO սեգմենտներից ստացվող հասույթը կազմել է 154 միլիարդ դոլար, իսկ աութսորսինգային ծառայությունների ոլորտում էր աշխատում մոտավորապես 3 միլիոն մարդ [12]: Ընդհանրապես, օֆշորային բիզնես-գործընթացների աութսորսինգի շուկան գնահատվում է 11.4 միլիարդ դոլար, և Հնդկաստանին է պատկանում շուկայի 63%-ը [13]:

Հաջորդ երկիրը *Չինաստանն* է, որին պատկանում է համաշխարհային շուկայի 33%-ը: 2007 թ. աութսորսինգի չինական շուկան կազմել է 15.2 միլիարդ դոլար՝ 9 միլիարդ դոլար BPO-ն և 6.2 միլիարդ դոլար IT սեգմենտը: Իսկ արդեն 2016 թ. կազմել է 14.5 միլիարդ դոլար՝ 2015 թ-ի համեմատ աճելով 20.1%-ով: Աութսորսինգի միջոցով 2017 թ-ին ստեղծվել են 1.21 միլիոն աշխատատեղեր: Արդյունքում, Չինաստանում 8.6 միլիոն մարդ աշխատանք ունի հենց աութսորսինգային ծառայությունների ոլորտում [8]:

Հաջորդ երկիրը *Մալազիան* է, ով ամփոփում է ամենաշատ աութսորսինգային ծառայություններ մատուցող երկրների եռյակը: 2017 թ. աութսորսինգային շուկան կազմել է 10.78 միլիարդ դոլար՝ նախորդ տարվա համեմատ աճելով 17.7%-ով: Մինչև 2021 թ. կանխատեսվում է բիզնես-գործընթացների աութսորսինգի 7.9% աճ: Ի տարբերություն Հնդկաստանի և Չինաստանի շուկաների, Մալազիայի բնակչության կրթվածության մակարդակը բավականին ցածր է, ինչը նվազեցնում է նրա գրավչությունը [18]:

Համաշխարհային աութսորսինգային շուկայի մյուս կարևոր դերակատարներից են Բրազիլիան, Ֆիլիպինները, Թաիլանդը, Ինդոնեզիան, Բուլղարիան, Չիլին, Ճապոնիան, Ռուսաստանը, Եվրոպական երկրներից՝ Ավստրիան, Գերմանիան, Մեծ Բրիտանիան, Ուկրաինան, ովքեր մեծ ազդեցություն ունեն շուկայի զարգացման տենդենցների վրա:

Հայաստանում աութսորսինգի զարգացմանը խոչընդոտող գործոններից կարելի է առանձնացնել բացակայող օրենսդրական դաշտը: Մասնավորապես, չկան համապատասխան օրենքներ, նորմեր, իրավական ակտեր, ենթաօրենսդրական ակտեր, որոշումներ կամ հրամաններ, որոնք հստակ կոչված կլինեն դաշտի կարգավորմանը, պատվիրատու և աութսորսեր կողմերի իրավունքների և շահերի պաշտպանությանը, ուստի շատ հաճախ ոլորտը ենթարկվում է ոչ համաչափ և ոչ որոշակի կարգավորման:

Խոչընդոտող հանգամանք կարող է հանդիսանալ նաև երկրի աշխարհաքաղաքական դիրքը: Մասնավորապես, երկու կողմից թշնամական երկրներով շրջապատված լինելով, իսկ մյուս երկու երկրների հետ հստակորեն ձևակերպված բարիդրացիական հարաբերություններ չունենալը, պատվիրատուի համար կարող են առաջացնել դժվարություններ ապրանքների արտահանման հետ: Բացի այդ, Հայաստանը շրջապատված է բազմաթիվ լեռներով և չունի սեփական էներգակիր ռեսուրսները: Գազը ներկրվում է Ռուսաստանից, իսկ երթևեկության հիմնական միջոցը մնում են երկաթուղիները, ինչը նույնպես կդժվարեցնի արտահանումը [6]:

Մեր երկրում կա նաև բիզնեսի վարման ևս մեկ առանձնահատկություն՝ շատ կազմակերպություններ ոչ միայն հոգ են տանում իրենց գործունեության վերաբերյալ տեղեկատվության գաղտնիության մասին, այլ նաև շահագրգռված չեն թափանցիկ ու բաց գործունեություն իրականացնել, քանի որ մեծամասամբ հաշվապահությունը կրում է կիսաօրինական բնույթ: Զարգացման համար խնդիր է նաև խորհրդային ժամանակաշրջանից մնացած հոգեբանությունը, քանի որ մարդիկ վախենում են գործառույթները իրականացնող խմբերի ղեկավարների փոփոխությունից, ուստի հրաժարվում են փոխանցել որոշ գործառույթներ երրորդ կողմին: Սակայն այս խոչընդոտների առկայությունը դեռևս չի նշանակում, որ աութսորսինգը չունի զարգացման հեռանկարներ մեր երկրում և չի կարող դառնալ բիզնեսի կառավարման արդյունավետ գործիք: Եվ այդ հեռանկարները ստեղծվում են հենց աութսորսինգի առավելությունների շնորհիվ:

Հայաստանն աշխարհում ամենաբարենպաստ երկրներից է նոր բիզնես սկսելու համար: Այդ մասին է վկայում Համաշխարհային բանկի հրապարակած “Doing Business 2018” զեկույցը, համաձայն որի՝ Հայաստանը շարունակում է մնալ բարենպաստ երկիր՝ բիզնես սկսելու համար՝ 190 երկրից զբաղեցնելով 41-րդ հորիզոնականը [5]: Համաձայն PWC (Paying Taxes 2018) զեկույցի՝ բիզնեսի միջին հարկային բեռն ամբողջ աշխարհում հասնում է շահույթի 40,8%-ին: Ըստ այդ ցուցանիշի, Հայաստանը գտնվում է 17-րդ տեղում՝ 189 երկրից: PWC-ի տեղեկություններով, Հայաստանի ընդհանուր հարկային բեռը կազմում է 19,9%: Մեր հարևանների միջին հարկային բեռը անհամեմատ ավելի բարձր է, քան Հայաստանում, բացի Վրաստանից, որտեղ այդ ցուցանիշը կազմում է 16.4%, բայց, օրինակ, Ռուսաստանում, Բելառուսում, Ուկրաինայում, Իրանում, Թուրքիայում և Ադրբեջանում կազմում է 40-ից 52% [7]: Ուստի պետք է կարողանալ օգտագործել ունեցած առավելությունները՝ ՀՀ-ում աութսորսինգը զարգացնելու համար:

Հայաստանում ավելի հեռանկարային են համարվում աութսորսինգի հետևյալ ծառայությունները՝

- տեղեկատվական ծառայություններ,
- հաշվապահական հաշվառում,
- լոգիստիկ ծառայություններ,
- մարքեթինգային գործունեություն,
- call-center-ների ծառայությունը,
- իրավաբանական ծառայություններ և այլն:

Մեծ է Հայաստանի ներուժը նաև IT ոլորտում: Հայաստանը շարունակում է տարածաշրջանում առաջատար դիրքեր զբաղեցնել տեղեկատվական և բարձր տեխնոլոգիաների ոլորտում, ինչը պայմանավորված է բավականին բարձր մրցակցային ներուժ ունեցող աշխատուժով, ՀՆԱ-ում ունեցած իր մասնաբաժնով, ինչպես նաև ընկերությունների թվի ու ընդհանուր շրջանառության աճի տեմպերով: ՏՀՏ ոլորտի ընդհանուր եկամուտը հասել է 922.3 մլն ԱՄՆ դոլարի, ինչը կազմում է 20.5% աճ 2017թ-ի

համեմատությամբ:



Գծապատկեր 4. ՏՀՏ ոլորտի շրջանառությունը 2017-2018 թթ.

2017 թ -ին Հայաստանում ՏՀՏ ոլորտը կազմել է ընդհանուր ՀՆԱ-ի 5%-ը՝ կազմելով 10.3 միլիարդ դոլար: 2017 թ -ին ՏՀՏ ոլորտը ապահովել էր ընդհանուր արտահանումների 11%-ը՝ նախորդ տարվա համեմատ աճելով 8%-ով: Բացի տեղական ընկերությունները, որոնք զբաղվում են աութսորսինգային ծառայություններով, ՏՀՏ ոլորտում գործում են նաև օտարերկրյա կազմակերպություններ, որոնց ներկայությունը հայկական շուկայում դրական ազդեցություն է թողնում շուկայի զարգացման և միջազգային հեղինակության բարձրացման գործում:

2018թ. արտահանման ծավալները 7% աճ են գրանցել՝ կազմելով 363.9 միլիոն ԱՄՆ դոլար, ինչը կազմում է ծրագրային ապահովման և ծառայություններ ոլորտի ընդհանուր եկամտի 39.5%-ը: Արտահանման շուկայում շարունակում են գերիշխել օտարերկրյա ընկերությունները, որոնք աշխատում են աութսորսինգի հիման վրա, նրանց արտահանման գծով մասնաբաժինը կազմում է մոտ 65%: Արտահանումների առավելագույն մասը՝ 45%-ը, ուղղվում է ԱՄՆ և Կանադա, 25%-ը՝ Եվրոպա, 11%-ը՝ Ասիա, 10%-ը՝ Ռուսաստան ու ԱՊՀ երկրներ: 2017 թ-ի համեմատ արտահանման ուղղությունների ցանկը նշանակալիորեն ընդլայնվել է, մասնավորապես դարձել է ավելի համասեռ, ինչը բացատրվում է Հայաստանի՝ Եվրասիական տնտեսական միություն (ԵԱՏՄ) մուտք գործելով [4]:

ՀՀ-ում գործող IT աութսորսինգային ընկերություններից կարելի է առանձնացնել «National Instruments»-ը և «Synopsys»-ը: Երկուսն էլ ամերիկյան ընկերություններ են, որոնք գործում են IT ոլորտում: «National Instruments»-ը ունի ավելի քան 7500 աշխատակիցներ աշխարհի 41 երկրներում, այդ թվում նաև Հայաստանում: Կազմակերպությունը հանդիսանում է վիրտուալ գործիքների արտադրության և ավտոմատացված թեստավորման համակարգերի ստեղծման ու դրանց ծրագրային ապահովման համաշխարհային լիդերներից մեկը: Հայաստանում գործում է 2007 թ-ից: Ընկերությունը 2016 թ-ին իր ծառայություններն է մատուցել 35 000 կազմակերպությունների ամբողջ աշխարհում՝ ապահովելով 1.23 միլիարդ դոլարի հասույթ [14]:

Հաջորդ ընկերությունը «Synopsys»-ն է, նույնպես ամերիկյան ընկերություն: Հանդիսանում է էլեկտրոնային ավտոմատացված նախագծման արդյունաբերության ամենամեծ ընկերություններից է: Ընկերությունն ունի 12590 աշխատակիցներ, այդ թվում 5000-ից ավելի ճարտարագետներ, ովքեր աշխատում են աշխարհի 60-ից ավելի տեղակայված մասնաճյուղերում: 2018 թ-ին ընկերության հասույթը կազմել է 3.121 միլիարդ դոլար: Ընկերությունը Հայաստան մուտք է գործել 2004 թ-ին՝ տեղեկատվական տեխնոլոգիաները երկրի գերակա ուղղություն հռչակելուց հետո: «Synopsys Armenia» ՓԲԸ-ն 2009-ին ԱՄՆ-ի տարածքից դուրս գործող ամենամեծ ստորաբաժանումներից մեկն է, որը զբաղվում է գիտահետազոտական աշխատանքներով: 2004-2008 թթ. «Synopsys» ընկերությունը

Հայաստանում կատարել է 1.3 միլիարդ ԱՄՆ դոլարի արտադրական-կրթական տեխնոլոգիական ներդրումներ: 2014-ին «Synopsys Armenia»-ում աշխատել են մոտ 500 ինժեներներ: Ընկերությունը հանդիսանում է երկրի SS ոլորտի խոշորագույն գործատուներից մեկը [15]:

IT ոլորտում գործում են ոչ միայն արտասահմանյան, այլ նաև բավական հայտնի հայկական աութսորսիգային ընկերություններ: Օրինակ՝ «Q-IT» ընկերությունը, «Gios» ընկերությունը, որոնք համագործակցում է մոտ 120 կազմակերպությունների հետ՝ մատուցելով ավելի քան 120 տեսակի ծառայություններ [16]:

Հայաստանում մատուցվող աութսորսինգային ծառայությունների տեսակներից կարելի է առանձնացնել նաև call center-ները, որոնք նախատեսված են հաճախորդների հետ կապ պահպանելու, վարկային քարտերից մինչև տարբեր սարքավորումների հետ կապված սպասարկման խնդիրները լուծելու համար: Հայաստանում call center-ը բավականին լայն տարածում ունեն: 2017 թ. Հայաստանում գործել են 30-ից ավել նմանատիպ կենտրոններ, որոնց մեծամասնությունը ամերիկյան ընկերությունների աութսորսեր են: Call center-ներ գործում են նաև Վանաձորում՝ «Apollo Express»-ը զբաղվում է լոգիստիկայով, «Connect To»-ն՝ համակարգչային խորհրդատվությամբ:

Չնայած այն հանգամանքին, որ Հայաստանում գերակա ոլորտ է IT ոլորտը, սակայն այստեղ տարածված են նաև բիզնես-գործընթացների աութսորսինգը: Մասնավորապես մեծ տարածում ունի հաշվապահական աութսորսինգը, օրինակ «Արտ-Լար Ֆինանս Ընդ Քքաունթինգ» ընկերությունը, որը արդեն 14 տարի է գործում է շուկայում [10]: Այսօր ընկերությունը ունի ավելի քան 150 աշխատակից և 1000-ից ավելի հաճախորդ, «London business group» հայ-բրիտանական խորհրդատվական և աուդիտորական ընկերությունը [17] և այլն:

Վերը թվարկված տվյալները ևս մեկ անգամ փաստում են, որ Հայաստանում աութսորսինգի շուկան զարգացման ճանապարհին է, և անհրաժեշտ քայլերը ձեռնարկելու դեպքում հնարավոր կլինի նաև կազմակերպել հայկական աութսորսինգային ընկերությունների մուտքը դեպի աութսորսինգի համաշխարհային շուկա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Կիրակոսյան Վ., Միջազգային բիզնես , ուսումնական ձեռնարկ, 2012 թ., էջ 125-126:
2. Сорокин М.М., Аутсорсинг: «за» и «против», 2011, стр. 53 .
3. Аникин Б.А., Аутсорсинг и аутстаффинг: высокие технологии менеджмента, 2013, стр. 320.
4. « Armenian ICT sector. State of the industry report: information and telecommunication technologies sector in Armenia» By Enterprise Incubator Foundation, 2018, page 7-20.
5. «Doing business 2018 » By World Bank Grop, 2018, page 5-12.
6. «Outsourcing destination guide» by Outsourcing verband, 2018, page 7.
7. «Paying taxes 2018» by World Bank Group, 2018, page 12-14.
8. «State of the Shared Services and Outsourcing Industry, The China report» by Shared Services and Outsourcing Week, 2018, page 6 .
9. «Global IT-BPO outsourcing deals analysis» by KPMG.com, 2017, page 14-16.
10. www.artlar.am/hy/services/outsource-accounting
11. www.comnews.ru/digital-economy/content/113970/opinions/2018-07-16/it-autsorsing-rynok-padaet-spros-rastet

12. www.conomictimes.indiatimes.com/jobs/up-to-40-per-cent-it-staff-need-re-skilling-nasscom/articleshow/58746011.cms
13. www.en.wikipedia.org/wiki/Business_process_outsourcing_to_India
14. www.en.wikipedia.org/wiki/National_Instruments
15. www.en.wikipedia.org/wiki/Synopsys
16. www.gios.am/
17. www.lbg.am/page.php?show=4
18. www.ranker.com/list/the-top-ten-countries-for-outsourcing-business/mcorn310
19. www.statista.com/statistics/189788/global-outsourcing-market-size/
20. www.statista.com/statistics/189800/global-outsourcing-industry-revenue-by-service-type/

ՀՏԴ 339.1 Տնտեսագիտություն

Վիկտորիա Քեշիշյան
Վանաձորի պետական համալսարան
Պատմաշխարհագրական ֆակուլտետ
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Ն. Բարսեղյան

ՄԵԴԻԱ ԳՈՎԱԶԴԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆՈՒՄ

Բանալի բառեր՝ *մեդիագովազդ, գովազդային կազմակերպություններ, թիրախային լսարան, համացանց, որոնողական համակարգեր, գնագոյացում:*

Կատարված ուսումնասիրություններից ելնելով հանգում ենք հետևյալ եզրահանգմանը. մեդիա դաշտում առկա մրցակցության պայմաններում ամենից արդյունավետ հարթակը «Google AdWords» -ն է, որը միջազգային մասշտաբով հնարավորություն է տալիս ունենալ անհրաժեշտ ազդեցությունը սպառողների թիրախային խմբի վրա: ՀՀ մասշտաբով ցանկալի արդյունքը կապահովի նաև «List am» -ը, որտեղ առկա գնային պայմանները չեն զիջում առաջատար գովազդային հարթակների կողմից առաջարկվող պայմաններին:

Виктория Кешишян

АНАЛИЗ ЭФФЕКТИВНОСТИ МЕДИА РЕКЛАМЫ В РЕСПУБЛИКЕ АРМЕНИЯ

Ключевые слова*. медиа реклама, рекламные организации, целевая аудитория, интернет, поисковые системы, ценообразование.*

На основании нашего исследования мы можем сделать вывод, что наиболее эффективной платформой в области медиа конкуренции является «GoogleAdWords», которая на международном уровне позволяет оказывать необходимое воздействие на целевую аудиторию потребителей. Желаемый результат в масштабе Республики Армении также будет обеспечивать «Listam», где существующие ценовые условия не уступают тем, которые предлагаются ведущими рекламными площадками.

Առցանց գովազդի հայկական շուկան զարգանում է բավականին ակտիվ տեմպերով, ինչը հիմնականում կապված է ինտերնետային լսարանի ընդլայնման և նոր նախագծերի ի հայտ գալու, մասնավորապես, տեղեկատվության զարգացման և սոցիալական ոլորտների առաջխաղացման հետ: Բացի այդ, ինտերնետը՝ որպես թիրախային լսարանին ապրանքների և ծառայությունների մատուցման հարթակ, աստիճանաբար վստահություն է ձեռք բերում գովազդատուների շրջանում:

Առցանց մեդիա գովազդի հիմնական առավելությունն ավանդական ձևերի համեմատությամբ առավել ճշգրիտ թիրախավորումն է, քանի որ տեսահոլովակի կամ գովազդային պաստառի ցուցադրումը կարող է ընտրվել՝ համաձայն կայքի թեմայի, օգտագործողների աշխարհագրական դիրքի, ցուցադրման ժամանակի և այլն: Բացի այդ, գովազդի միավորները հաճախ ցուցադրվում են պոտենցիալ հետաքրքրված այցելուների համար: Այսպիսով, «Yandex» - ի կամ այլ որոնողական համակարգերում ցուցադրվող գովազդը համատեղում է համատեքստային գովազդի առավելությունները և ցուցադրում է այն պաստառները, որոնք համապատասխանում են այցելուների որոնման հարցումների

բովանդակությանը: Այսպիսով կրկնակի թիրախավորումը (Retargeting) թույլ է տալիս «վերադարձնել» օգտվողներին իրենց կողմից արդեն դիտված գովազդային էջը, դրան գումարած այն ունի զվարճալի, ինտերակտիվ բնույթ, և ի տարբերություն հեռուստատեսության կամ ռադիոյի գովազդի, այցելուները կարող են վերահսկել դրա տևողությունը կամ առկայությունը՝ բաց թողնել տեսանյութը, փակել թռուցիկ պատուհանը, արգելափակել նյարդայնացնող պատկերները և այլն:

ՀՀ-ում գովազդային շուկայում դեռևս գոյություն չունի որևէ ընկերություն, որը ընդհանուր կարող է գնահատել գովազդային շուկայի կառուցվածքը, սակագները և դրանք ներկայացնել ըստ վիճակագրական տվյալների: Շուկայավարման գործունեության արդյունավետությունը, մասնավորապես առցանց գովազդը գնահատելու համար նախևառաջ հարկավոր է ունենալ համապատասխան հետազոտական գործիքներ, որոնք գործնականում բացակայում են ՀՀ-ում: Դա պայմանավորված է նրանով, որ գովազդատուները շատ դեպքերում ուշադրություն չեն դարձնում արդյունավետությունը գնահատելու անհրաժեշտությանը կամ չունեն բավարար գիտելիքներ գովազդային արշավի արդյունքների վերլուծության համար, ինչն իր հերթին խանգարում է գովազդային բյուջեի արդյունավետ բաշխմանը: Ամենից հաճախ առցանց գովազդային հնարավորություններին դիմում են ֆինանսական ոլորտի ընկերությունները, հեռահաղորդակցման օպերատորները և ավտոմեքենաներ ներկրողները: Հիմնականում դա պայմանավորված է նրանով, որ այս ընկերությունների գովազդային բյուջեները թույլ են տալիս տարբերակել ֆոնդերը տարբեր տեղաբաշխման ալիքներում, ներառյալ ինտերնետում:

ՀՀ-ում գովազդի բոլոր տեսակների շարքում ամենատարածվածը մեդիա (բաներային) գովազդն է: Հանրաճանաչության մեջ երկրորդ տեղում է ենթատեքստային գովազդը, որն ունի մեծ աճի ներուժ, ինչը որոշվել է փոքր և միջին ձեռնարկությունների ինտերնետ հասանելիության միջոցով:[1]

ՀՀ-ում կան ավելի քան 192 գովազդային կազմակերպություններ, որոնցից 48-ը մատուցում են գովազդային արշավների կազմակերպման, կայքերի առաջխաղացման, անվճար կամ վճարովի հիմունքներով խորհրդատվության կազմակերպման, սոցիալական էջերի ստեղծման և վարման, մարքեթինգային ռազմավարության մշակման և իրականացման հետ կապված տարաբնույթ ծառայություններ, իսկ մնացած 144-ը զբաղվում են գովազդների տպագրմամբ:[2]

Հայկական համացանցային լսարանին վերաբերող հատուկ ցուցանիշներ չկան, քանի որ այս ուղղությամբ ուսումնասիրություններ չեն իրականացվում: Հայաստանի Հանրապետության մշտական բնակչության թվաքանակը ըստ մարզերի և քաղաք Երևանի 2019թ. հունվարի 1-ի դրությամբ կազմել է 2 963.700 բնակիչ, որից ինտերնետ կապից օգտվողների թիվը հասել է շուրջ 67%-ի, այսինքն՝ 1 985. 679 –ի:[3] Հայաստանից միջին հաշվով համացանցից օրական օգտվում է 630 հազար այցելու:[4] Բայց այս ցուցանիշը համարժեք չէ մարդկանց թվին, քանի որ նույն օգտագործողը կարող է մուտք գործել ինտերնետ մի քանի համակարգիչներից, բջջային և այլ սարքերից: Հետևաբար, այս թվերը չեն արտացոլում ամբողջական պատկերը, այնուամենայնիվ, դրանք թույլ են տալիս

[1] www.news.am
[2] www.spyur.am
[3] www.armstat.am
[4] www.liveinternet.ru

հասկանալ մոտավոր լսարանը, որի վրա կարող ենք կենտրոնանալ:

ՀՀ- ում այցելությունների թվով առաջինը «YouTube» կայքն է, երկրորդ տեղում «Facebook» -ն է, որին հաջորդում է «Google» որոնիչը, որին հաջորդում է «Одноклассники» սոցիալական ցանցը, որը մի քանի տարի առաջ զբաղեցնում էր հանրաճանաչ կայքերի առաջին տողերը, այնուհետև՝ «Mail.Ru»-ն: Հաջորդիվ գալիս են «List.am», «Yandex», «Instagram» որոնողական համակարգը [1]: Վերը նշվածներից գովազդի տեղադրման համար առավել արդյունավետ հարթակներն են՝

- Yandex Direct
- Google AdWords
- Facebook
- Instagram
- List.am:

Համատեքստային գովազդը Yandex -ում ամենատարածված գործիքներից մեկն է: Չնայած այն հանգամանքին, որ գովազդային ֆայլի յուրաքանչյուր հաջորդ մուտքի դեպքում նկատվում է գնաճ, գովազդատուները չեն դադարում վճարել համատեքստի համար: Փաստն այն է, որ այն իրոք լավ արդյունք է տալիս:

Հետազոտությունը ցույց տվեց, որ «Google AdWords» համակարգը ունի գնային առավելություն՝մեկ սեղմումով ավելի ցածր գին, քան «Direct» -ը: Այսպիսով, «Google AdWords» -ում գովազդն ավելի էժան է, քան «Yandex.Direct» - ում: Սրան նպաստում են՝

- ***բարդ ինտերֆեյսը***
- ***ավելի քիչ մրցակցությունը***
- ***հատուկ գնագոյացման սկզբունքը***

«Google AdWords»–ին սպառողները վճարում են հետևյալ դեպքերում.

- *մեկ սեղմման համար (PPC -«pay-per-click»): Այս դեպքում վճարում եք միայն այն դեպքում, երբ օգտագործողը սեղմում է ձեր գովազդի վրա:*
- *ցուցադրությունների համար: Յուրաքանչյուր 1000 ցուցադրությունների համար ձեր մնացորդից հանվում է գումար:*
- *փոխարկումների համար: «AdWords»-ն առաջարկում է հիանալի հնարավորություն՝ վճարել միայն նպատակային գործողությունների համար (լրացված դիմում, հեռախոսազանգ, գրանցում, ապրանքների դիմաց վճարում և այլն):*

«Google AdWords» - ում գնագոյացումը իրականացվում է հետևյալ սկզբունքով[1].

$$P = \frac{\text{մրցակցի առաջարկած գինը ցածր սանդղակների համար} * \text{մրցակցի գովազդի որակի ցուցիչ}}{\text{ձեր գովազդի որակի ցուցիչ}} + 1$$

«Facebook» սոցիալական կայքում գովազդ տեղադրելիս, անկախ ձեր նպատակից, դուք միշտ մասնակցում եք աճուրդների համակարգին, որում, ելնելով բազմաթիվ գործոններից, թելադրում եք այն գինը, որը պատրաստ եք վճարել մարդկանց որոշակի խմբի մրցակցային պայքարում հաղթելու համար: Յուրաքանչյուր ոլորտում միջին ցուցանիշը տարբեր է, այնուամենայնիվ,«Facebook» - ի կողմից հրապարակված վերջին վիճակագրությունը ունի հետևյան տեսքը.

- արժեքը յուրաքանչյուր մուտքի համար՝ 140-280 դրամ
- հազար *ցուցադրությունների* միջին արժեքը՝ 3470 դրամ
- ծրագրի ներբեռնման սակագինը՝ 1280 – 1850 դրամ[2]

[1] www.google.com
[2] www.facebook.ru

«Yandex Direct» ում գործող գները կրկնակի, երբեմն եռակի անգամ գերազանցում են «Google AdWords» – ում ընդունված գնային սանդղակը:

Ինչ վերաբերում է «Instagram» գովազդին, առաջինը, որին պետք է ուշադրություն դարձնել քարոզարշավ կազմակերպելուց առաջ, գովազդների տեսակներն են.

- ***կայքից անցում կատարելը*** գովազդելու ամենադյուրին ձևերից մեկն է, այնուամենայնիվ, պետք է հաշվի առնել, որ օգտագործողին ավելի շատ հետաքրքիր կամ ավելի հարմար է ուսումնասիրել արտադրանքը «instagram»-ի էջում (դրանք կարող են լինել զեղչեր, մրցույթների մասնակցության հնարավորություն, մեկնաբանությունների համար կանխիկ կամ անկանխիկ պարգևներ և այլն):
- ***գովազդային հոլովակները***, որոնցում կարող եք նշել ձեր արտադրանքի կամ ծառայության առանձնահատկությունները, սակայն հոլովակի ենթատեքստը չպետք է ոտնահարի հեղինակային իրավունքները, պարունակի բողոք կամ դժգոհություն մրցակից ընկերությունների գործունեության կամ դրանց արդյունքների վերաբերյալ, այլապես հավանական է, որ կայքը կհեռացնի գովազդը:

Սակայն գոյություն չունի որոշակի կոնկրետ ցուցանիշ, որը գործի գովազդի բոլոր տեսակների և բոլոր կարգերի հաշիվների համար, քանի որ էջերը դասակարգվում են ըստ սեփականատիրոջ հեղինակության, վարկանիշի, թիրախային լսարանի, բաժանորդների գործունեության: Կան հաշիվներ, որոնց բավարարում են 20-150 դրամը յուրաքանչյուր սեղմման համար (նորեկների համար հարմար տարբերակ է իրենց էջը գովազդելու), և կան այնպիսի հաշիվներ, որոնք նույն սեղմման համար պահանջում են 740-1110դրամ (երբ հաշիվը հասնում է որոշակի վարկանիշի, հնարավոր է նաև վաստակել գովազդով՝ սահմանելով նույն գները կամ ավելի բարձր գին):[1]

«List.am» կայքում հնարավոր է երեք տիպի գովազդ.

- *Բաներ Գլխավոր էջի վրա*

Գովազդային բաները (728 x 140 չափով) ցուցադրվում է գլխավոր էջի վերին մասում՝ 1/4 պարբերական հաճախականությամբ:

Սա «List.am»-ի ամենաշատ հաճախվող էջն է, և առաջինբանը, ինչ տեսնում են այցելուները, դա ձեր գովազդն է: Այսպիսով դուք կարող եք հեշտությամբ ուշադրություն գրավել դեպի ձեր բիզնեսը, կայքը, ապրանքատեսակը կամ ծառայությունը: Գովազդի գինը 360 դրամ է:

- *Բաներ հայտարարությունների էջի վրա*

Գովազդը (670 x 90չափով) ցուցադրվում է ձեր կողմից ընտրած բաժնի հայտարարություններով էջի ներքևի մասում՝ 1/4 պարբերական հաճախականությամբ: Հայտարարությունները, որոնք ցուցադրվում են տրանսպորտ և էլեկտրոնիկա կատեգորիաների էջերում, արժեն 120 դրամ, անշարժ գույք կատեգորիայի էջում՝ 150 դրամ, ծառայություններ, աշխատանք և մյուս բոլոր կատեգորիաներում՝ 100 դրամ:

Որոնման ծրագրերով կայք մուտք գործող այցելուները, ինչպես նաև նրանք, ովքեր հետաքրքրված են կոնկրետ բաժնով կամ ապրանքով, կտեսնեն ձեր հայտարարությունը:

- *Բաներ հայտարարությունների ցանկի և որոնման արդյունքների էջի վրա*

Գովազդային բաները (180 x 180 չափով) ցուցադրվում է ձեր ընտրած բաժնի հայտարարությունների ցանկի և որոնման արդյունքների էջի ձախ կողմում՝ 1/4

[1] www.business.instagram.com

պարբերական հաճախականությամբ: Բաների արժեքը 270 դրամ է:[1]

Հայաստանի Հանրապետությունում ցանցային գովազդը հանդես է գալիս հետևյալ ֆորմատներով՝

Գովազդի ֆորմատ	**Գին** *(ներառյալ ԱԱՀ)*
Topline Catfish • Երևում է կայքի ամենավերին, տեսանելի հատվածում: • Տեսանելի է թե Desktop և թե Mobile տարբերակներում: • Ներառում է հետևյալ կայքերը- Tert.am, Blognews.am, 168.am, Aravot.am, ItTrend.am, Operative.am, Mediamag.am, Live24.am	380 դրամ - 1000 ցուցադրություն
Native Banner • Native Banner-ային ցանցով բաները տեղադրվում է հոդվածի մեջտեղում: • Տեսանելի է թե Desktop և թե Mobile տարբերակներում: • Ներառում է վերոնշյալ բոլոր կայքերը և Azatnewstv.am, NT.am կայքերը	270 դրամ - 1000 ցուցադրություն
Native Background • Հոդվածի մեջ է: • Միաժամանակ կարող է մի քանի մեսիջներ ունենալ: • Ներառում է վերոնշյալ բոլոր կայքերը	380 դրամ - 1000 ցուցադրություն

[1] www.list.am

Full Screen • Կայքը բացելիս բաները միանգամից հայտնվում է էկրանին: • Ներառում է վերոնշյալ բոլոր կայքերը	440 դրամ - 1000 ցուցադրություն
Video Full Screen • Կայքը բացելիս միանգամից հայտնվում է էկրանին: • Ունի ձայնային առավելություն	500 դրամ - 1000 ցուցադրություն
InPage • Վիդեո հոլովակ է, որը հայտնվում է հոդվածի մեջ:	990 դրամ - 1000 ցուցադրություն
Preroll • Գովազդը ցուցադրվում է մինչև հիմնական հոլովակի ցուցադրությունը:	1200 դրամ - 1000 ցուցադրություն
Midroll • Գովազդը տեսնում են հիմնական հոլովակի ցուցադրության ընթացքում:	700 դրամ - 1000 ցուցադրություն
Endroll • Գովազդը տեսնում են հիմնական հոլովակի ցուցադրությունից հետո:	750 դրամ - 1000 ցուցադրություն

ԳՐԱԿԱՆՈՒԹՈՒՆ

1. www.news.am
2. www.spyur.am
3. www.armstat.am
4. www.liveinternet.ru
5. www.google.com
6. www.facebook.ru
7. www.business.instagram.com
8. www.list.am

ՀՏԴ 336.(004.9) Տնտեսագիտություն

Ալեքսանդրա Սյոմա
Մոսկվայի պոլիտեխնիկական համալսարանի
Ռյազանի մասնաճյուղ, I կուրս
Գիտական ղեկավար՝դոցենտ Սիվիրկինա Աննա Սերգեևնա

ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ՓՈՂԱՅԻՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Բանալի բառեր՝ *էլեկտրոնային փող, էլեկտրոնային դրամապանակ, համացանց, վճարային համակարգեր, Yandex. Money.*

Այս հոդվածը նվիրված է էլեկտրոնային փողի աշխարհին, որը վերջերս է ստեղծվել: Փաստորեն, դա արդեն ազդել է համակարգչային տեխնոլոգիաների զարգացման վրա, և ավելին, նրանք ստեղծում են այն նույն հեղափոխությունը, ինչ անցյալ դարերում թղթադրամները, որոնք հեշտությամբ փոխարինում են մետաղադրամներին: Այսպիսով, կարող ենք ենթադրել, որ մոտ ապագայում «էլեկտրոնային» անկանխիկ փողերը ամբողջությամբ կարող են տեղահանել կանխիկ փողերը:

Александра Сёма
студентка 1-ого курса Рязанского института (филиала)
Московского политехнического университета
Научный руководитель-доцент Сивиркина Анна Сергеевна

ЭЛЕКТРОННЫЕ ДЕНЕЖНЫЕ СИСТЕМЫ

Ключевые слова: *электронные деньги, электронный кошелек, интернет, платежные системы, Яндекс.Деньги.*

Статья посвящена миру электронных денег, которые изобретены недавно. На самом деле, это уже повлияло на развитие компьютерных технологий и, более того, совершили такую же революцию по внешнему виду, что и бумажные деньги прошлых веков, которые быстро заменяли металлические монеты. Таким образом, можно предположить, что «электронные» безналичные деньги могут полностью вытеснить наличные деньги в ближайшее время.

The evolution of money is a continuous process. Everyone knows about gold and silver coins, which actually cost the price of the metal from which they are made. Then came paper notes, the value of which is simply written. Now there are means of payment that are even impossible to touch and see with your eyes - electronic money. So what can a person with an empty portmone afford?

If you don't go into the economic subtleties and speak in simple terms, the electronic money can be described as a virtual analogue of the cash. If in real life we most often use the cash for calculations, then in the Internet electronic currency will be such a currency. It is important not to confuse electronic payment systems with cashless payments using bank cards. Speaking about electronic money, we mean virtual payment systems, which in fact themselves are issuers of their money, that is, they themselves issue their money.

After this, the logical question arises: in what currency are electronic money issued and at what rates they need to be converted. In fact, almost all electronic money is tied to the exchange rate of real currencies.

This means that 1 ruble in the payment system, for example, "Yandex.Money," is equal to one ruble that you use in real life. The same fact applies to other currencies whether they are dollars, euros,

pounds and so on. Another question arises: why is electronic money needed at all, why should it be studied and used. The benefits of using electronic money are very, very many. Of course, there are disadvantages, but the advantages are much more significant.

Let's see what benefits we get from using electronic money. First of all, this is **speed** of course. In today's world, nothing is as valuable as the time and speed of operations. In this regard, electronic money is an absolute leader in the entire payment market. Electronic payments are carried out almost instantly, but you do not forget that you haven't any need to present in the store. You can pay for any goods and services without leaving your house. Now, there is a very strong popularization of electronic money. So, more and more sites in the Internet are working to receive electronic currency. If you had money in an electronic wallet 5-7 years ago, the question would appeared of where to spend it. Now such questions do not even arise. Now with the help of electronic money you can pay for anything from a plane ticket to utility bills, while all the processes take place right on your computer and there is no need to go anywhere or stand on lines.

The next advantage is **mobility**. All you need in order to pay with electronic money is to know your username and password. You needn't have a wallet with money and cards. In this case, all information about your electronic wallet, about the status of accounts is stored in the so-called *cloud*, that is, on the server of the payment system. Wherever you are, you can always pay with your electronic money. Another plus appears: the fact is that electronic money is very easy to convert between themselves. If, for example, you do not need rubles, but you need dollars, you can easily exchange them in any virtual exchanger, while everything will be done instantly and with a small commission. Based on this, one can say about another benefit from the use of electronic money - this is **saving.**

The next advantage is **safety**. With a smart wallet, you don't need to worry about being stolen from you. Of course, there is a risk of hacking your account with electronic money, however, if you follow the security recommendations of your electronic wallet, such cases are practically excluded. Moreover, any payment system, when controversial situations arise, always tries to understand the problem.

The next undeniable plus of electronic money is its **availability**. In this case, it does not mean availability in monetary terms, but availability in terms of time of the payment system. Shops that accept electronic money are available 24 hours a day, 7 days a week. Even if you wake up in the middle of the night thinking that you urgently need to top up your mobile phone, there will be no problems with this. Payment services are always available, while the human factor is excluded, everything happens automatically.

And the last advantage, not inferior to all of the above, is **control**, meaning control of all expenses. Electronic payment system services will introduce a payment history. Purchasing data is always in sight, you see: how much was spent, in which store and on which product. It's quite difficult to keep detailed statistics with cash, so electronic money is a much more controlled process in this regard. In addition, the payment history is a proof, you can always present a record of your wallet, thereby confirming what and at what time and in which store it was bought. As you can see, electronic money is a very convenient tool, which undoubtedly should be able to use by any modern person.

Let us consider the types of electronic money that can be found on the Internet. In fact, there are a lot of them. It can be money "Mile.ru", "Yandex.Money", "PayPal", "WebMoney" and others. New payment systems appear almost every day. The difference between them is minimal, in fact the difference is only in the company that is the issuer of certain funds, that is, the difference is only in the label. In fact, "Rbk.money" is one currency, and " Yandex.Money" is another currency. Both of them are tied to the Russian ruble, however, we can pay them only if the online store accepts "Rbk.money" or "Yandex.Money", that is, each payment system works separately. If the online store accepts "Yandex.Money", then we may not be able to pay with "Rbk.money". It follows that if you need the currency of some other payment system, then you need to make a currency exchange, for example, change "Rbk.money" to "Yandex.Money" or vice versa.

However, with all the visible advantages of electronic money, there are also disadvantages.

These include:

- The circulation of electronic money is not regulated by law;
- The requirement for specialized tools for making payments;
- There are no developed means of protecting electronic money from fakes;
- Not all sellers of products accept payments by electronic money;
- There are no state guarantees for the integrity of issuers and the reliability of electronic money

Thus, we can conclude that using electronic money should be careful. You must remember that these are the same banknotes that are in the wallet, only in electronic form. They are also not supported by the state's gold reserves. By and large, this is simply an invention of an organization that is responsible for them. Therefore, at the present stage of development of such systems, experts recommend using electronic money only as a means of payment, and not funded. And you must carefully approach to the large payments.

LITERATURE

1. Karvai KV Electronic payment systems and possible ways of their development / MID (Modernization. Innovations. Development). 2013, No. 13. URL: http://cyberleninka.ru/article/n/elektronnye-platezhnye-sistemy-i-vozmozhnye-puti-ih-razvitiya.
2. Musalaeva S. A. Electronic money and payment systems // Problems of the modern economy. 2010. No. 4. URL :.
3. Ivanov O.M., Mamuta M.V. Electronic money in the Russian payment system. Prospects for distance financial services // Banking. - 2008. - No. 10, p. 65-70
4. Electronic resource https://spravochnick.ru/dengi/denezhnaya_ sistema / elektronnye_denezhnye_sistemy

ՀՏԴ 159.922.7 Մանկավարժություն և հոգեբանություն

Մարիամ Աղաբաբյան
ԱրՊՀ մանկավարժության և
հոգեբանության ամբիոնի ասպիրանտ
Ղեկավար՝ հ.գ.թ., դոցենտ
E-mail mariamaghababyan@mail.ru

ՏԱԳՆԱՊԻ ԵՎ ՎԱԽԻ ԻՆՏԵՆՍԻՎՈՒԹՅԱՆ ԴՐՍԵՎՈՐՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԱՌԱՋԻՆ ԵՎ ԵՐԿՐՈՐԴ ՀՂԻՈՒԹՅԱՆ ԸՆԹԱՑՈՒՄ

Բանալի բառեր- *հոգեֆիզիոլոգիա, հղիություն, վախ, տագնապ, պերինատալ շրջան, ֆիզիոլոգիական փոփոխություն, հոգեբանական փոփոխություն, էսթետիկ տեսք:*

Հոդվածում խոսվում է առաջին և երկրորդ հղիության ընթացքում ակտուալ վախերի տեսակների և դրանց դրսևորման ինտենսիվության առանձնահատկությունների, ինչպես նաև տագնապի ինտենսիվության և պատճառների մասին: Հետազոտության արդյունքում ստացվել են տվյալներ, որոնք ցույց են տալիս Արցախում հղիների առաջին և երկրորդ հղիության ընթացքում տագնապի ինտենսիվության տարբերությունները, ինչպես նաև տարբեր վախերի միջև գոյություն ունեցող կորելյացիոն կապերը:

Мариам Агабабян

ОСОБЕННОСТИ ПРОЯВЛЕНИЯ ИНТЕНСИВНОСТИ ТРЕВОГИ И СТРАХА ВО ВРЕМЯ ПЕРВОЙ И ВТОРОЙ БЕРЕМЕННОСТИ

Ключевые слова *- психофизиология, беременность, страх, тревога, перинатальный период, физиологические изменения, психологические изменения, эстетический вид:*

В статье говорится о видах актуальных страхов во время первой и второй беременности и особенностях интенсивности их проявления, а также о интенсивности и причинах тревоги. В результате исследования были получены данные, показывающие разницу интенсивности тревоги беременных женщин в Арцахе, во время первой и второй беременности, а также корреляционные связи между различными страхами:

Անձի կարգավիճակային փոփոխությունների ու հոգեֆիզիոլոգիական վիճակների ուսումնասիրությունը միշտ էլ գիտական հետաքրքրության օբյեկտ է հանդիսացել: Կլինիկական հոգեբանության մեջ արդիական խնդիրներից մեկը հանդիսանում է կանանց հոգեֆիզիոլոգիական վիճակը հղիության ընթացքում:

Հղիությունը և երեխայի ծնունդը ոչ միայն ուրախություն են պատճառում, այլև ուժեղ սթրեսի պատճառ են հանդիսանում: Հղիությունը համարվում է շատ զգայուն ժամանակաշրջան կնոջ համար, նույնիսկ կարող ենք անվանել ճգնաժամային: Այն հանգեցնում է կնոջ օրգանիզմում ֆիզիոլոգիական և հոգեբանական զգալի փոփոխությունների, փոխվում է շրջակա միջավայրի հետ կնոջ հարաբերությունների բնույթը: Այն գործում է որպես ոչ սպեցիֆիկ սթրես, և կախված կնոջ անհատական առանձնահատկություններից կարող է տարբեր արձագանքներ ունենալ [4]:

Հղիությունը կնոջ համար առաջ է բերում մի շարք նոր զգացողություններ և ապրումներ: Այս ապրումները գալիս են երկու աղբյուրներից: Առաջինը այն է, որ զարգացող պտուղը հղիության առաջին իսկ օրերից ազդում է մոր հուզական աշխարհի վրա, իսկ մյուս կողմից,

մայրը հաճախ հայտնվում է հույզերի իշխանության տակ, որոնք պայմանավորված են հղիության և ծննդաբերության մասին իր պատկերացումներով, ինչպես նաև հարազատների վերաբերմունքով [5]:

Արդեն հղիության սկզբում ապագա մոր մոտ, սպասվող երեխայի հետ կապված կարող են մտավախություններ առաջանալ: Կարող են առաջանալ մտավախություններ և կասկածներ՝ կապված կառուցվածքի, կանացիության, գրավչության կորուստի, ամուսնու վերաբերմունքի փոփոխության հետ:

Հղիության երկրորդ եռամսյակում կարող են արդիականացվել նախկինում լսված դիտողությունները, կարծիքները, սնահավատությունը: Այս ամենը կարող է առաջացնել անհիմն վախեր: Այդ ժամանակ հիշվում են բազմաթիվ ընտանեկան ապրումներ, ժառանգական հիվանդություններ: Կինը վախենում է ապագա երեխայի այլանդակությունից:

Հղիության վերջում ուրվագծվում են նաև կոնկրետ մտավախություններ, որոնք կապված են առաջիկա ծննդաբերության հետ [4]:

Օ. Բ. Գոլուբևան առանձնացնում է վախերի մի քանի խմբեր, որոնք հանդիպում են հղի կանանց մոտ (հատկապես առաջին ծննդաբերության ժամանակ).

- վախ կապվախ նոր դերը իրացնելու անկարողության հետ,
- վախ հայտնվել մի միջավայրում, որտեղ նրան կվերաբերվեն ֆորմալ կերպով կամ բացասական տրամադրվածությամբ,
- ծննդաբերական գործունեության էսթետիկ տեսքի հետ կապված վախեր,
- վախ կորցնել ինքնակառավարումը, չկարողանալ վերահսկել իրավիճակը,
- վախ ծննդաբերության վատ ելքից, իր կամ բուժաշխատողների պատճառով [2]:

Վախերը կարող են մակերեսային և խորը լինել, կախված նրանց պատճառից: Դրանք կարող են առաջանալ նոր ապրած տրավմատիկ իրավիճակների, խորը հուզական կոնֆլիկտների, նևրոտիկ և այլ պաթոլոգիկ գործընթացների հետքերով: Հաճախ մակերեսային թվացող վախերը սովորական զրույցի ընթացքում չեն անցնում, կանայք կրկին ու կրկին վերադառնում են վախի ապրումներին: Սա խոսում է այն մասին, որ կան ավելի խորը գործընթացներ: Հաճախ այս դեպքում դիտվում է լարվածություն: Այն կարող է փոխանցվել մկաններ, ինչպես նաև կարող է բարձրացնել տոնուսը: Հարկ է նշել, որ նման ապրումն ազդում է անձի վիճակի, մտածողության վրա, ունի ընդհանուր արգելակող ազդեցություն, նեղացնում է քննադատական, տրամաբանական պարզ մտածողությունը: Նման դեպքերում մարդն արդեն չունի մտածողության այն ազատությունն ու բովանդակության հարստությունը, որը նախկինում բնորոշ էին իրեն: Նման ազդեցությունն այնքան լուրջ կարող է լինել, որ զգալիորեն նվազում է մտավոր գործունեության մակարդակը, խելամիտ մարդիկ սկսում են իրենց այլ կերպ պահել, դժվարությամբ են տրվում համոզումներին, գրսևորում են անձի ավելի պարզունակ դրսևորումներ, ավելի պարզունակ ռեակցիաներ՝ ռեգրեսիա: Դա արտահայտվում է երեխաներին ավելի բնորոշ վարքագծով, լացկանությամբ, անընդհատ բողոքներով: Կարող է դրսևորվել որպես ագրեսիվություն, պահանջկոտություն, հաճախ կոպիտ ձևով: Վախի ու տագնապի վիճակ ունեցող մարդիկ սարսափ են տեսնում այնտեղ, որտեղ դրանք չկան, ցավագին են արձագանքում անվնաս դիտարկումներին և խոսքերին: Հղիների համար այս փորձը կարող է էպիզոդիկ և անհետք լինել, բայց կարող է լինել նաև երկարատև վախերի ու տագնապային վիճակների սկիզբը [3, 4]:

Այսօր բժշկական տեխնոլոգիաների զարգացումը մեծ դրական նշանակություն և արժեք

ունի: Բայց պետք է նշել, որ ժամանակին բժշկական տեխնոլոգիաների և գործիքակազմի բացակայությունը մարդկանց դրդում էր ավելի շատ վստահել բնության կողմից տրված բնական ուժերին՝ ձևավորելով հղի կնոջ հոգեբանական աջակցության և ինքնապահովման հատուկ մշակույթ : Կարելի է ասել, որ բժշկական տեխնոլոգիաների վրա հենվելը թուլացրել է կնոջ կարողությունը՝ վստահել իր ինտուիցիային և հենվել էներգիայի ներքին աղբյուրների վրա: Իսկ դա, իր հերթին, ուժեղացրել է անվստահությունը, անհանգստությունը և անօգնականությունը և այդ ամենի հետ կապված մեղքի զգացումը: Այս ամենին ավելանում է նաև բժշկական տեղեկատվության հսկայական հոսքը, որոնք խոսում են հիմնականում այնպիսի արգելքների և պահանջներ մասին որոնք առօրյա կյանքում անհնար է իրականացնել, ինչը իր հերթի բարձրացնում է տագնապայնությունը և առաջացնում է մեղքի զգացում [4]:

Այսօր Արցախում առաջին տեղերում է կանգնած բազմազավակության և ծնելիության աճի խթանման հարցը, այդ ուղությամբ իրականացվում են բազմաթիվ ծրագրեր, բայց թե ինչ հոգեվիճակում է գտնվում հղի կինը պերինատալ շրջանում, ինչից է վախենում առաջին և հաջորդ հղիությունների ընթացքում, այս ամենի վերաբերյալ կատարված հետազոտություններ շատ քիչ են: Հաշվի առնելով այս փաստը ինչպես նաև այն, որ կնոջ հուզական վիճակից մեծապես կախված է հղիության և ծննդաբերության ընթացքը, պտղի վիճակը ինչպես նաև հաջորդ հղիության հանդեպ վերաբերմունքը հետազոտություն ենք անց կացրել Արցախում, այս աշխատանքի համար ունենալով հետևյալ նպատակը. բացահայտել առաջին և երկրորդ հղիության ժամանակ վախի և տագնապի ինտենսիվության դրսևորման հիմնական տարբերությունները և դուրս բերել դրանց յուրահատկությունները:

Հետազոտությունն անց է կացվել ԱՀ *Մոր և մանկան առողջության պահպանման բժշկական կենտրոնում:* Հետազոտական աշխատանքի նպատակին համապատասխան՝ էմպիրիկ հետազոտության անցկացման համար կիրառվել են թեստավորման և հարցարանային մեթեդները:

Մասնավորապես կիրառվել են հետևյալ մեթոդիկաները՝

- Սպիլբերգեր-Խանինի տագնապայնության հետազոտման մեթոդիկան [1, 277]
- Մեր կողմից մշակված «Հղիության ընթացքում ակտուալ վախերի հիերարխիկ կառուցվածքի» հետազոտման հարցարանը:

Հետազոտական համակազմը կազմել են 20-35 տարեկան 34 հղի կանայք, որից առաջին խմբի 17 հոգու մոտ առաջին հղիությունն է՝ տարիքը 20-30, իսկ երկրորդ խմբի մոտ երկրորդ հղիությունն է, տարիքը 20-35: Տարիքային միջակայքը ընտրվել է՝ ելնելով այն փաստից, որ այն համարվում է վերարտադրողական լավագույն տարիքը, իսկ մեծահասակ (30 տարեկանից մեծ) և պատանի (մինչև 18 տարեկան) առաջնածինների հղիությունը և ծննդաբերությունն ավելի բարդացած ընթացք են ունենում: Բոլոր հետազոտվողներն ունեն բարձրագույն կրթություն, չունեն լուրջ առողջական խնդիրներ, սոցիալապես ապահով են: Հետազոտությունը իրականացվել է հղիության 3-րդ եռամսյակում:

Հետազոտության առաջին փուլում գնահատվել է հետազոտության մասնակիցների մոտ անձնային և իրավիճակային տագնապայնության մակարդակը՝ Սպիլբերգեր-Խանինի տագնապայնության հետազոտման մեթոդիկայով, որի արդյունքում ստացել ենք հետևյալ ցուցանիշները: Նկ. 1.



Նկ. 2. Իրավիճակային և անձնային տագնապայնության միջին ցուցանիշ.

Ինչպես տեսնում ենք, առաջին և երկրորդ հղիության ընթացքում առկա է ցածր տագնապայնություն: Այն կարող է պայմանավորված լինել ֆիզիոլոգիական վիճակով, որովհետև հետազոտության մասնակցիների մեծամասնությունը եղել է 3-րդ եռամսյակի սկզբնական շրջանում, երբ հուզական ֆոնը կայուն է և հանգիստ:



Նկ. 2 Առաջին խմբում ակտուալ վախերի հիերարխիկ կառուցվածքը



Նկ. 3. Երկրորդ խմբում ակտուալ վախերի հիերարխիկ կառուցվածքը

Մյուս հարցարանի միջոցով դուրս է բերվել ակտուալ վախերի հիերարխիկ կառուցվածքը (Նկ. 2, Նկ. 3): Ինչպես տեսնում ենք, 2 խմբերում էլ առաջին և երկրորդ տեղում են գտնվում երեխայի կյանքին և ֆիզիկական առողջությանը վտանգ սպառնացող իրավիճակները, որոնք առաջացնում են սուր վախի զգացողություն: Երեխայի բերեկեցությունը չապահովելու, այսինքն՝ մայրական դերը և ստանձնած պարտականությունները չիրացնելու, ինչպես նաև վախերը՝ կապված սեփական կյանքի և առողջության սպառնալիքի հետ, ունեն միջին աստիճանի ինտենսիվություն՝ առաջին խմբում իսկ 2-րդ խմբում միջին և թեթև աստիճանի ինտենսիվություն, ինչը, հնարավոր է, պայմանավորված է առաջին երեխային խնամելու և նրա կարիքները հոգալու փորձից ձեռք բերված կարողությունների հետ: Այս արդյունքներից կարող ենք ասել, որ այն վախերը, որոնք պայմանավորված են այնպիսի դժվարությունների և խնդիրների առաջացման հետ, որոնք անձը կարող է հաղթահարել, չեն առաջացնում նույն ինտենսիվության վախ, որը դիտվում է առաջին հղիության դեպքում, երբ կինը չունի համապատասխան փորձ և հմտություններ: Հարաբերությունների վատթարացման հետ կապված վախերը ունեն ցածր ինտենսիվություն: Վերջինս պայմանավորվում է հետազոտվողների մոտ շրջապատի վերաբերմունքի հանդեպ վերաբերմունքի օպտիմալ տիպով:

Հաջորդ կարևոր և ինտենսիվությամբ բարձր վախերը հանդիսանում են ծննդաբերության ընթացքից և ծննդաբերական ցավերից վախը, ընդ որում, ըստ առաջնահերթության առաջին և երկրորդ հղիության ընթացքում ծննդաբերական ցավերը զբաղեցնում են 3-րդ տեղը, իսկ ծննդաբերության ընթացքը՝ առաջին խմբում զբաղեցնում է 4-րդ (միջին ուժգնություն) և երկրորդ խմբում 6-րդ (միջին ուժգնություն) տեղը: Այս արդյունքներից կարող ենք եզրակացնել, որ առաջացնում են վախ այն իրավիճակները, որոնք առաջացնում են ցավ և դժվարություններ, բայց այն դեպքում երբ հնարավոր չէ դրանցից խուսափել:

Կատարված համեմատությունների արդյունքում կարող ենք ասել, 2 խմբերի մեջ չկան էական տարբերություններ՝ կապված վախերի ինտենսիվության հետ: Բայց մեր աշխատանքի նպատակը՝ տարբերությունների յուրահատկությունները դուրս բերելու համար առանձին առաջին և երկրորդ խմբերում կիրառել ենք նաև կոռելյացիոն վերլուծություն՝ Սպիրմանի կոռելյացիոն գործակիցը:

Խմբավորելով վախերն ըստ տեսակների՝ կարող ենք ասել, որ 2-րդ խմբում վախերի տեսակները կոռելյացիոն կապ չունեն այլ վախերի տեսակների հետ, կան կապեր իրավիճակային տագնապայնության և անձնային տագնապայնության՝ r=,773 (p=.000 նշ.), սեփական կյանքի՝ r=,601 (p=.011 նշ.) միջև: Այսինքն՝ վախերն ունեն իրենց ուրույն բովանդակությունը: Իսկ առաջին խմբում սեփական կյանքի և առողջության, պարտականությունների և հարաբերություններ վախի դրսևորման տեսակները գտնվում են կոռելյացիոն կապերի մեջ: Ինչը հնարավոր է պայմանավորված է անորոշությամբ, քանի որ առաջին հղիության ժամանակ կինը չունի բավականաչափ տեղեկատվություն, չգիտի ինչպես վարվել այս կամ այն իրավիճակում:

Այսինքն՝ հղիության ընթացքում տալով հղի կնոջ վիճակի, ֆիզիոլոգիական և հոգեբանական փոփոխությունների, միջանձնային հարաբերությունների փոփոխությունների մասին տեղեկատվություն, կարող ենք իջեցնել ընդհանուր լարվածությունը, ինչը կտա կնոջը հանգստություն և վստահություն, որն էլ իր հերթին ազդում է ծննդաբերության որակի վրա: Իսկ ծննդաբերության հաջող ընթացքը նպաստում է մայր–երեխա կայուն և ջերմ հարաբերությունների ստեղծմանը, երեխայի զարգացման ընթացքին, ինչպես նաև հետագայում հղիության և ծննդաբերության նկատմամբ դրական վերաբերմունքին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ազատյան Ն.Գ., Ավետիսյան Ք. Ս., Առաքելյան Տ. Ա, Գրիգորյան Ն. Ն, Հարությունյան Ս. Հ., Ղազարյան Գ. Հ., Մնացականյան Լ. Ռ., Վարդանյան Ն. Վ., Տեր-Ստեփանյան Ա.Հ., Բժշկական հոգեբանություն - Երևան: Երևանի Մ. Հերացու անվան պետ. բժշկ. համալս. հրատ. 2010, 238 էջ:
2. Голубева,О.Б., Анализ причин и структуры перинатального страха у первородящих женщин, Перинатальная психология и психология родительства, -М. Ред. Г.Г. Филиппова. – 2006. – №1 2007. – с. 14-21.
3. *Добряков* И.В., *Перинатальная психология. – СПб.*: *Питер*, *2010*. – 272 с
4. Кривоногова Т. С., Тренькаева Н.А. Сопровождение беременности: здоровьесберегающие и психологические аспекты: – Томск : Издательский Дом ТГУ, 2015. – 112 с.
5. Райгородский Д.Я., Психология и психоанализ беременности - Самара: Издательский Дом БАХРАХ-М, 2003. - 784 с.

Անի Գասպարյան
ԱրՊՀ, մանկավարժություն և սպորտ ֆակուլտետի «Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի 3-րդ կուրսի ուսանողուհի

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԴԱՍԻՆ ԿԻՐԱՌՎՈՂ ԴԱՍԱՎԱՆԴՄԱՆ ԵՎ ՈՒՍՈՒՄՆԱՌՈՒԹՅԱՆ ՄԻՋՈՑՆԵՐԻ ՈՒ ՊԱՐԱԳԱՆԵՐԻ ԴԵՐԸ ՈՐՊԵՍ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏՈՒԹՅԱՆ ԲԱՐՁՐԱՑՄԱՆ ՀՆԱՐ

Բանալի բառեր՝ *տեսողականացում, դրդապատճառներ, ուսուցման միջոց, պատկանում գրատախտակ, կավիճ, պատի սպիտակ գրատախտակ, ֆլիպչարտ, փինվանդ, կոդոսկոպ, պրոյեկցիոն տախտակներ:*

Հոդվածում ներկայացվում է ուսումնական գործընթացներում կարևոր տեղ հատկացվող տեսողականացման մասին: Նշվում է, որ տեսողականացման տեխնիկաների և միջոցների օգտագործումը դասագործընթացում կրճատում է բանավոր խոսքին հատկացվող ժամանակը, լրացնում է խոսքը, օգնում կողմնորոշվելու, ակտիվացնում է զեկուցումները, ավելի դյուրին է դարձնում տեղեկատվության ընկալումը և յուրացումը, նպաստում է հիշողությանը, ունկնդիրների ուշադրությունը սևեռվում է ուսումնական նյութի վրա, ակտիվացնում դրդապատճառները: Դրանց են պատկանում՝ գրատախտակն ու կավիճը, պատի սպիտակ գրատախտակը, ֆլիպչարտը, փինվանդը, կոդոսկոպը, պրոյեկցիոն տախտակները:

Ани Гаспарян

РОЛЬ СРЕДСТВ И СРЕДСТВ ОБУЧЕНИЯ, ПРИМЕНЯЕМЫХ К СОВРЕМЕННОМУ УРОКУ, КАК ВОЗМОЖНОСТЬ ПОВЫШЕНИЯ ЭФФЕКТИВНОСТИ

Ключевые слова: *Визуализация, мотивы, средство обучения, доска, мел, белая настенная доска, флипчарт, пинванд, кодоскоп, проекционные доски:*

Отмечается, что использование техники и средств визуализации в процессе обучения сокращает время, выделяемое устному слову, дополняет слово, помогает ориентироваться, активизирует доклады, облегчает восприятие и усвоение информации, способствует памяти, внимание слушателей концентрируется на учебном материале, активизирует мотивы.:

Մարդը շրջապատող միջավայրն ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն, տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ են հատկացնում **տեսողականացմանը:** Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ՝ աչքերին թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները:

Տեսողականացում ասելով մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը և ցուցադրությունը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար, տեսողականացումը պատկերազարդման և ցուցադրության մեթոդ է ու միջոց:

Պատկերազարդման հնարավորություններ են նաև մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:[1]

Տեսողականացման տեխնիկաների և միջոցների օգտագործումը՝

–կրճատում է բանավոր խոսքին հատկացվող ժամանակը,

–լրացնում է խոսքը, օգնում կողմնորոշվելու,

–ակտիվացնում է զեկուցումները,

–ավելի դյուրին է դարձնում տեղեկատվության ընկալումը և յուրացումը,

–նպաստում է հիշողությանը,

–ունկնդիրների ուշադրությունը սևեռվում է ուսումնական նյութի վրա,

–ակտիվացնում դրդապատճառները[2]:

Բայց տեսողականացման միջոցները կարող են նաև հակառակ ազդեցություն ունենալ, եթե դրանք օգտագործվեն չափից ավելի, քանի որ այդ պարագայում <<շոուն>> ավելի մեծ տեղ կգրավի, քան բուն բովանդակությունը:

Հետևաբար, միշտ պետք է մտածել հետևյալի մասին.



Տեսողականացման համար տեղեկատվական միջոցների կիրառումը հիմնական նախադրյալն է հանդիսանում :

Ավելի քան 300 տարի առաջ Յան Ամոս Կոմենսկին ուշադրություն է դարձրել կրթության բովանդակության և ուսումնական տեղեկատվական միջոցի կապի վրա: Նա պահանջում էր. <<…որպեսզի ամեն ինչը հնարավորինս տրամադրված լինի զգայարաններին, հատկապես, տեսնելուն՝ աչքին, լսելին՝ականջին, բուրողը՝ հոտին, համովը՝ համին, շոշափելին՝ շոշափելիքին…>> :

Տեսողականացումը մեծ ազդեցություն ունի ուսումնառության վրա, որի առկայության դեպքում ստեղծվում են բարենպաստ պայմաններ ընկալողունակության, հիշողության զարգացման համար, երբ լսողությունը կապակցվում է տեսողության հետ:

Տեսողականացման միջոցներ

Տեսողականացման միջոցները տեղեկատվության փոխանցման միջոցներ են, որոնք հաճախ օգտագործում է դասավանդողը: Դրանք դասավանդման գործընթացում գրավում են

[1] ***Պետրոսյան Հ.***, *Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան , 2012թ.*

[2] ***Зотов Ю. Б***. *Организация современного урока . М., 1984*

կենտրոնական տեղ և բաժանվում են `

– առարկայական , տեքստային, պատկերային, լսողատեսողական միջոցների,

– գործնական ոլորտից օրիգինալ առարկաների:

Առարկայական տեղեկատվական միջոցները հնարավորություն են տալիս ցուցադրել պատկերներ, բնագրեր: **Դրանց են պատկանում գրատախտակն ու կավիճը, պատի սպիտակ գրատախտակը, ֆլիպչարտը, փինվանդը, կոդոսկոպը, պրոյեկցիոն տախտակները:**

Գրատախտակը և կավիճը հանդիսանում են ամենաավանդական, ամենաէժան և առավել հաճախ օգտագործվող տեղեկատվության փոխանցման միջոցը:Այն այսօր էլ հեռուստատեսության և համակարգիչների պայմաններում հանդիսանում է ուսումնական գործընթացում օգտագործվող հիմնարար տեխնիկական միջոցները և դասասենյակների համար դեռևս ամենահուսալին ու ամենագործածականը: Այնուամենայնիվ, գրատախտակի կիրառմամբ լավ պլանավորված աշխատանքի ձևավորման և իրականացման գործընթացը շատ ջանքեր է պահանջում:

Գրատախտակը օգտագործվում է՝

– դասի, պարապունքի ժամանակ գիտելիքները քայլ առ քայլ զարգացնելու,

– փաստերը, հասկացությունները, սկզբունքները և գործընթացներ պատկերավոր ցույց տալու,

– տեղեկատվության զննականությունը ապահովելու,

– ուղեղային գրոհը տեսողականացնելու,

– իրադրությունը որոշակի իրավիճակներում պատկերազարդելու,

– նշումներ կատարելու, հիմնական կետերը բացատրելու,

– նկարներ և գծագրեր, մաթեմատիկական գործողություններ կատարելու,

– զննականության միջոցով առաջադրանքները, հայտարարությունները և խնդիրները ցույց տալու, ինչ-որ բան ամփոփելու,

– ուսումնառողների հետ հետադաձ կապ իրականացնելու, ուշադրությունը կենտրոնացնելու,

– քարտեզներ, լուսանկարներ և նկարներ կախելու նպատակներով:

Բայց գրատախտակն ունի նաև լուրջ թերություններ՝

– մանրամասն գրառումը դասավանդողին ստիպում է թեքվել դեպի գրատախտակը և մեջքով կանգնել դեպի ուսումնառողները,

– նկարը, տեքստը գրատախտակի վրա չի կարող պահպանվել և կրկնակի օգտագործվել,

– գրատախտակին գրելը պահանջում է լրացուցիչ ժամանակ,

– ձեռքերի կեղտոտվելը կավիճով անխուսափելի է, կավիճի օգտագործումը նաև առաջացնում է փոշի:

Բացի այդ գրատախտակը ցանկալի չէ օգտագործել՝

– շատ տեղ և ժամանակ պահանջող երկար տևողությամբ ներկայացումների ժամանակ,

– համակարգիչների վրա աշխատելիս (կավճի փոշին հանդիսանում է խան-գարող հանգամանք),

– մեծ լսարաններում ներկայացումների համար:

Ներկայումս գրատախտակը և կավիճը հաճախ փոխարինվում են պատի սպիտակ տախտակներով: Դրանք նման են դասական գրատախտակներին, բայց դրանց վրա գրում են հատուկ ֆլոմաստերներով :

Ֆլիպչարտը նման է գրատախտակին, բայց առկա են բազմաթիվ տարբերություններ, որոնց վրա դասավանդողները հաճախ ուշադրություն չեն դարձնում: Ֆլիպչարտի ամենակարևոր

առավելությունն այն է, որ թղթի բավարար քանակի առկայության դեպքում հնարավոր է անընդհատ տեքստը գրել առանց գրվածը ջնջելու: Այսպես կարելի է ամբողջովին պահպանել քննարկման ամբողջ գործընթացը և նույնիսկ մի քանի շաբաթվա ընդմիջումից հետո գործընթացը շարունակել:
Բացի այդ , հնարավոր է՝
- թղթերը փակցնել դասասենյակում, պատի կամ գրատախտակի վրա՝ մե-
կը մյուսի հետևից,
- այն տեղափոխելի է,
- ճկուն է,
- հեշտ է օգտագործել ,
- թղթերը հնարավոր է հանել և կրկին ամրացնել:

Այն խմբային աշխատանքի ամբողջական արդյունքները միաժամանակ տեսնելու, համեմատելու և պահպանելու գրեթե միակ միջոցն է:

Ֆլիպչարտը կարող է օգտագործվել՝

- խմբային քննարկումների արդյունքները պատրաստի վիճակում ունենալու և դրանք հետագա գործողությունների ժամանակ կիրառելու,
- գործընթացը ներկայացնելու, նկարագրելը շարունակելու, տեղեկատվության ներկայացումը փուլ առ փուլ պատկերազարդելու,
- հիմնական խնդիրները ընդգծելու,
- կարճ տեղեկություններ պատրաստելու,
- մտային գրոհ կազմակերպելու նպատակներով:

Բայց ֆլիպչարտն էլ ունի իր թերությունները՝

- պահանջվում է ընթեռնելի ձեռագիր, այլապես ուշադրությունից կարող է շատ վրիպել, որոշ տեղեկատվություն թողնվել առանց ընթերցելու,
- ուղղումներ անելը դժվար է,
- սխալները միշտ տեսանելի են,
- գրողը ստիպված է ունկնդիրներին մեջքով կանգնել:

Գոյություն ունեն ֆլիպչարտի վրա աշխատանքը արդյունավետ դարձնելու տասնյակ հնարքներ: Դրա համար անհրաժեշտ է.

- էջերը համարակալել, ամրացնել և շրջել,
- շրջելուց առաջ պետք է համոզվել, որ հարցեր չկան ,
- միշտ պատրաստ ունենալ մաքուր թերթեր,
- ամենակարևոր թերթերը ամրացնել պատին,
- տեղը հավասարաչափ բաժանել թվերի, բառերի և գծերի համար,
- երկար տեղեկատվությունը և նկարները պատրաստել նախօրոք,
- այն տեղավորել տեսանելի տեղում և կանգնել դեմքով դեպի ուսումնառողները,
- պահպանել օգտագործած թղթերը՝ հետագայում կիրառելու համար:

Փինվանդը խնդիրների լուծման, մշակման և խմբային քննարկումների տեսողականացման ապահովման պատճառով մեծ նշանակություն է ձեռք բերել հատկապես խորհրդակցություններում: Փինվանդի կիրառությունը պահանջում է նաև տարբեր գույնի և ձևի քարտեր, որոնք ամրացվում են քորոցներով: Կատարված աշխատանքից հետո քարտերը կարող են սոսնձվել փաթեթավորման մեծ թղթի վրա և պահպանել հետագա գործածության համար: Գրառումները քարտերի վրա կատարվում են հատուկ պայծառ գույների ֆլոմաստերների միջոցով:

Այս ձևով կարող են պատրաստել նաև պատի պլակատներ, որոնք օգտագործվում են տվյալների տեսողականացման համար:

Տեղեկատվության փոխանցման տեսողական միջոցների ձևավորումը

Տեղեկատվության փոխանցման տեսողական միջոցներ են՝ լուսանկարները և նկարները, էսքիզները, սխեմաները, պլակատները, խորհրդանշանները, դիագրամները, գծապատկերներ և պատկերազարդումները, որոնք ի լրումն տեքստերի փակցնում են պատին, գրատախտակին կամ փինվանդի վրա, փոխադրվում ֆլիպչարտի, կամ պրոյեկցիոն թափանցաթերթիկների վրա: Լուսա-նկարները կամ նկարները առավել լավ տեսողականացվում են ֆլիպչարտի կամ փինվանդի վրա, էսքիզները, նկարները. սխեմաները,մասնագիտական գրքերից օրինակները՝ գրատախտակի կամ թափանցաթերթիկի վրա:

Միշտ պետք է հիշել, որ տեղեկատվության փոխանցման միջոցների իրական տեղը միշտ սահմանափակ է, ուստի տեքստային ձևավորումը պետք է ընթանա հետևյալ կանոնների համաձայն.

- մտապահելը դյուրին դարձնելու համար պետք է տեղեկատվության փոխանցման միջոցների մեջ ներառել միայն բանավոր խոսքը լրացնող այն տեքստերը, որոնք կարող են լինել կանոններ, հուշաթերթիկներ, եզրակացություններ կամ գծապատկերների մեկնաբանություններ,
- տեքստերի ձևավորումը պետք է լինի համառոտ , պարզ, գրված հատուկ և գեղեցիկ,
- չպետք է գրել որևէ երկար տեքստ մասնագիտական գրականությունից,
- առավել ծավալով նյութերը ավելի նպատակահարմար է տրամադրել որպես բաշխվող նյութ,
- զննականության նպատակով պետք է գույները, ձևերը ձևավորման գծագրական տարրերն ընտրել տեղին:

Թվային կապերի գծագրական պատկերումն արդեն կարող է կատարվել բազմազան եղանակներով: **Մեծությունների տարբերությունը չափազանց լավ է ընկալվում դիագրամով ՝ գծերով և աղյուսակներով**: Հարաբերական մեծությունների պատկերման համար առավել հարմար է շրջանաձև դիագրամը: Երևույթների քանակական պատկերման ժամանակ որպես ձևավորման տարրեր օգտագործում են .

- որպես ցուցական, հարաբերական , կապակցող, ձևավորման տարրեր՝

գծեր,

- շարժումների և հետևանքների արտահայտման համար՝ սլաքներ,
- գծերի, շերտերի, հեծանների, սյուների արտահայտման համար՝ հատ-վածներ(քանակն և երկարությանը համապատասխան),
- շրջանների, քառակուսիների, եռանկյունիների արտահայտման համար՝ մակերեսներ(քանակն և մեծությանը համապատասխան),
- խորանարդների, կոների, բուրգերի արտահայտման համար՝ պատկերներ (նկարներ) (քանակին և ծավալներին համապատասկան),
- մանրագծերի և երանգների ընդգծման համար՝ գույներ:

Տվյալների տեսողականացման ընդհանուր սկզբունքներն են՝

- նմանություն ձևի և գույնի մեջ(շրջանակները ներշնչում են միասնություն),
- շարժումները, գործընթացները և միտումները միշտ պետք է ներկայացվեն գծագրորեն,
- գույներն ունեն ցուցման, ազդանշանի կամ զարդարման գործառնություն,

- ձևերը և դասավորվածությունը ցույց են տալիս հիերարխիան և զարգացումը,
- առանձնացումը կամ հազվադեպ ձևերը ուշադրություն են գրավում(բայց երբեմն նաև՝ շեղում),
- որոշակի տեսողական դասավորվածությունները կարող են առաջացնել հետաքրքրություն,
- խորհրդանիշները կարող են փոխարինել բարդ արտահայտություններին:

Տեսողականացման բոլոր ձևերի համար կարևոր են նաև հետևյալ սկզբունքները՝
- յուրաքանչյուր պատկեր, յուրաքանչյուր տեքստ պետք է ունենա վերնագիր,
- յուրաքանչյուր պատկերի մեջ արտահայտությունների փոքրաթիվ լինելը հեշտացնում է ըմբռնումը.
- համեմատությունները պետք է ներկայացվեն կողք կողքի,
- միանման տվյալները ներկայացվում են միանման խորհրդանիշներով և գույներով,
- պատկերի վրա երեք գույնից ավելի չպետք է օգտագործել,
- պետք է ուշադրություն դարձնել գույնի ազդանշանային գործողության վրա,
- պատկերի մեջտեղում պետք է տեղադրել ամենակարևորը,
- տեքստը և նկարը ներկայացնել հնարավոր տրամաբանական հարաբե-ությամբ,
- տպատառի չափը համաձայնեցնել տարածքի մեծության հետ:

Ուսուցման գործընթացում համակարգչային տեխնիկայի հետ մեկտեղ իրենց գործածությունն են գտել ինտերակտիվ գրատախտակները,որոնք համակարգչին միացված զգայուն լուսապաստառներ են :Համակարգչից պատկերը գրատախտակին փոխանցվում է պրոյեկտորի միջոցով: Ինտերակտիվ գրատախտակների համար հատուկ ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս աշխատել տեքստերի, նկարների, լատեսողական նյութերի, ինտերնետռեսուրսների հետ, ձեռքով կատարել նշագրումներ միանգամից բաց փաստաթղթերի վրա և պահպանել տեղեկատվությունը: Ինտերակտիվ գրատախտակն աշխատելու և ստեղծագործելու եզակի հնարավորություն է ընձեռնում, այն շատ հեշտ է գործածել, համակարգչով աշխատանքը սկսելու համար բավական է մեկ հպում գրատախտակի մակերևույթին:

Ինտերակտիվ գրատախտակները կարող են օգտագործվել ամենատարբեր նպատակներով:

1. Շնորհանդեսների, ներկայացումների, ցուցահանդեսների անցկացում,մոդելների ստեղծման նպատակով անհրաժեշտ ծրագրային ապահովում և ռեսուրսների օգտագործում՝ զուգակցված ինտերակտիվ գրատախտակի հետ: Հասկացությունների և գաղափարների ընկալման գործընթացը, ինչպես նաև յուրացման ողջ գործընթացն այս պարագայում դառնում է դյուրին, քանի որ ինտերակտիվ գրատախտակն օգնում է դասավանդողներին նոր նյութը ներկայացնել աշխույժ և հետաքրքիր:Միաժամանակ, ինտերակտիվ գրատախտակի օգտագործումը թույլ է տալիս տեղեկատվությունը ներկայացնել տարբեր մուլտիմեդիական ռեսուրսների օգնությամբ, պարզեցնել սխեմաների բացատրությունը, մեկնաբանել և մանրամասնել առավել բարդ խնդիրները:

2. Ինտերակտիվ գրատախտակները ամենատարբեր դինամիկական ռեսուրսներով՝ խթանելով ուսման շարժառիթները, պարապմունքները դարձնում են ավելի հետաքրքրաշարժ և' դասավանդողների, և' ուսումնառողների համար, մասնակիցներին ներգրավում ակտիվ գործընթացին: Ինտերակտիվ գրատախտակներով աշխատելը կարող է դասավանդողներին օգնել արժևորել ուսումնառողների գիտելիքները, ուսումնասիրվող նյութի պարզաբանման նպատակով զարգացնել բանավեճը, նպաստելով յուրացման

գործընթացին: Ղեկավարելով քննարկումը՝ դասավանդողն ուսումնական գործընթացի մասնակիցներին մղում է ոչ մեծ խմբերով աշխատանք կատարելուն, իսկ ինտերակտիվ գրատախտակը՝ իր առանձնահատկությունների շնորհիվ, տեղեկատվությունը դարձնում է ամբողջ լսարանի ուշադրության առարկան :

3. Ինտերակտիվ գրատախտակի կիրառումը կարող է լավարկել դասի պլա-նավորումը, տեմպն ու ընթացքը: Տեղքերը կամ էջերը կարելի է պատրաստել նախօրոք և կցել մյուս ռեսուրսներին, որոնք հասու կլինեն պարապմունքի ժամանակ : Ինտերակտիվ գրատախտակի վրա օբյեկտները և տեքստերը կարելի է հեշտորեն տեղաշարժել, տեքստերի, նկարների և դիագրամների համար մեկնաբանություններ հավելել, ընդգծել առավել կարևոր մասերը, ավելացնել գույներ: Ընդ որում, նկարները և գրաֆիկները կարելի է թաքցնել, իսկ հետո ցուցադրել պարապմունքի համա-պատասխան պահերին: Նախօրոք պատրաստված տեքստերը, աղյուսակները, դիգրամները, նկարները, քարտեզները, երաժշտությունը, մուլտիմեդիական տեղքերն ու ինտերնետ-ռեսուրսները պարապմունքին յուրահատուկ տեմպ են հաղորդում: Բոլոր ռեսուրսները լուսապաստառի վրա կարելի է մեկնաբանել գրչածայր-գործիքի միջոցով և, իհարկե, բոլոր գրանցումները պահպանել հետագա օգտագործման համար: Ուսումնառողների գրատախտակի վրա կատարած աշխատանքները ևս կարելի է պահպանել հաջորդ պարապունքնեին օգտագործման նպատակով:Էջերը կարելի է տեղադրել լուսապաստառի կողքին որպես նկար, որը հնարավորություն է տալիս անդրադառնալ պարապմունքի նախկին փուլին և կազմակերպել թեմայի ամենակարևոր պահերի կրկնությունը: Անցած նյութի կրկնության ժամանակ հնարավոր է բացել նախկին պարապմունքների տեղքերը: Այս մեթոդիկան նպաստում է պարապմունքներին մասնակիների ակտիվ ներգրավմանը:[1]

Ինտերակտիվ գրատախտակների ծրագրային ապահովումը հնարավորություն է տալիս հստակորեն կառուցել պարապմունքի ուրվագիծը: Նյութի ներկայացում գրառումներով հավելելու հնարավորությունը բարձրացնում է նյութի մատուցման որակը:

Օգտագործելով ինտերակտիվ գրատախտակի հնարավորությունները՝ դասավանդողը կարող է տարբեր ձևերով դասակարգել նյութը. տեղաշարժել օբյեկտները, աշխատել գույներով՝ միաժամանակ ուսումնառողներին ներգրավելով ակտիվ գործընթացի մեջ: Այնուհետև, նրանք կարող են ինքնուրույն աշխատել ոչ մեծ խմբերով:

Երբեմն կարելի է մասնակիցների ուշադրությունը գրատախտակին հրավիրել կրկին, որպեսզի նրանք հաղորդակցվեն և միչև աշխատանքը շարունակելը քննարկեն իրենց մտքերը:Բայց կարևոր է գիտակցել նաև, որ գրատախտակով աշխատելու այս արդյունավետությունը մեծապես կախված է դասավանդողից, ինչպես նաև նրանից ,թե ինչպես է նա կիրառվում դրա այս կամ այն հնարավորությունը:

Հետազոտությունները ցույց են տալիս, որ ինտերակտիվ գրատախտակի օգնությամբ ուսուցումն առավել արդյունավետ է, քան միայն համակարգչի ու պրոյեկտորի օգնությամբ ուսուցումը, և ունի մի շարք առավելություններ, որոնց շնորհիվ հնարավոր է դառնում .

– նյութի ավելի հստակ , արդյունավետ և դինամիկ մատուցում՝ գրատախտակի վրա պատկերների , վեբ-կայքերի, այլ ռեսուրսների վրա ցանկացած հավելվածներ նշագրելու և նկարելու, դրանց պահպանման և տպագրելու հնարավորությունների կիրառման շնորհիվ,

[1] ***Պետրոսյան Հ.,*** *Նշվ.աշխ.*

– մասնակիցների ուսման դրդապատճառների զարգացում՝ ռեսուրսների բազմաբնության , հետաքրքրաշարժության և դինամիկ գործածման միջոցով,

– մասնակցություն կոլեկտիվ աշխատանքում, անձնական և սոցիալական հմտությունների զարգացման մեծ հնարավորությունների ընձեռում,

– ուսուցման տարբեր ոճերի կիրառում,

– պարապմունքի բարձր տեմպի ապահովում,

– ուսումնասիրված նյութը կրկնելու ժամանակ ուսումնական հաստատության ցանցում տեղակայված օգտագործած տեղքերի պահպանելու հնարավորություն,

– պահպանված տեղքերի միջոցով նյութի յուրացման մակարդակի ստուգման և արժևորման գործընթացի պարզեցում,

– դասավանդողների մշակված նյութերը բազմիցս օգտագործելու և իրար հետ դրանց փոխանակման ապահովում ,

– դասավանդողների մասնագիտական գործունեության ,մասնագիտական աճի, ուսուցման նոր մոտեցումների որոնման խթանում:

Ուսուցման մեջ համակարգչային տեխնոլոգիաների բոլոր հնարավորությունների ամբողջացումը խթանում է մասնակիցների ճանաչողական գործունեությունը, ստեղծագործական նախաձեռնությունը և ուսուցման նկատմամբ ակտիվ դիրքորոշումը:

ՀՏԴ 376(159.96) Մանկավարժություն և հոգեբանություն

Ջավահիր Հակոբջանյան
Վանաձորի պետական համալսարան
«Սոցիալական մանկավարժություն» մասնագիտության 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ մ.գ.թ., ասիստենտ Ն.Ա.Ներկարարյան

ԴԵՎԻԱՆՏ ՎԱՐՔԱԳԾՈՎ ԴԵՌԱՀԱՍՆԵՐԻ ԲՆՈՒԹԱԳԻՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՀԵՏ ԻՐԱԿԱՆԱՑՎՈՂ ՀՈԳԵԲԱՆԱՄԱՆԿԱՎԱՐԺԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր՝ *դնիանտ վարք, դեռահաս, նյարդային ռեակցիա, կանխարգելիչ աշխատանքներ*

Դեռահասների դնիանտ վարքը համալիր և բարդ խնդիր է։Այն կարող է ունենալ ինչպես ներքին պատճառներ՝ կապված դեռահասի տարիքային առանձնահատկությունների հետ, այնպես էլ արտաքին՝ սոցիալ-քաղաքական կյանքը, տեխնոլոգիաների բուռն զարգացումը, գլոբալիզացիան և այլն։Հետազոտական աշխատանքի արդյունքները ցույց տվեցին, որ դեռահասի մոտ դնիանտ վարքը պայմանավորված է ընտանեկան գործոնով և միջավայրի անբարենպաստ ազդեցությամբ։Նման պայմաններում հոգեբանի աշխատանքը պետք է հիմնված լինի ինչպես սիմպտոմատիկ մոտեցման, այնպես էլ շեղումների որոշակի ախտանիշների վրա։

Ինչքան կարևոր է նման վարքի շտկումը, կրկնակի կարևոր է ճիշտ ժամանակին և ճիշտ ձևով կանխարգելելը։

Джавахир Акопджанян

ХАРАКТЕРИСТИКА ПОДРОСТКОВ С ДЕВИАНТНЫМ ПОВЕДЕНИЕМ И СОДЕРЖАНИЕ В НИХ ПСИХОЛОГО-ПЕДАГОГИЧЕСКОЙ ДЕЯТЕЛЬНОСТИ

Ключевые слова: *девиантное поведение, подросток, нервная реакция, профилактическая работа*

Девиантное поведение подростков представляет собой комплексную и сложную проблему. Оно может иметь как внутренние причины, связанные с характеристиками подросткового возраста, так и социально-политическую жизнь, развитие технологий, глобализацию и многое другое.

Результаты исследований показали, что девиантное повединие подростков связано с семейными факторами и неблагаприятным воздействием окружающей среды. В таких условиях работа психолога должна основываться как на симптоматическом подходе, так и на определёных симптомах отклонения.

Насколько важно исправлять такое поведение, вдвойне важнее предотвратить его в нужное время и правильным способом.

Հասարակական-տնտեսական կացութաձևի փոփոխությունը և դրանով պայմանավորված՝ տնտեսական նոր հարաբերություններին անցնելը մեր իրականության մեջ առաջացրին առաջնային բազմաթիվ կենսական, տնտեսական-սոցիալական, կրթական

և այլաբնույթ դժվարություններ:

Կյանքի նոր պայմաններին և սոցիալական պահանջներին մարդու հարմարումը անպայմանորեն ուղեկցվում է տարաբնույթ բախումներով, հակադրումներով, հոգեկան և կենսաֆիզիկական հարմարման դժվարություններով, ներանձնային փոփոխություններով: Ժամանակակից կյանքի ինտենսիվ և լարված պայմաններում մարդը հաճախ ենթարկվում է միջավայրի բացասական ազդեցություններին: Միջավայրի անբարենպաստ ազդեցություններին առավել շատ ենթակա են անչափահասները: Այդ առումով հատկապես դեռահասության տարիքն առավել խոցելի է [1.137]: Դեռահասի տարիքային սահմանների շուրջ մասնագիտական բուռն բանավեճեր են ծավալվել, սակայն այսօր մասնագետների մեծ մասը հակված է այս շրջանը վերագրել 12-16 տարեկանին: Դեռահասի պարագայում անհրաժեշտ է հիշել, որ ֆիզիկական տվյալներով չափահասից չտարբերվող, սակայն հոգեբանորեն ավելի ցածր զարգացման մակարդակի վրա գտնվող անձի մասին է խոսքը: Սա պայմանավորված է այն հանգամանքով, որ սեռական հասունության էտապում մարդու ֆիզիկական զարգացումն աննախընթաց արագ աճ է արձանագրում, իսկ հոգեբանական առումով նրա զարգացումը պահանջում է ավելի շատ ժամանակ: Այս շրջանում անչափահասն սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագ հարազատների ազդեցության ոլորտից, սկսում է հաճախ նրանց հակառակվել, նկատել նրանց մեջ բացասական գծեր, որոնք մինչ այդ չէր նկատում, ձգտում է անկախության, ինքնուրույնության և ինքնահաստատման, մյուս կողմից նրա համար շատ ավելի արժեքավոր է դառնում իր տարեկիցների կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունված նորմերին և հաստատվել իր տարեկիցների միջավայրում:

Դեռահասության տարիքում կտրուկ մեծանում է հետաքրքրությունը սեփական արտաքինի նկատմամբ, ձևավորվում է նոր ֆիզիկական «ես»: Դրա հետևանքով էլ երեխայի կողմից շատ հիվանդագին են ապրվում արտաքինի հետ կապված բոլոր թերությունները՝ մտացածին, թե իրական: Մարմնի մասերի անհամաչափությունը, դիմագծերի անճշգրտությունը, մանկական մաքրությունը կորցնող մաշկը, ավելորդ քաշը կամ նիհարությունը և այլն, վրդովեցնում են դեռահասին, իսկ երբեմն էլ հանգեցնում թերարժեքության զգացման, ինքնամփոփության, նույնիսկ նևրոզի: Հայտնի են նյարդային անորեքսիայի դեպքեր: Այս հիվանդությամբ տառապող դեռահասներին հարկադրաբար կերակրում են և բուժում հիվանդանոցներում:

Դեռահասի արտաքին տեսքը հաճախ դառնում է անընդհատ թյուրիմացությունների և կոնֆլիկտների աղբյուր ընտանիքում: Ծնողներին դուր չի գալիս ոչ երիտասարդական նորաձևությունը, ոչ իրերի գները: Իսկ իրեն եզակի համարող դեռահասը միևնույն ժամանակ ձգտում է ոչնչով չտարբերվել հասակակիցներից: Խմբի հետ ձուլվելու, ոչնչով չառանձնանալու ցանկությունը, որը պատասխանում է անվտանգության պահանջմունքին, հոգեբանները դիտարկում են որպես հոգեբանական պաշտպանության մեխանիզմ՝ անվանելով սոցիալական միմիկրիա:

Դեռահասն օժտված է ինքնուրույնության և հասակակիցների հետ շփման ուժեղ, երբեմն հիպերտրոֆ պահանջմունքներով: Դեռահասության ինքնուրույնությունն արտահայտվում է հիմնականում մեծահասկաներից էմանսիպացիայի, նրանց հոգատարությունից, հսկողությունից ազատվելու և բազմազան հետաքրքրությունների մեջ՝ ոչ ուսումնական զբաղմունքներում: Այս պահանջմունքներն վառ ձևով արտահայտվում են դեռահասի վարքում: [2.151] Նման և այլ գործոններով պայմանվորված՝ դեռահասի մոտ ձևավորվում է շեղվող կամ դևիանտ վարքը:

Շեղվող կամ դևիանտ վարքը հասարակայնորեն ընդունված նորմերից շեղվող արարքների համակարգ է:Այն բաժանվում է 2 խմբի՝

1. վարք, որը շեղվում է հոգեկան առողջության նորմերից և ենթադրում է ակնհայտ կամ գաղտնի հոգեպաթոլոգիա,

2.հակահասարարակական վարք, որը խախտում է սոցիալական, մշակութային, և իրավական նորմերը: Երբ այսպիսի արարքները համեմատաբար չնչին են, դրանք կոչվում են *իրավախախտումներ* իսկ երբ ավելի լուրջ բնույթ են կրում և պատժվում են օրենքով, կոչվում են *հանցագործություններ*:

Ամերիկացի գիտնական Հովարդ Կեպլանը գտնում է, որ ուղղակի կապ կա դևիանտ վարքագծի և ցածր ինքնահարգանքի միջև: Քանի որ յուրաքանչյուր մարդ ձգտում է ես-ի դրական կերպարի, ապա ցածր ինքնահարգանքը գիտակցվում է որպես տհաճ վիճակ, իսկ ինքնաընկալումը համադրվում է խաթարող հուզապրումներից ազատագրմանը:Սա մղում է դեռահասին վարվելու այնպես, որ վերանա ինքնաոչնչացման սուբյեկտիվ հավանակությունը:

Այն մարդիկ, ովքեր ավելի շատ են զգում այդ իրավիճակը փոխելու անհրաժեշտությունը և ամբողջովին ընդունում են իրենց տեսակը, նրանք ավելի շատ են զոջում: Ըստ Հ. Կեպլանի՝ ցածր ինքնահարգաքը կապված է հանցագործ խմբերին հարելու, իրավախախտումների կատարման, ագրեսիվ և սուիցիդ վարքի, զանազան հոգեկան խանգարումների հետ: Ինչո՞վ է սա պայմանավորված : Գիտական գրականության մեջ նշվում է 4 վարկած.

1. Դևիանտ վարքը նպաստում է ինքնահարգանքի իջեցմանը, քանի որ այն ունեցող անձը ակամա յուրացնում և բաժանում է հասարակության բացասական վերաբերմունքն իր արարքների նկատմամբ, դրանով հանդերձ նաև իր:
2. Ցածր ինքնագնահատականը նպաստում է հականորմատիվային վարքի աճին. մասնակցելով հակահասարական խմբերի գործողություններին՝ երեխան փորձում է դրանով բարձրացնել հոգեբանական կարգավիճակը հասակակիցների շրջանում, գտնել ինքնահաստատման միջոցներ, որոնք նախկինում չուներ տանը և դպրոցում:
3. Ցածր ինքնահարգանքի դեպքում դևիանտ վարքագիծը կարող է նպաստել ինքնահարգանքի բարձրացմանը:
4. Բացի դելիկվենտությունից՝ ինքնահարգանքի վրա կարևոր ազդեցություն են գործում վարքի այլ ձևեր :

Ուսումնասիրվող նյութի վերաբերյալ հետազոտությունները անց են կացվել Սպիտակ քաղաքի «Տուր ինձ ժպիտ» հասարակական, կրթական կազմակերպության 5 դեռահասների և Արևաշողի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանի 15 աշակերտների հետ:

Հետազոտությունն իրականացվել է դիտման, զրույցի մեթոդներով և անձնավորության հատկությունների շեշտվածության և նյարդահոգեկան անկայունության մեթոդիկայով [3. էջ133]:

Դիտումն իրականացվել է Արևաշողի միջնակարգ դպրոցի 9-րդ դասարանում, գրականության դասի ժամանակ և «Տուր ինձ ժպիտ» կրթական հասարակական կազմակերպությունում «Էթիկական նորմերի» ուսուցման ժամանակ:Դիտման ընթացքում երեխաների դրսևորած վարքագիծը՝ դասի նկատմամբ անուշադրություն, ավելորդ զբաղվածություն, ոչ ճիշտ կեցվածք, անհարգալից վերաբերմունքը ուսուցչի նկատմամբ թույլ տվեց անցել հետազոտման հաջորդ քայլին:

Դիտումից հետո անցկացվեց անձնավորության հատկությունների շեշտվածության և

նյարդահոգեկան անկայունության մեթոդիկան: Մեթոդիկայի նպատակն էր բացահայտել դեռահասների հատկությունների շեշտվածությունը և նյարդա-հոգեկան անկայունության մակարդակը:Մեթոդիկան իրենից ներկայացնում է 164 հարցից բաղկացած հարցաշար, որոնց դիմաց պետք է դրվեր «+» կամ «-» նշանը (հավելված 1) :

Արդյունքնում բացահայտվեցին(Արևաշողի միջնակարգ դպրոց) դեռահասներ որոնց բնորոշ էր հիստերոիդ տիպը-40%, մեծամասամբ աղջիկների մոտ, բռնկվող տիպը-30%, էքստրավերսիա-ինտրավերսիան-15%, հոգեասթենիկ տիպը -10% և շիզոիդ տիպը-5%:

Իսկ «Տուր ինձ ժպիտ» հասարակական կազմակերպում գերիշխող էր էքստրավերսիա-ինտրովերսիան՝ 80% և բռնկվող տիպը՝ 20%:

Ըստ նյարդահոգեկան անկայունության հարցաթերթիկի, որի մեջ ներառված էին նաև դնիանտ վարքին բնորոշ հատկանիշներ, արդյունքները հետևյալն են.

Աղյուսակ 1



Աղյուսակ 2



Հատկանշական է այն փաստը, որ բարձր միավորներ հավաքած դեռահասը ընդգրկված էր ներառված երեխաների ցանկում, իսկ ամենացածր միավորներ հավաքած դեռահասը մանկավարժի ընտանիքից էր: Այս ամենով կարելի է ենթադրել, որ շեղվող վարքի չառաջացման գործում մեծ նշանակություն ունի ընտանիքը:

Զրույցը անց է կացվել ՀՀ ոստիկանության Սպիտակ քաղաքի վարչության անչափահասների գործերով բաժանմունքի քննիչ լեյտենանտ Արգամ Արղումանյանի և հոգեբան Արծվի Հարությունյանի հետ, ովքեր էլ առաջարկեցին մի շարք կանխարգելիչ միջոցառումներ՝ նման վարքագիծը շրջանցելու համար:



Քննիչը իր խոսքերում նշեց, որ տարեցտարի ՀՀ-ում, համեմատած մյուս եվրոպական երկրների հետ ավելանում է նման վարք ցուցաբերող դեռահասների թիվը, որը մեզանում շատ լուրջ և պատասխանատու խնդիր է:

2017թ-ի տվյալներով արդյունքը հետևյալն է՝

Նման վարքի կանխման համար քննիչը առաջարկում և միաժամանակ հորդորում է, որպեսզի հաճախակի կազմակերպվեն խորհրդատվական միջոցառումներ՝ ծնողներին իրազեկելու դեռահասի տարիքային առանձնահատկությունների և բացասական վարքի հնարավոր հետևանքների մասին:

Հոգեբան Արծվի Հարությունյանը դեռահասների դևիանտ վարքի վերաբերյալ նշեց, որ դեռահասության տարիքում շեղվող վարքի դրսևորումը ճակատագրական նշանակություն է ունենում անձի հետագա կյանքի վրա:Այդ իսկ պատճառով շեղվող վարքի շտկման համար

առաջարկում է կոռեկցիոն մեթոդների կիրառում։Շատ կարևոր է նման պարագայում անհատական և խմբային թերապիաների կիրառումը։Իսկ որպես կանխարգելիչ միջոց բոլոր օղակներում, որտեղ ներառված է դեռահասը, անհրաժեշտ է նախազգուշացնող և ինֆորմացիոն հեռուստահաղորդումների և գովազդների ցուցադրում։

Աշխարհում գոյություն ունեցող բոլոր միջոցները, որոնց միջոցով հնարավոր է փոքրացնել դևիանտ վարքագծի մասշտաբները երեխաների և դեռահասների շրջանում հնարավոր է բաժանել 2 ընդհանուր խմբի.

1. ընդհանուր կանխարգելիչ ստրատեգիաներ, որոնք թելադրում են ընդհանուր մեխանիզմներ, որոնց միջոցով հնարավոր է կանխարգելել դևիանտ վարքագծի տարածումը,

2. դիֆերենցիալ ստրատեգիաներ, որոնք ուղղված են դեռահասների կոնկրետ խմբերին և դևիանտ վարքագծի որոշակի ձևերի կանխարգելմանը։

Ընդհանուր պրոֆիլակտիկան առաջարկում է բարեհարմար սոցիալ-տնտեսական, սոցիալ-մշակութային, սոցիալ-մանկավարժական պայմանների ստեղծմանը, որը կնպաստի.

ա) կրթական հաստատություններում դաստիարակչական գործառույթների լիարժեք իրականացմանը,երեխաների պոզիտիվ հետաքրքրությունների և կարողությունների զարգացմանը, արտադասարանային ժամերին նրանց զբաղվածության ապահովմանը։

բ)իսկ հատուկ պրոֆիլակտիկան ներառում է վերականգնողական գործողություններ երեխաների ռիսկի խմբերի հետ հարաբերություններում, օգնություն անչափահաս իրավախախտներին սոցիալ-իրավական, հոգեբանաբժշկական, մանկավարժական հարցերում, ինչպես նաև ռիսկային իրավիճակներում գտնվող ընտանիքներին աջակցության ցուցաբերում [5;417] ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Արզումանյան Ա.Անձի սոցիալական ախտահարման հոգեբանական նախադրյալները; Երևան 2007թ. 216 էջ
2. Кулагина И.Ю., Колюцкий В.Н.Возрастная психология: Полный жизненный цикл развития человека. Учебное пособие для студентов высших учебных заведений. — М.: ТЦ «Сфера», 2001.-464с.
3. Кон И.С. Психология ранней юности.Просвещение, Москва 1989г. 256с.
4. Մկրտչյան Ս., Սարգսյան Վ., Արզումանյան Ա. Ս.,Կիրառական հոգեբանության պրակտիկում; Երևան, 2002թ. 392 էջ։
5. Ավագիմյան Ռ.,Ավագիմյան Հ., Դևիանտ և նորմալ վարքի համեմատական վերլուծությունը, ՎՊՄԻ-ի գիտ. նյութերի ժողովածու. Վանաձոր 2005թ. 560 էջ։

Աննա Հայրումյան
ԱրՊՀ մանկավարժություն և սպորտ, ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
Ղեկավար՝Է. Զ. Բաղդասարյան (մ.գ.թ.,դոցենտ)

ՈՒՍՈՒՑՄԱՆ ԱԿՏԻՎ ՄԵԹՈԴՆԵՐ

Բանալի բառեր *– ակտիվ ուսուցում, ակտիվ մեթոդներ, գիտելիքներ, հմտություններ, խմբային ուսուցում, պասիվ ուսուցում, ճանաչողական գործընթացների զարգացում, համագործակցություն, վարժություններ, ուսումնական գործունեություն.*

Ակտիվ ուսուցման մեթոդները այնպիսի մեթոդների համակարգ են, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռքբերման՝ ակտիվ ճանաչողական գործունեության գործ ընթաց է տեղի ունենում: ՈւԱՄ-ենը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման վրա:

Анна Айрумяан

АКТИВНЫЕ МЕТОДЫ ОБУЧЕНИЯ

Ключевые слова: *активное обучение, активные методы, знания, навыки, групповое обучение, пассивное обучение, развитие ознакомительной деятельности, сотрудничество, упражнения, учебная деятельность.*

В статье активные методы обучения предполагают использование системы методов, в которых учитель не дает готовых знаний, а учащиеся приобретают самостоятельные знания во время активной ознакомительной деятельности. Методы активного обучения основаны на осуществлении практической деятельности, на творческом характере игровой деятельности и обучения, интерактивности, общении, диалоге, использовании знаний и опыта учащихся и вовлечении всех чувств восприятия в командную работу.

Ակտիվ ուսուցումը ենթադրում է այնպիսի մեթոդների համակարգի կիրառում, որը ոչ թե նախատեսում է ուսուցչի կողմից պատրաստի գիտելիքի մատուցում, մտապահում և վերարտադրություն, այլ ուսուցման ակտիվ ճանաչողական և պրակտիկ գործունեության ընթացքում գիտելիքների և հմտությունների ինքնուրույն ձեռքբերում:

Ուսուցման ճանաչողական գործընթացr ակտիվացնելու համար կիրառվում են ուսուցման ավանդական մեթոդները՝ օգտագործելով այնպիսի հնարներ , ինչպիսիք են՝ պրոբլեմային իրավիճակի ստեղծումը, հարցադրումը՝ ներառելով պրակտիկ վարժություններ, խնդիրներ: Իհարկե, ակտիվ մեթոդների կիրառումը ուղղված է առաջնային գիտելիքի ձեռքբերմանը, մտածողության զարգացմանը, հետաքրքրությունների, հմտությունների, կարողությունների ձևավորմանը, սակայն պետք է հաշվի առնել, որ այդ գործընթացը բավականին ժամանակ է պահանջում, և այդ

պատճառով անհնար է անցկացնել ողջ ուսուցումը միայն ակտիվ մեթոդներով: Դրանց զուգահեռ կիրառվում են նաև ավանդական մեթոդներ, ինչպիսիք են՝ պատմելը, բացատրելը, դասախոսությունը:

Ակտիվ մեթոդները պետք է կիրառվեն ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողների մտածողությունը և ճանաչողական ակտիվությունը: Բայց կարևոր է նաև նշել, որ ակտիվ մեթոդների մեծամասնությունը բազմաֆունկցիոնալ նշանակություն ունեն ուսուցման գործընթացում: Օրինակ, կոնկրետ իրավիճակների վերլուծությունը կարող է ունենալ ուսուցման նպատակներ.

- Համախմբել դասի ընթացքում ձեռք բերված նոր գիտելիքները.
- Կատարելագործել արդեն ձեռք բերած մասնագիտական հմուտությունները.

Ակտիվ ուսուցման մեթոդները ենթադրում են օգտագործել այնպիսի մեթոդների համակարգ, որոնց ժամանակ ուսուցիչը չի մատուցում պատրաստի գիտելիքներ, այլ աշակերտների կողմից գիտելիքի ինքնուրույն ձեռք բերում ակտիվ ճանաչողական գործունեության ընթացքում:

Լ.Ս.Վիգոտսկին ձևակերպել է օրենք, որտեղ ասվում է, որ ուսուցմանը հետևում է զարգացումը, իսկ անձը զարգանում է գործունեության մեջ: Ակտիվ մեթոդների հիմքում ընկած է երկխոսությունը, ինչպես ուսուցչի և սովորողների միջև, այնպես էլ իրենց՝ սովորողների միջև: Երկխոսության ընթացքում զարգանում են հաղորդակցման հմտությունները, խնդիրները միասին լուծելու կարողությունները, և ամենակարևորը զարգանում է սովորողների խոսքը: Ակտիվ ուսուցման մեթոդների կիրառման նպատակն է սովորողներին ներգրավել ինքնուրույն իմացական գործունեության մեջ, ստեղծել անձնական շահագրգռվածություն ցանկացած ճանաչողական խնդիրներ լուծելու համար, սովորեցնել կիրառել սովորողների կողմից ձեռք բերված գիտելիքները: Ակտիվ մեթոդների նպատակն այն է, որ գիտելիքների և հմտությունների ձեռքբերման գործընթացում ընդգրկվեն բոլոր հոգեկան գործընթացները (խոսքը, հիշողությունը, երևակայություն և այլն): Ակտիվ մեթոդները զուգակցվում են իլյուստրատիվ մեթոդների հետ, կատարվում են մեխանիզմների, մոդելների, գծագրերի, ինչպես նաև ֆիլմերի, սլայդների, հետաքրքիր նյութերի ցուցադրություններ:

Մարդը շրջապատող միջավայրը ընկալում է իր 5 զգայարաններով: Սակայն տեղեկատվության ընկալման գլխավոր դերը կատարում են աչքերը: Մարդու կարողությունները չափազանց սահմանափակվում են այդ զգայարանի բացակայության դեպքում: Այդ պատճառով էլ ուսումնական գործընթացներում կարևոր տեղ է հատկացվում տեսողականացմանը: Տեղեկատվությունը և ուսումնական բովանդակությունը միշտ պետք է ներկայացվեն ընկալման տեսողական ծավալների հաշվառմամբ՝ աչքերին թողնելով առավել էական առարկաներն ու երևույթները: Տեսողականացման տակ մենք հասկանում ենք տեղեկատվության կամ ուսումնական բովանդակության պատկերազարդումը ակներև պատկերների միջոցով: Հետևաբար, տեսողականացումը պատկերազարդման մեթոդ է, ինչպես նաև միջոց: Պատկերազարդման այլ հնարավորություններ են՝ մոդելների ներկայացումը, գործընթացի ցուցադրումը, առարկաների գործածումը:

Ցուցադրությունը (դեմոնստրացիա) ուսումնառողներին՝ երևույթներին, գործընթացներին, օբյեկտներին բնական վիճակում զննական-զգայական ձևով ծանոթացնելն է: Պատկերազարդումը (իլյուստրացիա) ենթադրում է առարկաների, երևույթների ցուցադրումն ու ընկալումը դրանց սիմվոլիկ պատկերներով: Այս մեթոդի

անվանման հիմքը անգլ. action- *փոխազդեցություն* բառն է: Սկզբնական շրջանում այսպես էր անվանվում ուսումնական պարապմունքների մի որոշակի տարբերակ, որն աշակերտներին միմյանց հետ հաղորդակցվելու, ուսումնասիրվող հարցը համատեղ քննարկելու, բանավեճային իրադրություններում ակտիվ մասնակցելու և տվյալ հարցի վերաբերյալ սեփական պատկերացումները ձևավորելու բարենպաստ հնարավորություններ էր տալիս: Հետագայում ավելի տարածվեց <<ինտերակտիվ մեթոդներ>> բառակապակցությունը, որը ներառում էր վերոհիշյալ հնարավորություններով դրսևորվող ուսումնական պարապմունքների կազմակերպման մի շարք համանման տարբերակներ:

Իհարկե, ցանկացած սոցիալական գործընթաց մարդկանց փոխազդեցությով է: Մասնավորապես՝ ուսուցումը նպատակաուղղված և հատուկ կերպով կազմակերպված փոխազդեցություն է: Սակայն ուսուցման գործընթացի բնույթը պայմանավորվում է այդ փոխազդեցության կառուցվածքով, ձևերով ու բովանդակությամբ: *Դաս-դասարանային* համակարգի ուսուցման գորընթացի կառուցվածքային հիմքում դրված է փոխազդեցության *ուսուցիչ – աշակերտական խումբ ձևը*: Սա է պատճառը, որ ուսումնական պարապմունքները կազմակերպվում են ընդհանուր ճակատով, այսինքն՝ աշխատանքի յուրաքանչյուր պահին բոլոր աշակերտները զբաղված են միևնույն խնդրով, աշխատում են միևնուն ձևով, տվյալ խնդրի կատարման համար բոլորին հատկացվում է միևնույն ժամաքանակը: Նման տեսակի ուսումնական պարապմունքները մենք անվանում ենք *խմբային*: Խմբային պարապմունքների բավական լուրջ պրոբլեմներից մեկն այն է, որ ուսումնական խմբի անդամների մեծ մասը պասիվ լսողի դերում է հայտնվում: Սրա հաղթահարման ուղիներից մեկն աշակերտների միջև արդյունավետ փոխազդեցության կազմակերպումն է, ինչն էլ հենց հանդիսանում է ինտերակտիվ մեթոդի հիմնական գաղափարը: Սակայն խմբային ուսուցման պայմաններում աշակերտների միջև փոխազդեցության կազմակերպելու հնարավորությունները սահմանափակ են: Այստեղ հիմնականում օգտագործվում են ենթախմբային կամ համախմբային քննարկումների տարբեր հնարքներ ու մեթոդներ, որոնք բավական արդյունավետ են կարծիքների ձևավորման, փոխանակման, ընդհանուր մոտեցումների մշակման համար: Եթե երեխայի գործունեության առաջնային և ցանկալի ձևը համարվում է խաղը, ապա ուսուցման կազմակերպման համար պետք է օգտագործեն գործունեության այս ձևը՝ համատեղելով խաղը և ուսումնական գործընթացը, ավելի ճիշտ, օգտագործել խաղային գործունեությունը կրթական նպատակներին հասնելու համար: Այս դեպքում խաղի մոտիվացիոն ներուժը կուղղվի ուսումնական ծրագրի ավելի արդյունավետ իրագործմանը: Բարձր դրական մոտիվացիան կարող է լրացնող գործոն հանդիսանալ սովորողների ոչ բավարար բարձր ունակությունների ժամանակ, բայց հակառակ ուղղությամբ այդ սկզբունքը չի աշխատում՝ ոչ մի կարողություն չի կարող փոխհատուցել մոտիվացիայի բացակայությունը, և ապահովել ուսուցման էական առաջընթացը: Բնական խաղային միջավայրում, որտեղ չկա պարտադրանք, և կա հնարավորություն յուրաքանչյուր երեխայի համար գտնել իր տեղը, ունենալ նախաձեռնություն և անկախություն, ազատ իրականացնելու իրենց կարողությունները և կրթական կարիքները, հանդիսանում է ուսումնական նպատակներին հասնելու օպտիմալ տարբերակ: Եվ կրթական գործընթացում ուսուցման ակտիվ մեթոդների ներառումը թույլ է տալիս ստեղծել այդպիսի միջավայր ինչպես դասարանում, այնպես էլ արտադպրոցական միջոցառումների ժամանակ:

Կան ուսուցման ակտիվ մեթոդների տարբեր դասակարգումներ: Սա

պայմանավորված է նրանով, որ դեռ չկա ակտիվ մեթոդների համընդհանուր ընդունված սահմանում: Այսպիսով, երբեմն ԱՈՒՄ հասկացությունը ընդարձակում են՝ դրանց թվին դասելով ուսուցման ժամանակակից այնպիսի ձևեր, ինչպիսիք են՝ ինտերակտիվ սեմինարը, թրենինգները, պրոբլեմային ուսուցումը, ուսուցում համագործակցությամբ, ուսուցողական խաղեր և այլն: Կոնկրետացնելով, դրանք ամբողջական կրթական միջոցառման կամ էլ առարկայական ցիկլի կազմակերպման ձևեր են, չնայած, իհարկե, այդ ուսուցման ձևերի սկզբունքները կարող են օգտագործվել դասի առանձին մասերը անցկացնելու համար:

Ակտիվ ուսուցման մեթոդները նպաստում են ուսանողների ճանաչողական գործունեությունը: Կառուցված են հիմնականում երկխոսության վրա, որը ենթադրում է մտքերի ազատ փոխանակում կոնկրետ խնդրի լուծման ուղիների վերաբերյալ: ԱՈՒՄ-ը բնութագրվում է սովորողների ակտիվության բարձր մակարդակով: Տարբեր մեթոդներով ուսուցման կրթական – արտադրական արդյունավետ գործունեության ակտիվացման հնարավորությունները բազմազան են, դա կախված է համապատասխան մեթոդի բնույթից ու բովանդակությունից, կիրառման ձևից և ուսուցչի հմտությունից: ԱՈՒՄ-ը մեթոդներ են, որոնք մատուցվող կրթական նյութերի յուրացման գործընթացում ապահովում են ուսանողների ակտիվությունը, մտածական և պրակտիկ գործունեության բազմազանությունը: ՈւԱՄ-ը հիմնված են պրակտիկ գործողությունների իրականացման, խաղային գործունեության և ուսուցման ստեղծագործական բնույթի, ինտերակտիվության, հաղորդակցման, երկխոսության, սովորողների գիտելիքների և փորձի օգտագործման, խմբային աշխատանքի, գործընթացում բոլոր զգայարանների ներգրավման, շարժման և ռեֆլեքսիայի վրա: ՈւԱՄ-ի կիրառմամբ ուսուցման գորընթացի արդյունավետությունը և արդյունքները պայմանավորված են նրանով, որ մեթոդների ստեղծումը հիմնվում է լուրջ հոգեբանական և մեթոդաբանական գիտելիքի վրա: Ակտիվ մեթոդները ապահովում են կրթական խնդիրների լուծումը տարբեր տեսանկյուններից.

- ուսումնական դրական խթանի ձևավորում.
- սովորողների ճանաչողական ակտիվության բարձրացում.
- կրթական գործընթացի սովորողների ակտիվ ներգրավում.
- ինքնագործունեության խթանում.
- ճանաչողական գործընթացների զարգացում-խոսք, հիշողություն, մտածողություն.
- ուսումնական նյութի առավելագույն մասի արդյունավետ յուրացում.
- ստեղծագործական մտածելակերպի զարգացում.
- սովորողի անհատական հաղորդակցական – զգայական ոլորտի զարգացում.
- սովորողի անհատական – յուրահատուկ հնարավորությունների բացահայտում և զարգացում.
- ինքնուրույն աշխատանքի համար հմտությունների զարգացում:

Ակտիվ ուսուցումը ուսուցիչների և աշակերտների միջև փոխգործակցություն է, որտեղ ուսուցիչները և աշակերտները շփվում են միմյանց հետ դասի ժամանակ, և սովորողները այլևս պասիվ ունկնդիրներ չեն, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ մեթոդի ժամանակ դասի հիմնական գործող անձը ուսուցիչն էր, ապա այստեղ *ուսուցիչ-աշակերտ* փոխազդեցությունը հավասար մակարդակի վրա են՝ սուբյեկտ սուբյեկտային

փոխհարաբերություններ: Պասիվ ուսուցումը ենթադրում է ուսուցում ավտորիտար ոճով, իսկ ակտիվ ուսուցումը ժողովրդավարական ոճով:

Ուսումնական ակտիվ գործունեություն ծավալելու կարողության առաջատար դերը տարրական կրթության ոլորտում

Ուսումնական համագործակցությունը ուսուցչից պահանջում է ոչ միայն տեսական գիտելիքներ, այլև մանկավարժահոգեբանական հիմնավոր պատրաստություն, ինչպես նաև բխած ուսումնական համագործակցություն վարելու պրակտիկ հմտություններ: Ի դեպ, այդ հարաբերությունները չի կարելի բաժանել ուսումնական և պարզ աշխատանքային, անձնային, համագործակցային տեսակներ, կա պարզապես ուսուցիչ-աշակերտ համագործակցություն, որն իր մեջ ընդգրկում է ինչպես ուսումնական ոլորտը, այնպես էլ արտաուսումնականը: Առաջնային է արտաուսումնական համագործակցությունը, որի հարաբերությունների մեջ կարևոր է փոխվստահությունը, փոխճանաչումը, որոնց ձևավորումն ավելի դյուրին է սկսել արտաուսումնական համագործակցության ճանապարհով: Որպեսզի ուսուցիչը կարողանա աշակերտների հետ ստեղծել համագործակցային հարաբերություններ, ոչ միայն պիտի մշակի համագործակցային աշխատանքների ծրագիր, այլև փորձի նախ իր գործընկերների հարաբերություններին տալ համագործակցային բնույթ, իր մեջ մշակել փոխվստահության, հավատի, գործընկերային որակներ և համագործակցային ճանապարհով գործունեություն ծավալելու ունակություններ: Նշված կարողությունները նրան կօգնեն ուսումնական համագործակցության ունակություններ ձևավորելու աշակերտների մեջ, նպաստելով բոլոր աշակերտների ուսումնական համագործակցության ոլորտ ներգրավելուն: Միայն մանկավարժական այս պայմանների ապահովման դեպքում ուսուցչին կհաջողվի յուրաքանչյուր աշակերտի մեջ՝ ձևավորել ուսումնական գործնեություն ծավալելու կարողություն:

Ուսումնական գործունեություն ծավալելու համար կարողությունների ձեռքբերումն իրականացվում է տարամակարդակ, տարանպատակ և բազմաբնույթ վարժությունների ու առաջադրանքների կատարման ճանապարհով: Խոսել դրանց քանակի կամ կատարման հաճախականության մասին, որպես ուսումնական գործունեության արդյունավետության ապահովման միջոցի, ճիշտ չէ: Էականը վարժությունների բովանդակությունն է , դրանց կատարման եղանակը, ընթացքի քննարկման ձևը, արդյունքների դիտարկման ճիշտ ընտրությունը: Օրինակ, լեզվական վարժություններն իրականացվում են անհամակարգ, իրականացման ընթացքում չի ապահովում աշակերտների ինքնուրույն մտածողական գործունություն ծավալելու նպաստող մեթոդական պայմաններ, վերջում չի քննարկվում այն ճանապարհը, որով անցել են սովորողները վարժությունների առաջադրանքները կատարելիս, չեն դիտվել ստացված արդյունքները, պատճառաբանվել, հիմնավորել թույլ տված սխալները, ապա այդպես կատարած տասնյակ վարժությունների արդյունքում անգամ չեն ձևավորվել ուսումնական գործնեության ծավալուն ունակությունները:

Երբեմն միևնույն կարողության ձևավորման մտածված տասնյակ վարժությունների կատարումը բացարձակապես չի ծառայում իր նպատակին , որովհետև դրանք կատարում են անհամակարգ նպատակների և կատարման քայլերի ոչ համալիր մշակվածության պայմաններում, վարժությունները կատարում են խառնիխուռն, անհամակարգ, առանց ժամանակային և հետևանքային կապերի հաշվառման: Կան ուսուցիչներ, ովքեր դասի ընթացքում ուսումնական խնդրի շուրջ վարժությունները իրականացնում են նախապես որոշված հաջորդականությամբ, որոշակի քայլերով և ժամանակի մեջ հստակ բաշխումով:

Այդպիսի մոտեցման դեպքում ընդամենը 2-3 վարժության միջոցով ուսուցչին հաջողվում է ձևավորել ծրագրով նախատեսված որևէ կարողություն և աշակերտները այդ քանակով կատարելով հետո ծավալած ուսումնական գործունեության ժամանակ ակնհայտորեն դրսևորել են ինքնուրույն և իմաստավորված ուսումնական գործողություններ:

Ուսումնական գործունեություն ծավալելու կարողության ձևավորմանն այսօր նպաստում են նաև տեղեկատվական տեխնոլոգիաները: Առանձնապես արդիական կրտսեր դպրոցում ինֆորմատիկայի ուսումնասիրման հարցը: Սակայն տեղեկատվական տեխնոլոգիաների՝ երեխաների ինքնուրույն մտածողական գործունեության բխող հնարավորություններն անսահման են և անսպառ, եթե դրանց կազմակերպումը մանկավարժա-մեթոդական տեսակետից ճիշտ է կառավարում և վերահսկում: Միաժամանակ արդիական է և քննարկման փուլում է գտնվում ուսումնական գործունեություն վարելու հիմնական օժանդակ բաղադրամասերի բաժանմանը միտված հիմնահարցը: Օրինակ Վ.Վ. Դավիդովն օժանդակ բաղադրամասերի խմբին է դասում հոգեկան գործընթացները՝ մտածողությունը, ընկալումը, կամքը, զգացմունքները: Էականը այն է, թե ուսուցման որ փուլում և ինչպես ուսուցիչը պետք է կազմակերպի երեխաների հոգեկանի այդ գործընթացների զարգացումը: Անվիճելի է , որ ընդհանրապես ուսումնական գործունեության արդյունավետությունն ուղիղ համեմատական է երեխաների ուշադրության, հիշողության, մտածողության, կամքի, զարգացողության մակարդակին: Ուրեմն, առանց այդ գործընթացների զարգացման ուղղությամբ նպատակասլաց, ծրագրավորված աշխատանքի խոսք չի կարող լինել արդյունավետ ուսումնական գործունեություն ծավալելու համալիր կարողությունների զարգացման մասին:

Կրտսեր դպրոցի ուսուցիչները սովորաբար հակված են ուսումնական գործունեություն համարել, երբ աշակերտների գործունեությունը միտված է որոշակի գիտելիքների կարողությունների, հմտությունների ձեռքբերմանը: Անշուշտ, սա ևս ուսումնական գործունեություն է, սակայն՝ ոչ արդյունավետ:

Եթե համակարգենք միայն հայոց լեզվի տարրական դասընթացի նպատակներում նախատեսված կարողությունների ցանկը, ապա դրանց թիվը կհասնի տասնյակների, սակայն դրանցից ոչ բոլոր են ուսումնական գործունեություն ծավալելու ունակությունների ձեռքբերմանը միտված, եթե իբրև նպատակ ընտրված է կարդալու կարողության ձևավորումը, սակայն այդ գործընթացում ծրագրած աշխատանք չի տարվում կարդալու կարողությունը հետագա գործունեությունը ծառայեցնելու ուղղությամբ, այսինքն այն մնում է դասագրքում զետեղված ստեղծագործությունների ընթերցանության մակարդակում, ապա ճիշտ չէ այդ կարողությունը համարել ուսումնական գործունեությունը ծավալելու կարողության բաղադրամաս: Այսինքն, այդ կարողությամբ հանդերձ՝ բաց է թողնված ուսումնական գործնեություն ծավալելու կարողության ձևավորումը:

Հայտնի է, որ մարդը ծնվելիս իր հետ որոշակի ունակություններ է աշխարհ բերում (մասնավորապես՝ ֆիզիկական), սակայն նա իր հետ աշխարհ չի բերում որևէ գործնեություն ծավալելու կարողություն: Մարդն իր հետագա կյանքում ծավալում է երեք տեսակի գործնեություն՝ խաղ, ուսում, աշխատանք, սակայն թե՛ խաղային, թե՛ ուսումնական, թե՛ աշխատանքային գործնեություն ծավալելու ունակությունները նա ձեռք է բերում իր կյանքի ընթացքում միայն և միայն գործունեության այդ տեսակներն իրականացնելու ճանապարհով: Դրանք ձևավորվում են, ավելի ճիշտ՝ կարող են ձևավորվել թե՛ ուսումնական գործընթացում կազմակերպված, համակարգված

աշխատանքի ճանապարհով (անշուշտ, ուսուցչի ղեկավարությամբ), թե՛ տարերայնորեն, կամ ինքնակրթության ճանապարհով, բնականաբար,վերջինս կիրականանա բավականին դանդաղ և ոչ լիարժեք:

Ուսումնասիրությունները ցույց են տվել, որ առաջին դասարան ընդունվածների (մանավանդ վաղ պայմաններում) միայն 10%-է ունենում ուսումնական գործունեության համար անհրաժեշտ ունակությունների կաղմ: Դրանց ձևավորման ուղղությամբ անբավարար աշխատանքի դեպքում երեխաների մի մասը կամ ինքնուրույն, կամ ծնողների ճգնությամբ հասցնում են տարրական դպրոցի ավարտին ձեռք բերել այդպիսիք, սակայն դրանց համակարգված ունակություններն չեն, այլ տարերային գործունեություններ, որոնք այդպես էլ չեն զարգանում անհրաժեշտ մակարդակով: Արդյունքում, միջին դպրոց անցնող երեխաների գրեթե 75%-ը ուսումնական այդ օղակի ուսուցիչների վկայությամբ՝ գրեթե զուրկ են ուսումնական գործունեություն ծավալելու անհրաժեշտ մակարդակի ունակություններից: Այս է նաև պատճառը, որ միջին դպրոցում կտրուկ ընկնում է ուսման նկատմամբ հետաքրքրությունը, բնականաբար, նաև երեխաների առաջադիմությունը:

Այսպիսով, որպեսզի ուսումնական պլանով նախատեսված ցանկացած առարկայի դասը (այդ թվում հայոց լեզվի) նպաստի ոչ միայն այդ դասընթացից որոշակի գիտելիքների ձեռքբերմանը, այլև այդ գիտելիքները և կարողությունները սովորողներին պիտանի դառնան ուսումնական գործընթացից և՛այդ, և՛ հետագա փուլերում անհրաժեշտ է աշխատանք տանել կամ ուսումնական գործունեություն ծավալելու համար կարևոր որոշակի կարողությունների ձևավորման ուղղությամբ, հակառակ դեպքում՝ ձեռքբերված գիտելիքները կմնան սերտման մակարդակում և չեն ապահովի շարունակական կրթության ծավալման համար անհրաժեշտ մանկավարժական դաշտ, ուր աշակերտը կկարողանա վարել այնպիսի գործնեություն, որը միտված կլինի իրեն փոխելուն, իր ինքնադրսևորմանը, ինքնագործակցության ճանապարհով լուծելու կարողությունների ձևավորմանը:

Արփինե Ղարաբեկյան
ԱրՊՀ «Մանկավարժություն և սպորտ» ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
Գիտական ղեկավար՝ Արմինե Բաղդասարյան

ԿՐՏՍԵՐ ԴՊՐՈՑԱԿԱՆ ԵՐԵԽԱՆԵՐԻ ԻՄԱՑԱԿԱՆ ՀԵՏԱՔՐՔՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԴՐՍԵՎՈՐՈՒՄԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

(Կիրառական մանկավարժական փորձուսուցումից մեկ դասի օրինակով)

Բանալի բառեր՝ *հասկացություն, ժամանակակից, մտավոր ակտիվություն, տերմին, դաստիարակություն, ուսուցում, խթան, անձնավորություն, դիդակտիկա, մանկավարժություն, հետազոտություն, իմացական հետաքրքրություն, ուսումնական գործընթաց:*

Հոդվածում իմացական հետաքրքրությունը հանդես է գալիս որպես ուսուցման և դաստիարակության գործընթացում արդյունավետության բարձրացման պայման: Այն երեխայի բազմակողմանի զարգացման կարևորագույն բաղադրամասն է: Վերլուծության ենք ենթարկել իմացական հետքրքրությունն ու ակտիվությունը՝ փորձուսուցման ժամանակ մեր վարած դասերի օրինակով:

Арпине Карабекян

ПРОЯВЛЕНИЕ ПОЗНАВАТЕЛЬНЫХ ИНТЕРЕСОВ В ПЕДАГОГИКЕ УЧЕНИКОВ МЛАДШИХ КЛАССОВ

(Пример прикладного педагогического обучения из практики)

Ключевые слова- *концепция, современный, умственная активность, термин, воспитание, обучение, стимул ,личность, дидактика, педагогика, исследование, познавательный интерес, образовательный процесс.*

Познавательный интерес в статье является предпосылкой повышения эффективности обучения и воспитания. Это самый важный рецепт всестороннего развития ребенка. Мы проанализировали познавательный интерес и активность на практике, на примере уроков, которые мы провели.

Ժամանակակից հետազոտություններում առավել պարզորոշությամբ առանձնացնում են իմացական հետաքրքրությունները, քանի որ դրանց ազդեցությունը կրտսեր դպրոցական մարդու անձնավորության վրա, իմացական այն գործունեության վրա, որ ունենում է յուրաքանչյուրը, ով սովորում է դպրոցում, շատ մեծ է:

Իմացական հետաքրքրությունը[1] իր ընդհանուր ձևով կարելի է սահմանել որպես իմացական գործընթացի նկատմամբ անձնավորության ընտրական նպատակայնության դրսևորում:Զգտում դեպի իմացությունը, տվյալ գիտական բնագավառը(կամ ուսումնական առարկան), այն հնարավորին չափ ավելի լիակատար իմացությամբ ընդգրկելու, խորությամբ, հիմնավոր, ուսումնասիրելու ցանկությամբ, իմացական գործունեությամբ զբաղվելու, նրա նպատակահարմար, արագ և հաջող ընթացքի համար անհրաժեշտ հմտություններ և ունակություններ ձեռք բերելու ձգտումը՝ահա թե որն է իմացական հետաքրքրության հիմնական էությունը:

Իմացական հետաքրքրության փիլիսոփայական և հոգեբանական

[1] ***Ամիրջանյան. Ա.***, *Ժամանակակից դիդակտիկա,*

մեկնաբանությունները թույլ են տալիս պնդելու, որ այդ իմացական հետաքրքրությունը նպաստում է անհատի կողմից ժողովրդի հոգևոր արժեքների յուրացմանը և հասարակությունը հարստացնող նոր արժեքների ստեղծմանը(Վ. Պ. Տուգարինով):

Լինելով մանկավարժական հետազոտության երևույթ, իմացական հետաքրքրությունը, ինչպես և բոլոր մանկավարժական երևույթները, հանդես է գալիս իր ամբողջ բարդությամբ և բազմիմաստությամբ՝ որպես դաստիարակության նպատակ, որպես անձնավորության ձևավորման միջոց, որպես ուսուցման և դաստիարակության գործընթացների արդյունավետության պայման, որպես ուսման կարևոր շարժառիթ, որպես անձնավորության կառուցվածքի տարր:

Հետևաբար, իմացական հետաքրքրությունը անձնավորության բազմակողմանի զարգացման կարևորագույն բաղադրամասն է, նրա արժեքային կողմնորոշման արտահայտիչը: Այժմ արդեն անհնարին է մտավոր կրթության և դաստիարակության խնդիրները դիտել մարդկության կողմից կուտակված գիտելիքների առավել արդյունավետ յուրացմանը նպաստող իմացական հետաքրքրությունների զարգացման հետ նրանց ունեցած կապից դուրս:

Իմացական հետաքրքրությունը դիտելով որպես անձնավորության զարգացման օղակ, մենք ամենից առաջ կարող ենք նշել նրա ազդեցությունը բոլոր իմացական գործընթացների ինտենսիվացման վրա: Ունենալով յուրահատուկ հոգեբանական կառուցվածք , որը ներկայացնում է հուզական-կամային և մտավոր գործընթացների համաձուլվածք, իմացական[1] [2]հետաքրքրությունը մտքի ինտենսիվ աշխատանքի, կամային լարվածության, հուզական վերելքի խթան է իմացական գործունեության մեջ: Նա լարում է ստեղծագործական երևակայությունը, տրամաբանական և հուզական հիշողությունը, երեխայի զգայական-շարժողական գործունեությունը:

Իմացական հետաքրքրությունը հաճախ հանդես է գալիս որպես ուսուցման միջոց, իմացական գործունեության ակտիվացման միջոց, որպես արդյունավետ գործիք, որը մանկավարժին հնարավորություն է տալիս ուսուցման ընթացքը դարձնելու գրավիչ, առանձնացնելու նրա հատկապես այն կողմերը, որոնք կարող են գրավել աշակերտների ուշադրությունը, ստիպելու նրանց հուզվել և ապրել, հետաքրքրությամբ աշխատել ուսումնական առաջադրանքի վրա: Իմացական հետաքրքրությունը դիտելով որպես ուսուցման միջոց, մենք միշտ չէ, որ կարող ենք հույս ունենալ, թե այն կունենա լիարժեք արդյունավետություն, որովհետև արտաքին ազդեցությունները չեն ապահովում դրանց մեխանիկական անդրադարձումը անձնավորության ներքին գործընթացներում (Ս.Դ. Ռուբինշտեյն, Գ. Ս. Կոստյուկ, Ա. Ն. Լեոնտև):

Առավել նշանակալից է այն, որ իմացական հետաքրքրությունը հանդես է գալիս որպես ուսման կարևորագույն և արժեքավոր շարժառիթ, որն օգնում է դպրոցի, դասերի, սեփական իմացական գործունեության նկատմամբ երեխայի դրական վերաբերմունքին: Անձնավորությունը գործունեության մղող շարժառիթը չի ներկայացնում անձնավորության ներունակորեն հատուկ ցանկության կամ «անձնավորության իդեալների խորությունից» ինքնաբերաբար բխող զուտ ներքին մղում: Ինչպես պնդում է Ա. Ն. Լեոնտևը, մարդուն գործունեության են մղում շրջապատի աշխարհի երևույթները, որոնք նրա համար ստանում են հատուկ նշանակություն, «անձնական հատուկ իմաստ»:

Հետաքրքրությունը դպրոցականին մղում է ոգևորությամբ սովորել ոչ միայն դասի

[1] ***Շչուկինա Գ. Ի.***, *Իմացական հետաքրքրությունը դպրոցականի Ուսումնական գործունեության մեջ,*

ընթացքում, այլև տնային առաջադրանքներ կատարելիս:Խոր հետաքրքրության ազդեցության տակ դպրոցականը ինքնուրույն կերպով որոնում է իրեն հետաքրքրող թեմայի վերաբերյալ գրքեր, մշտապես իր և ուրիշների առջև դնում հարցեր, որոնց լուծումից է կախված այդ թեմայի ուսումնասիրության նկատմամբ ավելի խոր մոտեցումը[2]:

Նշանակալից է Գ. Հ. Շչուկինայի այն փաստը, որ իմացական հետաքրքրության և սոցիալական դրդապատճառների փոխազդեցությունը, որոնց մեջ հատուկ դեր է խաղում շփումը ուսուցիչների, ընկերների հետ, հատուկ ուժով է դրսևորվում այն ժամանակ, երբ դպրոցի, դասերի, ուսումնական առարկաների նկատմամբ երևան են գալիս բացասական վերաբերմունքի դրդապատճառներ:

Իմացական հետաքրքրությունը զարգացման առավել բարձր փուլում երևան է գալիս նաև որպես կայուն հատկանիշ, որպես անձի որակ, որը շատ հաճախ բնութագրվում է իմացական գործունեության նկատմամբ վճռական ձգտումով: համակարգայնորեն գործելով դպրոցականի կյանքում, ավելի ու ավելի ամրապնդվելով, փոխազդեցության մեջ լինելով իմացական գործունեության կայուն ձևերի հետ, իմացական հետաքրքրությունը վերջ ի վերջո դառնում է մարդու բնավորության կայուն գիծ:

Հենվելով իմացական հետաքրքրության առանձնահատկությունների, նրա հոգեբանական կառուցվածքի վրա, օգտագործելով Ս. Լ. Ռուբինշտեյնի, Բ. Գ. Անանևի, Ռ. Գ. Լեմբերգի, Ն. Ա. Բելյաևի հետազոտությունների մի քանի տվյալներ, ուսման գործընթացում մենք արձանագրեցինք դպրոցականի իմացական հետաքրքրության այնպիսի դրսևորումներ, որոնք կարող են լինել իմացական հետաքրքրության ցուցանիշներ՝ ինչպես հատուկ ուսումնասիրության, այնպես էլ դպրոցական պրակտիկայի համար[1]:

Հիշելով այն մասին, որ հետաքրքրութունը ներկայացնում է «մտքեր-ցանկություններ», «մտքեր-մասնակցություն», «մտքեր-ապրումներ» հատուկ կապեր (Ս. Լ. Ռուբինշտեյն), մենք ամենից առաջ անդրադարձանք սովորողների մտավոր ակտիվությանը՝ որը թույլ է տալիս արձանագրել աշակերտների վարքի գործողությունները, որոնք բնութագրում են իմացական հետաքրքրության առկայությունը: Դրանց թվին կարող են դասվել՝ աշակերտի ինքնակամ ձգտումը մասնակցելու ընդհանուր խնդրի քննարկման գործընթացին և այլն:

Ուսուցման գործընթացի ակտիվացումը յուրահատուկ բնույթ է ստանում՝ նայած այն բանին[2] , թե հիշյալ աղբյուրներից որի հետ է կապված հետաքրքրության այս կամ այն խթանի ծագումը, քանի որ տարբեր խթաններ ունեն տարբեր ներգործություն: Կրտսեր դպրոցականների իմացական հետաքրքրությունների ձևավորման մեջ հնարավոր չէ առավելություն տալ այս կամ այն աղբյուրին, որովհետև դրանք բոլորը՝և՛ ուսուցման բովանդակությունը, և՛ աշակերտների իմացական գործունեության կազմակերպումը, և շփման գործընթացը մեծ նշանակություն ունեն. ավելին, դրանց բովանդակությունն ու նշանակությունը տարբեր են, և մի աղբյուրը երբեք չի կարող փոխարինել մյուսին:

Վերջապես,ուսուցիչների, ընկերների հետ շփումը, որի հետևանքով ստեղծվում են բազմապիսի հարաբերություններ,ուղեկցվում է մեկ այլ կառուցվածքի բարոյական և մտավոր ապրումների առաջացմամբ,որոնք իրենց հերթին իմացական հետաքրքրության նույնքան ուժեղ խթանիչներ են հանդիսանում:: Այստեղ առաջանում են համակոլեկտիվային ապրումներ՝ընկերոջ հաջողության համար ուրախություն, նրան օգնություն ցույց տալու ձգտում, հասարակական գնահատման հիման վրա անձնական հաջողությունների զգացում, ինչպես և երախտագիտություն ուսուցչի՝ գիտելիքների

[1] ***Բալյան Ա. Ա.***,*Մանկավարժական վարպետության հիմունքներ*

[2] ***Բորյան Ս.***, *Դպրոցականների ինքնադաստիարակության խթանման միջոցները,*

աղբյուրների նկատմամբ:

Բազմազան են խթանման աղբյուրները, դրանք տարբեր ձևով են ազդում աշակերտների վրա, տարբեր են դպրոցականների մեջ դրանց առաջացրած ապրումներն ու վիճակները, բայց, դրա հետ միասին, տարբեր աղբյուրների խթանումները մեկուսացած չեն, առանձնացած չեն միմյանցից, և դրանց ազդեցության ուժը ուսման գործընթացում փոխադարձ պայմանավորվածության մեջ է:

Դասերի ժամանակ աճում է հետաքրքրությունը, երբ ուսումնական նյութն ուսումնասիրվում է պատմական մոտեցմամբ: Այն, որպես կանոն, կապված է գիտության պատմությունից, գիտնականների կենսագրություններից, գիտական հայտնագործություններից վերցրած նոր, անհայտ փաստերի հետ: Գիտա-պատմական բնույթի տեղեկությունները միշտ էլ գրավում են աշակերտների ուշադրությունը: Դրանք բարձրացնում են գիտական որոնումների հեղինակությունը դպրոցականների աչքում:

Գիտելիքների գործնական դերի վերլուծությունը, մեր հետազոտությունների տվյալներով, նույնպես խիստ հրատապ նշանակություն ունի իմացական հետաքրքրության զարգացման համար, հատկապես կրտսեր դպրոցականների մոտ, որոնք գիտելիքների և փորձի պակասի պատճառով դեռևս ի վիճակի չեն ամբողջովին գնահատել ուսումնական նյութի տեսական կարևորությունը[1] **[5/84]:**

Այսպիսով, ավարտելով ուսումնական օրվա քննարկումը մի դասարանում,

մենք եկանք այն հետևության , որ

1.Աշակերտների իմացական հետաքրքրությունների խթանումը որ ուներ ուսումնական գործընթացն ամբողջությամբ, և նույնիսկ յուրաքանչյուր առանձին դաս:

2.Յուրաքանչյուր դաս՝ուսումնական գործընթացի այդ միավորի ընթացքում իմացական հետաքրքրութուննունի իր բարձրագույն պահերը, իր դինամիկան, որն ուսուցիչը պարտավոր է տեսնել, ուշադրությամբ:

3.Գիտելիքների,ուսումնական գործունեության նկատմամբ հետաքրքրության ամրապնդման և զարգացման վրա ազդեցություն է գործում ոչ թե ամեն մի առանձին խթան, որը բացահայտում էր բովանդակության և գործունեության առանձին ասպեկտները, հարաբերությունները, այլ նրանց կառուցվածքային միասնությունը:

4.Դասի ժամանակ իմացական հետաքրքրության աստիճանական մարման աղին չի խթանում այն, այլ, ընդհակառակը, մարում է, և ամեն անգամ գիտելիքների նկատմամբ հետաքրքրության զարգացումը պետք է սկսել նորից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.ԱմիրջանյանՅու. Ա., Ժամանակակից դիդակտիկա, Երևան, 1991:
2. ԲալյանԱ. Ա.,Մանկավարժական վարպետության հիմունքներ, Երևան, 1998:
3. Բորյան Ս., Դպրոցականների ինքնադաստիարակության խթանման միջոցները,1983:
4. ԴայրիՆ. Գ., Գլխավորըյուրացնելդասիժամանակ, Երևա
5.ԼեոնտևԱ., Մանկավարժականհաղորդակցում, Երևան, 1998
6. Շչուկինա Գ. Ի., Իմացական հետաքրքրությունը դպրոցականի Ուսումնական գործունեության մեջ, Երևան, 1998:

[1] ***ԼեոնտևԱ.***, *Մանկավարժականհաղորդակցում,*

Ռուզաննա Մելքումյան
ԱրՊՀ «Մանկավարժություն և սպորտ» ֆակուլտետի
«Տարրական մանկավարժություն և մեթոդիկա» բաժնի
3-րդ կուրսի ուսանողուհի
Ղեկավար՝Է. Զ. Բաղդասարյան(մ.գ.թ.դոցենտ)

ԿՐԹԱԿԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԻ ԵՎ ԿԻՐԱՌՎՈՂ ՄԵԹՈԴՆԵՐԻ ՀԱՐԱԲԵՐԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՈՒՍՈՒՑՄԱՆ ՁԵՎԵՐԻ ԸՆՏՐՈՒԹՅԱՆ ԺԱՄԱՆԱԿ

Բանալի բառեր՝ *ուսուցման կազմակերպման ձևեր, ֆրոնտալ աշխատանք, կոլեկտիվ աշխատանք, խմբային աշխատանք, անհատական աշխատանք, դասավանդող, ուսումնառողներ:*

Հոդվածում ներկայացվում են ուսուցման կազմակերպման ձևերը՝ ուսուցման գործընթացի գոյության եղանակները, ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևերը, դասավանդողի և ուսումնառողների համատեղգործունեության կազմակերպման եղանակները: Հոդվածում աղյուսակի տեսքով տրվում է նաև ուսուցման կազմակերպման ձևերի համեմատական բնութագիրը: Նշվում է, որ յուրաքանչյուր ձևում առկա են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:Առաջարկվում է, որ ուսուցման ձևի ընտրության ժամանակ դասավանդողն առաջին հերթին ուշադրությունը պետք է բևեռի կրթական նպատակների և ուսուցման ձևերի հարաբերակցության ու ուսուցման ձևերի և մեթոդների փոխհարաբերություններին:

Рузанна Мелкумян

СООТНОШЕНИЕ ИСПОЛЬЗУЕМЫХ ПРАКТИЧЕСКИХ МЕТОДОВ И ЦЕЛЕЙ ОБУЧЕНИЯ ПРИ ВЫБОРЕ УЧЕБНЫХ МЕТОДОВ

Ключевые слова. *Виды организации обучения, фронтальная работа, коллективная работа, групповая работа, индивидуальная работа, преподаватель, учащиеся..*

В работе представлены различные виды организации обучения: всевозможные виды учебного процесса, виды организации учебного процесса, способы организации совместной работы преподавателя и учащегося. Также представлена в виде таблицы сравнительная характеристика методов обучения. Отмечается, что в каждом методе есть как положительные, так и отрицательные стороны. Предлагается чтобы при выборе учебного метода преподаватель в первую очередь уделял внимание соотношению целей и методов, способов обучения.

Ուսուցման կազմակերպման ձևը(լատիներեն՝ forma-արտաքին տեսք, արտաքին ուրվագիծ բառից) ուսուցման գործընթացի գոյասեղան է, դրա ներքին էության, տրամաբանության և բովանդակության թաղանթ:Դա սահմանված կարգով և որոշակի ռեժիմով ընթացող դասավանդողի և ուսումնառողների հատուկ կազմակերպված ուսումնական մասնագիտական գործունեության արտաքին արտահայտություն է:

Ակնհայտ է, որ ուսուցման կազմակերպման ձևը, որպես դիդակտիկական կատեգորիա, արտացոլում է ուսումնական գարծընթացի այնպիսի արտաքին կողմերը, ինչպիսիքեն.

- Գոյությանեղանակները՝ կարգն ու ռեժիմը,
- Ուսումնական աշխատանքի կազմակերպման ձևը՝ դասի տիպերը,

- Դասավանդողի և ուսումնառողների համատեղ գործունեության կազմակերպման եղանակները՝ համընդհանուր, կոլեկտիվ, խմբային, անհատական[1]:



[1] ***Վարդումյան Ս.Տ.,*** *Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ,ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան,« Նոյյան տապան», 2005. – 302 էջ:*

Ուսումնական գործընթացի արտաքին կողմերը[1]

Ուսուցման տեխնոլոգիայի նախագծման ժամանակ շատ կարևոր է ոչ այնքան ուսուցման գործընթացի ռեժիմն ու կարգապահությունը, որքան ուսումնառողների հետ դասավանդողի համատեղ ուսումնական մասնագիտական գործունեության մեթոդը:

Ուսուցման դաս-դասարանային համակարգի շրջանակներում ուսումնառողների հետ դասավանդողի համատեղ ուսումնական մասնագիտական գործունեությունն իր արտահայտությունն է գտնում ուսուցման կազմակերպման այնպիսի ձևերում, ինչպիսիք են.

Ֆրոնտալ աշխատանքը(ճակատային), որը կիրառվում է կրթական խնդիրների լուծման ժամանակ, բնութագրվում է հարաբերությունների <<դասավանդող-ուսումնառող>> տեսակով և ունի հետևյալ հայտանիշները.

-նպատակը դրվում է միանման առաջադրանք կատարող բոլոր ուսումնառողների առջև,

-դասավանդողը ղեկավարում է այդ գործընթացը և ցուցաբերում օժանդակությունը:

Կոլեկտիվ աշխատանքը, այն <<դասավանդող-ուսումնական խումբ-ուսումնառողներ>> հարաբերությունների տեսակ է, և ունի հետևյալ հայտանիշները.

-ողջ ուսումնական խմբի առջև դրվում է մեկ նպատակ. Բոլոր ուսումնառողները կատարում են միանման առաջադրանք,

-դասավանդողը գործընթացին մասնակցում է ուսունառողների հետ միասին:

Աշխատանք խմբերում, այն <<դասավանդող-միկրոխումբ>> հարաբերությունների տեսակ է, դրա հայտանիշներն են.

-դրվում է ուսումնական նպատակ, որոշվում միկրոխմբերին տրվող առաջադրանքները[2],

-դասավանդողի օգնությունը կարող է ուղղորդվել կամ բոլոր ուսումնառողների, կամ էլ՝ այս կամ այն խմբի վրա(աշխատանքը բաշխվում է կայուն զույգերի, խմբերի միջև):

Անհատական աշխատանքը. Հարաբերությունների տեսակը՝ <<դասավանդող-ուսումնառող>>, հայտանիշներն են[3].

-յուրաքանչյուր ուսումնառողի համար նպատակ պետք է հանդիսանա անհատական, կամ էլ բոլորի համար միանման առաջադրանքի ինքնուրույն կատարումը,

-դասավանդողը անհատական օգնություն է ցուցաբերում յուրաքանչյուր ուսումնառողի:

Թվարկված կազմակերպչական ձևերից յուրաքանչյուրը բնութագրվում է խմբային և անհատական ուսուցման տարբեր ձևերի զուգակցմամբ, ուսումնառողների ինքնուրույնության աստիճանների տարբերությամբ, դասավանդողների կողմից ուսուցման գործընթացի ղեկավարման տարբեր ձևերով և այլն: Դրանց համաեմատական բնութագրերը ներկայացված են աղյուսակ 2-ում:

---

[1] ***Պետրոսյան Հ.*** *Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ.*

[2] ***Ասատրյան Լ.Թ.,*** *Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Եր., Արտագերս, 2011, -105 էջ:*

[3] ***ՎարդումյանՍ.Տ.,*** *Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ,ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան, «Նոյյան տապան», 2005. – 302 էջ:*

Ուսուցման կազմակերպման ձևերի համեմատական բնութագիրը Աղյուսակ 2

Ուսուց-ման ձևը	Բնութագրման առանձնահատկությունները	
	(+)	(−)
Ֆրոնտալ կոլեկտիվ	- Ապահովվում է ուսումնական պարապմունքի հատկությունը, ընթացակարգը, - Ուսումնական խումբը հանդիսանում էմեկամբողջություն, - Դասավանդողն աշխատում է միաժամանակ բոլոր ուսումնառողների հետ(ժամանակի խնայողություն), Յուրաքանչյուրն աշխատում է նաև ինքնուրույն:	- ուսումնառողները ուսուցման օբյեկտներն են, - բացակայում է ուսումնառող-ների հետ անհատական ու-սումնադաստիարակչական աշխատանքի հնարավորու-թյունը, ուսուցումը կրում է մասսայական բնույթ, - հաշվի չի առնվում յուրա-քանչյուր ուսումնառողի զար-գացման և պատրաստվա-ծության անհատական մա-կարդակը, ուսումնական հնարավորությունները.դասա-վանդողը դասավանդում է մեկ միասնական ծրագրով, - դասավանդողը հիմնվում է <<միջին>> մակարդակի ու-սումնառողների նախնական գիտելիքների, ունակություն-ների համահարթում և <<մի-ջին>> մակարդակի ապահո-վում, ուսումնառողներն գործնակա-նում չեն շփվում և չեն հա-մագործակցում,յուրաքան-չյուրն աշխատում է առանձին[1]:
Խմբակա յին	- ուսումնառողը հանդիսանում է ուսուցման օբյեկտ և սուբյեկտ, - խմբայիին աշխատանքը կառուցվում է խնդիրների բաշխման ժամանակ խմբի յուրաքանչյուր անդամի	- Խմբային աշխատանքի կա-տարման և արդյունքների ամ-փոփման համար պահանջվում է ժամանակի որոշակի կո-ղուստ,

[1] ***Պետրոսյան Հ.*** *Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ.*

	աշխատանքիտեմպի,ունակություններ-ի և հնարավորությունների հաշ-վառման վրա, փոխօգնության և փոխհսկողության պայմաններում, - համատեղ աշխատանքում խմբի յուրաքանչյուր անդամի փորձը փոխանցվում է մյուսներին, նպաստում է նյութի յուրացմանը, - ապահովում է ուսումնառողների ակտիվությունը,ինքնուրույնությունը, հաղորդակցումը համագործակցումը, խմբերի և խմբի անդամների միջև փոխ-կապակցված պատասխանա-տու հարաբերություններ, - յուրաքանչյուրն աշխատում է և' իր համար, և' մյուսների, - այս դեպքում ցանկալի ար-դյունքները ստացվում են ժա-մանակի ավելի փոքր կո-րուստներով, քան անհատական աշխատանքի դեպքում: - Խմբում համատեղ աշխատան-քը ավելի արդյունավետ է, քան առաջադրանքը յուրաքնչյուր	- նախապատրաստման համար դասավանդողից պահանջվում է մեծածավալ աշխատանք, - ոչ ճիշտ կազմակերպման դեպքում ուսումնական գոր-ծընթացը կարող է դուրս գալ հսկողությունից և ձեռք բերել տարերային բնույթ: -
Անհատա-կան	- ուսումնառողի կողմից առանձին կատարելու դեպքում: - Ապահովում է ուսումնառողների ինքնուրույնությանբարձր մակարդակ, - յուրաքանչյուրն աշխատում է իր համար, - ապահովում է ուսումնառողի առավելագույն զարգացում, ու-սուցման անհատականացում՝ - պատրաստվածության, զար-գացածության, ունակությունների ու ճանաչողական հնա-րավորությունների մակարդակի առավելագույն հաշվառ-մամբ, - յուրաքանչյուր ուսումնառողի ուսուցման տեմպը կարգավոր-վում է իր պատրաստվածության մակարդակով և ուժերի չափով,	- աշխատատար է, դասավանդողից նախա-պատրաստման, անհատա-կան առաջադրանքների մշակման, դրանց իրա-կանացման,ստուգման և գնահատման համար պահանջվում է մեծածավալ աշխա-տանք և մե ծջանքեր, - յուրաքանչյուրն աշխատում է իր համար - դասավանդողն աշխատում է միայն մեկ ուսումնառողի հետ, բացակայում է ժամա-նակի խնայողությունը:

	- ապահովում է յուրովի անհա-տական օգնություն յուրաքանչյուր ուսումնառողի:	

Ուսուցման յուրաքանչյուր ձևում առկա են ինչպես դրական, այնպես էլ բացասական կողմեր:Այս իրավիճակում անհրաժեշտություն է առաջանում պարզել, թե ուսուցման տեխնոլոգիայի նախագծման ժամանակ ինչի վրա պետք է կանգ առնի դասավանդողի ընտրությունը[1]:

Ուսուցման ձևի ընտրության ժամանակ դասավանդողն առաջին հերթին ուշադրությունը պետք է բևեռի կրթական նպատակների և ուսուցման ձևերի հարաբերակցության ու ուսուցման ձևերի և մեթոդների փոխհարաբերություններին[2]:

Կրթական նպատակների և ուսուցման ձևերի հարաբերակցությունը

Կրթական նպատակը	Ուսուցման կազմակերպման ձևերը		
	ֆրոնտալ	խմբային	անհատա-կան
1. **Ուսուցում**			
- նոր նյութի ուսուցում	+	+	+
- ուսուցմաննյութիկրկնությունևամրապնդում	+	+	+
- գիտելիքների խորացում		+	+
- կոնկրետուսումնականնյութիբացթողումներիդասաժամերիլրացում		+	+
2. **Ձևավորում**			
- կարողությունների, հմտությունների, կոմպետենցիաների	+	+	+
- եղանակների, հնարների իրականացման փորձի		+	
- ստեղծագործական գործունեության		+	+
- ինքնակրթության հմտությունների		+	+
- հաղորդակցության, կարեկցանքի		+	
- իրևամբողջխմբիգործունեությունների հարդյունքներիհամարպատասխանատվության		+	
- **Զարգացում**			
- ճանաչողական հետաքրքրություն	+	+	+
- սեփական մտքերն արտահայտելու ընդունակությունների		+	

[1] ***Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ,*** *Դպրոցի կառավարման տեսությունը և պրակտիկան, -Եր., 2002:*

[2] ***Պետրոսյան Հ.*** *Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ.*

- դրդապատճառների,վերարտադրողական մտածողության,ստացվածգիտելիքներըպրակտիկայումկիրառելու,		+	+
- նախաձեռնողականություն		+	
- ինքնուրույնության		+	+
- խմբայինհամագործակցությանպատրաստականությանընդունակության		+	

Ուսուցման ձևերի և մեթոդների փոխհարաբերությունը

Մեթոդը	Ուսուցման կազմակերպչական ձևերը		
	ֆրոնտալ	խմբային	Անհատական
դասախոսություն, պատմվածք	+		
Բացատրություն	+		
Ցուցադրություն, պատկերազարդում, Տեսամեթոդ	+		
աշխատանք գրքի հետ	+	+	+
լաբորատոր աշխատանք	+	+	
Վարժություն	+	+	+
ուսումնական զրույց	+		
զրույց կլոր սեղանի շուրջ	+		
Բանավեճ	+	+	
ուղեղի գրոհ կամ մտքերի տարափ	+	+	
գործնական և դերային խաղ		+	
պրոբլեմահարույց առաջադրանքների մեթոդ		+	
անհատական (պրակտիկ) մեթոդ			+
նախագծերի մեթոդ		+	
<<փինբորտ>> տեխնիկա	+	+	
<<կլոր սողան>> տեխնիկա		+	
<<զիգզագ>> տեխնիկա		+	

Ուսուցման ժամանակակից տեխնոլոգիաների նախագծման դեպքում դասավանդողը պետք է նախընտրի խմբերում համագործակցային աշխատանքը(խմբային աշխատանք), բայց. անկասկած, դրված կրթական նպատակներին և պլանավորված արդյունքներին համապատասխան[1]:

[1] ***Պետրոսյան Հ.*** *Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան, 2012թ.*

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. ԱմիրջանյանՅու., ՍահակյանԱ., Մանկավարժություն, Եր.:Մանկավարժ, 2005, -454 էջ:
2. Ասատրյան Լ.Թ., Հակոբյան Գ.Հ., Մանկավարժական հետազոտությունների մեթոդաբանություն, Եր., Արտագերս, 2011, -105 էջ:
3. ԱսատրյանԼ. Թ.ևուրիշներ, Կրթության համակարգի կառավարման հիմունքները, 1-ին մաս, -Եր., Զանգակ- 97, 2003, -223 էջ:
4. Ասատրյան Լ. Թ. և ուրիշներ, Դպրոցի կառավարման տեսությունը և պրակտիկան, -Եր., 2002:
5. Բալյան Ա.Ա., Մանկավարժական վարպետության հիմունքներ, Եր.: Լույս, 1988:
6. Բորյան Ս.,Դպրոցի և ընտանիքի մանկավարժական ներգործության միասնությունը, 1975թ.
7. Բաբանսկի Յու. Կ. Մանկավարժություն.ուսումնական ձեռնարկ մանկավարժական ինստիտուտի ուսանողների համար,.: «Լույս» հրատ., հ. 1, 1986:
8. ԹորգոմյանԼ.Վ, Մանկավարժությանընդհանուրհիմունքներ, Եր., Տոներ, 2005, -135 էջ:
9. ԿոմենսկիՅ.Ա., Մեծդիդակտիկա, Երևան, Զանգակ, 2010.- 257 էջ:
10. Հակոբյան Ա. Ա., Մանկավարժական գործունեության հիմունքներ: Դասախոսությունների ժողովածու: Ուսումնամեթոդական ձեռնարկ. – Եր.: Էդիթ Պրինտ, 2017. – 109 էջ:
11. Հարությունյան Գ.,Աղաբեկյան Ռ., Բաղդասարյան Է.,Դասախոսությունների դասընթաց մանկավարժությունից
12. ՂույումչյանԳ.Ե.,Մանկավարժություն:Դասագիրք բուհերի համար: Երկու գրքով:Գիրք II, Եր., 2005 -232 էջ:
13. Մանուկյան Ս.Պ., Ընդհանուր մանկավարժագիտություն: Նոր դասընթաց: / Ուս. ձեռնարկ:
14. Միրումյան Կ. Ա., Անանիա Շիրակացի. մանկավարժ, Եր., Լուսաբաց հրատարակչատուն 2012, - 205 էջ:
15. Մկրտչյան Մ.Ա., Ուսուցման կոլեկտիվ եղանակի իրականցման մեթոդաբանական, տեսական և գործնական հարցեր, - Եր.: Հեղ հր., 2011.- 185 էջ:
16. Պետրոսյան Հ. Մանկավարժական ժամանակակից տեխնոլոգիաներ, Երևան , 2012թ.
17. ՎարդումյանՍ.Տ.,Ժամանակակից մանկավարժական մոտեցումներ, 20-րդ դարի մանկավարժական տեսություններ,ձեռնարկ մանկավարժների և ուսանողների համար, Երևան,«Նոյյան տապան», 2005. – 302 էջ:

ՀՏԴ 159.96 Մանկավարժություն և հոգեբանություն

Էդիտա Ներսեսյան
Վանաձորի պետական համալսարան
«Հոգեբանություն» մասնագիտություն, 4-րդ կուրս
Գիտ. ղեկավար՝ հ. գ. թ., դոցենտ Հ. Ավագիմյան

ԱՆՁԻ ԿՈՆՖԼԻԿՏԱՅԻՆ ՎԱՐՔԻ ՆԱԽԱՏՐԱՄԱԴՐՎԱԾՈՒԹՅԱՆ ԵՎ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՏԵՍԱԿԻ ՄԻՋԵՎ ԿԱՊԻ ՓՈՐՁԱՐԱՐԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ ՊԱՏԱՆԵԿՈՒԹՅԱՆ ՏԱՐԻՔՈՒՄ

Բանալի բառեր՝ *կոնֆլիկտ, ագրեսիա, վարք, անձ, սոցիալական կյանք, համահարաբերակցական կապ:*

Զուգադրելով կոնֆլիկտի տեսությունը ագրեսիայի տեսակներն ու սկզբունքները՝ սույն հոդվածում ուսումնասիրել և վերլուծել ենք դրանց միջև առկա համահարաբերակցական կապը: Տեսական և փորձարարական ուսումնասիրությունից բխում է այն, որ համահարաբերակցական դրական կապն առկա է, երբ կոնֆլիկտային վարքի ռազմավարությունը պայմանավորվում է ագրեսիայի տվյալ տեսակին բնորոշ առանձնահատկություններով, բացասական կապը՝ ագրեսիայի տեսակին բնորոշ առանձնահատկությունների անհամատեղելիությամբ՝ կոնֆլիկտային այս կամ այն իրավիճակում: Այսպես՝ ամենավառ արտահայտված դրական կապը գտնվում է կասկածամտության և փոխզիջող տիպի միջև, իսկ բացասականը՝ մեղքի զգացումի և մրցակցող տիպի միջև:

Эдита Нерсесян

ЭКСПЕРИМЕНТАЛЬНОЕ ИССЛЕДОВАНИЕ СВЯЗИ МЕЖДУ ПРЕДРАСПОЛОЖЕННОСТЬЮ К КОНФЛИКТНОМУ ПОВЕДЕНИЮ ЛИЧНОСТИ И ТИПОМ АГРЕССИИ В ПОДРОСТКОВОМ ВОЗРАСТЕ

Ключевые слова*: конфликт, агрессия, поведение, личность, социальная жизнь, корреляционная связь.*

Сопоставляя теорию конфликта и виды и принципы агрессии, в данной статье проанализировали корреляционную связь между ними.

От теоретического и практического изучения следует то, что положительная корреляционная связь присутствует тогда, когда стратегия конфликтного поведения обусловлена особенностями, характерными для данного вида агрессии, отрицательная связь-несовместимостью особенностей данного вида агрессии в той или иной конфликтной ситуации.

Самое яркое выражение положительной связи находится между подозрительностью и компромиссными типами, а отрицательная-между чувством вины и соперничеством.

Մարդն ապրում է սոցիալական աշխարհում, ինտեգրված է հասարակական հարաբերություններին և միայն այդտեղ կարող է բավարարել իր պահանջմունքները: Ապրել հանրության մեջ և լինել նրանից զատ, հնարավոր չէ, սակայն մյուս կողմից մարդը ձգտում է ազատության, և այս հակասությունը հանգեցնում է կոնֆլիկտների առաջացման, որոնք անձի զարգացման վրա թողնում են տարբեր հետևանքներ:

Կոնֆլիկտը բարդ և բազմակողմանի սոցիալական ֆենոմեն է, որտեղ մասնակցում են ամենատարբեր կողմեր՝ անհատներ, սոցիալական խմբեր, ազգային-էթնիկական համայնքներ, պետություններ, որոնք կապված են այս կամ այն նպատակներով կամ հետաքրքրություններով: Կոնֆլիկտները ծագում են ամենատարբեր պատճառներով և մոտիվներով. հոգեբանական, տնտեսական, քաղաքական, կրոնական և այլ [**2, 46**] :

Զարգացումը չի կարող տեղի ունենալ առանց հակասությունների, իսկ այնտեղ, որտեղ կա

հակասություն, կա նաև կոնֆլիկտի հիմք, հետևաբար, յուրաքանչյուր մարդ մշտապես գտնվում է կոնֆլիկտային իրադրության մեջ թե՛ իրեն շրջապատող աշխարհում, թե՛ ինքն իր հետ: Եթե կոնֆլիկտն ընթանում է «չափի սահմաններում», ապա իր դրական ազդեցությունն անպայման կթողնի, քանի որ դժգոհ լինելը, իր սեփական «ես»-ի հանդեպ քննադատական վերաբերմունքը կարող են հանդես գալ որպես ներքին շարժիչ ուժ և ստիպել մարդուն հասնել ինքնաակտուալիզացիայի:
Ըստ Էմիլ Դյուքգեյմի, որը ֆրանսիական դպրոցի հիմնադիրներից է, կոնֆլիկտը սոցիալական ունիվերսալ երևույթ է, եթե այն լուծվում է արդյունավետ և խաղաղ, ապա երկակի դեր է խաղում՝ հանդես է գալիս որպես սոցիալական խնդիրների նշան և միաժամանակ՝ սոցիալական հավասարակշռության վերականգնման միջոց [**3, 12**]:
Կոնֆլիկտի ուսումնասիրության խնդիրը հոգեբանության համար կարևոր է այնքանով, որ այն մեծ ազդեցություն ունի մարդու սոցիալական կյանքի, նրա միջանձնային և միջխմբային հարաբերությունների, հոգեկան և ֆիզիկական առողջության վրա: Յուրաքանչյուր կոնֆլիկտային իրավիճակ ենթադրում է բարդ երևույթ, որն ունի կառուցվածք, լուծման ուղիներ և ելքի տարբերակներ:
Ագրեսիան ճնշող, բռնի, գիտակցական կամ ենթագիտակցական դրդապատճառ ունեցող այնպիսի գործողություն է, որի նպատակը ուրիշին ֆիզիկական կամ հոգեբանական վնաս հասցնելն [**1, 22]:**
Այսօր *ագրեսիա* եզրույթը շատ տարբեր իմաստներ ունի, ինչպես գիտականորեն, այնպես էլ առօրյա խոսակցություններում: Արդյունքում մենք միշտ չէ, որ վստահ կարող ենք ասել, թե ինչ ենք հասկանում, երբ անհատին որակում ենք որպես ագրեսիվ, իսկ նրա գործողությունները՝ բռնի: Երբեմն *ագրեսիա* հասկացությունը օգտագործում են լայն իմաստով՝ այն համարելով ոչ միայն հարձակում այլ անձանց վրա, այլև անկախության ձգտում կամ սեփական կարծիքի ու տեսակետի տարածում այլոց վրա: Սովորաբար տարածված և ընդունելի է ագրեսիայի բացասական մեկնաբանումը:
Ուսումնասիրվող երկու երևույթների միջև համահարաբերակցական կապը գտնելու նպատակով իրականացրել ենք հետազոտություն, այնուհետև կատարել արդյունքների վերլուծություն և եզրակացություն:
Հետազոտությունը իրականացվել է մեկ փուլով, որին մասնակցել են 19-22 տարեկան անհատներ: Ընտրանքը կազմվել է պատահականության սկզբունքով, նախապատվությունը տրվել է պատանեկության տարիքի անձանց, քանի որ կյանքի այս փուլում ևս, որը համարվում է ճգնաժամային, տեղի են ունենում մի շարք փոփոխություններ, որոնք առաջին հերթին պայմանավորված են նրանց անձնային, սոցիալ-մշակութային իրադարձություններով և գործոններով: Նրանք հայտնվում են մի շարք խնդիրների լուծման անհրաժեշտության առաջ: Դրանց լուծման անհրաժեշտությունը մեծացնում է լարվածությունը, ինչն էլ հանգեցնում է կոնֆլիկտայնության:

Արդյունքները ներկայացնենք ստորև.



Գծապատկեր 1. Կոնֆլիկտային իրադրությունում մրցակցող տիպի և ագրեսիայի տեսակների միջև կապի ցուցանիշները

Ինչպես երևում է գծապատկեր 1-ում, մրցակցության և ագրեսիայի տեսակներից ավելի արտահայտիչ դրական կապ տեսնում ենք նեգատիվիզմի հետ, իսկ բացասական կապը՝ մեղքի զգացումի:

Դրական կապի առկայությունը պայմանավորված է այն հանգամանքով, որ մարդու մոտ որքան գերակշռող է մրցակցող տիպը, այնքան ավելի արտահայտիչ է նեգատիվիզմը՝ բացասական վերաբերմունքը շրջապատի նկատմամբ: Նեգատիվիզմի բարձր ցուցանիշ ունեցող պատանիները հակված են դրսևորելու հակազդեցություն, մերժում, դիմադրություն շրջապատի նկատմամբ և մտնում են մրցակցության մեջ այլոց հետ՝ հակված լինելով ակտիվ գործողությունների կատարման:

Բացասական կապի առկայությունը մրցակցության և մեղքի զգացումի միջև խոսում է հակադարձ համեմատական կապի մասին: Որքան բարձր է մրցակցության ցուցանիշը, այնքան ավելի ցածր է մեղքի զգացումը և հակառակը: Առկա հակադարձ կապը կարող ենք բացատրել հետևյալ կերպ. որքան ագրեսիան ուղղված է սեփական անձին, որը բխում է այն համոզմունքից, որ ինքը վատ մարդ է, վատ է վարվում, վնաս է տալիս, չար է և անխիղճ, այնքան մրցակցութունը տվյալ անձի մոտ ցածր է, քանի որ սեփական անձի հանդեպ մեղքի զգացումը թույլ չի տալիս մրցակցության մեջ մտնել ուրիշների հետ:



Գծապատկեր 2. Կոնֆլիկտային իրադրությունում համագործակցող տիպի և ագրեսիայի տեսակների միջև կապի ցուցանիշները

Նայելով գծապատկեր 2-ին՝ տեսնում ենք արտահայտված դրական կապ համագործակցության և ուղղակի ագրեսիայի միջև, իսկ բացասական կապ՝ ֆիզիկական ագրեսիայի և նյարդայնության հետ:

Ենթադրվում է, որ համագործակցության և անուղղակի ագրեսիայի միջև կապը կախված է այն բանից, որ պատանիները, որոնք հանգում են այլընտրանքային որոշման, որն ուղղված է երկու կողմերի պահանջմունքների բավարարմանը անուղղակի ագրեսիայի դրսևորման ճանապարհով՝ զայրույթի, կատակի կամ բամբասանքի տեսքով, փնտրում են իրենց համապատասխան համագործակցող տիպ:

Բացասական կապը համագործակցող տիպի և ֆիզիկական ագրեսիայի միջև արդեն իսկ ակնհայտ է, քանի որ համագործակցությունը ենթադրում է երկու կողմին հարմար որոշման ընտրություն, իսկ ֆիզիկական ագրեսիան ուժի գործադրումն է: Հետևաբար դրական կապ այս երկու հատկանիշների միջև չենք կարող ակնկալել:

Նյարդայնությունը իրենից ներկայացնում է անձի շուտ գրգռվելու հակում, կտրուկ և կոպիտ վարվելու պատրաստակամություն: Համագործակցության վերը նշված բնութագրիչներից ելնելով՝ հանգում ենք այն եզրակացությանը, որ երկու երևույթները անհամատեղելի են:



Գծապատկեր 3. Կոնֆլիկտային իրադրությունում փոխզիջող տիպի և ագրեսիայի տեսակների միջև կապի ցուցանիշները

Ինչպես ցուցադրված է գծապատկեր 3-ում, վառ արտահայտված կապ է դրսևորվել փոխզիջման և կասկածամտության միջև: Ինչպես հայտնի է տեսական նյութից, փոխզիջող տիպը կոնֆլիկտային իրադրությունում որոշումներ է կայացնում կողմերի համաձայնության արդյունքում: Կասկածամտությունը խոսում է մարդկանց նկատմամբ անվստահ և զգույշ վերաբերմունք դրսևորելու մասին: Կողմերի՝ կոմպրոմիսի գնալու ռազմավարությունը պահանջում է այնպիսի որակների առկայություն, որը բնորոշում է ագրեսիայի նման տիպին: Անվստահության բարձր մակարդակի արդյունքում անձը խուսափում է ռիսկի դիմել, ուստի և հակված է զիջումների գնալու:



Գծապատկեր 4. Կոնֆլիկտային իրադրությունում խուսափող տիպի և ագրեսիայի տեսակների միջև կապի ցուցանիշներ

Գծապատկեր 4-ում տեսնում ենք կոնֆլիկտային իրադրություններում խուսափող տիպի և ագրեսիայի ու վիրավորանքի միջև բացասական կապ: Խուսափող տիպի և անուղղակի ագրեսիայի համադրությունն ակնհայտորեն անհամատեղելի է, քանի որ խուսափող տիպի մոտ բացակայում է համագործակցության և սեփական նպատակներին հասնելու ձգտումը, իսկ անուղղակի ագրեսիան ենթադրում է իրեն համապատասխան հաղորդակցվող կողմի առկայություն, որի հետ էլ ձևավորվում է համագործակցություն:

Վիրավորանքի հետ նույնպես առկա է բացասական կապ: Դա բացատրվում է այն փաստով, որ ագրեսիայի այս տիպը հակված է ատելության և նախանձի, դժգոհության որևէ մեկից, իսկ խուսափող տիպի հետ նման հատկանիշները չեն կարող զուգորդվել:



Գծապատկեր 5. Կոնֆլիկտային իրադրությունում հարմարվող տիպի և ագրեսիայի տեսակների միջև կապի ցուցանիշները

Գծապատկեր 5-ում պատկերված արդյունքների համաձայն՝ դրական կապ է նկատվում հարմարման և մեղքի զգացումի միջև, իսկ բացասական՝ խոսքային ագրեսիայի և նեգատիվիզմի միջև:

Մեղքի զգացում ունեցող անձանց բնորոշ է իրենց և շրջապատի նկատմամբ հատուկ վերաբերմունք և գործողություններ, բարձր պատասխանատվության զգացում, որից էլ բխում է շրջապատի և մարդկանց նկատմամբ կոնֆորմիզմի ձգտումը՝ հարմարվողական վարքի հանդեպ հակվածությունը: Ելնելով այս բնութագրումներից՝ կարելի է եզրակացնել, որ հարմարման և մեղքի զգացումի միջև համահարաբերակցական դրական կապը միանշանակ արդարացված է:

Հարմարման և նեգատիվիզմի միջև առկա բացասական կապը ցայտուն է, այն պարզ պատճառով, որ տերմիններն անգամ հակադրում են միմյանց: Կապի բացասական բնույթը բացատրենք այն հանգամանքով, որ հարմարումը ենթադրում է սեփական ցանկությունների զիջումը հանուն ուրիշների, իսկ նեգատիվիզմը՝ վարքի դիմադրությունն է, որն ակտիվ գործողությունների շարք է ուղղված արդեն իսկ սահմանված օրենքների, կարգի ու պահանջների դեմ: Եթե հարմարվող մարդը կարող է ետ կանգնել իր նպատակներից, ապա նեգատիվ վարքը ուղղված է նպատակների՝ ամեն գնով իրականացմանը:

Խոսքային՝ վերբալ ագրեսիան դրսևորվում է մարդկանց նկատմամբ բացասական վերաբերմունքի արտահայտման միջոցով, որ ներառում է վեճ, բղավոց, սպառնալիք, անեծք: Հարմարվող վարք որդեգրած անձը, որ իր համոզմունքները, հետաքրքրություններն ու վարքագիծը համապատասխանեցնում է շրջապատող միջավայրին, չի կարող դրսևորել բանավոր ագրեսիա: Ակնհայտ երևում է, որ ագրեսիայի նշված տեսակը հարմարման հետ չի կարող համատեղվել, այդ իսկ պատճառով կորելիացիոն կապը հակադարձ համեմատական բնույթ ունի:

Հետազոտության փորձարարական վերլուծությունից կարող ենք հանգել հետևյալին՝ համահարաբերակցական դրական կապ առկա է, երբ կոնֆլիկտային վարքի ռազմավարությունը պայմանավորվում է ագրեսիայի տվյալ տեսակին բնորոշ առանձնահատկություններով, իսկ բացասական կապը պայմանավորված է կոնֆլիկտային այս կամ այն իրավիճակներում ագրեսիայի տեսակին բնորոշ առանձնահատկությունների անհամատեղելիությամբ:

Այսպես՝ ամենավառ դրական կապը գտնվում է կասկածամտության և փոխզիջող տիպի միջև, իսկ բացասականը՝ մեղքի զգացումի և մրցակցող տիպի միջև:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. *Կոբելյան Ա. Թ., Կոնֆլիկտի հոգեբանություն: Դասախոսությունների նյութեր, «Լուսաբաց» հրատարակչություն, Երևան, 2016, 90 էջ:*

2. *Берковиц Л., Агрессия: причины, последствия и контроль. — СПБ: "Прайм-ЕВРОЗАЭНАК", 2001, 512ст.*

3. *Ратников В. П., Конфликтология, Юнити-Дана, "Золотой фонд российских учебников", 2015, 543 ст.*

Лопушанский И., Лопушанский Н.,
студенты I курса, направление Экономика
предприятий и организаций (Строительство)
Бендерского политехнического филиала
«ГОУ Приднестровский государственный
университет им.Т.Г. Шевченко»
Цынцарь А., ученица 11-А класса МОУ
«Бендерский теоретический лицей»
Научный руководитель: Цынцарь А.Л.,
доцент кафедры «Естественные и экономические науки»,
зам. директора по научной работе
Бендерского политехнического филиала
«ГОУ Приднестровский государственный университет им.Т.Г. Шевченко»
Эл. адрес: nauka@bpfpgu.ru, anna-cyncar@mail.ru

ПСИХОЛОГИЧЕСКИЕ АСПЕКТЫ ОТНОШЕНИЯ К БЕДНОСТИ И БОГАТСТВУ

Ключевые слова: *бедность, богатство, психология, отношение, мышление, личность.*

Данная статья представлена студентами и учащимися лицея по хэкономическому направлению в рамках работы научного кружка «Технологии управления». В работе представлен теоретический анализ психологического отношения к бедности и богатству.

Lopushansky I., Lopushansky N.,
Zanzari A.

PSYCHOLOGICAL ASPECTS OF THE RELATIONSHIP TO POVERTY AND WEALTH

Keywords*: poverty, wealth, psychology, attitude, thinking, personality.*

This article is presented by students and students of the Lyceum in the economic direction in the framework of the scientific circle "management Technologies". The paper presents a theoretical analysis of the psychological attitude to poverty and wealth.

Проблема бедности в экономической психологии рассматривается как самостоятельная проблема. Бедность определяется, как неспособность поддерживать минимальный уровень жизни.

Именно исследование личности бедных людей, по мнению ученых, является одним из главных вкладов психологии в смягчение остроты проблемы бедности. Ученые, занимающиеся изучением бедности, до сих пор не могут ответить на вопрос: почему бедные люди совершают такие действия, которые лишь усугубляют их положение, и они продолжают оставаться бедными. По сравнению со средним классом или с богатыми, бедняки намного чаще бросают учебу, заводят детей еще в подростковом возрасте, употребляют наркотики, совершают преступления, не умеют экономить деньги и не хотят работать. Экономисты называют такое поведение нецелесообразным. Казалось бы, у бедного человека, у которого и так мало денег, должно быть больше причин вести более строгий образ жизни, так как каждый заработанный доллар для него дороже, чем для того, у кого доход значительно выше. Бедность - это скорее не отсутствие каких-то вещей, а наличие множества проблем.

Психология бедности: привычки, которые обрекают на нищету

- Избегать ответственности.

Систематический уход от ответственности — показательная особенность бедняка. Человек не

привык принимать самостоятельные решения. Всю жизнь кто-то делал это за него: родители, государство, работодатель

- Делать акцент на экономии, вместо увеличения дохода.

Экономить — вполне полезная и даже нужная привычка, если не превращать ее в крайность. Знаете, до сих пор популярно выражение про синицу в руках. Многие выбирают эту маленькую птичку вместо большого журавля. Большинство людей работают на нелюбимой и низкооплачиваемой работе, называя ее стабильной, вместо того, чтобы рискнуть и навсегда покончить с этой унизительной жизнью.

- Общаться с пессимистами и неудачниками.
- Жаловаться на жизнь.

Психология бедности — это образ мышления, при котором все действия человека приводят его либо к потере денег (они «утекают сквозь пальцы»), либо не позволяют ему зарабатывать больше определенной суммы за период. Психология бедности начинается с базовой предпосылки, что ваше финансовое благополучие не зависит от вас, а от каких-то сторонних обстоятельств. Это не вы создали то количество денег, которое вы зарабатываете, а обстоятельства позволили зарабатывать вас ровно столько. Вы вынуждены жить на эти деньги. Вы не причина - вы следствие. Так сложилось…

Ни для кого не секрет, что богатые и бедные люди мыслят совершенно по разному. Сейчас мы рассмотрим как же мыслят те и другие. Мышление бедных людей: человек считает, что всё в этом мире ограничено; нет смысла действовать, так как ресурсов не хватает; спешка и негативная мотивация; злоба, зависть, обвинения; боязнь выйти из зоны комфорта. Мышление богатых людей: отношение к миру как к изобильному, полному ресурсов; способность найти доступ к необходимым ресурсам для действия; получают удовольствие от работы и действуют благодаря собственному намерению; осознание справедливости мира; систематический выход из зоны комфорта.

Наверное, вы думаете, чтобы стать богатым нужно обязательно получить высшее образование и много работать. Это не так. Я расскажу почему, если вы даже много работаете и учитесь, скорее всего, вы не поднимитесь выше среднего класса. Что подразумевают под собой деньги бедный класс? Для них время – деньги, они ошибочно думают, что это правило богатых людей, нет, это не так. Этим правилом живут только бедные и среднего достатка люди.

Богатые люди получают из времени деньги через 3 основных категории: 1) идея - средний класс часто ходит на работу без идеи, просто они так привыкли, но богатые люди не будут просто так работать, они всегда работают ради идеи. 2) риск (или ставка). Богатый человек не боится инвестировать в проекты, ведь он понимает, что в случае неудачи он всё равно получит бесценный опыт, который поможет ему в будущем. 3) старания - без стараний ничего не получится, история знала множество случаев, когда у человека была идея, он сделал большую ставку, однако он прогорел, потому что не хватило сил и упорства.

Также стоит запомнить, что разница между бедными и богатыми в том, что бедные люди меняют время на деньги, а богатые меняют деньги на время. Зарабатывание денег своего рода наука, поэтому во многих семьях родители прокладывают детям один и тот же путь. Если ваши родители не из тех людей, которые самостоятельно разбогатели своими усилиями, то они скорее научат вас, как быть бедными, не потому что они не желают вам добра, а потому что сами не знают, как это сделать. Многие из нас думают, что крупная зарплата решит наши материальные проблемы, но на самом деле наши проблемы решает не большое кол-во денег, а знания, благодаря которым мы можем их заработать. Проблема заключается в том, что мы работаем ради денег, тратим силы и время на получение хорошей зарплаты. Вскоре мы должны сделать так, чтобы деньги работали на нас и приносили нам ещё больше денег. Для этого мы должны понять 2 финансовых термина: активы и пассивы. Активы - такие вещи, которые увеличивают ваш доход, пассивы отнимают их, всё что угодно может быть, как активом, так и пассивом. Например: если у вас есть машина, на которую вы тратите в месяц 40$, то это пассив, однако если вы сдаёте эту машину в аренду и получаете 100$, то это актив. Активами и пассивами может быть всё: будь то недвижимость, бизнес, вещи и т.д. Понимать разницу очень важно. Богатые богатеют, а бедные беднеют, потому что богатые вкладывают деньги в активы, а бедные в пассивы. Стоит

запомнить, что главное не сколько вы зарабатываете, а какую часть денег вы сможете накопить. Из всего этого следует, что люди с психологией бедности всю жизнь работают ради денег и думают, что увеличение их зарплаты решит все проблемы, а люди с психологией богатых пытаются пустить деньги в оборот и сделать так, чтобы деньги работали на них и тем самым увеличивают свой доход.

В завершении всего вышесказанного, хочется сделать своего рода заключение. Если вы хотите разбогатеть, в первую очередь измените своё мышление, и запомните одну важную вещь: Научитесь платить себе. Часть заработанных вами средств, принадлежит вам. Если вы думаете, что все заработанные средства принадлежат вам, то вы сильно ошибаетесь, вы отдаёте деньги за еду, одежду, жильё, проезд и т. д. Научитесь откладывать 10 % от своего дохода, если это много, откладывайте 5, это не так сильно повлияет на ваше положение. Накопив определённую сумму, постарайтесь вложить её в какое-либо дело. Так каждая монета будет приносить тебе ещё и ещё. Нужно понять, что богатство это не те деньги, которые ты зарабатываешь благодаря работе, это те деньги, на которые ты можешь жить неделю, месяц, год, не прикладывая никаких усилий, вот что такое богатство.

Как избавиться от психологии бедности

- Взять на себя ответственность за свою жизнь. Этот подход к жизни даст вам мощный старт в искоренении психологии бедности. Свобода и счастье неразрывно связаны с понятием ответственности.
- Сменить окружение. Делайте это плавно, не хамите своим друзьям и знакомым, не стройте из себя «правильного парня». Займитесь саморазвитием и начните общаться с преуспевающими и целеустремленными людьми.
- Приобрести востребованный рыночный навык. Займитесь конкретным делом, которое будет приносить вам больший доход, чем у вас есть. Востребованный рыночный навык — это то, что вам нужно, чтобы зарабатывать больше. Не цепляйтесь за стабильную и низкооплачиваемую работу, постоянно учитесь новому.
- Изучить истории успеха других людей. Этот способ точно начнет менять ваше мышление, постепенно избавляя от негативных установок.
- Многие выдающиеся люди начинали с нуля и прошли нелегкий путь, чтобы стать богатыми и знаменитыми. Познакомившись с их биографией, вы увидите, что нет ничего невозможного, вдохновитесь и начнете действовать.
- Поставить финансовые цели и идти к ним. Цель — конкретная, измеримая, достижимая и ограниченная во времени — вот что вам нужно!
- Если вы поставите ее, то точно раз и навсегда «похороните» психологию бедности.
- Не сомневаться в себе и своих способностях. Перестать быть неуверенным. Но тут надо соблюдать золотую середину, чтобы не переоценить себя. Но и занижать планку не стоит: когда есть цель, к ней всегда надо стремиться. Почему другой может, а у меня не получается? Я ведь не хуже. Эти принципы должны стать определяющими.
- Быть активным. Причём во всём. Развиваться, читать книги, ходить в спортзал, не бояться высказывать начальству свои мысли и проявлять себя на работе. Активных людей всегда замечают.

Безусловно, каждый человек, рождаясь в определенных условиях жизни, перенимает их у общества, поддерживая свою жизнь традициями, обычаями, законами. У богатых и бедных совершенно разные представления о мире, это только с виду мы все вроде одинаковые и в равной степени заслужили счастья. Но только заслуга сама по себе богатства не создает, его создает сам человек, в этом и суть привлечения денег. Если вы родились в бедной семье, это не обязательно означает, что вы останетесь таковым на всю жизнь. Просто у других есть некая фора на изначальном старте. Не всем дано выйти из мысленных образов бедности в богатство. Когда успех достигнут, благодаря собственному уму и труду, человек просто заслуживает жить хорошо. Это целое искусство и бесконечное познание самого себя.

ՀՏԴ 004.31 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Արմեն Ապրեսյան
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 4-րդ կուրս
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Գիտական ղեկավար՝մ.գ.թ., դոցենտ Վ.Վ. Առուստաման
armen_apresyan_97@mail.ru

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՆՔԵՐԻ ՍԵՐՎԵՐՆԵՐԻ ՀՈՒՍԱԼԻՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅՈՒՆԸ

Բանալի բառեր: տվյալների բազա, գաղտնաբառեր, DCL հրամաններ, կրկնօրինակում, վերականգնում, տրանզակցիա, անվտանգություն, Role-եր:

Հոդվածում ներկայացվում է, թե ինչ է տվյալների բազան, ինչպիսի տվյալների բազայի ղեկավարման համակարգեր գոյություն ունեն, ինչպես ապահովել ՏԲ-ի անվտանգությունը՝ չարտոնված մուտքից, տվյալների կորստից, դիտավորյալ վնասումից, ինչպես կրկնօրինակել և վերականգնել ՏԲ-ն, և վերջապես՝ ինչ հետևանք կարող է ունենալ տվյալների կորուստը տվյալ կազմակերպության համար:

Армен Апресян

Надежность и безопасность серверов баз данных.

Ключевые слова*: база данных, пароли, команды DCL, резервное копирование, восстановление, транзакция, безопасность, роли.*

В статье описывается, что такое база данных, какие системы управления базами данных существуют, как обеспечить защиту базы данных от несанкционированного доступа, при потере данных, от преднамеренного повреждения, как выполнять резервное копирование и восстановление базы данных и какие последствия может иметь потеря данных для данной организации

Տվյալների բազան տեղեկատվության էլեկտրոնային պահոց է, որն ունի իր կոնկրետ, առավել հարմար և ֆունկցիոնալ կառուցվածքը, որի առավելություններն են՝ տվյալների արագ հասանելիությունը, տվյալների անվտանգությունը, տվյալների միասնական օգտագործումը, ժամանակի և որոշ այլ միջոցների խնայողությունը:Տվյալների բազա ստեղծելու և նրանց հետ աշխատելու համար կիրառվում են տարբեր տեսակի տվյալների բազաների ղեկավարման համակարգեր: Ներկայումս ամենատարածված ՏԲՂՀ-երն են՝ Oracle-ը,PostgresSQL-ը և MS SQL Server-ը:

ՏԲ-ի անվտանգությունը տվյալները օգտագործողների կողմից չարտոնված մուտքից պաշտպանելու համար է, իսկ ՏԲ-ին սպառնացող վտանգը կարող է լինել դիտավորյալ կամ անուղղակի, որը կարող է բացասաբար անդրադառնալ համակարգի և, հետևաբար, ամբողջ կազմակերպության գործունեությանը: Դրա պատճառը կարող են լինել ինչպես մարդկային գործոնները, այնպես էլ հանգամանքների համընկումը: Վնասը կարող է լինել՝

1. ակնհայտ՝ տվյալների կորուստ, սարքավորումների տեխնիկական վնասում և այլն.
2. ոչ ակնհայտ՝ հաճախորդների,գործընկերների վստահության կորուստ:

Տվյալների կորուստներից խուսափելու համար կազմակերպությունը պետք է իմանա

հնարավոր վտանգները, այնուհետև պետք է մշակել համապատասխան գործողությունների պլան՝ հնարավոր սպառնալիքներից խուսափելու համար: Անվտանգության համակարգը կարելի է արտահայտել գաղտնաբառերի միջոցով՝ օգտագործողների համար: Գրանցված օգտվողի կողմից տվյալների մուտքի հնարավորությունը սահմանափակվում է միայն որոշակի գործողություններով: Օրինակ՝ ՏԲ-ի ադմինիստրատորին կարող է տրվել տվյալների բազայում առկա բոլոր տվյալները, ընկերության մասնաճյուղի ղեկավարին՝ միայն իր բաժնին պատկանող տվյալները, իսկ սովորական աշխատողին՝ իր պաշտոնական պարտականությունների կատարման համար անհրաժեշտ տվյալները և այլն:

ՏԲՂՀ-երի անվտանգությունը կարելի է սահմանել տվյալների ղեկավարման լեզվի հրամանների(DCL) միջոցով: Տվյալների կառավարման օպերատորները ներառում են GRANT,REVOKE և DENY հրամանները, որոնք նախատեսված են ՏԲ-ի ադմինիստրատորի կողմից՝ օգտագործողներին որևէ արտոնություն տրամադրելու և վերացնելու համար: DCL հրամաններ օգտագործվում են տվյալների բազայի անվտանգության ապահովման համար բազմաօգտագործող տվյալների բազայի միջավայրում: DCL հրամանները բաժանվում են երեք տեսակի՝ GRANT, REVOKE և DENY: Տվյալների բազայի օբյեկտների նկատմամբ արտոնություններ տրամադրել կամ հեռացնել կարող է միայն ՏԲ-ի ադմինիստրատորը կամ ՏԲ-ի սեփականատերը:GRANT հրաման նախատեսված է օգտագործողներին տվյալների բազայի օբյեկտների նկատմամբ արտոնությունների տրամադրման համար:

GRANT հրամանի օգտագործման գրելաձևը հետևյալն է՝

GRANT արտոնության անուն

ON օբյեկտի անուն

TO {user_name |PUBLIC |role_name}

[WITH GRANT OPTION];

Արտոնության անունը օգտագործողին տրված մուտքի իրավունքը կամ արտոնությունն է: Հասանելիության որոշ իրավունքներից են ALL-ը, EXECUTE-ը և SELECT-ը:

Օբյեկտի անունը տվյալների բազայի օբյեկտների անուններն են, օրինակ՝ TABLE, VIEW, PROCEDURES,SEQUENCE և այլն:

user_name- ը օգտագործողի անունն է, որի համար տրվում է տվյալ արտոնությունը:

PUBLIC-ը օգտագործվում է բոլոր օգտագործողներին տվյալ արտոնությունը տրամադրելու համար:

ROLE-ը արտոնությունների համախումբ է:

WITH GRANT OPTION – ը թույլ է տալիս օգտվողին իր համար նախատեսված արտոնությունները տրամադրել ՏԲ-ի ուրիշ օգտագործողների:

Օրինակ `

GRANT SELECT ON employee TO user1:

Այս հրահանգը տալիս է SELECT հրամանի կիրառման թույլտվություն employee աղյուսակի նկատմամբ user1 օգտվողին: Եթե մենք կիրառում ենք WITH GRANT արտոնությունը, պետք է լինենք ուշադիր, քանի որ եթե GRANT SELECT արտոնություն տրամադրենք user1-ին, ապա user1-ը իր հերթին կարող է employee աղյուսակի նկատմամբ SELECT արտոնություն տալ user2-ին, և հետագայում եթե մենք user1-ից վերցնենք նշված արտոնությունը(REVOKE-հրամանի միջոցով), ապա user2-ը դեռևս կունենա employee աղյուսակի նկատմամբ SELECT արտոնությունը:

REVOKE հրամանը հեռացնում է օգտագործողին տրված արտոնությունները տվյալների

բազայի օբյեկտների համար:

REVOKE հրամանի գրելաձևը հետևյալն է `

REVOKE արտոնության անուն

ON օբյեկտի անուն

FROM {user_name | PUBLIC | role_name}

Օրինակ ` REVOKE SELECT ON employee FROM user1;

Այս հրամանը կվերցնի SELECT արտոնությունը user1 օգտվողից employee աղյուսակի նկատմամբ:Երբ մենք REVOKE SELECT արտոնությունը վերցնում ենք user1 օգտվողից, ապա նա այլևս չի կարողանա ստանալ տվյալներ employee աղյուսակից:

DENY - թույլ չի տալիս տվյալ օբյեկտի նկատմամբ գործողություններ իրականացնել (ի տարբերություն REVOKE- ի, որը պարզապես ջնջում է այդ արտոնությունները):

DENY հրամանի գրելաձևը հետևյալն է՝

DENY SELECT

ON օբյեկտի անուն

TO օգտվողի անուն

CASCADE ;

CASCADE-ը կիրառվում է այն ժամանակ, երբ տվյալ արոնությունը տրվել է օգտվողին WITH GRANT OPTION տարբերակով, այսինքն՝ ՏԲ-ի տվյալ օգտվողը ևս իր հերթին կարող է տրամադրել իրեն տրված արտոնությունը ուրիշ օգտվողներին: CASCADE-ի կիրառմամբ չեղյալ են հայտարարվում մնացած բոլոր օգտվողներին տրված արտոնությունները:

Role-երը արտոնությունների կամ մուտքի իրավունքի հավաքածու են: Երբ տվյալների բազայում շատ օգտվողներ կան, դժվար է դառնում օգտվողներին արտոնություններ տրամադրել կամ չեղյալ հայտարարել: Հետևաբար, եթե դուք Role եք սահմանում, կարող եք տալ կամ վերցնել օգտվողներից արտոնությունների համախումբ:

Role ստեղծելու գրելաձևը հետևյալն է `

CREATE ROLE Role-ի անուն

[IDENTIFIED BY գաղտնաբառ];

Օրինակ `ստեղծենք Role testing անվանմամբ, որի գաղտնաբառն է pwd

CREATE ROLE testing

IDENTIFIED BY pwd;

Ավելի հեշտ է GRANT կամ REVOKE արտոնությունները օգտագործողների համար տալ Role-ի միջոցով, քան ցանկացած օգտվողի տալ ուղղակի արտոնություն : Եթե Role-ը ճանաչվում է գաղտնաբառով, ուրեմն, երբ դուք տալիս եք GRANT կամ REVOKE արտոնությունները, դուք անպայման պետք է այն տաք գաղտնաբառի միջոցով:

Մենք կարող ենք GRANT կամ REVOKE արտոնությունը տալ Role-ին, ինչպես ցույց է տրված ստորև:

Օրինակ՝

Տանք օգտվողին CREATE TABLE արտոնությունը, թեստային Role ստեղծելով՝

Նախ՝ ստեղծել թեստային Role-ը

CREATE ROLE testing;

2-րդ քայլում testing Role-ին տանք CREATE TABLE արտոնությունը:Մենք կարող ենք ավելի շատ արտոնություններ տալ Role-ին:

GRANT CREATE TABLE TO testing;

3-րդ քայլով testing Role-ը հասանելի դարձնենք user1 օգտվողին

GRANT testing TO user1;

Որպեսզի testing Role-ից վերցնենք CREATE TABLE արտոնությունը,կարող ենք գրել այսպես՝

REVOKE CREATE TABLE FROM testing;

ՏԲ-ից տվյալ Role-ին հեռացնելու գրելաձևը հետևյալն է:

DROP ROLE Role-ի անուն;

Որպեսզի ՏԲ-ից ջնջենք testing անունով Role-ը:

DROP ROLE testing;

MS SQL Server-ում ՏԲ-ների կրկնօրինկումը(Back Up) և վերականգնումը (Restore) երաշխիք է հանդիսանում կարևորագույն տվյալների պաշտպանության համար: Որպեսզի ՏԲ-ից տվյալների կորուստը հասցնենք մինիմալի, անհրաժեշտ է կրկնօրինակել ՏԲ-ները՝ կանոնավոր կերպով տվյալների փոփոխությունները պահպանելու համար: Կանոնավոր կերպով ՏԲ-ների կրկնօրիակում ապահովում է տվյալների կորստից: ՏԲ-ների կրկնօրինակը միակ միջոցն է տվյալների կորստի դեպքում այն վերականգնելու համար:

Տվյալների բազայի վավեր կրկնօրինակներով դուք կարող եք վերականգնել ձեր տվյալները բազմաթիվ արտակարգ դեպքերից, ինչպիսիք են՝

ա)Օգտվողների սխալների դեպքում, օրինակ՝ ՏԲ-ից պատահմամբ աղյուսակի կամ այլ օբյեկտների ջնջումը:

բ)Տեխնիկական անսարքությունները, օրինակ՝ կոշտ սկավառակի վնասվելը կամ սերվերների մշտական կորուստ:

գ)Բնական աղետների դեպքում ՏԲ-ների կրկնօրինակների պահպանումը ոչ լոկալ սերվերների տակ հնարավորություն կտա բնական աղետի դեպքում հեշտությամբ վերականգնել այն:

Բացի այդ, ՏԲ-ների կրկնօրինակները օգտակար են այլ նպատակների համար, օրինակ՝ տվյալների բազան մեկ սերվերից մյուս սերվերի տակ տեղափոխելու համար:

ՏԲ-ի ամբողջական կրկնօրինակումը MS SQL Server-ում կատարվում է հետևյալ քայլերով.

1.ՏԲ-ի արգելափակում,որը արգելափակում է բոլոր գործարքները:

2. Տրանզակցիայի մատյանում կատարվում է նշում տվյալ կրկնօրինակման մասին:

3. Վերացվում է ՏԲ-ի արգելափակումը:

4. Կատարվում է ՏԲ-ի բոլոր էջերի կրկնօրինակում:

5. Արգելափակում է բոլոր գործարքները:

6. Տրանզակցիայի մատյանում կատարվում է նշում տվյալ կրկնօրինակման մասին:

7. Վերացվում է ՏԲ-ի արգելափակումը:

Տվյալների բազայի կրկնօրինակման հիմնական հրամանները հետևյալն են.

BACKUP DATABASE <տվյալների բազայի անունը>

TO DISK = ´<ուղղությունը>\<ֆայլի անունը>´

WITH INIT

WITH INIT պարամետրը, որը ամենատարածվածն է, ասում է SQL Server- ին, կրկնօրինակել ցանկացած տվյալ, որը կարող է գոյություն ունենալ ՏԲ-ում տվյալ պահին:

Դիֆերենցիալ կրկնօրինակը ֆիքսում է բոլոր այն էքստենտները, որոնք ՏԲ-ի վերջին կրկնօրինակումից հետո փոխվել են: Իսկ դիֆերենցիալ կրկնօրինակի հիմնական

նպատակն է նվազեցնել ՏԲ-ի կրկնօրինակների քանակը, որոնք պետք է վերականգնվեն: Եթե լիարժեք կրկնօրինակ գոյություն չունի, դուք չեք կարող կատարել դիֆերենցիալ կրկնօրինակում:

Դիֆերենցիալ կրկնօրինակում կատարելու ամենապարզ հրամանը հետևյալն է՝

BACKUP DATABASE <տվյալների բազայի անունը>

TO DISK = ´<ուղղությունը>\<ֆայլի անունը>´

WITH DIFFERENTIAL

Դիֆերենցիալ կրկնօրինակը վերականգնելու համար նախ անհրաժեշտ է վերականգնել լիարժեք կրկնօրինակը, այնուհետև վերականգնել դիֆերենցիալ տարբերակը:

RESTORE հրամանի գրելաձևը հետևյալն է՝

RESTORE DATABASE Sales

FROM DISK = 'E:\BAK\Sales.bak'

WITH MOVE 'Sales_Data1' to

'C:\Program Files \ Microsoft SQL Server \ MSSQL13.MSSQLSERVER \ MSSQL \ Data \ Sales_Data1.mdf'

MOVE 'Sales_log' to 'C: \ Program Files \ Microsoft SQL Server \ MSSQL13.MSSQLSERVER \ MSSQL \ Sales_log.ldf',

STATS = 10;

RESTORE DATABASE հրամանից հետո նշում ենք թե ինչ անունով պետք է վերականգնել BACKUP ֆայլը, FROM DISK-ից հետո նշում ենք BACKUP ֆայլի ուղղությունը, WITH MOVE հետո նշում ենք .mdf և .ldf ֆայլերի ուղղությունը: Տվյալ օրինակում վերականգվել է Sales անունով ՏԲ-ի կրկնօրինակը:

Մեր օրերում կան բազմաթիվ կազմակերպություններ, որոնք անընդհատ ծառայություններ են մատուցում հաճախորդներին: Չարտոնված փոփոխությունը, տվյալների կորուստը կարող են հանգեցնել լուրջ հետևանքների ինչպես կազմակերպության համար, այնպես էլ հաճախորդների հետ աշխատելիս: Պետք է նշել, որ անկախ նրանից, թե դա խոշոր կազմակերպություն է կամ փոքր ձեռնարկություն, պետք է լրջորեն հաշվի առնեք տվյալների բազայի պաշտպանվածությունը: Իրավիճակը արդյունավետ կառավարելու համար հարկավոր է միշտ հետևել և ժամանակին արձագանքել տվյալների բազային սպառնացող վտանգներին: Ավելի լավ է ժամանակին վերացնել այն վտանգները, որոնք կարող են բերել տվյալների կորստի, քան տվյալների կորստի դեպքում փորձել վերականգնել այն: Տվյալների բազայի պաշտպանությունը նպատակաուղղված է պատճառած վնասների նվազեցմանը:

Իրականում, տվյալների բազայի անվտանգությունն այնպիսի պաշտպանողական միջոց է, որն օգտագործվում է տվյալների բազաների և տվյալների պոտենցիալ կորուստներից պաշտպանվելու համար: ՏԲ-ների և տվյալների անվտանգությունն ապահովելու համար պետք է ուշադրություն դարձնել հետևյալ բաղադրիչներին՝

1. Ծրագրային ապահովում - ծրագրային ապահովումը օգտագործվում է ապահովելու համար, որպեսզի մարդիկ չկարողանան մուտք գործել տվյալների բազա վիրուսների, հակերների կամ այլ նմանատիպ գործընթացներ հետևանքով:
2. Ֆիզիկական վերահսկողություն - Տվյալների բազայի անվտանգության ֆիզիկական բաղադրիչի օրինակ կարող է հանդիսանալ ընկերության աշխատակիցների կողմից տվյալների բազայի շարունակական մոնիտորինգը, որպեսզի նկատված պոտենցիալ վտանգները ժամանակին վերացվեն:

3. Ադմինիստրատիվ վերահսկողություն - սա վերաբերում է այնպիսի գործոնների, ինչպիսիք են՝ գաղտնաբառերի օգտագործում՝ սահմանափակելով ընկերության որոշ աշխատողներին որոշակի տվյալների մուտքից, կամ, ընդհանրապես, արգելելու ընկերության որոշ աշխատակիցների մուտքը ՏԲ:

Ինչպես տեսանք, տվյալների բազայի անվտանգությունը ձեր և ձեզ բիզնեսին պարտադրում է պահպանել տվյալները ճիշտ և պատշաճ կերպով: Սահմանված օրենքներին համապատասխանելը ոչ միայն նվազեցնում է տեղեկատվության չարաշահման վտանգը, այլև պաշտպանում է ձեզ ինչպես իրավական հետևանքներից, այնպես էլ հաճախորդի վստահության կորստից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ицик Бен-Ган, Диджан Сарка, Рон Талмейдж - Microsoft SQL Server 2012. Создание запросов, Издательство «Русская редакция» Москва 2014 (700 էջ).
2. Гарсия-Молина Г. Системы баз данных. Полный курс.Издательство «Вильяме», Москва 2003 (1057 էջ).
3. Бондарь А. Г. Microsoft SQL Server 2012. Санкт-Петербург Издательство «БХВ-Петербург» 2013 (591 էջ).
4. Душан Петкович Microsoft SQL Server 2012(Пер. с англ.).Руководство для начинающих. Издательство «БХВ-Петербург», 2013 (784 էջ).
5. Роберт Виейра, программирование баз данных Microsoft SQL Server 2005(Пер. с англ.) Для профессионалов, Издательство «Диалектика» Москва 2008 (1046 էջ).
6. Томас Кайт, Дарл Кун Oracle для профессионалов(Пер. с англ.): архитектура и методики программирования, 3-е изд. Издательство «Вильяме», 2016 (954 էջ).
7. Oracle 9*i* программирование на языке PL/SQL(Пер. с англ.),Скотт Урман Издательство «ЛОРИ» 2004 (529 էջ).
8. Վիքիպեդիա – ազատ հանրագիտարան:
9. https://docs.microsoft.com/en-us/sql/relational-databases/backup-restore/back-up-and-restore- of-sql-server-databases?view=sql-server-2017
10. https://beginner-sql-tutorial.com/sql-grant-revoke-privileges-roles.htm

ՀՏԴ 004.94 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Տաթևիկ Առաքելյան
ԱրՊՀ «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»
մասնագիտության 4-րդ կուրս
E-mail: tatev-24.12.98@mail.ru
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ. դոցենտ Վ.Վ.Առստամյան

JAVASCRIPT ԼԵԶՎՈՎ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ԳՐԱԴԱՐԱՆԻ ՄՇԱԿՈՒՄԸ ՊԱՏՈՒՀԱՆԱՅԻՆ ԻՆՏԵՐՖԵՅՍԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ ՀԱՄԱՐ

Բանալի բառեր. *Ֆրոնտենդ; web; HTML; CSS; JavaScript; JSON; MVC; MDI; CMS*

Հոդվածը նվիրված է ֆրոնտենդ պատուհանային ինտերֆեյսի պարունակության կառավարմանը (CMS)՝ ապահովելով կազմակերպության լոկալ ցանցում կորպորատիվ պորտալ ստեղծելու գործիքներ՝ վեբ տեխնոլոգիաների հիման վրա: Կատարվում է առկա պատուհանային գրադարանների վերլուծություն, ինչպես նաև ներկայացված են ստեղծված գրադարանի որոշ նյութեր՝ իրենց հատկանիշներով:

Татевик Аракелян

РАЗРАБОТКА БИБЛИОТЕКИ ФУНКЦИЙ ДЛЯ РЕАЛИЗАЦИИ ОКОННОГО ИНТЕРФЕЙСА НА ЯЗЫКЕ JAVASCRIPT

Ключевые слова: *Фронтэнд; web; HTML; CSS; JavaScript; JSON; MVC; MDI; CMS*

Статья посвящена frontend-разработке модуля оконного интерфейса для системы управления содержимым (CMS), предоставляющей инструменты создания корпоративного портала в локальной вычислительной сети организации на основе web-технологий. Проведён анализ существующих оконных библиотек, а также представлены некоторые материалы созданной библиотеки с описанием её особенностей.

JavaScript լեզուն օգտագործողին տրամադրված բարդ ինտերֆեյսների համատեքստում շատ հարմար <<գործիք է>>: Ֆրոնտենդ-միջավայրում այն թույլ է տալիս իրականացնել ցանկացած բարդության նախագծեր, անկախ նրանից, թե ինչ խնդիրներ են դրել web-ծրագրավորողի առջև դիզայները կամ UI (User Interface) ծրագրավորողը: Ամեն տարի JavaScript-ը դառնում է ավելի ու ավելի հայտնի և տարածվում է web միջավայրից այն կողմ: Այն լայնորեն օգտագործվում է կիրառական ծրագրային ապահովման մեջ, գրասենյակային ծրագրերում, վեբ խմբագիրներում, բջջային ծրագրեր ստեղծելու համար (Palm webOS) և նույնիսկ օպերացիոն համակարգերի անբաժանելի մի մասն է կազմում (eyOS): Web հավելված մշակելիս, մասնավորապես, CMS ստեղծելիս, ակնհայտ է այս լեզուն օգտագործելու անհրաժեշտությունը [1]:

Կորպորատիվ պորտալի ստեղծման և ապահովման համար համակարգի պարունակության նախագծման ընթացքում անհրաժեշտ է լինում կազմել frontend-ինտերֆեյս MDI (Multiple Document Interface) մեթոդի ընտրությամբ: Նման իրականացումը կապահովի համակարգի հետ օգտագործողների փոխգործակցության այլ մակարդակ՝ համեմատած web միջավայրում աշխատանքը կազմակերպելու ավելի դասական մոտեցման հետ: Այս մեթոդի օգտակար հատկությունների շարքում են.

- արագ անցում բաժինների միջև (հեշտ նավիգացիա),
- մի քանի բաժինների միաժամանակյա ցուցադրում,
- աշխատանքային տարածքի դինամիկ կազմակերպում:

Բայց, բացի դրական կողմերից, մոտեցումն ունի նաև թույլ կողմեր, որոնք վերաբերում են web միջավայրի շրջանակներում MDI մեթոդի ներդրմանը: Հիմնական թերություններից մեկը նման համակարգի իրականացման հնարավոր անկումն է մի քանի բաց պատուհանների (կայքի բաժինների) միաժամանակյա շահագործման ժամանակ, եթե դրանցից յուրաքանչյուրը սերվերին ասինխրոն հարցում է կատարում: Այն բարելավելու համար անհրաժեշտ է օպտիմալացնել հարցումները, կարգավորել և հստակ վերահսկել հաճախորդի ու սերվերի միջև տվյալների հոսքը [2]:

Այնուամենայնիվ, հարկ է նշել, որ ժամանակակից նորմերին և միտումներին համապատասխան, դրվել են հետևյալ խնդիրները.

- ապահովել բրաուզերների հետ դինամիկ հարմարողականություն (adaptive layout),
- իրականացնել ֆունկցիոնալի օպտիմալացում (performance optimization),
- իրականացնել պատուհանի դիզայնը,
- հասցնել նվազագույնի ծախսերը:

Ներկայումս կան մի շարք գրադարաններ, որոնք ապահովում են պատուհանային ինտերֆեյսի ստեղծման համար անհրաժեշտ ֆունկցիոնալը: Կա հավանականություն, որ դրանց թվում կլինի գրադարան, որը հարմար կլինի այս խնդիրների լուծման համար [3]:

	jQuery UI	WinLIKE	Windoo	ExtJS	W2UI	Qooxdoo
դինամի-կություն	+	-	+	+	+	+
ադապտիվ-ությունին	-	-	-	+	-	+
օպտիմի-զացում	-	+	+	-	-	-
ակտուա-լություն	+	-	-	+	+	+

Նկար 1

Տվյալները հավաքագրվել են Google որոնիչի միջոցով՝ հետևյալ որոնումների արդյունքում. “*javascript оконный интерфейс*”, “*оконная библиотека javascript*”, “*оконный интерфейс с помощью javascript*”: Հայտնաբերվել է վեց գրադարան, որոնց անուններն ու հատկությունները ներկայացված են Նկար 1-ում՝ հատկությունների վերլուծության արդյունքում պարզվել է, որ ընտրված գրադարանները, web միջավայրում պատուհանային ինտերֆեյս տրամադրելիս, ունեն բավականին հզոր ֆունկցիոնալություն, բայց միևնույն ժամանակ դրանք չեն բավարարում վերը նշված պահանջներից որոշներին: JavaScript-ով իրականացվող գրեթե բոլոր ժամանակակից գրադարանները ընդգրկված են բազմաթիվ ֆրեյմվորկների մեջ, իսկ դա նշանակում է, որ անհրաժեշտ ֆունկցիոնալի հետ միասին դրանք պարունակում են բազմաթիվ բաղադրիչներ, որոնց օգտագործումը մեր խնդրում չէր ենթադրվում: Լրացուցիչ կոդը ավելորդ տեղ է զբաղեցնում սերվերի կոշտ սկավառակների վրա և այն համակարգչի օպերատիվ հիշողությունում՝ RAM-ում, որի վրա աշխատում է հաճախորդը: Այդպիսի ֆրեյմվորկներ են՝ jQuery UI, W2UI և Qooxdoo: Ինչ վերաբերում է WinLIKE-ին և Windoo-ին, ապա դրանց զարգացումը դադարել է ավելի քան 9 տարի առաջ, հետևաբար նրանք կորցրել են իրենց արդիականությունը, և պարզ է որ դրանց գործառույթը չի լինի օպտիմիզացված ժամանակակից բրաուզերներում [4]:

Վերլուծության արդյունքների հիման վրա որոշվել է ստեղծել նոր պատուհանային

գրադարան JavaScript լեզվով, որը հնարավորություն կտա բավարարել նշված պահանջները և օպտիմալ գործիքներ տրամադրել պատուհանային ինտերֆեյսի ստեղծման համար:

Նկար 2-ում ներկայացված է սխեմա, որը մշակվել է Model-View-Controller (MVC) ձևանմուշի (шаблон) հիման վրա, (DOM-էլեմենտը հանդիսանում է օբյեկտ՝ web-էջի պարունակությունը պահելու համար) [5]:



Նկար 2

Գրադարանն հնարավորություն է տալիս դինամիկ պատուհաններ ստեղծել:

Նկար 3-ում պատուհանի վիզուալ հիմքը հանդիսանում է div բլոկային թեգը:

Նկար 3

Էլեմենտների ձևավորումը ներկայացված է CSS-ով՝ class-երի օգտագործմամբ: Նույն կերպ, տարրերը հասանելի են html փաստաթղթում.

1. Գլխավոր էլեմենտ - div.window;
2. Պատուհանի վերնագիր - div.head;
3. Կառավարող էլեմենտ - div.controls;
4. Պատուհանի պարունակություն - div.body.

Ներքին div.body տարրը պարունակում է form-ի բոլոր թեգերը, որը թույլ է տալիս կառավարել տվյալները: Պատուհանը ստեղծվում է՝ օգտագործելով JSON օբյեկտից ստացված հատկությունները.

Գործառույթների նոր գրադարանի ստեղծումը, ի տարբերություն գոյություն ունեցող լուծումների օգտագործման, թույլ կտա ապահովել մի շարք նշանակալի առավելություններ: Գրադարանն ունի քիչ քանակությամբ ֆայլեր, չի պարունակում ավելորդ բաղադրիչներ, իրականացնում է պատուհանի ստեղծում՝ JSON օբյեկտում նշված հատկություններին

համապատասխան, ապահովում է էջի դինամիկ լինելն տարբեր բրաուզերներով, ինչպես նաև բջջային հավելվածում աշխատելիս:

```
{
        "head" : {
                "text" : "Signin"
        },
        "controls" : {
                "close" : "true", "min" : "false", "max" : "false"
        },
        "body" : {
                "content" : "<h3>Enter your login and password</h3>",
                "paddingHorizontal" : "12px",
                "paddingVertical" : "8px"
        },
        "form" : {
                "action" : "signin.php", "method" : "get"
        },
        "inputs" : [
                {
                    "type" : "text", "placeholder" : "Login", "name" : "login"
                },
                {
                    "type" : "password", "placeholder" : "Password", "name" : "password"
                },
                { "type" : "submit", "value" : "Send" },
                { "type" : "close", "value" : "Close" }
        ],
        "width" : "195px", "height" : "210px"
}
```

Նկար 4

Ընդհանուր առմամբ, կարող ենք ասել, որ JavaScript լեզվով պատրաստի գրադարանների և ֆրեյմվորկների օգտագործումը իր հերթին ևս արդարացված է: Ծրագրավորման ընթացքում շատ ավելի կարևոր է իմանալ նախագծի առանձնահատկությունները, ճշգրիտ հասկանալ նրա պահանջները:

Այդ դեպքում, եթե ձեզ հարկավոր է օգտագործել պատրաստի ինչ-որ ֆրեյմվորկ, նրա հնարավորությունները կկարողանան դրականորեն ազդել վերջնական արդյունքի որակի վրա:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Прохоренок Н.А. HTML, JavaScript, PHP и MySQL. Джентельменский набор Web-мастера. – 4-е изд., перераб. и доп. / Н.А.Прохоренок, В.А.Дронов. – СПб.: БХВ-Петербург,2015. – 768 с.: ил. – (Профессиональное программирование)

2. Ташков П.А. Веб-мастеринг на 100 %: HTML, CSS, JavaScript, PHP, CMS, AJAX, раскрутка. — СПб.: Питер, 2010. — 512 с.: ил. — (Серия «На 100%»).

3. Османи Э. Разработка Backbone.js приложений . — СПб.: Питер, 2014. — 352 с.: ил. — (Серия «Бестселлеры O'Reilly»).

4. Свободная лицензия [Электронный ресурс] // Википедия, 2016. URL : https://ru.wikipedia.org/wiki/

5. Оконный интерфейс [Электронный ресурс] // Википедия, 2016. URL: https://ru.wikipedia.org/wiki/Оконный_интерфейс

ՀՏԴ004.624 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նուրվարդ Ասրյան
ԱրՊՀ , «Ինֆորմատիկա և կիրառական մաթեմատիկա»
մասնագիտության 4-րդ կուրս
E-mail: nvard.asryan@mail.ru
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ. դոցենտ Վ.Վ.Առստամյան

«ԱՆՎՏԱՆԳ ՔԱՂԱՔ» ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔ

Բանալի բառեր՝ *անվտանգ քաղաք, արտակարգ իրավիճակներ, մոնիտորինգ, համակարգ, տեսախցիկ, տվյալների պահպանում, միջավայր, տվյալների բազա:*

Ժամանակակից աշխարհին անհրաժեշտ են ժամանակակից անվտանգության համակարգեր, քանի որ ժամանակակից քաղաքն իրենից ներկայացնում է շատ բարդ և բազմաբնույթ կառույց: Քաղաքի բոլոր համակարգերի աշխատանքը վերահսկելու, քաղաքային ենթակառուցվածքների և յուրաքանչյուր բնակչության անվտանգությունը ապահովելու, բոլոր կարևոր իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու և պահելու ու այդ տեղեկատվությունն արագ տրամադրելու համար բոլոր ծառայություններին անհրաժեշտ է համապարփակ տեղեկատվական համակարգ: Այդպիսին է «Անվտանգ քաղաք» համակարգը:

Нурвард Асрян

ИНФОРМАЦИОННАЯ СИСТЕМА «БЕЗОПАСНЫЙ ГОРОД»

Ключевые слова: *безопасный город, чрезвычайные ситуации, мониторинг, система, видеокамера, хранение данных,окружающая среда,база данных:*

В современном мире требуются современные системы безопасности. Современный город представляет собой сложную многоуровневую структуру. Для контроля работы всех городских систем, обеспечения безопасности каждого жителя и всех уязвимых точек городской инфраструктуры, получения и хранения информации обо всех важных событиях и оперативного предоставления этой информации всем заинтересованным службам необходима комплексная информационная система. Такой является система "Безопасный город".

Քաղաքի բնակչության անվտանգության ապահովման համար անհրաժեշտ է բոլոր ենթակառուցվածքներում տեղադրել ժամանակակից անվտանգության համակարգեր: ժամանակակից քաղաքը շատ բարդ և բազմաբնույթ կառույց է:

Այն բաղկացած է բազմաթիվ ենթահամակարգերից՝ տրանսպորտային, հեռահաղորդակցման, էլեկտրականության և ջրամատակարարման, ինչպես նաև շատ ուրիշ համակարգերից, որոնք գործում և համագործակցում են միմյանց հետ:

Քաղաքում առկա համակարգերի աշխատանքի վերահսկման, իրադարձությունների վերաբերյալ տեղեկատվություն ստանալու, պահելու ու արագ մշակելու և տրամադրելու համար բոլոր ծառայություններին անհրաժեշտ է հզոր տեղեկատվական համակարգ:

Հենց այդպիսի համակարգն էլ իրենից ներկայացնում է «Անվտանգ քաղաք»-ը, որը հաջողությամբ իրականացվում է Ռուսաստանում, ԱՄՆ-ում և եվրոպական մի շարք

երկրների քաղաքներում:

«Անվտանգ քաղաք»-ը ծրագրային փաթեթ է՝ վիդեո-վերլուծական լուծումների կիրառմամբ, որն օգնում է արագորեն հայտնաբերել և արագ արձագանքել բոլոր տեսակի արտակարգ իրավիճակներին, ինչպես նաև ժամանակին միջոցներ ձեռնարկել դրանց հետևանքները վերացնելու համար:

Կազմակերպչական տեսանկյունից այն ինտեգրված համակարգ է, որը նախատեսված է քաղաքի ցանկացած անկյունում իրավապահպանության, տեսագրության մոնիտորինգի, սեփականության պաշտպանության և քաղաքացիների անվտանգության խնդիրների լուծման համար:

Ինչպես ընդգծում են փորձագետները, «Անվտանգ քաղաք» համակարգը ուղղված է հանցագործությունները կանխելուն, որը թույլ կտա կարճ ժամանակահատվածում հասնել լուրջ կանխարգելիչ ազդեցության:

Համակարգի շրջանակներում նախատեսվում է տեղադրել երեքից չորս հազար տեսախցիկներ, որոնք կազմված են օբյեկտների ճանաչման համակարգերով:

Համակարգերը հնարավոր կդարձնեն կեղծիքի լուսանկարների մեծացման դեպքում ստեղծել հանցագործի դիմանկարը կամ շատ արագ իմանալ հանցագործի մեքենայի համարը:

Ամեն տարի չբացահայտված հանցագործությունների քանակը Արցախում և այլ ուրիշ երկրներում ավելանում է, որի հիմնականում պատճառը փաստերի պակասությունն է:

Ըստ մեր ենթադրության, այդպիսի համակարգի ներդրումից հետո «Անվտանգ քաղաք»-ի էլեկտրոնային համակարգի միջոցով բացահայտված հանցագործությունների քանակը կավելանա:

Հարկ է նշել, որ նման համակարգը, որը օգտագործում էին ԱՄՆ-ի, ՌԴ և Չինաստանի մի շարք քաղաքներում, մեծ հաջողությունների է հասել և ստացել բարձր գնահատական՝ արդյունավետության համար:

Ներկայումս ՀՀ-ում ևս լուրջ քննարկումներ են անցկացվում «Անվտանգ քաղաք» համակարգի վերաբերյալ, քանի որ այս ծրագիրն արդարացրել է բոլոր պետությունների սպասելիքներն, ինչի ներդրումը Արցախում գտնում եմ, որ դարձել է առաջնահերթ խնդիրներից մեկը:

2002 թվականից ի վեր Մոսկվայում «Անվտանգ քաղաք» ինտեգրված անվտանգության համակարգի ներդրումը քաղաքի իշխանություններին հնարավորություն տվեց բարձրացնել հանցագործությունների կանխարգելման արդյունավետությունը միջինը 70% -ով, իսկ հանցագործությունների հայտնաբերումը՝ 20% -ով:

Մեր կողմից կատարվում են ավտոմատացված ծրագրային միջավայրի ստեղծման աշխատանքներ, որտեղ պետք է հաշվի առնվեն.

- տվյալների պահպանման միջավայրի ստեղծումը,
- տվյալների բազաներում առկա տվյալների վերահսկողություն:

Ստեղծված կառավարման համակարգի արդյունավետության ապահովման համար պետք է իրականացնել մոնիթորիզներ, տարբեր բնագավառի մասնագետների վերապատրաստում, մեծ տվյալների վերլուծություն և համադրում:

Առաջարկվող համակարգը պետք է բավարարի հետևյալ պահանջներին՝

- երաշխավորում է բարձր արագություն ոչ տիպային տվյալների վերամշակման ժամանակ,
- հեշտությամբ օգտվել տվյալների բազայից առանց խոչընդոտների,

- ապահովել գործարքների հուսալիության բարձր մակարդակ:

Ամփոփելով վերը նշվածը՝ կարող ենք եզրակացնել, որ «Անվտանգ քաղաք» համակարգի ենթակառուցվածքն անհրաժեշտ է ոչ միայն խոշոր քաղաքների համար, այն կարելի է օգտագործել նաև փոքր քաղաքներում, քանի որ վերջին տարիների, ոչ միայն մեծ քաղաքներում, այլ նաև փոքր քաղաքներում, շրջաններում և գյուղերում աճել է հանցագործությունների թիվը, որն էլ հանգեցրել է մեծ խնդիրների:

Քաղաքի անվտանգության մեջ մտնում է նաև բնակչության անվտանգությունը, և ինպես պարզվել է, հանցագործությունների մեծ մասը հիմնականում կատարվում է ուշ ժամերի, և տեսախցիկների առկայությունը ևս խոչընդոտ չի հանդիսանում հանցագործների համար:

Հենց այս խնդրի լուծման համար կարելի է ստեղծել այնպիսի ծրագիր, ինչպիսին է՝ <<Օգնիր ինձ>> ծրագիրը:

Ծրագրի հիմնական նպատակն է հանցագործության վայր շատ արագ հասնելը և դրա համար ընդամենն անհրաժեշտ է վտանգի ժամանակ մուտք գործել համակարգ, սեղմել <<Օգնիր ինձ>> սեղմակը, և մոտակայքում գտնվող ոստիկանները կստանան գտնվելու վայրի մասին տեղեկություն:

Այս ծրագիրն կարագացնի և կհեշտացնի ոստիկանության աշխատանքը, ինչպես նաև ինչ-որ չափով կնվազեն հանցագործությունների քանակը:

Կարծում եմ՝ մեր կողմից մշակվող այդպիսի համակարգն իրեն կարդարացնի, քանի որ այն համընդհանուր է, կարելի է անսահմանափակ ընդլայնել, կատարելագործել և ծառայեցնել հանրային բարիքներին:

Գրականության ցանկ

1. Безопасный город: портал [Электронный ресурс] . URL: http://www.itv.ru/verticals/homeland_security.php.
2. Научная электронная библиотека «Киберленинка»: портал [Электронный ресурс]. URL: http://cyberleninka.ru.
3. «Микротест»: портал [Электронный ресурс]. URL: http://www.microtest.ru/hardware/ip-monitoring/1099/.
4. Безопасный город. От идеологической концепции к действующей системе: портал [Электронный ресурс]. URL: http://www.polyset.ru/article/st652.php.

ՀՏԴ004.77 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նաստասյա Ավետիսյան
ԿՏՀ մագիստրատուրա, 2 -րդ կուրս,
Լիանա Մեսրոպյան
ԻԿՄ մագիստրատուրա, 1-ին կուրս
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Գիտական ղեկավար՝ Ա.Ս.Մնացականյան

ՓՈՔՐ ԵՎ ՄԻՋԻՆ ԲԻԶՆԵՍԻ ՀԱՄԱՐ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՀՈՍՏԻՆԳ ԾՐԱԳՐԵՐ

Բանալի բառեր՝ *հոստինգ, վիրտուալ հոստինգ, վերավաճառվող հոստինգ, վիրտուալ սերվեր, հատկացված սերվեր, տեղաբաշխում:*

Տվյալ աշխատանքում կքննարկվի, թե ինչպես տեղադրել տվյալները ինտերնետում, որպեսզի յուրաքանչյուր օգտագործող կարողանա մուտք ունենալ դեպի որոշակի տեղեկատվություն: Աշխատանքում վերլուծվելու են տարբեր հոստինգի պրովայդերների հնարավորությունները և ծառայությունները, դրանց դրական և բացասական կողմերը, և մշակվելու է այն խնդիրը, թե ինչպես կարելի է ինքնուրույն կազմակերպել նման համակարգը: Նաև կբարձրացվեն համացանցում դրանց անվտանգության և տեղեկատվության պաշտպանության հարցերը, հարձակումները հայտնաբերելու մեթոդները և կասկածելի գործունեությունների վերլուծությունը:

Настасья Аветисян, Лиана Месропян

СОВРЕМЕННЫЕ ХОСТИНГ СИСТЕМЫ ДЛЯ МАЛОГО И БОЛЬШОГО БИЗНЕСА

Ключевые слова: *Хостинг, виртуальный хостинг, реселлер- хостинг, виртуальный сервер, выделенный сервер, коллокация.*

В данной работе автор рассмотрел способы размещения данных в сети интернет, чтобы каждый пользователь мог получить доступ к определенной информации, проанализировал возможности и услуги различных хостинг провайдеров, их плюсы и минусы, изучил способы самостоятельной организации подобной системы. А так же затронуты вопросы безопасности и защиты своей информации в сети интернет, способы обнаружения атак, и анализ подозрительной активации.

Ժամանակակից աշխարհում նշանակալի դեր է հատկացված համակարգչային տեխնոլոգիաներին: Դրանց կիրառման շրջանակը չափազանց լայն է: Հաշվողական տեխնոլոգիաներն ավելի ու ավելի են ներառվում մարդու արտադրական և գիտական գործունեության ոլորտ: Ամեն տարի աճում է տարբեր տեսակի առաջադրանքներ իրականացնելու համար անհրաժեշտ հաշվարկային ուժը:

Ժամանակակից համակարգչային համակարգերը դժվար է պատկերացնել առանց ինտերնետային ծառայությունների օգտագործման: Բազմաթիվ վեբ կայքեր, որոնք այժմ ստեղծվում են ոչ միայն ընկերությունների, այլև սովորական օգտագործողների, տվյալների բազաների, վիրտուալ սկավառակների և այլ ամպային ծառայությունների կողմից, այժմ գտնվում են ցանցում և օգնում են լուծել տվյալների մշտական հասանելիության խնդիրները: Եվ այն հարցը, թե որտեղ պետք է տեղադրել ձեր տվյալները և իրականացնել տարբեր տեսակի հաշվարկներ, ավելի արդիական է, քան երբևէ:

Տվյալ աշխատանքում կքննարկվի, թե ինչպես տեղադրել տվյալները ինտերնետում, որպեսզի յուրաքանչյուր օգտագործող կարողանա մուտք ունենալ որոշակի տեղեկատվություն: Աշխատանքում վերլուծվելու են տարբեր հոստինգի պրովայդերների հնարավորությունները և ծառայությունները, դրանց դրական և բացասական կողմերը, և մշակվելու է այն խնդիրը, թե ինչպես կարելի է ինքնուրույն կազմակերպել նման համակարգը: Նաև կբարձրացվեն համացանցում դրանց անվտանգության և տեղեկատվության պաշտպանության հարցերը, հարձակումները հայտնաբերելու մեթոդները և կասկածելի գործունեությունների վերլուծությունը:

Հոստինգ: Նախ պետք է պարզել, թե ինչ է հոստինգը: Հոստինգը սերվերում հաշվարկային ռեսուրսների տրամադրման ծառայություն է՝ ինտերնետում տեղեկատվություն տեղադրելու համար: Ավելի հաճախ այն օգտագործում են վեբ կայքերի տեղադրման համար: Սովորաբար, հոստինգը նշանակում է կայքի ֆայլերի տեղադրումը նախնական կարգավորված սերվերում այնպիսի ծրագրային ապահովմամբ, որն անհրաժեշտ է կայքի ֆայլերի և հարակից ծառայությունների հարցումները մշակելու համար (վեբ սերվեր, տվյալների բազայի սերվեր, DNS սերվեր, CGI մշակող, FTP սերվեր, էլեկտրոնային փոստի սերվեր) ։

Բայց հոստինգի օգտագործումը չի սահմանափակվում միայն կայքերի տեղադրմամբ: Այն հնարավորություն է տալիս տեղադրել այնպիսի ծրագրեր, որոնք պահանջում են մշտական մուտք ինտերնետ, օրինակ՝ 1C հաշվապահություն, կազմակերպել ֆայլերի հոստինգի ծառայություն կամ պարզապես պահել ֆայլերը անձնական օգտագործման համար: Կարելի է ստեղծել նաև սեփական սերվերը, օրինակ՝ խաղային սերվեր, որն արագ զարգացող խաղային արդյունաբերության հետ համատեղ այս ծառայությունը դարձնում է շատ տարածված:

Հոստինգի մատակարարը ընկերություն է, որն ապահովում է հոստինգի ծառայություններ և վարձակալության է տալիս սարքավորումները: Ներկայումս կան բազմաթիվ հոստինգ ընկերություններ, որոնք մատուցում են տարբեր ծառայություններ, գովազդում են իրենց հնարավորությունները և ծառայությունները: Այս գիտական աշխատանքի շրջանակներում քննարկվելու են դրանցից միայն մի քանիսը, բայց այն կօգնի ձևավորել ընդհանուր պատկերացում մատուցած և մատուցվող ծառայությունների վերաբերյալ:

Հոստինգի տեսակները: Ներկայումս հոստինգների շատ տեսակներ կան, և ամեն ինչ կախված է անձի կամ կազմակերպության ցանկություններից և հնարավորություններից: Բայց քննարկենք հոստինգի հիմնական տեսակները, որոնց անունները հաճախ նշվում են տարբեր հոստինգ ընկերությունների գովազդներում.

Վիրտուալ հոստինգ: Դրա առանձնահատկությունն այն է, որ սերվերի բոլոր ռեսուրսները բաժանված են հոսթինգի հաշիվների միջև, և դրանցից յուրաքանչյուրում կարելի է տեղադրել մի քանի կայք: Նման հոստինգն արդեն ունի անհրաժեշտ ծրագրաշար, որպեսզի կայքերն աշխատեն՝ վեբ սերվեր, տվյալների բազայի սերվեր, FTP սերվեր, PHP գործընթացոր, և նաև տրամադրվում են լրացուցիչ հնարավորություններ, ինչպիսիք են՝ կայքի ինքնաբերաբար տեղակայման CMS:

Վերավաճառվող հոստինգը պատրաստի լուծում է հոստինգը վաճառելու համար: Ձեռք բերելով վերավաճառվող հոստինգը՝ գնորդը դառնում է միջնորդ՝ հոստինգի մատակարարի և վերջնական օգտագործողի միջև;

Վիրտուալ սերվեր (VPS սերվեր կամ VDS սերվեր): Այս ծառայությունը ենթադրում է, որ

մի քանի վիրտուալ մեքենաներ հնարավոր է գործարկել մի ֆիզիկական սերվերի վրա, և մեքենաներից յուրաքանչյուրը ամբողջությամբ մեկուսացված է մնացածից: Նման սերվերի վարձակալը ամբողջությամբ մուտք է գործում UPU-ի կառավարում (ադմինիստրատորի / root-օգտագործողի մակարդակով) և կարող է այնտեղ տեղադրել անհրաժեշտ տվյալներ:

Հատկացված սերվեր: Այն իրենից ներկայացնում է առանձին ֆիզիկական սերվեր կամ համակարգիչ, որի բոլոր ռեսուրսները օգտագործողի տրամադրության տակ են: Այս տարբերակը անհրաժեշտ է մեծածավալ պրոյեկտների տեղադրման համար, որոնք ունեն մեծ թվով այցելուներ, օրինակ, միջին կամ մեծ առցանց խանութների համար: Նման ծառայության սեփականատերն ինքն է ղեկավարում հատկացված սերվերը, կարող է տեղադրել անհրաժեշտ ՕՀ-ն և այլ ծրագրային ապահովումները, որոնք թույլ են տալիս ճկուն կարգաբերել մեքենան որոշակի առաջադրանքների լուծման համար:

Տեղաբաշխում(*co-location*): Այս տիպին համապատասխանում է սեփական սերվերի տեղադրումը հոստինգի մատակարարի տվյալների կենտրոնում: Այս ծառայությունը նման է «Հատկացված սերվերին», մեկ բացառությամբ: Այս տարբերակում հաճախորդն ինքն է տեղադրում իր սարքավորումները տվյալների կենտրոնում՝ վճարելով միայն դարակաշարերի տարածության, ինտերնետի և սերվերի կողմից սպառված էներգիայի համար: Տվյալների կենտրոնն իր հերթին ստանձնում է պատասխանատվություն այդ սարքավորումների անվտանգության, ինչպես նաև կայուն ինտերնետի և անխափան սնուցման համար:

Այս տարբերակներից ամենատարածվածն է «վիրտուալ հոսթինգը»: Այս ծառայությունը ավելի հաճախ գնվում են փոքր ընկերությունների և անհատների կողմից, որոնք ցանկանում են արագ և հեշտ ավելացնել իրենց մասին տեղեկատվություն ցանցում: Շատ հոստինգ պրովայդերների մոտ առկա վեբ կայքի ստեղծողի առկայությունը պարզեցնում է այս խնդիրը:

Այս տարբերակի թերությունը նրա ցածր ճկունությունն է և հատուկ առաջադրանքներին հարմարվելը: Որպես կանոն, հոստինգ պրովայդերները փոքր ռեսուրսներ են հատկացնում մեկ հաճախորդին՝ 4 ԳԲ սկավառակի տարածություն, սահմանափակում են ելքային ինտերնետային տրաֆիկը, գործընթացորի օգտագործման հնարավորությունները և միաժամանակ տեղադրվող կայքերի քանակը:

Ավելի ճկուն տարբերակի համար պետք է ուշադրություն դարձնել հատկացած սերվերի ծառայություններին: Բայց այն, ինչին պետք է ուշադրություն դարձնեք հոստինգ ընտրելիս, կքննարկվի ավելի ուշ:

Հոստինգի ընտրություն: Հոստինգի ընտրությունը ցանկացած կազմակերպության կարևոր պահերից մեկն է, քանի որ կազմակերպության նախագծերի ճակատագիրը և նրա ամբողջ աշխատանքը կախված է կայացված որոշումից:

Առաջին քայլը ցանկացած նախագծի կամ նախագծերի համար նվազագույն համակարգի պահանջների որոշումն է, արդյոք նախատեսվում է հետագա ընդլայնում և ֆունկցիոնալության ավելացում: Քանի որ, եթե որևէ ընկերության ծրագրերը նախատեսում են մի քանի խոշոր ինտերնետ ռեսուրսների ստեղծում, ապա ակնհայտ է, որ պետք է ընտրվի հատկացված սերվերի ծառայություններ, քանի որ ընդհանուր հոստինգը չի կարողանա ապահովել տեղակայման համար անհրաժեշտ բոլոր պահանջները: Եվ եթե նախատեսվում է ստեղծել միայն այցեքարտի կայք, որի հիմնական տեղեկատվությունը ընկերության ծառայությունների մասին է, պետք է օգտվել բյուջետային սակագնի վիրտուալ հոստինգից:

Երկրորդ կետը, որին պետք է ուշադրություն դարձնել, սարքավորումների մատակարարի աշխարհագրական դիրքն է, քանի որ արագ արձագանքման ժամանակը և ներբեռնման արագությունը հիմնական բնութագրերն են ցանկացած ինտերնետային ծառայությունների հետ աշխատելիս: Եթե նախատեսվում է ներգրավել օտարերկրյա քաղաքացիներ, ապա ընկերությունը պետք է մտածի լրացուցիչ, օտարերկրյա հոստինգների ծառայությունների ընտրության մասին, որպեսզի նվազեցնի հաճախորդների տվյալների մուտք գործելու ժամանակը:

Հիմնական կարիքները որոշելուց հետո արդեն կարելի է մտածել հոստինգ մատակարարի և դրա անհրաժեշտ ծառայությունների ընտրության մասին:

Հոսթինգ մատուցողներն իրենց վարկանիշը ձևավորում են հետևյալ պարամետրերի համաձայն.

Հուսալիություն (uptime): Գործառնական ժամանակի հարաբերակցությունը պարապ ժամանակի: Այս պարամետրը մատակարարներից ընտրելու ժամանակ հիմնականներից մեկն է:

Արագագործություն: Այս պարամետրը որոշում է ամբողջ հոսթինգի արագությունը, որպես ամբողջություն, ինչը կարևոր է մեծավավալ նախագծեր տեղադրելիս:

Արձագանքման ժամանակ (ping): Ցույց է տալիս սերվերի արձագանքման ժամանակը հաճախորդի մուտք գործելուց հետո: Որքան ցածր է այս պարամետրը, այնքան ավելի լավ:

Բեռնավորման դիմակայելիություն: Պարամետրը նման է արագությանը, բայց ցույց է տալիս հոստինգի ընդհանուր կարգավիճակը սերվերի զանգվածային և երկարատև պահանջների ժամանակ;

Անվտանգություն: Տեղաբաշխման ընթացքում տվյալների անվտանգության հուսալիություն:

Ուղղակի հոստինգի սակագները ինքնին շատ չեն տարբերվում: Այսպիսով, օրինակ, «Վիրտուալ հոստինգի» սակագները համեմատվում և նկարագրվում են հետևյալ քանակական և որակական սահմանափակումների համաձայն.

- CGI աջակցություն. Perl, PHP, Python, ASP, Ruby, JSP, Java;
- մոդուլներ և ֆրեյմվորկներ;
- սկավառակի տարածքի ծավալը օգտվողի ֆայլերի համար;
- ամսական տրաֆիկի քանակը;
- այն կայքերի քանակը, որոնք կարելի է տեղադրել մեկ հաշվի ներքո;
- FTP օգտագործողների քանակը;
- էլ. փոստարկղերի քանակը և փոստի համար նախատեսված սկավառակի տարածքի ծավալը;
- տվյալների բազաների քանակը և տվյալների բազայի համար սկավառակի տարածքի ծավալը;
- յուրաքանչյուր օգտագործողի միաժամանակյա գործընթացների քանակը;
- RAM- ի քանակը և յուրաքանչյուր օգտագործողի գործընթացին հատկացված առավելագույն ժամանակը:

Սակագների այս տողի միջև ընտրությունը պետք է կատարվի միայն սակագնից և տրամադրված հնարավորություններից կախված: Որոշ հոստինգ ընկերություններում նման սակագների համար որպես բոնուս տրամադրվում է SSL վկայագիր և կայքի համար դոմեն:

Եթե խոսենք վիրտուալ սերվերի կամ հատկացված սերվերի սակագների մասին, ապա

սահմանափակումները այդքան շատ չեն, բայց դրանք ավելի նշանակալից են, այդ սակագների հիմնական տարբերությունը հաճախորդի համար հատկացվող ռեսուրսներում է.

- կոշտ սկավառակի ծավալը,
- օպերատիվ հիշողության ծավալը,
- գործընթացորային միջուկների քանակը և դրանց հաճախությունը:

Հաճախորդին տրվում է ամբողջական մուտք դեպի սերվեր առանց սահմանափակումների, ինչպես տեղի է ունենում վիրտուալ հոստինգի դեպքում: Հաճախորդը կարող է ինքնուրույն ընտրել այն օպերացիոն համակարգը, որը տեղադրվելու է սերվերի վրա, և նա կարող է նաև տեղադրել և կարգավորել իր համար անհրաժեշտ ծրագրային ապահովումը:

Ըստ ցանկության, նման սակագներով առաջարկում են հետևյալ ծառայությունները.

- ինտերնետային ալիք 100մբ/վրկ և հատկացված IPv4 հասցե,
- Սերվերի կառավարման վահանակ. ուղղակիորեն վերահսկել սերվերը ինքնին, որը ներառում է սպառված ռեսուրսների մոնիտորինգ, համակարգային պահուստավորման ստեղծում՝ անսարքությունների և դրանց գործառնական համակարգերի ավտոմատ տեղադրման դեպքում դրանց վերադառնալու հնարավորությամբ,
- ISPmanager կառավարման վահանակ. - սերվերի կազմաձևման կառավարման համար, ինչը թույլ է տալիս ինքնաբերաբար տեղադրել օգտվողի ծրագրակազմը, ավելացնել տիրույթներ, փոստարկղեր և նաև ստեղծել պահուստային մասեր:

Այս սակագների միջև ընտրություն կատարելիս պետք է ապավինել միայն տեղակայված հայտի համակարգի պահանջներին և ընտրել համապատասխան սակագին համապատասխան բնութագրերով:

«Տեղաբաշխման» ծառայությունը ավելի քիչ է վայելում վերը նկարագրվածներից: Շատ դեպքերում ընկերությունները, որոնք ունեն իրենց թանկարժեք սարքավորումները, նախընտրում են այն հյուրընկալել և իրենք կարգավորել: Հաճախորդը վճարում է էլեկտրաէներգիայի ծախսերը ինքնուրույն: Խորհուրդ չի տրվում օգտագործել այդ ծառայությունը թույլ համակարգչի կամ սերվերի վրա տեղադրելու համար:

Այն դեպքերում, երբ սարքավորումների, տվյալների և ծրագրի վրա լիակատար վերահսկողություն է պահանջվում, պետք է որպես սերվեր ինքնուրույն կազմաձևել որևէ համակարգիչ, քանի որ բոլոր անհրաժեշտ ծրագրաշարերն անվճար են, և կարելի է դիմել ազատ:

Սեփական սերվերի տեղադրումը և կարգավորումը:

Այն դեպքերում, երբ առկա է ազատ համակարգիչ և հոսթինգի լրացուցիչ ծախսերից խուսափելու ցանկություն, պետք է մտածել սեփական սերվերի կարգավորման մասին՝ կազմակերպության բոլոր տվյալները տեղադրելու համար:

Այս որոշման հիմնական պահանջը IPv4-ի առանձնացված հասցեի առկայությունն է, որով հաճախորդները կդիմեն սերվերին: Շատ ինտերնետ պրովայդերները տրամադրում են այս ծառայությունը մի փոքր վճարի դիմաց: Իսկ որոշ դեպքերում այն տրամադրվում է անվճար: Եթե այս ծառայությունը տրամադրված է, ապա հետագա գործողությունը հետևյալն է՝ պարզապես պետք է տեղադրել անհրաժեշտ ծրագրային ապահովում սեփական համակարգչում: Ներկայումս, տարբեր սերվերների ծրագրային ապահովումներն ունեն իրենց սեփական կարգավորումները, որն ազատում է սովորական

օգտվողին երկար կարգավորող ֆայլերի խմբագրումից և այդ նպատակով լրացուցիչ աշխատակիցների ներգրավումից:

Ինտերնետ ծառայությունների տեղաբաշխման այս մեթոդի հիմնական առավելությունը ճկունությունն է, որը սահմանափակվում է միայն ընկերության ցանկությամբ: Թերություններից կարելի է նշել այն, որ հենց ընկերությունը պետք է զբաղվի վարչարարությամբ և տվյալ սերվերի աջակցությամբ: Դա պահանջում է որոշակի աշխատանքային, ժամանակային, իսկ որոշ դեպքերում նաև ֆինանսական ծախսեր: Բայց այս որոշումը կոպիտ հաշվարկներով կփոխատուցվի մեկ տարվա ընթացքում, քանի որ այն չի պահանջվում հատկացնել միջոցներ երրորդ կողմի հոստինգին, և խնդիրների առաջացման դեպքում տեխնիկական հոսթինգի աջակցության միջոցով երկարատև է:

Տվյալների անվտանգություն և պաշտպանություն

Հիմա խոսքը վերաբերում է անվտանգության, երբ օգտվում են հոսթինգ մատուցողների ծառայությունից: Ամեն անգամ, երբ որոշում է կայացվում որևէ հոսթինգի օգտագործման մասին, արժե հիշել հետևյալ արտահայտությունը. «Այն ամենը, ինչ բեռնվել է համացանց, մնում է այնտեղ ընդմիշտ»: Իհարկե, տարբեր հոստինգ պրովայդերները տրամադրում են տվյալների պաշտպանության բազմաթիվ ծառայություններ.

Ծրագրային ծառայություններ, որի միջոցով կարելի է վերահսկել օգտվողին.

- SSL վկայագրեր կայքի համար,
- Ավտոմատ կրկնօրինակների ստեղծում,
- Հակավիրուսային պաշտպանություն:

Ապարատային ծառայություններն իրականացվում են մատակարարի սարքավորումների մակարդակով RAID զանգվածների, ֆայերվոլների և փաթեթային ֆիլտրերի միջոցով, որոնք օգտագործում են DDoS հարձակումներից պաշտպանվելու համար:

Բայց փորձը ցույց է տալիս, որ այդ ծառայությունների օգտագործումն անհուսալի է, և որոշ ծառայություններ նշված են միայն մարքեթինգային նպատակներով, որպեսզի ներգրավեն հաճախորդներին:

Ավտոմատ կրկնօրինակները միշտ չէ, որ օգնում են լուծել խնդիրը, երբեմն ֆայլերը պարզապես լինում են վնասված կամ չեն պարունակում անհրաժեշտ տեղեկատվություն, կապված սահմանված սահմանափակումների հետ: Ներկառուցված հակավիրուսային պաշտպանությունը չի կարող հայտնաբերել ամենապարզ բեկդորները կայքի սցենարներում, ինչպես նաև այն չի պաշտպանում չարագործի ներթափանցումից սերվեր: Իհարկե, որոշ հոստինգ պրովայդերներ ապահովում են երկու փուլային վավերացում, բայց նրանք միշտ չէ, որ հուսալի են: Ինչ վերաբերում է DDoS հարձակումներից պաշտպանությանը, եթե այդ գործառույթն իրականացվում է, ապա այն սովորաբար տարածվում է որոշ հաճախ օգտագործվող արձանագրությունների վրա, ինչպիսիք են http, ftp, ssh: Սակայն, եթե պահանջվում է նման պաշտպանության իրականացումը սեփական հավելվածի համար, ապա ամեն ինչ հենվում է հոսթինգ մատուցողին պարտադրված սահմանափակումների վրա:

Վերոնշյալից հետևում է, որ անվտանգությունը ևս մեկ հիմնական չափանիշներից է հոստինգ մատակարարի ընտրության ժամանակ: Բայց քանի որ պրակտիկան ցույց է տալիս, չնայած գովազդային խոստումներին, անվտանգությունը ամեն տեղ չէ պատշաճ մակարդակի վրա: Եվ այն դեպքերում, երբ խոսքը վերաբերում է ցանկացած արժեքավոր կորպորատիվ տվյալներին, պետք է մտածել սեփական տեղաբաշխման սերվերի մասին: Այս մեթոդի ժամանակ գրագետ ցանցի կարգավորման և մուտքի իրավունքների

սահմանափակման դեպքում կարելի է երաշխավորել բարձր անվտանգություն ընկերության տվյալների համար:

Բայց եթե ընկերության բյուջեն սահմանափակ է, և չի նախատեսվում լրացուցիչ աշխատակիցների ներգրավում անվտանգության ապահովման համար, ապա բավական է հետևել որոշ կանոնների՝ տվյալների կորստից կամ գողությունից խուսափելու համար:

Պետք է միշտ թարմացնել հակավիրուսային ծրագրային ապահովումը, քանի որ ժամանակակից հակավիրուսային ծրագրերի մեծ մասը կարողանում են գտնել և «բուժել», վնասակար բովանդակությունը՝ նույնիսկ .pkp կայքի սցենարներում:

Միշտ անհրաժեշտ է տեղադրել բարդ գաղտնաբառեր, որոնք կապված չեն որևէ ամսաթվի կամ ծանոթ թվի հետ, իսկ կասկածելի ակտիվության առաջացման դեպքում անմիջապես փոխել այն:

Ստեղծել անհատական հաշիվներ յուրաքանչյուր օգտագործողի համար, ինչպես նաև տարանջատել լիազորությունները, որը թույլ կտա կարգավորումներում պատահական փոփոխությունների կանխումը որևէ օգտագործողի կողմից, ինչպես նաև կնվազեցնի բոլոր օգտագործողների գործողության մասին տեղեկատվության հավաքագրումը:

Բացել միայն նպատակային պորտեր ֆաերվոլում: Իսկ հնարավորության դեպքում, փոխել ստանդարտ պորտերը: Օրինակ, ըստ նախնականի, SSH-սերվերը բացում է մուտքային կապերի 22 TCP-պորտը, և դրանով իսկ առաջացնում է հնարավոր սպառնալիք bruteforce-հարձակումների, քանի որ չարագործը, հայտնաբերելով սերվերում նման բաց պորտ, փորձում է վերականգնել հեռավոր սերվերի գաղտնաբառը հատուկ ավտոմատացման միջոցների օգնությամբ: Հետևաբար, այն պետք է փոխել ցանկացած այլի, բայց պետք է հիշել, որ այդ տեսականին չպետք է գերազանցի 65535 թիվը, ինչպես նաև չպետք է համընկնի այլ հավելվածների լսող պորտերին, ինչը կարող է հանգեցնել որոշ ծառայությունների անսարքության կամ դրանց ամբողջական խափանմանը: Արդեն լսվող պորտորի ցանկը կարելի է գտնել ցանցի մոնիտորինգի տարբեր միջոցներով: Սկսած Windows 7 այդ նպատակով կարելի է օգտագործել ռեսուրսների մոնիտորը:

Պարզապես միշտ արժե շաբաթը մեկ անգամ թերթել լոգ ֆայլեր՝ կասկածելի գործունեության առարկայության նպատակով, այն կթույլատրի վերլուծել սերվերի անվտանգությունը և ձեռնարկել լրացուցիչ միջոցներ՝ համակարգում խոցելի կետերի վերացման համար:

Ռաֆայել Բաբայան
Մարինա Հակոբյան

ԱրՊՀ

XAMARIN ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՄԲ ՀԱՎԵԼՎԱԾՆԵՐԻ ՄՇԱԿՄԱՆ ԴՐԱԿԱՆ ԵՎ ԲԱՑԱՍԱԿԱՆ ԿՈՂՄԵՐԸ

Բանալի բառեր. *բազմահարթակ բջջային հավելվածների մշակում, հավելվածների մշակում Android հարթակի համար, հավելվածների մշակում iOS հարթակի համար, C# ծրագրավորման լեզու*

Վերջին մի քանի տարիների ընթացքում բջջային հավելվածների մշակման համար հարթակների բոլորովին նոր էկոհամակարգ է հայտնվել: Xamarin-ը եզակի է այս իմաստով, քանի որ այն առաջարկում է մեկ C # լեզու, դասերի գրադարան և կատարման միջավայր, որը աշխատում է բջջային սարքերի բոլոր երեք հարթակներում՝ iOS, Android և Windows Phone, և աջակցում է սեփական հավելվածների կոմպիլացման (առանց ինտերպրետացիայի), որոնք բավականաչափ արագ են գործում նույնիսկ ռեսուրսատար խաղերի ժամանակ:

Рафаел Бабаян, Марина Акопян

ПОЛОЖИТЕЛЬНЫЕ И ОТРИЦАТЕЛЬНЫЕ СТОРОНЫ ИСПОЛЬЗОВАНИЯ ТЕХНОЛОГИИ XAMARIN

Ключевые слова. *разработка нескольких мобильных приложений, разработка приложений для платформы Android, разработка приложений для платформы iOS, язык программирования C #*

За последние несколько лет была создана совершенно новая экосистема платформ для разработки мобильных приложений. XAMARIN является уникальным в этом смысле, поскольку он предлагает одну языковую библиотеку C #, классную комнату и среду для работы, которая функционирует на всех трех мобильных платформах, iOS, Android и Windows Phone, и поддерживает дополнение ваших собственных приложений (без перевода) , которые работают достаточно быстро даже во время ресурсных игр.

Դիտարկելով iOS-ի և Android-ի համար հավելվածների ստեղծման ուղիները՝ շատերը կարծում են, որ միակ տարբերակն է օգտագործել մեքենայական լեզուները, ինչպիսինն են՝ Objective-C, Swift-ը և Java-ն: Սակայն վերջին մի քանի տարիների ընթացքում բջջային հավելվածների մշակման համար հարթակների բոլորովին նոր էկոհամակարգ է հայտնվել:

Xamarin-ը եզակի է այս իմաստով, քանի որ այն առաջարկում է մեկ C # լեզու, դասերի գրադարան և կատարման միջավայր, որը աշխատում է բջջային սարքերի բոլոր երեք հարթակներում՝ iOS, Android և Windows Phone (C#-ն արդեն հանդիսանում է Windows Phone-ի սեփական լեզուն), և աջակցում է սեփական հավելվածների կոմպիլացման (առանց ինտերպրետացիայի), որոնք բավականաչափ արագ են գործում նույնիսկ ռեսուրսատար խաղերի ժամանակ:

Այս հարթակներից յուրաքանչյուրն ունի առանձին ֆունկցիաների հավաքածու և առաջարկում է տարբեր հնարավորություններ սեփական հավելվածներ ստեղծելու ժամանակ, որոնք հավաքվում են մեքենայական կոդով և համաձայնեցվում են Java-ի բազային ենթահամակարգի հետ: Օրինակ, որոշ հարթակներ թույլ են տալիս հավելվածների մշակումը միայն HTML-ով և JavaScript-ով, մինչդեռ մյուսները աշխատում են շատ ցածր մակարդակում և աջակցում են

միայն C կամ C++ կոդերին: Որոշ հարթակներ ընդհանրապես չեն օգտագործում սեփական կառավարման միջոցները:

Xamarin-ի յուրահատկությունը գոյություն ունեցող հարթակների և մի քանի հզոր սեփական հնարավորությունների համադրությունն է, որոնցից են ստորև թվարկածները:

Լրիվ փոխհամագործակցությունը SDK-ի հիմնական փաթեթների համար: Xamarin-ը պարունակում է գրեթե բոլոր հիմնական SDK փաթեթները iOS-ի և Android-ի համար: Բացի այդ, այդպիսի կապերը խիստ տիպացված են, ինչը նշանակում է, որ դրանք հարմար են նավիգացիայի և օգտագործման մեջ, ինչպես նաև թույլ են տալիս տիպերի որակյալ ստուգում կատարել կոմպիլացիայի և մշակման ընթացքում: Ընդ որում, կրճատվում է կատարման ժամանակի սխալների քանակը և բարձրանում է հավելվածների որակը:

Փոխազդեցություն Objective-C, Java, C և C++ հետ: Xamarin-ը թույլ է տալիս ուղղակիորեն կանչել Objective-C, Java, C և C++ գրադարանները՝ տարբեր և արդեն իսկ ստեղծված երրորդ կողմի կոդի ավելի արդյունավետ օգտագործման համար: Օգտագործողին հասանելի են դառնում iOS-ի և Android-ի առկա գրադարանների առավելությունները, որոնք գրված են Objective-C, Java կամ C/C++ լեզուներով:

Ժամանակակից լեզվի կառուցվածք : Xamarin-ի հավելվածները գրված են ժամանակակից C# լեզվով, որը բնութագրվում է Objective-C-ի և Java-ի համեմատ զգալի բարելավումներով, ինչպիսիք են լեզվի դինամիկ գործառույթները, ֆունկցիոնալ կառուցվածքները, ինչպես նաև լյամբդա արտահայտությունները, LINQ-ը, զուգահեռ ծրագրավորման առանձնահատկությունները, բարդ համընդհանուր կաղապարներ և այլն:

Հիմնական դասերի տպավորիչ գրադարան (BCL): Xamarin հավելվածները օգտագործում են BCL.Net գրադարանը, որը համապարփակ և պարզեցված առանձնահատկություններ ունեցող դասերի մեծ հավաքածու է, ինչպիսիք են XML աջակցությունը, տվյալների հենքերը, սերիալիզացիա(Serialization), մուտքագրման և արտածման(IO- Input and Output) գործողությունները, տողերը և ցանցային գործառույթները: Գոյություն ունեցող C# կոդը կարող է կոմպիլացվել հավելվածներում օգտագործելու համար, որից հետո մուտք գործել հազարավոր գրադարաններ, որոնք կօգնեն կատարել BCL-ից դուրս գտնվող խնդիրները:

Ժամանակակից ինտեգրված մշակման միջավայր (IDE): Xamarin-ը օգտագործում է Visual Studio-ն Mac-ի համար Mac OS X-ում և Visual Studio-ն Windows-ում: Այս ժամանակակից ինտեգրված մշակման միջավայրերում իրականացվում են այնպիսի հնարավորություններ, ինչպիսիք են կոդավորումը, նախագծերի և լուծումների կառավարման ավելի կատարյալ համակարգը, նախագծերի կաղապարների սպառիչ գրադարանը, տարբերակների կառավարման ինտեգրված համակարգը և այլն:

Բազմահարթակ բջջային ծրագրերի աջակցում: Xamarin-ն առաջարկում է բարելավված բազմահարթակ աջակցություն երեք հիմնական բջջային

պլատֆորմների համար՝ iOS, Android և Windows Phone: Ընդհանուր կոդի ծավալը ստեղծված հավելվածներում կարող է հասնել 90 % - ի, իսկ Xamarin.Mobile գրադարանն առաջարկում է ունիվերսալ API ինտերֆեյս՝ բոլոր երեք հարթակներում ընդհանուր ռեսուրսների հասանելիության համար: Այն կարող է զգալիորեն կրճատել արտադրանքի ծախսերը մշակման և շուկայի թողարկման ժամանակը մշակողների համար, որոնք ստեղծում են բջջային հավելվածներ երեք ամենատարածված բջջային պլատֆորմների համար:

Xamarin-ի հզոր ու համալիր գործառույթների և բաղադրիչների շնորհիվ հավելվածների մշակողները ստանում են բացակայող հնարավորությունները և սկսում են օգտագործել ժամանակակից լեզուն և հարթակը՝ բազմահարթակ բջջային հավելվածների մշակման համար: Xamarin հարթակը ունի երկու հիմնական ձևեր՝ Xamarin.iOS և Xamarin.Android: IOS-ի դեպքում ելակետային կոդը կոմպիլացվում է անմիջապես ARM ասսեմբլեր կոդի, իսկ Android Xamarin-ի հավելվածները նախ կոմպիլացվում են միջանկյալ ունիվերսալ կոդի, իսկ հետո՝ արդեն կատարման ընթացքում (JIT-կոմպիլյացիա) փոխարինվում է նատիվին: Սակայն, այնուամենայնիվ, այս մոտեցումը չի լուծում բոլոր խնդիրները: Ինչպես ցանկացած այլ տեխնոլոգիա, Xamarin-ն ունի իր առավելություններն ու թերությունները, որոնք վերջերս դարձել են վեճերի առարկա:

Xamarin-ի օգտագործման առավելությունները բջջային հավելվածների մշակման ժամանակ:

Կան մի քանի ծանրակշիռ պատճառներ, որոնց համար Xamarin-ը օգտագործվում է բազմաթիվ ընկերությունների կողմից, այդ թվում ' Trello, Slack և GitHub:

Տեխնոլոգիաների միասնական ստեկ մշակման բոլոր հարթակներում: Xamarin-ը օգտագործում է C# լեզուն և .NET Framework-ը՝ ծրագրեր ստեղծելու ժամանակ, ցանկացած բջջային հարթակների համար: Այսպիսով, կարող եք կրկին օգտագործել կոդերի մինչև 30% , արագացնելով մշակման գործընթացը: Xamarin-ը նաև չի պահանջում անցում մշակման միջավայրի միջև. բոլոր Xamarin հավելվածները կարող են ստեղծվել Visual Studio-ի միջոցներով: Բազմահարթակ զարգացման գործիքները տրամադրվում են որպես ներկառուցված IDE մաս, առանց որևէ լրացուցիչ ծախսերի:

Արտադրողականությունը մոտ է նատիվին: Xamarin-ի միջոցով ստեղծված բազմահարթակ հավելվածը կարելի է դասակարգել որպես նատիվ, ի տարբերություն վեբ տեխնոլոգիաների վրա հիմնված ավանդական հիբրիդային լուծումների: Արտադրողականության ցուցանիշները ծրագրեր մշակելու ժամանակ համեմատելի են Java-ի ցուցանիշների հետ Android-ի համար և Objective-C-ի կամ Swift-ի ցուցանիշները iOS-ի համար: Ավելին, Xamarin-ի արտադրողականության ցուցանիշները մշտապես բարելավվում և կատարելագործվում են, որպեսզի լիովին համապատասխանեն հարազատ ստանդարտներին: Xamarin հարթակը առաջարկում է համակարգային լուծում փորձարկման և կատարողականի

վերահսկողության հարցերի համար: Դրանք են Xamarin Test Cloud գործիքը Xamarin Test Recorder-ի գործիքի հետ համատեղ թույլ է տալիս գործարկել ավտոմատ ինտերֆեյսի թեստեր և գտնել արտադրողականության խնդիրներ նույնիսկ նախքան արտադրանքի թողարկելը: Սակայն, այդ ծառայությունը տրամադրվում է լրացուցիչ վճարի դիմաց:

Նատիվային UI: Օգտագործելով UI-ի հարթակից կախյալ տարրերը, Xamarin-ը թույլ է տալիս ստեղծել ինտերֆեյս: Ավելի հեշտ UI մշակման համար խորհուրդ է տրվում օգտագործել Xamarin.iOS և Xamarin.Android առանձին, որպեսզի ապահովվի լավագույն արդյունքը:

Սարքավորումների հետ համատեղելիություն: Xamarin-ը վերացնում է բոլոր սարքավորումների համատեղելիության խնդիրները, օգտագործելով պլագիններ և տարբեր API-ներ՝ բոլոր հարթակներում ընդհանուր սարքերի գործառույթների հետ աշխատելու համար: Հատուկ API հարթակների հասանելիության հետ միասին, Xamarin-ը կարող է միավորվել գրադարանների հետ, որոնք հատուկ են տվյալ հարթակի համար: Սա թույլ է տալիս իրականացնել ավելի նուրբ ճշգրտում և պահպանել նատիվային ֆունկցիոնալությունը՝ փոքր վերադիր ծախսերը:

Open Source-տեխնոլոգիա կորպորատիվ աջակցությամբ: Երբ 2016-ի փետրվարին Microsoft-ը ձեռք բերեց ընկերությունը, Xamarin լիցենզային քաղաքականությունը ենթարկվեց արմատական փոփոխությունների: Xamarin SDK-ը, ներառյալ գրադարանները և հրամանի տող գործիքները, դարձավ բաց և մատչելի MIT-ի լիցենզիա ունեցողների համար, որպես Visual Studio-ի մաս: Վերացնելով հիմնական արգելքը՝ լիցենզիայի արժեքի ձևով, Microsoft-ը տրամադրել է լավագույն պայմանները հարթակի հետագա զարգացման համար: Բացի այդ, Microsoft-ի գլխավորությամբ և Unity-ի աջակցությամբ, JetBrains-ը, Red Hat-ը, .Net հիմնադրամի օգնությամբ Xamarin-ը դարձել է բջջային հավելվածների մշակման տեխնոլոգիաների հուսալի և հզոր բլոկ:

Պարզ աջակցություն: Շնորհիվ բազմահարթակության, Xamarin-ը հեշտացնում է ծրագրային ապահովման աջակցությունը և թարմացումը: Դրա օգնությամբ կարող եք պարզապես փոփոխություններ կատարել աղբյուրային մեկ ֆայլում, և դրանք կկիրառվեն ինչպես iOS-ի, այնպես էլ Android-ի ծրագրերի վրա: Բայց այդ վերաբերում է միայն այն հավելվածներին, որոնք օգտագործում են ընդհանուր բիզնես տրամաբանությունը, ինչպես նաև ծրագրերի ընդհանուր կոդին՝ Xamarin.iOS-ի և Xamarin.Android-ի համար: Այսպիսով, այն կօգնի խնայել ժամանակ և գումար, միաժամանակ ապահովելով հավելվածը աշխատանքային վիճակում:

Մշակման ամբողջական գործիքների փաթեթ: Xamarin-ը տրամադրվում է մեկ փաթեթով իր մշակման ամբողջական գործիքների հետ՝ սեփական IDE համակարգը (Visual Studio), Xamarin SDK , փորձարկում (Xamarin Test Cloud), տարածումը և վերլուծություն (Hockeyapp and Xamarin.Insights): Այսպիսով, պետք չէ ներդնել լրացուցիչ գործիքներ կամ ինտեգրել այլ ծրագրեր սեփական Xamarin հավելվածի ստեղծման, փորձարկման և տեղակայման ժամանակ:

Xamarin-ի օգտագործման թերությունները բջջային հավելվածների մշակման ժամանակ:

Հարթակների թարմացումների ուշացումներ: Այն ամբողջովին կախված է Xamarin-ի մշակողների թիմից: Հնարավոր չէ, որ "երրորդ կողմի" գործիքները ապահովեն վերջին թողարկված iOS-ի կամ Android-ի թարմացումների անմիջական աջակցություն.որոշակի ժամանակ է պահանջվում նոր փոփոխություններ, նոր պլագիններ և այլն: Չնայած Xamarin-ը պնդում է, որ նույն օրը ապահովում է աջակցություն, բայց դեռևս կարող է լինել մեկ-երկու օրվա հետաձգում:

Սահմանափակ մուտք դեպի open-source գրադարաններ: Նատիվային զարգացումը լայնորեն օգտագործում է բաց կոդով տեխնոլոգիաները: Xamarin-ի հետ պետք է օգտագործել հարթակի կողմից տրամադրված բաղադրիչներ և որոշ. Net ռեսուրսներ, որոնք օգտագործվում են մշակողների և սպառողների կողմից: Ընտրությունը, իհարկե, այնքան մեծ չէ, որքան iOS-ի և Android-ի բջջային հավելվածների մշակման ժամանակ, սակայն, Xamarin-ի բաղադրիչները ապահովում են ինտերֆեյսի հազարավոր տարբեր տարրեր՝ դիագրամներ և գրաֆիկներ, թեմաներ և այլ հարմար ու օգտակար առանձնահատկություններ, որոնք կարող են ավելացնել ցանկացած ծրագրում ընդամենը մի քանի կտտացումով: Այս հարթակը ներառում է ներկառուցված վճարման համակարգեր(ինչպես, օրինակ, Stripe), Push ծանուցման ծառայություններ, "ամպային" պահեստավորման լուծումներ, մուլտիմեդիայի հնարավորություններ, սթրիմինգ և այլն:

Էկոհամակարգի սահմանափակությունը: Չնայած Xamarin-ի պլատֆորմը աճում և զարգանում է, ինչպես նաև աջակցվում է Microsoft-ի կողմից, սակայն ակնհայտ է, որ Xamarin-ի առանձնահատկություններից տեղյակ մասնագետները զգալիորեն ավելի քիչ են, քան iOS-ի կամ Android-ի, ուստի փորձառու ծրագրավորող գտնելը կարող է դժվար լինել: Դատելով տարբեր աղբյուրներից ստացված տեղեկատվությունից՝ Xamarin-ով աշխատողները կազմում է բջջային մշակողների ընդհանուր թվի 10%-ը : Չնայած այն հանգամանքին, որ Xamarin-ի ինժեներների թիվը չի համապատասխանում iOS-ի կամ Android-ի մասնագետների թվին, հարթակի ստեղծողները աջակցություն են ցուցաբերում իրենց մասնագետներին: Օրինակ, կա հատուկ կրթական հաստատություն Xamarin համալսարանը, որը ապահովում է տարաբնույթ ռեսուրսներով և գործնական վերապատրաստման հնարավորությունների է տալիս այդ ոլորտի մասնագետների: Նման աջակցության շնորհիվ ուսուցման կորը նվազագույն է փորձառու C# ծրագրավորողների համար:

Ծրագրավորման լեզվի հիմնական գիտելիքների պահանջը: Օգտագործելով Xamarin.iOS և Xamarin.Android միջոցով բջջային ծրագրերի ստեղծման , ինչպես նաև շարժական ինտերֆեյսի մշակամն ժամանակ, պետք է գրել հարթակից կախված կոդի շերտ: Հետևաբար, պահանջվում է առնվազն նատիվ տեխնոլոգիաների հիմնական գիտելիքներ (Java/Kotlin Android-ի համար և Objective-C/Swift iOS-ի համար): Սակայն նրանք չեն կիրառվում Xamarin.Forms ժամանակ:

Xamarin-ը հարմար չէ բարձրորակ գրաֆիկական հավելվածների համար: Xamarin-ի հիմնական առավելությունը տարբեր հարթակներում նույն կոդի օգտագործելու հնարավորությունն է: Այնուամենայնիվ, խոսքը միայն տրամաբանության մասին է, UI կոդը հիմնականում եզակի է հարթակի համար: Դա թույլ կտա Xamarin-ի խաղերը ստեղծել, բայց հարուստ UI-ն կամ բարդ անիմացիաները, մի փոքր ընդհանուր կոդով, Xamarin-ին դարձնում են ոչ պիտանի:

Հավելվածի մեծ չափ: Կախված տեսակից և բարդությունից, Xamarin-ի ծրագրերը սովորաբար ավելի շատ տեղ են զբաղեցնում, քան նատիվը, երբեմն նույնիսկ երկու անգամ: Android-ում պարզ "Բարև, աշխարհ"-ը կարող է զբաղեցնել մինչև 16 ՄԲ, և դրա մեծ մասը օգտագործվում է կապված գրադարանների, Mono միջավայրի և հիմնական գրադարանների կողմից: Այսպիսով, ծրագիրը սովորաբար կարիք ունի լրացուցիչ օպտիմալացման, որպեսզի իր ֆայլի չափը չափազանց մեծ չլինի:

Ինտեգրման բարդությունները: Կա հավանականություն, որ Xamarin-ի հետ երրորդ կողմի ռեսուրսների ինտեգրման հետ կապված որոշ խնդիրներ կարող են առաջանալ: Թեև գործիքների և գրադարանների մեծ մասը առաջարկում է ամբողջական աջակցություն, Xamarin-ի համատեղելիությունը չի կարող երաշխավորված լինել արտադրող ընկերության կողմից: Թեև Xamarin-ն ունի իր բաղադրիչների սեփական զինանոցը, միշտ հավանական է, որ կարող եք պահանջել որոշակի առանձնահատկություն կամ ինտեգրում ծրագրում, որը չի տրամադրում հարթակը:

Վերջերս շատ հավելվածների մշակողներ հակված են համաձայնվել, որ Xamarin-ը կարող է համարվել նատիվ զարգացման գործիք: Ի դեպ, կա կարծիք, որ "այն ամենը, ինչ կարելի է անել iOS հավելվածում, օգտագործելով Objective-C կամ Swift-ը, և այն ամենը, ինչ կարելի է անել Android հավելվածում Java-ի միջոցով, կարելի է անել նաև C # լեզվով Xamarin-ի միջոցով":

Այս պահին Xamarin տեխնոլոգիան լուրջ գործիք է բջջային հավելվածների մշակման ոլորտում բարդ խնդիրների լուծման համար: Չնայած դրան, մշակողների թիմը չի դադարում գործել և շարունակում է իր ակտիվ մշակումը և բարելավումը: Վերջին երկու ամիսների ընթացքում լուրջ բարելավումներ են նկատվում արտադրանքի ընդհանուր կայունության մեջ: Տեխնոլոգիան մեծ ապագա ունի և ամեն օր մշակողների թիվը, որոնք օգտագործում են այն որպես մշակման հիմնական շրջանակ, անշեղորեն կաճի:

ՀՏԴ_656.1 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Իննա Բաղրյան, Ռեգինա Հովսեփյան, Անժելիկա Հայրիյան-
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» 3 -րդ կուրս,
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Email- inna.bagiryan99@gmail.com
Գիտական ղեկավար՝
դասախոս Կ.Հ.Հարությունյան

ԵՐԹՈՒՂԱՅԻՆ ՄԻԿՐՈԱՎՏՈԲՈՒՍՆԵՐԻ ԱՇԽԱՏԱՆՔԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ

Բանալի բառեր՝ համակարգային բլոկ, միկրոավտոբուս, ավտոմատացված համակարգ:

Հոդվածում ներկայացված է Ստեփանակերտ քաղաքի համար այնպիսի ավտոմատացված համակարգի ստեղծման անհրաժեշտության մասին, որը թույլ կտա երթուղային միկրոավտոբուսների երթևեկության աշխատանքը կարգավորել:

Инна Багрян, Регина Овсепян, Анжелика Айриян

АВТОМАТИЗАЦИЯ ПРОЦЕССА ЭКСПЛУАТАЦИИ МАРШРУТНЫХ МИКРОАВТОБУСОВ

Ключевые слова: Системный блок, микроавтобус, автоматизированная система.

В статье излагается необходимость автоматизированной системы для города Степанакерта, которая позволит ему регулировать работу микроавтобусов.

Դիսպետչերների և վարորդների աշխատանքները հնարավորինս պարզեցնելու համար առաջարկում ենք իմիտացիոն մոդելավորման տեսակ՝ համակարգի բլոկային կառուցում, որը թույլ է տալիս փոխել դրա կազմաձևը՝կապված շարժակազմի, երթուղային ցանցի և ուղևորների քանակի փոփոխությունից:

Համակարգի էական առանձնահատկությունն ու առավելությունը մյուս ինդուկտիվ հաղորդակցման համակարգերի նկատմամբ՝ ռադիոալիքի օգտագործումն է ավտոբուսի և անցակետի միջև տեղեկատվություն փոխանցելու, ինչպես նաև վարորդների և դիսպետչերների հաղորդակցության համար: Դա անելու համար ավտոբուսներում և անցակետերում անհրաժեշտ է տեղադրել մոտ 30 մ շառավղով տրանսֆորմատորներ և տեղեկատվությունը փոխանցել անցակետերի և կենտրոնական հավաքման կայանների միջև հեռախոսային կապուղիներով:

Վարորդները ստիպված չեն լինի անընդհատ կապվել դիսպետչերի հետ և տեղեկացնել իրենց գտնվելու վայրի մասին. դա կկատարվի ինքնաբերաբար: Ավտոբուսը, ընթանալով իր երթուղիով, ցույց է տալիս իր հաճախականությունը: Անցման պահին հսկիչ ազդանշանը հաղորդակցման գծի միջոցով փոխանցվում է անցակետ և տպվում թղթի ժապավենի վրա՝ առանց դիսպետչերին աշխատանքից շեղելու: Դիսպետչերի և վարորդների միջև բարձրաձայն հաղորդակցության առկայությունը հնարավորություն է տալիս արագ կառավարել փոխադրման գործընթացը:

Այդ մոդելավորումը հեշտացնում է աշխատանքը, նպաստում է երթևեկության ժամանակացույցի պահպանմանը և փաստաթղթաշրջանառության կրճատմանը:

Այս համակարգային բլոկի համաձայն՝ միկրոավտոբուսի երթևեկության կանոնավոր ապահովման գործընթացը բաժանվում է երկու հիմնական մասի՝ երթևեկության կանոնակարգի վերահսկման կազմակերպում, օրինականության հսկողություն և երթևեկության վերահսկողություն: Ավտոմոբիլային երթևեկության կանոնավոր հսկողության և ուղևորափոխադրումների կազմակերպումը ներառում է հարցեր, որոնք կապված են անհրաժեշտ տեխնոլոգիական կապերի հիմնավորմանը և նախապատրաստմանը, դրանց գործավարության կարգի մշակմանը, ինչպես նաև փաստաթղթերի և ցուցանիշների՝ ներառյալ տեղեկատվության հավաքագրումը: Համակարգային բլոկը կապահովի երթուղու և անցակետի միջև եղած հեռավորությունը, արագությունների նորմալացումը, ժամանակացույցի ձևավորումը:

Ժամանակակից շատ կազմակերպություններ իրենց աշխատանքի գործունեությունը վերլուծելու, ինչպես նաև կառավարման որոշումներ ընդունելու նպատակով ընդունում են տարատեսակ մոդելներ, որոնք բնութագրում են երթուղային կազմակերպությունների աշխատանքի այս կամ այն հայացքները: Ավելի շատ շահագործվում են Ford և Volkswagen մակնիշի միկրոավտոբուսները: Ուղևորափոխադրմամբ զբաղվող շատ ընկերություններ հաշվի չեն առնում ուղևորի սպասման ժամանակը: Ուղևորը որոշ ժամանակ անց կանգառ է գալիս և տեսնելով, որ միկրոավտոբուսը չկա, հերթ է կանգնում:

Եթե հերթը սահմանված սպասողների թիվը գերազանցում է, ուղևորներից շատերը չեն սպասում միկրոավտոբուսին: Դրա համար ուղևորափոխադրմամբ զբաղվող ընկերությունը պետք է հաշվի առնի այն ժամանակը , երբ ուղևորը միկրոավտոբուսին է սպասում, և այն ժամանակը, երբ ուղևորը գտնվում է ճանապարհին: Պետք է գտնել օպտիմալ քանակությամբ վայրեր որն էլ կնվազեցնի միկրոավտոբուսին սպասելու հերթը:

Այս հարցը լուծելու նպատակով պետք է հասկանալ՝ քանի տեղանոց միկրոավտոբուսի դեպքում է մարդկանց հերթում սպասելու ժամանակը նվազում: Առաջարկում ենք ընտրել իմիտացիոն մոդելավորման եղանակը , քանի որ այն թույլ է տալիս ստուգել տարատեսակ եղանակներ՝ հաշվի առնելով տարբեր կարգավորումներ: Իմիտացիոն մոդել ստեղծելու համար օգտագործվում է GPSS, որն ունի հնարավորությունների լայն սպեկտոր, և շատ հեշտ է այն օգտագործել:

Պատկերացնելով մեր համակարգը առանձնացնենք հիմնական մասնիկները: Մուտքային հոսքը իրենից ներկայացնում է ուղևորների պահանաջների հավաքածու, որն էլ դիմում է համակարգ: Գործարքի դերում ներկայանում են ուղևորները, որոնք պետք է դիմեն համակարգ, երբ սպասարկման կարիք ունեն:

Նրանք պետք է մոդելավորվեն generate բլոկի օգնությամբ: Ուղևորների սպասարկումը մոդելավոր է enter բլոկի միջոցով: Պահեստատուփը հերթագրվում է ծավալով՝ հնարավոինս առավելագույն քանակով, որն միաժամանակ պահանջների պահեստատուփի մեջ է գտնվում: Այդ պատճառով օգտագործվում է storage բլոկը:

Մեր պարագայում ելքային հոսքը ձևավորվում է ուղևորների միջոցով, ովքեր դուրս են գալիս՝ հերթի պայմանների գերաճի պատճառով: Տվյալ առարկայական ոլորտը դիտարկելով՝ կառուցվել է GPSS տվյալների փոխանցման մոդելը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Емельянов А.А. и др., Имитационное моделирование экономических процессов: Учеб. пособие, М. : Финансы и статистика, 2012. 368 с.

2. Томашевский В, Жданова Е., Имитационное моделирование в среде GPSS. М. : Бестселлер, 2013. 416 с.

Ալիսա Գրիգորյան, Նելլի Սարգսյան
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» 3-րդ կուրս,
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Գիտական ղեկավար՝
ավագ դասախոս Ռ.Վ.Ավետիսյան

ՀԻՎԱՆԴԱՆՈՑՈՒՄ ՈՒՍԱՆՈՂՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՆԱԽԱԳԾՈՒՄ

Բանալի բառեր. *հիվանդանոց, ուսանողներ, տվյալների բազա, ավտոմատացում:*

Հոդվածի նպատակն է ներկայացնել ուսանողների գրանցման և բուժման ընթացքի կազմակերպման ավտոմատացումը հիվանդանոցներում՝ կրճատելով բուժանձնակազմի և ուսանողների ծախսերն ու ժամանակը:

Алиса Григорян, Нелли Саргсян

АВТОМАТИЗАЦИЯ ПРОЦЕССА РЕГИСТРАЦИИ СТУДЕНТОВ В БОЛЬНИЦАХ

Ключевые слова: *Больница, студенты, база данных, автоматизация.*

Целью данной статьи является автоматизация процесса регистрации и лечения студентов в больницах, сокращение затрат и времени медицинского персонала и студентов.

Հիվանդանոցը բժշկական հաստատություն է, որը նախատեսված է հիվանդների ստացիոնար բուժման համար:

Հիվանդանոցի աշխատանքը կայանում է հետևյալում.

- հիվանդների ընդունելություն և գրանցում,
- բժշկական խորհրդատվություն,
- բուժման կուրսի նշանակում :

վերը նշվածի իրականացման համար անհրաժեշտ է.

- իրականացնել նախագծային ուսումնասիրություն,
- մշակել տեխնիկական դիզայն,
- մշակել տվյալների բազայի ծրագրակազմը և տեղեկատվական հիմքը,
- մշակել հաճախորդի ինտերֆեյս:

21-րդ դարը համարվում է տեղեկատվության և ավտոմատացման դարաշրջան: Այս նպատակին են ծառայում տվյալների բազաները, որոնցից հարկ է նշել MS Access-ը և SQL-ը:

Նշված տվյալների բազաների օգնությամբ կարելի է կազմել ծրագիր, որը կներառի Արցախի Հանրապետության և Հայաստանի Հանրապետության բոլոր բարձրագույն ուսումնական հաստատությունների ուսանողների և բժշկական հաստատությունների համապատասխան աշխատողների մասին բավարար տեղեկատվություն: Ընդհուպ պետք է առանձնացնել, որ այս ծրագիրը նախատեսված է միայն բուհ-երի սովորողների համար, քանի որ կատարելով որոշակի վիճակագրություն կարելի է հաստատապես պնդել, որ բուհ-երի սովորողները մեր բնակչության շրջանում համարվում են ամենազբաղված մարդիկ, քանզի նրանց զգալի մասը համալսարանական պարապմունքներից հետո աշխատում է կամ էլ մասնակցում ինչ-որ դասընթացների:

Ծրագրի մեջ ուսանողների մասին պահանջվում է գրանցել հետևյալ տեղեկատվությունը՝ ԱԱՀ, բնակության վայր, ծննդյան ամսաթիվ և ուսանողական տոմսի համար: Ամեն ուսանող <<պատկանում է>> որոշակի բուհ-ի, դրանից ելնելով

և այդ բուհ-ի որոշակի մասնագիտության:

Հաշվի պետք է առնել նաև, որ միևնույն անձը չի կարող հիվանդանոցների բազայում մի քանի համալսարաններում նշվել որպես ուսանող: Այս փաստի վրա հիմնվելով, կատարվում է հետևյալը. եթե ուսանողը միաժամանակ սովորում է մի քանի համալսարաններում, ապա տվյալների բազայում նշվում է այդ բուհ-երից միայն մեկի անունը:

Բուհ-երի մասին տվյալների բազայում պետք է լինեն հետևյալ տվյալները. բուհ-ի անունը, ռեկտորի ԱԱՀ-ն, գտնվելու վայրը(պետություն, քաղաք), էլ. հասցեն և հեռախոսահամարը: Չհիմնվելով սովորելու տեղի վրա, յուրաքանչյուր ուսանող վերաբերում է ուսանողական հիվանդանոցին, քանի որ ուսանողական հիվանդանոցը չի ընկալվում որպես առանձին օբյեկտ:

Քանզի հիվանդանոցում յուրաքանչյուր ուսանող փնտրում է իրեն անհրաժեշտ բժիշկ, ապա հարցման ժամանակ նրան բժշկի մասին անհրաժեշտ կլինեն հետևյալ տվյալները՝ ԱԱՀ, բժշկի մասնագիտացումը և աշխատասենյակի համարը:

Ուսանողական հիվանդանոցը պետք է ունենա հետևյալ աշխատակազմը.

- բժշկական քարտուղար(որպեսզ օգտագործող),
- բժիշկներ,
- ցանցային ադմինստրատոր:

բժշկական քարտուղարի պարտավորություններն են.

- հաշվետվությունների մշակում և պատրաստում,
- տվյալների բազայում հիվանդների գրանցում ,

բժիշկների հիմնական պարտավորություններն են.

- հիվանդների ընդունում,
- հիվանդի բուժման կուրսի նշանակում,
- հետևել հիվանդներին բուժման կուրսի ընթացքում:

Բժիշկները պետք է ունենան մասնագիտացման բարձր մակարդակ և պրակտիկապես ունենան հիվանդների հետ աշխատելու փորձ:

Ցանցային ադմինիստրատորի պարտականություններն են.

- ապահովել համակարգի անխափան աշխատանքը հիվանդանոցում,
- սարքավորումների տեղադրում և գործարկում,
- անհրաժեշտության դեպքում սխալների ուղղում:

Ցանցային ադմինիստրատորի, տվյալների բազայի ադմինիստրատորի և տեղեկատվական անվտանգության ադմինիսրատորի պաշտոները կարող են համատեղվել բժշկական քարտուղարի պաշտոնում, որը պարտադիր պետք է ունենա անհատական համակարգչով Windows օպերացիոն համակարգի հետ աշխատելու փորձ:

Այս հոդվածը կարելի է համարել ժամանակակից, քանի որ 21-րդ դարում ոչ ոք չի կարող պատկերացնել իր աշխատանքն առանց համակարգչի: Այսպիսի ծրագիրն Արցախի և Հայաստանի Հանրապետություններում ներդնելու դեպքում արդյունքը գոհացուցիչ կլինի այն առումով, որ բավականին կհեշտանա հիվանդանոցների և ուսանողների փոխհամագործակցությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. http://www.citforum.ru/ - форум информационных технологий.
2. http://www.intuit.ru/ -Интернет-Университет Информационных Технологий
3. Гагарина Л.Г., Киселев Д.В., Федотова Е.Л. Разработка и эксплуатация автоматизированных информационных систем: учебное пособие.-М.: ИД «Форум»: ИНФРА-М, 2007. – 384 с.

Արմինե Դանիելյան
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ,
Կիրառական մաթեմատիկայի և
ինֆորմատիկայի ամբիոն
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» - 4-րդ կուրս
armine.danielyan.rafiki@gmail.com
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ. դոցենտ Վ.Վ.Առստաման

ԱՏԱՄՆԱԲՈՒԺԱՐԱՆՈՒՄ ԱՅՑԵԼՈՒՆԵՐԻ ԳՐԱՆՑՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՎԱԾ ՀԱՄԱԿԱՐԳ

Բանալի բառեր՝ *ատամնաբուժարան, ավտոմատացված համակարգ, այցելուների գրանցում, կառավարում, ժամանակի խնայում*

Ավտոմատացումը հանդիսանալով կարևոր գործոն կառավարման գործընթացում, հնարավորություն է տալիս ստեղծելու ատամնաբուժարանի գործունեության ավտոմատացված համակարգ:

Մշակված համակարգը հնարավորություն է տալիս կրճատելու տվյալների փնտրման ժամանակը, հիվանդներին, այցելուներին օգնում է ծանոթանալ նախընտրած բժշկի աշխատանքային գրաֆիկին, տվյալ ծառայության դիմաց պահանջվող գումարի չափին և արագ, առանց ավելորդ ժամանակ կորցնելու, օնլայն տարբերակով հերթագրվել բժշկի մոտ:

Армине Даниелян

АВТОМАТИЗИРОВАННАЯ СИСТЕМА РЕГИСТРАЦИИ ПОСЕТИТЕЛЕЙ В СТОМАТОЛОГИЧЕСКОЙ КЛИНИКЕ

Ключевые слова: *стоматолог, автоматизированная система, регистрация посетителей, управление, экономия времени*

Автоматизация, являясь важным фактором в процессе управления, позволяет создать автоматизированную систему стоматологической деятельности.

Разработанная система позволяет сократить время поиска данных, помогает пациентам и посетителям ознакомиться с графиком работы предпочитаемого ими врача, суммой, необходимой для оказания услуги, и быстро, не теряя времени, записаться на прием к врачу в режиме онлайн.

Վերջին տարիներին ատամնաբուժարանները ունեն գործունեության ակտիվ զարգացում հիմնականում երկու ուղղություններով՝ ավանդական գործընթացների մեքենայացմամբ և նոր ինֆորմացիոն տեխնոլոգիաների ներդրմամբ, ինչին նպաստել է ինտենսիվ տեխնիկական հագեցումը (համակարգիչների գնումը, ցանցերի ստեղծումը և այլն): Այժմ ատամնաբուժարանների առջև դրված են ոչ միայն ավանդական տեխնոլոգիական գործունեության մեքենայացման և տեխնիկական հագեցման հարցերը, որոնք գրեթե լուծված են ներկայումս շատ բուժական հաստատություններում, այլ նաև կառավարական, ծառայությունների արդյունավետության և որակի բարձրացման խնդիրները: Այդպիսի գերագույն խնդիրներից է այցելուների ավտոմատացված

հերթագրումը:

Ժամանակակից պայմաններում գոյություն ունեն տարբեր համակարգչային ծրագրեր, որոնք թույլատրում են փաստաթղթեր ստեղծել, հաշվարկներ կատարել, գրաֆիկական բարդ օբյեկտներ ստեղծել և այլն:

Իմ ստեղծած ծրագրում հնարավորություն է տրվում հեշտացնել ատամնաբույժների աշխատանքը և կրճատել հիվանդների գրանցման վրա ծախսվող ժամանակը: Այստեղ կան 6 աղյուսակներ, որոնք իրար հետ կապված են հետևյալ կապերով.



Ծրագրի գլխավոր էջը ունի հետևյալ տեսքը.



Այստեղ այցելուն մուտք գործելով կարող է բացել ծառայությունների բաժինը, որտեղ ներկայացված են տվյալ ատամնաբուժարանում մատուցվող ծառայությունները և դրանց դիմաց պահանջվող գումարը՝ արտահայտված ՀՀ դրամով.

Ծառայություններ

Ծառայության անվանում	Ծառայության արժեք
Ատամների ուլտրաձայնային հեռացում և ատամների փայլեցում	15000դր
Ատամնանստվածքների հեռացում AIR FLOW համակարգով	15000դր
Պլոմբավորում լուսային կարծրացման միկրոհիբրիդ պլոմբանյութով	10000դր
Պլոմբավորում լուսային կարծրացման նանոհիբրիդ պլոմբանյութով	20000դր
Պլոմբավորում՝ առջևի ատամի էսթետիկ վերականգնում	30000դր
Մետաղական գամիկի տեղադրում	4000դր
Ապակեմանրաթելային գամիկի տեղադրում	5000դր
Ատամի պարզ հեռացում	3000դր
Ատամի բարդ հեռացում	5000դր

Ծանոթանալով ծառայությունների գներին՝ այցելուն մուտք է գործում բժիշկների ենթաբաժինը, ուսումնասիրում նրանց տվյալներն ու աշխատանքային գրաֆիկը և ցանկության դեպքում գրանցվում:

Արդյունքում ստանում ենք աղյուսակներ, որտեղ կարող ենք պարզ տեսնել մեր ցանկացած ինֆորմացիան:

Օրինակ 1. Ներկայացված են հաճախորդի անձնական տվյալները, և թե երբ և որ բժշկի մոտ է հերթագրված:



Օրինակ 2. Ներկայացված են այցելուի տվյալները, այցելության օրը, բժշկի տվյալները, ծառայության անվանումը և արժեքը:



Այցելության արժեքը

3 декабря 2018 г.
22:15:59

Այցելության Օր	Այցելուներ.Ազգանուն	Բժիշկներ.Ազգանուն	Ծառայության անվանում	Ծառայության արժեք
09.11.2018	Միրզոյան	Մարության	Ռենտգեն թիրախային թվային՝ RVG	1000դր
16.11.2018	Դանիելյան	Հարությունյան	Ատամնանստվածքների հեռացում AIR FLOW համակարգով	15000դր
02.11.2018	Զահանգիրյան	Հարությունյան	Պլոմբավորում լուսային կարծրացման միկրոհիբրիդ պլոմբանյութով	10000դր
27.11.2018	Պետրոսյան	Մարության	Պլոմբավորում՝ առջևի ատամի էսթետիկ վերականգնում	30000դր
02.11.2018	Սահակյան	Զաքարյան	Պլոմբավորում լուսային կարծրացման նանոհիբրիդ պլոմբանյութով	20000դր

Ստեղծված ծրագիրը ամբողջությամբ բավարարում է ատամնաբուժարանի աշխատանքի ավտոմատացման, այցելուների օնլայն գրանցման բոլոր պահանջներին, օգնում է ցանկացած պահի տեղեկանալ բժշկի գրաֆիկին, այցելուների գրանցման ցուցակին և, ինչու չէ, ստանալ հաշվետվություններ ամսվա, եռամսյակի և տարեկան աշխատանքի մասին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Glynn C. Williams (2008), Implementing SAP® ERP Sales & Distribution
2. Akash Agrawal (2010), Customizing Materials Management Processes in SAP® ERP Operations around SAP, Understanding ASAP
3. Eric Kimberling (2006), Managing Organizational Change for Global SAP Projects
4. Rich Heilman,Thomas Jung (2007), Next Generation ABAP development

Անժելիկա Դավիդյան
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ» 4-րդ կուրս
Anjelika.davidyan98@gmail.com
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ., դոցենտ Վ.Վ.Առստամյան

NFC ՏԵԽՆՈԼՈԳԻԱՅԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԴՐԱՄԱՊԱՆԱԿՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր. *NFC տեխնոլոգիա, NFC պիտակ, բջջային դրամապանակ, սմարթֆոններ, անկոնտակտ քարտ, դեբետային քարտ, QR կոդ, Apple Pay, Samsung Pay, Android Pay:*

Այս հոդվածում կդիտարկենք NFC տեխնոլոգիայի օգտագործումը էլեկտրոնային դրամապանակներում, դրանց առանձնահատկությունները և օգտագործման հարմարավետությունը: NFC տեխնոլոգիայի կիրառումը ավելի հաճախ հանդիպում է սմարթֆոնների և պլանշետների օգտագործման ժամանակ: NFC նաև օգտագործվում է սոցիալական ցանցերում, կոնտակտներ, նկարներ, ֆայլեր փոխանակելու համար:

Анжелика Давидян

ИСПОЛЬЗОВАНИЕ ТЕХНОЛОГИИ NFC В ЭЛЕКТРОННЫХ КОЩЕЛЬКАХ

Ключевые слова: *Технология NFC, тег NFC, мобильный кошелек, смартфоны, бесконтактная карта, дебетовая карта, QR-код, Apple Pay, Samsung Pay, Android Pay.*

В статье автор рассмотрел использование технологии NFC в электронных кошельках, их особенности и удобство использования. Технология NFC чаще применяется при использовании смартфонов и планшетов. NFC также используется для обмена контактами, изображениями и файлами.

NFC-ն հաղորդակցման պրոտոկոլների բազմություն է, որը հնարավորություն է տալիս կապ հաստատել 2 սարքերի միջև, որոնցից մեկը սովորաբար լինում է շարժական, ինչպիսինն է, օրինակ, սմարթֆոնը, որոնք պետք է լինեն 0-15 սմ հեռավորության վրա՝ կապ հաստատելու ժամանակ: Տվյալների փոխանակման առավելագույն փոխարժեքը կազմում է մոտ 400 Kbps, ապահովվում է տվյալների լիարժեք կրկնակի փոխանակում, այսինքն՝ երկու ուղղություններով էլ՝ գործառնական հաճախությունը 13.56 ՄՀց, միացման ժամանակը չի գերազանցում 0,1 վրկ, գործառնական ռեժիմը կետից կետ է: Այս տեխնոլոգիան կարող է լինել ակտիվ և պասիվ: Ակտիվ, երբ վերահսկվում է սմարթֆոնի միջոցով, պասիվը հենց NFC պիտակներն են: 2004 թվականը կարելի է համարել որպես NFC զարգացման պատմության սկզբնակետ, երբ Nokia-ն, Philips-ը և Sony-ին հայտարարեցին NFC ֆորումի ստեղծման մասին՝ նպատակ ունենալով զարգացնել և ստանդարտացնել տարբեր սարքերի փոխազդեցությունը՝ դիպչելու հիման վրա հիմնված: 2010 թվականին թողարկվեց առաջին հեռախոսը, որի մեջ առկա է NFC տեխնոլոգիա Samsung Nexus S:Մասսայական տարածումը

արդեն սկսվեց 2013 թվականից սկսած, երբ միջազգային բջջային համագումարում հայտարարվել և ներկայացվել են NFC ունեցող բազմաթիվ բջջային սարքեր: Հիմնական օգտագործումը այդ տեխնոլոգիայի միջոցով ակնթարթային կապի հաստատումն էր լրացուցիչ սարքերի հետ, ինչպես նաև արագ ֆայլերի փոխանակումը սարքերի միջև [1]:

NFC նաև օգտագործվում է սոցիալական ցանցերում, կոնտակներ, նկարներ, ֆայլեր փոխանակելու համար: Սարքերը, որոնք ունեն NFC, կարող են հանդես գալ որպես էլեկտրոնային փաստաթղթեր ներկայացնող ինքնություն և քարտ-բանալիներ (keycards): NFC-ն առաջարկում է ցածր արագությամբ կապ՝ պարզ կարգավորմամբ, որը կարող է օգտագործվել ավելի ընդունակ անկոնտակտ կապերի բեռնման համար:

Բացի այդ NFC տեխնոլոգիան հնարավորություն է տալիս ստեղծել NFC-պիտակներ, դրա համար պարզապես պետք է անհրաժեշտ ծրագիրը տեղադրել սմարթֆոնի մեջ և ծրագրավորել մեր պիտակը: NFC պիտակը շատ բարակ չիպ է՝ ալեհավաքով, որը անմիջապես տպված է թղթի կամ պլաստիկի վրա: Այն չունի էներգիայի աղբյուր (մարտկոց), այն էներգիա է ստանում ակտիվ հսկիչի կողմից հարուցված դաշտից: Մետրոյի քարտերը պարունակում են այդպիսի չիպեր: NFC տարբեր պիտակներն ունեն հիշողության տարբեր հզորություններ: Կարող են պահել տվյալների տարբեր տեսակներ NFC պիտակի վրա, ինչպիսիք են URL-ն, կոնտակտային տվյալները կամ նույնիսկ այն հրամաններն ու պարամետրերը, որոնք ընթերցող սարքը կարող է կատարել շփման ժամանակ: NFC պիտակի վրա հրամաններ գրելու համար օգտագործում են NXP TagWriter ծրագիրը, որը հասանելի է Play Market-ում և App Store-ում: Այն ունի մի քանի հիմնական առանձնահատկություններ, ինչպիսիքն են՝ կարդալը, գրելը, ջնջելը և պիտակների պաշտպանությունը: Դրանց օգտագործումը շատ հեշտ է:Ստորև ներկայացված են բոլոր այն հնարավորությունները և ձևաչափերը, որոնք հնարավոր են պիտակի վրա գրելու համար[2].

1. Հղում/URL
2. Wi-Fi
3. Bluetooth
4. Էլեկտրոնային հասցե/Email
5. Հեռախոսահամար/Telephone Number
6. Գտնվելու վայրը/Geo Location
7. Ծրագրի աշխատեցում/Launch an Application
8. SMS

NFC տեխնոլոգիան նաև օգտագործում են բջջային դրամապանակում գրանցված քարտերով վճարումներ կատարելու ժամանակ: Բջջային դրամապանակը վիրտուալ դրամապանակ է, որը պահում է վճարային քարտի տվյալները բջջային սարքում: Բջջային դրամապանակները հարմար միջոց են օգտագործողների համար խանութներից գնումներ կատարելու ժամանակ և այս ծառայությունից ոչ բոլոր առևտրականներն ունեն, դրա համար որոշ խանութներում կարող ենք օգտագործել մոբայլ վալեթը գնումներ կատարելիս: Գործարար-սպառող փոխհարաբերություններն արագորեն դառնում են թվային [2]:

Ֆինանսական ոլորտում ստեղծվում են այնպիսի ընկերություններ, որոնք առաջարկում են թվային հարթակներ և լուծումներ ու ճանաչվում են որպես Fintech ոլորտի անդամ: Այս զարգացող ընկերությունները ստեղծում են օգտակար գործիքներ և ծառայություններ, որոնք հեշտությամբ մատչելի են ցածր գնով: Միակ ոլորտը ֆինանսական արդյունաբերությունում, որն աճել է, ինովացիոն վճարումների սեկտորն է: Օգտագործելով մոբայլ տեխնոլոգիաներ ինչպիսինն են՝ սմարթֆոնները, պլանշետները, սմարթ-ժամացույցները, օգտագործողները և կազմակերպությունները ադապտացվել են օնլայն և օֆլայն տրանզակցիաներին օգտագործելով սարքավորումները:

Բջջային դրամապանակը պահում է տեղեկություններ վարկային քարտի, դեբետային քարտի, կտրոնների կամ պարգևատրման քարտերի մասին: Ծրագիրը տեղադրվելուց հետո, օգտագործողը մուտքագրում է վճարման մասին տեղեկատվությունը, դրամապանակը պահում է այդ տեղեկատվությունը՝ կապելով անհատական նույնականացման ձևաչափը, ինչպիսիք են համարը կամ բանալին, QR կոդը կամ սեփականատիրոջ պատկերը՝ պահված յուրաքանչյուր քարտի հետ [3,4]:

Երբ օգտագործողը կատարում է վճարում, վաճառողը օգտագործում է NFC (Near-Field-Communication) տեխնոլոգիան, որի միջոցով կատարվում է վճարումը: Այն օգտագործում է ռադիո հաճախություններ, որպեսզի հաղորդակցվի սարքեր միջև:

NFC-ն հիմնականում օգտագործում են անկոնտակտ վճարային համակարգերում, նման նրանց, որոնք օգտագործվում են կրեդիտ քարտերում և էլեկտրոնային տոմսերի սմարթ-քարտերում և թույլատրում են մոբայլ վալեթներին փոխարինել կամ լրացնել այդ համակարգը: Դա հիշեցնում է NFC/CTLS (contactless) կամ CTLS NFC:

NFC-ն օգտագործում է օգտագործողի համար ստեղծված անհատականացման ձևաչափը՝ վճարման մասին տեղեկատվությունը վաճառողի վաճառքի POS (սպասարկման կետ) տերմինալին հաղորդելու համար: Տեղեկատվության փոխանցումը սովորաբար իրականացվում է այն ժամանակ, երբ օգտագործողը պահում է NFC- ի միացված բջջային սարքը խանութի NFC սարքին, որպեսզի կարողանա ընթերցել [5]:

Բջջային դրամապանակը մի ծրագիր է, որը կարող է տեղադրվել սմարթֆոնի մեջ կամ կարող է հեռախոսի մեջ արդեն իսկ ներկառուցված լինել, պարզապես պետք կլինի գրանցվել:

Այս



նորարարական և ժամանակակից լուծումը միտված է հեշտացնելու և արագացնելու Ձեր ամենօրյա գործարքները:

Բջջային դրամապանակների օգտագործումը, թույլ է տալիս վճարումները կատարել պարզապես սմարթֆոնի կամ սմարթ-ժամացույցի հպումով: Բջջային դրամապանակներ են հանդիսանում հենց Apple Pay, Samsung Pay և Google Pay-ը:

Samsung Pay կա Samsung հեռախոսների մեջ, սկսած Galaxy Note 5-ից, Gear Watch and Gear Watch Active, Gear S2 and S3: Այն հասանելի է ավելի քան 24 երկրներում: Ընդունում է վարկային, դեբետային և նվեր քարտեր: Համագործակցում է հետևյալ բանկերի հետ.

Bank of America, American Express, US Bank, TD Bank, SunTrust, Discover և այլն:

Apple Pay կա Iphone SE-ից սկսած, Apple Watch, MacBook Pro with TouchID, iPads սկսած 5-րդ սերնդից, iPad Pro և iPad Mini: Այն հասանելի է ավելի քան 41 երկրներում: Ընդունում է վարկային, դեբետային քարտեր:

Google Pay կա Android հեռախոսներում, որոնք ունեն NFC տեխնոլոգիա, և HCE աշխատում 4,4 տարբերակից բարձր: Այն հասանելի է ավելի քան 29 երկրներում: Ընդունում է վարկային, դեբետային և նվեր քարտեր: Համագործակցում է հետևյալ բանկերի հետ.

Bank of America, American Express, US Bank, TD Bank, Discover և այլն:

Այս ծրագրերում ավելացրած քարտերը կարող եք օգտագործել ցանկացած երկրում, որտեղ ընդունում են անկոնտակտ վճարումներ: Apple Pay-ը և Google Pay-ը օգտագործում են NFC տեխնոլոգիա, իսկ Samsung Pay-ը՝ NFC և MST (Magnetic Secure Transmission-Մագնիսական անվտանգ փոխանցում) տեխնոլոգիա:

Երբ հեռախոսը պահում եք ցանկացած տերմինալի դեմ, այն արձակում է ազդանշան, որը մոդելավորում է մագնիսական քարտի վրա:

Բջջային վճարումների համակարգը քարտերը օգտագործելու համար գործածում է մի մեթոդ, որը կոչվում է tokenization (տոքենիզացիա):

Երբ ավելացնում ես քարտը ծրագրի

մեջ, այն գեներացնում է վիրտուալ հաշվի համար և քո ռեալ քարտի համարը, երբեք չի տրվում վաճառողին: Վճարումներ կատարելու ժամանակ այն ուղարկում է գեներացված քարտի համարը և գաղտնագրաշարը (cryptogram), որը գործում է որպես գաղտնաբառ: Այնուհետև քարտային ցանցը ստուգում և մշակում է վճարումը [6] :

Apple-ը պահանջում է նախքան վճարում կատարելը օգտագործել TouchID, FaceID կամ PIN: Samsung-ը նույնպես պահանջում է TouchID կամ PIN, IRIS scan: Բայց Google Pay-ին անհրաժեշտ է միայն ձեր հեռախոսը բացված մատնահետքից, գաղտնաբառից, PIN-ից: Հեռախոսը կորցնելու դեպքում երեքն էլ թույլ են տալիս հեռակա կերպով հեռացնել քարտի մասին մանրամասնությունները:

Apple Pay օգտագործման դեպքում քարտը չի պահպանվում բջջային սարքում, ոչ էլ Apple-ի սերվերներում, և ոչ էլ առևտրաօֆիսային սերվերներում: Դրա փոխարեն քարտի բեռնման ժամանակ ստեղծվում է ունիկալ տոմս(token)՝ 16 թվանշանից բաղկացած: Հենց այս տոմսն էլ օգտագործվում է տրանզակցիայի ժամանակ:

Apple Pay-ը և Google Pay-ը միայն այս 2-ը ունեն Peer-2-peer հնարավորություն, այսինքն՝ վճարել ընկերներին:

Մոբայլ դրամապանակներում կիրառվող NFC տեխնոլոգիային բնորոշ են հետևյալ առանձնահատկությունները.

✓ Հարմարավետություն

Շատ հարմար է վճարումներ կատարել քարտերով, բջջային հեռախոսով, անկոնտակտ MasterCard քարտերով, որոնք ունեն այդ տեխնոլոգիայի աջակցումը, դրա համար պարզապես պետք է սարքավորումով դիպչել տերմինալին, որի միջոցով կատարվում է վճարումը: Վճարումից առաջ պետք է համոզվել, որ տերմինալին նշված գումարը համապատասխանում է գնման գումարին:

✓ Արագագործությունը

Գնումների դիմաց վճարումները կկատարեք բավականին արագ: Անկոնտակտ



տեխնոլոգիայի շնորհիվ վճարումը կատարվում է ակնթարթորեն: Բացի դրանից, եթե ձեր գնման գումարը չի գերազանցում 10000 դրամ (MasterCard), ապա կարող եք առանց PIN կոդի գրառման կատարել վճարումը կամ ստորագրել չեկերը:

✓ Անվտանգությունը

Վճարումն իրականացնելիս պետք չէ քարտը փոխանցել գանձապահին, դուք ամբողջովին կառավարում եք այդ գործընթացը: Նաև չի կարող 2 կամ ավելի անգամ գանձվել գումար, առաջին վճարից հետո տերմինալը ազդանշան է հաղորդում և անջատվում:

Տրանզակցիաները, որոնք կատարվում են Mastercard-ով, պաշտպանված են անվտանգության ամենաառաջադեմ զարգացումներով:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://en.wikipedia.org/wiki/Near-field_communication
2. https://www.visa.com.ua/ru_UA/pay-with-visa/featured-technologies/visa-contactless.html
3. https://medium.com/hacksters-blog/how-to-make-an-nfc-equipped-pcb-business-card-5e05f99bb225
4. https://www.shopnfc.com/en/content/20-nfc-iphone
5. https://medium.com/hacksters-blog/comparison-of-wireless-technologies-bluetooth-wifi-ble-zigbee-z-wave-6lowpan-nfc-wifi-eece5593d80f
6. https://www.smart-tec.com/en/auto-id-world/nfc-technology
7. https://www.passteam.ru/blog/big-guide-to-google-pay

ՀՏԴ 004.6 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Դիանա Իսրայելյան
ԿՏՀ մագիստրատուրա, 2-րդ կուրս,
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ,
Կիրառական մաթեմատիկայի և
ինֆորմատիկայի ամբիոն
israelyan.diana@gmail.com
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ., դոցենտ Վ.Վ. Առստամյան

ՄԵԾ ՏՎՅԱԼՆԵՐԻ ՕԳՏԱԳՈՐԾՈՒՄԸ ՄԱՐՔԵԹԻՆԳՈՒՄ

Բանալի բառեր՝ *մեծ տվյալներ, տեղեկատվություն, տերաբայթ, մարքեթինգ, ծավալ, բազմազանություն, արագություն :*

Ժամանակակից բիզնեսում ընկերության պոտենցիալ և ներկայիս հաճախորդների, մրցակիցների մասին տեղեկություններ իմանալը շատ արժեքավոր է: Մեծ տվյալների շնորհիվ ձեռնարկությունները ավելի լավ կիմանան ու կհասկանան իրենց հաճախորդների պահանջմունքները և կկարողանան առաջարկել նրանց համար հարմար ապրանքներ, իսկ սպառողները կվայելեն ապրանքները և ծառայությունները, որոնք ամենալավ ձևով համապատասխանում են իրենց:

Диана Исраелян

ИСПОЛЬЗОВАНИЕ БОЛЬШИХ ДАННЫХ В МАРКЕТИНГЕ

Ключевые слова: *большие данные, информация, терабайты, маркетинг, объем, разнообразие, скорость*

В современном бизнесе очень важно знать о потенциальных возможностях компании, ее текущих клиентах и конкурентах в. Большие данные позволяют компаниям лучше понимать потребности своих клиентов и иметь возможность предлагать им нужные продукты, тогда как потребители будут наслаждаться продуктами и услугами, которые им лучше всего подходят.

Ներկայումս մենք ապրում ենք ինֆորմացիոն դարում, և օրեցօր ինֆորմացիայի ծավալը աճում է: Օրինակ՝ Facebook սոցիալական ցանցի տվյալների պահեստի չափն օրական ավելանում է 500 տերաբայթով: Համաձայն IDC Digital Universe-ի կատարած հետազոտությունների 2020 թվականին տվյալների ծավալը ամբողջ աշխարհում կկազմի մինչև 40 զետտաբայթ: Տեղեկատվության արագ աճող ծավալը մեր առջև դնում է դրանք պահեստավորելու ու վերամշակելու նոր խնդիրներ:

Մեծ տվյալները տարբեր տեսակի և հսկայական ծավալի կառուցվածքավորված ու չկառուցվածքավորված տվյալներ են, ինչպես նաև դրանց մշակման մեթոդները, որոնք թույլ են տալիս բաշխված ձևով վերլուծել տեղեկատվությունը:

Մեծ տվյալներ տերմինը առաջացել է 2008 թվականին: Այն առաջին անգամ օգտագործել է «Nature» ամսագրի հեղինակ Կլիֆֆորդ Լինչը: Նա պատմում էր համաշխարհային տեղեկատվության պայթյունավտանգ աճի մասին և նշում, որ դրանք յուրացնելու համար անհրաժեշտ են նոր գործիքներ և ավելի առաջադեմ տեխնոլոգիաներ:

Ավելի պարզ ձևով մեծ տվյալները մեծ զանգվածներով տվյալների և դրանց հետ աշխատելու մեթոդներ համընդհանուր անվանումն է: Այդպիսի տվյալները արդյունավետ ձևով մշակվում են հսկայական ծրագրային գործիքների միջոցով, որոնք հայտնվել են 2000-ական թվականներին և դարձել ավանդական տվյալների բազաների այլընտրանք և

Business Intelligence լուծում:

Մեծ տվյալների վերլուծությունը կատարվում է նոր, անցյալում անհայտ տեղեկատվություն ստանալաու համար:

Մեծ տվյալների աղբյուր են հանդիսանում.

- համացանցը՝ սոցիալական կայքեր, բլոգներ, ֆորումներ, կայքեր,
- կորպորատիվ տվյալներ՝ ավանդական աշխատանքային ինֆորմացիան, արխիվները, տվյալների բազաները,
- սարքերի ցուցմանքները՝ սենսերներ, գործիքներ, օդերևութաբանական տվյալներ, բջջային տվյալներ և այլն:

Չի կարելի ասել, որ կան մեծ տվյալների առանձին տեսակներ, դրանց հետ աշխատելու մեթոդների էությունն այն է, որ դրանք միասին համատեղում են ամենատարբեր տեսակի ինֆորմացիաներ և արդյունթում ստանում նոր ինֆորմացիա:

Մեծ տվյալները բնութագրելու համար մտցրել են պարզեցված չափանիշներ, որոնք կոչվել են «երեք V».

- ծավալ (Value) – ինչքան տվյալներ է պարունակում խումբը:
- բազմազանություն (Variety) – որքանով են միմյանցից տարբերվում տարբեր տեսակի տվյալները:
- արագություն (Velocity) – ինչ արագությամբ են ի հայտ գալիս նոր տվյալները:

Հաճախ այդ չափանիշներն ավելացվում են «չորրորդ V-ով»՝ հավաստիություն (Vercaity) , որքանով են հավաստի տվյալները:

Այս չորս հատկություններն առանձնացնում են մեծ տվյալները այն տվյալներից, որոնք պահպանվում են ավանդական եղանակով:

Դիտարկենք մեծ տվյալների կիրառումը մարկետինգում: Մարկետինգային հետազոտությունները միշտ կապված են մեծ քանակությամբ տվյալներ հետ:

Մեծ տվյալների վերլուծությունը վաղուց հաջողությամբ օգտագործվում է նպատակային լսարանի, պահանջարկի, սպարողի վարքագծի որոշման համար: Այդպիսով, մեծ տվյալները մարկետոլոգի համար հանդիսանում են ճշգրիտ գործիք կազմակերպության ապագան գուշակելու համար:

Օրինակ մեծ տվյալների վերլուծությունը հայտնի RTB (Real Time Bidding) մոդելի հիման վրա թույլ է տալիս ցուցադրել գովազդները միայն այն սպառողներին, որոնք հետաքրքրված են ապրանքով կամ ծառայությամբ:

Մեծ տվյալների օգտագործումը մարկետինգի մեջ գործարարների հնարավորություն է տալիս.

- ավելի լավ իմանալ իրենց սպառողներին: ինտերնետում գրավելու համապատասխան լսարանի,
- գնահատել հաճախորդի բավարարվածության մակարդակը,
- հասկանալ՝ մատուցվող ծառայությունը համապատասխանում է սպասումներին և պահանջմունքներին,
- գտնել և ներդնել նոր միջոցներ՝ հաճախորդների վստահությունը շահելու համար,
- ստեղծել նախագծեր, որոնք ունեն պահանջարկ:

Ներկայումս ամենատեսանելի և հայտնի օրինակներից է Apple ընկերության օրինակը, որը հավաքում է տվյալներ իր օգտագործողների մասին հեռախոսների, պլանշետների, ժամացույցների և համակարգիչների միջոցով: Հենց այդպիսի համակարգի առկայության միջոցով ընկերությունը տիրապետում է հսկայական տեղեկատվության իր հաճախորդների

մասին և հետագայում օգտագործում այդ տեղեկատվությունը եկամուտ ստանալու համար:

Մինչև մեծ տվյալներ հավաքումը և մշակումը սկսելը, մարկետոլոգները պետք է որոշեն, թե ինչ եղանակով և ինչ գործիքներով են կատարելու վերլուծություն: Փորձագետները խորհուրդ են տալիս սկսել այն ոլորտներից, որոնք կարող են ընկերությանը տալ մրցակցային առավելություններ և արդյունավետ գաղափարներ:

Տեղեկատվության օգտագործումը մարկետինգային 4P համակարգում

Մարկետինգը հաճախ բնութագրվում է 4P տերմինների օգնությամբ՝ ապրանք կամ ծառայություն (product), գին (price), առաջմղում (promotion), բաշխման ուղիներ(place):

Գին

Գինը այն գինն է, որը սահմանվում է ձեռնարկության կողմից՝ իր բոլոր ծախսերը ծածկելու և շահույթ ստանալու համար: Այն ներառում է մատակարարների տվյալները, կադաստրային տեղեկատվություն, ստառողի մոդելներ, ֆինանսական հաշվետվություններ և այլն:

Կազմակերպություն կարող է փոփոխել գները՝ ելնելով իր հաճախորդների պահանջմունքներից: Այս դեպքում կազմակերպությունը, ունենալով տեղեկություններ, կարող է տարբեր մասերի բաժանել հաճախորդներին և կիրառել տարբեր գնային քաղաքականություն:

Ապրանք

Այսօր ամենամեծ քանակությամբ տեղեկատվություն օգտագործվում է ընկերության սեփական արտադրանքը ուսումնասիրելու և հասկանալու համար: Ներկայումս համացանցի օնլայն հնարավորությունների միջոցով որակական և քանակական հետազոտություններ անցկացնելը շատ հեշտ է: Ձեռնարկությունները կարող են նաև օգտագործել սոցիալական լրատվամիջոցները իրենց ապրանքը ներկայացնելու և գովազդելու համար: Տեղեկատվության խորը վերլուծության դեպքում ընկերությունները կարող են հզոր հիմք ստեղծել սեփական արտադրանքը խթանելու համար:

Բաշխման ուղիներ

Մարկետոլոգները կարող են օգտագործել մեծ տվյալները իրենց ապրանքները օպտիմալ կերպով տեղաբաշխելու և ճիշտ մատակարարում իրականացնելու համար: Օրինակ՝ շատ ամսագրեր վերջին տարիների ընթացքում շատ քիչ են վաճառվում, նրանց մեծ մասը սկսեց ուսումնասիրել մեծ տվյալները և տեղափոխել իր գործունեությունը համացանց և իր նյութերի հասանելիությունը դարձնել վճարովի:

Առաջմղում

Մեծ տվյալները կարող են օգնել սպառողներին որոշելու, թե որ ցուցանիշներն են իրենց համար առավել կարևոր ապրանք գնելիս, միևնույն ժամանակ, շուկայավարողներին հնարավորություն տալով ստեղծել իրենց հաճախորդների պահանջմունքների ավելի պարզ պատկերը: Հմուտ շուկայավարողների ձեռքին մեծ տվյալները կարող են օգտագործվել՝ փորձարկելու և կանխատեսելու սպառողների հավանական արձագանքը տարբեր շուկայավարման հաղորդագրություններին:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. https://www.uplab.ru/blog/big-data-technologies/
2. https://lpgenerator.ru/blog/2015/11/17/chto-takoe-big-data-bolshie-dannye-v-marketinge-problemy-algoritmy-metody-analiza/
3. https://www.ovtr.ru/stati/bolshie-dannye-big-data-v-marketingovyh-issledovaniyah

ՀՏԴ 004.67 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Անի Լալայան, Ալոնա Համբարձումյան, Մերի Մկրտչյան
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 3 կուրս,
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Email-anilalayan210@mail.ru
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ. դոցենտ Վ.Վ.Առստամյան

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՄԱՆ ՎԻՐՏՈՒԱԼ ՀԱՄԱԿԱՐԳԵՐ

Բանալի բառեր՝ վիրտուալացում, տվյալների պահպանման համակարգ

Այս հոդվածում ներկայացված են տվյալների պահպանման վիրտուալ համակարգերի կազմակերպման սկզբունքները և դրանց առանձնահատկությունները:

Ани Лалаян, Алена Амбарцумян, Мери Мкртумян

ВИРТУАЛЬНЫЕ СИСТЕМЫ ХРАНЕНИЯ ДАННЫХ

Ключевые слова: Виртуализация, система хранения данных

В данной статье изложены принципы организации виртуальных систем хранения данных и их особенности.

Ժամանակից տեխնոլոգիաների զարգացման աննախադեպ աճը մեծ հնարավորություններ է բացում մարդկության առջև գործունեության գրեթե բոլոր ոլորտներում: Այս իմաստով ձեռնակությունները մեծապես կախված են իրենց SS ենթակառուցվածքների հնարավորությունից:Այս կախվածության առաջացման կողմերից մեկն այն է, որ հսկայական քանակությամբ կորպորատիվ տեղեկատվություն է կուտակվում, որն էլ իր հերթին որոշակի դժվարություններ է առաջացնում պահեստային ենթակառուցվածքների գործարկման համար:

Տվյալների պահպանման վիրտուալացումը այսօր անվանում են բիզնեսի ամենաարդյունավետ ներդրումը: Այս տեխնոլոգիան թույլ է տալիս կառավարել տվյալները՝ որպես ռեսուրս, ռացիոնալ կերպով բաշխելով դրանք ըստ արտադրողականության, մատչելիության և անվտանգության: Վիրտուալիզացիայի շնորհիվ հեշտությամբ լուծվում է մեծ քանակությամբ տեղեկատվության կառավարման և մի կրիչից մյուսը տվյալների միգրացիայի խնդիրը: Բավական է միացնել սկավառակի մի քանի զանգվածներ մեկ սարքածրագրաշարային համալիրում, և արդյունքում կունենանք մի համակարգ, որն աշխատում է որպես մեկ ամբողջականություն:

Վիրտուալացումը մի ծրագրաապարատային համակարգ է, որը տրամաբանական մակարդակում թույլ է տալիս առանձնացնել հաշվողական ռեսուրսները ապարատային մասից: Դասական տեսքով, մեկ սերվերի վրա կարող է աշխատել տվյալ սերվերը կառավարող միայն մեկ օպերացիոն համակարգ: Բոլոր հաշվարկային ռեսուրսները տրված են այս գործող օպերացիոն համակարգին: Վիրտուալացման դեպքում մենք ավելացնում ենք ծրագրային ապահովման շերտ, որը թույլ է տալիս մեզ առանձնացնել որոշ հաշվարկային ռեսուրսներ մեկուսացված կոնտեյների տեսքով, և այդպիսի կոնտեյներներ (վիրտուալ մեքենաներ) կարող են շատ լինել: Յուրաքանչյուր կոնտեյներ կարող է ունենալ իր սեփական օպերացիոն համակարգը, որը նույնիսկ չի կասկածի, որ իր ապարատային սերվերը իրականում վիրտուալ կոնտեյներ է: Ծրագրային ապահովման նմանատիպ շերտը կոչվում է *հիպերվիզոր*:

Վիրտուալացումը նոր տերմին չէ SS ոլորտում: Դրա առաջին հիշատակումը սկսվում է

1959 թվականից, երբ այդ հասկացության օգնությամբ բացատրվում է ներքին հիշողության ընդլայնումը արտաքին հիշողության հաշվին: Ժամանակակից նշանակությամբ դա տարբեր ենթահամակարգերի ինտեգրման բարձր մակարդակն է, ֆիզիկական հասցեների և սարքերի համարների փոխարինումն է տրամաբանականի, արդյունավետ կառավարումն ու օպտիմիզացումն է:

Այն թույլ է տալիս պատկերացնել տվյալների պահպանման համակարգը բլոկային մակարդակում, ինչը հնարավորություն է տալիս չկապել բլոկների տրամաբանական հասցեները ֆիզիկականին, ընդ որում այս ամենը թափանցիկ է սերվերի համար, ինչը նշանակում է, որ այն չի պահանջում սերվերի մասնակցությունը: Այլ կերպ ասած, վիրտուալ տվյալների պահեստը չի բեռնում սերվերը, քանի որ ինֆորմացիայի ֆիզիկական կրիչների հետ առնչվող բոլոր գործընթացները իրականացվում են RAID-վերահսկիչների մակարդակով:

Որպես կանոն, առանձնացնում են երեք մակարդակ, որոնց վրա մեկ բաշխված համակարգի սահմաններում հնարավոր է իրականացնել վիրտուալացումը:

1) Սերվերի մակարդակ

Իրականացվումը է մասնագիտացված ծրագրային ապահովման միջոցներով, որոնք թույլ են տալիս օպերացիոն համակարգին աշխատել վիրտուալ սկավառակային սարքի հետ (իրականում գոյություն չունեցող), ինչպես ֆիզիկապես գոյություն ունեցող սկավառակիային սարքի հետ:

2) Տվյալների պահպանման ցանցի անջատիչի մակարդակը

Այն իրենից ներկայացնում է կուտակիչներից կազմված կոմպլեքսի վրա հիմնված անջատիչային սարքավորման և մասնագիտացված կառավարող ծրագրային ապահովման իրականացում, որը բարձրացնում է կառավարման արդյունավետությունը, տվյալների պահպանման ցանցի շահագործումը և մշակումը ընդհանուր առմամբ: Հաճախ անվանում են «SAN in box» (SAN-in-a-box):

3) Տվյալների պահպանման համակարգի մակարդակը

Վիրտուալիզացիայի առավել դինամիկ զարգացող տեսակն է: Իրենից ներկայացնում է լրացուցիչ սարքավորումներ, այսպես կոչված, SAN-consoles (SAN- սերվերներ), որոնք պատասխանատու են իրենց գտնվելու վայրից տվյալները կառավարելու և վերացնելու համար: Նման սարքավորումներ պարունակող ցանցերը կոչվում են “պահեստային լողավազաններ” և բաժանվում են 2 տեսակի՝ սիմետրիկ և ասիմետրիկ: Իր հերթին, սիմետրիկ լողավազանը (In-band SAN virtualization) պարունակում է կառավարման սարք՝ սերվերների և տվյալների կուտակիչների միջև, այնպես որ ամբողջ երթևեկությունը անցնում է նրա միջով: Ասիմետրիկ լողավազանը (Out-of-Band SAN Virtualization) հիմնվում է մետատվյալների (տեղեկատվություն այլ տեղեկատվության մասին, կամ օբյեկտի մասին լրացուցիչ ինֆորմացիային վերաբերող տվյալներ) սերվերի օգտագործման վրա, կառավարման համար հիմնական կետի վրա, տվյալների կուտակիչի և սերվերի միջև ուղիղ կապի պահպանմամբ:

Խնդիրներ, որոնք լուծում են տվյալների պահպանման վիրտուալացումը՝

ենթակառուցվածքների ընդլայնման վրա խնայում

Կարիք չկա ազատվել հին, բայց դեռ աշխատող սկավառակներից և պահեստային համակարգերից. դրանք հեշտությամբ ինտեգրվում են նոր վիրտուալ համակարգի հայեցակարգի մեջ:Վիրտուալացումը թույլ կտա ապագայում օգտագործել առկա ապարատային բաղադրիչները՝ SS ենթակառուցվածքների մասշտաբացման համար:

Սկավառակների վրա առկա տարածքի օպտիմիզացում

Վիրտուալացում օգտագործելով՝ կարող ենք մի քանի տարբեր սկավառակներ կամ պահեստներ համատեղել՝ դրանք սերվերի տեսանկյունից վերածելով մեկ զանգվածի: Այսպիսով, օգտագործողի տվյալները բաշխվելու են առկա բոլոր ֆիզիկական կրիչների վրա, ինչը թույլ կտա խուսափել այն իրավիճակից, երբ սկավառակային զանգվածներից

մեկը լցվում է, մինչդեռ մյուսը չափազանց շատ ազատ տարածք է ունենում: Համակարգը մեծապես հեշտացնում է սերվերի աշխատանքը:

Տվյալների պարզեցված փոխանցում և հայելային պատճենում

Պահպանման վիրտուալացումով կարող ենք ընդմիշտ մոռանալ խափանումների մասին, որոնք տեղի են ունեցել տվյալների կրկնօրինակման ժամանակ: Տեխնոլոգիան հնարավորություն է տալիս իրական ժամանակում կիրառել տեղեկատվության հայելային պատճենումներ: Քանի որ տեխնոլոգիան օգտագործում է տարբեր ֆիզիկական կրիչներ, եթե դրանցից որևէ մեկը խափանվի, համակարգը կտեղափոխվի պահեստային սկավառակ:Դա հնարավոր է,քանի որ սերվերը դրանք տեսնում է որպես մեկ մեծ սկավառակային տարածություն: Համապատասխանաբար, օգտագործողները չեն նկատի փոփոխություններ, և հավելվածները կշարունակեն աշխատել ինչպես միշտ: Մեծ քանակությամբ տվյալների փոխանցումը նույնպես պարզեցված է. Ադմինիստրատորները ստիպված չեն լինի փոխել ֆայլերին դիմելու ուղիները, քանի որ դրանք կմնան նույն սկավառակային զանգվածի մեջ:

Տվյալների բազմամակարդակ պահպանում

Բոլոր ինֆորմացիայի կրիչները տարբերվում են տվյալների հասանելիության արագությամբ: Դրանք կարելի է բաժանել երեք հիմնական կատեգորիայի՝

- արագ, բայց թանկ,
- դանդաղ, բայց էժան,
- միջին՝ արագության և գնի առումով օպտիմալ:

Միայն արագ սկավառակների ձեռքբերումը շատ թանկ է, բայց վիրտուալացման միջոցով այս խնդիրը լուծվում է՝ ինչպես արագընթաց կրիչները, այնպես էլ նրանց դանդաղ տեսակները համատեղելով: Սերվերը բաշխում է ամբողջ տեղեկատվությունը այնպես, կարծես բոլորը մեկ սկավառակի զանգված են:

Միևնույն ժամանակ, այն տվյալները, որոնք ավելի հաճախ են պահանջվում, ընկնում են արագ ֆիզիկական կրիչների վրա, իսկ այն տեղեկությունները, որոնք հազվադեպ են օգտագործվում կամ գտնվում են արխիվում, ուղարկվում են դանդաղ կրիչներ:Այս գործընթացը օգնում է համատեղել բարձր արագությունն ու հզորությունը:

Վիրտուալացումը տարբեր պահեստային համակարգերը համատեղում է մեկ պահեստային համակարգի մեջ, ինչը հեշտացնում է տեղեկատվության ողջ զանգվածը կառավարելը և մեծացնում ձեռնարկությունների աշխատանքի արդյունավետությունը:

Անկասկած, տվյալների պահպանման վիրտուալացումը եզակի տեխնոլոգիա է, որը կարող է արմատապես փոխել մարդկության կյանքը՝ բոլորի առջև բացելով մեծ քանակությամբ տեղեկատվությանը դիմելու հնարավորություն: Այս պահի դրությամբ նման պահեստները խոշոր ընկերությունների և կազմակերպությունների արտոնություններն են, որոնք իրենց կարող են թույլ տալ գնել և պահել կամ վարձել վիրտուալ SS ենթակառուցվածքներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Виртуализация систем хранения [Электронный ресурс]. URL: http://citforum.ru/nets/storage/virtualization.
2. Виртуальные принципы хранения данных - №10, 2003| «Журнал сетевых решений LAN» | Издательство «Открытые системы» [Электронный ресурс]. URL: http://www.osp.ru/lan.
3. Виртуализация систем хранения данных.Систем. требования: Adobe Acrobat Reader URL:http://www.storagenews.ru/10/compaq_10.pdf .

Ռինատ Հայրապետյան
Ինֆորմատիկա և կիրառական կաթեմատիկա
Մագիստրատուրա, 1-ին կուրս
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
rinat.hairapetian@gmail.com
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ. դոցենտ Վ.Վ.Առստամյան

ՀՅՈՒՐԱՆՈՑԱՅԻՆ ՀԱՄԱԼԻՐԻ ԱՌՑԱՆՑ ԱՄՐԱԳՐՄԱՆ ԱՎՏՈՄԱՏԱՑՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ՄՇԱԿՈՒՄ

Բանալի բառեր. *հյուրանոց, առցանց ամրագրում, ավտոմատացված համակարգ, վեբ հավելված:*

Այս հոդվածում դիտարկված են հյուրանոցային համալիրների ամրագրման համակարգի ավտոմատացման անհրաժեշտության պատճառները և ներկայացված է մեր կողմից մշակված հյուրանոցի համարների առցանց ամրագրման վեբ հավելվածը:

Ринат Айрапетян

РАЗРАБОТКА СИСТЕМЫ АВТОМАТИЗАЦИИ ОНЛАЙН БРОНИРОВАНИЯ ГОСТИНИЧНОГО КОМПЛЕКСА

Ключевые слова: *Гостиница, онлайн бронирование, автоматизированная системам, веб приложение.*

В этой статье рассмотрены причины необходимости автоматизации системы бронирования гостиничных комплексов и представлено разработанное автором веб приложение онлайн бронирования номеров гостиницы.

Հյուրանոցները և հյուրանոցային համալիրները՝ որպես ավտոմատացման առարկա, բազմաթիվ փոխկապակցված ծառայություններից բաղկացած, բարդ համակարգեր են: Այդ ծառայությունները միավորելու և ավելի մատչելի ու հարմարավետ դարձնելուն է ուղղված ավտոմատացման համակարգերը:

Ամրագրման ծառայության արդյունավետությունը ապահովում է հյուրանոցի եկամտաբերությունը: Ամրագրման այնպիսի եղանակները, ինչպիսինք են՝ տեղում, հեռախոսով, նամակով կամ էլեկտրոնային փոստով ամրագրումը, մնում են անցյալում: Դրանք շահավետ չեն և՛ ֆինանսական տեսանկյունից, և՛ պատվիրատուի ու հյուրանոցի ժամանակային ծախսերի տեսանկյունից: Ուստի բոլորի համար նախնական պատվեր կատարելու առավել հարմար եղանակ է դառնում համացանցը՝ հյուրանոցի կայքը, կամ մի քանի հյուրանոցային ցանցեր միավորող մասնագիտացված ռեսուրսները:

Հյուրանոցին ծանոթանալու և դրա համարների առցանց ամրագրման համար մեր կողմից մշակված է վեբ հավելված: Հավելվածը մշակվել է WordPress CMS (Contant Management System - Կոնտենտի Կառավարման Համակարգ) բազայի վրա: Օգտագործվել են վեբ միջավայրում առավել նոր ու համատեղելի տեխնելոգիաները՝ HTML 5, CSS3 (Cascading Style Sheets), Web-Server Apache, JavaScript և PHP լեզուները և MySQL տվյալների հենքը: WordPress-ի օգտագործման հիմք է ծառայել դրա մատչելիությունը և օգտատերի

(հյուրանոցի տիրոջ, ադմինիստրատորի) համար դրա օգտագործման պարզությունը:

Հյուրանոցի տերը, կամ ադմինիստրատորը հնարավորություն ունեն կառավարման վահանակից նոր սենյակներ ավելացնել կայքում, հասանելի դարձնելով դրանք հետագա առցանց ամրագրման համար:



Կայքի օգտատերերը մտնելով համապատասխան սենյակների էջեր տեսնում են, թե ամսվա որ օրերին են դրանք զբաղեցված ու ազատ





և լրացնելով համապատասխան դիմումի ձևը՝ հարցում թողնում տվյալ սենյակի ամրագրման վերաբերյալ:



Կայքի ադմինիստրատորը էլ.փոստով ծանուցում է ստանում նոր հարցում ավելանալու վերաբերյալ և անցնելով ծանուցման մեջ եղած հղմամբ՝ ընկնում է նոր հարցումների մշակման էջը, որտեղ՝ կարող է ընդունել հարցումը կամ մերժել այն:

Կայքի ադմինիստրատորը ունի նաև ղեկավարման վահանակից նոր պատվերներ ավելացնելու հնարավորություն:

Ստորև բերված են կայքի կոդերից երկու հատվածներ:

Հետևյալ ֆունկցիան ավելացնում է նոր պատվեր, մինչև այդ՝ հատուկ նախատեսված ֆունկցիաների միջոցով ստուգելով՝ արդյո՞ք ազատ է տվյալ սենյակը, թե ոչ: Պատվերը ավելացնելուց հետո ուղարկվում է ծանուցում կայքի ադմինիստրատորի էլ.փոստին (կոդի շեղատառ հատվածը):

```
private function add_order($form_info) {
if ( $this->room_type == 'rooms' && !($this->is_room_free($form_info)) )
return 'room_busy';
if ( $this->room_type == 'dorms' && !($this->is_dorm_free($form_info)) )
return 'room_busy';
$postarr = array(
'post_author'    => '0',
'post_content'   => $form_info['comment'],
'post_status'    =>  'publish',
'post_title'     => $form_info['name']." ".$form_info['start_date']."_".$form_info['end_date']."
".$form_info['group'],
'post_type'      => 'orders',
'meta_input'     => array(
                    'name'=>$form_info['name'],
                    'start_date' => $form_info['start_date'],
                    'end_date' => $form_info['end_date'],
                    'start_end_difference' => $form_info['start_end_difference'],
                    'adults' => $form_info['adults'],
                    'user_id' => $form_info['user_id'],
                    'group' => $form_info['group'],
```

```
                        'currency' => $form_info['currency'],
                        'check_status'=>0
                    ),
);
$post_id = wp_insert_post( $postarr, true );
if ( ! is_wp_error( $post_id ) ) {
if ( function_exists('send_email_action_order') ) {
$room_name = get_the_title( $form_info['room_id'] );
$res = send_email_action_order( $form_info['name'], $form_info['start_date'],
$form_info['end_date'], $room_name );
}
return $post_id;
}
else{ return false; }
}
```

Հետևյալ ֆունկցիան իրագործում է նոր պատվերի վերջնական ընդունումը կայքի ադմինիստրատորի կողմից: Դրանից հետո այն փնտրում է այն բոլոր նոր, չընդունված պատվերները, որոնք հատում ունեն նոր ընդունված պատվերի և ավտոմատ կերպով չեղարկում է դրանք:

```
public function admin_accept_order()
{
    $form_info = array(
        'group'         => $this->room_group,
        'start_date'    => $this->start,
        'end_date'      => $this->end,
        'adults'        => $this->adults,
    );
    if ( $this->room_type == 'rooms' && $this->is_room_free($form_info) ){
        if ( $this->set_order_status(1) ) {
            $meta_query_array = array (
                'relation' => 'AND',
                array( 'key' => 'check_status',
                    'value' => '0' ),
                array( 'key' => 'group',
                    'value' => $this->group ),
                array(  'relation' => 'OR',
                    array(  'key' => 'start_date',
                        'value' => array($this->start, $this->end),
                        'compare' => 'BETWEEN' ),
                    array(  'key' => 'end_date',
                        'value' => array($this->start, $this->end),
                        'compare' => 'BETWEEN' ),
                    array(  'relation' => 'AND',
                        array( 'key' => 'start_date',
                            'value' => $this->start,
                            'compare' => '<=' ),
                        array(
                            'key' => 'end_date',
                            'value' => $this->end,
                            'compare' => '>=') )  ) );
```

```
                $query = new WP_Query();
                $result = $query->query(
                        array(  'post_type'=>'orders',
                                'meta_query' => $meta_query_array,
                                'meta_key' => 'start_date',
                                'orderby' => 'meta_value',
                                'order' => 'ASC' ) );
                foreach ($result as $key ) { update_post_meta( $key->ID, 'check_status', 3 ); }
                return true;
            }
            else{ return false; }
        }
        if ( $this->room_type == 'dorms' && $this->is_dorm_free($form_info) ){

            if ( $this->set_order_status(1) ) { return true; }
            else{ return false; }
        }
        return false;
    }
```

Հետևյալ վեբ հավելվածի ֆունկցիոնալ բաղադրիչները իրագործված են WordPress CMS-ում կենտրոնական տեղ զբաղեցնող Theme (Թեմա) և Plugin (Պլագին) կառույցների միջոցով, որոնք հեշտությամբ կարող են ինտեգրվել WordPress CMS-ի բազայի վրա կառուցված ցանկացած կայքի մեջ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համացանց - https://www.php.net/
2. Համացանց - https://developer.wordpress.org/
3. Համացանց - https://wp-kama.ru/

ՀՏԴ 004.05 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Նարեկ Հովհաննիսյան
Վանաձորի պետական համալսարան
Ֆիզիկամաթեմատիկական ֆակուլտետի
«Իկմ» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ տ. գ. թ., դոցենտ Հեղինե Օհանյան

ԹԵՍՏԱՎՈՐՈՒՄ. ՍԱՀՄԱՆՈՒՄ, ԿԻՐԱՌՎՈՂ ՌԱԶՄԱՎԱՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանալի բառեր՝ *թեստավորում, բաց, սև արկղ թեստավորում, սպիտակ արկղ թեստավորում, մոխրագույն արկղ թեստավորում, սպառիչ թեստավորում, համարժեք տրոհում:*

Ուսումնասիրելով ծրագրերի թեստավորման հիմնական հասկացությունները և թեստերի ընտրության հինական չափանիշները՝ հանգեցինք եզրակացության, որ թեստավորումը ցանկացած ծրագրի հուսալի և անխափան աշխատանքի գրավականն է: Անհնար է գտնել ծրագրում առկա բոլոր սխալները՝ անկախ նրանից, թե ինչքան ժամանակ է ծախսվում դրա թեստավորման վրա: Թեմայի արդիականությունը պայմանավորված է նրանով, որ պահանջվող ձևով չթեստավորված ծրագրի շահագործումը ի վերջո կարող է հանգեցնել լուրջ խնդիրների՝ կապված թե՛ անվտանգության, և թե՛ ծրագրի ընդհանուր աշխատանքի հետ:

Нарек Оганесян

ТЕСТИРОВАНИЕ, ОПРЕДЕЛЕНИЕ И ИСПОЛЬЗУЕМЫЕ СТРАТЕГИИ

Ключевые слова: *тестирование, ошибка, Чёрный ящик тестирование, белый ящик тестирование, серый ящик тестирование.*

Изучая основные понятия тестирования программ и основные критерии выбора тестов, пришли к выводу, что тестирование является гарантией надёжной и безотказной работы каждой программы. Невозможно найти имеющиеся в программе все ошибки, независимо от того, сколько времени занимает тестирование. Актуальность темы обусловлена тем, что эксплуатация должным образом не протестированной программы может создать серьезные проблемы, связанные как с безопасностью, так и с общей работой программы.

Ծրագրավորումը, լինելով ամենապահանջված և տարածված մասնագիտություններից մեկը, ծրագրավորողից պահանջում է ոչ միայն որոշակի ծրագրավորման լեզվի իմացություն, այլ նաև ծրագրավորման «արդյունավետ ոճի» տիրապետում, ինչը ակնկալում է գրագետ մոտեցում համակարգչի վրա խնդրի լուծման գործընթացի բոլոր փուլերին: Հատկանշական է, որ հաճախ ժամանակի գերիշխող մասը ծախսվում է ոչ թե ծրագրի կազման, այլ կարգաբերման վրա: Նշենք, որ *ծրագրի կարգաբերման* փուլն իրենից ներկայացնում է բարդ և ոչ ստանդարտ գործընթաց: Այս փուլում իրականացվում է ծրագրում սխալների որոնման և ուղղման գործընթացը ստուգողական՝ թեստային, օրինակների վրա ծրագիրն աշխատացնելու միջոցով: Նկատենք, որ խոսքը իմաստաբանական սխալների մասին է, որոնք չեն հայտնաբերվում ծրագրի թարգմանության ժամանակ:

Կարգաբերման փուլը ստորաբաժանվում է երեք ենթափուլերի.

- ծրագրի թեստավորում,
- սխալների տեղայնացում,
- սխալների ուղղում:

Այս աշխատանքում ուշադրությունը կբևեռենք ծրագրի թեստավորման վրա, ներկայացնելով դրա հիմնային հասկացությունները և հիմնական ռազմավարություններն իրենց առավելություններով, թերություններով և իրականացման մեթոդներով:

Թեստավորումը ծրագրի կատարման գործընթաց է՝ սխալների հայտնաբերման նպատակով: Թեստային ստուգողական փորձը անվանում են *հաջող*, եթե դրա կատարման արդյունքում հայտնաբերվում է սխալ, և *անհաջող՝* կոռեկտ՝ ճիշտ արդյունքի ստացման դեպքում:

Թեստավորման հիմնական խնդիրն է մշակել այնպիսի թեստային հավաքածուների ընտրության ռազմավարություն, որոնք թույլ կտան կատարել հնարավորինս արդյունավետ թեստավորում՝ հնարավորինս շատ սխալների հայտնաբերում:

F բարդ ֆունկցիայի բանաձևը կազմվում է f1, f2, …, fn ֆունկցիաներից, այսինքն՝ F-ի բանաձևը այդ ֆունկցիան նկարագրող արտահայտություն է. *F=f1*f2*f3*…*fn*: Եթե f1, f2, …, fn ծրագրավորման լեզվի օպերատորների նմանակներն են, ապա իրենցից կազմած բանաձևը ծրագիրն է: Գոյություն ունի բանաձևերի ճշգրտության հիմնավորման երկու մեթոդ:

Առաջին մեթոդը՝ *ֆորմալ մոտեցում կամ ապացույց*, իրականացվում է սկզբնական բանաձև-աքսիոմաներից ֆորմալ գործողությունների օգնությամբ ճշգրիտ բանաձևերի և պնդումների դուրս բերման միջոցով: Բանաձևի դուրսբերումն իրականացվում է խիստ կանոններով, քայլ առ քայլ՝ մի բանաձևից մյուսին անցնելով (օրինակ, $A^3 = A*A*A$):

Երկրորդ մեթոդը՝ *մեկնաբանական, ինտերպրետացիոն մոտեցում*, իրականացվում է բանաձևի մեջ հաստատունների տեղադրման միջոցով: Այս դեպքում, բանաձևը մեկնաբանվում է որպես որոշակի արժեքների բազմության տարրեր: Մեկնաբանվող բանաձևի ճշմարտացիությունը ստուգվում է հնարավոր արժեքների վերջավոր բազմությամբ: Մեկնաբանական մոտեցումը կիրառվում է, երբ ստուգվում է ծրագրի համապատասխանությունը հատկորոշմանը՝ սպեցիֆիկացիային: *Սպեցիֆիկացիան ծրագրային ապահովման աշխատանքի մանրակրկիտ նկարագրությունն է: Բագը (bug) փաստացի արդյունքի (actual result) շեղումն է սպասվող արդյունքից (expected result):* Ցանկացած դեպքում, երբ ունենք փաստացի արդյունք, որը տարբեր է սպասվող արդյունքից, ապա ունենք բագ:

Թեստավորումը իրականացվում է երեք փուլով [5].

1. թեստային հավաքածուի ստեղծում (test suite),
2. ծրագրի իրականացում՝ բոլոր թեստերի կատարումով,
3. արդյունքների գնահատում և որոշման կայացում՝ շարունակել թեստավորումը, թե՞ դադարացնել այն:

Թեստային հավաքածուի ստեղծումը հիմնված է որոշակի ռազմավարությունների վրա: Այս աշխատանքում կներկայացնենք երեք ռազմավարություն:

Ծրագրի որպես սև արկղ թեստավորման (black-box testing) ռազմավարությունը կոչվում է *սև արկղի ռազմավարություն*, կամ *թեստավորում ըստ տվյալների*, կամ թեստավորում ըստ մուտքի-ելքի: Այս ռազմավարության դեպքում ծրագիրը դիտվում է իբրև սև արկղ, այսինքն՝ թեստավորողին հայտնի է միայն ծրագրի հատկավորումը՝ սպեցիֆիկացիան, սակայն հայտնի չէ ալգորիթմը, կոդը: Թեստավորողն աշխատում է միայն ծրագրի ինտերֆեյսի հետ՝ օգտատերի իրավունքով, առանց կոդը տեսնելու հնարավորության: Այս մեթոդի նպատակն է հայտնաբերել ծրագրի վարքագծի անհամապատասխանությունը սպեցիֆիկացիայում նշված վարքագծին, այսինքն, գտնել այն մուտքային տվյալները, որոնց դեպքում ծրագրի վարքը չի համապատասխանում ծրագրի հատկավորմանը:

Այս ռազմավարության կիրառման դեպքում, ծրագրում բոլոր սխալների հայտնաբերումը հանդիսանում է *սպառիչ մուտքային թեստավորման չափանիշ*: Այս պարագայում, հաճախ թեստերի թիվը գնահատում են որպես «անվերջությունից մեծ թիվ», քանի որ սպառիչ

թեստավորումը հնարավոր է միայն մուտքային տվյալների բոլոր հնարավոր արժեքներով ծրագրի կատարման դեպքում: Հետևաբար, *սպառիչ մուտքային թեստի կառուցումը հնարավոր չէ*: Այդ պնդումը հաստատվում է 2 փաստարկով[4].

1. հնարավոր չէ ստեղծել սխալների բացակայությունը երաշխավորող թեստ,
2. նման թեստերի մշակումը հակասում է տնտեսական պահանջներին:

Թվարկենք սև արկղի ռազմավարության առավելությունները.

1. թեստավորումը կատարվում է վերջնական օգտատերի տեսանկյունից և կարող է օգնել հայտնաբերել անճշտություններ ու հակասություններ սպեցիֆիկացիայում,
2. թեստավորողին պետք չէ իմանալ ծրագրավորման լեզուներ և ուսումնասիրել ծրագրի իրականացման մանրամասները,
3. թեստավորումը կարող է իրականացվել ծրագրավորման բաժնի հետ կապ չունեցող մասնագետների կողմից, ինչը թույլ կտա խուսափել կողմնակալությունից,
4. կարելի է սկսել գրել թեստ-քեյսերը սպեցիֆիկացիայի պատրաստ լինելու պահից:

Նաև ներկայացնենք սև արկղի ռազմավարության թերությունները.

1. թեստավորվում են ծրագրի կատարման շատ սահմանափակ թվով ուղիներ,
2. առանց հստակ սպեցիֆիկացիայի դժվար է ստեղծել արդյունավետ թեստ-քեյսեր,
3. որոշ թեստեր կարող են լինել ավելորդ, եթե դրանք արդեն իրականացվել են ծրագրավորողի կողմից մոդուլային թեստավորման փուլում:

Ներկայացնենք սև արկղի ռազմավարության մեթոդները[1].

1. էկվիվալենտ՝ համարժեք, տրոհում,
2. սահմանային արժեքների վերլուծություն,
3. ֆունկցիոնալ դիագրամների կիրառում,
4. ենթադրություն սխալի մասին:

Մանրամասն ներկայացնենք առաջինը՝ համարժեք տրոհման մեթոդը, որտեղ թեստերի մշակումը իրականացվում է երկու փուլով.

1. համարժեքության դասերի առանձնացում,
2. թեստերի կառուցում:

Համարժեքության դասերը առանձնացվում են յուրաքանչյուր մուտքային պայմանի ընտրության և դրա երկու կամ ավելի խմբերի տրոհման միջոցով: Այդ գործառույթը իրականացնելու համար օգտագործվում է հետևյալ աղյուսակը:

Մուտքային պայմաններ	Համարժեքության ճիշտ կանոնավոր դասեր	Համարժեքության սխալ (անկանոն) դասեր

Նկատենք որ տարբերում են համարժեքության դասերի 2 տեսակ'

1. համարժեքության ճիշտ (կանոնավոր) դասեր, ներկայացնող ծրագրի ճիշտ մուտքային տվյալները,
2. համարժեքության սխալ (անկանոն) դասեր:

Սովորաբար, համարժեքության դասերի առանձնացումը իրենից ներկայացնում է առավել աստիճանով էվրիստիկ գործընթաց՝հիմնված ենթադրությունների վրա: Ընդ որում, գոյություն ունի կանոնների մի շարք[3].

1. եթե մուտքային պայմանը նկարագրում է արժեքների տիրույթը (օրինակ ամբողջ տվյալը կարող է ընդունել արժեքների 1-ից մինչև 999) , ապա սահմանվում է համարժեքության 1 ճիշտ (կանոնավոր) դաս (1 <= ամբողջ տիպի տվյալի արժեքը <= 999) և 2 սխալ (անկանոն) դասեր (ամբողջ տիպի տվյալի արժեքը < 1 և ամբողջ տիպի տվյալի արժեքը > 999) :

2. եթե մուտքային պայմանը նկարագրում է արժեքների քանակը (օրինակ ավտոմեքենայով կարող են տեղափոխվել 1-ից մինչև 6 մարդ), ապա սահմանվում է համարժեքության ճիշտ դաս և 2 սխալ դաս (ոչ մի մարդ և 6 ից ավելի մարդ):

3. եթե մուտքային պայմանը նկարագրում է մուտքային արժեքների բազմությունը, և կարելի է ենթադրել, որ յուրաքանչյուր արժեքով ծրագիր գնահատում է յուրովի (օրինակ, հայտնի փոխադրամիջոցներ՝ տաքսի, հեծանիվ, ավտոբուս, բեռնատար, ոտքով կամ մոտոցիկլետ, ապա սահմանվում են համարժեքության ճիշտ (կանոնավոր) դասեր յուրաքանչյուր արժեքի համար և 1 սխալ (անկանոն) դաս (օրինակ "ձի")

4. եթե մուտքային պայմանը նկարագրում է իրադարություն "պետք է լինի" (օրինակ իդենտիֆիկատորի առաջին նիշը պետք է լինի տառ), ապա սահմանվում է համարժեքության 1 ճիշտ (կանոնավոր) դաս (1-ին նիշը տառ է) և սխալ (1-ին նիշը տառ չէ)

5. եթե հիմք կա համարել, որ համարժեքության դասի տարբեր էլեմենտները ծրագիր գնահատում է և ոչ միևնույն ձևով, ապա այդ դասը տրոհվում է համարժեքության ավելի փոքր դասերի:

2-րդ քայլը կայանում է նրանում, որ օգտագործելով համարժեքության դասերը՝ կառուցվի թեստերի հավաքածու:

Յուրաքանչյուր անկանոն համարժեքության դաս անհրաժեշտ է ծածկել առանձին թեստով, քանի որ սխալ մուտքերով որոշակի ստուգումներ ծածկում են կամ փոխարինում են մյուս սխալ մուտքերով ստուգումները:

Ծրագրի որպես սպիտակ արկղ թեստավորման (white-box testing) ռազմավարությունը, կամ ծրագրի տրամաբանությունով ղեկավարվող թեստավորման ռազմավարությունը թույլ է տալիս հետազոտել ծրագրի ներքին կառուցվածքը: Այս դեպքում մասնագետը ստանում է թեստային տվյալները ծրագրի տրամաբանության վերլուծության միջոցով: Սպիտակ արկղի թեստավորման ռազմավարության իրականացման դեպքում թեստավորողը ունի կոդը տեսնելու հնարավորություն: Այս ռազմավարությունը նաև անվանում են *ապակյա կամ թափանցիկ արկղի* մեթոդ: Դրա նպատակն է ստուգել ծրագրի յուրաքանչյուր ճյուղը, ուղին, օպերատորը՝ ստուգել անմիջապես կոդը:

Նկատենք, որ այս ռազմավարության դեպքում սպառիչ մուտքային թեստավորմանը կարելի է համապատասխանեցնել ուղիների սպառիչ թեստավորում. ենթադրվում է, որ ծրագիրը ամբողջությամբ ստուգված է, եթե թեստերի միջոցով հաջողվում է իրականացնել այդ ծրագրի կատարումը իր ղեկավարման փոխանցման հոսքի՝ գրաֆի, բոլոր հնարավոր ուղիներով: Այս պնդումը ունի 2 թույլ կետ.

1. ծրագրում իրար չկրկնող ուղիների քանակը չափազանց մեծ է,
2. չնայած ուղիների սպառիչ թեստավորումը հանդիսանում է ամբողջական թեստ և ծրագրի յուրաքանչյուր ուղին կարող է ստուգված լինել, ծրագիրը և այդ դեպքում կպարունակի սխալներ:

Մանրամասն ուսումնասիրենք առաջին կետը, դիտարկելով պարզագույն ծրագրի փոխանցման գրաֆը՝



Գծապատկեր 1. Պարզագույն ծրագրի փոխանցման գրաֆ

Յուրաքանչյուր գագաթը նշանակում է գծային օպերատորների հաջորդականություն, որը կարող է ավարտվել ճյուղավորման օպերատորով: Սլաքներով ավարտվող աղեղները համապատասխանում են ղեկավարման փոխանցմանը: Գրաֆը նկարագրում է 10-20 օպերատորից կազմված ծրագիրը՝ ներառող նաև 20 անգամից ոչ ավել կատարվող DO ցիկլը: Ցիկլում առկա են մի քանի IF օպերատորներ: Որպեսզի հաշվենք չկրկնվող ուղիների թիվը ծրագրի կատարման ժամանակ, հաշվենք A-ից B տանող չկրկնվող ուղիների թիվը, այն ենթադրությամբ, որ բոլոր հրամանները անկախ են՝ $5^{20}+5^{19}+ \ldots + 5 = 10^{14} = 100$ տրիլիոն, որտեղ 5-ը ուղիների քանակն է ցիկլի ներսում: Եթե ենթադրենք, որ յուրաքանչյուր թեստի վրա մենք ծախսում ենք 5 րոպե, ապա թեստերի հավաքածուի կազմման համար մեզ կպահանջվի մոտավոր 1 միլիարդ տարի:

Այսպիսով ուղիների սպառիչ թեստավորումը, ինչպես և սպառիչ մուտքային թեստավորումը, ոչ միայն իրագործելի չէ, այլ նաև անհնարին է:

Մանրամասն ուսումնասիրենք պնդման երկրորդ թույլ կետը, որը բացատրվում է հետևյալ կերպ:

1. Ուղիների սպառիչ թեստավորումը չի երաշխավորում, որ ծրագիրը համապատասխանում է նկարագրմանը՝ սպեցիֆիկացիային: Օրինակ, ըստ աճման կարգի տեսակավորման պահանջվող ծրագրի փոխարեն պատահականորեն կազմվել է նվազման կարգով տեսակավորման ծրագիրը: Այս դեպքում ուղիների թեստավորման կարևորությունը փոքր է, քանի որ թեստավորումից հետո ծրագրում կլինի 1 սխալ՝ ծրագիրը ճիշտ չէ:

2. Ծրագիրը կարող է լինել սխալ, եթե որոշակի ուղիներ բացակայում են, այս դեպքում ուղիների սպառիչ թեստավորումը չի հայտնաբերի դրանց բացակայությունը:

3. ՈՒղիների սպառիչ թեստավորումը չի կարող բացահայտել այն սխալները , որոնց ի հայտ գալը կախված է մշակվող տվյալներից:

Թվարկենք սպիտակ արկղի ռազմավարության առավելությունները.

1. թեստավորումը կարող է իրականացվել վաղ փուլերում, կարիք չկա սպասել ինտերֆեյսի մշակմանը,

2. հնարավոր է իրականացնել ավելի մանրակրկիտ թեստավորում, ապահովելով ծրագրի կատարման ուղիների մեծ քանակ:

Թվարկենք նաև սպիտակ արկղի ռազմավարության թերությունները.

1. սպիտակ արկղի թեստավորման իրականացման համար պահանջում է խորը

մասնագիտական գիտելիքներ,

2. այս մակարդակում ավտոմատ թեստավորում օգտագործելու դեպքում, եթե ծրագիրը հաճախակի է փոփոխվում, ապա թեստային կոդերի (սկրիպտների) աջակցությունը կարող է լինել բավականին ծախսատար:

Նկատենք, որ չնայած սպառիչ մուտքային թեստավորումը նախընտրելի է ուղիների սպառիչ թեստավորումից, այդ երկուսն էլ չեն լինի օգտակար ռազմավարություն, քանի որ դրանք անիրագործելի են: Հնարավոր է, որ իրական կլինի ստեղծել լավ, սակայն ոչ բացարձակ ռազմավարություն, զուգակցելով ծրագրի որպես և՛ սև, և՛ սպիտակ արկղ թեստավորումը:

Ուսումնասիրենք սպիտակ արկղի մեթոդները, թվարկված թույլից ուժեղ.

1. օպերատորների ծածկում,
2. լուծումների (որոշումների) ծածկում,
3. պայմանների ծածկում,
4. լուծումների/պայմանների ծածկում,
5. պայմանների կոմբինատոր ծածկում:

Ծրագրի՝ որպես մոխրագույն արկղի թեստավորում (grey-box testing) գտնվում է սպիտակ և սև արկղերի սահմանային կետում: Համադրությունը տեղի է ունենում հետևյալ եղանակով՝ դրսից ծրագիրը դիտարկվում է որպես սև արկղ, բայց թեստերի ընտրությունը հիմնվում է ծրագրի ներքին կառուցվածքի և կոդի իմացության վրա: Ակնհայտ է, որ թեստերի նախագծման մեթոդոլոգիաները պետք է միավորվեն մեկ ընդհանուր ռազմանավարությունում: Միավորման պատճառը ակնհայտ է: յուրաքանչյուր վերը դիտված ռազմավարություն ապահովում է օգտագործվող թեստերի որոշակի հավաքածուի կազմում, սակայն դրանցից ոչ մեկը ինքնին չի կարող տալ թեստերի ամբողջական հավաքածու:

Գրականությունում ընդունելի ռազմավարությունը սովորաբար ներկայացնում են հետևյալ ձևով.

1. եթե սպեցիֆիկացիան պարունակում է մուտքային պայմանների կոմբինացիաները, ապա խորհուրդ է տրվում սկզբում կիրառել ֆունկցիոնալ դիագրամների մեթոդը,
2. ցանկացած դեպքում անհրաժեշտ է օգտագործել սահմանային արժեքների վերլուծությունը, հիշենք, որ այս մեթոդը ներառում է մուտքային և ելքային փոփոխականների սահմանային արժեքների վերլուծությունը,
3. սահմանային արժեքների վերլուծությունը տալիս է թեստային պայմանների լրացուցիչ հավաքածու, սակայն դրանց մեծ մասը կարող է ներառված լինեն ֆունկցիոնալ դիագրամների մեթոդի թեստերում,
4. մուտքային և ելքային տվյալների համար սահմանել կանոնավոր և անկանոն համարժեքության դասեր և անհրաժեշտության դեպքում լրացնել նախորդ քայլերում կառուցված թեստերը,
5. լրացուցիչ թեստեր ստանալու համար խորհուրդ է տրվում օգտագործել ենթադրություններ սխալի մասին մեթոդը,
6. ստուգել ծրագրի տրամաբանությունը թեստերի ստացված հավաքածուի վրա: Դրա համար պետք է օգտվել որոշումների ծածկման, պայմանների ծածկման, կամ պայմանների կոմբինատոր ծածկման չափանիշից, ընդ որում՝ վերջինս առավել ամբողջական է: Եթե ծածկման չափանիշի կատարման անհրաժեշտությունը հանգեցնում է նոր թեստերի կառուցման և, եթե այդ չափանիշը հնարավոր է իրականացնել, ապա արդեն ստեղծված

թեստերի հավաքածուն պետք է լրացնել այդ ծածկման չափանիշին բավարարող թեստերի քանակով:

Այս ռազմավարությունը ևս չի երաշխավորում, որ բոլոր սխալները կհայտնաբերվեն, սակայն դրա կիրառումը ապահովում է ընդունելի փոխզիջում: Նաև այս ռազմավարության իրականացումը շատ աշխատատար է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Калбертсон Р., Браун К., Кобб Г. Быстрое тестирование. М.,Издательский дом «Вильямс», 2005. – 379 с.
2. Канер С., Фолк Дж., Нгуен Е. Тестирование программного обеспечения: Пер. с англ. – К.: Издательство «Диа Софт», 2001, 544 с
3. Макгрегор Дж., Сайкс Д., Тестирование объектно-ориентированного программного обеспечения. Практическое пособие: Пер. с англ. – К.:ООО «ТИД «ДС»», 2002, 432 с.
4. Г.Майерс, Надежность программного обеспечения. М., Издательство «Мир», 1980, 359 с.

ՀՏԴ 005.5 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Էլեանորա Հովսեփյան
Կառավարման տեղեկատվական համակարգեր
Մագիստրատուրա, 1-ին կուրս
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
eleanora.hambardzumyan98@gmail.com
Գիտական ղեկավար՝
մգթ. դոցենտ Վ.Վ.Առստամյան

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ՇՐՋԱՆԱՎԱՐՏՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՎԵԲ ՀԱՎԵԼՎԱԾԻ ՍՏԵՂԾՈՒՄ

Բանալի բառեր՝ *վեբ, հավելված, շրջանավարտ, համալսարան, մշակում, հաշվառում*

Ներկա ժամանակաշրջանում կարևորագույն խնդիրներից մեկն է հանդիսանում համալսարանի կառավարումը: Այն իր մեջ ընդգրկում է մեծ թվով անձանց, ովքեր ներգրավված են այս գործընթացում՝ սկսած ուսանողներից մինչև դասախոսները: Առավել ժամանակատար են փաստաթղթերի հետ կապված գործընթացները: Համալսարանի աշխատակազմի աշխատանքի որակը հեշտացնելու և բարելավելու համար ստեղծվում են ավտոմատացված համակարգեր, որոնք թույլ են տալիս գործընթացին ավելացնել բարենպաստ էական փոփոխություններ:

Элеонора Овсепян

СОЗДАНИЕ WEB ПРИЛОЖЕНИЯ ПО УЧЕТУ ВЫПУСКНИКОВ ВУЗА

Ключевые слова: *WEB, приложение, выпускник, ВУЗ, разработка, учет*

Эффективное управление ВУЗом является одной из важнейших задач. Она охватывает большое количество лиц, вовлеченных в этот процесс: от студентов до преподавателей. Наиболее трудоемкими являются процессы, связанные документами: от обработки и сбора до преобразования и выводов. Для облегчения и улучшения качества работы персонала ВУЗа создаются автоматизированные системы, которые позволяют внести в процесс благоприятные и значимые изменения.

Բարձրագույն ուսումնական հաստատությունը բազմաթիվ արտաքին և ներքին հարաբերություններով կրթական համալիր է: Համալսարանի, նրա ուսուցման գործընթացի, փաստաթղթաշրջանառության և այլ աշխատանքների կառավարումը բարդ գործընթաց է:

Առավել ժամանակատար են փաստաթղթերի հետ կապված գործընթացները՝ հավաքում, կուտակում, փոխարկում, ցուցադրում, պահպանում, փոխանցում և այլն: Ավտոմատացված էլեկտրոնային համակարգերը թույլ են տալիս արագացնել այս գործընթացները և հեշտացնել բուհի աշխատակազմի աշխատանքը: Գրեթե բոլոր ժամանակակից գործունեությունները անիմաստ են առանց արդի տեխնոլոգիաների օգտագործման:

Ամբիոնի հիմնական նպատակը կայանում է նոր կրթական տեխնոլոգիաներ և բարձրորակ կրթական գործընթացների միջոցով իրականացնել ուսուցում:

Ամբիոնի գործունեության առարկան է հանդիսանում՝

1. կրթական գործընթացի կազմակերպում,
2. հաշվետվությունների ներկայացում,
3. կրթական գործընթացի վերահսկում:

Վերլուծելով դեկանատի աշխատանքը՝ պարզեցինք, որ շրջանավարտների մասին

ինֆորմացիան պահվում է անհարմար և մասնատված տեսքով: Այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ մշակել և ինտեգրել կոնտրետ ոլորտին համապատասխան վեբ հավելված:

Առարկայական տիրույթի խնդիրներն են՝

1. շրջանավարտների մասին ինֆորմացիայի թղթային ձևով պահպանումը,
2. շրջանավարտների տվյալների մշակման դժվար գործընթացը,
3. շրջանավարտների տվյալների կորուստը,
4. շրջանավարտների տվյալների կրկնօրինակների սխալ ստեղծումը,
5. շրջանավարտի մասին կոնկրետ տեղեկատվության փնտրման ժամանակատար լինելը:

Նախագիծը կլինի ներքին և մասնակի արտաքին՝ փաստաթղթերի փոխանակումը կատարվում է համալսարանի աշխատողների միջև, տեղեկատվության մի մասը հասանելի է կողմնակի օգտագործողներին: Նախագիծը ավտոմատացնելու է շրջանավարտների հաշվառման գործընթացը:Նախագիծը նախատեսված է ամբիոնի աշխատակողների և կողմնակի օգտագործողների համար:

Ամբիոնի խնդիրներից մեկն է կապ հաստատել շրջանավարտների հետ: Անհրաժեշտ է պահպանել և ակտուալ պահել շրջանավարտների մասին տեղեկությունները, որոնք կարելի է պայմանականորեն բաժանել հետևյալ խմբերի՝

1. անձնական տվյալներ,
2. կոնտակտային տվյալներ,
3. ամբիոնում ստացած կրթության մասին տվյալներ,
4. տեղեկություն այլ բուհերում կրթության մասին,
5. կարերայի մասին տեղեկություն:

Տեղեկատվական տեխնոլոգիաների շնորհիվ շրջանավարտների մասին տեղեկատվությունը կարող է պահվել էլեկտրոնային եղանակով: Ի տարբերություն ներկայումս գոյություն ունեցող թղթային տարբերակի, հավելվածը թույլ կտա ոչ միայն ցուցադրել տեղեկատվությունը տվյալների բազայից, այլ նաև խմբագրել, համակարգել և ստեղծել տարբեր զեկուցող փաստաթղթեր շրջանավարտների մասին: Բացի դրանից հավելվածը թույլ է տալիս արագորեն որոնել տվյալների բազան և ստեղծել հաշվետվություններ, ինչը կդյուրացնի աշխատանքը և կնվազեցնի ծախսված ժամանակը:

Գոյություն ունեցող լուծումները վերանայելուց հետո որոշվեց մշակել և իրականացնել նոր վեբ հավելված:

Վեբ հավելվածի առավելություններն են՝

1. կենտրոնացված տվյալների պահպանում,
2. ապարատային պլատֆորմի համար հատուկ պահանջների բացակայություն,
3. մոնիթորինգ:

Վեբ հավելվածը թույլ կտա՝

1. արագ թարմացնել շրջանավարտների մասին տեղեկատվությունը,
2. կրճատել տեղեկատվության որոնման և մշակման ժամանակը,
3. կապ հաստատել համալսարանի շրջանավարտների հետ,
4. կրճատել տեղեկության կորուստը,
5. խուսափել կրկնօրինակների ստեղծումից,
6. տվյալների բազայում կոնկրետ տեղեկություն փնտրել,
7. դեկանատի նյութական ծախսերը նվազեցնել:

Վեբ հավելվածի մշակման համար պետք է օգտագործվեն՝

1. PHP
2. HTML
3. Cascading Style Sheets (CSS)
4. JavaScript:

Կայքը պետք է պատրաստված լինի հայերեն: Կայքում տեղադրված տեղեկությունը բաժանվում է 2 տեսակի՝

- կայքում գրանցված օգտագործողների համար,
- կայքում չգրանցված օգտագործողների համար:

Համաձայն մուտքի մակարդակների և հնարավորությունների, որոնք նրանց տրամադրում է այս կամ այն մակարդակը կայքի օգտագործողները կարող են լինել՝

- ադմինիստրատոր,
- խմբագիր,
- սովորական օգտագործող:

Վեբ հավելվածի ստեղծումը և ինտեգրումը դեկանատում չի պահանջում նոր տեխնոլոգիական միջոցներ: Բիզնես ոլորտում նախագիծը կավելացնի աշխատողների արդյունավետությունը: Հետագայում նախատեսվում է բարելավել համակարգի արագությունը, պարզեցնել ինտերֆեյսը, ավելացնել նոր հնարավորություններ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Измайлов Д.Г., Применение метода «Информационная экономика» при оценке эффективности разработки WEB-приложения «Гильдия выпускников» для кафедры Прикладной информатики, 2015
2. Измайлов Д.Г., Разработка WEB-приложения «Гильдия выпускников» для кафедры Прикладной информатики 2017
3. Համացանց - https://www.php.net/

Լուսիկ Միրզոյան
Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 4-րդ կուրս
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
lusikmirzoyan201999@gmail.com
Գիտական ղեկավար՝
Դասախոս Կ.Հ. Հարությունան

ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆԵՐԻ ԴԵՐԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՌԵՎՏՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *տեղեկատվական տեխնոլոգիաներ, էլեկտրոնային առևտուր, դեր, առևտուր, էլեկտրոնային բիզնես:*

Տեղեկատվական տեխնոլոգիաները կարող են զարգացնել արդյունաբերությունը և փոխել բիզնեսի պրակտիկան: Բիզնեսում ինտերնետը օգտագործվում է տեղեկատվության փոխանակման համար, լրատվամիջոցների առաջխաղացմանն, էլեկտրոնային փոստի, փոստային հասցեների ցուցակների, երկխոսությունների, քննարկումների, սպառողների առցանց խորհրդատվությունների համար: Կան երկու էլեկտրոնային առևտրի ծրագրեր, մասնավորապես՝ բիզնես սպառողի համար և բիզնես բիզնեսի համար: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործման հիմնական խոչընդոտը առանց հսկայական ծախսի առցանց ցանց ստեղծելն ու սարքերի տրամադրումն է: Տեղեկատվական տեխնոլոգիաների օգտագործումը կարևոր դեր է խաղում առևտրի և ազգային տնտեսական աճի մեջ՝ սոցիալական բարեկեցության հասնելու համար:

Лусик Мирзоян

РОЛЬ ИНФОРМАЦИОННЫХ ТЕХНОЛОГИЙ В СОВРЕМЕННОЙ ТОРГОВЛЕ

Ключевые слова: *Информационные технологии, электронная коммерция, роль, коммерция, электронный бизнес*

Информационные технологии способны развить отрасль и изменить методы ведения бизнеса. Интернет в бизнесе используется для информации обмен, продвижение в СМИ, электронная почта, списки рассылки, диалоги, дискуссии, консультации с потребителями онлайн. Есть две электронные коммерции приложения, а именно: бизнес для потребителя и бизнес для бизнеса. Основным препятствием в использовании информационных технологий являются огромные затраты на создание онлайн-сети и обеспечение устройства. Использование информационных технологий играет важную роль в торговле и национальном экономическом росте для достижения общественного благосостояния.

Էլեկտրոնային առևտուրը համացանցի միջոցով իրականացվող ձեռնարկատիրական գործունեություն կամ ցանկացած գործարք է, որն իրականացվում է էլեկտրոնային եղանակով տվյալների փոխանակմամբ և հանգեցնում է ապրանքների կամ ծառայությունների ամբողջական կամ մասնակի սեփականության իրավունքի փոխանցմանը [1]: Ինտերնետը գլոբալ հասկացություն է, և այդ հասկացության մեջ է մտնում նաև էլեկտրոնային առևտուրը, որը էլեկտրոնային բիզնեսի մի ճյուղն է հանդիսանում:

Էլեկտրոնային առևտուրը գլոբալ ցանցի միջոցով կատարվող առք ու վաճառքն է,

ապրանքների կամ ծառայությունների փոխանակումը: Ինչպես նաև էլեկտրոնային առևտրի հիմքում ընկած են առևտրային գործողությունների իրականացումը և տվյալների փոխանակման, էլեկտրոնային եղանակով արտադրողական գործընթացների կառավարման, նոր տեղեկատվական տեխնոլոգիաները:

Էլեկտրոնային առևտուրն ունի ինտենսիվ զարգացման մոտ 25 տարվա պատմություն, որը, տնտեսության այլ ճյուղերի հետ համեմատած, կարելի է համարել ոչ այդքան երկար ժամանակահատված:

Էլեկտրոնային առևտրի առաջին համակարգերն ու մեթոդներն իրենց ծագման համար պարտական են ավիատոմսերի և պլաստիկ քարտերի վաճառքի ավտոմատացման տեխնոլոգիաների առաջացմանը և կազմակերպության ռեսուրսների կառավարման ավտոմատացման համակարգերի կառուցմանը:

Օգտագործելով տեղեկատվական տեխնոլոգիաները տեղեկատվության կառավարման համար, ցանկացած ընկերություն դառձնում է ավելի մրցունակ՝ բարելավելով փոփոխվող շուկայական պայմանների կառավարելիությունը և կիրառելիությունը: Նման տեխնոլոգիաներից մեկը տեղեկատվական էլեկտրոնային կառավարման համակարգն է:

Նման համակարգերը ստեղծել են կազմակերպության աշխատանքի հեղափոխություն, որն օգնում է հաղթահարել տեղեկատվության աճող հոսքը: Էլեկտրոնային առևտուրը իրենից ներկայացնում է նոր մեթոդ իրական ապրանքներով և ծառայություններով առևտուր անելու համար: Այն բացում է նոր հնարավորություններ, տրամադրում է նոր տեխնոլոգիաներ արդյունավետության մեծացման համար արժեքի փոքրացման ճանապարհով, տալիս է շուկայի պոտենցիալի մեծացման և սպառողի պահանջների ավելի լավ բավարարման հնարավորություն և միջոցներ է տրամադրում ծառայությունների և ապրանքների տեսականու ընդլայնման և կատարելագործման համար՝ նշանակալի չափով բարելավելով մատակարարի և պատվիրատուի փոխշփման հնարավորությունները:

Էլեկտրոնային նյութերով առևտուրը վաճառքի լրիվ նոր ձև է, որի դեպքում կոմերցիոն գործարքի ամբողջական ցիկլը (ներառյալ նաև առաքումը) իրականացվում է նույն ցանցի միջոցով, իհարկե հաշվի առնելով կոնկրետ պահանջներ և սահմանափակումներ, ինչպիսիք են՝ վճարման, հեղինակային և ինտելեկտուալ սեփականության իրավունքները:

Կախված շուկայում ունեցած հաջողություններից և ճիշտ որոշումներից, էլեկտրոնային ապրանքները կարող են ստեղծել լրիվ նոր շուկա և առանձին ոլորտներում հեղափոխություն առաջացնել (օրինակ՝ հրատարակության գործում): Այդ ինովացիոն ձևը կարող է մրցունակության վրա մեծ ազդեցություն ունենալ և ստեղծել նոր աշխատատեղեր:

Էլեկտրոնային առևտուրն ունի հետևյալ առավելությունները.

- Հնարավորություն է ընձեռում, նույնիսկ ամենափոքր կազմակերպություններին, գործունեություն ծավալել տարբեր շուկաներում՝ անկախ դրանց գտնվելու վայրից,
- Բարձրացնում է կազմակերպության մրցակցային հնարավորությունները,
- Հնարավորություն է տալիս ստանալ առավելագույն տեղեկատվություն հաճախորդի պահանջմունքների մասին ու մշակել դրամց համապատասխան ապրանքներ ու մատուցել ծառայություններ,
- Կազմակերպություններին թույլ է տալիս ավելի ճկուն բիզնես վարել և օպերատիվ արձագանքել արտաքին միջավայրի արագ փոփոխվող պայմաններին,
- Այն հնարավորություն է ընձեռում դյուրին դարձնել պատվերի ընդունման, մշակման և վճարման գործընթացը,
- Ցանկացած գործարք կարելի է կատարել օրը 24 ժամ՝ անկախ գտնվելու վայրից,

- Գլոբալ ընտրության հնարավորություն,
- Ժամանակային անսահմանափակություն,
- Անհատական մոտեցում հաճախորդին,
- Ժամանակի և հավելյալ ծախսերի խնայում՝ ապրանքի ընտրության և պատվերի ձևակերպման ժամանակ,
- Լայն ընտրություն և լավագույն գնային առաջարկ,
- Վճարման համակարգի բազմազանություն։

Էլեկտրոնային առևտուրն ունի հետևյալ թերությունները.

- Գնվող ապրանքի հետ անմիջական շփման անհնարինություն,
- Գնորդներից շատերը հրաժարվում են ապրանքից առաքման պահին՝ ապրանքի որոշ հատկանիշեր համացանցով ստուգելու անհնարինության պատճառով,
- Անձնական տեղեկատվության պահպանման անվստահություն,
- Իրավական կարգավորման խնդիրներ,
- Խարդախության գրավիչ միջավայր,
- Տեխնիկական միջոցների, ինտերնետի խափանման պատճառով առաջացող անհարմարություններ
- Պետության կողմից հարկային և մաքսային գործընթացների իրականացումն,
- Գլոբալացում,
- Պայմանագրային և ֆինանսական խնդիրներ,
- Սեփականության իրավունքի հետ կապված խնդիրներ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Համբարձումյան Շ.Դ. - Ինֆորմացիոն համակարգեր և տեխնոլոգիաներ
2. Божко В..П. - Информационные технологии в экономике и управлении
3. Васюхин О.В. - Информационный менеджмент:Краткий курс
4. Карминский А.М.- Информационные системы в экономике .Часть.1

ՀՏԴ 004.43 Տեղեկատվական տեխնոլոգիաներ

Արաքս Մկրտումյան
Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 4-րդ կուրս
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ,
Կիրառական մաթեմատիկայի և
ինֆորմատիկայի ամբիոն
mkrtumyan.araks@gmail.com
Գիտական ղեկավար՝
դասախոս՝ Մնացականյան Ա.Ս

ՏՎՅԱԼՆԵՐԻ ՀԵՆՔԻ ՍՏԵՂԾՈՒՄ ՎԱՐՁԱՎՃԱՐՈՎ ՄԵՔԵՆԱՆԵՐ ՏՐԱՄԱԴՐՈՂ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Բանալի բառեր. *ավտոմեքենա, վարձավճար, C# ծրագրավորման լեզու, Entity Framework տեխնոլոգիա, Framework, Windows Forms ծրագրավորման ինտերֆեյս:*

Հոդվածում քննվում է վարձավճարով ավտոմեքենաների տրամադրման գործընթացի ավտոմատացման հարցը, մատնանշվում դրա առավելությունները ու կատարվում վերլուծություններ: Աշխատանքում ուսումնասիրվել է C# ծրագրավորման լեզվի Entity Framework տեխնոլոգիան և Microsoft.Net Framework-ի Windows Forms ծրագրավորման ինտերֆեյսը:

Аракс Мкртумян

СОЗДАНИЕ БАЗЫ ДАННЫХ ДЛЯ КОМПАНИИ ПО АРЕНДЕ АВТОМОБИЛЯ

Ключевые слова: *автомобиль, аренда, язык программирования C#, технология Entity Framework, интерфейс программирования Windows Forms.*

В статье обсуждается автоматизация сдачи на прокат автомобилей, указывается её преимущество. В работе изучены интерфейс программирования Windows Forms и технология Entity Framework языка C#.

Ներկայումս կազմակերպությունների մեծամասնությունը տարբեր տվյալների հենքերը օգտագործում է տեղեկատվության մշակման, գործընթացների ավտոմատացման,շահագործման հեշտության, տվյալների պահպանման հուսալիության բարձրացման, աշխատավայրում հնարավոր սխալների քանակի նվազեցման, տվյալների կրճատման կանխարգելման, ինչպես նաև կատարողականի բարելավման համար:

Տվյալների բազաների կազմը և դրանց չափը որոշվում են որոշակի ձեռնարկության գործունեության և նրա կարողությունների ուղղությամբ:

Շնորհիվ այն բանի, որ ժամանակակից տեղեկատվական համակարգերը գործում են մեծ ծավալներով և բարդ տվյալների կառուցվածքներով, տվյալների հենքի կառավարման գործիքները կարելի է բաժանել տեղեկատվական համակարգերի առանձին խմբերի, որոնք պատասխանատու են բարդ կառուցվածքային տվյալների կառավարման համար:

Կարելի է ասել, որ այսօր մարդկային գործունեության ցանկացած բնագավառում խնդիրների լուծումը գրեթե անհնար է առանց օպերատիվ կառավարվող տվյալների հենքերի օգտագործման:

Նպատակին հասնելու համար սահմանվել են հետևյալ խնդիրները.

- Ուսումնասիրել և վերլուծել նմանատիպ գործունեություն իրականացնող կազմակերպության աշխատանքի բնույթը:
- Կառուցել ER- մոդել:
- Կառուցել տրամաբանական տվյալների հենքի մոդել:
- Մշակել նախագիծ և տվյալների հենք:
- Սահմանել ամբողջականության պայմանները:

Այսօր մեքենայի ղեկավարումը համաշխարհային ճանաչում է հավաքում: Այս համակարգով ակտիվ օգտվում են Եվրոպայի բոլոր մայրաքաղաքներում և նույնիսկ Երևանում: Մեքենա վերցնելու հնարավորությունը ցանկացած քաղաքային ավտոկանգառից փրկում է ժամանակը և թույլ է տալիս Ձեզ արագ և հարմարավետ հասնել ցանկացած վայր:

Ավտոմեքենաների վարձակալության հիմնական առավելություններն են՝ անվտանգություն, հարմարավետություն, շարժունակություն, որոշ երկրներում նաև բնապահպանություն:

Ավտոմեքենաների վարձակալումը առավել հայտնի է Ասիա-Խաղաղօվկիանոսյան տարածաշրջանում բնապահպանական նկատառումներով:

Մինչ օրս, կան երեք միլիոն մասնակիցներ, ավտոմեքենաների վարձակալումը աշխարհում միավորում է մարդկանց, ովքեր՝

* չեն կարող իրենց թույլ տալ գնել անձնական ավտոմեքենա և չեն ցանկանում ծանրաբեռնել իրենց վարկային պարտավորություններով,
*սեփական տրանսպորտային միջոցի ամենօրյա օգտագործման կարիք չունեն և ցանկանում են նվազագույնի հասցնել դրա պահպանման ծախսերը,
* մշտապես բախվում են խիտ ճանապարհային երթևեկության և ավտոկայանատեղերի դժվարությունների հետ,
* հոգ են տանում շրջակա միջավայրի մասին իրենց քաղաքում:

Ծրագրային միջավայրի ստեղծում

C#-ը օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման լեզու է, որը մշակվել է 1998-2001 թվականներին Microsoft կազմակերպության ինժեներների կողմից՝ Անդրս Հեյլսբերգի և Սքաթ Վիլտաուոտի ղեկավարության ներքո, որպես հավելվածների մշակման լեզու Microsoft. NET Framework պլատֆորմի համար: Այնուհետև այն ստանդարտացված էր որպես ECMA-334 և ISO / IEC 23270:

C#-ը հանդիսանում է ունիվերսալ, տիպերի նկատմամբ անվտանգ, օբյեկտ-կողմնորոշված ծրագրավորման լեզու: C#-ի նպատակն է ապահովել ծրագրավորողների աշխատանքի արտադրողականությունը: C# լեզվի գլխավոր ճարտարապետը եղել է Անդերս Հեյլբերգը, որը եղել է Turbo Pascal-ի հիմնադիրը և Delphi-ի ճարտարապետը: C#-ը չեզոք դիրք է զբաղեցնում պլատֆորմների նկատմամբ, սակայն նախագծվում էր Microsoft .NET Framework պլատֆորմի հետ աշխատանքի համար:

Entity Framework-ը հատուկ օբյեկտի վրա հիմնված տեխնոլոգիա է, որն նախատեսված է տվյալների հենքի հետ աշխատելու համար: Եթե ավանդական ADO.NET գործիքները թույլ են տալիս ստեղծել կապեր, հրամաններ և այլ առարկաներ տվյալների շտեմարանների հետ շփվելու համար, ապա Entity Framework-ը իրենից ներկայացնում է ավելի բարձր մակարդակի էքստրակտ, որը թույլ է տալիս վերարտադրվել տվյալների բազայից և տվյալների հետ աշխատել:

Եթե ֆիզիկական մակարդակում մենք աշխատում ենք աղյուսակներով, ինդեքսներով, առաջնային և արտաքին բանալիներով, բայց այն հայեցակարգային մակարդակով, որը մեզ առաջարկում է Entity Framework, մենք արդեն աշխատում ենք օբյեկտների հետ:

Վարձավճարով ավտոմեքենաների տրամադրման գործընթացի ավտոմատացման համար ուսումնասիրվել է ՏՀՂՀ-ի հետ համագործակցող C# ծրագրավորման լեզվի Entity Framework տեխնոլոգիան և Microsoft.Net Framework-ի Windows Forms ծրագրավորման ինտերֆեյսը: Տվյալների հենքը նախագծելու համար օգտագործվել է Entity Framework-ի կողմից առաջարկվող Code First մեթոդը, ըստ որի՝ նախագծվել են անհրաժեշտ տվյալների հենքի աղյուսակներին համապատասխան դասերը: Վարձավճարով ավտոմեքենաների տրամադրման գործընթացի ավտոմատացման համար ստեղծվել են հետևյալ դասերը.

- մեքենաներ,
- հաճախորդներ:

Ծրագրային ինտերֆեյսի ստեղծման համար օգտագործել ենք Windows Forms ծրագրավորման ինտերֆեյսը:

Գլխավոր պատուհանում գտնվում է 2 կոճակ՝ <<Մեքենաներ>> և <<Հաճախորդներ> (Նկար 1).

Նկար 1.

<<Մեքենաներ>> կոճակի սեղմման դեպքում բացվում է <<Մեքենաներ>> աղուսյակը, որ պարունակում է հետևյալ դաշտերը.

ID, նկար, մակնիշ, գույն, պետհամարանիշ, ամսաթիվ, գին(մեկ օր), գին(մեկ շաբաթ), գին(մեկ ամիս), գին(մեկ ըստ օրերի):

Ստորև կներկայացնենք մեքենաներ աղյուսակը.

```
CREATE TABLE [dbo].[Cars] (
    [Id]            INT          IDENTITY (1, 1) NOT NULL,
    [Pictures]      NVARCHAR (MAX) NULL,
    [Brand]         NVARCHAR (MAX) NULL,
    [Colour]        NVARCHAR (MAX) NULL,
    [License_Plate] NVARCHAR (MAX) NULL,
    [Date]          NVARCHAR (MAX) NULL,
    [Price_OneDay]  INT          NOT NULL,
    [Price_OneWeek] INT          NOT NULL,
```

```
[Price_OneMount] INT          NOT NULL,
[Price_By_Days]  INT          NOT NULL,
CONSTRAINT [PK_dbo.Cars] PRIMARY KEY CLUSTERED ([Id] ASC));
```

<<Հաճախորդներ>> կոճակի սեղմման դեպքում բացվում է <<Հաճախորդներ>> աղուսյակը, որը պարունակում է հետևյալ դաշտերը.

ID, անուն, ազգանուն, հայրանուն, հեռախոսահամար, անձնագրի համար, գրանցում, գրանցման ամսաթիվ:

Այստեղ կատարված են բոլոր հիմնական պահանջները: Ներկայացված է վարձավճարով մեքենաներ տրամադրող ընկերության տվյալների հենքի ստեղծում SQL համակարգում:

Ծրագիրը բավականին հեշտացնում է վարձավճարով մեքենաներ տրամադրող ընկերության ապասարկումը:

Մեքենաների վարձակալման հիմնական առավելությունները՝

* հաճախորդը կարող է օգտվել համակարգից իր համար անհրաժեշտ պահի,
* ավտոմեքենաների ամբողջ պարկը երաշխավորված է և պատրաստ է ցանկացած պահի շահագործման, ինչն իր հերթին զգալիորեն ավելի էժան է, քան տաքսիները,
* օգտվողը կարող է ընտրել մեքենայի մակնիշը ըստ ցանկության կամ իրավիճակի,
* և ամենակարևորը, մեր կարծիքով, առավելությունն այն է, որ վարձակալություն թանկ չէ, որն իր հերթին շատ ավելի շահավետ է և ավելի էժան է, քան անհատական տրանսպորտի գնումը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ինֆորմատիկա և տեղեկատվական տեխնոլոգիաների հիմունքներ, Կոսեմյան Ս.Է., Սմբատյան Ա.Ժ.,Երևան-2013թ.,128էջ:
2. Տվյալների բազաների համակարգերի ներածություն, Մանուկյան Մ.Գ., Երևան – 2005թ., 60 էջ:
3. Бишоп, Дж. C# в кратком изложении / Дж. Бишоп, Н. Хорспул. - М.: Бином. Лаборатория знаний,2013. - 472 с.
4. Виейра Роберт. Программирование баз данных MS SQL Server 2005. Базовый курс. М.: Вильямс, 2008.
5. Троелсен, Эндрю Язык программирования C# 5.0 и платформа .NET 4.5 / Эндрю Троелсен. - М.: Вильямс, 2015. -486 с.

Ինտերնետային կայքեր.

https://metanit.com/sharp/entityframework/1.1.php

Արուս Ալավերդյան
ԱրՊՀ, Բնագիտակտան ֆակուլտետ,
Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Տեղեկատվական տեխնոլոգիաներ 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ դասախոս Ա.Ս. Մնացականյան

ՊԵՏԱԿԱՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԻ ԱՎՏՈՄԱՏԱՑՈՒՄ

Բանալի բառեր՝ *պետական գնումներ, առևտուր, ավտոմատացում, տեխնոլոգիաներ, տվյալների հենք, գնորդ, վերահսկողություն:*

Սույն հոդվածում փորձ է արվում ընդհանրացնել պետական գնումների կազմակերպման և իրականացման համար մոդելի քննարկումը: Գործընթացը կազմակերպելու համար պետք է մանրակրկիտ ուսումնասիրել պետական գնումների ոլորտը, ինչպես նաև գործընթացի ավտոմատացման համար անհրաժեշտ տեխնոլոգիական միջոցները:

Арус Алавердян

АВТОМАТИЗАЦИЯ СИСТЕМЫ УЧЕТА ГОСУДАРСТВЕННЫХ ЗАКУПОК

Ключевые слова: *государственные закупки, торговля, автоматизация, технологии базы данных, покупатель, контроль:*

В статье делается попытка обобщить обсуждение модели для организации и осуществления государственных закупок. Для организации процесса необходимо тщательно изучить сферу государственных закупок, а также технологические средства, необходимые для автоматизации процесса.

Առևտուրը ժողովրդական տնտեսության հսկայական ոլորտ է, այդ ոլորտում ներգրավված է երկրի գրեթե ողջ բնակչությունը կա՛մ որպես վաճառողներ, կա՛մ որպես գնորդներ:Առևտրի տակ մենք հասկանում ենք ապրանքների շրջանառության, առք ու վաճառքի տնտեսական գործունեությունը: Ընդ որում, որպես և՛ վաճառողներ, և՛ գնորդներ կարող են հանդես գալ իրավաբանական անձինք, անհատ ձեռնարկատերերը և ֆիզիկական անձինք՝ առանց գրանցվելու որպես ձեռնարկատեր:

Առևտուրը տնտեսական գործունեության կարևորագույն ոլորտներից է: Առևտրային ձեռնարկությունների աշխատանքի հիմնական ցուցանիշը մանրածախ ապրանքաշրջանառությունն է:Առևտրի ոլորտում ավարտվում է ապրանքների շրջանառության գործընթացը, և դրանք անցնում են անձնական սպառման ոլորտ :

Խնդիր է առաջանում ստեղծել մի այնպիսի համակարգ, որը հնարավորություն կտա ավտոմատացնել պետական գնումներիկազմակերպումը,քանի որ թղթային տվյալների հետ աշխատանքը դժվար է, արդյունավետ չէ և իհարկե ժամանակատար է:

նախագծել եմ պետական գնումների հաշվառման ավտոմատացման համար համակարգ, որը հնարավորություն կտա որոշակի չափով ավտոմատացնել պետական գնումների կազմակերպումը:

Նախագծվել է ծրագիր, որն օգտագործելով կոնկրետ ստորաբաժանումների աշխատակիցներ կկարողանան կրճատել ժամանակը և հեշտացնել ապրանքների ձեռք բերման գործընթացը: Դրա համար յուրաքանչյուր ստորաբաժանում կունենա իր պահեստային տվյալների հենք:

Քանի որ պետության ներսում տեղի ունեցող ոչ արդար գործողությունները հիմնականում տեղի են ունենում պետական գնումների ընթացքում, իսկ IT ոլորտը հնարավորություն է ընձեռում, որ այդ բոլոր գործողությունները անցկացվեն ավտոմատացված՝ առանց մարդկային գործոնների անմիջական միջամտության, որը կապահովի այդ գործարքների, մրցույթների արդարացի իրականացմանը :

Այսպիսով, անհրաժեշտություն է առաջանում ստեղծել տվյալների հենք, որը կլուծի հետևյալ խնդիրները.

- ապրանքի ավելացման, փոփոխման և ապաակտիվացման հնարավորություն,
- ապրանքի տեսականու ցուցադրում և տեսակավորում,
- կատեգորիաների ցուցադրում,
- բաժինների տարբերակում,
- առանձին-առանձին նախարարությունների ներկայացում:

Պետական գնումների հաշվառման համար ավտոմատացված տվյալների հենքի նախագծման համար օգտագործել ենք MSSQLSԲԿՀ-ևC# ծրագրավորման լեզվի Windows Forms ծրագրային միջավայրը և Entity Framework տեխնոլոգիան, որոնք ունեն մեծ հնարավորություններ և թույլ են տալիս օգտագործողին հեշտությամբ օգտվելիր ծրագրային միջոցներից: Վերջինս նաև թույլ է տալիս կապ հաստատել տվյալների հենքի հետ և ապահովել տվյալների ամբողջականություն:

Պետականգնումներիհաշվառմանհամարտվյալներիհենքինախագծմանհամարնախ ատեսելեմհետևյալդասերը (աղյուսակները) .

- Product (ապրանք),
- Ministry(նախարարություն),
- Category(կատեգորիա),
- Section(բաժին),
- Competition(մրցույթ):

Առաջին և գլխավոր ֆորմը ունի հետևյալ տեսքը.



Նկար 1. «Գլխավոր» ֆորմ

Այստեղ պատկերված են այն առանցքային բաժինները, որոնք հնարավորություն են ընձեռում ծանոթանալ ծրագրում ներկայացված աղյուսակների տվյալներին:

«Product»կոճակը սեղմելուց բացվում է նոր ֆորմ, ինչպես պատկերված է Նկար 2-ում, որտեղ ներկայացվում են ձեռք բերման համար անհրաժեշտ ապրանքները.



Նկար 2. «Product»ֆորմ

Ապրանքները ավելացնելիս հնարավորություն է տրվում ընտրել կատեգորիա, որին համապատասխանում է ներկայացված ապրանքը:

Ապրանքների ներկայացումից հետո հնարավորություն է տրվում տվյալները մոդիֆիկացնել, այսինքն՝ կատարել փոփոխություններ ներկայացված տվյալների հետ:

Մնացած կոճակների համար նույնպես նախատեսված է տվյալների մոդիֆիկացման հնարավորություն՝ ավելացում, թարմացում, ջնջում:

Թեմայի ուսումնասիրության ընթացքում եկանք այն եզրակացության, որ ամբողջ աշխարհում պետական գնումները կարգավորող հարցերը օրենսդիրների ուշադրության կենտրոնում են, այսինքն՝ այս դեպքում գնորդը, այսինքն՝ պետությունը, շահագրգռված է գործընթացի առավելագույն արդյունավետությամբ:

Պետական գնումները ներառում են պետության կողմից տարբեր գործառույթների կատարումը, ուղղված կենտրոնացված վերահսկելիության բարձրացմանը, կանխարգելման ծախսերի անսպասելի աճին, պետական բյուջեի ծախսերի կրճատմանը և նյութական հոսքերի կառավարմանը, պայմանով, որ նրանք համապատասխանում են շուկայական հարաբերություններին:

Քանի որ պետական գնումները զգալի տեղ են զբաղեցնում առավել զարգացած երկրների բյուջեի ծախսերի մասում, ապա դրանք տնտեսության կառավարման արդյունավետ գործիք են: Կառավարության պայմանագրերով շատ պետություններ լուծում են իրենց սոցիալ-տնտեսական խնդիրները, ինչպես նաև ապահովում են հետազոտություններ անցկացնելու, նոր տեխնոլոգիաների և զարգացումների ստեղծման և ներդրման համար:

Հետևաբար, պետական կարիքների համար պետական պատվերների համակարգը, ապրանքների, աշխատանքների և ծառայությունների ձեռքբերումը տնտեսության վրա պետական ազդեցության հզոր լծակ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Азрилиян А.Н., Большой бухгалтерский словарь, город Москва 1999 год, Институт новой экономики, 450 с.
2. Хомидов А., Система учета и анализа внешнеэкономической деятельности предприятий
3. Бишоп, Дж. C# в кратком изложении / Дж. Бишоп, Н. Хорспул. - М.:
4. Бином. Лаборатория знаний, 2013. - 472 с.
5. Виейра Роберт. Программирование баз данных MSSQLServer 2005.
6. Базовый курс. М.: Вильямс, 2008
7. Троелсен, Эндрю Язык программирования C# 5.0 и платформа .NET
8. / Эндрю Троелсен. - М.: Вильямс, 2015. - 486 с.
9. https://www.tutorialspoint.com/entity_framework/entity_framework_overview.htm
10. http://minfin-nkr.am
11. https://metanit.com/sharp/windowsforms/1.1.php
12. https://metanit.com/sharp/tutorial/
13. https://metanit.com/sql/sqlserver/1.1.php

Անգելինա Պետրոսյան
Տեղեկատվական տեխնոլոգիաներ, 4-րդ կուրս
ԱրՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
petrosyan1999.99@mail.ru
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ., դոցենտ Վ.Վ.Առստամյան

ԱՐՏԱԴՐՈՒԹՅԱՆ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄ ԿԻՐԱՌՎՈՂ ԱՐՀԵՍՏԱԿԱՆ ԲԱՆԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բանալի բառեր. *արհեստական ինտելեկտ, համակարգեր, ռոբոտ, էվոլյուցիա, ծրագրային մոդելավորում, ներդրումներ, ֆինանսական ընկերություններ, տեխնոլոգիաներ:*

Այս հոդվածում կդիտարկենք արհեստական ինտելեկտի գործառույթը, որը թույլ է տալիս համակարգիչներին և մեքենաներին խելացի գործել: Ինտելեկտ ստեղծելու հիմնական խնդիրը բաժանվում է ենթախնդիրների: Դրանք բաղկացած են որոշակի առանձնահատկություններից կամ հնարավորություններից, որոնք հետազոտողներն ակնկալում են խելամիտ համակարգից:

Ангелина Петросян

ИСКУССТВЕННЫЙ ИНТЕЛЛЕКТ, ИСПОЛЬЗУЕМЫЙ В СИСТЕМЕ ПРОИЗВОДСТВА

Ключевые слова*: искусственный интеллект, системы, роботы, эволюция, моделирование программного обеспечения, инвестиции, финансовые компании, технологии.*

В статье рассматривается функция искусственного интеллекта, которая позволяет компьютерам и машинам работать умнее. Основная задача создания интеллекта делится на подзадачи. Они состоят из определенных функций или возможностей, которые исследователи ожидают от разумной системы.

Արհեստական բանականություն կամ արհեստական ինտելեկտն (երբեմն նաև մեքենայական ինտելեկտ, անգլ.՝ Artificial Intelligence, AI), ի տարբերություն մարդու և կենդանիների, հատուկ «բնական» բանականության, մեքենայի կողմից ցուցադրվող բանականություն է: Արհեստական ինտելեկտը սահմանվում է որպես «խելացի գործակալի» սարք, որն ընկալում է իր շրջակայքը և ձեռնարկում է գործողություններ, որոնք առավելագույնի են հասցնում հաջողությամբ նպատակին հասնելու նրա հնարավորությունները: Կոպիտ ասած, «արհեստական ինտելեկտ» տերմինը կիրառվում է, երբ մեքենան իրականացնում է «ճանաչողական» գործառույթներ, ինչպես օրինակ՝ «սովորելը» և «խնդիր լուծելը», որոնց մարդիկ սովորաբար ասոցացնում են «խելքի» հետ [3, էջ 85]:

Արհեստական ինտելեկտը ընկալում է միջավայրը և իրականացնում է գործողություններ, որոնք առավելագույնի են հասցնում հաջողությամբ իր նպատակներին հասնելու հնարավորությունը: Արհեստական ինտելեկտի ենթադրվող նպատակետը կարող է լինել պարզ կամ բարդ ըստ նշված գործընթացի:

Նպատակները կարող են հստակ սահմանվել կամ կարող են դրվել: Եթե արհեստական

ինտելեկտը ծրագրված է «ուսուցման ամրապնդման» համար, նպատակները կարող են անուղղակի ստիպել որոշակի վարքագծեր խրախուսել և պատժել: Այլ կերպ, էվոլյուցիոն համակարգը կարող է նպաստել նպատակներին, օգտագործելով «հարմարվողականության ֆունկցիան» վերափոխվելու գերադասաբար փոխարինել բարձրակարգ արհեստական ինտելեկտի համակարգերը: Սա նման է նրան, թե ինչպես կենդանիները զարգացան իրենց որոշակի նպատակների, ինչպես սնունդ գտնելն է, կամ ինչպես կարելի է շներին բազմացնել արհեստական ընտրության միջոցով, որպեսզի ցանկալի հատկություններ ժառանգեն:

Որոշ արհեստական ինտելեկտ համակարգեր կարող են համարվել ոչ նշատակային համակարգեր, որոնց «նպատակն» է հաջողությամբ իրականացնել իրենց նեղ դասակարգման խնդիրը:

Արհեստական ինտելեկտը մեծապես օգտագործվում է ռոբոտների մեջ: Բարձրակարգ ռոբոտային բազուկները և այլ արդյունաբերական ռոբոտները լայնորեն օգտագործվում են ժամանակակից գործարաններում, փորձից կարող են սովորել ինչպես արդյունավետ շարժվել, չնայած շփման և տեղափոխման սահունության առկայությանը:

Ժամանակակից շարժվող ռոբոտը, երբ տրված է փոքր, հաստատուն և տեսանելի միջավայր, կարող է որոշել իր գտնվելու վայրը և քարտեզագրել այն, այնուամենայնիվ դինամիկ միջավայրերը, ինչպես (էնդոսկոպիայում) հիվանդի շնչառական օրգանի ներսում, ավելի մեծ մարտահրավերներ են առաջացնում:

Ստորև նկարագրված հատկությունները առավել ուշադրության են արժանացել:

21-րդ դարում արհեստական ինտելեկտը հեղեղել է աշխարհը. խելացի սարքավորումներ, մեքենաներ, տներ, մարդիկ: Ի՞նչ կարելի է սպասել այս տեմպով զարգացող տեխնոլոգիաներից[1, էջ 99]:

Արհեստական ինտելեկտը ծրագրային մոդելավորման միջոցով իրականացնում է մարդկային ինտելեկտուալ ստեղծագործական ոլորտի գործառույթներ: Այն կարելի է կիրառել մարդկային գործունեության կամայական ոլորտում՝ սկսած բժշկականից ու ֆինանսականից, մինչև սպառողների սպասարկումը: Բայց այլ հարց է արհեստական ինտելեկտի կիրառման նպատակահարմարությունը: Այն կարելի է օգտագործել այն ոլորտներում, որտեղ կա մարդկային առողջությանը սպառնացող վտանգ, օրինակ՝ հանքավայրերում, քիմիական արդյունաբերության մեջ և այլն:

Ի՞նչ տեմպով է զարգանում արհեստական ինտելեկտ կրող ռոբոտների ինտեգրումը հասարակության մեջ:

- Անցած տարվա դրությամբ՝ ԱՄՆ-ն, Ճապոնիան, Չինաստանը, Գերմանիան և Հարավային Կորեան վաճառել են աշխարհում ռոբոտների ավելի քան 75 տոկոսը: Պարզ է, որ այս երկրներում ռոբոտներն արդեն սովորական երևույթ են և մասնակցում են մարդկանց առօրյա կյանքին: Կան ռոբոտներ, որոնք ցավազրկում են հիվանդին կամ հանում նրանց սթրեսային իրավիճակից, կարողանում են ստեղծել համապատասխան ոլորտի երաժշտություն և այլն: Այսպես օրինակ՝ Ճապոնիայում ռոբոտը ստեղծել է գրական գործ, որը մրցանակ է շահել:

Ինչի՞ կարելի է սպասել ապագայում:

- Այսօր մարդկային գործունեության ստեղծագործական ոլորտը կարող է ենթարկվել ռոբոտին, սակայն այս ամենը հանգեցնում է բնության դեմ պայքարի: Ինչքան էլ որ արհեստական ինտելեկտը զարգացած լինի, հիշենք, որ կան իրավիճակներ, որտեղ ռոբոտներն անզոր են: Օրինակ՝ հրդեհները, պատերազմները, ջրհեղեղները, տարբեր

ֆորսմաժորային իրադարձություններն անկառավարելի են արհեստական ինտելեկտի համար[2, էջ 66]:

Մենք այս ոլորտում ունեցած նվաճումների միայն դրական կողմն ենք հաշվի առնում, իսկ դրանց առաջացրած բացասական կողմը, կարծես, մոռանում ենք: Արհեստական ինտելեկտի կամ, եթե կուզեք, գիտության զարգացումը տանում է բնության հետ հակասությունների, ինչի պատճառով մենք մեր ձեռքերով մարդկային հասարակությանը մոտեցնում ենք իր վերջաբանին: Մենք պետք է հասկանանք, որ ապագան ծրագրված չէ, և մենք չգիտենք, թե ուր է գնում գիտությունը:

Արհեստական ինտելեկտը կկրճատի բանկային աշխատողների թիվը:Խելացի ալգորիթմերը զգալի չափով կկրճատեն Միացյալ Նահանգներում բանկային աշխատողների թիվը:

Այդ եզրահանգմանն է եկել Wells Fargo Securities-ի ավագ վերլուծաբան Մայք Մայոն:Աշխատանքից կզրկվի շուրջ 200 000 մարդ, իսկ ֆինանսական կառույցները կշարունակեն ներդրումներ կատարել՝ SS-ում արտադրողականությունը բարձրացնելու և ծախսերը կրճատելու համար,գրում է News.am-ը՝հղում կատարելով Bloomberg-ին:ԱՄՆ-ի ֆինանսական ընկերությունները տարեկան ծախսում են 150 000 դոլար տեխնոլոգիաների համար, ինչն ավելին է, քան ցանկացած այլ ինդուստրիան: Այդ ներդրումներն ուղղված են ծախսերի կրճատմանը, իսկ դրանց կեսը կազմում են աշխատակիցների աշխատավարձերը, գրել է Մայոն[4, էջ 102]:

«Նշանակալի փոփոխություններ են սպասվում բանկերի տեղական մասնաճյուղերին՝ ինչպես արտաքին, այնպես էլ ներքին,-հայտարարել է Մայքլ Թանը Deloitte-ից: Մենք արդեն նկատում են դրա նշանները, և որոշ այցելուներ անգամ չեն կասկածում, որ խոսում են անհրեստական ինտելեկտի հետ, քանի որ պարզապես պատասխանում են նրա հարցերին»:

Այսպիսով, ավտոմատացումը կկրճատի առօրեական աշխատանքի ծավալը, որն ավելի վաղ կատարում էին մարդիկ: Օրինակ՝ փոխառություն ստանալու համար ձևաթղթերը կկարողանան լրացնել ռոբոտները: Նրանք կկատարեն ավելի քիչ սխալներ, կաշխատեն ավելի արագ և հաճախորդներին կգոհացնեն՝ ըստ Մայոյի: Ըստ բրիտանական Coalition Development խորհրդատվական ընկերության տվյալների՝ 2018 թվականին ներդրումային բանկերում և առևտրի ոլորտում անձնակազմի հետ աշխատող մենեջերների թիվը նվազել է 20 տոկոսով[4, էջ 33]:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Искусственный интеллект — основа новой информационной технологии / Поспелов Г.С.— М.: Наука, 1990.—280 с., ил.— (Сер. «Академические чтения»).
2. Корсаков С.Н. Начертание нового способа исследования при помощи машин, сравнивающих идеи / Пер. с франц. под ред. А.С. Михайлова. – М.: МИФИ, 2009, 44 с.
3. Чухарева О.В. Конспект лекций по дисциплине: «Информационные технологии»/ Чухарева О.В., Кузьмин К.А.//Методическое пособие – РИЦ ВФ МГИУ, 2009 – 97 с.
4. Портал искусственного интеллекта [Электронный ресурс] – URL: http://www.aiportal.ru.

Արգինե Սարգսյան
«Տեղեկատվական տեխնոլոգիաներ», 2-րդ կուրս,
ԱՐՊՀ, Բնագիտական ֆակուլտետ, Կիրառական մաթեմատիկայի և ինֆորմատիկայի ամբիոն
Email- argineh-2000@mail.ru
Գիտական ղեկավար՝
մ.գ.թ., դոցենտ Վ.Վ.Առստամյան

ԴԻՄՈՐԴՆԵՐԻ ԻՐԱԶԵԿՎԱԾՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ ԲՋՋԱՅԻՆ ԿԱՊԻ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ

Բանալի բառեր՝ *բջջային ծրագրեր, դիմորդ, տեղեկատվություն, սարքավորում, պլատֆորմ, ֆունկցիոնալ հնարավորություն, մասնագիտություն:*

Հոդվածում քննվում են այն բջջային ծրագրերը, որոնց հնարավորությունների միջոցով բարձրանում է դիմորդների տեղեկացվածությունը: Բջջային սարքավորումների հնարավորությունների ընդլայնումը և համաշխարհային համակարգչային կապի զարգացումը բջջային ծրագրերը դարձնում են անհրաժեշտ տեղեկատվության ստացման ամենահարմար միջոցներից մեկը:

Аргинэ Саргсян

МОБИЛЬНЫЕ РЕШЕНИЯ ДЛЯ ПОВЫШЕНИЯ ИНФОРМИРОВАННОСТИ АБИТУРИЕНТОВ

Ключевые слова: *мобильные приложения, абитуриент, информация, устройства платформ, функциональные способности, профессия.*

В статье рассматриваются возможности мобильных приложений для повышения информированности абитуриентов. Расширение возможностей мобильных устройств и развитие глобальной компьютерной связи делают мобильные приложения одним из наиболее удобных средств получения необходимой информации.

Ժամանակակից աշխարհում բջջային սարքավորումները մեծ զարգացում են ապրում: Դրանց շնորհիվ օգտագործողները յուրաքանչյուր ոլորտում, որտեղ կա անհրաժեշտություն, օգտագործում են տեղեկատվական և հաշվողական ծառայություններ:Մինչ վերջերս բջջային սարքավորումները թույլատրում էին կատարել միայն զանգեր և փոխանակել տեքստային հաղորդագրություններ: Հաշվարկների ընդլայնման հնարավորությամբ այսօր դրանք օգտագործվում են որպես համակարգիչներ, որոնք օգնում են ոչ միայն հաղորդակցվել, այլև սովորել, զվարճանալ, ճանաչել աշխարհը: Ծրագիր կարելի է անվանել բջջային հավելվածները, որոնք ստեղծված են այնպիսի հատուկ բջջային սարքավորումների օգտագործման համար, ինչպիսին է՝ դյուրակիր համակարգիչը և խելացի հեռախոսը, որը կարող է կատարել օգտագործողին անհրաժեշտ հատուկ առաջադրանքներ:

Ծրագրի մշակումը կախված է կիրառման ոլորտից և սարքի տեսակից: Օրինակ՝ սովորական բջջային հեռախոսների հնարավորությունն է հաղորդագրությունների փոստերի օգնությամբ օգտագործողների միջև կապ ապահովելը: Խելացի հեռախոսների համար նախատեսված ծրագրերը կարող են հանդես գալ կորպորատիվ ցանցում, ինչպես

բջջային հաճախորդները:

Ծրագրի ընտրության հնարավորությունն այնքան մեծ է, որ աշխարհում բջջային սարքավորում օգտագործող յուրաքանչյուր անձ բավարարում է իր կարիքները:

Իհարկե, բջջային սարքավորումների շուկայի ընդլայնման հետ տարբեր ոլորտներում մշտապես կարող է աճել դրանց գործունակության ընդլայնման կարիքը:

Բջջային սարքավորումների որոշակի դասակարգում գոյություն չունի:Բջջային սարքավորումների բոլոր ծրագրային ապահովումները կարելի է դիտարկել տարբեր տեսանկյուններից:

Եթե որպես չափանիշ վերցնենք վճարումները, ապա ծրագրերը կարելի է բաժանել այնպիսի տեսակների, ինչպիսինք են՝ անվճար և վճարովի:Եթե բջջային ծրագրերը դիտարկենք ֆունկցիոնալ առումով, ապա գոյություն ունեն ծրագրերի տարբեր բազմաթիվ տեսակներ, որոնք կարելի է բաժանել ըստ ոլորտների, օրինակ՝ բիզնես, խաղեր, մաքսազերծում, գործիքներ, գրքեր և ուղեցույցներ, մուլտիմեդիա, կապ և այլն:

Եթե բջջային ծրագրերը դասակարգենք ըստ զարգացման տեսանկյունի, ապա այնպիսի ոլորտների կարելի է բաժանել, ինչպիսինք են բնիկ՝ մշակողների կողմից հատուկ սահմանված սարքավորումների համար ստեղծված ծրագրեր, վեբ՝ վեբ էջերով բջջային հավելվածների վրա աշխատելու հարմարավետությամբ ստեղծված ծրագիր, որն իր մեջ համակցում է երկու տարբեր տիպեր: Յուրաքանչյուր տեսակի վեբ էջերով բջջային սարքավորման զարգացման համար օգտագործվում են հատուկ պլատֆորմներ՝ Android Studio, Xcode, Visual Studio, Aptana Studio, Intel XDK և այլն [1]:

Բջջային սարքավորումների յուրաքանչյուր պլատֆորմ ունի զարգացման ինտեգրված միջավայր, տրամադրող գործիքներ՝ թույլ տալով ծրագրավորողին փորձարկել և ներկայացնել ծրագիրը զանազան բջջային սարքավորումներում:

Ժամանակակից աշխարհում բջջային սարքավորումները այնքան են ներթափանցել կյանք, որ արդեն մարդկանց մեծամասնությունն անհարմար է իրեն զգում առանց խելացի հեռախոսների և դյուրակիր համակարգիչների [2]: Դա մեծ հաշվով վերաբերում է երիտասարդներին: Երիտասարդները, ստանալով միջնակարգ կրթություն, փորձում են բուհ ընդունվելու վերաբերյալ տեղեկատվություն ձեռք բերել՝ օգտագործելով ժամանակակից համացանցի տեխնոլոգիաները:



Որպես կանոն, բուհ-ի ընդունելության հանձնաժողովի պաշտոնական կայքը պարունակում է մասնագիտության վերաբերյալ նախնական տեղեկատվություն և նախապատրաստման ուղղություններին առնչվող տեղեկատվություն:

Դիմորդների համար հարմար կլինի, եթե ձեռքի տակ ունենան տեղեկատվություն ուսումնասիրության ընտրված ոլորտում: Դրանցում նրանց կարող են օգնել բջջային ծրագրերը:

Որպես օրինակ դիտարկենք Երևանի պետական համալսարանի պաշտոնական՝ ysu.am կայքը:

Այն ուղեցույց է դիմորդի համար, որը տեղեկատվություն է պարունակում ընդունելության քննությունների, մասնագիտությունների, դասախոսների ու նրանց կողմից կատարված գիտական աշխատանքների և պետական համալսարանին առնչվող տարբեր ոլորտների վերաբերյալ:

Հատկապես կարելի է ընդգծել մասնագիտության, ամբիոնի, ֆակուլտետի մասին պատմող տեսանյութերի առկայությունը, որն ավելի պատկերավոր է դարձնում համալսարանում կատարվող աշխատանքները և շարժում է դիմորդի հետաքրքրասիրությունը:



Զուգահեռներ անցկացնելով Արցախի պետական համալսարանի պաշտոնական՝ asu.am կայքի հետ, նկատում ենք, որ այդ առումով Արցախի պետական համալսարանի կայքը զիջում է աշխարհի առաջադեմ համալսարաններին:

Առաջարկում եմ ԱրՊՀ կայքի աշխատանքը բարելավելու համար ավելացնել նոր բաժիններ:

Օրինակ.

կողմնորոշվիր ճիշտ, որը կպարունակի թեստեր, հետաքրքիր նյութեր յուրաքանչյուր մասնագիտության վերաբերյալ և կօգնի դիմորդին կատարել ճիշտ ընտրություն,

դասախոսներ, որտեղ անվան և ազգանվան հետ միասին կտեղադրվի կենսագրական նյութ տվյալ դասախոսի գործունեության վերաբերյալ, նրանց կատարած աշխատանքները, դասախոսությունները, արդյունքում ուսանողը իրեն անհրաժեշտ նյութը կկարողանա ձեռք բերել հեշտությամբ,

ես ուսանող եմ, որը թույլ կտա սովորողին իր կողմից կատարված աշխատանքները՝ թարգմանություններ, հոդվածներ, հետազոտություններ և այլն, տեղադրել կայքում և հասանելի դարձնել մյուսների համար, ու նմանատիպ այլ բաժիններ:

Արդյունքում կբարելավվի կայքի աշխատանքը և Արցախի պետական համալսարանն դեպի իրեն կձգի շատ շատերին՝ դառնալով ժամանակի պահանջներին համահունչ և մրցունակ:

Բջջային հավելվածների զարգացման համար ընտրված է եղել IntelXDK զարգացման պլատֆորմը: Ծրագրավորողների կողմից այս միջոցը համարվում է բավականին պարզ, որը թույլ է տալիս հեշտությամբ նախագծել, կարգաբերել, իրականացնել հավաքույթ և հիբրիդային ծրագրերը բազմաթիվ ֆունկցիոնալ հնարավորություններով տեղադրել

բջջային ծրագրերի և սարքավորումների տարբեր խանութների համար։

Ստեղծելով ծրագիր կարելի է այն տեղադրել յուրաքանչյուր բջջային սարքավորման մեջ Android 2, 3 և ավելի բարձր տարբերակի պլատֆորմի վրա։

Ներկայումս ընթացքի մեջ են բջջային հավելվածների բարելավման աշխատանքը, որի միջոցով ընդհանուր տեղեկատվություն կտրամադրվի ֆակուլտետների և ամբիոնների, անցյալ տարվա ընդունելության մասին, կկազմի բուհի մասնագիտություններ ըստ տրված առարկաների ձևի և կմիասնացվի [3]։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Варакин М. Разработка мобильных приложений под Android,Курс 1,- УЦ «Специалист», 2017 г. – 128 с.
2. ГолощаповА. Л. Google Android. Создание приложений для смартфонов и планшетных ПК, БХВ-Петербург, 2016. — 832 с.
3. Дэвид М. HTML5 Разработка веб-приложений, – Изд.: Рид Групп, 2012. – 320 с.

Անահիտ Առստամյան
Արցախի պետական համալսարան
<<Մաթեմատիկա>> մասնագիտության մագ., 1 կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.թ., դոցենտ Գ.Նալբանդյան

ՀԱՐԹՈՒԹՅԱՆ ՎՐԱ ՈՐՈՇ ՆՇԱՆԱՎՈՐ ՉՈՐՐՈՐԴ ԿԱՐԳԻ ԳԾԵՐ

Բանալի բառեր՝ *չորրորդ աստիճանի գիծ, Բեռնուլիի լեմինիսկատը, Կասսինի ձվաձիրները, կանխոիդա, Պասկալի խխունջը, կարդիոիդա Նիկոմեդա, կապպա, վարդեր և աստրոիդա կորեր, հանրահաշվական գծեր:*

ՈՒսումնասիրված են հարթության վրա չորրորդ կարգի նշանավոր գծերը, որոնք իրենց հատկություններով տարբերվում են մեզ հայտնի գծերից և իրենց ուրվագծերով բնորոշում բնության մեջ գոյություն ունեցող մարմիններ, և հենց այդ մարմինների անուններով կոչվում են այդ գծերը: Սահմանված են, որ չորրորդ կարգի գիծ են անվանում այն գծերը, որով որոշվում են հանրահաշվական չորրորդ աստիճանի հավասարումով ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում: Այդպիսի նշանավոր գծերից են՝ Բեռնուլիի լեմինիսկատը և Կասսինի ձվաձիրները, կանխոիդա Նիկոմեդա և Պասկալի խխունջը, կարդիոիդան, կապպա, վարդեր և աստրոիդա կորերը:Արտածված են այդ կորերի հավասարումները ուղղանկյուն կոորդինատական համակարգում, և բևեռային կոորդինատական համակարգում:

Анаит Арстамян

О НЕКОТОРЫХ ЗАМЕЧАТЕЛЬНЫХ ЛИНИЯХ ЧЕТВЕРТОЙ СТЕПЕНИ НА ПЛОСКОСТИ

Ключевые слова: *линия четвертой степени, лемнискат Бернуля, овал Кассини, конхоида Никомеда, улитка Паскаля, кардиоида, каппа, розы и астроида линии, алгебраическая линия*

Исследованы замечательные линии четвертой степени на плоскости, которые своими свойствами отличаются от известных нам линии и своими траекториями определяют фигуры существующих в природе и их наименования связанные и этими линиями. Дано определение, что линиями четвертой степени, которые определяются алгебраическими уравнениями четвертой степени в прямоугольной декартовой координатной системе. Из этих замечательных линий - лемниската Бернулли и овал Кассини, конхоида Никомеда и улитка Паскаля, кардиоида, каппа, розы и астроида кривые. Получено уравнения этих кривых и в прямоугольной декартовой системе, и в полярной координатной системе.

Բեռնուլիի լեմինիսկատ են անվանում հարթության այն բոլոր կետերի ամբողջությունը, որոնց համար հարթության երկու կետերից ունեցած հեռավորությունների արտադրյալը հաստատուն մեծություն է, որը հավասար է տված երկու կետերի միջև եղած հեռավորության քառակուսուն:



Նկ.1.

Կոորդինատական համակարգը ընտրենք հետևյալ կերպ. կոորդինատների սկզբնակետը տեղափոխենք F_1F_2 հատվածի O միջնակետը, որպես աբսցիսների առանցք ընտրենք ուղիղը, որն անցնում է F_1 և F_2 կետերով, նրա վրա նշենք դրական ուղղությունը՝ F_1-ից F_2, իսկ օրդինանտների առանցքը լինի միջնուղղահայաց F_1F_2 հատվածին: Այդ դեպքում կունենանք $F_1(-a;0)$, $F_2(a;0)$: Բեռնուլիի լեմինիսկատի սահմանման համաձայն՝

$$|F_1M|\cdot|F_2M| = a^2 \qquad (1)$$

Տեղադրելով $|F_1M| = \sqrt{(x+a)^2 + y^2}$; $|F_2M| = \sqrt{(x-a)^2 + y^2}$ արժեքները, բարձրացնելով քառակուսի և կատարելով պարզագույն ձևափոխություններ, կստանանք՝

$$\left(x^2 + y^2\right)^2 - 2a^2(x^2 - y^2) = 0;$$

իսկ լեմինիսկատի հավասարումը բևեռային կոորդինատներով՝

$$\rho^2 = 2a^2\cos 2\varphi:$$

Աստղագետ Ժան Դոմինիկ Կասսինը (1625-1712) փորձել է սահմանել Երկրի ուղեծիրը և այդ ընթացքում հայտնաբերել է այդ գծերը: Այս գծերը կոչվում են հենց այս ֆրանսիացի գիտնականի անունով: Կասսինի ձվածիրներ անվանում են հարթության այն բոլոր կետերի ամբողջությունը, որոնց համար հարթության երկու կետերից ունեցած հեռավորությունների արտադրյալը հաստատուն մեծություն է: Հաշվի առնելով վերևում կոորդինատական համակարգի մուծման մեթոդը՝ $F_1(-a;0)$, $F_2(-a;0)$, և եթե նշանակելով b^2-ով այդ հաստատուն մեծությունը, կստանանք՝

$$|F_1M|\cdot|F_2M| = b^2:$$

Կատարելով նմանատիպ դատողություններ՝ կստանանք Կասսինի ձվածիրների հավասարումը՝

$$\left(x^2 + y^2\right)^2 - 2a^2\left(x^2 - y^2\right) = b^4 - a^4, \qquad (2)$$

Իսկ բևեռային կոորդինատներով կլինի, եթե $x = \rho\cos\varphi$, $y = \rho\sin\varphi$: Արժեքները տեղադրելով (2) հավասարման մեջ և կատարելով պարզագույն ձևափոխություններ՝ կստանանք՝

$$\rho = a\sqrt{\cos 2\varphi \pm \sqrt{\cos^2 2\varphi + \left(\frac{b^4}{a^4} - 1\right)}} \qquad (3)$$

Տարբերվում են Կասսինի ձվածիրների երեք հիմնական ձևեր՝ կախված a և b պարամետրերից՝ $b > a,\ b = a,\ b < a$:

1) Եթե $b > a$, ապա (3) հավասարման մեջ ներսի արմատից առաջ պետք է վերցնել պլյուս նշանը, հակառակ դեպքում բացարձակ արժեքի համար ենթաարմատատակ արտահայտությունը առաջին արմատի համար կլինի բացասական:

2) Եթե $b = a$, ապա (3) հավասարումը կընդունի այսպիսի տեսք. $\rho = a\sqrt{2\cos 2\varphi}$, հետևաբար Բեռնուլիի լեմինսիկատը Կասսինի ձվածրի մասնավոր դեպքն է:

3) Եթե $b < a$, ներմուծելով նոր α պարամետր և նշանակելով $\frac{b^2}{a^2} = \sin 2a;$ (3) հավասարումից կստանանք.

$$\rho = a\sqrt{\cos 2\varphi \pm \sqrt{\cos^2 2\varphi - \cos^2 2a}}:$$

Այս ձևով կարելի է հետևել Կասսինի ձվածրի փոփոխությանը (նույն ֆիքսված F_1 և F_2 կետերով) կախված b պարամետրի փոփոխությունից:



նկ.2



նկ.3

Ձվածիրը այդ դեպքում կազմված կլինի երկու փակ գծերից: Նրանք կմեծանան չափով, եթե b-ն աճի: $b = \alpha$ դեպքում այդ փակ գծերը միաձուլվում են և որոշում են Բեռնուլիի լեմինիսկատը, իսկ b պարամետրի հետագա մեծացման դեպքում ձվածիրը իրենից կներկայացնի փակ գիծ (նկ.2):

Հարթությունում ֆիքսենք LL_1 ուղիղը և O կետը, հեռավորությունը այդ ուղղից $|OE| = a$ (նկ.4): Տանենք OK ճառագայթը, որը հատում է LL_1 ուղիղը K կետում: Ճառագայթի վրա K կետի երկու կողմից տեղադրենք KM և M_1K հատվածները, այնպես, որ $|KM| = |KM_1| = l$, որտեղ l տված թիվն է: Պտտելով ճառագայթը O կետի շուրջը (0-ից մինչև 180⁰) և կատարելով անալոգ կառուցումներ, պտտելով ճառագայթը O կետի շուրջը (180⁰-ից մինչև 360⁰), l-ի նույն արժեքի դեպքում կստանանք գիծ, որը նկարագրում է M և M_1 կետերը: Այդ գիծը անվանում են կանխոիդա, O կետը՝ կանխոիդի բևեռ, իսկ LL_1 ուղիղը՝ բազիս: Այս գիծը կազմված է երկու ճյուղերից՝ մի ճյուղը նկարագրում է M կետը, իսկ մյուսը՝ M_1 կետը: Կազմենք կանխոիդի բևեռային հավասարումը ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում: Որպես կանխոիդի բևեռ ընդունենք բևեռային համակարգի բևեռը և

ուղղանկյուն դեկարտյան համակարգի սկիզբը: Աբցիսների (բևեռագծի) առանցքը ընդունելով O կետով անցնող և LL_1 ուղղին զուգահեռ, իսկ օրդինատների առանցքը՝ O և E կետերով անցնող ուղղին զուգահեռ: φ-ով նշանակենք OK ճառագայթի և աբցիսների առանցքի կազմած անկյունը: Բևեռային կոորդինատական առանցքի այսպիսի ընտրության դեպքում M կետը կունենա $(\rho;\varphi)$ կոորդինատները, որտեղ $\rho=|OM|$, իսկ M_1 կետը՝ $(\rho_1;\varphi)$ կոորդինատները, որտեղ $\rho_1=|OM_1|$: Նկ.4 ա-ից (որի վրա ենթադրվում է, որ $l<a$) հետևում է, որ $\rho=|OK|+l, \rho_1=|OK|-l$: Քանի որ $|OK|=\dfrac{a}{\sin\varphi}$, ապա $\rho=\dfrac{a}{\sin\varphi}+l$, $\rho=\dfrac{a}{\sin\varphi}-l$: Այս բանաձևերը կարելի է միացնել իրար՝ $\rho=\dfrac{a}{\sin\varphi}\pm l$: Այստեղ պլյուս նշանը վերին ճյուղի համար է, իսկ մինուս նշանը՝ ստորին: Կանխոիդի բանաձևը կախված է a և l պարամետրերի փոխհարաբերությունից: Եթե $l=a$ և $1>a$, ապա գիծը համապատասխանում է նկ.4-ում բ-ին և գ-ին:



Նկ.4

Այժմ կազմենք ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում կանխոիդի հավասարումը: $M(x,y)$ կետից տանենք ուղղահայաց աբսցիսների առանցքին և առանցքի հետհատման կետը նշանակենք P տառով: Թող S կետը ուղղահայացի հատման կետն է LL_1 բազիսային ուղղի հետ: OMP և KMS եռանկյունների նմանությունից կունենանք

$$|OM|\div|MK|=|MP|\div|MS|:$$

Տեղադրելով $|OM|=\sqrt{x^2+y^2}, |MK|=l, |MP|=y, |MS|=y-a$ արժեքները և կատարելով պարզագույն ձևափոխություններ, կստանանք

$$\left(x^2+y^2\right)(y-a)^2-l^2y^2=0 \qquad (4)$$

Ստացված հավասարումը ամբողջովին սահմանում է կանխոիդյան: Բազիսային LL_1 ուղիղը հանդիսանում է կանխոիդի համար ասիմպտոտ: Իրոք՝

$$\lim_{\varphi\to0}MP=\lim_{\varphi\to0}y=\lim_{\varphi\to0}\rho\sin\varphi=\lim_{\varphi\to0}\left(\frac{a}{\sin\varphi}\pm l\right)\sin\varphi=\lim_{\varphi\to0}\left(a\pm l\sin\varphi\right)=a:;$$

Դիցուք պետք է α անկյունը բաժանել երեք հավասար մասերի (նկ.5): Մի կողմի վրա տված անկյունից մինչև նրա O գագաթը տեղադրենք $|OC|=l$ հատվածը:



Նկ.5

Դիտարկենք l շառավղով և C կենտրոնով շրջանագիծը: C կետով տանենք զուգահեռ մյուս կողմին: Ընդունելով այդ ուղիղը որպես բազիս, իսկ O կետը կանխոիդի և շրջանագծի հատման կետ: Ցույց տանք, որ MOK անկյունը հավասար է $(1/3)\alpha$:

Քանի որ $OC = CM = MN = l$, ապա CMN և OCM եռանկյունների կապը.

$$\angle MCN = \angle MNC,\ \angle COM = \angle CMO,\ \angle CMO = 2\angle CNM,\ \angle CNM = \angle MOK,$$

$$\alpha = \angle COM + \angle MOK = 3\angle MOK:$$

Այս գիծը կոչվում է ֆրանսիացի մաթեմատիկոս Էթեն Պասկալի (1588-1651) անունով: Դիտարկենք r շառավղով և C կենտրոնով շրջանագիծ(նկ. 6): Նրա վրա ընտրենք O կետը: Պատկերացնենք, որ O կետի շուրջը պտտվում է OM ճառագայթը: Նրա ամեն մի դիրքը շարունակենք մինչև N կետը՝ ճառագայթի և շրջանագծի հատման կետը, $|NM| = l$, որտեղ l-ը տված դրական թիվ է: Ճառագայթի պտտումից 0-ից 180^0 անկյան տակ կստանանք M կետերի ամբողջություն: Ճառագայթի հետագա պտտումը 180^0-ից 360^0 անկյան տակ, շարունակելով l հատվածի երկարությունը ճառագայթի ուղղությամբ, կստանանք, որ $NM_1 = l$, այսինքն կստանանք M_1 կետը: M և M_1 կետերի ամբողջությունը անվանում են Պասկալի խխունջ:

Նշենք, որ կանխոիդի և Պասկալի խխունջի կառուցումները նմանատիպ են, տարբերությունը այն է, որ կանխոիդի բազիսը հանդիսանում է ուղիղ, իսկ խխունջի բազիսը շրջանագիծ: Կազմենք Պասկալի խխունջի հավասարումը բևեռային և ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում: O կետը ընդունենք որպես բևեռ: Բևեռայնության առանցքը տեղափոխենք O կետից շրջանագծի կենտրոնը՝ C կետը: Նույն ձևով վերցնում ենք աբցիսների առանցքը ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում նույն O սկզբնակետով: M կետի բևեռային կոորդինատները նշանակենք ρ, φ (որտեղ, $\rho = OM$, φ-ն ON ճառագայթի թեքումից աբցիսների առանցքի վրա ստացված անկյան մեծությունն է), իսկ նրա դեկարտյան կոորդինատները նշանակենք x, y: Այնպես, որ եթե $\rho = |OM| = |ON| + |NM|$ և $|ON| = 2r\cos\varphi$ (ստացված ONA եռանկյունուց) $|MN| = l$, ապա $\rho = 2r\cos\varphi + l$: Այդպիսի $M_1(\rho, \varphi)$ կետի համար անալոգորեն կստանանք $\rho = 2r\cos\varphi - l$: Այս երկու բանաձևերը կարելի է միացնել իրար՝ 9 $\rho = 2r\cos\varphi \pm l$:



Նկ.6

Ստացանք Պասկալի խխունջի հավասարումը բևեռային կոորդինատներով: Այն ստանանք ուղղանկյուն դեկարտյան կոորդինատներում: Տեղադրելով $\rho = \sqrt{x^2 + y^2}, \cos\varphi = x \div \sqrt{x^2 + y^2}$ բանաձևերը և կատարելով պարզագույն ձևափոխություններ, կստանանք՝

$$\left(x^2 + y^2 - 2rx\right)^2 - l^2\left(x^2 + y^2\right) = 0 \qquad (5)$$

(5) հավասարումը Պասկալի խխունջի հավասարումն է ուղղանկյուն դեկարտյան կոորդինատներում: Քանի որ այս հավասարումները չորրորդ կարգի հանրահաշվական հավասարումներ են, հարաբերական են դեկարտյան կոորդինատներին, ապա Պասկալի խխունջը հանրահաշվական չորրորդ կարգի գիծ է: Այս գիծը սիմետրիկ հարաբերական է Ox առանցքին, եթե (5) հավասարման մեջ x, y դուրս են գալիս զույգ աստիճանով: Պասկալի խխունջի բանաձևը կախված է r և l պարամետրերի արժեքներից:
Եթե $l < 2r$, ապա գիծը ունի նկ.6-ի ա-ում պատկերված տեսքը: O կետը այդ դեպքում կլինի հանգուցակետ:



Նկ. 7



Նկ. 8

Նկ.7-ում Պասկալի խխունջը պատկերված է այն դեպքում, երբ $l < 2r$: Այդ դեպքում բևեռը մեկուսացված կլինի հատուկ կետերով, կետը պատկանում է գծին, քանի որ նրա կոորդինատները բավարարում են (5) հավասարմանը: Եթե $l = 2r$, ապա գիծը կունենա նկ.8-ում պատկերված տեսքը: Այդ դեպքում բևեռը կլինի հակադարձելի կետ:

Կարդիոիդա կոչվում է այն գիծը, որը արտագծված է r շառավղով շրջանագծի M կետին, գալարվող նույն շառավղով շրջանագծի վրա:

Դիտարկենք անշարժ r շառավղով և O կենտրոնով շրջանագիծը (նկ.9) և նրա վրա

սահելով գլորվող մի ուրիշ շրջանագիծ r շառավղով և O_1 կենտրոնով: Այդ կետը ժամանակի ընթացքում փոխում է իր դիրքը, սկզբում նա գտնվում էր OA ճառագայթի վրա, իսկ M կետը համընկնում էր A կետի հետ և այդ նույն կետում շրջանագծերը շոշափվում էին: Շառավիղներով կազմված MO_1K անկյունը նշանակենք t տառով: Եթե ենթադրվում է, որ գալարումը կկատարվի առանց սահման, ապա համապատասխան AK և KM աղեղները կլինեն հավասար $rt_1 = rt$ կամ որտեղից $t_1 = t$, որտեղ $t_1 = KOA$:

Կազմենք կարդիոիդի հավասարումը տարբեր կոորդինատներով: Ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգը ընտրենք այնպես ինչպես պատկերված է նկ.9-ում: Ուղղանկյուն դեկարտյան կոորդինատները նշանակենք M կետով x, y միջոցով: Այդ դեպքում $x = OB = OC - BC$, $y = BM = CD = CO_1 - DO_1$: Նշենք, որ $OO_1 = 2r, \angle O_1NC = 2t, \angle O_1MD = 2t$:

Քանի որ ապա $OC = 2r\cos t, BC = r\cos 2t, CO_1 = 2r\sin t, DO_1 = r\sin 2t$, ապա

$$x = 2r\cos t - r\cos 2t; \qquad y = 2r\sin t - r\sin 2t \tag{6}$$



նկ.9

Ստացանք կարդիոիդի պարամետրական հավասարումը: Որպեսզի գտնենք կարդիոիդի բևեռային հավասարումը, որպես բևեռ ընդունենք A կետը (նկ.9), իսկ բևեռայնության առանցքը ուղղենք Ox առանցքի ուղղությամբ: Քանի որ AOO_1M հանդիսանում է հավասարակողմ սեղան, ապա M կետի φ բևեռային անկյունը հավասարվում է շրջանի անկյանը: Իմանալով, որ $t = \varphi$, նշանակենք երկրորդում y $\rho\sin t = \rho\sin\varphi$ հավասարման միջոցով և կստանանք $\rho\sin\varphi = 2r\sin\varphi - 2r\sin\varphi\cos\varphi$: Կրճատելով այս հավասարությունը $\sin\varphi$ -ով, կստանանք կարդիոիդի հավասարաումը բևեռային կոորդինատներով՝

$$\rho = 2r(1 - \cos\varphi) \tag{7}$$

(7) հավասարման մեջ տեղադրելով $\rho = \sqrt{x'^2 + y'^2}, \cos\varphi = x' \div \sqrt{x'^2 + y'^2}$ արտահայտությունները, կստանանք որոնելի հավասարումը: Ընթացիկ կոորդինատները նշանակելով x, y կստանանք

$$\left(x^2 + y^2 + 2rx\right)^2 = 4r^2\left(x^2 + y^2\right),$$

Այստեղից էլ հետևում է, որ կանխոիդան չորրորդ կարգի հանրահաշվական հավասարում է:

Կապպա: Վարդեր: Աստրոիդա

Կազմենք կապպայի բևեռային և կոորդինատական հավասարումները ուղղանկյուն դեկարտյան կոորդինատական համակարգում: Նշված կետը նշանակենք O: Տեղադրենք նրա վրա բևեռը և կոորդինատական համակարգի սկզբնակետը որպես բևեռային և աբսցիսների առանցք վերցնենք ուղիղը, որի վրա տեղափոխվում է տված շրջանագծերի կենտրոնները: O կետից տանենք շրջանագծին շոշափող: Այսպիսով ստացված հավասարումը գծի հավասարումն է բևեռային կոորդինատներով:

$$\rho = actg\varphi \qquad (8)$$



Նկ.17

Վարդեր կոչվում է այն գծերը, որոնք տված են

$$\rho = a\sin k\varphi \qquad \text{կամ} \quad \rho = a\cos k\varphi \qquad (9)$$

բևեռային կոորդինատներով, որտեղ a-ն և k-ն հաստատուն և դրական թվեր են: Եթե $|\sin k\varphi| \le 1$, ապա (9) հավասարումից հետևում է, որ $\rho \le a$: Վերջին անհավասարումից հետևում է, որ բոլոր գծերը գտնվում են α շառավղով շրջանագծում: Քանի որ, $\sin k\varphi$ ֆունկցիան պարբերական է, ապա վարդը կազմված է կոնգուրենտ թերթերից հարաբերական ամենամեծ շառավիղներին, որոնք հավասար են α : Այս թերթերի քանակը կախված է k թվից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Рашевский П.К., Курс дифференциальной геометрии, М., 1959
2. Просолов В.В., Шарыгин И.Ф., Задачи по стереометрии М., 1989
3. Ефимов Н.В., Высшая геометрия, М., 1978
4. Бакельман И.Я., Высшая геометрия, М., 1967

ՀՏԴ 510.3 Բնագիտություն

Անուշ Բաբայան
ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետ,
Մաթեմատիկա բաժին, 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.թ., դոցենտ Լ.Ռ.Աբրահամյան

ԳԱՈՒՍՅԱՆ ԱՄԲՈՂՋ ԹՎԵՐ

Բանալի բառեր՝ *կոմպլեքս թիվ, Գաուսյան ամբողջ թիվ, օղակ, ձախ և աջ բաշխական օրենքներ:*

Աշխատանքում ապացուցվում է, որ գաուսյան ամբողջ թվերի բազմությունը կազմում է օղակ:

Ануш Бабаян

ЦЕЛЫЕ ГОУССОВЫ ЧИСЛА

Ключевые слова: *комплексное число, Гаусовое целое число , кольцо, законы распределения слева и справа.*

В работе доказывается, что множество гаусовых целых чисел составляет кольцо.

$\alpha = a + ib$ կոմպլեքս թիվը կոչվում է.

ա) **գաուսյան թիվ,** եթե a-ն և b-ն ռացիոնալ թվեր են, այսինքն՝ $a, b \in Q$:

բ) **ամբողջ գաուսյան թիվ,** եթե a-ն և b-ն ամբողջ թվեր են, այսինքն՝ $a, b \in Z$:

Բոլոր գաուսյան թվերի բազմությունը նշանակվում է $Q[i]$-ով, իսկ բոլոր ամբողջ գաուսյան թվերի բազմությունը՝ $Z[i]$-ով:

$Q[i]$ բազմությունը կազմում է դաշտ՝ կոմպլեքս թվերի գումարման և բազմապատկման նկատմամբ:

Հատկություն 1: Ցանկացած $\alpha, \beta \in C$ կոմպլեքս թվերի համար՝ $\alpha + \beta = \beta + \alpha$ (գումարման տեղափոխական հատկություն):

Հատկություն2: Ցանկացած $\alpha, \beta, \gamma \in C$ կոմպլեքս թվերի համար՝ $(\alpha + \beta) + \gamma = \alpha + (\beta + \gamma)$ (գումարման զուգորդական հատկություն):

Հատկություն 3: Ցանկացած $\alpha = (a, b) \in C$ կոմպլեքս թվի համար՝ $(a, b) + (0,0) = (a, b)$: Այս հատկությամբ $(0,0)$ զույգը որոշվում է միարժեքորեն և նշանակվում է $(0,0) = 0$ ու կոչվում է զրո կոմպլեքս թիվ:

Հատկություն 4: Ցանկացած $\alpha = (a, b) \in C$ կոմպլեքս թվի համար $(a, b) + (-a, -b) = (0,0)$: Այս հատկությամբ $(-a, -b)$ զույգը որոշվում է միարժեքորեն և նշանակվում է՝ $(-a, -b) = -\alpha$ ու կոչվում է α-ի հակադիր կոմպլեքս թիվ:

Հատկություն 5: Ցանկացած $\alpha, \beta \in C$ կոմպլեքս թվերի համար՝ $\alpha \cdot \beta = \beta \cdot \alpha$ (բազմապատկման տեղափոխական հատկություն):

Հատկություն 6: Ցանկացած $\alpha, \beta, \gamma \in C$ կոմպլեքս թվերի համար՝ $(\alpha \cdot \beta) \cdot \gamma = \alpha \cdot (\beta \cdot \gamma)$ (բազմապատկման զուգորդական հատկություն):

Հատկություն 7: Ցանկացած $\alpha, \beta, \gamma \in C$ կոմպլեքս թվերի համար՝

$$\alpha(\beta + \gamma) = \alpha\beta + \alpha\gamma, \text{ (ձախ բաշխականություն)}$$

$$(\beta + \gamma)\alpha = \beta\alpha + \gamma\alpha: \text{ (աջ բաշխականություն)}$$

Հատկություն 8: Ցանկացած $\alpha = (a, b) \in C$ կոմպլեքս թվի համար՝ $(a, b) \cdot (1,0) = (a, b)$:

Այս հատկությամբ $(1,0)$ զույգը որոշվում է միարժեքորեն և նշանակվում է $(1,0) = 1$ ու կոչվում է մեկ կոմպլեքս թիվ:

Հատկություն 9: Ցանկացած $\alpha = (a, b) \neq (0,0)$ կոմպլեքս թվի համար՝

$$(a, b) \cdot \left(\frac{a}{a^2+b^2}, \frac{-b}{a^2+b^2}\right):$$

Այս հատկությամբ՝

$$\acute{\alpha} = \left(\frac{a}{a^2 + b^2}, \frac{-b}{a^2+b^2}\right)$$

Կոմպլեքս թիվը որոշվում է միարժեքորեն և կոչվում է α-ի հակադարձ ու նշանակվում է α^{-1}-ով:

Z[i] բազմությունը ամբողջության տիրույթ է, այսինքն՝ զուգորդական, տեղափոխական, միավորով օժտված և առանց զրոյի բաժանարարների օղակ է, որի հակադարձելի տարրերն են ± 1 և $\pm i$ ամբողջ գաուսյան թվերը: Իրոք, նախ ակնհայտ է, որ նշված թվերից յուրաքանչյուրը հակադարձելի է $Z[i]$ օղակում, իսկ եթե $\alpha \cdot \beta = 1$, որտեղ $\alpha, \beta \in Z[i] \alpha = x + iy$, ապա $Nr(\alpha) \cdot Nr(\beta) = Nr(\alpha \cdot \beta) = Nr(1) = 1$;

Հետևաբար, $Nr(\alpha) = 1$ և հանգումենք $x^2+y^2= 1$ հավասարմանը, որի ամբողջարժեք լուծումներն են՝ $(1,0)$, $(-1,0)$, $(0,1)$ և $(0,-1)$ զույգերը: Այսպիսով, $\alpha = \pm 1, \pm i$:

Ամբողջ գաուսյան թվերի օղակը շատ հատկություններով նման է ամբողջ թվերի օղակին, որի պատճառն ըստ էության թաքնված է ամբողջ գաուսյան թվերի մնացորդով բաժանման հետևյալ ալգորիթմի մեջ:

Թեորեմ (ամբողջ գաուսյան թվերի մնացորդով բաժանման վերաբերյալ): Ցանկացած $\alpha, \beta \neq 0$ ամբողջ գաուսյան թվերի համար գոյություն ունեն այնպիսի σ և ρ ամբողջ գաուսյան թվեր, որ

$$\alpha = \beta\sigma + \rho,$$

որտեղ $0 \leq Nr(\rho) < Nr(\beta)$:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. . Մովսիսյան Յու.Մ., Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն, Երևան, 2008թ.:
2. Միքայելյան Հ.Ս., Բարձրագույն հանրահաշվի դասընթաց, Երևան, 2004թ.:

ՀՏԴ 53.2 **Բնագիտություն**

Յանա Գրիգորյան
ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետ,
«Ֆիզիկա» բաժին, 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.պ., դոցենտ Ա.Ա.Ալեքսանյան

ԶԱՆԳՎԱԾՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆԸ ՄԱՍՆԻԿՆԵՐԻ ԲԱԽՄԱՆ ԽՆԴԻՐՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *զանգվածների կենտրոն, իմպուլս, զանգվածների կենտրոնի արագություն, արտաքին ուժ, բախում, շառավիղ-վեկտոր, արդյունարար ուժ , իներցիալ համակարգ:*

Հոդվածում ուսումնասիրվում է, թե ինչ է զանգվածների կենտրոնը և նրա հատկությունները: Դիտարկվում է մարմինների բախումների գործընթացները հաշվարկման համակարգում, որում զանգվածների կենտրոնը գտնվում է դադարի վիճակում: Որոշ կարևոր խնդիրների լուծումներով բերված են օրինակներ, որոնց միջոցով պարզաբանվում է ***զանգվածների կենտրոն*** *հասկացության կիրառումը:*

Яна Григорян

ЦЕНТР МАСС В ЗАДАЧЕ СТОЛКНВЕНИЯ ЧАСТИЦ

Ключавые слова: *центр масс, импульс, скорость центра масс, внешние силы, столкновение , радиус-вектор, произвадительная сила .*

Изучая центр масс и его свойство автор рассмотрел процессы столкновения в котором центр масс находится в состояни покоя. На примере решения нескольких важных задач связоных с столкновением задачб демонстрирущие приминение понятия центра масс.

Հայտնի է, որ փոխազդող մասնիկների իմպուլսի պահպանումը հանդիսանում է Գալիլեի ձևափոխության անհրաժեշտ հետևանք, ինչպես նաև էներգիայի պահպանման օրենքի այն պայմանում, երբ համակարգի վրա արտաքին ուժեր չեն ազդում: Այստեղ մենք կդիտարկենք մասնիկների բախման գործընթացները հաշվարկման համակարգում, որտեղ զանգվածների կենտրոնը գտնվում է դադարի վիճակում:

Սկզբում համակարգի պոտենցիալ էներգիայի նկատմամբ կատարենք Գալիլեի ձևափոխությունը: Ենթադրենք, համակարգը կազմված է երկու մասնիկներից և ուսումնասիրենք միաչափ դեպք: Ենթադրենք, որ մասնիկների կոորդինատներն են x_1 և x_2: Ակնհայտ է, որ պոտենցիալ էներգիան U(x_1,x_2) կախված կլինի այդ մասնիկների դիրքից, և Գալիլեի ձևափոխությունը պոտենցիալ էներգիայի նկատմամբ կլինի ինվարիանտ.

$$U(x_1, x_2) = U(x_1 + b,\ x_2 + b) \qquad (1)$$

Ֆիզիկորեն այս արտահայտությունը նշանակում է, որ համակարգի պոտենցիալ էներգիան չի փոխվում մասնիկների տեղափոխությունից, կամ այլ կերպ ասած՝ աշխատանք չի կատարվում: Մաթեմատիկորեն դա նշանակում է, որ b մեծությունը անհետանում է աջ կողմից: Ենթադրելով, որ.

$$U(x_1 + b,\ x_2 + b) = (x_1 + b - x_2 - b)^2 = (x_1 - x_2)^2, \qquad (2)$$

Կունենանք՝

$$U(x_1 + b,\ x_2 + b) = (x_1 + b - x_2 - b)^2 = (x_1 - x_2)^2 = U(x_1, x_2) \qquad (3)$$

(1) արտահայտության աջ կողմում b մեծությունը անհետանում է, դրա համար (2) արտահայտությունը ինվարիանտ է: Ընդհանուր դեպքում, երբ U(r_1,r_2) հանդիսանում է ֆունկցիա r_1-r_2, այդ ֆունկցիան հանդիսանում է ինվարիանտ՝ կապված տեղափոխության հետ: Ընդգծենք , որ եթե U = x_1 , ապա այդ դեպքում U ինվարիանտ է տեղափոխության

նկատմամբ b մեծությամբ, որովհետև այդ դեպքում U = x_1+b և իմպուլսի պահպանման օրենքը չի գործում:

Մենք գիտենք, որ առաջին դեպքի համար ուժը հավասար է վերցված հակառակ նշանով՝ $\frac{d\,U}{dx}$: Դրա համար 1 և 2 մասնիկների վրա գործող ուժերը հավասար են՝

$$F_1 = -\frac{d\,U}{dx_1}, \qquad F_2 = -\frac{d\,U}{dx_2} \tag{4}$$

Հաշվելով $\frac{d\,U}{dx}$ ՝տեսնում ենք, որ մի դեպքում հաստատուն է x_1, մյուս դեպքում՝x_2: Եթե U-ն իրենից ներկայացնում է ֆունկցիա՝ կախված u-ից, որտեղ u $=x_1 - x_2$ (5) , ապա դիֆֆերենցիալի կանոններով՝

$$\frac{\partial U}{\partial x_1} = \frac{\partial U}{\partial u}\frac{\partial u}{\partial x_1} = \frac{\partial U}{\partial u}, \qquad \frac{\partial U}{\partial x_2} = \frac{\partial U}{\partial u}\frac{\partial u}{\partial x_2} = -\frac{\partial U}{\partial u} \tag{6}$$

որտեղից՝

$$\frac{\partial U}{\partial x_1} = -\frac{\partial u}{\partial x_2} \text{ կամ } F_1 = -F_2 \tag{7}$$

Այստեղից երևում է, որ երկու փոխազդող մասնիկների վրա ազդող արդյունարար ուժը հավասար է 0-ի: Եթե արդյունարար ուժը հավասար է 0-ի, ապա համաձայն Նյուտոնի օրենքի իմպուլսը կլինի հաստատուն:

Մինչ բախումների անցնելը տանք զանգվածների կենտրոնի մասին գաղափարը: Համակարգի զանգվածների կենտրոնի դիրքը կազմված N մասնիկներից բացարձակ ֆիքսված O սկզբնակետում որոշվում է ռադիուս-վեկտորով $R_{q.կ}$, որը տրվում է հետևյալ հարաբերակցությամբ՝

$$\vec{R}_{qկ} = \sum_{n=1}^{N} M_n\vec{r}_n \;/\sum_{n=1}^{N} M_n \tag{8}$$

Երկու մասնիկներից կազմված համակարգի համար՝

$$\vec{R}_{qկ} = (M_1\vec{r}_1 + M_2\vec{r}_2)\,/\,(M_1 + M_2) \tag{9}$$

Ըստ ժամանակի դիֆֆերենցելով (9) –ը կստանանք՝

$$\dot{\vec{R}}_{qկ} = \sum_{n=1}^{N} M_n\vec{r}_n \;/\sum_{n=1}^{N} M_n = \sum_{n=1}^{N} M_n v_n \;/\sum_{n=1}^{N} M_n \tag{10}$$

Այստեղ գումար $\sum_{n=1}^{N} M_n v_n$ ներկայացնում է համակարգի լրիվ իմպուլսը: Արտաքին ուժերի բացակայության դեպքում համակարգի իմպուլսը պահպանվում է, դրա համար

$$\dot{R}_{qկ} = const \tag{11}$$

Այս հարաբերակցությունն արտահայտում է զանգվածների կենտրոնի հատկությունները: Զանգվածների կենտրոնի արագությունը հաստատուն է արտաքին ուժերի բացակայության դեպքում: Դա ճիշտ է, օրինակ ռադիոակտիվ միջուկների համար:Հեշտ է ցույց տալ (10) բանաձևից, որ զանգվածների կենտրոն արագությունը որոշվում է արդյունարար արտաքին ուժով , որը ազդում է համակարգի մասնիկների վրա:Եթե ուժ է ազդող n մասնիկների վրա, ապա դիֆֆերենցելով (10) ըստ ժամանակի մենք կստանանք՝

$$(\sum_n M_n)\ddot{\vec{R}}_{qկ} = \sum_n (M_n\vec{v}_n) = \sum_n F_n = F_{արտ} \tag{12}$$

Որտեղ աջից գումար դուրս են ընկնում բոլոր ներքին ուժերը (նյուտոնյան), ցանկացած երկու մարմնի վրա ազդող: Հիշեցնենք, որ Նյուտոնյան ուժերի դեպքում ուժը I մասնիկի վրա ազդող j մասնիկի կողմից հավասար է հակառակ այն ուժին, որն ազդում է j մասնիկի վրա I մասնիկի կողմից:

Դիտարկենք մի քանի խնդիրների օրինակներ:

1.Շարժվող մասնիկը բախվում է դադարի վիճակում գտնվող նույն զանգվածով մասնիկի, հետևաբար բախումը բացարձակ առանձգական է: Ցույց տանք, որ բախումից հետո մասնիկները թռչում են ուղիղ անկյան տակ: Երկմասնիկային բախումների անալիզի

համար օգտակար է օգտվել հետևյալ լոգարիթմից:

ա) Պետք է գտնել զանգվածների կենտրոնի համակարգի $v_{qկ}$ արագությունը,

բ)$\vec{v}_1$ և $\vec{v}_2$ արագություններից հանենք $\vec{v}_{qկ}$, որպեսզի գտնենք զանգվածների կենտրոնի համակարգի սկզբնական արագությունները $\vec{v}_1'$ և $\vec{v}_2'$:

գ)Երկու մասնիկների իմպուլսները հավասար են մեծությամբ և հակառակ ուղղությամբ:

դ)Տեղի է ունենում բախում , որի արդյունքում՝ $\vec{v}_1'$ $\vec{v}_2'$ վեկտորական մեծությունը մեծանում, փոքրանում կամ մնում է նույնը կախված էներգիայի փոփոխությունից բախման գործընթացում: Մեծացրեք $\vec{v}_{qկ}$k արագությունները $\vec{v}_1'$ և $\vec{v}_2'$ զանգվածների կենտրոն համակարգում բախումից հետո: Ստանում ենք $\vec{v}_1$ և $\vec{v}_2$ արագությունները բախումից հետո լաբորատոր համակարգում:

Ենթադրենք v-ն թռչող մասնիկի արագությունն է : Գտնենք $\vec{v}_{qկ}$:

Բացարձակ առանձգական բախումից հետո համակարգի մասնիկների արագությունները մնում են անփոփոխ մեծությամբ ($\vec{u}_1' = \vec{u}_2' = \frac{\vec{v}}{2}$), բայց շարժման ուղղությունը փոխվում է : Որպեսզի անցնենք լաբորատոր համակարգի պետք է u_1' և u_2' արագությունները մեծացնել k – ով :

$$\vec{u}_1' = i\frac{v}{2}\cos\alpha + \vec{j}\frac{v}{2}\sin\alpha$$

$$\vec{u}_2' = -i\frac{v}{2}\cos\alpha - \vec{j}\frac{v}{2}\sin\alpha$$

Լաբորատոր համակարգում՝

$$\vec{u}_1 = \vec{\imath}\frac{v}{2}\cos\alpha + \vec{j}\frac{v}{2}(1+\sin\alpha)$$

$$\vec{u}_2 = -\vec{\imath}\frac{v}{2}\cos\alpha + \vec{j}\frac{v}{2}(1-\sin\alpha)$$

Այստեղից երևում է, որ $u_1 * u_2 = 0$, որտեղից հետևում է, որ u_1 և u_2 վեկտորները ուղղահայաց են :

Դիտարկենք նաև մեկ այլ լուծում, որի դեպքում պետք չէ անցնել զանգվածների կենտրոնի համակարգի : Իմպուլսի պահպանման օրենքից ունենք , որ $\vec{V}$=$\vec{u}_1$ + $\vec{u}_2$:

Երկու կողմերը բարձրացնելով քառակուսի կստանանք՝

$$v^2 = u_1^2 + u_2^2 + 2(\vec{u}_1 \cdot \vec{u}_2)$$

Հեռացնենք ստացված արտահայտությունից մյուս հավասարությունը: Լինելով էներգիայի պահպանման օրենքի հետևանք, $v^2 = u_1^2 + u_2^2$, կգտնենք ($u_1 * u_2$)=0, ուրեմն $\vec{u}_1$ և $\vec{u}_2$ վեկտորները ուղղահայաց են :

2.m_1=2 կգ զանգվածով մասնիկը շարժվում է $\vec{v}_1 = 3\vec{\imath} + 2\vec{j} - \vec{k}$ մ/վ արագությամբ և ունի բացարձակ ոչ առանձգական բախում մյուս մասնիկի նկատմամբ,որի զանգվածը՝ m_2= 3 կգ, իսկ արագությունը $\vec{v} = -2\vec{\imath} + 2\vec{j} + 4\vec{k}$: Գտնել ստացված մասնիկի արագությունը:

Տվյալ դեպքում պահպանման օրենքից վեկտորական տեսքը հետևյալն է՝

$$m_1\vec{v}_1 + m_2\vec{v}_2 = (m_1 + m_2)\vec{v}$$

$$\vec{v} = \frac{m_1\vec{v}_1 + m_2\vec{v}_2}{m_1 + m_2} = 2(\vec{j} + \vec{k})(\text{ մ/վ})$$

Հիմա գտնենք մասնիկների կինետիկ էներգիան մինչ բախումը զանգվածների կենտրոնի համակարգում:

Կինետիկ էներգիան մինչ բախումը հավասար է՝

$$T_{qկ} = \frac{1}{2}m_1v_1^2 + \frac{1}{2}m_2v_2^2,$$

Որտեղ v_1' և v_2' զանգվածների կենտրոն համակարգում մասնիկների արագություններն

են: Նշենք , որ v –ն զանգվածների կենտրոնի արագությունն է՝ $v_{զ.կ}$, հետևաբար՝

$$\vec{v}_1' = \vec{v}_1 - \vec{v} = 3\vec{\imath} - 3\vec{k}$$

$$\vec{v}_2' = \vec{v}_2 - \vec{v} = -2\vec{\imath} + 2\vec{k}$$

$$T_{զկ} = 30 \ (Ջ)$$

3. m=1 կգ զանգվածով մասնիկը շարժվում է դեպի հյուսիս 6 մ/վ արագությամբ և բախվում է դադարի վիճակում գտնվող m = 2 կգ զանգվածով մասնիկին : Բախումից հետո փոքր զանգվածով մասնիկը շարժվում է 45 աստիճան անկյան տակ իր սկզբնական ուղղության ուղղությամբ 2,82 մ/վարագությամբ:

ա)Ինչի՞ է հավասար 2 կգ զանգված ունեցող մասնիկի արագությունը :

բ) Զանգվածների կենտրոն համակարգի կինետիկ էներգիայի որ մասն է կորչում ոչ առանձգական բախման պատճառով :

Ընտրենք համակարգի կոորդինատ, որտեղ y առանցքն ուղղված է դեպի հյուսիս,իսկ x-ը՝ դեպի հարավ: Այս համակարգում առաջին մասնիկի արագության կոորդինատը մինչ բախումը և բախումից հետո հավասար է՝

$$\vec{v}_1 = 6\vec{j}\text{մ/վ} \ , \quad \vec{u}_1 = 2\vec{\imath} + 2\vec{j}\text{մ/վ}$$

ա)Բախումից հետո ծանր զանգված ունեցող մասնիկի u_2 արագությունը կորոշենք՝ օգտվելով իմպուլսի պահպանման օրենքից :

$$m_1\vec{v}_1 = m_1\vec{v}_1 + m_2\vec{v}_2,$$

որտեղից՝

$$\vec{u}_2 = \frac{m_1(\vec{v}_1 - \vec{u}_1)}{m_2} = -1 + 2\vec{j}\text{մ/վ}$$

Այդ արագության մեծությունը՝

$$u_2 = \sqrt{1^2 + 2^2 =}\sqrt{5}\text{մ/վ}$$

բ) Հաշվի առնելով , որ

$$\vec{v}_{զ.կ} = \frac{m_1\vec{v}_1}{m_1 + m_2} = 2\vec{j}\text{մ/վ}$$

գտնենք զանգվածների կենտրոն համակարգում մասնիկների արագությունները բախումից առաջ և հետո :

$$\vec{v}_1' = 4j \text{ մ/վ}, \ u_1' = 2i \text{ մ/վ}$$

$$v_2' = -2\vec{j}\text{մ/վ}, \vec{u}_2' = -\vec{\imath}\text{մ/վ}$$

Կինետիկ էներգիան մինչ բախումը զանգվածների կենտրոն համակարգում հավասար է՝

$$T_{զկ} = \frac{1}{2}m_1v_1^2 + \frac{1}{2}m_2v_2^2 = 12 \text{ Ջ}$$

Բախումից հետո՝

$$T'_{զկ} = \frac{1}{2}m_1u_1^2 + \frac{1}{2}m_2u_2^2 = 3 \text{ Ջ}$$

Կինետիկ էներգիայի կորուստը՝

$$\Delta T = T_{զկ} - T'_{զկ} = 9 \text{ Ջ}$$

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ландау Л. Д. и Лимиу Е. М. " Наука " 1969
2. Берклебский, Курс физики Механика 1 том.

Ալիսիա Դադայան
ԱրՊՀ ,Բնագիտական ֆակուլտետ
«Մաթեմատիկա» բաժին, 3-րդ կուրս
Ղեկավար՝ ֆ.մ.գ.թ. դոցենտ Լ.Ռ.Աբրահամյան
alisia.dadayan@mail.ru
dadayanalisia@gmail.com

$\begin{pmatrix} a & b \\ -b & a \end{pmatrix}$ ՏԵՍՔԻ ՄԱՏՐԻՑՆԵՐԻ ԴԱՇՏԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

Բանալի բառեր՝ *մատրից, դաշտ, աբելյան խումբ, օղակ, օղակային աքսիոմներ, ձախ և աջ բաշխական օրենքներ:*

Ընդհանրապես, մատրիցների բազմությունը գումարման և բազմապատկման գործողությունների նկատմամբ դաշտ չի կազմում: Ներկա աշխատանքում դիտարկված է այնպիսի մատրիցների բազմությունը, որը կազմում է դաշտ մատրիցների գումարման և բազմապատկման գործողությունների նկատմամբ:

Алисия Дадаян

ПОСТРОЕНИЕ ПОЛЯ МАТРИЦЫ $\begin{pmatrix} a & b \\ -b & a \end{pmatrix}$ *ВИДА*

Ключевые слова: *матрица, поле, группа Абеля, кольцо, аксиомы кольца, законы распределения слева и справа.*

В общем случае множество матриц относительно операций умноженения и суммы не является полем. В данной работе расматривается множество таких матриц, которые составляют поле относительно суммы и умножения матриц.

Ոչ դատարկ Q բազմությունն իր մեջ որոշված երկու գործողությունների հետ մեկ-տեղ (որոնցից մեկը կոչվում է «գումար» և նշանակվում է + նշանով,իսկ մյուսը՝ «արտա-դրյալ» և նշանակվում է $\cdot$ նշանով) կոչվում է ***օղակ*** և նշանակվում է Q (+,$\cdot$)-ով, եթե տեղի ունեն հետևյալ պայմանները (որոնք կոչվում են *օղակային աքսիոմներ*).

1. *Գումարման զուգորդականությունը՝*

$$(x+y)+z = x+(y+z)$$

կամայական $x, y, z \in Q$ տարրերի համար;

2. *Գումարման տեղափոխականությունը՝*

$$x+y = y+x$$

կամայական $x, y \in Q$ տարրերի համար;

3. Գոյություն ունի այնպիսի $0 \in Q$ տարր,որ

$$x+0 = x$$

կամայական $x \in Q$ տարրի համար;

4. Յուրաքանչյուր $a \in Q$ տարրի համար գոյություն ունի այնպիսի $-a \in Q$ տարր, որ

$$a+(-a) = 0;$$

5. *Ձախ և աջ բաշխական օրենքները՝*

$$x(y+z) = xy+xz,$$
$$(y+z)x = yx+zx$$

կամայական $x, y, z \in Q$ տարրերի համար:

0 տարրը կոչվում է *օղակի զրո կամ զրոյական տարր*, իսկ $-a$ տարրը կոչվում է a-ի հակադիր տարր: Եթե Q (+,$\cdot$)-ը օղակ է, ապա + և $\cdot$ գործողությունները կոչվում են

օղակային գործողություններ՝ որոշված Q-ի վրա (մեջ):

Օղակի զրոյից տարբեր բոլոր տարրերը կոչվում են *նրա ոչ զրոյական տարրեր*:

Q (+,•) օղակը կոչվում է ***զրոյական***,եթե Q բազմությունը 1-տարրանի է՝ $Q = \{0\}$: Հակառակ դեպքում օղակը կոչվում է ***ոչ զրոյական***: Օղակը կոչվում է ***միավորով օժտված***,եթե նրա արտադրյալ գործողությունն ունի միավոր: Հակառակ դեպքում օղակը կոչվում է ***առանց միավորի***:

Օղակը կոչվում է ***տեղափոխական***, եթե նրա արտադրյալը գործողությունը տեղափոխական է : Հակառակ դեպքում օղակը կոչվում է ***ոչ տեղափոխական***:

Օղակը կոչվում է ***զուգորդական***, եթե նրա արտադրյալը գործողությունը զուգորդական է: Հակառակ դեպքում օղակը կոչվում է ***ոչ զուգորդական***:

Q (+,•) օղակը կոչվում է (օժտված) ***զրոյի բաժանարարներով***, եթե գոյություն ունեն այնպիսի $a, b \epsilon Q$ ոչ զրոյական տարրեր,որ $a \bullet b = 0$(և այս դեպքում a, b ոչ զրոյական տարրերը կոչվում են զրոյի բաժանարարներ): Հակառակ դեպքում՝ Q (+,•) օղակը կոչվում է ***առանց զրոյի բաժանարարների***՝ (կամ զրոյի բաժանարարներ չունեցող)՝

$$a \bullet b = 0 \rightarrow a = 0 \text{ կամ } b = 0, \text{որտեղ } a, b \in Q:$$

Ոչ զրոյական Q (+,•) օղակը կոչվում է ***դաշտ***, եթե նրա բոլոր ոչ զրոյական տարրերի Q^* բազմությունը *աբելյան խումբ* է՝օղակի արտադրյալ գործողության նկատմամբ, որը կոչվում է դաշտի արտադրյալային խումբ: Այսինքն՝ օղակը կլինի դաշտ այն և միայն այն դեպքում, եթե այն *զուգորդական է, տեղափոխական, միավորով օժտված և որի յուրաքանչյուր ոչ զրոյական տարր հակադարձելի է,* այսինքն՝ գոյություն ունի այնպիսի $a^/ \epsilon Q$ տարր, որ

$$a \bullet a^/ = a^/ \bullet a = e:$$

Այժմ ապացուցենք, որ $M = \left(\left\{\begin{pmatrix} a & b \\ -b & a \end{pmatrix} / a, b \in R\right\}, +, \bullet\right)$ բազմությունը գումարման և բազմապատկման գործողության նկատմամբ դաշտ է:

Որպեսզի ապացուցենք,որ M- ը դաշտ է,նախ և առաջ պետք է համոզվել,որ $M(+,\bullet)$ -ն օղակ է: Իսկ օղակ լինելու համար անհրաժեշտ է և բավարար, որ տեղի ունեն վերը նշված 5 պայմանները:

Դիցուք ունենք $X = \begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}, Y = \begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}, Z = \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix}$ մատրիցները :

1)Ցույց տանք,որ տեղի ունի գումարման զուգորդական օրենքը,այսինքն՝

$$(X + Y) + Z = X + (Y + Z), \forall X, Y, Z \in M;$$

Առանձին առանձին հաշվելով հավասարության աջ և ձախ մասերը կստանանք՝

$$(X + Y) + Z = \left(\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} + \begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}\right) + \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix} =$$

$$\begin{pmatrix} a_1 + a_2 & b_1 + b_2 \\ -b_1 - b_2 & a_1 + a_2 \end{pmatrix} + \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix} = \begin{pmatrix} a_1 + a_2 + a_3 & b_1 + b_2 + b_3 \\ -b_1 - b_2 - b_3 & a_1 + a_2 + a_3 \end{pmatrix},$$

Իսկ՝

$$X + (Y + Z) = \begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} + \left(\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix} + \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix}\right) =$$

$\begin{pmatrix} a_1 + a_2 + a_3 & b_1 + b_2 + b_3 \\ -b_1 - b_2 - b_3 & a_1 + a_2 + a_3 \end{pmatrix}$, քանի որ $a, b \in R$ և իրական թվերի բազմությունում գումարումը զուգորդական է, ապա այն զուգորդական կլինի նաև ցանկացած X, Y, Z

մատրիցների համար:

2) Նույն սկզբունքով կապացուցենք նաև գումարման տեղափոխականությունը՝

$$X+Y=Y+X$$

կամայական $X,Y\in M$ մատրիցների համար՝

$$X+Y=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}+\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_1+a_2 & b_1+b_2 \\ -b_1-b_2 & a_1+a_2 \end{pmatrix}$$

և

$$Y+X=\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}+\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_2+a_1 & b_2+b_1 \\ -b_2-b_1 & a_2+a_1 \end{pmatrix}$$

3) Իսկ այժմ գտնենք այնպիսի 0-ական մատրից, որ կամայական $X\in M$ մատրիցի համար՝ $X+0=X$ ՝

$$\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}+\begin{pmatrix} 0 & 0 \\ 0 & 0 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}$$

4)ըստ հաջորդ պայմանի պետք է գտնել այնպիսի $-X\in M$ տարր, որ՝ $X+(-X)=0$;

X մատրիցի հակադիր մատրիցը կլինի՝ $-X=\begin{pmatrix} -a_1 & -b_1 \\ b_1 & -a_1 \end{pmatrix}$,

իսկ $X+(-X)=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}+\begin{pmatrix} -a_1 & -b_1 \\ b_1 & -a_1 \end{pmatrix}=\begin{pmatrix} 0 & 0 \\ 0 & 0 \end{pmatrix}$

5) Եվ վերջապես պետք է ապացուցել ձախ և աջ բաշխական օրենքները՝

$$X\bullet(Y+Z)=X\bullet Y+X\bullet Z,$$

$$(Y+Z)\bullet X=Y\bullet X+Z\bullet X$$

Նախ ապացուցենք ձախ բաշխականությունը՝

$$X\bullet(Y+Z)=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}\bullet\left(\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}+\begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix}\right)=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}\bullet$$

$$\begin{pmatrix} a_2+a_3 & b_2+b_3 \\ -b_2-b_3 & a_2+a_3 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_1(a_2+a_3)-b_1(b_2+b_3) & a_1(b_2+b_3)+b_1(a_2+a_3) \\ -b_1(a_2+a_3)-a_1(b_2+b_3) & -b_1(b_2+b_3)+a_1(a_2+a_3) \end{pmatrix},$$

մյուս կողմից՝

$$X\bullet Y+X\bullet Z=\begin{pmatrix} a_1a_2-b_1b_2 & a_1b_2+b_1a_2 \\ -a_2b_1-a_1b_2 & -b_1b_2+a_1a_2 \end{pmatrix}+\begin{pmatrix} a_1a_3-b_1b_3 & a_1b_3+a_3b_1 \\ -a_3b_1-a_1b_3 & -b_1b_3+a_1\,a_3 \end{pmatrix}=$$

$$\begin{pmatrix} a_1(a_2+a_3)-b_1(b_2+b_3) & a_1(b_2+b_3)+b_1(a_2+a_3) \\ -b_1(a_2+a_3)-a_1(b_2+b_3) & -b_1(b_2+b_3)+a_1(a_2+a_3) \end{pmatrix}$$

այս 2 գործողություններից հետևում է՝ $X\bullet(Y+Z)=X\bullet Y+X\bullet Z$:

Համանման գործողություններ կատարելով՝ ապացուցում ենք նաև աջ բաշխականությունը՝ $(Y+Z)\bullet X=Y\bullet X+Z\bullet X$:

Ապացուցված պայմանների իրավասությունը փաստում է, որ $M(+,\bullet)$ -ն օղակ է, սակայն մեր խնդիրն է ապացուցել, որ այն դաշտ է: Դրա համար բավական է ապացուցել,որ այն կազմում է աբելյան խումբ օղակի բազմապատկման գործողության նկատմամբ,այսինքն՝ բազմապատկման գործողությունը պետք է լինի՝

1)տեղափոխական ,այսինքն ՝$X\bullet Y=Y\bullet X$;

Իրոք, կատարելով հաշվարկներ՝ կստանանք՝

$$X\bullet Y=\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}\times\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_1a_2-b_1b_2 & a_1b_2+b_1a_2 \\ -a_2b_1-a_1b_2 & -b_1b_2+a_1a_2 \end{pmatrix},\text{ իսկ}$$

$$Y\bullet X=\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}\times\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix}=\begin{pmatrix} a_1a_2-b_1b_2 & a_1b_2+b_1a_2 \\ -a_2b_1-a_1b_2 & -b_1b_2+a_1a_2 \end{pmatrix};$$

2) զուգորդական՝ $(X \bullet Y) \bullet Z = X \bullet (Y \bullet Z)$

$$(X \bullet Y) \bullet Z = \left(\begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} \bullet \begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix}\right) \bullet \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix} =$$

$$\begin{pmatrix} a_1a_2-b_1b_2 & a_1b_2+b_1a_2 \\ -a_2b_1-a_1b_2 & -b_1b_2+a_1a_2 \end{pmatrix} \bullet \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix} =$$

$$\begin{pmatrix} a_3(a_1a_2-b_1b_2)-b_3(a_1b_2+b_1a_2) & b_3(a_1a_2-b_1b_2)+a_3(a_1b_2+b_1a_2) \\ -a_3(a_2b_1+a_1b_2)-b_3(-b_1b_2+a_1a_2) & -b_3(a_2b_1+a_1b_2)+a_3(-b_1b_2+a_1a_2) \end{pmatrix}$$

$$X \bullet (Y \bullet Z) = \begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} \bullet \left(\begin{pmatrix} a_2 & b_2 \\ -b_2 & a_2 \end{pmatrix} \bullet \begin{pmatrix} a_3 & b_3 \\ -b_3 & a_3 \end{pmatrix}\right) = \begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} \bullet$$

$$\begin{pmatrix} a_2a_3-b_2b_3 & a_2b_3+b_2a_3 \\ -b_2a_3-a_2b_3 & -b_2b_3+a_2a_3 \end{pmatrix} =$$

$$\begin{pmatrix} a_1(a_2a_3-b_2b_3)+b_1(-b_2a_3-a_2b_3) & a_1(a_2b_3+b_2a_3)+b_1(-b_2b_3+a_2a_3) \\ -b_1(a_2a_3-b_2b_3)+a_1(-b_2a_3-a_2b_3) & -b_1(a_2b_3+b_2a_3)+a_1(-b_2b_3+a_2a_3) \end{pmatrix} =$$

$$\begin{pmatrix} a_3(a_1a_2-b_1b_2)-b_3(a_1b_2+b_1a_2) & b_3(a_1a_2-b_1b_2)+a_3(a_1b_2+b_1a_2) \\ -a_3(a_2b_1+a_1b_2)-b_3(-b_1b_2+a_1a_2) & -b_3(a_2b_1+a_1b_2)+a_3(-b_1b_2+a_1a_2) \end{pmatrix}$$

3) միավորով օժտված՝ $X \bullet X^{-1} = X^{-1} \bullet X = E = \begin{pmatrix} 1 & 0 \\ 0 & 1 \end{pmatrix}$;

Հակադարձ մատրիցը կլինի՝ $X^{/} = \begin{pmatrix} \frac{a}{a^2+b^2} & \frac{-b}{a^2+b^2} \\ \frac{b}{a^2+b^2} & \frac{a}{a^2+b^2} \end{pmatrix}$,

$$X \bullet X^{/} = \begin{pmatrix} a_1 & b_1 \\ -b_1 & a_1 \end{pmatrix} \bullet \begin{pmatrix} \frac{a}{a^2+b^2} & \frac{-b}{a^2+b^2} \\ \frac{b}{a^2+b^2} & \frac{a}{a^2+b^2} \end{pmatrix} = \begin{pmatrix} 1 & 0 \\ 0 & 1 \end{pmatrix}:$$

Եզրակացություն: $\begin{pmatrix} a & b \\ -b & a \end{pmatrix}$ տեսքի մատրիցների բազմությունը կազմում է դաշտ մատրիցների գումարման և բազմապատկման գործողությունների նկատմամբ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Մովսիսյան Յու.Մ., Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն;Երևան 2008թ.,732էջ:

ՀՏԴ 531 Բնագիտություն

Մարինե Կարապետյան
ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետ,
«Ֆիզիկա բաժին», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.պ. դոցենտ Ա.Ա.Ալեքսանյան

ԲԵՐՎԱԾ ԶԱՆԳՎԱԾԸ ԵՐԿՈՒ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԽՆԴՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *բերված զանգված, զանգվածների կենտրոն, կենտրոնական ուժեր, առանձգական ուժեր, իներցիալ համակարգ, մոլեկուլների տատանողական հաճախություն, երկու մարմնի խնդիր, մոլեկուլի ուժային հաստատուն, շառավիղ-վեկտոր:*

Դասական մեխանիկայում երկու մարմների խնդիրը կայանում է հետևյալում՝ որոշել երկու կետային մասնիկների շարժումը , որոնք փոխազդում են միայն մեկը մյուսի հետ: Երկու մարմիների շարժման ուսումնասիրման արդյունքում պարզվել է, որ երկու մարմնի խնդիրը ներկայացվում է որպես մեկ մարմնի՝ երկու իրարից անկախ խնդիրներ՝ զանգվածների կենտրոնի շարժումը և երկու մարմնի մինչև հեռավորության վեկտորի շարժումը:

Марине Карапетян

ПРИВЕДЕННАЯ МАССА В ЗАДАЧЕ ДВУХ ТЕЛ

Ключевые слова*-приведенная масса,центр масс, центральные силы, отдельные силы, инерционная система, колебательная частота молекул, задача двух тел, постоянная силы молекулы, радиус-вектор.*

В классической механике функция двух тел состоит в определении движения двух точечных частиц, которые взаимодействуют только друг с другом. Исследование движения двух тел показало, что задача двух тел представлена как две независимые задачи одного тела. Как показано, эта задача делится на две части движение центра масс и движение вектора расстояние между двумя телами.

Հայտնի է, որ դասական մեխանիկայում երկու մարմինների խնդրի իմաստը կայանում է հետևյալում՝ որոշել միայն իրար հետ փոխազդող երկու նյութական կետերի շարժումը:

Տարածված օրինակներից են՝ արբանյակի պտույտը մոլորակի շուրջը, դասական էլեկտրոնի շարժումը ատոմային միջուկի շուրջը: Երկու մարմնի խնդիրը ներկայացվում է որպես մեկ մարմնի՝ երկու իրարից անկախ խնդիրներ:

Թող $\mathbf{r}_1$ և $\mathbf{r}_2$ երկու մարմնի շառավիղ-վեկտորներն են, իսկ m_1 և m_2 համապատասխան զանգվածները: Մեր նպատակն է որոշել $r_1(t)$, $r_2(t)$ հետագիծը ցանկացած t ժամանակահատվածում, տվյալ նախնական կոորդինատների համար:

$\mathbf{r}_1(0)$; $\mathbf{r}_2(0)$

և արագությունը՝

$\dot{\mathbf{r}}_1(0)$ $\dot{\mathbf{r}}_2(0)$

Նյուտոնի II օրենքը կիրառվում է այդ համակարգում, որը պնդում է որ՝

$\mathbf{F}_{12}(r_1, r_2)=m_1\ddot{\mathbf{r}}_1$(1)

$\mathbf{F}_{21}(r_1, r_2)=m_2\ddot{\mathbf{r}}_2$(2)

Որտեղ՝

$\mathbf{F}_{12}$ - երկրորդ մարմնի հետ փոխազդեցության պատճառով առաջին մարմնի վրա գործող ուժն է,

$\mathbf{F}_{21}$- առաջին մարմնի կողմից երկրորդ մարմնի վրա գործող ուժն է:

Գումարելով և հանելով այդ երկու հավասարումները՝ կարելի է բաժանել մեկ խնդիրը երկու խնդրի մեկ մարմնում, որոնք կարելի է լուծել իրարից անկախ:

(1) և (2) հավասարումները հանգեցնում է զանգվածների կենտրոնի շարժումը

նկարագրող հավասարման: Ի տարբերություն դրա (2) հավասարումից հանելով (1)-ը բերում է այն հավասարման, որը նկարագրում է թե ինչպես է $\mathbf{r}=\mathbf{r}_1-\mathbf{r}_2$ վեկտորը՝ այսինքն՝ զանգվածների միջև հեռավորություն փոփոխվում ժամանակի ընթացքում:

I խնդիր- զանգվածների կենտրոնի շարժումը:

Գումարելով (1) և (2) հավասարումները կստանանք՝

$$m_1\ddot{\boldsymbol{r}}_1+m_2\ddot{\boldsymbol{r}}_2=(m_1+m_2)\ddot{\boldsymbol{r}}_{\text{զ.կ.}}=\mathbf{F}_{12}+\mathbf{F}_{21}=0$$

այստեղ մենք օգտագործել ենք Նյուտոնի III օրենքը՝ $F_{12}=-F_{21}$, որտեղ՝

$$\mathbf{r}_{\text{զ.կ.}}\frac{m_1\boldsymbol{r}_1+m_2\boldsymbol{r}_2}{m_1+m_2}$$

$\mathbf{r}$-ը համակարգի զանգվածների կենտրոնի դիրքը որոշող շառավիղ-վեկտորն է:

Վերջնական տեսքով հավասարումը գրանցվում է հետևյալ կերպ $\ddot{\boldsymbol{r}}_{\text{զ.կ.}}=0$: Դա ցույց է տալիս, որ զանգվածների կենտրոնի արագությունը $\dot{\boldsymbol{r}}_{\text{զ.կ.}}$ հաստատուն է: Այստեղից հետևում է, որ շարժման քանակի մոմենտը $m_1\dot{\boldsymbol{r}}_1+m_2\dot{\boldsymbol{r}}_2$ նույնպես պահպանվում է: Զանգվածների կենտրոնի դիրքը և արագությունը կարելի է ստանալ ցանկացած պահի:

Մասնիկների միջև $\vec{r}$ հեռավորության շարժումը:

(1) հավասարումից հանելով (2)–ը և վերափոխելով՝ մենք հանգում ենք հետևյալ հավասարմանը՝

$$\ddot{\boldsymbol{r}}_1-\ddot{\boldsymbol{r}}_2=\left(\frac{\boldsymbol{F}_{12}}{m_1}+\frac{\boldsymbol{F}_{21}}{m_2}\right)=\left(\frac{1}{m_1}+\frac{1}{m_2}\right)$$

Որտեղ մենք նորից օգտագործեցինք Նյուտոնի III օրենքը՝ $\mathbf{F}_{12}=-\mathbf{F}_{21}$, որտեղ r-ը տեղափոխման վեկտորն է , որն ուղղված է երկրորդ մարմնից դեպի առաջինը:

Երկու մարմնի միջև ուժը պետք է լինի միայն ֆունկցիա r-ից այլ ոչ բացարձակ r_1 և r_2-ից, հակառակ դեպքում խնդիրը չունի տրանսլյացիոն սիմետրիա, այսինքն՝ ֆիզիկայի օրենքները կփոխվեն մի կետից մյուսը:

Այսպիսով՝ մենք կարող ենք գրել՝

$$m\ddot{\boldsymbol{r}}=\mathbf{F}_{12}(\mathbf{r}_1,\mathbf{r}_2)=\mathbf{F}(\mathbf{r})$$

որտեղ m-ը բերված զանգվածն է:

$$\mu=\frac{1}{\frac{1}{m_1}+\frac{1}{m_2}}=\frac{m_1\ m_2}{m_{1+}\ m_2}$$

Հենց որ մենք գտնենք լուծում $r_{\text{զ.կ}}(t)$ և r(t) համար, սկզբնական հետագիծը կարող ենք գրել հետևյալ տեսքով՝

$$\mathbf{r}_1(t)=\mathbf{r}_{\text{զ.կ.}}(t)+\frac{m_2}{m_{1+m_2}}\mathbf{r}(t)$$

$$\mathbf{r}_2(t)=\mathbf{r}_{\text{զ.կ.}}(t)+\frac{m_2}{m_{1+m_2}}\mathbf{r}(t)$$

Խնդիր

Հաշվարկման համակարգում x առանցքի երկայնքով շարժվում են m_1 և m_2 զանգվածներով մասնիկներ, համապատասխան $\boldsymbol{v}_1$ և $\boldsymbol{v}_2$ արագություններով: Գտնել՝

ա) ի՞նչ $\vec{v}$ արագությամբ պետք է շարժվի S՝ հաշվանքի համակարգը, որ նրանում մասնիկների գումարային կինետիկ էներգիան լինի մինիմալը:

բ) S՝ համակարգում մասնիկների գումարային կինետիկ էներգիան:

Լուծում: Մասնիկների գումարային կինետիկ էներգիան S համակարգում կլինի՝

$$K=\frac{m_1v_1^2}{2}+\frac{m_2v_2^2}{2}=\frac{m_1x_1^2}{2}+\frac{m_2x_2^2}{2} \qquad (1)$$

Մասնիկների միջև հեռավորությունը հավասար է՝

$$x=x_1-x_2 \qquad (2)$$

S/ համակարգի սկզբնակետը տեղադրենք մասնիկների զանգվածների կենտրոնում՝

$$X=\frac{m_1 x_1+m_2 x_2}{m_1+m_2} \qquad (3)$$

(2)-ից և (3) –ից գտնում ենք, որ

$$x_1=\frac{m_1}{m_1+m_2}x+X\ ,\ x_2=-\frac{m_1}{m_1+m_2}+X \qquad (4)$$

և համապատասխան մասնիկների արագությունները

$$v_1=\frac{m_2}{m_{1+}m_2}\dot{x}+\dot{X}=\frac{m_2}{m_{1+}m_2}v_0+V, \qquad (5)$$

$$v_1=-\frac{m_1}{m_1+m_2}x+\dot{X}=-\frac{m_1}{m_1+m_2}v_0+V$$

v_0 մասնիկների հարաբերական արագությունը և V զանգվածների կենտրոնի արագությունը:

ա)կինետիկ էներգիայի արժեքը S/ համակարգում հավասար է

$$K'=\frac{m_1}{2}(v_1+V)^2+\frac{m_2}{2}(v_2+V)^2 \qquad (6)$$

$\frac{dK'}{dV}=0$ պայմանից կգտնենք, որ

$$V=\frac{m_1v_1+m_2v_2}{m_{1+}m_2} \qquad (7)$$

Այսինքն կշարժվի զանգվածների կենտրոնի արագությամբ:

բ)տեղադրելով (5)-ը (1)-ում կստանանք S' համակարգում կինետիկ էներգիայի գումարային արժեքը՝

$$K'=\frac{m_{1+}m_2}{2}V^2+\frac{\mu}{2}|v_2-v_1|^2 \qquad (8)$$

Որտեղ $\mu=\frac{m_1m_2}{m_1+m_2}$ բերված զանգվածն է:

Այն պատճառով, որ զանգվածների կենտրոնի արագությունը կարելի է ընդունել հավասար զրոյի, գտնում ենք, որ

$$K'=\frac{\mu}{2}|v_2-v_1|^2 \qquad (9)$$

Երկու մոլեկուլների տատանումները

Երկու ատոմներ միացված են հաստատուն մոլեկուլներով, որոնք օժտված են պոտենցիալ էներգիաներով, որն իրենից ներկայացնում է $r-r_0$ տարբերության քառակուսային ֆունկցիա, որտեղ r-ը իրական տեղափոխությունն է, իսկ r_0-ն՝ հավասարակշռության տեղափոխությունը:

$$U(r)=C(r-r_0)^2/2 \qquad (1)$$

Եթե $(r-r_0)^2<<1$: Ուժը, որը համապատասխանում է այդ պոտենցիալ էներգիային, ուղղված է ուղղի երկայնքով՝ միացնելով ատոմները, իսկ նրա նշանակությունը որոշվում է հետևյալ հավասարությունից (եթե մոլեկուլները չեն պտտվում):

$$F=-dU/d(r-r_0)=-C(r-r_0) \qquad (1.1)$$

(1) և (1.1) հավասարությունները հանգեցնում են այնպիսի հավասարման, որն իրենից ներկայացնում է հարմոնիկ օսցիլատոր C հաստատունով: Ինչպիսի՞ն է այդ օսցիլատորի տատանումների հաճախականությունը, եթե ատոմների զանգվածները հավասար են M_1 և M_2:Ազատ տատանումների ժամանակ երկու ատումները գտնվում են շարժման մեջ, իսկ նրանց զանգվածների կենտրոնը անշարժ է: Կարելի է պատկերացնել երկու ատոմներից կազմված մոլեկուլների շարժումը հետևյալ տեսքով՝ $\mu\frac{d^2r}{dt^2}=-\frac{GM_1M_2}{r^2}\hat{r}$ փոխարինելով ձգողական ուժը (1.1)

բանաձևով, կստանանք հետևյալ հավասարումը՝

$$\mu\frac{d^2r}{dt^2}=\frac{d^2r}{dt^2}\hat{r} \qquad (1.2)$$

Եթե մոլեկուլները չեն պտտվում r-ի ուղղությունը մնում է անփոփոխ հետևյալ պայմանով՝

$$\mu\frac{d^2r}{dt^2}=-C(r-r_0) \qquad (1.3)$$

Օգտվելով (1.2) բանաձևի հարաբերությունը (1.3)-ի՝ կարող ենք հավասարումը ներկայացնել հետևյալ տեսքով.

$$\omega_0=(C/\mu)^{1/2} \qquad (1.4)$$

Սպեկտրալ չափումներից հայտնի է, որ HF և HCl մոլեկուլների ընդհանուր տատանումների հաճակությունը հավասար է՝

$$V_0(HF)=\omega_0/2\pi=1.202*10^{14}c^{-1}$$

$$V_0(HCl)=\omega_0/2\pi=0,871*10^{14}c^{-1}$$

Օգտագործենք այդ տվյալները, որպեսզի համեմատենք C_{HF} և C_{HCl} ուժային հաստանուները: Որոշենք այս ատոմների բերված զանգվածները՝

$$\frac{1}{\mu_{HF}}\approx\frac{1}{1}+\frac{1}{19}\approx\frac{20}{19}\mu_{HF}\approx0.950$$

$$\frac{1}{\mu_{HCl}}\approx\frac{1}{1}+\frac{1}{35}\approx\frac{36}{35}\mu_{HF}\approx0.973$$

Քլորի համար մենք ընտրել ենք ատոմային զանգվածի ամենատարածված իզոտոպը ^{35}Cl: Նկատելի է, որ այդ օրինակում զանգվածները չափով մոտիկ են միմյանց: Դա այդպես է ստացվել, որովհետև տատանումների գլխավոր դերում ջրածնի ատոմն է, որը մոլեկուլների մեջ ամենաթեթևն են: Հիմա (1.4) բանաձևի միջոցով կարող ենք հաշվել հաստատուն ուժերի հարաբերությունը.

$$\frac{c_{HF}}{c_{HCl}}=\frac{(\mu\omega_0^2)_{HF}}{(\mu\omega_0^2)_{HCl}}\approx\frac{54.0*10^{28}}{29.0*10^{28}}\approx1.86 \qquad (1.5)$$

Իսկ մոլեկուլների ուժային հաստատունը HF-ի համար հավասար է

$$C_{HF}=(54.0*10^{28})*(1.66*10^{-24})\ \text{դին/սմ}\approx9*10^5\ \text{դին/սմ} \qquad (1.6)$$

Այստեղ օգտագործել ենք գործակից , որտեղ զանգվածը վերափոխվել է գրամների:

Ճիշտ ենք ստացել C-ն: Ենթադրենք ,որ մենք ձգում ենք մոլեկուլները (որն ունի մոտ 1$\dot{A}$, այսինքն՝ $1*10^{-8}$ սմ) 0.5 $\dot{A}$ դեպքում: Աշխատանքը , որը ծախսվել է երևի կլինի բավարար, որպեսզի մոլեկուլները բաժանվեն H և F ատոմների: Համաձայն (1.1) ձգողության աշխատանքը պետք է լինի 0,5$\dot{A}$ -ի :

$$(1/2)\ C\ (r-r_0)^2\approx(1/2)(9*10^5)/(0,5*10^{-8})^2\text{էրգ}\approx1*10^{-11}$$

Կամ

$$(1*10^{-11})\ \text{էվ}/(1,6*10^{-12})\approx 6\ \text{էվ}$$

Այդ գնահատման հաշվարկներում մենք օգտվել ենք (1.6) հավասարումից:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ландау Л. Д. и Лифшу Е. М., М, «Наука», 1963.
2. Беркеелевский, Курс физики, Механика.
3. Մեխանիկայի ֆիզիկական հիմունքներ, Ստեփանակերտ, ԱրՊՀ հրատարակչություն, 2012.

ՀՏԴ 581.9(479.25) Բնագիտություն

Տաթևիկ Ղազարյան
ՎՊՀ, Կենսաբանաքիմիական ֆակուլտետ,
«Կենսաբանություն բաժին», 4-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ գ.գ.թ., դոցենտ Լիլիյա Բայրամյան

ՎԱՆԱՁՈՐԸ ՇՐՋԱՊԱՏՈՂ «ՂՌԵՐ» ՏԵՂԱՄԱՍԻ ԽՈՏԱԲՈՒՅՍԵՐԻ ԷԿՈԼՈԳԻԱԿԱՆ ՄՈՆԻԹՈՐԻՆԳ

Բանալի բառեր՝ *քսերոֆիտներ, մեզոքսերոֆիտներ , «Ղռեր» տեղամաս, պոլիդոմինանտ ֆիտոցենոզ, մարդու տնտեսական գործունեություն*

Մինչ այժմ «Ղռեր» տեղամասում տափաստանների ֆլորան հանգամանորեն չի ուսումնասիրվել: Քաղաքի շրջակայքի խոտածածկ բուսականության վիճակը չի կարելի բավարար համարել:

Մեր կողմից «Ղռեր» տարածքում («Ժայռոտ արգելոց») ուսումնասիրվել է խոտածածկ բուսականության տեսակային կազմը: Որոշ ընտանիքներ ներկայացված են մեկ-երկու տեսակներով: Poaceae ընտանիքի բույսերը համատարած են լանջերին: Fabaceae ընտանիքի տեսակները կազմում են խոշոր տեղախմբեր:

Էկոլոգիական խնդրիների լուծումն անհնար է առանց լանջերի բուսածածկույթի հետազոտության:

Татевик Казарян

ЭКОЛОГИЧЕСКИЙ МОНИТОРИНГ ТРАВЯНИСТОЙ РАСТИТЕЛЬНОСТИ НА УЧАСТКЕ "ГРЕР" В ОКРЕСТНОСТЯХ ВАНАДЗОРА

Ключевые слова: *ксерофиты, мезоксерофиты, на участке "Грер", полидоминант фитоценоз, экономическая деятельность человека*

До настоящего времени целенаправленно флора степей в окрестностях Ванадзора, на участке "Грер" не изучалась. Состояние травянистой растительности нельзя назвать удовлетворительным. Нами исследован видовой состав травянистой растительности на участке "Грер" ("Скальный заказник"). Некоторые семейства представлены одним-двумя видами. Растения семейства Poaceae покрывают склоны повсеместно. Виды семейства Fabaceae представлены крупными популяциями.

Решение экологических задач невозможно без исследований растительного покрова склонов.

Վանաձորն իր մեծությամբ Հայաստանի երրորդ քաղաքն է: Այն գտնվում է Վանաձորի գոգավորությունում՝ Բազումի և Փամբակի լեռնաշղթաների միջև: Ծովի մակերևույթից բարձրությունը կազմում է 1350 մ:

Ուսումնասիրությունները կատարվել են 2018-2019 թթ. մայիս-հունիս ամիսներին: Հետազոտվել է Վանաձոր քաղաքին հարակից Բազումի լեռնաշղթայի «Ղռեր» կոչվող տեղամասի հարավահայաց և հյուսիսահայաց լանջերի լեռնային միջին գոտում տեղակայված չոր, քարքարոտ հատվածը [4]: 20-րդ դարի 30-ական թվականներին հարավահայաց լանջերը ստացան «Ժայռոտ արգելոց» անվանումը: Վանաձորի (նախկինում՝ Ղարաքիլիսա, Կիրովական) «Ղռերի» հարավահայաց լանջերը դեռևս վաղ անցյալում եղել են անտառապատ: 1988թ. երկրաշարժից հետո, 90-ական թվականներին «Ղռերի» մի հատվածում կառուցվեց *Տարոն* թաղամասը: «Ղռերի» բնական լանջերը ենթարկվեցին մարդածին ճնշման: Մինչ օրս լանջերին մնացել է շինարարական և

կուտակվում է կենցաղային աղբը:

Մերկացած լանջերը ենթարկվում են էրոզիայի և պիտանի չեն գյուղատնտեսական նպատակներով օգտագործման համար [1]: Լանջերը վեր են ածվել մեզոքսերոֆիտ տափաստանների: Բուսապատված են լանջերի 60-70 %-ը, խոտածածկը բաշխված է անհավասարաչափ:

Հետազոտվող հարավահայաց լանջերին ակնառու է բուսատեսակների թվի նվազում, բուսակազմի փոփոխություն: Հարավահայաց լանջերը ծածկված են բազմաթիվ չորասեր, փշոտ, թունավոր, հողային և ջրային անբարենպաստ պայմանների հանդեպ դիմացկուն բույսերով: Հյուսիսահայաց խոնավ լանջերի ֆիտոցենոզները պոլիդոմինանտ են՝ ներկայացված մարգագետնային բուսատեսակների բազմազան ընտանիքներով և տեսակներով: «Ղռերի» թույլ թեքության լանջերին որոշ տափաստանային և մարգագետնային տեսակների արեալները համընկնում են [3]: Դա է պատճառը, որ տվյալ տեղամասի ֆիտոցենոզը պոլիդոմինանտ է:

Հետազոտության մեթոդներն են՝

- երթուղային,
- տեղամասի ֆիտոցենոզի ֆլորիստական կազմի դաշտային նկարագրության մեթոդ,
- կազմվել է հերբարիում:

«Ղռեր» տեղամասում առանձնացվել են չորս փորձահրապարակներ՝ երկուսը հարավահայաց, երկուսը՝ հյուսիսահայաց, ընդհանուր 1000 մ^2 մակերեսով: Խոտածածկույթի վեգետացիայի ընթացքում փոփոխվում են բուսատեսակների ասպեկտները: Ամռան սկզբից նկատվում է տեսակների քանակի ավելացման միտում, հունիսի վերջին՝ նվազում :

Աշխատանքի արդիականությունը՝ հետազոտվող նյութը հնարավորություն է տալիս գնահատել մարդու տնտեսական գործունեության հետևանքները Լոռու մարզի լեռնային տափաստանների բուսականության բազմազանության վրա: Բնության ռեսուրսների ռացիոնալ օգտագործումը նպաստում է էկոհամակարգերի և առանձին տեսակների պահպանությանը, ապահովում է երկրի կայուն զարգացումը, ինչը կարևոր է բուսականության ցանկացած տիպի ֆլորիստական և ֆիտոցենոտիկ կազմը որոշելու համար [2]:

Աշխատանքի նպատակն է՝ հետազոտել Վանաձոր քաղաքին հարակից «Ղռեր» տեղամասի լանջերի խոտաբույսերի տեսակային կազմը և կատարել նրանց տեղախմբերի էկոլոգիական մոնիթորինգ:

Նպատակին հասնելու համար անհրաժեշտ է լուծել *մի քանի խնդիրներ՝*

- ներկայացնել «Ղռեր» տեղամասի աշխարհագրական դիրքը,
- ուսումնասիրել տեղամասի բույսերի տեսակային կազմը,
- տալ «Ղռեր» տեղամասի հիմնական տեսակների տեղախմբերի էկոլոգաֆիտոցենոտիկ բնութագիրը,
- բնութագրել դոմինանտ-էդիֆիկատոր տեսակների տեղախմբերի էկոլոգիական առանձնահատկությունները:

Աշխատանքի գիտական նորույթը՝

- ուսումնասիրվել է «Ղռեր» տեղամասի տափաստանային բուսականության խոտաբույսերի որոշ ներկայացուցիչների տարածման արեալը,
- կատարվել է հիմնական ներկայացուցիչների տակսոնոմիական վերլուծություն:

«Ղռերի» հյուսիսահայաց լանջերին բնորոշ են տարախոտերը: Ակնառու է, որ տեսակների քանակով գերակշռում են տարբեր ծաղկման շրջան ունեցող երկշաքիլ բույսերը: Միաշաքիլավորները խոտածածկույթում համատարած են՝ ներկայացված են *Poaceae* ընտանիքի *Bothriochloa ischaemum (L.) Keng, Festuca valesiaca Gaudin, Holcus lanatus L., Bromus scoparius L.* տեսակներով : Տեղախմբերը մեծ են, համատարած:

Լանջերի վրա որպես ուղեկցող տեսակներ հանդիպում են *Apiaceae* (հովանոցազգիներ) ընտանիքի *Peucedanum* ցեղի *Peucedanum ruthenicum Bieb.* և *Prangos ferulacea (L.) Lindl.* (Պրանգոս նարդեսանման) տեսակների տեղախմբերը: *Peucedanum ruthenicum Bieb*. (Մարգացնցնուղ վոլգյան) բազմամյա դեղաբույս է: Բույսը սովորաբար աճում է հյուսիսահայաց լանջերին: Տեսակները քարքարոտ լանջերին հանդիպում են օջախներով:

Asteraceae ընտանիքի բույսերն աճում են «Ղռեր» տեղամասի էրոզիայի ենթարկված լանջերին: Հաճախակի հանդիպում են անկանոն ցրված *Onopordum L.* ցեղի խոշոր փշերը: «Ղռերի» տարածքի հետազոտության ընթացքում պարզ երևում է, որ հարավահայաց և հյուսիսահայաց տարբեր աստիճանի խոնավության, լուսավորվածության լանջերին հանդիպում են *Asteraceae* ընտանիքի *Centaureae jacea L.* (Տերեփուկ մարգագետնային) տեսակի տարբեր տարիքի առանձնյակներից կազմված տեղախմբերը: Տեսակի էկոլոգիական ճկունությունը բավականին բարձր է: Չոր արևկող լանջերին բույսերը աճում են ցրված տեղախմբերով և հիմնականում ավելի շատ են ծերացող, հետգեներատիվ շրջանի բույսերը: Խոնավ տեղամասերում խիտ աճում են գեներատիվ տարիքի առանձնյակները: Գեներատիվ շրջանը տևում է երկար: Տեղախմբերը շատ դիմացկուն են, բույսերի ծաղկման շրջանը երկար է: Էրոզիայի ենթարկված հարավահայաց և հյուսիսահայաց լանջերին հանդիպում են *Achillea millefolium L.* տեսակի տեղախմբերը: *Cirsium ciliatum (Murray) Moench* մեղրատու տեսակի ներկայացուցիչները հանդիպում են ամենուրեք՝ խոնավ և չոր լնջերին:

Չոր լանջերին ձևավորվել են *Lamiaceae* ընտանիքի *Hyssopus angustifolius Bieb*. (Զոպա նեղատերև) և *Asteraceae* ընտանիքի *Artemisia absinthium L.* բույսերի խառը տեղախմբերը:

Քարքարոտ սակավաբույս բարձրադիր բլրակների վրա ամենուրեք տարածված են *Lamiaceae* ընտանիքի *Thymus L. ցեղի Thymus vulgaris L.* (Ուրց սովորական) համեմունքային տեսակի կիսաթփիկները: Բույսերը ծաղկում են հունիսին, գրավում են մեղուներին:

Հարավահայաց քարքարոտ, դեգրադացիայի ենթարկված լանջերին դոմինանտում են *Fabaceae* ընտանիքի *Astragalus L.* (գազ) ցեղի *Astragalus shagalensis Grossh.* տեսակի տեղախմբերը: *Astragalus shagalensis Grossh.* տեսակը իսկական տափաստանային բույս է, դեղաբույս: Բույսերի միջին բարձրությունը 15-30 սմ է [5]:

Astragalus galegiformis L. տեսակը մարգագետնատափաստանային մեզոֆիտներից է, հարմարված չէ բարձր ջերմաստիճանային և ցածր խոնավության պայմաններին, հանդիպում է «Ղռերի» հյուսիսահայաց լանջերի վերին սահմաններում:

«Ղռերի» տարածքը հետազոտելիս նկատեցինք, որ *Fabaceae* ընտանիքի *Trifolium L.* ցեղի *Trifolium pratense L.* տեսակի բույսերը գտնվում են ինչպես կոկոնակալած, այնպես էլ երիտասարդ գեներատիվ վիճակում: 25-30 սմ բարձրության բազմամյա բույսերը տարածվում են «Ղռերի» ինչպես հյուսիսահայաց, այնպես էլ չոր հարավահայաց լանջերին: Ծաղկման շրջանը ձգվում է գարունից մինչև խոր աշուն: Երեքնուկ մարգագետնային տեսակի բույսերը համարվում են հիմնական մեղրատուներ և դեղաբույսեր: *Trifolium pratense L.* տեսակի տեղախմբերը հանդիպում են միմյանցից մոտավորապես 1,20-2,55 մ հեռավորության վրա: Կան բույսերի ինչպես փոքր (մոտ 5-10 բույս), այնպես էլ մեծ տեղախմբեր (մոտ 30-100 բույս): Այսպիսով, տեղախմբի մեջ միջինը եղել է 10-30

առանձնյակ:

«Ղռերում» *Fabaceae* ընտանիքի *Securigera L.* ցեղի մեկ այլ ներկայացուցիչ է *Securigera varia (L) Lassen* (Քարառվույտ երփներանգ) ինվազիոն (ներթափանցած) տեսակը: Բույսերը ցրտադիմացկուն են՝ հարմարված Վանաձորի բնակլիմայական պայմաններին: *Securigera varia (L) Lassen* բույսերը մեզոֆիտներ են: Տեղախմբերը ցրված են հյուսիսահայաց, բայց լավ լուսավորված տեղամասերում:

Հունիսի կեսերին «Ղռերում» ծաղկում է *Onobrychis biebersteinii Sirjaev* (Կորնգան Բիբերշտեյնի) տեսակի բույսը և լանջերը ամբողջությամբ ծածկվում են վարդագույնով: *Onobrychis biebersteinii Sirjaev* տեղախմբերում համատեղ ծաղկում են *Ranunculaceae* ընտանիքի *Delphinium litwinovii Sambuk.* կապույտ ծաղիկները:

Հյուսիսային լանջերի խոնավ մարգագետինների ցածրադիր տեղամասերում տեղ-տեղ հանդիպում է *Rosaceae* ընտանիքի ցողունի 30-35 սմ բարձրության բազմամյա խոտաբույս *Filipendula hexapetala Gilib.* (Փրփրուկ տափաստանային) տեսակը: Մեղրատու դեղաբույս է: Երիտասարդ ընձյուղներն ուտելի են: 250 մ^2 մակերեսի վրա հանդիպում են տարբեր տարիքային խմբերից մոտավորապես 70-130 առանձնյակներ:

2018-19թթ. լանջերին համատարած են անտառային մորու *Fragaria vesca L.* բույսերը: Շատ ճկուն տեսակ է: Այն հանդիպում է ինչպես անտառում, այնպես էլ «Ղռերի» չոր էրոզացված լանջերին: «Ղռերի» տարածքում հանդիպել ենք մորու և՛ կոկոնակալած, և՛ ծաղկած ձևերին:

Մայիս-հունիսին չոր լանջերին գեղեցիկ մուգ կարմիր ծաղիկներ են առաջացնում *Boraginaceae* (Գորտնուկազգիներ) ընտանիքի *Echium maculatum L.* (Իժախոտ ռուսական) տեսակի բույսերը: Մեզոքսերոֆիտ, հելիոֆիտ, էնտոմոֆիլ բույս է: Տեղ-տեղ հանդիպում է *Euphorbiaceae* (Իշակաթնուկազգիներ) ընտանիքի *Euphorbia iberica Boiss* (Իշակաթնուկ վրացական) բազմամյա դեղաբույսը [6]: Քսերո- և թերմոֆիտ բույսեր են: Տեղախումբը կազմված է 6-7 առանձնյակներից:

Վերջին տարիներին, անասնապահության կրճատման հետևանքով, «Ղռերի» լանջերին աճող խոտաբուսատեսակների տեղախմբերի մակերեսը մեծացել է: Բայց լանջերին չենք հանդիպել որևէ տեսակի տեղախմբի մեծ արեալ: Բոլոր բուսատեսակների տեղախմբերը ցրված են և փոքր [7]:

Կատարած աշխատանքի արդյունքների հիման վրա կատարվել է «Ղռեր» տեղամասի բույսերի դասակարգում, որը հաստատվում է հերբարիումային նմուշներով (աղ.1):

Աղյուսակ 1.

«Ղռեր» տեղամասի լեռնային մարգագետնատափաստանային ֆլորայի մոնիթորինգ

Ընտանիք	*ցեղ*	*տեսակ*	*տեսակ*
Poaceae	*Bothriochloa L.*	*Bothriochloa ischaemum (L.) Keng*	*Բոտրիոխլոա սովորական*
	Festuca L.	*Festuca valesiaca Gaudin*	*Շյուղախոտ վալիսյան*
	Holcus L.	*Holcus lanatus L.*	*Գավարս թավշյա*
	Bromus L.	*Bromus scoparius L.*	*Յորնուկ հուրանավոր*

Apiaceae	*Peucedanum*	*Peucedanum ruthenicum Bieb.*	*Մարգացնցնուղ վոլգյան*
	Prangos L.	*Prangos ferulacea (L.) Lindl.*	*Պրանգոս նարդեսանման (Գելի, Բոխի)*
Asteraceae	*Onopordum L.*	*Onopordum acanthium L.*	*Կառ փշոտ*
	Centaurea L.	*Centaurea jacea L.*	*Տերեփուկ մարգագետնային*
	Achillea L.	*Achillea millefolium L.*	*Հազարատերևուկ սովորական*
	Artemisia L.	*Artemisia absinthium L.*	*Օշինդր դառը*
	Cirsium L.	*Cirsium ciliatum (Murray) Moench*	*Տատասկ (Գեղավեր) թարթիչավոր*
Fabaceae	*Astragalus L.*	*Astragalus shagalensis Grossh.*	*Գազ շահալիի*
		Astragalus galegiformis L.	*Գազ այծմորուսային*
	Trifolium L.	*Trifolium pratense L.*	*Երեքնուկ մարգագետնային*
	Securigera L.	*Securigera varia (L.) Lassen*	*Քարառվույտ երփներանգ*
	Onobrychis	*Onobrychis biebersteinii Sirjaev*	*Կորնգան բիբերշտեյնի*
Rosaceae	*Filipendula L.*	*Filipendula hexapetala Gilib.*	*Փրփրուկ տափաստանային*
	Fragaria L.	*Fragaria vesca L.*	*Մորի անտառային*
Lamiaceae	*Hyssopus L.*	*Hyssopus angustifolius Bieb.*	*Զոպա նեղատերև*
	Thymus L.	*Thymus vulgaris L.*	*Ուրց սովորական*
Ranunculacea	*Delphinium L.*	*Delphinium litwinovii Sambuk.*	*Դելֆինիում լիտվինովի*
Boranginacea	Pontechium *L.*	*Echium maculatum* L.	*Իժախոտ ռուսաստանյան*

Euphorbiacea	*Euphorbia L.*	*Euphorbia iberica Boiss.*	*Իշակաթնուկ վրացական*

Առաջարկում ենք՝

- կատարել շարունակական հետազոտություններ՝ «Ղռեր» տեղամասի խոտային համակեցությունների կենսաբազմազանությունը գնահատելու և ֆլորիստական կազմը պարզելու համար,
- ուժեղացնել «Ղռեր» տեղամասի բուսականության հսկողությունը՝ տափաստանամարգագետնային ֆլորան պահպանելու նպատակով

Եզրակացություն

- «Ղռեր» տեղամասի ֆիտոցենոզում համատեղ աճում են մարգագետնային և տափաստանային խոտատեսակները:
- Խոտածածկույթում համատարած են *Poaceae* ընտանիքի 4 տեսակների ներկայացուցիչները:
- Բուսածածկույթում համատարած են *Fabaceae* ընտանիքի բուսատեսակները: Առավել խոշոր տեղախմբերը կազմում են *Fabaceae* ընտանիքի *Trifolium pratense L.* , *Securigera varia (L.) Lassen* տեսակները:
- Քարքարոտ, ինտենսիվ արածեցվող լանջերին օջախներ են կազմել *Apiaceae* ընտանիքի *Prangos ferulaceae (L.) Lindl.* Բույսերը:
- Դեգրադացիայի ենթարկված լանջերին *Artemisia absinthium L.* տեսակի բույսերը առաջացրել են մաքուր տեղախմբեր:
- Որոշ բուսատեսակներ գտնվում են անհետացման եզրին, ունեն սահմանափակ արեալներ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Ֆայվուշ Գ.Մ., Ալեքսանյան Ա. Ս., Հայաստանի բնակմիջավայրերը ՀՀ ԳԱԱ Բուսաբանության ինստիտուտ Երևան 2016թ., 341 էջ; էջ. 150-158

2. Научная сессия по горному лесоразведению. Тезисы докладов. Кировакан 1970г.с.49;стр. 10-11

3. Давыдова М.В. Продуктивность степных пастбищ Кавказа // Изв. РАН. Сер. геогр. – 1989. – №5. – С. 74–83; стр. 77-80

4 .Динамика местных тенденции изменения климата, природных катастроф и анализ экологических, социально-экономических последствий в трансграничном целевом ареале реки Кура, 2012 с.114; стр. 4-25

5. Добровольский, Г.В. Роль почвы в формировании и сохранении биологического разнообразия / Г.В. Добровольский, И.Ю. Чернов (отв. Ред.). - М.: Товарищество научных изданий КМК, 2011. - с.273; стр. 123-141

6. Лавренко Е.М., Карамышева З.В., Никулина Р.И. Степи Евразии. – Л: Наука, 1991. – с.146; стр. 5-11; 63-78

7. Шифферс Е.В. Растительность Северного Кавказа и его природные кормовые угодья. – М.– Л.: Изд-во АН СССР, 1953. – с.104 ;стр. 34-52.

ՀՏԴ581-2(479.243) Բնագիտություն

Անուշ Ղարիբյան
Արցախի պետական համալսարան
«Կենսաբանություն Մ/Կ ֆիզիոլոգիա»
մասնագիտություն,մագիստրատուրա 1-ին
Գիտական ղեկավար՝կ.գ.թ.,դոցենտ Մարգարյան Գ.Գ

ԸՆԿՈՒԶԵՆՈՒ ՍՆԿԱՅԻՆ ՀԻՎԱՆԴՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆ ԱՐՑԱԽՈՒՄ

Բանալի բառեր *–Արցախ, ընկուզենի, սնկային հիվանդություն, տեր-բույս, մակաբույծ սնկեր, ֆիլոստիկտոզ, կանաչ բորբոս, գորշ բծավորություն, սպիտակ բծավորություն, սնկամարմին, սպորներ:*

Ընկուզենին բարձրարժեք ծառատեսակ է. պտուղներն ունեն առանձնահատուկ սննդային արժեք, բնափայտը՝ արդյունաբերական կարևոր նշանակություն, տերևները և պտուղները՝ բուժական ազդեցություն: Սնկային հիվանդությունների ինտենսիվ և պարբերաբար դրսևորման արդյունքում դիտվում է նշված որակների կտրուկ նվազում:

Արցախում կատարված երկամյա ուսումնասիրությունների արդյունքում հայտնաբերվել է ընկուզենին ախտահարող 4 տեսակի սնկային հիվանդություն: Պարզաբանվել է դրանց զարգացման առանձնահատկությունները, ինչը հիմք կհանդիսանա արդյունավետ պայքար իրականացնելու համար:

Ануш Гарибян

ИССЛЕДОВАНИЕ ГРИБКОВЫХ ЗАБОЛЕВАНИЙ ГРЕЦКОГО ОРЕХА В АРЦАХЕ

Ключевые слова: *грецкий орех, Арцах, грибковое заболевание, растение-хозяин, грибы-паразиты, филлостиктоз, зеленая плесень, серое пятно, белое пятно, мицелий, споры.*

Грецкий орех является высокоценным видом дерева: плоды имеют особую питательную ценность, древесина - важное промышленное значение, листья и плоды` лечебное действие. В результате интенсивных и периодических проявлений грибковых заболеваний наблюдается резкое снижения данных качеств. По итогам двухлетних исследований проведённых в Арцахе было выявлено 4 вида грибковых заболеваний заражающих грецкий орех. Разъяснены особенности их развития, что которые станут основой для проведения эффективной борьбы.

Սնկերն իրենց կենսաբանական առանձնահատկություններով յուրահատուկ խումբ են կազմում: Դրանց, մասնավորապես՝ միկոմիցետների ուսումնասիրությունը խիստ անհրաժեշտ է, քանի որ հիմնականում լինելով մակաբույծներ, հեշտությամբ վարակում են բազմաթիվ վայրի և մշակովի բույսեր այդ թվում՝ ընկուզենին: Տեր-բույսերի ախտահարվածության արդյունքում նվազում է վարակված բույսերի բերքատվությունը, դեղագործական և դեկորատիվ նշանակությունը, սննդային որակը, կերային արժեքը և այլն: Ընկուզենի ցեղն ընդգրկում է մոտ 7-9 տեսակ, որոնցից ՀՀ-ում և Արցախում վայրի վիճակում տարածված է 1 տեսակ՝ սովորական ընկուզենին (J. regia), որը գրանցված է ՀՀ Կարմիր գրքում, իսկ ներմուծված են 4 տեսակ՝ սև, մանջուրական, զիբոլդի և մոխրագույն

ընկուզենիները: Ընկուզենին ունի տնտեսական կարևոր նշանակություն: Այն առաջին հերթին օգտագործվում է կանաչապատման, անտառապատման, դաշտապաշտպան անտառաշերտերի համար և միևնույն ժամանակ պտղատու հրաշալի տեսակ է: Գործնականում ընկուզենու բոլոր օրգանները օգտագործվում են ժողովրդական տնտեսության տարբեր բնագավառներում: Ընկույզը խիստ արժեքավոր սննդամթերք է. այն 3 անգամ ավելի շատ ճարպ է պարունակում, քան կտավատը կամ արևածաղիկը (45-78 %): Պարունակում է նաև մեծ քանակությամբ սպիտակուցներ, դաբաղանյութեր, վիտամիններ և այլ օգտակար նյութեր: Եվ այսօր այս ծառատեսակի պահպանությունը շատ կարևոր է, քանի որ այն նույնպես խոցելի է տարբեր սնկային հիվանդությունների նկատմամբ, որոնցից են կանաչ բորբոսը, ֆիլոստիկտոզը, գորշ բծավորությունը, սպիտակ բծավորությունը: Այս հիվանդությունները կարող են ախտահարել ընկուզենու տերևները, պտուղները, բնափայտը, որի հետևանքով դիտվում է կենսագործունեությունն ապահովող գործընթացների խախտում, իսկ հիվանդության ինտենսիվ արտահայտվածության արդյունքում՝ վեգետացիայի ողջ ընթացքի խախտում կամ ընդհատում, ինչի հետևանքով էլ բույսի նպատակային նշանակության նվազում:

Հիվանդության տեսակից, հարուցիչի առանձնահատկությունից, միջավայրի պայմաններից կախված, որոշ հիվանդություններ զարգանում են դանդաղ, իսկ մյուսները պահպանման ժամանակ արագ զարգանում են և հեշտությամբ վարակում հարակից պտուղ բանջարեղենը, տարածվելով, ինչպես անմիջական շփմամբ, այնպես էլ օդով տարածվող սպորներով [1-3]:

Արցախի բուսական աշխարհը և բնակլիմայական պայմանները բարենպաստ են մակաբույծ սնկերի զարգացման համար, այդ պատճառով անհրաժեշտություն առաջացավ ուսումնասիրել նշված տարածաշրջանի ընկուզազգիներն ախտահարող սնկային հիվանդությունները, դրանց տեսակային կազմը և նկարագրությունները: Արցախի որոշ շրջաններում հանդիպող մակաբույծ սնկերի վերաբերյալ սակավաթիվ տեղեկություններ կարելի է գտնել Վ.Ի. Ուլյանիշչևի աշխատություններում, իսկ ավելի ընդգրկուն՝ հիմք են դրվել 2005 թ. և շարունակվում են առ այսօր: Մեր կողմից իրականացվող հետազոտությունը համարվում է Արցախում առաջին անգամ սկիզբ դրված, գիտակորեն հիմնավորված ուսումնասիրությունների շարունակություն: Հոդվածում ներկայացվող սնկային հիվանդությունների վերաբերյալ տեղեկությունները կհամալրեն միկոմիցետների արդեն գոյություն ունեցող տվյալների բազան:

Ուսումնասիրությունները կատարվել են մակրոսկոպիկ և մանրադիտակային հետազոտման եղանակներով՝ զուգակցելով նկարագրական, վերլուծական և համեմատական մեթոդները: Սնկային հիվանդությունների տեսակային կազմի որոշման նպատակով կատարվել է հիվանդ տեր-բույսերի ախտահարված օջախների հավաք և չորացում, ժամանակավոր պրեպարատի պատրաստում ու լաբորատոր հետազոտություն և համապատասխան որոշիչի կիրառմամբ սնկի տեսակային իդենտիֆիկացում և համապատասխանեցում ժամանակակից կարգաբանությանը [8-10]:

Հոդվածում ներկայացվում է մեր կողմից իրականացված երկամյա հետազոտական աշխատանքների վերլուծություն: Տրվում է 1 ընտանիքի պատկանող տեր-բույսերի վրա մակաբուծող 4 սնկատեսակի նկարագրություն:

1.Ընկուզենու կանաչ բորբոս - P<u>enicillium juglandis</u> Weid., <u>Aspergillaceae</u>, նկ.1:

Ախտահարվում են պտուղները: Հասուն պտուղների տուփիկում առաջանում է երկնագույն կամ կանաչավուն, հաճախ փոշիացող գոյացում: Հիվանդությունը զարգանում է

միջուկում՝ պտղամսի վրա՝ թավշյա սնկամարմնի զարգացմամբ, որը հանգեցնում է միջուկի սննդային և ապրանքային արժեքի նվազման: Երբեմն սնկի ինտենսիվ զարգացման հետևանքով պտուղները դառնում են ոչ պիտանի: Ընկուզենու կանաչ բորբոսը հիմնականում զարգանում է տուփիկների ոչ ճիշտ պահպանման և անժամանակ հավաքի պատճառով: Նկարագրվող սնկի առաջացումը կանխելու նպատակով անհրաժեշտ է ընկուզենու պտուղները հավաքել հասուն վիճակում և չորացնել մինչ պահեստավորումը: Կանաչ բորբոս հարուցող սնկի սպորները միաբջիջ են, անգույն և էլիպսոիդալ:

Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

2.Ֆիլոստիկտոզ կամ բծավորություն - Phyllosticta juglandis (DC.) Sacc., Phyllostictaceae, նկ.2:

Տվյալ հիվանդությունը լայնորեն տարածված է: Հիվանդության բնութագրիչ ախտանշաններն են՝ տերևների վրա բազմաթիվ, մանր, անկանոն բծերի, կետերի առաջացումը: Սկզբում այդ բծերը /կետերը/ բաց դարչնագույն են, չորանալուց դառնում են սպիտակավուն: Ախտահարված օջախներում առաջանում են ճեղքեր և բացվածքներ՝ գորշ եզրագծով: Տերևների վերին մակերևույթին նկատելի են փոքր սև կետավոր պիկնիդներ: Սպորներն անգույն են, ձվաձև, երկարավուն և միաբջիջ: Հիվանդության զարգացումը հանգեցնում է տերևային մակերևույթի զգալի հատվածի չորացման, վաղաժամ տերևաթափի, ինչը բացասաբար է ազդում տեր-բույսի կենսագործունեության վրա:

Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել է հետազոտության բոլոր տարիներին:

3.Սպիտակ բծավորություն - Microstroma juglandis (Bérenger) Sacc., Microstromataceae, նկ.3:

Սպիտակ բծավորություն հիվանդությամբ ախտահարվում են ընկուզենու տերևները: Հիվանդության առաջին ախտանշաններն ի հայտ են գալիս մայիսի կեսերին: Ախտահարված տերևների վերին մակերևույթներին գոյանում են բծեր, կետեր, որոնք նախնական շրջանում դեղին են, ավելի ուշ՝ գորշավուն, թույլ նկատելի: Տերևների ստորին մակերևույթին բծերը /կետերը/ բաց կանաչավուն են, այնուհետև ստանում են սպիտակ, վարդագույն գունավորում: Հիվանդ օջախներում հյուսվածքներն ուռած տեսք ունեն և երբեմն այս հիվանդությունը շփոթում են ընկուզենիներն ախտահարող տզերի հետ: Սովորաբար ախտահարված օջախները ցրված են ողջ տերևային մակերևույթով, երբեմն լինում են խառը տեղակայության կամ ջղերին մոտ: Հիվանդ հյուսվածքները մահանում են՝ հաճախ հանգեցնելով վաղ տերևաթափի: Սպիտակ բծավորության հարուցիչի սպորներն անգույն են, երկարավուն կամ էլիպսոիդալ:

Սունկն Արցախում տարածված տեսակ է: Հայտնաբերվել են հետազոտության բոլոր տարիներին:

4. Ընկուզենու գորշ բծավորություն – Ophiognomonia leptostyla (Fr.) Sogonov, Gnomoniaceae, նկ.4:

Տվյալ սունկը կարող է ախտահարել ընկուզենու տերևները, տերևակոթունները, պտուղները և մատղաշ շիվերը: Վարակված մատղաշ տերևների վրա առաջանում են ոչ մեծ գորշ բծեր, որոնք աստիճանաբար մեծանում են: 10-15 օր հետո այդ բծերի վրա ձևավորվում են սնկի պտղամարմինները կոնիդիումներով, որն ուղեկցվում է սև շրջակենտրոն դասավորությամբ փառի գոյացմամբ: Ինտենսիվ վարակի դեպքում կարող են վնասվել նաև շիվերը, որոնց վրա առաջանում են գորշ, սեղմված բծեր՝ մահացած հյուսվածքներ: Վերջիններս հանգեցնում են ճյուղերի դեֆորմացման: Վարակված պտուղների պտղաթաղանթը գորշանում է, իսկ ընկույզի

միջուկները ստանում են դառը համ: Հիվանդության զարգացմանը նպաստում է խոնավ, անձրևային պայմանները:

Հիվանդության առաջնային վարակն առաջացնում են պայուսակասպորները, որոնք ձևավորվում են թափված տերևների վրա ձմեռած պտղամարմիններում: Ամռանը հիվանդությունը տարածվում է կոնիդիումներով, որոնք առաջանում են ախտահարված օջախներում: Հիվանդության հետևանքով տերևները ժամանակից շուտ թափվում են, ինչը բացասաբար է ազդում բերքատվության, ցրտադիմացկունության և ծաղկավոր բողբոջների առաջացման վրա: Գորշ բծավորությունը տարեց տարի կրկնվելով սովորաբար հանգեցնում է բերքատվության և կենսագործունեության կտրուկ նվազման:

Սունկն Արցախի տարածքում հաճախ հանդիպող տեսակ է:

Նկարագրվող սնկի դեմ պայքարելու նպատակով անհրաժեշտ է հավաքել և այրել բուսական մնացորդները: Իսկ գարնան վերջին ամիսներին և ամռան սկզբում 15 օր պարբերականությամբ տեր-բույսը հարկ է ցողել 1%-ոց բորդոյան հեղուկով:

Այսպիսով, մեր հետազոտությունների արդյունքում հայտնաբերվել է ընկուզենու վրա մակաբուծող 4 սնկատեսակ, որոնք իրենց վնասաբերությամբ խիստ բացասաբար են անդրադառնում բերքի որակին: Ախտահարված չհասունացած պտուղները նորմալ չեն հասունանում, իսկ հասունանալու դեպքում միջուկը տարբերվում է առողջ պտղի միջուկից: Սնկային հիվանդությունները բացասաբար են ազդում նաև տերևային զանգվածի վրա, և ինտենսիվ ախտահարության արդյունքում վաղաժամ տերևաթափի հետևանքով նվազում է բույսի հետագա կենսագործունեության փուլերի իրականացումը:

Գյուղատնտեսության զարգացման արդիական և հրատապ հիմնախնդիրներից եղել և շարունակում է մնալ սնկային հիվանդությունների դեմ պայքարի արդյունավետ մեթոդների մշակումը և կիրառումը: Դրական արդյունք ապահովելու համար առաջարկվում է իրականացնել համալիր միջոցառումներ՝ զուգակցելով ագրոտեխնիկական, կենսաբանական, քիմիական և թերապևտիկ մեթոդները:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Ջ.Հ., Նանագյուլյան Ս.Գ., Ֆիտոպաթոլոգիա, Երևան. 2004. 58 էջ:
2. Доброзракова Т.Л. и др. Определитель болезней растений. Сельхозгиз. 1956. - 662 с.
3. Маркарян Г.Г., Нанагюлян С.Г., Согоян Е.Ю.Ржавчинные грибы полезных растений Нагорного Карабаха // Современная микология в России. М.2017. Том 7. С. 74 – 75.
4. Методы экспериментальной микологии: Справочник / И.А. Дудка, С.П. Вассер, И.А. Элланская и др.: Под ред. В.И. Билай. - Киев: Наук. Думка. - 1982. - 550 с.
5. Микофлора Армении. Т.1,2,3.1967,1975,1977,Т.6,7,1983. Т.7,1994. Т. 8, 2013. – 302 с.
6. Попкова К.В., Шкаликов В.А., Стройков Ю.М. и др. Общая фитопатология: Учебник для вузов. 2-е изд., перераб. и доп. - М.: Дрофа, 2005. - 445 с.
7. Рахимова Е.В., Нам Г.А., Ермекова Б.Д. Краткий иллюстрированный определитель мучнисторосяных грибов Казахстана и приграничных территорий. Новосибирск. 2014.– 129с.
8. Сидорова И.И. Макросистема грибов: методология и изменения последнего десятилетия // Сб.: Новое в систематике и номенклатуре грибов. Под ред. Дьякова Ю.Т., Сергеева Ю.В. - М.: Медицина для всех. - 2003. - С. 7 - 70.
9. Ульянищев В.И. Микофлора Азербайджана. Т. 3. Ржавчинные грибы. Баку: АН Азерб. ССР. - Ч.1. 1960. - 252 с. - Ч.2. - 1962. - 276 с.
10. http://www.indexfungorum.org/names/Names.asp

Հավելված

1. Կանաչ բորբոս

2. ֆիլոստիկտոզ

3. սպիտակ բծավորություն

4. գորշ բծավորություն

Ալեքսեյ Մակյան
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ,
աշխարհագրության ամբիոն, մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանող
Գիտական ղեկավար՝ աշխ. գիտ. թեկնածու, դոցենտ Գրիգորյան Ա. Վ.

ԱՐՑԱԽԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԲՆԱԿՉՈՒԹՅԱՆ ՏԱՐԱԾՔԱՅԻՆ ՏԵՂԱԲԱՇԽՄԱՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՌԱԶՄԱԿԱՆ ԱՆՎՏԱՆԳՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՏԵՔՍՏՈՒՄ

Բանալի բառեր՝ *տարաբնակեցման առանձնահատկություններ, ռազմական անվտանգություն, սահմանամերձ բնակավայր, անվտանգության բարձրացում, ռազմաքաղաքական իրավիճակ:*

Աշխատանքում ներկայացված են տարաբնակեցման առանձնահատկությունները Արցախի Հանրապետությունում: Հաշվի առնելով առկա ռազմաքաղաքական իրավիճակը՝ ներկայացվել են տարաբնակեցման վրա ազդող առավել կարևոր գործոնները, շեշտը դնելով ռազմական անվտանգության վրա՝ քննարկվել են դրանից բխող խնդիրները և վտանգները, ըստ շրջանների և բնակավայրերի: Հաշվի առնելով որոշ բնակավայրերի հեռավորությունը առաջնագծից, առավել հաճախ գործածվող զինատեսակները, ռելիեֆի առանձնահատկությունները, առաջարկվել են լուծումներ և անվտանգության բարձրացմանը ուղղված քայլեր:

Алексей Макян

ОСОБЕННОСТИ РАСПРЕДЕЛЕНИЯ НАСЕЛЕНИИ В РЕСПУБЛИКЕ АРЦАХ В КОНТЕКСТЕ ВОЕННОЙ БЕЗОПАСНОСТИ

Ключевые слова:*особенности переселения, военная безопасность, населенные пункты расположены вблизи границы, повышение безопасности, военно-политическая ситуация.*

В работе представлены особенности переселения в Республике Арцах. Принимая во внимание существующую военно-политическую ситуацию были представлены наиболее важные факторы, влияющие на переселение, подчеркивая военную безопасность, обсуждались проблемы и связанные с этим опасности, по регионам и населенным пунктам. Принимая во внимание расстояние некоторых жилых районов от границы, наиболее часто используемое оружие, особенности рельефа, были предложены решения и меры по повышению безопасности.

Տարաբնակեցումը դինամիկ երևույթ է, որը կախված է բազմաթիվ գործոններից և հանգամանքներից: Տարաբնակեցման վրա կարող են ազդել տնտեսական, սոցիալական,հասարակական և մի շարք այլ գործոններ: Դեռևս մարդկային հասարակության զարգացման սկզբնական շրջաններում մարդիկ տներ և կացարաններ են կառուցել գետերի ափերին, բերրի և արգավանդ հողերում, առևտրային ճանապարհների խաչմերուկներում: Քաղաքակրթությունների զարգացմանը զուգահեռ տարաբնակեցման վրա ազդող գործոնների ցանկը զգալիորեն ընդլայնվել է, սկսել են բնակավայրեր կառուցել՝ հաշվի առնելով տեղանքի պաշտպանվածության աստիճանը բնական աղետներից, զավթողական նպատակներ ունեցող և ոչ բարոյացակամ հարևաններից և այլն: Ներկայումս տարաբնակեցման վրա ազդող գործոնները բազմազան են, և թվարկել դրանք կամ առանձնացնել որև է գործոն ընդհանուր բնակավայրերի համար, հնարավոր չէ: Յուրաքանչյուր պետություն ունի իր բնակավայրերի տեղաբաշխման

առանձնահատկությունները, առաջնային և երկրորդային նշանակություն ունեցող գործոնները, և ըստ այդմ էլ՝ վարում է բնակավայրերի տեղաբաշխման քաղաքականություն։

Արցախի տարաբնակեցման համակարգի ներկա փուլում գլխավոր գործոններից մեկն աշխարհաքաղաքականն է՝ սոցիալ-ժողովրդագրականի հետ միասին, ժամանակի ընթացքում, երբ կհաստատվի հանրապետության կարգավիճակը ու կլուծվեն սահմանային խնդիրները, կհաստատվի խաղաղություն, այդ ժամանակ աշխարհաքաղաքական գործոնն իր տեղը կզիջի սոցիալ-ժողովրդագրականին և տնտեսական գործոններին՝ բնականին և ենթակառուցվածքայինին զուգահեռ[1]։

Ցավոք սրտի մեր արևելյան հարևան Ադրբեջանի Հանրապետությունը լինելով նավթադոլարների շնորհիվ մեծ ռազմական պոտենցիալ ձեռք բերած երկիր,աչքի չի ընկնում մարդասիրությամբ և միջազգային պայմանագրերն ու պայմանավորվածությունները պահպանելու պատրաստակամությամբ։ Հաշվի առնելով այդ փաստը, անհրաժեշտություն է առաջանում մեր հանրապետության բնակավայրերի տարածքային տեղաբաշխման առանձնահատկությունները քննարկել ռազմական անվտանգության համատեքստում։ Նույնիսկ պատերազմի ժամանակ թիրախավորել քաղաքները և գյուղերը՝ բնակեցված խաղաղ բնակիչներով, համարվում է ռազմական հանցագործություն, մինչդեռ Ադրբեջանական զինված ուժերի կողմից բազմիցս թիրախավորվել են հայկական բնակավայրեր, նույնիսկ փաստացի երկկողմ հաստատված հրադադարի պայմաններում։

Պետական սահմանագծից երկրի խորքը մինչև 5 կմ լայնությամբ ծավալվող տարածքը կոչվում է սահմանային գոտի, իսկ պետական սահմանին հարող մինչև 1 կմ լայնությամբ սահմանային գոտու մասը կոչվում է *սահմանամերձ շերտ*։

Դեռևս թարմ են ապրիլյան քառօրյա պատերազմի հիշողությունները, երբ գիտակցելով, որ գիշերվա այդ ժամին ազգաբնակչությունը քնած է,ադրբեջանական զինուժն սկսեց հրետակեծել սահմանային գրեթե բոլոր բնակավայրերը։Այսպիսով անհրաժեշտ է քննարկել բնակավայրերի տեղաբաշխման առանձնահատկությունները ռազմական անվտանգության տեսանկյունից և փնտրել բնակավայրերի անվտանգության բարձրացմանը ուղղված լուծումներ։

Նոր հռչակված հանրապետության դեմ Ադրբեջանի սանձազերծած նախահարձակմանը դիմագրավելու և մարտի դաշտում պաշտպանության բանակի հաղթանակի արդյունքում Արցախի սահմանակից հայկական տարածքներում ստեղծվեց անվտանգության գոտի, որը նույնպես ընդգրկվեց Արցախի վարչատարածքային կազմի մեջ[2]։

Արցախի Հանրապետության բնակավայրերին՝ նամանավանդ սահմանամերձ բնակավայրերին սպառնացող վտանգները տարբեր են, կախված բնակավայրի աշխարհագրական դիրքից,ռելիեֆի բնույթից և բնակավայրի ռազմավարական առումով ունեցած նշանակությունից։ Կան բնակավայրեր, որոնք սահմանին մոտ գտնվելու պատճառով կարող են տուժել հրաձգային զինատեսակների կրակոցներից. կան բնակավայրեր, որոնց պատկանող բերրի հողերը գտնվում են սահմանամերձ շրջաններում,և դրանց մշակումը պարունակում է բնակչության կյանքին ու առողջությանը ուղղված ռիսկեր։ Որոշ բնակավայրեր գտնվում են հակառակորդի հրետանային

---

[1] ***Ուլջյան Ս.***, *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման քաղաքականությունը: Երևան 2011թ.,-էջ 30:*

[2] *Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս: Երևան, 2009թ.,-էջ 9:*

զինատեսակների հնարավոր խոցման գոտում: Առկա են նաև բնակավայրեր, որոնց վտանգ են սպառնում թշնամու դիվերսիոն հետախուզական խմբերը:

Հակառակորդի կողմից հաճախակի օգտագործվող հրաձգային զենքերից առավել տարածված են ԱԿ-74-ը, որի կրակի առավելագույն հեռավորությունը կազմում է 3150մ, Դրագունովի դիպուկահար հրացանը՝ 3800մ, Կալաշնիկովի գնդացիրը՝ 3800մ:

Հարաբերական լարված ժամանակահատվածում հակառակորդը հաճախակի օգտագործում է նաև հրետանային զինատեսակներ,որոնցից նշենք առավել մեծ կրակի հեռավորություն ունեցող Մ120 տիպի ականանետը, որի կրակի առավելագույն հեռավորությունը հասնում է 9000մ-ի[1]:

Հրաձգային և հրետանային զինատեսակներն առավել շատ վտանգ են սպառնում այն բնակավայրերին, որոնք ավելի մոտ հեռավորության վրա են գտնվում շփման գծից: Նման տիպի զինատեսակները մեծ վտանգ են հանդիսանում նաև սահմանամերձ շրջաններում հողագործությամբ զբաղվող մարդկանց համար:

Արցախյան պատերազմից հետո ազատագրված տարածքներում դեռևս մնում են չվնասազերծված ականներ, որոնք նույնպես շատ մեծ վտանգ են սպառնում բնակչության համար, թեպետ ներկայումս ընթացքի մեջ են ականազերծման աշխատանքները, բայց դրանց առկայությունը մնում է տարածքային տեղաբաշխման վրա ազդող կարևոր գործոններից: Պետք է նշել նաև,որ սահմանամերձ բնակավայրերին սպառնացող վտանգներից են հրդեհները, որոնք բռնկվելով հակառակորդի կրակոցներից խոշոր վնասներ են պատճառում մանավանդ հացահատիկային մշակաբույսերին:

Մեր հանրապետության գրեթէ բոլոր շրջանները սահմանակից են Ադրբեջանի Հանրապետությանը, բացառություն են կազմում միայն Քաշաթաղի և Շուշիի շրջանները:

Հանրապետության մայրաքաղաք Ստեփանակերտը առաջնագծից գտնվում է 24,07 կմ հեռավորության վրա:

Շահումյանի շրջան. շրջանն ազատագրված տարածք է: Բնակչության խտությունը փոքր է (պատճառն ադրբեջանական կողմի հայաթափման քաղաքականությունն էր), ուստի պետությունը ներկայումս վարում է վերաբնակեցման քաղաքականություն՝ սահմանելով արտոնյալ պայմաններ այդ շրջանում բնակություն հաստատած մարդկանց համար: Շրջանի կենտրոն Քարվաճառ բնակավայրը գտնվում է սահմանից 20,8 կմ հեռավորության վրա: Այստեղ առավել սահմանին մոտ գտնվող գյուղերից կարելի է նշել Նոր Խարխափուտը՝ 8,16 կմ,Նոր Կարաչինարը՝ 8,56 կմ, Չափինը՝ 8,77 կմ, Քնարավանը՝ 9,38 կմ: Շահումյանի շրջանի հյուսիս-արևելյան սահմանով ձգվում է Մռավասարի լեռնաշղթան, որը բնական պատնեշ է ստեղծում և այդ առումով այն բավականին պաշտպանված է հրաձգային և հրետանային զինատեսակներից, բայց ռելիեֆի կտրտվածության պատճառով առկա է դիվերսիոն հետախուզական խմբերի ներթափանցման վտանգ:

Մարտակերտի շրջան. շրջանը զբաղեցնում է Արցախի հյուսիսային մասը Խաչեն և Քոլատակ գետերի ավազանից դեպի հյուսիս ընկած ամբողջ հատվածը: Ընդգրկում է պատմական Արցախի Ջրաբերդ գավառը և Խաչեն ու Գյուլիստան գավառների զգալի մասը[2]:

Շրջկենտրոնը գտնվում է սահմանից 9,78 կմ հեռավորության վրա: Շրջանի առավել սահմանին մոտ գյուղերից են Թալիշը՝ 2,24 կմ,Նոր Ջրաբերդը՝ 2,9 կմ, Մատաղիսը՝ 5,71 կմ,

---

[1] *www.kalashnikov.ru*

[2] ***Մելքումյան Մ.**, Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն, Երևան, 2005թ., էջ 424:*

Տոնաշենը՝ 8,64 կմ, Նոր Մարաղան՝ 9,38 կմ: Շրջանի հյուսիսարևելյան մասերը համեմատաբար լեռնային են (Առաքելոց լեռներ), բայց Թալիշ, Տոնաշեն և Մատաղիս բնակավայրերի շատ մոտ լինելը սահմանին խոցելի է դարձնում նրանց հրետանային, նույնիսկ հրաձգային զենքերից: Ռելիեֆի կտրտվածության պատճառով այն վտանգավոր է նաև ԴՀԽ-ների ներթափանցման առումով: Իսկ շրջանի արևելքը հիմնականում զբաղեցնում են ռելիեֆի հարթ ձևերը, ինչի պատճառով վտանգավոր է դառնում սահմանամերձ տարածքներում հողագործությամբ զբաղվելը:

2016թ. ապրիլյան պատերազմի ժամանակ առավել շատ տուժած բնակավայրերից են Թալիշը և Մատաղիսը: Պատերազմի ժամանակ Թալիշ գյուղի բնակչությունը տարհանվեց և բնակիչների մեծ մասը ժամանակավորապես բնակչություն հաստատեցին Ալաշան գյուղում: Ներկայումս կատարվում են շինարարական և անվտանգության բարձրացմանը ուղղված աշխատանքներ՝ գյուղի վերականգնման համար:

Ասկերանի շրջան. Ասկերանի շրջանը գտնվում է Արցախի տարածքի կենտրոնական մասում, ընդգրկում է Կարկառ գետի ավազանը: Հարավում սահմանակից է Հաղրութի, արևելքում՝ Մարտունի, արևմուտքում՝ Շուշիին Քաշաթաղի, հյուսիսում՝ Մարտակերտի շրջաններին: Շրջկենտրոնը գտնվում է սահմանից 15,9 կմ հեռավորության վրա: Շրջանի սահմանամերձ գյուղերից կարելի է նշել Ուղտասարը, որը գտնվում է առաջնագծից 9,79 կմ հեռավորության վրա, Խրամորթը՝ 13.9 կմ և Ակնա բնակավայրը՝ 6,5 կմ: Ասկերանի շրջանի արևելյան հատվածները հիմնականում զբաղեցնում են ռելիեֆի հարթ ձևերը, և ինչպես Մարտակերտի շրջանում, այստեղ նույնպես ուղիղ տեսանելիության պատճառով սահմանամերձ տարածքներում որևէ գործունեություն ծավալելնիր մեջ պարունակում է որոշակի վտանգներ:

Մարտունու շրջան. Մարտունու շրջանը տեղաբաշխված է Արցախի հարավարևելյան մասում՝ միջինը 400 մ բարձրության վրա: Շրջկենտրոն Մարտունի քաղաքը գտնվում է սահմանից 8,56 կմ հեռավորության վրա:Սահմանամերձ գյուղերից պետք է նշել Կաքավաձորը՝ 2,93 կմ, Քաջավանը՝ 6,93 կմ,Բերդաշենը՝ 8,97 կմ, Ներքին Ճարտարը՝ մոտ 9կմ: Շրջանի արևելյան մասերը նույնպես հարթավայրային տարածքներ են զբաղեցնում և այստեղ ևս առկա են նման տարածքներին բնորոշ վտանգներ: Նշենք, որ ապրիլյան պատերազմի ժամանակ հակառակորդը որպես նշանակետ օգտագործեց շրջկենտրոն Մարտունին և Ներքին Ճարտար բնակավայրը:

Հաղրութի շրջան. այս շրջանի տարածքը համընկնում է պատմական Արցախի Դիզակի մելիքության տարածքին: Շրջկենտրոն Հաղրութը գտնվում է սահմանից 19,17 կմ հեռավորության վրա: Ի տարբերություն մյուս շրջանների, այստեղ չկան սահմանին շատ մոտ բնակավայրեր և Հարդաշեն, Ակնաղբյուր, Ծաղկավանք, Մելիքաշեն, Նորաշեն գյուղերը գտնվում են սահմանից մոտ 15 կմ հեռավորության վրա:

Քնելով գոյություն ունեցող խնդիրները և վտանգներն՝ ակնհայտ են դառնում նաև դրանց լուծմանն ուղղված տրամաբանական քայլերը: Ընդհանուր առմամբ, Արցախի ամբողջ տարածքը գտնվում է որոշ հրետանային զինատեսակների հնարավոր խոցման գոտում, բայց հաշվի առնելով այն հանգամանքը, որ նման տիպի զինատեսակները մինչ օրս կիրառվել են միայն պատերազմական պայմաններում, քննարկվել են մինչև 9000 մ խոցման առավելագույն հնառավորություն ունեցող զինատեսակները: Հրաձգային զինատեսակներից պաշտպանվել կարելի է կառուցելով հողային պատնեշներ, առավել ևս հաշվի առնելով այն հանգամանքը, որ ռելիեֆի առանձնահատկությունների շնորհիվ տեսանելի վայրերը այդքան էլ շատ չեն: Քանի որ հրաձգային զինատեսակների

օգտագործումը հանդիսանում է տնտեսական գործունեությանը խոչնդոտող առավել կարևոր գործոն, ապա այդ վտանգի չեզոքացումը կամ նվազեցումը կհանդիսանա խթան տնտեսության որոշ ճյուղերի զարգացման համար: Հրկիզումներից պաշտպանվել կարելի է հրդեհավտանգ վայրերում տարվա տաք կեսին հավելյալ հրշեջների հերթապահության շնորհիվ: Ինչպես նաև սահմանային գոտում փխրեցնելով կամ մեկ այլ եղանակով հեռացնելով խոտածածկույթի որոշակի լայնությամբ շերտ՝ հնարավոր կլինի նվազեցնել սահմանից այս կողմ հրդեհների տարածման հավանականությունը: Հարկ է նշել, որ այս հանգամանքը նույնպես կլինի հօգուտ մեր տնտեսությանը՝ մանավանդ գյուղատնտեսությանը: ԴՀԽ-ների ներթափանցման առավել հավանական վայրերում լրացուցիչ զորքերի առկայության պայմաններում կնվազի նաև այդ վտանգի հավանականությունը: Ականապատված վայրերի ուսումնասիրման, համապատասխան ցուցանակների տեղադրման և ազգաբնակչությանը պատշաճ իրազեկման շնորհիվ կնվազեն նաև ականների պայթյուններից զոհերի և վիրավորնորների թիվը: Եվ պետք է հիշել, որ միայն մենք կարող ենք մեր երկիրը դարձնել ավելի անվտանգ:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Լեռնային Ղարաբաղի Հանրապետության ատլաս: Երևան, 2009թ., 96 էջ:
2. Մելքումյան Ս., Հայաստանի Հանրապետության և Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տնտեսական և սոցիալական աշխարհագրություն: Երևան, 2005թ.,551 էջ:
3. Սուջյան Ս., Լեռնային Ղարաբաղի Հանրապետության տարաբնակեցման քաղաքականությունը, Երևան, 2011թ., 35 էջ:
4. Սայադյան Յ., Աղջամօղլյան Գ., «ՀՀ տնտեսության տարածքային պլանավորման սկզբունքները ռազմական անվտանգության համատեքստում»: Կրթությունը և գիտությունը Արցախում, 1-2: Ստեփանակերտ, 2016թ.,140 էջ:
5. www.kalashnikov.ru
6. www.wikipedia.org

ՀՏԴ 551.58 Բնագիտություն

Մարիամ Մինասյան
ԱրՊՀ Բնագիտական ֆակուլտետ
Աշխարհագրություն 2-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ աշխ. գիտ. թեկնածու,դոցենտ Առաքելյան Յ.

ՕԶՈՆԻ ՇԵՐՏԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ԱՇԽԱՐՀՈՒՄ: ՋԵՐՄՈՑԱՅԻՆ ԷՖԵԿՏ

Բանալի բառեր՝ *օզոն, օզոնային շերտ, ջերմոցային էֆեկտ, օզոնային ճեղք, ածխաթթու գազ, հիմնախնդիրներ, գլոբալ տաքացում*

Աշխատանքը ուղղված է օզոնային շերտի կարևորության գնահատմանը: Աշխատանքում փորձ է արվել բացատրել տարբեր գործոնների բացասական ազդեցությունը օզոնային շերտի վրա: Առաջացած խնդիրների հետ մեկտեղ անդրադարձ է կատարվում նաև ջերմոցային էֆեկտին և գլոբալ տաքացմանը: Աշխատանքում պարզաբանվում են այդ խնդիրների առաջացման պատճառները և առաջարկվում են լուծման մի քանի տարբերակներ:

Мариам Минасян

ВАЖНОСТЬ ОЗОНОВОГО СЛОЯ В СОВРЕМЕННОМ МИРЕ. ПАРНИКОВЫЙ ЭФФЕКТ

Ключевые слова: *озон, озоновый слой, парниковый эффект, озоновая трещина, углекислый газ, проблемы, глобальное потепление*

Автор в статье оценивает важность озонового слоя, предпринимает попытку объяснить негативное влияние различных факторов на озоновый слой.Наряду с вопросами,которые были решены,также были рассмотрены парниковый эффект и глобальное потепление. Причины этих проблем объясняются в работе и предлагается несколько решений.

Այսօր ժամանակակից աշխարհում առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք ունեն գլոբալ նշանակություն: Այդ խնդիրների կանխարգելումն ու լուծումը կարելի է ասել,որ յուրաքանչյուրիս պարտքն է: Բոլորս էլ ապրում ենք Երկիր մոլորակի վրա, վայելում ենք բնության տված բոլոր բարիքները, սակայն հաճախ չենք նկատում, որ հենց մենք ենք դառնում այդ հիմնախնդիրների առաջացման օջախը և չենք ուզում մասնակցել դրանց լուծման գործընթացին: Այդպիսի կարևոր հիմնախդիրներից են օզոնային շերտի քայքայումը, ջերմոցային էֆեկտը, գլոբալ տաքացումը և այլն: Այս շարքը կարելի է համալրել մի շարք հիմնախնդիրներով, սակայն բացի նշելուց, անհրաժեշտ է նաև թվարկել դրանց լուծման տարբերակներ, պետք է այնպես անել, որ ամբողջ աշխարհը իր գործունեությունը ուղղի հիմնախնդիրների լուծմանը: Իհարկե ներկայումս անհնար է լրիվությամբ լուծել առկա խնդիրները, բայց գոնե կարող ենք որոշ չափով երկարացնել մեր մոլորակի կյանքը, որի կարևոր բաղադրիչներից է օզոնային շերտը:

Բացի օզոնային շերտի կարևորությունից , կարևոր է նաև նրա պահպանությունը: Քանի որ կյանքի գլխավոր նախապայմաններից մեկի՝ Արեգակի լույսն ու ջերմությունը մեզ է հասնում օզոնային շերտում ֆիլտրվելուց հետո միայն:

Օզոնային շերտը օզոնից կազմված շերտ է, որը գտնվում վերնոլորտում, մթնոլորտի 20-

30 կմ բարձրություններում, և որտեղ գտնվում է ամբողջ մթնոլորտային օզոնի մոտ 90%-ը:Այս շերտը հայտնաբերվել է ֆրանսիացի գիտնականներ Շառլ Ֆաբրիի և Անտի Բուխսոնի կողմից 1913 թվականին: Վերնոլորտային օզոնը ներգործում է մթնոլորտի ջերմային ռեժիմի վրա, ակտիվացնում օքսիդացման շարժընթացը մթնոլորտում և, ամենակարևորը, կլանում է Արեգակի վնասակար կարճալիք անդրամանուշակագույն ճառագայթների հիմնական մասը,որը վնասակար ազդեցություն է թողնում կենդանի օրգանիզմների վրա:

Օզոնը (O_3) թթվածին քիմիական տարրի այլաձևությունն է: Այն սուր, թարմության հոտով կապույտ գազ է: Թունավոր է և պայթյունավտանգ, քայքայում է էրիտրոցիտները, գրգռում աչքերն ու շնչառական ուղիները: Բնականոն պայմաններում օզոնը 1,62 անգամ ծանր է օդից: Ուժեղ օքսիդիչ է, հեշտությամբ քայքայվում է, օքսիդացնում է գրեթե բոլոր մետաղները՝ բացառությամբ ոսկու, պլատինի և իրիդիումի, առաջացնում է օրգանական օզոնիդներ: Բնության մեջ առաջանում է թթվածնից՝ ամպրոպային պարպման ժամանակ կամ Արեգակի անդրամանուշակագույն ճառագայթների ազդեցությամբ: Մթնոլորտում օզոնի ընդհանուր զանգվածը կազմում է 4,109տ: Ամռանն ու գարնանն օզոնի պարունակությունն օդում 3,5 անգամ ավելի շատ է, քան ձմռանն ու աշնանը: 1985 թվականին Երկրի Հվ. բևեռում հայտնաբերվել է օզոնային խոռոչ, որտեղ օզոնի քանակը կտրուկ նվազում է: Օզոնային խոռոչի չափերը փոփոխական են, այն նկատելի է հոկտեմբերի կեսերին, անհետանում է նոյեմբերի կեսերին: Օզոնային խոռոչն առաջանում է մթնոլորտ արտանետված նյութերի (քլորիդածխաջրածիններ, մեթիլքլորոֆորմ, մեթիլբրոմիդ) և դրանց օգտագործմամբ արտադրված նյութերի քայքայող ազդեցությունից: Իսկ ինչպե՞ս են առաջանում այս քայքայող նյութերը և արտանետվում մթնոլորտ: Ցավոք, սրտի այս հարցի պատասխանը ամենապարզն է, իսկ առաջացած խնդրի լուծումը՝ ամենաբարդը: Գիտնականների կարծիքով՝ օզոնային շերտի նվազման հարցում դերակատար են եղել միջուկային ռումբերի փորձարկումը, հրաբխային ժայթքումների տատանումները և CFC անունով հայտնի հալոիդաածխաջրածինների օգտագործումը: 1974 թվականին գիտնականները հայտարարել են, որ որոշ քիմիական նյութեր, որոնք որպես հովացնող գազեր կիրառվում են սառնարաններում, հովացուցիչներում և պլաստմասե իրերում, պարունակում են քլորի անկայուն և ռեակտիվ ատոմներ: CFC գազերը վերնոլորտում բախվելով արեգակի ճառագայթներին, ձևափոխվում է քլորի, որը կարող է ոչնչացնել օզոնի մոլեկուլները: Քլորի յուրաքանչյուր ատոմ ոչնչացնում է օզոնի 100 հզ մոլեկուլներ:1985թվականին մշակվել և վավերացվել է օզոնային շերտի պահպանման մասին Վիեննայի համաձայնագիրը, այնուհետև 1987 թվականին վավերացվել է Մոնրեալի արձանագրությունը: Մոնրեալի արձանագրության համաձայն՝ զարգացած երկրները հանձնառու են դարձել վերջ դնել օզոնային շերտին վնասող նյութերի, այդ թվում՝ հալոիդաածխաջրածինների, հալոնների և ածխածնի տետրաքլորիդի արտադրմանն ու սպառմանը և այդ ուղղությամբ տեխնիկական ֆինանսական աջակցություն ցուցաբերել զարգացող երկրներին: Հանձնառությունները կատարելու և օզոնային շերտին վնասող նյութերի օգտագործումը կրճատելու դեպքում, բնական հուն կվերադառնա օզոնային շերտի կազմավորումը և կվերակազմվեն առաջացած խոռոչները: Իհարկե պայմանները բարենպաստ լինելու դեպքում 50 տարի կպահանջվի օզոնային շերտի վերականգնման համար:

Օզոնային ճեղքի աճման պատճառով առաջացած վնասները կարող են անդառնալի լինել: Եթե արեգակի ճառագայթները լրիվությամբ հասնեին Երկիր՝ առանց օզոնային շերտում ֆիլտրացվելու, ապա Երկրի վրա կյանք լինել չէր կարող, քանի որ

ուլտրամանուշակագույն ճառագայթները իսկույն կվնասեին բույսերին ու մարդկանց: Հետզհետե կվերանար բուսականությունն ու մարդկությունը, և այլևս այս ժամանակակից «զարգացած» աշխարհը ոչ ոքի պետք չէր լինի: Այդ իսկ պատճառով մենք ուղղակի պարտավոր ենք պաշտպանել բոլորիս «տունը»: Մենք պետք է կրճատենք մեր պահանջմունքները՝ կապված արդյունաբերության հետ: Մենք կարող ենք ուրանի էներգիայի փոխարեն օգտագործել Արեգակի լույսն ու ջերմությունը, որն ավելի անվնաս է և շահավետ: Աշխարհը մեծ զարգացում է ապրում, և իհարկե կատարվում են որոշակի ծրագրեր՝ այդ արտանետումները քչացնելու համար: Կարող ենք քիչ օգտագործել պոլիէթիլենային տոպրակները և փոխարինել կտորից տոպրակներով:Այսինքն, ամեն անգամ ստիպված չենք աղտոտի բնությունը միանգամյա օգտագործման տոպրակներով, այլ կունենանք մեր սեփականն ու մշտականը: Կարող ենք նաև փոխարինել թղթե տոպրակների, սակայն այդ դեպքում կնպաստենք անտառահատմանը, ինչը ևս պակաս կարևոր հիմնախնդիր չէ:

Բացի օզոնային շերտի քայքայումից, կարևոր է նաև ջերմոցային էֆեկտը, որի մեխանիզմը կարելի է բացատրել հետևյալ կերպ. ածխաթթու գազը արեգակնային ճառագայթման կարճալիքային սպեկտրի համար գրեթե թափանցիկ է և զգալիորեն կլանում է երկրագնդի երկարալիքային ճառագայթումը: Այդ իսկ պատճառով, մթնոլորտում ածխաթթու գազի քանակի ավելացումը զգալիորեն բարձրացնում է օդի ստորին շերտի ջերմաստիճանը, ինչն էլ բերում է գլոբալ տաքացմանը: Երկրագնդի կլիմայի վրա ազդեցություն է թողնում անընդհատ արեգակնային էներգիայի ներհոսքը: Էներգիայի համարյա 30%-ը միանգամից անդրադառնում է դեպի տիեզերք: Այդ էներգիայի մոտավորապես 15%-ը կլանվում է մթնոլորտի կողմից, իսկ մնացած մեծ մասն անցնում է մթնոլորտի միջով և տաքացնում երկրի մակերևույթը:

Ջերմոցային գազերը, որոնք պարունակվում են մթնոլորտում, պահում են Երկրի ինֆրակարմիր ճառագայթումը՝ թույլ չտալով նրան անմիջապես վերադառնալ տիեզերք: Հիմնական ջերմոցային գազերն են ածխածնի երկօքսիդը, ածխածնահալոիդները, ջրային գոլորշիները, տրոպոսֆերային օզոնը, մեթանը, ազոտի ենթօքսիդը և արտադրական գազերը: Բոլոր այս գազերը, բացառությամբ արտադրականների, ունեն բնական ծագում: Դրանք բոլորը միասին կազմում են մթնոլորտի մոտավորապես 1%: Սակայն դա բավական է բնական ջերմոցային էֆեկտ ստեղծելու համար, որը թույլ է տալիս պահպանել մոլորակի ջերմաստիճանը մոտավորապես 30°C-ով ավելի բարձր, քան կլիներ դրանց բացակայության դեպքում: Սա բացառապես կարևոր է երկրագնդի վրա կյանքի գոյության համար: Հիմնական ջերմոցային գազերի մակարդակն աճում է մարդու գործունեության հետևանքով:

Հետևյալ գազերի՝ ածխածնի երկօքսիդ, որն առաջանում է առավելապես ածխի, նավթի և բնական գազի այրումից մեթան և ազոտի ենթօքսիդ՝ պայմանավորված է գյուղատնտեսությամբ և հողօգտագործման փոփոխությամբ, օզոն, որն առաջանում է ավտոտրանսպորտային գազերի արտանետման և այլ աղբյուրների ազդեցությամբ, ինչպես նաև երկարակյաց արդյունաբերական տարիքի՝ քլորֆտորածխածիններ (ՔՖԱ), հիդրոֆտորածխածիններ (ՀՖԱ), պերֆտորածխածիններ (ՊՖԱ), արտանետումները փոփոխում են մթնոլորտի էներգիա կլանելու ունակությունը: Արդյունքում առաջանում է ուժեղացված ջերմոցային էֆեկտ:

Կլիմայական համակարգը պիտի «հարմարվի» գազերի մակարդակի բարձրացմանը, որպեսզի պահպանվի գլոբալ «էնէրգետիկ հաշվեկշիռը»:

Հարմարվելու գործընթացը Երկրի մակերևույթի և մթնոլորտի ստորին շերտերի «գլոբալ

տաքացումն» է: Սակայն դա ընդհանուր գործընթացի միայն մի մասն է: Կլիմայի տաքացումը համեմատաբար պարզ եղանակ է ավելորդ էներգիայից ազատվելու համար:Սակայն,նույնիսկ ջերմաստիճանի փոքր աճը կուղեկցվի բազմաթիվ փոփոխություններով,ինչպես օրինակ՝ամպային ծածկույթի և քամիների բնույթի փոփոխությունը:Ածխով և նավթով աշխատող ջերմային էլեկտրակայաններից ծծմբի արտանետումը և օրգանական նյութերի այրումը բերում է միկրոսկոպիկ մասնիկների առաջացման, որոնք ունակ են արեգակնային ճառագայթումը անդրադարձնել դեպի տիեզերք, ինչպես նաև ազդել ամպի վրա:

Ջերմոցային գազերի պարունակությունը մթնոլորտում որոշվում է աղբյուրների և կուտակումների հաշվեկշռով:

Աղբյուրները՝գործընթացներ են,որոնք բերում են ջերմոցային գազերի առաջացման:

Կուտակումները՝ գործընթացներ են,որոնց ընթացքում տեղի է ունենում այդ գազերի տրոհումը և կլանումը: Բացի արտադրական գազերից, ինչպիսին են՝ ՔՖԱ_ն և ՀՖԱ_ն,ջերմոցային գազերը ի հայտ են եկել Երկրի մթնոլորտում բնական ճանապարհով՝ միլիոնավոր տարիներ առաջ: Այնուամենայնիվ, մարդն ազդում է ջերմոցային գազերի մակարդակի վրա՝ ստեղծելով նոր աղբյուրներ, կամ ազդելով բնական կուտակումների գործունեության մեխանիզմների վրա:

Բնական ջերմոցային էֆեկտի վրա ազդող հիմնական գործոնը ջրային գոլորշին է:Առավել տաք օդը կարող է պարունակել ավելի շատ խոնավություն, ինչի հետևանքով՝ մոդելավորման հիմքի վրա մշակված կանխատեսումների համաձայն, ոչ մեծ գլոբալ տաքացումը բերում է ջրային գոլորշիների մակարդակի գլոբալ աճի,ինչը հետագայում իր ներդրումն է ունենում ջերմոցային էֆեկտի ուժեղացման մեջ: Ածխածնի երկօքսիդի ներդրումվ «ուժեղացված ջերմոցային էֆեկտի մեջ» կազմում է ավելի քան 60%:Այս գազը հայտնվել է մթնոլորտում բնական ճանապարհով, սակայն ածխի, նավթի և բնական գազի այրումը բերում է այս « վառելիքի հանածո տեսակներում» պարփակված ածխածնի առավել մեծ արագությամբ ազատմանը:Այդ նույն եղանակով անտառային հրդեհների ժամանակ տեղի է ունենում ծառերում պարունակվող ածխածնի արտազատում: Ածխածնի երկօքսիդի այժմյան արտանետումների տարեկան ծավալը կազմում է ավելի քան 2.3մլն տոննա, կամ մթնոլորտում պարունակվող CO_2 -ի գրեթե 1%-ը:

Մարդկային գործունեությամբ պայմանավորված՝ ածխաթթու գազը ընդգրկվում է ածխածնի բնական շրջանառության մեջ: Ամեն տարի մթնոլորտի, օվկիանոսի և Երկրի բուսականության միջև տեղի է ունենում միլիոնավոր տոննաներ ածխածնի բնական շրջանառություն: Արդյունաբերական դարաշրջանին նախորդած 10000 տարիների ընթացքում ածխածնի երկօքսիդի մակարդակը, ըստ երևույթին, փոխվել է՝10%_ից քիչ է կազմում: Սակայն, վերջին 200 տարիների ընթացքում, սկսած 1800 թվականից,նրա մակարդակը բարձրացել է ավելի քան 30%:Հաշվի առնելով այն,որ մարդու գործունեությամբ պայմանավորված, ածխածնի երկօքսիդի արտանետումների կեսը կլանվում է օվկիանոսների և բուսականության կողմից, միևնույնն է, դրա պարունակությունը մթնոլորտում շարունակում է աճել ավելի քան 10%-ով յուրաքանչյուր 20 տարվա ընթացքում:

Քանի որ Երկրի օզոնի շերտի ամենաակտիվ ոչնչացնողը քլորն է, օզոնի քայքայումը կանխելու համար մշակվում են հիմնական միջոցները՝ քլորի և քլոր պարունակող միացությունների մթնոլորտային արտանետումները նվազեցնելու համար, հիմնականում՝ ֆրեոնները: Բոլոր արդյունաբերական երկրներում փնտրվող հիմնական տեխնոլոգիական

խնդիրներից է ֆրեոնների փոխարինումը, այլ սառնագենտներով, որոնք չեն պարունակում քլոր և միևնույն ժամանակ չեն զիջում ֆրեոններին հիմնական ֆիզիկական հատկություններով և քիմիական արդյունավետության մեջ:

Գետնին արդյունաբերական, էներգետիկ և տրանսպորտային համակարգերով ազոտի օքսիդի արտանետումը կարևոր է ոչ միայն օզոնի շերտի,այլև «թթվային անձրևի» խնդիրը լուծելու համար: Չնայած,որ ազոտի օքսիդները, համեմատած քլորի հետ 10000 անգամ ավելի քիչ են ակտիվ,քան օզոնի քայքայիչները, դրանց արտանետումը մթնոլորտ շատ անգամ ավելին է քան քլորինը: Սա մեծացնում է շարժիչների, էլեկտրակայանների, կաթսաների, վառելիքի նոր տեսակների և դրա այրման մեթոդների կարևորությունը, ինչը կնվազեցնի ազոտի օքսիդի ձևավորումը և արտանետումը մթնոլորտ: Արևային էներգիան օգտագործվում է օզոն արտադրելու համար: Այս համակարգի ստեղծման ընդհանուր չափսերը տատանվում են 50_ից 200մլրդ դոլլար:Նման ծախսերը կարելի է համարել իրական՝ աշխարհի բոլոր երկրների այն մեթոդի կիրառմանը մասնակցելով,որը հավասարապես շահագրգիռ է օզոնային շերտի մահը կանխելու համար: Օզոնային շերտի պահպանման խնդրի հետևողական ռացիոնալ լուծումը մթնոլորտի իրական վիճակը վերլուծելու և շրջակա միջավայրի հավանական սպառնալիքը կանխելու, ուղիներ գտնելու գիտական մոտեցման բնորոշ օրինակներից է՝առանց անհիմն արգելող միջոցների ներդրման:Եթե բոլոր մարդիկ՝անկախ իրենց զբաղեցրած պաշտոնից, գիտակցեն օզոնի շերտի փոփոխությունը,ապա բոլորիս համար ավելի հեշտ կլինի գիտակցել իրական իրավիճակը և ժամանակին միջոցներ ձեռնարկել,որպեսզի կարողանանք գոյատևել և թողնել մեր սերունդներին առողջ ապագա:

Այսպիսով՝այս հիմնախնդիրը, ինչպես և մյուսները ստեղծել ենք մենք՝մարդիկ: Այսինքն՝ լուծումը ևս մեր ձեռքերում է: Որպես բնության բարիքներից օգտվողներ, եկեք այնպես անենք ,որ մեր մոլորակը և մեր սերունդները չտուժեն մեր իսկ քմահաճույքների պատճառով: Ինչպես ասում են. «Անհնարին ոչինչ չկա»: Այն, ինչ քննարկվում է, այլևս անհնարին չէ: Մեզ պարզապես պետք է միավորող մի օղակ,որը կտանի դեպի հաղթանակի՝ մեր իսկ ստեղծած «քաոսը» վերականգնելով:

1995 թվականից սեպտեմբերի 16_ը հայտարարվել է օզոնային շերտի պահպանության միջազգային օր:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1.Խոյեցյան Ա.Վ., Կլիմայի փոփոխությունը: Ուսումնական ձեռնարկ Հայաստանի Հանրապետության բուհ-երի ուսանողների համար, Երևան, Լուսաբաց, 2007, 73 էջ, (21-24 էջեր):

2.Պողոսյան Վ.Խ., Ընդհանուր երկրագիտություն գիրք 2,երկրագնդի մթնոլորտը և կլիմաները, Երևան, 2007թ.:

3.https://hy.m.wikipedia.org/wiki/%D5%95%D5%A6%D5%B8%D5%B6%D5%A1%D5%B5%D5%AB%D5%B6_%D5%B7%D5%A5%D6%80%D5%BF

4.http://parstoday.com/hy/radio/programs-i13963

5.https://studbooks.net/887204/ekologiya/mery_zaschite_ozonovogo_sloya

ՀՏԴ 579.2 Բնագիտություն

Արփինե Յարամիշյան
Արցախի պետական համալսարան
«Կենսաբանություն Մ/Կ ֆիզիոլոգիա» մասնագիտություն,մագիստրատուրա 1-ին
Գիտական ղեկավար՝դոցենտ, կ.գ.դ. Գալստյան Հ. Գ.

ՀԱԿԱԲԻՈՏԻԿՆԵՐ , ՆՐԱՆՑ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՄԻԿՐՈՕՐԳԱՆԻԶՄՆԵՐԻ ՎՐԱ

Բանալի բառեր՝ *հակաբիոտիկ, միկրոօրգանիզմներ, պենիցիլին, աղիքային ցուպիկ, ստաֆիլակոկ, մուտացիա, հիվանդությունների հարուցիչներ, բակտերիաներ, դիմադրողականություն, շտամներ, սկավառակադիֆուզիոն մեթոդ, մանրադիտակ:*

Միկրոօրգանիզմների վրա հակաբիոտիկների ազդեցության վերաբերյալ առկա են բազմաթիվ հետազոտություններ:Սակայնթեման մշտապես մնում է արդիական և նոր, առավել ևս, որ արդյունավետ հակաբիոտիկների հայտնագործումը ժամանակի պահանջն է այդ բակտերիաների դեմ առավել արդյունավետ պայքարելու համար: Դա պայմանավորված է այն հանգամանքով որ բակտերիաները, մասնավորապես՝աղիքային ցուպիկը և սաֆիլակոկը, ժամանակի ընթացքում ձեռք են բերում թույլ զգայունություն կիրառվող հակաբիոտիկների նկատմամբ:

Арпине Ярамишян

АНТИБИОТИКИ И ИХ ВЛИЯНИЕ НА МИКРООРГАНИЗМЫ

Ключевые слова: *антибиотики, микроорганизмы, пенициллин, кишечная палочка, стафилококк, мутация, бактерии, патогены, иммунитет, штаммы, диско-диффузионный метод, микроскоп.*

Есть множество исследований о влиянии антибиотиков на микроорганизмы. Тем не менее тема остается актуальной и открытие новых и более эффективных антибиотиков будет новой попыткой для более эффективной борьбы с этими бактериями. Это связано с тем, что бактерии, в частности кишечная палочка и стафилококк, со временем приобрели низкую чувствительность к используемым антибиотикам.

Ամենայն հավանականությամբ, բոլորս էլ կյանքում գոնե մեկ անգամ ընդունել ենք հակաբիոտիկ դեղամիջոց: Այնպիսի տարածված հիվանդություններ, ինչպիսիք են՝ թարախային անգինան, ականջի ցավը, միզուղիների բորբոքումը, մաշկային ինֆեկցիաները և այլ բակտերիալ ծագում ունեցող հիվանդություններ, բուժվում են հակաբիոտիկների օգնությամբ: Հակաբիոտիկներ՝ անտիբիոտիկներ, միկրոօրգանիզմների կենսագործունեությունից առաջացած, ինչպես նաև բուսական և կենդանական բջիջներից ստացված օրգանական նյութեր, որոնք օժտված են միկրոօրգանիզմների տարբեր տեսակների աճն ու բազմացումն ընկճող կամ դրանց ոչնչացնող հատկություններով: Դեռևս 15-16-րդ դդ. ժողովրդական բժշկության մեջ թարախային վերքերի բուժման համար օգտագործվել է կանաչ բորբոսը: 1929-ին անգլիացի մանրէաբան Ա. Ֆլեմինգը սկիզբ դրեց բժշկագիտության մի նոր դարաշրջանի՝ ուշադրություն դարձնելով այն փաստին, որը բազմաթիվ մանրէաբաններ նկատել էին, բայց կարևորություն չէին տվել: Նա անտիբիոզի ուսմունքի հիման վրա հաստատել է, որ կանաչ բորբոսի հակամանրէային ազդեցությունը պայմանավորված է հատուկ նյութերով: Հետագայում բրիտանացի Հ. Ֆլորեյը և գերմանացի Է. Չիինը կարողացան հայտնաբերել և որոշել պենիցիլիններին պատկանող բորբոսասնկի կողմից արտադրվող նյութի կազմությունը և այդպես աշխարհին տվեցին առաջին

հակաբիոտիկ նյութը, որը կոչվեց *պենիցիլին*: Պենիցիլինի հայտնագործումը նոր հակաբիոտիկների և դրանց ստացման աղբյուրների որոնման հիմք հանդիսացավ: Հակաբիոտիկների ստացման հիմնական աղբյուրներն են՝ մանրադիտակային սնկիկների և մանրէների որոշ տեսակներ, որոնցից անջատվել են մի քանի հազար հակաբիոտիկային նյութեր: Սակայն մեծ մասամբ դրանք թունավոր ազդեցություն էին թողնում ոչ միայն հիվանդությունների հարուցիչների, այլև մարդու օրգանիզմների վրա: Ուստի որպես դեղանյութ օգտագործում են միայն այն հակաբիոտիկները, որոնք առավելագույն չափով բավարարում են հետևյալ պահանջները՝

1. Ունեն հակաբակտերյալ բարձր ակտիվություն,
2. Կենսաբանական միջավայրում կայուն են,
3. Մարդու օրգանիզմի համար՝ քիչ թունավոր:

Դրանք պենիցիլինի, ստրեպտոմիցինի, տետրացիկլինի,լևոմիցետինի, օլեանդոմիցինի և այլ խմբի պատրաստուկներն են: Հակաբիոտիկների հայտնաբերմամբ հնարավորություն ստեղծվեց բուժել մանրէների հարուցած համարյա բոլոր հայտնի հիվանդությունները: Սակայն հակաբիոտիկները ազդում են միայն մանրէների վրա, և յուրաքանչյուրն արդյունավետ է որոշակի զգայունությամբ միկրոօրգանիզմների համար: Օրինակ՝ պենիցիլինն օգնում է թոքերի բորբոքման, արյան վարակման, մաշկի թարախաբշտիկային հիվանդությունների և թարախածին մանրէների հարուցած այլ հիվանդությունների դեպքում [3]:

Սակայն ժամանակի ընթացքում բակտերիաների կազմությունը մշտապես փոփոխվում է, դրանց վերարտադրման ժամանակ առաջանում են տարբեր մուտացիաներ, այդ թվում նաև այն, ինչի շնորհիվ միկրոօրգանիզմները դիմադրողական են դառնում հակաբիոտիկների նկատմամբ: Հակաբիոտիկների հանդեպ դիմադրություն ապահովող մուտացիաների հաճախականությունը բավականաչափ բարձր է, վերապրածները, այսինքն՝ դիմացկուն ձևերը փոխհատուցում են բակտերիալ կուլտուրայի կորուստի համար:Այսպիսով «ծնվում» են դիմացկուն պաթոգենների նոր ձևեր [3]: Եթե մարդը վարակվում է նոր պաթոգենային ձևերով, ապա այն անիմաստ է բուժել նախկինում օգտագործվող հակաբիոտիկներով: Ներկա ժամանակներում բակտերիաների մուտացիաները դուրս են եկել վերահսկողությունից: Եթե նախկինում գիտնականները ժամանակ ունեին արագ հակաբիոտիկ դեղամիջոց ստեղծելու համար, ապա այժմ նրանց աշխատանքը որևէ արդյունք չի բերում: Ամենատարածված և դիմացկուն բակտերիաներից է աղիքային ցուպիկը (***Escherichia coli (E. coli)***), ոսկեգուն ստաֆիլակոկը (***Staphylococcus aureus***), ***Streptococcus pneumonia*** և սալմոնելան (***Salmonella***): Այս բակտերիաների տեսակները հակաբիոտիկների հանդեպ առավել կայուն են դարձել [2]:

Մենք ուսումնասիրել ենք աղիքային ցուպիկի և ստաֆիլակոկի զգայունությունը հակաբիոտիկների նկատմամբ:

Աղիքայինցուպիկ՝ (լատ. ***Excherichia coli, E. coli***) ցեղային անվանումը կապված է հայտնաբերողի՝ Էշերիխի անվան հետ: Էշերիխիաները ներկայացնում են բակտերիաների ընդարձակ խումբ, որոնք միմյանցից տարբերվում են անտիգենային, կենսաքիմիական հատկանիշներով: Նորմալ պայմաններում ախտածին չէ, մորֆոլոգիապես նման է դիզենթերիայի հարուցիչին: Այն նույնպես առաջացնում է վեգետատիվ ձևեր և ցիստեր, սակայն պրոտեոլիտիկ ֆերմենտ չի արտադրում և աղիքի պատի մեջ չի թափանցում: Աղիքային ցուպիկի թունավոր շտամները կարող են առաջացնել տարբեր հիվանդություններ, ինչպիսիք են՝ գաստրոէնտերիտը, միզուղիների վարակներ, մենինգիտ,

դիզբակտերիոզ և այլն: Ավելի հազվադեպ առաջացնում են հեմոլիտիկ-ուրեմիկ համախտանիշ, սպերիտոնիտ, մաստիտ և գրամ-բացասական թոքաբորբ: Աղիքային ցուպիկը բուժվում է հակաբիոտիկների օգնությամբ: Աղիքային ցուպիկի նկատմամբ առավել ակտիվ են հետևյալ հակաբիոտիկների տեսակները՝ ամոկսիցիլին, լևոֆլոկսիացին, նիֆուրետալ, ֆուրազոլիդոն, դոկսիցիկլին (զգայուն են ոչ բոլոր շտամները) և այլն [8]:

Ստաֆիլակոկ(լատ. ***Staphylococcus***, հին հունական Σταφυλή — «խաղող» և κόκκος — «հատիկ»), Staphylococaceae ընտանիքին պատկանող բակտերիաների խումբ: Այս խմբի ներկայացուցիչները անշարժ գրամ-դրական կոկեր են, որոնց բջջի տրամագիծը 0.6-1,2 մկմ սահմանում է: Նրանց համար բնութագրական է տարբեր հարթություններով բաժանվելը, որի հետևանքով էլ առաջանում է «խաղողի ողկույզ» տեսքը: Դրա մեջ մտնում են պաթոգեն և պայմանականորեն պաթոգեն տեսակներ: Պաթոգեն ստաֆիլակոկները ընդունակ են առաջացնել էնդո- և էկզոտոկսիններ (ֆերմենտներ, որոնք խանգարում են բջջի նորմալ գործունեությունը): Այս բակտերիաների ոչ մեծ քանակության դեպքում մարդու իմունային համակարգը ընդունակ է պայքարելու:

Ինչպես աղիքային ցուպիկի հանդեպ, այնպես էլ ստաֆիլակոկի նկատմամբ վերջին տարիներին գիտնականները մշակել են հակաբիոտիկների մի նոր խումբ, որը կարող է ազդել մեթիցիլինի նկատմամբ կայուն ոսկեգույն ստաֆիլակոկի շտամների վրա, որը կայուն է նաև սովորական հակաբիոտիկների նկատմամբ: Նոր հակաբիոտիկները պարունակում են սինթետիկ իբիդիում, կոբալտ և այլ միացություններ, որոնք դժվար են քայքայվում բակտերիաների կողմից: Չնայած դրան, դեռ պետք է պարզել, թե այդ նոր տիպի հակաբիոտիկները ինչպիսի ազդեցություն կունենան մարդու առողջության վրա: Ստաֆիլակոկի բուժումը հակաբիոտիկներով համարվում է այդ բակտերիայի դեմ պայքարի միակ մեթոդը, քանի որ միայն այդ քիմիական նյութերը կարող են ազդեցություն ունենալ այդ բակտերիաների վրա: Բայց չպետք է մոռանալ նաև այն, որ նորմալ իմունային համակարգի ֆունկցիայի ժամանակ այս բակտերիաները հիվանդություն չեն առաջացնում: Մարդկանց մոտ հիվանդություններ կարող են առաջացնել ստաֆիլակոկի հետևյալ երեք տեսակները՝ սաթրֆիտիկ, էպիդերմային և ոսկեգույնը: Հիմնական հակաբիոտիկների խմբերը, որոնց հանդեպ զգայուն է ստաֆիլակոկը, հետևյալն է՝ պենիցիլին, ցեֆալոսպորինի և ֆտորկոինոլոնները: Սակայն չնայած դրան, բնության մեջ գոյություն ունեն ստաֆիլակոկի շտամներ, որոնք կայուն են պենիցիլինի և նույնիսկ մնացած հակաբիոտիկների խմբերի նկատմամբ: Նման շտամները կոչվում են «մետիցիլին-ռեզիստենտ», և ցավոք ամեն տարի այդ շտամների թիվը ավելանում է մոտ 10%-ով[2]: Չնայած դրան՝ ոսկեգույն ստաֆիլակոկի (***S. aureus***) որոշ շտամներ վերջին տարիներին ձեռք են բերել դիմացկունություն միանգամից մի քանի տեսակի հակաբիոտիկների նկատմամբ: Նման տեսակի բակտերիաների պոպուլյացիաների շտամները նշվում են ***MDR (Multidrug resistant)*** հապավումով: Այժմ բժիշկների զինանոցում MDR-շտամների դեմ պայքարելու համար կա հակաբիոտիկ վանկոմիցինը, սակայն ավելի ու ավելի են հայտնվում շտամներ, որոնք դիմացկուն են նաև այդ հակաբիոտիկի նկատմամբ: Ստաֆիլակոկային վարակների շտամների քանակությունը, որոնք չեն ենթարկվում հակաբիոտիկների ազդեցությանը, ներկայում հասնում է 2%-ի [6]:

Հակաբիոտիկների նկատմամբ զգայունությունը որոշվում է ոչ թե հենց հետազոտվող նյութով, այլ հենց հարուցիչից, որը աճեցվել է հետազոտվող նյութից վերցված կուլտուրայից: Այդ իսկ պատճառով նյութը պետք է վերցնել մինչ հակաբակտերիալ թերապիան:

Ըստ զգայունության բակտերիաները բաժանվում են 3 խմբի՝ զգայուն, թույլ զգայուն և կայուն: Գոյություն ունի այդ հասկացությունների 2 մեկնաբանություն: Առաջին մեկնաբանությունը կլինիկական մոտեցումն է, որը հիմնված է հակաբակտերիալ թերապիայի գնահատման էֆեկտիվության վրա: Զգայուն բակտերիաներին դասվում են այն խմբերը որոնց աճը և զարգացումը ճնշվում է օրգանիզմ ներմուծված հակաբիոտիկների չնչին քանակությունից: Թույլ կայուն խմբին դասվում են այն բակտերիաները, որոնց ճնշելու համար անհրաժեշտ է օրգանիզմ ներմուծել թույլատրելի հակաբիոտիկների մաքսիմալ դոզաները: Կայուն են այն բակտերիաների շտամները, որոնց ճնշման համար անհրաժեշտ է օրգանիզմի համար ոչ թույլատրելի քանակությամբ հակաբիոտիկների դոզաներ: Կլինիկական տեսանկյունից հակաբիոտիկների հանդեպ զգայուն են այն շտամները, որոնց վրա այն կարող է ազդեցություն ունենալ ինֆեկցիոն օջախում որոշ քանակության հասնելու դեպքում:

Երկրորդ մեկնաբանությունը միկրոկենսաբանական մոտեցումն է, որը հիմնված է հակաբիոտիկների կոնցենտրացիաների անալիզների վրա, որը կատարվում է սննդային միջավայրում: Բակտերոլոգիական լաբորատորիաներում հակաբիոտիկների հանդեպ զգայունության որոշման մեթոդները ընդունված է բաժանել 2 խմբի՝

- սննդային միջավայրում հակաբիոտիկների հաջորդական աճեցման մեթոդ՝
- քիմիական պրեպարատի աճեցումը հեղուկ սննդային միջավայրում,
- քիմիական պրեպարատի աճեցումը պինդ սննդային միջավայրում,
- դիֆուզիոն մեթոդները՝
- սկավառակ-դիֆուզիոն մեթոդ,
- E-թեստ:

Ներկա ժամանակներում հակաբիոտիկների հանդեպ զգայունությունը ամբողջ աշխարհում որոշվում է այն մեթոդով, որը մշակվել է ԱՄՆ Ազգային կլինիկոլաբորատորիայի կոմիտեի (NCCLS) նորմերով [1]:

Հակաբիոտիկների հանդեպ աղիքային ցուպիկի և ստաֆիլակոկի զգայունությունը որոշելու համար՝ լաբորատոր պայմաններում օգտվել ենք սկավառակադիֆուզիոն մեթոդից, իսկ արդեն պատրաստուկների հետագա ուսումնասիրությունները անց ենք կացրել ԱրՊՀ-ի լաբորատորիայում:

Բակտերոլոգիական հիվանդությունները կրում են հիմնականում սեզոնային բնույթ և յուրաքանչյուր հիվանդություն ունի իր «ծաղկման» շրջանը: Ըստ մեր կատարած ուսումնասիրությունների մեր տարածաշրջանում աղիքային ցուպիկի այդ շրջանը ընկնում է գարնան վերջից մինչև ամռան վերջը, կապված եղանակային պայմաններից և մարդկանց ակտիվ հանգստի հետ: Եվ ըստ դրա աղիքային ցուպիկի սրացման ամենասուր շրջանը բաժին է ընկել 2018թ:

Ստաֆիլակոկի սրացման շրջանը համարվում է աշնանային և ձմեռային շրջանը, երբ գլուխ են բարձրացնում այնպիսի հիվանդություններ, ինչպիսիք են՝ թարախային գրիպը, անգինաները, բրոնխիտը, օտիտները: Եվ ըստ այդ հիվանդությունների տարածվածության, ստաֆիլակոկի սրացման շրջանը բաժին է ընկել 2016թ:

Չնայած հակաբիոտիկների՝ մեզ տված մեծ օգուտին, դրանք այնուամենայնիվ դեղամիջոցներ են և չպետք է հրապուրվել դրանց չարաշահմամբ: Ինչպես ամեն մի դեղամիջոց, հակաբիոտիկները նույնպես թողնում են իրենց բացասական ազդեցությունները մեր օրգանիզմի վրա: Հակաբիոտիկները դեղամիջոցներ են և պետք է նշանակվեն բժիշկների կողմից, քանի որ ոչ բոլոր հիվանդություններն են բուժվում

հակաբիոտիկների միջոցով, և ոչ բոլոր հակաբիոտիկների խմբերն են ընդունակ պայքարելու տարբեր տեսակի բակտերոլոգիական և սնկային հիվանդությունների դեմ: Ինֆեկցիաների ժամանակ ոչ համապատասխան հակաբիոտիկների անտեղի ընդունելը չի բուժելու ինֆեկցիոն հիվանդությունները և չի պաշտպանելու այլ մարդկանց վարակվելուց, այն չի լավացնելու ձեր և ձեր երեխայի ինքնազգացողությունը, այլ նաև կարող է առաջացնել անիմաստ և վնասակար կողմնակի ազդեցություններ, որոնք կարող են նպաստել հակաբիոտիկների նկատմամբ կայունության ձևավորմանը(երբ բակտերիաները կարողանում են դիմադրել հակաբիոտիկ դեղի ազդեցությանը և շարունակում են վնասել օրգանիզմին): Մի շարք հիվանդություններ կարելի է բուժել առանց հակաբիոտիկների կիրառմամբ, դեղաբույսերի միջոցով՝ որոնց թիվը մեր տարածաշրջանում բավականին մեծ է:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Դանիելյան Լ.Թ., Ընդհանուր և մասնավոր մանրէաբանություն, Երևան 2002թ.:
2. Գաբրիելյան Է., Հակոբյան Վ., Դեղաբանություն, 1992թ.:
3. Այվազյան Հ. Մ., Աստվածատրյան Վ.Ա, Աբրահամյան Ռ. Ա., Հանրամատչելի Բժշկական Հանրագիտարան, Երևան, 2001 թ.:
4. Մարտիկյան Հ.Ռ., Ընդհանուր մանրէաբանության հիմունքներ, Երևան, 2015թ.:
5. Ֆրանգուլյան Լ.Ա., Բժշկակական մանրէաբանություն, Երևան, 1979թ.:
6. Հայրապետյան Վ. Գ., Գործնական վիրուսաբանության ձեռնարկ, Երևան, 1977թ.:
7. Շեկոյան Վ., Շեկոյան Է., Բժշկական մանրէաբանություն, վիրուսաբանություն և իմունաբանություն, Երևան, 1991թ.:
8. Сизенцов А.Н., Мисетов И.А, Каримов И.Ф., Антибиотики и химиотерапевтические препараты, Оренбург, 2012г.
9. Свойчаков В.Б., Микробиология с основами эпидемиологии и методами микробиологических исследований, Санкт-Петербург.
10. Шегель Г., Общая микробиология, Москва, 1987г.

Ալիսա Շամիրյան
ԱրՊՀ բնագիտական ֆակուլտետ,
Մաթեմատիկա բաժին,1-ին կուրս
Գիտական ղեկավար՝ ֆ.մ.գ.թ. դոցենտ Լ.Ռ.Աբրահամյան

ԷՎԿԼԻԴԵՍԻ ՄՆԱՑՈՐԴՈՎ ԲԱԺԱՆՄԱՆ ԱԼԳՈՐԻԹՄԸ

Բանալի բառեր՝ բաժանում, թիվ, Էվկլիդեսի ալգորիթմ, բաժանում մնացորդով:

Աշխատանքում բերված է ամբողջ թվի b-ական համակարգում ներկայացման ապացույցը: Բերված է օրինակ:

Алиса Шамирян

АЛГОРИТМ РАЗДЕЛЕНИЯ С ОСТАТКОМ ЭВКЛИДА

Ключевые слова: деление, число, алгоритм Эвклид, деление с остатком

В работе приводится доказательство представленного числа заданного в b-ичной системе. Приведен пример.

Դպրոցական դասընթացից հայտնի է, որ բնական թիվը կարելի է ներկայացնել 2-ական, 3-ական,n-ական համակարգում: Պարզվում է, որ դա հնարավոր է շնորհիվ մի ալգորիթմի, որն առաջին անգամ ձևակերպել է հույն հայտնի մաթեմատիկոս Էվկլեդեսն իր «Սկզբունքներ» հանրահայտ աշխատության մեջ (գիրք VII, թեորեմներ1,2):

Թեորեմ (Էվկլեդես): Ցանկացած a , $b \neq 0$ ամբողջ թվերի համար գոյություն ունեն միարժեքորեն որոշվող այնպիսի q և r ամբողջ թվեր, որ $a = bq + r$ և $0 \leq r < |b|$:

Հետևություն: Դիցուք a-ն և b-ն ամբողջ և դրական թվեր են, $b > 1$: Գոյություն ունեն միարժեքորեն որոշվող այնպիսի $c_0, c_1, \dots, c_k$ ամբողջ թվեր, որ

$$a = c_k b^k + c_{k-1} b^{k-1} + \dots + c_1 b + c_0,$$

որտեղ $0 \leq c_i < b, i = 0,1, \dots, k$ և $c_k \neq 0$:

Ապացույց: Մնացորդով բաժանման ալգորիթմից բխում է, որ $a = bq_1 + c_0$, որտեղ $0 \leq c_0 < b$ և $q_1 = \frac{a-c_0}{b} < a$:Եթե $q_1 \geq b$, ապա նորից բաժանման ալգորիթմի համաձայն՝ $q_1 = bq_2 + c_1$, որտեղ $0 \leq c_1 < b$ և $q_2 < q_1$: Եթե $q_2 \geq b$, ապա շարունակելով նշված եղանակով,ստանում ենք ամբողջ և դրական թվերի նվազող հաջորդականություն՝

$$q_1 > q_2 > \dots,$$

որն անվերջ լինել չի կարող:Այսինքն՝ գոյություն կունենա այնպիսի k համար, որի դեպքում՝ $q_k < b$, իսկ $q_{k-1} \geq b$: Այսպիսով, հանգում ենք հետևյալ համակարգին՝

$$a = bq_1 + c_0,$$
$$q_1 = bq_2 + c_1,$$
$$\dots\dots\dots\dots\dots\dots,$$
$$q_{k-2} = bq_{k-1} + c_{k-2},$$
$$q_{k-1} = bq_k + c_{k-1},$$
$$q_k = b \cdot 0 + c_k:$$

Հետևաբար, $q_k \neq 0$, որովհետև հակառակ դեպքում կունենայինք հակասություն՝

$$c_{k-1} = q_{k-1} \geq b :$$

Այժմ գրված համակարգից արտաքսելով $q_k, q_{k-1}, \dots, q_1$ բնական թվերը, կստանանք՝

$$a = c_k b^k + \dots + c_1 b + c_0,$$

որտեղ $0 \leq c_i < b, i = 0,1, \dots, k$ և $c_k \neq 0$:

Մնում է ապացուցել վերլուծության c_i գործակիցների միակությունը: Դիցուք ունենք նաև հետևյալ վերլուծությունը՝

$$a = d_k b^k + \dots + d_1 b + d_0,$$

որտեղ $0 \leq d_i < b, i = 0,1, \dots, k$ և $d_k \neq 0$: Քանի որ առաջին և երկրորդ վերլուծություններից կունենանք՝

$$a = bx + c_0, \text{ որտեղ} 0 \leq c_0 < b,$$
$$a = by + d_0, \text{որտեղ} 0 \leq d_0 < b,$$

ապա $c_0 = d_0$: Այնուհետև՝

$$\frac{a-c_0}{b} = b_u + c_1, \text{ որտեղ } 0 \leq c_1 < b,$$
$$\frac{a-c_0}{b} = b_v + d_1, \text{ որտեղ } 0 \leq d_1 < b,$$

ուստի $c_1 = d_1$, և այսպես շարունակ: Ի վերջո ստանում ենք $c_i = d_i$ հավասարությունը՝ բոլոր $i = 0,1, \dots, k$ արժեքների համար :

Ապացուցված ներկայացումը կոչվում է a բնական թվի ներկայացում b-ական համակարգում և համառոտ գրվում է՝

$$a = (c_k c_{k-1} \dots c_1 c_0)_b,$$

որտեղ $c_0, c_1, \dots, c_k$ թվերը կոչվում են այդ ներկայացման գործակիցներ, իսկ k-ն՝ ներկայացման երկարություն:

Օրինակ 1՝2-ական համակարգում 43-ը ներկայացվում է հետևյալ կերպ՝

$$43=(101011)_2,$$

որովհետև

$$43= 1 \cdot 2^5 + 0 \cdot 2^4 + 1 \cdot 2^3 + 0 \cdot 2^2 + 1 \cdot 2 + 1,$$

Իսկ 3-ական համակարգում՝

$$43= (1121)_3,$$

որովհետև

$$43= 1 \cdot 3^3 + 1 \cdot 3^2 + 2 \cdot 3 + 1:$$

Օրինակ 2՝ $(102)_x=38$: Գտնել x-ը:

$$(102)_x=38$$
$$X^2+2=38$$
$$X^2=36,$$
$$X=6$$

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

1. Աբրահամյան Լ.Ռ., Մնացորդով բաժանման թեորեմներ, Մաթեմատիկան դպրոցում, N2(53), 2007, 5 էջ:
2. Մովսիսյան Յու.Մ. , Բարձրագույն հանրահաշիվ և թվերի տեսություն,Երևան, 2008:

ՀՏԴ 581.9(479.243) Բնագիտություն

Քրիստինե Պետրոսյան
Աննա Օհանջանյան
ԱրՊՀ,բնագիտական ֆակուլտետ
Կենսաբանություն 3-րդ կուրս
Գիտական ղեկավար՝ կ.գ.թ., դոցենտ Բալայան Կ.Վ.

ԴԵՂԱԲՈՒՅՍԵՐԻ ՏԵՍԱԿԱՅԻՆ ԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅՈՒՆԻ ՈՒ ՏԱՐԱԾՎԱԾՈՒԹՅՈՒՆԻ ԱՍԿԵՐԱՆԻ ԵՎ ՄԱՐՏՈՒՆՈՒ ՇՐՋԱՆՆԵՐՈՒՄ

Բանալի բառեր՝ *Արցախ, դեղաբույսեր, ֆլորա, խնկածաղիկ,պատրինջ, օշինդր, ուրց, ուրցաղաղձ,ծներեկ, ծիծեռնախոտ:*

Արցախի բուսական աշխարհը, մասնավորապես՝ Ասկերանի և Մարտունու շրջանների ֆլորան՝ հարուստ է ու բազմազան, այն ընդգրկում է ժողովրդական բժշկության մեջ օգտագործվող զգալի թվով դեղատու բուսատեսակներ, որոնց մի մասը հանդիսանում է նաև սննդային, համեմունքային նշանակություն ունեցող: Սույն աշխատանքում ներկայացվում է դեղաբույսերի տեսակային բազմազանությունը և տարածվածությունն Ասկերանի ու Մարտունու շրջաններում: 2017 - 2019թթ. մեր ուսումնասիրությունների և դաշտային հետազոտությունների արդյունքում գրանցվել են 45 տեսակ դեղատուբույսեր, որոնք պատկանում են 15 ընտանիքների, 37 ցեղերի:

Кристина Петросян, Анна Оганджанян

ВИДОВОЕ РАЗНООБРАЗИЕ И РАСПРОСТРАНЕНИЕ ЛЕКАРСТВЕННЫХ РАСТЕНИЙ В АСКЕРАНСКОМ И МАРТУНИНСКОМ РАЙОНАХ

Ключевые слова: *Арцах, лекарственные растения, флора,душица, мелисса, полынь, тимьян, зизифора,* ***спаржа,*** *чистотел.*

Растительный мир Арцаха, особенно флора Аскеранского и Мартунинского районов богата и разнообразна, включает в себя значительное количество лекарственных растений, используемых в народной медицине, некоторые из которых также имеют пищевое и пряное значение. В этой работе представлено разнообразие видов лекарственных растений и их распространение в Аскеранском и Мартунинском районах. В результате наших полевых исследований в 2017-2019 гг. было выявлено 45 видов лекарственных растений, относящихся к 15 семействам, 37 родам.

Ներկայումս դեղաբույսերը ամենատարբեր դեղամիջոցներ ստանալու անփոխարինելի աղբյուր են, և այդ պատճառով դեղաբույսերի մեծամասնությունն օգտագործվում է գիտական բժշկության մեջ, ինչպես նաև լայնորեն կիրառվում է ժողովրդական բժշկության դեղատոմսերում:

